Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԻԳՐԱՆ II–Ի ՕՐՈՔ



Հայկ Ղազարյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
CJSC HAYKAKAN AZGAYIN PUBLISHING HOUSE

МЕЖДУНАРОДНАЯ АКАДЕМИЯ НАУК
О ПРИРОДЕ И ОБЩЕСТВЕ (МАНПО)
(АРМЯНСКИЙ ФИЛИАЛ)
МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН

ГАЙК КАЗАРЯН

ЗАПАДНЫЕ АРМЯНЕ НАКАНУНЕ ГЕНОЦИДА

Ереван 2001

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
(ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Երևան 2001

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Ղ 158

Խմբագիր՝ ԲԱՐՍԵՂՅԱՆ Լ. Ա.
պատմական գիտ. դոկտոր

ՂԱԶԱՐՅԱՆ Հայկ Միրզաջանի
Ղ 158 Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին. - Եր.: Տիգրան Մեծ, 2001, 696 էջ:

Ներկա մենագրությունը հեղինակի երկարամյա հետազոտությունների ամփոփագիրն է: Այստեղ, գրականության, սկզբնաղբյուրների, հատկապես արխիվային նորահայտ վավերագրերի հիման վրա, շարադրված են *Արևմտյան Հայաստանի և արևմտահայության* պատմության հիմնական հարցերը՝ սկսած երկրի բաժանումից, եզերած XIX դարի 90-ական թվականները: Պատասխանելով թուրք պատմաբանների կեղծարարությանը, հեղինակը ներկայացնում է *Արևմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի ճշգրտված տարածքաչափը,* ինչպես նաև թուրքահպատակ *հայ բնակչության թվաքանակն*՝ այն էլ տարբեր դարաշրջաններում: Առանձնակի ուշադրություն է դարձվում հայ ժողովրդի կրած սոցիալ-քաղաքական ճնշումների պատմության շարադրանքին, ցույց է տրվում, որ օսմանյան թուրքերը մեր *Հայրենիքը* բռնազավթելուց ի վեր, քրիստոնյա ազգերի, հատկապես արևմտահայության նկատմամբ իրականացնում էին սկզբում ուծացման, ապա մասնակի ջարդերի, ի վերջո, *հայասպանության-ցեղասպանության շարունակական* քաղաքականությունը: Աշխատությունը նպատակ է հետապնդում միջազգային հանրությանը ներկայացնելու օբյեկտիվ իրականությունը, քաղաքակիրթ մեթոդներով Թուրքիայից ետ ստանալու այն ամենը, ինչ նրանք խլեցին հայ ժողովրդից: Բանաձևվում է, թե Թուրքիայի հանրապետությունը պարտավոր է արևմտահայությանն այսօր վերադարձնել այն, ինչ խլեցին նրա նախորդները:

Ղ $\frac{0503020913}{774(07)\ 2001}$ 2001 թ. ԳՄԴ 63.3 (2Հ) 52

Նվիրում եմ
սիրելի ծնողներիս՝
Մ՚իրզազան եվ Դուշիկա
Ղազարյանների հիշատակին

Ակադեմիայի կողմից

ԺՎԱՐ է հավատալ, որ կենսախինդ, առույգ, ստեղծագործական ավյունով լի ***Հայկ Միրզաջանի Ղազարյանն*** արդեն բոլորել է իր կյանքի ***յոթերորդ*** տասնամյակը, որից ***հիսուն*** տարին նա նվիրել է գիտամանկավարժական, հատկապես գիտական բեղուն գործունեությանը: Հայկ Ղազարյանը վաստակաշատ պատմաբան է, գրականագետ, բանասեր, հմուտ մանկավարժ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Նա գիտական լայն հետաքրքրությունների տեր, բազմահմուտ գիտնական է, որի հեղինակած ծանրակշիռ մենագրությունները լուրջ ներդրում են ոչ միայն հայագիտության ոսկե ֆոնդում, այլև իրենց արժանիքներով ու առաջացրած հետաքրքրությամբ դուրս են եկել հանրապետության սահմաններից, մեծ ճանաչում բերելով հեղինակին հայկական Սփյուռքում, հարևան երկրներում, մասնավորապես՝ Ռուսաստանում:

Հեղինակի գրչին պատկանող մեծ ու փոքր ծավալի ***գրեթե*** մենագրությունները, բազմահատորյակներում (պատմություն, գրականություն) լույս տեսած ակադեմիական կապիտալ աշխատությունների բազմաթիվ բաժինները, շուրջ 200 հոդվածները, գրեթե բոլորն էլ նոր խոսք են ասում պատմագիտության և գրականագիտության բնագավառներում: Նրա խստապահանջ, միաժամանակ բարյացկամ բազում ընդդիմախոսները, հրատարակված աշխատությունների գրախոսողները միաբերան հաստատում են, որ Հ. Ղազարյանը ***նորարար*** պատմաբան է, որի աշխատությունները շարադրված են Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի (Մոսկվա, Լենինգրադ), վերջերս էլ Սփյուռքի արխիվներից հայտնաբերած նոր ու այնպիսի վավերագրերի հենքի վրա, որոնք առաջին անգամ են դրվել գիտական շրջանառության մեջ:

Պրոֆեսոր Հ. Մ. Ղազարյանը հիմնականում հետազոտել է Արևմտյան Հայաստանի և արևմտահայության, այսինքն՝ հայաշխարհի ու գաղթաշխարհի նոր և նորագույն ժամանակահատվածների պատմությունը՝ սկսելով XVIII դարաշեմից, եզերելով XX հարյուրամյակի առաջին զույգ տասնամյակները: Նրա մասնակցությամբ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ստեղծագործ կոլեկտիվը, շուրջ երկու տասնամյակի մեղվաջան աշխատանքով, հրապարակեց իր նա-

խատիպը չունեցող «Հայ ժողովրդի պատմություն» ծանրակշիռ ութ հատորները: Նույն տարիներին ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը ստեղծեց «Հայ նոր գրականության պատմության» վեցհատորյակը, որի ծավալուն երեք բաժինները պատկանում են Ղազարյանի գրչին: Երկու բազմահատորյակներն էլ բարձր գնահատականի արժանացան լայն հասարակայնության կողմից, իսկ հանրապետության կառավարությունը գիտական կոլեկտիվներին շնորհեց ***պետական մրցանակ:***

Արժանին հատուցելով պատմաբանին, ճիշտ է, ուշացումով, բայց և այնպես, ***Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը*** (հումանիտար բաժանմունք) 2001 թ. հունվարին պրոֆ. Հ. Ղազարյանին ընդգրկեց իր շարքերում՝ միաժամանակ շնորհելով ***ակադեմիկոսի*** կոչում: 2001 թ. մարտ ամսին ***Ազգային անվտանգության պրոբլեմների գիտության միջազգային ակադեմիան*** որոշեց. «Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ***Հայկ Միրզաջանի Ղազարյանի*** մեծ ներդրումը պատմական գիտության զարգացման բնագավառում, ինչպես նաև մի շարք երկրների ու ժողովուրդների հարաբերությունների բարելավման գործում նրա ծառայությունները, հաստատել մեր ակադեմիայի հայկական մասնաճյուղի նախագահության որոշումը, այն է՝ 2001 թ. մարտի 22-ին նրան ընդունել Ազգային անվտանգության պրոբլեմների գիտությունների ակադեմիայի կազմում՝ որպես ***իսկական անդամ»:***

Հ. Մ. Ղազարյանը ծնվել է 1930 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության Մարտունու շրջանի Վարդենիկ (Ներքին Գյոզալդարա) գյուղում, երկրագործի ընտանիքում: Բազմանդամ է եղել նրանց ընտանիքը (չորս երեխա), որի հոգսերը հոգացել են միայն հոր՝ ***Միրզաջան Ղազարյանի*** սեպագործ աշխատանքով: Չավավոր ապրելակերպը շարունակվել է մինչև 1941 թ., այսինքն՝ մինչև Միրզաջանի բանակ զորակոչվելը: Ընտանիքի ծանր հոգսերը այնուհետև ընկել են միայն մոր ուսերին: Հ. Ղազարյանը հարկադրված էր և աշխատել, և սովորել դպրոցում: Սկսվում է նրա դառը մանկությունը: Բայց դա դեռ բոլորը չէ: Հայրը Հայրենական պատերազմում շրջապատման մեջ էր ընկել և գերմանացիների կողմից գերեվարվել:

Պատերազմի ռազմագերու ընտանիքի ***անուն է վաստակում*** Ղազարյան գերդաստանը: Գյուղում հալածանքը, բարոյական վիրավորանքները, արհամարհանքը դարձան սովորական երևույթներ, որոնց մի կերպ դիմանում էին անպաշտպան մայրն ու դեռևս դպրոցական Ղազարյանը: 1946 թ. պատանին գերազանցությամբ ավարտեց միջնակարգ դպրոցը, սակայն գյուղսովետի նախագահը նրան արգելեց նույնիսկ բարձրագույն կրթություն ստանալ, այսինքն տեղեկանք չտվեց Երևան մեկնելու: Դրա համար էլ Հ. Ղազարյանը ուղղակի փախավ մայրաքաղաք և, դեռևս բարի մնացած հատուկենտ մարդկանց օգնությամբ, գործերը հանձնեց Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը սովորելու: Ընդունելության քննությունները հանձնեց գերազանց, սովորեց բացարձակ գերազանցներով: Երրորդ կուրսում արժանացավ Ստալինյան թոշակի: Ընդամենը մեկ ամիս ստացավ այդ կրթաթոշակը, ապա, որպես ***հայրենիքի դավաճանի*** զավակ, զրկվեց անվանական թոշակից, իսկ ինստիտուտն ավարտելուց հետո նրան արգելեցին ուսումը շարունակել ասպիրանտուրայում:

1952 թ., ինստիտուտն ավարտելով, Հ. Ղազարյանը մեկնեց Կամոյի շրջան՝ Նորադուզ գյուղի միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցիչ աշխատելու: 1953 թ. նրան տեղափոխեցին շրջկենտրոնի դպրոցում դասավանդելու: Շուտով իրադրությունը կտրուկ փոխվեց: Մահացավ ժողովուրդների հայրը՝ ընկեր Ստալինը, մերկացվեց Լ. Պ. Բերիան՝ իբրև միջազգային լրտես: Երեսունամյա հաստածածկ սառույցն սկսեց հալվել, վերաբերմունքը նման «անհարազատների» զավակների նկատմամբ արմատապես փոխվեց. նրանք սովորելու և ապրելու իրավունք ստացան:

1954 թ. Հ. Մ. Ղազարյանը ընդունվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայ ժողովրդի նոր ու նորագույն պատմություն մասնագիտությամբ: Այդ տարիներին մեծատաղանդ գիտնականների մի հսկա ***փաղանգ*** էր համահավաքում պատմության ինստիտուտը, որոնց ստեղծած գիտական ու մարդկային ջերմ մթնոլորտը նպաստեց նրա ու նրա նմանների մասնագիտական աճին, որպես մարդ-քաղաքացու աշխարհիմբռնման ձևավորմանը: Նրա առաջընթացի պրոցեսում բախտորոշ դեր կատարեց գիտական ղեկավարը՝ ***Աշոտ Հովհաննիսյանը*** (1887-1972): Մեծավաստակ գիտնականը նոր էր վերադարձել ստալինյան աքսորավայրից: Նա 1906 թ. կոմկուսի անդամ էր, 1922-1927 թթ.՝ ***Հայաստանի կոմկուսի Կենտկոմի գլխավոր քարտուղար,*** 1927-1937 թթ. Մոսկվայում և Լենինգրադում մի շարք պատասխանատու պաշտոններ էր վարել (ԽՍՀՄ ազգությունների ինստիտուտի պրոֆեսոր, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ և այլն):

1937 թ. նրան էլ, շատերի նման, իբրև ժողովրդի թշնամի, աքսորել էին Ղազախստան: 1954 թ. վերադառնալով աքսորից, քիչ անց Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Մ. Սարյանի, այսինքն՝ հանճարեղ մեր մեծերի վերջնագրի ճնշման տակ Աշոտ Հովհաննիսյանն ընտրվում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Շուտով նրան են վերադարձվում ծավալուն աշխատությունների բռնազավթված ձեռագրերը, իրավունք վերապահում դրանք հրատարակելու, միաժամանակ հեղինակին աշխատանքի են ընդունում պատմության ինստիտուտում, որպես ***ավագ գիտական աշխատող:*** Ընդամենը այսքանը:

Աշոտ Հովհաննիսյանի խստապահանջ, միաժամանակ բարյացկամ,

օգնող ձեռքը Հ. Ղազարյանին տվեց այն ամենը, ինչ գրեթե ոչ մի ասպիրանտ չէր ստացել իր գիտական ղեկավարից: Հզոր այդ անհատականությունից ասպիրանտն ստացավ ոչ միայն գիտելիքների հարուստ պաշար, այլև գրելու արվեստ, բանավիճելու կուլտուրա, բաղաքացիական քաջություն ու ազնվություն, անմնացորդ նվիրում մայր հայրենիքին ու ծնող ժողովրդին:

Հ. Ղազարյանը, իր գիտական ղեկավարի համաձայնությամբ ու օգնությամբ, գրեց թեկնածուական դիսերտացիա «Արևմտահայ դեմոկրատական հոսանքը 1860-ական թվականներին» խորագրով և հաջողությամբ պաշտպանեց պատմության ինստիտուտում 1959 թ.: Մինչ այդ, 1958 թվականին, նրան ընդունել էին պատմության ինստիտուտում որպես կրտսեր գիտական աշխատող, իսկ 1961 թ. ընտրեցին ավագ գիտական աշխատող: Այդ պաշտոնում նա աշխատեց մինչև 1976 թ.:

Պատմության ինստիտուտում աշխատելու տարիներին իրար հետևից լույս տեսան հեղինակի փոքր ու մեծ ծավալի մենագրությունները, բազմաթիվ հոդվածները, որոնք նվիրված էին Արևմտյան Հայաստանում և հայ գաղթաշխարհում խարսխված բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի, սուլթանական բռնապետության դեմ բռնկված ազգային-ազատագրական ոգորումների, հասարակական-քաղաքական հոսանքների, մշակույթի ու գրականության պատմությանը:

Հ. Ղազարյանի առաջին փոքրածավալ գրքույկը (1959 թ.) նվիրված էր մինչ այդ գրեթե անհայտ ***Գրիգոր Չիլինկիրյանի*** կյանքին ու գործունեությանը: Նորահայտ փաստերով նա ապացուցում էր, որ հանիրավի մոռացված այդ մտավորականը ոչ միայն մեծ դեր էր կատարել հայ հասարակական-քաղաքական կյանքում, այլև նամակագրական սերտ կապեր էր հաստատել ***Վիկտոր Հյուգոյի*** հետ, ֆրանսերենից բարձր արվեստով թարգմանել և հրատարակել ***«Թշվառներ»*** վեպը: Նա ցույց էր տալիս, որ Չիլինկիրյանը այդ վեպի արտասահմանյան անդրանիկ թարգմանիչն է, իսկ երկուսի փոխադարձ նորահայտ նամակները նոր լույս էին սփռում հայ-ֆրանսիական հարաբերությունների պատմության վրա: Վ. Հյուգոն իր հայ թարգմանչին խոստանում էր, հնարավորության սահմաններում, օգնության ձեռք մեկնել սուլթանական բռնապետության «գարշելի գարշապարի տակ հեծեծող քաղաքակիրթ մի ժողովրդի՝ հայ ժողովրդին»: Դժվար չէր նկատել, որ Հյուգոյի որոշակի բացասական վերաբերմունքը ոչ միայն Թուրքիայի, այլ նաև թուրքերի նկատմամբ գալիս էր նաև Չիլինկիրյանի ընդարձակ նամակների ազդեցությունից: Այդ օրերին էր, որ ֆրանսիացի մեծ հումանիստը բանաձևում էր, թե՝ ***«թուրք լինեմ թե սուտ ասեմ»*** կամ ավելված երկիր պատկերացնելով, ասում էր՝ ***«այստեղով թուրքերն են անցել»:***

XIX դարամեջի զույգ տասնամյակները փոթորկի ու գրոհի տարիներ էին թե՛ Արևմտյան Եվրոպայում, թե՛ Ռուսաստանում և թե՛ արևմտահայ իրականության մեջ: 60-ականներին հասունացավ խանդավառ հայ երիտասարդների մի հզոր սերունդ, որը անձնազոհ ու հայրենանվեր նախաձեռնությամբ իր վրա վերցրեց տառապող ժողովրդի փրկության առաքելությունը և, հավատալով դրան, հակված էր ապագան ավելի լուսավոր տեսնել, քան այն իրականում եղավ: Խիզախ ու ռոմանտիկ հոգիներ, որոնք չէին վախենում թուրքական գազանին նետահարել և ժողովրդի ազգային-տարածքային իրավունքները պաշտպանել՝ պահանջելով սահմանադրություն անսահմանադրական պետությունից, ազատություն՝ բանտում և ինքնավարություն՝ բարբարոս ու ինքնիշխան կայսրության լայնարձակ երկնքի տակ: Այդ սերունդն էր, որ տվեց մի շարք անուններ՝ արժանի մեծարանքի: Նրանց կյանքն ու գործը՝ նույնքան բուռն ու աղմկոտ, որքան հանիրավի մոռացված, այդ օրերին ***արժանանում էր պատմաբանի բնախույզ հայացքին.*** Գր. Չիլինկիրյան, Հ. Սվաճյան, Մ. Մամուրյան, Ա. Հայկունի, Մ. Նուպարյան, Մ. Խրիմյան, Գ. Սրվանձտյանց, Ա. Թոխմախյան, Մ. Փորթուգալյան և այլն, և այլն: (Այդպես էր բանաձևում «Գրական թերթը» «Մատթեոս Մամուրյան» վերտառությամբ Հայկ Ղազարյանի հրատարակած մենագրության առիթով):

ԳԱ պատմության ինստիտուտի ստեղծագործական աշխատանքի համար ապահովված ջերմ մթնոլորտը, լավ գործերն անպայման հրատարակելու հնարավորությունների ստեղծումը Հ. Մ. Ղազարյանին մղեցին ավելի մեծ կտավի գործերի ստեղծմանը:

Հայկ Ղազարյանի «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.», «Հայ հասարակական-քաղաքական շարժումները և Ռուսաստանը XIX դարի 50-60-ական թվականներին» (ռուսերեն), «Հարություն Սվաճյան» ծավալուն մենագրությունները հայ պատմագիտական մտքի այն անվիճելի նվաճումներն են, որոնք իրենց ամփոփած նոր նյութերով, հեղինակի կատարած լուրջ ընդհանրացումներով երկար ժամանակ կմնան XIX դարի պատմությամբ զբաղվողների հետաքրքրության շրջանակներում:

Խիստ հատկանշական է, որ հեղինակի այդ և մյուս բոլոր գործերը բարձր գնահատականի են արժանացել մայր հայրենիքի գրախոսների՝ կոմունիստների, ինչպես նաև Սփյուռքի դաշնակցական և հնչակյան գործիչների կողմից: Նրա գործերը դրվատել են և՛ «Լենինյան ուղիով» ամսագրի ու «Սովետական Հայաստան» թերթի խմբագիրները, և՛ ՀՅԴ կուսակցության կենտրոնական օրգաններ «Հայրենիք», «Բագին», «Ազդակ» պարբերականները. երևույթը հազվադեպ է և ուշադրության արժանի: Սա նշանակում է, որ Հ. Ղազարյանը անկողմնակալ, օբյեկտիվ պատմաբան է, քաղաքական միակողմանիությունից հեռու:

Ահա ինչ է գրում Հայկոմկուսի կենտրոնական օրգան «Լենինյան ուղիով» ամսագիրը Ղազարյանի «Արևմտահայերը...» ծավալուն (42 մամուլ) աշխատության մասին. «Հ. Ղազարյանի աշխատությունը անվիճե-

լի նվաճում, երևույթ է մեր պատմագիտության մեջ: ...Սակայն հեղինակը հազար անգամ իրավացի է, որ այսօր, առավել քան երբևէ, հրամայական պահանջ է դարձել գիտական ու գաղափարական հիմնավոր պայքար մղել հակառակորդների (թուրք պատմաբանների) դեմ, ***ապացուցել մեր ճշմարտացիությունը:*** Մենք կարծում ենք, սակայն, որ մեր ճշմարտացիությունը մեզ համար ապացուցելը դեռևս քիչ է: Հարկ է, որպեսզի աշխատությունը, որը լիովին պատասխան է տալիս առաջադրված խնդրին, լույս ընծայվի ***ռուսերեն,*** որպեսզի ռուսաց լեզվի միջոցով մեր ճշմարտացիությունը հասնի բովանդակ պրոգրեսիվ մարդկությանը» («Լենինյան ուղիով», 1968, հունվար, էջ 103): Նման ցանկություններ հայտնեցին «Սովետական Հայաստան», «Գրական թերթ» և այլ պարբերականները, ինչպես նաև նրա դոկտորական դիսերտացիայի ընդդիմախոսները:

Զարմանալի է, բայց փաստ, որ Ղազարյանի մենագրությունը (կոմունիստ Աշոտ Հովհաննիսյանի ***խմբագրությամբ***) ամենաբարձր գնահատականի արժանացավ Բեյրութում լույս տեսնող ՀՅԴ կուսակցության կենտրոնական օրգան «Բազին» ամսագրի կողմից, որի խմբագրական կոլեգիայի անդամներն էին Սիմոն Վրացյանը, Կարո Սասունին և այլոք: Վարիչ խմբագիրն էր Կարո Սասունին, ընդարձակ գրախոսության հեղինակն էր «Լ. Մ.» ստորագրած անձնավորությունը: Ահա մի քանի հատվածներ այդ գրախոսությունից. «***Ղազարյանի աշխատությունը իր տեսակի մեջ առաջինն է, որտեղ բազմակողմանիորեն ներկայացվում է արևմտահայության համարյա մեկ դար ժամանակաշրջան ընդգրկող պատմությունը***»(«Բազին», 1969, փետրվար, էջ 36):

«Անտարակույս, Ղազարյանի աշխատությունը այն գրքերից է, որոնք արժանի են ոչ միայն ռուսերեն, այլև եվրոպական կարևոր լեզուներով թարգմանվելու: Եվ այդ գործը այսօրվա հայության համար, կարծում ենք, որևէ էական դժվարություն չի ներկայացնում (մենք այս դեպքում նկատի ունենք թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի ուժերը միասնաբար)» («Բազին», էջ 76-77):

Ծավալուն գրախոսականի հեղինակը, արտահայտելով իր կուսակցության կենտրոնական մարմնի կարծիքը, եզրափակում է. «Եվ այսպես, Երևանում տպվեց մի ուշագրավ պատմագիտական աշխատություն... որը պատկանում է երիտասարդ գիտնական Հայկ Ղազարյանի գրչին: Մենք ցանկացանք ընթերցողի ուշադրությունը հրավիրել այդ գրքի վրա, անել որոշ խորհրդածություններ և մեր ձայնը գումարել նրանց ձայնին, ովքեր անկեղծորեն հաստատում են, որ Ղազարյանը լավ գործ է կատարել, շնորհակալության արժանի գործ:

Նման գործերի գոյությունն իսկ պերճախոս վկայություն է, որ չի կարելի մշտապես փակել մի ամբողջ ստեղծագործ ժողովրդի բերան, չի կարելի կենդանի ժողովրդի սրտից հիմնովին հանել կենսական

ազատության և ուղեցույց ճշմարտության սերը, մարել իր արժանիքներին գիտակից հպարտության զգացումը, խորտակել բարբարոսների կամքին չհպատակվելու բնատուր ոգին: Ղազարյանի աշխատությունը, որքան էլ ջանանք խուսափել պաթոսից, այսպիսի դեպքերում, վերջի-վերջո, ամեն ինչ պաթոս է դառնում, ***հաշտվողականության, գերնաքարշության, ամեն ինչի ծափահարելու զզվելի սովորության մերժումն է, սիրո և խղճի գործ, կորովի և հոգևոր խոյանքի արտահայտություն: Ուստի տեղին է հանձնարարել՝ «կարդացեք և տարածեք»***(«Բազին», էջ 79): Այստեղ է, որ պետք է ասել՝ ***ավելին ավելորդ է:***

Եվ այսպես, Հ. Ղազարյանի «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը...» աշխատությունը գրախոսվեց Հայաստանի մամուլի գրեթե բոլոր օրգանների կողմից: Նշենք դրանցից մի քանիսը. «Սովետական Հայաստան» (17 նոյեմբերի, 1967 թ.), «Երեկոյան Երևան» (29 դեկտեմբերի, 1967 թ.) «Գրական թերթ» (22 մարտի, 1968 թ.), «Լենինյան ուղիով» (հունվար, N 1, 1968 թ.), «Լիտերատուրնայա Արմենիա» (N 1, 1968 թ.), «Լրաբեր հասարակական գիտությունների» (N 12, 1967 թ.), նույնիսկ քրդական «Ռյա Թազա» պարբերականը: «Լենինյան ուղիով» ամսագիրը մենագրության շուրջ մտքերի փոխանակություն հայտարարեց: Եղավ քննական մի հոդված, որին պատշաճ մակարդակով պատասխանեց Հ. Ղազարյանը: Սփյուռքահայ մամուլի գրեթե բոլոր օրգանները ևս կամ գրախոսում էին մենագրությունը, կամ արտատպում հայրենիքում տպագրված գրախոսականներից որևէ մեկը:

Գրական այդ հաղթարշավից հետո միայն, երբ գիրքը համաժողովրդական ճանաչում ստացավ, ***1968 թ. փետրվարին*** գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի նոր պատմության բաժինը այն ներկայացրեց իբրև ***դոկտորական դիսերտացիա*** և նրա 37-ամյա հեղինակին պաշտպանության իրավունք արտոնեց: Գիտական խորհրդին ներկայացված որոշման մեջ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը այսպես է ավարտել իր իսկ խմբագրությամբ լույս տեսած մենագրության մասին ունեցած իր ընդարձակ ելույթը. «***Ամփոփենք.*** ընկ. Հայկ Ղազարյանի աշխատությունը հանդիսանում է արևմտահայերի ազգային կազմավորման պրոցեսը բնութագրող և նրանց ազգային-ազատագրական հետագա մղումները սնող հանգամանքների ուսումնասիրությանը նվիրված արժեքավոր մենագրություն, որը նոր պատմության սեկտորը երաշխավորում է որպես դոկտորական դիսերտացիա: Աշխատությունը հանդիսանում է երիտասարդ պատմաբանի գիտական հասունության դրական ցուցանիշը: Ըստ որում, հարկ է նշել, որ հեղինակի ուսումնասիրությունը հակումներ ունի ոչ միայն պատմական նոր գիտելիքների համարձակ բացահայտման, այլև դրանց գրական շարադրանքի մարզում: Մնում է բաղձալ, որ առաջիկայում հեղինակը կատարելագործի իր շնորհները՝ ի մոտո ծանոթանալով արևմտաեվրոպական պատմագ-

ության դասականների գործերին, եթե ոչ դրանց բնագրերի, գեթ թարգմանությունների ուսումնասիրության միջոցով:

Պատմական գիտությունների թեկնածու Հայկ Ղազարյանի «Արևմտահայերի սոցիալ-սնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.» աշխատությունը, որը լույս է տեսել իմ խմբագրությամբ և արդեն մատչելի է դարձել գիտական լայն հասարակայնությանը, կարծում եմ, լիովին հնարավորություն է տալիս հեղինակին պաշտպանության դնել իր ուսումնասիրությունը որպես դոկտորական դիսերտացիա:

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան,
5 հունվարի, 1968 թ., ք. Երևան»:

Մենագրությունն ու ավտորեֆերատն ստանալով, Կանադայում Խորհրդային Միության արտակարգ և լիազոր դեսպան ***Համո Ակիմի Հարությունյանը*** ընդարձակ գրություն էր ուղարկել պատմության ինստիտուտի պաշտպանական խորհրդին, դրվատանքի խոսքեր չխնայելով նոր պատմության բաժնին և դիսերտանտին: Նա նաև նամակ էր գրել Հ. Ղազարյանին, նշելով. «Ուրախալին այն է, որ մեզ մոտ էլ են սկսել լուրջ զբաղվել Արևմտյան Հայաստանի պատմությամբ: Մի 15 տարի առաջ, երբ այդ մասին հետաքրքրվեցի Երևանում, դուրս եկավ, որ մինչև անգամ հնարավորություն չկար հիմնավոր կերպով զբաղվել այդ հարցերով, չնայած որ շատերը համաձայն էին, որ հարկավոր է: Հիմա տեսնում ենք, որ իրար հետևից լույս են տեսնում գրքեր Արևմտյան Հայաստանի մասին: ***Շնորհավորում եմ Ձեզ***, որ Դուք նվիրված եք այդ ազնիվ գործին, ինչպես որ մի շարք ուրիշ ընկերներ:

20 դեկտեմբերի, 1967 թ., Մոսկվա,
Համո Հարությունյան»:

Դիսերտացիայի ու նրա երիտասարդ հեղինակի մասին բարձր կարծիքներ հայտնեցին (որոնք տպագրվեցին մամուլում) ***Ջոն Կիրակոսյանը, Արամայիս Մնացականյանը, Երվանդ Սարգսյանը, Վարդան Պարսամյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Ծատուր Աղայանը, Վալտեր Դիլոյանը, Ջավեն Գրիգորյանը, Կարո Քարամյանը*** և այլոք: Թեհրանում լույս տեսնող «Ալիք» պարբերականը արտատպում էր նրա մենագրությունից հայ ազատամարտին և քաղաքական մտքի պատմությանը վերաբերող գրեթե ամբողջական բաժիններ: Դրանց կցված մեկնությունները դրական են և նոր մենագրությունների ստեղծման համար ոգևորող:

Հայկ Ղազարյանն իրավամբ ճանաչված այն եզակի պատմաբաններից է, որոնք խորությամբ են հետազոտել հայ հասարակական-քաղաքական մտքի պատմությունը, բացահայտել XIX դարի հայ առաջավոր գործիչների պրակտիկ ու գաղափարական կապերը ռուս առաջավոր, հեղափոխական գործիչների հետ: Նրա ջանքերով պարզվել է, ապացուցվել, որ Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի կարևոր մտքերը արձագանք են գտել արևմտահայ իրականության մեջ, Փարիզի կոմունային,

ֆրանսիական հեղափոխություններին վերաբերող շատ հոդվածներ թարգմանվել ու արտատպվել են Կ. Պոլսում և Զմյուռնիայում լույս տեսնող հայկական մամուլի էջերում:

Գաղափարական սուր բանավեճ մղելով թուրք պատմաբանների դեմ, Հ. Ղազարյանը միաժամանակ կարողանում է հիմնավորապես ապացուցել, որ սուլթանական բռնապետության ճիրաններում կնս հազարամյակ ճնշված արևմտահայ հասվածը անվերապահորեն ունեցել է ռուսական կողմնորոշում և պրակտիկ ու գաղափարական կապեր է հաստատել ռուս առաջավոր գործիչներ Ա. Ի. Գերցենի, Մ. Բակունինի, Ն. Գ. Չերնիշևսկու, Ն. Սերնո-Սոլովևիչի հետ: Արևմտահայ ընտրանին, ըստ նրա բերած նյութերի, խստագույնս քննադատում էր ցարիզմի գաղութային քաղաքականությունը, սակայն բարձր գնահատում առաջավոր Ռուսաստանի այն զավակներին, որոնք ջանում էին հայ ժողովրդին ազատել զույգ բռնապետությունների արյունոտ մագիլներից:

1978 թ. լրանում էր Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման 150-ամյա դարադարձը: ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի որոշմամբ այդ հոբելյանը մեծ հանդիսավորությամբ պետք է նշվեր ողջ Սովետական Միությունով մեկ: Ավելին. «Գորշ կարդինալ» մականուն ստացած, Կենտրոնական կոմիտեի երկրորդ քարտուղար Միխայիլ Սուսլովը, որը վաղուց հայտնի էր ***հայատյաց*** իր հայացքներով, հրապարակ նետեց թեժաթուխ մի փաստաթուղթ՝ ***«Միացման թեզիսներ»*** վերտառությամբ: Բավական ընդարձակ վերոհիշյալ գրության մեջ, ոչ ավել և ոչ պակաս ասվում էր. "Вхождение Армении в состав России":

Այդ և նման բազմաթիվ այլ բնութագրությունների համաձայն հայ ժողովուրդը ոչ թե դարավոր պայքարի, թափած ծով արյան գնով էր միացել Ռուսաստանին, այլ Ուկրաինայի օրինակով, Բոգդան Խմելնիցկու նման մի կոչ էր արձակել և կամավոր մտել ցարիզմի տիրապետության տակ: Սակայն վտանգավորն այն ձևակերպումն էր, թե իբր ամբողջ ***Հայաստանն էր մտել*** Ռուսաստանի կազմի մեջ: Այսինքն, Մ. Սուսլովը մեղմ ձևով, անաղմուկ հայ ժողովրդին զրկում էր ***պահանջատիրության*** անկապտելի իրավունքից: Նա Ա. Ա. Գրոմիկոյի նման ծաղկեպսակ չէր դնում հայոց ցեղասպանության դահիճ Քեմալ Աքաթուրքի՝ Վ. Ի. Լենինի «խաչեղբոր» գերեզմանին, որպեսզի մեր մտավորականները, թեկուզև սփյուռքահայերը ընդվզեին: Ասում են՝ Մ. Սուսլովը այդպիսով մի կողմից հաճոյանում էր Թուրքիայի վարչակազմին, մյուս կողմից Հայաստանի ղեկավարությանը հասկացնում՝ մոռացեք ցեղասպանությունը, մոռացեք տարածքների պահանջը:

Թեզիսների հեղինակը Սովետական Միության ***երկրորդ,*** գաղափարական հարցերում նույնիսկ ***առաջին*** մարդն էր: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի այն ժամանակվա հայրենանվեր ղեկավարությունը (Կ. Ս. Դեմիրճյան) անհնազանդության դրոշ չպարզեց, իհարկե չէր էլ

կարող պարզել: Նա լռությամբ, միաժամանակ տհաճությամբ ենթարկվեց այդ որոշմանը՝ պատասխանի խոսքը թողնելով մտավորականությանը, հատկապես գրողներին ու պատմաբաններին: Ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Սուրեն Երեմյանը, պրոֆեսորներ Վարդան Պարսամյանը, Զավեն Գրիգորյանը, Ջոն Կիրակոսյանը, գրողներ Ավետիք Իսահակյանն ու Դերենիկ Դեմիրճյանը, Հրաչյա Քոչարն ու Պարույր Սևակը և շատ ու շատ ուրիշներ խստագույնս դատապարտեցին փաստաթուղթը և կոչ արեցին չենթարկվել այդ որոշմանը: Պատմաբանները, Կենտրոնական կոմիտեի լուռ համաձայնությամբ, որոշեցին գրել այնպես, ինչպես մինչ այդ գրել էին, այսինքն՝ այդ թեմայով հրատարակած մեծ ու փոքր ծավալի աշխատությունները նախկինի նման վերնագրել Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: ***Երևանի պետական համալսարանի պատմափիլիսոփայական ֆակուլտետի դեկան, ԽՍՀՄ պատմության ամբիոնի վարիչ Հայկ Ղազարյանը*** նրանց ***առաջին շարքերում*** էր, իհարկե, Կենտկոմի ու հիմնարկի ղեկավարության լուռ համաձայնությամբ:

Հոբելյանի նախօրյակին, իհարկե սուսլովյան թեզիսներից հետո, լույս տեսավ Հայաստանի Հանրապետության բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության ***«Պատմության հարցեր»*** ժողովածուն (Երևան, 1978 թ.), որի խմբագիրն էր Զ. Տ. Գրիգորյանը, տեղակալը՝ Հ. Մ. Ղազարյանը: Ժողովածուին մասնակցող 18 հեղինակները, ուղղակի թե անուղղակի, անհնազանդություն էին ցուցաբերում և հատուկ շեշտադրությամբ մերժում հրապարակ նետված պետական տեսակետները: Դրանով չվերջացավ: 1978 թ. Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը, պրոֆեսոր ***Հայկ Ղազարյանի խմբագրությամբ,*** ռուսաց լեզվով, բավական շքեղ արտաքինով հրապարակեց "Присоединение Восточной Армении к России и его историческое значение" ընդհանուր վերնագրով հոդվածների ժողովածուն: Խմբագրի գրչին պատկանող, ժողովածուի առաջաբանի տեղ ծառայող չորս էջերում անուղղակիորեն պատասխան է տրվում «Թեզիսների» կազմողներին և կոչ արվում ընթանալ հայագիտության ավանդական, դասական ուղիով: Պայքարի ձևը ճիշտ էր ընտրված: Կարճ ժամանակ անց ոչ թե հայ ղեկավարները, այլ Մ. Սուսլովը «մոռացավ» իր ասածը: Հաղթանակեցին առողջ բանականությունը, մտավորականության միասնական կամքն ու հայրենասիրական ոգորումները: Հ. Ղազարյանն, իհարկե, շարունակեց գնալ այդ ճանապարհով:

1979 թ., այսինքն՝ հոբելյանական տարեդարձից մի քանի ամիս անց, նույն համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց Հ. Ղազարյանի կապիտալ մյուս աշխատությունը, որը վերնագրել էր "Армянское общественное политическое движение в 50-60-х годах XIX века и Россия": Սա արդեն հոդված կամ հոդվածների ժողովածու չէր, այլ ծանրակշիռ մի մենագրություն, գրախոսողների բնութագրությամբ՝ ***«Եր-***

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

կարարև ու արգասաբեր հետազոտությունների ամփոփագիր»:

Հանրապետության կուսակցական, գիտական ու գրական մամուլը հերթական անգամ ևս ջերմ արտահայտվեց Հ. Ղազարյանի արդեն այս նոր գրքի մասին: Լույս տեսան բազմաթիվ գրախոսականներ, որոնց հեղինակներից էին Ջոն Կիրակոսյանը, Երվանդ Սարգսյանը, Վասպուր Մելիքսեթյանը, Համո Վարդանյանը, Կոնստանդին Խուդավերդյանը և ուրիշներ: Սվյուռքահայ բազմակուսակցական մամուլը, առանց խտրականության, արտատպում էր հայրենիքում տպագրված գրախոսականները, միաժամանակ ուրախությամբ արձանագրում, թե մենագրությունը լույս է տեսել ռուսաց լեզվով, անգլերեն ընդարձակ ամփոփագրով, շքեղ կազմով, նկարազարդված: Այն թուրք կեղծարարներին հերթական լուրջ հարվածն էր, որն արդեն նախ՝ լեզվի, ապա՝ փաստառատության պատճառով իր վրա էր հրավիրում օտարազգի հետաքրքրասեր ընթերցողի ուշադրությունը:

Հ. Ղազարյանի այս մենագրությունը ստեղծվել էր նախկինում հրատարակած իր մյուս գրեթե բոլոր աշխատությունների հենքի վրա: Հեղինակն իր առաջին ու մեծածավալ գրքից տասը տարի հետո էր հրապարակում այս մենագրությունը՝ հաշվի առնելով ընդդիմախոսների գրեթե բոլոր դիտողությունները, հայտնած թեր ու դեմ կարծիքները, քննադատական պահանջները: Նա գիտական շրջանառության մեջ էր դնում այնպիսի նոր նյութեր, օտար, հատկապես Ռուսաստանի արխիվներից հայտնաբերած թարմ փաստեր, որոնք թուրք պատմաբաններին խոսելու, կեղծելու տեղ չէին թողնում: Անվանի արևելագետ, պրոֆեսոր Ե.Ղ. Սարգսյանը մենագրության գրախոսականի մեջ գրում էր. «Իր քաղաքական նպատակասլացությամբ և ճշմարիտ կոնցեպցիայով այս գիրքը յուրովի պատասխան է թուրք հետադիմական այն գիտնականներին, որոնք իրենց բազմաթիվ աշխատություններում անխնա կեղծում են մեր ժողովրդի պատմությունը և հարցերին անտեղյակ ընթերցողի մեջ հայ ժողովրդի անցյալի ու այսօրվա մասին ստեղծում թյուր ըմբռնում» («Գրական թերթ», 1979 թ., 23 նոյեմբերի, N 47):

Աշխատության կարևորագույն արժանիքներից մեկն էլ այն էր, որ երկրի սոցիալ-տնտեսական կյանքի, հայ հասարակական-քաղաքական հոսանքների, ազատագրական շարժումների պատմությունը հեղինակը շարադրում է ամբողջական ձևով, այսինքն՝ ներկայացնում է ոչ միայն արևելահայ և արևմտահայ հատվածները, այլև Ռուսաստանում, օսմանյան կայսրությունում և Արևմտյան Եվրոպայում եղած հայ գաղթօջախները: Պրոբլեմի այսօրինակ հետազոտումը պահանջում էր պատմագիտական լուրջ պատրաստվածություն և երկարատև ու համառ աշխատանք՝ երկու խնդիր, որոնք իրենց բազմակողմանի լուծումն են ստացել մենագրության յուրաքանչյուր բաժնում:

Աշխատության մեջ ծավալուն էջեր է հատկացված օսմանյան կայսրության բարբարոսական տիրապետության տակ ապրող արևմտահա-

յության նկատմամբ թուրքերի վարած հայատյաց քաղաքականության վերլուծությանը: Ընթերցողն այդ բաժինները կարդալով, այլևս չի տարակուսում, որ դարի երկրորդ կեսին ծավալված ազգային-ազատագրական շարժումները հայ ժողովրդի մեջ դարերով կուտակված ցասման պոռթկումներն էին՝ բռնկված առանց կանխակալ որոշումների: Հետևաբար դրանք ոչ թե նախօրոք ծրագրված ապստամբություններ էին, այլ ***ինքնապաշտպանական*** կռիվներ: Ուրեմն սխալ են գրում, իրողությունը շիլ ոսպնյակի միջով են անցկացնում թուրք պատմաբանները, որոնք թմբկահարում էին, թե ***հայերն ապստամբվեցին,*** նոր մենք նրանց ոչնչացրեցինք: Հ. Ղազարյանը բազում փաստերով ապացուցում է այդ տեսության սնանկությունը, առանց բարձրաձայնելու դրան ասում ո՛չ, հազար անգամ ո՛չ: Հայ ժողովրդի ազատագրական ոգորումները ***ոչ թե պատճառ էին, այլ հետևանք:*** Նա կարողանում է ապացուցել նաև, որ հայ ժողովրդի XIX դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժումները արդեն հանդիսանում էին Եվրոպայի ու Ասիայի ժողովուրդների հակաֆեոդալական պայքարի ընդհանուր շղթայի կարևոր օղակներից մեկը և ունեին ոչ միայն համազգային ձև, այլև համադեմոկրատական բովանդակություն (այս էջերը շարադրելիս, օգտագործել ենք նրա աշխատության գրախոսողների տպագիր կարծիքները):

Թուրք պատմաբաններին պատասխան հանդիսացող վերոհիշյալ մենագրությունը անհրաժեշտ էր ոչ միայն անցյալ դարի 70-ական թվականներին, այլև ***այսօր, բանգի համաշխարհային հանրությունը պետական մակարդակով դատապարտում է Թուրքիայի կատարած ցեղասպանությունը, հայասպաններին հարկադրում ճանաչել 1915-1922 թթ. իրենց կատարած ոճրագործությունը:***

Հ. Ղազարյանի ստեղծագործական կյանքի բեղուն ժամանակահատվածը համընկնում էր այն տարիներին, երբ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը պատրաստում էր իր լավագույն գործերից լավագույնը՝ «Հայ ժողովրդի պատմություն» ութ հատորյակը կամ անվանակոչված բազմահատորյակը: Մենագրություն կամ հոդված գրելը հեշտ էր, ակադեմիական բարձրորակ հատորներ ստեղծելը, նյութը այդ ոգով շարադրելը՝ դժվար:

Հ. Ղազարյանը կարողացավ, ճիշտ է, դժվարությամբ, բայց և այնպես, հաղթահարել այդ պատնեշը: Նա ցույց տվեց, որ կարող է պրոբլեմատիկ հարցերը ներկայացնել, ընդհանրացնել հմտությամբ: Նրա գրչին է պատկանում Արևմտյան Հայաստանի, Հայկական Կիլիկիայի, Թուրքիայի հայ գաղթօջախների, կարճ՝ արևմտահայ հայաշխարհի ու գաղթաշխարհի XVIII-XIX դարերի պատմության ամբողջ շարադրանքը, որը զետեղված է «Հայ ժողովրդի պատմության» IV և V հատորներում: Շուրջ 25 մամուլ շարադրանքի, 4 քարտեզների համահեղինակ, V հատորի գլխավոր խմբագրի տեղակալ, նույնիսկ գրականության և

անվանացանկի կազմող՝ ահա այն, ինչ կարող էր անել մեկ հետազոտող: Այդ վաստակն ի նկատի ունենալով, ՀԽՍՀ ԳԱ նախագահությունը պրոֆ. Հ. Մ. Ղազարյանին պարգևատրեց «Գովեստագրով», իսկ հանրապետական գիտական ու կուսակցական մամուլը կրկին դրվատանքի խոսքեր չխնայեց նրա հասցեին:

Պրոֆ. Ղազարյանը որոշակի ներդրում է կատարել նաև հայ գրականագիտության բնագավառում: Նրա «Գրիգոր Չիլինկիրյան», «Մատթեոս Մամուրյան», «Հարություն Սվաճյան» մենագրությունները, բազմաթիվ հոդվածները նվիրված են արևմտահայ վերոհիշյալ գործիչների, ինչպես նաև Ստ. Ոսկանյանի, Մկրտիչ Խրիմյանի, Սեդրակ Տեր-Սարգսենցի (Տեկանց) և այլոց կյանքի, գրական գործունեության բազմակողմանի վերլուծությանը: Պատմաբանի ջանքերով, փաստորեն, լուսավոր այդ դեմքերը, որոնք հանիրավի մոռացության էին տրված, իրենց արժանի տեղը գտան հայ մշակույթի պատմության մեջ: Նրա և պրոֆ. Հ. Պողոսյանի ջանքերով հրատարակվեց Մ. Մամուրյանի ***երկերի միհատորյակը***, Ս. Տյուսաբի ***երեք վեպերը***: Ոչ միայն սովետահայ, այլև արևմտահայ իրականության մեջ դրանք հրատարակվում էին ***առաջին անգամ:***

Հ. Ղազարյանի գրականագիտական աշխատությունները հիմք դարձան, որ ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը «Հայ նոր գրականության պատմություն» ակադեմիական բազմահատորյակի մեջ տեղ տար այդ մտածողներին և նրան հանձնարարեր գրելու ընդարձակ բաժիններ Մ. Մամուրյանի, Ստ. Ոսկանյանի, Գր. Չիլինկիրյանի մասին:

Պրոֆ. Հ. Ղազարյանը եղել է Հայաստանի Հանրապետության միջբուհական «Պատմության հարցեր» (1979-1982 թթ.) ժողովածուի գլխավոր խմբագիրը, որի երկու հատորները նվիրված էին Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման 150-ամյա հոբելյանին: Նույն հոբելյանին է նվիրված նաև նրա խմբագրած և ռուսաց լեզվով հրատարակած հոդվածների (20 մամուլ, որից 2 մամուլը խմբագրի հոդվածն է) ժողովածուն: Այդ ժողովածուների համար հանրապետության բարձրագույն կրթության մինիստրության կոլեգիան նրան պարգևատրեց, իսկ մամուլի մի շարք օրգաններ դրական, նույնպես գովասանական խոսքեր ասացին նրա հասցեին:

Հայկ Ղազարյանը մեծ ջանքեր է թափել հայկական սովետական հանրագիտարանի ստեղծման գործում: Նա այն առաջին խանդավառվող երիտասարդներից մեկն էր, որոնք առանց վարձի ու վճարի, կամավոր, հայրենասիրական մղումով ձեռնամուխ եղան հայկական հանրագիտարանի ***բառացանկի կազմմանը:*** Երկու տարվա մեկվաչան աշխատանքից հետո հանրագիտարանը պաշտոնապես հիմնադրվելու իրավունք ստացավ: Կազմվեցին խմբագրական խորհուրդներ: Հ. Ղազարյանը ընդգրկվեց հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության ճյուղային խորհրդի կազմում: Այնուհետև նրա գրչի տակով էին անց-

նում Արևմտյան Հայաստանի և արևմտահայության պատմությանը, գրականությանը նվիրված գրեթե բոլոր հոդվածները:

Նա միաժամանակ գրեց բազմաթիվ հոդվածներ, որոնցից մի քանիսը նշենք իբրև ծավալուն աշխատանքներ: Դրանք էին. ***«Ազգային Սահմանադրություն»*** (հատ. 1, էջ 109), ***«Արևմտյան Հայաստան»*** (հատ. 2, էջ 41-43), ***«Բիթլիսի վիլայեթ»*** (հատ. 2, էջ 437-438), ***«Դիարբեքիրի վիլայեթ»*** (հատ. 3, էջ 376-377), ***«Զեյթուն»*** (հատ. 3, էջ 683-684), ***«Զեյթունի ապստամբություն»*** (հատ. 3, էջ 684-686), ***«Իզմիր»*** (հատ. 4, էջ 312-313), ***«Կոստանդնուպոլիս»*** (հատ. 5, էջ 616-619), ***«Մատթեոս Մամուրյան»*** (հատ. 7, էջ 198), ***«Ազգարարային հարցը»*** (հեղինակակից), (հատ. 1, էջ 54-66) և այլն: Ստորագրված և հաճախ էլ անստորագիր տպագրված այդ հոդվածների ***թիվը մեծ է:*** Կարելի է ասել, թե քչերը կան, որոնք այդքան հոդվածներ տպագրած լինեն հանրագիտարանի երկու հրատարակություններում:

Պրոֆ. Հ. Ղազարյանը զբաղվել է նաև Հայաստանի պատմական աշխարհագրությամբ, ավելի կոնկրետ՝ ***քարտեզագրությամբ:*** Իբրև հեղինակակից, նրա կազմած քարտեզները զետեղված են «Հայ ժողովրդի պատմության» V հատորում, Հայկական սովետական հանրագիտարանում: Այդ քարտեզներն են՝ «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» (Լ. Հ. Վալեսյանի, Ս. Դուլյանի, Վ. Ա. Դիլոյանի հեղինակակցությամբ), «Հայկական մարզը» (նույնի), «Հայաստանը և հարևան երկրները 1828-1840 թթ.» (ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի հեղինակակցությամբ), «Հայաստանը և հարևան երկրները 1860-70-ական թվականներին» (ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի հեղինակակցությամբ):

Հայկ Ղազարյանը իր գիտական բեղմնավոր գործունեությունը հաջողությամբ զուգակցել է բուհական մանկավարժական արդյունավետ աշխատանքին: Սկսելով գյուղական ուսուցչի համեստ, բայց պատվավոր պարտականություններից, նա երկար տարիներ, համատեղության կարգով, հայ ժողովրդի նոր և նորագույն պատմություն է կարդացել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում: 1976 թ. մայիսից մրցույթով ընտրվել է Երևանի պետական համալսարանի ԽՍՀՄ պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում և այնուհետև, մինչև 1988 թ., կարդացել է ԽՍՀՄ պատմություն առարկան՝ XIX դարն ընդգրկող ժամանակահատվածը: 1980 թ. պրոֆեսոր Հ. Ղազարյանը ընտրվել է պատմա-փիլիսոփայական ֆակուլտետի դեկան, միաժամանակ մնալով ամբիոնի վարիչի պաշտոնում:

1981 թ. նոյեմբերի 1-ին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան մրցույթ հայտարարեց ակադեմիկոսների և թղթակից-անդամների թափուր տեղերի համար: Երևանի պետական համալսարանը Հայկ Ղազարյանի թեկնածությունը, փակ գաղտնի քվեարկությամբ, միաձայն որոշմամբ, ներկայացրեց ակադեմիկոսի տեղի համար՝ հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության մասնագիտության գծով: Այդ առիթով Երևանի

պետական համալսարանի ռեկտորատի և կուսակցական կոմիտեի 1981 թ. նոյեմբերի 28-ի միացյալ նիստում հաստատված բնութագրի մեջ կարդում ենք. «Համալսարանում աշխատելու տարիներին ընկ. Հ. Ղազարյանը իրեն դրսևորել է որպես բարձրորակ մասնագետ, դասախոս, մանկավարժ: Նրա դասախոսություններն աչքի են ընկնում իրենց գիտական ու գաղափարական բարձր մակարդակով, կուռ տրամաբանությամբ, լեզվական մեծ կուլտուրայով: Ուսանողները դրանք լսում են անսքող հետաքրքրությամբ: Որպես ֆակուլտետի դեկան, ընկ. Հ. Ղազարյանը ամենօրյա ու համառ աշխատանք է տանում ուսումնական պրոցեսը կատարելագործելու, աշխատանքային կարգապահությունը ֆակուլտետում բարձր պահելու, ֆակուլտետի գիտահետազոտական աշխատանքային թեմատիկան ճշգրտելու ուղղությամբ»:

Պրոֆ. Հ. Ղազարյանի՝ ֆակուլտետի դեկան աշխատելու տարիներին գիտահետազոտական աշխատանքն աննախադեպ աշխուժություն ապրեց: Հատկանշական է, որ գիտական աշխատանքի ոլորտում ներգրավվեցին բազմաթիվ ու ***շնորհաշատ ուսանողներ:*** 1979-1982 թթ. Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողները ողջ ԽՍՀՄ-ում, ներառյալ Մոսկվան, երեք տարի անընդմեջ գրավեցին առաջին տեղը: Նրա ղեկավարած 14 ուսանողների գրած ռեֆերատները արժանացան ոսկե մեդալի, դրամական պարգևատրման, ինչպես նաև ԽՍՀՄ բարձրագույն կրթության մինիստրության, ՀամԿԽ-ի, ՀամԼԿԵՄ Կենտրոնական կոմիտեի կարմիր դիպլոմի: Նույնանման պարգևատրության արժանացավ նաև Հայկ Ղազարյանը: Նրան պարգևատրեցին Հայաստանի բարձրագույն կրթության մինիստրությունը, ԼԿԵՄ Կենտրոնական կոմիտեն, համալսարանի ռեկտորատը:

Ոգևորությունը տեղին էր, քանզի պարգևատրված 14 ուսանողներն էլ, ավարտելուց հետո, ուսումը շարունակեցին համալսարանի, հատկապես գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում: Նրանք այսօր կա՛մ գիտության թեկնածուներ են, կա՛մ էլ հասարակական, պետական գործիչներ, Ազգային ժողովի պատգամավորներ: Կադրերի պատրաստման գործում Հ. Ղազարյանը քիչ մրցակիցներ ունի: Նա ղեկավարել է 15 ասպիրանտների (6-ը՝ համալսարանում, 7-ը՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, 2-ը սփյուռքահայեր են): Նրա ղեկավարած ասպիրանտների մեծ մասը այսօր գիտության թեկնածուներ են, երկուսը պատրաստել են դոկտորական դիսերտացիա: Սփյուռքից՝ բեյրութցի Հակոբ Գրգեռյանի և թեհրանցի Տիգրան Բայաթիի աշխատանքներն ավարտված են և աշնանը կներկայացվեն պաշտպանության:

1988 թ. Հ. Ղազարյանը սեղավոխվեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հայ ժողովրդի պատմության ամբիոն՝ աշխատելու պրոֆեսորի պաշտոնում: 1992 թ. հունիսին նա ընտրվեց նույն ինստիտուտի նորաստեղծ «Ռուսաստանի պատ-

մության» ամբիոնի վարիչ, որտեղ աշխատեց մինչև 1995 թ. մայիսը: Այնուհետև նա իր դիմումի համաձայն ազատվեց աշխատանքից և անցավ կենսաթոշակի:

Հայկ Ղազարյանը 1980-1984 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի պատմափիլիսոփայական ֆակուլտետի դեկան, բնականաբար՝ և նույն ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, համալսարանի մեծ խորհրդի անդամ, մանկավարժական ինստիտուտի պաշտպանական խորհրդի անդամ, հանրապետական «Գիտելիք» ընկերության նախագահության անդամ, համալսարանի հրատարակչական խորհրդի անդամ, հայ գրողների և պատմաբանների գործերի վերահրատարակության խմբագրական կոլեգիայի անդամ և այլն:

Նա ստեղծել է գեղեցիկ և պարծանքի արժանի ընտանիք: Նրա երեք երեխաները (Կորյուն, Ռուզան, Խորեն) միջնակարգ դպրոցն ավարտել են ***ոսկե մեդալով,*** բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ ուսման ***գերազանցությամբ,*** այսինքն՝ կարմիր դիպլոմով: Կորյունը մաթեմատիկական գիտությունների թեկնածու է դարձել 25 տարեկանում, Խորենը Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան համալսարանի արևելագիտության ֆակուլտետում ասպիրանտուրան ավարտել է և եգիպտագիտության գծով պաշտպանել դիսերտացիա 25 տարեկան հասակում: Ռուզանը սրտաբանության մեջ է մասնագիտացել և աշխատում է Երևանի դիագնոստիկայի (ախտորոշման) կենտրոնում իբրև սրտաբան:

Պրոֆ. Հ. Ղազարյանն ունի չորս թոռ (Գագիկ, Արեգ, Խորեն, Հայկ), որոնք բոլորն էլ սովորում են գերազանցով կամ ունեն մի քանի չորս գնահատականներ: Ավագ թոռը՝ Գագիկը, այս տարի Մոսկվայում անգլոռուսական դպրոցն ավարտեց ***ոսկե մեդալով և ընդունվեց*** Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ:

Հայկ Ղազարյանն այսօր անցել է կենսաթոշակի, սակայն շարունակում է իր բեղմնավոր ստեղծագործական աշխատանքը: Նա ավարտել է «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը XIX դարի վերջին քառորդում» գիրքը և ավարտին է հասցնում «Խրիմյան Հայրիկն ու իր ժամանակը» ծավալուն մենագրությունը: Ցանկանանք նրան երկար տարիների կյանք, որպեսզի կարողանա ի կատար ածել իր մտահղացումները, ծրագրերը, որոնք շատ են և ի նպաստ են հայագիտության զարգացմանը՝ այն էլ պատկառելի այդ տարիքում:

Քնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիա
(Հայկական մասնաճյուղ)

Երկու խոսք

ԱՐԵՎՄՏՅԱՆ Հայաստանի և արևմտահայության պատմության վիճահարույց ու կնճռոտ բազմաթիվ խնդիրները մեր հետազոտության առարկա են դարձել ***շուրջ հիսուն տարի անընդմեջ***: Իրար հետևից հրատարակելով բազմաթիվ ու բազմաբնույթ աշխատություններ, խորությամբ ուսումնասիրելով հայրենի և հատկապես օտար սկզբնաղբյուրները, մենք միշտ էլ հոգեկան խռովկանքի մեջ ենք եղել: Սկզբում զարմացած, հետագայում աստիճանաբար զայրացած ու վիրավորված ենք զգացել մեզ, չհասկանալով, թե ինչպե՞ս է պատահել, որ քաղաքակիրթ մարդկությունը ***ուր տասնամյակ շարունակ*** դիտորդի կարգավիճակով է նայել համաշխարհային պատմության մեջ կատարված XX դարի առաջին ***ցեղասպանությանը,*** ավելի ճշգրիտ՝ իր նախադեպը չունեցող ***հայասպանության*** սահմռկեցուցիչ եղելությանը:

Զարմանալի չէ՞, արդյոք, որ մինչև վերջերս էլ արևմտյան խոշոր տերությունները չէին դատապարտում իսլամական Թուրքիայի վարած հայասպան քաղաքականությունը, նրանից հաշիվ չէին պահանջում քրիստոնյա մի ամբողջ ժողովրդի ստվար հատվածի բնաջնջման զազրելի արարքների համար: Մեծ տերությունների անտարբերությունը ողբերգական հետևանքներ ունեցավ ***Հայկական եղեռնից*** քառորդ դար հետո նաև:

Եթե Թուրքիայի իրականացրած ցեղասպանության քաղաքականությունը ժամանակին դատապարտվեր, ապա Երկրորդ աշխարհամարտի տարիներին արյունարբու թուրքերից, վայրենաբարո քուրդ բեկերից ու չերքեզներից ոչ պակաս բարբարոս Ադոլֆ Հիտլերը նույնը չէր կրկնի ***հրեաների*** նկատմամբ և ***գինիկաբար չէր հայտարարի, թե հիմա ո՞վ է հիշում հայերի ցեղասպանության եղելությունը:***

Առաջին և երկրորդ ցեղասպանությունների միջև, շատ նմանությունների առկայությամբ հանդերձ, կան նաև որոշակի տարբերություններ: Սուլթան Համիդին և Մուստաֆա Քեմալին համահավասար բորենու

կերպարանք առած Հիտլերը նույն, գուցե և առավել դաժան մեթոդներով ոչնչացրեց շուրջ ***վեց միլիոն հրեաների,*** սակայն չկարողացավ բռնազավթել նրանց հայրենիքը, չհասցրեց կեղծել ֆաշիստների ջարդարարության անմեղ զոհերի սրբազան պատմությունը: Ժամանակակից գերմանացիները, իհարկե Գերմանիայի պարտությունից հետո միայն, ճանաչեցին իրենց ֆաշիստ նախորդների հրեասպան քաղաքականությունը, հրապարակավ դատապարտեցին այն, համայն մարդկության ներկայությամբ ներողություն խնդրեցին զոհերի հարազատներից և փորձեցին վճարել, այսօր էլ վճարում են թափված արյան գինը (չնայած նրան, որ մարդկային արյունը գին չունի):

Ժամանակակից Թուրքիան համառում է, կաշվից դուրս գալով ***ուրանում հայասպանության արմենոցիդի*** փաստն՝ իրենց նախորդների արյունոտ ձեռքերով: Թուրք մտավորականությունը, պետական այրերն այսօր առավել ևս կատաղի դիմագրավում են, միջոցների մեջ խտրություն չդնելով՝ փորձում են ոչ միայն ժխտել երիտթուրքերի, ապա՝ Մուստաֆա Քեմալի իրականացրած ցեղասպանության իրողությունը, այլև նույնիսկ անամոթաբար փորձում են հայ ժողովրդին մեղադրել կատարվածի մեջ: Դրանում, իհարկե, մեղքի իրենց առյուծի բաժինն ունեն Արևմուտքի թուրքամետ քաղաքագետները, ինչու չէ, նաև ժամանակի խորհրդային դիվանագետները: Վերջիններիս լռությունը շուրջ վեց տասնամյակ շարունակ թավորել է, այսօր էլ թավորում է քրդերի ցեղասպանությամբ զբաղվող «դեմոկրատական» Թուրքիային, թուրքահպատակ ժողովուրդների պատմության կեղծարարությամբ պարապող թուրք պատմաբաններին:

XXI դարաշեմին կարծես իրադրությունը փոխվում է...

Ի հեճուկս երեկվա, առավել ևս ժամանակակից Թուրքիայի, ինչպես նաև հիտլերյան ֆաշիզմի, հերոսական պայքարի ու մեծ զոհերի գնով ***Հայաստանն այսօր դարձել է ազատ, անկախ և դեմոկրատական հանրապետություն:*** Երկրի ղեկավարությունը, հզոր մտավորականությունն ու ամբողջ ժողովուրդը (Հայրենիքում թե Սփյուռքում) արդեն սատարում են ***Հայ Դատի*** պաշտպաններին, ամուր ու աներեր կանգնած են նրանց թիկունքում, Թուրքիայից պահանջում են այն, ինչ շարունակում են ուրանալ նրա պետական այրերը: Ավելին, եվրոպական Արևմուտքը, անդրօվկիանոսյան տերությունները, ճիշտ է, մեծ դժվարությամբ, բայց և այնպես հերթականությամբ ճանաչում են հայերի ցեղասպանության փաստը և Թուրքիային նույնպես հարկադրում ճանաչել այն:

Արդ, որոնք են մեր ժողովրդի արդարացի, գուցեև չափավոր պահանջներն այսօրվա Թուրքիայի «դեմոկրատական» հանրապետությունից:

1. Հանուր մարդկությանը հայտնի է, որ 1894-1896 թթ. արյունարբու Աբդուլ Համիդը գազանաբար ոչնչացրեց ***երեք հարյուր հազար արևմտահայերի:*** Սուլթանական Թուրքիան մեծ տերությունների դեսպանների, դիվանագիտական դիտորդների աչքերի առջև, առանց արգելքի, փորձեց դատարկել Արևմտյան Հայաստանը, այնտեղ շերտընդմեջ բնակեցրեց քրդերին և մահմեդական ռազմատենչ այլ ցեղերի, որպեսզի հետագայում հեշտությամբ կարողանար ոչնչացնել մի ամբողջ, այն էլ՝ անպաշտպան ժողովրդի: Ջարդերը շարունակվեցին 1900-1908 թթ.:

1909 թ. երիտթուրքերը, գաղտնի հրահանգավորումով, Աղանայում ***երեսուն հազար*** անպաշտպան հայերի ոչնչացրին: Հայոց եկեղեցիները դարձան դժբախտ զոհերի գերեզմանատեղեր: ***Քսան հազար*** հայ էլ քարասպան եղան կամ սրախողխող դարձան քաղաքամերձ գավառներում:

Առաջին աշխարհամարտը դարձավ Հայոց ցեղասպանության գագաթնակետը: 1915-1918 թթ. Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ նահանգներում բնաջնջվեց շուրջ ***մեկուկես միլիոն արևմտահայություն:*** Քեմալականները, հավատարմորեն շարունակելով երիտթուրքերի քաղաքականությունը, դատարկեցին ողջ Կիլիկիան, 1922 թ. սեպտեմբերին տեղահանվեց, Իզմիրի ծովախորշում ջրախեղդ արվեց կամ էլ ոչնչացվեց ***չորս հարյուր հազար հայ:***

Այսպիսով, մոտավոր հաշվարկներով, 1894-1922 թթ. Թուրքիան ոչնչացրեց շուրջ ***երկու միլիոն հայ բնակչություն:*** XX դարում մարդկության պատմության մեջ կատարվեց ցեղասպանություն:

Թուրքական յաթաղանին զոհ գնացին հայ անվանի մտավորականներ, գրողներ ու հրապարակախոսներ, գիտնականներ և պետական գործիչներ. Գ. Զոհրապը, Դ. Վարուժանը, Սիամանթոն, Ռ. Մեակը, Հ. Թլկատինցին, Երուխանը, Ռ. Զարդարյանը, Ա. Հարությունյանը, Տ. Չյուկուրյանը, Տ. Քելեկյանը: Խելագարվեց հանճարեղ Կոմիտասը:

Գուցե ինձ ազգային սնապարծության մեջ մեղադրեն, հոգ չէ, ես իմ իմացած ճշմարտությունը պիտի բարձրաձայն արտասանեմ: Պարոնայք թուրքեր, ձեր ձևավորումից (օղուզական ցեղից մինչև այժմ) ի վեր դուք մարդկությանը տվե՞լ եք վերոհիշյալ զոհերից գեթ մեկին հավասար որևէ մեծություն: Ո՛չ, չեք տվել: Այդ ես չէ, որ ասում եմ, այլ՝ ողջ առաջավոր մարդկությունը:

Հետևաբար, հայ ժողովրդի օրինական պահանջն է, ***որ Թուրքիա-***

յի ղեկավարությունը, նախագահի ու վարչապետի մակարդակով, գլխիկոր ներողություն խնդրի Մեծ եղեռնից վերապրողներից, Հայոց պետական այրերից, հոգևոր առաջնորդներից, մեր մտավորականությունից, հանուր հայությունից: Այդ խիստ անհրաժեշտ արարողությունը ոչ թե ***կնսեմացնի*** թուրք պետական այրերին, այլ ցույց կտա նրանց մեծահոգությունը, կկանխի հետագա ցեղասպանության կենսագործումը թուրդ և այլ ժողովուրդների նկատմամբ:

2. Բարոյական բավարարություն պատճառելով Մեծ եղեռնից վերապրողների զավակներին, նրանց հարազատներին, Թուրքիան պարտավոր է հայ ժողովրդին վերադարձնել նրա հնամենի ու պատմական Հայրենիքը՝ ***Արևմտյան Հայաստանն*** ու ***Հայկական Կիլիկիան,*** որոնք այսօր հայազրկված են, անվանափոխված, տիրապետողների կարծիքով՝ թուրքացած ու քրդացած:

Ահա հայկական նահանգների համառոտ ցանկը. ***Էրզրումի*** (Կարինի), ***Վանի, Խարբերդի, Դիարբեքիրի*** (Տիգրանակերտի), ***Բիթլիսի*** (Բաղեշի), ***Սվազի*** (Սեբաստիայի), ***Տրապիզոնի, Աղանայի, Մարաշի*** վիլայեթներն իրենց հարակից շրջաններով: Միայն Արևմտյան Հայաստանի և հայաբնակ նահանգների տարածքը կազմում է ***280 հազար քառակուսի կիլոմետր:*** Հայկական Կիլիկիան ունի ***45 հազար քառակուսի կիլոմետր տարածություն:*** Հետևաբար, Թուրքիան պարտավոր է հայ ժողովրդին վերադարձնել շուրջ ***երեք հարյուր քսան հինգ հազար քառակուսի կիլոմետր տարածք,*** որպեսզի այնտեղ վերադառնան աշխարհով մեկ սփռված, Եղեռնից մազապուրծ հայկական բեկորները և ծաղկեցնեն իրենց հայրենի օջախները, տեր դառնան անթաղ մեռելների ոսկորներին:

3. Հայ ժողովուրդը 1915-1922 թթ., բարոյականից զատ, կրել է նաև նյութական մեծ կորուստներ: «Հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշիռը կազմվել է Հայ ազգային պատվիրակության (նախագահ՝ ***Պողոս Նուբար)*** և Հայաստանի Հանրապետության պատվիրակության (նախագահ՝ ***Ա. Ահարոնյան)*** կողմից և համատեղ ստորագրությամբ որպես հուշագիր ներկայացվել 1919 թ. Փարիզում հրավիրված խաղաղության վեհաժողովին:

«Մոտավոր հաշվարկների համաչայն, Առաջին համաշխարհային պատերազմի և ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանում և Հայաստանի Առաջին Հանրապետության տարածքում 1914-1919 թթ. ընթացքում հայ ժողովրդի կրած նյութական վնասների հաշվեկշիռը կազմում է 19 միլիարդ 130 միլիոն 932 հազար ֆրանկ (1919 թ. Ֆրանսիայում գործող գներին համապատասխան) (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[1]: Եթե սրան ավելացնենք, և անպայման պիտի ավելացնենք, տոկոսները, այն էլ՝ միջազգային տոկոսադրույքով, ապա այդ գումարը ***կկազմի հիսուն միլիարդ ԱՄՆ դոլար:***

Թուրքիան հասկանում է, որ Եղեռնի ճանաչումից հետո, համաշխարհային հանրության բարոյական, ինչու չէ, նաև ֆիզիկական ճնշման տակ հարկադրված կլինի ժամանակի ընթացքում վճարել այդ գումարները, այնպես, ինչպես Գերմանիան վճարում է հրեաներին: Ահա այս պարագան է Թուրքիային վախենալու առիթ տալիս, որպեսզի նա հրաժարվի ցեղասպանության ճանաչումից: ***Սակայն միանշանակ է, որ այսօր կամ վաղը կճանաչվի ցեղասպանության փաստը, և հայ ժողովուրդը իր դահիճների ժառանգներից կստանա իր արյան գինը, կորցրած ունեցվածքի արժեքը, հատկապես՝ սրբազան Հայրենիքը: Մենք դրանում բոլորովին չենք կասկածում:***

*
* *

Մեր սույն մենագրությունը ստեղծելիս, նպատակ ենք հետապնդել նորահայտ և հանրահայտ փաստերով ցույց տալ, որ թուրք բորենիները հայ ժողովրդի նկատմամբ ազգային խտրականության քաղաքականություն են վարել ***դեռևս միջնադարում:*** Այսինքն՝ հայերին ուծացման, ստրկացման, անարգման, ազգային վիրավորանքների են ենթարկել Հայաստանի նվաճման պահից ի վեր: Հետևաբար, Թուրքիայի հայասպանության պրոցեսը եղել է ***դեռևս, շարունակական, որն իր ավարտին է հասել Առաջին աշխարհամարտի տարիներին:***

Հրատարակելով մեր այս նոր աշխատությունը, փորձելով ի մի բերել նախորդ մենագրությունների արդյունքները, նպատակ ենք ունեցել օգնել ***Հայ Դատի*** հայրենանվեր հարգարժան գործիչներին, որպեսզի նրանք կարողանան հայ ժողովրդին հասցնել բաղձալի նպատակին: Գիրքն ամբողջական լինելու, խնդիրը քիչ թե շատ ընդարձակ ներկայացնելու նպատակով, այստեղ օգտագործել ենք մեր նախորդ աշխատությունները, երբեմն՝ հատվածաբար, երբեմն էլ՝ նույնիսկ ամբողջական գլուխներով: Իհարկե, դրանք խմբագրված են, առավել

[1] «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները», տեղեկատվության հեղինակ՝ պատմական գիտությունների դոկտոր *Լ. Ա. Բարսեղյան,* Երևան, 1999, էջ 13:

ճշգրտված, հաշվի առնելով արված դիտողությունները, հայտնված կարծիքները:

Աշխատության էջերում գիտական շրջանառության մեջ ենք դրել Ռուսաստանի, հատկապես ***Մոսկվայի բազմաթիվ*** արխիվներից հայտնաբերված այնպիսի վավերագրեր, որոնք ժամանակին չէին տրամադրվում հետազոտողներին, մասնավորապես՝ հայ հետազոտողներին: Այդ նոր նյութերով, օտար սկզբնաղբյուրներով փորձել ենք հետևողականորեն մերկացնել թուրք ***պատմաբանների կեղծարարությունը, պատրաստ՝ բանավիճելու նրանց հետ, ճշգրտված փաստերի ծանրության տակ վերջիններիս հարկադրել հրաժարվելու իրենց կեղծ հայեցակարգից:***

Մենագրության մեջ երբեմն տեղ են գտել առանձին մտքերի, փաստերի, նույնիսկ պարբերությունների ***կրկնություններ:*** Մենք դրանք նկատել ենք և յուրաքանչյուր բաժինն ամբողջական թողնելու մտահոգությամբ այդ կրկնությունները չենք վերացրել:

Աշխատությունը բաղկացած է ***երկու գրքից:*** Երկրորդ գիրքն ընդգրկում է 1895-1923 թթ. ժամանակահատվածը և վերնագրված է ***«Արևմտահայության ցեղասպանությունը»:*** Սույն հատորի հրատարակման հաջողությանը կհաջորդի ***երկրորդ գիրքը,*** եթե ուժերս և ժամանակը բավարարեն...

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

մ.թ.ա. VII դարից մինչև XVII դարի առաջին կեսը

Առաջաբանի փոխարեն

(Համառոտ ակնարկ)[1]

ԱՇԽԱՐՀԻ հնագույն ժողովուրդներից մեկը՝ հայ ժողովուրդը, պատմության ետնախորքից սկսած, հազարամյակներ առաջ բնակվելիս է եղել իր բուն հայրենիքում, այն է՝ Հայկական լեռնաշխարհում: Աստվածաշնչյան Նոյ նահապետի Հայաստան իջևանելու առասպելախառն արարողությունից ի վեր բնաշխարհում աճել ու թվաշատ է դարձել բնակչությունը, որը բարձրանալով նախնադարյան համայնական հասարակարգից, բռնել է քաղաքակրթության ճանապարհը: Աշխարհագրական աննպաստ դիրքը, օտար արշավանքներից կրած ծանր հարվածները չեն կարողացել ընկճել ժողովրդի ազատատենչ ոգին, ինքնուրույն պետականություն կազմավորելու անկապտելի իրավունքը:

Հայ ժողովուրդը տեղաբնիկ է, ձևավորվել է Հայկական բարձրավանդակում, իբրև պատմական ապաղջ ունենալով արմենների, հայասա-ազիներին և երկրորդական այլ ցեղախմբերի: Ինչպես ամեն մի տեղաբնիկ այլ ժողովուրդ, այնպես էլ հայ ժողովուրդն իր բուռն կոնսոլիդացիայի պրոցեսում ընդունել է նաև սակավաթիվ եկվորների, որոնք էական դեր և ծանր կշիռ չեն ունեցել այդ ընդհանրության հորձանուտում:

Հայկական լեռնաշխարհում ապրող բնակիչների մարդաբանական արտաքինը հետազոտողները (Ֆ. Լուշան, Է. Շանտրը, Վիրխովը, Պանտյուխովը և այլոք), ըստ ակադեմիկոս Ս. Երեմյանի, ապացուցել են, որ բնաշխարհում ապրելիս են եղել եվրասիական ռասայի հայա-

[1] Ակնարկի առաջին մասը շարադրելիս օգտվել ենք ակադեմիկոս *Ս. Տ. Երեմյանի* և պրոֆ. *Թ. Խ. Հակոբյանի* աշխատություններից: Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 6, Երևան, 1980, էջ 134, «Սովետական Հայաստան», Երևան, 1987, «Վարչատարածքային բաժանումը», էջ 20-29:

կերպար ***(արմենոիդ)*** ցեղեր: Այդ կերպարն ունի կարճ և կլոր գանգ, ուղիղ, լայն և միջին բարձրության ճակատ, երկար և կոր քիթ, սև, երբեմն կապույտ աչքեր, բավ հոնքեր, խիտ և թուխ (սակավադեպ՝ խարտյաշ) մազեր, սպիտակ (երբեմն՝ թուխ) մաշկ[1]:

Այդ բոլոր հատկանիշները ***այսօր էլ*** բնորոշ են մեզ՝ հայ ժողովրդիս: Հետևաբար խորապես սխալվում են այն գրչակները, որոնք դույզնինչ կասկած են հայտնում հայ ժողովրդի տեղաբնիկ լինելու հանգամանքի վերաբերյալ: Դրանք հիմնականում թուրք «պատմաբաններն» են, որոնք մոռացած իրենց անցյալն ու ծագումնաբանությունը, փորձում են ցեխ շպրտել մեր անցյալի վրա, կեղծել իրողությունը, որպեսզի կարողանան մեզ հավասարեցնել իրենց՝ վաչկատուն, թափառաշրջիկ, ավազակաբարո անցյալի տեր ժողովրդի հետ:

Հայկական լեռնաշխարհում ապրող մեծ ու փոքր ցեղային միավորումները մ.թ.ա. IX-VI դարերում համախմբվում են Արարատյան (Ուրարտու) տերության շուրջ և ոչ միայն ստեղծում մի հզոր պետություն, այլև կազմավորում պատմության բեմահարթակ իջնող հայ ժողովրդին: Օտար հեղինակներ Հերոդոտը (մ.թ.ա. V դ.), Քսենոֆոնը (մ.թ.ա. V-IV դար) թողել են բազում վկայություններ, որոնք ապացուցում են, որ մ.թ.ա. Աքեմենյան հզոր տերության 20 սատրապություններից մեկը ընկած էր Հայաստանի տարածքի վրա, այն տեղանքում, որտեղ գոյատևել էր Արարատյան թագավորությունը՝ Ուրարտուն[2]:

Քսենոֆոնի աշխատությունների ընծեռած փաստերն ասում են, թե մ.թ.ա. V դարում Հայկական բարձրավանդակում էին գտնվում Արևելյան և Արևմտյան Արմենիաները, այսինքն՝ Հայաստանները:

Սելևկյանների գերիշխանության ժամանակահատվածում (մ.թ.ա. III դար-II դարի սկիզբ) Հայաստանն իր մեջ էր ներառում Մեծ Հայքը, Փոքր Հայքը և Ծոփաց աշխարհը: Ըստ որում, Մեծ Հայքի հյուսիսային մասը դեռևս ինքնուրույն էր, չէր մտնում Սելևկյան տերության կազմի մեջ և ստեղծել էր իր Երվանդունիների ***Արարատյան*** թագավորությունը՝ ***Արմավիր և Երվանդաշատ*** մայրաքաղաքներով[3]:

Եզրակացությունը մեկն է. մ.թ.ա. V դարում Առաջավոր Ասիայում ձևավորման ավարտն էր ապրում հայ ժողովուրդն իր ուրույն մշակույ-

---

[1] Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», «Սովետական Հայաստան», Երևան, 1987, «Վարչատարածքային բաժանումը», էջ 28:

[2] Տե՛ս *Թ. Խ. Հակոբյան,* Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984: Տե՛ս նաև *Ա. Ա. Ալպոյաճեան,* Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950:

[3] Տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 20:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՍՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ, ԱՐՎԵՍՏԱԳԻՏ ՎԱՀԱԳՆ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ, ՀԱՅԿ ԱՅՑԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿ

թով և ինքնուրույն պետականությամբ: ***Ըստ որում, Հայոց ծննդախոսական առասպելը, որը բերում է V դարի պատմահայր Մովսես Խորենացին իր «Պատմություն Հայոց» քերթողական աշխատության էջերում, հայ ժողովրդի անվանադիրը (էպոնիմը) համարում է Հաբեթյան Հայկին, այսինքն՝ Հայկ նահապետին, որի ներից սպանվեց Բելը և ազատություն ստացավ հայ ժողովուրդը***[1]:

Սակայն ինչպես օտարազգի Ե. Ֆոռները, այնպես էլ մեծանուն հայագետներ Գրիգոր Ղափանցյանն ու Սուրեն Երեմյանը հայ ժողովրդի «հայ» կամ «խայ» ինքնանվանումը կապում են Բարձր Հայք և Փոքր Հայք նահանգներն ընդգրկող այն երկրանվան հետ, որը խեթական արձանագրություններում կոչվել է Հայասա (Խայաշա):

Այժմ արդեն չի վիճարկվում, այլ հաստատվում է այն տեսակետը, թե մ.թ.ա. VI դարավերջին և հաջորդ դարասկզբին գրված սկզբնաղբյուրներում, հատկապես Հին Կտակարանի գրվածներում, պարսկալեզու արձանագրություններում, հին հունական հեղինակների մի շարք գործերում Հայկական լեռնաշխարհը ներկայացվում է իբրև ***հայ ժողովրդով բնակեցված միատարր երկիր: «Հայերի միատարրության և միալեզվության հիմքի վրա չեավորվել է Երվանդունիների թագավորությունը մ.թ.ա. VI-III դարերում, որին հաջորդել է Հայաստանի ամենահզոր դինաստիան՝ Արտաշեսյան հարստությունը (մ.թ.ա. II-I դարերում)»***[2]:

Քրիստոսի ծննդից առաջ շուրջ երկու հարյուրամյակ հարատևած Արտաշեսյան դինաստիայի կառավարման ժամանակաշրջանում պատմական Հայաստանը համահավասարեց հայկական գրեթե բոլոր նահանգները, ստեղծեց Առաջավոր Ասիայում ամենահզոր տերությունը, իրոք դարձավ ***ծովից ծով պետություն, իր ծայրաբևերը հասցնելով Սև, Կասպից ու Միջերկրական ծովերը:*** Տիգրան II-ը (95-55) նվաճեց շրջակա գրեթե բոլոր երկրները, ճանաչվեց արքայից արքա տիտղոսով, հիմնեց տերության ***երկրորդ՝ Տիգրանակերտ*** մայրաքաղաքը (շուրջ 250 հազ. բնակչությամբ), ապա երրորդ՝ թագավորանիստ քաղաքը դարձրեց սելևկյանների կենտրոնը՝ Անտիոքը: Մ.թ.ա. 83 թ. գրավված Անտիոքն ուներ շուրջ ***կես միլիոն*** ազգաբնակչություն, բարգավաճ արհեստագործություն և առևտուր: Կարճ ժամանակ մնալով ու ամրանալով այնտեղ, հայ-պոնտական զորքերը շարժվեցին դեպի

---

[1] Տես «Սովետական Հայաստան», էջ 28:
[2] Նույն տեղում:

Միջերկրականի ափերը, նվաճեցին Դաշտային Կիլիկիան և Փյունիկիան: Այսպիսով, Արտաշեսյանների, հատկապես Տիգրան Մեծի գահակալության տարիներին ***Հայոց թագավորությունը դարձավ հին աշխարհի հզոր թագավորություններից մեկը՝ եթե ոչ ամենահզորը,*** որը քաղաքական վիթխարի դեր կատարեց Մերձավոր Արևելքի պետությունների ու ժողովուրդների կյանքում:

Հայոց պետությունը տնտեսական և հատկապես մշակութային անանախադեպ զարգացման հասավ Արշակունիների գահակալության չորս հարյուրամյակներում (I-V դարերում, ավելի կոնկրետ՝ 63(66) - 428 թթ.):

Հայ ժողովուրդը աշխարհում առաջինը՝ ***301 թ. քրիստոնեությունն ընդունեց իբրև պետական կրոն:*** Առաքելական եկեղեցի մկրտված, Հռոմից առաջ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի հրապարակավ դավանած կրոնն այսօր ճանաչվում է ամբողջ աշխարհում, հայերի հետ միասնաբար տոնվում է նրա 1700-ամյա հոբելյանը: Այսինքն՝ լուսավորչական եկեղեցին ավելի վաղ է պետականորեն ճանաչվել, քան կաթոլիկը (313 թ. Միլանի էդիկտը):

Արշակունիների գահակալության վերջին սասանամյակներին արդեն երկատված Հայաստանի մշակութային կյանքում, կարծես թե աստվածային պարգևով, երկնքից լույս ճառագեց հայ ժողովրդի գլխին: ***Մեսրոպ Մաշտոցը 406 թվականին ստեղծեց հայոց գրերը:*** Վռամշապուհ թագավորը հայրենանվեր իշխանների հետ գիրկընդխառն խթանեցին դպրոցների ու դպրության, պատմագիտության ու գրականագիտության զարգացումը: Հինգերորդ դարը իրավամբ հայ մշակույթի պատմության մեջ գնահատվեց որպես ոսկե դար: Բավական է արձանագրել, որ հինգերորդ հարյուրամյակում իր հանճարեղ «Պատմություն Հայոցն» ստեղծեց թերթողահայր Մովսես Խորենացին: Այն անփոխարինելի սկզբնաղբյուր դարձավ ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր ժողովուրդների պատմության համար:

Արտաշեսյան, ինչպես նաև Արշակունյաց Հայաստանի բուն ***տարածքը տարածվում էր 300-312 հազար քառակուսի կիլոմետրի միջև[1]:*** Համենայնդեպս, միայն Մեծ Հայքի տարածքը հասնում էր 260 հազար քառակուսի կիլոմետրի, այսինքն՝ տասն անգամ ավելի մեծ, քան այսօրվա Հայաստանի Հանրապետությունը: Տիգրան Մեծի տերությունը շատ ավելի ընդարձակ էր, սակայն մենք այդ հողերը հայկական չենք համարում, բանզի դրանք գրավվեցին, կես դար մնացին Հայաստանի կազմում, ապա, կայսրության բաժանումից հետո, կամ անկախացան, կամ էլ զավթվեցին հռոմեացիների և պարսիկների կողմից:

Մեծ եղեռնից հետո քաղաքական նշանակություն ստացավ նաև նախաքրիստոնեական ժամանակաշրջանի հայ ժողովրդի թվաքանակի հարցը: Մարդահամարների բացակայության պատճառով, բնականաբար, դժվար է ճշգրտված տվյալներ հաղորդել հայերի կամ ընդհանրապես Հայկական բարձրավանդակում ապրած բնակչության թվի մասին: Միրոդական մակարդակով հետազոտությունները Տիգրան Մեծի գահակալության տասնամյակներին այդ թիվը հասցնում են մինչև ***ութ միլիոնի:*** Համենայնդեպս, Արտաշեսյանների Հայաստանը ***վեց միլիոնից պակաս*** հայ բնակչություն չի ունեցել:

Հունահռոմեական սկզբնաղբյուրները, հնագիտական պեղումների ընձեռած նյութերը, հայկական պատմագիտությունը, հատկապես Մ. Խորենացին, Ղազար Փարպեցին, Եղիշեն և այլոք միաբերան վկայում են, թե Տիգրան Մեծի ժամանակ ***Արտաշատը՝ հայոց Կարթագենը,*** գտնվում էր միջազգային առևտրական ուղիների խաչմերուկում և ուներ շուրջ ***300 հազար հայ*** բնակիչ, որից շատ չնչին տոկոսն էին կազմում հույները ու ասորիները[1]:

Մ.թ.ա. չորրորդ դարում Հայոց առաջին պետության, Երվանդունիների մայրաքաղաքները դարձած ***Երվանդաշատն ու Արմավիրն*** ունեին շուրջ 250-հազարական հայ բնակիչ[2]:

Նորակառույց Տիգրանակերտը, մայրաքաղաք դառնալու տասնամյակներին, ուներ 250 հազար բնակիչ: Պատմաբանի անկողմնակալությունը, սակայն, մեզ հարկադրում է ճշտապահ լինել, այսինքն՝ արձանագրել, որ այդ բնակիչների մեծ մասը հայեր էին, իսկ մյուս փոքր մասն էլ՝ հույն, ասորի արհեստավորներ ու վաճառականներ: Հայաստանի կազմում ընդգրկված, Տիգրան Մեծի կողմից երրորդ մայրաքաղաք հռչակված Անտիոքն ուներ իր ժամանակի համեմատ հզոր տնտեսություն:

Քրիստոնեության ընդունումից առաջ կառուցված հայկական խոշոր քաղաքներ էին ***Վանը*** (Տուշպա), ***Նախիջևանը, Գանձակը, Սեբաստիան, Բիթլիսը, Եվդոկիան, Խլաթը*** և այլն: Քանի որ մարդահամարները բացակայում են, ուստի, մոտավոր հաշիվներով, նույնիսկ

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 28:

[1] *Մովսես Խորենացի*, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 182-183:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 165-170:

պակասավոր թվերով պատմական Հայաստանի այդ բաղադրների բնակչությունը կազմել է շուրջ ***երկու միլիոն*** մարդ: Ըստ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի, քրիստոնեության ընդունման նախօրեին Հայկական բարձրավանդակում ապրում էր ***չորս միլիոն հայ***[1]:

Մենք հանրահայտ այս ճշմարտություններով ընթերցողին չէինք ծանրաբեռնի, եթե մեր դեմ չունենայինք պատմության խայտառակ կեղծարարների՝ ***թուրք ռեակցիոն*** պատմագրությունը:

Արմենոցիդի (հայասպանության) ոճրագործ քաղաքականության կիրառումը՝ առանց հայերի Արևմտյան Հայաստանի սեփականացումը, հազարդ չտվեց պանթուրքիզմի ախտով վարակված երիտասարդ թուրքերի կրքերին: Նրանք այնուհետև սկսեցին խեղաթյուրել պատմությունը: Ձևավորվեց պատմության կեղծարարների թուրքական դպրոցը[2]:

1931 թ. կազմակերպվեց «Թուրքական պատմության ընկերությունը»: Այն համախմբեց երկրի թուրք ու օտարազգի թուրքասեր պատմաբանների մեծ մասին, կառավարությունից աջակցություն ու ցուցումներ ստանալով, ըստ պատմական ժամանակաշրջանների, սկսեց նենգափոխել Թուրքիայի, առավել ևս, նրա տիրապետության տակ ապրած հնագույն ժողովուրդների հազարամյա պատմությունը:

Թուրքիզմի ախտով վարակված ընկերության անդամները հրատարակեցին քառահատոր «Պատմությունը» («Tarih»), որի էջերում ձգտեցին ապացուցել, ավելի ճիշտ, կեղծել, թե օսմանյան բարբարոսները աշխարհի հնագույն ժողովուրդներից են, եթե ոչ ամենահինը: Նրանց կարծիքով մարդկությանը «քաղաքակրթություն պարգևողը», ամբողջ աշխարհում մեծ ու փոքր բազում պետությունների հիմնադիրները օսմանյան թուրքերն են եղել[3]:

Կեղծարարության գլուխգործոցի, այսինքն՝ «Թարիհի» IV հատորում գրված է. «Մարդկության պատմության մեջ ի սկզբանե երբեք գոյություն չի ունեցել թուրքերի նման բազմաթիվ ու մեծ պետություններ ստեղծող մի այլ ցեղ: Թուրքերն են հիմնել Ասիայում և Եվրոպայում իշխանությունների, թագավորությունների և կայսրությունների մեծ մասը»[4]:

---

[1] «Սովետական Հայաստան», էջ 28:

[2] Վերցված է *Հայկ Դազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 10-13:

[3] Տես *Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան,* Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 4:

[4] Նույն տեղում:

Մի՞թե նրանք մոռացել են, որ կրկնագլուխ թուրք օղուզները պատմության բեմահարթակ են իջել XIII դարամուտին և իրենց վարքով հայտնի են իբրև ***բալանչի, ավազակաբարո, ասպատակող, մարդասպան ու արյունախում հորդաներ, ցեղախմբեր և ոչ կազմավորված ժողովուրդ:***

Թուրքերին մեղմ վերաբերվող, նրանց ռուսներին հակադրող Կ. Մարքսը իր «Ժամանակագրական քաղվածքներում» գրում է., թե 1231 թ. ***«Համարյա միևնույն ժամանակ թուրք օսմանների հորդան մուտք է գործում Փոքր Ասիա, որտեղ նրանք ամենից առաջ հիմնում են Կարահիսարի ավազակային պետություն»***[1]:

Պայքարի սլաքները հիմնականում ուղղվեցին հայերի, հայկական հարցի շուրջ հանդես եկած հայ և օտարազգի պատմաբանների դեմ[2]:

Պայքարի դրոշակակիրը դարձավ թուրք պատմաբան Էսատ Ուրասը, որը «Հայերը և հայկական հարցը պատմության մեջ» իր հաստափոր հատորի էջերից ջնջելով Հայաստան անունը, հայտարարեց. «Հնագույն ժամանակաշրջաններից մշակույթների օրրան հանդիսացող այս երկրամասում (իմա՝ Անատոլիա) տարբեր անուններով պետություններ են հիմնվել ու մշակույթներ զարգացել: Բոլոր ժամանակներում անվանի մարդիկ ու նվաճողներ ծնած այս հողը՝ Անատոլիան, յուրաքանչյուր ազգ ցանկություն է ցուցաբերել իրեն վերագրել... Հայերը ևս Անատոլիայի մի մեծ մասի վրա իրենց բնիկ լինելու և երկրի քաղաքական պատմության մշակութային իրավունք ունենալու հավակնություն են ունեցել»[3]:

Ուրեմն Արևմտյան Հայաստանը, պատմաբանի վերամկրտմամբ՝ Անատոլիան, հայերի բնօրրանը չի եղել, այլ սրանք նկվորներ են եղել, որտեղ «... մի վիլայեթ, մի սանջակ, նույնիսկ մի նահիե (վիճակ) չկա, ուր հայերը մեծամասնություն կազմեին»[4]:

---

[1] *К. Маркс,* Соч., т. V, стр. 223.

[2] Մանրամասն տես *Ե. Ղ. Սարկիսով, Ա. Խ. Սաֆրաստյան,* Պատմության հակագիտական լուսաբանության մի քանի փաստերի մասին («Արևելագիտության ժողովածու», 1960, N 1), *Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան,* Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, 1963, Երևան, *Մ. Զուլալյան,* Պատմության նենգափոխման մի արտառոց օրինակ (Պատմա-բանասիրական հանդես, 1966, N 1, էջ 271-279): Թուրքական աղբյուրներից այսուհետև բերված նյութերը քաղում ենք վերոհիշյալ աշխատություններից:

[3] *Esat Uras,* Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, էջ 3, *Մ. Զուլալյանի* թարգմանությամբ:

[4] Նույն տեղում, էջ 145-147:

Էսատ Ուրասին հասատատելու է գալիս թուրք մի այլ պրոֆեսոր Թայիր Գյոկբիլգինը: «Ազգային կռվի սկիզբը» բեժաբուխ նրա գրքում ասվում է. «...ամբողջ պատմության ընթացքում թրքության հայրենիքը հանդիսացող արևելյան վիլայեթներում հայերը վաղուց ի վեր չնչին փոքրամասնություն էին կազմում»[1]:

Հասկանալի է, որ իրար հետ համաձայնեցնելով, ժամանակակից թուրք պատմաբանները նախ ժխտում են հայերի տեղացի լինելու փաստը, իսկ «եկվորներն էլ» (sic) ոչ թե ***երեք միլիոն*** են եղել Թուրքիայում, այլ մի չնչին փոքրամասնություն: Դրանով իսկ նրանք լուծելու են գալիս երկու խնդիր՝ նախ փոքրացնում են Եղեռնի օրերին զոհված 1,5 միլիոն հայերի քանակը, ապա և «գիտականորեն» մերժում սփյուռքահայերի օրինական պահանջը՝ իրենց պատմական ու սեփական հայրենիքի նկատմամբ:

Թուրք պատմաբաններ Չարքը, Հիքմեթ Բայուրը, Շեմսեդդին-Գյունալթայը, Քյոփրյուլու-Ֆուադը, Սադրի Մակսուդի-Արսալը և ուրիշները, Էսատ Ուրասի հետ[2], անդրադառնում են նաև «Անատոլիայի եկվոր հայերի» սոցիալ-տնտեսական գոյապայմանների բնութագրմանը: Նրանք հայտարարում են, թե վաղնջական անցյալից օսմանյան կայսրության հպատակ (օսմանյան կայսրությունը վաղնջական անցյալ չունի - Հ. Ղ.) հայերն ազատ են եղել սոցիալ-քաղաքական ճնշումներից, ընդհակառակը, ավելի լավ են ապրել, քան Մուհամմեդի երկրպագուները:

Ժխտելով հայերի նկատմամբ թուրք բարբարոսների ցուցաբերած վայրագությունների, ազգային ճնշումների, բռնի ուծացման (sic) քաղաքականության կիրառումը, մի խոսքով, կառավարությունից դժգոհելու պատճառները, նրանք ուրանում են նաև «սուլթաններից գոհ» արևմտահայ բնակչության ազգային-ազատագրական շարժումների գոյության փաստը XIX դարում: Ինչ վերաբերում է Զեյթունի 1862, 1879, 1884, Մուշի 1863 թվականների ապստամբություններին, ապա դրանք իբրև թե կազմակերպել են «դաշնակ և հնչակ կոմիտեցիները»[3]:

Նրանք մոռանում են իրողությունը, իրենց չգիտեցողի տեղ դնելով, կեղծում փաստերը, հատկապես այն հանգամանքը, որ 1860-80-ական թվականներին հայ ազատագրական շարժումները բռնկվել էին ի պատասխան Թուրքիայի վարած վայրագ քաղաքականության, իբրև ժողովրդական զանգվածների մեջ դարերով կուտակված ցասման պոռթկումներ: Իսկ ինչ վերաբերում է դաշնակցականներին ու հնչակյաններին, ապա այդ շարժումների ժամանակ ազգային հիշյալ կուսակցությունների պարագլուխները տակավին թոթովախոս մանուկներ էին, և ապացուցելու հարկ չկա, որ կուսակցություններն էլ դեռևս հիմնված չէին:

Թուրք պատմաբանները պայքար էին սկսել նաև սովետական պատմագրության դեմ, սակայն՝ նույնպես կեղծարարությամբ: Այս հարցում առաջնության դափնին խլելու անհարկի ճիգեր է անում Կըրզի-օղլի Ֆահրեդդինը[1], որի «Կարսի պատմությունը» քառահատոր աշխատության էջերում փաստորեն շարադրվում է հայ ժողովրդի սկզբից մինչև մեր օրերի պատմությունը և առաջաբանում ասում է. «Իմ այս աշխատությունը պատասխան է այն քաղաքական պրոպագանդին, որ բոլշևիկյան Ռուսաստանը տանում էր 1945 թ.: Այդ պրոպագանդի նպատակը մեր ձեռքից Կարսն ու Արդահանը խլելն էր: Գիրքը ուղղված է այն հայ ու վրաց գիտնականների դեմ, որոնք պնդում են այս երկրամասի նկատմամբ ունեցած իրենց ինչ-որ «պատմական իրավունքների» մասին»[2]:

Կըրզի-օղլի Ֆահրեդդինը զայրույթով է խոսում Մխիթարյան պատմաբանների, եվրոպական ու հայալեզու հրատարակությունների, ցարիզմի «նվաճողական քաղաքականությունն» արդարացնող Պետերբուրգի ակադեմիայի լույս ընծայած բազմաթիվ այն գրքերի հեղինակների մասին, որոնք «հանդգնել են թուրքերին եկվոր համարել» և Հայաստանը «ճանաչել» են իբրև հայերի բնօրրան: Թուրք պատմաբանը խոստովանում է, որ «պատմության բնագավառում կաղրեր չունենալու հետևանքով, այդ գրքերը (ժամանակին) մեզ վախ են պատճառել ու ստիպել նահանջելու»[3]:

Նրա կարծիքով դա արդեն անցած էտապ է, այժմ գործում է թուրք պատմաբանների «մի բանակ», որը խնդիր պետք է ունենա «ուղղելու հակառակորդների սխալները» և պայքարի դրոշ պարզելու հատկապես սովետական պատմագիտության դեմ:

---

[1] Prof. ***Tayyib Cökbilgin,*** Milli mücadale başlarken. Mondros mütarekesinden Sivas Kongresine. Birinci kitap. Türk tarih kurumu basimevi, Ankara, 1959, էջ 73, ***Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան,*** նշված աշխատությունը, էջ 19:

[2] «Արևելագիտական ժողովածու», N 1, էջ 391, տե՛ս նաև Türk Inkilab tarihi, Ikinci Turk tarih kongresi, էջ 1062, 1074 և այլն:

[3] Տե՛ս «Արևելագիտական ժողովածու», N 1, էջ 391:

[1] Տե՛ս ***Fahrettin Kirzioglu,*** Kars Tarihi, 1953, Istanbul.

[2] ***Kars Tarihi,*** էջ XIII, ***Ս. Զուլալյանի*** հոդված, էջ 272:

[3] ***Kars Tarihi,*** էջ 15:

Մեր նպատակից դուրս է սպառիչ քննադատության ենթարկել ժամանակակից քուրդ պատմագրության կեղծ կոնցեպցիան, սակայն ենթադրում ենք, թե բերված մի քանի փաստերն արդեն պատկերացում են տալիս վերջինիս գրաղմունքի և նպատակների մասին: Ուրեմն այսօր, առավել քան երբևէ, հրամայական պահանջ է դարձել գիտական ու գաղափարական հիմնավոր պայքար մղել հակառակորդների դեմ, ցույց տալ նրանց կատարած աղավաղումները, ապացուցել մեր ճշմարտացիությունը: Իսկ այդ բանն անելու համար ամենից առաջ անհրաժեշտ է շարադրել Արևմտյան Հայաստանի, ընդհանրապես արևմտահայության ***ամբողջական*** պատմությունը, որը մինչև այժմ չի կատարվել ոչ արտասահմանյան, ոչ էլ սովետական պատմագրության կողմից:

Գլուխ առաջին

Հայաստանը IV-XIII դարերում

ԱԿՁԲՆԱԿԱՆ ժամանակաշրջանում ***պայմանականորեն Արևմտյան Հայաստան*** անվանում է ստացել Հայաստանի այն հատվածը, որն ընկել է Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Գտնվելով Արևելքի աշխարհակալ զույգ բռնապետությունների շահական Պարսկաստանի և կայսերական Բյուզանդիայի առևտրատնտեսական ճանապարհների խաչմերուկում, կրելով հիշյալ երկրների իրար դեմ անընդհատ մղվող պատերազմների հարվածները, հայոց պետականությունն իր գոյությունը պաշտպանեց շուրջ ***մեկ հազարամյակ:*** IV դարի վերջին քառորդում մղված պարսկա-հռոմեական պատերազմները եզերվեցին 387 թ. պայմանագրով, որով Հայաստանը բաժանվեց այդ երկու տերությունների միջև[1]:

Հայաստանի արևմտյան նահանգները մտցվեցին արևելյան հռոմեական կայսրության կազմի մեջ, և այնուհետև այդ հատվածը կոչվեց բյուզանդական, հունական կամ, ավելի կոնկրետ, ***Արևմտյան Հայաստան,*** որտեղ թագավորական իշխանությունը վերացվեց 389 թ.:

Արևմտյան Հայաստանը վարչական լուրջ վերածման ենթարկվեց Հուստինիանոս II կայսեր գահակալության (527-565) տասնամյակներին: Երկրում փոփոխվեցին նախարարությունները, կազմավորվեցին *չորս* հայքեր, նախարարների զորքերը պարբերաբար հանվեցին Հայաստանից և օգտագործվեցին Իտալիայում, նույնիսկ Աֆրիկայում մղվող պատերազմներում: Հայ բնակչությանը մեծ վնաս հասցրեց Մորիկ կայսրը (582-602), որի մասին ասում են, թե ծագումով հայ էր:

[1] Արևմտյան Հայաստանի մասին առաջին ծավալուն հոդվածը գրել ենք մենք. տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1976, էջ 41-43: Հետագա կրկնողները երբեմն բառացիորեն արտագրելով այդ հոդվածից կտորներ, զլանում են գոնե հիշատակել դրա գոյության փաստը:

Ժողովրդի վիճակն ավելի վատթարացավ Արևելյան Հայաստանում, որտեղ 428 թ. վերացավ Արշակունյաց թագավորությունը և որոշ ժամանակ անց նրա փոխարեն նշանակվեց պարսիկ մարզպան: VI դարում անցկացվեց *աշխարհագիր:* Պարսիկները թվագրեցին Հայաստանի հողն ու ջուրը, հարկի տակ դրեցին ամեն ինչ, բնակչությունից գանձեցին *գլխահարկ, այն էլ՝ դրամով:* Համբերության բաժակը լցվեց, և 571 թ. *կրտսեր Վարդան Մամիկոնյանի* (Կարմիր Վարդան) գլխավորությամբ բռնկվեց մի հզոր ապստամբություն: Նա տասը հազար զորքով գրավեց Դվինը և փախուստի մատնեց պարսիկ մարզպանին[1]:

Պայքարը ծավալվեց ողջ երկրով մեկ և համաժողովրդական բնույթ ստացավ: Կռվին օգնեցին վրացիներն ու աղվանները: 572 թ. պարսկական 20 հազարանոց բանակը մտավ Դվին, սակայն հայ-վրացական զորքի և աշխարհազորի պատասխան հարվածներից ջախջախվեց, մարզպանը սպանվեց:

Արևելյան Հայաստանում ծավալված իրադարձությունները ոգևորեցին բյուզանդական կայսրությանը՝ պատերազմ հայտարարելու Պարսկաստանին: Փոխադարձ հաջողություններով պարսկա-բյուզանդական կռիվները տևեցին շուրջ 20 տարի: Այդ ընթացքում Հայաստանի զույգ հատվածներում գրեթե ոչնչացվեց կամ տեղահանվեց հայոց զորքը, երկիրը մեթոդաբար զրկվեց պաշտպանունակությունից: Որպեսզի Մորիկ կայսեր քաղաքականությունը ճիշտ հասկանանք, բերենք մի քաղվածք: Ըստ Սեբեոս պատմիչի, Մորիկը նամակ է գրում Պարսից Խոսրով արքային, որտեղ ասում է. «Արի ես իմը (Բյուզանդիային ենթակա հայերին) ժողովեմ և Թրակիա համախմբեմ, իսկ դու քոնը ժողովիր և հրամայիր, որ Արևելք տանեն: *Եթե նրանք մեռնեն, ապա մեր թշնամիները կմեռնեն: Իսկ եթե սպանեն՝ մեր թշնամիներին կսպանեն* (ընդգծումները մերն են Հ. Ղ.)»[2]:

Պարսկա-բյուզանդական 20-ամյա պատերազմն ավարտվեց 591 թ., որի հետևանքով տեղի ունեցավ Հայաստանի նոր բաժանում, այն է՝ երկրի *մեծ մասը՝* մինչև Ազատ գետը, Սևանա լճի ու Հրազդանի միջև ընկած տարածքը, մտավ բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Եղան նոր պատերազմներ, որոնք երկրի տնտեսությանը լուրջ հարված հասցրին, թուլացրեցին այն պահին, երբ դեպի Անդրկովկաս էին արշավում արաբները:

Յոթերորդ դարասկզբին Ասիայի ամենամեծ թերակղզու՝ Արաբական թերակղզու վրա ձևավորվեց մի նոր ու հզոր տերություն, որը կոչվեց *Արաբական խալիֆայություն*[3]*:*

---

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1948, էջ 46:

[2] Նույն տեղում, էջ 46:

[3] Մանրամասն տե՛ս *Ա. Տեր-Ղևոնդյան,* Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:

Վաճառական Մուհամմեդը եղավ այդ պետության հիմնադիրը, մայրաքաղաքը 622 թ. Մեքքայից տեղափոխեց Մեդինա, հրապարակեց իր ուսմունքը, այն է *մահմեդականությունը* (իսլամ), հիմնեց արաբական թվագրությունը (հիջրա), և սկսվեցին արշավանքները: Արաբները, օգտվելով հարևան երկրներում խորացող ֆեոդալական երկպառակություններից, կարճ ժամանակ անց տապալեցին Իրանի Սասանյան դինաստիան, նվաճեցին Մերձավոր և Միջին Արևելքի գրեթե բոլոր երկրները, Եգիպտոսը, Հյուսիսային Աֆրիկան: Դեռևս ռազմական դեմոկրատիայով ապրող այդ վաչկատուն ու ռազմատենչ ցեղերը գրաված երկրներում բռնությամբ տարածում էին *իսլամը* և *արաբերենը* ամենուր հռչակում իբրև պետական լեզու: Դրանից զերծ չմնաց նաև Անդրկովկասը:

640 թ. արաբական ռազմատենչ ցեղերից կազմված, ետևից միայն ավերածություններ թողնող բազմահազարանոց բանակը ասպատակեց Հայաստանը, թալանի ու կողոպուտի ենթարկեց հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, ծանր հարվածներ հասցրեց Դվինին: Քաղաքը գրեթե մարդաթափ արվեց, գերեվարեցին հազարավոր արհեստավորների և առևտրականների ու նրանց գաղթեցրին բուն Արաբիա[1]:

640-650-ական թթ. արաբները երեք անգամ արշավեցին Հայաստան: Նրանց դիմագրավում էր հայ բնակչությունը՝ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ:

Տեսնելով, որ այդքան էլ հեշտ չէր հպատակեցնել ըմբոստ հայ ժողովրդին, խալիֆայությունը գնաց փոխադարձ զիջումների, որը երկուստեք ձեռնտու էր: 652 թ. կնքվեց հայ-արաբական հաշտության պայմանագիրը[2]:

Խալիֆայությունն իր տիրապետությունը հաստատեց Հայաստանի վրա, Թեոդորոս Ռշտունուն ճանաչեց երկրի կառավարիչ, նշանակեցին համեմատաբար թեթև հարկեր, զորքը հանեցին երկրից և նույնիսկ խոստացան, ուրիշ երկրի հարձակման դեպքում, բանակով օգնության գալ: Զիջումների պատճառն այն էր, որ նրանք ձգտում էին Հայաստանը կտրել և հակադրել Բյուզանդական կայսրությանը, ապա այն թողնել իբրև օազիս, ելք՝ անցնելու նոր երկրների ասպատակության[3]:

Խալիֆայության անվանական տիրապետությունը Հայաստանի վրա շարունակվեց մինչև VII դարի վերջերը: 695-761 թթ. ծավալված բյուզանդա-արաբական պատերազմները, լուրջ տնտեսական և քաղաքա-

---

[1] Մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, «Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում», ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, էջ 306-370:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», 1982, էջ 48:

[3] *А. Тер-Гевондян,* Армения и арабский халифат, Ереван, 1977, стр. 150.

կան վնաս հասցնելով հայ ժողովրդին և Հայաստանի ինքնավարությանը, ավարտվեցին արդեն հզոր տերություն դարձած խալիֆայության հաղթանակով: 701 թ. գարնանը Մուհամմադ խալիֆը մեծ բանակով վերջնականապես նվաճեց Հայաստանը, Վիրքը, Աղվանքը և վարչական նոր բաժանման ենթարկեց երկիրը:

701 թ. ստեղծվեց *Արմինիա* անունով մի մեծ նահանգ, որի մեջ մտավ ոչ միայն Հայաստան աշխարհը, այլ նաև *Վիրքը, Աղվանքը, Շիրվանը, Դարբանդը*[1]:

Արմինիան բաժանվում էր չորս մասի, ըստ որում, *Երրորդ Արմինիան* ընդգրկում էր նախկին *Արևելյան Հայաստանը, Չորրորդ Արմինիան՝ Արևմտյան Հայաստանը:* Պաշտպանվեցին նախարարական տները, ինչպես նաև երկրի նախկին վարչական բաժանումները, այն է Սիսականը, Խաչենը, Շիրակ-Արշարունիքը, Բագրևանդ-Կոգովիտը, Բասենը, Տայքը, Աղբակը, Վասպուրականը, Մոկսը, Ապահունիքը, Տարոնը, Անձևացիքը, Սանասունքը և այլն: Իհարկե անունները տառադարձվել էին արաբական ձևով[2]:

Հայաստանի կենտրոնը Դվին քաղաքն էր: Այնտեղ էին նստում և արաբ ոստիկանը, և Ամենայն Հայոց կաթողիկոսը: Երկրի կառավարիչ հայոց իշխանը, VIII դարից սկսած Բագրատունիները նստում էին իրենց կալվածքում, այսինքն սկզբում Դարունայքում, հետո Բագարանում: Հայոց իշխանը ենթարկվում էր և ոստիկանին, և խալիֆին: Նա հավաքագրում էր հայոց այրուձին, պատերազմի պահին, իբրև նաև սպարապետ, նրանց առաջնորդում մարտադաշտ: Հայոց իշխանին էին ենթարկվում բոլոր նախարարները, կաթողիկոսը: Վերջինիս էր վստահված նաև *մեծ դատավարության գործակալությունը:*

Արաբ ոստիկանն ուներ լայն լիազորություններ: Նա խալիֆի աչքն ու ականջն էր Հայաստանում և ոչ միայն Հայաստանում. հավաքել էր տալիս հարկերը, հսկում հեծելազորի վրա, հետևում իշխանի և կաթողիկոսի գործունեությանը: Ամեն ինչի մասին նա պարտավոր էր ժամանակին հայտնել Դամասկոս, այն էլ անմիջապես խալիֆին:

Արաբական լուծը ակամայից կարծես թե այնքան էլ ծանր չէր, սակայն, ըստ էության, գնալով անտանելի էր դառնում և նախարարական տների, և հասարակ ժողովրդի համար: Ամենադաժանը բնակչության *բռնագաղթեցումն* էր, առավել ևս արաբական ցեղախմբերի վերաբնակեցումը Հայաստանի կենտրոնական նահանգներում, էմիրությունների ստեղծումը:

Այդուհանդերձ, Հայաստանում մեծ դժվարություններով, բայց և այնպես, զարգանում էին արհեստներն ու առևտուրը, աշխուժանում էր հին

[1] См. *А. Тер-Гевондян,* Армения и арабский халифат, стр. 160.
[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 362-363:

քաղաքների տնտեսական կյանքը, ձևավորվում էին նորերը: Քաղաքամայր Դվինը վերակառուցվեց, ամրոցի տեսք ստացավ, որի միջնաբերդում նստում էին կառավարող այրերը: Այդտեղ էր գտնվում նաև արքունի *փողերանոցը՝* գանձատունը[1]:

Հզոր քաղաք էր դարձել Կարինը (Կալիկալա): Մանսուր և Մուտասիմ զույգ սուլթանները նախ վերակառուցեցին Կարնո հին պարիսպները, ապա նաև կառուցեցին նորերը: Քաղաքը դարձավ բերդ-ամրոց Բյուզանդիայի դեմ մղվող մարտերում: Հայաստանի զարգացած քաղաքներից էին Մուշը, Խլաթը, Մանազկերտը, Արճեշը, Բերկրին, Վանը, Նախճավանը, Բագարանը, Տրապիզոնը և այլն:

Համաշխարհային մշակույթի գանձարան մտան այս ժամանակահատվածում կառուցված և Վաղարշապատում վեր խոյացող *Գայանեի* (652) և *Հռիփսիմեի* (618) գեղատեսիլ *տաճարները,* չքնաղ *Ձվարթնոցը, Դվինի կաթողիկոսական ապարանքը, Արուճի տաճարը, Աշտարակի Կարմրավորը:* Արաբական տիրապետության տարիներին զարմանալիորեն զարգացավ գիտությունը զույգ ուղղությամբ, այն է հումանիտար գիտությունը և բնական գիտությունն իր բազմաճյուղերով: Հայ ժողովուրդը քաղաքակիրթ աշխարհին զարմացրեց իր *Անանիա Շիրակացիով* և նրա հանճարեղ *«Աշխարհացույցով»:* Եվրոպական գիտնականներից կես հազարամյակ առաջ, հայոց երկնակամարի տակ արաբների ասպատակությունների տարիներին, հայ *գիտնականը ապացուցեց* երկրագնդի գնդաձևությունն ու իր առանցքի շուրջ պտտվելը: Դժբախտաբար, հայոց լեզվով գրված լինելու պատճառով, այն շատ ուշ հաղորդվեց մյուս աշխարհամասերին:

VII-VIII դարերի հայկական մշակույթն իր բազում ճյուղերով ու զարգացման մակարդակով հիմք է տալիս համարձակորեն եզրակացնել, թե հայ ժողովուրդն այդ հարյուրամյակներին ևս ժամանակի քաղաքակիրթ ժողովուրդների շարքում ապրել է հարուստ մշակութային կյանքով, թողել է մնայուն ժառանգություն մատենագիտության, փիլիսոփայության, բնական գիտությունների, ինչպես նաև ճարտարապետության ու արվեստի մյուս բնագավառներում: Հայ ժողովուրդը ստեղծագործել և մարդկային մշակույթի գանձարան է ներդրել անգնահատելի գանձեր, ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական մշակույթի բնագավառում[2]:

Ընթերցողը գուցե դժգոհի, որ մենք համեմատաբար շատ անդրադարձանք արաբական տիրապետության ժամանակահատվածին: Այո, բայց գիտակցված, քանզի արաբները մահմեդական էին *մեր հարևան թուրքերի նման, տարածում էին իսլամը* Օտտոմանյան

[1] Տես *Կ. Դաֆթարյան,* Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. Ա., Երևան, 1959, էջ 209-211:
[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 631:

կայսրությունից վեց հարյուրամյակ առաջ, բայց հետո երբեք չեն ասել, թե *հայերը եկվոր են, նրանք հայրենիք չունեն, որ այդ հայրենիքը մերն է:* Ավելին, այսօր արաբական պատմագրությունը գրեթե միաբերան դատապարտում է ցեղասպանությունը *գենոցիդը,* հայերի ապրած ողբերգությունը անվանում է *արմենոցիդ* (հայասպանություն) և Թուրքիայից պահանջում գոնե ներողություն խնդրել կատարածի համար: Այդուհանդերձ, VII-VIII դարերի արաբական խալիֆաթը *քիչ դաժան չի* վարվել հպատակ հայ ժողովրդի նկատմամբ: Ամենածանրը եղել են *հարկերը,* որոնց դեմ ազատագրական պայքարի դրոշ է պարզել հայ ժողովուրդը:

703, 748-750, 774-775 թվականների երեք ապստամբությունների ժամանակ հայ ժողովուրդը մարդկային մեծաքանակ կորուստներ է ունեցել, բայց չի ընկճվել: 775 թ. ապստամբության օրերին ապստամբները միաբերան վանկարկում էին. *«Հայե՛ր, քաջությամբ մեռնենք մեր երկրի ու ազգի համար,* և *թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանները* պիղծ թշնամուց ոտնակոխ»[1]:

Կռիվն անհավասար էր, հակառակորդը դաժան ու մարդաշատ: Ապստամբները 3000 մարդու կորուստ տվեցին: Զոհվեցին հերոսամարտի ղեկավարներից Մուշեղ Մամիկոնյանն ու մյուսները: Ժողովուրդը, սակայն, չընկրկեց:

850 թ. արաբական բանակը Յուսուֆ զորավարի գլխավորությամբ մտավ և սկսեց լեռնագավառի ասպատակումը: Ոտքի կանգնեց խիզախ սասունցին: Խութեցի Հովնանի առաջնորդած մարտիկները սպանեցին Յուսուֆին, երկրից դուրս շպրտեցին ասպատակիչներին: Գնալով ապստամբությունը համահայկական, համաժողովրդական բնույթ ստացավ: Խալիֆայությունը մեծ բանակով 852 թ. Հայաստան ուղարկեց *Բուղա* զորավարին: Նա այս անգամ իր դաժանությամբ գերազանցեց նախորդներին, Հայաստանից զատ մտավ Վրաստան և Աղվանք: Զոհերը շատ էին, բայց ժողովրդի համբերության բաժակը վերջնականապես լցվել էր, և նա այլևս չէր ուզում մնալ օտարի լծի տակ: Արդեն ակնհայտ էին հայկական անկախ պետության վերականգնման նախադրյալները:

Հայկական անկախ պետականության վերականգնումը, ավելի կոնկրետ, *Բագրատունյաց թագավորության* հաստատումը, *Հայաստանում* տեղի ունեցավ *IX դարի երկրորդ կեսին:* Դրան նպաստեցին ժողովրդական զանգվածների, հայ հասարակական բոլոր խավերի ազատագրական բաղձանքների ուժեղացումը, *Բագրատունիների, Վասպուրականի Արծրունիների և Սյունյաց* իշխանական տների զորեղացումը: Ճիշտ է, հնամենի նախարարական տները՝

[1] «Հայ ժողովրդի պատմություն», 1982, էջ 48:

Մամիկոնյանները, Ամատունիները, Կամսարականները, Անձևացիները, արդեն թուլացել էին, երկրորդվել, բայց նրանց տեղերը լրացնում էին նորերը, թարմերը, հզորները[1]:

Հայոց պետականության վերականգնմանը, նոր, հզոր Հայաստան ստեղծելուն նպաստեցին նաև արտաքին հանգամանքները, միջազգային բարենպաստ իրադարձությունները: Սոցիալ-տնտեսական բավարար հիմքեր չստեղծած, թալանով, կողոպուտով, հարկային հարստահարությամբ ապրող *արաբական խալիֆայությունն* այլևս չէր կարող կանխել բազմաթիվ ու բազմալեզու, փոքր ու մեծ ժողովուրդների ազատագրական հուժկու պատերազմները: Իրար հետևից անկախանում էին մի շարք երկրներ, խուզվում էին երբեմնի հզոր տերության ծայրաթելերը, ճարճատում էր բուն կառույցը՝ այն էլ կենտրոնից:

Խալիֆաթն ամեն որպես զգում էր իր տերության վախճանը, այն տեսնում յուրաքանչյուր պարտությամբ: Արաբների վախը, սակայն, ոչ միայն հայ ժողովրդից էր, այլ նաև հարևան Բյուզանդիայից, որի գահին էր բազմել մակեդոնական հայտնի դինաստիան *հայկական ծագումով:* Առաջնորդվելով «Այն ձեռքը, որ չես կարող կտրել, համբուրիր» ժողովրդական իմաստությամբ, Մյութավաքիլ խալիֆը Անդրկովկասից ետ կանչեց Բուղայի գլխավորած արաբական զորքը և 855 թ. Արմենիայի սպարապետ կարգեց *Աշոտ Բագրատունուն*[2]:

859 թ. Հայաստանի ոստիկան Ալի իբն Յահիայի միջնորդությամբ, Խալիֆը Աշոտ Բագրատունուն ճանաչեց Արմինիայի իշխանաց իշխան: 862 թ. նրան հանձնարարեցին նաև երկրի հարկերի հավաքումը, ըստ որում, սպարապետի պաշտոնը վստահվում է Աբաս եղբորը: Գրեթե կամավոր շուտով Աշոտ Բագրատունու գերիշխանության տակ են մտնում Շիրակը, Վանանդը, Տաշիրը, Կոգովիտը, Բագրևանդը, Տարոնը, Սասունը, Վասպուրականը, Մոկաց աշխարհը: Հետևաբար Բագրատունիներն արդեն ունեին վարչական, ռազմական, հատկապես սոցիալ-տնտեսական անսահմանափակ իշխանություն Հայաստանի մեծ մասի վրա: Նրանք հավաքած հարկի փոքր մասը ուղարկելով Դամասկոս, մեծ մասով կազմավորում են հայկական բանակ, զորքի թիվը հասցնելով 40 հազարի, վերականգնում են ավերված բերդերն ու ամրոցները, կառուցում նորերը: Այդպիսով Աշոտ Բագրատունին թագավորելու համար ուներ ամեն բան, *բացի արքայական թագից:*

874-875-ին Հայաստանի ոստիկան Ահմադը և արաբ այլ իշխաններ որոշում են դավադրաբար ոչնչացնել հայ նախարարներին և կրկին իրենց իշխանությունը հաստատել երկրի վրա[3]:

[1] Մանրամասն տե՛ս *Ա. Տեր-Ղևոնդյան,* նշված աշխատությունը:
[2] Մանրամասն տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 105-106:
[3] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1981, էջ 10-15:

Որոգայթը բացահայտվում է, Դվին աճապարող արաբական զորքը զինաթափվում է, Ահմադին իջեցնում են նժույգից, դնում են ավանակի վրա և ասում. *«Գնա այնտեղ, որտեղից եկար»:* Այս հանգամանքը առավել կատաղեցրեց խալիֆայությանը, բայց այլ ելք չուներ: Հավանաբար 884 թ. վերջերին Դամասկոսից Մուտամիդ խալիֆան Հայաստան է ուղարկում թագ ու գավազան: 885 թ. մեծ հանդիսավորությամբ Աշոտ Բագրատունուն Դվինում թագադրում են իբրև հայոց թագավոր: Նույն ամիսներին հայոց արքայի թագավորական իշխանությունը ճանաչեց բյուզանդական կայսրը Վասիլ II-ը (Բարսեղ II-ը):

Այսպիսով, Բագրատունիների տիրապետությունը Հայաստանի, քիչ անց՝ նաև հայկական Աղվանքի, Վիրքի մեծ մասի վրա միջազգային ճանաչում ստացավ և, աստիճանաբար հզորանալով, դարձավ տարածաշրջանի հզոր տերությունը: Բագրատունիների թագավորությունը տևեց 160 տարի (885-1045): 460 տարի հետո, փաստորեն, վերականգնվեց հայոց կորուսյալ ինքնուրույնությունը, ինչը մեծապես խթանեց Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի աննախադեպ վերելքին:

Հայոց հզոր, այո՛, հզոր կենտրոնական այդ պետությունը Բագրատունիների գլխավորությամբ իրեն միացրեց փոքր իշխանությունները, ճանաչեց Վասպուրականի թագավորությունը (908-1021), Արծրունիների արքայական տիրապետությամբ Տարոնը (826-851)՝ Բագրատ Բագրատունու գլխավորությամբ, Կարսի (Վանանդի) թագավորությունը (963-1065), Տայքի կյուրապաղատությունը, Սյունիքի թագավորությունը (987-1170) և այլն: Փաստորեն, ամբողջ Հայաստանը կրկին հայացավ, գոնե հոգեպես, մշակույթով միավորվեց և ոգևորության, հայրենասիրության անսպառ աղբյուր դարձավ կես հազարամյակ ինքնուրույնությունը կորցրած հայ ժողովրդի զույգ հատվածների համար:

Մեր նպատակը չէ շարադրել Բագրատունյաց Հայաստանի հարուստ պատմությունը: Սակայն, ի ամոթ՝ մեր դեմ կանգնած թուրքական կեղծարարների, բերենք մի քանի թվեր, որոնք, թեկուզև ոչ շատ շաղկապված, բայց և այնպես, տալիս են երկրի տնտեսության պատկերը, հզորության մակարդակը, հայեցի դիմագիծը: Հայաստանի այս երկու հարյուր տարվա բնակչության թվաքանակի մասին ճշգրտված վիճակագրություն չի պահպանվել: Այդ է պաճառը, որ մենք բերում ենք կողմնակի թվեր՝ ապացուցելու, թե որքան հզոր էր Հայաստանն այդ պատմաշրջանում, որքան խիտ էր նրա բնակչությունը, հատկապես՝ քաղաքային բնակչությունը:

Նախ բանակի մասին. Բագրատունիներն ունեցել են *մինչև 100 հազարանոց մշտական կանոնավոր բանակ (հեծելազոր և հետևակ)*[1]:

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 109:

Եթե երկրում խաղաղություն էր, թագավորական այդ զորքը մշտապես նստած էր մայրաքաղաքի, խոշոր բերդամրոցների մատույցներում: Պատերազմների պահին սրանց միանում էին իշխանական ու *«մարզպետական»* զորքերը և շարժվում թշնամուն դիմակայելու: Ընդհանուր զորքի թվաքանակը տատանվում էր *150-200 հազարի* սահմաններում՝ չհաշված աշխարհազորը, եթե դրա կարիքն զգացվեր: *Երկու հարյուր հազարանոց* զորք ռազմադաշտ հանող պետությունը, կարծում ենք, ժամանակի հզոր տերությունը կլիներ: Մանավանդ զորքի, զինվորների անպայման *հայ լինելը* պարտադիր էր: Վարձկան բանակի մասին խոսք չկա:

Երկրի հզորության, բնակչության թվաքանակի մեծության վավերական վկայություններն են *քաղաքների, ավանների, շեն ու բարգավաճ գյուղերի առատությունը,* առևտրական մայրուղիներով դրանց կամրջվելը հեռավոր Չինաստանի, Հնդկաստանի, էլ չենք ասում՝ Առաջավոր Ասիայի գրեթե բոլոր շուկաների հետ: 961 թ. Հայաստանի մայրաքաղաք դարձավ հեքիաթային գեղեցկության տեր բերդաքաղաք *Անին:* Մայիսին արդեն արքայական ապարանքների կառուցումն ավարտած Աշոտ III թագավորն իր նստավայր հրավիրեց Վասպուրականի, Սյունիքի, Արցախի կառավարիչներին, Վրաստանի և Աղվանքի ներկայացուցիչներին, կատարեց մայրաքաղաքի բացման հանդիսավոր արարողություն, որտեղ և նրան ճանաչեցին իբրև *արքայից արքա:* Քսան տարի անց Սմբատ II-ը, զգալով պարիսպների նեղությունը, նոր պարիսպներ կառուցեց և Անին ընդգրկեց նախկինի համեմատ չորս անգամ ընդարձակ տարածքում[1]:

Անիի մարդաշատ բնակչության մասին խոսում են հայ և օտար սկզբնաղբյուրները: Սելջուկների կողմից Անին ավերելու մասին խոսելիս, Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է. *«Վասն զի էր Անի բազմամբոխ, քաղաք լցեալ բյուր բյուրոց, արանց և կանանց, ծերաց և տղայոց, որ հիացումն արկաներ տեսողացն, զոր կարծեալ զորացն բազմաց՝ եթե մեծ մասն աշխարհիս Հայոց իցե. և յայժմ ավուր հազար և մեկ եկեղեցի ի պատարագի կայր յԱնի»:* (Ընդգծումները մերն են - Հ. Ղ.)[2]:

Այստեղից է առաջացել այն տարբերակը, թե Անին ունեցել է 1000 եկեղեցի, 1001-րդը կառուցել է հովիվը: Այսինքն, մարդիկ այնքան հարուստ են եղել, որ մի սովորական *հովիվ* իր ծախսերով կարողացել է եկեղեցի կառուցել:

[1] Տե՛ս *Թ. Խ. Հակոբյան,* Անիի պատմությունը, գիրք առաջին, Երևան, 1982, էջ 236-237:

[2] *Մատթեոս Ուռհայեցի,* ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 147:

XI դարի բյուզանդացի պատմիչ Միքայել Ատտալիատեսը հաղորդում է, թե «Անին մեծ և բազմամարդ քաղաք էր»[1]:

Արաբ հեղինակ ալ-Ասիրը գրում է, թե *Անին մի մեծ ու բարգավաճ քաղաք էր*, ուներ բազմամարդ բնակչություն և նրա *մեջ կար ավելի քան 500 եկեղեցի*[2]:

Ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը չի համերաշխում քաղաքում այդքան շատ եկեղեցիների գոյության փաստի հետ, միաժամանակ հաստատում է, որ դրանք օտարի շլացած հայացքի արտահայտությունն էին *տարված արտաքին շքեղությամբ*:

Անին իրավամբ զարդարված էր բարձրարվեստ, գեղեցիկ ճարտարապետական կոթողներով: Դրանցից էին Բագրատունյաց պալատը միջնաբերդում, Անիի մայր տաճարը, Գագկաշենը կառուցված Զվարթնոցի օրինակով, ս. Փրկչի եկեղեցին, Առաքելոց եկեղեցին և բազմաթիվ այլ կառույցներ: Քաղաքի մատույցները պաշտպանված էին ամուր բերդերով, այնպես, ինչպես Եվրոպայի միջնադարյան բերդամրոցները[3]:

Անիի շքեղության և հզորության կողքին չէր նսեմանում նաև *Դվին քաղաքի* ներքին տնտեսական հզորությունը, արտաքին փայլն ու փառքը: X դարում թեև արդեն Բագրատունյաց Հայաստանում զարգացում էին ապրել բազմաթիվ քաղաքներ, Դվինն, այդուհանդերձ, դեռ մնում էր ամենախոշորը, ամենահարուստը, միակ քաղաքը, որը Շապուհ Բագրատունին անվանում է «շահաստան»[4]:

Թովմա Արծրունին X դարասկզբին Դվինը համարում է «մեծ մայրաքաղաք»[5]:

«Արաբ պատմիչները շլացած են քաղաքի տեսքով, շուկայի հարստությամբ, շրջակա այգիներով, որտեղ արդեն *բամբակ* էին մշակում»[6]:

Ակնհայտ էր, որ դեռևս IX-X դարերում Դվինը շարունակում էր մնալ Հայաստանի առևտրա-արհեստագործության ամենախոշոր կենտրոնը, վաճառականական ճանապարհների խաչմերուկը, որտեղից առևտրական քարավանները գնում էին ինչպես հարևան վրաց և աղվանից աշխարհներ, այնպես էլ Իրան, Ատրպատական, Միջագետք, Բյուզանդական կայսրություն: Ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը, հանգամանալից հաշվումներ կատարելով, գտնում է, որ X-XI դարերում Դվինում ապրում էր *100 հազար բնակիչ*. այնտեղ մեծ զարգացում էին ապրել առևտուրն ու արհեստագործությունը[1], դպրոցն ու դպրությունը, երգն ու երաժշտությունը: Դվինն ուներ ռազմաստրատեգիական անառիկ դիրք, ամուր պարիսպներ, պաշտպանողական հզոր հնարավորություններ:

Կարինից քիչ հեռու, դեպի Սև ծովի առափնյա շրջանները, հատկապես նավահանգստային Տրապիզոն տանող մայրուղու զույգ ափերին էր փռված *Արծն քաղաքը*: Այն իր *մեծությամբ*, հարստությամբ, շքեղությամբ զարմանք է պատճառել ոչ միայն հայրենի պատմագիրներին, այլև օտար ճանապարհորդներին: *Արծնի* ծաղկման, մարդաշատության հիմնական պատճառը իհարկե տնտեսական էր, սակայն պակաս կարևոր դեր չէր խաղում նաև *կարնո ավերված վիճակը*: Ասպատակություններից և աղետից ազատվածները փոխադրվեցին Արծն և քաղաքը դարձրին միջնադարյան Հայաստանի շքեղ ու վաճառաշատ կենտրոններից մեկը[2]:

Բյուզանդական պատմիչ Միքայել Ատտալիատեսը հաղորդում է, թե XI դարում *Արծնը* դարձել էր խոշոր քաղաք «լի մեծ քանակությամբ բազմապիսի ապրանքներով, որոնք բերում էին Պարսկաստանից, Հնդկաստանից և մնացած Ասիայից»[3]:

Արիստակես Լաստիվերցին հայրենի քաղաքի մասին պարծանքով գրում է. «Մեծանիստ և շահաստան քաղաք: Հոյակապ և ականավոր էր բոլոր երկրների մեջ որպես քաղաք... *ասես նման էր մի նորահարս կնոջ, որը վայելող գեղեցկությամբ* և *զարդերի պայծառությամբ ցանկալի էր ամենքին*»[4]:

Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է քաղաքի «անչափ հարստության» մասին, ապա ավելացնում սելջուկ թուրքերի կողմից գրավվելու պահին (1048 թ.) «սրի անցուցին... *բյուրս հնգատասան* (150 հազար) մարդ»[5]:

Բյուզանդացի պատմիչ *Գեորգիոս Կեդրոսը* հիացմունքով պատմում է Արծնի «բազմամարդ և բազմահարուստ լինելու մասին, որտեղ բնակվում էին ոչ միայն հայ վաճառականներ, այլև փոքրաթիվ ասորիներ, հույներ»: Նա ցավով է արձանագրում սելջուկների վայրենի,

---

[1] *Բարկեն Առաքելյան*, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, Երևան, 1958, էջ 78:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 78-79:

[4] *Շապուհ Բագրատունի*, Պատմություն, էջ 72:

[5] *Թովմա Արծրունի*, Պատմություն, էջ 488, տե՛ս նաև *Բ. Առաքելյան*, նշված աշխատությունը, էջ 72-73:

[6] Տե՛ս *Կ. Դաֆթարյան*, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1972, էջ 160-163:

---

[1] *Բ. Ն. Առաքելյան*, նույն տեղում, էջ 75:

[2] Մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, «Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում», Երևան, 1976, էջ 232-233:

[3] Նույն տեղում, էջ 233:

[4] *Արիստակես Լաստիվերցի*, Պատմութիւն Արիստակես Լաստիվերցւոյ, Երևան, 1963, էջ 74:

[5] *Մատթեոս Ուռհայեցի*, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 78:

մարդատյաց ասպատակությունները, ապա ավելացնում. «...*սպանվեց շուրջ 150 հազար մարդ*»[1]:

Մատթեոս Ուռհայեցին դիպուկ է ասել. Արծն քաղաքի հարստությունների *ոսկու, արծաթի և դիպակների մասին խոսելն ավելորդ է, որովհետև գրի, հաշվի տակ գցելը անհնարին է*[2]:

Որքան էլ չափազանցրած լինեն վերոհիշյալ հեղինակները, ակնհայտ է Արծն քաղաքի մեծությունը, հարստությունը, շքեղությունը, հատկապես բնակչության մեծաքանակությունը: *Հարյուր հիսուն հազար մարդ սպանվեց* սելջուկյան վայրենի, մարդատյաց ցեղերի ձեռքով, իսկ որքան էլ գերեվարվեցին կամ ճողոպրեցին: Հետևաբար, XI դարում Արծն քաղաքն ունեցել է *180-200 հազար բնակիչ, ավելին, քան արքայանիստ Անին կամ ծերունազարդ Դվինը:*

Կարս քաղաքը համեմատաբար նոր էր զարգացում ապրել, քանզի այդ մասին հին աղբյուրներում հիշատակություններ չկան: IX դարի սկզբներին այն Վանանդ նահանգի մեջ մտնող *բերդերից* էր, որտեղ նստավայր էին ընտրել հայոց սպարապետները[3]:

Բագրատունիների մյուս ճյուղի կազմավորումից հետո Աբաս Բագրատունին (929-953) Կարսը դարձրեց իր մայրաքաղաքը, որից հետո քաղաքը ձեռք բերեց տնտեսական զարգացման բոլոր հնարավորությունները: X դարում Ստեփանոս Տարոնացին քաղաքն անվանում է «մայրաքաղաք», գովեստով խոսում բերդի ստորոտում կառուցված պալատների մասին, շեշտում տարանցիկ այն ճանապարհները, որոնք երկրորդ մայրաքաղաքը կապում էին դրսաշխարհի, հատկապես Սև ծովի նավահանգիստների հետ[4]:

Կարսը կառուցված էր բարձրադիր, գեղատեսիլ և ամրակուռ մի բլրի վրա, շրջապատված գրեթե անառիկ պարիսպներով, որոնք ունեին մի քանի դռներ և հսկում էին եկող-գնացողների վրա: Քաղաքն հարստացավ «ի ծովե և ի ցամաքե», խիտ բնակչություն ունեցավ IX-X դարերում, որովհետև այդ երկու դարերում հեռու մնաց քաղաքական վայրիվերումներից, ավերիչ պատերազմներից: Բնակչության թիվը հասնում է շուրջ *50 հազարի*, չհաշված զորքն ու քաղաքապահ ոստիկանները:

Այսպիսով, մենք հատկապես կանգ առանք մի քանի քաղաքների չափազանց համառոտված պատմության վրա, ցույց տալու, թե ինչպիսի զարգացում էր ապրել Բագրատունյաց Հայաստանը մասնավորապես, ողջ Հայաստանը ընդհանրապես: Մենք ընթերցողի ուշադրությունը հրավիրեցինք խոշոր այն քաղաքների վրա, որոնց մասին

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 234:
[2] Տես *Մատթեոս Ուռհայեցի*, էջ 103:
[3] Տես *Բ. Առաքելյան*, նշված աշխատությունը, էջ 80-81:
[4] *Ստեփանոս Տարոնացի*, նշված աշխատությունը, էջ 171-172:

թուրք պատմաբանները երդումներով «ապացուցում են, թե դրանք հայկական չեն, *այլ թուրքական:* Փաստեր չունենալով նման կեղծիքի «ապացուցման» համար, նրանք երդում են ուտում, կաշվից դուրս գալիս: Ինչպես տեսաք, մեր բերած փաստերը լրիվ, նույնիսկ առավել քան բավարար են այդ կեղծիքը մերկացնելու: Սիրելի ընթերցող, եթե երդում է պետք, ապա մենք էլ կերդվենք. *«Թուրք լինեմ, եթե սուտ ասեմ»:*

Սակայն դրանով չբավարարվենք: Ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը միջնադարյան քաղաքների պատմության ամենախոշոր մասնագետը, դեռևս 1959 թ. (ոչ մեր օրերի թեժ բանակռվի ժամանակ), հիմնվելով հայրենի, հատկապես օտար, սկզբնաղբյուրների ընձեռած անհերքելի փաստերի վրա, եզրակացնում է. IX-XI դարերի Հայաստանում արդեն կային *քառասունհինգ խոշոր քաղաքներ, քսաներեք գյուղաքաղաքներ, երեսունից ավելի ավաններ:*

Թվարկենք դրանց մի մասը այնպես, ինչպես Բ. Առաքելյանն է դասակարգել: ա) Հին քաղաքների տեղում մնացած բերդավանները փարթամացել և շահաստաններ են դարձել. *Վանը, Նփրկերտը, Նախճավանը, Աշմուշատը, Կարինը, Վաղարշակերտը, Բալուն, Կամախը* և այլն: Նոր քաղաքներ էին *Անին, Կարսը, Կապանը, Արճեշը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշը (Բիթլիս), Արղնը, Մուշը, Խարբերդը, Ոստանը, Հադամակերտը, Աղթամարը* և այլն, և այլն[1]: Նման հասարակ թվարկումը ցույց է տալիս, որ այդ պատմաշրջանում Հայաստանը եղել է թանգարան բաց երկնքի տակ, հարստության շտեմարան եկած ծովից ու ցամաքից:

Համառոտ անդրադառնանք նաև Սյունիքի թագավորության հզորությանն ու համեմատական երկարակեցությանը: Սյունիքի թագավորությունը հռչակվել է 987 թ. և բազում պատերազմներ է վարել օտար նվաճողների դեմ: Հայրենի անառիկ լեռներին ապավինած հերոս սյունեցին երկրի անկախությունը պաշտպանեց մինչև 1170 թ.: *Կապանը* դարձնելով մայրաքաղաք, տնտեսական մեծ վերելք ապրեց: Ըստ պատմագիրների վկայության, օտարազգի ճանապարհորդների հաղորդագրության, XII դարում *Սյունիքի թագավորությունն ուներ երկու քաղաք, 43 բերդ, 40 վանք, 1000-ից ավելի գյուղ և քաղաքատիպ ավան*[2]: Կարծես թե հեքիաթ է, չէ՞, ոչ, պատմական իրողություն է: Մեզ հայտնի է Սյունիքում ծավալված *Դավիթ Բեկի* ապստամբությունը, զորավար *Նժդեհի* անհավասար պայքարը: Տեսնո՞ւմ եք, հեքիաթ չէ. Դավիթ Բեկի, Մխիթար Բեկի, Նժդեհի պապերն էին դրանք, ովքեր ժամանակին սկսել էին, իսկ սրանք շարունակում էին:

[1] *Բ. Առաքելյան*, նշված աշխատությունը, էջ 122-123:
[2] «Հայ ժողովրդի պատմություն», 1982, Երևան, էջ 62:

Այժմ պարզենք նաև մեր գերխնդիրը. որքա՞ն բնակչություն է ապրել ողջ Հայաստանում IX-XI դարերում: Նման բարդ հիմնահարցի պատասխանը հետաքրքրում է *ոչ միայն օտարներին, այլև հայ ընթերցողին:* Դժբախտաբար մարդահամարներ չեն եղել, և մենք էլ, հարկադրված, մոտավոր պատասխան պետք է արձանագրենք, նախօրոք ընթերցողից խնդրելով *ներողամտություն* որոշ չափով *ավել* կամ *քիչ պակաս* լինելու դեպքում:

Հայկական 45 քաղաքների բնակչության թիվը մանրակրկիտ հաշվումների ենթարկելով, կարծում ենք, *երկու միլիոնից* պակաս լինել չէր կարող: 20 գյուղաքաղաքներում, 30 խոշոր ավաններում պետք է որ ապրած լինեին *մեկ միլիոն* մարդ գերազանցապես *հայեր:* Եթե մի երկրում քաղաքային բնակչության *թվաքանակը* կազմում է *երեք միլիոն,* ապա ողջ ազգաբնակչությունը *տասը միլիոնից* պակաս լինել չէր կարող: Դրան գալիս են լրացնելու նաև միայն Անիի Բագրատունիների *200 հազարանոց բանակի* գոյությունը, տնտեսության նման բարձր վերելքը, մշակույթի աննախադեպ առաջընթացը:

Մեր խնդրից դուրս է անդրադառնալ վերոհիշյալ հարցերի պատմությանը, սակայն հիշեցնենք, որ պատմաբանները, փիլիսոփաները, տնտեսագետները ժամանակին Բագրատունյաց գահակալության ժամանակաշրջանը բնորոշում էին իբրև *հայկական ռենեսանսի* (վերածնության) էպոխա, ավելի վաղ, քան եվրոպականը, հատկապես իտալականը: *Կարծում ենք, նրանք չէին սխալվում:*

IX-XI դարերում էր, որ ծաղկեց հայ պատմագիտական միտքը, գրականությունը, ընդլայնվեց դպրոցական ցանցը: Հայաստանում հիմնադրվեցին և բեղմնավոր գործունեություն ծավալեցին մի շարք բարձրագույն դպրոցներ: Անին դարձավ հայ գիտական մտքի կենտրոնը, իսկ Հովհաննես Իմաստասերը՝ նրա առաջամարտիկը: Փառք են վայելել Արգինայի, Կարսի, Կամրջաձորի վարդապետարանները, Սանահինի և Հաղպատի ուսումնագիտական կենտրոնները: Տաթևի դպրոցը հիմնադրվել է 895 թ., ունեցել է 500-ի հասնող միաբանություն, բարձրագույն կրթություն ստացող բազում սաներ: *Տեսնում եք, «հարգելի թուրքեր», դուք* դեռ *երկգլխանի էիք, ձիու թամբին կպած, սուրը ձեռքներիդ միայն թալանում և ավերում էիք,* իսկ հայ ժողովուրդը համալսարանական կրթություն, լույս էր տարածում Անդրկովկասում և այլուր:

Հայ ժողովուրդը այս ժամանակաշրջանում աշխարհին տվեց *Գրիգոր Նարեկացի* (950-1003), որի *«Մատյան ողբերգության»* հանճարեղ ստեղծագործությունը շեղևր էր և մտավ համաշխարհային գրականության ու փիլիսոփայության ոսկե ֆոնդը՝ իբրև եզակի պարգև հանուր մարդկությանը: Վերջապես ծնվեց ու ձևավորվեց հայ ժողովրդական *«Սասնա ծռեր»* էպոսը, որտեղ ցայտուն ու խորիմաստ ընդհանրացումներով արտահայտվում է ժողովրդի ազատագրական ոգորումների գաղափարաբանությունը, նրա բաղձանքների և սպասումների իրականացումը:

«Սասնա ծռեր» էպոսը, լավատեսությամբ հանդերձ, միաժամանակ, իր վերջին գլխով պատգամ է ուղղում մարդկությանը, այն բողոքի ճիչ է՝ մխրճված օտար և նույնիսկ հայրենի իշխանավորների սրտում: Փոքր Միհրը շարունակում է հոր պայքարը և օտարների, և արյունակից կեղեքիչների դեմ: Սակայն չարիքն ու անարդարությունը չէին վերանում աշխարհից: Թագավորներն ու իշխանները պատերազմի ճանապարհով զբաղվելով կողոպուտով, կեղեքում էին նաև սեփական ժողովրդին, իշխանավորները թալանչի էին, ընչաքաղց, դավադիր քյոխվաները նրանց գործակից էին, վանահայրերը՝ ագահ և մատնիչ: Դժբախտաբար, Աստվածն ականատես է այս բոլորին և պաշտպանում է, հովանավորում վերնախավերին: Նա երկնքից ութ հրեշտակ է ուղարկում, որոնք պայքարում հաղթում են Փոքր Միհրին, փակում են Ագռավաքարում: Միհրը, Քուռկիկ Ջալալին հեծած, սրով ստուգում է իր մեղավորության աստիճանը, ապա համոզվում է, թե *աշխարհը ծերացել է,* պայքարն այլևս անիմաստ է: Վեպի փիլիսոփա հերոսը որոշում է համբերել, ուստի իր ձիու հետ փակվում է ժայռի մեջ, սպասում, որ «աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի»:

Երբ ցորեն եղավ քանց մասուր մի,
Ու գարին եղավ քանց ընկույզ մի,
Էն ժամանակ հրաման կա, որ ելնինք էդ տեղեն[1]*:*

Ժողովրդական ինտերնացիոնալ բարեկամության գաղափարներով է ներծծված էպոսը: Այն նախ ազդարարում է հայոց անկախության վերականգնումը, միաժամանակ գոհ չէ սոցիալական անարդարություններից, դասակարգային պայքարի հարատևումից: Դյուցազնավեպը որոշակի ազդարարում է ներքին հակամարտությունների ուժեղացումը, պատճառ դառնալով օտար, անազնիվ, թեկուզև քրիստոնյա հարևանների արշավանքին, Հայոց երկդարյա հզոր պետականության կորստին: Ժողովրդի ու տերության անկախությունը կորսվեց ոչ այնքան և ոչ միայն բյուզանդական կայսրության հզորության, այլև առավելապես ազգային դավաճանության պատճառով: Զարմանալի ժողովուրդ ենք. տալիս ենք հերոսներ, որոնք հանուն հայրենիքի ազատության կախաղանների սյուների վրա են ճոճվում, տալիս ենք նաև Պետրոս Գետադարձի նման դավաճաններ, Անիի սուրբ բանալիները Բյուզանդիային հանձնողներ:

Օգտվելով հայկական հողում հզորացած թագավորությունների և իշխանությունների միջև խորացող հակասություններից, առաջնորդվելով իր հին զինանոցում պահված զենքից, այն է՝ «Բաժանիր, որ տի-

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 351:

ռես» սկզբունքից, բյուզանդական կայսրությունը 966 թ. գրավեց և իր տիրապետության տակ դրեց *Տարոնի իշխանությունը:* Նա 1001 թ. տիրեց *Տայքի կյուրապաղատությանը,* 1021 թ. իրեն ենթարկեց *Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը:* Հայ քաղաքական որոշ գործիչների (Հովհաննես Սմբատ թագավոր) և հոգևոր առաջնորդների (Պետրոս Գետադարձ կաթողիկոս) սխալներից կամ նույնիսկ, կարելի է ասել, դավաճանությունից օգտվելով 1045 թ. Կոստանդին Մոնոմախ կայսրը խաբեությամբ Կ. Պոլիս հրավիրեց Գագիկ II հայոց վերջին թագավորին, կալանավորեց: Հունական զորքերը հայ կաթողիկոսի տված բանալիներով բացեցին Անիի անառիկ դարպասները, գրավեցին Հայաստանի մայրաքաղաքը և, փաստորեն, կործանեցին Բագրատունիների թագավորությունը: 1065 թ. Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը, ականատես լինելով սելջուկյան արշավանքների ժամանակ իրականացվող ասպատակություններին, Բյուզանդիային է հանձնում Վանանդում ունեցած իր կալվածքները, փոխարենը ստանում *Ծամնդավ, Կեսարիա, Խավատանեք* բերդաքաղաքները[1]:

Այսպիսով շրջվեց հայոց հազարամյակների պատմության թերևս ամենահարուստ էջը, աշխարհի ամենահնագույն ժողովուրդներից մեկը իր հայրենիքում կորցրեց ազգային պետականությունը, վերածվեց բնավեր խլյակի և նոր ճիգեր թափեց անկախանալու: Ժամանակները, միջազգային բարդ իրադարձությունները, շրջապատող միջավայրը գործեցին ի վնաս հայ ժողովրդի: Բայց պայքարը շարունակվեց, կորցրածը վերագտնելու փորձերը հաճախակի դարձան, հարատևելով շուրջ մեկ հազարամյակ:

1. Սելջուկ թուրքերն Առաջավոր Ասիայում

Բագրատունիների թագավորության անկումից հետո Հայաստանը Բյուզանդիայի գահակալության տակ մնաց ընդամենը երկու տասնամյակ[2]:

Սակայն նման կարճ միջոցն էլ բավարար էր, որպեսզի քրիստոնյա այդ տերությունը ծանր հարվածներ հասցներ մեր երկրին: Սկսվեց հայկական զորքի տեղահանումը հայրենիքից, բնակչության բռնի թե կամավոր գաղթեցումը Միջագետք և Փոքր Ասիա: Կայսրությունը որդեգրեց հայ ժողովրդին դիմադրողական կարողությունից զրկելու քաղաքականություն, չհասկանալով, որ դրանով թուլացնում էր նաև ինքն իր դիրքերը, անարգել բացում դարպասները Արևելքից արշավող վաչկատուն, ավազակաբարո այնպիսի հորդաների առջև, որոնք ծանր հարվածներ պիտի հասցնեին և Հայաստանին, և Բյուզանդիային: Դրանք սելջուկ թուրքերն էին:

IX-XI դարերում Միջին Ասիայի թուրքախոս վաչկատուն ցեղերը շատ դյուրությամբ ընդունեցին իսլամը, որդեգրեցին Մուհամմեդի դոկտրինան. ասպատակությունների, արշավանքների հետ մեկտեղ նաև հատկապես քրիստոնյա ժողովուրդների հանդեպ, որպես իրենց ստրուկների, գյավուրների, վարվեցողությամբ ձևավորեցին մի նոր պետություն: Սիրդարյայի միջին հոսանքում ապրող, անասնապահությամբ զբաղվող սելջուկներն, իրենց միավորելով մարդաշատ օղուզ վայրենաբարո ցեղերին, հզորացան, և Սելջուկ բեգի թոռներ Տուղրիլ և Չակիր բեգերը 1040 թ. գրավեցին Խորասանը, դրանով իսկ մեծ համարում ստանալով շրջապատում: Անսպասելի այդ հաղթանակը թուրքական ռասային պատկանող հիշյալ ցեղախմբերին ոգևորեց, և վերջիններս սկսեցին իրենց արշավանքները դեպի Իրան, Իրաք, Անդրկովկաս, Փոքր Ասիա, այդ թվում *նաև Հայաստան:*

Սելջուկ թուրքերը Հայաստան խուժեցին դեռևս 1016 թ., մտան Վասպուրականի թագավորության տարածքը և սահմռկեցուցիչ տպավորություն գործեցին տեղացիների վրա: Հատկապես հայերը սարսափեցին անապատներում մեծացած այդ ասպատակիչների արտաքինից: Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ նրանք զինված էին աղեղներով, այն դեպքում, երբ հայկական զինվորները չէին կարող պաշտպանվել արձակվող նետերից, քանզի չունեին պաշտպանական հանդերձանք[1]:

«Նրանք չեն պատվում մեծամեծներին,- ասում է Թովմա Արծրունին,- չեն խղճում երիտասարդներին ու տղաներին, ոչ էլ խնայում են որևէ մեկի մանկությունը... *Նրանք ունեին արյունարբու գազանների բնություն՝ սարսափելի էին իրենց տեսքով, որովհետև նրանց դեմքերի կերպարանքը տեսնողներին զարհուրեցնում էր և ահաբեկում* (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[2]:

1021 թ. սելջուկյան թուրքերը Դվին-Նախճավան երթուղով ներխուժեցին Նիգ գավառը, սակայն ետ շպրտվեցին Բջնիի իշխան Վասակ Պահլավունու հուժկու հարվածներից: Թուրք բարբարոսների հարվածները հաճախահաս և աղետաբեր դարձան Գագիկ II արքային պատանդ վերցնելուց և Անին բյուզանդացիներին հանձնելուց հետո: 1047 թ. սելջուկները Վասպուրականի վրայով մտան Բասեն, ավերեցին Վա-

[1] Մանրամասն տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 108-109:

[2] Սույն հատվածը շարադրելիս, օգտվել ենք *Հայկ Ղազարյանի*, «Արևմտյան Հայաստանը» հոդվածից, ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976 թ., էջ 41-44. «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 441-495: «Սովետական Հայաստան», էջ 110: «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1982, էջ 70-75:

[1] Տե՛ս *Մատթեոս Ուռհայեցի*, նշված աշխատությունը, էջ 46-48:

[2] *Թովմա Արծրունի,* Թովմայի վրդ. Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց, Տփղիս, 1917, էջ 496-497:

ղարշավանը: Ամենաողբերգականը 1048 թ. արշավանքն էր, որի ընթացքում թուրք սելջուկները մեծ ջարդ են կազմակերպում Սմբատաբերդում, ապա հիմնովին ավերում *Արծն հայաշատ ու ծաղկուն քաղաքը*: 1054 և մյուս տարիներին կատարվող ասպատակությունների ժամանակ բյուզանդական բանակի կազմում դեռևս հերոսաբար կռվում էին հայերը և կարողանում հայրենիքից դուրս շպրտել վայրենաբարո ցեղերին: Սակայն պայքարն անհավասար էր, թշնամին անտանելի ու դաժան: Ատրպատականում ծվարած թուրքական հորդաները ցանկացած պահին մտնում էին Հայաստան, ասպատակում երկիրն ու վերադառնում: Նրանք ավերելով Վրաստանը, ապա արշավելով Վանանդ, Կարսի տակ հանդիպեցին հայերի դիմադրությանը: Կռվի ժամանակ Կարսի հերոս պաշտպաններից Թաթուլ անունով մի զինվոր մահացու վիրավորում է Տուղրիլ բեկի զինակիցներից մեկի որդուն: Տուղրիլը գերեվարելով Թաթուլին, ասում է, թե. «Եթե ապրի վիրավորը, քեզ կազատեմ, իսկ եթե մեռնի, կիրամայեմ, որ քեզ մատաղ անեն նրան»: Դանակը ոսկորին հասած հերոս Թաթուլը պատասխանում է. «Եթե հարվածն իմն է, չի ապրի»:

1064 թ. սուլթան Արփ-Արսլանը 180 հազարանոց բանակով արշավեց Շիրակ: Օգոստոսի 16-ին անտանելի ջարդ կազմակերպվեց դաշտավայրում, որից վախեցած Սյունիքի Գրիգոր Ա. և Լոռվա Կյուրիկե Ա. թագավորները կամավոր հանձնվեցին և ընդունեցին սելջուկյանների գերիշխանությունը: Այնուհետև թուրքերը գրավեցին Աղվանքը, ապա արշավեցին Վրաստանի հարավ-արևելյան շրջանները, մեկ անգամ ևս մտան Հայաստան, իրենց հպատակեցրին Լոռին, Շիրակի մեծ մասը և նորից պաշարեցին Անին: Հայոց երեկվա մայրաքաղաքում նստած բյուզանդական զորքը թվով փոքրաքանակ էր և թույլ: Հայ զինվորների հերոսական պայքարը ևս հաղթահարելով, սելջուկները գրավեցին Անին, բառիս բուն իմաստով կողոպտեցին արևելքի մարգարիտ հանդիսացող հարուստ ու չքնաղ քաղաքը, ավարով ծանրաբեռնված շարժվեցին Արարատյան դաշտ, ապա բարձրանալով լեռնահայաստան, վերջնականապես հպատակեցրին Սյունիքը[1]:

Բյուզանդական կայսրությունը երկար ժամանակ բախտի քմահաճույքին, մեն մենակ, ասպատակիչների ահարկու սրի հարվածներին թողնելով Անդրկովկասը, վերջապես սթափվեց, հասկացավ, որ հերթը իր բուն տարածքին է գալու: 1070 թ. *Ռոմանոս Դիոգինես* կայսրը հավաքեց մեծաքանակ զորք, եկավ Արևելք Արփ-Արսլանի ներխուժումը կանխելու և վերջապես վճռական ճակատամարտ տալու: Սկզբում նա նույնիսկ հաջողության հասավ, գրավեց Մանազկերտը: Շուտով երևացին բյուզանդական բանակի թերությունները, զորավարների (Անդրոնիկոս Դուկաս) դավաճանությունը, վարձկան զորքերի անհավատարմությունը: Կայսեր բանակը թվով մեծ էր, սակայն որակով թույլ և խոցելի:

Այդուհանդերձ, 1071 թ. օգոստոսի 19-ին Մանազկերտի տակ ծավալվեց մի խոշոր ճակատամարտ, որը համաշխարհային պատմության մեջ *բախտորոշ* ճակատամարտերից էր, քանզի *քաղաքակրթությունն*, իր անկազմակերպվածության պատճառով, զոհվում էր *բարբարոսությանը*: Առաջավոր Ասիան շշմեցուցիչ այնպիսի հարվածներ էր ստանում, որ երկար ժամանակ էր պետք ուշքի գալու համար: Ճակատամարտում Ռոմանոս Դիոգինեսը պարտվեց: Բյուզանդիայի պատմության հմուտ մասնագետ Հ. Գելցերը գրում է. «1071 թ. Մանազկերտի պարտության ճակատագրական, սարսափելի օրը բյուզանդական մեծ պետության մահվան օրն էր: Թեև նրա հետևանքներն իրենց բոլոր ահավորությամբ անմիջապես զգալի չեղան, սակայն Փոքր Ասիայի արևելյան մասերը, *Հայաստանը և Կապադովկիան, որոնք այնքան զորապետներ էին տվել և կազմում էին պետության իսկական ուժը, ընդմիշտ կորած էին կայսրության համար, և թափառական թուրքը հաստատեց հին հռոմեական փառահեղության ավերակների վրա իր վրանը»*[1]:

Հաղթանակի դափնիներից արբեցած Ալփ-Արսլանը գերեվարած բյուզանդական կայսրին ազատ արձակեց, պահանջելով իր գերիների վերադարձը և մեծ ռազմատուգանք: Սակայն շուտով իրադրությունը փոխվեց: Ռոմանոսի հակառակորդները, լսելով Մանազկերտի ճակատամարտի արդյունքների մասին, Կ. Պոլսում նոր կայսր հռչակեցին Միքայել Դուկասին (1071-1078), չեղյալ հայտարարեցին Մանազկերտի պայմանագիրը և կուրացրին Ռոմանոս Դիոգինեսին: Հավիտենական քաղաքում ծավալված միջպետական կռիվները, պալատական խժդժությունները նոր հնարավորություն ստեղծեցին սելջուկներին արշավելու Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան նահանգների վրա:

Փոքր Ասիան, հատկապես Հայաստանը, Վրաստանը և Շիրվանը վերջնականապես նվաճվեցին, և սելջուկների դիրքերն այդ երկրներում ամրապնդվեցին *Մելիքշահ* I սուլթանի օրոք (1072-1092): Շուրջ քսանամյա փոքր ու մեծ պատերազմներով սելջուկները Բոսֆորի տիրակալներին հարկադրեցին ճանաչել իրենց տիրապետությունը ողջ Փոքր Ասիայում: Հայաստանը ենթարկվեց վարչաքաղաքական հետևյալ բաժանման. 1080 թ. գրավելով Կարսը, Կարինը, Ուղթիքը, սելջուկները ձևավորեցին *Սալդուխյան ամիրայությունը* Կարին կենտրոնով: Անիում և Շիրակում շարունակեցին իշխել քուրդ *Շադադյանները*, իհարկե, ընդունելով սելջուկների գերիշխանությունը: Աղձնիքում իշ-

[1] «Հայ ժողովրդի պատմություն», էջ 71:

[1] *Հ. Գելցեր*, Համառոտություն բյուզանդական կայսրերի պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 364:

խում էին *Արտուխյանները*, Փոքր Հայքում *Դանիշմանյանները*, Խլաթում *Շահ-ի արմենները*[1]:

Սելջուկները «թույլ տվեցին մնալու» հայկական ֆեոդալական մի քանի իշխանությունների, որոնք առանձին-առանձին պայմանագրերով ստանձնել էին հատուկ պարտավորություններ և տալիս էին մեծաքանակ հարկեր: Դրանք էին Լոռու *Կյուրիկյան թագավորությունը* (մինչև XII դարասկիզբ), *Սյունիքի թագավորությունը* (մինչև 1170), *Սասնո Թոռնիկյանների իշխանությունը* (մինչև 1185), *Վասպուրականի Խեդենեկյանների իշխանությունը*, *Խաչենի իշխանությունը*, *Կիլիկյան Հայաստանում Ռուբինյանների իշխանությունը*[2]:

Այսպիսով, մարդկությանը, առաջավոր Ասիային, Եվրոպայի մի մասին Արևելքից աներևակայելի դժբախտություն պատուհասեց: Համաշխարհային մշակույթին և քաղաքակրթությանը ոչնչացում էր սպառնում: Այո, երևույթը զուտ տեղական, լոկալ բնույթի չէր, այլ համընդհանուր: Մինչ այդ եղել էին Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները, Հաննիբալը հին աշխարհում, խաչակիրները գրեթե ուշ միջնադարում: Սակայն դրանք չէին ոչնչացրել համամարդկային շեղերները, չէին գլխատել գիտնականներին և գրողներին: Արիստոտելի աշակերտը ձգտում էր համաշխարհային տիրապետության աշխարհը նորոգելու «ձգտումով», խաչակիրները գալիս էին Քրիստոսի գերեզմանը *«անհավատների»* գերությունից փրկելու: Հայտնի՞ էր, արդյոք, թե ինչի համար էին արշավում սելջուկ թուրքերը: Այո, հայտնի էր. նրանք գալիս էին մարդկության դարերով ստեղծած հուշակոթողները ոչնչացնելու, ծաղկած քաղաքները ավերելու, շեն ու բարգավաճ երկրները անապատի վերածելու, տղամարդկանց թե կանանց ստրկավաճառանոցներ քշելու, միայն թե հարստանային, միայն թե դեղին մետաղ հավաքեին: Ակնհայտ էր նաև տգեղ, երկգլխանի այդ ռասայի ատելությունը սպիտակամորթ գեղեցիկ ազգերի նկատմամբ: Այո, կար ռասայական ատելություն, մի բան, որ այսօր էլ պահպանվել է սևամորթների և սպիտակամորթների, մահմեդականների և քրիստոնյաների միջև: Դժբախտաբար, գլոբալ, աշխարհակործան նման հակադրության հիմքերը դրվել էին սելջուկ-թուրքերով:

Սելջուկյան աշխարհակալ տերությունը փռված էր աներևակայելի, ընդարձակ տարածքի վրա: Այն սփռված էր արևելքից արևմուտք Չինաստանի և Աֆղանստանի սահմաններից մինչև Միջերկրական ծով, իսկ հյուսիսից հարավ Սև ծովից ու Կովկասից մինչև Եմեն և Հնդկական օվկիանոս: Հսկա, մինչ այդ աշխարհում իր մեծությամբ նախադեպը չունեցող պետության մայրաքաղաքը Սպահանն էր: Երկիրը միանձնյա

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 110:
[2] Տե՛ս նույն տեղում:

կառավարում էր սուլթանը: Մելիք շահի սուլթանության տասնամյակներին ստեղծվեցին վարչական մի շարք նոր միավորներ, որոնցից խոշորներն էին *էյալեթները* (նահանգները)[1]:

XI դարում, նվաճումից հետո, Ատրպատականը, Առանը և Հայաստանը միավորվեցին մի խոշոր էյալեթի մեջ և կառավարման հանձնվեցին սուլթանի ընտանիքի անդամներից մեկին: Հայաստանի ներքին գավառների կառավարումը տալիս էին երկրի նվաճումն իրականացնող զորահրամանատարներին: Երկրի ոստիկանները կոչվում էին *շահնա* կամ *մուհթասիբ:* Այս վերջիններս էին անմիջապես շփվում ժողովրդի հետ, հսկում առևտրական գործարքները, հրեա և քրիստոնյա հպատակներին արգելում իսլամապաշտների հետ նմանատիպ հագուստ հագնել, նրանց չէին թողնում հասարակական վայրերում գինի խմել, կրոնական վայրերում տղամարդկանց և կանանց միմյանց հետ նստել[2]:

Ծանր էին հարկային հարստահարությունները, բազմաթիվ ու բազմապիսի էին հատկապես քրիստոնյա հպատակներից գանձվող հարկերն ու տուրքերը: Երկիրը տնքում էր սոցիալական ու ազգային ճնշման աներևակայելի բեռի տակ: Հարկվեց նաև հայկական եկեղեցին, որն արաբների օրոք որոշ արտոնություններ ուներ: Հայտնի է նաև, որ 1090 թ. հայ հոգևորականներից ու աշխարհական իշխանավորներից կազմված բազմամարդ մի պատգամավորություն, *Բարսեղ կաթողիկոսի* գլխավորությամբ, թանկարժեք ընծաներով գնացել է Մելիքշահի մոտ և նրանից խնդրել հարկային բեռի թեթևացում: Սուլթանը կաթողիկոսին ընդունեց հավուր պատշաճի, *հայ եկեղեցին ազատեց ծանր հարկերից* և այդ *արտոնությունները* հաստատեց ֆերմաներով գրավոր[3]:

Ժողովրդի ու երկրի կործանման պատճառներից էր գերեվարությունը. հայ բնակչությունը հազարներով, շղթայակապ հայրենիքից բռնագաղթեցվում էր և Փոքր Ասիայի ու Իրանի շուկաներում *իբրև ստրուկ վաճառվում:* Երբեք Արևելքում ստրկավաճառությունն այնպիսի չափերի ու խայտառակ մակարդակի չէր հասել, ինչպես սելջուկների արշավանքների, ինչու չէ, նաև նրանց տիրապետության տարիներին: Մահմեդականների ծաղր ու ծանակից, գերեվարության բռնությունից, ձրի պետական կառույցների վրա աշխատելուց խուսափելու ելքը հայ ժողովրդի մի ստվար մասը գտնում էր *արտագաղթի մեջ:* Գաղթագնացության հիմնական տեղը ընտրվեցին ափամերձ քաղաք-

[1] Մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 467:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս *Մատթեոս Ուռհայեցի,* նշված աշխատությունը, էջ 340, տե՛ս նաև *Հակոբ Մանանդյան,* Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1960, էջ 70:

ները, հատկապես Կիլիկիան, որը շուտով լցվեց հայերով և դարձավ *Կիլիկյան հայկական պետություն* Ռուբինյանների գլխավորությամբ:

Դժվար է ասել բարեբախտաբար, թե դժբախտաբար, բայց և այնպես XI դարի վերջերին իրադրությունը կտրուկ փոփոխության ենթարկվեց: Նախ, զուտ ռազմական ուժի վրա հենված սելջուկ կառավարողները, հիմնականում սնվելով ավարառությամբ, ծանր հարկահանությամբ, ուշադրություն չդարձնելով երկրի տնտեսական զարգացմանը, այլևս չէին կարող լայնարձակ կայսրությունը միաձույլ պահել հաղորդակցության միջոցների միջնադարյան եղանակով: Առաջին հերթին սրվել էին միջֆեոդալական հակասություններն ու հակամարտությունները հենց իրենց թուրքերի միջև: Տեղի էին ունենում փոքր ու մեծ ապստամբություններ: Կենտրոնական կառավարությունը չէր հասցնում ճնշել ոչ «արյունակիցների» և ոչ էլ հպատակ այլազգիների խռովությունները: Զենքի ուժով, բռնությամբ «կազմավորված» պետությունը, զենքի միջոցով էլ նախ ներսից, ապա նաև դրսից հարվածներ էր ստանում և աստիճանաբար քայքայվում, մասնատվում:

Արևմուտքից Երուսաղեմ ձգվող եվրոպական *խաչակիրները* իջնում էին դեպի սուլթանատի սահմանները, սպառնում կոնգլոմերատի տեսքով ձևավորված սելջուկյան այն տերությանը, որն արդեն դարձել էր անկառավարելի: Թուրքահպատակ, երեկվա ինքնուրույն ժողովուրդների ավագանին բանակցությունների մեջ էր խաչակիրների հետ և ձգտում էր օր առաջ, նրանց օգնությամբ, թոթափել սելջուկյան լուծը: Քիչ կարևոր չէր նաև հարևան Վրաստանի անկախության նվաճումն ու ուժեղացումը: Քայլեր էին կատարվում հայ-վրացական միասնական պետության ստեղծման ուղղությամբ:

Միջազգային ու հատկապես ներքին նման իրադրության պայմաններում, Մելիքշահ I-ի մահից հետո, XII դարամուտին սելջուկյան հսկա պետությունը աստիճանաբար սկսեց քայքայվել և բաժանվեց մեծ ու փոքր բազմաթիվ իշխանությունների: Հայաստանի վարչաքաղաքական կյանքում ևս լուրջ փոփոխություններ կատարվեցին:

2. Ազատագրական պատերազմները XI—XII դարերում Զաքարյանների իշխանապետությունը

Թուրք-սելջուկյան հսկայածավալ տերությունը որքան արագ ձևավորվեց, նույնքան արագ էլ քայքայվեց: Ռազմական բիրտ ուժի, թալանի ու կողոպուտի վրա հիմնված, արտադրողական ուժերի զարգացմանն ուշադրություն չդարձնող, քոչվոր, խաշնարած, անապատաբնակ այդ ցեղերը, ոսկու և հարստության համն առնելով, սկսեցին բաժանվել իրարից և սկիզբ դնել միջֆեոդալական կռիվների: Շեն ու բարգավաճ քաղաքները նրանք ավերում էին, երբեմն կործանում (Արծն), գյուղերից բնակիչներին հազարներով «սուրգյուն անում», բարեբեր դաշտերը վերածում *արոտավայրերի:* Սրանց մասին ժամանակակիցները շուրջ կես հազարամյակ առաջ պիտի ասեին, որ *ոչխարները կերան մարդկանց:* Հատկապես Անդրկովկասը, մասնավորապես Հայաստանը, բռնի մարդաթափվում էր, իսկ գերեվարվածների ու մի կերպ փախչողների հաշվին արդեն ձևավորվում էր հայ գաղթաշխարհը:

Անաշխատ եկամուտներով, թալանով հարստացող թուրք ասպատակիչները շատ շուտ հարստանում էին, ապա ձգտում քաղաքական ու տնտեսական անկախության: Ընդերքից փտող կայսրությունը մանրատվում էր, վերածվում մեծ ու միջին հզորության իշխանությունների, որոնք արդեն իրար դեմ էին պայքարում, ձեռքից ձեռք փախցնում հարկատուներին, անառիկ բերդերն ու ամրոցները:

Սելջուկյանների գահավիժման ժամանակահատվածը համընկնում էր Վրաստանի հզորացմանը, որը համեմատաբար քիչ էր տուժել վայրենի այդ ցեղերի հարվածներից[1]:

Ավելին, ինչքան թուլանում էր, մասնատվում վայրենաբարո այդ ցեղերի տերությունը, այնքան արագ բարձրանում էր վրացական պետությունը, դառնում Անդրկովկասի այն երկիրը, որից արդեն երկնչում էին ոչ միայն փոքր, այլև խոշոր ամիրայությունները:

Ծագումով Բագրատունի Դավիթ Շինարարը (1089-1125), աստիճանաբար վերականգնելով և ամրապնդելով վրաց պետության քաղաքական անկախությունը, երկրից դուրս էր վռնդում մանր էմիրներին, արդեն լրջորեն մտահոգվում Վրաստանի հարավային սահմանների ամրապնդման խնդրով: Նրան, ինչպես նաև հաջորդներին, այդ մեծ առաքելության ճանապարհին հարկավոր էր վստահելի դաշնակից: Նման դաշնակից կար. դա *Հայաստանն էր:* Վրաց Բագրատունիների և պետականությունը կորցրած հայ նախարարների քաղաքական, ռազմական ու տնտեսական շահերը համընկնում էին, որով պայմանավոր-

[1] Մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 523-525:

վեց հայ-վրացական զորքերի միավորումը գրեթե մեկ դրոշի ներքո, ազատագրական այն ոգորումները, որոնք աներևակայելի հաջողություն բերեցին Անդրկովկասի զույգ ժողովուրդներին:

Հայ-վրացական դրկից ու միակրոն ժողովուրդների բարեկամությունը, միասնական պայքարի դուրս գալը դարերի պատմություն ուներ: Նրանք հերոսական պայքարի պատմության էջեր էին գրել Սասանյան Պարսկաստանի դեմ մղած պատերազմներում V-VI դարերում: VII-IX դարերում միաժամանակ, հաճախ միասին մարտնչել էին արաբական խալիֆայության, մանր ու խոշոր էմիրությունների դեմ: Այժմ էլ այդ խնդիրը դրված էր, սակայն բոլորովին նոր հարթության վրա: Հզորացող Վրաստանին դաշնակից էր պետք, որը չդավաճաներ իրեն և շահագրգռված լիներ մինչև վերջ կռվել սելջուկյան էմիրաթների դեմ: Այդ դաշնակիցը Հայաստանն էր, թերևս նման պայմաններում հայ նախարարներն ավելի շահագրգիռ էին այդ հարցում և բացահայտորեն հույսեր էին փայփայում, թե երկրի անկախության վերականգնման գործում հզորացող Վրաստանից զատ այլ գործընկեր չունեն: Հայ և վրաց մատենագիրները, օտար անցորդներն ու ուղեգրողները գրեթե միաբերան հաստատում են, որ այդ ժամանակահատվածում հայ-վրացական դաշնակցության հարկավորությունը լավ էին հասկանում և՛ վրաց արքաներն ու նրանց հետ քայլող ազնվականները, և՛ հայ նախարարները, իշխանները, զորականները, վերջիններիս համախոհները[1]:

XII դարաշեմին սկսվեց հայ-վրացական բանակի *ազատարար միսիան:* 1110 թվականին այդ բանակն ազատագրեց Շամշուլդի և Սոմխեթի բերդերի մեծ մասը: 1118 թ. Դավիթ Շինարարի դրոշի տակ կռվողները սելջուկյաններից ետ խլեցին Կյուրիկյանների Լոռվա թագավորության գրեթե բոլոր բերդամրոցները, 1123 թ. վրացական բանակը գրավեց Շամախին, Գուգարքը, Ուտիքը, Կայենը, Տերունականը, Տավուշը, Մահկանաբերդը և այլ երկրահատվածներ[2]:

Նման հաղթանակները ոգևորության նոր ալիք առաջ բերեցին ողջ հայաշխարհում, և հայ նախարարները ծրագրեցին ավելի սերտ գործակցել վրաց արքունիքի հետ ու ձեռնամուխ լինել առավել արմատական գործողությունների:

1124 թ. Անիի բնակիչները ըմբոստացան Շադդադյանների դեմ, դուրս վռնդեցին սելջուկ ամիրային և քաղաքի բանալիները հանձնեցին Դավիթ Շինարարին: Երեք տարի պահելուց հետո Դ. Շինարարին հաջորդած Դեմետրե I (1125—1155) թագավորը հարկադրված էր Անին վերահանձնել մեծ զորքով արշավող Շադդադյան ամիրա Փատլունին: Ժո-

[1] Տե՛ս *Թ. Խ. Հակոբյան*, Անիի պատմություն, գիրք երկրորդ, (1845 թ. մինչև անկումն ու ամայացումը), Երևան, 1982, էջ 122-123:

[2] Տե՛ս «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», թարգմանությունը *Լ. Մելիքսեթ-Բեկի*, հ. Ա, Երևան, 1934, էջ 216-217:



Միրզաջան Ղազարյան (հայրը)

ղովուրդը կռվում էր աներևակայելի անձնազոհությամբ: Իրենց հերոսությամբ աչքի ընկան անեցի կանայք, որոնց մեջ ամենախիզախը Այծեմնիկ անունով մի աղջիկ էր: 1161 թ. Անիի բնակչությունը միասնաբար մեկ անգամ ևս զենքի դիմեց, զոհառատ մարտերով ազատագրեց սիրելի քաղաքը և վրաց Գեորգի III (1155-1184) թագավորին հրավիրեց կառավարել այն: Վրաց արքան հանդիսավորությամբ մտնելով Հայաստանի երեկվա մայրաքաղաքը, այնտեղ կառավարիչ նշանակեց Իվանե Օրբելյանին, օգնական *Սարգիս Զաքարյանին:* Հզորացած հայ-վրացական զինված ուժերը 1161 թ. Շիրակում ջախջախեցին սելջուկյան մի շարք մանր էմիրությունների և 1162 թ. օգոստոսին ազատագրեցին նաև Դվինը[1]:

Սակայն Շիրակի ու Այրարատյան աշխարհի համար հայ-սելջուկյան կռիվները շարունակվեցին մինչև XII դարավերջը և XIII դարասկիզբը, այսինքն մինչև Գեորգի III-ի դուստր Թամար թագուհու գահակալությունը (1184-1213) և *Զաքարյանների* ամրապնդումը վրաց արքունիքում:

Զաքարյանների տոհմական ծագման մասին մնացել են ոչ հստակ և վիճահարույց կարծիքներ: Հմուտ վրացագետ, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի կարծիքով վրաց աղբյուրներում Զաքարյանները[2] հիշատակվում են իբրև *Մխարգրձելի*, այն է *երկայնաբազուկ:* Նրանք ֆեոդալական աչքի ընկնող տոհմի մակարդակի են հասել դեռևս XI դարում և գոյատևել մինչև XIV դարը: Անվանի զորականներ և պետական այրեր տված այդ «տունը» ծագումով Մեծ Հայքի Կորճայք նահանգի Կարքունիք գավառից էր, որը Հյուսիսային Հայաստան էր տեղափոխվել Վասպուրականից[3]:

Նույնիսկ տարակարծություն կա նրանց ծագումնաբանության զտարյուն հայ կամ խառնուրդ լինելու վերաբերյալ: Պրոֆ. Լ. Բաբայանը գտնում է, որ Զաքարյանների նախահայրերը Հարավային Հայաստանում են խարսխված եղել: XI դարում գալով Ջորագետ, մասնակցել են սելջուկների դեմ վրացիների մղած մի շարք կռիվներին, քաջությամբ աչքի են ընկել և Կյուրիկյան Բագրատունիներից իբրև մշտական բնակության վայր ստացել *Խոժորնի* լեռնագավառը[4]:

Գարեգին Հովսեփյանը հաղորդում է, թե Զաքարյանները մի քանի ճյուղերով խնամիացել են վրաց Բագրատունիների հետ և աստիճանաբար թափանցել արքունիք[5]:

1185 թ. արդեն *ազնվատոհմիկ* իշխան Սարգիս Զաքարյանը Թա-

---

[1] Տես «Սովետական Հայաստան», էջ 110:

[2] Տես *Թ. Խ. Հակոբյան*, նշված աշխատությունը, էջ 123:

[3] Տես ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 676:

[4] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 529:

[5] Տես *Գ. Հովսեփյան,* Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 8-12:

մար թագուհու «կամոք» նշանակվեց հայոց և վրաց միացյալ բանակի սպասալար (սպարապետ): Դրանից առաջ Իվանե և Զաքարե Զաքարյանները (Սարգսի զույգ որդիները) վրացական բանակի շարքերում կռվող հայոց գնդերի սպարապետներն էին, ամիրսպասալարի օգնականները: Սարգիս սպարապետը իր ծառայությունների համար արքունիքից ստացավ Լոռվա բերդը և տեղափոխվեց այնտեղ ապրելու:

Սարգիս Զաքարյանը իր ժամանակին, պատերազմական գործողությունները ղեկավարելիս, հայտնի է եղել իբրև խելացի զորավար և բարձրահասակության պատճառով ստացել *«Լայնաթիկունք»* մականուն[1]:

1187 թ. վախճանվեց Սարգիս զորավարը, որի մահից հետո ամիրսպասալարի պաշտոնը հանձնվեց Գամբեկել Թորելուն: 1192 թ. հոր պաշտոնը կրկին վստահվեց Սարգսի մեծ որդուն Զաքարեին: Նրա կրտսեր եղբայրը Իվանեն, նշանակվեց արքունի վեզիր: 1212 թ. Զաքարեի մահից հետո խնամակալի պաշտոնը ստացավ Իվանեն, իսկ մսախուրթ-ուխուցեսի պաշտոնը նրա հորեղբոր տղա Զաքարեն[2]:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ «Զաքարյանները քաջ մարդիկ էին ու հզոր իշխանությամբ և արժանացել էին պատիվների վրաց թագուհու կողմից»[3]:

Վրաց ժամանակագրի հաղորդման համաձայն «Բերեցին Մխարգրձելի (երկայնաբազուկ - Հ. Ղ.) Սարգիս ամիրսպասալարի երկու որդոց՝ Զաքարիային և Հովհաննին (Իվանեին), որոնք շատ փորձված էին պատերազմներում և ազգովին հավատարիմ թագավորներին: Այս պատճառով սրանք հույժ սիրված էին Թամարի նախնիների (պապերի և հայրերի) կողմից: Թամարն էլ սրանց հանդեպ ուշադիր եղավ, շնորհեց Զաքարիային ամիրսպասալարություն և կրտսեր եղբորը Հովհաննին (Իվանեին) գործակալություն (մսխուրթ-ուխուցեսորաց): Սրանք արժանի մարդիկ են»[4]:

Ամիրսպասալար Զաքարե Զաքարյանի գլխավորությամբ հայ-վրացական միացյալ բանակը սելջուկների լծից իրար հետևից ազատագրեց հայկական քաղաքներն ու բազմաթիվ երկրահատվածներ: 1119 թ. նրանք ազատագրեցին Գուգարաց աշխարհը՝ Լոռվա բերդով, Արցախը, ողջ Սյունիքը, Արարատյան դաշտը, Շիրակը, 1203 թ. Դվինը, 1206 թ. Կարսը, Բասենն ու Բագրևանդը: XIII դարակեսին արդեն ազատագրված էր գրեթե ողջ հյուսիս-արևելյան Հայաստանը[5]:

[1] Տե՛ս «Վրաց աղբյուրները», հ. Բ, էջ 11:
[2] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 53:
[3] *Կիրակոս Գանձակեցի,* Պատմություն Հայոց, Երևան, 1969, էջ 162:
[4] «Վրաց աղբյուրներ...», հ. Բ, էջ 24:
[5] Տե՛ս *Ստեփանոս Օրբելյան,* Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 392, տե՛ս նաև *Արշակ Ալպոյաճեան,* Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրե, 1955, էջ 386, 391:

Հայաստանի մեծ մասը, սակայն, դեռևս մնում էր սելջուկահպատակ: Իսլամական իշխանություններից այդ ժամանակ ամենահզորը մնում էր Իկոնիա-Ռումի սուլթանությունը: XIII դարամուտին նա իր տիրապետությունն էր հաստատել Փոքր Ասիայի մեծագույն մասի, այդ թվում Սեբաստիայի (Սվազ), Պոնտոսի (նաև Տրապիզոն, Զանիկ), Եկեղյաց և Դարանաղյաց գավառների, Ծոփքի, ինչպես նաև Կարինի և Եդեսիայի շրջանների վրա[1]:

Ինչպես վրացական արքունիքը, այնպես էլ Զաքարյանները որոշեցին վերագրավել վերոհիշյալ գավառները, սակայն սրանց կանխեցին սելջուկները:

1204 թ. Իկոնիայի Ռուքն-ադ-Դին սուլթանը պատերազմ հայտարարեց Վրաստանին և մեծ բանակով շարժվեց դեպի Բասենի դաշտ, նպատակ ունենալով ոչ միայն փոքր էմիրությունների պաշտպանությունը, այլև կորցրած երկրահատվածների վերանվաճումը: 1204-1205 թթ. ծավալված մարտերը Բասենի դաշտում ավարտվեցին հայ-վրացական բանակի տարած փայլուն հաղթանակներով: Միացյալ բանակը ջախջախելով Իկոնիայի սուլթանի զորքերին, ազատագրեց Բասենը, ապա վերջնականապես գրավեց Բարձր Հայքը: Դժբախտաբար, չկարողանալով ամրանալ այդ նահանգներում, հարկադրված էր ետ քաշվել, ապա 1206 թ. նորից արշավել ու վերջնականապես տեր դառնալ հատկապես Կարնո աշխարհին:

Իրար հակասող, երբեմն իրարամերժ տեղեկություններ են մնացել Շադդադյանների կենտրոնի վերածված հայոց հինավուրց մայրաքաղաք *Անիի ազատագրման վերաբերյալ: Պրոֆ. Թ. Խ. Հակոբյանը,* նորովի քննարկելով հայ և օտար սկզբնաղբյուրների ընձեռած բազում փաստերը, հայրենի պատմաբանների դրանցից արած եզրահանգումները, կարծիք է հայտնում, որը չի համերաշխում ընդհանրական դարձած իշխող տեսակետներին[2]:

Հենվելով Վարդան Արևելցու ընձեռած փաստերի վրա, նա հաստատում է, թե Անին վերջնականապես ազատագրվել է 1199 թ.: Սակայն չի զլանում հաղորդել, թե մեծանուն գիտնական Հ. Մանանդյանը կարծիք է հայտնել Անիի 1174 թ. ազատագրման մասին, ապա քիչ անց նորից հաստատում, թե մայրաքաղաքը վերջնականապես հանձնվել է հայ-վրացական զորքին 1199 թ.[3]:

Ինչ որ է: Անին ազատագրելուց հետո Զաքարյանները (Իվանեն և Զաքարեն) ձեռնամուխ են լինում սելջուկյան մյուս մանր էմիրությունները

[1] Տե՛ս *Հ. Մանանդյան,* Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 131-132:
[2] Տե՛ս *Թ. Խ. Հակոբյան,* Անիի պատմություն, հ. 2, էջ 126-130:
[3] См. *Я. А. Манандян,* О торговле и городах Армении, Ереван, 1954, стр. 271-272.

ների ոչնչացմանը և իրենց *իշխանության կազմավորմանը Հյուսիսային Հայաստանում:* Ըստ Թ. Հակոբյանի, Զաքարյանների իշխանությունը իբրև պետություն ձևավորվել է XIII դարի արշալույսին, ընդամենը երկու տասնամյակում և իր մեջ ներառել է Անի-Շիրակի, Սյունիքի, Լոռվա թագավորություններն ամբողջովին և Կարս-Վանանդի թագավորության մի մասը[1]:

Իշխանություն հաստատելով Բագրատունյաց Հայաստանի նախկին տարածքի մեծ մասի վրա, Զաքարյաններն իրենց կոչեցին *«թագավոր», «արքա», «կեսար», «մեծ իշխան», հատկապես «շահնշահ»* տիտղոսներով: Նրանք, փաստորեն, վերանայեցին նախկինում պարտադրված *վասալական կախումը* վրաց Բագրատունիներից և կազմավորեցին պետություն, ըստ ձևի իշխանապետություն, ըստ բովանդակության տիրապետող դասակարգի, այն է աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների, քաղաքական կազմակերպություն, ըստ կառուցվածքի ավատատիրությունների և վասալական իշխանությունների համակցություն ընդհանուր տարածքի վրա: Ձևավորվեց պետական կառուցվածքով մի նոր համակարգ, որն ինքնատիպ էր ոչ միայն Անդրկովկասում, այլև ամբողջ Առաջավոր Ասիայում[2]:

Իրենց անկախությունը թեկուզ արտաքնապես շեշտելու ցուցադրական միտումով Զաքարյանները Տփղիսից տեղափոխվեցին Անի, չնայած ընդհանուր զորքերի գլխավոր հրամանատարության պարագան նրանց պարտադրում էր մնալ վրաց մայրաքաղաքում: Հատկանշական է նաև այն, որ շրջակա մահմեդական ցեղերը հպատակության հարկը վճարում էին ոչ թե Տփղիսին վրացիներին, այլ Անիին Զաքարյաններին:

Զաքարյանների կոնֆեդերատիվ իշխանապետությունը բաղկացած է եղել երեք իշխանություններից: Զորքերի գլխավոր հրամանատար, ավագության իրավունքից օգտվող Զաքարեն և նրա հետնորդները իշխել են Լոռու աջ մասին, Շիրակին, ապա մինչև Բասենն ընկած գավառներին: «Շահնշահը» նստել է Անիում: Իվանե աթաբեկի և նրա ժառանգների իշխանությունը ներառել է Լոռվա գավառի մնացած հատվածը, Այրարատ նահանգի մեծ մասը, Սևանա ավազանի և Սյունիքի հյուսիս-արևելյան մի քանի գավառները: Իշխանը խարսխվել է սկզբում Բջնիում, հետագայում, Այրարատի ազատագրումից հետո, Դվինում: Զաքարյանների մյուս ճյուղը տիրապետել է Տավուշին, Փառիսոս և Գարդման աշխարհներին, կենտրոնը եղել է *Գագը:* Այստեղի տիրակալներն են եղել Զաքարյանների կրտսեր ճյուղը *Վահրամյանները*[3]:

[1] Տե՛ս *Թ. Խ. Հակոբյան*, նշված աշխատությունը, էջ 128-129:

[2] ՀՍՀ, հ. 3, 1977, էջ 676, *Ս. Երեմյանի* և *Խ. Թորոսյանի* հոդվածները Զաքարյանների մասին:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 111:

Մնացած երկու ճյուղերը ենթարկվում էին «Շահնշահին», որը ճանաչվել է Զաքարեն մինչև 1212 թ., ապա նրա մահից հետո Իվանեն, մինչև 1227 թ.:

Զաքարյանների գահակալության հարյուրամյակում աննախադեպ վերելք է ապրել երկրի տնտեսությունը, ոչ միայն երկրագործությունը, այլև արհեստագործությունն ու առևտուրը: Անին, Դվինը, Կարսը, այսինքն Հայաստանի նախկին երեք մայրաքաղաքները, չնայած խոչընդոտներին, նորից վերածվել են ծաղկող շահաստանների, որոնք առևտրի նախկին շառավիղը վերականգնելով, տվել են մեծահարուստների մի ամբողջ խումբ: Հայ մշակույթը բարձրացել է անհիական հին մակարդակին, երկիր է վերադարձել գաղթականների մեծ մասը, աճ է ապրել ազգաբնակչությունը: Դասակարգային խիստ ներհակությունով հանդերձ, հայ ժողովուրդը տնտեսական ու քաղաքական վերելք է ապրել և մտահոգվել է երկրի մյուս մասերի ազատագրումով, եթե դրան *չխանգարեին մոնղոլական արշավանքները* Անդրկովկաս:

3. Մոնղոլական արշավանքները և Հայաստանի նվաճումը

XII դարամուտին և XIII դարի արշալույսին պատմության բեմահարթակ իջան ողջ Ասիայի ու Արևելյան Եվրոպայի պետությունների, հետևաբար և ժողովուրդների կյանքում ճակատագրական բացասական դեր խաղացած վաչկատուն, ասպատակող, թալանով ու կողոպուտով պարապող ցեղախմբեր, որոնք սկզբում կոչվում էին թաթարներ, հետագայում նաև *թաթար-մոնղոլներ*[1]:

Կենտրոնական Ասիայից դուրս գալով, դեռևս ցեղախմբական մակարդակի վրա գտնվող թաթարները զարմանալիորեն շատ արագ ձևավորեցին մի այնպիսի հզոր պետություն, որի տիրապետությունը տարածվում էր Խաղաղ օվկիանոսից սկսած, եզերում Սև ու Միջերկրական ծովերի առափնյա շրջանները:

XI-XII դարերում Իրտիշ գետի վերին հոսանքներից մինչև Ամուր գետի հունը, ապա նաև Մեծ Հինդայի լեռնահովիտները տարածված այդ ցեղերը արդեն խոսում էին գրեթե մեկ լեզվով (տարբեր խոսվածք-

[1] Սույն հատվածը շարադրելիս օգտագործել ենք «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 597-630: *Լ. Բաբայան*, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964: *Վ. Հարությունյան,* Անի քաղաքը, Երևան, 1964: *Թ. Խ. Հակոբյան*, Անիի պատմություն, գիրք երկրորդ: ***Н. Я. Марр,*** Ани, Ереван, 1939; Очерки Истории СССР, т. III (IX-XIII в.в.), Москва, 1953. ՀՍՀ, «Սովետական Հայաստան», էջ 111-112:

ներով), որը հետագայում կազմավորվեց մի լեզվի այն է *մոնղոլերենի:* Նրանք XII դարի վերջին միայն *վերցրեցին իրենց գիրը*, այն էլ Արևելյան Թուրքեստանում ապրող *ույգուրներից:* Պաշտում էին *«Հավիտենական կապույտ երկինքը»*: Կային, սակայն, ցեղեր, որոնք ավելի էին «զարգացած» և ույգուրներից, իբրև պաշտամունքի առարկա, ընդօրինակեցին բուդդայական կրոնը: Շուտով այստեղ տարածվեց նաև քրիստոնեական վարդապետության *նեստորական* մասնաճյուղը[1]:

Մոնղոլ-թաթարները սկզբում զբաղվում էին միայն խաշնարածությամբ և ապրում էին լայնատարած տափաստաններում, այն էլ տոհմատիրական-նահապետական հասարակարգից վաղ ֆեոդալականի անցման շրջանում: XIII դարասկզբին քոչվորական ֆեոդալիզմն այնտեղ վերջնականապես հաղթանակեց: 1206 թվին *Օնոն* գետի ափին հավաքված մոնղոլական մեծ ու փոքր ցեղախմբերի առաջնորդներն իրենց Կուրալթայում 50-ամյա *Թեմուչինին* ընտրեցին *Մոնղոլիայի խափան*, մեծ խան և նրան տվեցին *Չինգիզ խան* (հզոր խան) (1206-1227) տիտղոսը: Կարճ ժամանակ անց նա միավորեց մոնղոլական գրեթե բոլոր ցեղերին և ստեղծեց լայնածավալ մի տերություն, ուժեղ և կարգապահ բազմաքանակ բանակ: XIII դարի սկզբներին այդ բանակի թիվը հասնում էր 100 հազարի (ինը թուման և խանական տասը հազարանոց թիկնազոր)[2]:

Մոնղոլական ցեղապետերի գլխավորած արշավանքները հետապնդում էին զուտ նոր հողեր զավթելու, այլ ժողովուրդների հպատակեցնելու և ստրկացնելու նպատակներ: Այդ պատերազմները բխում էին ֆեոդալականացվող մոնղոլ ազնվականության շահերից և, համամարդկային գաղափարներով գնահատելիս, դրանք մարդատյաց, ստրկացուցիչ կռիվներ էին, *դատապարտված, նզովված՝ ինչպես իր ժամանակին, առավել ևս՝ այսօրվա ակնոցով*:

Մոնղոլական արշավանքները ծայր առան 1206 թվից և ավելի հուժկու դարձան 1209 թ., երբ Չինգիզ խանը նվաճեց Չինաստանի մի հատվածը: Քիչ անց նրանք նվաճեցին Սիբիրի և Միջին Ասիայի այլ ժողովուրդների բուրյաթներին, յակուտներին, օյրաթներին, կիրգիզներին, ույղուրներին: 1211-1221 թթ. մոնղոլները գրավեցին ողջ Միջին Ասիան, Չինաստանի մեծ մասը[3]:

1220 թ. աշնանը արդեն ծավալուն կայսրության գահակալ դարձած Չինգիզ խանը, Սամարղանդի պաշարման օրերին, *Ջեբե և Սուբեդեյ* հրամանատարներին 30 հազարանոց բանակ տվեց և

[1] Մանրամասն տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 597:
[2] Տես նույն տեղում, հ. III, էջ 599:
[3] Տես ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 711:

հանձնարարեց նախ հետապնդել Խորեզմի շահի բանակին, ապա անցնել Իրանն ու Անդրկովկասը, *հետախուզել* դրանց հզորության չափը, քանզի շուտով պիտի արշավեր այդ երկրներ: 1220 թ. դեկտեմբերին մոնղոլական հորդաները Իրանի հյուսիսային մասով մոտենում են Արաքս գետին, ապա Նախճավանի արևմտյան եզրով հասնում մինչև Աղստևի հովիտը: Դեկտեմբերի կեսերին բռնկված Աղստևի ճակատամարտն ավարտվում է թաթարների հաղթանակով: Հայ-վրացական տասը հազարանոց բանակը ջարդվում է, պարտությունն կրելով նահանջում: Սակայն, զգուշանալով ծուղակից, թաթարական զորքերը վերադառնում են եկած ճանապարհով, բանակատեղ ընտրելով Ուտիքի Բեղամեջի շրջանը[1]:

Պարտված հայ-վրացական իշխաններն ու նախարարները հարկադրված են լինում դաշնակիցներ որոնել: Նրանք դաշնակցում են Ատրպատականի տիրակալ *Ուզբեկի*, Խլաթի տիրակալ *Մելիք Աշրաֆի* հետ, որոշում *գարնանը* միասնական բանակով հարձակվել մոնղոլական հորդաների վրա: Թաթարները զգալով կովկասյան ժողովուրդների նախապատրաստությունը, 1221 թ. հունվարին իրենք են նախահարձակ լինում: Հայերի և վրացիների համար հարձակումն անսպասելի էր: Այնուամենայնիվ, եղբայրական զույգ ժողովուրդների միացյալ բանակը, Գեորգի Լաշայի և Իվանե աթաբեկի գլխավորությամբ, շարժվում է մոնղոլներին ընդառաջ: Ճակատամարտը տեղի է ունենում *Կոտման* (այժմյան Թովուզ) գետի ափամերձ հարթության վրա: Մարտն ահարկու էր: Զինվորները երկուստեք սրախողխող էին անում իրար, հաջողությունը փոխեփոխ էր: Ի վերջո, հայ-վրացական զորքերի մի մասը հարկադրված նահանջեց, իսկ Վահրամ Գագեցին շարունակեց հետապնդել արյունախում թշնամու նահանջող զորախմբերին: *Կոտմանի ճակատամարտը առաջին լուրջ դիմադրությունն էր, որին հանդիպեցին մոնղոլ-թաթարները իրենց վարած շուրջ 16-ամյա պատերազմների ճանապարհին*[2]:

1221 թ. սեպտեմբերի վերջերին, Կոտմանում ստացած հարվածներից ուշքի եկած, նոր, թարմ ուժեր հավաքած թաթարները պաշարեցին Ուտիքի կազմում գտնվող հարուստ ու շքեղազարդ *Բայլական* քաղաքը: Հայ իշխանները տեղյակ էին, թե մինչ այդ մոնղոլները ինչպես էին ասպատակել ու ավերել Մարաղա, Համադան, Նախճավան, Արդաբիլ, Սարաբ քաղաքները: Այդ էր պատճառը, որ երբ թշնամուց վերջնագիր ստացան առանց կռվի հանձնվելու մասին, պատրաստվում էին բացել քաղաքի դարպասները[3]:

[1] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 600:
[2] Նույն տեղում, էջ 601:
[3] *Լ. Բաբայան*, նշված աշխատությունը, էջ 21-23:

Ժողովուրդը, լսելով այդ մասին, սպանեց բանագնացներին և զենքը ձեռքին կանգնեց պաշտպանական պարիսպների վրա: Քաղաքը շուրջ մեկ ամիս հուսահատական մարտեր մղեց, սակայն պարտվեց: Մոնղոլները գրավեցին Բայլականը և, այն հիմնահատակ կործանելուց զատ, ոչնչացրին բնակիչներից բոլոր նրանց, ովքեր չէին հասցրել օղակումից դուրս գալ և հեռանալ ուրիշ երկրներ:

Բայլականի զոհառատ մարտերին հաջորդում են Գանձակի կռիվները: Մոնղոլները, սակայն, տեսնելով, որ Գանձակը ամուր պաշտպանված է, իշխաններից մեծ գումար տուրք են վերցնում և մտնում Վրաստանի տարածք: 1222 թ. ձմռանը Խունանի տակ խաբեությամբ նրանք սկզբում ջարդում են հայ-վրացական զորքերին: Քիչ անց վերադասավորվող զորքերը նոր ճակատամարտի են պատրաստվում: Մոնղոլներն այս անգամ վախենալով, խուսափում են առճակատումից, փոխում երթուղին, գրավում Շիրվանը, սրախողխող անում բնակչությանը, ավերում, այրում և մոխրակույտի վերածում քաղաքը[1]:

1222 թ. վերջերին մոնղոլական զորքը ներխուժում է Հյուսիսային Կովկաս: Կ. Գանձակեցին սրտի ցավով այդ երթի մասին արձանագրում է. «Գալով Աղվանից աշխարհ, անցնելով Հայոց և Վրաց երկրները, ինչ որ ճանապարհին գտնում էին ամեն ինչ սրի էին անցկացնում, թե մարդ, թե անասուն, մինչև իսկ շներին... Եվ նրանք կոտորեցին սրի անցկացնելով: Այսպիսով, նրանք շատերին անհոգ գտնելով կոտորեցին և բազմաթիվ տեղեր ավերեցին»[2]:

Հետախուզական արշավանքն ավարտելով, Անդրկովկասին մեծ վնաս պատճառած մոնղոլները ավարով, հարստությամբ ծանրաբեռնված, հազարավոր գերիներ, հատկապես կանայք և երեխաներ ետևից գցած վերադարձան մեծ խանի նստավայրը: Մեկ տասնամյակից քիչ ավելի դադար առնելով, նրանք շարունակեցին իրենց արշավանքները, այս անգամ առավել կազմակերպված, առավել հիմնավոր:

1237 թ. ութսունմեկ տարեկան հասակում մահացավ Չինգիզ խանը: Արյունով ներկված նրա գահին տիրեց փոքր որդին *Հոքքա* (Ուգեդեյ) խաքանը: Դրանից դեռևս երկու տարի առաջ մոնղոլական խանների գերագույն ժողովը որոշել էր արշավանքները շարունակել, այն էլ զույգ ուղղություններով: Հիմնական զորքերը տալով *Բաթու խանին*, նրան հանձնարարվեց մտնել Ռուսաստան, գրավել այն ամբողջովին: 1236 թ. Բաթուի բանակը մտավ ռուսական լայնարձակ հողը և, գրավելով այն, երկրում հաստատեց մոնղոլական տիրապետություն: Շուրջ երեք հարյուրամյակ տևեց մոնղոլական անտանելի լուծը ռուս ժողովրդի ուսերին, այն երկրում, որը, փաստորեն, կրծքով պաշտպանեց Արևմտյան Եվրոպան վայրենի այդ ցեղերի ավերածություններից ու ասպատակություններից:

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 601-602:

[2] *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 201-202:

Մոնղոլական երկրորդ բանակը տալով *Չարմաղանին*, նրան հանձնարարվեց արշավել Անդրկովկաս, վերջնականապես հպատակեցնել այդ երկիրն ու ժողովուրդներին: 1236 թ. կեսերին Անդրկովկաս մտած մոնղոլական զորքերը նախկին դիմադրությանն այլևս չեն հանդիպում: Փոխվել էր ուժերի փոխհարաբերակցությունը: Նախ վախճանվել էին Գեորգի Լաշան և Իվանե աթաբեկը: Վրացական արքունիքում նման հեղինակության տեր զորավարներ այլևս չկային: Օգտվելով հայ-վրացական նախկին կապերի բացակայությունից, Չարմաղանը հանկարծակի ներխուժեց Անդրկովկաս և ժամանակ չտվեց նրանց միավորվելու[1]:

Գրեթե առանց ճակատամարտերի ու զոհերի, Չարմաղանի 30 հազարանոց բանակը հանգրվանավայր է ընտրում Մուղանի դաշտը, խարսխվում այնտեղ և սկսում արշավանքները նախ վրաց և աղվանից աշխարհների, ապա նաև *Հայաստանի վրա:* 1236 թ. ամռանը Հայաստան արշավելու հանձնարարություն ստացած մոնղոլական հորդաները բաժանվում են մի քանի խմբերի, ապա հանձնարարություն տալիս միաժամանակ, տարբեր ուղղություններով մտնել երկիր այնպես, որ հանկարծակիի եկած մարդիկ չկարողանան իրար օգնության ձեռք մեկնել:

Մոնղոլական զորքերը կիրառում էին ռազմավարության նողկալի, բայց խորամանկ մեթոդ: Նրանք, նախքան ճակատամարտ սկսելը, շրջակայքից հավաքում էին տեղացի բնակիչների, մեծ մասամբ ծերունիների ու կանանց, գցում զորքի առաջ, իսկ իրենք հետևից ընկած վարում էին մարտը: Բերդերի և ամրոցների մեջ պատսպարված հայ զորականները կամ չէին հարվածում յուրայիններին, կամ էլ շփոթվում էին և մինչև սկսում էին մարտը, մոնղոլները նպաստավոր դիրքեր էին գրավում: Այդպես նրանք կարճ ժամանակամիջոցում նվաճեցին Անդրկովկասը:

Չորս խմբի բաժանված թաթարական հորդաները 1236 թ. աշնանը սկսեցին արշավանքը Հայաստանի, Հյուսիսային Ադրբեջանի տարբեր շրջանների և Վրաստանի վրա: *Ասլան Նուինի* գլխավորած զորքերը ոչ միայն կարողացան նվաճել Սյունիքը, այլև Հրաշքաբերդում ամրացած *իշխան Էլիկումին* հարկադրեցին առանց կռվի հանձնվել և իր զորքով մասնակցել մոնղոլների արշավանքներին: Երկրորդ զորամասը գլխավորած *Մոլար Նուենն* գրավում է Վահ-

[1] *Լ. Բաբայան*, նշված աշխատությունը, էջ 51-53: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 606-607:

ռամ Զաքարյանի կալվածքները, հատկապես Շամքոր քաղաքն ու շրջակա տարածքը: Երրորդ ջոկատը *Դուղատա Նունեի* գլխավորությամբ, գրավում է Աղստևի գետահովիտը, Ավագ իշխանին, Իվան Աթաբեկի որդուն Կայեն բերդից հրավիրում բերում, ենթարկում իրեն և պարտադրում մասնակցել հետագա պատերազմներին[1]: Սա մի անտանելի պատիժ էր, երբ մահվան սպառնալիքի տակ եղբորը հանում էին եղբոր դեմ: *Չորրորդ* ու հիմնական բանակը Զարմաղանի հանձնարարությամբ կռվի դաշտ առաջնորդեց *Չաղատա* զորականը: Նա նույնպես առանց կռվի գրավեց Լոռվա բերդը, նրա շրջակա գավառները: Շատ իշխաններ առանց դիմադրության հանձնվեցին մոնղոլների սրի ողորմածությանը, որոնց մասին պատմիչը խոսում է իբրև *«արք կանացիք»*[2]: Ընդհանուր զորքի հրամանատար, հինգերորդ և մնացած ողջ բանակի գլխավոր կառավարիչ Զարմաղան զորավարը իրեն բաժին էր վերցրել կենտրոնական Հայաստանի, այն է՝ Արարատյան աշխարհի և Անիի նվաճումը: 1236 թ. սեպտեմբերին այդ զորասյունը Սևանա լճի ափերից դուրս է գալիս, մտնում Արարատյան երկրամաս և այնտեղից ուղղություն վերցնում դեպի Շիրակ ու Անի: Մոնղոլները, զինված պարիսպները քանդող գործիքներով, պաշարում են Անին և վերջնագիր տալիս քաղաքի ղեկավարներին՝ առանց կռվի հանձնվել, խոստանալով «ներում» շնորհել բոլորին: Զարմաղանը տեսել էր հայոց մայրաքաղաքի ամրացված պարիսպները, դրա համար էլ երկնչում էր կռվի զոհառատությունից: Քաղաքի բնակիչներն էլ հայրենասիրական պաթոսով, նաև հույսը դրած պաշտպանական գծի ամրության վրա, ոչ միայն ստիպում են իշխաններին մերժել առաջարկը, այլև *սրի են քաշում* Զարմաղանի ուղարկած բանագնացներին: Վիճակը գցված էր, կամուրջները այրված էին, և արյունահեղ ճակատամարտն այլևս անխուսափելի էր:

Սկսվում է ահեղ ճակատամարտը: Անիի արհեստավորները, մանր առևտրականները և սրանց գլխավորած ողջ բնակչությունը ոտքի է կանգնում *կենաց ու մահվան պայքարի*: Սակայն լինում են նաև «թուլամորթ իշխաններ», որոնք կերակրվելով սուտ խոստումներով, ընտանիքներով դուրս են գալիս քաղաքի պարիսպներից գաղտնարաններով և հանձնվում մոնղոլներին: Պատվիրակության սպանության լուրից գազազած, Զարմաղանը նախ ոչնչացնել է տալիս այդ «դասալիքներին» (բացառյալ արհեստավորներին և գեղեցիկ կանանց,

[1] Տե՛ս *Թ. Խ. Հակոբյան,* նշված աշխատությունը, էջ 285: Տե՛ս նաև *Սահակ Տեր-Մովսիսյան,* Պատմություն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 518-520:

[2] Տե՛ս *Կիրակոս Գանձակեցի,* Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 257-258: Տե՛ս նաև *Ս. Պողոսյան,* Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965, էջ 186:

որոնց գերեվարում է), ապա պարիսպներ քանդող մեքենաների օգնությամբ օղակում է մայրաքաղաքը: Իհարկե, մեծ զոհերի գնով մոնղոլները կարողանում են ճեղքել պաշտպանական գիծը, մտնել քաղաք և սկսել ահավոր ջարդը: Պատկերը սահմռկեցուցիչ էր: Կիրակոս Գանձակեցին նկարագրում է. «Անդ էր տեսանել տեսիլ ողորմագին, առհասարակ կոտորեալք ծնողքն և ծնունդք ընդ նոսին դիզեալք ի վերա միմյանց իբրև զբերդուկս քարանց կուտեալք, քահանայք և սարկավակունք և պաշտոնեայք եկեղեցականք, ծերք և տղայք և հասակավ մանկունք և երիտասարդք և կուսանք շատք...»[1]:

Անիին և անեցիներին հասցրած հարվածներն անտանելի էին, վերքերն անբուժելի: Ավերումն համատարած էր, կոտորածը ահռելի, մոնղոլական ավազակաբարո զորքերի խժդժությունները անհևակայելի, գերեվարությունը՝ մեծ չափերի, տարագրությունը անդարձ[2]: Հաղթական մարտերից հետո Զարմաղանը մոտենում է Կարսին, որի բնակիչները, լսած լինելով Անիի կոտորածի մասին, կամավոր բացում են դռները, սակայն չեն ազատվում կոտորածներից:

Այսպիսով, երկրորդ արշավանքի ժամանակ Զարմաղանը 1236 թ. ընթացքում նվաճում է Շիրակը, Զաքարյան ֆեոդալական իշխանություններին ենթակա *բոլոր գավառները*, ինչպես նաև Վրաստանի հարավ-արևելյան շրջանները[3]:

Դրանից հետո մոնղոլական ասպատակությունները կարճ ժամանակամիջոցում դադարեցվեցին: Նրանք վերակազմավորում էին բանակը, «բուժում ստացած վերքերը», պատրաստվում նոր, ավելի լայնամասշտաբ հարձակումների:

1242 թ. մոնղոլական առավել մեծաքանակ բանակը, Բաչու զորավարի գլխավորությամբ, մտնում է Անդրկովկաս, այս անգամ ոչ միայն նվաճելու *Արևմտյան Հայաստանը*, այլև հպատակեցնելու Իկոնիայի սուլթանությունը: 1242-1245 թթ. ծավալված պատերազմական գործողությունների ընթացքում մոնղոլները նվաճեցին Արևմտյան Հայաստանը, հատկապես Կարինն ու Բարձր Հայքը, Երզնկան ու Խլաթը: Քառամյա արշավանքների հետևանքով մոնղոլները հրի ու սրի ուժով, միջոցների մեջ խտրություն չդնելու գնով, ծավալած կռիվներով «ավարտում» են ողջ Հայաստանի ու Վրաստանի հպատակեցումը: Այնուհետև նրանց մտահոգության առարկա է դառնում երկրի վարչակառավարչական համակարգի ձևավորումը:

Հայաստանի տարածքը սկզբում մտցվեց Ատրպատականի կու-

[1] *Կիրակոս Գանձակեցի,* նշված աշխատությունը, էջ 259: Տե՛ս նաև *Թ. Խ. Հակոբյան,* նշված աշխատությունը, էջ 287:

[2] Նույն տեղում, էջ 289:

[3] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 610:

սակալության մեջ, որը տրոհվում էր հինգ *վիլայեթների*: 1. Արևելյան Վրաստանի թագավորությունը և Զաքարյանների իշխանությունը (Այրարատ, Սյունիք, Գուգարք) կոչեցին *Գյուրջիստանի* վիլայեթ: 2. Հայաստանի հարավ-արևմտյան նահանգները *«Մեծ Հայքի»* վիլայեթ: 3. *Շիրվանի* վիլայեթ: 4. *Առան և Մուղան:* 5. *Ատրպատական:* Սրանք իրենց հերթին տրոհվում էին վարչական մանր միավորների, որոնք կոչվում էին *թումաններ* և ենթարկվում կենտրոնին: 1256 թ. երկրի փոքր ու մեծ բոլոր մասերը միավորվեցին և Հայաստան ընդհանուր անունով մտցվեցին Հուլավուի հիմնած իշխանության կազմի մեջ[1]:

Հայ իշխանական տներից հատկապես Զաքարյանները, Պռոշյանները, Դոփյանները, Վաչուտյանները, Պահլավունիները, Արծրունիները, սկզբնական տասնամյակներին նաև Օրբելյանները և Զալալյաններն ունեին իշխանություն, դիրք և կալվածքներ: Մոնղոլները սկզբում հայ իշխաններին ֆեոդալական կալվածքներ տալով, հակադրում էին մեկը մյուսին, պառակտում և հեշտացնում իրենց տիրապետությունը թե՛ հեռվից և թե՛ մոտիկից:

Մանգու Խանը, *խաքան* դառնալով, որոշեց սահմանափակել տեղական ավագանու իրավունքները, քաղաքականից զատ, տնտեսապես նվաճել հսկա կայսրությունը, հետևապես և անցկացնել շարժական ու անշարժ գույքի հաշվառում-*աշխարհագիր*[2]:

Ընդհանուր աշխարհագիրը կատարվել էր Չինաստանում 1252 թ., Իրանում՝ 1253, *Անդրկովկասում՝* 1254, Ռուսաստանում 1257 թվականներին[3]: Դրանով իսկ մոնղոլական խաքանատը նպատակ էր հետապնդում ուժեղացնել տեղական ֆեոդալների կախվածությունը քոչվոր ցեղապետերից, թուլացնել նրանց տնտեսական հզորությունը: Աշխարհագրի հետևանքը եղավ հարկային բեռի առավել անտանելի ծանրացումը, հետևաբար և՝ արտագաղթի ուժեղացումը, քաղաքների, առավել ևս դաշտավայրերում փռված անպաշտպան գյուղերի ամայացումը: Կամայականությունն ու թալանը դարձան սովորական երևույթներ: Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ, Բուղա անունով հարկահանը «... *մտնում էր ավագանու տները և ինչ որ իրեն դուր էր գալիս՝ առնում էր անխնա, և ոչ ոք չէր համարձակվում մի խոսք ասել նրան...* (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[4]:

Աշխարհագիրը, բնականաբար, բացասական ազդեցություն էր

[1] ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 712:
[2] «Վրաց ժամանակագրություն», էջ 107-108:
[3] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 625:
[4] *Լ. Բաբայան,* նշված աշխատությունը, էջ 21-23:

ունենում թե երկրի տնտեսության և թե ազգաբնակչության վրա: Վրաց անանուն «Ժամանակագրության» մեջ հիշատակված է, որ աշխարհագիրը գլխավորող *Արղուն Բասչազը* «Երբ Վրաստան հասավ, Դավթի թագավորության բոլոր բնակիչները *մեծ պատուհասի մատնվեցին:* Սկսեցին հաշվառել մարդկանցից մինչև անասունները, արտից մինչև տունկ, այգի ու բանջարանոց: *Հող ունեցող ինը գեղջուկից մի զինվոր գնացող էին սահմանում:* Դավթի թագավորությունից թաթարների հետ գնացող ինը թուման զինվորական հաշվարկվեց, որ է *ինը բյուր:* Յուրաքանչյուր գյուղից նվեր սահմանեցին, հազարապետին՝ մի գառ ու մի դրահկան, բյուրապետին՝ մի ոչխար ու երկու դրահկան, ձիավարձ օրական երեք թեթրի (սպիտակ)»[1]:

Պրոֆ. Լ. Բաբայանը, հաշվարկումներ կատարելով, համադրելով հայկական ու վրացական սկզբնաղբյուրները, գտնում է, որ XIII դարում, այսինքն աշխարհագրի տարիներին, վրաց թագավորության և հյուսիս-արևելյան *Հայաստանի բնակչության թվաքանակը հասել էր 4-5 միլիոնի*[2]: Ըստ աշխարհագրի, Հյուսիսային Հայաստանը պարտավորվում էր մոնղոլներին տալ 30 հազար հեծյալ: Եթե այդ թիվը բազմապատկենք *ինով*, ապա կստացվի, որ երկրամասում դարակեսին ապրում էր *270 հազար* հայկական տնտեսություն: Ակադեմիկոս *Ս. Տ. Երեմյանը*, ավելի հանգամանորեն հետազոտելով վրացական ու արևմտյան սկզբնաղբյուրները, գրում է. «Միջին դարերում ընտանիքներն ավելի բազմանդամ էին, կային նաև մեծ գերդաստաններ, որոնք չէին բաժանվում, ուստի մի ընտանիքում ապրում էր միջին թվով 6-7 շունչ: Հյուսիսային Հայաստանում կամ Զաքարյանների տիրույթների սահմաններում հայ բնակչության թիվը կազմում էր շուրջ 1,6-1,9 միլիոն, իսկ *ամբողջ Հայաստանում՝ 3,5-4 միլիոն* (չհաշված Կիլիկիայի հայությունը)»[3]: Այո՛, դրան եթե գումարենք և այն, որ Կիլիկյան Հայաստանի *45.000-ից 52.000* քառակուսի կիլոմետր ծգվող տարածքի վրա ապրում էր շուրջ *երկու միլիոն* հայություն, ապա *կստացվի՝ XIII դարի կեսերին հայ ժողովրդի թվաքանակը հասնում էր շուրջ հինգ ու կեսից վեց միլիոնի:*

Զարմանալի ժողովուրդ ենք մենք: Այդքան ավեր, ջարդ, պանդխտություն ու գաղթականություն տեսնելով, տարիների ստեղծածը օտարի բիրտ ձեռքերով մի րոպեում կորցնելով, այնուամենայնիվ,

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 625:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] См. *С. Т. Еремян,* Очерки истории СССР, т. II, Москва, 1953, стр. 682.

շարունակում ենք հարատևել, բազմանալ, արարել, ստեղծագործել: Ըստ երևույթին, մեզ պահում էր, այսօր էլ պահում է սերը հայրենիքի նկատմամբ, հողից, թեկուզև ծնողների ու հարազատների գերեզմաններից չհեռանալու ավանդույթը պաշտպանելու սրբացած հարկադրանքը, բարեկամներից բաժանվելու «անկարողությունը»: Կարծես նույն երևույթները այսօր էլ կրկնվում են, սակայն այս անգամ ոչ թե օտարների, այլ *յուրայինների, արյունակիցների* բռնած դիրքից, վարած անխիղճ քաղաքականությունից:

Եվ այսպես, կյանքը շարունակում էր ընթանալ այն հունով, ինչով կթելադրեին օտարներն ու մեծատուն ազգակիցները: Գաղթողը գաղթում էր, պանդխտողը պանդխտում, մեռնողը մեռնում, իսկ դաժան ասպատակիչները, հայոց թափած ծով արյամբ իրենց ծարավը չհագեցնելով, նոր արշավանքներ էին ձեռնարկում:

Դիպուկ է ասված. *Հայաստանը նման էր մի գեղատեսիլ, հիանալի արտաքինով, գարնանային ծաղկած ծառի: Նա ամեն մայիս ծաղկում էր, պատրաստվում առատ պտուղ տալ,* կշտացնել և եկվորներին, և իրեն փայփայող հայ ժողովրդին: Արշավողները խաթարում էին այդ պրոցեսը. *թուրք սելջուկները պոկեցին ծառի ծաղիկները, թաթար մոնղոլները կրծեցին տերևները, մնացել էին, այո, դեռևս մնացել էին ճյուղերը, այդ էլ պետք է կրծեին օսմանյան թուրքերը, կրծելով, չկշտանալով, պիտի արմատախիլ անեին և նրա տեղը թուրքական, ավելին՝ մահմեդական սերմեր ցանեին:*

Արշավանքները շարունակվում էին: 1256 թ. Իրան եկած Մանգու խանի եղբայր Հուլավու խանը նորից վերջնականապես վերանվաճեց առաջավոր Ասիան, ձևավորեց մի նոր պետություն, որը պատմության մեջ մտավ *«իլխանություն»* անունով մայրաքաղաք ընտրելով սկզբում *Մարաղան*, հետագայում *Թավրիզը:* Նրա տերության մեջ մտան Իրանը, Ատրպատականը, Արևելյան Վրաստանը, Ռումը, Քյուրդիստանը, Իրաքը և *ողջ Հայաստանը:* Բացի դրանից, նրանից վասալական կախման վիճակում հայտնվեցին Արևմտյան Վրաստանը, Տրապիզոնը և *Կիլիկիայի Հայկական պետությունը*[1]*:*

Հուլավու խանը գերագույն նպատակ էր դրել վերջնական հարվածը տալ արդեն մարող Արաբական խալիֆայությանը: 1258 թ. նրա բանակը գրավեց Բաղդադը, պատմության բեմահարթակից վերացրեց երբեմնի հզոր այդ տերությունը: Պատերազմում խանի դրոշի տակ կռվում էին Զաքարե Զաքարյանի և Պռոշ Խաղբակյանի զո-

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 628:

րամասերը: Նախկինում ձևավորված «Գյուրջիստանի» վիլայեթի մեջ մտնող մանր ու խոշոր իշխանությունները կարողանում են պահպանել իրենց կիսանկախ վիճակը: Կիլիկյան Հայաստանը ևս ճանաչեց մոնղոլական իլխանության գերիշխանությունը, սակայն դա ձևական բնույթ ուներ և ծանր պարտավորությամբ չէր պայմանավորված[1]:

Հուլավու խանի հաջորդների տիրապետության հարյուրամյակում Անդրկովկասի տնտեսապես մոնղոլներից զարգացած, կուլտուրապես բարձր մակարդակ ունեցող ժողովուրդների, առավել ևս հայ ժողովրդի վիճակն ավելի վատթարացավ: Սոցիալ-քաղաքական կացության անտանելի դառնալու գերագույն պատճառը չդադարող, չընդմիջվող, անընդհատ արշավանքներն էին: Մեկի հասցրած վերքերի պատճառով ժողովրդի աչքերից թափվող արտասուքը դեռևս չչորացած, հասցվում էր հերթական հարվածը, մեկը մեկից դաժան, մեկը մեկից անբուժելի: Քիչ էական չէին տնտեսական հարվածները:

Մոնղոլներն անապատի զավակներ էին, անկիրթ, կիսավայրենի: Նրանք իրենց կյանքի գերակշիռ հատվածը անցկացնում էին ձիու թամբի վրա, ապրում ու գիշերում էին վրանների, երբեմն էլ բաց երկնքի տակ: Մոնղոլ զորականի զբաղմունքը, մարդկանց թալանելուց, մարդասպանությունից զատ, քոչվոր անասնապահությունն էր, մի կացութաձև, որը Հայաստանում չէր եղել նույնիսկ մեկուկես հազարամյակ առաջ: Եվ մեծ ողբերգությունն այն էր, որ ասպատակող այդ ցեղախմբերն իրենց համար՝ սիրելի, տեղացի ժողովուրդների համար՝ կործանարար քոչվորական ֆեոդալիզմը բռնությամբ փաթաթում էին անդրկովկասցիների վզին: Նրանց քաղաքները, ապարանքները, գեղեցիկ շինությունները հարկավոր չէին: Մոնղոլները, հեռավոր Չինաստանից սկսած, վերջացրած Եփրատի ափերով ու Միջագետքով, հիմնովին ոչնչացրեցին հազարամյակներով կառուցված ու *երկիրը ծաղկեցնող ոռոգման ջրամբարները, ամբարտակները, ջրանցքները:* Ծաղկած ծառաստանները, գեղատեսիլ այգիները, առատ հաց մատակարարող դաշտերը զրկվեցին իռիգացիայից և վերածվեցին սոսկ արոտավայրերի[2]:

Անկում ապրեց քաղաքային կյանքը, երկրորդվեցին արհեստն ու առևտուրը: Դվինը վերածվեց մի խղճուկ բնակավայրի: Անին, Կարսը, Կարինը, Երզնկան, Մանազկերտը, Խլաթը, Տիգրանակերտը ոչ միայն նախկին դերը չունեին, այլև վերածվել էին ավանների, բերդերի, գյուղերի: Հայաստանի տնտեսության քայքայման լուրջ պատ-

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 112:
[2] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», 1982, Երևան, էջ 20:

ճառներից էր մոնղոլական հարկահանությունը, ժողովրդից գանձվող ուղղակի ու անուղղակի բազմաթիվ հարկերը, տուրքերը: Երկիրը գնալով հետադիմում էր: Քաղաքներն ու գյուղերը ամայանում էին: Այդ վիճակում շարունակվեցին նոր արշավանքները:

Գլուխ երկրորդ

Օսմանյան Թուրքիայի նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում. Հայաստանի բաժանումները զույգ բռնապետությունների միջև

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ բռնատիրությունը խարսխված էր բիրտ ուժի, ասպատակությունների ճանապարհով ձեռք բերած թալանի ու կողոպուտի միջոցով իր հզորությունն ապահովելու սկզբունքների վրա: Բնականաբար, իբրև կանոն, ինչպես ամեն մի բռնապետություն, այնպես էլ կարկատված, մի ծայրից մյուսը չերևացող, լայնարձակ այս տերությունը ևս դատապարտված էր սկզբում քայքայման և, ի վերջո, կործանման: 1344 թվականը ընդունված է արձանագրել սկզբում իբրև մոնղոլական մեծ տերության տարաբաժանման, մանրատման տարեթիվ: Սակայն մեծ քայքայումից հետո առաջացած փոքր ու միջին իշխանությունները դեռևս հարատևում էին, միջցեղային և միջիշխանական պատերազմներ էին վարում, քամում ժողովրդի առանց այդ էլ քամված արյան վերջին կաթիլները:

Մինչ մոնղոլական տերության բեկորները զբաղված էին իրար հետ հաշիվներ մաքրելով, Անդրկովկաս թափանցեցին թուրքմենական *ակկոյունլու և ղարակոյունլու* վաչկատուն ցեղերը, և հաջորդաբար ասպատակությունները շարունակվեցին: Նրանք, ինչպես իրար, այնպես էլ հարևանների դեմ մղած կռիվների ընթացքում Հայաստանը, Վրաստանն ու Աղվանքը վերածեցին արյան բաղնիքի, ժողովրդից խլեցին, թալանեցին այն ամենը, ինչ կարողացան: Նման իրադարձությունների պայմաններում հայ ժողովրդի գլխին *հաջորդաբար նոր փոթորիկ պայթեց*, կարծես Աստծու սահմանած անվերջանալի պատիժներից հերթականը: Դրանք էին *Լանկ-Թամուրի* (Թամերլանի) արշավանքները: Լանկ-Թամուրի (լանկ նշանակում է կաղ) զորքերը Հայաստան ներխուժեցին 1386 թ.: Արշավանքը կրկնեցին հաջորդ տարում,

իսկ 90-ական թթ. ավերեցին երկրի գրեթե բոլոր մասերը[1]: Դաժանությամբ նախորդներին ամեն ինչով գերազանցող, բարբարոս բռնակալը գործում էր աներևակայելի խստությամբ, ավերում, մոխրակույտի էր վերածում շեն ու բարգավաճ քաղաքներն ու գյուղերը, անխնա կոտորում բնակչությանը կանանց, ծերերին, երեխաներին: Մնացածին գերեվարում և «քշում իր տերության մայրաքաղաքը Սամարղանդ»: Նրա արշավանքների տասնամյակներին ամայացավ երկրի մեծ մասը:

Հայաստանում կաղ մարդագայլն ավերեց Սյունիքը, Այրարատյան աշխարհը, Վասպուրականը և երկրի արևմտյան շատ գավառներ: Նրան դիմագրավելու համար Վան քաղաքի պարիսպներից 3000 հայերի ժայռերից գլորեցին անդունդ, 7000 մարդ էլ հրապարակավ տանջամահ արվեց[2]:

Երրորդ արշավանքի ժամանակ (1399-1400) Թամուրի սպառազեն, մեծաթիվ բանակը մտավ Փոքր Հայք, գրավեց *Սեբաստիա և Մելիտինե* քաղաքները, որոնց բնակչության հիմնական մասը հայեր էին: Սեբաստիայի բերդապահները խոստացան քաղաքը հանձնել առանց կռվի, պայմանով, որ *ոչ ոքի արյուն չպետք է թափվի:* Կաղ զորավարը քաղաքը գրավելուց հետո կարգադրեց մի մեծ փոս փորել և *նրա մեջ կենդանի թաղել 3000-4000 զինվորների:* Նա դրանով «կատարեց» իր խոստումը *«չհեղեց մարդկանց արյուն»*[3]: «Ի սույն ամի,- գրում է մի հայ հիշատակագիր,- Թամուր բեկն էառ զՍեբաստ քաղաք և քանդեաց և ավերեաց, և սրախողխող արար զամենեսեան, և զբազումս գերեաց՝ իկանանց և իտղայոցն և ԳՐ (3000) մարդ երկիր բացեալ և կենդանոցն թաղեալ՝ զայնոսիկ, որ նետ արձակեցին ի նա»[4]:

Լանկ-Թամուրի հորդաները գրավելով, ավերելով Փոքր Հայքը, ավարի մեծ ծարավով մտան իրենց հարստությամբ փառաբանված Հալեպն ու Դամասկոսը, ապա Մերդին և Բաղդադ քաղաքները: Ծաղկած այդ ոստաններում թեմուրյաններն արդեն չլսված ու չտեսնված անգթություններ գործադրեցին, վայրագությամբ գերազանցելով սելջուկներին, մոնղոլներին: Նրանք *հարյուր-հազարավոր անմեղ մարդկանց գլխատեցին և այդ գլուխներից բուրգեր կազմեցին, մանկահասակներին ծիերի սմբակների տակ տրորեցին:*

Լանկ-Թամուրն իր արշավանքները շարունակեց և 1403-1404 թթ. տիրացավ Անդրկովկասին, Փոքր Ասիային, Միջագետքին, Սիրիային:

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», խմբագրությամբ՝ *Մ. Գ. Ներսիսյանի*, Երևան, 1972, էջ 276:

[2] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», կազմեց *Լ. Ս. Խաչիկյան*, հ. Ա, Երևան, 1955, էջ 286-287:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 288: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 31-32:

[4] Նույն տեղում, «Հիշատակարաններ...», հ. Ա, էջ 288:

1404 թ. Թամուրի բանակը ձմեռեց Ղարաբաղում, ապա գարնանը հարուստ ռազմավարով, հազարավոր ռազմագերիներով ծանրաբեռնված վերադարձավ Սամարղանդ: Մայրաքաղաքում նա չէր հանգստանում, չէր դադարում գործելուց, չէր կշտանում արշավանքներից և արյունահեղությունից: 1405 թ. փետրվարի 21-ին դեպի Չինաստան կատարած արշավանքի ճանապարհին 70 տարեկան հասակում մահացավ *մեծ մարդասպանը:* Նրա մահվան «բոթը» հաճույքով ընդունեցին ոչ միայն նվաճված ժողովուրդները, այլև բուն Սամարղանդի այն պաշտոնյաները, որոնք ամեն որպես սպասում էին իրենց գլխատմանը: «Յայսմ ամի,- գրում է մի հիշատակագիր,- մեռավ Թամուր շուն, որ Ի. մի (21) ամ իբրև զբաժակ բարկութեան առեալ էր զնա աստված ի ձեռն, և ում կամէր արբուցանէր, զի յարևելից մինչև իմուտս արևու զամենեսին հասարակ գերեց զհաւատացեալսն, զանհաւատս, զամենեսեան սրախողխող արար»[1]:

Լանկ-Թամուրի մահվանից հետո նրա հսկայածավալ կայսրությունը քայքայվեց, քանզի խարսխված էր բռնության, ահաբեկումների, վախի ու սարսափի կառավարածևի վրա: Ծայր առան գահաժառանգների միջև արդեն տևական դարձած պատերազմները: Օգտվելով հարմար առիթից, Անդրկովկասում և հատկապես Փոքր Ասիայում կրկին գլուխ բաձրացրին թուրքմենական *դարակոյունլու և ակկոյունլու* վաչկատուն ցեղերը, որոնք հաճախ էին ասպատակում այդ երկրները, պատերազմներ վարում իրար դեմ, կողոպտում բնակչությանը[2]:

XV դարի առաջին վեց տասնամյակներին (1411-1467 թթ.) Հայաստանի գերակշիռ մասին տեր դարձան *դարակոյունլուները,* իսկ 1467-1502 թվականներին սրանց փոխարինելու եկան *ակկոյունլուները:* XVI դարում այդ ցեղախմբերը դուրս քշվեցին երկրահատվածից, և Հայաստանը վերածվեց թուրք-պարսկական պատերազմների բեմահարթակի[3]:

Ժամանակակից Թուրքիայի, այնտեղ բնակվող օսմանյան թուրքերի գենեզիսի վերաբերյալ ստեղծվել է ծավալուն, սակայն զարգաց-

[1] Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 53:

[2] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1972, էջ 278:

[3] Տե՛ս *Մ. Գ. Ներսիսյան,* Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնատիրության դեմ, Երևան, 1955, էջ 5-11: «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 30-35: ՀՍՀ, հ. 4, Երևան, 1978, «Թուրքիա» խորագրված տեղեկանքը, էջ 254-255: «Սովետական Հայաստան», էջ 122-123: ***А. Д. Новичев,*** Очерки экономики Турции до Мировой войны, М-Л., 1937, стр. 11-15. *Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան,* Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 5-9: *Հ. Ճ. Սիրունի,* Պոլիս և իր դերը, հ. I (1453-1800), Պեյրութ, 1965, էջ 120-130: ***Б. Данциг,*** Турция, Москва, 1949, стр. 5-7. ***А. Ф. Миллер,*** Краткая история Турции, Москва, 1948.

ռած տեսակետներով իրարամերժ գրականություն: Այդ խնդրով զբաղվել են նախ ժամանակի թուրք պատմաբանները, ապա եվրոպացի թուրքագետները: Առաջին աշխարհամարտից հետո, հատկապես Մեծ եղեռնը իրականացնելու պահից, թուրք «նոր սերնդի» պատմաբանները գիտական ճշմարտությունը հետևողականորեն զոհաբերելով քաղաքական կոնյունկտուրային, սկսեցին լույս աշխարհ նետել իրենց «հարմար» տեսակետներ, որոնք հեռու են ճշմարտությունից: Այդ «սարքովի» վարկածները մեկ նպատակ ունեն ամեն կերպ *«ապացուցել»* թուրքերի *տեղաբնիկ ու հնամենի ազգ լինելը* ժամանակակից Թուրքիայի տարածքում, դրան զուգընթաց ասել, այո, միայն ասել, թե հպատակ ազգերը, հատկապես հայ ժողովուրդը *եկվոր* է եղել և այսօր ոչ մի հավակնություն չպետք է ունենա այդ երկրի նկատմամբ: Սա միայն նման է սև կտորի վրա սպիտակ թելով կարկատան անելու և ասելու, թե լռի՛ր, այնտեղ ամեն ինչ սև է: Ակամայից հիշում ես դանիացի նշանավոր գրող Անդերսենի հեքիաթը *թագավորի մերկության մասին:*

Քանի որ խնդիրը մեր օրերում առավել սուր է քաղաքականացվել, ուստի փոքր-ինչ հիմնավոր խոսենք այդ մասին: Թուրքերի գենեզիսին, հայ-թուրք հարաբերությունների պատմությանը հանգամանորեն անդրադարձել է անվանի պատմաբան Հակոբ Սիրունին: Նա տիրապետում էր եվրոպական մի շարք լեզուների, քաջ գիտեր հին և նոր թուրքերեն, թեկուզև փոքր տարիքում, ականատես էր եղել *Մեծ եղեռնի* սահմռկեցուցիչ տեսարաններին, հրաշքով փրկվել թուրքական դամոկլյան սրից: Շուրջ կես դար հետո, հավաքելով, դասդասելով տարաբնույթ նյութերը, 1965 թ. լույս աշխարհ է բերել «Պոլիս և իր դերը»[1] շահեկան աշխատության առաջին հատորը, որի էջերում պատմաքննական լույսի տակ շարադրել է թուրք բարբարոս ցեղի «ժողովուրդ դառնալու» պրոցեսի պատմությունը, ներկայացրել հայ-թուրք փոխհարաբերությունները թեկուզև այդ դարերում:

«Ո՞վ էին և ուրկե՞ կուգային այս նոր թուրքերը, - գրում է Հ. Սիրունին: Ապա շարունակում.- Բազմաթիվ ժողովուրդներու պես, սրանք հազար քարի կգարնեին իրենց գլուխը ստուգելու համար իրենց ծագումը, օսմանցի թուրքերը ևս շվարած են իրենց ծագումը փնտռած ատեն: Հակասությանց այս լաբիրինթոսին մեջ զորս թրքական հին ավանդույթները իրենց կբերեն դժվար է իրենց հաստատուն թել մը գտնել հասնելու համար մայր ակունքը: Առասպելներով սնած մինչև այսօր թուրք պատմագրությունը կտատամսի անոնց լուծը թոթվել: Նվազ պայծառ չեն օտար աղբյուրները, որոնք իրենց ծագման մասին կխոսին, ու անոնք ևս ավանդությանց ակեն շատ չեն հեռանար: Իսկ

[1] Տես *Յ. Ճ. Սիրունի,* Պոլիս և իր դերը, հ. I (1453-1800), Պեյրութ, 1965:

եվրոպացի նոր գիտնականներու պրպտումները շատ ալ հաճելի չեն թվիր թուրք նոր պատմագիրներուն, *որովհետև անոնց հետազոտությունները զիրենք չեն տանիր բաղձացուցած ակին»*[1]:

Հ. Սիրունին, մանրամասն հետազոտելով եվրոպական պատմաբաններ *Մարկվարտի, Գիբբոնսի, Վիթթեկի* զարգացրած տեսակետները թուրք ժողովրդի ծագման մասին, ընդհանրացնում է, թե նրանց կարծիքով այդ ժողովուրդը *մոնղոլական ծագում ունի* և ձևավորվել է ոչ շուտ, քան XIII դարում: «Խոսքը չենք ըներ օտար այդ գիտնականներուն,- գրում է Սիրունին,- որոնք պատմության այդ տվյալները պահ մը խոշտանգեցին ապացուցելու համար, որ այդրենածին է թուրքը, ու Թուրանի հետ կապ չունի»[2]:

Ժամանակակից թուրք պատմաբանները, հանձնարարական ստանալով Քեմալ Աթաթյուրքից, «լույս աշխարհ նետեցին» բազմաթիվ աշխատություններ և փորձեցին յուրովի լուծել թուրք ցեղի սկզբնական շրջանի պատմությունը: *Ալբընայը, Սիմեդ Ռեֆիքը, Տեմիրյազ Ֆարուքը, Օրքուն Հյուսեյին Նամըքը, Ուզունչարշըլի Իսմայիլ Հաքքը, Թեվֆիդ Սիմեդը, Զեքքի Վելետի Թոդանը* և այլ պատմաբաններ նախ հետազոտեցին եվրոպացի գիտնականների այն աշխատությունները, որոնք ամփոփում էին օղուզ ցեղի պատմության սկիզբը: Շարադրանքին գիտական «տեսք» տալու «դիտավորությամբ», հաշվի առնելով հյուսված առասպելները, պեղումների ընձեռած նյութերը, հպատակ ժողովուրդների գրավոր աղբյուրներում մնացած փաստերը, նրանք ձևակերպեցին մի տեսություն թուրքական ցեղի ծագման մասին, որը այնքան էլ չէր հեռանում եղած կարծիքի շրջագծից[3]:

Դժվարություն ծագեց նաև թուրք պատմաբանների միջև առաջացած տարակարծությունից, որը, սակայն, «համահարթվեց» պատմության «թուրքական ընկերության» պետական հրահանգներով:

Թուրքերի ծագումնաբանության խնդիրն իր ձեռքը վերցրեց պրոֆ. Իսմայիլ Հաքքը Ուզունչարշըլը, «Օսմանների պատմություն» աշխատության առաջին հատորում զարգացնելով պետականորեն պարտադրվող տեսակետները[4]:

Ըստ այդ կոնցեպցիայի, *օսմանյան պետության ծագումը սկսվում է օղուզ ցեղախմբի մեջ մտնող Գյունհան* կոչված թևի *Քայը* ցեղից: Այդ ցեղը *Ալայիդին Քեյքուրուդ* Առաջինի օրոք (1219-1236) բնակվում էր Անկարայի արևմուտքում գտնվող Գարաճատաղի

[1] *Հ. Սիրունի,* նշված աշխատությունը, էջ 120:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 120-121:
[4] Տե՛ս պրոֆ. *Իսմայիլ Հաքքը Ուզունչարշըլը,* Օսմանլը թարիհի, հ. Ա, Անկարա, 1961, էջ 39-91:

հարթության վրա և XIII դարի երկրորդ կեսին արդեն ուներ 400 վրան, որոնք բոլորն էլ ենթարկվում էին *Էրթողրուլ* բեյին[1]:

«Թուրք աղբյուրները համաձայն չեն Էրթողրուլի ծագումը ճշտելու համար,- գրում է Հ. Սիրունին: - Ցարդ Սուլեյման շահի որդի կնկատեին զայն, հիմա արդեն *Գյունյուզալպը* կհռչակեն անոր հայր: *Ստույգ կսեպեն սակայն որ ան էր որ սկսավ տարածվիլ նախ և առաջին հերթին իր տիրապետության* տակ առավ *Դամանիչը* և *Էրմենի-Ղերբենդին*: Այդ նույն *Էրթողրուլի կրտսեր որդին Օսմանն էր, որ 1281 կամ 1288-ին, անոր մահեն հետո* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.) *աշիրեթին գլուխը անցած, պիտի սկսեր տարածվիլ դեպի բյուզանդական հողերը»*[2]:

Խորհրդային ականավոր արևելագետ-պատմաբան, Թուրքիային նվիրված մեծ ու փոքր ծավալի բազմաթիվ մենագրությունների հեղինակ *Ա. Ֆ. Միլլերը* դեռևս 1948 թ. քննում է թուրքերի գենեզիսի խնդիրը: Ազգությամբ հրեա հետազոտողը ընթերցողին հայտնի է իր կողմնակալությամբ, այսինքն *թուրքոֆիլությամբ*: Այդուհանդերձ, նա չի կարողացել չասել, որ Էրթողրուլի հատվածին վերաբերող շարադրանքը առասպել է, հեքիաթ, և այդ հեքիաթը հյուսել են թուրք պատմաբանները, իրենք էլ չհավատալով իրենց ասածին[3]:

Փորձենք համառոտակի ներկայացնել Ա. Ֆ. Միլլերի զարգացրած կոնցեպցիայի պատմությունը *օսմանյան թուրքերի ծագման վերաբերյալ*: Այն է. XIII-XIV դարերի սահմանագծում Փոքր Ասիայում (թուրքերի աղավաղմամբ՝ Անատոլիայում) ձևավորված պետություններն ընկել էին տնտեսական խորը ճգնաժամի մեջ: Մոնղոլների արշավանքները լուրջ հարված հասցրին սելջուկյան պետությանը և նրա կործանման սկիզբը դրեցին:

Ինչպես հայտնի է, միջնադարյան բոլոր պետությունները, առավել ևս սելջուկյան պետությունը ձևավորվել և հարատևել է առանց սոցիալ-տնտեսական խորը հիմքերի, վարչարարական, մակերեսային, առավել քան բռնի ուժերով: Այդ էր պատճառը, որ երբ մոնղոլները մտան նրանց զավթած երկրները, սելջուկներին սպառնաց կատարյալ կործանում: Առաջին հերթին քայքայվեց գյուղատնտեսությունը: Վրա հասան սովն ու համաճարակը: Գոյապահպանման հույսով ժողովուրդը զանգվածաբար լքեց հայրենի հողը և ապաստանի, ապրելու հույսեր որոնեց բյուզանդական կայսրության սահմաններում:

Սելջուկյան կենտրոնական պետության կտրուկ թուլացումը հող նախապատրաստեց ֆեոդալական իշխանների համար անջատողական

[1] Տե՛ս արդի *Օսմանլի Դաշնությունը*, Օսմանլը թարիհի. հ Ա. Անկարա, 1961 էջ 97-105

[2] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև՝ Հ. *Սիրունի* նշված աշխատությունը էջ 121

[3] Տե՛ս *А. Ф. Миллер*. Турция. Москва. 1948. стр. 8-9.

ձգտումների: Փոքր Ասիայում և հատկապես Իկոնիայի սուլթանության մեջ ստեղծվեցին կիսանկախ էմիրաթներ: Սրանք այլևս չճանաչելով իկոնիական սուլթանի իշխանությունը, միայն թույլ կերպով հսկվում էին մոնղոլական խանի կողմից: Երկրի ծայրամասերում, նույնիսկ նրա սահմանագլխին երևացին նաև *լրիվ անկախացած ֆեոդալական իշխանություններ*: Վերջիններս իրավունք ձեռք բերեցին բանակ պահել, հսկել ու պաշտպանել երկրի սահմանները, սակայն անվանապես միայն ընդունել կենտրոնից պարտադրված ենթակայությունը:

Այդ իշխանությունների մեջ ամենաուժեղն ու ամենակենսունակը դարձավ մեկը, որը ստացավ *ուջ-բեյի ծայրամասային բեյի անվանում և արտոնություններ*: Բյուզանդիայի սահմանագլխին ծվարած այդ իշխանությունն աստիճանաբար ընդարձակեց իր սահմանները: *Նրան, երբեմն բռնությամբ, երբեմն էլ նույնիսկ կամավոր սկզբունքներով միանում էին մանր իշխանությունները: «Սա այս իշխանությունն էր, որը ի վերջո դարձավ խարիսխը օսմանյան ապագա պետության»*[1]:

Նշված իշխանության հիմնադիրը, ինչպես ընդգծում է Ա. Միլլերը, ըստ պատմագիտական ավանդության (ուրեմն սա էլ դեռ հեքիաթ է, ավանդազրույց), եղել է *Էրտոգրուլի տղա Օսմանը*: Թուրքական մի ոչ մեծ ցեղի առաջնորդ *Էրտոգրուլը* XIII դարի 20-ական թվականներին մոնղոլների ճնշման ազդեցությամբ *Խորասանից* տեղափոխվել է *Փոքր Ասիա*: Էրտոգրուլը Իկոնիայի սուլթանից *Սեգյուտի* (Բելեն-ջիկի և Էսկիշեհիրի միջև) շրջանում ստացել է սահմանային մի ոչ մեծ բաժնեկալված և պարտավորվել է պաշտպանել սելջուկյան տերության հյուսիս-արևմտյան դարպասները: Այստեղ, այսինքն՝ Սեգյուտում, 1258 թ. ծնվել է *Էրտոգրուլի* երկրորդ տղան *Օսմանը*:

1281 թ. (այլ տվյալներով՝ 1284 թ.) *Էրտոգրուլը* մահացել է, երբ Օսմանը կամ *21 կամ էլ 24 տարեկան էր*: Հոր մահից հետո *Օսմանը դարձավ ցեղի առաջնորդը*: 1289 թ. Իկոնիայի սուլթանը Օսմանին շնորհեց բեյի տիտղոս, ուղարկեց իշխանական շնորհագիր-«բարաբան» և «եռահերձ փետուր»: 1299 թ., այսինքն՝ տասը տարի անց, երբ վերջնականապես անկում ապրեց սելջուկ-սուլթանությունը, Օսմանն իրեն հայտարարեց *ինքնուրույն տիրակալ* և, փաստորեն, հիմք դրեց թուրքական պետության: Տիրակալի անունով այդ ցեղերն, այնուհետև իրենց անվանեցին *օսմաններ*, թուրքերեն՝ *օսմանլի*, եվրոպական արտահայտությամբ՝ *օտտոմաններ*:

Վերոհիշյալ կոնցեպցիան զարգացրել են Մոսկվայի դպրոցին պատկանող սովետական թուրքագետները, հատկապես Միլլերը, Լազարևը, Խալիֆինը, Ա. Դ. Նովիչևը, Մ. Սմիռնովը և այլոք: Սակայն նրանք չեն

[1] Տե՛ս *А. Ф. Миллер*, նշված աշխատությունը, էջ 9:

վարանել արձանագրել, որ այդ բոլորը թուրք պատմաբանների կողմից հրամցվել է իբրև ավանդազրույց, բերնեբերան անցած բանավոր խոսակցություն *առանց գրավոր որևէ հիմքի ու պատմական ամենափոքր հուշարձանի:*

Ահա թե ինչպես է ընդհանրացնում իր ասածները Ա. Ֆ. Միլլերը. «*Մինչև ներկա ժամանակները դեռևս չեն գտնվել Օսմանին, առավել ևս էրտոգրուլին վերաբերող ոչ գրավոր, ոչ էլ իրական հուշարձաններ, որոնք կարողանան կամ հաստատել, կամ էլ մերժել օսմանյան պետության* կազմավորման փաստը... Հնարավոր է, որ այդ լեգենդը ստեղծվել է հետագայում, որպեսզի ցույց տրվի, թե Օսմանի դինաստիան իշխանությունն ստացել է ոչ թե ուժով, այլ «օրինական ճանապարհով»: Ապա շարունակում.- Կիսալեգենդային է Օսմանի անձնավորությունը: Նրա կառավարման տարեթվերը, նույնիսկ մահվան թիվը ճշգրտորեն չեն հաստատված: Ժամանակակից թուրքական պատմաբանները գտնում են, որ մոտավորապես 1320 թ. Օսմանն արդեն դադարել էր կառավարել իր բեյլիկը (օկրուգը), համենայնդեպս, 1324 թ. արդեն բեյ էր դարձել նրա որդի Օրխանը, որը պատմական անձնավորություն էր, և աղբյուրները հիշատակություններ ունեն»[1]:

Արդյոք զարմանալի չէ՞, որ ժամանակի հայ պատմիչները, հայկական և օտարալեզու ձեռագրերը, նրանց կցված հիշատակարանները այս մասին գրավոր որևէ տող չեն թողել: XI-XV դարի հայ հեղինակներ Արիստակես Լաստիվերցին, Մատթեոս Ուռհայեցին, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Մաղաքիա աբեղան, Հեթում պատմիչը և ուրիշները հսկայական նյութեր են թողել Թուրանից ասպատակության եկած գրեթե բոլոր ցեղերի ու նրանց ծավալած գլխավոր իրադարձությունների վերաբերյալ: Թուրք ցեղի ծագման մասին նրանց գործերում ոչ մի խոսք չկա: Եզրակացությունն այստեղ ևս նույնն է և միակը. Օսմանի ծնողների, գահակալության վերաբերյալ ստեղծված առեղծվածը հեքիաթային է, սարքովի և սկզբնաղբյուրներով փաստված չէ:

Մենք այսքան երկար կանգ առանք այդ պրոցեսի պատմության շարադրանքի վրա, որպեսզի թուրք պատմաբանների թանձրաքաղանք ականջին հնչեցնենք, թե դուք իրավունք չունեք հայ ժողովրդի կազմավորման տեղի, ժամանակի ու էության մասին բացասական որևէ խոսք ասել: Իսկ պետական այրե՞րը. պրեզիդենտն ու վարչապետը հայ պատմաբաններիս բանավեճի են հրավիրում, իրենք գիտե՞ն ինչի մասին պիտի վիճենք, ի՞նչ փաստերով պիտի հիմնավորեն թեկուզև իրենց ծագումնաբանության խնդիրը: Անցել է շուրջ կես հազարամյակ, փաստեր չեք գտել, մի՞թե այս մի քանի ամսում հրաշքներ պիտի գործեք: Ձեր ամեն ինչը, նույնիսկ առաջին պետության շենքը կառուցված է եղել ավազի վրա, առանց հիմքերի: Իսկ, ինչպես գիտեք, եթե չգիտեք իմացեք, որ շենքը, եթե ամուր հիմքերի վրա չի կառուցված, այն երկար թե կարճ, չի դիմանա: Ժողովուրդն ասում է ստի պոչերը երկար չեն:

Փորձենք համառոտակի անդրադառնալ նաև *թուրք* ազգի և *թուրքերենի* պատմությանը: Թուրքերի լեզուն *թուրքերենն է: Այն պատկանում է ալթայական* լեզվաընտանիքի թուրքական խմբի հարավարևմտյան (օղուզական) ենթախմբին[1]: Նրանք մահմեդական են և պատկանում են *իսլամի սյունի* ճյուղին: Մարդաբանական տեսանկյունից դիտարկելիս, ձևավորման սկզբնական դարերում նրանք եղել են երկգանգանի (այսինքն գլխի առաջին մասին հաջորդել է ետևի մասում եղած փոքր գլուխը), սևամորթ, կանաչ, ոչ հաճելի աչքերով, դեմքի ու մարմնի խիտ մազակալությամբ: Հարյուրամյակների ընթացքում խառնակվելով տեղացի գեղեցիկ, սպիտակամորթ ազգերին, հատկապես նրանցից կանայք վերցնելով, այժմ փոխել են իրենց մարդաբանական դիմագծերը և պատկանում են հարավ եվրոպոիդների միջերկրածովյան խմբին: Թուրքերին բնորոշ են սև կամ շագանակագույն ալիքաձև մազեր, խիստ զարգացած երրորդային մազածածկույթ, լայն աչքեր, դուրս ցցված նեղ քիթ, թույլ զարգացած այտոսկրեր[2]:

Թուրք, գրություններում նաև թյուրք, ժողովրդի ձևավորումն ավարտվել է XVI-XVII դարերում, պատմական ատաղձ ունենալով XII-XIV դարերում Միջին Ասիայից Փոքր Ասիա թափանցած *քոչվոր, անասնապահական ցեղերի* և տեղացի ժողովուրդների միախառնումը: Թուրքերի մի մասն էլ *ուզեր, պեչենեգներ են,* Առաջավոր Ասիա են թափանցել Բալկանյան թերակղզուց, համաձուլման ենթարկել մի շարք ժողովուրդների, միաժամանակ ընդունել նրանց հոգևոր ու նյութական մշակույթի շատ տարրեր: «XIV-XV դարերում թուրքերը չունեին միասնական ցեղանուն, դրան փոխարինում էր դավանական *մուսուլման* անվանումը»[3]:

Եվ այսպես, *տաճկերենը* թուրք ժողովրդի հիմնական լեզուն է: Այն պատկանում է թուրքական լեզվաընտանիքի արևմտյան-օղուզյան խմբին: Գրական լեզուն ձևավորվել է XIX դարի կեսերին: Մինչ այդ գրոց և խոսակցական լեզուն եղել է, այսպես կոչված, հին *օսմաներենը:* Հնչունային համակարգում կա 8 կարճ և 3 երկար ձայնավոր, 24 բաղաձայն: Առկա է ձայնավորների ներդաշնակությունը, շեշտը ուժային երաժշտական է: Կառուցվածքային տիպով կցական է: «Գոյականն ունի վեց հոլով: Բայը հարուստ է ձևաբանական կարգով:

[1] *Ա. Ֆ. Միլլեր,* նշված աշխատությունը, էջ 10:

[1] Տես *Դ. Ե. Երեմեն,* Թուրքերի ծագումը, Երևան, 1975:
[2] Տես ՀՍՀ, հ. 4, 1978, էջ 251, «Թուրքեր» հոդվածը:
[3] Նույն տեղում, էջ 251:

Այբուբենը մինչև 1928 թ. արաբատառ է եղել, այնուհետև վերածել են լատինատառի»[1]:

Վերադառնանք պատմությանը: Օսմանյան պետության կազմավորման սկիզբը համարվում է 1299 թ., երբ Օսմանն իրեն հայտարարելով *անկախ*, 1301 թ. մայրաքաղաք դարձրեց *Էնիշեհիրը* և սկսեց վարել նվաճողական քաղաքականություն: Նրա բեկությունը, ըստ ավանդության, փռված էր Փոքր Ասիայի Հյուսիս-արևմտյան մասերում: XIV դարասկզբին սելջուկյան սուլթանության փլատակների վրա ստեղծված տասը կիսանկախ իշխանություններից այն ամենաուժեղն էր: «Իրենց... ցեղապետի անունով,- գրում է ակադեմիկոս Լ. Ս. Խաչինյանը,- օսմանցի (օսմանլի) կոչվող թուրքերը XIV դարում հաղթական պատերազմներ մղեցին թուրքական մյուս իշխանությունների դեմ, և օր օրի ընդարձակելով իրենց տիրույթները, դարավերջին միահեծան տեր դարձան ողջ Փոքր Ասիային»[2]:

Օսմանին հաջորդեց երեք որդիներից ավագը *Օրխանը* (որոշ աղբյուրներում *Ուրխան)*, (1326-1359):

Նրա գլխավորությամբ թուրքական բանակը անցնում է Հելեսպոնտոսն ու Գալիպոլիսը. այնուհետև սկսվում են օսմանցիների գրավումները եվրոպական մայրցամաքում: Նախքան այդ Օսման բեյը, դեռևս 1326 թ., Բյուզանդիայից գրավեց *Բրուսան* և մայրաքաղաքը տեղափոխեց այնտեղ, ապա 1327 թ. իր պատկերով փող կտրեց: 1329 թ. նա ստեղծեց օսմանյան առաջին կանոնավոր բանակը՝ բաղկացած հետևակից և հեծելազորից: Օրխանը հարևան էմիրաթների, հատկապես ծերացած բյուզանդական կայսրության հաշվին, հետևողականորեն ընդարձակեց իր պետության սահմանները: 1330 թ. նրանք գրավեցին *Նիկիան* (Իզնիկ), 1337 թ. տեր դարձան *Նիկոմեդիային* (Իզմիդ) և ցամաքով դուրս եկան Մարմարայի առափնյա շրջանները[3]:

Օգտվելով բյուզանդական կայսրությունում ուժեղացող ներքին երկպառակություններից, գերագույն իշխանության աստիճանական թուլացումից, Օրխանն իր բանակով անցավ Դարդանելով և վերջնականապես մտավ Եվրոպա: *Առաջավոր մարդկությունը, դեռևս նիրհած, եղածի հետևանքները չհասկացող եվրոպական տերությունները կա՛մ արհամարհեցին, կա՛մ էլ չհասկացան, թե բարբարոսությունը մահացու ինչպիսի վտանգ է կախում քաղաքակրթության գլխին:* Այդ բանը նրանք հասկացան Կոստանդնուպոլսի գրավման ժամանակ, սակայն արդեն շատ էր ուշ:

Օրխանի հաջորդ *Մուրադ I-ը* (1359-1389), զգալով շրջակա տերությունների, հատկապես դեպի քայքայում գնացող Բյուզանդիայի ներքին ու արտաքին անբարենպաստ վիճակը, իրեն հայտարարեց սուլթան, նվաճեց սելջուկյան պետության քայքայումից հետո առաջացած, ապա, այսպես վերանվանված, անատոլիական էմիրությունները: 1365 թ. թուրքական զորքը մտավ եվրոպական այն հողերը, որոնք հետագայում կոչվեցին Ռումելիա[1], (թուրքերեն ռում-իլի) ռումների երկիր (ռիմյաններ), Արևելահռոմեական կայսրություն, Բյուզանդիա:

Հետագայում, նաև այսօր թուրքերը եվրոպական Թուրքիայի իրենց հպատակ երկրները շարունակում են վերանվանել *Ռումելիա* ըստ մասերի, *Արևելյան, ապա՝ Արևմտյան Ռումելիա:* Նրանք կուլ տվեցին, դժբախտաբար, այսօր էլ կուլ են տալիս ու մարսում ոչ միայն առաջավոր մարդկության ստեղծած երկրները, վերջիններիս մշակույթը, այլև աշխարհագրական անունները վերածելով Ասիայի ու Եվրոպայի քարտեզը:

Թուրքերի նվաճումները նոր թափ առան: 1365 թ. Մուրադ I-ը նվաճեց *Ադրիանապոլիսը* (Էդրիներ), և մայրաքաղաքը Էնիշեհիրից տեղափոխվեց այստեղ: Իրար հետևից թուրքական անտանելի լծի տակ ընկան *Սոֆիան, Նիշը, Տիրնովոն,* սերբական ու բուլղարական այլ քաղաքներ: 1389 թ. *Կոսովոյի դաշտում* տված ճակատամարտում, երկուստեք թափած ծով արյունից հետո, սերբական մի հայրենասեր երիտասարդ սպանեց Մուրադ I-ին և, փաստորեն, նվաճումները ժամանակավորապես դադարեցին: Սակայն գազազած սուլթանն իր կործանարար դերն արդեն կատարել էր, այն է. ստեղծել էր *ենիչերիներից* կազմված կանոնավոր, հետևակային զորք կամ բանակ, որը կործանարար դեր կատարեց ինչպես շատ ժողովուրդների, առավել ևս հայ ժողովրդի կյանքում (այդ մասին մանրամասն կխոսենք հետագա էջերում)[2]:

Մուրադ I-ը հաջորդին՝ Բայազիդ I Յիլդիրիմին (կայծակնային), թողել էր կանոնավոր հսկայական բանակ և առավել հնարավորություններ թուրքական նվաճումներն ընդարձակելու Բալկանյան թերակղզում: Բայազիտ I (1389-1402) սուլթանն իր գահակալության մեկ տասնամյակում նվաճեց Բուլղարիան, Վալախիան, Մակեդոնիան, Թեսալիան, գրեթե օղակի մեջ առավ Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը:

Թուրքական զորքերը, Բայազիտ I-ի գլխավորությամբ, զավթումներ սկսեցին Փոքր Հայքում: Նրանք վերագրավեցին Սեբաստիան և Երզնկան: Զարմանալին այն էր, որ քրիստոնյա աշխարհը ականա-

---

[1] ՀՍՀ, հ. 4, էջ 252: Տե՛ս նաև ***Э. В. Севортян,*** Фонетика турецкого литературного языка, Москва, 1977:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 30-31:

[3] ***А. Ф. Миллер,*** Турция, стр. 10.

[1] ***А. Ф. Миллер,*** Турция, տողատակի ծանոթագրությունը:

[2] ***А. Ф. Миллер,*** նշված աշխատությունը, էջ 10-11: Տես նաև ՀՍՀ, հ. 4, 1978, էջ 254: *Հ. Սիրունի,* նշված աշխատությունը, էջ 121:

տեսի կարգավիճակով էր դիտում այս ամենը, չխորհելով իր վաղվա օրվա մասին: Այդ էր պատճառը, որ նրանց դիմագրավեց ոչ պակաս ասպատակիչ Լանկ-Թամուրը, որը նոր էր «խմել հազարավոր անմեղների արյունը, խմել ու չէր կշտացել» և այժմ էլ հարձակվում էր օսմանյան թուրքերի վրա: Ինչպես այդ իրադարձություններին ակնդետ հետևող արևմտյան տերությունների, առավել ևս երկու բանակների ձիերի սմբակների տակ տրորվող հայ ժողովրդի համար միևնույնն էր, թե դրանցից ո՞րը կհաղթեր և ո՞րը կպարտվեր: ***Նրանք ինչքան շատ ջարդեին իրար, այնքան հայ ժողովրդի համար լավ կլիներ:***

1402 թ. հուլիսի 28-ին ***Անկարայի*** տակ տեղի ունեցավ մի խոշոր ճակատամարտ՝ Լանկ-Թամուրի և սուլթան Բայազիտ I-ի միջև[1]:

Մարտն ահավոր էր, երկուստեք՝ զոհառատ: Դիակներից կույտեր էին բարձրանում, մարտահրապարակը ձեռքից ձեռք էր անցնում, մարդկային արյունից առուներ էին գոյանում, սպանվողների աղաղակներից երկինքն էր թնդում: Մինչև ուշ երեկո շարունակվեց կռիվը: Օրվա վերջին կաղ զորավարը խորամանկորեն կարողացավ շրջանցել օսմանյան զորքերի աջ թևը, անցավ նրանց թիկունքը, մխրճվեց գլխավոր շտաբի կայանը և գերեվարեց սուլթան Բայազիտին: Ճակատամարտն ավարտվեց Լանկ-Թամուրի հաղթանակով[2]: Օսմանյան թուրքերի ունեցած կորուստներն այնքան մեծ էին, որ, շատերի կարծիքով, նրանք դժվար թե այլևս կարողանային ուշքի գալ:

Թամուրն անցավ նոր հարձակումների: Նա տեր դարձավ ողջ ***Անդրկովկասին,*** Փոքր Ասիային, Միջագետքին ու Սիրիային: Նրան հպատակվեց նաև Եգիպտոսի սուլթանը: Դյուրին չէ ասել՝ ո՞ւմ համար բարեբախտաբար, ո՞ւմ համար դժբախտաբար, 1405 թ. մահացավ Լանկ-Թամուրը: Շատ արագ քայքայվեց նրա պետությունը: Ճիշտ է, դժվարությամբ, բայց և այնպես, նորից կենդանության նշաններ ցույց տվեց, ապա ուժեղացավ օսմանյան սուլթանատը:

Սուլթաններ Չելպի Մեհմեդ I-ը (1413-1421), Մուրատ II-ը (1421-1440 և 1445-1451) կրկին հափշտակեցին մինչ այդ կորցրած Իկոնիան, Սամսոնը, Այտընը, Իզմիրը (Զմյուռնիան), Քեահիան և Վառնան: Օսմանյան պետության տարածքի ընդարձակման, նոր մայրաքաղաքի գրավման փառքը, սակայն, վերապահված էր սուլթան ***Մահմեդ*** (որոշ աղբյուրներում ***Մահմուդ***) II-ին կամ ***Մեհմեդ Ֆաթիհին*** (1451-1481) (Ֆաթիհ-նվաճող):

Քսաներկուամյա ***Մեհմեդ Ֆաթիհը,*** երկու տարվա լուրջ նախապատրաստությունից հետո, 1453 թ. ապրիլին շրջապատեց հավիտենական քաղաքը՝ Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը,

[1] ***А. Крымский,*** История Турции и ее литературы, Москва, 1916, стр. 11-18.
[2] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 31:

որի հարստության մասին այդքան ճիշտ ու առասպելական զրույցներ էին տարածված աշխարհով մեկ, որին տիրելու անհագ ծարավով էլ տոչորված մեռան նրա նախորդները: Թուրքերը քաղաքից քիչ հեռավորության վրա հավաքել էին շուրջ 200 հազարանոց, այն ժամանակի համար ահռելի մի բանակ[1], մեծաթիվ նավատորմ: Նրանք ունեին հեռահար հրանոթներ. նույնիսկ կառուցել էին այնպիսի հրանոթներ, որոնց փողերի երկարությունը 8 մետր էր: Հարձակվողները շուրջ 20 անգամ գերազանցող ռազմական կարողություն ունեին պաշարվածներից:

Մայրաքաղաքի պաշտպանների վիճակը շատ ծանր էր: Բյուզանդական վերջին ***Կոնստանտին XI Պալեոլոգ*** կայսրն ուներ ընդամենը 8-9 հազար զինվոր, չունենալով հրանոթներ և նույնիսկ շատ թե քիչ հզորության տեր ռազմական նավատորմ: Ամենաողբերգականն այն էր, որ բանակը և քաղաքի երեք հազարանոց պաշտպանող գվարդիան չէին համակրում կայսերը, կաթոլիկների և ուղղափառների միջև վաղուց եղած հակասությունները ավելի էին խորացել[2]:

Պաշարված Բյուզանդիոնը հոգեկան խռովքի մեջ էր, ընկճված: Հաղթանակի համար կորուսված էին վերջին հույսերը: Քաղաքում ամենուր լուրեր էին պտտվում, թե եկել է հնամենի կայսրության կործանման պահը և այդ առաքվել է ի վերուստ, այսինքն, երկնքից[3]:

Քաղաքը պաշարողները, ընդհակառակը, լցված էին վայրագ ոգևորությամբ: Նրանք չէին կասկածում իրենց հաղթանակի վրա: Իսլամ զինվորականներին դեպի Բոսֆոր էին ձգում նախ թալանի անհագ տենչը, ապա կրոնական մոլեռանդությունը, ատելությունը քրիստոնյաների նկատմամբ: Նրանց մեջ էլ լուրեր էին տարածվում, որոնք ազդարարում էին վերջիններիս մոտալուտ հաղթանակը: ***«Ալլահն ու մարգարեն հաղթանակ խոստացեր են իրենց, որ այդ հաղթանակը պիտի գար անվրեպ»***[4]:

1453 թ. մայիսի 26-ին թուրքական արյունոտված հարյուրամյա սուրը ճեղքեց Բյուզանդիայի մայրաքաղաքի դարպասները և սկսեց իր սև գործը: Երեք օր տևեց ասպատակությունը: Ճիշտ է նկատված, որ պատմության մեջ, մանավանդ անցած հազարամյակների ընթացքում, քիչ չեն եղել դեպքերը, երբ ավարածարավ, մոլեգնած բանակը մտել է մայրաքաղաքներ, գործել է ավերածություններ ծայրահեղությունների հասնող: Բայց այն, ինչ կատարվեց Կոստանդնուպոլսում, ոչ իր նախորդն ուներ, ոչ էլ հաջորդը: Թուրքական յաթաղանը զարհուրելի

[1] ***А. Ф. Миллер,*** նշված աշխատությունը, էջ 11-12:
[2] Նույն տեղում, էջ 13:
[3] ***Հ. Սիրունի,*** նշված աշխատությունը, էջ 158:
[4] Նույն տեղում, էջ 159:

էր. այն հազարամյա քաղաքի բնակչության հետ վերջնականապես խեղդամահ արեց *մի ամբողջ քաղաքակրթություն, անկրկնելի մշակույթ*, կործանեց վանքեր ու եկեղեցիներ, կտրեց շինարար ձեռքեր: Ճարտարապետական, քրիստոնեական խոշոր կոթողները պղծեց, թուրքացրեց, գմբեթներից իջեցրեց խաչերն ու նրանց փոխարեն տնկեց մահիկն ու կիսալուսինը: Այս բոլորը կատարվեց մի քանի օրում, քրիստոնյա աշխարհի աչքերի առջև, այն աշխարհի, որին նման ճակատագիր էր վերապահված հենց առաջիկայում, հաջորդաբար:

Կոստանդնուպոլսի անկման մասին ականատեսի աչքերով է ներկայացնում ֆրանսիացի հեղինակ Գուստավ Շլումպերժեն: Թարգմանաբար նրա գրքից է մեջբերում Հ. Սիրունին, որտեղ ասված է. «Ինչ որ տեղի ունեցավ այն ատեն մեծ ոստանին թաղերուն մեջ իբրև սարսափ վեր է ամեն երևակայությունե, ամեն նկարագրությունե,- ջարդն ու գերումը ընդարձակ քաղաքին բովանդակ բնակչության: Խուճապը, որ վայրկենապես հաջորդեց թուրք առաջին հրոսակախմբերու մուտքին անօրինակ զարհուրելի էր: *Հեծեծանքներու, աղաղակներու, նզովքներու, անեծքներու*, Աստծո և սրբերու ուղղված աղերսանքներու ընդմեջեն, ամեն դասե, ամեն սեռե փախստականներու ամբոխը, քանի կտարածվեր ահռելի լուրը, մեկ քանին միասին առած ինչ որ ամենեն թանկագինն ուներ, կխուժեր դեպի նավահանգիստ, փրկության միակ կարելի ճամբան:

Ինչպե՞ս նկարագրել ահավոր խուճապը այս լայնատարած բովանդակ քաղաքին, սարսափելի զարթնումը քրիստոնյա այս ամբոխին, որ դեռ երեկ կօրորվեր հիմար հույսերով զարհուրանքը այնքան պճնագեղ, հարուստ, և երբեմն անվանի կանանց որ հանկարծակի, *երկվայրկյանին մը մեջ դեմ հանդիման կգտնվեին վայրի գազաններու, որոնց միակ մտածումն էր բռնաբարել, ջարդել, գերի վերցնել իրենց թշվառ զոհերը:* Ամեն հրապարակ, ամեն փողոց ահռելի թատրոն էր սարսափի և հոգևարքի քստմնելի տեսարաններու:

Անթիվ իսլամ զորքեր, հաղթանակեն գինովցած և ընկճված անլուր խոնջանքեն այս երկարատև պաշարման և վերջին գիշերվան հարձակման, *չէին խնայեր ոչ ոքի... համատարած սպանդ մըն էր...* բոլոր անոնք, որ կերևային փողոցներու մեջ, բոլոր անոնք, որ զորս կգտնեին թուրքերը կողոպուտի համար իրենց մտած տուներեն ներս սուրե կանցնեին իսկույն: Հետո ջարդը կանգ առավ: *Կողոպուտի անզուսպ սերը պահ մը մեղմեց սպանության ոչ նվազ բուռն կիրքը: Բոլոր դեռատի աղջիկները, բոլոր գեղեցիկ տղաքը, մանավանդ անոնք, որ ազնվական ընտանիքներու կպատկանեին, խնամքով պահվեցան, մեծ գնով վաճառելու համար հետո, զմայլելի որսը դառնալու համար հարեմին, և վերապահված ամենեն ճոխ փրկագիններու* (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[1]:

Ֆրանսիացի նույն հեղինակը հետևյալ մեջբերումն է անում թուրք պատմիչ *Սալաեդինից*. «Թուրք կռվողները, կողոպտելու արտոնություն ստացած ըլլալով, քաղաքին վրա խուժեցին ուրախ և հոն, բռնի հափշտակելով դժբախտ *կեավուրներուն* ինչքերն ու ընտանիքները, լացուցին զանոնք կսկծահար, հավատարիմ մարգարեական պատգամին, թե *սպանեցեք ծերերը*, իսկ երիտասարդներին գերի վարեցեք»[2]: Մեհմեդ Ֆաթիհը երրորդ օրը դիմեց գինարբուքի մեջ գտնվող բանակին, ասելով. «Ավարը ձեզի, շենքերն ինձի»[3]:

Արդեն որոշված էր: 1453 թ. մայիսի 29-ին Կոստանդնուպոլիսը գրավված էր, բյուզանդական հազարամյա կայսրությունը կործանված, մանավանդ, երբ վերջին կայսրը, սուրը ձեռքին կռվելով, զոհվել էր իր մայրաքաղաքի պաշտպանների հետ: Քաղաքի պարիսպներից քիչ հեռավորության վրա իր շքախումբը տեղավորած Մեհմեդ II սուլթանը մայիսի 30-ին մեծ հանդիսավորությամբ մտավ ավերված քաղաքը, այն վերանվանեց Ստամբուլ (թուրքերեն *Իստանբուլ*, իսլամների բազմություն) և դարձրեց *Օտտոմանյան սուլթանության մայրաքաղաք:*

Կ. Պոլսի գրավումը քաղաքակիրթ մարդկության համար ուներ շրջադարձային նշանակություն բացասական առումով, իսկ Թուրքիայի ու թուրքերի համար դրական: Բոսֆորի գեղատեսիլ ափերին փռված, Եվրոպան Ասիային կամրջող նեղուցներին տեր դառնալով, օսմանյան թուրքերը տիրեցին ռազմաստրատեգիական կարևոր դիրքերի և դեպի Եվրոպան տանող ճանապարհները նրանց առջև արդեն բաց էին: Եվ Մեհմեդ Ֆաթիհի, և նրա հաջորդների օրոք սրընթաց արշավանքները շարունակվեցին:

Ռազմաֆեոդալական տերությունը, XIV դարում կազմավորվելով Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան մասում, հետագա երկուսուկես հարյուրամյակներում շարունակելով վարել նվաճողական, զավթողական պատերազմներ, հասավ ընդարձակ երկրներ գրավելուն, բազմաթիվ ժողովուրդների ստրկացնելուն: Կ. Պոլսի գրավումից հետո *նրանք 1460 թ. նվաճեցին Աթենքը, 1504 թ. Բելգրադը, 1526 թ. Բուդապեշտը*[4]: Եվրոպայում վասալական կախման մեջ դրեցին Ղրիմը, Վալախիան:

---

[1] *Gustave Schlumberger*, Le sieg, la prisect le sac de Constantinopole par Turesch 1453, p. 27, *Հ. Սիրունի*, նշված աշխատությունը, էջ 159:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] *А. Д. Новичев*, Очерки экономики Турции до мировой войны, Москва-Ленинград, 1937, стр. 11.

Թուրքական սուլթանները խոշոր նվաճումներ կատարեցին Փոքր Ասիայում և Աֆրիկայում: XVI դարասկզբին նրանք գրավեցին Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, Ալժիրը, Տրիպոլին, Թունիսը: Այդ նվաճումների հետևանքով, Օսմանյան սուլթանության հզորության շրջանում, այսինքն՝ XVI դարի երկրորդ կեսին, կայսրության սահմանները Ալժիրից տարածվեցին մինչև Իրան, Եմենից մինչև Հունգարիա[1]:

XVII դարավերջին թուրք օսմանները արդեն իրենց բռնատիրության մեջ էին առել Բուլղարիան, Հունգարիան, Հունաստանը, Սերբիան, Ալբանիան, Մակեդոնիան, Թրակիան, Մոլդովիան, Վալախիան, Սև ծովի հյուսիսային ափերը՝ ընդհուպ մինչև Հարավային Վրաստանը, ողջ Փոքր Ասիան, Լիբանանը, Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը, Եգիպտոսը, Ալժիրն ու Թունիսը: «Այսպիսով թուրքական կայսրության սահմանները փռվեցին Հայաստանից մինչև Ատլանտյան օվկիանոս և Բուդապեշտից մինչև Ասուան»[2]: Այդ տերությունը ընկած էր երեք աշխարհամասերի՝ *Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի վրա:*

Այժմ հիմնավորապես անդրադառնանք Անդրկովկասի, հատկապես Հայաստանի վիճակին, որը Բագրատունյաց թագավորության անկումից հետո իր կրծքի վրա էր կրել քոչվոր գրեթե բոլոր ցեղերից ստացած հարվածները: Այո, անընդմեջ պատերազմների բեմահարթակ էր եղել երկիրը, և մեկ անգամ չէր, որ տեսել էր սելջուկների, մոնղոլների, ակկոյունլու և ղարակոյունլու ցեղապետերի հարվածները:

XVI դարամուտից սկսած, XVII դարակեսով եզերված, կարճատև ընդմիջումներով, ողջ Հայաստանն արդեն ռազմական ընդհարումների, ահեղ պատերազմների, երկարատև զինաբախումների բեմահարթակի էր վերածվել Օսմանյան Թուրքիայի և Առաջավոր Ասիայի քաղաքական դաշտում առաջնության ձգտող Սեֆյան Իրանի միջև[3]:

Մրցամարտի արյունաթաթավ հրապարակ իջած բռնապետությունները, կրոնական քողով շղարշելով իրենց նվաճողական խարդավանքները, իրականում ձգտում էին տեր դառնալ ողջ Հայաստանին, Վրաստանին, Աղվանքին, Միջագետքին, ինչպես նաև առևտրական այն մայրուղիներին, որոնք Հայկական բարձրավանդակի վրայով արևմուտքը կամրջում էին արևելյան երկրների հետ: Եվ թուրքերը, և պարսիկները

---

[1] Տե՛ս *Մ. Գ. Ներսիսյան*, նշված աշխատությունը, էջ 5:

[2] *Ա. Ս. Համբարյան*, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965, էջ 27:

[3] Հաջորդ էջերը շարադրելիս՝ օգտվել ենք *Մ. Կ. Զուլալյանի* աշխատություններից. տե՛ս նրա «Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում», Երևան, 1980, մենագրությունը, ինչպես նաև գիտական հոդվածները: Սակայն այս բաժնին վերաբերող հիմնական շարադրանքը հրապարակված է «Հայ ժողովրդի պատմության» IV հատորում, տե՛ս ակադեմիկոս *Ա. Գ. Հովհաննիսյանի* գրչին պատկանող «Հայաստանի քաղաքական վիճակը Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ» գլուխը, էջ 88-134:

Դուշինկա – Ռագմիկ Ղազարյաններ (մայրը – քույրը)

վաղուց պաշտում էին *իսլամը*, այսինքն մահմեդականներ էին, այն էլ տարբեր աղանդների: Սեֆյան Իրանը պատկանում էր *մուսուլմանության շիաների* ուղղությանը[1]:

Իրանն առավել հզորացավ Շահ Իսմայիլի (1502-1524) գահակալության երկու տասնամյակներին: Դեռևս շահի տիտղոս չստացած Իսմայիլը, մեծաթիվ ղզլբաշների գլուխն անցած, վճռական հարված հասցրեց ակկոյունլուների վերջին շառավիղներին, հատկապես Շիրվանշահ Ֆարուխ Յասարին: 1499 թ. նա գրավեց Թավրիզը և այն վերածեց իր նորակազմ տերության մայրաքաղաքի, իսկ իրեն էլ (1502 թ.) հայտարարեց Սեֆյան պետության շահն-շահ (արքայից արքա)[2]:

Նա շատ արագ գրավեց Գիլանի և Շիրվանի մետաքսառատ շրջանները, ապա քիչ անց նվաճեց ողջ Գիլանը, Խուզիստանը, Մազանդարան: Այս տարիներին էին, ահա, Հայաստանի մեծ մասում, հատկապես Արարատյան աշխարհում, Վասպուրականում, Սյունիքում, Արցախում, Լոռիում բաժնեկալվածներ և քաղաքական իշխանություններ ստանում ղզլբաշներին հավատարիմ վաչկատուն ցեղերի առաջնորդները[3]:

Իրեն ենթարկելով հայկական և վրացական հողերի մեծ մասը, արյունահեղ ու հաղթական պատերազմներ վարելով Անդրկովկասի բեմահարթակի վրա Իսմայիլը նախ շիիզմը հռչակեց իբրև պետական կրոն, ապա սուննիզմի հետևորդների ձեռքից խլեց վակուֆային (հոգևորա-

---

[1] Շիաները թունոտ ատելությամբ էին լցված, այսօր էլ լցված են *սուննիների* նկատմամբ: Նրանք առաջացել են Արաբիայում և արաբերեն շիա-աղանդ, կուսակցություն, կողմնակցություն արտահայտությունից են վերցրել իրենց անվանումը: *Շիիզմն* իբրև *քաղաքական հոսանք* ձևավորվել է VII դարում Արաբիայում, հատկապես Մահմեդի մահից հետո: Պայքարի ու կռվամարտի դրդապատճառն իմամությունն էր, այսինքն Մահմեդի հաջորդի խնդիրը: Շիաները գտնում էին, որ Մահմեդին պիտի հաջորդեր նրա միակ դստեր՝ *Ֆաթիմայի ամուսինը՝ Ալին՝* Աբիթալաքի որդին: Եվ դա պատճառաբանում էին, թե իմամությունը ժառանգաբար պետք է անցներ Մահմեդի անմիջական ժառանգներին: Շիիզմը ևս տրոհվելով թևերի, արագորեն տարածվեց Իրանում, Ասորիքում, Միջագետքում, կրելով *զրադաշտականության* և *նեստորականության* ազդեցությունը: XVI-XVII դարերի Սեֆյանների *աստվածապետության* էպոխայում Իրանը դառնալով շիիզմի կենտրոն, թունոտ ատելությամբ լցվեց սուննիզմ պաշտող Թուրքիայի պանիսլամիստական նկրտումների նկատմամբ, ինչը դրսևորվեց թուրք-իրանական պատերազմների ժամանակ, որոնք սարսափելի ծանր նստեցին հայ ժողովրդի վրա, քանզի դրանք մղվում էին Հայաստանի տարածքում: Շիաները ներկայումս ապրում են Իրանում, Իրաքում, Սիրիայում, Պակիստանում, Հնդկաստանում և մեր հարևան *Ադրբեջանում:*

Շարադրանքը քաղված է ՀՍՀ 8-րդ հատորի 493 էջում զետեղված, անվանի պարսկագետ *Հակոբ Փափազյանի* հոդվածից:

[2] Մանրամասն տես *Մ. Կ. Զուլալյան,* Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, էջ 24:

[3] Տես *Աշոտ Հովհաննիսյան,* Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 81:

կաններին պատկանող) բաժնեկալվածները, սկսելով հալածել նրանց նախկին տերերին: Ոչ միայն Արևելքում XVI դարամուտին հանդես եկած նոր պետության ձևավորումը, նրա նվաճողական նկրտումների բացահայտ երևալը, այլև շիիզմի հետևորդների հալածանքները խիստ անհանգստացրին օսմանյան Թուրքիային:

Օսմանյան սուլթանության հոգևոր «տերերը» հասկանում էին, որ շիիզմը ավելի խորը արմատներ ուներ ինչպես Իրանում, այնպես էլ Թուրքիայի գյուղաբնակ ու արհեստավորական բազմաթիվ շրջաններում: Հետևաբար *սուննիզմին*[1] հայտարարված հակամարտությունը թուրքերն ընդունեցին իբրև կրոնական մարտահրավեր, և Հայկական բարձրավանդակի վրա ծայր առան թուրք-իրանական արյունահեղ այնպիսի պատերազմներ, որոնք ընդմիջումներով շարունակվեցին շուրջ *երեք հարյուր տարի:*

Արևելյան բռնապետությունների նվաճողական պլանների մեջ էին մտնում համաշխարհային համարում ունեցող առևտրական տարանցիկ ուղիներին տիրանալը, մետաքսի ճանապարհից ու մետաքսավաճառությունից ակնկալած եկամուտներ ստանալը: Սուլթան Սելիմ Յավուզը (արյունարբու) ակնկալություններ ուներ հաղթական պատերազմներից հետո ստեղծել *«մեկ պետություն, մեկ ազգ և մեկ կրոն»*, իր թիկունքն ապահովել հնարավոր ապստամբություններից[2]:

Վիճակը գցված էր: Երկու հզորների միջև պատերազմի սկզբնա-

[1] Սուննիներ (արաբերեն՝ գործելակերպ, սովորություն) էին կոչվում մահմեդականության ուղղափառ ուղղության՝ սուննիզմի հետևորդները: Այս ուղղությունը ևս ձևավորվել էր VII դարի Արաբիայում, այն տասնամյակներին, երբ Մահմեդի մահից հետո վճռվում էր նրան հաջորդ ընտրելու խնդիրը: Ի հակադրություն *շիաների,* որոնք պաշտպանում էին *Մահմեդի* փեսա Ալի Աբիթալաքի «մարգարեանալու» տեսակետը, սուննիները կողմնակից էին կրոնական ողջ համայնքի քվեարկության միջոցով միայն վճիռ կայացնելուն: Բացի *դուրանից* նրանք ընդունում էին *սուննան՝* Մահմեդի գործելակերպի մասին բանավոր ավանդույթների (հադիսների) ժողովածուն, որով ղեկավարվելու էր տվյալ համայնքը: Սուննիզմը զարգացում ապրեց XI դարում, ալ-Ղազալիի (1058-1111) ձեռքով այն միավորվեց *սուֆիզմի* հետ և վերածվեց կրոնափիլիսոփայական ուսմունքի: XIV-XVII դարերում, այսինքն՝ օսմանյան տերության ռազմաքաղաքական հզորության հարյուրամյակներում, սուննիզմը դարձավ *սխոլաստիկական համակարգ,* որի դոգմատիզմը հաղթահարողներն եղան Ֆ. ալ-Աֆղանին (1839-1897), Մ. Աբդոն (1849-1905) և ուրիշներ: Նրանք մուսուլմանական այդ ուսմունքին տալիս էին արդիական տեսք, որը և վերածվեց քրիստոնեական աշխարհին մեծ վնաս պատճառող *պանիսլամիզմի* ակունքների: Սուննիզմը այսօր կարևոր դեր է կատարում բազմաթիվ երկրների քաղաքական և գաղափարական կյանքում: Սրանց սուրբ քաղաքներն են Մեքքան և Մեդինան:

Հատվածի նյութերը քաղել ենք ՀՍՀ, հ. 11, Երևան, 1985, էջ 195, *Դ. Հովհաննիսյանի* «Սուննիներ» հոդվածից:

[2] Տե՛ս *Վ. Ա. Բայբուրդյան,* Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1989, էջ 12-13:

ծայրն արդեն երևում էր: Մնում էր դաշնակիցների որոնումը և ահեղ ճակատամարտ տալը, որը *բախտորոշ եղավ ոչ միայն XVI,* այլև հետագա դարերի, ապա՝ այսօրվա Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության, ինչու չէ, նաև Քյուրդիստանի և քուրդ ժողովրդի համար: Ուստի նպատակահարմար ենք համարում միջանկյալ խոսել քրդական խնդրի մասին, որն, ի վերջո, ճակատագրական նշանակություն պիտի ունենա երկու ժողովուրդների համար:

*
* *

Քուրդ (*կուրմանջ,* կորտու) ժողովուրդը, բաժան-բաժան եղած, այսօր ապրում է Թուրքիայի, Իրանի, Իրաքի, Սիրիայի տիրապետության տակ: Փոքր համայնքներ կան Հայաստանում, Վրաստանում և այլուր: Նրանք կրոնով մահմեդական են, պատկանելով հիմնականում սուննի, մասամբ նաև՝ շիա ուղղություններին: *Եզիդները* պաշտում են *ալիիլահիի* ուսմունքը և մահմեդականության նկատմամբ բարեկամաբար չեն տրամադրված: Լեզուն *քրդերենն* է՝ իր բազում խոսվածքներով (բարբառներով):

Քուրդ ժողովրդի ծագման պատմության մեջ ևս շատ մութ ծալքեր կան: Համենայնդեպս, քրդերը հնամենի ժողովուրդ են, ի տարբերություն թուրքերի ու թրքալեզու ժողովուրդների, նրանք *տեղաբնիկ* են: Իրենց նախահայրենիքը համարում են Իրանի Պարսք (Ֆարս) նահանգի հյուսիսային շրջանը[1]:

Դեռևս Քսենոֆոնը 401-400 թթ. հիշատակում է քրդերի *կորտու* (այժմյան *Հեքյարի*) շրջանի և այնտեղ ապրած *կորտուացիների* մասին[2]: Այնուհետև արդեն հիշատակություններն առատանում են քրդերի և Քյուրդիստանի վերաբերյալ: Հետևաբար անժխտելի է քրդերի հնամենի, տեղաբնիկ ազգ լինելու հանգամանքը, որն այսօր ևս ժխտում են թուրք ռեակցիոն պատմաբանները, նրանց նկատմամբ ևս կիրառում բացահայտ ցեղասպանության քաղաքականություն:

Արդ, ո՞րն է քրդերի բնօրրանը, այսինքն՝ նրանց հայրենիքը: Շատ էական այդ խնդրին պատասխանում է քուրդ հետազոտող *Ն. Խ. Մախմուդովը* (Նադոե Խդոն) «Քուրդ ժողովուրդը» վերտառությամբ իր աշխատության առաջին իսկ էջերում: Նա գրում է. «Քուրդ ժողովուրդն ունի հարուստ, տակավին քիչ ուսումնասիրված պատմություն: *Այդ ժողովուրդն իր պատմությունը կերտել է դեռ հնագույն ժամանակներից՝ Առաջավոր Ասիայում, գլխավո-*

[1] Տե՛ս ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 491:

[2] Տե՛ս *Կ. Մասունի,* Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական հարաբերությունները, Պեյրութ, 1969, էջ 18-21:

ռապես Զագրոսի և Միջագետքի շրջաններում» (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)[1]:

Կարո Սասունին, օտար աղբյուրներից նյութեր քաղելով, գրում է. «Քսենոֆոն հանդիպած է *Կորտյուքներուն* (corduguc), որոնք կբնակեին *Բոհտանեն արևելք տարածվող երկրամասին մեջ*,- հայ հին գրականության մեջ ծանոթ *Կորտու* (ներկա Հեքյարին)»[2]:

Քուրդ, համեմատաբար երիտասարդ պատմաբան *Ջալիլե Ջալիլը* գրում է. «Իրենց ծագումով քրդերը մտնում էին հին անցյալ ունեցող այն ցեղախմբերի մեջ, որոնք զբաղեցրել են *Տավրոս լեռների* արևելյան ափերից *մինչև Զագրոսը* ընդգրկելով նրա հյուսիս-արևմտյան մասը (Քրդական Զագրոսը)»[3]:

Տառացիորեն համարյա նույն տեսակետն է պաշտպանում արևելագետ *Ա. Ֆ. Մինորսկին*[4]:

Հարցին ավելի հանգամանորեն է անդրադարձել հայ պատմաբաններից *Վահան Բայբուրդյանը:* Նա գրում է. «Միջին դարերում *բուն Հայկական* լեռնաշխարհում քրդեր գոյություն չեն ունեցել: Նշված տարածքում քրդական էթնիկական տարրի առկայության մասին տեղեկություններ չկան ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում»[5]:

Նա, սակայն, մի փոքր զիջում է անում: Արևելյան լեզուներին տիրապետող պատմաբանը գտնում է, թե բացառված չէ, որ VII դարում, հատկապես արաբական արշավանքների ժամանակ, արդեն մահմեդականություն ընդունած քրդական առաջին ցեղերը, արշավող բանակների ուղեկցությամբ, մուտք գործած լինեն Արևմտյան Հայաստան և հաստատված լինեն նրա հարավային շրջաններում: XI-XIII դարերում ծավալված սելջուկյան և մոնղոլական արշավանքների ընթացքում քուրդ որոշ ցեղապետեր ծառայեցին նրանց, փոխարենը Վանա լճի և արևելյան Եփրատի ավազանում հողատարածություններ ստանալով՝ հատկապես ոչխարներ արածեցնելու համար: «Սակայն դրանից հետո ևս,- շարունակում է Բայբուրդյանը,- ընդհուպ մինչև XVI դարի սկիզբը Հայաստանի տարածքում քրդական էթնոսի զանգվածային առկայության մասին տեղեկություններ չկան»[6]:

Եվ այսպես, ընթերցողի համբերությունը այլևս չչարաշահելով ավելի շատ, այն էլ՝ համանման փաստերի հրապարակումով, միանգամից

---

[1] *Ն. Խ. Սախմուդով,* Քուրդ ժողովուրդ, Երևան, 1959, էջ 3:
[2] *Կ. Սասունի,* նշված աշխատությունը, էջ 18:
[3] *Джалиле Джалил,* Восстание курдов в 1880 г., Москва, стр. 12.
[4] *А. Ф. Минорский,* Курды, заметки и впечатления, Петербург, 1915, стр. 1.
[5] *Վ. Ա. Բայբուրդյան,* Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, էջ 8:
[6] Նույն տեղում:

բանաձևենք. *քրդերը պատկանում են իրանական ազգերի խմբին, տեղաբնիկ հնամենի ժողովուրդ են և մինչև XVI դարի սկզբները հայկական բարձրավանդակում չեն ապրել:* Քրդերի Արևմտյան Հայաստան ներթափանցման պրոցեսը կապված է *ծավալապաշտական անզուսպ ձգտումներ ունեցող* թուրք-իրանական առաջին և ընդհանրապես մյուս պատերազմների ընթացքի հետ, պատերազմներ, որոնք բռնկվելով Հայաստանի և Քյուրդիստանի գետնի վրա, տեղացի հայ և քուրդ ժողովուրդների տված մեծաքանակ զոհերի պատճառ դարձան:

*

* *

Թուրք-իրանական հակամարտություններն առավել քան թշնամական կերպարանք առան ղզլբաշական ցեղերի առաջնորդ Իսմայիլ I շահի (1502-1524) և օսմանյան Սելիմ I (1512-1520) սուլթանի գահակալության տարիներին:

Մինչ այդ, 1507 թվականին, շահ Իսմայիլը նվաճեց Արևմտյան Հայաստանի զգալի մասը, այդ թվում և Երզնկան: 1508 թ. նա գրավում է Բաղդադը: Շիաների դրոշակակիր դարձած շահը թունոտ ատելությամբ էր լցված սուննիների և նրանց հովանավորող Թուրքիայի դեմ[1]: Շահի մասին վենետիկցի մի անցորդ գրում է, թե «Ներոնից մինչև այսօր, կասկածում եմ, որ եղած լինի որևէ այլ արյունարբու բռնակալ»[2]:

1508-1509 թթ. թուրք-իրանական կռիվները նորից թեժանում են: Ըստ որում, այս անգամ ռազմական գործողությունները ծավալվում են Բաբերդի (Բայբուրդ) և Երզնկայի շրջաններում: Բայազետ II-ի որդի Սելիմը, լինելով Տրապիզոնի ու նրա շրջակայքի կառավարիչը, մի քանի անգամ հարձակվեց ղզլբաշների վրա և մեծ վնասներ պատճառեց երկրին: 1511-1512 թթ. նույնպես շահ Իսմայիլը հարձակվեց Բիթլիսի վրա և անչափ ավերածություններ կատարեց Հայաստանի այդ շրջաններում:

1512 թ. սուլթանի գահին բազմած Սելիմ Առաջինը հենց սկզբից բացասական վերաբերմունք դրսևորեց շիաների նկատմամբ: Մ. Կ. Զուլալյանը արձանագրում է. *«Սելիմն հրամայեց Ստամբուլում գլխատել նախօրոք կազմված ցուցակով շիա դավանանքին հետևող 40 հազար մարդու:* Եվ սկսվեցին նոր ընդհարումներ, որոնց դարձյալ կրոնական կերպարանք տրվեց (ընդգծումները մերն են - Հ. Ղ.): Մեծ մուֆթին իր ֆեթվայով ազդարարում էր, որ *ալլահի համար*

---

[1] Տե՛ս *Մ. Զուլալյան,* Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, էջ 28-29:
[2] Նույն տեղում, էջ 30:

մի շիայի սպանությունն ավելի հաճելի է, քան յոթանասուն քրիստոնյայի»[1]:

Ակնհայտ է, որ երկու տերություններն էլ նախապատրաստվում էին վճռորոշ ճակատամարտի: Մահմեդական երկու վեհապետերն էլ, տասնյակ հազարների հասնող մարդկանց արյուն հեղելով, շրջապատի վրա ահ ու սարսափ տարածելով, ձգտում էին, ի վերջո, առճակատման գնալ: Նրանք, սակայն, ճիշտ էին գնահատում իրադրությունը, լավ էին հասկանում, որ իրենցից յուրաքանչյուրի հաղթանակը կախված էր նրանից, թե ո՞վ կարող է իր կողմը գրավել, դաշնակից դարձնելով՝ օգտագործել բազմահազարանոց, բայց դյուրաթեք քրդական աշիրաթներին:

Դիվանագիտական պայքարում հաղթեցին թուրքերը: Նրանց հաջողության գրավականը դարձան զույգ հանգամանքներ: Նախ՝ այն, որ շահ Իսմայիլի քրդահալած քաղաքականությունը քրդական խոշոր ցեղապետերի մեջ առաջ էր բերել խիստ դժգոհություն և անվստահություն նրա բոլոր խոստումներին: *Մյուս, առավել կարևոր պարագան՝ քրդերի մեծ մասի պատկանելությունը թուրքերի սունիստական ուղղությանը*[2]:

Սուլթան Սելիմը նախ բանագնացներ ուղարկեց Բիթլիսի հեղինակավոր քրդերից մեկի՝ *մոլլա Իդրիսի* մոտ, նրան խոստումներ և առատ նվերներ տվեց՝ առաջարկելով դրանք բաժանել երկրամասի քրդական 49 էմիրներին: Մասնագիտությամբ պատմաբան, ապա հոգևորական մոլլա Իդրիսն, էմիրների շրջանում իր ունեցած հեղինակությունից օգտվելով, շրջեց գրեթե ողջ Քյուրդիստանով և ցեղակիցներին համոզեց կամավոր հպատակվել Թուրքիային: Լեոն գրում է. «Այդ նշանավոր շարժման գլխավոր դերակատար մոլլա Իդրիսը Սելիմի առատ շնորհներին արժանացավ: Սուլթանն ուղարկեց նրան մի հրովարտակ և բազմաճոխ ընծաներ: Ինքը՝ Իդրիսը, ստանում էր ամսական 2000 ոսկի դահեկան թոշակ, սամույրներ և այլ ծանրագին ընծաներ: Սուլթանն Իդրիսին ուղարկում էր նաև 17 հատ դրոշակ և հինգ հարյուր ոսկեկար խալաթ, քուրդ ազնվականությանը բաժանելու համար»[3]:

Խորամանկ սուլթանը ոսկու փայլով շլացնելով դեղին մետաղը շատ սիրող քրդական առաջնորդներին, միաժամանակ նրանց հետ գրավոր դաշնագիր ստորագրեց, որի համաձայն՝ 1. Սույն դաշնագիրը ստորագրող բոլոր իշխանապետությունները պիտի պահպանեն իրենց ամբողջ անկախությունը: 2. Իշխանությունը ժառանգականորեն պիտի

[1] Տե՛ս *Մ. Զուլալյան*, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, էջ 32-33:

[2] Տե՛ս *Վ. Բայբուրդյան*, նշված աշխատությունը, էջ 14-15:

[3] *Լեո*, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, էջ 178:

անցնի հորից որդուն կամ պիտի կարգադրվի համաձայն տեղի օրենքների: Սուլթանը կայսերական ֆերմանով պիտի վավերացնե հաջորդի օրինականությունը: 3. Քրդերը պիտի մասնակցեն Թուրքիայի կողմից եղած բոլոր պատերազմներին: 4. Թուրքիան պիտի պաշտպանի քրդական տարածքը արտաքին հարձակումներից: 5. Քրդերը պիտի վճարեն ավանդական կրոնական նվերներ խալիֆայությանը, իսկ սուլթանական գանձարանին մուծեն հարկեր և տուրքեր[1]:

Վերոհիշյալ դաշնագիրը ստորագրեցին քրդական ազդեցիկ 23 ցեղերի առաջնորդները, որոնք *տեղահանվեցին և բնակեցվեցին Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի* (Տիգրանակերտի, Ամիդի) նահանգի տարածքում: Մոլլա Իդրիսը, սուլթանի ֆերմանով, նշանակվեց Հայաստանում ձևավորված քրդական նոր իշխանապետությունների գլխավոր տիրակալը:

Թուրքական սուլթանը, նախքան պատերազմը, շահեց դիվանագիտական մրցամարտում, իր կողմ գրավելով քրդական աշիրեթներին, հարձակվեց Սեֆյան Իրանի զորքերի վրա: Ճակատամարտը տեղի ունեցավ 1514 թ. օգոստոսի 23-ին ժամանակակից Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայկական *Խոյ* գավառի մոտերքում ընկած *Չալդրանի դաշտավայրում:* Թուրքական հրետանին, բազմահազարանոց թուրք-քրդական բանակը ջախջախիչ հարված հասցրին շահ Իսմայիլին: Շահը պարտվելով, գլուխը կորցրած, փախուստի դիմեց, թուրքերի սրի ողորմածությանը թողնելով «իր գահը, հարեմը և գանձարանը»[2]:

Մենք այսքան ընդարձակ տեղ տրամադրեցինք թուրք-իրանական այս կռիվներին, քանզի դրանք ճակատագրական նշանակություն ունեցան և՛ թուրքերի, և՛ քրդերի, և՛ հատկապես օտարի սրի ողորմածությանն ապավինած հայ ժողովրդի համար:

1. Օսմանյան Թուրքիայի այստեղ տարած հաղթանակից հետո նրա զորքերը շարունակեցին իրենց երթը և իրար հետևից գրավեցին Թավրիզը, Հայաստանի արևմտյան մասը, Քյուրդիստանը, Իրաքի հյուսիսային մասը, Բաղդադը: Ամենաողբերգականն այն էր, որ խորամանկ թուրքերը, նախքան «թուրքացումը», որոշեցին *«քրդացնել»* Արևմտյան Հայաստանի այդ տարածքը և «...կայսրության համար ապահովել կայուն հենարան, հանձինս դավանակից էթնիկական մի նոր խմբի, որին կարելի կլիներ օգտագործել նաև երկրամասի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող հայ ժողովրդի դեմ»[3]:

Տերությունը հետևողական քաղաքականություն տարավ՝ քրդերի

[1] Տե՛ս *Կարո Սասունի*, նշված աշխատությունը, էջ 38: Տե՛ս նաև *Վ. Բայբուրդյան*, նշված աշխատությունը, էջ 17-18:

[2] *Վ. Բայբուրդյան*, նույն տեղում, էջ 15:

[3] Նույն տեղում, էջ 17:

մեջ վերջնականապես արմատավորել մահմեդականության սունիտիզմը, կրոնով հաստատել իր գերիշխանությունն այդ երկրում: Ողբերգական եղավ, իհարկե, եզդի համայնքների գոյավիճակը, քանի որ նրանք չէին ընդունում իսլամը, դրա համար էլ կռիվների մեջ էին ընկնում և մարդկային մեծաքանակ զոհեր տալիս:

2. Իրադարձություններն ակամայից քրդերին հաղթանակ էին ազդարարում, սակայն այդպես չէր: Փաղաքշական անվանում ստացած մոլլա Իդրիսը Իդրիս Բիթլիսցին, - հաջող կերպով արդարացնում է քուրդ հետազոտող Նադո Մախմուդովը,- «*շարունակում է թուրքերի հույսերն ի վնաս իր հարազատ ժողովրդի* և սկսում է քրդերին տեղաշարժ անել: Կենտրոնական գավառներից նրանց տեղափոխում էր էրզրումի և Վանի շրջանները: *Հաստատում են, որ այժմ էրզրումի և Վանի շրջանում ապրող բոլոր քրդերը, բացի Հակկիրի և Սամսկանլի ցեղերից,* որոնք *այստեղ են եկել Դիարբեքիրից* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]:

Երկրորդն ու ամենակարևորն էլ այն էր, որ գրեթե խաղաղ ճանապարհով, անարյուն ու անաղմուկ, Քյուրդիստանը տրոհվեց երկու ստվար հատվածների, որոնցից մեծ մասն ընկավ Օսմանյան Թուրքիայի գերագահության տակ, փոքրը Սեֆյան Իրանի: Այնուհետև հինգ դար, հինգ երկար ու ձիգ հարյուրամյակ օսմանցիները քրդերին օգտագործեցին երկրի սահմանները պաշտպանելու գործում, իրենց հետ տարան Աֆրիկան նվաճելու և, ի վերջո, իբրև *դամոկլյան սուր կախեցին հայ ժողովրդի գլխին:* Քրդական վերնախավը չհասկացավ, որ այսօր գործիք է դառնում թուրք վեհապետության ձեռքին հայերին ճնշելու, թալանելու, ստորացնելու և, *ի վերջո, կոտորելու*[2], վաղն էլ իր հետ կվարվեն այդպես: Հայկական ջարդերի մի ստվար մասը թուրքերը իրականացրին քրդական բեկերի ու շեյխերի գլխավորած ավարածարավ խուժանի ձեռքերով: Նրանք ջարդեցին հայերին, այսօր էլ նրանց են ճնշում, ձուլում, տանջամահ անում, ցեղասպանության ենթարկում Թուրքիայում: Այդ բոլորի սկզբնաթելերը գալիս են XVI դարասկզբից, Իդրիս Բիթլիսցու վարած սխալ, ես կասեի «ազգադավ քաղաքականությունից», որից տուժեցին և հայ, և քուրդ ժողովուրդները:

3. Բնականաբար, Հայաստանն ու հայ ժողովուրդը այդ դեպքերի ժամանակ կրավորական դեր կատարեցին և ճակատագրական հարվածներ ստացան մի քանի կողմից: Նախ, Հայկական բարձրավանդակը բռնի ուժով բնակեցվեց քրդական բազմաթիվ աշիրեթներով, որոնք հայերի հայրենիքում իրենց պահում էին ոչ թե եկվորի, այլ իսկական տիրոջ կարգավիճակով: Այդ էր պատճառներից առավելագույնը, որ արագ բազմացող քրդական տարրը կարճատև ժամանակով տեղափոխվեց Հարավային Հայաստան և ոչ միայն փոխեց երկրի ազգագրական դիմապատկերը, այլև, հայկական տարրին դուրս մղելով, փոքրաթիվ դարձնելով, հետագայում հեշտացրեց նրա ոչնչացումը: Մեր կարծիքով *1915 թ. մեծ ոճրի ծայրաթելը գտնվում է 1514 թ. Չալդրանի ճակատամարտի մատույցներում:*

[1] *Ն. Խ. Մախմուդով,* նշված աշխատությունը, էջ 104:
[2] *Վ. Բայբուրդյան,* նշված աշխատությունը, էջ 18-19:

Ողբերգական հարցն այն է, թե արդյո՞ք Հայ դատն այսօր, հաջողությամբ բարձրացնելով ցեղասպանության դատապարտման և հայոց հայրենիքը, հայկական հողերը ետ ստանալու խնդիրը, մտածում է այն մասին, որ այդ նահանգների մեծ մասն արդեն բնակեցված են քրդերով: Եթե մենք ետ ստանանք կորցրածը, ապա ինչպիսի՞ն կլինեն հայ և քուրդ ժողովուրդների փոխհարաբերությունները: Այս ևս նկատի ունենալով, մենք *Մոլլա Իդրիսի կատարածը համարում ենք ոչ միայն քուրդ, այլ, առավել ևս, հայ ժողովրդի պատմության ամենասև էջերից մեկը:*

*

* *

Չալդրանի ճակատամարտը խարխլեց ղզլբաշների հզորության հիմքերը և թուրքերի համար պայմաններ ստեղծեց վերջնականապես նվաճելու օսմանյան արդեն ընդարձակ դարձած կայսրությունը, միացնելու Արևմտյան Հայաստանն ու Քյուրդիստանը: Սակայն դրան որոշ չափով խանգարեցին ենիչերիների ապստամբությունները[1]:

Սուլթանը վերադարձավ Հայաստանի տարածքով, Երևանը, Ուչքիլիսեն (էջմիածինը), Մաստարան (Թալինը), Կարսը ավերեց, ժողովրդի ունեցվածքի վերջին մնացորդները բռնագրավեց և հեռացավ:

Հետագա տարիներին Անդրկովկասի վիճակն առավել անելանելի դարձավ: Նախ 1515 թ. շահ Իսմայիլի և Սելիմ Ահեղի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն թուրքերի տիրապետության տակ ընկավ *Արևմտյան Հայաստանը էրզրումով հանդերձ* և Միջագետքի հյուսիսը Մոսուլի հետ միասին[2]:

Արևելյան Հայաստանն ու Ատրպատականը շարունակեցին մնալ Սեֆյան Իրանի տիրապետության տակ: Սակայն շատ շուտով խախտվեց պայմանագիրը: Պատերազմը շարունակվեց փոփոխակի հաջողություններով: «Իրանի սահմանները մերթ ընդարձակվում էին դեպի հյուսիս կամ արևմուտք, մերթ կծկվում տեղի տալով թուրքերի առաջխաղացմանը: Հայաստանն ու Անդրկովկասը ենթարկվում էին թուրքիրանական հարվածներին, ոչ միայն իբրև պատերազմի թատերավայր, այլև որպես նրանց նվաճումների նշանախեց»[3]:

[1] Մանրամասն տես *Մ. Կ. Զուլալյան,* նշված աշխատությունը, էջ 33-34:
[2] Նույն տեղում, էջ 35:
[3] *Ա. Գ. Հովհաննիսյան,* Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 82:

Պատերազմող կողմերը նպատակադրվել էին իրենց ենթարկել Հնդկաստանից և Միջին Ասիայից դեպի փոքրասիական նավահանգիստները տանող միջազգային առևտրի մայրուղիները և Մերձավոր Արևելքի իշխող դիրքերը *Թավրիզը, Երևանը, Էրզրումը և Թոխաթը* մի կողմից, Կասպից, Սև և միջերկրածովյան առևտրի ու հաղորդակցության ճանապարհներն ու քաղաքային հանգրվանները Թիֆլիսը, Գանձակը, Շամախին և *Դերբենդը* մյուս կողմից[1]:

Պատերազմը նոր թափ ստացավ XVI դարի 30-ականների սկզբից: 1533-1535 թթ. թուրքերը նորից գրավեցին Դերջանը, Էրզրումը և Կարսը, մտան Հյուսիսային Իրան, նվաճեցին Թավրիզը, 1534-ին Բաղդադը, 1536-ին Վրաստանի հարավ-արևմտյան շրջանները, 1538-ին Վանը: 1548 թ. թուրքական զորքերը արշավեցին Հյուսիսային Իրան, նվաճեցին Թավրիզը, հասան մինչև Քուշան և Ղում, գրավեցին Սպահանը, մտան Արևելյան Հայաստան, 1549-ին Հարավային Վրաստան: Շահ Իսմայիլը նոր զորք հավաքելով, անցավ հակահարձակման, և 1549-1552 թվականներին իրանցիները ավերեցին Բասենի, Բարձր Հայքի և Տուրուբերանի շրջանները[2]:

Ամենադաժան մարտերը ծավալվեցին 1554 թ.: Դրանից առաջ շահ Թահմազը ավերել էր Բասենի, Խնուսի, Էրզրումի, Բաբերդի, Երզնկայի, Դերջանի, Մուշի, Խլաթի, Արծկեի, Արճեշի, Վանի շրջանները: Հայաստանի այդ վայրերում պարսիկների հերթական անգամ կատարած վայրագություններին չափ ու սահման չկար: Նրանք որոշեցին նահանջել, սակայն, նախքան այդ վայրերը թողնելը, այրեցին չհնձված արտերը, կրակի կերակուր դարձրին մարագները, գոմերը, բնակելի տները, մորթեցին բոլոր անասունները: Շահ Թահմազն իր հիշատակարանում գրում է. «... պատերազմի գործը թղթախաղի նման է, ինչ միջոցով որ լինի, պետք է առաջ տանել և թշնամուն ծնկի բերել. «Պատերազմը խարդախություն է,- ասել է Ալին,- պատերազմի ժամանակ, լինի փախչելով, թե խաբելով, այնպես պետք է անել, որ թշնամուն ոչ մի միջոց չտրվի»[3]: Պարսիկների դաժանություններն այս անգամ այնքան աներևակայելի էին, որ ժողովուրդը արդեն «երանի էր տալիս» այնքան ատելի օսմանյան թուրքերին:

Շատ արագ ի դերև ելան տեղական ժողովուրդների հույսերը: 1554 թ. թուրքերը, տեղյակ լինելով պարսիկների նկատմամբ տեղացիների ունեցած ատելությանը, 200 հազարանոց բանակով անցան հակահարձակման: Նրանք վերագրավեցին Երևանը, Նախիջևանն ու Սյունիքը: Թուրք պատմաբան Փեչևին, նկարագրելով թուրքական բանակի այս անգամ կատարած ավերածությունները հաղթական երթի ճանապարհին գտնվող գյուղերում ու բնակավայրերում, գրում է. «Թուրքական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերը այն աստիճան ամայացել, ավերվել և բուերի ու ագռավների բնակավայր էին դարձել, որ տեսնողին սարսափ էին պատճառում ...Սիրեկան տղաների, քնքուշ ու մատաղ աղջիկների և մանկամարդ հարսների գերեվարում օսմանյան բանակի կողմից: «Չկար մի վրան, որի մեջ գտնվող սիրեկան և սիրուհիների թիվը երեքից պակաս լիներ, հինգից, տասից ավել վրաններ ունեցողներն անթիվ էին: *Մուշի* դաշտում, *Խլաթում և շրջակայքում ցանած չարագործության սերմերը հասունացան, հնձվեցին և, խառնվելով թույնի հետ, արյան փոխարեն արյուն խմեցին* (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[1]:

Սուլթան Սուլեյմանը գրավեց Արևելյան Հայաստանի մի զգալի մասը, մտավ Նախիջևան և պատրաստվում էր ավելի խորանալ երկրի սրտում, երբ հանկարծ պարզվեց, որ երկու զորեղները փոխադարձաբար այնպես էին թալանել այդ երկրները, որ նույնիսկ զինվորներին և նրանց ձիերին ուտելիք չէր մնացել: Անմիջապես տարածվեց խոլերայի համաճարակ, հնձելով թուրքերին տասնյակներով և նույնիսկ հարյուրներով: Միշտ «հաղթանակների սովոր» արյունարբու սուլթանը հրամայեց Էրզրումի վրայով բանակը ետ քաշել և առայժմ ծվարել *Ամասիայում:* Օսմանյան թուրքերի ներքին դրությանը դեռևս անծանոթ Թահմասպ I շահը, վախենալով քիչ առաջ ծավալված գործողությունների կրկնությունից, բանագնացներ ուղարկեց սուլթանի մոտ և նրանից խնդրեց հաշտության բանակցություններ: Սուլթանի համար դա գյուտ էր: Նա անմիջապես համաձայնեց գնալ բանակցությունների, որոնք երկար տևեցին, թեժ դիվանագիտական պայքար մղվեց, երբեմն սպառնալով խզել հարաբերությունները:

1555 թ. մայիսի 29-ին *Ամասիայում,* երկար բանակցություններից հետո, վերջապես օսմանյան Թուրքիայի ու շահական Պարսկաստանի միջև կնքվեց պայմանագիր, որը պատմության մեջ մտավ *Ամասիայի հաշտության պայմանագիր անվանումով:* Այդ դաշնագիրը պատմական Հայաստանը երկատում էր զորեղ զույգ բռնապետությունների միջև, և նորից ձևավորվում էին Արևմտյան և Արևելյան Հայաստանները: Քանի որ պայմանագիրը կարևոր էր մեր ժողովրդի պատմության համար, ուստի մի փոքր ընդարձակ խոսենք այդ մասին:

XVI դարում Ամասիան արդեն թուրքահպատակ Սեբաստիայի (Սվազ)

---

[1] *Ա. Գ. Հովհաննիսյան,* Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 82:

[2] ՀՍՀ, հ. 4, Երևան, 1972, էջ 262 «Թուրք-իրանական պատերազմները XVI-XVIII դարերում»:

[3] *Ա. Գ. Հովհաննիսյան,* նշված աշխատությունը, էջ 84, տե՛ս նաև «Մատենադարանի պարսկական հրովարտակները», հ. II, էջ 8:

[1] *Ա. Գ. Հովհաննիսյան,* նշված աշխատությունը, էջ 84-85: Տե՛ս նաև *Մ. Կ. Զուլալյան,* նշված աշխատությունը, էջ 44-45: «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին»: Կազմեց *Ա. Խ. Սաֆրաստյանը,* հ. Ա, Երևան, 1964, էջ 33:

էյալեթի կազմում էր և ուներ հարուստ տնտեսություն: Ըստ թուրք պատմաբան Քյաթիբ Չելեբիի (XVII դար), քաղաքում կային մի շարք թաղամասեր, շուկաներ, բաղնիքներ, մեդրեսեներ, խաներ, բարձր վայրում մի պարիսպ: «Այս քաղաքը կոչվել է *Ռումի Բաղդադ*, որ մի ժամանակ մայրաքաղաք է եղել»[1]:

Թուրք պատմաբանը խոսում է նաև քաղաքի բնակչության մասին, գրելով. «Այս էյալեթի բնակիչների մեծամասնությունը ...թուրքմեններ և թուրքեր են: Կան նաև *հույներ:* Իսլամականները դավանանքով հանիֆներ են: ... Ապրում են *նաև քյաֆիրներ* (քրիստոնյաներ), *որոնց մեծամասնությունը հայեր են»*[2]:

Նա թուրքավարի է գրել: Սեբաստիան և Ամասիայի սանջակի *բեյլիքիստ* կենտրոնը համարյա հայաբնակ քաղաքներ էին, և վերևում հիշատակված բոլոր կառույցները կերտվել են հայերի ձեռքերով: Ասում են պայմանագրի ստորագրման, ավելի ստույգ, բանակցությունների պրոցեսում դեր են կատարել հայերն ու հույները:

Եվ այսպես, 1555 թ. մայիսի 29-ին ստորագրված, հունիսի 4-ին հրապարակված, Ամասիայի պայմանագրով ամբողջ Արևմտյան Հայաստանը, ներառյալ Վասպուրականն ու Բագրևանդը, ապա Արևմտյան Վրաստանը անցան օսմանյան սուլթանների տիրապետությանը: Չնավորվեց Արևմտյան Հայաստանի տարածքը, որը վերանվանվեց *Արևելյան Անատոլիա:* Վերջին պատերազմների արդյունքները հաշվի առնելով, թուրքերը Իրանից խլեցին և իրենց միացրեցին Արդահանի, Գեոլեի, Զարիշատի-Արփաչայի շրջանները[3]: Ղզլբաշներին միացվեցին Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը և ազերի երկիրը: Անդրկովկասում, բացի Արևելյան Վրաստանի վիլայեթությունից, կազմավորվեցին *Չուխուր Սաադ* (Արարատյան երկիր), *Դարաբաղի* (Սյունիք-Արցախ), *Շիրվանի (Աղվանից երկիր)* բեկլարբեյությունները[4]: Որոշվեց դադարեցնել թշնամությունը սուննի և շիա աղանդներին պատկանող մուսուլմանների միջև և յուրաքանչյուրին թույլ տալ պաշտելու այն ուսմունքը, որը ինքը կցանկանար: Դրանից հետո օսմանյան թուրքերը արագացրեցին քրդական ցեղերի վերաբնակեցումը Արևմտյան Հայաստանում, իսկ շահական պարսիկներն էլ կալվածքներ բաշխեցին: Անդրկովկասում բնակության իրավունք տվեցին թուրքախոս մի շարք ցեղերի (ռումլու, ուսքակլու, կաջար, զուլկադար, քանդարլու և այլն): Ճիշտ է նկատում Հ. Փափազյանը, որ երկու դեպքում էլ, թե քուրդ և թե թրքախոս ցեղերի վերաբնակեցմամբ, *դիմափոխեցին Հայաստանի երկու մասերի էթնիկական կազմը* և. հայ ժողովրդի

[1] «Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի... մասին», էջ 68
[2] Նույն տեղում, էջ 69-70
[3] Տե՛ս «Թուրքական աղբյուրները...», էջ 268
[4] Նույն տեղում, էջ 269

ազատագրական շարժումները ճնշելու գործում, թուրքերն ու պարսիկներն իրենց *հավատարիմ գործիքներ ստեղծեցին*[1]:

Երկու տերություններն էլ փոխադարձաբար թույլտվություն և օժանդակություն պիտի ցույց տային Մեքքա և Մեդինա ուխտի գնացող մահմեդականներին: Ամենաողբերգական որոշումը կայացվեց Կարսի մասին: Թուրքագետ Մ. Կ. Զուլալյանը գրում է. *«Պայմանագրով նախատեսված էր երկու պետությունների սահմանագծում գտնվող Կարս քաղաքը դարձնել ամայի ու անմարդաբնակ»*[2]:

Քյաթիբ Չելեբին իր «Ֆեզելեքը» (համառոտ պատմություն) երկհատորանոց աշխատության 374-375 էջերում գրում է. «Քանի որ Կարսի բերդը ավերվել էր շահի ձեռքով, նպատակահարմար համարվեց վերանորոգել և այնտեղ զինվորներ պահել»[3]:

Սելանիկի Մուստաֆա էֆենդին «Թարիհի Սելանիկի» (երկհատորանոց Սելանիկի պատմություն - XVI դարի երկրորդ կեսից մինչև XVII դարի առաջին քառորդն ընդգրկող տարեգրության բնույթի ծավալուն աշխատություն) գրքի 153-154-րդ էջերում հիշում է, թե 1579 թվականին «սկսվեցին Կարսի բերդի վերանորոգման և բարեկարգման աշխատանքները... Մեծ ջանքերի շնորհիվ կարճ ժամանակում ավարտվեց Բերդի աշտարակների ու պարիսպների կառուցումը»[4]:

Ուրեմն, նախ՝ ճիշտ է Զուլալյանի կարծիքը, այսինքն Կարսի բերդը, սուլթանի համաձայնությամբ, շահը հիմնովին ավերել էր, ապա թուրքերը հետագայում վերանորոգել են այն և նորից վերածել բերդաքաղաքի:

*
* *

Ամասիայի հաշտության պայմանագիրը երկար կյանք և ամուր հիմքեր չունեցավ, քանզի Արևելքի երկու բռնատիրությունների միջև այնքան խնդիրներ կային, այնքան թշնամություն էր կուտակվել, որ դրանք բոլորը մոգական մեկ գավազանով վերացնել հնարավոր չէր: Ինչպես միշտ, այս անգամ էլ նախահարձակը եղավ Թուրքիան: Տեղյակ լինելով Սեֆյանների մայրաքաղաքում ծավալված գահակալական կռիվներից, օգտվելով դրանցից, խախտելով Ամասիայի հաշտության պայմանագիրը, օսմանյան զորքերը *Լալա Մուստաֆա փաշայի* գլխավորությամբ 1578 թ. ասպատակեցին Անդրկովկասի «պարսկահպատակ» հայկական նահանգները և, փաստորեն, ռազմակալեցին ողջ

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 123: Հմուտ արևելագետ *Հակոբ Փափազյանի* հոդվածը՝ «Հայաստանի քաղաքական վիճակը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները XIV-XVIII դարերում»:
[2] *Մ. Կ. Զուլալյան*, նշված աշխատությունը, էջ 45:
[3] «Թուրքական աղբյուրներ...», հ. II, Երևան, 1964, էջ 99:
[4] Նույն տեղում:

Արևելյան Հայաստանը: 1578 թ. օգոստոսի 10-ին Չըլդըրի տակ բռնկվեց ահեղ մի ճակատամարտ: Մեծ զոհերի գնով հաղթեցին թուրքերը և այնուհետև, մտնելով Վրաստանի սահմանները, նրանք շուտով գրավեցին Թիֆլիսը[1]:

Պատերազմն աներևակայելի կողոպուտի առարկա դարձրեց Անդրկովկասի նահանգները:

Ցավով է արձանագրում այդ երևույթները ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը: Հիրավի, Լանկ-Թամուրի օրերից ի վեր այսքան տնավերություն ու ցնցոտիներ, քաղց ու կարիք չէին տեսել Հայաստանի և Անդրկովկասի ժողովուրդները: Պարբերաբար կրկնվող արշավանքները, կոտորածն ու գերեվարությունը և սրանց հաջորդող սովն ու հիվանդությունները ամայացնում էին Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, ոչնչացնում արտադրողական ուժերը: Թուրք զինված հրոսակախմբերը մորեխի պես ընկնում էին հայկական կանաչ դաշտերի վրա, լափում ու չորացնում նրանց կենսաբեր ծիլերը: Եվ հատկանշական է, որ Անանուն Սեբաստացու այդ միջոցին գրած ժամանակագրությունը բացվում է սիմվոլիկ մի նկարով: Պատկերված է գալարվող մի օձ, որի մարմնի զանազան մասերից խոյանում են բազմաճիրան վիշապի գլուխներ, որոնցից ամեն մեկը պսակված է սուլթաններից մեկի անունով՝ սկսած կայսրության հիմնադիր Օսմանից, վերջացրած Անդրկովկասի զավթումը կազմակերպող Սուլթան Մուրադ III-ով[2]:

1579-1589 թվականներին թուրքական բանակը, դաշնակից ունենալով Ղրիմի խանին, անարգել ասպատակեց Շիրվանն ու Արևելյան Հայաստանը: Ինչպես օտար, առավել ևս հայկական սկզբնաղբյուրները արձանագրում են Երևանից, Նախիջևանից, Շիրվանից դուրս քշված հազարավոր գերիների մասին: XVII դարի մի ժամանակագիր հաղորդում է, թե թուրքական զինվորները «առհասարակ ասպատակեին, մանկունս գերի վարեին և զծերսն սրոյ ճարակին և զտեղինս հրով կիզուին»[3]: Թուրք պատմիչ Իբրահիմ Փեչևին (XVI դարավերջից - XVII դարի առաջին կես) «գոհունակությամբ» արձանագրում է, որ այդ արշավանքների ժամանակ գրավելով Շորագյալը, թուրքական բանակը «քանդեց ու ավերեց գյուղեր, շինությունները ոչնչացրեցին և հողին հավասարեցրին: Հրոսակախմբերը Երևանում ամեն ինչ «կրակի տվեցին, այրեցին ու հողին հավասարեցրին»: Ըստ Փեչևիի, 1578 թ. թուրքական զորքերը «կողոպտեցին ու թալանեցին Երևան քաղաքն ու երկիրը... 20 հազարից ավելի կանանց ու երեխաների գերի տարան»[4]:

---

[1] Տես *Մ. Կ. Զուլալյան*, նշված աշխատությունը, էջ 47:
[2] *Ա. Գ. Հովհաննիսյան*, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 87:
[3] Մ. Մաշտոցի անվան մատենադարան, N 6273, էջ 285 ա, տե՛ս նաև *Մ. Գ. Ներսիսյան*, նշված աշխատությունը, էջ 7:
[4] *Մ. Գ. Ներսիսյան*, նույն տեղում, էջ 8:

Աշոտ Հովհաննիսյանը, ընդհանրացնելով թուրքական, արևմտաեվրոպական ու հայկական սկզբնաղբյուրների ընձեռած նյութերը, գրում է. «Փեչևին անզուսպ հաճույքով է արձանագրում, որ Երևանը գրավելուց հետո թուրքերն ավերեցին այդ քաղաքի հոյակապ պալատները, գետնին հավասարեցրին նրա գեղազարդ կամարները, գերության քշեցին 20 հազարից ավելի կանանց ու երեխաների: Հայ աղբյուրները 70 հազարի են հասցնում Շիրվանում գերվածների թիվը: Նրանք հաղորդում են նաև, որ Ղրիմի սուլթան Մեհմեդ Գիրեյը 100 հազար տղա և աղջիկ քշեց գերության՝ Կաֆայում վաճառքի հանելու համար: Երևանում հայ և մահմեդական գերիների թվաքանակը 60 հազար են նշում հայ աղբյուրները, իսկ Նախիջևանի շրջանում գերվածներինը՝ 40 հազար»[1]:

Արյունահեղ այդ պատերազմներից դադարի հանգրվան ծառայեց 1590 թ. մարտի 21-ին Ստամբուլում ստորագրված թուրք-իրանական հաշտության պայմանագիրը, որը ոչ միայն ստորացնում էր ղզլբաշների վեհապետին, այլև նրանից «խլում երկրի մեծ մասը»: Այդ դաշնագրով *Արևելյան Հայաստանը,* Վրաստանը, Ադրբեջանը, Քյուրդիստանի և Լորիստանի մեծ մասը, *այսինքն՝ ողջ Անդրկովկասն ու Ատրպատականն* անցան Օտտոմանյան կայսրությանը: Նորագրավ երկրամասերում թուրքերն է՛լ ավելի սաստկացրին հարկերն ու տուրքերը, խստացրին քաղաքական ճնշումները՝ հատկապես այլահավատ հպատակների՝ հայ ժողովրդի նկատմամբ: Ապրելը, նույնիսկ շնչելն անտանելի էր դառնում և՛ հայ վերնախավի՝ իշխանների, առավել ևս, ժողովրդի, հասարակ մարդկանց համար: Իբրև նոր երևույթ նկատվում է, որ եթե մինչ այդ օսմանյան բարբարոսները թալանում էին, ստորացնում, գերեվարում ավելի շատ տեղի իշխաններին, վերնախավին, ապա այժմ սկսեցին առավել սաստիկ քաղաքականություն վարել *հասարակ մարդկանց, աշխատավորների, անմիջական արտադրողների նկատմամբ:*

Թուրքերի և Թուրքիայի ստեղծած սահմռկեցուցիչ տեսարաններն աստիճանաբար լցնում էին, առանց այդ էլ լցված, Անդրկովկասի ժողովուրդների համբերության բաժակը: Չկարողանալով ազատագրական պատերազմներով դիմագրավել ուժեղ և բարբարոս տերությանը, տեղացիները հույսը դնում էին օտար միջամտությունների, հատկապես Սեֆյան Իրանի վրա: Պայմանները ստիպում էին, որ Իրանի արյունռուշտ նոր բռնակալն ու «ավերողն Հայաստան աշխարհին և կործանողն Հայոց ազգին Անդրկովկասի ֆեոդալների կողմից դիտվեր իբրև հույսի ու փրկության ապավեն»[2]:

---

[1] *Աշոտ Հովհաննիսյան,* Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 86:
[2] Տե՛ս *Մ. Կ. Զուլալյան,* նշված աշխատությունը, էջ 53: Տե՛ս նաև «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ» Վաղարշապատ, 1896, էջ 15:

Ասում են ժողովուրդն ընդհանրապես չի սխալվում: Բայց այս դեպքում, ընտրելով չարիքներից փոքրագույնը, մեր կարծիքով, իսկապես սխալվեց: Խեղդվելու պահին նա հարկադրված էր փաթաթվել օձին, նրանից ակնկալելով իրեն դուրս քաշել հեղեղատից: Նա չմտածեց օձի տաքանալուց հետո իրեն խայթելու մասին: Եվ տաքացավ օձը, և խայթեց Անդրկովկասի ժողովուրդներին, հատկապես հայ ժողովրդին, նրա մի մեծ հատվածին *խեղդամահ անելով մայր Արաքսի* կոհակների մեջ: Սրբազան գետը դարձավ հայոց գերեզման, կարգադրողն էր Աբբաս Առաջինը, կատարողները իրանական զորքերը:

1587 թ. իրանական թույլ ու երերուն գահին բազմեց Աբբասը, որը շուտով ստացավ շահ Աբբաս I (1587-1629), նույնիսկ Աբբաս մեծ տիտղոսները: Նա ծնվել էր 1571 թ., հոր՝ շահ Խուդաբենդեի գահակալության վերջում ստանձնել Խորասանի փոխարքայի պարտականությունները, հենարան ընտրելով Ատրպատականն ու ատրպատականցիներին: Ստամբուլի պայմանագրով Ատրպատականը թուրքերի կողմից խլելուց հետո շահ Աբբասը Իրանի մայրաքաղաքը Ղազվինից տեղափոխեց Սպահան, ապա սկսեց երկրում անցկացնել մի շարք բարեփոխություններ: Շահը, Թուրքիայի օրինակով, արմատապես վերակառուցեց Իրանի բանակը, լրացրեց նրա զինատեսակները: Երկրի ներքին վիճակը կայունացնելու նպատակով նա սահմանափակեց քոչվորական ցեղերին, հատկապես ղզլբաշներին ու թուրքական ցեղախմբերին պատկանող ազնվականության իրավունքները՝ երկրի կառավարման պրոցեսում, նրանց փոխարինեց բուն իրանական վերնախավով[1]:

Շահ Աբբասը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց արևմտաեվրոպական շատ պետությունների, հատկապես Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Իսպանիայի, Հոլանդիայի հետ: Եվրոպան Իրանին ու նրա շահին հակադրում էր իրենց համար վտանգ ներկայացնող օսմանյան Թուրքիային և նույնիսկ խորհուրդներով նրանց քաջալերում էր նոր նվաճումներով վերադարձնել Ստամբուլի հաշտությամբ կորցրած երկրները: Շահ Աբբասը ամրապնդեց երկրի ներքին դրությունը, տնտեսապես հզորացավ, իր կողմը թեքեց խոշոր, հատկապես մետաքսի հայ վաճառականներին, պետական գանձարանը հարստացրեց և դրա հաշվին մեծացրեց բանակի թիվը: Օգտվելով այս անգամ Թուրքիայում ծավալված պալատական երկպառակություններից, շահն սկսեց իր նվաճումները, որոնք նրա տերությանը բերեցին նախկին փառքն ու հզորությունը: Նա 1603-1604 թթ. վերագրավեց Թավրիզը, Նախիջևանը, Զուղան, Երևանը, սակայն թուրքերի առաջ-

[1] Տե՛ս ՀՍՀ, հ.1, 1974, Երևան, էջ 16. *Տ. Հակոբյանի* «Աբբաս I մեծ» հոդվածը:

խաղացման հետևանքով նահանջեց Թավրիզ, կողոպտելով Հայաստանի գյուղերն ու քաղաքները[1]:

1603 թ. Շահն անցավ Արաքս գետը և աներևակայելի ջերմ ընդունելության արժանացավ Զուղա քաղաքի հայ մեծահարուստ վաճառականների կողմից: Երբ նա վայելում էր հայերի հյուրասիրությունը Զուղայում, լուր ստացավ, թե Թավրիզի բերդն արդեն հանձնվել է: Շահն անմիջապես մեծ բանակով շարժվում է դեպի Երևան, որն այդ ժամանակ երեք բավական ամուր բերդեր ուներ: Քաղաքի պաշարումը տևեց ութ ամիս, որից հետո, 1604 թ. հուլիսին նա գրավելով այն, թալանեց, կողոպտեց և գոհունակությամբ անցավ Կըրխբուլաղի ամառանոց, ուր, կարճատև հանգստից հետո, բարձրացավ Գեղարքունյաց լեռները[2]: Սակայն կարճ ժամանակ անց, Շահը անակնկալ հարձակվեց Շորագյալի վրա, գրավեց նրա անառիկ բերդն ու շարունակեց իր սիրած զբաղմունքը՝ թալանը Շիրակի դաշտավայրի գյուղերում:

Թուրքիան կարծես «քնից արթնացավ»: Թուրքական բանակը, *Զղալ-օղլի Սինանի* փաշայի գլխավորությամբ, հանգրվանեց Մշո դաշտում և պատրաստվում էր արշավել Երևանի վրա: Շահ Աբբասը առայժմ չուզենալով ճակատամարտ տալ թուրքերին, որոշեց Երևանի ու Նախիջևանի վրայով շարժվել դեպի Թավրիզ: Սակայն այստեղ ի հայտ եկան Շահի անսահմանափակ դաժանությունները: Նա հրամայեց ավերել իր ճանապարհին ընկած բոլոր գյուղերն ու քաղաքները, այրել հացահատիկով ցանված արտերը, իսկ բնակչությանը բռնագաղթեցնել Արարատյան դաշտ: Մի քանի շաբաթում Թավրիզից մինչև Էրզրում, Կարսից մինչև Վան ու Դիարբեքիր վերածվեցին անմարդաբնակ անապատների: Հիշատակագրողը 60 հազար մարդ է թվագրել Արարատյան դաշտ բռնագաղթվածներին, չհաշված սպանվածները և սովից մահացածները[3]:

Պարսից պալատական պատմիչ *Իսքանդար Մունշին* այդ պրոցեսն այսպես է ներկայացնում. «Այդ ժամանակ... շահը, թշնամուն նեղը դնելու և պարտության մատնելու նպատակով, հաղթական զինվորներին գունդ առ գունդ, ջոկ առ ջոկ ուղարկեց Ղարսի ու Զարիշատի երկրները, որպեսզի նրանք այրեն ու ոչնչացնեն այդ կողմերի հացահատիկն ու արոտավայրերը: Որոշվեց, որ այն ճանապարհներում, որոնցով պետք է անցնեն զորքերը, չեն վայրերը ամայացվեն, իսկ դաշտերում եղած ցանքսերից, արոտավայրերից ու բնակավայրերից ոչ մի հետք չմնա: Այդ կողմերի այն ռայաթներին, որոնք կողմնակից են թուրքերին և կդիմադրեն ու չեն ցանկանա քոչել այս կողմ, անխնա

[1] ՀՍՀ, հ. 4, էջ 282:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 97:

[3] Տե՛ս *Աշոտ Հովհաննիսյան,* Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, 1959, էջ 83:

կերպով կողոպտել ու կոտորել: Հաղթական զինվորներն այս հրամանն ստանալուց հետո առաջացան մինչև Հասան-Ղալա, որը գտնվում էր Ղարսի ու Էրզրումի արանքում և անխնա կերպով ասպատակեցին, կողոպտեցին, ավերեցին ու հրկիզեցին ցանքսերն ու արոտավայրերը և *շուրջ 2-3 հազար ընտանիք հայեր* ու քոչվոր ցեղեր... քշեցին ու բերեցին այս կողմ և որտեղից որ ուղարկեցին Արազ (Կենտրոնական Իրան): Նրանք իրենց հետ բերեցին նաև 20 հազար ոչ բնիկ ժողովուրդ, որը կըզըլբաշների մոտ մահմեդականություն ընդունեց»[1]:

Օսմանյան բանակի անցնելիք երթուղիները անապատի վերածելու, նրան պարենից և այլ հնարավորություններից զրկելու նպատակ հետապնդող այս գաղթը, որը պատմության մեջ իրավամբ «Մեծ սուրգյուն» անվանումը ստացավ, շատ ծանր նստեց Անդրկովկասի բոլոր ժողովուրդների վրա: Մեր ժողովրդի ողջ անցյալի մեջ, իր դաժանությամբ ու չափերով նախընթացը չունեցող այս ահռելի գաղթաշարժը, որը ժամանակակիցների կողմից կոչվեց մեծ գաղթ, կործանարար եղավ նրա պատմական հետագա ճակատագրի համար[2]:

Մայր Հայաստանի, հատկապես նրա արևմտյան հատվածի գրեթե բոլոր նահանգները վերածվեցին արյան ու արցունքի հովիտների: Պարսից հրոսակները ամպրոպի արագությամբ շրջում էին հայկական շեն ու բարգավաճ գավառներով, ոչնչացնում ամեն ինչ, հեռանալիս, հետևից թողնում միայն ավերակներ: Տարբեր կրոնների պատկանող ժողովրդի հոծ զանգվածներին ոչխարի հոտի նման քշում էին դեպի Արաքսի այս ափերը, որպեսզի հետո ուղարկեին իրանական տափաստանները: Հրամայված էր տեղահանել բոլորին, հաշվի չառնելով սեռը, տարիքը, դավանանքը: Խորամանկ շահը դրանով ծրագրել էր բուերի բույն դարձնել այն ճանապարհը, որով իրեն հետապնդելու նպատակով պիտի շարժվեին թուրքական զորքերը: Նա երևի հասկանում էր, որ աննախադեպ այդ դաժանությամբ պատժում էին ոչ միայն օսմանցիներին, այլև տեղաբնիկ ժողովուրդներին:

Մանվել Զուլալյանը հայ և օտար հեղինակների աշխատություններից բազմաթիվ փաստեր է բերում, ցույց տալով, թե ինչպիսի աներևակայելի, անմարդկային, հրեշավոր ծրագրեր էր «իրականացնում» շահը, և զզլբաշները ի՜նչ դաժանությամբ էին վարվում բռնագաղթվածների հետ: Նա բերում է իտալացի ճանապարհորդ, երևի դեպքերին ականատես, Դելլա Վալլենի հետևյալ տողերը.

«Ինչպիսի՜ դժբախտությունների տեղիք տվեց այս ողբերգական տեղահանումը, ինչպիսի՜ սպանությունների, ինչքան մարդիկ մահացան սովից, ինչպիսի՜ հափշտակումներ, աղջիկների ու կանանց բռնաբարումներ, ինչքա՜ն երեխաներ հուսահատության պատճառով խեղդվեցին կամ ջրահեղձ արվեցին իրենց հարազատ հայրերի աչքի առաջ, այլք սպանվեցին պարսիկ ղեկավարների կողմից կամ խլվեցին իրենց մոր կրծքից ու նետվեցին փողոցներն ու ճամփաները դառնալու համար կենդանիների սնունդ կամ տրորվեցին բանակի ձիերի և ուղտերի ոտքերի տակ մի ամբողջ օր: Հայրերի իրենց երեխաներից, ամուսինների իրենց կանանցից, եղբայրների իրենց քույրերից, ինչպիսի՜ դժոխային բաժանում, որոնք ուղարկվեցին Պարսկաստանի հեռավոր նահանգները, հույս չունենալով այլևս իրար գտնելու: Կազմվեցին մարդկանց ու կանանց ճամբարներ, որոնց զգալի մասը էժան գնով վաճառվեցին իբրև անասուններ»[1]:

Պարսից զինվորների շառաչող մտրակի հարկադրանքի տակ, մեծաքանակ զոհեր տալով, գաղթականների այդ հոծ բազմությանը, բառի բուն իմաստով, նետեցին վարարած Արաքս գետը: Խեղդվողները խեղդվեցին, փրկվողները առափնեցին Իրանի հողում և արագորեն քշվեցին երկրի խորքերը: Դրանց մեջ մեծ թիվ էին կազմում տարագիր հայերը: «Ականատես իսպանացի հեղինակ Գուզման 100 հազար մարդ է հաշվում այդ պահին ստրկության վաճառահանվածների քանակը: Նա չափազանց չէր համարում այդ թվաքանակը, քանի որ ասում էր. Հայաստանն ունի բազմամարդ ու բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր: Միայն հենց Երևանի հողում, խոշոր քաղաքներից զատ, կան նաև 1500 գյուղավայրեր, յուրաքանչյուրը 4-5 հարյուր բնակչությամբ»[2]: Մոտավորապես տասը հազար դեռահաս աղջիկներ ու տղաներ մեծահարուստ պարսիկներին տրվեցին իբրև տնային ծառաներ: Չկարողանալով դիմակայել կլիմայական աննպաստ ու փոփոխվող պայմաններին, ոչնչացման վտանգից խույս տալու հույսով, շատերը հարկադրված էին ընդունել *իսլամը:*

Քիչ տանելի պայմաններ ստեղծվեցին Զուղայից, Ագուլիսից, Երևանից բռնագաղթեցված այն խոջաների համար, որոնք բնակության վայր ստացան Արաքսի ձախ ափին փռված Սպահան կոչվող ավանում: Այստեղ ձևավորվեց Նոր Զուղա քաղաքը, որը գոյություն ունի մինչև օրս:

Այդուհանդերձ, միայն Զուղայով չէր փակվում բռնագաղթի վարագույրը: Շահ Աբբասը պատմության մեջ մնաց իբրև արյունախում մի գազան, որը սկզբում խաբեց թուրքահպատակ հայ բնակչությանը, շահեց նրա վստահությունը, հետո ուխտադրժորեն դատաստան տեսավ նրա հետ, բնավեր խլյակ դարձնելով, մարդաթափեց Հայաստանի

---

[1] *Իսքանդար Մունշի,* Թարիխ-ե ալամարա-յե Աբբասի (պարսկերեն բնագիր), հ. Բ, Թեհրան, 1957, էջ 665-666:

[2] *Աշոտ Հովհաննիսյան,* նշված հատորը, էջ 98:

[1] *Մ. Կ. Զուլալյան,* Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, էջ 59-60: Վերոհիշյալ քաղվածքը վերցված է Զուլալյանի մենագրությունից, նրա թարգմանությամբ:

[2] *Աշոտ Հովհաննիսյան,* նշված աշխատություն, էջ 99:

երկու մասերը: Բռնագաղթի ենթարկվածներից բացի, շատերը կամ բարձրացան լեռնածերպեր դիմագրավելու զգլբաշների հորդաներին, կամ էլ ճողոպրեցին դեպի Արևմտյան Եվրոպա, ստվարացնելու վաղուց այնտեղ խարսխված հայկական գաղութներում ապրողների թիվը: Կարծում ենք, ընթերցողն արդեն ինքն կների, երբ սկզբում բանաձևեցի, թե ***Շահ Աբբասի հարցում ժողովուրդն ու նրա առաջնորդները սխալվեցին և ճակատագրական նման սխալի համար շատ թանկ վճարեցին:***

*

* *

Թուրք-իրանական պատերազմները շարունակվում էին, կարծեք թե դառնալով պերմանենտ: 1605-1607 թթ. Շահ Աբբասը, պարտության մատնելով Սինան փաշայի երկու հարյուր հազարանոց բանակին, գրավեց Արևելյան Հայաստանը, Վրաստանի մեծ մասը, Ադրբեջանը, Քյուրդիստանի հարավային մասը և Լորիստանը: 1612 թ. նոյեմբերի 20-ին Ստամբուլում կնքվեց հաշտության պայմանագիր: Թուրքիան հարկադրված էր ճանաչել Շահի նվաճումներն Անդրկովկասում: Սակայն այդ դաշնագիրը ևս, նախկինի նման, երկար կյանք չունեցավ:

1616 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին թվաշատ թուրքական զորքը պաշարեց սկզբում Երևանը, ապա Նախիջևանը: Մուհամմադ փաշան երկու ամիս օղակելով Երևանը, տեսնելով, որ այլևս չի կարող գրավել ամուր բերդը, հաշտության առաջարկով դիմեց շահին: Նա զգլբաշներից խնդրում էր իրեն թույլ տալ նահանջելու էրզրում: Թույլտվություն ստացվեց, սակայն հաշտության հերթական պայմանագիրն ստորագրվեց 1619 թ. սեպտեմբերի 29-ին: Այն վերահաստատեց 1612 թ. գծված սահմանները[1]:

1629 թ. հունվարին մահացած Աբբասին փոխարինած, նրա թոռ շահ Սաֆին հարկադրված էր երկրի սահմանները պաշտպանել թուրքերի նոր ու հաճախակի դարձած հարձակումներից: Շահի մահից ոգևորված սուլթան Մուրադը 1630 թ. գարնանը թուրքական մի մեծ բանակ դնելով Խոսրով փաշայի հրամանատարության տակ, նրան հրամայեց արշավել դեպի Բաղդադ: Արշավանքը վերջացավ անհաջողությամբ[2]:

Թուրք-իրանական հակամարտությունները խիստ կերպարանք առան 1635 թ. ամռանը, երբ սուլթան Մուրադը մեծ բանակով մտավ Արարատյան հարթավայր և պաշարեց Երևանի բերդը: Յոթ օր տևած դիմադրությունից հետո Երևանը հանձնվեց: Թուրքերն առանց դիմադ-

[1] Տե՛ս ՀՍՀ, հ. 4, Երևան, 1978, էջ 262:
[2] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 105:

ության տեր դարձան Մակվի և Բայազետի բերդերին, քիչ անց գրավեցին նաև Թավրիզը[1], ապա ձմեռելու նպատակով ստիպված էին վերադառնալ և ժամանակավորապես հանգրվանել Դիարբեքիրում: Այդ օրերին Արարատյան դաշտում գտնվող շահ Սեֆին 100 հազարանոց բանակով պաշարում է Երևանը և 1636 թ. մարտի 30-ին վերագրավում քաղաքը: 1637-1638 թթ. թուրք-իրանական կռիվները ծավալվեցին Միջագետքում, որի արդյունքում 1638 թ. դեկտեմբերի 25-ին օսմանյան զորքերը մեկ անգամ ևս տեր դարձան Բաղդադին[2]:

Երկու տերություններն էլ արդեն ձանձրացել էին պատերազմներից, երկու ժողովուրդներն էլ ծարավի էին խաղաղության: Մանավանդ, հաճախ ծայր էին առնում հակապետական ապստամբություններ, միջֆեոդալական կռիվներ: Հաշվի առնելով ներքին և արտաքին աննպաստ պայմանները, ***«աստվածապետական»*** սկզբունքներ փայփայող օսմանյան Թուրքիայի առաջարկով, սկսվեցին բանակցությունները հաշտություն կնքելու նպատակով:

1639 թ. մայիսի 17-ին Իրանի շահ Սեֆին և Թուրքիայի սուլթան Մուրադ IV-ը Կասր-ե Շիրինում կնքեցին հաշտության պայմանագիր, որին այնքան սպասում էին ինչպես Թուրքիայի ու Իրանի բռնակալական լծի տակ տանջվող մյուս ժողովուրդները, առավել ևս, հայ ժողովուրդը: Այդ պայմանագիրը լուրջ վերանայումներ չէր կատարում 1515 և 1555 թթ. գծված սահմանների վրա: Այն փաստորեն վերջնականապես հաստատում էր թուրք-իրանական սահմանագիծը, որը գրեթե անփոփոխ մնաց մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (1828 թ.):

Կասր-ե Շիրինի պայմանագրով Հայաստանը ***երկփեղկվում էր*** երկու բռնապետությունների միջև: ***Արևելյան Հայաստանը*** մնում էր Իրանին, ***Արևմտյան Հայաստանը*** ընկնում էր օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Հայաստանը բաժանող սահմանագիծը սկսվում էր Ջավախքի լեռներից, Չըլդըր լճից, արևելյան փոքր լեռնաշղթայով հասնում Ախուրյանի վերին հոսանքը, իջնում մինչև Ախուրյանի և Արաքսի միացման վայրը, Արաքսի հոսանքն ի վեր թեքվում և, Կաղզվանին չհասած, իջնում հարավ դեպի Հայկական Պար լեռնաշղթան, որի ջրբաժան գծով շարունակվում դեպի արևելք, Մասիսներից արևմուտք միանում Վասպուրական լեռներին և ապա, ուղիղ գծով իջնելով Զագրոս լեռնաշղթայով, անցնում թուրք-իրանական ներկա սահմանագծով:

Շահական Պարսկաստանին էին անցնում Հայաստանի Սյունիք, Արցախ, Ուտիք, Փայտակարան, Պարսկահայք նահանգները, Այրարատի, Գուգարաց աշխարհի և Վասպուրականի արևելյան գավառնե-

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 106:
[2] Տե՛ս *Մ. Կ. Զուլալյան*, նշված աշխատությունը, էջ 70-71:

ը: Վերջին երեք նահանգների արևմտյան գավառների հետ միասին *օսմանյան Թուրքիայի* տիրապետության տակ ընկան Տայքը, Տուրուբերանը, Աղձնիքը, Մոկքն ու Կորճայքը, Բարձր Հայքը, Չորրորդ Հայքն ու Կիլիկիան[1]:

Ինչպես տեսնում ենք, հետագա հարյուրամյակներում, ռուսական զենքի օգնությամբ, Արևելյան Հայաստանի գերակշռող մասը (բացի Պարսկահայքից Խոյ, Սալմաստ, Մակու և այլն) ազատագրվեց Պարսկաստանի տիրապետությունից, և նրա տարածքում է այսօր ստեղծվել Հայաստանի անկախ Հանրապետությունը: Նախիջևանն ու Օրդուբադի օկրուգը, Շարուրը հայաթափվելով՝ դեռ մնում են Վ. Ի. Լենինից «նվեր ստացած» Ադրբեջանին:

Արևմտյան Հայաստանի շուրջ *300 հազար քառ. կմ* տարածքը գտնվում է օսմանյան Թուրքիայի գերիշխանության տակ: Հայ զանգվածը, շուրջ 400 տարի ենթարկվելով դժոխային տանջանքների, ի վերջո, ցեղասպանության վայրենի, անմարդկային մեթոդներով ոչնչացվեց, երկիրը հայազրկվեց: Ահա այդ սահմռկեցուցիչ տեսարանների համառոտ պատմությանն է նվիրված մեր մենագրության հետագա շարադրանքը:

[1] Սահմանագծին մանրամասն անդրադարձել է *Հակոբ Փափազյանը*: Վստահելով նրա հմտությանն ու լեզվիմացությանը, մենք նպատակահարմար գտանք, առանց որևէ էական փոփոխության, վերաշարադրել և դնել այստեղ: Տե՛ս «Սովետական Հայաստան», 1987, Երևան, էջ 124: Տե՛ս նաև ՀՍՀ, հ. 4, էջ 262, «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 245:

Գլուխ երրորդ

Սոցիալ-քաղաքական վիճակն Արևմտյան Հայաստանում XV-XVIII դարերում

ՕՍՄԱՆՅԱՆ կայսրությունը, ձևավորվելով XV-XVI հարյուրամյակներում, հանդիսանալով երկարատև ու արյունահեղ պատերազմների արդյունք, ուներ ռազմաֆեոդալական, բռնապետական բնույթ: Թուրքիան արշավանքների, ավերածությունների, ահ ու սարսափի մեթոդներով, չխնայելով տեղական ոչ մի ժողովրդի, ոչնչացնելով երկու սեռերի, բոլոր տարիքի ու ազգության պատկանողներին, հիմնեց մի ընդարձակ տերություն, որը հասնում էր առասպելական մեծության: Օտտոմանյան պետությունը, փռված լինելով երեք աշխարհամասերի՝ Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի տարածքի վրա, իր մահասփյուռ ու ջղաձիգ բազուկների մեջ էր առել ողջ Բալկանյան թերակղզին, մերձդանուբյան երկրների մեծ մասը, Սև ծովի առափնյա շրջանները, Ղրիմի թերակղզին, արաբական երկրները, Աֆրիկայի հյուսիսային հատվածը, Փոքր Ասիան, Արևմտյան Հայաստանը և այլն[1]:

Ահռելի այդ տերությունը ղեկավարելու գործում առաջին սուլթանների համար մեծ դժվարություն էր ներկայացնում այնպիսի ճկուն համակարգի ստեղծումը, որը կարողանար ապահովել զարգացման տարբեր մակարդակներ ունեցող ժողովուրդների ունեցվածքի ու եկամուտների հաշվառումը, տեղական կառավարումը, հարկապահանջությունը[2]: Եվրոպան դրա համար նախատիպ չուներ: Ուստի նրանք հետազոտեցին սելջուկ թուրքերի, մոնղոլների, Լանկ-Թեմուրի, այ-

[1] Տե՛ս *Е. К. Саркисян*, Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв. Ереван, 1972, стр. 17-18:

[2] Տե՛ս "Аграрный строй Османской империи XV-XVII вв". Документы и материалы, составление, перевод и комментарии *А. С. Тверитиновой*, Москва, 1963, стр. 11-14:

սինքն նախորդ բոլոր թուրքերի, այո, թուրքերի ստեղծած կառավարման համակարգը, *կատարելագործեցին* գարշելի խստությունների իմաստով և սկսեցին գործադրել XV-XVII դարերում, սակայն անընդմեջ փոփոխություններով:

Թուրքական օրենսդրությամբ պետության գերագույն սյուզերենը սուլթանն էր, որը ղեկավարում էր երկրի աշխարհիկ գործերն, ուներ անսահմանափակ իշխանություն, միաժամանակ դիտվում էր իբրև մահմեդական աշխարհի հոգևոր պետը[1]:

«Սուլթանն իբրև ալլահին շուքն երկրի վրայ,- գրում է Սահակ Տեր-Մովսիսյանը,- կը համարէր թէ իր թագն Աստուծմէ ստացած է, և ուստի միահեծան տէր էր քաղաքական ու կրօնական խնդիրներու մէջ, պետ համօրէն պետութեան և *մեծ Իման* մահմեդական կրօնին, և ասոր համար կը կոչուէր *Փատիշահ, Սուլթան, Հիւնքեար,* այսինքն թագաւոր, տէր և իշխան կայսրութեան և ըստ կամս տնօրինող իր հպատակաց ինչքին, ազատութեան, կեանքին:

Իբրև *Խաքան* կամ *Խան,* միահեծան կայսր կամ ինքնակալ էր ծովու և ցամաքի, և իբրև «Ամիրապետ», *Խալիֆա,* Մահմետի փոխանորդն էր, և հետևաբար միւսիլման կրօնին մեծ Իմամն էր: Սուլթանի *յաստուածային իրաւանց* ոչ ոք կարող էր հակակշռել և սահմանափակել իր իշխանութիւնը:

Իբրև բացարձակ տէր, Սուլթանին կամքն էր միայն կենդանի իրաւունքն և կենդանի օրէնքը: Փատիշահը ճշմարտապէս կրնար զրուցել Թագաւոր-Արևուն պէս. «Բովանդակ պետութիւնն իր մէջն էր, ժողովրդեան կամքն իր սրբազան կամքին մէջ ամփոփուած էր»: Հետևաբար, Փատիշահն ուզածին պէս կը ծախսէր պետական եկամուտը, կը հրատարակէր պատերազմը, կը կնքէր խաղաղութեան դաշինքը, կը կապէր դաշինքներն երբ և ինչպէս որ իրեն հաճելի էր:

Այդ բացարձակ միապետութիւնն *ինքնօրէն* էր: Ան կարող էր վերջ դնել իր հպատակներուն *կենաց* և *ազատութեան* և անոնց ինչքը *յարքունիս գրաւել*: Սուլթանական մէկ ակնարկով կամ արքունի հրամանագրով մը, *ֆէրման*... ան կարող էր աքսորել, բանտարկել, թունաւորել, խեղդել կամ սպանել տալ զով որ ուզէր, մինչև իսկ իր զաւակները: Քիչ չէ թիւն այն սուլթաններուն որոնք վարագուրի մը ետև ծածկուած, անկարեկիր ներկայ գտնուեցան իրենց եղբայրներուն բնաջինջ կոտորածին: Այդ եղբայրասպան կոտորածը սկզբունքի և օրէնքի կարգն անցած էր, պետական նուիրագործուած օրէնք մը. հարկ էր գահն ապահովել յանդուգն թագապահանջի մը փորձերէն և Կայսրութիւնը փրկել քաղաքական պատերազմի մը աղետներէն»[2]:

[1] Սանրամասն տես Հ. *Սահակ Տէր-Մովսէսեան,* Պատմութիւն Հայոց սկիզբէն մինչև մեր օրերը, հ. Բ. Վենետիկ - ս.Ղազար, 1924, էջ 678-679:

[2] Նույն տեղը:

Ժառանգաբար գահ բարձրացող սուլթանները նախորդ դարերում վարում էին չափազանց պարզ կենցաղ, քնում էին վրանների տակ, իսկ պատերազմների պահին առաջնորդում աշխարհասասան բանակները, մասամբ և որի մեջ էր գուցե նրանց հաղթանակների գրավականը:

XVII-XVIII դարերում անցյալի սուլթաններից քիչ բան էր մնացել և այս տեսակետից նրանք դարձել էին անճանաչելի: Սուլթաններն այժմ իրենց շուրջը հավաքած «խռնված բամբիշներ», բազմամարդ կանանոցներ, հարճերի բազմություններ, տարված մեղկ ու շվայտ կյանքով, հազվադեպ էին դուրս գալիս հարեմներից: Բայց եթե տարին մի քանի անգամ, մեծ թափորով, պալատից դեպի «ժողովուրդը» դուրս գալով կամ ամեն ուրբաթ օր մզկիթը ծիսակատարության գնալիս լինեին, երթուդարձին նրանք անցնում էին կրկնակի սյունաշարքի միջով, որոնք սրանց երեսը ծածկում էին հպատակների խռոված հայացքներից:

Սուլթանն ուներ բազմամարդ արքունիք, արքունի թիկնապահ գնդեր, ոստիկաններ, թեթևազեն հեծյալներ, հետևազոր-առնաուտ գնդեր, դաշույններով զինված բազմահազարանոց ենիչերիների բանակ, անհամար բազմությամբ սենեկապետեր, նաժիշտներ, աղախիններ, մանկլավիկներ, ջրկիրներ, փայտահատներ, սպիտակ ու սևամորթ ներքինիներ, ախոռապետեր, 770 պարտիզպաններ, որսորդներ, բարակապահներ: Ահա այս էր օսմանյան արքունիքը, որը և գերեզման էր դառնում մահմեդական աշխատավորությանը, առավել ևս հպատակ այլազգիներին, հարկային ու սոցիալական ծանր բեռի տակ կքում նրան, կորացնում գյուղացու մեջքը:

Սուլթանի օգնականը, երկրի փաստական ղեկավարը մեծ վեզիրն էր կամ սադրազամը, որը զորքերի գլխավոր հրամանատարն էր թե խաղաղության և թե պատերազմի պահին: Նա էր տնօրինում երկրի ֆինանսական, դատական գործերը, կարևոր խնդիրներում միշտ վճռական կարծիքը վերապահելով փադիշահին: «Քաղաքական իշխանութեան փոխանորդ կարգեր էր Մեծ Եպարքոսը, *Սադրազամը* կամ *Մեծ Վէզիրը,*- գրում է Սահակ Տեր-Մովսիսյանը,- որ էր իբր փոխարքայ, զի իշխան և հրամանատար էր ներքին ու արտաքին գործոց, և տեսուչ պետութեան ամէն իրադարձութեանց. կարգադիր պետական ելևմուտքին և ցամաքի ու ծովու ուժերուն. ան հսկող էր ժողովրդեան իրաւունքներուն և քննիչ խորհրդականաց խորհուրդներուն. ան էր որ արժանաւորները կը վարձատրէր և յանցաւորները կը պատժէր, ամէն բան գործելով ի դիմաց արքային, և ասոր համար կը կոչուէր *Վէքիլի մուրլաք,* և կը կրէր *արքունի կնիքը*...»[1]:

Կային նաև պատերազմական-ռազմական մինիստր *մեծ սերասքյար,* մեծ ծովակալ *Քափուտան* փաշան, արդարադատության նա-

[1] *Սահակ Տէր-Մովսէսեան,* նշված աշխատությունը, էջ 689:

խագահ - *Ռեյիսի ահքյամի ադլիե*, ելևմուտքի տնօրեն - *մալիե նազրրի*, արտաքին գործերի նախարար - *խարիջիե նազրրի*[1]:

Մահմեդական կրոնի գծով սուլթանի տեղակալն էր *Դենպետը*, Շեյխուլ իսլամը, «գլուխ գիտնականաց դասին», օրինապահ Մուհամմեդի ուսմունքի տարածման, հոգևոր օրենսդրության: *Ֆեթվայի* շերիֆը գերագույն դատավորն էր, մահմեդական օրենքի միակ վճռատուն: Այս բոլոր նախարարները միասին մեծ եպարքոսի, իսկ նրա բացակայության դեպքում Դենպետի գլխավորությամբ կազմում էին *դահլիճ, դիվան*, կամ *Բաբը-Ալի՝ Բարձրագույն Դուռ:*

Սուլթանից ու նրա պալատականներից բացի, պետության բարձրաստիճան պաշտոնյաներից էին նահանգապետերը՝ փաշաները, որոնք անմիջականորեն էին շփվում գավառահայության հետ, փադիշահի ամեն մի հրամանը կիրառում նրա հպատակ երկրահատվածներում: Ինչպես փաշայությունները, այնպես էլ նրանց վարիչները բաժանվում էին երեք կարգի՝ միհերձանի (մեկդուղ), երկհերձանի, եռհերձանի[2]: Այս չափը պայմանավորում էր միավորի ռազմաստրատեգիական դիրքը, հզորությունն ու տնտեսական կարևորությունը: Հայաստանի մասերը կազմող փաշայությունների մեջ ամենախոշորը *Էրզրումն էր՝ Կարինը*, որի ամենահեղինակավոր փաշան սերասքյարության իրավունք ուներ: Ախալցխայի, Կարսի, Էրզրումի, Բայազետի, Վանի փաշաները հպատակվում էին Կարինի եռհերձանի սերասքյար փաշային[3]:

Էրզրումի սերասքյար փաշան օժտված էր անսահմանափակ իշխանությամբ, նշանակում ու հանում էր քաղաքացիական ղեկավարներին, հավաքում զորքեր, հաստատում կամ մերժում դատավճիռներ:

Սերասքյարության ենթակա մյուս փաշաները ևս ինքնակալ էին, սակայն մահվան դատավճռի հաստատման կամ մերժման պատիվը պատկանում էր սերասքյարին, որի նստավայրը Էրզրումն էր: Ակներև է, որ բոլոր փաշաները, անկախ փաշայության մեծությունից ու փոքրությունից, «ունեին ոչ միայն քաղաքացիական, այլև զինվորական իրավունքներ ու պարտականություններ»[4]:

Փաշայությունները բաժանված էին *սանջակների* կամ *լիվաների:* Վարչական այս ավելի փոքր միավորները ղեկավարում էին *սանջակբեյները* կամ *միրիլիվաները:* Եթե փաշաներն առանց միջնորդ

[1] *Սահակ Տեր-Մովսիսեան,* նշված աշխատությունը, էջ 690:
[2] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 113-119: Տե՛ս նաև Աշխարհագրութիւն, հ. Ե, 1804, էջ 96-97:
[3] ԽՍՀՄ կենտրոնական պետական ռազմապատմական արխիվ (այսուհետև՝ ԽՍՀՄ ԿՊՌՊԱ), ֆոնդ ՈԳԱ, գործ 4643, 1830, թերթ 1-2:
[4] Ռուսաստանի կայսրության արտաքին քաղաքականության արխիվ (այսուհետև՝ ՌԿԱՔԱ), Մոսկվա, Գլխավոր արխիվ, գործ 13, մասն 7, թերթ 13:

օղակի կամ Էրզրումի սերասքյարի միջնորդությամբ էին կապված սուլթանի հետ և իրավաբանորեն պարտավոր էին կատարել նրա հրամանները, ապա սանջակբեյները, ճիշտ է, նշանակվում էին Բ. Դռան կողմից, սակայն նրա հետ հարաբերությունների մեջ էին նահանգապետերի միջոցով[1]: Լիվաները բաժանվում էին *կազաների* (գավառ), որոնց կառավարիչները կոչվում էին *կայմակամներ*, կազաները տրոհվում էին *նահիեների* (գավառակ), կառավարիչները *մյուդիրներ:*

Կառավարման այս համակարգը, կառավարիչներն ու վարչամիավորները հատուկ էին այն փաշայություններին, որոնք թուրքահպատակ էին: Սակայն Թուրքիայի այս մասերի համար էլ ամեն ինչ այնպես չէր կատարվում, ինչպես գրված էր թղթի վրա: Օրենքն ու իրողությունը, եթե նախորդ դարերում գտնվում էին ծայրաբևեռներում, ապա XIX դարի առաջին երեսնամյակին դարձել էին վանողական ուժեր:

Հիերարխիկ սկզբունքով կազմված կառավարչական ապարատի պաշտոնյաներն այժմ արդեն անձնական հատկանիշներով, զինվորական քաջության ու ցուցաբերած խելամտության հաշվառումով չէին նշանակվում: Հիվանդագին հարկերի դասական այդ երկիրը[2], ֆինանսական փակուղու մեջ ընկնելով, ամեն ինչ կատարում էր դրամի ուժով, կաշառակերությամբ, որն, իհարկե, օրինականացված չէր, սակայն կիրառվում էր անխտիր ձևով, առանց բացառությունների: Փաշայի իրավունք ստանալը գնալով մեծ գումարների հետ էր կապվում:

Պետության գանձարանը, որը երբեմն լցվում էր պատերազմների, ավարառության, թալանի միջոցով ձեռք բերած գումարներից, այժմ զրկվելով նախկին հասույթներից, աստիճանաբար դատարկվում էր: Ընդհակառակը, մեծանում էին սուլթանի, նրա բազմանդամ հարեմի, մեղկության սովոր պալատականների պահանջներն ու ծախսերը: «Սուլթանի բերան» կոչված ճաշասենյակներում, պալատներում օրական 500 սեղան էր բացվում: Կանանց սպասարկելու համար տարին 400 հազար ոսկյա ֆրանկի[3] (մոտավորապես 1,6 միլիոն թղթադրամ) միայն շաքար էր սպառվում:

Հետագայում սուլթանի ու նրա պալատականների ծախսերն ահռելի գումարի հասան: Աբդուլ Ազիզն ուներ 21 պալատ, որոնց վրա տարեկան ծախսում էր 358 հազար 915 ֆրանկ: Այդ պալատների վերակացուների թիվը հասնում էր 409 հոգու: Միայն գլխավոր պալատում՝ Դոլմա-Բախչեում, տարեկան վառվում էր 520 հազար ֆրանկի արժողությամբ փայտ և 140 հազար ֆրանկի քարածուխ: Սուլթանի «ընտանիքը» բաղկացած էր 6500 մարդուց: Սրանք տարեկան ուտում էին 400 հազար ոչխար, 100 հազար գառ՝ ընդհանուր գումարով 1,085,600

[1] ԽՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆոնդ ՈԳԱ, գործ 4643, թերթ 1-2:
[2] *Վ. Համբարձումեան,* Գիւղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 34:
[3] *Սահակ Տեր-Մովսիսեան,* Պատմութիւն Հայոց, էջ 686 և հետո:

ֆրանկ: Հարեմի սպասարկուների ռոճիկը 1,035,900 ֆրանկ էր, իսկ ներքինիներն իբրև բյուջե ունեին 13,542,000 ֆրանկ[1]:

Պատերազմները, միջցեղային կռիվները, բանակը, ենիչերիների զորագնդերի պահանջները, ռոճիկի բարձրացման համար ապստամբվելու սպառնալիքները միայն վայելքներով տարված, անարտադրող թուրք վերնախավին, նրանց ղեկավար սուլթանին ստիպում էին քամել ժողովրդից այնքան, որքան հնարավոր էր: Սակայն աշխատավորության կողոպտումը կատարվում էր ուղղակի և անուղղակի ճանապարհով, փաշաների և այլ պաշտոնյաների ձեռքով: Սուլթանը վերցնում էր փաշայից այնչափ, որչափ իրեն անհրաժեշտ էր, իսկ թե նահանգապետն ինչպես կվարվեր հպատակների հետ, առաջինին այլևս չէր հետաքրքրում:

Թուրքիայում կաշառքով փաշաներ նշանակելը այնքան հրապարակային ու սովորական էր դարձել, որ պաշտոններն արդեն աճուրդի էին հանվում: Եվ պաշտոնյան, մի անգամ կատարելով իր հավատարիմ հպատակության պարտքը, չէր կարող ապահով լինել, թե երկար կպաշտոնավարե: Ամեն տարի, Բայրամի տոնին, նա պարտավոր էր վերանորոգել իր լիազորությունը. և եթե շատ էր սակարկություն անում, պաշտոնն անցնում էր մեկ ուրիշին նրան, ով ավելի առատաձեռն կլիներ[2]:

Քրիստոնյաներն իրենց երկիրը ղեկավարելու, բարձրապատիվ, եկամտաբեր բոլոր տեսակի պաշտոններ վարելու իրավունքից զրկված էին: Փաշա կամ այլ կառավարիչ նշանակվում էին միայն մահմեդականները, որոնք անձնական կալվածքներից ստացած հասույթներից անկարող էին միանգամից հատուցել այդ հսկայական գումարները: Սրանք ստիպված դիմում էին Կալաթայում ոսկե սնդուկների դիմաց ծալապատիկ նստած ամիրաներին ու սարաֆներին (սեղանավորներ), պայմանագիր կնքում, բարձր տոկոսներով դրամ վերցնում, վճարում պետական գանձարանին և մեկնում երկրամասը բնական է ոչ թե ղեկավարելու, այլ կողոպտելու[3]: Ապացույցի հարկ չկա, որ սուլթանի գանձարանը, ամիրայի ու փաշայի գրպանը, ցածրաստիճան պաշտոնյաների անհագուրդ ախորժակը հագեցնում էր, միաժամանակ բոլորին պահում էր գյուղացին, առավել ևս քրիստոնյա, անպաշտպան ու իրավազուրկ ռայան:

Պաշտոնյաներ նշանակելու համար կաշառք էին վերցնում ոչ միայն սուլթանները, մեծ վեզիրները, վալիդե (մայր) սուլթանը, այլև փաշաները, նրանց ստորադրյալները, ամեն մեկը ինչքան կարող էր շատ,

[1] Տե՛ս «Փորձ», 1876, էջ 256 և հետո:

[2] *Լեո,* Հայոց պատմություն, հ. 3-րդ, Երևան, 1946, էջ 56:

[3] Տե՛ս *Ա. Ներսիսյան,* Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրիենտացիան, Երևան, 1962, էջ 10-11:

որպեսզի նախ գոհացներ արքունիքին, ապա իրեն էլ «բաժին մնար»: «Թուրքիան մի երկիր է, ուր տիրապետում է սարսափը, ուր ոչ ոք համոզված չէ իր ունեցվածքի և գլխի ապահովության համար, ինչ որ ղադի կարող է ձեզ բանտ նետել, որովհետև նա այդպես է ցանկանում... Անիրավությունները և կաշառակերությունը Թուրքիայում առասպելական չափերի են հասնում: Բոլոր պաշտոնները գնվում և վաճառվում են, և յուրաքանչյուր ենթակա պարտավոր է որոշակի գումար հատուցել իր պետին: Պետական բարձր պաշտոնյաները տարբերվում են մանր աստիճանավորներից միայն նրանով, որ ավելի շատ են ստանում, և եթե ինչ-որ մի մյուդիր ստանում է տարեկան 60 հազար ղուրուշ, ապա մուշիրը կամ փաշան բավարարվում է ոչ քիչ, քան տարեկան 4 միլիոն եկամուտով: Նման կարգերի պայմաններում ցածր աստիճանավորները... ձգտում են պակասը լրացնել ժողովրդի հաշվին և ծծել նրանից այն ամենը, ինչ կարելի է: Աստիճանավորների նկատմամբ գանգատները... ոչ մի արդյունքի չեն հասցնում, քանի որ նրանք մեկը մյուսին հովանավորում են»[1]:

Մինչև «Թանզիմաթը», Թուրքիայի վարչակարգերը նեխել էին, դարձել երկրի արտադրողական ուժերի քայքայման, պետության թուլացման, ժողովրդի կեղեքման, հետևաբար և դժգոհությունների ալիք բարձրացնելու գլխավոր պատճառներից մեկը: Սակայն Թուրքիան կամ սուլթանական միահեծանությունը վաղուց ի վեր դարձել էր անվանական հասկացություն: Կայսրության և Անատոլիայի, և Ռումելիայի նահանգներում կային բազմաթիվ ու ընդարձակ մարզեր, գավառներ, որոնք վաղուց ի վեր, առավել ևս XIX դարի ողջ առաջին կեսին, կառավարությանը չէին ենթարկվում, նրան հարկատու չէին և կարող էին զորք տալ կամ չտալ: Արևմտյան Հայաստանի տարածքի վրա դրանք քրդահպատակ շրջաններն էին *դերեբեյությունները, ընդարձակ իշխանապետությունները*[2]:

Երկրի կառավարումը հեշտացնելու նպատակով առաջին սուլթանները սկսեցին վարչական բաժանումներից, վարչակարգերի ձևավորումից: Առայժմ հայտնի է *Ֆրիդրիխ բեկի* կազմած «առաջին» օրինագիծը երկրի վարչական կազմավորումների մասին: Նրա առաջին նախագծի ստեղծման ժամկետն անհայտ է, հայտնի է, որ գործողության մեջ է մտել 1574 թ.[3]: Ըստ այդ օրենքների, սուլթանահպատակ

[1] "Дело" N 4, 1867, Н. Радюкин, Турция, стр. 190-192, տե՛ս նաև *Ա. Ներսիսյան,* էջ 11-12:

[2] *Ա. Ալպոյաճեան,* Պատմական Հայաստանի սահմանները, էջ 439, տե՛ս նաև *Թ. Խ. Հակոբյան,* Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 368-371:

[3] Մանրամասն տե՛ս *Մ. Կ. Զուլալյան,* Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 176-177: Տե՛ս նաև "Современное состояние оттоманской империи", СПб, 1877, стр. 78-79:

տերությունը տրոհվում էր նահանգների-կուսակալությունների (էյալեթների, հետագայում փաշայությունների կամ վիլայեթների): *Միրմիրան* կամ *Բեկլերբեյ* հորջորջված էյալեթի կառավարիչները անձամբ նշանակվում էին սուլթանի կողմից և ստանձնում էին նաև տվյալ երկրահատվածի զինված ուժերի հրամանատարի պարտականությունները[1]:

Թուրքիայի վարչական բաժանումները, պայմանավորված օսմանների նոր նվաճումներով, հողային կալվածքների վերաբաշխումով, փոփոխությունների են ենթարկվել: Առաջին վարչական բաժանումների մասին եղած տվյալները, ինչպես նշեցինք, պահպանվել են թուրք նշանավոր պատմաբան, պետական գործիչ *Ֆերիդուն բեյի* «Սուլթանների գրություններ» աշխատության էջերում: Նույն թուրքերի իսկ կողմից բարձր գնահատված այդ տրակտատը, գրված լինելով XVI դարում, Անդրկովկասի մասին պարունակելով արժեքավոր շատ նյութեր, 1574 թ. ներկայացվել է սուլթան Մուրադ III-ի ուշադրությանը, սակայն զարմանալիորեն արժանանում է անուշադրության[2]: Ըստ Ֆրիդուն բեյի տվյալների, XVI հարյուրամյակում կայսրությունը բաժանվել է 34 էյալեթի, որոնք իրենց հերթին տրոհվել են 242 լիվայի-սանջակի: Բացի դրանցից եղել են 11 հյուլյումեթություն, 2 վոյեվոդություն, 1 էմիրություն, 1 շերիֆություն, 1 խանություն[3]:

XVII դարում Թուրքիայի տարածքն ամփոփող վարչամիավորները փոփոխվեցին, ավելի ճիշտ՝ խտացվեցին: Մուրադ IV (1623-1640) և Իբրահիմ (1640-1648) սուլթաններին հավատարմորեն ծառայող պալատական խոշոր գործիչ *Կոչի բեյը* հաղորդում է, թե իր ապրած ժամանակահատվածում, այսինքն՝ XVII դարամեջին, կայսրությունն արդեն ամփոփում էր 22 էյալեթ, 237 սանջակ[4]: Պալատական գործիչներից Ալի Չաուշը 1653 թ. հաղորդում է, թե կայսրությունը վարչական, հերթական բաժանման ենթարկվեց: Այս անգամ այն բաժանվեց 32 էյալեթի և 247 սանջակի[5]:

Բնականաբար, ընդհանուր տերության վարչական բաժանումների հարատև փոփոխությունների հետ միասին, պիտի որ վերանվեին նաև Արևմտյան Հայաստանի վարչամիավորները: Ըստ նույն *Ֆերիդուն բեյի* հաղորդած տվյալների, Արևմտյան Հայաստանը այդ ժամանակ տրոհվել էր *Էրզրումի, Չըլդրրի, Վանի, Կարսի, Դիարբեքիրի, Սվազի* (Սեբաստիա) էյալեթների: Հայկական որոշ գավառներ մտցվել էին Կեսարիայի մեջ: Ճիշտ է, Հայկական Կիլիկիան փաստապես դեռևս գտնվում էր աֆշար ցեղապետերի տիրապետության տակ, սակայն անվանապես ենթարկվում էր Թուրքիային և բաժանված էր Ադանայի և Մարաշի էյալեթների[1]:

Ալի Չաուշի շարադրանքը Հայաստանի վարչամիավորների մասին համարյա կրկնում է իր նախորդներին, այն է. հայկական էյալեթներն էին *Դիարբեքիրը, Սվազը* (Ռում), *Էրզրումը* (Կարին) *Կարսը, Չըլդրրը, Վանը:* Զարմանալիորեն երկուսի մոտ էլ Տրապիզոնի և Բայազետի մասին խոսք անգամ չկա: Հայկական Կիլիկիան արտահայտված է Ադանայի էյալեթով[2]:

Ինճիճյանի հաղորդմամբ XVIII դարի վերջին կազմավորվել է նաև Բայազետի էյալեթը[3]:

Արևմտյան Հայաստանի մաս կազմող էյալեթները բաժանվում էին *սանջակների* կամ *լիվաների:* Ըստ որում, վարչական այս փոքր միավորների կառավարիչներին նշանակում էր Բեկլերբեյը: Սանջակներն էլ իրենց հերթին բաժանվում էին *կազաների:* Արևմտյան Հայաստանի տարածքի վրա դեռևս իրենց կիսանկախ, երբեմն էլ անկախ գոյությունը պաշտպանում էին հայկական մի քանի իշխանությունները՝ Զեյթունը, Սասունը, Իսյանը, Շատախը, Մոկսը, Ճապաղջուրը, Խնուսը: Սրանց հպատակությունը զուտ անվանական էր, քանզի ունեին զորք, զինված էին և կենտրոնական կառավարությանը չնչին հարկ էին տալիս կամ էլ չէին տալիս[4]:

Չալդրանի հանրահայտ ճակատամարտից հետո Արևմտյան Հայաստան թափանցեցին քրդական վաչկատուն և ավազակաբարո աշիրեթներ, որոնք օգտվելով պետական հովանավորչությունից, աստիճանաբար տարածվեցին Դիարբեքիրի, Վանի, նույնիսկ Էրզրումի էյալեթներում: XVII դարից սկսած ձևավորվեցին քրդական մի շարք իշխանապետություններ, որոնցից հզորներն էին *Դերսիմը, Խոշաբը, Հեքյարը, Բալուն, Ոստանը, Բերկրին, Ջուլամերկը, Բաղեշը* (Բիթլիս), *Զեզիրեն, Սուլեյմանիին* և այլն: Սրանց մեջ ամենահզորն էր Շերեֆների տոհմին ժառանգաբար պատկանող Բիթլիսի քուրդ իշխանությունը: Կարո Սասունին բազմաթիվ փաստեր է բերում ապացու-

---

[1] Մանրամասն տե՛ս Центральный государственный военно-исторический архив (ЦГВИА) СССР, фонд ВУА, дело 1046, 1830, лл. 7-12. Այսուհետև ԽՍՀՄ ԿՊԴՊԱ:

[2] «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց *Ա. Խ. Սաֆրաստյան*, հ. Բ, Երևան, 1964, էջ 202-203:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 212-222:

[4] ***Е. К. Саркисян,*** նշված աշխատությունը, էջ 18: Տե՛ս նաև ***А. С. Творитинова,*** Второй трактат Кочибея, стр. 240-244.

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 92-95:

[1] Տե՛ս «Թուրքական աղբյուրները...», հ. Բ, էջ 215-220:

[2] «Belleten», 1951, N 60, էջ 615-619:

[3] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1806, հ. Ա, էջ 113:

[4] *Հայկ Ղազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 65-70:

ցելու, թե Բիթլիսի խանը էմիրը, շատ հզոր էր, այնքան հզոր, որ XVII-XVIII դարերում պատերազմի պահերին կարող էր ռազմադաշտ նետել մինչև 20-25000-ի հասնող հեծելազոր, դրանից ավելի էլ հետևակ[1]: Կարո Բասմաջյանը վկայում է աներևակայելին, այսինքն Շերեֆների էմիրության դրամահատության իրավունքը: «Ինձի ծանոթ են»,- գրում է նա,- *միայն երկու էմիրի դրամները*[2]:

Նման արտոնություններից էին օգտվում նաև քրդական մյուս իշխանություններից շատերը: Սրանք պետություն էին պետության մեջ, իշխանություն էին, անիշխանության օվկիանոսում: Եվ դա պայմանավորված էր նաև այն պարագայով, որ միշտ արշավանքների սովոր, ավարառությամբ ու կողոպուտով սնվող բարձրագույն Դուռը այլևս արշավել չէր կարողանում, մանավանդ 1699 թ. հունվարի 26-ին կնքված Կարլովիցի հաշտության պայմանագրից հետո: Եվրոպայի պատերի տակ ջարդված ու ետ շպրտված թուրքական «անհաղթելի բանակը» կուչ եկավ, իսկ տերությունը բռնեց թուլացման ու անկման ճանապարհը: Կենտրոնախույս ուժերը օգտվեցին այդ թուլությունից մինչև 1820-ական թվականները, այսինքն Մահմուդ II-ի ու նրա հաջորդների բարեփոխությունները[3]:

Օսմանյան տիրակալները փորձեցին կանոնակարգել ագրարային հարաբերությունները, հատկապես հողատիրության ձևերն ու հողատերերի իրավունքները: Այս խնդրում նրանք ժառանգեցին մուսուլմանական արևելքում ձևավորված օրենսդրությունը:

Ընդհանուր մահմեդական Արևելքում, առավելապես օսմանյան փադիշահների աշխարհակալության սահմաններում, ամեն իմաստության աղբյուր համարվող «ղուրանի» համաձայն, հպատակ երկրների հողը, ջուրը, բնական հարստությունները դառնում էին «ալլահի սեփականություն»: Քանի որ սուլթանն «ալլահի ստվերն էր երկրի վրա, նրա կամակատարը», ապա պիտի օժտված լիներ անսահմանափակ իրավունքներով, այսինքն գրավված երկրները դառնում էին նրա «բացարձակ սեփականությունը», և նախկին հողատերերը զրկվում էին *մասնավոր սեփականատիրական* իրավունքներից:

Կ. Մարքսը «Կապիտալ»-ում բացատրեց, թե «Պետությունն այստեղ գերագույն հողատերն է: Գերիշխանությունն այստեղ ազգային մասշտաբով համակենտրոնացված հողային սեփականությունն է: *Բայց այս դեպքում ոչ մի մասնավոր հողային սեփականություն*

---

[1] *Կարո Սասունի*, Պատմութիւն Տարօնոյ աշխարհի, Պեյրութ, 1956, էջ 75-80: Տե՛ս նաև նույնի «Քյուրտ ազգային շարժումները և Հայ-քյուրտ հարաբերությունները», Պեյրութ, 1969, էջ 53-80:

[2] *Կ. Յ. Բասմաջյան*, Հայկական ընդհանուր դրամագիտություն, 1936, Վենետիկ, էջ 119:

[3] Քրդական մյուս իշխանությունների մասին մանրամասն տե՛ս *Մ. Կ. Զուլալյան*, նշված աշխատությունը, էջ 189-190:

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ մ. թ. ա. II–I դդ.

ՄԱՍՇՏԱԲ 1:5 500 000

ՍԱՀՄԱՆՆԵՐ
Հայկական պետության (առավելագույն հզորության ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. 93–66 թթ.)
Հայաստանի ժամանակավորապես գրաված երկրամասերի
Մեծ Հայքի թագավորության (մ.թ.ա. 66–մ.թ. 37 թթ.)՝ ըստ Տիգրան Բ-ի և Պոմպեոսի միջև մ.թ.ա. 66 թ. կնքված հաշտության պայմանագրի
Պոնտոսի թագավորության՝ Միհրդատ VI Եվպատորի ժամանակ (մ.թ.ա. III–66 թթ.)
Պոնտոսի ժամանակավորապես գրաված երկրամասերի
Կիլիկիայում ծովահեղների հսկողության տակ գտնվող տարածքի
ՊՈՆՏՈՍ Անկախ պետություններ
ԿՈՄՄԱԳԵՆԵ Կախյալ պետություններ
ԷՄԵՍԱ Մ.թ.ա. I դ. վերջին Օգոստոս կայսեր հիմնած Արտաքսնանների շառավիղների պետությունները
ԱՍՈՐՔ Սատրապություններ
ԱՆՇՏԱՀԱՏ Տաճարային երկրամասեր
ԼԵՌՆԱՐ Ցեղեր և ցեղային տարածքներ
ԹԱԿԱՎԱՅՐԵՐ
ԱՐՏԱՇԱՏ Մայրաքաղաքներ
Ձարիգամ Խոշոր քաղաքներ
Վաղարշապատ Այլ քաղաքներ
Ցոլաբերդ Այլ բնակավայրեր
Ոստան Բերդեր
Բաղավան Տաճարային քաղաքներ
Հունաց Ճանապարհներ ըստ Իսիդոր Քարաքսացու ուղեցույցի
Բերիա Քաղաքներ, որոնք մ.թ.ա. 81 թ. Տիգրան Բ-ից ստացել են „Էլեութերիայի" (ազատության) արտոնություն և սեփական դրամ հատելու իրավունք
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ
Տիգրան Բ-ի կառուցած „Արքունի պողոտան"
Ձնագայից Հնդկաստան տանող ճանապարհն ըստ Իսիդոր Քարաքսացու ուղեցույցի
Այլ ճանապարհներ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
Ձնագա Տիգրան Բ-ի հսկողության ներքո գտնվող հիմնական գետնամերները և լեռնանցքները
ԱՐՏԱՇԱՏ Տիգրան Բ-ի փողոցանոցները
ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ
Ոսկու
Երկաթի
Արծաթի
Կապարի
Պղնձի
Աղի
Հանքային ջրեր
Արքունի ձկներսարանները
ՄՇԱԿՈՒՅԹ
Ելլենիստական կրթության կենտրոններ
Դիվան „մեհենական պատմությանց"
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՊ Հելլենիստական թատրոն
ՊՈՆՏՈՍ
ԿՈՄՄԱԳԵՆԵ
ԱՍՈՐՔ
ՄԵԾ ՀԱՅՔ
ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱՇԱՏ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՊ
ՍԱՄՈՍԱՏ (ՍԱՄՍԱՏ)
ԵՐԵՍԱՆ (ՈՒՐԱՐՏՈՒ)
ԱՎԱՆ ԱՆԵՐԴ
ՊԱՄՄԻՐԵՆԵ
ՊԱՄՄԻՐԵՆ
ՊԱՂՄԻՐԱ (ԹԱՔԻՐՈՒ)
ՍԱՍՈՒՆ
ՄԵԾԱՄՈՐ
ՄԱՐՄԱՇԵՆ
ՄԵԾԱՄՈՐ
ՄԱՐՄԱՇԵՆ
ՍՈՒՍԱ
ՍՈՒՍԱ
ՍՈՒՍԱ

ՀԱՅԱՍՏԱՆԸ IX–XI դդ.

Քարտեզը կազմվել և նախապատրաստվել է 1987թ. հունիսին
Հաստատվել է տպագրության 25.11.1987թ.

չկա, թեև կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրում և օգտագործում (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[1]:

Ուրեմն Թուրքիայի, նրա կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի ու հայաբնակ նահանգների հողը, նվաճումից ի վեր, դարձավ սուլթանների սեփականություն, սակայն տրվեց հպատակներին օգտագործելու պայմանով, որ նրանք կամ զինվորական պարտավորություն կատարեին, կամ էլ հարկ վճարեին: Ստեղծվեց հողատիրության մի այնպիսի խառը, կոդիֆիկացված ու չկոդիֆիկացված համակարգ, որն ավելի լաբիրինթոսի էր նմանվում և դժվարացնում ագրարային հարաբերությունների ուսումնասիրության տեսակետից ճշգրիտ, անառարկելի եզրակացությունների հանգելը:

Ինչպես միջնադարում, այնպես էլ XVIII դարի վերջին, ֆեոդալական Թուրքիան շարունակում էր կոթնած մնալ հողատիրության ռազմաավատական սիստեմին: Սուլթանապատկան հողերի մեծ մասը կոչվում էր միրիե (պետական) և տրվում էր հպատակներին օգտագործման պայմանով, որ նրանք ոչ միայն հարկեր վճարեին, այլև արքունիքում ու բանակում ծառայություններ կատարեին: Հողը տրվում էր սրանց իբրև ռոճիկ, իրավունք ստացողները հարկեր էին գանձում գյուղացիներից, մի մասը պահելով իբրև պարտավորության վարձ, մյուս մասը հատուցելով Բ. Դռան: *Միրիե* հողերն էլ ունեին տարատեսակներ: Կային *խասեր, թիմարներ, զեամեթներ*[2]:

Խասերը հողատիրական խոշոր միավորներ էին և տարածված էին Արևմտյան Հայաստանի մի քանի նահանգներում: Խաս էր կոչվում հողային այն միավորը, գյուղը կամ գյուղերը, որից ստացված եկամուտը կազմում էր 100 հազար ակչեից ոչ պակաս: Այն տրվում էր վեզիրներին, բեյլերբեյերին, սանջակբեյերին օգտագործման իրավունքով, ծառայության պայմանաժամանակով[3]: Ծառայությունը լրանալուց, խասատերը կորցնում էր իր իրավունքը, և երևում էր նոր տերը, այսինքն՝ հաջորդ պաշտոնյան[4]: Խասերն օրենքով մասնավոր սեփականություն դառնալ կամ, խասատիրոջ պաշտոնանկությունից հետո, ժառանգական իրավունքով փոխանցվել չէին կարող: Մեռնում էր մեծ վեզիրը, հաջորդն ստանում էր նրա խասերը, փոխվում էր նահանգապետ փաշան, նորը, փադիշահական արտոնագրով, ներկայանում էր էյալեթ և ստանում ռազմաքաղաքական իշխանությունը, նախորդին պատկա-

---

[1] ***Կ. Մարքս,*** Капитал, т. III, Москва, 1955, стр. 804.

[2] Մանրամասն տես ***Լորդ Կոքրեն,*** Новейшие сведения о турецкой империи, часть I, Москва, 1828, стр. 159-161.

[3] "Аграрный строй Османской империи XV-XVII вв", Документы и материалы, стр. 218.

[4] *Ղուկաս Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, մասն երկրորդ, հ. Ե, 1804, Վենետիկ, էջ 97:

նած հողատարածություններից ստացված եկամուտը վայելելու իրավունքը[1]: Բեյլերբեյերի խասերը տարեկան բերում էին մինչև 1,5 միլիոն ակչեի եկամուտ, սանջակբեյերինը 500 հազար, ենիչերիների գլխավորին նույնպես 500 հազար[2]:

Պետական հողերի մյուս մասը տրվում էր իսլամ ազգաբնակչությանը, նրանից պահանջելով զինվորական ծառայություն կատարել կամ զինվոր տալ: Այստեղ է, որ ավելի ցցուն ի հայտ էր գալիս կայսրության ռազմաավատական բնույթը, որովհետև զորամիավորումներն հիմնականում պահվում էին ոչ թե պետական գանձարանի հաշվին, ռոճիկով, այլ զինվորացուներին հողեր տրամադրելով: Զորամիավորման պետը, ցեղի առաջնորդ խոշոր հողատեր ֆեոդալը հողերին տիրելու արտոնություն էր ստանում, բայց ոչ ժառանգաբար, այլ ծառայության տարիներին միայն, այն էլ օգտագործելու իրավունքով:

Թուրք զինվորը կոչվում էր *սիփահի*, ծառայության համար հատկացված հողամիավորները *զեամեթ և թիմար:* Հողի օգտագործման իրավունք ստացող մահմեդական զինվորականները ագարակները հանձնում էին գյուղացիներին մշակելու, գանձում հարկեր, դրա դիմաց պարտավորվում հեծելազոր ու հետևակ պահել, պաշտպանել երկրի ու պետության անվտանգությունը, խալիֆի հրամանով արշավանքներ կատարել, ավար ու կողոպուտ ձեռք բերել: Ղ. Ինճիճյանը գրում է. «Անունս *Սիփահի* պարսկերէն նշանակէ զօրական, այլ առ տաճկերէն սեփհականեալ է վասն ամէն գնդի հեծելազօրաց, յորս երևելի և բազմաթիւ են որք անուանին *Զեամեթլի և Թիմարլի զաիմ*, սրանք թոշակաւորեալ են և առնուն զդարման իւրեանց ի կալուածոց երկրի որք կոչին *Զեամեթ և Թիմար*, քանզի նախնի թագաւորք օսմանեանց յառնուլն օրըստօրէ զանազան երկիրս ընդ իշխանութեամբ իւրեանց, զմասն ինչ իւրաքանչիւր գաւառաց (մանաւանդ զորս էին կալուածք եկեղեցեաց, վանօրէից, և մասնաւոր իշխանաց), որոշեալ կարգեցին ի թոշակ հեծելազօրաց... Զայսոսիկ կալուածս թագաւորն երբեմն ձրի պարգևէ արդիւնաւոր զինուորաց կամ իւրոց պաշտօնէից, իսկ զայլս յարքունուստ ի վաճառ արկանեն առաւել վճարողին»[3]:

Թուրք զինվորականներին տրվող հողամիավորներից ամենափոքրը *թիմարն* էր: Ամեն մի թիմարից ստացված տարեկան նվազագույն եկամուտը 3000 ակչե էր[4], առավելագույնը 20 հազար ակչե: *Զեամեթից* ստացված նվազագույն եկամուտը 20 հազար ակչե էր, առավելագույնը 99,999 ակչե[5]:

---

[1] *Ա. Սաֆրաստյան*, Թուրքական աղբյուրները, հ. 2, էջ 283:

[2] *Тверитинова*, стр. 218.

[3] «Աշխարհագրութիւն», մասն երկրորդ, հ. Ե, էջ 80-81:

[4] «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 128: *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, հ. Ե, էջ 37:

[5] «Աշխարհագրութիւն», հ. Ե, էջ 80-81:

Թիմարներին ու զեամեթներին տիրապետելու իրավունք ստացածները, օրենքով դրանք գնել, վաճառել կամ ժառանգել չէին կարող: Նրանք կօգտագործեին այդ կալվածքները այնքան ժամանակ, քանի դեռ ծառայության մեջ էին: Ծառայելու ժամկետը լրանալուց կամ զինվորունակությունից զրկվելու դեպքում սիփահին կորցնում էր իր իրավունքները նախկին կալվածքների վրա:

Խասերից բացի, որոնք մեծ թիվ չէին կազմում Արևմտյան Հայաստանում, մշակելի հողի գերակշռող մասը թիմարներ և զեամեթներ էին: Էրզրումն ուներ 122 զեամեթ, 5548 թիմար և տալիս էր 11584 ջեբելու (ռազմիկ, որը տրվում էր հողի դիմաց, հատկապես պատերազմի պահին) զինվոր, Վանը 185 զեամեթ, 826 թիմար, 2392 զինվոր, Դիարբեքիրը 106 զեամեթ, 540 թիմար, 1504 զինվոր, Չըլդրը 106 զեամեթ, 659 թիմար, 1804 զինվոր[1]: Սեբաստիայի փաշան ամեն տարի իր խասերից ստանում էր 900,000 ակչեի եկամուտ: Փաշայության 8 սանջակներում կային 108 զեամեթներ, 3022 թիմարներ և հանվում էին 6490 զինվորներ, որոնց հողատարածություններից ստացած հասույթը կազմում էր 13,087,327 ակչե[2]: 1830 թվին Բայազետի փաշայության պետական հողերն ամբողջապես փաշայի խասերը, զեամեթներն ու թիմարներն էին: Սուլթանն այստեղից ոչինչ չէր ստանում[3]:

Մարաշի փաշայությունն ուներ 2869 *կըլըջ* (բառացի նշանակում է սուր, սրի իրավունք. այդպիսի անուն ունեին ռազմիկ հողատեր ֆեոդալի եկամուտները) օգտագործելի, լավորակ հողեր և տալիս էր 6500 զինվոր: Այսպիսով, անվանապես Արևմտյան Հայաստանի հողերի մեծ մասը պատկանում էին պետական-միրիե տեսակին և տրվում էին իսլամ վերնախավին, զինվորականներին օգտագործման իրավունքով:

XVIII դարի սկզբներին հողատիրական նախկին օրենքները խասերին, զեամեթներին ու թիմարներին տիրապետելու, վայելելու իրավունքները և դրա դիմաց սուլթանին ծառայելու պարտավորությունները, փոխվել էին: Այժմ արդեն իրավունքն ու թաքրիրները, խալիֆի խստաբարո գրությունները այնքան էլ դեր չէին կատարում : Քայքայման եզրին հասած կայսրության մեջ էականը դարձել էին ուժն ու հարստությունը, որոնցից զրկվել էր Բ. Դուռը, դրանք զիջելով խոշոր հողատեր ֆեոդալներին, ենիչերի աղասուն, թուրք փաշաներին, քուրդ խաներին:

---

[1] *Дм. Бакрадзе*, Исторический очерк турецкой системы землевладения, 1889, Тифлис, стр. 8.

[2] Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ և սահմանաց նորա, յորինեաց Գերապ. *Անդրէաս վ. Աղեքսանդրեան*, Վենետիկ, ս. Ղազար, 1911, էջ 220:

[3] Վրացական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև ՎՍՍՀ ԿՊՊԱ), ֆոնդ 2, գործ 2646, թերթ 9:

Հողատեր զինվորականների մեծ մասը, օգտվելով պետության թուլությունից, ժամանակի ընթացքում ամրապնդվել էր իր կալվածքներում, դիզել հսկայական հարստություն, սեփականացրել, երբեմն էլ ժառանգական դարձրել հողերը, նույնիսկ քաղաքական իշխանությունը[1]: Նրանցից շատերն արդեն ապրում էին ոչ միայն գավառական կենտրոններում, այլև ապարանքներ էին կառուցել ու հիմնավորվել սուլթանի նստավայրում, փաշայանիստ քաղաքներում:

Ռազմաավատական հողատերերն հզորացել էին, դարձել հողային արիստոկրատներ[2], զինված ջոկատների ղեկավարներ և նույնիսկ հաշվի չէին նստում սուլթանի հետ: Փադիշահները վաղուց էին նկատել, որ թուրքական ֆեոդալների աճող ազդեցությունը վտանգավոր կերպարանք է ստանում կենտրոնական պետության համար, սակայն առայժմ լռում էին, քանի որ անկարող էին պայքարել այդ երևույթի դեմ:

Պետական գանձարանի աղքատացման, հնչուն դրամի նվազելու պատճառով, կառավարությունն էլ ավելի պակասեցրեց ենիչերիների ռոճիկները, փոխարենը նրանց շնորհեց հողեր ձեռք բերելու, ամուսնանալու իրավունքներ: Ենիչերիական գնդերի մեծ մասը, իբրև անբարեհույս, տեղափոխվեցին ծայրամասերը՝ Կարին, Կարս, Ախալցխա: Արևմտյան Հայաստանը սուլթաններից նոր պատուհաս ստացավ: Ենիչերիները խլեցին քրիստոնյաների, նույնիսկ մահմեդականների հողատարածությունները, սկսեցին կեղեքել ռայային, փադիշահի նկատմամբ կուտակած մաղձը թափեցին նրա անպաշտպան հպատակների գլխին: Պետությանը ձեռնտու էր սրանց հեռացնել մայրաքաղաքից, պակասեցնել դավադիրների թիվն արքունիքում, իսկ թե վերջիններս գավառներում ի՞նչ կանեին, դա այնքան էլ կարևոր չէր գահի վրա երերացող, եղբայրը եղբոր դիակի վրայով խալիֆ դարձող սուլթանների համար:

Արևմտյան Հայաստանի հողերի մյուս մասը *վակուֆային* անունն էր կրում և պատկանում էր մահմեդական ու հայ հոգևորականությանը: Հոգևոր ֆեոդալների տնօրինությանը հանձնված վակուֆները ևս բաժանվում էին երեք խմբի: Առաջին խմբի վակուֆներն էին այն շարժական ու անշարժ գույքերը, որոնցից ստացված եկամուտներով վերանորոգվում էին մզկիթներ, կերակրվում էր հոգևոր դասը[3]: Սուլթան Մուստաֆա II-ը մալիքիանե կոչվող հիշյալ վակուֆներից հարկ էր գանձում ոչ միայն միանվագ, այլ նաև ամեն տարի: Մուստաֆա III-ը, մի քայլ առաջ կատարելով, փոխեց մալիքիանեների կառավարման ձևը և դարձրեց պետական սեփականություն, գանձվող հարկագումարը լցնելով իր գանձարանը[1]:

Երկրորդ կարգի վակուֆներից ստացված եկամուտներն անվանապես «ծախսվում» էին աղքատների ու կարիքավորների վրա, սակայն իրականում խժռվում էին կառավարիչ նազիրների կողմից: Երրորդ խմբին էին պատկանում սովորական վակուֆները[2]: Սրանք նվիրվում էին մզկիթներին, հիմնադրման օրից ի վեր՝ իբրև սեփականություն: Վակուֆների այս տեսակը, սակայն, չէր դառնում օգտագործողների կամ տասանորդ վճարողի մասնավոր սեփականությունը: Այդ տիպի վակուֆները հոգևոր հիմնարկության սեփականությունն էին, առհավետ օգտագործելու, բայց ոչ օտարելու իրավունքով[3]:

Արևմտյան Հայաստանում անցյալ դարասկզբին քիչ չէին մահմեդական հոգևորականության տնօրինությանը հանձնված *հարեմեյն* կոչված վակուֆները: Հարեմեյնը մշակում էին թուրք ու հայ գյուղացիները, որոնցից ստացված եկամտից գանձված հարկը, տեղական մոլլաների միջնորդությամբ, առաքում էին «սրբազան տաճարները» Մեքքա և Մեդինա[4]: Ակնհայտ է, որ Արևմտյան Հայաստանի գյուղացին կերակրում էր ոչ միայն թուրք աշխարհիկ, այլև հոգևոր ֆեոդալներին, նույնիսկ իրենից հազարավոր կիլոմետր հեռավորությամբ եզերված իսլամ կրոնավորներին:

Հողատիրության առումով դարեր շարունակ այս կամ այն կերպ պահպանվեց հայ հոգևորականության արտոնյալ դրությունը: Խոշոր հողատարածություններ-*վակուֆներ* ստանալու իրավունք վերապահվեց Կ. Պոլսի հայոց պատրիարքին, 200-ից անցնող հայկական վանքերին, եկեղեցականներին ու վանականներին:

Նվաճելով այլազգի ժողովուրդներին, սուլթանները սկզբնապես արտոնություններ, հողեր էին տալիս նրա բարձրաստիճան հոգևորականությանը կամ անձեռնմխելի թողնում նախկինում ունեցածը: Թուրք-պարսկական երկարատև պատերազմների, ռուս-թուրքական պարբերական զինաբախումների ժամանակ հայ հոգևոր դասի, մասնավորապես ամենայն Հայոց կաթողիկոսի ծանրակշիռ խոսքը էական նշանակություն ուներ իր հովվյալների բռնած քաղաքական կողմնորոշման գործում: Սրանից դրդված, խորամանկ սուլթանները հողեր, նվերներ, դրամական միջոցներ, արտոնության ֆերմաններ էին տալիս կաթողիկոսին, հայոց պատրիարքին, սիրաշահելու քաղաքականություն վա-

[1] Մանրամասն տես "История Болгарии", Изд. АН СССР, Москва, 1954, т. I, стр. 216, ***И. И. Голобородько*** (Южанин), Турция, стр. 133-137, ***А. Д. Новичев,*** Очерки экономики Турции до мировой войны, 1937, стр. 15-19.

[2] ***И. И. Голобородько*** (И. Южанин), Старая и новая Турция, Москва, 1908, стр. 135-136.

[3] ***Дм. Бакрадзе,*** Исторический очерк турецкой системы землевладения, стр. 10.

[1] ***Дм. Бакрадзе,*** Исторический очерк турецкой системы землевладения, стр. 11.

[2] ***И. Соколов,*** Земельные отношения в Турции до Танзимата, "Новый восток", 1924, N 6, стр. 100-102.

[3] ***Дм. Бакрадзе,*** стр. 12.

[4] Հայկական ՍՍՀ պետական պատմական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊՊԿ արխիվ), Թուրքական ֆերմանների ֆոնդ, գ. 89, փաստաթուղթ 89, թերթ 1:

ռում վերջիններիս հանդեպ և գրավում դեպի իրենց: Գնալով ստվարանում էին վակուֆային հողերը, էջմիածնապատկան կալվածքները:

Սուլթան Մեհմեդը վերականգնում էր նախորդների տված արտոնությունները էջմիածնի կաթողիկոսին, ճանաչում նրա հողատիրական իրավունքները[1]: Սիմեոն կաթողիկոսը, 1774 թ. սուլթանից ստանում է նոր և ընդարձակ հրովարտակ-արտոնագիր: Ըստ այդ հրովարտակի «կարգաւորք ազատք են յամէն հարկապահանջութենից»[2]: Կաթողիկոսը պարտավոր է. «վերահասու ի գործել ի վերայ ամէն յիշատակաց վագըֆ անուանեալ. և այլք մի ձեռնամուխ լինիցեն ի նա»: Հոգևորականները և աշխարհականները, եթե կտակներ են արել, հողեր են նվիրել եկեղեցիներին, վանքերին, ապա որևէ մեկն արգելելու իրավունք չուներ[3]: Նման ֆերմանները բազմազան են ու թվաշատ այս պատմաշրջանում:

XVIII դարի երկրորդ կեսին, հատկապես Դավիթ-Դանիելյան գավազանակռվի տարիներին ու դրանից հետո, էջմիածնի կաթողիկոսությունը հողային կալվածքներ, ջրաղացներ, ձիթհաններ, այգիներ, պարտեզներ ուներ Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր էյալեթներում, նույնիսկ Եվդոկիայում, Զմյուռնիայում[4] և հայկական Կիլիկիայում: Կաթողիկոսի նշանակած մարդիկ վարձակալության էին տալիս այդ կալվածքները, եկամուտը դրամով, թե բնամթերքով ստանալիս, տեղափոխում էին Մայր աթոռ:

Հողային խոշոր կալվածքներ ունեին արևմտահայ վանքերը, մի քանի տասնյակ եկեղեցիներ: Վարագա ս. Նշանը, Մուշի ս. Կարապետը, Աղթամարի ու Սսի և շատ այլ անվանի վանքեր ունեին 300 հեկտարից ավելի հողեր, մանր ու խոշոր եղջերավոր անասունների հոտեր ու նախիրներ[5]: Նրանք աշխատեցնում էին վանքապատկան գյուղացիներ, արդեն հունի մեջ մտած վարձակալող մարաբաներ, մշակում հողեր, դիզում հարստություն: Սակայն այդ հարստությունը կամ թաքցվում էր վանքի գաղտնարաններում, կամ զոհ գնում մահմեդական ավարառուներին: Ամեն որպե, ունեցվածքի հետ միասին, վանականները կարող էին կորցնել կյանքը: Քրդական, թուրքական ասպատակողների, ավազակախմբերի արշավանքները, գիշերային հարձակումները մի հարվածով կարող էին ետին խեղճության մեջ գլորել ամենահարուստ վանքը[6]:

[1] Մաշտոցի անվան մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավ. 64, թերթ 1:

[2] Նույն տեղում, թղթ. 4, վավ. 46 ա, թերթ 1:

[3] Նույն տեղում, թերթ 2:

[4] Նույն տեղում, թղթ. 160, վավ. 159 ա, բ:

[5] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 242, գործ 4, թերթ 1-2:

[6] *Лынч*, Армения, Путевые очерки и этюды, Тифлис, 1910, стр. 131-133. Տե՛ս նաև *Ս. Ներսիսյան*, Արևմտահայերի ռուսական օրիենտացիան, էջ 27:

Վանական հողատիրությունը ֆեոդալական բնույթ ուներ: Գյուղացիության շահագործման ճանապարհով մշակվող վանքապատկան հողերից ստացված եկամտով սնվում էր, վայելում և մթին գործարքներ կատարում հնազանդության քարոզիչ հայ հոգևորականությունը, բայց ոչ բոլորը: Վանքապատկան կալվածքների հաշվին պահվում էին դպրոցներ, խնամվում հիվանդներ ու աղքատներ, պատսպարվում, սնվում հեռավոր ճանապարհորդներ ու փախստականներ: Երուսաղեմի միաբանությունը նախաձեռնեց ու բացեց Սկյուտարի հոչակավոր ճեմարանը: Վարագա ս. Նշանը դարձավ գավառահայ մտավորականության ու մշակութային անդրանիկ հանգրվանը, ուր առաջին անգամ ճոնչաց Գուտենբերգի լուսասփյուռ գյուտը: Մուշի ս. Կարապետը վերանորոգեց հայ-վրացական ազատագրական պայքարի գաղափարը, վանահայր Հովնանի միջոցով փորձեց զենքի կոչել դարերով թմրության մեջ նիրհող, կործանման եզրին հասած արևմտահայությանը: Հայերեն մագաղաթյա հոյակերտ ձեռագրերի գրչության ու պահպանության համար այսօր պարտական ենք միջնադարյան գրագետ, լուսամիտ ու հայրենանվեր վանականներին:

Արևմտյան Հայաստանում տակավին հարատևում էին մասնավոր սեփականատիրական հողեր *մյուլքեր:* Առք ու վաճառքի, տնօրինության ժառանգական ու անկաշկանդ իրավունքով արտոնված այս հողերը թուրքահպատակ հայկական նահանգներում քանակապես պատկառելի թիվ չէին կազմում, սակայն XVIII դարի սկզբներին դրանք շատացան: Խասերի, թիմարների ու զեամեթների մի մասը դարձավ մահմեդական ֆեոդալների ձևակերպված կամ չձևակերպված ժառանգական սեփականությունը: Մյուլքեր ունեին նաև *հայ մեծահարուստները* Վանի, Արճեշի[1], Դիարբեքիրի գավառներում, Ակնում և Սեբաստիայում: Հայերը մյուլքեր էին ձեռք բերել, թարխանության իրավունք ստացել սուլթաններին ցույց տված հատուկ ծառայությունների, կռվում ցուցաբերած խիզախության համար: Սակայն մյուլքերի թիվը թուրքահպատակ նահանգներում ավելի քիչ էր, քան քրդահպատակ գավառներում:

Ժառանգական հողատիրության ձևն ավելի հատուկ էր և բնորոշ հարավային Հայաստանի կիսանկախ համայնքներին, Կիլիկիայի լեռնագավառներին, Կոզանյան ձորապետերին: Մյուլքատիրական այս ինստիտուտն էլ ստորաբաժանվում էր տարատեսակների: Քաղաքական իշխանության անունն այստեղ անուղղակիորեն փոխանցվում էր հողատիրության ձևերի: Մասնավոր հողեր էին *հյուքյումեթ, օջաքլըք, դերեբեյություն, յուրդլուկ* կոչված գավառների հողատարածությունների գերակշռող մեծամասնությունը: Դրանք պատկանում էին

[1] *Յակոբ Շահպազեան*, Քիւրդօ-Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 70, 71, 72:

քուրդ խաներին, բեկերին, ցեղապետերին, հայ մելիքներին, իշխաններին:

Օսմանյան թուրքերը Հայաստան թափանցելիս որոշ բան սովորեցին կուլտուրապես իրենցից բարձր կանգնած հպատակների ոչ միայն առօրյայից, այլև անցյալի պատմությունից: Սկզբում Պարսկաստանի, իսկ հետագայում նոր ու հզոր հակառակորդի Ռուսաստանի անակնկալ հարձակումներին դիմակայելու նպատակով, նրանք ամրապնդեցին սահմանապահ գավառների իրավունքները, բաշխելով հողատիրական արտոնություններ, անկախության ֆերմաններ: Բացառապես քրդական ավագանուն հանձնված օջաքլըքներն այն երկրամասերն էին, «... որոյ խաս կարգեալ է կամ բոլորովին և կամ ըստ մասին ի ռոճիկ օճագին այս զօրաց որք պահապանք են ի սահմանագլուխ քաղաքիս»[1]:

Օջաքլըքի, հաճախ և նրա հետ հավասարեցվող յուրդլուկի անուն կրող գավառները, գավառատերերը, որոնք կոչվում էին *էմիրներ*, ունեին դրոշակներ և թմբուկներ: Նրանց մեջ կային այնպիսիներ, որոնք պետական *խաս իջմալու* էին ստացել, ինչպես նաև սուլթանի կողմից նշանակման բերաթ: Կային սակայն դարեր առաջ սուլթաններից ստացված այնպիսի բերաթներ, որոնք օջաքլըքի նախկին տերերին իրավունք էին տալիս ժառանգաբար կառավարելու և ենթակա չլինելու ոչ մեկի նշանակմանն ու հաստատմանը[2]: Քաղաքական իշխանությունը, դրան սերտորեն առնչվող հողը, փաստորեն ու իրավաբանորեն վերածվել էր նման էմիրների ժառանգական սեփականության:

Արևմտյան Հայաստանի քրդաբնակ մասերում՝ Բալուի, Գենջի, Էգիլի, Դարուի, Եկրադի, Միհրիվանի, Ուշտյուի, Ումադիեի գավառները ճանաչվել էին իբրև *հյուքյումեթություններ* և, փաստորեն, սրանց հողերի ճնշող մեծամասնությունը մասնավոր սեփականություն էր: Սուլթանը կամ թուրք զինվորական ավագանին ոչ մի կտոր խաս, զեամեթ, թիմար չուներ հյուքյումեթությունների տարածքի վրա: Դեռևս 1653 թ. փադիշահի կողմից ստորագրված մի հրովարտակում ասվում է, թե հյուքյումեթները «... որպես սեփականություն հանձնվեցին նրանց տիրակալներին՝ ծառայությունների և հնազանդության դիմաց: Նրանք տիրակալում են այնտեղ սեփականատիրական իրավունքներով: Նրանց մարզերը անգամ ենթակա չեն մարդահամարի և վերաբաժանման: Նրանց եկամուտները չեն մտցվում պետական ցուցակների մեջ: Այնտեղ չկա ոչ մի օսմանյան էմիր, չկան սուլթանական զորքեր: Այդ բոլոր պարտականությունները նրանք իրենք են կատարում: Եվ նրանք (դրանց տիրակալները), համապատասխան համաձայնագրի, ապագայում ենթակա չեն ոչ հեռացման և ոչ էլ նշանակման»[3]: Հետագա դարերում

[1] *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, հ. Ե, Վենետիկ, 1804, էջ 97:
[2] "Аграрный строй Османской империи", стр. 95.
[3] Նույն տեղում, էջ 93:

փոփոխություններ եղան հյուքյումեթությունների ուժեղացման, պետությունից գրեթե անջատվելու ուղղությամբ:

Ղ. Ինճիճյանը լրացնում է, թե հյուքյումեթություն է կոչվում այն երկիրը, որ «... սեփական ստացուած է տոհմի ինչ, և տեարք նորա են իշխանք, որք պայազատեն որդւոց յորդի ի նոյն տոհմէ ընդ ժառանգութեան...: Բազում գտանին այսպիսի իշխանութիւնք յԱնատոլու ի մէջ քրդաց»[1]:

Մասնավոր հողատիրական իրավունքով էին օժտված Արևմտյան Հայաստանի դերեբեյությունները, Կիլիկիայի Կոզանյան կամ Կոզանօղլուների ցեղապետերը: Տարբերությունը, սակայն, այն էր, որ պետությունը ճանաչել էր հյուքյումեթների, օջաքլըքների տիրակալների ժառանգական իրավունքները, սակայն սուլթանից ապստամբ դերեբեյությունները Բ. Դռան հետ գրեթե ոչ մի պարտավորությամբ կապված չէին: Նրանց արտոնագրեր տրվեցին 1830-ական թվականներին միայն և ետ վերցվեցին 1840-ականներին: Դերեբեյություններն ընկած էին բարդ կառուցվածք ունեցող Դիարբեքիրի, Վանի և Բայազետի փաշայապատկան տարածքների վրա:

Արևմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի կիսանկախ գավառների՝ Զեյթունի, Սասունի, Մոկսի, Շատախի, Դերսիմի, Սավուրի հողատարածությունները բացարձակապես հայերի և փոքրաքանակ քրդերի *մասնավոր սեփականություն էին*, ժառանգական սկզբունքով և սոցիալ-տնտեսական ու քաղաքական տեսակետից համարյա կախվածություն չունեին ամենազոր արքունիքից: XVII-XVIII դարերում նրանց հպատակությունը Թուրքիային, հողատիրության իմաստով, ոչնչով չէր արտահայտվում:

Սրանք, սակայն, կաթիլներ էին ընդհանուր ու ջրախեղդ անող օվկիանոսի ալիքների վրա, ավազի հատիկներ էին լայնատարած անապատների տարածքի մեջ: Թուրքահպատակ գյուղացիության, առավելապես՝ այլադավան-քրիստոնյա բնակչության վիճակն անտանելի էր, ողբերգական: Այդ մասին, սուլթան Մուրադ IV-ին ուղղած իր մի ընդարձակ գրության մեջ, պալատական խոշոր գործիչ *Կոչիբեյ Գեմյուրջինսկին* 1640-ականներին այսպես է արտահայտվում. «Կարճ ասած, այսպիսի կեղեքումներ ու հարստահարություններ դեռ չեն կատարվել ոչ մի երկրում, ոչ մի պետության մեջ: Եվ, սակայն, եթե մահմեդական երկրի բնակչությունից մեկն ու մեկը ենթարկվում է նույնիսկ ամենաթեթև հարստահարության, ահեղ դատաստանի դրա պատասխանատվությունը կընկնի տիրակալի և ոչ թե նրա պաշտոնյաների վրա, և տիրակալը չի կարող արդարանալ տիեզերքի տիրոջ առջև, ասելով՝ ես իմ հպատակներին հանձնել եմ այս մարդկանց: *Սովից մեռնողների հեկեկանքներից փլվում են տների պատերը, իսկ*

[1] *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, հ. Ե, էջ 97:

կեղեքվողների արտասուքները խեղդվում են կայսրության կորստյան ալիքների մեջ: Անհավատությունից աշխարհը չի կործանվի, այլ կանգուն կմնա իր տեղում, իսկ հալածանքներով (կանգուն) չի մնա (ընդգծումները մերն են-Հ. Ղ.)»[1]:

Պատմական Արևմտյան Հայաստանում պետականության կորստից հետո ապրում էին *երեք ժողովուրդներ*, որոնցից յուրաքանչյուրն արդեն ուներ «*իր իրավունքներն ու պարտականությունները*»: Նրանք երեքն էլ հավերժական պայքարի մեջ էին, մասամբ անթաքույց, հիմնականում բացահայտ: *Թուրքիան և թուրքերը*, նվաճումից ի վեր, իբրև տիրապետող պետություն ու արտոնյալ ժողովուրդ դարձել էին *երկրի իրավական տերերը:* Օրենքն ու «օրինականությունը» սրանց ձեռքին էին, և անպաշտպան ողջ ժողովրդի հետ վարվում էին ցանկացածի պես, միշտ այդ վարմունքն ամրակնքելով «կանոն նամեներով» և այլ հրամանագրերով:

Երկրի մեծ մասի իրական տերը վայրենաբարո, ասպատակող, արյունախում, վաչկատուն քրդերն էին՝ մահմեդականացած բեկերն ու դերեբեյները, աշիրաթապետերն ու խոլամները: Քրդական վերնախավը անպաշտպան արևմտահայության հետ վարվում էր այնպես, ինչպես ցանկանար, ինչպես ձեռնտու լիներ իրեն:

Ամենաողբերգականն այն էր, որ Հայաստանը հայ ժողովրդի բնօրրանն էր, նրա պատմական, իրական ու օրինական հայրենիքը, սակայն նա դարձել էր ոչ միայն հայրենազուրկ խլյակ, *այլև իրավազուրկ «ռայա»:* Հետևաբար այս *երեք ժողովուրդների* թուրքի, քրդի և հայի միջև էր հավերժական պայքարը՝ ոչ միայն քաղաքական, այլև հիմնականում նաև սոցիալական խնդիրների շուրջ: Անպաշտպան, անզեն մի ժողովուրդ չէր կարող դիմագրավել երկու հզորներին՝ իրավատեր, մինչև ատամները զինված օսմանյան թուրքերին և նրանցից բարբարոսությամբ ավելի ցածր մակարդակի վրա կանգնած քուրդ վերնախավին, երբեմն էլ ողջ մահմեդական քրդերին: Նրան մնում էր կամ գոյատևել ինչպես կարողանար, կամ էլ դիվանագիտական մուրիկությամբ դոփել եվրոպական մեծերի դռները: Երկու դեպքում էլ տհաճ ու անտանելի էր:

Վրացի մի ուղևոր XVII դարի կեսերին, անցնելով Արևմտյան Հայաստանի տարածքով, ճանապարհին հյուրընկալվում է Վանի փաշային և զրույցի բռնվում նրա հետ: Նրա այն հարցին, թե ուղևորն ի՞նչ կարծիքի է «իրենց երկրի մասին», վրացին պատասխանում է. «Եթե ես ուրանամ, որ Թուրքիո մեջ զեղծմունք, հարստահարություններ, ավարառություն, տղամարդկանց առևանգումներ, կանանց և դեռահաս աղջիկների բռնաբարություններ չկան, ապա *օսմանյան կառավարությունը կխոստովանի դրանց առկայությունը*: Քրիստոնյա երկու ժողովուրդները հայերն ու վրացիները, իրենց երկրներում ոչ թե ապրում են, այլ տանջամահ են արվում: Ես տեսա հարյուրավոր գյուրջի և հայ մանուկների, որոնց քշում էին ստրկավաճառական շուկաներ, ասում են՝ շատ չնչին գներով վաճառելու: Այդ բոլորն ինձ հիշեցնում են դժոխային տանջարանների, որոնք ստեղծված են միայն ձեր երկրում, ձեր կողմից, այն էլ ձեր բնութագրությամբ անհավատներին (քրիստոնյաներին) տանջամահ անելու համար»[1]: Վրացի «անանուն» ուղևորի համարձակությունը զարմանալի է, սակայն, դժբախտաբար, իրողություն և փաստ է:

Արևմտահայ գրող, հրապարակախոս, ազատագրական պայքարի շեփորահար, հայացքներով դեմոկրատ *Արմենակ Հայկյանը*, տեսե՛ք, թե հոգեկան ինչպիսի տվայտանքներով է արտահայտվում սուլթանների գարշապարի տակ տանջվող հայ ժողովրդի հավաքական կերպարի, նրա ապրած ողբերգության մասին: Նա գրում է. «Թշվառություն բառին կենդանի նշանակությունը գտնելու համար ունայն տեղ մի շրջեր աշխարհիս չորս կողմը և անոր տեղ տեղեկություն ստանալու համար մի կարդար Փարիզի, Լոնդոնի, Նյու Յորքի և Մեքսիկայի գաղտնիքները և այլևս մի արտասվիր մեռելոց պաղ գերեզմաններուն, կախաղան և լացը գողի, դահիճի առջև նստած մարդասպանին, շղթայակապ բանտարկյալներուն և «Աստծո համար» աղաղակողներուն վրա, այլ ասոնց տեղ գնա պտտի ասիական այն ամեն երկիրները, քաղաքները, գյուղաքաղաքները և գյուղերը, ուր շատ կամ քիչ հայ կգտնվի, կարդա անոնց ամենօրյա կենսագրությունները, որ գաղտնիք չեն, այլ հայտնի, և արտասվի հայուն վրա, որը յուր ընկերական միության հետ կորուսել է նաև ընտանեկան միությունը»[2]:

Առավել բարբարոսական ու աներևակայելի էր քրդերի վերաբերմունքը հայերի նկատմամբ քրդահպատակ բոլոր նահանգներում, հատկապես Դիարբեքիրում: Բեդեր խան բեկի շարժման մասնակից քուրդ Բահրամ բեյը, որը եղել էր Մոկսի տիրակալներից, պարտությունից հետո պատմում է. «Մի տեսակ բարբարոսություն քրդերի կողմէ ի գործ կդրվեր հայ «ֆլաներու» դեմ՝ անարգանքի ու արհամարանց համար: «Ֆըլլա» եղածին կձգեին ձեռաց երկու թաթերու վրա ու դարձնելով չորքոտանի անասուն, հարդով լեցուն էշի գլխին անցնելիք տոպրակը

---

[1] *И. Смирнов,* Кочибей Гемюрджинский и другие османские писатели XVII в. о причинах упадка Турции, СПб, 1878, стр. 249. Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 284-285:

[1] Центральный государственный исторический архив Грузинской ССР, фонд 11, Дипломатическая канцелярия наместника Кавказа, дело 51, 1830, л.л. 3-14. Փաստաթուղթը կազմված է ֆրանսերենով և թղթապանակի մեջ դրված է նաև դրա ռուսերեն թարգմանությունը:

[2] «Պեգասյան թռչնիկ», Կ. Պոլիս, խմբագիր *Գրիգոր Ալաթճյան,* 1864, N 14, էջ 108:

կկախեին անոր գլխեն, ու ամուր կապելեն հետո, երկաթե մեխերով անոր կխրեին իբրև իշու ու կկանչեին «կեր ֆըլլա»: Ֆըլլան, հարվածներ կրելով, շունչը կկտրվեր տոպրակին մեջ ու կմեռներ»[1]:

Քուրդ բեկերը այդպես էին վերաբերվում բոլոր այն «գյավուրներին», որոնք այս կամ այն կերպ ցույց էին տալիս, թե սպասում են կառավարական զորքերին, որ գան ու հպատակեցնեն քրդերին: Ստացվում էր այնպես, որ հայ «ռայան» կենտրոնածիգ թուրք պետական գործիչներին գերադասում էր կենտրոնախույս քուրդ ավատատերերից:

Հայերի վիճակը ծանր էր նաև Չալդրանի ճակատամարտից հետո քրդերով ու թուրքերով լցված Վասպուրականում: Նախ Վանի մահմեդական տիրակալներն աստիճանաբար տարանջատվում էին իրարից, վերածվում հակոտնյա ուժերի, մարտնչում իրար դեմ, իսկ սուլթաններն էլ, ում այդ անմիաբանությունը ձեռնտու էր, քաջալերում էին մեր մեկին, մեր մյուսին: Հիմնական տուժողը մնում էր ժողովուրդը, հասկանալի է, չէ՞, հայ ժողովուրդը: Այսպես, Վանում, իբրև կանոն, նստած էր քուրդ փաշան իր դրուժինայով, հարկահավաքներով ու գրասենյակային «դավթարդարներով»: Նրա հետ միասին, սկզբում պակաս, XVIII դարում առավել արտոնություններ էին վայելում փաշային արդեն արհամարհող «վան-գուլների» պետերը՝ վանգուլ աղասիները: Սրանց գուլերը բաժանվում էին երկու մասի՝ կրելով սաղ ու սոլ անունները, որոնք առաջացել էին քաղաքի իրենց տիրած *աջ* և *ձախ* թաղամասերից:

Գուլ-աղասիները և քուրդ փաշաները մշտնջենապես հակամարտության մեջ էին հարստահարության, հարկապահանջության պատճառներով: Նրանցից ամեն մեկը ձգտում էր կողոպտել բոլոր դասերին պատկանող հայերին: Բայց չէ՞ որ հնարավորությունները գնալով պակասում էին, ժողովուրդը լրիվ ունեզրկվում էր, աղքատանում: Նրանք քաղաքի թաղամասերն ու գավառները բաժանել էին իրար մեջ և պատժում ու թալանում էին իրար հարկատուներին: «Միշտ եռացող կաթսա մըն էր Վանը, ուր ո՛չ կյանքի, ո՛չ ինչքի և ո՛չ ալ պատվի ապահովություն գոյություն ուներ: Հարուստները կկողոպտվեին շարունակ և երբեք իրենց կյանքը ապահով չէր: Խոջա Ախիջան Գարասեֆերյանը, որ երկար ատեն վաճառականապետ եղած էր Վանի փաշային, 1797-ին կողոպտվեցավ»[2]: 1797 թ. ապրիլի 2-ին Գարասեֆերյանի տունը այրեցին և 600 քսակի արժողության ապրանք կողոպտեցին[3]:

XVI դարասկզբից սկսած, անընկճելի էր մնում Բաղեշը (Բիթլիսը),

[1] *Հակոբ Շահպազեան*, Քիւրդօ-Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 109:
[2] «Դիվան Հայոց պատմութեան», հ. Ժ, Թիֆլիս, 1908, էջ 148: Տե՛ս նաև *Արշակ Ալպոյաճեան*, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 451:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 150:

որը հզորությամբ առաջինն էր Թուրքիայի քրդապատկան իշխանապետությունների մեջ: Բաղեշին իշխելու իրավունքին տիրանալու համար այն ձեռքից ձեռք էին խլում անվանի քուրդ բեկերը: Նրանք հերթով մեծագումար կաշառք էին տալիս Բ. Դռանը, երբեմն էլ սուլթաններին, ստանում կառավարելու արտոնագիրը: Ամեն մեկն, անցնելով իշխանության գլուխ, նոր այնպիսի հարկեր էր մտցնում, որ կարճ ժամանակամիջոցում վերականգնում էր տված կաշառքի գումարը: Թուրքական արքունիքին ձեռնտու էր կաշառակերության այդ մեթոդով քրդական խաներից «գումարներ կորզելը»: Իսկ այդ բոլորը դուրս էին գալիս անպաշտպան բաղեշահայության, մասամբ էլ քուրդ աշխատավորության գրպանից:

Ծանր էր Բաղեշի հայության քաղաքական կացությունը: «Այսպես, 1705-ին Բաղեշի Հաքիմը (դատավոր մոլլան) հրաման մը կը հանե,- բերում է Ա. Ալպոյաճյանը,- որ երբ քրիստոնյա մը իսլամանա, անոր ազգականներուն մեջ ով որ անչափահաս արու զավակ ունենա, պետք է տա այդ կրոնափոխին: Այս դաժան որոշումը, որ մոլլան նվիրագործելու համար Վան կերթա, բարեբախտաբար անգործադրելի կմնա, վասնզի Վանի հայերը, Բաղեշի հայերի խնդրանքով, ջնջել կուտան այս օրենքը և կազատեն բաղեշցիները զուլումէ մը»[1]:

Մշո հայ ազգաբնակչությունը քուրդ բեկերի ձեռքին տանջամահ էր լինում, միջցեղային կռիվներից տնտեսապես լրիվ քայքայվում: Բերենք մի օրինակ: 1700 թ., քուրդ խանի հրամանով, հայերի կոռային, անվճար աշխատանքով կառուցվեց Մուշ քաղաքի բերդը: Ինչքա՞ն աշխատանք թափված կլիներ այդ բերդի վրա, երբ 1780 թ. ***այն քանդելու համար հայերից պահանջվեց 1500 մարդու 40 օրվա աշխատանք***[2]:

Հայերը կառուցում ու քանդում էին, իսկ թուրքերն ու քրդերը միայն հրամայում ու վայելում էին:

Այսպիսով, XV-XVII հարյուրամյակներում Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան և թուրքահպատակ հայաբնակ մյուս նահանգները *իրավական*, առավել ևս՝ *իրական* առումով, ապավինած էին Մուհամմեդի նոր երկրպագուների գթասրտությանը՝ եթե դա ունենային, մարդկային խղճին՝ եթե դեռևս չէր մեռել: Տիրակալները հավերժականորեն զբաղված էին միջցեղային և միջֆեոդալական արյունահեղ ու զոհառատ մարտերով, որոնց ընթացքում երկիրը տրորվում էր փոքր ու մեծ ախոյանների ձիերի սմբակների տակ: Բոլոր տեսակի ճնշումներին դիմացող, սեփական վաստակով ապրող, իշխող թուրքերի և ասպատակող քրդերի քմահաճույքները կատարող, անհավատի պիտակ ստացած հայ ժո-

[1] *Արշակ Ալպոյաճեան*, Պատմական Հայաստանի սահմանները, էջ 444: Տե՛ս նաև *Լեո*, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1946, էջ 734:
[2] *Արշակ Ալպոյաճեան*, նշված աշխատությունը, էջ 446:

ղովուրդը շարունակում էր հարատևել, հույս ունենալով, որ դրսի մեսիայի օգնությամբ կփրկվի դժոխային տանջանքներից և ինչ-որ մի օր կվերընձյուղի ազգային պետականություն: Դժբախտաբար, այդ հույսերը մեծամասամբ մնում էին իբրև սին հույսեր, և դեռևս հեռու-հեռու հորիզոնում էր աներևույթ ազգային պետականության իրագործումը:

*

* *

Ծանր ու անտանելի էին արևմտահայերի վճարած *հարկերն ու տուրքերը:* Թեկուզ խորը միջնադարում եվրոպական, նույնիսկ ասիական բոլոր երկրներում հարկերը տրոհվում էին երկուսի՝ *ուղղակիի* և *անուղղակիի:* Եվրոպայի և Ասիայի ցամաքամասերի վրա փռված, ռազմաֆեոդալական համակարգը գերադասած սուլթանական Թուրքիայում, որտեղ ապրում էին նաև քոչվոր, վաչկատուն, ռազմատենչ բազմաթիվ ցեղեր ու ցեղային միություններ, որտեղ տիրապետող պետական այրերն ու իշխող ժողովուրդն իրենց զարգացման մակարդակով շատ ցածր էին հպատակներից, կիրառվում էր *ապօրինի հարկահանություն*[1]:

Ապօրինի էին այն հարկերը, որոնք հայերը վճարում էին քրդերին, չերքեզներին, լազերին, թափառաշրջիկ թուրքմեններին: Նրանք այդ հարկերը «ռայայից» խլում էին *զենքի զորությամբ* և *ուժեղի գերագույն իրավունքով:*

Քաղաքակիրթ երկրներում *ուղղակի* հարկերը գանձվում էին օրինականացված հրամանագրերով և ծանրանում էին հողերի, այգիների, տների, անասնատերերի ուսերին: Թուրքիայում դրանք ծանր քարի պես ճնշում էին գյուղատնտեսությունից եկամուտներ ստացողներին, ճզմում անհատների գոյության ընդունակությունը, արհեստավորի, առավել ևս արդյունաբերողի բնատուր ձիրքը: Հարկ գանձողները, հղփացած կողոպուտի քանակից, գումարը մեծ լինելով՝ նաև դեղին մետաղի փայլից շլացած՝ չէին խնայում հողային սեփականությունը, անշարժ մյուս կալվածքները, բանող անասունների տերերին: Օրվա կողոպուտով զբաղված, նրանք բնավ էլ չէին մտահոգվում, թե որոշ բան պիտի թողնվի, որպեսզի մյուս տարի ևս *վերարտադրվի,* և իրենք հաջորդ անգամ ևս զբաղվեն հարկահավաքությամբ[2]:

Օսմանյան կայսրությունում հարկային համակարգը «կանոնավոր

[1] «Հարկերը Տաճկաստանում» վերտառությամբ շահեկան հոդվածաշար է տպագրել *Գարեգին Խաժակյանը (Խաժակ):* Տե՛ս «Մուրճ», 1899, N 1, էջ 70-85, N 2, էջ 212-247, N 10:

[2] Տե՛ս «Մուրճ», 1899, N 1, էջ 72-73:

կերպարանք» ստացավ XVI դարի առաջին կեսին, սուլթան Սուլեյման Կանունիի (1520-1566) գահակալության առաջին զույգ տասնամյակներին: Իրանի դեմ մղած պատերազմների հաղթական ավարտից հետո նա հրամայեց հիմնավոր հաշվառում կատարել իր կայսրության մեջ, հատկապես նոր նվաճված Անդրկովկասում: Հիմք դրվեց «կանոնավոր հարկահանությանը», կազմվեց հարկերի ցուցակը, տրվեցին դրանց ձևակերպումն ու գանձաչափերը[1]:

Օսմանյան պետության գանձած հարկերի ստվար ցուցակը սկզբնավորվում է *գլխահարկով:* Այն կոչվում էր *խարաջ, ջիզիե,* հետագայում, հատկապես «Թանզիմաթ»-ից հետո, վերանվանվեց *բեդելիե ասկերիե* (զինվորական հարկ) և հարատևեց մինչև 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումը: Հարկը գանձվում էր միայն քրիստոնյաներից ղուրանի այն սկզբունքի հենքի վրա, որը մուսուլմաններին կոչ էր անում՝ «Սպանեցեք անհավատներին այնքան ժամանակ, քանի դեռ նրանք իրենց կյանքի համար փրկագին չեն վճարել»[2]:

Ուրեմն իսլամական հոգևոր, ապա նաև աշխարհիկ կերպարանք ստացած «օրենսդրությունը» սահմանում էր, որ *գլխահարկ-ջիզիե* պարտավոր են վճարել բոլոր քրիստոնյաները, հրեաները, մեկ անվան տակ անհավատները, որպեսզի մահմեդական երկրում ապրելու իրավունք ձեռք բերեն: Իսկ գիտե՞ք որն էր մահմեդական այդ երկիրը հայերի համար, ո՛չ ավել, ո՛չ պակաս՝ Արևմտյան Հայաստանը՝ իրենց դարավոր ու հնամենի Հայրենիքը: Այն արդեն դարձել էր «ալլահի սեփականությունը» և այնտեղ, այսինքն՝ իրենց պատմական ու իրական հայրենիքում, շնչելու համար հայերը պարտավոր էին հարկ վճարել այդքան ծանրությամբ:

Խարաջից ազատ էին մինչև 12 տարեկան երեխաները, զառամյալ ծերունիները, հաշմանդամները, այսինքն՝ նրանք, որոնց նույնիսկ պատերազմների ժամանակ չէին սպանում: «Օրենքով» յուրաքանչյուրից ջեզիե էր գանձվում 25 ակչե[3]:

Սակայն, եթե ամոթ չէ, հարցնենք, այդ ո՞ր օրենքով, ո՞ւմ հսկողությամբ: Նույնիսկ թուրք հեղինակները հակառակ կարծիք են հայտնում:

Գյուրիջելի Կոչի բեյը եղել է Մուրադ IV սուլթանի մտերիմ անձնավորություններից: 1631-1632 թվականներին գրած և նույն տարում փադիշահին հանձնած *«Ռիսալեն»* (զեկուցագիր) վերտառությամբ իր գրության մեջ նա անդրադարձել է նաև գլխահարկին: Կոչի բեյը գրում

[1] Այս մասին մանրամասն տե՛ս «Գործ» ամսագիր, 1917, N 4, *Ա. Մկրտչյանի* «Հողային հարցը Թուրքահայաստանում» հոդվածը, էջ 50-66:

[2] *Ա. Ն. Ներսիսյան,* Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրիենտացիան XIX դարի առաջին կեսին, էջ 39-40:

[3] Տե՛ս *Մ. Կ. Զուլալյան,* նշված աշխատությունը, էջ 288:

է. «Մինչև 990 (1582) թվականը աղքատ ռայաների ամեն մեկ շնչից գանձվում էր *40-50 ակչե ջիզիե* և 40 ակչե տան ավարիզ...

Սկզբում տան ավարիզից առնվում էր 40-50 ակչե, ներկայումս (այսինքն 1632 թ.-Հ. Ղ.) *ջիզիեից միայն պետության համար* նշանակվել է *շնչից 240 ակչե*, ամեն մեկ տան ավարիզից 300 ակչե, ամեն մեկ գլուխ ոչխարի համար մեկ ակչե... Ռայաները ի՞նչպես կարող են տանել այս բռնությունները: Երկրի ժողովուրդը ինչպե՞ս կարող է ապրել այսպիսի պայմաններում... ա՜խ, ուժեղ *բռնությունը գերդաստաններ կոչնչացնի և վշտաբեկ մարդկանց արտասուքը դժբախտության մեջ կխեղդի աշխարհը*»[1]:

Զարմանալի է, բայց փաստ, որ իսլամի ծառան իր գերագույն տիրոջն այդպես էր զեկուցում: Կոչի բեյը շարունակում է. «Աշխարհը անհավասարություն կարող է հանդուրժել, սակայն բռնություն չի հանդուրժի: Արդարությունն է երկարակեցության պատճառը: Երկրի կարգն ու կանոնը փադիշահի աղքատների համար արքայություն է ստեղծում»[2]:

Կարինում *խարաջի* ավել գանձման պատճառով կատարվող ավերածությունների մասին է պատմում դեպքերին ականատես, XVII դարի հեղինակ Հակոբ Կարնեցին: Ըստ նրա աչքառու վկայության, 1643 թ. Կ. Պոլսից Կարին է ուղարկվում Զաֆար անունով մի անխիղճ մոլլա, որին հանձնարարություն էր տրված նոր «աշխարհագիր» կատարել և խստացնել հարկերը, հատկապես *ջիզիեն*. «...Եղև հրաման մեծ կայսերէն Ստամպոլա իվերա մոլլայի միոջ, որ էր հույժ անվանի և առաջակայեր քաղաքիս Արզրումա և փաշաներաց, Զաֆար անուն ժանտաբարո և քրիստոնեից դասին և աշխարհագիր առնել զբոլոր շրջակաս երկիրս Արզրումա: Եվ եղեալ արար դադար և *կապեաց ծանր խարաճ* և ելից մեծ ու փոքր ի թագավորական դավթարն, և երկրիս վրացիքն ամենայն երկիւղալք ի ահէ խարաճին դարձան յօրենս Մահմեդի. ապա ազգս հայոց մնացին ի վերա հավատուն ողորմութեամբ Քրիստոսի և աղոթվս Լուսավորչին...»[3]:

Թուրքիայի սոցիալ-քաղաքական կյանքում նոր խստացումներ ենք նկատում: Այսինքն, ինչքան մոտենում ենք նոր պատմաշրջանին, այնքան ծանրանում են հարկերը, առավել ևս *գլխահարկը-ջիզիեն*: XVIII հարյուրամյակում ջիզիեի գանձման երեք կարգերն (հարուստ,

[1] «Թուրքական աղբյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց *Ա. Խ. Սաֆրաստյան*, հ. Բ, Երևան, 1964, էջ 230-231:

[2] Նույն տեղում, էջ 231:

[3] *Ա. Ն. Ներսիսյան*, նշված աշխատությունը, էջ 40: Տե՛ս նաև *Հակոբ Կարնեցի*, Տեղագիր Վերին Հայոց, յիշատարական ԺԷ դարու (հրատ. *Կ. Կոստանյանց*), Վաղարշապատ, 1903: Տե՛ս նաև Մ. Մաշտոցի անվան մատենադարան, *Գարեգին Հովսեփյանի* արխիվ, թղթ. 87, վավ. 7:

միջակ, աղքատ) այլևս չեն պաշտպանվում: Կ. Պոլսի անգլիական դեսպան Հենրի Գրենվիլի Լոնդոն ուղարկած զեկուցագրերից (որոնք հետագայում հրապարակվել են) Մ. Կ. Զուլալյանը մեջբերում է հետևյալ ընդարձակ քաղվածքը, որը վերաբերում է XVIII դարի 60-ականներին Թուրքիայում ջիզիեի գանձման ժամանակ թույլ տված չարաշահումներին. «Գլխահարկը,- գրում է նա,- բաժանվում է երեք խմբի. հարուստները վճարում են տասնմեկ ղուրուշ: Արհեստավորները և երկրորդ խմբի մարդիկ վճարում են հինգ ղուրուշ և քսան փարա, երրորդ խումբը, որի մեջ մտնում են երկրագործները, աղքատները, առանց բացառելու նույնիսկ մուրացկաններին, վճարում են երկու ղուրուշ և 30 փարա... կանայք և երեխաները խարաջ բոլորովին չեն վճարում, սակայն, այսուհանդերձ, պարզված չէ, թե որ տարիքից են պատանիները սկսում վճարել...

Խարաջի հարկահավաք պաշտոնյաները, հարստանալու նպատակով, խաբում են Տիրակալին՝ կիսելով եկամուտը և տալով անդորրագիր երկրորդ կարգի այն մարդկանց, ովքեր ենթակա են առաջին կարգի անդորրագրի, և նույնպես երրորդ կարգի անդորրագիր են տալիս նրանց, ովքեր պետք է ստանային երկրորդը... Աղքատները, որոնք հնարավորությունից զուրկ են միանվագ վճարման, հետաձգում են, ստանում միայն նվերներ տալուց հետո, իսկ այնուհետև, նվերների և վճարելիք խարաջի չափը հաճախ դառնում է կրկնակի: Նահանգներում մեծ շրջաններ ընդգրկող համաճարակը, գումարած *խարաջի գանձման ժամանակ թույլ տրված կամայականությունները, ստիպում են յուրաքանչյուր տարի մեծ թվով մարդկանց լքել իրենց* հայրենիքը»[1]:

Տվյալ դեպքում նահանգապետ փաշաները, առաջին հերթին, Բ. Դռանը խաբելու, գաղթը թաքցնելու նպատակով հաջորդ տարում մնացած հարկատուներից գլխահարկ էին գանձում *եռապատիկ*, երբեմն՝ *քառապատիկ*, որպեսզի լցնեին բացը, վերացնեին նախորդ տարիների գանձումների տարբերությունները:

Իր ծանրությամբ երկրորդը, երբեմն նաև առաջինը համարվող հարկերից *աշարն* էր՝ *տասանորդը*, որը գանձվում էր Արևմտյան Հայաստանի ողջ գյուղաբնակչությունից: Հարկաչափը, ըստ կանոն-նամեների, ի սկզբանե, այսինքն՝ Օսմանյան տերության հիմնադրման պահից, որոշված էր՝ ստացված բերքի մեկ տասներորդը, այդ պատճառով էլ ստացել էր *տասանորդ* անվանում: Սակայն քրիստոնյա հարկատուները անկուշտ հարկահաններին վճարում էին երբեմն մեկ քառորդը, երբեմն էլ կեսը և դեռևս չէին ազատվում նրանց երկաթյա մագիլներից:

Գյուղացիությունը տասանորդը վճարում էր ոչ թե տեղական բարձ-

[1] *Մ. Կ. Զուլալյան*, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, էջ 305:

ռաստիճան թուրք պաշտոնյաներին կամ զինվորականներին, այլ անմիջապես պետական գանձարանին, սակայն միջնորդ օղակներով[1]: Ամեն էյալեթի աշարը հանվում էր *աճուրդի*, վաճառվում վալիանիստ քաղաքում: Տարվա որոշակի ամսում նահանգի կենտրոնում էին խմբվում հարուստ վաշխառուները մասնակցելու աճուրդի պրոցեսին: Ամբողջ էյալեթի աշարի գնումը մեկ վաշխառուի ուժերից վեր էր, այն էլ Թուրքիայի ներքին նահանգների պես մի երկրահատվածում, ուր դեռ խոշոր հարուստներ չէին ձևավորվել: Այդ էր պատճառը, որ երբ նահանգի աշարը բաժանվում էր մասերի, ապա յուրաքանչյուր մասն առանձին-առանձին էին վաճառում: Ամեն մի խոշոր աշարառու իր հերթին մասմաս վաճառում էր հարկահավաքներին: Պարզ էր, որքան շատ ձեռքից ձեռք անցներ գնման ու վաճառքի պրոցեսը, այնքան կթանկանար գինը, հետևաբար և կսաստկանար կողոպուտը[2]:

Աշարը գնող վաշխառու կապալառուն, գործարքն ավարտելուց հետո, նախ վարձում էր մի քյաթիպ (գրագիր) գործերը վարելու հանձնարարությամբ: Դրանից հետո հրավիրում էր հարկահավաքների *մուլթեզիմների:* Սրանք նույնպես վարձատրվելով, աշարը հավաքում էին մեկ կամ մի քանի գյուղերից օգնականներ ունենալով *շահնաներ:* Բարդության դեպքում մուլթեզիմն ու շահնան իրավունք ունեին *զափթիեներ* հրավիրել և անհնազանդներին պատժել տալ:

Գյուղացին ծեծում էր կալը, ցորենը թեղ անում, պատրաստում: Նա իրավունք չուներ հատիկը ջվալները (պարկեր) կամ ամբարը լցնել, մինչև մուլթեզիմն ու շահնան չգային, չչափեին, հարկը չվերցնեին: Մուլթեզիմը դանդաղում էր գալ. նա ոտքի *քիրեի* էր ուզում: Գյուղացին արդեն անգիր գիտեր այդ ամենը, դրա համար էլ ենթարկվում էր նրա բոլոր քմահաճույքներին: Այլապես շահնան կգար կալ, նահապետական փայտյա կնիքով կկնքեր ցորենի շեղջը: Խախտեցիր կնիքը, քյաթիպը այն դիտում էր որպես պետական գողություն և բռնագրավում ամբողջ բերքը:

Թափուն կամ *կալվածքահարկը* համարվում էր պետական հարկ. վճարվում էր մեկ անգամ՝ այն դեպքում, երբ հողաբաժինը կամ կալվածքը, երբեմն էլ նվիրատվության իրավունքով փոխանցվում, օտարվում էր ուրիշի[3]:

Սալարիեն տարեկան բերքի այն մասն էր, որը գանձվում էր գյուղացուց պետական ղեկավար պաշտոնյաների (վեզիրների, միրիմիրանների, սանջակբեյերի և այլոց) օգտին: «Որպես սալարիե,- կարդում ենք էրզրումի կանուն-նամեում,- բերքի մեկ տասներորդ մասից մեկ

[1] Տե՛ս «Մուրճ», 1899, փետրվար-մարտ, *Խաժակի* հոդվածաշարը, էջ 212-213:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 213-215:
[3] Տե՛ս *Ա. Ն. Ներսիսյան*, նշված աշխատությունը, էջ 40:

տասանորդը վերցնելուց հետո, յուրաքանչյուր քառասուն քիլեից վերցվում է մեկ քիլե»[1]:

XVI-XVIII դարերում այլահավատներից գանձվող հարկ էր նաև *իսփենջը:* Այն գումարվում էր գլխահարկին և գանձվում էր բոլոր քրիստոնյաներից, անկախ նրանից, թե վերջիններս հող մշակո՞ւմ են, թե՞ ոչ: Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթարում մատնանշված բոլոր տեսակի հարկերի մեջ իսփենջը առաջնային տեղ է գրավում[2]:

Կային նաև բազում ու բազմաթիվ այլ հարկեր, որոնց մանրակրկիտ վերլուծությունը մեր առջև դրված խնդրից դուրս է: Համենայնդեպս, թվարկենք դրանցից մի քանիսը: Կային *ընտանեկան կամ ամուսնական հարկ, հողային հարկ կամ արազը վերգբսի* (այն բաժանվում էր երկու մասի. ա) տան, խանութի կամ որևէ շինության տեղի հարկ, բ) այգու, արտի, արոտատեղի հարկ, տան հարկ կամ *եմլաք,* արհեստի հարկ կամ *թեճիրեթ,* վաճառականական հարկ կամ *գիլդա,* ճանապարհների հարկ, կենդանիների հարկ կամ *աղնամ-դամճուռ*[3]:

Ռեսմի-շիֆթը գանձվում էր հողի որոշակի միավորի համար, հաշվի առնելով հողի որակը, բերքատվությունը: *Դենյումը* դրամական տուրք էր, գանձվում էր բանջարանոցների, խաղողի տնկարանների համար, որոնց տերերը վճարում էին նաև տասանորդ[4]:

Երկրի ու ժողովրդի վիճակն առավել անտանելի էր դառնում, երբ նրանց հայրենի գյուղերով ու շեներով անցնում էին, տեղաշարժվում թուրքական կանոնավոր ու անկանոն զորքերը, քրդական զինված խոլամները: Այդ մասին փաստեր բերելու, սահմռկեցուցիչ տեսարանները ներկայացնելու, զինված մարդկանց ետևում թողած ավերակները ցույց տալու փոխարեն, արժե կրկնել մեծ ֆրանսիացու *Վիկտոր Հյուգոյի այն դիպուկ բանաձևումը, թե զգույշ, «այստեղով թուրքեր են անցել»:* Սրանից ավելին, արդեն ավելորդ է:

Քրդական խաների ու բեկերի հայերից բռնագանձած անթիվ հարկերի, կողոպուտի, ավարառության թեկուզ համառոտ պատմությունը ներկայացնելու համար, երևի հատորներ են պետք: Այս դեպքում առաջնորդվենք ժողովրդական այն դիպուկ ասացվածքով, թե *գինու որակն իմանալու համար խմում են ոչ թե ամբողջ տակառը, այլ մի բաժակն էլ բավական է:* Այս բաժակը թող ներկայացնի հմուտ թուրքագետ, հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայր Գաբրիել վարդապետ Այվազովսկին: Նրա վկայությամբ, քուրդ բեկերը, երբեմն էլ թուրք պաշտոնյաները, հայերի տանն անկոչ հյուր լինելով, ուտելով նրա հացը, իբրև թե մաշում են իրենց ատամները:

[1] *Մ. Կ. Զուլալյան,* նշված աշխատությունը, էջ 295:
[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 286:
[3] Տե՛ս «Մուրճ», 1899, N 1, էջ 73:
[4] Տե՛ս *Ա. Ն. Ներսիսյան,* նշված աշխատությունը, էջ 40-42:

Դրա դիմաց գյավուրները պարտավոր էին իսլամ խժռողին տեղն ու տեղը վճարել *դիշ-քիրասի՝ ատամի վարձ* կոչվող հարկը:

Լսենք Գ. Այվազովսկուն. «Զնոյն և կուսակալքն անողորմի առ ի նմանէ կարգեալք ի տեղիս-տեղիս փոքուն Ասիոյ բռնացեալ գործեին, զի յերկեղելոյ կեղեքելոյ չարաչար ժողովուրդս, *պահանջեին ի նոցանե և վարձս իմն ատամանց տիշքիրաս անվանեալ, իբր զի և զգույշ մաշելո ատամանց յուրյանց ժողովրդին պարտ էին հատուցանել կերեալք, ի նոցանէ որպես կերակուր հացի:* (Ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]:

Այսքանը կարծում ենք բավարար է, որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի, թե իմ ու իր նախորդները սոցիալական ինչպիսի պայմաններում են քարշ տվել իրենց գոյությունը, ստորացուցիչ, մարդկային արժանապատվությունը ոտնահարող ինչպիսի՜ վիրավորանքներ են ստացել *թուրք բարբարոսներից:*

[1] *Գաբրիել Այվազովսկի,* Պատմութիւն օսմանեան պետութեան, հ. Բ, Վենետիկ, 1841, էջ 23: Տես նաև *Ա. Ն. Ներսիսյան,* նշված աշխատությունը, էջ 42:

Գլուխ չորրորդ

Կիլիկյան Հայաստանը XI-XIX դարի առաջին կեսին

ԱՐԵՎՄՏՅԱՆ Հայաստանից զատ, սուլթանական Թուրքիան նվաճեց նաև միջերկրածովյան ավազանում խարսխված, առափնյա մի գեղեցիկ երկիր, որը մարդկության պատմության մեջ մտել է ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻԱ տեղանունով: Ճիշտ է նկատում «Կիլիկիա» աշխատության բազմաշխատ հեղինակը, որ *Կիլիկիան, Տավրոսը, Զեյթունը, Սիսը, Ադանան* այն սրբազան վայրերն են, որոնց անունները, տարբեր առիթներով, գրեթե ամեն օր հայ մարդը լսում է թե՛ հայաշխարհում և թե՛ գաղթաշխարհում: Բայց բոլորը չէ, որ պատկերացում ունեն նրանց տեղավայրի, կերտած հերոսապատումների, աշխարհագրական հարմարավետ դիրքի մասին: «Թե Կիլիկիան դարերից ի վեր կարևոր դեր է խաղացել ընդհանուր ազգերի և մասնավորապես հայ ժողովրդի պատմության մեջ,- գրում է «Արաքսի» Կիլիկիան 1894 թ.,- սա մի ստույգ ճշմարտություն է: Հատկապես այն հանգամանքը, որ այդ երկրում են տեղի ունեցել ժամանակով մեզ ամենից մերձավոր քաղաքական դեպքերը՝ մեր հիշելի անցյալի և որ յուր անզուգական դիրքով ու հարստություններով մի հուսալից ապագայի գրավականն է կրում յուր մեջ այդ երկիրը՝ ամեն մի ուշիմ հայ մարդու համար,- դարձնում է Կիլիկիան բոլորիս հետաքրքրության և ուշադրության արժանի մի աշխարհ»[1]:

Կիլիկիա անվան, նրա աշխարհագրական դիրքի, հանքային հարստության մասին իր գովքն է անում Ավարայրի բլբուլը՝ Մեծն Ղևոնդ Ալիշանը[2]:

Նրա հաստատմամբ, ամբողջ հայաշխարհի բազմադարյան պատ-

[1] «Կիլիկիա», Փորձ աշխարհագրության արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, 1894, էջ 15-16:

[2] Տես *Հ. Ղևոնդ Ալիշան,* Սիսուան, Վենետիկ, 1885, Յառաջաբան, էջ Զ-է:

մության մեջ Կիլիկիան եզակի դիրք ու կարևորություն ունի, թե աշխարհագրական իր լեռնապարսպային դիրքով, թե դեպի Միջերկրական ծովը բացվող 300 կիլոմետրի հասնող աղեղնավոր ծովեզերքով, և թե մանավանդ քաղաքակիրթ աշխարհի հետ ունեցած առևտրատնտեսական կապերով ու միջազգային հարաբերություններով[1]:

Կիլիկիա անվան ստուգաբանության շուրջ ստեղծվել են բազմաթիվ վարկածներ ծավալուն գրականություն: Տավրոսյան հայաշխարհը «Կիլիկիա» կոչվելու մասին առաջին անգամ հիշատակվում է մ.թ.ա. IX դարում, ասորեստանյան Սալմանասար III-ի արձանագրության մեջ, որը նվաճել էր այդ երկիրը: Այն սկզբում ունեցել է *«Կյուլիկ»* կամ *«Կիլիկ»* անվանաձևերը: «Բանասերները «Կիլիկիա» անուն ծագած կուզեն տեսնել սեմական լեզվի «խիլքիմ» «քարքարուտ» բառեն, *«խելեք»* բառի հոգնակի ձևով, ակնարկելով որպես թե երկրին քարքարուտ ու լեռնային ըլլալուն,- գրում է Բյուզանդ Եղիայանը,- կամ *«խիլակկու» են, որ Տավրոսի Հյուսիսային շրջանի բնիկ ժողովուրդին անունն էր, որ Ը դարու վերջերը և է դարու սկիզբները Ն. Ք. իջավ նաև դաշտային մասերուն և երկրին տվավ իր անունը* (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[2]:

Մենք համերաշխում ենք վերջին կարծիքը պաշտպանողների հետ, քանզի այն ստուգաբանվել է Սփյուռքում ապրող մեր հայրենակից կիլիկահայ մտավորականության կողմից և ոչ միայն հավանական է, այլև գիտական:

Աշխարհագրական դիրքով Կիլիկիան փռված է Միջերկրական ծովից դեպի արևելք՝ լայնությամբ 36-38 աստիճանների և երկարությամբ 32-37 աստիճանների վրա՝ Փոքր Ասիայի հարավ-արևելյան անկյունում[3]:

Երկրի բնական սահմաններն են. *հարավից*՝ Միջերկրական ծովը, որը կտրատում է նրա ափերը «...և կկազմե Տարսոնի գոգը և Ալեքսանդրետի խոր ծոցը, որ հին ատեն Իսոսի և Ռուբինյանց ժամանակ *Հայոց ծոց* կամ *ծով* կկոչվեր: *Արևելքեն*՝ Ամանոս լեռնաշղթան, որ արևելքեն հարավ-արևմուտք երկարելով՝ կպարսպե Հայոց ծոցի արևելյան ափերը և կվերջանա Ռաս-էլ-Խանձիր (արաբերեն՝ խոզի գլուխ) հրվանդանով, հին անունով՝ Հռոսիկյան հրվանդան: *Հյուսիսեն* և *Արևմուտքեն*՝ Տավրոսի լեռներուն աղեղնաձև գոտին, որ կվերջանա Միջերկրականի մեջ Անամուռի հրվանդանով: Ավելի հին սահմաններն

[1] Տե՛ս «Ատանայի Հայոց պատմություն», խմբագրեց *Բյուզանդ Եղիայան*, Անթիլիաս-Լիբանան, 1970, էջ 3-4:

[2] Նույն տեղում, էջ 4:

[3] Տե՛ս «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», երկասիրեց *Գր. Հ. Գալուստյան* (Կիլիկեցի), Նյու Յորք, 1934, էջ 3:

էին. հյուսիսեն Կապադովկիան, արևմուտքեն Պամփյուլիան, արևելքեն Ասորիքը և հարավեն Միջերկրականը»[1]:

Սակայն Կիլիկիան հայացման, հատկապես Լևոն Երկրորդի գահակալության տասնամյակներին, ուներ ավելի ընդարձակ սահմաններ: Այդ ժամանակ արդեն նրա մասերն էին կազմում Իկոնիայի սուլթանության Նիյտե, Էրեյլի, Գարաման քաղաքներն ու նրանց հարակից գավառները: Հյուսիսից արդեն անցնում էին Տավրոսյան լեռները անորոշ տարածությամբ, արևելքից Ամանոս լեռները, իսկ հյուսիս-արևելքից տարածվում էին մինչև Եփրատ գետը:

Կիլիկիայի բաժանումների մասին ևս գոյություն ունեն տարակարծություններ: Հայր Ալիշանն այն բաժանում է չորսի՝ *Լեռնային, Քարային, Դաշտային* և *Ծովային*[2]:

Ասորական աղբյուրները Կիլիկիան տրոհում են Լեռնայինի և Դաշտայինի[3]:

Գր. Գալուստյանի կարծիքով Կիլիկիան ուներ երկու մաս՝ *Քարային* և *Դաշտային* անուններով: Բուն կիլիկեցիները, որոնք ապրել են հայրենիքում, ապա՝ եղեռնից մազապուրծ, ճողոպրել են արտասահման և գրել իրենց երկրի պատմությունը, նշում են, որ այն կարելի է բաժանել *Ծովեզրյա* Կիլիկիա, *Դաշտային* Կիլիկիա, *Լեռնային* Կիլիկիա[4]: Նրանք նաև հիմքեր են փնտրել Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու աշխատություններում:

Կիլիկիայի ամենաբարձր ու հաղթական լեռնակույտը Տավրոսի լեռնաշղթան է՝ իր ճյուղավորումներով, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ Փոքր Ասիայի և Հայաստանի բարձր լեռնագոտիների մի երկար շղթա: Այն իր հերթին՝ Արևելյան Ասիայի ահագին լեռնադեզի անընդհատ շարունակությունն է՝ Իրանի լեռնադաշտի միջով: Տավրոսը Կիլիկիայի տարածքի վրա, իր ծոցից դեպի հյուսիս-արևելք է արձակում մի հսկայական բազա: Այն ունենալով *Անտիտավրոս* անվանումը, ճյուղավորվում է երկու գոտիների և ձգվում մինչև Սև ծովի մատույցները: Կենտրոնական լեռան բազուկն է *Ամանոսի* չընդհատվող շղթան, որը նրանից բաժանվելով, շարունակվում է հարավային ուղղությամբ և ձգվում մինչև Հռոսիկյան հրվանդան[5]:

Հետագայում Տավրոսյան լեռնաշղթան բաժանվել է երեք առանձին գոտիների, երեք անուններով: Գլխավոր և միջին գոտին վերանվանվել

[1] «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», էջ 3-4, որը վերցված է «Կիլիկիա» աշխատության 16-17-րդ էջերից:

[2] Տե՛ս *Ալիշան*, նշված աշխատությունը, էջ 111:

[3] Տե՛ս «Ատանայի Հայոց պատմություն», էջ 5:

[4] Նույն տեղում, էջ 4:

[5] «Կիլիկիա, փորձ աշխարհագրության արդի Կիլիկիոյ», էջ 20:

է *Բուլղար դաղի* «որն ամենաթանձր մասն է ձգված հյուսիս-արևելքեն հարավ-արևմուտք»[1]:

Դեպի հյուսիս-արևմուտք է ձգվում զուգահեռական մի ցածր լեռնագոտի, կազմելով էլ-Խոճա գետակի այգեզարդ ու անտառապատ գավառները: Մայր լեռան արևելյան ծայրից ձգվում է երկրորդ լեռնագոտին: Այն անցնում է հյուսիս-արևելքով, ունի Ալա Դաղ անուն և Ափիզ Քար բարձրագույն գագաթ: Բուլղար Դաղի արևմտյան ծայրից դեպի հարավ-արևմուտք է երկարում *Տյումպեչուկ* Դաղի երրորդ լեռնագոտին, վերջանալով առափնյա *Անամուրով:*

Կապադովկիայից Կիլիկիա տանող գլխավոր լեռնանցքը ունեցել է *դրունք* (դռներ) *Կիլիկիո* անվանումը, որը ստացել է *Կուկլակ* կամ Գուգլակ համանուն բերդի անունից: Աքեմենյան Պարսկաստանի աշխարհակալության հարյուրամյակներին (մ.թ.ա. VI-V դարեր), այդ կիրճով է անցել Շոշ-Սարդես *արքայական ճանապարհը:* Առաջին աշխարհամարտի նախօրեին Կայզերական Գերմանիան ծրագրեց կառուցել Բ-խորանարդ, այսինքն *Բեռլին-Բասրա-Բաղդադ* կոչվող ճանապարհը: Գերմանացիների նախագծով թուրքերը սկսեցին կառուցել Բեռլին-Բաղդադ երկաթուղին, որն անցնում էր այդ նույն կիրճով և որը *ողբերգական դեր կատարեց* դեպի *Մեծ Եղեռնի անդնդախոր ճանապարհները* «քայլեցվող» արևմտահայության համար: Գերմանացի սպաների գլխավորությամբ էմիր փաշայի ասկյարներն Արևմտյան Հայաստանից հազարավոր երիտասարդներ էին քշում դեպի նորակառույց ճանապարհը: Սկզբում նրանց աշխատեցնում էին ծանր պայմաններում, հետո, ձեռքերն ու ոտքերը ջարդելով, գրեթե կիսամեռ վիճակում թաղում էին նախօրոք իրենց իսկ ձեռքերով փորված փոսերի մեջ[2]:

Դաշտային Կիլիկիան մի հարթ դաշտավայր է, արգասաբեր հողերով, որտեղ աճում են մերձարևադարձային գրեթե բոլոր կուլտուրաները: «Այն իր արգասաբերությամբ,- գրում է Գր. Գալուստյանը,- բաղդատելի է եգիպտոսի *Տելթային* հետ, հյուսիս-արևմուտքեն եզերված է Տավրոսի շղթայի ստորոտներով ու բաց է ծովի կողմեն, ուր բացի քանի մը խոշոր բլուրներե՝ ոչ մեկ բարձրություն կխանգարե տեսարանին միօրինակությունը: Այդ բլուրներն են՝ Ճեպել-յուն-նուր (2300 ոտնաչափ) և Տյուլի լեռնաշղթան՝ Հայոց ծոցի և Ամանոսի արևմտյան կողմը»[3]:

Երկիրը կիսաբոլոր շրջապատված լինելով լեռներով, ոռոգվում է տավրոսյան ցրտաշունչ բարձունքներից գահավեժ իջնող չորս գետերով, որոնք են. *Պիռամոս, Սարոս, Կալիկադնոս, Կյուդնոս:* Հորդառատ այդ գետերը սրընթաց իջնելով Կիլիկիայի դաշտավայրը, իրենց ջրի մի մասը տալիս են գյուղատնտեսությանը, ապա մնացածով թափվում Միջերկրական ծովը[1]:

Կիլիկիան, ցայսօր հայտնի դարձած տվյալների համաձայն, ի սկզբանե ընկել է փյունիկեցիների տիրապետության տակ: Հետագա դարերում հերթականությամբ նրան տիրել են հույները, ապա պարսիկները: Սակայն հին կիլիկեցիները փառաբանվել են իբրև հանդուգն ծովահեններ և «հիրավի իրենց բախտախնդիր արշավանքներով սարսափ են ազդել մինչև Իտալիոյ սահմանները»[2]: Պոմպեոսի հաղթական արշավանքներից հետո այս երկրին կառավարիչ է նշանակվել հռչակավոր *Ցիցերոնը* «միշտ գանգատվելով այս անզուսպ լեռնականներից»: «Վեսպասիոն կայսեր կառավարման տարիներին,- գրում է «Կիլիկիայի» հեղինակը,- բնիկ իշխանների և Օգոստոսի ժամանակ վեց ազատ քաղաքների գոյությունն էլ ցույց է տալիս այն հոգին, որը երկար տարիների ընթացքում վառ է մնացել Կիլիկիո բնակիչների սրտում»[3]:

Կիլիկիան հետագայում նվաճվել է Ասորեստանի, արաբների, ապա եգիպտացիների կողմից: Մ.թ.ա. 69 թ. *Տիգրան Մեծը նվաճեց Կիլիկիան* և, ճիշտ է, կարճ ժամանակով, բայց և այնպես դարձրեց իր լայնարձակ պետության նահանգներից մեկը: Դրանից հետո երկիրը երթևեկի վայր դարձավ հայերի համար, և աստիճանաբար հայկական տարրը ոչ միայն թափանցեց, այլև ստվարացավ այստեղ: Չորրորդ դարի լատինական պատմիչ Ամմիանոս Մարկելլոսը *Հայկական ծոց* է կոչում Միջերկրականի արևելահյուսիսային անկյունը[4]:

Փոքր Ասիայի Հարավային *Կիլիկիա և Եփրատցիք* նահանգները հնուց ի վեր, հատկապես բյուզանդացիների թուլացումից հետո, եղել են բազմաթիվ հայերի բնակավայրեր: «ԺԱ դարուն գրեթե ամբողջ ընթացքին,- գրում է Գր. Գալուստյանը,- գավառը կկառավարվեր Հայավատական պարոններու ձեռքով, զոր օրինակը Խաչատուր Չորավար Իսավրեան Անտիոքի մեջ, Օշին Լամբրոնի մեջ, Ապլղարիպ Տարսոնի մեջ, Բագունի՝ լեռներուն կողմը, Թաթուլ՝ Մարաշի մեջ և այլն: Ավելի ընդարձակ ու գրեթե անկախ տիրապետող մը էր գող Վասիլ, որն արևմտյան պատմագիրներեն Գովասիլիս և Արաբներե *Պասիլ-էլ-Էրմենի* կոչվեցավ: Կիշխեր Ամանոս լեռներեն մինչև Եփրատ տարածվող երկիրը-Քեսուն, Հյուսնիմասուր, Ռապան, Թլպաշար, Այնթապ և այլն: Այս հողերուն մեծ մասը հետո կցվեցավ Կիլիկիո հայկական

---

[1] *Գր. Գալուստյան,* նշված աշխատությունը, էջ 5:
[2] Մանրամասն տես *Արամ Անտոնյան,* Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Պոսթոն, 1921, էջ 45-52:
[3] *Գր. Գալուստյան,* նշված աշխատությունը, էջ 5-6:

[1] «Կիլիկիա», էջ 26-27:
[2] Նույն տեղում, էջ 36:
[3] Նույն տեղում:
[4] Տես *Գր. Գալուստյան,* նշված աշխատությունը, էջ 12-13:

իշխանությանը զոր Ռուբեն հիմնեց 1080-ին Անիի թագավորության անկումեն 35 տարի ետքը»[1]:

Հնամենի Կիլիկիայի հայերի մասին 4 անգամ հիշատակություն ունի նաև քերթողահայր *Մովսես Խորենացին:* Նա Կիլիկիան դիտում է իբրև *«Հայոց ընտանի երկիր»*: Հինգերորդ դարում Կիլիկիայի բնակչության հայեցի դիմագիծ ունենալու մասին անփոխարինելի փաստեր է թողել Կ. Պոլսի պատրիարք *Հովհաննես Ոսկեբերանը:* Նա աքսորված է եղել Կիլիկիա, որտեղից 403-404 թվականներին նամակներ է ուղղել իր բարեկամ Օլիմպիոսին: Այդ նամակներից պարզվում է, որ բարձրաստիճան հոգևորականը «...Կիլիկիան կկոչէ *«Հայաստան»* ու ժողովուրդը *«հայեր»*, որոնց պարզ կենցաղի և ազնվության մասին գովաբանանք կարձանագրե»[2]:

Հովհաննես Ոսկեբերանի նամակներում եղած փաստերը թարգմանաբար հրապարակելով, իբրև ընդհանրացում, Բյուզանդ Եղիայանը գրում է. «Ասոնք բնական և անկեղծելի ապացույցներ են, թե ե *դարուն սկիզբը, Մեծ Հայքի ոսկեդարու* բազումին, արդեն հոծ *կերպով հայկական բնակչություն մը կար հաստատած Կիլիկիո մեջ,* բյուզանդական կայսրության գերիշխանության ներքո... *«Հայ կառավարիչով»*, որ Ոսկեբերանը այդ հողամասը կրնար կոչել *«Փոքր Հայք»* կամ *«Հայաստան»* և բնիկ ժողովուրդին կրնար ակնարկել որպես *«բոլոր հայերը»*[3]:

Այսպիսով, Միջերկրականի ափերով ու մերձակայքով մեկ փռված այդ երկիրը Հայաստանն էր՝ նախքան Ռուբինյանների հայկական պետականության հիմնադրումը, ձևավորումն ու հզորացումը: Այն բնակեցված էր հայերով, *Հայաշխարհ էր* Բագրատունյաց թագավորության անկումից, հայերի զանգվածային արտագաղթից շուրջ մեկ հազարամյակ առաջ: Ահա՛ թե ինչու մենք այդքան ուշադրություն դարձրեցինք, գուցե մեր խստապահանջ ընդդիմախոսների արդարացի պահանջով, շեղվեցինք բուն նյութից, անցանք պատմության ետնախորքը, որպեսզի մեկ անգամ ևս թուրք «գրագետ» էֆենդիներին հասկացնենք, թե դուք ոչնչացրեցիք հայ բնակչությանը, կուլ տվեցիք նրա արյունը, չեք կարող այլևս ուտել ու մարսել նրա հազարամյակների հայրենիքի Հայկական Կիլիկիայի պատմությունը:

Գիտականից զատ այսօր, առավել քան երբևէ, հույժ կարևոր քաղաքական նշանակություն են ձեռք բերել Կիլիկիայի տարածքի և բնակչության թվաքանակի խնդիրները: Գր. Գալուստյանի կարծիքով Ադանայի նահանգի *«Տարածությունը կհաշվեր 40 հազար քառակուսի հազարամետր»,* որից 432 քառ. մղոն լեռնային, 273 քառ. մղոն մշակելի հողեր և 12 քառ. մղոն ճահիճներ[1]: Այս տվյալները վերցված են «Արաքսի», «Կիլիկիա» աշխատությունից և մշակված ներկայացվել են ընթերցողին[2]:

Ադանացիների վավերագրմամբ իրենց «նահանգի ընդհանուր տարածությունը կհամապատասխաներ մոտավորապես պատմական Հայկական Կիլիկիո տարածությանը *45.000 քառ. կմ,* դուրս ձգելով Սև լեռներու հյուսիսային շրջանը, Մարաշ, Այնթապ, Զեյթուն, Ալպիստան, որպես ենթակա Հալեպի կուսակալության, բայց փոխարենը իր մեջ առնելով Անատոլու դաշտեն մասը մը»[3]:

Հենվելով լատինական, հատկապես արևմտաեվրոպական սկզբնաղբյուրների ընձեռած փաստերի վրա, *Բյուզանդ Եղիայանը* գտնում է, որ հայոց թագավորության ծաղկման շրջանում, այսինքն՝ Լևոն Երկրորդի գահակալության ժամանակ, Կիլիկիայի «ընդհանուր հողային տարածությունը... հասած է *մոտ 45.000 քառակուսի կիլոմետր* տարածության, մոտավորապես արդի Հայաստանի մեկուկես տարածությամբ, կամ ներկա Զվեցարիայեն քիչ մը ավելի, կամ ներկա Լիբանանեն չորս անգամը, միանգամայն իշխելով Միջերկրականի արևելյան ջուրերուն և այդ հանգամանքով նաև մոտակա Կիպրոս կղզին: Հեթումյանց շրջանին՝ այս տարածությունը հասած է *52.000 քառակուսի կիլոմետրի, ԺԳ-ԺԴ դարերուն կամարին*»[4]:

Եվ այսպես, չցանկանալով մեզ հայտնի բազմաթիվ այլ տվյալներով ևս ծանրաբեռնել ընթերցողի ուշադրությունը, իբրև ոսկյա միջին ընդունենք, որ *Կիլիկիայի հայկական պետության տարածքը իր հզորության պահին կազմել է հիսուն հազար քառակուսի կիլոմետր:* Բնակչությունը, բնականաբար, տարբեր դարերում, տարբեր քանակ է ունեցել:

ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական կոլեկտիվի կարծիքով «Կիլիկիայի հայկական պետության ծաղկման ժամանակաշրջանում, XIII դարում բնակչության թիվը անցնում էր *մեկ միլիոնից*», կամ «Կիլիկայի քաղաքներում ու նավահանգիստներում էր կենտրոնացված *Կիլիկիայի մեկ միլիոն բնակչության համարյա կեսը* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[5]:

---

[1] Տե՛ս *Գր. Գալուստյան,* էջ 14: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 673-676:

[2] «Ատանայի Հայոց պատմություն», Անթիլիաս, 1970: Այստեղ մի ընդարձակ գլուխ կա «Նախառուբինյան հայերը Կիլիկիո մեջ», էջ 18-31:

[3] Նույն տեղում, էջ 20:

[1] *Գր. Գալուստյան,* նշված աշխատությունը, էջ 16:

[2] Տե՛ս «Կիլիկիա», էջ 38-39:

[3] «Պատմություն Ատանայի հայոց», էջ 139:

[4] Նույն տեղում, էջ 5:

[5] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 672-673:

Այժմ շատ կարճ անդրադառնանք Կիլիկիայի հայկական պետության պատմությանը, կարճ *քանզի դա մեր առջև դրված խնդիրներից դուրս* է[1]:

Բագրատունյաց Մայր թագավորության անկումից հետո, հայ բնակչության մի ստվար մասը կամավոր, մյուս մասը բռնի, գաղթեցին Կիլիկիա, միավորվեցին հնուց ի վեր այստեղ խարսխված, արդեն տեղացիներ դարձած, բնիկ հայ զանգվածի հետ: *Սրանք Ռուբեն իշխանի գլխավորությամբ 1080 թ. ապստամբվեցին Բյուզանդական կայսրության դեմ և հիմնադրեցին Ռուբինյան իշխանությունը*[2]:

1198 թ. Տարսոնում, մեծ հանդիսավորությամբ, Լևոն Երկրորդը թագադրվեց իբրև Կիլիկիայի թագավոր և իրավականորեն հիմնադրվեց Կիլիկյան Հայոց թագավորությունը:

Նորընծա գահակալն արդեն հզոր էր, ամուր իր գահի վրա, ուներ միջազգային մեծ հեղինակություն: Դրա առհավատչյան թագադրության մասնակիցների բազմամարդությունը, այն է. շրջակա, մոտակա ու հեռավոր բազմաթիվ պետությունների դեսպանները[3], այդ թվում և Բաղդատի խալիֆի բանագնացը:

Սմբատ Սպարապետը գրում է. «647 (1198) թվականի հունվարի 6-ին, Հայտնության օրը, Հռոմի եկեղեցու և գերմանական կայսեր հովանավորությամբ, օծեցին Լևոնին Հայոց թագավոր: Հայերը ուրախացան, որովհետև նրանք, հանձին Հայոց թագավոր Լևոնի, տեսնում էին իրենց վերջերս կործանված թագավորության վերականգնումը[4]:

Լևոն II-ը, ինչպես նաև նրա հաջորդները, փորձեցին վարել ինքնուրույն քաղաքականություն, շրջապատի երկու հզոր պետությունների, ինչպես Բյուզանդական կայսրության, այնպես էլ Հռոմեական Սրբազան պետության նկատմամբ: *Մեծագործ* անվանում ստացած Հայոց արքան 1201 թ. մարտին Ջենովայի հետ ստորագրած առևտրական համաձայնագրում իրեն արդեն անվանում էր «Աստծո ողորմածությամբ Հայոց թագավոր Լևոն», ինչպես և դրամների վրա գրում. «Ողորմածությամբ Աստուծոյ Հայոց թագավոր»[5]:

Լևոն թագավորը հատկապես ակտիվ արտաքին քաղաքականություն վարեց: Նա Դաշտային Կիլիկայից դուրս մղեց Անտիոքին տիրացած խաչակիր ասպետներին. 1216 թ. գրավեց քաղաքը. ապա նվաճեց

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 724:

[2] Մանրամասն տես *Г. Микаелян*, История Киликийского армянского государства. Ереван, 1952 Տես նաև *Ղ. Ալիշան*, Սիսուան. Վենետիկ 1885 «Հայապատում». Վենետիկ, 1901:

[3] «Հայ ժողովրդի պատմություն», հ III էջ 691:

[4] *Սմբատ Սպարապետ*. Տարեգիրք. Փարիզ, 1959. էջ 208:

[5] *Աշոտ Հովհաննիսյան*. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. հ Ա. էջ 61

նավահանգստային Այասը, որն ուներ ոչ միայն տնտեսական, այլև ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն: Արքան օգտվեց երբեմնի հզոր Իկոնիայի սուլթանության ժամանակավոր տկարացումից, նրանից խլեց սահմանամերձ մի շարք գավառներ:

Լևոն Երկրորդը նաև ձեռնամուխ եղավ երկրի պետական կառուցվածքի, վարչական մարմինների լուրջ վերափոխմանը: Նա նախ իր գահաթոռը Տարսոնից տեղափոխեց հզոր բերդամրոցի դիրք ունեցող Սիս քաղաքը և այն հռչակեց իբրև *Կիլիկիայի Հայոց պետության մայրաքաղաք*: Երկրի հզորության առհավատչյան էր սպարապետի գլխավորած *վաթսուն հազարանոց*, մարզված, ժամանակի զինատեսակներով զինված հայոց *մշտական բանակը:*

Կիլիկիայի Հայոց թագավորության ռազմաքաղաքական, առևտրատնտեսական և մշակութային կապերը բյուզանդական կայսրության, թուրք-սելջուկների, խաչակիրների, Հռոմեական սրբազան կայսրության, Եգիպտոսի, Միջերկրածովյան ավազանի փոքր ու մեծ այլ պետությունների հետ միջազգային մեծ ճանաչում բերեցին և հայոց Կիլիկիային, և նրա շնորհաշատ, խելոք, բանիմաց, խիզախ արքային Լևոն Մեծագործին:

Նա լուրջ ուշադրություն դարձրեց արդյունագործության, հատկապես ներքին, ապա՝ ծովային արտաքին առևտրին: Վերակառուցվեցին նավահանգիստները, նավատորմը, կամուրջները, առևտրական ու ռազմական ճանապարհները: Հիմնվեցին իջևանատներ, պանդոկներ, շուկաներ: Կտրվեցին ոսկյա և արծաթյա դրամներ[1]:

Լուրջ ուշադրություն դարձվեց գիտությանն ու գիտնականներին, դպրոցներին ու դպրությանը: Նա գիտնականներից և արվեստագետներից շատերին հրավիրում էր արքայական պալատ, պայմաններ ստեղծում նրանց գործունեության ծավալման համար: Լևոն II-ի օրոք «Կիլիկեցոց աշխարհը լցվեց իմաստությամբ, և բազմացան մատենագրությամբ զբաղվողները՝ կեսը գրչության, մյուսները զարդանկարչության գծով»[2]:

Անկասկած, գնալով վիթխարի էր դառնում Կիլիկիայի հայկական պետության միջազգային հեղինակությունը, որն, իհարկե, մեծապես պայմանավորված էր նրա ներքին ամրակուռությամբ: Այդ պարագան խիստ ոգևորում էր հանուր հայ ժողովրդին, որը Կիլիկիայի թագավորանիստ դառնալը ընդունում էր իբրև հայկական ընդհանուր պետության վերընձյուղման փաստ: Կիլիկիան դարձավ հայերի երկրորդ հայրենիքը և միջնադարյան հայ մշակույթի անփոխարինելի վառարանը: Դրա անվիճելի հաստատումն է Ամենայն Հայոց Կաթողիկոսության փոխադրումը արքայանիստ Սիս մայրաքաղաք:

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 694:

[2] Նույն տեղում:

1219 թ. մայիսի 2-ին վախճանվեց Լևոն Երկրորդ մեծագործ արքան: Նա իր հաջորդներին թողեց մի հսկա տերություն, որի սահմանները տարածվում էին Սելևկիայից մինչև Անտիոք, Միջերկրական ծովեզերքից մինչև Տավրոսի ու Անտիտավրոսի լեռները: Իսկական Կիլիկիայից զատ, Հայոց թագավորության մեջ էին մտնում Պամփիլիան, Իսավրիան, Լիկառնիան, Կադառնիան և Գերմանիկեն[1]:

Գահակալական յոթնամյա պայքարից հետո, 1226 թ. հունիսի 14-ին ***Կոնստանդին Առաջին Բարձրաբերդցի*** կաթողիկոսը Կոնստանդին սպարապետի 13-ամյա որդի Հեթումին օծեց իբրև Հայոց թագավոր՝ հորը վերապահելով խնամակալության իրավունք մինչև որդու չափահաս դառնալը: Այսպիսով կայացավ արքայատոհմի փոփոխում: Շուրջ մեկուկես հարյուրամյակ հետո Ռուբինյաններին փոխարինելու եկան ***Հեթումյանները***, որոնց անդրանիկ թագավոր ***Հեթում Ա-ն*** (1226-1269/1270) նախորդ արքայատոհմի շառավիղների նկատմամբ բարեհաճ վերաբերմունք ցուցաբերեց: Նրանցից շատերին նա պահեց արքունիքում, շատերին նոր պաշտոններ ու կալվածքներ տվեց: Սերնդափոխությունը կատարվեց ոչ միայն անարյուն, այլև խաղաղ ու բարեկամական մթնոլորտում:

Կիլիկիայի տնտեսական ու քաղաքական վերելքը շարունակվում էր Հեթում արքայի գահակալության առաջին երկու տասնամյակներին, երբ արևելքից Միջերկրականի ավազան ներխուժեցին մոնղոլները: 1243 թ. ***Քյոսեդաղի*** և ***«Չմանկատուկ քաղաքագյուղի»*** մոտ մոնղոլները պիտի ճակատամարտ տային իկոնյան սելջուկներին: Կիլիկիայի հայ քաղաքագետների առջև կանգնած էր երկընտրանք՝ կամ օգնել սելջուկներին, ***դրանով իսկ ենթարկվել մոնղոլների հարձակմանը, կամ էլ հրաժարվել այդ օգնությունից և շահել մոնղոլների համակրանքը***[2]: Հայ ավագանին արդեն տեղյակ էր մոնղոլների վայրագություններին, մոնղոլական լծին, որի մասին Կ. Մարքսը գրել է. «Դա մի լուծ էր, որը ոչ միայն ճնշում, այլև անպատվում ու ցամաքեցնում էր նրա տակ ընկած ժողովրդի ոգին իսկ: Մոնղոլ-թաթարները հաստատեցին սիստեմատիկ ահաբեկման մի ռեժիմ (վարչակարգ), որի սովորական միջոցներն էին կողոպուտներն ու զանգվածային կոտորածները»: Մոնղոլական տերության մեծ վեզիր ու պատմաբան Ռաշիդ-ադ-Դինը մոնղոլների մասին գրում է. «Գաղտնիք չի մնում, որ երբեք երկիրներ ավելի չեն ամայացել, քան այդ տարիներին, առանձնապես այն վայրերում, որտեղով անցել է մոնղոլական զորքը, քանի որ մարդու առաջացման ժամանակից սկսած, ոչ մի արքայի չի հաջողվել իրեն ենթարկել այնքան տերություններ, որքան նվաճեց Չինգիզ խանը և նրա տոհմը, և այնքան ժողովուրդ, որքան նրանք

[1] ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 410:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 699:

կոտորեցին, չի կոտորել ոչ ոք (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]:

(Խիստ սխալվում էր իսլամ պատմաբանը. օսմանյան, ապա ***«երիտասարդ»*** թուրքերն ավելի շատ երկրներ ամայացրեցին, մի ամբողջ ժողովուրդ բնաջնջեցին և իրենց ***անասնական մարդատյացությամբ գերազանցեցին պատմության մեջ եղած բոլոր նախորդներին)***:

Հայկական Կիլիկիայում ձևավորված հայ դիվանագետների նրբանկատ փաղանգն այդ դիլեման, այսինքն՝ լինել թե չլինելու ***խնդիրը, ճիշտ լուծեց***: Նրանք ընտրեցին չարիքներից փոքրագույնը, այն է. ավելի լավ է սառեցնել հարաբերությունները Իկոնիայի սուլթանության և Եգիպտոսի մամլյուկների հետ, որոնք համեմատաբար թույլ հակառակորդներ էին, քան թե ենթարկվել մոնղոլական հզոր բանակի ահարկու հարվածներին:

Կանխատեսումը ճիշտ դուրս եկավ: Չմանկատուկի տակ 1243 թ. բռնկված ճակատամարտում Իկոնիայի սուլթանությունը պարտվեց: Հեթում Ա-ը, խնամակալ Կոնստանդինի գլխավորությամբ, բանագնացներ առաքեց Բաչու զորավարի բանակատեղ և նրան առաջարկեց բարեկամություն հաստատել երկու տերությունների միջև: Դաշինքը կնքվեց և, փաստորեն, Կիլիկիան ազատվեց մոնղոլական մարդակուլ երախից: Եվ ոչ միայն...

1254 թ. Հեթում Առաջինը մեծ շքախմբով ուղևորվեց Կարակորում՝ մոնղոլների հետ ***պայմանագիր ստորագրելու***: Հայոց արքան, նախքան Ոսկե Հորդային հասնելը, եղավ մայր Հայրենիքում, որտեղ ընդունվեց աներևակայելի ցնծությամբ: Հայ ժողովուրդը նրան դիտեց իբրև ողջ հայության թագավոր և մեծ հույսեր կապեց նրա հետ: Եվ նա չսխալվեց:

1254 թ. գարնանը Հեթում Ա-ը պայմանագիր ստորագրեց Մանգու մեծ խանի հետ, որի համաձայն 1. պայմանավորվող կողմերը պարտավորվում էին պատերազմի ժամանակ օգնել միմյանց: 2. «Խաղաղություն և բարեկամություն մշտնջենավոր հաստատեսցի ի մեջ նոցա»: 3. Առանց Կիլիկիայի թագավորության համաձայնության և պահանջի, մոնղոլական զորքն ու պաշտոնյաները չպետք է մտնեին Կիլիկիայի սահմանները: 4. Այն հողերն ու քաղաքները, բերդերն ու ամրոցները, որոնք նախկինում պատկանում էին հայկական թագավորությանը, բայց զավթվել էին ուրիշների կողմից, իսկ հետո էլ անցել մոնղոլներին, պետք է վերադարձվեին հայկական թագավորությանը[2]:

Մ. Կ. Զուլալյանը բերում է նաև Կիրակոս Գանձակեցու ամփոփող

[1] «Հայ ժողովրդի պատմություն», 1982, էջ 83:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 703-704: Տե՛ս նաև «Հեթում պատմիչ թաթարաց», Վենետիկ, 1842, էջ 43: ***В. Рубрук,*** Путешествие в восточные страны, перевод Маленина, стр. 115.

կարծիքը Կարակորումում ստորագրված հայ-մոնղոլական պայմանագրի մասին. «Նվերներ ստանալով նրանից (իմա Մանգու խանից), ըստ արժանվույն մեծարվեց (իմա Հեթում թագավորը) նրանից և հիսուն օր մնալով այնտեղ, Մանգու խանից ստացավ հրովարտակ, որ ոչ ոք իրավունք չուներ նեղություն տալ նրան և իր երկրին: *Նա (խանը) տվեց ազատության գիր (իմա հարկերից ազատեց) բոլոր վայրերի (հայկական) եկեղեցիները* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]: «Մայր Հայաստանի եկեղեցուն և հոգևորականությանը շնորհվեցին որոշ արտոնություններ, չափավորվեցին Հայաստանի հարկերը»[2]:

Հեթում թագավորն օգնում էր հայրենի Հայաստանին, սակայն արդեն շատ էր ուշ: Մոնղոլներն այնպես էին ավերել նրա Հայրենիքի երկու հատվածները, որ դրանց վերականգնումը դարձել էր անհնարին:

Մենք հատուկ ուշադրություն դարձրինք Լևոն II-ի և Հեթում I-ի գահակալության շրջանի Կիլիկիայում կատարված կարևոր անցքերի վրա, քանի որ երկիրն այդ ժամանակահատվածում ոչ միայն քաղաքականապես հզորացել, այլ նաև տնտեսապես մեծ ու աննախադեպ վերելք էր ապրել: Կիլիկիան վերածվել էր եվրոպական տիպի մի այնպիսի զորեղ պետության, որի հետ հարկադրված էին հաշվի նստել թե Արևմուտքի քաղաքակիրթ մեծերը, թե Արևելքից ներխուժող, ասպատակիչ բարբարոսները: Չկարողանալով ընկճել, ճզմել նրա անկոտրում կամքը, վերջիններս հարկադրված էին «բարեկամության» դաշնագիր կռել նրա հետ:

Հայոց Կիլիկյան տերության տնտեսական բարձր առաջընթացով էր պայմանավորված նաև հին քաղաքների ընդարձակումն ու հարստացումը, ամուր բերդերի և անառիկ ամրոցների կառուցումն ու վերակառուցումը: *Վերելքի կամարին, մեկ միլիոնից ավելի բնակչություն ունեցող երկրում*, դրա կեսից ավելին ապրում ու արարում էր քաղաքներում: Հնուց ի վեր, Միջերկրականի գեղատեսիլ, բարեբեր, ապրելու և վայելելու համար անփոխարինելի, առափնյա, ծովահայաց, դաշտային կամ բարձրադիր վայրերում շարված էին օտարին մագնիսի նման դեպի իրենց ձգող հայկական քաղաքները: Դրանցից խոշորներն էին Ադանան, Սիսը, Տարսոնը, Սելևկիան, Մամեստիան, Անարզաբան, Այասը, Ալայան, Կորիկոսը, Հաճընը, Մարաշը, Այնթապը, դեռևս քաղաքագյուղ Զեյթունը և այլն: Այդ քաղաքները գիտակցաբար խարսխված էին առավել հարմարավետ վայրերում, այսինքն ծովախորշերի, առևտրական բանուկ մայրուղիների, այնպիսի լեռնանցքնե-

[1] *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն Հայոց, աշխ. *Կ. Մելիք-Օհանջանյանի*, Երևան, 1961, էջ 367:

[2] ՀԱՀ, հ. 5, էջ 410:

Գառնիի հեթանոսական տաճարը I դ.



Վան քաղաքի ընդհանուր տեսքը

րի վրա, որոնք անառիկ էին իրենց ամրությամբ[1]: Կիլիկյան քաղաքներում այնքան թվաշատ էին օտարազգի առևտրականներն ու անցորդ վաճառականները, որ ականատեսը ակամայից զարմանում էր բազմալեզու խոսակցություններից, հեռավոր ու մոտակա երկրներից այստեղ ժամանած այցելուներից:

Քաղաքները կառուցված էին միջնադարյան եվրոպական ոճով, սակայն մեծամասամբ հայկական ճարտարապետությամբ: Նրանք հիմնականում կենտրոնում կառուցել էին միջնաբերդ, որը խորը ջրագծով ամրակայված էր, պարսպապատված (երբեմն ունեին կրկնակի պարիսպներ), ոստիկանության հսկողությամբ: Կային մուտքի ու ելքի դարպասներ: Ե՛վ քաղաքները, և՛ քաղաքի վերածվելու հեռանկար ունեցող բերդերը հսկվում էին արքունի զորքերի կողմից, դրա համար էլ շատերը կարծիք են հայտնել, թե դրանք հիմնականում «պատկանում էին» երկրի գերագույն սյուզերենին:

Քաղաքներից զատ, Կիլիկիայի լեռնային հատվածում հատկապես Ռուբինյանները կառուցել էին *հարյուրից ավելի անառիկ բերդամրոցներ*, որոնք անփոխարինելի դեր կատարեցին երկրի պաշտպանունակությունը բարձրացնելու պրոցեսում: Թվենք դրանցից *մի քանիսը միայն: Գուգլակը* Կիլիկիայի ամրակուռ բերդերից էր: Այն ընկած էր Փոքր Ասիայից Մերձավոր Արևելք տանող մայրուղու վրա: Շնորհիվ իր ռազմավարական կարևոր նշանակության «դուռն Կապան Կիլիկիո, Գուգլակ Հայոց անուն է ստացել»[2]: Նավահանգստային ամրոց քաղաքներից էին *Անեմուրը*, Սիդեն, Ադալյան[3]:

Մուռ ամրոցն իր հզոր թևերով փռված էր Արևմտյան Կիլիկիայի այն ճանապարհի վրա, որը կտրելով Կիլիկյան Տավրոսը, Լարանդիան կապում էր Սելևկիա քաղաքի հետ: Ամրոցն ուներ անառիկ դիրք, երկու դարպասներ, և բերդի տարածքը գաղտնուղիներով կապված էր դրսաշխարհի հետ:

Լամբրոնը Հեթումյանների տոհմական դղյակն էր և իր բացառիկ անառիկությամբ համբավավոր էր ողջ տարածաշրջանում: Այն բաժանվում էր վերևի և ներքևի մասերի, որոնցից առաջինը տեղակայված էր ժայռազանգվածի կատարին, իսկ երկրորդը՝ ներքինը, ավելի ցածրադիր մի սարահարթի վրա: Դեպի դղյակի գրեթե անառիկ համարվող հատվածն էին ձգվում հաջորդաբար բացվող հինգ դարպասները: Դրանցից զատ, Կիլիկիայի հզոր բերդերից էին *Պապերոնը, Վահկան,*

---

[1] Քաղաքների մասին մանրամասն տե՛ս «Կիլիկիա», Պետերբուրգ, 1894, էջ 95-180, *Ղ. Ալիշան,* Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 211-252: *Գր. Գալուստյան,* նշված աշխատությունը, էջ 15-39: «Սովետական Հայաստան», էջ 118-119:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 925: Տե՛ս նաև *Ղ. Ալիշան,* Սիսուան, էջ 123-124:

[3] Տե՛ս նույն տեղում:

Սեհունը, Թոմլուբերդը, Կամ Կալեն, Թիլ Համդունին, Օձաբերդը, Բարձրբերդը և այլն[1]:

Շրջապատի ավազակաբարո, ուխտադրուժ հարձակումները հայ պետական այրերին հարկադրում էին հսկայական միջոցներ տրամադրել բերդեր ու ամրոցներ կառուցելու համար: Այդ բերդերի մեծ մասի մնացորդները, այո, միայն մնացորդներն են պահպանվել մինչև օրս:

Քաղաքների, ինչպես նաև բերդերի ազգաբնակչության, եթե ոչ ամբողջությունը, գոնե մեծամասնությունը հայեր էին տեղացիներ և մասամբ էլ Հայաստանից ճողոպրած գաղթականներ: Սրանք նախ և առաջ *արհեստագործության* խոշոր կենտրոններ էին: XIII-XIV դարերում, ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացմամբ պայմանավորված, հայոց քաղաքներում օրեցօր զարգանում էին ոսկերչությունը, արծաթագործությունը, զինագործությունը, մանածագործությունը, գորգագործությունը, կարպետագործությունը, դերձակությունը, դարբնությունը, նավաշինությունը և բազմաթիվ ու բազմաթիվ այլ արհեստներ[2]: Արհեստավորներն այստեղ զբաղվում էին գերդաստաններով, հմտանում իրենց զբաղմունքի մեջ, և աստիճանաբար կիլիկիահայոց *արհեստը* վերածվում էր *արվեստի:*

Քաղաքները հիմնականում արքունի տիրույթներ էին, հետևաբար և զարգանում էին պետական հովանավորչությամբ: Դրան զուգակցած երկրի բնական ու աշխարհագրական նպաստավոր դիրքը, մեծ ու փոքր ոստաններն առևտրական սերտ կապերով աղերսվում էին Եվրոպայի և Ասիայի բազմաթիվ երկրների առևտրական շուկաների հետ: Կիլիկիայի առևտրական հզոր նավատորմը մեծ հնարավորություններ էր ստեղծում ծովային հեռավոր առևտրի զարգացման համար, «հարստանալու և ծովից, և ցամաքից»:

Իր երեքհարյուրամյա գոյատևման ընթացքում Կիլիկիայի հայոց տերությունը տարբեր դրամաքանակի, բայց միշտ առևտրական սերտ աղերսներ է հաստատել Իտալիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Ղրիմի, Կիպրոսի, Մայր Հայաստանի, Իրանի, Հնդկաստանի, Չինաստանի, Եգիպտոսի, Ասորիքի, Իկոնիայի սուլթանության և շատ ու շատ այլ երկրների հետ: Ռուբինյանները, առավել ևս, Հեթումյանները, արքունի գործակալությունների հսկողությամբ, սատարում էին իրենց երկիրը մտնող մանր ու խոշոր վաճառականներին, նրանց գործունեության համար լայն հնարավորություն ստեղծում: Պետական ապարատն արտոնյալ, միաժամանակ փոխշահավետ բազմաթիվ ու բազմաբնույթ պայմանագրեր էր ստորագրել Ջենովայի, Ֆլորենցիայի, Սիցիլիայի, Մարսելի, Լիսաբոնի և այլ քաղաքների վաճառականական միություն-

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 925-926: Տե՛ս նաև *Ղ. Ալիշան,* նշված աշխատությունը, էջ 287-289:

[2] Տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 118:

ների հետ, ցածր մաքսատուրքեր սահմանել, որպեսզի դրսաշխարհի առևտրականներին շահագրգռեր լայն գործունեություն ծավալելու հայրենի երկրում[1]:

Առավել ևս ծաղկուն էր երկրի ներքին առևտուրը, որի ծավալի ու բարձր մակարդակի մասին խոսելը դժվար է, գրքի տպագրության սակավ հնարավորությունների պատճառով:

Տնտեսական ուժեղացման բարձր մակարդակը, քաղաքական համեմատաբար պաշտպանված վիճակը, արքունիքի, պետական այրերի հայեցի դիմագիծն ու հայրենասիրական ոգորումները խթանեցին Կիլիկյան Հայաստանի գրեթե բոլոր ճյուղերին պատկանող մշակույթի աննախադեպ վերելքին XII դարադարձից սկսած և եզերած XIV հարյուրամյակով: Մշակույթի խոշոր կենտրոններն էին վանքերը, քաղաքները, մասնավորապես, Սիսը, Տարսոնը, *Ադանան:* Վերջինս իր բարեբեր ու եկամտաբեր, առատաղբյուր դաշտերով ոչ միայն ցորեն, բամբակ և մերձարևադարձային այլ պտուղներ էր մատակարարում բնաշխարհին և դրսաշխարհից եկած, տարանցիկ առևտրով զբաղվող ազգաբնակչությանը, այլ կյանքի էր *կոչում մի՛ քաղաքակրթություն,* մի՛ մշակույթ՝ լուռ ու հանդարտահոս, բայց խորունկ և հսկա, ինչպես իր զույգ գետերը՝ *Սեյհանն ու Ջեյհանը*[2]: Հետազոտողներն անդրադառնալով Կիլիկիայի պատմությանը, գրեթե լուսանցքի վրա են թողել այդ ընդարձակ հայաքաղաքի մշակութային կյանքի պատմությունը և ոչ միայն Ադանայի:

Կիլիկիայի հայոց թագավորության եռադարյան էպոպեան հայ ժողովրդի պետական կյանքի, առավել ևս, մշակույթի զարգացման անանախադեպ մի պատմաշրջան եղավ թե՛ լայնությամբ, թե՛ խորությամբ: Թագավորական զույգ դինաստիաների *միաձանաձայն կամարի տակ,* աշխարհագրական իր բարձրակուռ դիրքով, Միջերկրականի հսկա ավազանի ծովային մայրուղիների դիմաց *բաց* թե՛ իր միջազգային հարաբերություններով մինչև Եվրոպա, թե՛ տնտեսությամբ, թե՛ ազգային ու կրոնական հաստատություններով և թե՛, մանավանդ, մշակույթի, գրականության ու արվեստի ստեղծագործություններով:

Ակնառու է, այժմ էլ գործածական, որ Հայոց եկեղեցու գրեթե ամբողջ բարեզարդումը, Ներսես Շնորհալու դպրոցով, խարսխվեց նոր շարականներով, նոր երաժշտությամբ, նոր աղոթքներով ու ժամերգության կարգով: Դրանք բոլորն էլ կիլիկյան շրջանի իրագործումները եղան. այսօր էլ հայ եկեղեցու բեմերից քաղցրաձայն հնչող «Առավոտ լուսոն» (մանավանդ Լուսինե Զաքարյանի կատարմամբ), «Արևագալի երգերը», Վարդանանց «Նորահրաշ պսակավոր» դյուցազներգը և բազ-

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», էջ 118-119:

[2] Տե՛ս «Ատանայի Հայոց պատմությունը», էջ 593:

մաթիվ այլ գանձեր, *առանց որոնց* հայոց ծիսական հարստությունը մեծ բան պետք է կորցներ իր հոգևոր գանձարանից, քանզի բոլորն էլ մասնաբաժին են Կիլիկյան հայոց քաղաքակրթության[1]:

Այն ժամանակ, երբ Մայր հայրենիքում Բագրատունիների դինաստիայի կործանումով հեքիաթային Անի մայրաքաղաքը դավաճանների ձեռքերով հանձնվում էր Բոսֆորի ափերին կուչ եկած բյուզանդական կայսրությանը, երբ դրան հաջորդած սելջուկ, թաթար ու թուրքմեն հրոսակները մորեխի նման ավերում էին Հայաստանը, ժողովրդի ցրման պատճառ դառնում, դադարում էին կրթության և մշակույթի զարգացման բոլոր հնարավորությունները: Պատմական ու հնամենի Հայաստանում կարծես վերընձյուղման բոլոր հույսերն ի դերև էին ելնում: Բայց, հակառակ դրան, կատարվում էր անհնարինն ու անհավատալին: Ռուբինյանների Կիլիկիայում, ճիշտ այդ ժամանակահատվածում, հայ ժողովրդի այս հատվածը զարմանահրաշ կենսունակությամբ *«կվերականգնեին Հայկ պապուն տունը Տավրոսյան և Ամանոսյան պարիսպներեն ներս, ու կկերտեին Հայոց պատմության ամենեն ծաղկուն դարերը* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[2]:

Բնականաբար, ինչպես ամենուր, առավել ևս Կիլիկիայում, մշակույթի զարգացումը սկզբնավորվում էր դպրոցով, այն էլ և *աշխարհիկ, և հոգևոր:* Կիլիկյան դպրոցը, հատկապես ուսումնագիտական կենտրոնները գտնվելիս են եղել իշխանների, իշխանուհիների, թագուհիների, նույնիսկ թագավորներից շատերի հովանու ներքո, ֆինանսավորվել են նրանց կողմից: Նման ուսումնագիտական կենտրոններից էին *Դրազարկն* ու *Մաշկևորը:* Դրանք երկուսն էլ գործել են XII դարում, հիմնվել ու սատարվել են *Թորոս իշխանի* կողմից, ձեռք են բերել ոչ միայն համահայկական, այլև միջազգային հռչակ[3]:

Մյուս կենտրոններից էին *Պառլահոկը, Արեգինը, Շուղրը, Մեծքարը* և այլն: Այս կենտրոններում են կրթվել կամ հետո տեղում դասախոսություններով հանդես եկել Վարդան Այգեկցին (Դրազարկ), Մխիթար Գոշը (Մաշկևոր), Ներսես Շնորհալին և Գրիգորիսը (Շուղր), Հովհաննես Երզնկացի Պլուզը (Մեծքար) և այլն[4]:

Առանձնակի ուշադրության են արժանի մայրաքաղաք *Սսի ուսումնագիտական կենտրոնները:* Այնտեղ, ժամանակին անհամապատասխան, այսինքն բարձր մակարդակի էին հասել դպրությունը, փիլիսոփայությունը, տրամաբանությունը, աստվածաբանությունը, ճարտասանությունը, քերականությունը, երաժշտությունը, տոմարագիտությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունը, գրչության արվեստը, մանրանկարչությունը, թարգմանական և հայրենի գրականությունը, պատմագրությունը: Կարծես հրաշք է, չէ՞, թեկուզ միայն այս թվարկումը: Ո՛չ, իրականություն է: Այդ բոլորը նկատի ունենալով էր, որ տասնամյակներ առաջ մայրաքաղաքի համալսարանի և ակադեմիայի պատերի ներսում խմբված հայ անվանի գիտնականները, մեր կարծիքով ճշմարտապես, հաստատում էին հայկական ռենեսանսի (վերածնության) հասունացումը ոչ միայն Կիլիկիայում, այլև բուն Հայաստանում: Իհարկե, շատ զարմանալի է, բայց փաստ, անժխտելի փաստ: Տեսնո՞ւմ եք, թուրք պատմաբաններ, էֆենդիներ, այն ժամանակ, երբ ձեր արյունախում նախնիները մարդկային հում մսով էին կերակրվում, հայ ժողովուրդը բարձրացել էր վերածնության մակարդակի և քայլում էր իտալական գիտության ու գիտնականների բացած արահետներով, ելնում առաջընթացի լայն պողոտա:

Կրթությունն ու լուսավորությունը համարելով երկրի զարգացման կարևոր խթան, կիլիկիահայ առաջավոր պետական գործիչները, հոգևորականներն ու գիտնականները, հատկապես Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Սմբատ Սպարապետը, Հովհաննես Երզնկացի Պլուզը, Մովսես Երզնկացին, Հեթում Պատմիչը և շատ ուրիշներ, ազդել են արքունի գործիչների, թագավորների վրա, բացել են տվել տարրական ու միջնակարգ բազմաթիվ դպրոցներ, որտեղ *ոչ միայն ուսուցումը ձրի էր, այլև սակավազոր ընտանիքների երեխաների* համար, կրթելուց զատ, նյութական ապահով վիճակ էր ստեղծվում:

Տարրական և միջնակարգ հաստատություններում ուսում էին ստանում ընդունակ և կրթվելու ցանկություն ունեցող, գրեթե բոլոր դասերին պատկանող երեխաները: Բարձրագույն դպրոցներում սովորելու էին գալիս բացառիկ ընդունակություններ դրսևորած շրջանավարտները: Հոգևոր ու աշխարհիկ այդ վարդապետարան-համալսարանները պատրաստում էին *գիտնականներ, պետական և հոգևորական բարձր աստիճանավորներ*[1]:

Հետաքրքիրն այն էր, որ բարձրագույն դպրոցներում ուսուցչապետներին նշանակում էր արքունիքը նույնիսկ արքաների գիտությամբ, *ֆինանսավորում պետական գանձարանը:* Թե միջնակարգ դպրոցներում, առավել ևս, համալսարաններում, ուսուցման բարձր մակարդակի վրա էր դրված լեզուների, հատկապես եվրոպական, մասամբ նաև մեռած լեզուների (հին հունարեն, լատիներեն) հետազոտման գործը: Սովորեցնում էին նաև պարսկերեն, թուրքերեն, արաբերեն և արևելյան այլ լեզուներ: Փաստերի հետազոտությունը պատմաբանին բերում է այն եզրահանգման, թե ընկել է մի «հրաշք աշխարհ», որտեղ առատ են գիտնականները, թարգմանիչները, երգահանները, ձեռագ-

---

[1] Տե՛ս «Ատանայի Հայոց պատմությունը», էջ 594:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 789-799:
[4] Նույն տեղում, էջ 802:

[1] ՀՍՀ, հ. 5, էջ 417:

ռագիրները, աշխարհահռչակ նկարիչները (Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ):

Իհարկե, քիչ-քիչ զիջելով Մայր հայրենիքին, Կիլիկիայում զարգացում է ապրել *պատմագրությունը:* Այս ճյուղի աչքառու ներկայացուցիչն է եղել *Սմբատ Սպարապետը* Հեթում Առաջին թագավորի եղբայրը: Նա գրել է «Տարեգիրքը», ընդգրկելով 952-1272 թթ. պատմաշրջանը: Հետաքրքիր աշխատություն է ստեղծել *Հեթում պատմիչը:* Նա Կոռիկոսի բերդատեր իշխանն էր, որը XIII դարամուտին ստանձնեց Հեթում II թագավորի դեսպանի պարտականությունները մոնղոլական իլխանության արքունիքում, ապա, իբրև հայկական զորքերի հրամանատար, կռվեց Եգիպտոսի և Իկոնիայի սուլթանների դեմ: Կյանքի վերջին տարիներին, Կղեմես V պապի հանձնարարությամբ, նա գրեց «Պատմություն թաթարաց» կամ «Ծաղիկ Արևելքի պատմության» աշխատությունը: Միջնադարյան ֆրանսերենով գրված այդ արժեքավոր գործը 1307 թ. թարգմանվել է լատիներեն, այնուհետև աշխարհի 14 այլ լեզուներով: Լևոն Զ Լուսինյանի քարտուղար *Հովհաննես Դարդելին,* թագավորի հանձնարարությամբ, գրել է *«Ժամանակագրություն Հայոց»* պատմագրական աշխատությունը: Այն արժեքավոր է, քանզի հեղինակը մասնակից է եղել դեպքերի զարգացմանը: Այս և այլ պատմաբանների երկերում, Կիլիկիայից զատ, շարադրանքներ կան Հայաստանի պատմության վերաբերյալ, որոնք նպաստում են Հայոց պատմության ընդհանրականությանն ու բազմակողմանիությանը[1]:

Անզուգական է *իրավագիտությունը:* Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» հայ միջնադարյան իրավունքի գլուխգործոցն է, և ոչ միայն հայ: Այն գրվել է 1184 թ. և մեզ է հասել հայերեն ու այլ լեզուներով արտագրված մի քանի խմբագրություններով: «Դատաստանագիրքն», իբրև օրենսդրություն, կյանքի ուղեգիր է ստացել XII դարավերջին և հայ իրականության մեջ գործածվել շուրջ 700 տարի: Այսօր էլ այն ուշագրավ նյութեր է մատակարարում իրավագետներին:

Բժշկագիտությամբ Կիլիկյան Հայաստանը հայտնի դարձավ շրջակա բոլոր տերություններում: Դրա պատճառն այն էր, որ հայոց արքունիքը խրախուսում, հովանավորում և ֆինանսավորում էր բժիշկներին, բացում հիվանդանոցներ, բժշկագիտական կենտրոններ: Լևոն Երկրորդի հանձնարարությամբ, ասորերենից, արաբերենից, հունարենից թարգմանվել և գործածության մեջ են դրվել ժամանակի համաշխարհային բժշկագիտության հսկաների *Հիպոկրատեսի, Կլավդիոս Գալենոսի, Փիլիպոսի, Պողոս Եգինացու, Իբն Սինայի* (Ավիցենա) աշխատությունները: Մարդկության արարած գյուտերի հենքին կոթնած, միաժամանակ սեփական փորձով հարստացնելով բժշկական գիտությունը, հրապարակ իջան մեծատաղանդ բժիշկ-գիտնականներ, բժիշկ-պրակտիկ բուժողներ: Այդ փաղանգին էին պատկանում *Մխիթար Հերացին, Աբու-Սահդը, Գրիգորիսը, Սիմեոնը, Միքայելը, Ճոսլին, Սիմավոնը, Վահրամը* և այլն, և այլն: Մխիթար Հերացու *«Ջերմանց մխիթարություն»* աշխատությունը այսօր էլ չի իջնում բժիշկների սեղանից:

Գեղարվեստական գրականությունը Կիլիկյան Հայաստանում ունեցավ իր թռիչքաձև վերելքը: Ժողովրդի սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքում առաջացած դրական փոփոխությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին գեղարվեստական գրականության, հատկապես պոեզիայի զարգացման, ինչպես նաև գրական նոր ժանրերի առաջացման համար: Բանաստեղծական խոսքը, անհամեմատ դուրեկան երաժշտությամբ, թափանցեց եկեղեցական արարողությունների բեմահարթակ, դառնալով բնակչության լայն խավերի սեփականությունը: XII-XIV դարերում ծնվեցին այնպիսի մեծություններ, որոնցից էին *Գրիգոր Մեծ Վկայասերը, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Ներսես Լամբրոնացին, Վարդան Այգեկցին, Թորոս Ռոսլինը, Վահրամ Ռաբունին, Կոնստանդին Պեհենենցին* և այլոք[1]:

Հոգևոր այդ առաջընթացը պայմանավորված էր նաև նրանով, որ Կիլիկյան Հայաստան էր փոխանցվել Հայաստանի գրական ավանդությունների հարուստ փորձը, մայր հայրենիքից այստեղ էին տեղափոխվել գրական մշակներից շատերը: Հայրենականը Արևմտյան Եվրոպայի գրական փորձով հարստացնելով, երբեմն ազդվելով նրանից, երբեմն ազդելով նրա վրա, իրավամբ ձևավորվում էին գրականության այնպիսի նոր ճյուղեր, *որոնք յուրահատուկ էին վերածնության դարաշրջանին:*

Կիլիկյան գրականության, և ոչ միայն գրականության, փառապսակը *Ներսես Շնորհալին* էր (1100-1173): Սկզբում Հայոց Կաթողիկոսի օգնական, ապա Կիլիկիայի Հայոց Կաթողիկոս դարձած Ներսես Շնորհալին օժտված էր գրական, առավել ևս բանաստեղծական մեծատաղանդ շնորհքներով: Նա թողել է ինչպես արձակ, այնպես էլ չափածո ստեղծագործություններ: *Վեհափառի «Թուղթ ընդհանրականը»* փիլիսոփայական խորիմաստ մի ստեղծագործություն է *ուղղված հանուր* ժողովրդին և կոչ մարդկությանը թե Աստծո կողմից ստեղծված *արարածները* բոլորը, իրավունքներով հավասար են ծնվում, սակայն հետո բաժանվում են տարբեր արտոնություններ ունեցող դասերի ու դասակարգերի:

[1] Մանրամասն տես ՀՍՀ, հ. 5, էջ 417-419:

[1] Մանրամասն տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 872:

րին, խնդրելով մեղմել աղքատների նկատմամբ կիրառվող ճնշումն ու շահագործումը: Միջնադարում արծարծված նման մտքերը ոչ միայն առաջադիմական էին, այլև ուշագրավ սոցիալական հավասարության քարոզի իմաստով: Նրա «Ողբ Եդեսիո» պոեմը, գրված 1145 թ., իր քնարական ձևով, ողբասացության բովանդակությամբ ամփոփում է Եդեսիա քաղաքի կործանման պատմությունը, ***միաժամանակ հայ ժողովրդին կոչ անում ազատագրական պայքարի միջոցով համախմբվել մայր հայրենիքում, այնտեղ վերընձյուղել հայոց ազգային պետություն:*** Նա թողել է 300-ից ավելի ստեղծագործություններ, որոնք բարձրագահ հոգևորականի աշխարհական, մեծատաղանդ ստեղծագործություններն են[1]:

Գրիգոր Տղան (1130-1193) ոչ միայն Ներսես Շնորհալու հաջորդն էր, կաթողիկոսական գահին բազմողը, այլև նրա հարազատ եղբոր որդին: Նա ստեղծել է մեծ ու փոքր ծավալի բանաստեղծություններ, հատկապես Գրիգոր Նարեկացու հետևությամբ գրված ***«Ողբ Երուսաղեմի»*** մեծակտավ պոեմը: Իր գաղափարաբանությամբ կաթողիկոս-բանաստեղծը զարգացնում է Կիլիկյան հայկական պետության տեղում ամրապնդելու տեսությունը և Լևոն իշխանին օգնում է, սատարում իշխանությունն ամրապնդել Միջերկրականի ափերին, հրաժարվել նորից Հայաստան վերադառնալու մտքից[2]:

Վարդան Այգեկցին (XII-XIII դդ.) հիմնականում ստեղծագործել է ***Այգեկ*** մենաստանում, որտեղից էլ ստացել է իր գրական անվանումը: Նա հայտնի է աշխարհին և՝ քարոզներով, և հատկապես առակներով, որոնք սուր, դիպուկ քննադատության են ենթարկում հասարակության ընդերքում գոյացած խոցերն ու արատները, դասակարգային հակասություններն ու հակամարտությունները[3]:

Ժողովրդական լեզվով, միջին հայերենով գրված Այգեկցու առակները նոր փայլ ու երանգ են հաղորդում հայ գրականությանը և, Մխիթար Գոշի առակների հետ միասին, հիմք դնում գրական մի նոր ժանրի՝ ***առակագրությանը:***

Բարսեղ Քեսունցին XII դարի հեղինակ է և հիմնադիրը ***վարքաբանության:*** Նրա ստեղծագործությունը ևս ներծծված է սոցիալական բողոքի արտահայտությամբ: Ըստ որում, հեղինակը խոշոր կառույցների, հատկապես ապարանքների, պալատների ստեղծումը, դիտում է իբրև ժողովրդի զրկանքի արգասիք: Նրա փիլիսոփայությամբ՝ հարուստներն իրենց կողոպուտի համար պատասխան կտան, այն էլ՝ ոչ թե հանդերձյալ, այլ ներկա, իրական կյանքում:

[1] ՀՍՀ, հ. 5, էջ 420:

[2] Տե՛ս ՀՍՀ, հ. 5, էջ 421: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 875-876:

[3] Տե՛ս *Ն. Մառ,* ժողովածոյք առակաց Վարդանայ (երեք հատորով, տպագրված Ս. Պետերբուրգում, 1894 և 1899 թվերին):

Գրական դեմքերից են նաև ***Գրիգոր Մարաշեցին*** (XII դար), ***Գրիգոր Սկևռացին, Խաչատուր Սկևռացին*** (XII դար), ***Մրիկ Կոստանդը*** (XIII դար): Ուշագրավ է, որ գրականությամբ զբաղվել են կիլիկյան որոշ թագավորներ, գրչության արվեստով նրանց ընտանիքի անդամները: Թերևս այդ պարագան, այն է՝ արքունիքի հատուկ վերաբերմունքը գրքի ու գրչի մարդկանց նկատմամբ, խթանել է գրականության զարգացմանը Կիլիկյան Հայաստանում: Կիլիկիան ուներ իր թատրոնը, փիլիսոփայությունը, կերպարվեստը, ճարտարապետությունը, երաժշտությունը: Անզուգական է կիլիկյան արվեստը, հատկապես գեղանկարչությունը, մանրանկարչությունը: Հայկական միջնադարյան մշակույթի խոշորագույն դեմքերից է ***Թորոս Ռոսլինը:*** Պահպանվել են նրա գրչով պատկերազարդված 7 ձեռագրեր, որոնք ընդգրկում են 1256-1268 թթ.: Ռոսլինի ձևավորած հնագույն ձեռագիրը, որը հասել է մեզ, «Զեյթունի ավետարանն է»[1]: Այնուհետև՝ նա ստեղծագործեց և զարմանք ու հիացմունք պատճառեց ոչ միայն իր ժամանակի մեծամեծներին, այլև շարունակում է մնալ այսօրվա արվեստագետների ուշադրության կենտրոնում: Խոշորագույն նկարիչներից է ***Մարգիս Պիծակը*** (1301-1353), որն ապրել ու ստեղծագործել է Սիս մայրաքաղաքում, դարձել պալատական նկարիչ: Նրանից մեզ է հասել 18 ձեռագիր: Ամենատպավորիչներն են «Լևոն V-ը դատավարության ժամանակ», ապա՝ ***«Թագուհի Մարիամին»:*** Նա իր բացառիկ տաղանդով իրավամբ դասվեց հայկական մանրանկարիչների առաջնակարգ ներկայացուցիչների փաղանգին և դարձավ կիլիկյան մանրանկարչության ***վերջին ներկայացուցիչը:***

Այսպիսով, հզոր Կիլիկիան ստեղծեց անկրկնելի մշակույթ, զարմանք ու հիացում պատճառեց քաղաքակիրթ մարդկությանը, եվրոպական մեծերին, սակայն պետության անկման հետ կանգ առավ այդ պրոցեսը, ոչնչացվեցին դարերով ստեղծված մշակույթի կոթողները: Մահմեդական մոլեռանդ, անխնա սուրը փորձեց ավերել, ձևափոխել, գմբեթազրկել այն ամենը, ինչ քրիստոնեական էր, հայկական: Դժբախտությունն այն էր, որ այդ ավերածություններից անմասն չմնացին նաև քրիստոնեական որոշ տերություններ, որոնք առաքելական հայ եկեղեցին առաջնորդում էին դեպի կաթոլիկության փարախը: Փաստորեն, Կիլիկիան ու նրա մշակույթը պատմության մեջ, այդ տարածքում մնացին իբրև լույսի վառ շողեր՝ խավարի թագավորության անդաստանում:

Այսքանից հետո մեզ մնում է հանգել տրամաբանական այն եզրակացության, թե բաղդատմամբ Մեծ Հայքի անշքացած մշակույթին, Կիլիկյան Հայաշխարհը երեք երկարուձիգ հարյուրամյակներում ապրում էր լուսավորության, գիտության և արվեստի մի պայծառ դարաշր-

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 943:

ջան, այն փռված էր թե լեռնային և թե դաշտային տարածքի վրա *Հռոմկլայեն մինչև Լամբրոն, Այասեն մինչև Ադանա ու Տարսոն*:

*

* *

Կիլիկիայի հայոց պետությանը, սակայն, բախտ չէր վիճակվել *երեք հարյուրամյակից* ավել պաշտպանել ոչ միայն իր հզորությունը, այլև գոյությունը[1]:

Միջերկրականի ափերից փայլատակող, վառվող քրիստոնյա այդ փարոսը նախանձ ու զայրույթ էր առաջացնում շրջապատի մուսուլմանական երկրների տիրակալների որջում: Նրանք հարմար պահ էին որոնում, որպեսզի պատմության բեմահարթակից «սրբեին» հայոց հզոր այդ պետությունը, որը սուր փշի պես խրվում էր վերջիններիս ընչաքաղց աչքը:

Կիլիկիայի հզոր ախոյաններից էին եգիպտական մամլուքները, որոնք արդեն զավթել էին Սիրիայի տարածքը և դարձել Հեթումյան Կիլիկիայի սահմանամերձ տերություն: Պակաս վտանգավոր չէր Իկոնիայի սուլթանությունը: Սուլթանը զայրացած էր Հեթում I-ի վրա, քանզի Հայոց արքան մոնղոլներին գերադասել էր թուրքմենական ցեղախմբերից, նույնիսկ Կարակորում էր գնացել: Դժբախտությունն այն էր, որ Կիլիկիայի Հայոց պետությունը հարվածներ էր ստանում ոչ միայն դրսից, այլ նաև *ներսից:* Միջպետական և միջֆեոդալական գզվռտոցները, տարածքների, գերագահության և արտոնությունների համար մղվող կռիվները, ընդդիմադիր, կենտրոնախույս ուժերի հպատակեցումը մեծ ջանքեր ու միջոցներ էին պահանջում կենտրոնածիգ, արքայամետ խավերից: Հետևաբար Կիլիկիայի համար չափազանց աննպաստ իրադրություն էր *ստեղծվել և՛ ներսից, և՛ դրսից:*

XIV դարաշեմին առավել բարդացան և խիստ անբարենպաստ դարձան միջազգային իրադարձությունները Կիլիկիայի կյանքում: Նախ, անհաջողությամբ ավարտվեց Հռոմի Պապի առաջարկների քննարկումը, որոնցով Լևոն IV-ից պահանջվում էր ընդունել կաթոլիկությունը: Ավելին, այն դիտվեց իբրև նոր խաչակրության հրավերք՝ ուղղված

[1] Կիլիկիայի պետության անկման պատմությունը շարադրելիս՝ օգտագործել ենք *Գր. Գալուստյան,* Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 238-240: «Ատանայի Հայոց պատմություն», էջ 39-41: «Զեյթունի պատմագիրք», հրատարակչություն Զեյթունի հայրենակցական միության, Պուենոս-Այրես, 1960, էջ 35-50: *Յ. Պ. Պողոսյան,* Հաճընի ընդհանուր պատմություն, Լոս-Անճելես-Քալիֆորնիա, 1942, էջ 507-520: *Մ. Կ. Զուլալյան,* Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990, էջ 81-84: ՀՍՀ, հ. 5, էջ 408-411: «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1972, էջ 258-260: *Հ. Մ. Պողոսյան,* Զեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 100-108:

իսլամադավան երկրների դեմ: Վիճակը միանգամից այնպես փոխվեց, որ Անարզաբա քաղաքում նստած Կիլիկիային *«բարեկամ ու դաշնակից»* համարվող *Փիլարդու* զորավարն իր մոտ հրավիրեց Լևոն IV-ին ու նրան ուղեկցող 40 իշխաններին, խնջույքից հետո բոլորին սրախողխող անել տվեց: 1308 թ. մայիսին կատարված այդ անցքով ավարտվեց *հայ-մոնղոլական* «բարեկամությունը», մանավանդ, երբ բոթը Սիս հասնելուն պես, հայկական զորքը շրջապատեց և ոչնչացրեց *Փիլարդուին* իր զորախմբով:

Շրջակա տերությունները վաղուց էին սպասում հայ-մոնղոլական դաշինքի խզմանը: Այն իրողության վերածվեց: Օգտվելով դրանից, 1321 թ. Եգիպտոսի և Իկոնիայի սուլթանությունների միացյալ բանակը ներխուժեց Կիլիկիա և ասպատակեց ամբողջ երկիրը, ավերեց շեն ու բարգավաճ քաղաքները, նույնիսկ խոշոր գյուղերը: Լևոն V-ը (1320-1342), չկարողանալով դիմագրավել իսլամական բազմահազարանոց զորքերին, թալանի նպատակով նրան ուղեկցող իսլամ խաժամուժին, ստիպված գնաց իրեն և երկրին նսեմացնող մի շարք զիջումների: Նա նախ հսկայական գումարի ռազմատուգանք վճարեց, ապա սուլթանությանը զիջեց երկիրն առափնող մի շարք շրջաններ, հատկապես Այաս նավահանգիստը[1]:

Մամլուքները դրանով չբավարարվեցին, մանավանդ երբ Կիլիկիայի թագավորները, հերթականությամբ, զիջումների էին գնում Հռոմի կղերապետությանը, Արևմուտքի կաթոլիկ պետություններին, հատկապես Ֆրանսիային, նրանցից ակնկալելով օգնություն: Եվրոպան, ինչպես միշտ, այս պարագայում էլ իր խոստումը չկատարեց: Կիլիկյան Հայաստանը մնաց մեն-մենակ մամլուքների դեմ հանդիման: Մամլուքները վարպետությամբ օգտագործեցին նաև այն պարագան, երբ 1341 թ. կիլիկյան գահը հանձնվեց Հեթումյանների ազգական *Լուսինյաններին,* ձևավորելով նոր դինաստիա:

Լուսինյանները, ժողովրդի աչքում մեծ հեղինակություն չվայելելով, չկարողացան կազմակերպել երկրի պաշտպանությունը: Դրան նպաստեց 1373 թ. Կիլիկիայի գահին բազմած Լևոն VI-ի լատինամոլ քաղաքականությունը, որը առավել սրեց թագավորի, նրա կառավարած երկրի ու հպատակ ժողովրդի փոխհարաբերությունները: Մամլուքները քնած չէին: Նրանք հետևում էին դեպքերի զարգացման ընթացքին և պատրաստվում վերջին ու վճռորոշ հարվածին:

1375 թ. հունվարի 5-ին Եգիպտոսի Մելիք Աշրաֆ սուլթանը 12 հազարանոց բանակով մտավ Կիլիկիա և պաշարեց նրա մայրաքաղաքը: Փետրվարի 24-ին նրան միացան Հալեպի ամիրայության 15 հազարանոց զորքերը:

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», 1972, էջ 258-259:

Լևոն VI-ը փոքրաթիվ զորքերով փակվեց մայրաքաղաքի միջնաբերդում և երեք ամիս պաշտպանական մարտեր մղեց իսլամական հրոսակների դեմ: Ուժերն անհավասար էին, դիմագրավելն անհնարին ու անիմաստ, մանավանդ որ պարենի պակասի պատճառով սկսվում էր սովը՝ այն ուղեկցող հիվանդությունների համաճարակով: ***Հայոց օրինական վերջին թագավորը 1375 թ. ապրիլի 22-ին, Հալեպի ամիրայից կյանքի ապահովության երաշխիք ստանալով, Սսի միջնաբերդը հանձնեց թշնամուն:*** Լևոն VI-ը, Ամենայն Հայոց կաթողիկոսը, 20 երևելի իշխանները գերեվարվեցին Կահիրե, որտեղից 1382 թվին ազատվեցին գերությունից, մեկնեցին Եվրոպա[1]:

Նա մահացավ Ֆրանսիայում 1393 թ. և թաղվեց Փարիզի Պերլաշեզյան գերեզմանոցում: Չնայած հայ ժողովրդի համառ դիմադրությանը, փաստորեն վերացավ Կիլիկիայի Հայոց թագավորությունը, դրանով իսկ՝ նաև Հայոց պետականությունը:

Երեք հարյուր տարի գոյատևեց Կիլիկյան հայկական պետությունը (1085-1375 թթ.): Երեք հարյուրամյակում նա անզուգական էջեր գրեց Եվրոպայի և ընդհանրապես մարդկության պատմության մեջ: Երկիրը՝ երբեմն միայնակ, որոշ դեպքերում դաշնակիցների հետ դիմագրավեց մահմեդական մոլեռանդ, բարբարոս պետություններին, փրկեց քրիստոնեական քաղաքակրթությունը և, զարգացնելով այն, բարձրացրեց մի նոր աստիճանի: Կիլիկիայի այդ հիանալի, ուսանելի պատմությունը պատմաբաններն իրավամբ համարում են հայ ժողովրդի կերտած հերոսապատումների բաղկացուցիչ մասը: Մանավանդ Կիլիկիայի անկումով, 600 տարով փակվում է ***Հայոց անկախ պետության վարագույրը***, երկիրը հարափոփոխ ենթարկվում է իսլամ բարբարոսների ասպատակություններին, հայաթափմանը: Ժողովրդի մի մասը բռնում է գաղթագնացության ճանապարհը՝ դեպի Եվրոպա, մյուս մասն էլ, համառությամբ մնալով Հայրենիքում, ենթարկվում է այն նույն ճակատագրին, ինչին արժանացավ ցեղասպանության զոհ դարձած արևմտահայությունը Մայր հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում:

*

* *

Ընկավ Կիլիկյան հայկական թագավորությունը: Տարածաշրջանում անարգել ասպատակությունները շարունակեցին շիա աղանդին պատկանող իսլամ բաշիբոզուկները՝ ***թուրքմեն ցեղերը***, որոնք հերթականությամբ գրավում և իրենց տիրապետության տակ էին դնում երկրի մեծ հատվածը: Երկրում սկզբնավորվեց կառավարման ***իշխանապետական համակարգը***, որը գնալով տիրական դարձավ և Հարավային Հայաստանում, և Կիլիկիայում:

[1] Այս մասին շահեկան աշխատանք են հրատարակել *Ս. Պ. Պողոսյանն* ու *Մ. Կատվալյանը:* Մանրամասն տե՛ս ՀՍՀ, հ. 5, էջ 407-413:

Այդ իշխանապետերի մեջ ամենահզորները ***Կոզանյաններն*** էին, որոնց կառավարումը սկզբնավորվում էր 1640 և եզերվում 1865 թվականով[1]:

Հայտնի է, որ մինչև 1375 թվականը, այսինքն Կիլիկիայի հայկական թագավորության անկումը, Սիսը կառավարեցին արաբ կուսակալները, իսկ 1378 թ. ինչպես այս գավառը, այնպես էլ Ադանան անցավ ռամազան օղլուների ձեռքը: Սրանց իշխանությունը տևեց մինչև 1467 թվականը[2]: Նույն տարում թուրքմեն ցեղապետ Զուլկադերյան Շահսուվար Առաջինը տիրապետեց Մարաշից մինչև Սիս, Մալաթիայից մինչև Միջերկրական ծով, այդ թվում՝ ամբողջ Լեռնային Կիլիկիան Բարձր բերդը, Կըզըլ-էէրը, Վահկան, Բանլըգը, Քեռթյուն և Հաճընը: Նրա տիրապետությունը տևական չեղավ: Եգիպտացիները հարձակվեցին Շահսուվարի վրա, ջարդեցին վերջինիս բանակները, գերեվարեցին բանակապետին և սուլթան Քայիթբեյի հրահանգով Եգիպտոսի մեջ կախաղան հանեցին:

Եգիպտական հաղթանակից երկար չէր անցել, երբ սուլթան Բայազիտ Բ-ն, առաջնորդելով թուրքական բանակամասերը, մտավ Կիլիկիա, արաբներին դուրս վռնդեց այնտեղից և, Զուլկադիրյան Ալաուդդալեին նշանակելով օսմանյան իշխանության փոխանորդ, երկրի ժառանգական կառավարման իրավունքը տվեց նրան՝ պահանջելով միայն հարկեր:

Կարճ ժամանակամիջոցում Զուլկադիրյանները բավական հզորության հասան, աստիճանաբար հակվեցին դեպի եգիպտական իշխանությունը, բռնեցին արաբական կողմնորոշում և փորձեցին թոթափել օսմանյան լուծը, չնայած որ այն դեռևս ձևական բնույթ ուներ: Սուլթան Սելիմ Յավուզ Առաջինը, նկատելով սրանց ձգտումները, մեծ սադրազամ Սինան փաշային զորքեր տալով՝ ուղարկեց Կիլիկիա: 1517 թ. Կոկիսոնի դաշտում եղած ահեղ ճակատամարտում Ալաուդդալեն պարտություն կրեց, գերեվարվեց ու գլխատվեց, իսկ Զուլկադիրյանները զրկվեցին տիրակալական արտոնություններից և իրենց իրավունքները զիջեցին ռամազան ցեղերին: Պարբերաբար զրկվելով Թուրքիայի տված արտոնություններից, սրանք օգտվեցին կայսրության թուլությունից, շարունակեցին տիրապետությունը Կիլիկիայում մինչև 1640 թվականը, այսինքն՝ կոզանյան կամ կոզան օղլուների հզորանալը և Կիլիկիային տիրանալը:

[1] Այս մասին նյութերը հավաքել է *Յ. Պ. Պողոսեանը*, հրատարակել «Հաճընի ընդհանուր պատմութիւնը» փաստաթղթից իր աշխատության մեջ, որը օգտագործում ենք սույն հատվածը շարադրելիս:

[2] «Հաճընի ընդհանուր պատմութիւնը», էջ 507-508:

Կոզանյան ծորապետերի ծագման մասին եղած կարծիքները բաժանվում են երկու խմբի: Մ. Սեմերճյանը հաղորդում է, թե 1640 թ. Այնթապից Հաճընն եկած երկու գնչու եղբայրները «Խըզան» էին կոչվում, որոնք օգտվելով հաճընցիների միջև եղած անհամաձայնություններից, հրավիրվում են իբրև կառավարիչներ, հիմնադրում Կոզանյան տոհմը, իսկ հետագայում Տավրոսի լեռնապարը վերամկրտում *Կոզան Դաղի*[1]: Նրան վերակրկնեցին Մամիկոն Վարժապետյանը[2], Գրիգոր Գալուստյանը: «Հաճընցի հայեր, ժամանակ մը, խնդրոյ մը համար,- գրում է Գալուստյանը,- սաստիկ կը պառակտին և կարելի չըլլար մէջերնին համաձայնութիւն մը գտնել, որովհետև ամէն մէկը կուզէր որ իր խօսքը առաջ երթայ: Խելացիներէն ոմանք այս չարիքին դարման տանելու համար գիւտ մը կընեն, և կը խորհին այս գնչուները իրենց պետ ճանչնալ և ամէն խնդիր ասոնց դատաստանին յանձնել: «Ասոնք մոլեռանդ թուրքերուն պէս չեն. ուզած ատեննիս ալ կրնանք ասոնք մեր մէջէն վտարել» ըսելով ամէնն ալ կը հաւանին և Խըզանները իրենց իշխան կընդունին: Բայց քիչ ժամանակէն այդ երկու մաղագործները մէյ-մէկ բռնաւոր կը դառնան և կը նեղեն ու կը հարստահարեն զիրենք. յետոյ սիւննի մահմէտականութեան ալ հարելով թուրքերու առջև ալ համարում կստանան: Ժամանակ մը ետքը կրտսեր եղբայրը Հաճընէն ելլելով Սիս կերթայ, վրան լարելով կը նստի և տեղւոյն Հայոց, մանաւանդ վանքին վրայ, կը բռնանայ. այս ալ կը կոչուի Չատըրճըօղլու»[3]: Գրիգոր Գուտալյանը, չժխտելով առասպելախառն այս տարբերակը, ավելացնում է, թե սրանք սերված են ռամազան օղլուներից և ոչ գնչուներից[4]:

Երկրորդ կարծիքը ավելի փաստալից հիմնավորումով քննում է Հ. Պ. Պողոսյանը, ջանում անկասկած դարձնել կոզան օղլուների աֆշարական ծագումը[5] և Պարսկաստանից գաղթած լինելը ոչ թե մեկ ընտանիքով, երկու մաղագործ եղբայրներով, այլ մի ամբողջ ցեղախմբով: Ալիշանը գրում է, թե «Հզօրագոյն ի նախայիշեալիքդ են տոհմդ *Աֆշարաց*, եկեալք ի կողմանց Պարսից»[6]: Հմուտ Մխիթարյանի այս կարծիքը եվրոպական աղբյուրների օգնությամբ ավելի հիմնավոր է դարձնում Ա. Ալպոյաճյանը, բերում փաստեր, ապա ավելացնում. «1852-1859-ին Գոզանեանց տոհմապետն էր Չատըրճի Մեհեմմետ, որուն իբր ենթակայ ճորտեր իր եղբայրները կիշխէին զանազան տեղեր: Հաճընն կը գտնուէր տիրապետութեան տակ աֆշարներու, որոնց պետն էր Եուսուֆ, Պելենի կը տիրէր Էօմեր պէյ»[1]:

Աղբյուրների հաղորդած այլ փաստերն ավելի վավերական են դարձնում կոզան օղլուների աֆշարական ծագումը, ցրում են նրանց իբրև իշխան հրավիրելու առասպելը և համոզիչ դարձնում, որ սրանք բռնությամբ են տիրացել Կիլիկիայի լեռնագավառներին և հզորության հասել XVIII դարում և XIX դարի առաջին կեսին: Մ. Օրմանյանը գրում է. 1737-ին «Սիսի վրայ բռնացողը Լիւանօղլուն էր, թուրք մը ըլլալով ինքն կըսէ թէ Լևոն թագաւորին ցեղէն սերեալ եմ: Ասոր դէմ ելաւ Եուսուֆ Գօզանօղլու, անտոհմիկ մարդ մը, որ Տէվէլու գավառի ցեղապետին այրիին հետ ամուսնանալով, նախ այն տեղ կը զօրանայ, և վերջէն Լիւանօղլուն ալ հալածելով *կիշխէ քաղաքին և սահմանացն Սսոյ*, և մինչև իսկ Տաւրոսի լեռնաշղթային այդ մասը յանուն իւր անուանէ Գօզանտաղի»[2]: Ուրեմն 1785 թվականից կոզան օղլուները հաստատվել էին նաև Սսում:

XVIII դարավերջին կոզան օղլուներն արդեն ունեին երկու կենտրոն՝ մեկը Պելեն Քեոյն էր, մյուսը՝ Հաճընից երկու ժամ հեռավորության վրա գտնվող Կյուրլեշեն թուրքաբնակ գյուղը: Ըստ որում, Պելեն Քեոյից մինչև Սիս ձգվող երկիրը վերանվանվել էր Կոզան Ղարբի, իսկ Հաճընը և շրջակա գյուղախումբը՝ Կոզան Շարգի[3]: 1852 թ. Վիկտոր Լանգլուայի վկայությամբ Հաճընն և Զեյթունն հայաքաղաքները կառավարվում էին կոզան օղլու ծորապետերի կողմից[4]: Հաճընի մասին ականավոր ֆրանսիացու գրառումները ինչքան արժեքավոր են, այնքանով էլ Զեյթունի վրա աֆշար ցեղապետերի տիրապետության հավաստիացումը՝ անարժեք: Անհայտ չէ, որ Լանգլուան Զեյթունում չի եղել, ավելի ճիշտ՝ լեռնականները նրան չեն թողել մտնելու բերդաքաղաքը, ուստի և վերջինիս ցուցումը, ականջալուր վկայություն լինելով, հիմնազուրկ է: Զեյթունը կոզանյաններին երբեք չի հպատակվել:

Այսպիսով, բացառյալ Զեյթունը և շրջակա մի շարք լեռնագավառներ, XIX դարի առաջին երեսնամյակին ևս Կիլիկիայի հայկական գավառների մեծ մասը դրված էին կոզան օղլուների ծորապետական իշխանության տակ և անվանապես էին միայն հպատակվում Ադանայի

---

[1] *Զեյթունցի (Մ. Սեմերճյան)*, Զեյթունի անցեալէն և ներկայէն, մասն Ա, Վիեննա, 1900, էջ 139-141:

[2] *Մամիկոն Վարժապետեան*, Յուշիկք Զեյթունի, էջ 111-112:

[3] *Գր. Գալուստեան*, Սարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 240:

[4] *Գրիգոր Գուտալեան*, Տարրական աշխարհագրութիւն Կիլիկիոյ, 1922, էջ 51-52:

[5] «Հաճընի ընդհանուր պատմութիւնը», էջ 513-514:

[6] *Հ. Ղևոնդ վ., Մ. Ալիշան*, Սիսուան, 1885, Վենետիկ, էջ 35:

[1] *Ա. Ալպոյաճեան*, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրէ, հ. Ա, 1937, էջ 619, տե՛ս նաև էջ 862, 1018:

[2] *Մ. Օրմանեան*, Ազգապատում, հ. Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2998:

[3] «Հաճընի ընդհանուր պատմութիւնը», էջ 516:

[4] Նույն տեղում, տե՛ս նաև *Langlois Victor*, «Voyage dans la Cilicie et les montagnes de Taurus»:

ու Մարաշի կուսակալներին: Հայտնի է, որ Կոզան Ղարբիի հովտատեր Չադրոնը Մուհամմետ աղան Վահկա բերդաքաղաքը և շրջակա գյուղերը կառավարում էր վահկացի հայ երևելիների միջոցով, որոնք ընտրովի էին և կոչվում էին քեհեաներ, դրանցից էին Կոջա Քեհեա, Կարապետ Քեհեա, Պողոս Քեհեա («Հաճընի ընդհանուր պատմութիւնը» գրքի հեղինակի պապն է), Աճեմ Օղլու և այլոք[1]:

Կոզան Շարգիի ձորապետության մեջ էին մտնում Հաճընն քաղաքն ու նրա շրջակա գյուղերը: Միայն քաղաքը բաժանված էր հինգ թաղերի, որոնցից մեկը պատկանում էր Յուսուֆ աղային, մյուսը՝ նրա տիկնոջը, իսկ մնացածը՝ երեք որդիներին: Այս թաղերն ունեին իրենց չորբաջիները, որոնք հարկը հավաքում էին և տալիս թաղապետին՝ Կոզանյան ավագ ձորապետին կամ որդիներին:

XVIII դարի վերջին և XIX դարասկզբներին Կոզան Շարգի երկիրը մտնում էր Հալեպի կուսակալության Մարաշի սանջակի մեջ և պարտավոր էր տարեկան 25 հազար ղուրուշ հարկ տալ Օսմանյան պետությանը: Սրանք ունեին վոյվոտա կոչված մի պաշտոնյա, որը հսկում էր գանձումների վրա և պատժում էր օրինազանցներին ու հանցագործներին: Նայիբը կրոնական պաշտոնյա էր, հսկում էր իսլամ և այլադավան հպատակների իրավական, կալվածական, ժառանգական գործերին, դատավորի ֆունկցիա էր կատարում: Վոյվոտայի և նայիբի արձակած վճիռներն այլևս վերաքննության ենթակա չէին: Միայն ձորապետն իրավունք ուներ վերանայել կամ հաստատել այն:

«Կոզանյանների երկիրը» վարչականորեն փոփոխությունների ենթարկվեց 1820-ական թվականներից սկսած: 1819 թվականին սուլթան Մահմուդ II-ը Յոզղատի կառավարիչ Չապան Օղլուին ուղարկեց Հալեպը և Ադանան վերանվաճելու, առաջինի տեր դարձած Հյուբել Օղլուին հպատակեցնելու: Թուրքական բանակը անցավ Հաճընն, համալրվեց բաշիբոզուկներով: Բոկլու Պելեն կոչված տարածության վրա ճակատամարտ տալով՝ պարտվեց: Ջարդվեց Չապան Օղլուի բանակը: «Թէև այս պատերազմին մէջ Գօզանները կը յաջողին, սակայն վերջէն Չափան Օղլույէն եկած բազմաթիւ զօրաց դէմ պատերազմիլը անխոհեմութիւն սեպելով Գօզանի Ղարպին Եոզղատի Ձորապետութեան կը հնազանդի, իսկ Գօզանը Շարգիի ձորապետն ալ պաշտօնազրկուելով տեղը էմին Օղլու ըսուած մէկը կը դրուի, որ հաւանական է հայազգի Լիվանթի սերունդէն է, ինչպէս կը յիշատակուի սբ. Աստուածածնի Աւետարանին մէջ»[2]: Կարճ ժամանակ անց այս շրջանները կրկին անջատվեցին Յոզղատից և կցվեցին Մարաշին, մնալով Կոզան Օղլու ձորապետերի իշխանության տակ:

[1] «Հաճընի ընդհանուր պատմութիւնը», էջ 518:
[2] Նույն տեղում, էջ 519:

XIX դարի առաջին երեսնամյակին, օգտվելով գահավիժող Թուրքիայի ռազմաքաղաքական անկումից, հունական ազատագրական շարժումների ուժեղացումից, Եգիպտոսի ապստամբությունից, կայսրության Անատոլիական երկրահատվածի վրա նստած երկրատեր իշխանապետերի կենտրոնախույս ձգտումների առավել ի հայտ գալուց, Կիլիկիայի մեծ մասին տիրացած կոզան օղլուները, ավելի քան երբևէ, իրենց կապերը խզեցին Բ. Դռան հետ և շարունակեցին կառավարվել ինքնագլուխ, չընդունեցին պետական պաշտոնյաներին *մյուսելիմներին*, գազազեցին իրենց արարքների մեջ: «Այս բռնապետները ժողովուրդէն ծանր տուրքեր գանձելէ յետոյ անով չէին գոհանար, այլ ծայրագոյն պահանջներով կը կեղեքէին ժողովուրդը: Սբ. Յակոբայ Վանքը յաջորդաբար կողոպտուեցաւ նախ Հաճի պէյի և յետոյ Եուսուֆ պէյի կողմէն, իսկ ուրիշ անգամ մը սպառնացին վանքը հրկիզել:

Ասկէ զատ անոնք հայերը կը նկատէին իբրև ստրուկ և գերի և զանոնք կը կոչէին *կեավուր*, և անոնց մորթած միսը չէին ուտեր: Չէին ընդուներ նաև հայոց կողմէն տրուած վկայութիւնները մինչև անգամ պաշտօնական դատարաններուն մէջ: Հայուն լաւ զգեստ հագնիլը և լաւ ձիու մը վրայ հեծնալը անհաճոյ էր անոնց աչքին, և երբ հայ մը իշու մը և կամ ձիու մը վրայ հեծած թուրք գիւղ մը մօտենար և կամ իսլամի մը հանդիպէր, պէտք էր անմիջապէս իր էշէն և կամ ձիէն վար իջնէր և հետիոտն քալէր, ապա թէ ոչ սաստիկ ծեծ կուտէր»[1]:

Հայ կանանց, աղջիկների պատիվը ամեն րոպե ենթակա էին ձորապետերի անարգանքին: Կիրակոս մեծագործ կաթողիկոսը թունավորվեց (1822 թ.) Կոզան օղլուի տված թույնից: Պատմագիրն իրավացիորեն գրում է. «Ահա Օսմանեան կառավարութեան տակ իսկ երկար տարիներ այսպիսի բռնաւոր աւատապետներու, ձորապետներու, փաշաներու, պէյերու, աղաներու հետ գործ կունենար Մարաշը ու նոյն բռնութիւններու տակ կը հեծէին Մարաշի շրջականները. Իչ-Նահիյէ, Անտրրոն, Կէպէն, Կէօքսիւն, Ալպիսքան, Եարփուզ և այլն»[2]:

Անիշխանության ուժեղացումը, օրինազանցության «օրինականացումը», ավազակախմբերի սանձարձակ գործունեությունը պատճառ էին դառնում առևտրի, ինչպես նաև արհեստագործության ու գյուղատնտեսության քայքայմանն այս երկրահատվածում: «Ճամբարները և երթևեկութիւնը այնքան անապահով էր, որ ամէն կողմ կը վխտա-

[1] «Հաճընի ընդհանուր պատմութիւնը», էջ 521:
[2] «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն», էջ 241-242:

յին գողեր ու աւազակներ, և յաճախ մարդասպանութիւններ տեղի կունենային երբ հաճընցիները կը ճամբորդէին քաղաքէ քաղաք առևտուրի համար, և թէ հաճընցիներուն կողմէ Չորապետներուն եղած գանգատներից անտես կը թողուէին»[1]:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում և Հայկական Կիլիկիայում մոլեգնորեն գործում էին ֆեոդալական, կիսանկախ իշխանապետերը՝ քուրդ, աֆշար ու թուրքմեն ցեղապետերը, որոնց սանձարձակությունը հասել էր իր գագաթնակետին:

[1] «Հաճընի ընդհանուր պատմութիւնը», էջ 521:

Գլուխ հինգերորդ

Թուրքիայի հայ գաղթօջախները XV-XVIII դարերում[1]

Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի հայ գաղթօջախները մինչև «Թանզիմաթը»

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ հարևան Բյուզանդիան այն երկիրն էր, ուր դեռևս վաղ միջնադարում հանգրվան գտան գաղթի ուղին բռնած հայերը: Բոսֆորի ափերին փռված Կ. Պոլիսը Արևելքն Արևմուտքի հետ կապող այդ «ոսկե կամուրջը», աստանդական հայեր հյուրընկալեց տակավին V դարից, երբ Հայաստանը նվաճվեց սահմանամերձ աշխարհակալ պետությունների կողմից, որոնց վարած քաղաքականությունը ուղղակի կամ անուղղակի պատճառ դարձավ գաղթագնացության:

Բյուզանդիայի մայրաքաղաքն էին գալիս հայ ճարտարապետներ, պատանդ տարված կամ կրթվելու առաքված թագաժառանգներ, իշխանազուններ, զինվորականներ, վաճառականներ: Կամավոր եկվորները, հատկապես պարսկական տիրապետությունից գաղթողները, չէին բավարարում հայերի խիզախությանն ու ընդունակություններին լավածանոթ բյուզանդական կայսրերի պահանջները, որոնք VI դարից ի վեր բռնագաղթեր էին կազմակերպում Հայաստանից, հայ զանգվածներին բնակեցնում Թրակիայում, Մակեդոնիայում և այլուր:

[1] Այս գլխի շարադրանքը հրատարակել ենք «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.» մեր մենագրության 370-392, ապա՝ «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, 300-312 էջերում: Աշխատությունն ամբողջական դարձնելու մտահոգությամբ այստեղ զետեղում ենք մեր նախկին աշխատությունների հատվածները, իհարկե խմբագրված, լրացված, երբեմն էլ՝ կրճատված վիճակով:

IX-X դարերի Կ. Պոլսում արդեն կային բավականաչափ հայեր[1]:

Հետագա երկու հարյուրամյակներում հայկական տարրը նվազեց հունական մայրաքաղաքում: Դրա պատճառը հունադավան կղերի վարած համաձուլման քաղաքականությունն էր:

XIII դարի վերջերին իրադարձությունները փոխվեցին ի նպաստ հայերի: 1261 թ. պալեոլոգները վերագրավեցին մայրաքաղաքը և հանդես եկան ընդդեմ կրոնական խտրականության: Զգալով Արևելքից եկող մոնղոլական հորդաների վտանգը, նրանք ջանում էին հաշտության եզրեր փնտրել Հռոմի կղերապետության հետ, ոտքի հանել համաքրիստոնեական աշխարհը, սպառնացող վտանգին դիմագրավելու նպատակով:

1307 թ. մարտի 19-ին Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք Սսում գումարված եկեղեցական ժողովին մասնակցում էին 26 հայ եպիսկոպոսներ[2], դրանց թվում Կ. Պոլսի հայ գաղութի հոգևոր պետերը: 1360 թ. Կ. Պոլսի մեջ հայերն ունեին ս. Սարգիս եկեղեցին և նրա շուրջ համախմբված հայկական համայնք: Նույն տարում կաֆայեցի Կոզմաս անունով հայ վաճառականը կառուցել տվեց երկրորդ եկեղեցին, որը Ղրիմից վերագաղթած հայ առևտրականների դրամով վերաշինվեց և ընդարձակվեց 1436 թ.[3]:

1453 թ. մայիսի 29-ին թուրքական բանակը Մուհամադ II Ֆաթիհի գլխավորությամբ գրավեց Բյուզանդական կայսրության մայրաքաղաքը, որի անհուսալի ու համառ պաշտպանությանը մասնակցում էին նաև գաղութի հայերը[4]: Սուլթանը թույլատրեց իր զինվորներին երեք օր շարունակ կողոպտել քաղաքը: Բյուզանդական զինվորների և քաղաքի բնակչության մի մասը սպանվեց, մնացյալը գերեվարվեց:

Սուլթան Մուհամադ Ֆաթիհի առաջին հոգսը եղավ Կ. Պոլսի վերաշինումը: Նրա հրամանով նոր բռնագաղթեր կազմակերպվեցին Փոքր Ասիայի քաղաքներից: Բռնագաղթվածներին նա ազատում էր գլխահարկից, տրամադրում բնակարաններ, հողամասեր, կալվածքներ: Գաղթեցվում էին հույներ, հրեաներ, ինչպես նաև ստվարաթիվ հայեր: Սուլթանը նկատում էր հայ արհեստավորների կատարած դերը՝ Ստամբուլի գեղեցկացման և հեռավոր ափեր կտրող վաճառականների շնորհքը՝ նորակառույց պալատները զարդարելու գործում:

[1] ***Ш. Диль,*** История Византийской империи, М., 1948, էջ 75:

[2] Տե՛ս ***Հ. Աղեքսանդր Պալճեան,*** Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 281:

[3] Տե՛ս «Հնգադարեան յիշատակարան Սամաթիոյ ս. Գևորգ եկեղեցւոյ, պատրաստուած ***Պետրոս Կարապետեանէ***», Իսթամբուլ, 1935, էջ 15:

[4] Տե՛ս ***Հ. Մնասյան,*** Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 7-8, 267-272:

Ֆաթիհը և նրա հաջորդները շարունակեցին հայկական նոր զանգվածներ բնակեցնել Կ. Պոլսում: Դեպի մայրաքաղաք բռնագաղթի ենթարկվեցին հայեր Բրուսայից, Բաբերդից, Արաբկիրից, Ամասիայից, Կիլիկիայից, Եվդոկիայից, Ակնից: Այդ եղանակով 1457 թ. գաղթողներ եղան Թեոդոսիայից, 1479 թ. Ղարամանիայից, 1493 թ. Անկյուրիայից, Ակքերմանից, 1514 թ. Թավրիզից[1]:

Թուրքերի գրավումից քառորդ դար անց, 1478 թ. վիճակագրական մի տեղեկության համաձայն, Կ. Պոլսում կային 100-120 հազար բնակիչներ, որոնք բնակվում էին 16.026 տներում և ըստ ազգությունների ունեին հետևյալ պատկերը. 9486 տուն մահմեդական, 3743 տուն հույն, 1647 տուն հրեա, 817 տուն հայ, 267 տուն կաֆայեցի (սրանց մի մասը հայեր էին), 332 եվրոպացի, 31 տուն գնչուներ[2]: Ուրեմն, XV դարի այս հայ գաղթավայրի Ստամբուլ և Ղալաթիա մասերում արդեն բնակվում էր շուրջ 1000 հայ ընտանիք:

Հետագա դարերում հայերի թիվը բազմապատկվեց: Բռնագաղթերի ու պանդխտության ճանապարհով բերվածների հաշվին ստեղծվեցին նոր արվարձաններ, ստվարացան նախկին թաղամասերը: Կ. Պոլիսը գնալով դառնում էր խճանկարը ողջ արևմտահայության, այսինքն՝ մի համայնք, որի մեջ Արևմտյան Հայաստանի ամեն մի նահանգ, ամեն մի գավառ, նույնիսկ ամեն մի գյուղ իր մասնիկն ու ներկայացուցիչն ուներ:

Կ. Պոլսի հայ բնակչությունն ավելի ստվարացավ XVI-XVIII դարերում և հասավ մինչև 200.000-ի: Սուլթան Սելիմը, Չալդրանի հաղթանակից հետո, հազարավոր ընտանիքներ, մեծ մասամբ հայեր, քշեց Կ. Պոլիս: Դրան հաջորդեցին 1577 թ. Նախիջևանի, ապա՝ Թավրիզի բռնագաղթերը: Թուրք-պարսկական 1578-1590 թթ. և 1604-1638 թթ. երկարատև պատերազմները, շահ Աբբասի արշավանքները, ջալալիների ասպատակություններն Արևմտյան Հայաստանում ժողովրդին հարկադրում էին թողնել հայրենի երկիրը և ապաստանել օտար մայրաքաղաքում: Այնպես որ XVIII դարի կեսերին Կ. Պոլսում արդեն 8000 տուն տեղացի և 50 հազար էլ պանդուխտ հայեր կային[3]: XVIII դարի վերջին մայրաքաղաքի ընդհանուր բնակչության թվում հայերն ու հույներն արդեն մեծ թիվ էին կազմում:

Կ. Պոլսի գրավումից քիչ անց՝ 1461 թ., մայրաքաղաքի հայադավանները ձևավորվեցին իբրև առանձին համայնք: Սուլթանի հրամանագրով Հովակիմ եպիսկոպոսը նշանակվեց առաջնորդ: Տրվեցին մի

[1] Տե՛ս ***Երեմիա Չելեպի Քյոմուրճեան,*** Ստամպօլոյ պատմութիւն, Վիեննա, 1913, էջ 210:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 52 և հետո:

[3] Տե՛ս ***Գրիգոր Դարանաղցի,*** ժամանակագրութիւն, էջ 461-463:

շարք արտոնություններ: Կ. Պոլսի համայնքապետերն առաջին հրովարտակը ստացել են ոչ շուտ, քան 1540-ական թվականներին, այսինքն սուլթան Սուլեյման Կանունիի տիրակալության շրջանում[1]:

Հակոբ Սիրունին ապացուցել է, որ առաջին պատրիարք Հովակիմն ավելի վաղ էր հասել հունական մայրաքաղաք, քան թուրքերը, ըստ որում, այս անունով եղել են մի քանի անձնավորություններ, որոնցից մեկն է միայն բազմել պատրիարքական աթոռին 1461 թ.: Հովակիմ պատրիարքը նստել է Սամաթիայի ս. Գևորգ եկեղեցում և 1478 թ. աթոռը հանձնել է Նիկողայոս եպիսկոպոսին[2]:

Այս շրջանից էլ ձևավորվել են Հայոց պատրիարքի, ավելի ճիշտ պատրիարքարանի իրավունքները, ինչպես նաև պարտականությունները սուլթանական կառավարության հանդեպ: Սկզբում Կ. Պոլսի պատրիարքներին էին ենթարկվում Փոքր Ասիայի Բուրսայի, Այդընի, Կասթեմունիի, Անկյուրիայի և Սեբաստիայի շրջանները, քանի որ միայն սրանք էին հպատակեցված կայսրությանը: Դարավերջի քառորդին, երբ օսմանյան զորքերը նվաճեցին Տրապիզոնն ու Ղրիմը, այդ թեմերը նույնպես անցան պատրիարքի իրավասության տակ: Հետագա դարերում, պարբերական փոփոխություններով, ընդարձակվեցին Հայոց պատրիարքի «կառավարչության» շրջանները, սուլթանները սրանց հոգևոր իշխանությանը հպատակեցրին նվաճած հայկական ու հայաբնակ գրեթե բոլոր մարզերի առաջնորդարաններն ու հոգևոր վիճակները, նույնիսկ այն թեմերը, որոնք 1441 թ. ի վեր պատկանում էին էջմիածնի կաթողիկոսությանը:

Ստեղծված իրավիճակը երկար չտևեց: XVII դարում վանեցի Զաքարիայի, Խուլ Հովհաննեսի, Գրիգոր Դարանաղցու և այլոց միջև ծագած գավազանակռվի պատճառով պատրիարքարանի իրավասության սահմանները վերանայվեցին, տրոհվեցին թեմերը, իսկ որոշ մարզերի հոգևոր կառավարությունն էլ, իբրև «տերունական թեմեր», անցավ էջմիածնի Մայր աթոռին (Զմյուռնիա, Վասպուրական, Տիգրանակերտ): Այդուհանդերձ, մինչև Սահմանադրության վավերացումը, Կ. Պոլսի պատրիարքները դիտվում էին իբրև արևմտահայերի հոգևոր պետեր և, փաստորեն, միջին օղակ էին ազգի ու օսմանյան պետության միջև:

Պատրիարքների իրավունքների մասին եղած հրովարտակներից մեզ հասած հնագույնը 1764 թ. հունիսի 3-ին Գրիգոր Պասմաճյանին տրված «բերաթն» է, որը ցայսօր գիտական շրջանառության մեջ դրվածներից գրեթե ամենաբովանդակալիցն է: Ըստ սուլթանական հիշյալ հրովարտակի, Կ. Պոլսի պատրիարքն իրավունք ուներ տնօ-

[1] Հ. *Պերպերեան,* Նյութեր Կ. Պոլսո Հայոց պատմութեան համար, Վիեննա, 1965, էջ 100-115:

[2] «Էջմիածին», 1963, Դ, էջ 27-31:

ռինելու Անատոլիայի ու Ռումելիայի հայ ազգաբնակչության հոգևոր գործերը, ընտրել տալու կամ հրաժարեցնելու առաջնորդներին, թեմակալներին: Ամուսնության, ամուսնալուծության և քաղաքացիական այլ խնդիրների դեպքում նրան էր պատկանում վճռական խոսքի իրավունքը: Պատրիարքն էր կարգավորում վակֆային հողերի, կտակների, հոգաբարձության խնդիրները, նվիրակներ հղում եկեղեցական տուրքերի և նվերների հավաքման համար, գավառներից ստացած բողոքները հանձնում սուլթանին կամ Բ. Դռանը, պատժում, երբեմն էլ պատժել տալիս աղանդավորության ուղին բռնած «մոլորյալ հայերին»: Պատրիարքն էր արտոնում վանքերի ու եկեղեցիների կառուցումը, դպրոցների ու նախակրթարանների բացումը մայրաքաղաքում, տպարանների հիմնումը, գրքերի տպագրությունը: Մինչև XIX դարակեսը պատրիարքները, փաստորեն, առինքնել էին նաև գրաքննիչների պաշտոնը:

Արևմտահայ «հոտի հովվապետն» ուներ ընդարձակ կալվածքներ, իրեն ենթակա երկու տասնյակից ավելի պաշտոնյաներ, բանտախցեր, դատական ու ոստիկանական իրավունքներ: Սուլթանը պատրիարքին ու նրա 15 ծառայողներին ազատել էր հարկերից, արտոնել ձի հեծնել, հագնել այնպիսի տարազ, ինչպիսին «նրանք ցանկանային» և այլն: Հրովարտակը բովանդակում էր նաև այլ իրավունքներ, որոնք միայն թղթի վրա էին, իսկ իրողության մեջ հակառակն էր կատարվում: Սուլթանները, մեծ վեզիրները Հայոց պատրիարքին սիրաշահում էին, երբ արևմտահայության հարկավորությունն էին ունենում, մասնավորապես թուրք-պարսկական ու ռուս-թուրքական պատերազմների պահերին, իսկ ընդհանուր առմամբ հայ բարձրաստիճան պաշտոնյան «գյավուր», «ռայա», «զիմմի» մականուններով կառավարության աչքում ավելի ցածր էր, քան մահմեդականը:

Թուրք պատմագրությունն այսօր էլ ճգնում է հավաստել, թե հայ եկեղեցին ընդհանրապես ազատ է եղել հարկատվությունից, մինչդեռ սուլթանների հրապարակած ֆերմանները հակառակն են ապացուցում: Հայոց պատրիարքը պարտավոր էր 100 հազար ակչե միանվագ հարկ տալ արքունիքին, որպեսզի կարողանար ստանալ սուլթանական հրովարտակը իր պաշտոնում հաստատվելու մասին[1]: Հենց այդ հարկագումարն էլ սուլթաններին և մեծ վեզիրներին շահագրգռում էր հաճախակի փոփոխելու պատրիարքներին, որպեսզի ամեն մի նորընտիր պատրիարքից կորզեին 100 հազար ակչե: Պատահական չպետք է համարել, որ Հովակիմից սկսած (1461 թ.) մինչև Հակոբ եպիսկոպոս Պոլսեցին (1848 թ.) պատրիարքական աթոռին

[1] Տես՝ *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, հ. Ե, էջ 117:

հերթականորեն բազմել են 82 (այլ հաշվով 85) անձնավորություն: Վերջին հարյուրամյակում դրամի ավելի կարիք զգացող սուլթանները, առանց պատճառի, փոփոխել են սրանց, երբեմն նույն մարդուն երկու անգամ նշանակելու արտոնություն տվել և ամեն անգամ էլ ստացել սահմանված հարկագումարը:

Անցնելով պաշտոնի, պատրիարքները պարտավոր էին հայ եկեղեցիներից, առաջնորդարաններից, վանքերից հավաքել «միրի մուկաթա» հարկը (100-140 հազար ակչե) և հանձնել կառավարությանը: Պատրիարքները միաժամանակ պարտավոր էին նոր վեզիրին տալ 500 ղուրուշ, վեզիրի տեղակալին՝ 250 ղուրուշ, չավուշ բաշուն՝ 200 ղուրուշ[1]: Նվերների անվան տակ պատրիարքները տուրք էին տալիս ենիչերի աղասուն և նրա օջախի չավուշներին, որը վճարվում էր դրամով և թանկարժեք հագուստներով:

Անշուշտ, հարկագումարի անփոփոխ վիճակի ու անընդհատ ավելացման գործում քիչ մեղք չունեին նաև հոգևորականները, աթոռակռվի ելած եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները:

Այսպիսով, Կ. Պոլսի հայոց պատրիարքները կառավարում էին ոչ միայն գաղթավայրի հայկական համայնքը, այլև ողջ արևմտահայությանը, գանձում էին հարկերի մի քանի տեսակներ և հանձնում կառավարությանը: Սուլթաններն էլ իրենց քաղաքականության մի մասը հոգևորականության միջոցով էին իրականացնում հայաշատ գավառներում: Հոգևոր դասին որոշ արտոնություններ տալով, ջանում էին օգտագործել նրանց հեղինակությունը, հպատակներին՝ հնազանդ և օտար պետությունների ազդեցություններից հեռու պահելու համար:

Կ. Պոլսի բոլոր պատրիարքները չէ, որ կարող էին աչք գոցել հայերի նկատմամբ Թուրքիայի վարած ազգային ու սոցիալական անտանելի քաղաքականության հանդեպ: Կ. Պոլիսը տալիս է նաև այնպիսի պատրիարքներ, բարձրաստիճան հոգևորականներ, որոնք, մասնավորապես XVII դարում, հանգում էին Եվրոպայի ռազմաքաղաքական միջամտության ճանապարհով Հայաստանը Թուրքիայի և Իրանի բռնատիրությունից ազատելու գաղափարին:

Մայրաքաղաքի հոգևոր կենտրոնը հիմնականում մնում էր իբրև կղերա-ավատատիրական ինստիտուտ, որը նպատակահարմար չէր տեսնում դիմադրական որևէ շարժում կազմակերպել ոչ միայն Կ. Պոլսում, այլև Արևմտյան Հայաստանի գավառներում:

Իրար հաջորդող պատրիարքները տեսանելի ու անտեսանելի բազմաթիվ թելերով աղերսվում էին պալատում դիրք ստացած մեծահարուստ հայ չելեբիների հետ, մի դասի, որը ձևավորվեց մոտավորապես XVI դարի վերջերին, երկու հարյուրամյակ շարունակ սեփականեց Թուրքիայի քաղաքականության պաշտպանության ֆունկցիաները, կանխելով XVIII և XIX դարերի պոլսահայ ամիրայությանը:

Չելեբի պատվանուն են ստացել մայրաքաղաքում, Զմյուռնիայում ու գավառներում ծվարած այն հայ երևելիները, որոնք դառնալով թուրք փաշաների և հայ եպիսկոպոսների սեղանավորներ՝ պարապում էին վաշխառությամբ, տոկոսով դրամ էին տալիս, սուլթանի առաջ երաշխավորներ դառնում և ժողովրդից կորզած առատ հասկաքաղով ուռճացնում սեփական դրամաքսակները: Նման զբաղմունք ունեցող, մեծահարուստ ու դիրքատեր չելեբիներից էին Աբրահամ Աբրոյից սկզբնավորված Աբրոյենց չելեբիական հայտնի տոհմը:

Հայ չելեբիները, սակայն, միայն վաշխառուներ ու պաշտոնյաներ չէին: Նրանցից շատերը նախկին խոջաներ էին, տարանցիկ առևտրով պարապողներ, որոնք սուլթաններին մատուցած ծառայության կամ ցուցաբերած հավատարմության համար նույնպես չելեբի պատվանունն էին ստացել, սակայն պահպանել էին նաև խոջա մակդիրը:

Ազգայինների, հատկապես մայրաքաղաքի հայ բնակչության աչքում հեղինակություն ստանալու, նրանց վրա ազդեցություն ձեռք բերելու դիտավորությամբ չելեբիները հովանավորել են ժամանակի կրթված մարդկանց:

Աբրո Չելեբին հովանավորել է նշանավոր մտավորական Երեմիա Չելեբի Քյոմուրճյանին, ընդօրինակել տվել հայկական ձեռագրեր, սեփական ծախսերով շինել կամ վերակառուցել Կ. Պոլսի ս. Նիկողայոս, Սիլիվրիի ս. Գևորգ, Կանդիայի ս. Կարապետ և Ֆիլիպպեի ս. Գևորգ եկեղեցիները: Խոջա Երեմիայի որդի Մաղաքիա Չելեբին, օգտագործելով մեծ եպարքոս Ահմեդ փաշայի վրա ունեցած իր ազդեցությունը, 1649 թ. իջեցնել տվեց թիավարական տուրքի չափը և պոլսահայերին ազատեց «մեծ զրկանքներից»:

XVI-XVII դարերում Կ. Պոլիսը աշխույժ առևտրական կենտրոն էր դարձել: Աշխարհագրական հարմարավետ դիրքը, գավառի հետ համեմատած «տանելի պայմանները», միջցեղային զինբախումների բացակայությունը մայրաքաղաք էին ձգում հայ առևտրականներին, որոնք Հայաստանում, Իրանում դրամագլուխ դիզելով, գալիս էին դեպի Բոսֆորի ափերը, նախ ընդգրկվելու առևտրական ավելի գործոն ու լայն հարաբերությունների հորձապտույտի մեջ, ապա և նոր հանգրվանը վաճառականական թելերով կապելու գավառներին, ինչպես և Պարսկաստանին, Ռուսաստանին, հեռավոր Հնդկաստանին, կամրջելու թուրք-եվրոպական ծովային ու քարավանային առևտուրը:

Հայ առևտրականներն այստեղ ունեին մեծ թվով խանութներ,

[1] Տես՝ *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, հ. Ե, էջ 117:

առանձին շուկաներ, խաներ (իջևանատներ), վաճառանոցներ: XVII դարում աչքի ընկնող և բազմամարդ իջևանատներն էին Խոջա խանը, ուր օթևանում էին հիմնականում Իրանից եկած հայ վաճառականները, Մահմուտ փաշա խանը, Ենիկյուրի խանը, Ջելետ խանը և Պեքիար օղալարը: XVIII դարում հիշատակվում են նաև Վեզիր խանը, Վալիդե խանը, Ենի խանը: Հայ առևտրականները հիմնականում իջևանում էին Խոջա խանում: 1660 թ. Խոջա խանի այրվելուց հետո հայ վաճառականների հանգրվանավայրը դարձավ Ղալաթիայի առևտրական թաղամասը:

XV-XVI դարերում սակավ են հանդիպում վկայություններ խոջաների մասին, սակայն հաջորդ դարում սրանք այնքան են ուժեղանում, որ XVII դարը ոմանց կողմից «խոջայական կապիտալի ոսկեդար» է անվանվում:

Պոլսահայ առևտրական դասը XVII դարից սկսած խոջա պատվանունն էր կրում, որն ունենալով պարսկական ծագում և բազմաթիվ իմաստներ, գաղթավայրի այս շրջանի հայերի համար գործածվում էր բացառապես վաճառականի փոխարեն կամ փոխաբերությամբ: Խոջաներն իրենց առևտրական գործունեությունն սկսել էին Իրանում, աստիճանաբար տարածվել Փոքր Ասիայում, մահմեդական Արևելքում, Ռուսաստանի հայ գաղթավայրերում:

Կ. Պոլսի հայ գաղութի խոջաներից XVII դարում հայտնի դեմքեր էին վանեցի խոջա Ռուհիջանը, երզնկացի խոջա Հովսեփը, խոջա Դավիթը, նրա որդի արդեն չելեբի Գրիգորը, բոլբոլչի խոջա Աստվածատուրը, ակնցի խոջա Վահրատը, տիվրիկցի մահտեսի Վահրատը, խոջա Կիրակոսը, խոջա Նահապետը և շատ ուրիշներ:

Հայ մեծատուն խոջաներն ընդհանուր առմամբ հայ կոմպրադորական բուրժուազիայի նախորդներն էին, որոնք խարսխվելով Կ. Պոլսում, ջանում էին ազգի ներքին գործերը տնօրինող հիմնարկների մեջ տեղեր զբաղեցնել: 1650-ական թվականներին արդեն սրանց ազդեցության տակ էր Ղալաթիայի առևտրական թաղամասը՝ ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցով, որի «մեծաշուք իշխաններն ու երեսփոխաններն էին» խոջա Դանիելը, խոջա Մկրտիչը, խոջա Եղիան և ուրիշներ[1]:

Խոջաներն իրենց գործարքներն սկսել էին Հայաստանի քաղաքներում, և շատերը, նեղվելով թուրք ու քուրդ ավազակախմբերի ասպատակություններից, չունենալով տարանցիկ առևտուր անելու հնարավորություններ, հարկադրաբար հանգրվանել էին առափնյա քաղաքներում: Կ. Պոլիս գալով, նրանք չէին կարող միանգամից մոռանալ հայրենի բնաշխարհը, ժողովրդի սոցիալ-քաղաքական ան-

[1] Տես *Բ. Կյուլեսերյան,* Հովհաննես Կոլոտ պատրիարք, Վիեննա, 1904, էջ 120:

տանելի ճնշումները, մանավանդ որ շարունակում էին առևտուր անել Հայաստանի վրայով: Հետևաբար, նախքան չելեբիանալը, սուլթանի պալատում տեղեր գրավելը (որը ոչ բոլորին էր հաջողվում), գավառահայ գաղթական խոջաներն ընդդիմադիր դիրքում էին տիրապետող խանա-փաշայական վարչակարգի նկատմամբ, և շատերը նույնիսկ ժողովրդին ազատագրական պայքարի հանելու փորձեր էին անում:

Այլ էին գավառի հետ կապված, քարավանային առևտրով զբաղվող, առավել ևս գավառահայ վաճառականները: Սրանք էին տոն տալիս XVII դարի հայ ազատագրական շարժմանը, արտահայտում ժողովրդական զանգվածների բաղձանքները, սակայն փրկության սպեղանի առաջադրելով ոչ թե համաժողովրդական զինված պայքարը, այլ տարաշխարհից ստացվելիք օգնությունը, կաթոլիկ Եվրոպայի կամ պապական Հռոմի միջամտությունը:

Կոստանդնուպոլսի հայկական գաղութի հիմնական դասը կազմում էին աշխատավորական զանգվածները, էսնաֆությունների (համքարությունների) մեջ համախմբված արհեստավորները, մանր ու միջին առևտրականները, օրավարձու մշակները, գավառից եկող պանդուխտները, այլ խոսքով՝ ներքնախավերը:

Հայտնի է, որ Մուհամադ Ֆաթիհով սկզբնավորված հայ բռնագաղթյալներից սուլթանները նախընտրում էին մայրաքաղաք բերել արհեստավորներին՝ սեփական ապարանքները զարդարելու, նորերը կառուցելու նպատակով: Դրա հետևանքով աստիճանաբար Արևմտյան Հայաստանի ամենատարբեր գավառներից բերված, իսկ հետագայում նաև «կամավորապես պանդխտած» և մայրաքաղաքում կենտրոնացված հայ արհեստավորների մեծ մասը ստեղծեցին իրենց էսնաֆությունները: Նրանք պանդուխտներին կռնակ տված, դարձան թուրքական անիշխանությանն ատելությամբ նայող ամենաառաջավոր դասը մայրաքաղաքում, խուլ ձևով արտահայտեցին գավառի շահերը: Սրանք այս շրջանում թույլ, հետագայում ավելի ուժեղ պայքարի մեջ մտան ամիրաների, սարաֆների, հայ վերնախավի հետ, ջանացին նրանց ձեռքից խլել ազգային գործերի ղեկը, դրանով իսկ հակադրվեցին նաև սուլթանական իրավակարգին:

Կ. Պոլսի հայ արհեստավորներից ամենահարգին ու սուլթաններին հարկավորները կառուցողներն էին, որոնց խալֆա էին անվանում: XVIII դարում հանրահայտ է դառնում Մուհամադ IV խան կոչվող սուլթանի արքունի ճարտարապետ բաբերդցի Գրիգոր խալֆան, որի փեսան Պալի Պալյանը, նախահայրն էր Պալյան կառուցող ճարտարապետ-ամիրաների, որդին՝ Մինաս խալֆա Պալյանը, որ կառուցեց Նուր-ի Օսմանիե մզկիթը, Ահմադ III-ի և Մահմուդ I-ի սիրելին էր:

Հայ խալֆաները և արհեստավորները, որոնք համախմբված էին Պալյան գերդաստանի շուրջը, XVII-XVIII դարերում Թուրքիայի մայրաքաղաքում կառուցեցին գեղեցիկ շինություններ. Սարայ Բուրնի պալատը (հրդեհված 1875 թ.), Պեշիկթաշի հին պալատը և բազմաթիվ այլ շքեղ պալատներ ու շենքեր, վերակառուցեցին Այա Սոֆիան և շատ այլ եկեղեցիներ, որոնք արդեն մզկիթի էին վերածված[1]:

Բազմամարդ ու ազդեցիկ էին նաև կղմինդրագործների (քիրեմիտչի), իշապանների, բաղանչիների հայկական էսնաֆությունները: Կեսարացի հայերի պատրաստած ականներով էր թուրքական բանակը պայթեցնում պարիսպներ ու բերդեր[2]: Թուրք ուղեգրողը արհամարհանքով, բայց և այնպես, հիշատակում է լայմչիների էսնաֆության մասին, «աղտոտ դաս մը, որուն շնորհիվ է սակայն, որ Կ. Պոլիսը մաքուր կմնա»: Հիշատակվում են XVII դարի հայ փորագրիչները, որոնց մեջ հայտնի են Խաչատուր հայը Ունքափանի մեջ, Այդընն հայը Բեդեստանի մոտ: Կային միություններ կազմած նվագողներ-ձեռնածուներ, ծաղրածուներ, երգիչներ, պարողներ, դափ խփողներ, որոնց, հույների և հրեաների հետ միասին, ընկերակցում էին նաև հայեր[3]:

Կ. Պոլսի արհեստագործության մեջ, ինչպես սկզբնական շրջանում, առավել ևս XVIII դարում, ծաղկման հասավ ոսկերչությունը: Հայ ոսկերիչները միաժամանակ թանկագին քարեր (մասնավորապես ադամանդ) մշակող լավագույն արհեստավորներ էին:

Եթե XVI-XVII դարերի հայ արհեստավորների ու արհեստավորական կազմակերպությունների մասին փաստերը սակավ են, ապա XVIII դարի երկրորդ կեսի աղբյուրները հաղորդում են, որ Կ. Պոլսի բազմահազար հայ արհեստավորությունն արդեն համախմբվել էր 65 էսնաֆությունների մեջ[4]: Դրանցից կարևորներն էին սեղանավորների, ոսկերիչների, հացագործների, ծաղկարարների, մուշտակագործների, դերձակների, պղնձագործների, հյուսների, գավաթագործների, խոհարարների, թուր շինողների, կոշկակարների էսնաֆությունները: Էսնաֆական միություններ ունեին նաև բժիշկները, վարսավիրները, գրավաճառները, նպարավաճառները:

Կ. Պոլսի էսնաֆություններն ունեին դարավոր ավանդույթով սրբագործված կանոններ, ընտրում էին իրենց ղեկավար մարմինները, միասնաբար դիմագրավում վերահաս աղետները, ձեռք մեկնում աղքատին ու կարոտյալին, դժբախտության մեջ ընկնող հայրենակիցներին: *Էսնաֆները, փաստորեն, կազմում էին գաղութի հայ ազգաբնակչության ամենակենսունակ, ժողովրդի ճակատագրով հետաքրքրվող դասը և ազգի ներքին գործերի տնօրինության փորձեր էին անում: Համախմբելով գաղութի աշխատավորական զանգվածներին, սրանք ձգտում էին հակադրվել ունևոր վերնաշերտերին, ինչպես նաև սուլթանական բռնապետությանը և հենարան դառնալով առաջադեմ, գավառի ճակատագրով հետաքրքրվող վաճառականներին, փաստորեն, սատար էին կանգնում հայ ազատագրական շարժմանը:*

Կ. Պոլսի հայ գաղթավայրում XVI-XVIII դարերում տեղեր էին գբաղեցնում գավառահայերը դրսեցիները, որոնք հարատև պայքարի մեջ էին արդեն տեղաբնիկներ դարձած, ներսեցի հորջորջում ստացածների հետ: Գալիս էին Եվդոկիայից, Սեբաստիայից, Տիվրիկից, Կամախից և Արևմտյան Հայաստանի բազմաթիվ այլ շրջաններից:

XVII դարի կեսերին դրսեցիների թիվն այնքան ստվար էր, որ նրանց հարկերը, դիզվելով հայրենի գավառների ազգաբնակչության վրա, վճարելն անհնար էր դառնում, ուստի պատվիրակներ էին գալիս Քյոփրյուլու եպարքոսի մոտ, խնդրում կամ գաղթողների գլխահարկը տեղում առնել, կամ էլ իրենց ազատել նրանց փոխարեն հարկեր վճարելու պարտականությունից: Գնալով պանդուխտների թիվը շատացավ, և եղան պահեր, երբ 50 հազարի հասավ, սակայն միշտ պահելով *դրսեցի* մականունը, միշտ պայքարի մեջ մնալով գաղութի *ներսեցի* կոչվող հայ վերնախավի հետ:

Այսպիսով, Կ. Պոլսի մարդաշատ հայ գաղութը միջնադարում սոսկ մի գաղութ չէր, այլ «տեսակ մը հայ աշխարհ հայ հողեն հեռու, որ բազկերակը պիտի դառնար պահ մը հայ կյանքին, երբ ամեն ինչ խամրեր էր հայ հողին վրա,- գրում է Հ. Սիրունին: - Խճանկար մը պիտի դառնար պահ մը ան, ուր պիտի գային բոլոր հայ գավառները, իրենց բարքերը բերել, իրենց ավանդությունները, հետքեր իրենց ընտանեկան սովորություններեն, իրենց բարբառեն»[1]: Կ. Պոլիսը դառնում էր նաև արևմտահայ մշակույթի նշանավոր կենտրոններից մեկը:

Մայրաքաղաքի մշակութային հորդահոս շարժումը հարկավ վերապահված էր հետագա հարյուրամյակին XIX դարին: Սակայն XVIII դարում էլ այստեղ կային մշակութային հիմնարկներ, տպարաններ, դպրոցներ, որոնք որակ են կազմել համեմատած խավա-

---

[1] Տե՛ս *Գէորգ Մեսրոպ*, «Հայկարան» («Պարբերագիրք»), Սոֆիա, 1931, Թ. մաս, Գեղարուեստ, էջ 253-254:

[2] Տե՛ս «Էվլիա Չելեբի Սիյահաթնամեսի», Ա., 1314 (1898), էջ 515-516, 629-630:

[3] Նույն տեղում, էջ 632, 645-648:

[4] «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 338:

[1] «Էջմիածին», 1963, Ա, էջ 32:

ռապատ Թուրքիայի ու նրա կազմի մեջ մտնող Արևմտյան Հայաստանի լուսակարոտ իրավիճակին:

Հայերի աշխարհիկ դպրոցը Կ. Պոլսում սկիզբ առավ XVIII դարի վերջերին, երբ սուլթան Սելիմը 1789 թ. արտոնեց հայոց պատրիարքարանին եկեղեցիներին կից դպրոցներ բացել: Առաջին դպրոցը բացվեց Գում-Գաբուում մայր եկեղեցուն կից[1]:

Դպրոցական տարածուն ցանցի բացակայությունից և ժողովրդի ապրելակերպի դժնդակ պայմաններից օգտվելով, եվրոպացիները կաթոլիկներ ու բողոքականներ, Կ. Պոլսում հիմնում են իրենց դպրոցները, ազգապառակտիչ սերմեր ցանում բազմամարդ այս գաղթավայրում:

Կ. Պոլսի գաղութում ծաղկում էր ապրել հայ տպագրությունը: Առաջին տպարանն այստեղ հաստատեց Աբգար դպիրը 1567 թ., որը տպագրեց հինգ գիրք, սրան հաջորդեց հարյուրամյա դադարի շրջանը, մինչև հրապարակ կիջներ նշանավոր բանասեր Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը և կհիմներ իր տպարանը, որն ընդամենը երկու տարվա կյանք ունեցավ և տպագրեց երկու գիրք:

Սրանից քսան տարի անց Գրիգոր Մարզվանցին հիմնում է իր տպարանը և 45 տարիների ընթացքում տպագրում 14 անուն գիրք: Հետագա տարիներին Կ. Պոլսի հայկական տպարանների թիվը հասնում է շուրջ 25-ի: Հատկանշական է, որ կրոնաբարոյագիտական երկերի կողքին տպագրվում են պատմական գործեր, ողբերգություններ, թարգմանություններ: Գրատպությունը սկսում է մտնել պոլսահայ կենցաղի մեջ:

Այսպիսով, XV-XVIII դարերի պոլսահայ մարդաշատ ու կենսունակ գաղթավայրը դարձել էր ոչ միայն տնտեսական, այլև մշակութային ակնառու կենտրոն, որի զարգացման բարձրակետը վերապահված էր նոր պատմաշրջանին:

*
* *

Կոստանդնուպոլսից հետո Թուրքիայի տնտեսապես զարգացած մյուս կենտրոնը Զմյուռնիան էր (Իզմիրը): Մոտավորապես երեքհազարամյա հնություն ունեցող այդ քաղաքը ձգվում էր ծովի ափերով, եզերվում էգեյան ծովախորշով, առևտրական ու տնտեսական կապերով առնչակցվում ինչպես եվրոպական Արևմուտքին, այնպես էլ ասիական Արևելքին:

[1] *Վ. Ս. Երկանյան*, Հայկական դպրոցը 1800-1870 թթ., «Լրաբեր», 1971, N 4, էջ 40:

Լանկ-Թամուրի արշավանքից ավերված, բնակչության կեսից ավելին կորցրած Զմյուռնիան 1419 թ. գրավվեց օսմանյան թուրքերի կողմից, սակայն վերջիններս չկարողացան անմիջապես հաստատուն խարիսխ նետել այդտեղ: Կարճ ժամանակամիջոցում Կ. Պոլսից ու այլ տեղերից ճողոպրած հույները համախմբվեցին էգեյան ջրերի ափերին, դիմագրավեցին թուրքական վայրագությունները և ընկան միայն ձևական կախվածության մեջ: Զմյուռնիայի կիսանկախ վիճակը վերջնականապես վերացվեց 1624 թ., երբ թուրքական զորամիավորումները արյունահեղությամբ, ավերածություններով վերանվաճեցին այն և տեղակայեցին կառավարական զորքեր:

Զմյուռնիայի աշխարհագրական հարմարավետ դիրքը և համեմատաբար տանելի քաղաքական ու տնտեսական պայմանները վաղուց ի վեր դեպի քաղաքն էին ձգել նաև հայ գաղթականներին: Հայերի մասին վկայող առաջին փաստաթուղթը 1261 թ. Միքայել Պալեոլոգ կայսեր և ճենովացիների միջև կնքված դաշնագիրն է, որի մեջ հույների կողքին հիշվում են նաև հայ «հաջողակ վաճառականները»[1]: Հին գերեզմանաքարերի վրա մնացած արձանագրությունները, ժողովրդի խոսակցական լեզվի ու բառապաշարի մի մասն ապացուցում են, որ հայերը Զմյուռնիա են գաղթել Հայաստանի արևելյան հատվածից սկսած XI և XII դարերից[2]:

XIV դարի վերջին, Կիլիկյան թագավորության կործանումից հետո, Զմյուռնիան ավելի հայաշատ դարձավ: Կիլիկիայից արտագաղթած հազարավոր հայ գերդաստանների մի մասը հաստատվեց Հռոդոսում, Կրետեում, Կիպրոսում, Իտալիայում, մի մասն էլ հանգրվանեց այստեղ: 1605 թ. շահ Աբբասը ավերեց Արարատյան դաշտը, բռնագաղթեցրեց հայերին և քշեց Իրանի խորքերը: Արևելահայերի, մասնավորապես երևանցիների, նախիջևանցիների ու ղարաբաղցիների 500-ից ավելի ընտանիքներ հետագայում խարիսխ գցեցին Զմյուռնիայում: Սակայն ամենախոշոր գաղթը եղավ XVIII դարում Աղա-Մուհամադ խանի արշավանքից հետո: Այս անգամ քաղաք էին գալիս կարբեցիներ, օշականցիներ, աշտարակցիներ, և գաղթօջախի հայերի թիվը հասնում է 12 հազարի:

Քաղաքի ընդհանուր ազգաբնակչության թիվը հաստատուն չի եղել: Երկրաշարժերը, պարբերաբար կրկնվող հրդեհները հաճախակի կործանում էին փայտաշեն Զմյուռնիայի ամբողջ թաղամասեր, հազարավոր ընտանիքներ հեռանում էին այլ վայրեր, պակասում

[1] Տե՛ս *Ս. Ալպոյաճեան*, Զմյուռնիո տպարանները, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, N 2, էջ 68:

[2] Տե՛ս «Բիւզանդիոն», N 2326, «Արևելք», N 4558:

էին քաղաքաբնիկները, նորից համալրվում գաղթական եկվորներով: 1631 թ. զմյուռնիացիների թիվը 90 հազարի էր հասնում, որից 8 հազարը հայեր[1], 1731 թ. 76 հազար, որից 7 հազարը հայեր, 1772 թ. 102 հազար, 6 հազարը հայեր, 1800 թ. 104 հազար, 12 հազարը հայեր[2]:

Գաղթօջախի հայերը տարբեր զբաղմունքներ ունեին և տրոհված էին մի քանի դասերի ու խմբերի: Ի տարբերություն Կ. Պոլսի, Զմյուռնիան չկարողացավ տալ ամիրաների և սեղանավորների այն հսկա թիվը, որը 200 տարի շարունակ մեծ դեր կատարեց, իր ազդեցությունը տարածելով տնտեսական կարևոր գերատեսչությունների վրա: Սակայն այստեղ էլ կային փոքրաթիվ հայ ամիրաներ, խոշոր հողատեր-կալվածատերեր, բազմաթիվ խանութատերեր:

Գաղութի մյուս դասը արհեստավորությունն էր, որը, սակայն, այնքան էլ մեծ թիվ չէր կազմում ընդհանուր ազգաբնակչության համեմատ: Հայ արհեստավորներից իրենց նուրբ աշխատանքներով առանձնանում էին ոսկերիչները, հայտնի էին հմուտ գորգագործները, դարբինները, ներկարարները, մետաքսագործները: Վերջիններս բավարարում էին ոչ միայն քաղաքի բնակչության պահանջները, այլև մեծ համբավ ունեին Եվրոպայում ու Ռուսաստանում:

Տակավին 1717 թ. հունվարի 28-ին Պետրոս Մեծը Զմյուռնիայից իր մայրաքաղաքն հրավիրեց Պետրոս Ապրոյին և նրա եղբայրներին, արտոնություններ ու նյութական հնարավորություններ տվեց նրանց, հանձնարարելով մետաքսագործական արհեստանոց բացել և ռուսներին սովորեցնել այդ արհեստը[3]:

Քաղաքում գործում էին չթագործական արհեստանոցներ: Արտադրանքը ներկվում էր, գունազարդվում տեղի բասմախանաներում և դուրս բերվում օտար շուկաներ: Հայերն ունեին տասից ավելի այդպիսի արհեստանոցներ և ստեղծում էին ծաղկանկար այնպիսի վերնաշապիկներ, վարագույրներ, սեղանի սփռոցներ, որոնք շլացնում էին նույնիսկ եվրոպացիներին: 1790 թ. հիմնվեց բասմայի մեծ գործարան: Այստեղ աշխատում էին 400-ից ավելի հայ բանվորներ, որոնք ներկում ու ծաղկանկարում էին կտավը[4]:

Զմյուռնիայում կային օրամշակ բանվորներ, հազարավոր պանդուխտներ, հողագործության հետ կապված ագարակատերեր, սակայն, այդ բոլորով հանդերձ, քաղաքը մնում էր հայ վաճառական-

[1] Տե՛ս *Հակոբ Վ. Քոսյան*, Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս, հ. 1, Զմյուռնիա, 1899, էջ 43:

[2] Տե՛ս ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, գործ 9, թերթ 113-114:

[3] Տե՛ս «Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս...», էջ 32-33:

[4] Տե՛ս «Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս», Վենետիկ, 1864, էջ 10:

Էջմիածնի Մայր Տաճարը IVդ.



Տիգրանակերտ

ների խոշոր կենտրոն և ունևոր, թվաշատ ու անվանի հիմնական դասը առևտրականներն էին: Տակավին XVII դարում Զմյուռնիան օսմանյան կայսրության ամենախոշոր վաճառաշահ քաղաքներից էր:

Քաղաքի վաճառականական կապիտալի ծաղկմանը նպաստում էր աշխարհագրական դիրքը: Համաշխարհային վաճառականության մեջ Զմյուռնիան, մինչև Սուեզի ջրանցքի բացումը, պահում էր առևտրական հանրաճանաչ կենտրոնի դերը: Ասիայից ապրանքները՝ գյուղատնտեսական մշակված ու անմշակ մթերքները, ցամաքային քարավաններով բերվում էին Զմյուռնիա և նավերով ուղարկվում Վենետիկ, Ամստերդամ, եվրոպական մյուս քաղաքները: Ասիայի խորքերից եկող քարավաններն անցնում էին Հայաստանով և հիմնականում առաջնորդվում էին հայերի կողմից: Արաքսի հովիտը հնդկական ապրանքների և պարսկական արտադրության փոխադրության ճանապարհն էր: Զմյուռնիայի հայերի մի մասը վերաբնակված էր Արարատյան երկրից. այժմ նրանք իրենց ձեռքն էին կենտրոնացնում այդ առևտուրն ու փոխանակությունը: Ակնհայտ է, որ քաղաքի հայ վաճառականների առևտուրը դուրս էր գալիս տեղական շրջանակներից, կապվում օտար շուկաների հետ:

Զմյուռնիայի հայ վաճառականները ներմուծում էին անգլիական բամբակյա և բրդյա գործվածքներ, ֆրանսիական ու շվեյցարական մետաքսեղեն, ավստրիական ապակեղեն և շաքար, եգիպտական բրինձ, ռուսական կարագ ու նավթ, իտալական զենքեր: Քաղաքը դառնում էր մի տեսակ մառան, որն ընդունում էր եվրոպական ապրանքներ, բաժանում ասիական մարզերին, հանգրվան տալիս արևելյան քարավաններին, փոխադրում նրանց բեռները և կազմակերպում վաճառքը[1]: Շ. Մոնտեսքյոյի վկայությամբ Զմյուռնիայից ամեն օր հայկական քարավաններ էին ուղևորվում Պարսկաստան և ասիական մայրցամաքի այլ երկրներ: Միջերկրական ծովով Զմյուռնիայի հայ վաճառականները կապված էին եվրոպական երկրների հետ[2]:

Զմյուռնիան միաժամանակ արևմտահայ մշակույթի կարևոր կենտրոնն էր, երկրորդը Թուրքիայում՝ Կ. Պոլսից հետո: Այստեղ կային տպարաններ, Մեսրոպյան վարժարան, նախակրթական դպրոցներ, ազգային հիվանդանոց:

Կ. Պոլսից ու Զմյուռնիայից բացի, դեռևս VIII-X դարերում հայկական ստվար համայնքներ էին ստեղծվել Փոքր Ասիայի մի քանի

---

[1] Տե՛ս «Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս», էջ 10:

[2] Տե՛ս ***Шарль Монтескье,*** Персидские письма, 1936, стр. 59:

գավառներում, որոնք նոր համալրումներ էին ստանում Արևմտյան, նույնիսկ Արևելյան Հայաստանից: Այդ եկվորները հիմնականում արհեստավորներ ու առևտրականներ էին բռնագաղթեցված հայրենի երկրից: Հայ արհեստավորներին բռնագաղթեցրին մասնավորապես դանիշմանդների տիրապետության շրջանում: Սելջուկյան սուլթան Սուլեյման իբն Գութլիմիշը (1075-1086) աշխարհավեր իր արշավանքների ժամանակ, որոշ արտոնություններ տալով հայ «շնորհալի» զանգվածին, տեղակայեց նոր մայրաքաղաք Գոնիայում, նրանց ձեռքերով կառուցեց ու շքեղազարդեց իր նստավայրը:

Դեպի Փոքր Ասիա սփռվող հայկական զանգվածը մարդաշատ դարձավ և նոր օջախներ ձևավորեց XIV-XV դարերում: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո Սսից, Այնթապից, Մարաշից ու Տարսոնից հազարավոր հայ գերդաստաններ հեռացան և ապրելու ու գոյատևելու հարմարավետ օջախներ փնտրեցին աշխարհի տարբեր ծայրերում: Նրանց մի մասը հաստատվեց Փոքր Ասիայի բյուզանդապատկան քաղաքներում, որոնք շուտով նվաճվելու էին ասիական բեմահարթակ իջած օսմանյան թուրքերի կողմից:

XIV-XV դարերում Ագուլիսից, Նախիջևանից, Ջուղայից, Երևանից, Կարսից հայ գերդաստաններ են արտագաղթում և բնակություն հաստատում հատկապես այն քաղաքներում, որոնք ընկած լինելով քարավանային գլխավոր ճանապարհների վրա, կարևոր դեր էին կատարում միջազգային առևտրում. այդ քաղաքներից էին Անկյուրիան, Բուրսան, Սիվրի Հիսարը, Ակշեհիրը և այլք: XV դարի վերջերին հայկական մարդաշատ գաղթօջախներ կային նաև Կուտինայում (Քոթահյա), Պուրտարում, Ասարլըգում, Թավշանլըում և այլ տեղերում: Սրանցից ամենավաղը հայկական տարր ընդունեց Ադրիանապոլիս (Էտիրնե) քաղաքը:

Տակավին բյուզանդական տիրապետության վերջին տասնամյակներին Ադրիանապոլսում հաստատվել էր հայ եպիսկոպոսություն: 1316 թ. հայոց առաջնորդարան էր հիմնվել Անկյուրիայում, իսկ XV դարից նույն իրավունքներով հայոց առաջնորդարաններ կային Բուրսայում և Կուտինայում: «Առաջին հայերը, որոնք Պոլիս մտան թուրքերուն կողմեն գրավելեն հետո,- գրում է Հ. Սիրունին,- բնականաբար Պուրսայեն և Էտիրնեեն էին: Օսմանյան կայսրության երկու նախկին մայրաքաղաքներն ալ հայ համայնքներ ունեին Պոլսո գրավման ատեն»[1]: Թուրքական աղբյուրներին քաջածանոթ Ֆրանց Բաբինգերը, ի մի բերելով Թուրքիայի հայ գաղթավայրերի մասին եղած հակասական տվյալները, գրում է, որ մինչև 1478 թ. «Կը թվի, թե

[1] *Հ. Սիրունի,* Պոլիս և իր դերը, հ. I, (1453-1800), Պեյրութ, 1965, էջ 117:

բավական կարևոր հայ գաղութ մը կապրեր Պրուսայի մեջ, ուր իր ապրուստը կշահեր վաճառականությամբ: Այլապես, Ղալաթիո թաղին մեջ էր, որ կարելի էր գտնել հայության ստվար թիվ մը. հոն ճարպիկ առևտրականներ էին անոնք և այդպես էլ մնացին մինչև մեր օրերուն: Թուրքիո մնացյալ մասին, մասնավորապես Ռումելիի շրջանին մեջ, անոնք բացառապես կապրեին ամենակարևոր քաղաքները, ինչպես Ադրիանապոլիս, Փիլիպպոպոլիս, Վառնա և ծովափնյա նավահանգիստները: Անոնց թիվը դժվար թե կես միլիոնը անցած ըլլա. Ֆաթիհի շրջանին պետք է եղած ըլլա շատ ավելի նվազ»[1]:

Ադրիանապոլսի հայկական գաղութը գնալով բարգավաճեց: Այստեղ իրենց ամառանոցներն ունեին Կոստանդնուպոլսի հայ երևելիները, խոջաներն ու չելեբիները, որոնց շուրջն աստիճանաբար խմբվում էին արհեստավորներ, պարտիզպաններ, մանրավաճառներ: Քաղաքում հիմնվեց առանձին հայաբնակ թաղամաս: XVII դարի վերջին Ադրիանապոլսում հայ բնակիչները կազմում էին 250 տնտեսություն, իսկ XVIII դարակեսին սրանց թիվը հասնում է 314-ի:

1453 թ. հոկտեմբերի 28-ին Մուհամադ Ֆաթիհի հրամանով Անկյուրիայից մի խումբ հայեր, որոնց գլխավորում էին չորս հայտնի վաճառականներ, գաղթեցվեցին Կ. Պոլիս: Աբրահամ Անկյուրացու վկայություններից եզրակացնում ենք, որ նշանավոր այդ քաղաքում եղել է հայաշատ գաղութ, որը հետագայում էլ չի մարել և աստիճանաբար բարգավաճել է: 1464 թ. ընդօրինակված մի ձեռագիր հիշատակարանից պարզվում է, որ «Հայոց ՉԺԳ (1464) ապրիլ ամսոյ ԻԲ (22) եղև վերափոխումն տէր Ներսէս եպիսկոպոս Անկիւրիոյ»[2]:

Ուրեմն XV դարում Անկարայում ևս հայ եպիսկոպոս է նստել: Հայաբնակ բազմաթիվ գյուղեր կային նաև Ղարամանիայում[3]:

1487 թ. մարդահամարի համաձայն Տրապիզոնում եղել են 226 տուն մահմեդական, 734 տուն հույն, 129 տուն հայ, 23 տուն ճենովացի[4]: Հետագա դարերում հայկական տարրը ավելի ուժեղացավ Տրապիզոնում, և նույնիսկ օտարները նրան «հայաքաղաք» կոչեցին: Վաճառաշահ այդ քաղաք տեղափոխվողները հիմնականում Բաբերդի, Համշենի և Սյուրմենեի շրջաններից էին: XVIII դարի վերջին Տրապիզոնում շուրջ 800 ընտանիք հայեր էին ապրում: Հայկա-

[1] *Հ. Սիրունի,* Պոլիս և իր դերը, հ. I, (1453-1800), Պեյրութ, 1965, էջ 178:

[2] *Լ. Խաչիկյան,* ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 216:

[3] Տես *Գ. Թորգոմյան,* Յիշատակարան Ամիրտովլաթայ Սաղմոսին, «Հանդէս ամսօրեայ», օգոստոս, 1895, էջ 247:

[4] Տես *Հ. Սիրունի,* նշված աշխատությունը, էջ 188:

կան գաղթավայրեր էին հաստատվել Կիպրոսում, Զմյուռնիայի մերձակա շրջաններում, Այտընի փաշայության մեջ և օսմանյան կայսրության այլ շրջաններում:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանից զատ, օսմանյան Թուրքիայի ծովամերձ քաղաքներում հիմնվել էին հայկական մի շարք համայնքներ, ձևավորվել գաղթաշխարհ, որն ավելի կազմավորված ու մարդաշատ դարձավ XIX հարյուրամյակում:

Գլուխ վեցերորդ

Ազգային ճնշումները Թուրքիայում. Հայ ժողովրդի քաղաքական իրավազրկությունը XV-XVIII դարերում

ԹՈՒՐՔԱՀՊԱՏԱԿ քրիստոնյա ժողովուրդները ենթակա էին ազգային ու քաղաքական բիրտ ճնշումների, կրոնաբարոյական անարգանքի, մարդկային արժանապատվության սանձարձակ ոտնահարման: Որտեղ փայլատակեց սուլթանական մահասփյուռ սուրը, այնտեղ զրնգացին ստրկության շղթաները, որտեղ վրնջացին սիպահիների հեծելազորային ձիերը, այդ վայրերն էլ վերածվեցին ավերված անապատների, քանդված գերեզմանոցների:

Կարմիր մահիկին ու սպիտակ կիսալուսնին «ապավինած» հպատակ այլազգիների բնօրրանը վերածվում էր տանջարանի, հայերը, հույները, սլավոնները զրկված էին ամենատարրական իրավունքներից: Տնտեսական, առավել ևս, քաղաքական մարզում գերիշխում էր կրոնական սկզբունքը: Ոչ մահմեդական հպատակները, անկախ դասային ու ունեցվածքային տարբերություններից, կոչվում էին *ռայա, զիմմի, գյավուր* (անհավատ), անսքող խտրականություն ստեղծելով Մուհամմեդի երկրպագուների ու այլահավատների միջև: Ինչ խոսք, որ դրանից առավել տուժում էին ոչ մահմեդական ժողովուրդների խոնարհ խավերը:

Հակադիր ու իրարամերժ կրոնական այս երկու ուղղություններին հարող Թուրքիայի ժողովուրդների միջև ակոսված խտրականությունը գնալով խորացել և դարձել էր ազգային հալածանքների հենքը: Սրբազան շարիաթը, իսլամի մահաբույր դոգմաները, շեյխ ուլ իսլամների հպատակատյաց բարբաջանքները վերածվում էին գրված ու չգրված օրենքների, դժնի տանջանքների դատապարտելով Թուրքիայի քրիստոնյաներին: «Ղուրանը և դրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը,— գրում է Կ. Մարքսը,- աշխարհագրությունը և ամ-

բողջ աշխարհի ժողովուրդների ազգագրությունը հանգեցնում է երկու կեսի ուղղահավատների և անհավատների պարզ ու հարմարին բանաձևին:

Անհավատը դա գյավուրն է, նա թշնամի է: Իսլամն անիծում է անհավատների ազգը և անընդհատ թշնամության վիճակ է ստեղծում մահմեդականների և անհավատների միջև (ընդգծումը մերն է - Հ.Ղ.)»[1]:

Հայերի իրավազրկությունը դաժան կերպարանք առավ XVII դարի վերջին և XVIII դարի առաջին չորս տասնամյակներին: Քաղաքական ճնշումների խստացումը պայմանավորված էր նրանով, որ թուրքական ռազմատենչ հորդաները, արյունածարավ ենիչերիներն այլևս անկարող էին նոր արշավանքներ կատարել, նոր ժողովուրդներ ստրկացնել, նախկինի պես անհամար ավար ու ռազմագերիներ ձեռք բերել: Թուրքական երբեմնի ահարկու սուրը Արևմուտքում դեմ էր առել Եվրոպայի, Արևելքում Ռուսաստանի հակահարձակումներին, ջարդվել ու ետ շպրտվել: Սուլթաններն այժմ ստիպված էին խորհել իրենց ունեցածի պահպանության, հուսահատորեն պայքարի հրապարակ նետվող հպատակների ազգային ըմբոստացումներն արյան մեջ խեղդելու և միայն այդ միջոցով իրենց տիրապետությունը երկարաձգելու մասին:

Քրիստոնյա հպատակներն արդեն անբարեհույս էին համարվում սուլթանների աչքում: Մահմեդական մոլեռանդ վերնախավը, նրա հոգևոր ու աշխարհիկ պետերը, ստեղծված դրությունից ելնելու համար միջոցների մեջ խտրություն չդնելով, գերադասում էին համաձուլել այլահավատ հպատակներին, ոչնչացնել քրիստոնյաների օջախները և ստվարացնել մահմեդականների փարախը:

Տակավին XVIII դարում օսմանյան զորաբանակները, սուլթանների թողտվությամբ, հատկապես ռուս-թուրքական ու թուրք-պարսկական պատերազմների ժամանակ, զանգվածներով կրոնափոխում կամ գերեվարելով վաճառում էին հայ խաղաղ բնակիչներին. «...Զօրքն տաճկաց,- գրում է Փիրղալեմյանը,- գերէին ազգն հայոց և բերեալ վաճառէին, կամ բռնադատէին թե ուրացիր զՔրիստոս. ոմանք հավատն ուրացան. և ոմանք որք ոչ ուրացան սրոյ ճարակ տային կամ վաճառէին, և ազգն հայոց ապուշ մնացեալ էին... յԱրզրումայ այնչափ գերեցին ազգն, որ մեք գրով ոչ կարացաք ճառել. զայս ամենայն բարկութիւն եկն ի վերայ մեր և մեք ոչ դարձաք ի մեղաց մերոց, վասն որոյ աւար ածին գաւառս Թիֆլիզոյ մինչև ոչ մնաց մարդ. զի զոմանս գերեալ էին, և զոմանս կոտորեալ էին, և ոմանք ևս փախստական էին լեալ. մի և երկու ամսուան մանուկն կամ մայրն մերձաւորքն կու սպանէին ու կին կամ որդիքն գերէին...»[2]: Հայերի ազգային դիմահեղման

[1] *К. Маркс* и *Ф. Энгельс,* Сочинения, т. X, стр. 6.

[2] Մատենադարան, ձեռագիր 6332, Նշխարք պատմութեան հայոց, էջ 552:

քաղաքականությունն ավելի ուժեղացավ նոր պատմաշրջանում:

Արևմտյան Հայաստանի ծայրագավառների թուրքահպատակ մի քանի շրջաններում XVIII դարի սկզբներին ևս հայերի նկատմամբ կիրառվում էր բռնի կրոնափոխության քաղաքականություն: Բազմահազար հայեր իսլամացվեցին Էրզրումի և Տրապիզոնի էյալեթներում: Սև գետ կոչվող ձորերի, Համշեն գավառի, Սյուրմինի լեռնահովտի քրիստոնյաները բռնադատվեցին մահմեդականության: Նրանց թիվը հասնում էր մոտ 10.000 մարդու, բնակված շուրջ 100 գյուղերի մեջ[1]: Իսլամացումը կատարվեց թուրքական խուժանի հարվածների տակ: Մահմեդականությունն «ընդունեցին» Եոմուրայի շրջանի անտառաշատ լանջերին փռված հայկական գյուղերի բնակիչները, որոնք մինչև XX դարի սկզբները շարունակում էին խոսել հայերեն, պահպանել ազգային ծեսերն ու սովորույթները:

Հայկական բնակավայրերում երևում են նաև *կես-կես* հայեր: Կեսկեսները նրանք էին, որոնք ոչ հայ էին և ոչ թուրք, միաժամանակ և հայ էին, և թուրք: Նրանց հիվանդը եթե վախճանվում էր առավոտյան, թաղման արարողությունը կատարում էր մոլլան, իսկ եթե վախճանվում էր երեկոյան, թաղում էր հայ քահանան: Կես-կեսները սփռված էին Եղիովիտ, Եդեսիա և այլ գավառներում[2]:

Հայերի ուծացումը, բայց ոչ միայն թուրքացումը, այլ նաև քրդացումը, բավական տարածված էր Վասպուրականում և Բիթլիսում: Տակավին XVIII դարում Բաղեշի մոլլան հրաման արձակեց, թե երբ որևէ քրիստոնյա մահմեդականություն ընդունի, ապա նրա բոլոր ազգականները պարտավոր են իրենց արու զավակներին հանձնել վերջինիս խնամակալությանը[3]:

Բռնությամբ թե կամովին իսլամությունն ընդունած այլահավատը հիմնովին զրկված էր կրկին հայրենի համայնք վերադառնալու իրավունքից: Հավատադարձ լինելն արգելում էր ոչ միայն իսլամ հոգևորականությունը, այլև ֆանատիկ ու խավարամիտ մահմեդական ամբոխը: «Օրենքը» մահմեդական խուժանին լիակատար իրավունք էր վերապահում հաշվեհարդար տեսնել իսլամությունից քրիստոնեությանը վերադարձողի հետ: Դեպքերը թվաշատ են և մասամբ արձանագրված են Հ. Մանանդյանի ու Հ. Աճառյանի կազմած «Հայոց նոր վկաները» աշխատության մեջ, իսկ մեծ մասի նկարագրությունները պահվում են Մատենադարանի ձեռագրերի ու արխիվային վավերագրերի էջերում: Բերենք մի քանիսը:

1810 թվականին կարնեցի Վարվառե անունով մի աղջիկ, որն ուներ

[1] *Հ. Յակոբոս, Վ. Տաշեան,* Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 34:

[2] Նույն տեղում, էջ 31:

[3] *Լեո,* Հայոց պատմություն, հ. 3, էջ 734 , տես նաև *Ա. Ալպոյաճեան,* Պատմական Հայաստանի սահմանները, էջ 444:

Մաղաք, Գասպար և Թոդոլ անուններով երեք եղբայրներ, նշանվում է Ղաշչի գյուղացի մի երիտասարդի հետ[1]: Գյուղի թուրք աղան, Բահրամ փաշայի միջոցով, ջանում է հավատափոխ անել աղջկան և պահել իբրև անօրինական կին: Վարվառեն դիմանում է բոլոր տանջանքներին, հավատուրաց չի դառնում, սակայն, «իբրև վարձ», սպանվում է: Փաշան գազազելով «գյավուրի» հանդգնությունից, սպանում է նաև նրա եղբայրներին:

1820 թվականի հուլիսին Կարինի 50 երիտասարդներ կաթոլիկություն են ընդունում: Ժողովուրդը գազազելով ներկայանում է արքեպիսկոպոսին և պահանջում պատժել նրանց: Սերասքյար փաշան բանտարկում է դավանափոխներին. «...ընդ նոսին նաև զԵրեմիա և զԱստուածատուր եպիսկոպոսունս, որոց տալով ոչ սակաւ նեղութիւնս կամեցեալ են գիտել թէ ոք իցէ լեալ իրացն առիթ և առաջնորդ. և ի վախճանի Սախայ Օղլի Գրիգոր աղային և չորից աննշան արանց ի հասարակութենէ ելեալ է վճիռ մահուան. որոց հատեալ են զգլուխս. և զքեհեայ ամիրայն զՄկրտիչ աղայի Փիլիպպոսեան, զմահտեսի Պօղոս աղայն Կելկելեան և զԳլակայ սրբոյ Կարապետի վանից վեքիլ աղա Պօղոսն յաքսորս են յղեալ»[2]: Հաճի Չելեպի ամիրան և նրա հետ շատերը, խուսափելով մահապատժից, մահմեդականություն են ընդունում[3]: Նման դեպքերով հարուստ են հայոց պատմության էջերը, հատկապես նախաթանզիմաթյան շրջանում, սակայն աղքատ չեն նաև «թանզիմաթից» հետո: 1845 թվականին Կ. Պոլսում բռնի մահմեդականացվեց Հարություն Բերացու որդի Հովսեփը[4]: 1843 թվականին Կ. Պոլսի թուրք նավավարներից մեկը գողացավ դրացի անդամալույծ մի հայ կնոջ 12 տարեկան միակ դստերը, իսլամացրեց և պահեց իբրև հարճ[5]: 1847 թվականին խարբերդցի Մարգար Մարտիրոսյանի կնոջը բռնի տաճիկ դարձրին, կարճ ժամանակ անց հավատափոխեցին երկու մանկահասակ երեխաներին, ապա և իրեն[6]: 1843 թվականին բազմաթիվ այլ հայեր իսլամացվեցին Կ. Պոլսում: Կաթողիկոսի, պատրիարքի խնդրագրերը, եվրոպական դեսպանների միջամտություններն ու սպառնալիքներն ապարդյուն անցան:

Ավելին, սամաթիացի Հովակիմ անունով կրոնափոխ մի հայ երիտասարդ, երբ փորձեց քրիստոնեության վերադառնալ, դատապարտվեց մահապատժի: Գործին միջամտեցին եվրոպական դիվանագետները: Ի

[1] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 4580, Պատմութիւն դրվընկցի նահատակաց, գրված 1811 թվականին, թերթ 2-10: Սրա մի հատվածը տպված է «Արարատում», 1895, հոկտեմբեր:

[2] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 36, վավ. 256:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, թղթ. 120, վավ. 446:

[5] Նույն տեղում, թղթ. 109, վավ. 458 ա:

[6] Նույն տեղում, թղթ. 138, վավ. 323:

հեծուկս վերջինների, սուլթանը կառափնարանը պատրաստել տվեց դեսպանանիստ շենքերի հրապարակում և ցուցադրականորեն[1] գլխատեց Հովակիմին: Նույն բախտին արժանացավ Սալոնիկ քաղաքում մահմեդականությունից հրաժարված մի բուլղար աղջիկ[2]:

Թուրքիայում այլազգիները զրկված էին ձի հեծնելու, կարմիր գլխաշոր կրելու, շքեղ հագնվելու և տարրական այլ իրավունքներից: Հրամանագրերից մեկում ասված էր. «Հրամայեցի... Շէրիի օրէնքին համաձայն, նախատելով և նուաստացնելով, անհաւատներու դասակարգին՝ ձի նստեցնել, սամոյր մուշտակ, սամոյր գլխանոց (գալփակ) գործածել չտաս. սնդուսէ և մետաքսէ ծաղկենկար կերպասէ շինուած զգեստներ՝ իրենց կիներուն ալ բարձր գդակներ և եզերքները ծոպաւոր զարդարանքներով պատրաստուած չուխա հագցնել չտաս, որպէսզի իսլամներուն յատուկ զգեստներու տարազով չպտտին...»[3]:

XVIII դարի կեսերին վերակենդանացվում էին, թարմացվում, լրացվում ու գործողության մեջ դրվում խալիֆ Օմարի տված, բայց վաղուց ի վեր ժանգոտված օրենքները: 1808 թվականին Յուսուֆ փաշան հրապարակեց հպատակ այլազգիների իրավունքները սահմանափակող մի շարք ֆերմաններ[4]:

Բազմաթիվ այլ հրամանագրերը[5] անխաթար գործադրվեցին ***թուրքահպատակ*** բոլոր գավառներում մինչև «Թանզիմաթը»: Պետք է արձանագրել, սակայն, «հայախնամ» առանձին սուլթանների կամ փաշաների արած «բարերարությունները» հայ վերնախավին, ամիրաներին ու սարաֆներին: Վերջիններս, եթե Բ. Դռան պաշտոնեության կողմից ճանաչված էին, գործով ապացուցել էին իրենց հավատարմությունն ու նվիրվածությունը Թուրքիային, սուլթանի ստորագրությամբ տրվող ֆերմաններով կարող էին միայն ձի նստելու թույլտվություն ստանալ: Բոլոր դեպքերում, անկախ հարստությունից ու դիրքից, ձի նստող հայը պետք է տարբերվեր մահմեդականից: «Էրզրումցի Խուդավերտի Օղլու Մանուկ Օսմանեան պետութեան աւագանիին պաշտօնատուներուն մեջ իր ծառայութեամբ յայտնի սարաֆներու դասակարգէն յիշեալը՝ հիւանդ, կաղ և ծեր ըլլալով՝ սոյն թեզքերէն տրուեցաւ, որպէսզի ***իսլամներու ձի նստելու կերպին չնմանելու պայմանով*** ինք երբոր ձի նստի և ոչ մէկու մը կողմէն, իրեն դէմ արգելք չյարուցուի»[6]:

[1] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, գործ. 9, թերթ 117:

[2] ***Սարուխան,*** Հայկական խնդիրը և ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում, 1912, Թիֆլիս, էջ 107:

[3] «Բազմավէպ», 1934, հունվար, N 1, էջ 32-33:

[4] ***Лорд Кокрин,*** Новейшие сведения о Турецкой империи, часть первая, перевод с английского, Москва, 1828, стр. 150-153.

[5] ***Գ. Սրվանձտեանց,*** Մանանայ, էջ 366, «Դիւան հայոց պատմութեան», հ. ժ, էջ 107, 112, ***Լեո,*** Հայոց պատմություն, հ. 3-րդ, էջ 732, ***Ա. Ալպոյաճեան,*** Պատմական Հայաստանի սահմանները, էջ 449:

[6] «Բազմավէպ», 1934, N 1, էջ 32:

Դրությունն այսպես էր Թուրքիայի հայկական այն բոլոր մարզերում, որտեղ ժողովուրդը ենթարկվում էր սուլթանին կամ նրա փաշաներին: Քրդահպատակ գավառներում, կիսանկախ ու ֆերմանլը մարզերում հայերը, ասորիները զենք էին կրում, մասնակցում պարբերական արշավանքներին, հագնում այնպես, ինչպես ցանկանային: Այստեղ հարգվում էր ուժը, որը և նվաճում էր իրավունք: Հարգվում էին հայ և քուրդ ռազմիկները, քաղաքական աներևակայելի ճնշման ենթարկվում *«ֆըլահները», ռայաթը:*

Բեդեր-խան բեյը առատ նվերներ, զենք, ձիեր, հողեր էր բաշխում իր հայ զինվորներին, սակայն «ֆըլա եղածին կձգէին ձեռաց երկու թաթերու վրայ ու դարձնելով չորքոտանի անասուն, յարդով լեցուն էշի գլխին անցնելիք տոպրակը կկախէին անոր գլխէն, ու ամուր կապելէն յետոյ, երկաթէ մեխերով անոր կը խթէին... կը տանջէին, ֆըլան հարուածներ կրելով շունչը կը կտրուէր տոպրակին մէջ ու կը մեռնէր»[1]: Քրդական ավագանին նման տանջանքների էր ենթարկում այն հայերին, որոնք անբավականությամբ, անտարբերությամբ էին նայում իրենց հաղթանակների վրա, չէին օգնում բանակին: Նման քաղաքականություն էին վարում ոչ միայն հայերի, այլ նաև քրդական ռայաթի նկատմամբ:

Թուրքիայում քրիստոնյա հպատակների համար դատարան գոյություն չուներ: Հայերը զրկված էին դատարանում վկայություն տալու իրավունքից: Լավագույն դեպքում քրիստոնյա երկու ականատեսների վկայությունը հավասարեցվում էր մեկ ականջալուր մահմեդականի վկայության: Շարիաթի այս կետը հայերի համար ունենում էր աղետաբեր հետևանքներ: Մահմեդականը կարող էր առևանգել, թալանել, սպանել քրիստոնյային և ապահովաբար մնալ անպատիժ: Հանցագործի հավատակիցները դատարանում վկայության ցուցմունք չէին տալիս: Գործը թաղվում էր, հանցագործությունները շատանում: «Աւելորդ է ըսել, թէ այս պատճառով որչափ առևանգութիւնք, յափշտակութիւնք, գողութիւնք, նամանաւանդ սպանութիւնք անպատիժ մնացած են կամ անյայտ, նոյնիսկ կառավարութեան ջանիցն հակառակ»[2]:

Քրդահպատակ հայկական գավառներում ամենօրյա սպանությունները սովորական երևույթ էին: Դատարանը կամ զափթիեները հազվադեպ էին զբաղվում սպանվողի ու սպանողի ինքնությամբ, քանի որ հանցագործներն ամեն պարագայում թուրք ու քուրդ աղաներն էին: Բողոքող քրիստոնյան արժանանում էր մահմեդականի վրեժխնդրությանը, որը չէր կարող անպատիժ թողնել հակառակորդին:

Թուրքիայում, մասնավորապես դատարաններում, չափազանց տարածված էր կաշառակերությունը: Այդ էր պատճառը, որ երբ քրիստոնյաներն իրար դեմ դատ էին սկսում, եկամտի առատ աղբյուր էր ստեղծվում դատական պաշտոնյաների, պետական քննիչների համար: Հաճախ վերցվում էին «օրինական» կաշառքներ: Եթե մեկը մարդ էր սպանել, պարտավոր էր տալ 3000 փարա, աչք հանողը 1500, գլուխ ջարդողը 30 փարա[1]: Հարկը հավաքում էին զափթիեները:

Թուրքիայում հայի սեփականությունը, ընտանիքի պատիվը, թաղման արարողությունն ամեն որպես անարգանքի վտանգի տակ էին: Մահմեդականներն առևանգում էին քրիստոնյա կանանց, աղջիկներին և անարգել ամուսնանում նրանց հետ, անպատվում, բռնաբարում ու փողոց շպրտում կամ փոխեփոխ պահում իբրև հարճեր:

Հեռավոր ծայրագավառներում թուրք կամ քուրդ բաշիբոզուկները, ճանապարհով անցնելիս, երբեմն գիտակցաբար, կռիվ սկսելու միտումով, հայհոյում էին հուղարկավորության թափորին մասնակցող հայերին, շան վզին կապում խաչը, սրբության հացը և պտտեցնում հայկական թաղամասերում: Թուրքական դատարանից ու կառավարիչներից հուսակտուր հայերն այլևս չէին բողոքում՝ նոր կորուստներից խուսափելու հույսով, նրանք գլուխները կախում էին, լռությամբ անցնում, ցույց տալով, թե իրենք ոչ տեսնում են և ոչ էլ լսում հասցված վիրավորանքները:

1695-1808 թվականներին Թուրքիայում գործեց մի հրամանագիր, որով հայ մեռելներին թաղում էին ղադիից կամ մոլլայից գնված արտոնագրի ձեռքբերումից հետո միայն: Այդ արտոնագրում ամեն անգամ արձանագրվում էր. «Ղաթրանի (խիստ սև) պէս տարազ հագուող, սատանայի գլխարկ կրող, աստուծոյ ապարանքի դռնէն զրկուող, վատ սկզբունքի տէր պառաւեալ երէց: Կը ծանուցուի, որ Ձեր հայհոյիչ գարշելի ժողովուրդէն, այսինչ հայհոյիչի տղան այնինչ հայհոյիչը սատկած ըլլալով՝ թէև գարշելի պիղծ դիակը հող անգամ չընդունիր... այս զզուելի գարշահոտութիւնը մէջտեղէն վերցուելու համար քաղաքէն դուրս հանեք, խորունկ փոս մը փորել տաք, մէջը ձգեք, վրան հողով ծածկէք, լաւ մը տրորեք, կոխկրտեք ու գաք...»[2]: 1808 թվականին միայն, սուլթանին մեծ գումարի «բաշխիչ» տալով, Կոստանդնուպոլսի հայ ամիրաները կարողացան չեղյալ հայտարարել գրության այդ ձևն ու բովանդակությունը:

Այդ անմարդկային հրամանագրի վերացումով, սակայն, ամեն ինչը չփոփոխվեց: Արգելվում էր զազրելի օրենքներից մեկը, կյանքի էր կոչվում մյուսը՝ ավելի խիստ, ավելի դաժան, ավելի զազրելի: Այդպես էլ կատարվեց այս դեպքում: Անգլիացի նշանավոր արևելագետ *Լորդ Կոկրինը,* XIX հարյուրամյակի արշալույսին շրջելով օսմանյան կայս-

[1] *Շահպազեան,* Քիւրդո-Հայ պատմութիւն, էջ 109:
[2] Մաշտոցի անվան մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 616:

[1] Տե՛ս *Սահակ Տէր-Մովսէսեան,* Պատմութիւն Հայոց, մասն Բ, էջ 694:
[2] *Զէյթունցի,* Զէյթունի անցեալէն և ներկայէն, մաս Բ, 1903, Բարիզ, էջ 209, տե՛ս նաև «Պատմութիւն հայ Կեսարիոյ», հ. Ա., էջ 649:

ությունով մեկ, միաժամանակ դաս-դասելով ու հետազոտելով թուրքական Կանոն-նամեներն ու Սալ-նամեները, լույս աշխարհ բերեց մի ծավալուն աշխատություն, որն իր արատավոր կոնցեպցիայով հանդերձ, թուրքերին մերկացնող փաստերի պարունակման իմաստով, արժանի է այսօրվա պատմաբանների ուշադրությանը: Ըստ թուրքոֆիլ անգլիացու հավաստման, XIX դարամուտին Բ. Դռան «օրինաստեղծ ուղևորն» ու այդ օրենքների կիրառողները պրպտում էին տերության արխիվադարաններում ընդարմացված, նամշակալած, շրջանառությունից դուրս եկած հնամենի թղթերն ու դրանց նոր շունչ հաղորդում: Անգլիացի լորդի հավաստմամբ, 1808 թ. մեծ վեզիրի պաշտոնակատար Յուսուֆ փաշան, վեհաբիտների դեմ հաղթական պատերազմից վերադառնալով, հրամայեց հրապարակել վաղուց ի վեր մոռացված *Օմար ալ-խատյաբայի* հրամանագրերը, որոնցից մեկը, իր անմարդկայնությամբ ու դաժանությամբ, նմանը չուներ և չունեցավ[1]: Ուստի փորձենք ներկայացնել այդ հրամանագրի հիմնական կետերը, առանց մեկնաբանությունների, քանզի փաստերն ավելի պերճախոս են, քան որևէ գնահատական:

Ծավալուն այդ հրամանագրի համաձայն. 1.Օսմանյան «հզոր» տերության գերիշխանությանն ապավինած քրիստոնյաներն ու հրեաները իրավունք չունեն նոր եկեղեցիներ, վանքեր և աղոթատեղեր կառուցել: 2. Նրանց արգելվում է նաև վերանորոգել նախկինում կառուցած սրբավայրերը: 3. Մահմեդականի հարևանությամբ ապրող այլահավատն իր բնակարանը կարող է վերակառուցել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: 4. *Քրիստոնյաներն ու հրեաները* պարտավոր են երեք օրով իրենց տներում առանց վարձի հյուրընկալել անցորդ մահմեդականներին ու օտարերկրացիներին: 5. Արգելվում է իրենց տներում լրտեսներ պահել: Եթե լրտես տեսնեն, ապա այդ մասին անմիջապես պետք է հայտնեն կա՛մ հարևան մահմեդականին, կա՛մ պետության ներկայացուցչին: 6. Քրիստոնյաներին և հրեաներին արգելվում է իրենց երեխաներին Կորան ուսուցանելը: 7. Նրանց արգելվում է իրար դեմ դատ բացել և այն լսել իրար մեջ: «Անհավատների» դատերը պիտի վճռվեին մուսուլմանական դատարաններում: 8. Եթե մահմեդականները անցնում են ճանապարհով, եզրին նստած են «այլահավատները», ապա նրանք նախ պետք է ոտքի կանգնեն, ապա ճանապարհը զիջեն մուսուլմանին: 9. Քրիստոնյաները և հրեաները իրավունք չունեն մահմեդականի հագած շորից կամ կոշիկից հագնել: 10. Նրանք իրավունք չունեն արաբերեն սովորել, քանզի դա մարգարեի լեզուն է: 11. Նրանց արգելել թամբած ձիով երթևեկել, սուր կամ այլ տիպի սառը զենքեր կրել: 12. Արգելվում է ոգելից խմիչքների

[1] Տե՛ս *Лорд Кокрин*, Новейшие сведения о Турецкой империи, часть первая, Москва,- 1828:

վաճառքը, հինայով մազեր ներկելը: 13. Արգելել ամուր և լայն գոտիներ կապելը: 14. Քրիստոնյաներին թույլ չտալ տնից դուրս գալիս խաչ կրել կամ բաց ձևով ավետարան տանել: 15. Որքան հնարավոր է եկեղեցու կոչնակները հնչեցնեն ցածրաձայն: 16. Թաղման ժամանակ, փողոցներով հանգուցյալին տանելիս, պիտի ողբան ցածրաձայն: 17. Այլահավատները իրավունք չունեն տնային ծառաներ պահել, մանավանդ, եթե դրանք մահմեդականներ են: 18. Նրանց արգելվում է ստրուկներ և գերիներ գնել «ուղղահավատներից»: 19. Եթե մահմեդականը հարվածի և վայր գցի «այլահավատին», ապա նա այդ վիճակում պիտի մնա այնքան ժամանակ, մինչև հարվածողն հեռանա: Ամենավերջում ընդարձակ հիմնավորում է տալիս այդ օրենքներին, միաժամանակ մահմեդականներին հանձնարարում՝ խստությամբ կիրառել դրանք, որպեսզի քրիստոնյաները ընդունեն իսլամը[1]:

Հակոբ Սիրունին իր աշխատության մեջ ընդարձակ էջեր ունի՝ նվիրած Կ. Պոլսում եկեղեցիների կառուցման դեմ արգելափակոցներ դնելու պատմությանը, կառուցածներից շատերի քանդման արարողությանը[2]: Նրա բերած փաստերի համաձայն, եկեղեցի շինելու համար արտոնություն ստանալը կապված էր ահավոր դժվար ձևակերպումների, մանավանդ նյութական զոհողությունների և միջնորդության հետ: Արտոնությունը տրվում էր «ֆիկտիվ» անձնավորությանը, որը պետք է նույնիսկ հայտներ, թե որ սրբի անունով է կառուցվում եկեղեցին: Դրա համար խիստ անհրաժեշտ էր կաշառքով հագեցնել *փաշային և մյուֆթիին*: «...Եկեղեցին չէր կրնար շատ տեղ գրավել ու շատ բարձրանալ, ու չէր ալ կրնար զանգակատուն ունենալ՝ որպեսզի չիշխեր իր շրջականերուն վրա: Եվ, վերջապես, ներելի չէր, որ շատանային քրիստոնյա տաճարները Պոլսո մեջ, արտոնություններ կառնվեին հինացած կամ այրված եկեղեցիի մը տեղ նոր մը շինելու պատրվակով»[3]:

Եկեղեցու շինարարությունը սկսելիս, արձանագրում էին թույլատրած չափերը: Ավարտելուց հետո ևս չափում էին, եթե ամենափոքր տարբերություն գտնեին, ապա այն հիմնովին կքանդեին: 1565 թ. հոկտեմբերի 3-ին սուլթան *Սուլեյմանը* Կ.Պոլսի թուրք դատավորին ֆերման է տվել, որը պիտի հետևեր «որպեսզի փլցվեր *պալատի* դռնեն դուրս կեավուրներու կողմէ կառուցված եկեղեցին, որ շրջակա տուներեն ավելի բարձրացած էր և զայն հավասարեցնե այդ տուներուն բարձրության... Եվ միևնույն ատեն կպատվիրե կեավուրներուն չփորձել հետ այսու իրենց եկեղեցիները բարձրացնել շրջակա տուներեն ավելի վեր, իսկ իսլամնե-

[1] Մանրամասն տես *Лорд Кокрин*, նշված աշխատությունը, էջ 151-153:

[2] Տե՛ս *Հ. Ն. Սիրունի*, Պոլիս և իր դերը, հ. առաջին (1453-1800), Պէյրութ, 1965, էջ 354-356:

[3] Նույն տեղում, էջ 355:

ռում հետամուտ ըլլալ նման արարքներու և տեղեկացնել իշխանությանց»[1]: Համանման բովանդակության ֆերմաններ կան հրապարակված, որոնք վերաբերում են Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներին:

Ծանր է եղել Կիլիկիայի այն հայ բնակչության կյանքը, որը ազգային պետականության անկումից հետո, այսպես կոչված, *անիշխանության շրջանում*, առավել ևս, օսմանյան թուրքերին, թեկուզև ձևական, հպատակության շրջանում գերադասեց մնալ հայրենիքում: Նրա կրած տանջանքների, քաղաքական իրավազրկության մասին տպավորիչ փաստեր է հրապարակում *Գր. Գալուստյանը*[2], որոնք քաղել է «Հայրենիք» ամսագրում տպագրված պրոֆ. *Հ. Գ. Չագմագճյանի* արժեքավոր ու ծավալուն հոդվածից[3]: Նա գրում է. «Ավանդաբար կպատմվի, թե Կիլիկիո պատկանող Սիս, Ատանա, Տարսոն և Այնթապ քաղաքներու և շրջակա մոտիկ արվարձաններու մեջ ապրող հայերը *ավելի զարհուրելի խժդժություններ կրած են, քան ուրիշ տեղերուն*»[4]:

Երկու կիլիկահայերի վկայությամբ, «ռուբինյանց հարստության կործանումեն ետքը, արաբներուն պակասը լիուլի լրացրել են թուրքերը, ջարդեր էին ժողովուրդին, հիմնահատակ ոչնչացրել են գյուղեր ու ավաններ, քանդել են եկեղեցիները, վանքեր ու դպրատները, և երբեմն գրավեր էին, ինչպես վկա են Ատանայի Եաղճանմիսի և Տարսոնի Քյուլիսե-Ճամիսի անունով մզկիթները, որոնք մինչև հիմա կանգուն կմնան: Տարսոնի մզկիթի պահարանին վրա, Օշին թագավորի օրով շինված ըլլալը ապացուցանող, հայկական հին արձանագրությունը դեռ անաղարտ կմնա...»[5]:

Հայ բնակչության Կիլիկիայում ապրած ողբերգության, քաղաքական իրավազրկության մասին բերվում են հետևյալ փաստերը. «Հայերը ստիպեալ սև կամ մութ գույնի զգեստներ պիտի հագնեին: Գունավոր զգեստ կրողները կպատժվեին: Կարմիր և կամ կանաչ գույնի հագուստ հագնողները անպայման կսպանվեին: Իգական սեռը օրը ցերեկով դուրս չէր կրնար ելլել: Կսարսափեին առևանգումէ: Նույնիսկ գեղադեմ պատանիները ազատ պտտելու քաջություն չէին ունենար, հակառակ պարագային կորստյան կմատնվեին: *Ստոր համար պատանի տղաները ցնցոտի հագուստներով և մրոտած դեմքով կստիպվեին գործել խանութներու մեջ: Իրականին մեջ, սպանվող ոչխարի մը համար դատ ու դատարան կար, բայց զոհված հայերուն համար՝ ոչ դատ և ոչ դատաստան:* Արդեն դատարաններուն մեջ ալ հայերու վկայություն չէր ընդունվեր»[1]:

Եկեղեցու և հոգևոր դասի կրած տանջանքների մասին ասված է. «վերջապես կիլիկեցի հայ կղերը իր ժողովուրդով, իր կյանքով ու հավատով մեծ հալածանքներու և արհամարհանքներու ենթակա եղած է: Որևէ առաջնորդ չէր կրնար իր քահանաներուն ննջեցեալ մը թաղել տալ առանց *Մյուֆթիի* արտոնագրին: Այդ արտոնագիրներու անարգական տխուր պարունակությունները կատարյալ գաղափար մը կուտան մեզի և անհավատալի չեն թվիր այլևս տեղի ունեցած բարբարոսությունները»[2]:

Ճիշտ է նկատում Գր. Գալուստյանը, թե պրոֆ. *Չագմագճյանի* վերը բերված և շատ մասը չբերված տողերն արդեն կասկած չեն թողնում, թե թուրքերն ինչպիսի անմարդկային վայրագություններ են կատարել գեղահրաշ Կիլիկիայում մնացած քրիստոնյա բնակչության նկատմամբ:

Օսմանյան Թուրքիայում քրիստոնյա կամ «այլահավատ» մնացած բոլոր ժողովուրդների, առավել ևս, անպաշտպան արևմտահայության իրավազրկության, քաղաքական ճնշումների ու կրած տառապանքների բարձրակետն էին դարձել «տղայաժողովները» ու «աղջկաժողովները»: *Դևշիրմե-մանկահավաքներ* ընդհանուր անուն ստացած նման երևույթը մի կատարյալ պատուհաս էր կայսրահպատակ, ոչ-թուրք ժողովուրդների գլխին[3]: Այդ չարիքը սկզբնավորվել է XV հարյուրամյակից և եզերվել 1826 թ. հուլիսի 16-ով, այսինքն Մահմուդ II սուլթանի հրամանով *Ենիչերիների* վերջնական ոչնչացմամբ[4]:

Ենիչերիների զորքը (նոր-զորք) ստեղծվել է XIV դարում սուլթան Օրխանի (1324-1359) գահակալության տասնամյակներին: Նրանք կազմվում էին պատերազմների ժամանակ գերեվարված երիտասարդությունից, որոնց տեղնուտեղը իսլամացնում էին, զորակոչում բանակ և կազմում զորամասեր[5]: Սկզբում սրանց թիվը *երկու հազարից* չէր անցնում, ըստ որում, ծառայում էին հետևազորում: *Մուրադ I սուլթանը* (1359-1389), գնահատելով *ենիչերական կորպուսի* առավելությունները և անհրաժեշտությունը, հրամայեց դրանց թիվը հասցնել 20 հազարի և ընդգրկել նաև հեծելազորում: Թուրքական աղբյուրները

---

[1] Նույն տեղում: Տե՛ս նաև *Սիմետ Ռեֆիք*, Իսթանպուլի կյանքը XVI դարում, Իսթանբուլ, 1935, էջ 44:

[2] *Գրիգոր Գալուստյան*, Մարաշ..., էջ 697:

[3] *Հ. Գ. Չագմագճյան*, Դրվագներ Կիլիկիո նախընթաց կյանքեն, «Հայրենիք», 1931, Թ տարի, N 3, էջ 138 և հետո:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 139:

[5] Նույն տեղում:

[1] *Հ. Գ. Չագմագճյան*, Դրվագներ Կիլիկիո նախընթաց կյանքեն, «Հայրենիք», 1931, Թ տարի, N 3, էջ 140:

[2] Նույն տեղում:

[3] Այս հարցը քննված է *Մ. Կ. Զուլալյանի*, Դևշիրմեն (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, ՊԲՀ, 1959, N 2-3, էջ 247-256:

[4] Ենիչերիների սկզբնավորման պատմությունը գրել է *Ի. Ե. Պետրոսյանը*, տե՛ս նրա "К истории создания янычарского корпуса", "Туркологический сборник 1978", Москва, 1984, стр. 190-200. Լենինգրադցի, բայց ազգությամբ հայ, այս հոդվածի հեղինակը զարմանալիորեն հայերի մասին ոչ մի խոսք չի ասում:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 192-193:

վկայում են, թե 1453 թ. Կ. Պոլսի վրա գրոհի ժամանակ սուլթանի բանակից գրոհողների մեջ կային 20 հազար *ենիչերիներ*, որոնք հունական քաղաքակրթության ծաղիկները ոչնչացնելու, թալան ու կողոպուտ կազմակերպելու պրոցեսում ակնառու դեր կատարեցին:

Հետագա հարյուրամյակներում ենիչերիների թիվը գնալով ավելացավ և այդ զորքը, փաստորեն, դարձավ ռազմաքաղաքական միջոց, գործիք՝ օսմանյան պետության ամրապնդման պրոցեսում[1]: Նրանք սուլթանների արշավող, ասպատակող նոր զորքի նախատիպը դարձան, պալատի, Բ Դռան, պալատականների և գլխավոր տիրակալի հենարանը: Սակայն ժամանակի ընթացքում ենիչերիների թիվը մեծացավ, բարքերն ու սովորույթները վերափոխվեցին, հարաբերությունները վերածվեցին: Ենիչերիները սկսեցին մասնակցել պալատական խարդավանքներին, նույնիսկ սուլթանների ու նրանց ընտանիքների ներքին գործերին: Վերջում այդ զորքը դարձավ պատուհաս իր կազմավորողների ու ֆինանսավորողների գլխին:

XV-XVI դարերում *ենիչերիները* հավաքագրվում էին *դևշիրմեների* (մանկահավաքների) միջոցով: Իբրև պարտադիր հարկատեսակ, Բ. Դուռը քրիստոնյաներից, այդ թվում և հայերից, ամեն երեք կամ հինգ տարին մեկ մանուկներ էր հավաքում: «Հավաքը,- ասում է Կոչի-բեյը,- կատարվում էր բացառապես առնաուտներից (ալբանացիներից), հույներից, բուլղարներից ու *հայերից*, իսկ ուրիշ ազգերից արգելված էր»[2]:

Հայկական աղբյուրները մանկահավաքների սկզբնավորման մոտավոր ժամկետը հաշվում են 1519 թվականը: Հմուտ աղբյուրագետ, ավելի կոնկրետ, ձեռագրագետ պրոֆ. Վ. Ա. Հակոբյանի բերած փաստերով, օսմանյան թուրքերը Արևմտյան Հայաստանից և հայաբնակ նահանգներից բռնությամբ հայ մանուկներ են հավաքել 1531, 1536, 1543, 1547, 1550, 1560, 1590, 1622 թվականներին[3]: Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը ընդհանրացնելով XVI դարի հայ աղբյուրները, վկայում է դևշիրմեի՝ պարբերաբար կրկնվող «տղայաժողովների» և «աղջկաժողովների» մասին: ***Մոտավոր հաշիվներով, երեք դար հարատևած ահավոր այդ մարդահարկի միջոցով ավելի քան կես միլիոն քրիստոնյա մանուկներ հավաքագրեցին՝ ենիչերիներ դարձնելու համար*** (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[4]:

Հ. Սիրունին, Թուրքիայի մայրաքաղաքի պատմությանը նվիրված իր ծավալուն և արժեքավոր մենագրության էջերում գրում է. «Հայ մանուկներու բռնի խլումը իրենց ընտանիքներու ծոցեն, զոր մանկաժողով *(տևշիրմե)* անվան տակ կհիշատակեն հին հայ աղբյուրները,

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 199: *Ի. Ե. Պետրոսյան*, "К истории...":

[2] *Մ. Կ. Զուլալյան*, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 228: Տե՛ս նաև ***В. Д. Смирнов***, Кочибей Гемюрджинский, стр. 100.

[3] «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դարերի», կազմեց *Վ. Ա. Հակոբյան*, հ. 2, Երևան, 1956, էջ 159-162:

[4] «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 87: Տե՛ս նաև *Հովհ. Հակոբյան*, Ուղեգրություններ, հ. VI, Երևան, 1934, էջ 294:

թեև դադրած էր 1545-են ի վեր, սակայն հայ աղջիկներ ու տղաք միշտ կշարունակվեին առևանգվիլ, իսլամին հարեմը տարվելու կամ թլպատվելու համար: *Հայուն գլուխը արժեք չուներ: Իշխանավորները միշտ տեր էին անոր: Ու ենիչերին ազատ էր անոր վրա փորձել նոր սրել տված իր թուրը* (ընդգծումները մերն են - Հ.Ղ.): Ու այս բոլոր ճնշումներու դեմ կռվելու համար հայը ուրիշ միջոց չուներ, բայց եթե *կույր համակերպությունը*, քծնանքն ու շողոքորթությունը»[1]:

Հենվելով թուրքական և եվրոպական աղբյուրների ընձեռած փաստերին, արևելագետ Մ. Տ. Բոջոլյանն անում է մի քանի ընդհանրացումներ: Նրա կարծիքով XVI դարում թուրքական զորքը, հատկապես *սիպահիները*, կորցրել էին իրենց մարտունակությունը և այլևս չէին կարող դիմագրավել նորաստեղծ զենքով զինված ժամանակի եվրոպական բանակին: Դրանից զատ, սուլթանները, երկրի ներսում հաճախահաս բռնկված խռովությունները ճնշելու համար, կարիք էին զգում մարդաշատ-կանոնավոր բանակի: Տվյալ պահին դրանցից ամենահարմարն ու քիչ ծախս պահանջողը *ենիչերիներն էին:* Նա նշում է, թե եթե ենիչերիների թիվը XV դարամիջին և XVI դարում տատանվում էր 7-12 հազարի մեջ, ապա 1588 թվին այն կազմեց 45 հազար, իսկ XVII դարավերջին հասավ 92 հազարի[2]:

Նկատի ունենալով սիպահիների մարդաշատությունը, նրանց փոխարինումը ենիչերիներով, թուրքական XVII դարի ժամանակագիր Կոչու-բեյը գրում է. «Որտեղի՞ց վերցնել այդքան ռոճիկ, որտեղից գտնել այդքան միջոցներ այդ հսկայական բանակը պահելու համար»[3]:

Եվ այսպես, ենիչերիներից բաղկացած զորքը ստեղծվել էր դեռևս առաջին սուլթանների գահակալության տարիներին և իր մեջ էր ներառում կայսրության կողմից գրավված երկրների՝ այլահավատ ծնողներից խլված քրիստոնյա մանուկներին: Նրանց անմիջապես կրոնափոխում, զինվորագրում և դարձնում էին ենիչերի:

Սուլեյման Կանուն սուլթանի (1520-1566) կողմից ձևակերպվեց ենիչերիների կանոնադրությունը: Ըստ այդ օրենսդրության, ենիչերիներ կարող էին լինել միայն գրավված երկրների քրիստոնյաներից իբրև հարկ վերցված երեխաները: Հավաքագրված, ավելի ճիշտ, ծնողներից բռնությամբ խլված երեխաները պարտավոր էին ապրել զորանոցներում, որպեսզի մահմեդական ֆանատիզմի ոգով դաստիարակություն ստանային: Բացի անմիջական ղեկավարներից ոչ ոք իրավունք չուներ պատժել ենիչերիներին: Վերջիններս պարտավոր էին զբաղվել միայն զինվորական դաստիարակությամբ՝ զինավարժությամբ, մասնակցել պատերազմներին, իսկ զորացրումից հետո նոր միայն ամուսնանալ և

[1] *Հ. Հ. Սիրունի*, Պոլիս և իր դերը, հ. առաջին, էջ 434:

[2] ***Մ. Տ. Բոջոլյան***, Реформы 20-30-х гг. XIX века в Османской империи, Ереван, 1984, стр. 28.

[3] Նույն տեղում, էջ 28: Տե՛ս նաև *Koci Bey Risalesi*, Istanbul, 1939, s. 41-42.

տնտեսություն վարել: Օրենքով նրանք ստանում էին 20-25 ակչե աշխատավարձ, որը մեծ գումար էր կազմում Բ. Դռան համար, քանզի XVIII դարավերջին ենիչերիների թիվը հասել էր մինչև 110 հազարի[1]: Սակայն գնալով սրանք հարստանում էին, դառնում պատուհաս, ամենից առաջ իրենց ծնողների՝ քրիստոնյաների գլխին, դրա համար էլ բոլորն սպասում էին, թե երբ կազատվեն ենիչերիներից:

Քրիստոնյա հպատակների համար ենիչերիների չարիք լինելու մասին է խոսում Սիմեոն Լեհացին. «Եւ այնպես չար էին եանիչարիքն, որ քրիստոնեից չի տային ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ ալ լավ չուխա ագանիլ, ոչ այգի, ոչ տուն մեծ, այլ զամենայն հափշտակեին ի ձեռաց: Նաև առաջնորդաց չտային քննել հաս-չհաս կամ օրենք պահել, զի թե որ կամէր կին առնուլ և չհասույթ լիներ, չերթային առ հովիւ կամ առաջնորդ, այլ (երթային առ) ենիչարի մի տային կաշառ, և նա գայր իրիցուն թոփուզով պսակ տայր առնել, և նա ակամա պիտի խօսիցն չելներ, ապա թե ոչ բազում չարիս անցուցաներ ի գլուխն և վնաս և տուգանք ձգեր զնոսա, այլ և եկեղեցեաց և վանօրեից: *Եվ թուրքաց աշխարհն ամենայն այդպես են»*[2]:

Հայ ժողովրդի համար առավել ողբերգական էին աղջկահավաքները, որոնք նույնպես իրականացվում էին սուլթանների, փաշաների և մահմեդական բարձրաստիճան այլ անձանց հարեմները հարճերով համալրելու նպատակով:

Այսպիսով. ողբերգություն պարունակող տողերով լի են հայ մատենագրության, արխիվային վավերագրերի, պարբերական մամուլի էջերը: Թեկուզ դրանցից մի մասի ծանոթությունը կասկած չի թողնում, որ «Թանզիմաթից» առաջ, ընդհուպ մինչև XIX դարի կեսերը, Թուրքիայում գոյություն ուներ քաղաքական, ավելի կոնկրետ, ազգային ճնշումների, կրոնական խտրականության մի ընդարձակ ու այնպիսի համակարգ, որի նմանը չէր տեսել եվրոպական և ոչ մի երկիր: Միայն մահմեդական Արևելքը կարող էր այդպիսին ստեղծել, միայն զարգացման ֆեոդալական ցածր մակարդակի վրա դեգերող թուրք ու քուրդ վերնախավերը կարող էին այդպիսի բարբարոսությամբ գործել, ճնշել, նվաստացնել ու գետնաքարշ դրության մեջ դնել հնամյա մի ժողովրդի, որն իր զարգացման մակարդակով իրենցից շատ բարձր էր կանգնած և եթե խոհեմ լինեին՝ նրանից շատ բան ունեին սովորելու:

Այսքանից հետո, բնական է, որ գնալով պիտի ուժեղանար հայ ժողովրդի ատելությունը սուլթանական միահեծանության, դերեբեյական համակարգի, քրդական վայրագ վերնախավի դեմ, ժողովրդական զանգվածներին, առավել ևս, նրա ծոցից ելած գիտակից խավերին պիտի մղեր «դեպի ելքը», դեպի ազատությունը, որքան էլ թանկ նստեր այն իրենց վրա:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 80-81:

[2] *Սիմեոն դպրի Լեհացոյ*, Ուղեգրութիւն, տեղագրութիւն և յիշատակարանք, Վիեննա, 1936, էջ 193:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1750-1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Մինչև «Թանզիմաթը»)

Գլուխ առաջին

Ագրարային հարաբերությունները մինչև «Թանզիմաթը»

1. Իրավիճակը Թուրքիայում, վարչամիավորներն Արևմտյան Հայաստանում և հայկական Կիլիկիայում

ՈՒԼԹԱՆԱԿԱՆ Թուրքիան նոր պատմաշրջանին մոտենում էր կապիտուլյացիաների զսպաշապիկով կաղապարված, վաղեմի փառքից, ռազմաքաղաքական ու տնտեսական հզորությունից զրկված: Ֆեոդալական կայսրության հեղինակությունն ընկնում էր թե՛ օտարների և թե՛ յուրայինների աչքում: Ռազմական բռնազավթումների ճանապարհով ուռճացած թուրք կայսերապետությունը թուլանում էր, քայլ առ քայլ զիջում նախկին դիրքերը, իրար հետևից կորցնում երկրամասեր ու հպատակ ժողովուրդներ, եկամտի առատաբեր աղբյուրներ:

Օսմանյան երբեմնի հզորության անկման գլխավոր պատճառը կայսերապետության մակաբուծային բնույթն էր, որի հետևանքով գնալով ուժեղանում էին կենտրոնախույս ուժերը, հաճախակի և անվերջ դառնում միջցեղային զինաբախումներն ու ներքին ապստամբությունները:

XVIII դարամուտից սկսած, սուլթանների երբեմնի պահապան զորաջոկատները՝ *ենիչերիները,* այլևս նույն շահագրգռությամբ ու խիզախությամբ մարտադաշտ չէին նետվում՝ Մուհամմեդի երկրային ստվերում փառք նվաճելու: Ընդհակառակը, ծվարած մայրաքաղաքում, նրանք մասնակցում էին գահակալական կռիվներին, գահընկեց անում անցանկալի վեհապետներին, իսկ մեծ վեզիրներին ու այլ բարձրաստիճան անձանց՝ կառափնարան քշում:

Բանակի մյուս մասն էլ կորցրել էր իր մարտունակությունն ու քանակը: Եվրոպական, մասնավորապես, ռուսական զորքերին թուրքական հնամենի հետևակն ու սրազեն հեծելազորն այլևս չէր կարող

դիմագրավել[1]: Ավարի ու ռոճիկի պակասը չէր էլ շահագրգռում թուրք զինվորականներին նախկինի պես կռվելու: Պետությանը անկումից կփրկեր բանակի վերակառուցումը, նրա համալրումը նոր զորամիավորներով, որը չափազանց դժվար էր կայսրության մեջ հաճախակի դարձած ֆինանսական ճգնաժամի պայմաններում:

Կայսրության ռազմաքաղաքական ու տնտեսական հզորության կորուստը նկատում էին Անատոլիայի ու Ռումելիայի մեծ մասում սփռված քրդական, աֆշարական ֆեոդալ ցեղապետերը, որոնք, օգտվելով առիթից, իրենց կապերը խզել էին կենտրոնական կառավարությունից, դարձել ինքնագլուխ իշխանապետեր և ոչ միայն հարկեր, զինվորական ուժեր չէին տրամադրում գերագույն սյուզերենին, այլև ասպատակում էին նրա հարկատուների երկրամասերը: Քրդահպատակ ընդարձակ շրջանները, Կիլիկիայի մեծ մասը և Եգիպտոսը վերածվել էին արյունահեղ կռիվների բեմահարթակի: Ընդարձակ այս շրջանների վրա պետության գերիշխանությունը սոսկ անվանական էր: Իրականում նրանք հասունացրել էին կենտրոնախույս հզոր ու հզորացող ուժեր, որոնք սպառնում էին կայսրության գոյությանը[2]: Բիթլիսը, Վասպուրականի մեծ մասը, Մուշը, Խիզանը, Դիարբեքիրը, Կոզանյաններին հպատակ լեռնային ու դաշտային Կիլիկիայի մեծ մասը[3], ֆեոդալ ցեղապետերի գլխավորությամբ, արգելակում էին թուրքական զորաջոկատների ու հարկահանների մուտքը իրենց գավառներ, կառավարվում ինքնագլուխ ռեժիմով: Եգիպտոսի Մուհամմեդ Ալին, նրա որդի Իբրահիմ փաշան այնքան էին հզորացել, որ իրար հետևից ջարդում էին թուրքական բանակները, շարժվում Բոսֆորի ափերը՝ մեկընդմիշտ կործանելու սուլթանական կայսրությունը:

Թուրքահպատակ շրջանների, նրանց թուրք կառավարիչների ու Բ. Դռան փոխհարաբերություններն էլ այնքան գոհացուցիչ չէին: Ռազմաավատական սիստեմը վաղուց արդեն ցույց էր տվել իր սնանկությունը: ***Չեամեթների ու թիմարների*** վրա նստած թուրք զինվորականներն, օգտվելով պատեհառիթ իրադարձություններից, պետական հողերը վերածել էին մասնավոր սեփականության և արդեն ժառանգաբար էին տիրում: Առանց զինվորներ տալու նրանք այժմ կարող էին տիրապետել նախկին հողակտորներին, հարկը վերցնել ու գրպանել: Պետությունն անզոր էր կենտրոնախույս այդքան ուժերին միանգամից վերահպատակեցնելու:

Բնական է, բայց նաև զավեշտական, որ հզորների նկատմամբ

[1] Սանրամասն տե՛ս ***Д. Г. Розен,*** История Турции от победы реформы в 1826 г. до Парижского трактата в 1856 году, часть I, СПб, 1872, стр. 7-8.

[2] ***Հակոբ Շահպազեան,*** Քիւրդո-Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 63-64:

[3] ***Յ. Պօղոսեան,*** Հաճընի ընդհանուր պատմութիւնը, էջ 512-537:

կուտակած մաղձը թե՛ կենտրոնական կառավարությունը և թե՛ ֆեոդալ ցեղապետերն ու դերեբեյները թափում էին թույլերի, անպաշտպանների, այլադավան հպատակների գլխին, ծծում նրանց արյունը, քաղաքականապես գետնաքարշ դրության դատապարտում: Քրիստոնյա այլազգիների սոցիալ-քաղաքական թշվառ կացությունը հասել էր իր եզրին, և այլևս դիմանալու հնարավորություն չկար: Սրանք զգում էին կենտրոնական պետության թուլությունը, օգտագործելով առիթը, տարերայնորեն ոտքի ելնում նրա դեմ, զոհառատ կռիվներով, հուսահատական ճիգերով դարավոր շղթաները խորտակելու փորձեր անում:

Թուրքիայի ներքին թուլությունն օգտագործում էին նաև մոտիկ ու հեռավոր հարևաններն, արդեն միջամտում նրա ներքին գործերին, նվաճում ընդարձակ մարզեր ու երկրամասեր, առևտրատնտեսական պայմանագրերով տեր դառնում շուկաներին, քայքայում արհեստագործությունն ու առևտուրը: Դարի առաջին երեք տասնամյակներին Թուրքիան կորցնում էր իր ռազմական-քաղաքական ու տնտեսական հզորությունը:

Գիտակցելով կայսրության անխուսափելի գահավիժումը, նրա ռազմական հզորության կորուստը, ներքին թուլությունը, կենտրոնախույս ուժերի առավել անկախանալը, սուլթան Սելիմը (1789-1807) ու Մուստաֆա Բայրաքտարը մի շարք ռեֆորմներ են անցկացնում, որոնք, կայսրությանը կենդանության նշաններ հաղորդելով հանդերձ, այլևս անկարող էին վերադարձնել օսմանների երբեմնի փառքը:

Սելիմին ու Մահմուդ II-ին ծառայող Մուստաֆա Բայրաքտար ու Ռեշիդ փաշաները, իբրև Արևմուտքին մոտ կանգնած, պետական մտածելակերպով օժտված քաղաքական գործիչներ, Թուրքիայի եվրոպականացման, պետության կենտրոնացման փորձեր արեցին: Նրանք «բարբարոսության դեմ բարբարոսաբար պայքարելով», արյունահեղ մարտերով փորձեցին վերակառուցել բանակն ու ոստիկանությունը, «առողջացնել պետական ապարատը»:

Մահմուդ II-ին (1807-1839) էր, սակայն, վիճակված կայսրության վիրահատության դժվարին խնդիրը: Գործակից ունենալով մահմեդականացած վրացի Մեհմեդ Ռեշիդ փաշային, խորամանկությամբ, զենքով, տեղական դժգոհ ուժերի օգտագործմամբ, 1820-ական թվականներին նա կարողացավ փոխել Ուրֆայի, Դիարբեքիրի, Մոսուլի, Բաղդադի, Մարդինի փաշաներին, հպատակեցրեց Զմյուռնիայում նստած Կարա-օսման օղլուների դինաստիան, Անգորայի Չապան օղլուներին[1]: 1826 թ. հունիսի 16-ին, գրեթե մեկ գիշերվա մեջ ոչնչացվեց ենիչերիների բանակը մայրաքաղաքում[2], կարճ ժամանակ անց՝ նաև ողջ կայս-

[1] ***Д. Г. Розен,*** История Турции, стр. 7-20.

[2] Նույն տեղում, տե՛ս նաև ***Աւետիս Պէրպէրեան,*** Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 180-181:

ությունում: Կատարվեցին վարչական աննշան փոփոխություններ, սակայն վարչակարգերը մնացին նույնը, քանի որ ռուս-թուրքական 1828-29 թթ. պատերազմը՝ մի կողմից, Եգիպտոսի ապստամբական կռիվները՝ մյուս կողմից, մինչև 1835 թ. Մահմուդ II-ին հնարավորություն չընձեռեցին իրագործել իր իղձերն ու մշակած ծրագրերը:

1800-1830-ական թվականներին, կենսագործված ռեֆորմներով հանդերձ, Թուրքիան շարունակում էր մնալ միջնադարյան, հետամնաց, մասնատված, ֆեոդալական բարբարոսության աստիճանի վրա դեգերող մի կայսրություն: Գրեթե անփոփոխ էին մնացել ոչ միայն սոցիալ-քաղաքական կարգերը, հողատիրության ձևերն ու հողատիրական հարաբերությունները, այլև վարչական միավորները, վարչակարգերը՝ ընդհանուր պետությունում, առավել ևս՝ նրա անատոլիական մասում: Արևմտյան Հայաստանը բաժանված էր *Էրզրումի, Բայազետի, Կարսի, Ախալցխայի, Վանի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Կեսարիայի* փաշայությունների: Կիլիկիայի հայկական մասն ընդգրկված էր *Ադանայի և Եփրատցիների* կամ *Մարաշի փաշայությունների* մեջ: Հայաբնակ մի շարք գավառներ կցված էին առափնյա Տրապիզոնի փաշայությանը[1]:

Էյալեթ կամ *փաշայություն* կոչվող վարչական այս 10 խոշոր միավորների մեջ էին ամփոփված Թուրքիայի հայկական ու հայաբնակ գավառները, սակայն սրանք էլ բաժանվում էին վարչական ավելի մանր միավորների, ինչպես նաև *թուրքահպատակ, քրդահպատակ շրջանների*, տակավին իրենց կիսանկախությունը պահպանած հայկական համայնքների: Մինչև Ադրիանապոլսի դաշնագիրը (1829 թ.), Թուրքիայի տարածքային նոր կորուստները, Արևմտյան Հայաստանն ու հայկական Կիլիկիան ունեին հետևյալ վարչապատկերը.

1. *Էրզրումի փաշայությունն* ընդգրկում էր *Կարին, Թեքման, Բասեն, Թորթում, Սպեր, Բաբերդ* (Բայբուրդ), *Դերջան, Երզնկա, Կամախ* (Քեմախ), *Քեղքիթ, Ղուզուջան* սանջակները: Հիշյալ բոլոր սանջակները հպատակվում էին Կարինում նստած թուրքական սերասքյար փաշային, հետևաբար՝ և կենտրոնական կառավարությանը, իսկ փաշայությանն անվանապես կցված *Տուժիկ* և *Մանազկերտ* (Մելազկերտ) գավառները փաստականորեն կիսանկախ դրություն էին ձեռք բերել և վաղուց ի վեր չէին հպատակվում Էրզրումի սերասքյարին[2]: *Շապին Գարահիսարի* գավառը, մինչև 1806 թվականը, Տրապիզոնի փաշայության մեջ էր: Հետագայում այն ևս կցվեց Էրզրումին[3]:

---

[1] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հ. Ա. Ասիա, Վենետիկ, 1806, էջ 50, 282, 309, տե՛ս նաև Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ (Կենտրոնական պետական պատմական արխիվ), ֆոնդ. 2, ցուցակ 1, գործ 2462, թերթ 3-5, գործ 2464, թերթ 6, գործ 2244, թերթ 4:

[2] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 111-112:

[3] «Belleten», 1951, N 60, էջ 617-619:

2. *Բայազետի փաշայությունը*, եռհերձանի փաշայով, Բայազետ կենտրոնով, բաղկացած էր *Բայազետ, Դիադին, Ալաշկերտ, Խմուր*[1], *Թոփրակ Կալե, Նահեա կամ Նահին* գավառներից[2]: Դարի առաջին քառորդին և հետագայում վարչական այս միավորը կառավարվում էր քուրդ փաշաների կողմից, իսկ Բ. Դռան նկատմամբ ունեցած պարտավորություններով, նվաճած իրավունքներով գրեթե կիսանկախ էր: Իբրև խասատեր, փաշան իր գանձած հարկերից սուլթանին կամ Բ. Դռանը այլևս բաժին չէր հանում: 1830 թվականին գեներալ-մայոր Ճավճավաձեն ականատեսի վկայությամբ հաղորդում է, թե. «Բայազետի փաշայությունը հանդիսանում էր քուրդ փաշայի *թիուլը* և սուլթանը նրա հպատակության տակ դրված հողերից հարկեր չէր ստանում»[3]: Փաշայի հպատակությունը կառավարությանն արտահայտվում էր միայն նրանով, որ պատերազմների ժամանակ երկրատերերից զինվորական դրուժինաներ էր կազմում և տրամադրում կենտրոնական կառավարությանը:

3. *Կարսի փաշայության* կազմում էին՝ *Կարս, Կաղզվան, Քեղյան, Զարուշատ, Խոջևան, Շորագյալ* գավառները: Կենտրոնը Կարս քաղաքն էր, փաշան՝ եռհերձանի հիմնովին հպատակ կայսրությանը[4]:

4. *Ախալցխայի* (որը կոչվում էր նաև Զըլդիր) փաշայության գավառներն էին *Ախալցխա, Նարիման, Օլթի, Ֆենեսկերտ, Թավըսկերտ, Զըլդիր, Զեվախեթ, Աղշոր, Փոցխով,* Վերին *և* Ստորին *Իմեր, Արդանուջ, Արդահան, Կիսկիմ* և այլն[5]: 23 գավառներից բաղկացած վարչամիավորի կենտրոնը Ախալցխան էր, փաշան՝ եռհերձանի, բնակչությունը՝ գերազանցապես հայեր ու վրացիներ: Կային մի շարք գավառներ, բերդեր ու ամրոցներ, որոնք թուրք զինվորականների ու հարկահանների երեսը հազվագյուտ էին տեսնում:

5. *Վանի փաշայությունը* կռվախնձորի դեր էր կատարում քուրդ և թուրք կառավարիչների միջև: Գավառներն էին՝ *Վան, Խոշաբ, Զուլամերկ, Խլաթ, Արծկե, Արճեշ, Բերկրի, Բաղեշ* (Բիթլիս), *Խիզան, Մուշ, Չըրխա, Էսբաբերդ, Ադիաքիս, Մոկս:* 14 գավառներից 9-ը ենթարկվում էին Վանի փաշային, Բերկրին *օջաքլիք* էր, իսկ

---

[1] Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎՍՍՀ ԿՊՊԱ), ֆոնդ 2, ցուցակ 1, գործ 2646, թերթ 6:

[2] ՍՍՀՄ Կենտրոնական պետական ռազմական պատմական արխիվ (այսուհետև՝ ԿՊՌՊԱ), ֆոնդ ՈԳԱ, գործ 4481, թերթ 14-15:

[3] ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆոնդ 2, ցուցակ 1, գործ 2462, թերթ 1-2, գործ 2646, թերթ 9-10:

[4] ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆոնդ 2, ցուցակ 1, գործ 2244:

[5] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 122-123:

Հեքյարին[1], Բիթլիսը, Խիզանը, Խոշաբը (Մահմուդիեն) *հյուքյումեթություններ* (սրանց նշանակությունը կտրվի ստորև):

6. Թուրքիայի անատոլիական մասում ամենախոշոր ու ամենաբարդ կառուցվածք ունեցող, պետությանը միշտ զոհեր պատճառող փաշայությունը *Դիարբեքիրն* էր, որն անվանվում էր Ամիդ կամ Տիգրանակերտ: Փաշայության կառուցվածքի բարդությունը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Նախ, անմատչելի կիրճեր ունեցող, լեռնոտ ու անտառաշատ երկրամասը սկզբից ևեթ չնվաճվեց օսմանյան առաջին, ինչպես նաև հետագա սուլթանների կողմից: Թուրքիան Չալդրանի հայտնի ճակատամարտում Պարսկաստանի դեմ հաղթանակ տարավ Մոլլա Իդրիսի գլխավորած քրդական ցեղախմբերի օգնությամբ: Փոխարենը արտոնություններ ու առանձնաշնորհումներ բաշխվեցին քուրդ ցեղապետերին, ամեն մեկին սահմանապահի («բդեշխի») իրավունք տրվեց, պահանջելով պաշտպանել երկրի սահմանագլուխը ապրել ապահարկ կացությամբ[2]: Նստակեցության ու ազատ ապրելու պայմաններ ստեղծելով սուլթան Սելիմը, փաստորեն, գայթակղեց պարսկական քրդերին, կամավոր գաղթեցրեց Տիգրանակերտի շրջանը և բնակեցրեց այնտեղ[3]:

Նախքան քրդերի գաղթը, նահանգում ապրում էին հայեր, ռազմատենչ ասորիներ, փոքրաքանակ թուրքեր ու հույներ: Տեղացիների վրա գալիս էր ավելանալու մի քոչվոր ու ռազմատենչ ժողովուրդ, ավելի ճիշտ դեռ նահապետական կենցաղով ապրող ցեղային միություններ, որոնք, զենք գործածելու շնորհք ու իրավունք ունենալով, աստիճանաբար տալիս էին վայելողների մի հսկա թիվ, հովտատերերի բազմություն: Սրանք վայրագորեն էին վարվում հպատակների հետ, ստեղծում այնպիսի պահեր, երբ աշխատավորությունը երանի էր տալիս թուրքական տիրապետությանը:

Դարասկզբին կիսանկախությամբ, նույնիսկ լրիվ անկախությամբ ապրող գավառները հիմնականում Դիարբեքիրում էին: Նահանգում կային քրդական իշխանապետություններ, ասորական ու հայկական անկախ համայնքներ: Այդուհանդերձ, այն թուրքահպատակ նահանգ էր, և գավառների մեծ մասը ենթակա էր պետությանը, նրա նշանակած քուրդ կամ թուրք փաշային:

Դիարբեքիրի փաշայության թուրքահպատակ գավառներն էին.

[1] *Ա. Ալպոյաճեան*, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 456-470, տե՛ս նաև *Բարունակ Պէյի Ֆէրուհխան*, ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան յամի տեառն 1847, 1876, յԱրմաշ, էջ 60-65:

[2] *Հակոբ Շահպազեան*, Քիւրդօ-Հայ պատմութիւն, էջ 57-58:

[3] Մաշտոցի անվան մատենադարան, *Գալուստ Տեր-Մկրտչյանի* արխիվ, թղթ. 16, վավ. 7, «Փոքր Ասիայի բնակիչները» խորագրված ձեռագիր ընդարձակ մի ուսումնասիրություն է, որի հեղինակը մեջբերումներ է անում եվրոպական աղբյուրներից:

Ամիդ, Հանի, Միափարկին, Խարբերդ, Սինջար, Էսֆերիդ, Սևերեկ, Անադե, Հիսնի-Քեոյ, Ճապաղջուր, Սաղման, Ջերմեկ, Կուլբ, Իլքիս, Բենեբեկ, Բերդագարակ[1]: Հյուքյումեթություններն էին *Բալու, Գիեհ, Ջեզիրե, Էգիլ, Հազզո, Թերջիլ, Սավուր* գավառները[2]: Սակայն թուրքահպատակ գավառների մեջ էլ կային համայնքներ, որոնք, օգտվելով Թուրքիայի տնտեսական անկումից, պատեհ առ պատեհ ապստամբվում էին, վռնդում պետական պաշտոնյաներին և հրաժարվում հարկատվությունից: Դժբախտությունն այն էր, որ հեռանում էր կառավարող թուրքը, տեր էր դառնում աշիրաթապետ հզոր քուրդը, և ժողովրդի դրության մեջ եղած փոփոխությունը միշտ էլ գնում էր դեպի վատը:

7. *Սվազի* (Սեբաստիայի) փաշայությունը համահավաքում էր *Սվազ, Ամասիա, Բողոք, Չորում, Ջանիկ, Դիվրիկ, Արաբկիր* գավառները: Երեսուն տարում փաշայությունը փոխեց 13-ից ավելի կուսակալներ, ամեն մեկը նախորդին գերազանցեց իր վայրագություններով, որոնց մեջ ամենադաժանը Չապան Օղլու Մուհամմեդ փաշան էր 1809 թվականից մինչև 1813 թ.[3]: Նրան հաջորդող Իբրահիմ փաշան 1813 թվից խնդիր ուներ հպատակեցնել քրդական ապստամբ ցեղերին, սակայն իզուր ջանքեր: Հաջորդների օրոք էլ, մինչև 1834 թվականը, այսինքն Մեհմեդ Ռեշիդ փաշայի Սեբաստիայի կառավարիչ դառնալու նախօրեն, փաշայությունը մնաց իբրև ապստամբ ցեղապետերի որջ, մի խառնարան, ուր ամեն օր կռիվն ու արյունահեղություններն անպակաս էին:

8. *Ադանայի փաշայության* գավառներն էին *Ադանա, Տարսուս* (Տարսոն), *Ալանիա* (Ալայե), *Իչիլ, Միս, Ուզեյր, Բեյլան*[4]:

9. *Մարաշի փաշայությունն* ուներ *Մարաշ, Մալաթիա, Սամսաթ* (Սամուսաթ), *Գերգեր* գավառները: Սրանցից բացի կային կոզան օղլուներին հպատակվող բազմաթիվ մանր իշխանություններ: Այս նահանգի մեջ էին կիսանկախ *Դփթիսթանը* (Ալբիսթան), *Ջեյթունն* իր շրջակայքով[5]:

Հայկական ու հայաբնակ մի շարք գավառներ, գավառակներ էին մտնում Տրապիզոնի, Կեսարիայի, Նիկտեի եռհերձանի փաշայությունների մեջ: Դրանց թվում էին Սյուրմենը, Եոմուրայի և Սև գետի հովտա-

[1] Аграрный строй Османской империи XV-XVII вв., Документы и материалы, составленные *А. С. Тверитиновой*, Москва, 1963, стр. 95-96.

[2] «Belleten», 1950, N 60, էջ 620 և հետո:

[3] «Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ և սահմանաց նորա կամ արքեպիսկոպոսութեան նորին» յօրինեաց *Անդրէաս Աղեքսանդրեան*, 1911, Վենետիկ, ս. Ղազար, էջ 341-343:

[4] *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 355 և հետո:

[5] Նույն տեղում, էջ 370 և հետևյալը, տե՛ս նաև *Գր. Հ. Գալուստեան*, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն, էջ 84 և հետո:

շեն գյուղերը, Շապին Գարահիսարը՝ որոշ շրջանում, Ուրֆան, Կեսարիան և այլ մարզեր:

Այսպիսով, XIX դարի առաջին երեք տասնամյակներին թուրքական կայսրության մեջ ապրող *երեք միլիոնանոց*[1] *արևմտահայությունը* տեղաբաշխված էր Արևմտյան Հայաստանում, շերտընդմեջ բնակվում էր հայաբնակ նահանգներում, Հայկական Կիլիկիայում, ծովամերձ գաղութահայ օջախներում:

Ամենատարբեր էին գաղութահայության ու գավառահայության ոչ միայն ապրելակերպի պայմանները, քաղաքական կացությունը, այլև *վարչակարգերը՝ թուրքահպատակ-փաշայություններում, քրդապատկան* խանությունների ու իշխանապետությունների մեջ, *հայկական անկախ ու կիսանկախ համայնքներում:*

2. Վարչակարգերը

Սուլթանական լայնարձակ կայսրությունն ընկած էր Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի մայրցամաքների վրա, ուներ ռազմաավատական ու թեոկրատիկ բնույթ: Պետության գերագույն սյուզերենը սուլթանն էր, որը ղեկավարում էր երկրի աշխարհիկ գործերն, ուներ անսահմանափակ իշխանություն, միաժամանակ դիտվում էր իբրև մահմեդական աշխարհի հոգևոր պետը[2]:

«Սուլթանը, իբրև Ալլահին շուքն երկրի վրայ,- գրում է Սահակ Տեր-Մովսիսյանը,- կը համարէր թէ իր թագն Աստուծմէ ստացած է, և ուստի միահեծան տէր էր քաղաքական ու կրօնական խնդիրներու մէջ, պետ համօրէն պետութեան և *մեծ Իման* մահմետական կրօնին, և ասոր համար կը կոչուէր *Փատիշահ, Սուլթան, Հիւնքեար*»[3]:

«Այդ բացարձակ միապետութիւնն *ինքնօրէն* էր: Ան կարող էր վերջ դնել իր հպատակներուն *կենաց և ազատութեան* և անոնց ինչքը *յարքունիս գրաւել:* Սուլթանական մէկ ակնարկով կամ արքունի հրամանագրով մը, *ֆէրման*...ան կարող էր աքսորել, բանտարկել, թունաւորել, խեղդել կամ սպանել տալ զով որ ուզէր, մինչև իսկ իր զաւակները»[4]:

Սուլթանից ու նրա պալատականներից բացի, պետության բարձրաստիճան պաշտոնյաներից էին նահանգապետ-փաշաները, որոնք

[1] Տե՛ս Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 88, վավ. 105ա, 1836, 23-ը մայիսի:

[2] Մանրամասն տե՛ս *Հ. Սահակ Տէր-Մովսէսեան,* Պատմութիւն հայոց սկիզբէն մինչև մեր օրերը, հ. Բ, Վենետիկ - ս. Ղազար, 1924, էջ 678-679:

[3] Նույն տեղում:

[4] *Հ. Սահակ Տէր-Մովսէսեան,* Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 678-679:

անմիջականորեն էին շփվում գավառահայության հետ, փաղիշահի ամեն մի հրամանը կիրառում նրա հպատակ երկրահատվածներում: Ինչպես փաշայությունները, այնպես էլ նրանց վարիչները բաժանվում էին երեք կարգի միհերձանի (մեկդուղ), երկհերձանի, եռհերձանի[1]: Այս չափը պայմանավորում էր միավորի ռազմաստրատեգիական դիրքը, հզորությունն ու տնտեսական կարևորությունը: Հայաստանի մասերը կազմող փաշայությունների մեջ ամենախոշորը *Էրզրումն* էր՝ *Կարինը,* որի ամենահեղինակավոր փաշան սերասքյարության իրավունք ուներ: 1830 թ. Ախալցխայի, Կարսի, Էրզրումի, Բայազետի, Վանի փաշաները հպատակվում էին Կարինի եռհերձանի սերասքյար փաշային[2]: Էրզրումի սերասքյար փաշան օժտված էր անսահմանափակ իշխանությամբ, նշանակում ու հանում էր քաղաքացիական ղեկավարներին, հավաքում զորքեր, հաստատում կամ մերժում դատավճիռներ:

Սերասքյարության ենթակա մյուս փաշաները ևս ինքնակալ էին, սակայն մահվան դատավճռի հաստատման կամ մերժման պատիվը պատկանում էր սերասքյարին, որի նստավայրը Էրզրումն էր: Ակներև է, որ բոլոր փաշաները, անկախ փաշայության մեծությունից ու փոքրությունից, «ունեին ոչ միայն քաղաքացիական, այլև զինվորական իրավունքներ ու պարտականություններ»[3]:

Փաշայությունները բաժանված էին *սանջակների* կամ *լիվաների:* Վարչական այս ավելի փոքր միավորները ղեկավարում էին *սանջակբեյները* կամ *միրիլիվաները:* Եթե փաշաներն առանց միջնորդ օղակի կամ Էրզրումի սերասքյարի միջնորդությամբ էին կապված սուլթանի հետ և իրավաբանորեն պարտավոր էին կատարել նրա հրամանները, ապա սանջակբեյները, ճիշտ է, նշանակվում էին Բ. Դռան կողմից, սակայն նրա հետ հարաբերությունների մեջ էին նահանգապետերի միջոցով[4]: Լիվաները բաժանվում էին *կազաների* (գավառ), որոնց կառավարիչները կոչվում էին *կայմակամներ,* կազաները տրոհվում էին *նահիեների* (գավառակ), կառավարիչները՝ *մյուդիրներ:*

Կառավարման այս սիստեմը, կառավարիչներն ու վարչամիավորները հատուկ էին այն փաշայություններին, որոնք թուրքահպատակ էին: Սակայն Թուրքիայի այս մասերի համար էլ ամեն ինչ այնպես չէր կատարվում, ինչպես գրված էր թղթի վրա: Օրենքն ու իրողությունը, եթե նախորդ դարերում գտնվում էին ծայրաբևեռներում, ապա XIX դարի առաջին երեսնամյակին դարձել էին վանողական ուժեր:

[1] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 113-119: Տե՛ս նաև Աշխարհագրութիւն, հ. Ե, 1804, էջ 96-97:

[2] ՍՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ ՈԳԱ, գործ 4643, 1830, թերթ 1-2:

[3] Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (այսուհետև՝ ՌԱՔԱ), Մոսկվա, Գլխավոր արխիվ, գործ 13, մասն 17, թերթ 13:

[4] ՍՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ ՈԳԱ, գործ 4643, թերթ 1-2:

Հիերարխիկ սկզբունքով կազմված կառավարչական ապարատի պաշտոնյաներն այժմ արդեն անձնական հատկանիշներով, զինվորական քաջության ու ցուցաբերած խելամտության հաշվառումով չէին նշանակվում: Հիվանդագին հարկերի դասական այդ երկիրը[1], ֆինանսական փակուղու մեջ ընկնելով, ամեն ինչ կատարում էր դրամի ուժով, կաշառակերությամբ, որն, իհարկե, օրինականացված չէր, սակայն կիրառվում էր անխտիր ձևով, առանց բացառությունների: Փաշայի իրավունք ստանալը գնալով մեծ գումարների հետ էր կապվում:

Պետության գանձարանը, որը երբեմն լցվում էր պատերազմների, ավարառության, թալանի միջոցով ձեռք բերած գումարներից, այժմ, զրկվելով նախկին հասույթներից, աստիճանաբար դատարկվում էր: Ընդհակառակը, մեծանում էին սուլթանի, նրա բազմանդամ հարեմի, մեղկության սովոր պալատականների պահանջներն ու ծախսերը: «Սուլթանի բերան» կոչված ճաշասենյակներում, պալատներում օրական 500 սեղան էր բացվում: Կանանց սպասարկելու համար տարին 400 հազար ոսկյա ֆրանկի[2] (մոտավորապես 1,6 միլիոն թղթադրամ) միայն շաքար էր սպառվում:

Պատերազմները, միջցեղային կռիվները, բանակը, ենիչերիների զորագնդերի պահանջները, ռոճիկի բարձրացման համար ապստամբվելու սպառնալիքները միայն վայելքներով տարված, անարտադրող թուրք վերնախավին, նրանց ղեկավար սուլթանին ստիպում էին քամել ժողովրդից այնքան, որքան հնարավոր էր: Սակայն աշխատավորության կողոպտումը կատարվում էր ուղղակի և անուղղակի ճանապարհով, փաշաների և այլ պաշտոնյաների ձեռքով: Սուլթանը վերցնում էր փաշայից այնչափ, որչափ իրեն անհրաժեշտ էր, իսկ թե նահանգապետն ինչպես կվարվեր հպատակների հետ, առաջինին այլևս չէր հետաքրքրում:

Թուրքիայում կաշառքով փաշաներ նշանակելն այնքան հրապարակային ու սովորական էր դարձել, որ պաշտոններն արդեն աճուրդի էին հանվում: Եվ պաշտոնյան, մի անգամ կատարելով իր հավատարիմ հպատակության պարտքը, չէր կարող ապահով լինել, թե երկար կպաշտոնավարե: Ամեն տարի, Բայրամի տոնին, նա պարտավոր էր վերանորոգել իր լիազորությունը և, եթե շատ էր սակարկություն անում, պաշտոնն անցնում էր մեկ ուրիշին՝ նրան, ով ավելի առատաձեռն կլիներ[3]:

Մինչև 1860-ականները քրիստոնյաներն իրենց երկիրը ղեկավարելու, բարձրապատիվ, եկամտաբեր բոլոր տեսակի պաշտոններ վարելու իրավունքից զրկված էին: Փաշա կամ այլ կառավարիչ նշանակվում էին միայն մահմեդականները, որոնք անձնական կալվածքներից ստացած հասույթներից անկարող էին միանգամից հատուցել այդ հսկայական գումարները: Սրանք ստիպված դիմում էին Կալաթիայում ոսկե սնդուկների դիմաց ծալապատիկ նստած ամիրաներին ու սարաֆներին (սեղանավորներ), պայմանագիր կնքում, բարձր տոկոսներով դրամ վերցնում, վճարում պետական գանձարանին և մեկնում երկրամասը, բնական է, ոչ թե ղեկավարելու, այլ կողոպտելու[1]: Ապացույցի հարկ չկա, որ սուլթանի գանձարանը, ամիրայի ու փաշայի գրպանը, ցածրաստիճան պաշտոնյաների անհագուրդ ախորժակը հագեցնում էր, միաժամանակ բոլորին պահում ֆեոդալական սանդուղքի ամենաստորին աստիճանի վրա կանգնած գյուղացին, առավել ևս՝ քրիստոնյա, անպաշտպան ու իրավազուրկ ռայան:

Մինչև «Թանզիմաթը» Թուրքիայի վարչակարգերը նեխել էին, դարձել երկրի արտադրողական ուժերի քայքայման, պետության թուլացման, ժողովրդի կեղեքման, հետևաբար և՝ դժգոհությունների ալիք բարձրացնելու գլխավոր պատճառներից մեկը: Սակայն Թուրքիան կամ սուլթանական միահեծանությունը վաղուց ի վեր դարձել էր անվանական հասկացություն: Կայսրության և՝ Անատոլիայի, և Ռումելիայի նահանգներում կային բազմաթիվ ու ընդարձակ մարզեր, գավառներ, որոնք վաղուց ի վեր, առավել ևս XIX դարի ողջ առաջին կեսին, կառավարությանը չէին ենթարկվում, նրան հարկատու չէին և կարող էին զորք տալ կամ չտալ: Արևմտյան Հայաստանի տարածքի վրա դրանք քրդահպատակ շրջաններն[2] էին՝ դերեբեյությունները, ընդարձակ իշխանապետությունները:

XIX դարի առաջին երեք տասնամյակներին շարունակում էին իրենց կիսանկախ գոյությունը պահպանել կամ լիովին անկախանալ ***քրդահպատակ Բաղեշի, Ջուլամերկի, Ջեզիրեի, Սուլեյմանիեի, Ուստանի, Բերկրիի, Դերսիմի, Խոշաբի*** (Մահմուդիե), ***Հեքյարիի, Բալուի*** և այլ իշխանապետությունները, որոնք միայն անվանապես էին Թուրքիայի կազմում: Դոկտոր Լեփսիուսը սրանց մասին գրում է, թե «Անցած դարուն, մինչև քառասնական թվականներուն վերջը՝ Փոքր Ասիոյ և այլ գավառներու վրա սուլթանին իշխանութիւնը պարզ անվանական էր. իրականին մեջ՝ երկիրը զանազան իշխաններուն և բեգերուն կվերաբերեր, որոնք տարվե տարի սուլթանի գանձուն որոշ տուրք մը կհատուցեին, բայց իրենց երկրին վրա իշխանութիւնը

---

[1] *Վ. Համբարձումեան,* Գիւղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 34:
[2] *Սահակ Տէր-Սովսէպեան,* Պատմութիւն Հայոց, էջ 686 և հետո:
[3] *Լեո,* Հայոց պատմություն, հ. 3-րդ, Երևան, 1946, էջ 56:

[1] Տե՛ս *Ա. Ներսիսյան,* Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրինենտացիան, Երևան, 1962, էջ 10-11:
[2] *Ա. Ալպոյաճեան,* Պատմական Հայաստանի սահմանները, էջ 439, տե՛ս նաև Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, 1960, Երևան, էջ 368-371:

անձամբ վարելով: Զինվորական ծառայության պարտավորյալ չէին, սակայն իհարկին սուլթանը կրնար ասոնցմէ օգնական գունդեր խնդրել, և այս պարագային՝ իրենք պարտավորեալ կըլլային որոշ թուով զինուոր տալու»[1]: Ըստ քրդական աղբյուրների, հատկապես Պետրինի «սուլթան Սելիմէն մինչև սուլթան Մահմուտը տերեպեյական իշխանութիւնը մնաց կանգուն իր աւազակային դրութեան մէջ: Օսմանեան սուլթանները, չկարողանալով կատարելապէս լրացնել իրենց նուաճումները, վերջապէս կստիպուին սուլթան Մահմուտի օրով պաշտօնապէս ճանչնալ տերեպեյական իշխանութիւնները»[2]:

Քրդահպատակ իշխանությունների մեջ ամենախոշորը *Բիթլիսն* էր (Բաղեշը): XVIII դարի կեսերից Բիթլիսը կռվախնձոր էր դարձել տարբեր իշխանապետերի ձեռքին: Գործին միշտ էլ միջամտում էր կենտրոնական կառավարությունը, սակայն արդյունքի չէր հասնում: XVII դարի ողջ առաջին կեսին այն հանձնված էր շերեֆների տոհմի ժառանգական կառավարմանը և ընդգրկում էր *Բաղեշի, Մուշի, Սասունի, Զըտրգանի, Խիզանի* և այլ շրջաններ[3]: Բիթլիսի քուրդ խանը տիրապետում էր Վանից մինչև Դիարբեքիր սփռված մի ընդարձակ երկրամասի, որի վրա նստած ցեղապետերը հպատակվում էին նրան[4]: Գլխավոր խանը, չնայած անմիջապես չէր կարողանում կապել իշխանապետության մեջ մտնող մանր ու խոշոր բեկերին, սակայն XVIII-XIX դարի առաջին կեսին ռազմական մեծ հզորության էր հասել: «Բաղեշի էմիրները դարերէ ի վեր,- գրում է Կ. Բասմաջյանը,- ինքնիշխան կառավարութիւն մը կազմած էին, անառիկ դիրքերու և ամրոցներու մէջ հաստատուած: Ասոնք դրամ տպած են անշուշտ: Ինձ ծանօթ են միայն երկու էմիրի դրամներ»[5]:

Բաղեշի խանը անվանապես պաշտոնի էր հաստատվում սուլթանի կողմից և ազգությամբ քուրդ պիտի լիներ: Օգտվելով առիթից, Բ. Դուռը մանր խաներին գրգռում էր խոշորների դեմ, հարատև լարվածություն ստեղծում երկրում, միաժամանակ երկուսին խանության իրավունք տալով, կռվեցնում իրար հետ: Կռվով, թե կաշառքով խան դարձողը սկսում էր հպատակների կողոպուտը: «Հասկանալի է, թէ որքան դառն, որքան դժոխային պիտի ըլլար իրականութիւնը մի քրտական պետութեան մէջ,- գրում է Արշակ Ալպոյաճյանը: - Վայրենութեան մէջ մնացած

[1] «Der Christliche Orient», 1904, նոյեմբեր, «Քրդեր և հայեր» հոդվածը վերցված է *Հ. Շահպազեանի* Քիւրդօ-Հայ պատմութիւն գրքից, 1911, Կ. Պոլիս, էջ 87:

[2] *Հ. Շահպազեան*, նշված աշխատությունը, էջ 64, *Ա. Ալպոյաճեան*, Պատմական Հայաստանի սահմանները, էջ 431:

[3] *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 52 և հետևյալը:

[4] *Х. Ф. Б. Лиич*, Армения, т. 2, Турецкие провинции, 1910, стр. 191-193.

[5] *Կ. Յ. Բասմաջեան*, Հայկական ընդհանուր դրամագիտութիւն, 1936, Վենետիկ, էջ 119:

Մի քարաքարերի ավերակները
(նկարը մեզ է կրամադրել Զավեն Սարգսյանը)

Զկարթնոցի կամարը (641-661թթ.)

մի հին ցեղ, որ մինչև այժմ ալ (խոսքը XIX դարի առաջին կեսի շերեֆների տոհմի մասին է -Հ.Ղ.) չէ կրցեր գիր ու դպրութիւն ունեցող ազգաց շարքը մտնել, որուն պաշտամունքը յափշտակութիւնն ու կողոպուտն է, ունի իշխանութիւն, լայնարձակ երկրի մը տէրն է, անոր ճակատագիրը տնօրինողը, կեղեքումները, հարստահարութիւնները պէտք չէ յիշատակել ալ, ... այնքան սովորական երևոյթներ կը կազմէին: Խանութիւնը կռուածաղիկ մըն էր քուրտ իշխողներու մէջ: Թուրք կառավարութեան ձեռնտու չէր կարգ ու կանոն հաստատել Բաղէշի մէջ և անիկա ամենայն հաճութեամբ թույլ կուտար, որ խանական իշխանութեան թեկնածուները կրծեն զիրար, որքան կուզեն: Այդ նպատակով անիկա խանութեան թուղթ կուտար ամեն մէկին, որ կը կարողանար լաւ կաշառքներ բերել իրեն»[1]:

Հաստատվելով գահի վրա, Բաղեշի քուրդ խանը, այլևս ոչ ոքի առջև հաշվետու չէր[2]: Նրա ուժի ու հզորության մասին ժամանակակիցները ակնածանքով են խոսում, վկայելով, թե խանը պատերազմի դաշտ կարող էր հանել 20-25 հազար միայն ձիավոր, «առանց հաշվելու մեծ թվով հետևազորք»: «Ան կը բնակէր բերդին մէջ, ուր կարելի էր մտնել միայն երեք յաջորդական շարժական կամուրջներով»: Իր հարկաբաժինը գտնվում էր երեք սրահներից ամենավերջինին և ամենափոքրին մէջ, ուր այցելուն, անկախ պաշտոնից ու մեծությունից, կներկայանար հոտնկայս ունկնդրութեան: «Այս պէյը ոչ Թուրքիոյ սուլթանը կը ճանչնար և ոչ ալ Պարսից շահը: Երկուքն ալ հաւասարապէս զայն կը փաղաքշէին, քաղաքին ռազմագիտական դիրքին պատճառով, որ կը գտնուէր Հալէպի և Դաւրէժի հաղորդակցութեանց գծին վրայ»[3]:

Բաղեշի իշխանապետության մեջ օրենք սահմանողն ինքը խանն էր, իր խիղճը, եթե ուներ, քանի որ բազմահազարանոց բանակի տեր էր և ոչ ոքի առաջ պատասխանատու չէր: Նա, փաստորեն, սուլթան էր իր տիրապետության սահմաններում, պետություն էր պետության մեջ: Անվանապես Բաղեշի խանին էր ենթարկվում Մուշն իր Չուխուր գավառով, սակայն իրականում այն արդեն անկախացել էր: Վերջինիս խանը չնչին հարկ էր տալիս Վանի փաշային, և դրանով եզրափակվում էր Տարոնի դաշտի հպատակությունը օսմանյան վեհապետությանը:

Երկակի կառավարման տակ էր Վանի փաշայությունը: Այստեղ նստած էր թուրք փաշան, միաժամանակ քուրդ խանը: Թուրքական պետությունը անկարող էր ոչնչացնել քրդական խաներին, ուստի քա-

---

[1] ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, *Ա. Ալպոյաճեանի* «Տպագրութեան արվեստը և հայք» անտիպ աշխատությունը, էջ 82, տե՛ս նաև *Տաշեան*, Մայր ցուցակ, էջ 1039:

[2] Տե՛ս *В. Никитин*, Курды, 1964, Москва, стр. 247.

[3] *Կարո Սասունի*, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, էջ 79-80:

ղաքում տեղավորել էր *Վան-Կուլերի* բերդապահ զորքը: Այս էպոխայում փաշայի իշխանությունը ձևական էր, և նա չէր կարող երկար կառավարել, եթե հաշվի չնստեր քուրդ խանի հետ, որի թիկունքում կանգնած էին մանր բեկերն իրենց ջոկատներով, ռազմատենչ ու արյունածարավ խոլամներով[1]: «Բայց միշտ եռացող կաթսայ մըն էր Վանը,- գրում է Ա. Ալպոյաճյանը,- ուր ոչ կեանքի, ոչ ինչքի և ոչ ալ պատուի ապահովութիւն գոյութիւն ունէր: Հարուստները կը կողոպտուէին շարունակ և երբէք իրենց կեանքը ապահով չէր»[2]:

Գնալով վան-կուլեր էին դառնում գերազանցապես քրդերը, սակայն հայ երևելիներն էլ քիչ չէին մինչև «Թանզիմաթը», որոնք մասնակցում էին քաղաքի, նույնիսկ գավառի կառավարման գործին և յուրովի տոն էին տալիս ազգային-եկեղեցական խնդիրների լուծմանը: «Թանզիմաթէն առաջ,- շարունակում է Երամյանը,- քաղաքի (Վան -Հ.Ղ.) ազգային գործերը կը վարէին *հոճա* կամ *չօրպաճի* ըսուած երևելիները, որոնց մէջէն, 12 հոգի ընտրովի հոճապաշի տիտղոսով կը կազմէին ազգային իշխանութիւնը առաջնորդի մը նախագահութեան տակ: Ասոնք գաւառի ամիրաներն էին և կը կոչուէին նաև *օնիքլեր*, որոնք երբեմն նահանգի շատ մը քիւրտերուն վրայ ևս կը տարածէին իրենց իշխանութիւնը: Իւրաքանչիւր վանքի վանահայրը, նոյնիսկ Աղթամարի կաթողիկոսը, կընտրուէր միաբանութեան ու մէն մի գիւղի մէլիքներուն քուէով և կը վարէր թեմին գործերը թեմական ժողովի հանդէպ պատասխանատվութեան պարտականութեան տակ: Պոլսոյ պատրիարքութիւնը ի վիճակի չէր ուղղակի հսկելու գաւառի գործերուն վրայ, ինքն իսկ խաղալիք դարձած ըլլալով ամիրաներու քմահաճոյքին մինչև ազգային սահմանադրութեան հաստատումը»[3]: Ուրեմն Վանը հիմնականում կառավարում էին քրդերը, ինչպես նաև որոշ թվով հայ երևելիներ[4]:

Խոշաբի գավառը կամ *Մահմուդիե* իշխանությունը ևս քրդերի ձեռքն էր: XVIII դարի երկրորդ կեսին այնտեղ տիրում էր Չապան կոչված բեկերի տոհմը, որոնք մերթընդմերթ իրենց վրա կրելով Վանի կուսակալի հարվածները, միշտ անընկճելի էին մնում, քաշվում Մահմուդիե անառիկ բերդը և ապա կրկին տիրում գավառին:

Անվանապես Վանի փաշայության մեջ մտնող Ջուլամերկի կամ Հեքյարիի (Աղբակ) գավառը հայերի հետ միասին բնակեցված էր քրդերով ու ռազմատենչ ասորիներով: Այն վաղուց ի վեր կիսանկախ կամ գրեթե անկախ իշխանություն էր և իր իրավունքները պաշտպանել էր նաև այս ժամանակաշրջանում: Վանի Թամուր փաշան 1776 և 1779 թթ. փորձեց

[1] *Ա. Ալպոյաճեան*, Պատմական Հայաստանի սահմանները, էջ 449-450:
[2] Նույն տեղում, էջ 451:
[3] *Համբարձում Երամեան*, նշված աշխատությունը, էջ 28:
[4] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 9027 (հավաքել է Ղևոնդ Փիրղալեմյանը), թերթ 45-47:

նվաճել Հեքյարին, սակայն, ավարառությամբ բավարարվելով, մեծ գումարի կաշառք վերցնելով, վերադարձավ, չդիպչելով նրա ինքնավարությանը[1]:

Քրդահպատակ ընդարձակ ու հզոր իշխանապետություններ կային նաև հարավային Հայաստանում: Դրանց մեջ ամենաուժեղը *Ջեզիրեն* էր, Դիարբեքիրի էյալեթի մեջ մտնող մի հյուրյումեթ. «... սեփական հին ցեղի ինչ քրդաց, ուստի է պէյ ինքնագլուխ և զօրաւոր,- գրում է Ղ. Ինճիճյանը,- ունի ընդ իւրև գիւղօրէս բազումս, այլև վիճակս ինչ, որոց բնակիչք ըստ մեծի մասին են քուրդք, յորոց կարէ հանել ասեն զօրս մինչև 70 հազար»[2]: Ջեզիրեն կառավարում էին Բեդերխանների տոհմի ներկայացուցիչները, որոնք, փաստորեն, իրենց հպատակության տակ էին դրել քրդահպատակ և քրդաբնակ շրջանների մեծ մասը:

Բոհտանի անառիկ բերդի մեջ նստած, քրդերից ու հայերից կազմված մեծաքանակ զինվորներ ունեցող, ռազմատենչ ու հռչակավոր Բեդեր-խան բեյը դարձել էր մի այնպիսի հզոր ու դաժան ֆեոդալ, որը պետության հետ բնավ հարաբերությունների մեջ չէր մտնում և մտադրություն ուներ համահավաքել քրդաբնակ շրջանները, ստեղծել ֆեոդալական անկախ Քյուրդիստան[3]: «Թուրքահայաստանի երեք մեծ նահանգներուն Վասպուրականի, Բաղէշի և Տիգրանակերտի մէջ,- գրում է Լևոն Ճերահյանը,- Օսմ. կառավարութեան ազդեցութիւնը տկար եղած է միշտ, և իրական տիրողները եղած են քիւրտ ցեղապետեր, պէկեր, շէյխեր և տերեպեյիներ, որոնք յիշեալ նահանգներուս զանազան գավառներուն մէջ տեսակ մը կէս-անկախ իշխանութիւններ հաստատած էին, և ունէին իրենց բերդերը, թաքստոցները, զօրք և ձիաւոր պատերազմիկները, որոնց մէջ հայեր ալ կային:

Այդ բռնաւորներէն երկու կարևոր դէմքեր, *Պէտրխան պէկ* և *խան Մահմուտ*, որոնք կիշխէին Վասպուրականի հարաւ-արևելեան կողմի, Պոհտան և Ճըզիրէ գաւառներուն, ծրագրեցին գրաւել Վասպուրականի նահանգը, Տարօնն ու Պիթլիսը և կազմել անկախ Քիւրտիստան մը»[4]:

Բեդեր-խանը ողջ հարավային Հայաստանը վերածել էր արյան ծովի, պատճառ դարձել գյուղատնտեսության ու արհեստագործության քայքայմանը: Քարավանային առևտուրը դադարել էր: Երբեմնի շահաստանները վերածվել էին գյուղաքաղաքների կամ նույնիսկ գյուղերի:

Բեդեր-խանի սահմանած վարչակառավարչական ձևը, հարկապա-

[1] «Դիւան Հայոց պատմութեան», հ. Ժ, Թիֆլիս, 1912, էջ 120, 131, 139:
[2] «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», հ. Ա, էջ 349:
[3] *Բարունակ Պէյի Ֆէրուխխան*, էջ 62-63:
[4] *Լևոն Ճերահեան*, ժամանակակից ընդարձակ քննական պատմութիւն Հայոց, հ. Ա, 1933, Մարսէյլ, էջ 152-153:

հանջության չափերն ու գանձման եղանակները, հպատակ այլազգիների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ավելի վատթար էին ու սոսկալի, քան թուրքական պետությանն ու նրա պաշտոնյաներինը: Այդ էր հիմնական պատճառը, որ պետականությունից զրկված հայ ազգաբնակչությունը, ինչպես նաև ասորիները չարիքներից փոքրագույնն ընտրելով, գերադասում էին սուլթանների հպատակությունը, քան Բեդեր-խանի անսահմանափակ բռնապետությունը[1]:

Քրդահպատակ իշխանություններ էին նաև Դերսիմը, Չարսանջակը, Խարբերդի Շիրո ու Աղճատաղ գավառները, Բալուն: Քրդական սուրն իր ծանրությամբ իջնում էր քրիստոնյաների գլխին, լիներ հարուստ, թե աղքատ, քայքայում նրա տնտեսությունը, մղում արտագաղթի, նոսրացնում ազգաբնակչությունը: Հեռանում էր հայը, նրա տեղը լցվում էին քուրդն ու թուրքը, զբաղեցնում բնակարանը, տիրանում հողերին: Մի խոսքով, թեկուզ վարչակառավարչական իմաստով, քրդահպատակ շրջաններում հայերի վիճակն ավելի ողբերգական էր, քան թուրքահպատակ նահանգներում:

Իշխանապետական կառավարման ձևը միայն հարավային Հայաստանին չէ, որ հատուկ էր: Իշխանապետություններ, անկախ ու կիսանկախ, փոքր ու մեծ «տերություններ» կային նաև Կիլիկիայում, հատկապես նրա լեռնագավառներում:

3. Հայկական կիսանկախ իշխանությունները

Հայաստանը նվաճող օսմանյան հորդաները, սրարշավ առաջընթացի պահին ասպատակելով ու հպատակեցնելով դաշտային երկրահատվածները, դարեր շարունակ չկարողացան բարձրանալ բազմաթիվ լեռնագավառներ, որպեսզի ծնկի բերեին ազատատենչ հայ համայնքներին: Իբրև օազիսներ լայնատարած անապատներում, հարյուրամյակներ շարունակ իրենց կիսանկախ, հաճախ և անկախ գոյությունը պաշտպանեցին հայկական մի շարք իշխանապետություններ: Սրանց հպատակությունը սուլթաններին կամ թուրք փաշային սոսկ ձևական էր:

Արևմտյան Հայաստանում հարատևող ազատ համայնքներից ամենաուժեղը, ինչպես նաև անկախությամբ երկարակյացը *Սասունն էր*, նրա լեռնային հատվածը: Տակավին 1459 -1460 թթ. Կալիքստոս պապի հետ հակաթուրքական պայքարին մասնակցելու միտումով բանակցությունների մեջ էին մտնում Խույթի և Սասունի *ժողովրդապետությունները*, ուսկից իբրև բանագնացներ Եվրոպա էին մեկնում Հեթումը և Ռուբենը[1]:

1500 թ. տրված մի գուշակության մեջ ասվում է, թե թուրքմեն ցեղերի տիրապետության շրջանում Հայաստանը կատարյալ տնտեսական քայքայման հասավ. «... և ոչ ուրեք մնասցէ մարդ ի վերայ երկրի, *բայց միայն ի ծորն Մանանաղոյ և ի լերինս Սասնոյ* և ի մայրիս Արցխոյ»[2]: Այստեղ ակնարկվող Մանանաղի և Սասունի շրջանները մտնում էին «Խույթի և Սասունի հանրապետությունների» մեջ, որոնք իրենց անկախությունը պահպանում էին մոնղոլ իշխանների տիրապետության շրջանում:

Վրա հասավ թուրքական տիրապետությունը: Պարսկաստանին դիմագրավելու գործում քուրդ բեկերի և հայ իշխանների ուժերն օգտագործելիս սուլթան Սելիմ Յավուզը (1512-1520) Չալդրանի ճակատամարտում սրանց օգնությամբ տարած հաղթանակից հետո ճանաչեց մի քանի ինքնավար իշխանապետությունների կիսանկախությունը քուրդ բեկերի և հայ մելիքների գլխավորությամբ: Վարչական առումով, թեև նորաստեղծ իշխանապետությունները ձևականորեն մտնում էին այս կամ այն էյալեթի մեջ, սակայն իրականում անկախ էին: Կազմակերպվեց Դիարբեքիրի էյալեթը: Վարչամիավորն ընդգրկող 19 գավառներից 8-ը «ավատառուներու տրված էր»: Կիսանկախ իշխանությունների թվում էին Հասզուն Խարազանն ու Սասունը, որոնց մասին ասվում է, թե «Այս կողմերը սուլթանի ճոխութեան մէջ չէր. ոչ հարկ կը վճարէր և ոչ զինուոր կը տրուէր»[3]:

Սասունը ձևականորեն կցվում էր Բիթլիսի քրդական հզոր իշխանությանը: Դիարբեքիրի Ավդալ ամիրան, ջանալով իր իրավունքը ճանաչեցնել տալ հայ լեռնականներին, 1605 թ. արշավում է Սասունի վրա, ձգտում վերացնել գավառի ներքին ինքնավարությունը, այն դնել հարկի տակ: Թուրքական ու քրդական բազմամարդ բանակը, դիակույտեր թողնելով գավառի լեռնապարիսպների տակ, զոհառատ կռիվներից հուսակտուր նահանջում է և ոչ միայն հրաժարվում իր մտադրությունից, այլև ճանաչում Սասունի իրավունքները:

1605 թ. (1013 հիսան 5) գրված հրովարտակում Ավդալ-բեկ ամիրան պատվիրում էր. «...ներկա և ապագա լինելի իշխաններին, աղաներին, թոռուններին, քաջ քրդերին և մանավանդ իմ սերնդին, որ այսուհետև

[1] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 9424, թերթ 140-143: Այս ձեռագիրը գրել է վանեցի *Յովհաննես Քոլոզ* վարժապետը և հիմնականում նվիրված է Վասպուրականի անցքերի (1800-1850 թթ.) նկարագրությանը, քուրդ բեկերի կատարած վայրագությունների բացահայտմանը:

[1] *Աշոտ Յովհաննիսյան*, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, 1959, Երևան, գիրք երկրորդ, էջ 9-10. համեմատ. *Վ. Տոմաշեկ*, Սասուն, 1894, էջ 44:

[2] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 6146, թերթ 7ա:

[3] «Հանդէս ամսօրեայ», 1896, հոկտեմբեր, էջ 301:

իբրև արև անմերձենալի նկատելով, յուրաքանչյուր անհատ, որ կրում է իսլամ անունը կամ ճանաչում աստծո ահավորությունը, Գաբով-Արտցի հայ իշխան քաջազուն Հոլոյի որդի, հին իշխանազուն Գորգե ամիրայից, որդիներից և թե յուր բոլոր հպատակներից այժմ և հավիտյան հարկ չպահանջեն, ամեն տուրքերից ազատագրելովս...: Ի պատիվ Հոլոյան տոհմի իշխանական ընտիր արյան, Գորգե ամիրայի անպարտելի քաջության և անվախ ցեղին...»[1]: Սասունի լեռնականների խիզախությամբ, զենքի ուժով պատերազմի դաշտում նվաճած անկախության անդրանիկ հրովարտակն էր այս:

Սասունը հետագա երկհարյուրամյակում էլ կանգուն ու հպարտ մնաց իր լեռների պես: Լեռնագավառը հպատակեցնելու միտումով թուրքական-քրդական արյունածարավ հորդաների արած անհամար փորձերն անհաջողության մատնվեցին: 1806 թ. Ղ. Ինճիճյանը գրում է, թե Սասունի «Բնակիչք որոնք քուրդք և հայք, որոց երկոքին ևս զմի և զնոյն ազատութիւն ունին, արք յաղթանդամք և քաջասիրտք, երևելիք ի կորովութիւնս մարմնոյ, ահեղք ի պատերազմի, որոց միայն ստուարաթիւ հերաց մանաւանդ ոմանց ի նոցանէ ահացուցանէ զտեսօղսն, որք ի սկզբանէ անտի միշտ եղեն ինքնագլուխ, ոչ ունեք ծառայելով. և ոչ ոք ի փաշայից կամ ի պէյից կարող գտաւ զսոսա նուաճել, սակս զօրութենէ ուժոյ սոցա, և սակս ամուր վայրացն, յորս ապաստանեալ ոչ ունեք թողուն մուտս առնել: Ունին իւրեանց մասնաւոր պէյ ինքնագլուխ»[2]:

Սասունի անկախության երկարատև պահպանման գրավականներից էր և այն, որ տեղի հայ ու քուրդ ազգաբնակչությունը բարեկամական հարաբերությունների մեջ էին, ընդհանուր անվամբ կոչվում էին *սասունցի, ամիզատ* (հորեղբորորդի): «Շատ առաջներ, այս շրջանի հայերն ու քիւրդերը միութիւն կազմելով միշտ կռուեր են թուրք բռնապետական ռէժիմին դէմ ու մնացեր են կիսանկախ դաշտայիններու նման չենթարկուելով թուրք իշխանութեան»[3]:

Ինքնուրույն համայնքի իր իրավունքները պահպանելով, Սասունը 1800-1830 թթ. կառավարվում էր ռազմական դեմոկրատիայի սկզբունքներով: Քուրդ բեկը կամ հայ իշխանը, նրանց հետ կառավարող ընտրովի ավագանին տնօրինում էին երկրամասի գործերը, պատերազմի պահին մեկ մարդու նման ժողովրդին հանում մարտադաշտ: Կռվում էին տղամարդիկ, կանայք, նույնիսկ անչափահասները: Զինադադարի կնքման, հարկերի վճարման, օտարների հետ փոխհարաբերությունների մեջ մտնելու պահին խորհրդակցում էր ավագանին, բոլոր համայնապետերի մասնակցությամբ միայն վճիռներ կայացնում: Թուրքական ոչ մի կառավարիչ, հարկահան տակավին ոտք չէր կոխել երկրահատվածը, նույնիսկ դարի երկրորդ կեսին: «Օսմանցոց տերութեան մէջ Սասունցիք ևս ունին Փոքր Ասիայումը մէկ անկախ ազատութիւն, բայց նույնպէս անյայտ են մեզ և Եւրոպային, ինչպէս որ անյայտ էին Զէյթունցիք,- գրում է Գաբրիել Պատկանյանը 1863 թվականին: - Ո՞վ գիտե թե նոցա մէջ էլ ի՞նչ պատմութիւններ և ի՞նչ աւանդութիւններ կան. ի՞նչ է նոցա այսքան ժամանակ դիմանալու յաջողութիւնը. կամ ինչպէս է նոցա կառավարութիւնը: Ժամանակը իւր ոսկի բանալիով իհարկե կը բանայ մէկ օր մեր հայրենակցաց առջև այս պատմութեան դռները, և հայերը կիմանան որ Մայր Հայաստանը դեռ պահած ունի իրայ ծոցի մէջ իւր որդոցմէն մէկ քանի հազար հոգիք, որ տակաւին պահում են իրանց նախնեաց ազատութեան հոգին»[1]: Այստեղ խոսքը Զեյթունի ու հատկապես Սասունի մասին էր, որոնցից մեկն արդեն հերոսաբար ջարդել էր Ազիզ փաշայի հրոսակներին, իսկ մյուսը Բատման գետի վրա ընկած կամրջի շրջակայքում 1864 թվին, ճակատամարտ տալով սուլթանական բանակին, սկզբում հաղթեց, բայց հետո գերազանց ուժերի ճնշման տակ տեղի տվեց, նահանջեց և «... այդ թուականէն սկսած առաջին անգամ ըլլալով, թրքական կառավարական կազմը մտաւ Սասուն»[2]: Ուրեմն, մինչև 1864 թվականը Սասունը անկախ իշխանապետություն էր:

Դիարբեքիրի էյալեթում Սասունից բացի հայկական ազատ համայնքներ էին մնում *Սավուրը* և *Իսյանը:* Իսյան քրդերեն բառացի նշանակում է ապստամբություն, որը և բնորոշում է գավառի ազգաբնակչության իրավական դրությունը[3]: Իսյանի կազմում մտնող գյուղերում բնակվում էին քրդեր ու քրդախոս հայեր: Նրանք լավ հրաձիգներ էին, հինգ տարեկանից սկսած իրենց երեխաներին նշանախեցի վրա անվրեպ նշանառություն էին սովորեցնում: Հաղթանդամ, պատերազմասեր իսյանցին կռվի մեջ հաճույք էր զգում:

Իսյանցին ճարպիկ էր, հնարամիտ, խիզախ և, օգտվելով իր այս հատկանիշներից, միշտ էլ հաղթանակում էր և շուրջը փռում զոհերի դիակներ: Պատերազմի փողը հնչեցնելիս, մարտունակ ազգաբնակչությունն իր ունեցվածքը թաքցնում էր գաղտնատներում, կանանց ու երեխաներին տեղավորում լավ ամրացված, պարսպապատ ավաններում, իսկ ինքը շարժվում դեպի լեռնանցքներն ու կիրճերը, դիմադրելու արշավող հակառակորդին:

Հրացանածգության պահին թաքստոցներից կանայք ու երեխաները ուրախության ճիչեր էին արձակում, ռազմերգեր երգում: «Այնքան

---

[1] «Սուրճ», 1894, N 11-12, էջ 1652:
[2] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 200:
[3] *Յ. Շահպազեան,* Քիւրդօ-Հայ պատմութիւն, էջ 107-108:

[1] *Գաբրիէլ Պատկանեան,* Հայոց ազգի պատմութիւնը, Սանկտ Պետերբուրգ, 1863, էջ 268:
[2] «Արմենիա», 1952, մարտի 6-ը:
[3] *Լեո,* Հայոց պատմություն, հ. 3-րդ, էջ 150:

սիրելի էր նրանց համար պատերազմը, որ թշնամիների գալստյան լուրը ավետիս էին համարում»[1]:

Դիարբեքիրի փաշան 4500 զորքով 1782 թվականին արշավեց գավառի վրա, սակայն, 500 զինվոր կորցնելով, ունայնաձեռն վերադարձավ: 1785 թվականին Իսյան շարժվող թուրքական բանակը, գավառացիներից վախեցած, ճանապարհից ետ դարձավ: Թուրքերը 1789 թ. սպանեցին գավառապետին: Հորն հաջորդեց որդին: Նա շարունակեց պաշտպանել Իսյանի անկախությունը՝ մինչև Ռեշիդ փաշայի Անատոլիական արշավանքը՝ 1834 թվականը:

Արևմտյան Հայաստանի հայկական անկախ մյուս համայնքների վերաբերյալ եղած փաստերը սակավ են, բայց և այնպես, վավերական: Շատախի անկախության, Մոկսի դրության մասին Ղ. Ինճիճյանը 1806 թ. վկայում է, թե այստեղ «... *նստի մէլիք յազգէս հայոց. և ի գործ ածէ զամենայն իշխանութիւն և զդատաւորական պաշտօն, զի ոչ թողուն քուրդ պէյից նստիլ աստէն, որպէս և ի Մոկս*»[2]: Սավուր գավառի «...ինքնագլուխ և անկախ բնակիչք նորա, ըստ մեծի մասին յազգէս հայոց, որք են արք հզօրք և սաստիկ պատերազմօղք, իսկ ի քրդաց սակաւք»[3]:

Մուշի շրջանի մեջ մտնող *Ճապաղջուրի* գավառի հայերը, «անվանի իրենց քաջությամբ», XVIII դարի երկրորդ կեսին զենքի ուժով անկախություն էին վերանվաճել: Քրդական գերիշխանության ծանր հարվածներից խուսափելով, ճապաղջուրցիները հետագայում ստիպված էին զիջումներ անել, խանին որոշ հարկեր տալ, սակայն պաշտպանել իրենց անկախությունը և «զինեալ խաղաղութեան մէջ ապրիլ»[4]:

Գրեթե կիսանկախ վիճակում էր *Խնուս* գավառը: Այն անվանապես մտնում էր Բայազետի փաշայության մեջ և ուներ հայկական տասնյակ գյուղեր, ստվար բնակչություն: Կենտրոնը Բյուրակնյան լեռների արևելյան ստորոտում, լեռնաձորակի մեջ փռված բերդաքաղաքն էր՝ 4-5 հազար բնակիչներով: Խնուսի մասին Պ. Ա. Ժոբերը 1805 թ. ասում է. «...սակայն Հայաստանի այս մասում, կառավարության իշխանությունը համարյա թե չնչին է: Գյուղացիք զինված են և պատրաստ կռվելու քուրդերի հարձակումների դեմ, որոնց հետ հաճախակի կռիվներ են մղում և չեն վախենում ո՛չ սպառնալիքից, ո՛չ նախատինքից և ո՛չ էլ մահից»[5]:

---

[1] *Լեո,* Հայոց պատմություն, հ. 3-րդ, էջ 150: Տե՛ս նաև *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 161-163, 234-235, «Պատմական Հայաստանի սահմանները», էջ 85, 435-436:

[2] «Աշխարհագրութիւն», մասն Ա, էջ 163, տե՛ս նաև *Թ. Խ. Հակոբյան*, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, 1960, Երևան, էջ 371:

[3] Նույն տեղում, էջ 230:

[4] *Լևոն Սեթմեան*, Հայոց պատմութիւն, 1936, Գահիրէ, գիրք Գ, էջ 37:

[5] *Հովհ. Հակոբյան*, Ուղեգրություններ, հ. Զ, ԺԹ դար, էջ 208:

Երզրումի փաշայության մեջ էին մտնում *Տուժիկ և Մանազկերտ* գավառները, ուր ապրում էին քրդացած, ինչպես նաև լուսավորչական կրոնը պահպանող քրիստոնյա հայեր և շեյխհասանցի քրդեր: Երկիրը չափազանց հարուստ էր. հողը բերրի, պտղատու այգիներով ու ծառաստաններով զարդարված: Բնակիչներն արտադրում էին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր իրենց: Դրսաշխարհի հետ նրանք քիչ էին առնչվում, քանի որ «...գրեթէ ոչինչ իրենց կարօտին յարտաքուստ»[1] և «...ապա յաւելցուք *զՏուժիկ և զՄանազկերտ,* որք են *անկախ* ի փաշայէն Երզիռումայ»[2]:

Անկախ, կիսանկախ համայնքներ, Թուրքիայի գերիշխանությունը չճանաչող մի շարք գավառներ էին մնացել լեռնային Կիլիկիայում, հատկապես Տավրոսի լեռնակրծքին, Ադանայի, Հալեպի փաշայություններում, Մարաշի սանջակում: Դրանց մեջ ամենաուժեղը մերթ ժայթքող, մերթ մարող հրալեռան նմանվող *Ուլնիան էր, Զեյթունը,* որն հետագայում եղավ հույսն ու պարծանքը, ներշնչումի աղբյուրը՝ ստրկության շղթաների տակ հեծող հայ ժողովրդի:

Զեյթուն գյուղաքաղաքը գտնվում էր արևելյան երկայնության 36°53՝ և հյուսիսային լայնության 37°54՝ աստիճանների միջև, Մարաշ քաղաքից 38 կմ հյուսիս-արևմուտք, Ջիհան գետից 13 կմ արևմուտք, լեռներով շրջապատված մի վայրում[3]: Տավրոս և Սև լեռների իրար խաչաձևված լեռնային միջավայրում, Շուղի և Ջոր գետակների միացման տեղը, երկուսի միջև բարձրացող շեղ կողի վրա հիմնվել էր քաղաքը տակավին 1375-1409 թվականին՝ Ջուլկադիրների իշխանության շրջանում:

Բագրատունյաց, ապա Կիլիկիայի կործանված հայկական թագավորության աշխարհասփյուռ բեկորներն այստեղ խարիսխ գցեցին մահմեդական հորդաների հարվածների տակ, աստիճանաբար համախմբվեցին, կազմեցին ազատատենչ համայնք և ապրեցին անկախ դրությամբ:

Օսմանյան կայսրությունը XVII դարում փորձեց նվաճել Զեյթունը, սակայն չկարողացավ: Թույլերի հանդեպ անզիջում, հզորների առաջ ընկրկող Մուրադ IV սուլթանը, ջալալիների հարվածներից քայքայվող կայսրությունը նոր վտանգի տակ չդնելու զգուշավորությամբ, ստիպված էր սիրաշահել Արծվաբնի բնակիչներին, արտոնություններ տալ նրանց՝ «գլուխը նոր աղետի չենթարկելու մտավախությամբ»: 1036 թ. շեվալ ամսի 29-ին, այսինքն, 1626-27 թթ. և ոչ 1618 թ., *ինչպես կարծվել է մինչև օրս,* Մուրադ IV-ը Զեյթունի կիսանկախության ֆերման տվեց և գավառը ճանաչեց իբրև ֆերմանլը վակըֆ, պահանջելով 15000

---

[1] *Ղ. Ինճիճեան,* էջ 111:

[2] Նույն տեղում, էջ 65:

[3] «Էջմիածին», 1963, N ե, էջ 33:

դահեկան հարկ, որով պետք է ձեթ գնվեր Այա-Սոֆիայի մզկիթի կանթեղները վառելու և տաճարը լուսավորելու համար[1]: Սուլթանը միաժամանակ արգելում էր մահմեդական պաշտոնյաների մուտքը գավառ, բնակչությանն ազատում էր *գլխահարկ-ջիզիեից*, սակայն պարտադրում ևս 15000 դահեկան հարկ էլ վճարեն իրենց եկեղեցիներին. «Բաց յայսմանէ սոյն գաւառի մէջ թուրք պաշտօնեայ չի պիտի գտնուի... *այնպէս որ բնաւ մէկ կողմէ մը վնաս չհասնի այս բացառիկ ու ինքնավարական դրութեան, զոր շնորհած եմ անոնց՝ ինքզինքնին կառավարելու, առանց արտաքին միջամտութեան*»[2]:

Բարություն անելու միտումով չէ, որ Մուրադ IV-ը Զեյթունին շնորհել էր այս ինքնավարությունը, այլ զեյթունցին իր սրի ուժով էր նվաճել այն: Հիշատակություն կա, որ հետագա սուլթանները, մոռացության տալով հրովարտակի գոյությունը, Տավրոսի քաջ Դելի Քեշիշը (տեր Օհանը) 1835 թ. Պոլիս է մեկնում և վերավավերացնել տալիս փաստաթուղթը[3]: Հայտնի է նաև, որ արտոնագիրը պահպանվել է մինչև 1884 թ. Զեյթունի մեծ հրդեհը և շատ թղթերի և ձեռագրերի հետ միասին հրո ճարակ դարձել: Այնպես որ ժամանակակիցները, հետագա բոլոր ուսումնասիրողներն ընդունում են հրովարտակի գոյության փաստը:

1626-1627 թթ. հրովարտակն ստանալով, Զեյթունը չփրկվեց նոր աղետներից: Պատեհառիթ, սուլթանները բանակներ էին ուղարկում Ուլնիա, ջանում ծնկի բերել ըմբոստ լեռնականներին, բայց միշտ ջարդված ու հուսակտուր ետ էին դառնում: Թուրքական տիրապետության շրջանում իր ազատությունն ու անկախությունը պահելու համար Զեյթունը մղել է 36, թուրք գրիչների կարծիքով՝ նույնիսկ 42 պատերազմ: Կես հազարամյակում՝ 42 պատերազմ, ամեն 12-15 տարին մեկ՝ պատերազմ: Ամեն անգամ էլ՝ գյուղերի թալանում, ավեր, հրդեհ, մարդկանց կորուստ և կրկին վերաշինություն: Հայոց պատմության մեջ եզակի, աներևակայելի ու անհավատալի այս հրաշքը իրագործված է ազատության հանդեպ զեյթունցիների ունեցած սիրով, գավառում սահմանված վարչաքաղաքական կարգերով:

Շատ չէր անցել Մուրադի հրովարտակից, երբ թուրքական, ապա դրան հաջորդող Կոզան օղլուների զորաբանակները հերթականորեն իրենց ուժերը փորձում էին, ջանում տիրանալ Զեյթունին: 1780 թ. Մարաշի էօմեր փաշան մեծ բանակով ներխուժեց Ուլնիայի սահմանները, պաշարման օղակի մեջ առավ քաղաքը, յոթ ամիս շրջապատման մեջ պահեց այն, կտրեց դրսաշխարհից, ջանաց սովի սպառնալիքի տակ ծնկի բերել լեռնականներին, սակայն արդյունքի չհասավ: Հակոբ անունով զեյթունցին, ոչխարի մորթի հագնելով, անցավ օսմանյան բանակատեղը, սպանեց էօմեր փաշային, խուճապ առաջացրեց թշնամու բանակում, որից օգտվելով, գավառի պաշտպանները հարձակում գործեցին և հաղթեցին Մարաշի փաշայի զորքերին[1]:

1782 թ. վրեժխնդիր կառավարությունը Ալի փաշային հրահանգեց նոր արշավանք կազմակերպել Զեյթունի վրա: Քյուրդին կիրճում և Ղսաղի ճանապարհին դարանակալած հայ լեռնականներն այս անգամ ջարդում են օսմանյան բանակի մի մասը, ապա վճռական մարտեր տալով, ոչնչացնում մյուս հատվածը: Փոքրաթիվ զինվորներով Ալի փաշան ճողոպրում է և հազիվ գլուխն ազատում:

1782-1808 թվականներին, 26 տարի շարունակ, Զեյթունը հրաժարվեց նույնիսկ հրովարտակով նախատեսված հարկատվությունից և, օգտվելով թուլացած, գահակալած կռիվներով զբաղված կայսրության դրությունից, ամրացրեց իր դիրքերը, ապրեց «ապստամբական դրության» մեջ: Իշխանության գլուխն անցնելով, Մահմուդ II-ը զորք տվեց Մարաշի Կալանդեր փաշային և հրահանգեց նվաճել Զեյթունը: Թուրքական բանակը 1808 թ. օղակի մեջ էր առել բերդաքաղաքը և ինը ամիս շարունակ կտրել նրա ելքն ու մուտքը[2]: Ծայր առան սովը, հիվանդությունները: Գավառի բնակչությունը ոչնչացման վտանգի առաջ էր կանգնած:

Ավագների խորհուրդը որոշեց բանակցության մեջ մտնել թուրք փաշայի հետ: Նրանք համաձայնության եկան հարկ տալ Մարաշի կառավարչին, սակայն օսմանյան բանակն անմիջապես պիտի հեռանար, և հարգվեին իշխանապետության նախկին արտոնությունները: Հավանաբար այս օրերին էր, երբ Զեյթունի վճարած հարկաքանակը բարձրացավ 60 հազար դահեկանի[3], բայց մի քանի տարի միայն:

1818 թվականին Զեյթունն ապստամբած էր և հրաժարված հարկատվությունից[4]: Դրանում անշուշտ իր մասնակցությունն ուներ Սսի Կիրակոս կաթողիկոսը, որը և չվրիպեց Բերայի կուսակալի աչքից: «Ուլնեցի հայք (Զեյթունցիք),- բերվում է մի վավերագրում,- քաջ և արի ի պատերազմունս և ազատք յարքունի հարկաց չկամելով հարկատու լինել Օսմանեան կառավարութեան ապստամբեցան. բայց ի ճնշելն Օսմանեան տրաց միջնորդութեամբ և երաշխաւորութեամբ Կիրակոս կաթողիկոսի Սսոյ՝ ազատեցան»[5]: Որ հայերը ապստամբել էին և մերժել

---

[1] *Զեյթունցի (Մ. Սեմերճյան)*, Զեյթունի անցեալէն և ներկայէն, մասն Ա, Վիեննա, 1900, էջ 31:

[2] Նույն տեղում, էջ 31-32:

[3] *Յարութիւն Ս. Նաշալեան*, Զեյթունի քաջամարտիկ Տէր Օհանի քաջագործութեանց դրուագներէն, 1958, Պէյրութ, էջ 48-50:

[1] *Գր. Գալուստեան*, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 124-125.

[2] *Լևոն Ճերահեան*, Ժամանակակից ընդարձակ քննական պատմութիւն հայոց, Մարսէյլ, հ. Ա, 1933, էջ 181-182:

[3] *Ա. Պէրպէրեան*, Պատմութիւն Հայոց, էջ 98:

[4] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 9821, թերթ 16 ա:

[5] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 9, թերթ 56:

հարկի վճարումը 1818-1819 թվականներին, դա փաստ է, և այդ մասին վկայում են նաև այլ աղբյուրներ: Ինչ վերաբերում է Կիրակոսի միջնորդությանը, ապա իրողությունը փոքր-ինչ այլ է:

1810 թ. մայիսի 10-ին Կիրակոս կաթողիկոսը Սսի զառիվայրի վրա վերաշինել էր տվել ս. Սոֆիայի կաթողիկոսարանի հին շենքը. «Երեսբաց և ընդարձակ բնակարանով, և *խաչածև* դահլիճով»[1], 1818 թվականին Զեյթունը հրաժարվեց 1808 թ. պայմանագրությամբ վճարելիք հարկից: Բերայի փաշան Բ. Դռանը տեղեկացրեց այդ մասին, հավաստիացնելով, թե շարժման գլուխը Կիրակոս կաթողիկոսն է, որը «...պատրուակաւ շինութեան վանից կառուցանէ զամրոց մեծ ի Սիս, աշտարակս անմատչելիս և բրգունս բարձրաբերձս ի նմա հաստատեալ, և հայկազուն բնակիչս Զէյթուն քաղաքի որք անդստին թեկն ածեն ընդդէմ արքայի, գնացեալ միաբանեաց ընդ իւր, և զհամազգիս իւր որ ի Կիլիկիա...»[2]:

Մահմուդ II-ին հենց այսպիսի պատրվակ էր պետք Զեյթունի հպատակեցման և հատկապես Կիրակոս կաթողիկոսին մեջտեղից հանելու համար: Մարաշի փաշային նա հրահանգեց իր մոտ կանչել Կիրակոսին, սպանել նրան և ապա հիմնահատակ կործանել Զեյթունը: Թեմեր շրջագայելու պահին, կաթողիկոսը «հրավիրվեց» Մարաշ և լսեց մահագույժ հրամանը: Մեծագումար կաշառք տալով, հովվապետը կարողացավ թույլտվություն ստանալ Բ. Դռանը ներկայանալու և պարագաները մանրամասնաբար արքունիքին բացատրելու:

Կաթողիկոսը 1819 թ. ապրիլի 11-ին Կ. Պոլսումն էր: Պատրիարքի և ազդեցիկ ամիրաներից մի քանիսի միջնորդությամբ նա «ապացուցեց» իր «անմեղությունը»: Սուլթանը, սակայն, Կիրակոսից պահանջեց «երաշխավոր ու փոխանորդ» լինել Զեյթունին խոստանալ, որ տեղ հասնելուն պես կհամոզի լեռնականներին տարեկան 50 հազար դահեկան հարկ վճարելու: Կաթողիկոսի կտրուկ մերժումից հետո փադիշահն ստիպված առաջարկում է գոնե 20 հազար դահեկան վճարեն և ամենից կարևորը՝ հպատակվեն իրեն: Այստեղ ևս մերժում ստանալով և մայրաքաղաքում, Հունաստանում սկսված հուզումներից վախեցած, ծայրագավառին քիչ կարևորություն տվող սուլթանն ազատ արձակեց Կիրակոս կաթողիկոսին, հետաձգեց արշավանքը Զեյթունի վրա: Մինչև 30-ականների սկզբները Արծվաբույնը շարունակեց ապրել լիակատար անկախությամբ, ապահարկ կացությամբ:

Այսպիսով, XIX դարի առաջին երեսնամյակին Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում դեռևս կանգուն էին մի քանի հայ իշխանապետություններ, որոնց կառավարչական ներքին կարգուկանոնները ունեին ընդհանուր շատ գծեր և գլխավոր պատճառն էին այդքան ժամանակ նրանց անկախության պահպանման: Սակայն, եթե մյուս համայնքների վարչակարգերի մասին եղած փաստերը սակավ են, Սասունի մասին հայտնի է միայն, որ մի տեսակ «ժողովրդապետություն» էր, «հանրապետություն», ապա այդ բացը գալիս են լրացնելու Զեյթունի պատմությունը, նրա վարչակարգերի համեմատաբար պարզված լինելը:

Զեյթուն գավառը կառավարվել է սկզբում երկու, ապա չորս իշխանական տների կողմից: Այդ իշխանական տներից յուրաքանչյուրը կառավարում էր քաղաքի մի թաղամասը և նրան հարակից գյուղերը: Ամենահին իշխանական տունը Սուրենյանցն էր, սկզբնավորված 1545 թվականից, բաղկացած 30 տնտեսությունից, 7 ճյուղից[1]: *Յաղուբյանների* տունը հիմնադրվել է XVIII դարի վերջին: Հիմնադիրը Հակոբ իշխանն էր: *Ենիտունյաններ* (Նորաշխարհյանները) հնամենի անցյալ չունեին, իսկ Շովրոյանները (շորվա բառից է) բոլորովին նոր տոհմ էին: 1851 թվականին Կ. Պոլիս կանչված իշխաններն էին Մարտիրոս Սուրենյանը, Հովհաննես Շովրոյանը, Աստվածատուր Յաղուբյանը, Աստվածատուր Ենիտունյանը[2]:

Իշխանների իրավունքները ժառանգական էին, սակայն նրանք ընտրվում էին ժողովրդի կողմից: Ընտրությունը կատարվում էր ժառանգորդների մեջ համեմատություն անցկացնելով: Ընտրվում էին սովորաբար ամենախոհեմները, ճարպիկները, ռազմական մեծ կարողություն ունեցողները, ճակատամարտերից մեկում արդեն իրենց խիզախությունն ի հայտ բերածները: Ընդհանուր գավառին վերաբերող խնդիրները լուծելիս, իշխանները հավաքվում էին Զեյթունի *խորհրդարանում*, արքեպիսկոպոսի ու քեհեաների[3] (տեղական-գյուղապետներ, ևս ընտրովի) մասնակցությամբ, վիճաբանությունից հետո վճռական խոսքի իրավունքը վերապահելով *իշխանապետին* կամ հոգևոր առաջնորդին, ապա կայացնում վճիռը:

Ֆեոդալ իշխանապետերից, գյուղատեր, ոչ այնքան դաժան, բայց և այնպես, գյուղացիությանը շահագործող վերնախավից կազմված վարիչների կառավարման այս ձևը, որտեղ գնալով դասակարգային տարբերակումը խորանում էր[4], զարմանք է պատճառել Թուրքիա այ-

---

[1] *Մ. Օրմանեան,* Ազգապատում, հ. Գ, 1961, Պէյրութ, էջ 3403:

[2] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 9821, թերթ 16, «Գանձարան նամակաց», որը գրված է Փեշտիմալճյան Գրիգոր գերիմաստ վարժապետ Կոստանդնուպոլսեցու ձեռքով 1833 թվականին, տե՛ս նաև «Սիսուան», էջ 217-218, «Ազգապատում», հ. Գ, 1961, էջ 3403:

[1] *Գր. Գալուստեան,* Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն, էջ 97-98:

[2] Մաշտոցի անվան մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 158, վ. 39:

[3] *Գ. Պատկանեան*, Հայոց ազգի պատմութիւնը, 1863, էջ 265:

[4] Տե՛ս *Մ. Ներսիսյան,* Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 111:

ցելած եվրոպացի ուղեգիրներին: Վ. Լանգլուայի կարծիքով այն «հանրապետական» բնույթ ուներ, իսկ Էլիզե Ռեկլյուն ավելացնում է. «մի հայկական դաշնակցութիւն բաղկացած վեցը փոքրիկ հասարակապետական հասարակութիւններից»[2]: Դաշնակցությունն արտահայտվում էր հետևյալում.

Զեյթուն գավառը բաղկացած էր 29 գյուղերից, ուներ 27460 հայ ազգաբնակչություն, 8334 մահմեդականներ: Այս «...տասն գիւղերը *կազմում են մէկ դաշնակցութիւն, որոց մէջ կան զէյթունցի հայեր* և խոզան-օղլու ցեղի թիւրքմէններ»[3]: Ապա Գ. Պատկանյանը ավելացնում է, թե այս կոնֆեդերացիան «... ունի իւր մէջ մէկ հասարակապետական կառավարութիւն, որոյ գլխաւոր կառավարիչք են իւրեանց մէջէն ընտրած չորս *իշխանք*...: Սոքա ամէն-մէկը են համանգամայն Զէյթունի տէրութեան չորրորդ մասին կառավարիչք, և իրանց վրայ կրելով *նախարար (դադի)* պատուանունը, իւրեանց իշխանութեան ներքոյ ունին *տեղակալ (քեահիայ)* գիւղօրէից կառավարիչ, որոց մէջ վերը յիշած ժամանակ (դարակեսին - Հ.Ղ.) երևելի էր Կարապետ Քեահիան:

Սոցա ժողովարանը է Զէյթունի մէջ, ուր որ ունին խորհրդարան, և խորհուրդի ժամանակը իրանց նախագահ են նստեցնում Զէյթունի առաջնորդին՝ որ քաղաքական կառավարութեան գործերու մէջ չէ խառը»[4]:

Ըստ Վ. Լանգլուայի, Գ. Պատկանյանի և այլ հեղինակների, Զեյթունի կոնֆեդերացիան արտահայտվում էր գավառի հայերի ու թուրքմենների միջև կնքված, գրավոր թե բանավոր պայմանադրությամբ:

Զեյթունի վարչակարգերի, հատկապես հայ-թուրքմենական դաշնադրության մասին եղած այս կարծիքը հաստատում է և ավելի հավաստի տեղեկություններ է հաղորդում Ուլնիայի Տեր Մովսես քահանան, որը հերոսական ապստամբության հաղթանակից հետո Կ. Պոլիս առաքվեց իբրև պատվիրակ, 1862 թ. գրել տվեց իր հուշերը: Երուսաղեմի մատենադարանում պահվող այդ հուշերում ասված է. «Այս նահանգը (իմա Զեյթունը), որ Հայաստանի Գարատաղն է, երեք ոստիկանութեան բաժնուած է. այն է Զէյթունի, Ալապաշի և Մուխալի: Այս վերջինը գլխաւոր տեղին արևմտեան կողմը և երեք ժամ անկէ հեռու կիյնա:

Այս գլխաւոր երեք տեղերուն ամէն մէկը շատ գիւղեր կը պարունակէ իր մէջը: Զէյթունի նահանգին կառավարութիւնն ալ նորէն Զէյթունի

[1] «Մասեաց աղաւնի», 1856, N 6:

[2] *Էլիզէ Ռեկլյու*, Լազիստան, Հայաստան և Քիւրդիստան..., Վաղարշապատ, 1893, էջ 95:

[3] *[Գաբրիել Պատկանեան]*, Հայոց ազգի պատմութիւնը, էջ 265:

[4] Նույն տեղում:

քաղաքին մէջն է, և Չորրորդապետութիւն մը, որ չորս հայազգի անձանց ձեռքն է... Միւս երկու Ալապաշ և Մուխալ գիւղերուն ոստիկանութիւնն ալ քեհեաներուն ձեռքն է, որոնք վերոհիշեալ չորս գլխաւորներուն կեդրոնական կառավարութենէն կախուած են:

Այս նահանգին բոլոր բնակիչները զմիաբանեալ հայազգի են, վերոյիշեալ 2, Պեշին և Քեթքմենէն զատ, որոնց բնակիչք տաճիկ են, բայց Զէյթունի կառավարութեանը հպատակ ըլլալով, մզկիթ չունին և հայերէն կը խօսին... Զէյթունի սահմաններէն անդին արևմտեան կողմը եղած երկիրն ալ անկախ է, զոր հագակաւոր Խոզանօղլուն կը կառավարէ»[1]:

Այսպիսով, Զեյթունը կառավարվել է կոնֆեդերատիվ սկզբունքներով, որն արտահայտվել է նախ չորս հայ իշխանների միջև դրված դաշնադրությամբ, ապա և Զեյթունի, Ալապաշի ու Մուխալի կառավարիչների փոխհամաձայնությամբ: Դաշնադրություն է եղել նաև հայերի ու թուրքմենների միջև: Մեկ խոսքով, անառարկելի է կոնֆեդերացիայի գոյության փաստը Ուլնիայում:

Ըստ երևույթին, նման վարչակարգեր կամ կոնֆեդերացիայի նույնատիպ ակտեր են գոյություն ունեցել հայկական մյուս անկախ իշխանությունների մեջ ևս, քանի որ ամենուրեք, առանց բացառության, *հայերն ու քրդերը խառն էին բնակվում և օսմանյան հզորությանը դիմագրավում միասնաբար, իրար հետ վարվում բարեկամաբար, իբրև զենքի հավասարազոր ընկերներ, պաշտպանում երկու ժողովրդին հավասարապես թանկ ազատությունն ու անկախությունը:*

4. Հողատիրության ձևերն ու հողատիրական հարաբերությունները

Մինչթանզիմաթյան հնամաշ կայսրության, նրա կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի *ագրարային օրենսդրությունը* տակավին հիշեցնում էր մռայլ միջնադարը: Ֆեոդալական հնամենի տնտեսակարգի վրա խարսխված, միջնադարականության թանձր շղարշով պարուրված Թուրքիայում դեռևս գործադրության մեջ էին երկու, գուցե և երեք հարյուրամյակ առաջ հրապարակված հողատիրության հնօրյա կոդեքսները, հարկահավաքման երբեմնի չափերն ու հարկապահանջության ձևերը:

XIX դարի սկզբներին Արևմտյան Հայաստանն ու հայաբնակ նա-

[1] Երուսաղեմի մատենադարան, ձեռագիր 2738, «Զէյթունի 1862 թվականի անցքերը», գրված 1862 թ. դեկտեմբերի 31-ին, թերթ 2:

հանգները ևս շարունակում էին մնալ հետամնաց ագրարային երկրամասեր, որտեղ գյուղատնտեսական եկամուտներով ապրող, ինչպես նաև սեփական աշխատանքով հողատերերին ծառայող, երկրագործությամբ ու անասնապահությամբ պարապող ազգաբնակչությունն էլ *երկփեղկված էր հողատեր ֆեոդալների և աշխատավոր գյուղացիության:* Սրանք էլ իրենց հերթին համահավաքում էին սոցիալական, ունեցվածքային, ինչպես նաև իրավական տարբեր դրություն ունեցող հասարակական դասեր:

Ֆեոդալների դասակարգն Արևմտյան Հայաստանում հիմնականում մահմեդականներն էին: Երկիրը, քանի որ բաժանված էր թուրքահպատակ և քրդահպատակ շրջանների, ընդհուպ մինչև 1840-ականների վերջը, հողատեր ֆեոդալներն էլ առաջինում մեծամասնությամբ թուրքերն էին, երկրորդում՝ քրդերը, մասամբ և ասորիներն ու հայերը:

Երկրի ամենախոշոր ֆեոդալը, թուրքահպատակ շրջանների հողային կալվածքների մի ստվար մասի տերը սուլթանն էր: Նրանից հետո, ըստ պաշտոնի ու ըստ ունեցվածքի, խոշոր հողատերեր էին մեծ վեզիրը, բեյլերբեյերը, միրիմիրաները, սանջակբեյերը:

XIX դարի սկզբին Էրզրումի Ահմեդ փաշան 1200 հոգուց բաղկացած իր բանակը պահում էր, կերակրում, հագցնում, զինում նահանգում «ունեցած» հողերից ստացված եկամուտների հաշվին[1]: *Էրզրումի, Կարսի, Ախալցխայի, Սեբաստիայի, Ադանայի, Տրապիզոնի* փաշայություններում հողատեր ֆեոդալները թուրք զինվորականներն էին, սիպահիները, ենիչերի աղասիներն ու ենիչերիները, առևտրավաշխառուական ճանապարհով կամ բռնությամբ հողեր ձեռք գցող թուրք ավատատերերը: Քրդական տարրը վաղուց չէ, ինչ տարածուն ու հաստատ հիմքեր էր գցել Էրզրումի, Կարսի, Ախալցխայի մարզերում, զենքի ուժով խլել հայերի հողերը, անցել նստակյաց կյանքի: Սակայն ընդհանուր առմամբ այս նահանգներում հողատեր էր թուրք վերնախավը:

Ախալցխայի սանջակի հողատարածությունների մեծ մասը, Մահմուդ II-ի ֆերմաններով, ամրացված էր թուրք թիմարլիներին: 1822 թվականին տրված, ապա 1823 և 1827 թվականներին վերահաստատված մի ընդարձակ հրամանագրով սանջակի հողերից 10.250 ակչե տրվում էր Սուլեյմանի որդի Ահմեդին, իսկ վերջինիս մահվանից հետո փոխանցվում նրա ազգականներին[2]: Սանջակի 41 հազար արտավար, մշակելի պետական հողերը 1827 թվականին արդեն դարձել էին թուրք կալվածատերերի սեփականությունը, որի մասին Մահմուդ II-ը խորհրդակցում էր Սեյիդ Ահմեդ փաշայի հետ, ջանում գոնե հարկեր գանձել դրանցից[3]:

---

[1] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, էջ 63-68:
[2] ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆոնդ 17, գործ 57, թերթ 13:
[3] Նույն տեղում, թերթ 14-15:

Չըլդրրի սանջակի խոշոր հողատեր կալվածատերերը նույնպես թուրքերն էին: Նաղի բեկը, Թուրսուն աղան, Օսման աղան, Հուսեին աղան և մի քանի այլ թուրք ֆեոդալներ իրենց մեջ էին բաժանել սանջակի գյուղերի մշակելի հողերի մեծ մասը՝ անտառները, արոտավայրերը և հարկեր էին գանձում գյուղացիներից: Նրանք հողեր էին ձեռք բերել նաև Կարսի փաշայության մեջ և, նստած կենտրոնական քաղաքներում, վայելում էին հարկահանների հասցրած եկամուտներից: 1828 թվականին Նաղի բեկին էին «պատկանում» նաև Չըլդրրի և Կարսի օգտագործելի հանքերը, որոնք շահագործման էին տրվում հայերին ու հույներին և հարկեր վերցնում վերջիններից:

Հարավային Հայաստանի քրդահպատակ ու քրդաբնակ շրջաններում՝ Դիարբեքիրի, Վանի, Բայազետի փաշայություններում, կային այնպիսի քուրդ հողատեր ֆեոդալներ, որոնց ուժը, հզորությունը, հողային կալվածքները զարմանք են պատճառել եվրոպացի ուղևորներին, առիթ տվել համեմատելու միջնադարի արևմտաեվրոպական կալվածատերերի հետ:

Բիթլիսի իշխանության գլուխ նստած շերեֆների տոհմը, նրա մեջ մտնող մանր ու խոշոր ֆեոդալներն ունեին հողային հսկայական կալվածքներ, բերդեր, ամրոցներ, պահում էին մինչև 75 հազար զորք[2]: Հայերի հողերը նրանք դարձրել էին իրենց սեփականությունը և հաճախ նրանց վռնդում էին քաղաքներից, խլում ու տիրանում վերջիններիս կալվածքներին, նույնիսկ բնակելի տներին[3]:

XIX դարի առաջին կեսին Բոհտանի ու Ջեզիրեի՝ տերը Բեդերխան բեյն էր, մի հզոր ու դաժան կալվածատեր: Սրա հողերը սփռված էին հայկական բազմաթիվ շրջաններում[4]: Նա ուներ անթիվ ու անհամար կալվածքներ, քմահաճորեն հավաքում էր հարկեր, նույնիսկ անկախ պետություն ստեղծելու փորձեր էր անում[5]:

Հարավային Հայաստանի նահանգներում, մանավանդ XIX դարի առաջին երեք տասնամյակներին, քրդական վերնախավը հղփացել էր, օգտվելով պետության թուլությունից, քրիստոնյա ու մահմեդական աշխատավորության անպաշտպան դրությունից, խլել էր նրա հողատարածությունները, դրել հարկատվության ծանր բեռի տակ: Հատկանշական է նաև այն, որ քրդական թափառաշրջիկ, վրանաբնակ ցեղերի մի փոքր մասն այս էտապում անցնում էր նստակյաց կյանքի, զբաղվում հողագործությամբ, կառուցում բնակելի տներ: Ազատ հողատարածություններ չկային: Նրանք այդ բանն անում էին հայերի

---

[1] ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆոնդ 47, գործ 75, թերթ 64, 73, 75:
[2] «Պատմական Հայաստանի սահմանները», էջ 444-445:
[3] *В. Никитин,* Курды, 1964, Москва, стр. 247.
[4] «Արև», 1925, մարտ, N 1852:
[5] *Անդրանիկ,* Տերսիմ, 1901, Թիֆլիս, էջ 51:

հաշվին, բռնության ու բիրտ ուժի միջոցով խլում ռայայի կալվածքները, երբեմն էլ տներն ու այգիները:

Թուրք ու քուրդ վերնախավից զատ, Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում կային նաև *հայ ֆեոդալներ*, հողատեր կալվածատերեր: Վանական ու եկեղեցական հողատիրության կողքին գոյացել էին աշխարհիկ հողատերեր հայկական գրեթե բոլոր նահանգներում, որոնք իրենց կալվածքները ձեռք էին բերել գնման, անձնական քաջագործության, այս կամ այն փաշային, քուրդ խանին ծառայելու և այլ միջոցներով:

Դարամուտի Վասպուրականում *Դանկովյանների* հայտնի տոհմն ուներ հողային ընդարձակ կալվածքներ, «դանակ կրելու արտոնություն»[1]: Արճեշի մեջ թարխանության իրավունք ստացած մի մեծ գերդաստան կար, որն ազատ էր հարկատվությունից, տիրել էր յոթ գյուղերի: «Օսմանեան սուլթան մը ֆերմանով ճանչցեր էր անոնց թարխանութիւնը»[2]: Վանի սանջակումն էր Գործոթ գյուղի հայ մելիքը[3]: Իսկ քաղաքումն էին նստում իշխանաց իշխան պարոն խոջա Արխիջան Գարասեֆերյանը[4], Մկրտիչ իշխան Գասպարյանը, Գրիգոր աղա Հակոբյանը, Հակոբ իշխան Սաֆարյանը[5]: Մասնավոր սեփականատիրական հողերից բացի, սրանք ունեին խանութներ, Այգեստան և Արարոց թաղերում փռված այգիներ, տներ, ձիթհաններ:

Չարսանջակի վրա բռնացող քուրդ դերեբեյների կողքին կային հայ մելիքներ, իշխաններ[6]: Բայազետի փաշայության մասերին տիրող Բեդեր-խան բեյի, Մահմուդ և Ավդալ խաների խորհրդականները հայ իշխաններն էին: Քուրդ բռնատերերի տնտեսությունը վարող, քաղաքականությանն ուղղություն տվող Միր (իշխան) Մարտո Բաշկալեցին, Հովհաննես Մանոգյանը «Աստղ», և շատ ուրիշներ, իրենց քաջությամբ ու խելքով նվաճել էին ոչ միայն «տերերի» համակրանքը, այլև գյուղեր, ագարակներ, պահում էին անասունների նախիրներ, ազատ էին հարկերից ու պարհակներից:

Սասունում, Տարոնում, դաշտային ու լեռնային համայնքներում, Հաճընի շրջանի հողատեր ֆեոդալների գերակշռող մասը հայերն էին: Զեյթունի չորս իշխանական տները Ենիտունյանները, Սուրենյանները, Շովրոյանները, Յաղուպյաններն իրենց մեջ էին բաժանել քաղաքի թաղամասերը, հայ և թուրքմեն շրջակա գյուղերը և իբրև սեփականատերեր, գյուղացիներից հարկ էին ստանում:

---

[1] «Քիւրդօ-Հայ պատմութիւն», էջ 71:
[2] Նույն տեղում:
[3] *Գ. Սրվանձտեանց*, Մանանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 122:
[4] Նույն տեղում, էջ 359:
[5] Մատենադարան, ձեռագիր 9424, թերթ 39, 55, 70, 71:
[6] «Արև», 1925 թ. մարտի 27, N 1852, «Պատմական Հայաստանի սահմանները», էջ 97:

Այսպիսով, Հայաստանի ու հայաբնակ նահանգների հողատեր ֆեոդալների դասակարգը ըստ ազգության բազմատարր էր: Կային թուրք, քուրդ, ասորի, աֆշար, հայ հողատերեր: Սրանք բոլորն էլ ապրում էին աշխատավոր գյուղացիության հաշվին, նրանից գանձած հարկերի, ունեցվածքի կողոպտման, անտանելի ճնշումների ու խոշտանգումների միջոցներով կորզած եկամուտներով: Ռայայի հետ վայրագորեն էր վարվում, բարբարոսության աստիճանի հասնող կեղեքումներ սահմանում քրդական վերնախավը: Սակայն իր տեսակարար կշռով Արևմտյան Հայաստանի հողատերերի մեծ մասը տակավին թուրքերն էին:

Թուրքիայի ու հպատակ այլազգիների երկրամասերում ապրող ու աշխատող ազգաբնակչության գերակշռող մասը, արտադրող դասը աշխատավոր գյուղացիությունն էր, որն իր սոցիալական դրությամբ միատարր չէր: Գավառահայության ամենաստվար բեկորը իրավականորեն ազատ գյուղացիությունն էր: Սրա փոքր մասն ուներ սեփական հողեր, մյուս մասը մշակում էր պետական հողեր, մի հատվածն էլ ապրում էր վակուֆային հողերի հաշվին: Եթե հայկական ազատ համայնքների գյուղացիության գոյավիճակը կայուն էր, ապա քրդապատկան շրջաններում այն չափազանց հեղհեղուկ էր, երբեմն էլ հավասարվում էր ճորտերի իրավիճակին:

Հայկական կիսանկախ կամ ֆերմանը գավառների սոցիալ-քաղաքական դրության պատմությանն անդրադարձող օտար ու հայրենի պատմաբանները, ուղեգիրները, ականատեսները միաբերան վկայում են, թե *Զեյթունում, Սասունում, Մոկսում, Սավուրում, Ճապաղջրում* և այլ երկրահատվածներում գյուղացիությունը ոչ միայն լիակատար ազատ էր ճորտական կապանքներից, այլև ուներ սեփական կալվածքներ:

Նստակյացները բռնագրավում էին հողեր, դարձնում սեփականություն և սահմանում ֆեոդալական կախվածության ուրույն, դաժան ու անտանելի ձևեր: Օրենքով այս գավառներում հայ և քուրդ գյուղացին ճորտացված չէր, իսկ *իրականության* մեջ նրանց վիճակը ոչնչով չէր տարբերվում ճորտերի դրությունից: Իրավատնտեսական կախման ամենացայտուն պատկերը խաֆիրության ինստիտուտն էր, որը ծայր էր առնում վաղուց ի վեր, սակայն ավելի տարածուն ու տիրապետող է դառնում XIX դարի երկրորդ կեսին[1]:

Քուրդ և եզիդի աշխատավորության բարեկամ Խ. Աբովյանը, եվրոպական ու ռուսական աղբյուրների մատակարարած նյութի իմացությամբ, ականատեսի ու ժամանակակցի վկայությամբ, 1846 թ. հաղորդում է (հոդվածը սկսել է գրել 1844 թվականից), որ Արևմտյան

---

[1] *Գեղամ Տ. Կարապետեան,* Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, 1911, Կ. Պոլիս, էջ 32-33:

Հայաստանի աշխատավորությունը, քուրդ ու հայ ռայան վրանաբնակ քուրդ ցեղապետերի ճիրաններում արյունաքամվել էր մինչև Ռեշիդ փաշայի արշավանքը: «Քրիստոնյաները, հատկապես հայ դժբախտ ժողովուրդը և *նեստորականները նրանց ստրուկներն են բառիս բուն իմաստով:* Խոտառատ լեռներից և հովիտներից իջնելուց հետո նրանք իրենց անհամար ոչխարների և եղջերավոր անասունների հոտերը ձմռան խիստ և երկարատև ամիսներին պատսպարում էին հայերի մոտ, առանց որևէ վարձատրության: Դրա համար էլ սրանք ստիպված էին տարվա պատշաճ եղանակին անչափ կեր ու ձմեռվա պաշար պատրաստ պահելու, որպեսզի ազատ մնային նրանց զարհուրելի վրեժխնդրությունից: *Ոչ մի օրենք, ոչ մի իշխանություն չէր կարող պաշտպանել սրանց այդ ճնշումից:* Ամենաթեթև դիմադրությունը հատուցվում էր ամենավայրագ դաժանությամբ: ... *Հարևան երկրների թագավորները և իշխանները դողում էին նրանց վրեժխնդրությունից»*[1]:

Այսպիսով, XIX դարի առաջին չորս տասնամյակներին արևմտահայ գյուղաբնակչության աշխատավորական մասը տրոհվել էր ազատ գյուղացիների և կախյալների: Կախյալ գյուղացիությունը տարածված էր հարավային Հայաստանում, Վանի, Դիարբեքիրի էյալեթներում, մասամբ էլ թուրքապատկան մարզերում: Եթե գյուղացու դրության կիսաճորտական լինելը կարող է վիճարկության առարկա դառնալ, վիճարկող երկու կողմերի ձեռքին էլ կռվաններ տալով, ապա *փոքրաքանակ* ստրուկների գոյությունն անվիճելի է, կասկածից վեր ու պետության կողմից խրախուսվող:

Ստրուկներ կային Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր նահանգներում, սկսած խոր միջնադարից, մինչև XX դարասկիզբը: Էրզրումի 1540 թ. «Կանուն նամեն» ստրուկներ գնողին պարտադրում էր բերել և հանձնել կայսերական խասերի էմիրներին, իսկ Ամիդին վերաբերող օրենքը սպիտակամորթ ստրկավաճառից պահանջում էր 50 ակչե հարկ տալ, սևամորթ վաճառողից 25 ակչե: Ուրեմն ստրկություն, ստրկավաճառություն եղել է միջնադարում, որը շարունակվել է նաև XIX դարի առաջին քառորդին[2]:

1812 թ. Վիլյամ Աուզլեյը, Թավրիզից վերադառնալով, Կարինում ականատես է եղել, թե ինչպես թուրք ենիչերին վրացուց հափշտակել էր նրա աղջկան և ցանկանում էր վաճառքի հանել շուկայում: Հայերը փող էին հավաքել, աղջկա փրկագինը տալու, սակայն ենիչերիի պահանջած գումարը մեծ էր: Նա ավելացնում է, «...հիշատակված էր, որ

[1] *Խ. Աբովյան*, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, 1958, Երևան, էջ 248 (ընդգծումները մերն են - Հ. Դ.):

[2] «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 26, 74:

այս տեղերից մեկում բազմաթիվ վրացի աղջիկներ ցուցադրված էին հրապարակային վաճառքի, ինչպես նաև մի քանի տղաներ, որոնք վերջերս թուրքերը ձեռք էին բերել ռուսական ճակատից ուրիշ կողոպուտների հետ»[1]: Սակայն մարդավաճառությամբ պարապողները ոչ թե միայն գերիներին էին իրար ծախում, այլ հատուկ խմբեր ունեին, որոնք գալիս էին Ռուսաստան, Վրաստան, Պարսկաստան, փողով գնում ռուս, վրացի գեղեցիկ աղջիկների, տղաների, տանում Թուրքիա, թանկ գներով վաճառում: Նրանք գործելու ազատ իրավունք ունեին Թուրքիայում, իսկ Կ. Պոլսի շուկաներում անարգել, մունետիկների օգնությամբ կատարում էին գործարքներ, նույնիսկ խաներից, փաշաներից պատվերներ ստանում աղջկա կամ տղայի տարիքի, արտաքինի, հասակի, գույնի, դրանով իսկ պայմանավորված, գնի վերաբերյալ, կարճ միջոցում, փողով, թե մարդորսությամբ, կատարում նրանց պահանջները:

Սակայն բռնությունից բացի, աղքատությունն ու թշվառությունը ևս «պարտադրում» էին Քուրդստանի մայրերին, կարիքից դրդված, վաճառել իրենց զավակներին: Ականատեսը պատմում է, թե ինչպես Դիարբեքիրում քուրդ մայրը սակարկում էր երկու չքնաղ, փոքրահասակ աղջիկներին վաճառելիս, իսկ գնորդն էլ արծաթե «25 մեճիտեով առնելով», «զանոնք պիտի կրթէ ու իր մօտիկ ազգականներուն կնութեան տայ»[2]:

Մարդավաճառությունն ու ստրկությունն այնքան տարածված էին Թուրքիայում, որ գերմանական դիվանագիտական աշխատողները կշտամբում էին Անգլիային, Ֆրանսիային, նույնիսկ Ռուսաստանին, որոնք իբր Աֆրիկայի ստրկավաճառությունը դատապարտում էին, մինչդեռ Թուրքիային թույլ էին տալիս ազատ, նույնիսկ մայրաքաղաքում մարդիկ վաճառել, ստրուկներ պահել[3], այն էլ քրիստոնյաներից: Սակայն իր տեսակարար կշռով ստրկությունը էական տեղ չէր բռնում Թուրքիայի ազգաբնակչության կառուցվածքի մեջ:

[1] «Ուղեգրություններ», հ. Զ, էջ 484-485:

[2] «Քիւրդօ-Հայ պատմութիւն», էջ 115:

[3] "История турок от начала турецкого народа до наших времен", СПб, 1829, перевод с немецкого, стр. 172-173.

5. Հարկային հարստահարություններն ու սոցիալական ճնշումները

XIX դարի առաջին քառորդի Թուրքիան արդյունագործությունից եկամուտներ քիչ էր ստանում: Սակավաթիվ էին պետական ձեռնարկությունները, այդ իսկ պատճառով արքունիքը, ոստիկանությունը, աշխարհիկ ու հոգևոր վերնախավային դասերը հիմնականում ապրում էին, վայելում գյուղատնտեսությունից ստացված եկամուտների հաշվին: Գյուղատնտեսությունն էլ տակավին խանձարուրի մեջ էր և չէր կտրվել արտադրության միջնադարյան մակարդակից: Պրիմիտիվ ու հնամենի էին մնում արտադրության միջոցները: Հողը մշակում էին այնպիսի արորներով, որոնցով կարծես թե «Նոյն էր չանգռել Արարատի հարթավայրերը»: Գրեթե բացակայում էին ոռոգման սիստեմները: Խոսք չկար իսկական պարարտացումների մասին:

Աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակը համընդհանուր երևույթ էր Թուրքիայի ու Հայաստանի գյուղատնտեսության համար: Այն պայմանավորված էր ոչ միայն արտադրամիջոցների հետամնացությամբ, այլ նաև երկրագործի անձնական շահագրգռվածության թուլությամբ, նրա ունեցվածքի ու կյանքի ապահովության բացակայությամբ, խանա-փաշայական վարչակարգերին բնորոշ պարբերական թալանի առկայությամբ, մոլեգնող ավազակախմբերի անարգել գործունեությամբ: Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում տուժողը գյուղացիությունն էր, որը տալիս էր բազմաթիվ ու բազմապիսի հարկեր՝ սեփական վաստակով գոհացնում խասատեր սուլթանից ու քուրդ խանից սկսած, վերջացրած սիպահիով ու խաֆիրով:

Հարկային բեռի ծանրությունը, հարկատեսակների անհամամասնությունը, հարկագանձման *անօրինաչափությունը* Թուրքիայի վարած տնտեսական քաղաքականության *օրինաչափություններն* էին, որոնք բացառում էին ընդհանուր կայսրության, նույնիսկ միայն Արևմտյան Հայաստանի համար միանման հարկաչափերի սահմանումը և ստեղծում ժողովրդի սոցիալական հարստահարման հարցի շուրջ հնարված մի այնպիսի խճճված թելակծիկ, որի պարզաբանումը, ճշգրիտ պատկեր տալը, հակասական փաստերի առկայությամբ և դարուկես հեռավորությամբ, այնքան էլ հեշտ չէ: Մոտավոր նկարագիրը հետևյալն է. Արևմտյան Հայաստանի թրքահպատակ շրջաններում գյուղացին հարկեր էր վճարում *պետությանը*, թուրք հողատերերին՝ *զամիներին ու թիմարլիներին, խասատերերին:* Քրդապատկան մարզերի աշխատավորությունը վճարում էր քուրդ *խաներին, բեկերին, պետությանը, խաֆիրներին:* Գավառահայությունը տուրքեր էր տալիս հայ եկեղեցուն ու վանքերին՝ բոլոր նահանգներում: Անկախ և ֆերմանը համայնքների ազգաբնակչությունը պետական ու խաֆիրական տուրքերի մեծ մասից ազատ էր, մինչդեռ վճարում էր իշխաններին, մելիքներին:

Արևմտյան Հայաստանի գյուղացիության վճարած հարկերից ամենածանրը *աշարն էր՝ ուշարը, ուշրը:* Հարկը կազմելու էր հողից ստացված տարեկան եկամտի 1/10 մասը, դրա համար էլ անվանապես կոչվում էր *տասանորդ*, որի փաստացի չափի և գանձման եղանակների ու տարատեսակների պատկերն իրականության մեջ ավելի բարդ էր, քան թղթի վրա ու օրենսդրական ակտերում:

Ախալցխայի փաշայության պետական հողերի վրա նստած գյուղացիները 1828-1829 թթ. աշար էին վճարում բերքի 20 տոկոսի չափով՝: Պոնտոսի դաշտերի, Տրապիզոնի նահանգի, Շապին Գարահիսարի գյուղացիները 1807-1808 թթ. հիմնականում ցանում էին գարի և վճարում «հողի արտադրության մեկ հինգերորդը»[2]: 1827-1828 թթ. թուրք ու քուրդ գյուղացիներից Բայազետի փաշան աշար էր հավաքում տասից մեկը, հայերից՝ եկամտի յոթը մասից մեկը[3]: Նա միաժամանակ գյուղացուց գանձում էր *թոփրախ-խարաջ* անունով հողահարկ, այսինքն՝ այն երկրագործները, որոնք գութան ունեին, պարտավոր էին հատուկ հարկ տալ՝ տասանորդին կից և նրա հետ միացված[4]: Ուրեմն, տասանորդը տարբեր նահանգներում, նույնիսկ տարբեր գավառներում, տարբեր չափեր է ունեցել, ինչպես նաև գանձման ոչ համանման եղանակներ: Ըստ որում, միշտ էլ հարկը քրիստոնյաներից ավելի են գանձել, քան մահմեդականներից: 1830 թ. Էրզրումի փաշայության Դերջան գավառում Իսմայիլ բեկը հայերից աշարը վերցնում էր կրկնակի համեմատած իսլամ գյուղացիության վճարածին: Աշարաչափը հասնում էր եկամտի 25 տոկոսին:

Սուլթաններին, հողատեր, զինվորական ավագանուն վճարած հարկերից արևմտահայ ազգաբնակչության հայտար ծանր և անպատվաբերը *ջիզիեն* էր՝ *գլխահարկը:* Ջիզիեն նոր հարկ չէր: Այն սկզբնավորվում էր արաբական խալիֆների օրոք և ապա տարածվում այլադավան երկրամասերում, գանձվելով քրիստոնյաներից ու հրեաներից իբրև փրկագին, գլխագին, սկզբում ընդհանուր գերդաստանից, իսկ հետո ամեն մի արական սեռի չափահասից: Ջիզիեն ամենամյա հարկ էր և իր չափերով անընդհատ փոփոխության էր ենթարկվում: Խարաջը կամ ջիզիեն հարափոփոխ վիճակում էր: Այն ծանր էր միջնադարում: Ժամանակակից գրչի վկայությամբ, 1626 թվականին «Օսմանցիք երեք ոսկի խարաճ առին ի հայոցս»[5]:

1800 թվականին գլխահարկը գանձվում էր ըստ ունեցվածքի՝ հա-

---

[1] ՀՍՍՀ ՊՊԿԱ, քաղվածքների ֆոնդ, գ. 49, թերթ 34, 1830:
[2] *Հ. Հակոբյան,* Ուղեգրություններ, հ. Զ, էջ 94:
[3] ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆոնդ 2, ցուցակ 1, գործ 2462, թերթ 3-4, 1829:
[4] ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆոնդ ՈԳԱ, գործ 1046, թերթ 1-2, 1830:
[5] Մատենադարան, ձեռագիր 4442, թերթ 637բ:

ռուստից 48 դիրհեմ արծաթ, միջակից 24, աղքատից 12, տարեկան ընդհանուր գումարը կազմելով 4000 քսակ[1]: Հարկաչափը 1803 թվին ավելացավ: Այժմ այն գանձվում էր ոսկով: Հարուստը տալիս էր 4 շերիֆլի ոսկի, միջակը 2, աղքատը 1, դրա հետ միասին «վասն հարկապահանջացն» 10, 8 և 4 փարա: 1804 թվականին հարկապահանջների վարձը և ընկալագրերի գինը միացվեցին և հարուստներից գանձվում էր ևս 12 դուրուշ[2]:

Հետագա տասնամյակներին, կայսրության տնտեսական քայքայումով պայմանավորված, գլխահարկը անընդհատ ավելանում էր, կրկնապատկվում, նույնիսկ քառապատկվում: 1815 թվականի դեկտեմբերի 15-ին գլխահարկը 12 դահեկանից բարձրացավ 16-ի, 1824 թ. մայիսի 1-ին դարձավ 24 դահեկան, 1827 թ. հուլիսի 13-ին 36 դահեկան, 1829 թ. հունիսի 20-ին 48 դահեկան, 1834 թ. ապրիլի 17-ին 60 դահեկան[3]: Ըստ որում, 1840 թ. փետրվարի 28-ի ֆերմանով «Հարկ իւրաքանչիւր հարկատու ազգաց յանձնեցաւ ի ձեռս ազգապետաց նոցին հաւաքել յազգէն և հատուցանել արքունի գանձարանին»[4]:

Եթե մայրաքաղաքի քրիստոնյա ազգաբնակչությունը, հոգևոր դասը և անկախ կամ ֆերմանը գավառների հայ գյուղացիությունն ազատ էին գլխահարկից, ապա Արևմտյան Հայաստանի «այլահավատները» հարկաչափի սահմանված գումարը տալով չէին ազատվում: Հայկական աղբյուրներում եղած բազմաթիվ հիշատակությունների համաձայն, թուրք փաշաները, հատկապես անհագուրդ, ապստամբ քուրդ խաները, Վասպուրականում, Տարոնում, Դերսիմ-Չարսանջակում գլխահարկը գանձում էին տարվա մեջ երկու, երեք անգամ և հարկաչափը հասցնում 150-200 դահեկանի: Գ. Սրվանձտյանցը գրում է, թե Վանի ղուլերը խարաջն ավելացրել են, նրանք «... Բ. խարաջ առին ի հայոցս և կէս ղշ. էլ *հարամ խարաջ*»[5]: Գլխահարկ էր գանձվում պանդխտողից, գաղթողից, պանդխտության մեջ մահացածի ընտանիքից: Պետությունը, իսլամ մոլեռանդ կրոնավորները շահագրգռված էին գլխահարկի անընդհատ ավելացմամբ, դրանով իսկ նրանք նյութական հսկայական միջոցներ էին քամում այլազգի հպատակներից, մյուս կողմից էլ հարկային քաղաքականությամբ, «խաղաղ մեթոդներով» վերջիններիս առաջնորդում էին Մուհամմեդի փարախը: Հավատուրաց քրիստոնյան անմիջապես ազատվում էր գլխահարկից: Ուրեմն, ջիզիեն նաև կրոնական պաշտամունքի թողտվության հարկ էր:

Մահմուդ II-ը վերակենդանացրեց միջնադարում գործող, Թուրքիայի հավիտենական անեծք ու խայտառակություն պատճառող *մանկաժողովները*: Գլխահարկից բացի, արհեստ սովորեցնելու պատրվակով, կայսրությունը քրիստոնյա մանուկներ էր հավաքում, բռնությամբ տարագրում մայրաքաղաք, առանց վարձի, անտանելի պայմաններում աշխատեցնում *Իփլիկ խանե* անվանված նավարանում: Սվազի Հաջի Հասան փաշան, միացած Էրզրումի սերասքյարին, 200 զինվոր էր առանձնացրել, նրանց տրամադրության տակ դրել զինված քրդեր, որոնք 1830 թվականին «մանկահավաքություն»[1] պիտի անեին հայերից: Ապրիլի վերջին արդեն Կ. Պոլիս էին ուղարկել Կարա-Հիսարի ու Երզնկայի գավառների 40 հայ[2] երիտասարդներ: Կարինից, Սեբաստիայից, Վանից և «այլոց քաղաքաց Անատոլուի», 1832 թ. հավաքեցին 6000 երիտասարդներ, տեղափոխեցին Իփլիկ խանե աշխատելու: 1844 թ. սրանցից 1000-ն արդեն խեղդվել էին նավերն ընկղմվելու պատճառով, 3000-ը մեռել «խղճալի և վշտալի մահվամբ»[3], 1000-ն էլ փախուստով ազատվել էին: Ոչնչացածների տեղը լրացնում էին «նորահավաքները», գրեթե ամեն տարի յուրաքանչյուր գավառից 20-ական հոգի, իսկ ամենապակասը, Արևմտյան Հայաստանից 300-400 երիտասարդներ[4]: Վանի հանրահայտ Պողոս եպիսկոպոս Մելիքյանը պատանեկության շրջանում (1836 թ.) տարագրվել էր Իփլիկ խանե աշխատելու, իսկ «Կոմցոնց Մկոն», ապագա Խրիմյան Հայրիկը, դժվարությամբ խույս տվեց էջմիածին և փրկվեց «տարապահարկից»[5]:

Այս պատմաշրջանում հայերի վճարած հարկերից գրեթե ամենածանրը *ավարիզն* էր կամ *ավարիզի-դիվանիյեն* - բառացի նշանակությունը դեպքից դեպք, պատահական: 1462 թ. «սկզբնավորվող»[6] հարկը մտցվում է պատերազմների ժամանակ և ապա հանվում խաղաղության պահին: XIX դարի առաջին երեսնամյակին այն դարձել էր կանոնավոր հարկ և իր չափով ձգվում էր մինչև 300 դահեկանի ամեն մի գերդաստանից: Տրապիզոնի նահանգի ամեն մի տնտեսություն 1807-1808 թթ. տալիս էր 300 դահեկան ավարիզ, բացի այդ, նաև աշար ու այլ տուրքեր: Ռուսական հյուպատոսը 1830 թ. գրում է, որ «եթե այս հարկերը շարունակվեն ևս մի քանի ժամանակ, ապա ոչ միայն գյուղեր, այլև ամբողջական սանջակներ անմարդաբնակ կդառնան»[7]:

Պետական հարկերի ցանկը սրանով չէր գոցվում: Տարբեր նահանգներում կային *փեթակի* հարկ, *տոնական* հարկ, *ներուզի* հարկ, *կեֆենդուզի* հարկ (ամեն մի կոշկակարից 25 ակչե), *յուղի* հարկ

---

[1] *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, հ. Ե, էջ 46:
[2] Նույն տեղում, էջ 47:
[3] *Ա. Պէրպէրեան*, Պատմութիւն հայոց, էջ 452, 469, 475, 480, 488, տե՛ս նաև «Փորձ», 1876-1877, էջ 380:
[4] *Ա. Պէրպէրեան*, էջ 500:
[5] *Գ. Սրվանձտեանց*, Սանանայ, 1876, էջ 392:

[1] ՍՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ ՈԳԱ, գործ 1046, թերթ 16-17:
[2] Նույն տեղում, թերթ 18:
[3] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 110, վավ. 51, թ. 1-2, 1844:
[4] Տե՛ս «Փորձ», 1877-78, էջ 382, «Պատմութիւն Եւդոկիոյ հայոց», էջ 360:
[5] *Համբարձում Երամեան*, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, էջ 32:
[6] Տե՛ս "Аграрный строй османской империи", стр. 192.
[7] ՈԱՔԱ, Գլխավոր արխիվ 1-9, գործ 13, մասն 17, թերթ 30:

(ամեն մի չիֆթից 1200 դիրհեմ յուղ), *չիֆթի* հարկ, *ծխի* հարկ, *ջրելու* վարձ (տրվում է միրաբին) և այլ հարկեր: 1829 թվականի նոյեմբերի 1-ի տվյալներով միայն Էրզրումի գավառից մեկ տարում գանձվել է 131-366 ղուրուշ հարկ: Դրա մեծ մասը գոյացել էր Հաջի Մինասի և Գրիգոր Օղլու տնօրինած պղնձահանքերի հանույթի վաճառքի վրա դրված հարկից (16, 744 ղուրուշ), ապա աշարից, մաքսից: Ռուս ուսումնասիրողն այս հարկացուցակի մեջ չի մտցրել գլխահարկը և ավարիզը: Ըստ երևույթին, նրանք պետք է մտնեին սուլթանի գանձարկղը, իսկ մյուսները տրվում էին փաշային[1]:

Թեկուզ անունների համառոտակի այս թվարկումը կասկած չի թողնում, որ Արևմտյան Հայաստանի ազգաբնակչությունը տնքում էր հարկային ծանր բեռի տակ: Չմոռանանք ասել, որ *եթե տարբերակում չմտցվի, ապա անհասկանալի կմնա, թե վճարունակ մի տնտեսություն ինչպես կարող էր վճարել այսքան հարկեր:* Պետք է մի անգամ ևս հիշեցնել, որ բոլոր հարկերը բոլոր տնտեսությունները չէին վճարում: Վճարումն արվում էր ըստ զբաղմունքի տեսակների: Միայն ջիզիեն բոլոր քրիստոնյաների համար պարտադիր էր, իսկ մնացածները՝ նայած ունեցվածքի, զբաղմունքի տեսակի, կատարած գործարքների: Մի բան ընդհանուր էր. դա այն էր, որ Թուրքիայի տնտեսության և ոչ մի բնագավառ հարկահանների աչքից չէր վրիպում:

Ժամանակաշրջանի հատկանշական պահերից էր և այն, որ քրիստոնեական վանքերն ու եկեղեցիները, նույնիսկ հոգևորականությունը՝ մասամբ սուլթանների, նահանգատեր փաշաների, հիմնականում հովտատեր, երկրատեր քուրդ խաների, գավառապետերի կողմից դրվում էին ծանր հարկերի տակ: 1800 թ. սուլթանի հրամանագրով Կ. Պոլսի պատրիարք ընտրվողը, հրովարտակ ստանալիս, 100 հազար ղուրուշ միանվագ հարկ պիտի վճարեր[2]: Այնուհետև նա պարտավոր էր ամեն տարի, իբրև կանոնավոր հարկ, 140,000 ղուրուշ վճարել[3]: Նոր վեզիրին, նշանակման ժամանակ, հայոց պատրիարքը տալիս էր 500 ղուրուշ, վեզիր քեհյասուն 250 ղուրուշ, չավուշ բաշուն 200 ղուրուշ, սրանց հետ նաև մետաքսյա հագուստներ, ճտկավոր կարմիր կոշիկներ պիտի նվեր տաներ բարձրաստիճան պաշտոնյաներին:

Հարկվում էին, սակայն, ոչ միայն տեղական համբավ ունեցող վանքերը, այլև համաքրիստոնեական աշխարհում մեծ համարում ունեցող Երուսաղեմի ս. Հակոբի վանքը: Դամասկոսի Մեհմետ փաշան, լսելով, որ Երուսաղեմի Հովակիմ պատրիարքն իր դեմ բողոք էր ուղարկել մայրաքաղաք, 1778 թ. գալիս է ս. Հակոբ, սպառնալիք տալով՝ 6000

[1] ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆոնդ 2, ցուցակ 1, գործ 2878, թերթ 3:
[2] «Ուղեգրություններ», հ. Զ, էջ 89:
[3] *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, մասն երկրորդ, հ. Ե, էջ 117:

դահեկանի գումար առնում և հեռանում: Նույն տարում, *սանջակիյե* ու *ավայիտ* կոչվող հարկից բացի, նա 13000 դահեկան էլ շորթում է իբրև տուգանք: Ըստ կարգի, վանքը տարեկան պիտի տար 2500 դահեկան սանջակիյե, 9400 դահեկան ավայիտ, մինչդեռ Մեհմետ փաշան մեկ տարում առել էր 39,525 դահեկան և դեռ գոհ չէր[1]: 1800 թ. և դրանից հետո Պետրոս պատրիարքը տարին 4195,5 ռուպիե ոսկի էր վճարում Դամասկոսի փաշային, իսկ Մուհամմեդ Ալիի ապստամբության տարիներին, հարկատվության պատճառով, Երուսաղեմի վանքը տնտեսապես քայքայվել էր:

Ակնհայտ է, որ թուրքահպատակ մարզերի գյուղացիության, մասնավորապես քրիստոնյա ազգաբնակչության ապրելակերպի ու հարկատվության համեմատ, քրդահպատակ շրջանների գոյավիճակը անտանելի էր դարձել: Դերեբեյական ահարկու ու մահասփյուռ թաթը ամենուր հպվում էր հայ գյուղաբնակչության, ինչպես նաև քաղաքներում նստած հարուստ թե աղքատ քրիստոնյաների մեջքին, նրանց դարձնում իրենց վայելքներին ծառայող հարկատու գրաստներ: Իրար դեմ անընդհատ կռիվների մեջ եղող դերեբեյները ավերում էին բերդերն ու ամրոցները, գյուղերն ու ավանները: Վերաշինելու ցանկության ու անհրաժեշտության դեպքում շահագործվում էր ռայայի անվճար, պարտադիր կոռային աշխատանքը: Ուրեմն, դրամական ու բնամթերային ռենտաներից բացի, արևմտահայությունը տալիս էր կոռավճար՝ պետությանը, փաշաներին, հատկապես քուրդ տիրողներին:

Թուրքիայի տիրապետության տակ դարերով հաշվվող արևմտահայ աշխատավորությունը՝ կառավարությանը, մահմեդական վերնախավին վճարած դրամական հարկերով, բնամթերային ռենտայով, կոռավճարով չէր ազատվում: Նրա ուսերին ծանրացած էր նաև եկեղեցու, հայ հոգևորականության հարկապահանջությունը: Այս դեպքում կառավարական զափթիեն, անխնա թուրք աղան կամ քուրդ բեկը չէր, որ կողոպտում էին հայ գյուղացուն, շողացող սրի կամ զնգացող շղթայի սարսափը չէր, որ դատարկում էր անպաշտպան ռայայի գրպանը, այլ եկեղեցու «քաղցրաքարոզ» սպասարկուները, վանքի վանահայրերը, կաթողիկոսի ու պատրիարքի նվիրակները: Բռնության բիրտ ուժին փոխարինում էր բարոյական սարսափը, բայց երբեմն էլ այնպիսի բռնությունը, որը ոչնչով չէր զանազանվում օտարազգի, անխնա հարկահանների սաստերից:

Այսպիսով, մինչև «Թանզիմաթը» արևմտահայ աշխատավորությունը տանում էր սոցիալական շահագործման ծանր բեռը, կեղեքվում ու թալանվում թուրքական կառավարության, քրդական ցեղապետերի,

[1] *Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց,* Պատմութիւն Երուսաղէմի, 1931, Երուսաղէմ, հ. 2, էջ 802:

հոգևոր և աշխարհիկ հայ վերնախավի կողմից: Սակայն սխալ կլիներ հայ հոգևորականության հարկապահանջությունն ընդհանրապես հավասարեցնել պետության ու քուրդ վերնախավի հարստահարություններին:

Դարեր առաջ պետականությունից զրկված ժողովրդի համար եկեղեցին մի տեսակ պետության դեր էր կատարում, կաթողիկոսների, պատրիարքների ջանքերով, թեկուզ դիվանագիտության միջոցներով, դիմագրավում սուլթանի ու շահի, խանի ու կայսրի հայերի նկատմամբ վարած քաղաքականությանը, բողոքում հարստահարությունների, բռնության, չարաշահումների դեմ, հասուն մտավորականության բացակայության պայմաններում ուղղություն տալիս ազգի քաղաքական-ազատագրական ոգորումներին (Մուշի ս. Կարապետի վանքի վանահայր Հովնան եպիսկոպոս): Բոլոր եկեղեցականները չէ, որ փարվում էին տիրող ռեժիմին, նյութամոլությունից դրդված քարոզում կույր հնազանդություն: Մինչև ազգակազմավորման ավարտն ու լուսավորյալ մտավորականության մշակած ազգային-ազատագրական պայքարի գաղափարաբանության կաղապարումը, դրանից հետո էլ, հայ եկեղեցու շատ բարձրաստիճան ու շարքային սպասավորներ զինվորագրվում էին քաղաքական պայքարին, իրենց կյանքի իմաստը տեսնում օտարի տիրապետությունից ժողովրդին ազատագրելու մեջ:

Միջնադարից սկսած մահմեդական տիրակալները, երախները լայն բացած, ջանում էին կլանել քրիստոնյա ազգերին: Ուծացման վտանգը դամոկլյան սրի նման միշտ էլ կախված էր մնում թուրքական լայնատարած կայսրության օվկիանի մեջ լողացող արևմտահայության գլխին: Այս պատմաշրջանում եկեղեցին, փաստորեն, այն միակ կռվանն էր, եզակի միջոցը, որն այս կամ այն կերպ հայ ժողովրդին պահպանում էր ուծացումից և կռվում ազգը պառակտող մյուս աղանդների, կրոնական, ազգապառակտիչ հերձվածների դեմ:

Թուրքիան ինքը խավարապատ ու անգրագետ էր: Առավել ևս, նա շահագրգռված չէր հպատակ այլազգիների լուսավորության գործով: Հավաքական իմաստով հայ եկեղեցին էր բացում դպրոցներ, հիմնում տպարաններ, հրատարակում գրքեր ու պարբերաթերթեր, կրթում սերունդներ: Այլ բան է նրա գաղափարախոսության քննադատությունը, սակայն, ընդհանուր առմամբ, թուրքական մթնախորշերում հիմնված հայկական անդրանիկ, երերացող ճրագները կպցնում էին վանքերը, վանականները: Հետևաբար, ժողովրդից գանձված հարկերը, նվիրատվությունները, բոլորը չէ, որ մտնում էին հոգևորականների որովայնը, այլ մի մասն էլ, ուղղակի թե անուղղակի, վերադարձվում էր արևմտահայությանը, ծախսվում նրա կրթության, լուսավորության գործի վրա: Ուրեմն, իրականության դեմ մեղանչած կլիներ պատմաբանը, եթե հայ եկեղեցուն վերագրեր սոսկ կողոպտիչի, ժողովրդին թալանողի դերը, չտեսներ հոգևորականների արած դրականը:

Գլուխ երկրորդ

Քաղաքները, արհեստագործությունը, առևտուրը

1. Քաղաքները, արհեստագործությունը

ՈՒԼԹԱՆԱԿԱՆ լայնարձակ կայսրությունը չէր կարող մնալ զուտ գյուղատնտեսական երկիր: XVIII դարի երկրորդ կեսից և հաջորդ դարամուտին Թուրքիայում աշխուժանում էր քաղաքային կյանքը, զարգացման նոր «բարձունքներ» էր նվաճում արհեստագործությունը, ծնվում էին ու գործունեություն ծավալում մանուֆակտուրային տիպի ձեռնարկությունները, ստվարանում էին էսնաֆությունները, մեծ մասամբ արհեստը անջատվում էր ոչ միայն երկրագործությունից, այլև, որպես կազմակերպված դաս, ուժեղանում էր միջնորդ վաճառականությունը: «Մանուֆակտուրաներն առաջներում այնքան բազմաթիվ ու բազմազան էին,- գրում է Մ. Ուբիչինին,- որ դրանց օգնությամբ օսմանյան կայսրությունը ոչ միայն բավարարում էր սեփական կարիքները, այլ մատակարարում էր նաև Արևելքի բոլոր երկրների և Եվրոպայի մի քանի երկրների շուկաներին...»[1]:

Արհեստագործության զարգացմանը խանգարող հանգամանքները բազմազան էին: Արհեստավորը չէր պաշտպանվում պետության կողմից, չկար նրա արտադրանքի ու վաճառողի կյանքի ապահովության երաշխիք, ճանապարհներին վխտում էին ավազակախմբերը, արհեստանոցները ծանր հարկերի տակ էին դրված, առևտրականները մաքսի: Հետևաբար, Թուրքիայի արհեստագործության մասին մեր կատարած ընդհանրական դիտողությունները համեմատական են և արվում են համադրելով դրան նախորդող ու հետևորդող պատմաշրջանները: Սակայն արգելքների հետ միասին կային նաև արհեստագործությանն ու առևտրին նպաստող երևույթներ՝ հանքային անսպառ հարստության գոյությունը, հումքի առատությունը, եվրոպական գործարանային ապրանքների, էժանագին վաճառանյութի համարյա բացակայության պատ-

[1] *M. A. Ubicini*, Lettres sur la Turquie, 1853, Paris, p. 357.

ճառով ձեռքի աշխատանքի բարձր գնահատումը, գնորդների առկայությունը թե երկրի ներսում և թե արտասահմանյան շուկաներում: Ուրեմն, կայսրության եվրոպական և ասիական նահանգների կենտրոնական մեծ քաղաքներում քաղաքային կյանքը տակավին աշխույժ էր և համեմատաբար կայուն վիճակ ուներ: Արհեստագործությունը համահավաքել էր բազմաթիվ, այդ թվում նոր, եկամտաբեր ճյուղեր, առևտրականը ծանոթացել էր եվրոպական լեզուներին, թափանցել հեռավոր շուկաներ, կտրել-անցել ծովեր ու հասել Անգլիա, Ֆրանսիա, Հոլանդիա, նույնիսկ հեռավոր Ամերիկա: Թուրքիայի, թեպետև ոչ թուրք վաճառականի խոսակցությունը լսվում էր Արևելքի ու Արևմուտքի գրեթե բոլոր շուկաներում, իսկ արհեստավորի ձեռքի արտադրանքը մուտք էր գործել ընդհուպ մինչև կայսերական պալատները և զարմանք ու հիացմունք պատճառել աշխարհատես եվրոպացիներին և արտաքին շուքի ու պերճանքի սիրահար արևելցիներին:

Հատկանշական է, որ համայն կայսրության արդյունագործության ու վաճառականության մարզերում, ընդհուպ մինչև XIX դարի 50-ական թվականները, թուրքերը, քրդերը տակավին յունգի դեր էին կատարում, ասպարեզը թողնելով քրիստոնյա հպատակ ազգերին՝ հայերին, հույներին, բուլղարացիներին ու սերբերին: Սրանց ձեռքին էին կենտրոնացված ինչպես իրենց բնօրրանների, այնպես և ողջ Թուրքիայի քաղաքային կյանքի հիմնական զարկերակները: Տիրապետող մահմեդական տարրը, օգտվելով քաղաքական իրավունքներից, զբաղված լինելով ռազմական արշավանքներով, թալանով, խաղաղ տարիներին մեղկության մեջ անցկացնելով իր կյանքը, արհամարհում էր արտադրողական զբաղմունքը կամ, աշխատանքի փորձ չունենալով, դեռևս հմուտ ու ընդունակ էլ չէր դրան: Գործավայրերը մնում էին ռայային, քաղաքական իրավունքներից զուրկ, սակայն դարերի ավանդ ունեցող աշխատասեր ու շինարար, լեզուների մեջ հմուտ կամ արագորեն հմտացող քրիստոնյա ժողովուրդներին: Արևմտյան Հայաստանում, Փոքր Ասիայի հայաբնակ նահանգներում, Կիլիկիայում կանգուն քաղաքների, ինչպես նաև Կ. Պոլսի ու Զմյուռնիայի արհեստավոր, ազատարվեստ ու վաճառական տարրը հայերն էին՝ հույների հետ մասին:

«Քաղաքներում,- գրում է Գոլոբորոդկոն,- առանց հայերի չէր կարող յուլա գնալ տեխնիկայի, արվեստի, գիտության, արհեստագործության ոչ մի քիչ թե շատ լուրջ ճյուղ: Լավագույն բժիշկները հայերն էին, փաստաբանները հայերը, ուսուցիչները հայերը, ինժեներները հայերը, դերասանները, բանկիրները, կրպակատերերը, ձեռնարկատերերը նորից հայերն էին: Հայերը հանդիսանում են ամենակուլտուրական տարրը ասիական Թուրքիայում»[1]:

[1] *И. И. Голобородько,* Старая и новая Турция, стр. 221.

Գրեթե նույն կարծիքին է նաև մի այլ դիտորդ, որը, նկարագրելով Փոքր Ասիայում զարգացող արհեստագործությունը, գրում է. «Հայերը և հույները. ...արդեն տիրացել են թուրքերի բազմաթիվ արհեստների և ազատական կոչվող բոլոր արվեստներին: Քաղաքներում նրանք են բժիշկները, ուսուցիչները, իբրև թարգման և հրապարակախոս միայն նրանք են եվրոպացիներին տեղեկություններ հաղորդողները և Արևմուտքի հասարակական կարծիքը խմորողները: Նրանց արվեստագիտության շատ արդյունքները կարող են իբրև օրինակ ծառայել Եվրոպայի նույնանման առարկաներին»[1]:

Ամենաէականն այն է, որ կայսրության ողջ առևտուրը հայերին ու հույներին էր պատկանում: Նրանց ձեռքում էր թե Թուրքիայի ներքնագավառների ու կենտրոնի և թե ամբողջ երկրի ու Եվրոպայի միջնորդ առևտուրը:

«Ո՞վ է առևտուր անում Թուրքիայում,- գրում է Ֆ. Էնգելսը,- համենայն դեպս ոչ թուրքերը...: Ծովային խոշոր նավահանգիստներում հիմնավորված հույները, հայերը, սլավոնները և արևմտաեվրոպացիները իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը...: *Հեռացրեք Եվրոպայից բոլոր թուրքերին, առևտուրը դրանից բնավ չի տուժի»* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)[2]: Ղ. Ինճիճյանը բերում է ֆրանսիացի դիտորդ Մարտինի կարծիքը, որը տակավին XVIII դարում արձանագրել էր, թե «Հայք կարի իմն անձնատուր են վաճառականութեան և ամէն մտադրութեամբ պարապին ի նմա որում են ընդունակ, սրանք են ապրուեստապետք ոչ միայն վաճառականութենէ արևելից, այլ նաև ձեռնտուք մեծապէս վաճառականութենէ առաւել մեծամեծ քաղաքացն Եւրոպիոյ: Տեսանեմք զսոսա գալ ի խորոց Պարսկաստանեայց մինչ ի Լիվոռնօ. չեն բազում ժամանակս յորմէհետէ բնակութիւն կալան ի Մառսիլիա, գտանին ի Հոլանտա, յԱնգղիա, ի Վենետիկ, ճանապարհորդեն ի Մողոլ, ի Շիամ (որ է ի Հնդիկս), ի Ճեավա, ի Փիլիպպեան (կղզիս) և ընդ ամէն արևելս բաց ի չինաց»[3]: Ակնհայտ է, որ Թուրքիայի քաղաքների ոչ միայն արհեստագործության հիմնական ճյուղերը, այլև առևտուրը միջնադարում և նոր ժամանակաշրջանում պատկանում էր քրիստոնեական տարրին, հայ քաղաքացիներին: Ֆրանսիացի դիվանագետ գեներալ Գարդանը 1800-1809 թթ. մանրամասն ծանոթանալով Թուրքիայի ու Պարսկաստանի հայերի կյանքին, այսպես է բնութագրում հայկական տարրի դեմքը. «Գյուղացի հայեր ընդհանրապես բարեացակամ և քաղցրաբարո են: Արդարև նրանց մեջ միայն կարելի է

[1] Սաշտոցի անվան մատենադարան, *Գալուստ Տեր-Սկրտչյանի* արխիվ, թղթ. 16, վավ. 7, թերթ 7:

[2] *Ф. Энгельс,* Турецкий вопрос (*К. Маркс и Ф. Энгельс,* Сочинения, т. IX, стр. 25).

[3] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, հ. Ա, էջ 47:

գտնել նահապետական պարզությունը և մանուկ հասակի երջանիկ անմեղությունը... Քաղաք տեղափոխվելուց հետո հայերը կորցնում են այս թանկարժեք հատկությունների մեծ մասը: Սակայն և այնպես պետք է ընդունել, որ առևտրի մեջ ցույց են տալիս մեծ խելացիություն և ուղղամտություն: Ինչպես հույները եվրոպական Թուրքիայում և ղպտիները Եգիպտոսում, այնպես էլ սրանք (հայերը) տեր են ասիական Թուրքիայի հասարակաց եկամուտներին: Նրանք գտնվում են համարյա ամբողջ ասիական ցամաքամասի վրա մինչև Հնդկաստան»[1]:

Այդ մենաշնորհը շարունակվեց ընդհուպ մինչև Ղրիմի պատերազմն ու նրան հաջորդող առաջին տասնամյակը: 1860-ականներին նոր գործահրապարակ իջավ նախանձոտ թուրք թույլ առևտրաարհեստագործական դասը, որը դժվարությամբ էր կարողանում մրցել քրիստոնեական տարրի դեմ՝ տնտեսական մարզում, ուստի և հապշտապ օգտագործում էր իր քաղաքական իրավունքները, ջանում խեղդել մրցակցին, բայց այդքան էլ հեշտ չէր միանգամից: Ինչևիցե, առաջ չվազենք, սակայն ընթերցողին հիշեցնենք, որ մենք այս մեջբերումների անհրաժեշտությունը չէինք ունենա, առանց դասակարգային տարբերակման հայկական տարրի դերը Թուրքիայի տնտեսական կյանքում ընդհանրապես ցույց տալու խիստ կարիքը չէինք զգա, եթե հարկադրված չլինեինք պատասխանելու ***կերածը մարսելու ջանադրությամբ կեղծիքի դիմող թուրք պատմաբաններին:***

Բանը նրանում է, որ ոչ միայն անցյալի մի շարք պատմաբաններ, այլև ժամանակակից «Թուրքիայի պատմության ընկերության» անհարգարժան անդամները, թուրքական կոնգրեսմենները, արդարացնելով նախորդների վարած հայաջինջ քաղաքականությունը, ջանում են ուրանալ արևմտահայերի գոյությունը Թուրքիայում, ժխտում են նրանց կատարած տնտեսական էական դերը Արևմտյան Հայաստանում, էլ չենք ասում հայաբնակ մյուս քաղաքներում ու մայրաքաղաքում[2]: Ցավոք, այս «տեսությունը» գնալով իշխող է դառնում պանթուրքիզմի գաղափարներով վարակված թուրք պատմաբանների մոտ և հովանավորվում է կառավարության կողմից: Հայ պատմագրությանն այս պետք է ստիպի փաստերի լեզվով, հիմնավորապես պարզելով աջն ու ահյակը, արժանի հակահարված տալու պատմության անցյալ ու առօրյա կեղծարարներին, բացահայտել նրանց միտումնավոր տեսակետների առաջադրման պատճառները, ամենաէականը՝ հայերի կատարած դերը իրենց բնօրրան Հայաստանի քաղաքներում, հանուր Թուրքիայի տնտեսական կյանքում: Այս նպատակով մենք քիչ ավելի

[1] *Հովհ. Հակոբյան,* Ուղեգրություններ, հ. Զ, էջ 203:

[2] Այս մասին մանրամասն տե՛ս *Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան,* Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, էջ 18-19 և հետևյալը:

Կարին (Էրզրում)
(նկարը մեզ է տրամադրել Ջակեն Սարգսյանը)



Երևանի Ս.Գրիգոր Լուսավորչի եկեղեցին

մանրամասն ենք կանգ առնում քաղաքային հայ ազգաբնակչության քանակի, նրա և այլազգիների տոկոսային փոխհարաբերության, առաջինների տիրապետած տնտեսական մարզերի բնութագրության, արհեստագործության ու առևտրի պատմության և այլ հարցերի վրա: Սկսենք ազգաբնակչությունից:

XIX դարի առաջին կեսին արևմտահայությունը բաժանվում էր *գյուղաբնակչության և քաղաքային ազգաբնակչության:* Արդեն խոսվեց գյուղացիության գոյավիճակի մասին Արևմտյան Հայաստանում և հայաբնակ նահանգներում: Առևտրով ու արհեստով պարապող քաղաքաբնակ արևմտահայությունը ապրում էր, գործում Արևմտյան Հայաստանի, Փոքր Ասիայի հայկական քաղաքներում, Կիլիկիայի առևտրաարդյունագործական կենտրոններում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում:

Արևմտյան Հայաստանում, հայաբնակ նահանգներում, ծովային անցուղիներով Եվրոպային կամրջվող Կիլիկիայում դարի առաջին կեսին հարատևում էին չորս տասնյակից ավելի մեծ ու փոքր հայկական քաղաքներ[1]: Տատանման մեծ հաճախականությամբ այստեղ ապրում էին նախկին քաղաքացիները, գյուղերից հոծ բազմություններով գաղթած հայ, թուրք, քուրդ նորաբնակները: Այդ տատանումն ավելի մեծ շառավիղ էր ընդունում դարի առաջին կեսի երկու քառորդներին: XIX դարի առաջին երեսնամյակին արևմտահայ քաղաքներից շատերը, ռուս-թուրքական պատերազմների հետևանքով, կորցնում են իրենց հայ ազգաբնակչության մեծ մասը, իսկ մյուսներն էլ քրդական անարխիայի պատճառով վերածվում գյուղերի: Ընդհանուր առմամբ, դարի առաջին կեսին արևմտահայ քաղաքային ազգաբնակչությունը քանակական ու որակական առաջընթաց չի կատարում, նույնիսկ վայրէջք է ապրում:

Այդ պահին *Արևմտյան Հայաստանի* ամենամարդաշատ քաղաքը *Կարինն* էր համանուն փաշայության, երբեմն էլ ողջ երկրի վարչատնտեսական կենտրոնը: Ռազմաստրատեգիական ու տնտեսական մեծ կարևորություն ունեցող բերդաքաղաքը կառուցված էր բարձունքի վրա: Մեջտեղում խոյանում էր վերասլաց ամրոցը՝ քարե կրկնակի պարիսպներով օղակված: Դարասկզբին այն ուներ չորս դուռ, որտեղով ընդունում ու բաց էր թողնում եկող-գնացողներին, կամարակապ բազմաթիվ շուկաներ, իջևանատներ, 20-ից ավելի եկեղեցիներ, մզկիթներ ու մինարեթներ: «Ուր որ մի փողոց է անցնում, մի կամուրջ է շինված,- գրում է Ջեյմս Մորիերը 1809 թվականին,- և այսպես շարունակվում է անընդհատ: Բազարներում խանութները լիքն են ապրանքներով, և

[1] 1836 թ. գրված մի փաստաթղթում ասվում է. «Երեք միլիոն հայք բնակեն ցիր ու ցան ի զանազան գավառս Փոքուն Ասիոյ...»: Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 88, վավ. 105 ա, 1836, 23-ը մայիսի:

թվում է, թե այստեղ բարգավաճ արդյունաբերություն ունի»[1]:

Տարանցիկ առևտրական ճանապարհներ հանգուցող, եվրոպական ու ասիական ապրանքներ մթերող, անցորդ առևտրականներին հանգրվանելու հնարավորություն ընձեռող, վաղուց ի վեր հռչակված Կարին քաղաքը ոչ միայն փաշայանիստ էր, այլև IV անատոլիական բանակի կազմում մտնող կանոնավոր զորքի[2], ենիչերիների աղասուն ենթարկվող զորամասերի կայանը: «Էրզրումը,- Լինչի իրավացի դիտարկմամբ,- իր մեջ մարմնավորում է Թուրքահայաստանի ողջ նշանակությունը»[3]: Կարինը և Խարբերդը, ժամանակի իմաստով, ունեին հաղորդակցության բավարար միջոցներ և «...Էրզրումից կարելի է հասկել նաև Վանին և Բիթլիսին», արձանագրում էր ամերիկյան միսիոներ Լև Գրինը[4]: Եվ, վերջապես, Կարսի ու Կարինի ռազմաստրատեգիական և տնտեսական կարևոր դիրքին ու նշանակությանն էին անդրադառնում Մարքսը և Էնգելսը, այն համարելով Թուրքիան նվաճելու բանալին[5]:

XIX դարի առաջին երեք տասնամյակներին ազգաբնակչությունը ստվար էր, իսկ սոցիալական կազմով, զբաղմունքի տեսակներով, ազգային պատկանելությամբ խայտաբղետ: Այն վաղուց էր կորցրել զուտ հայկական, ազգային երանգը և վերածվել կիսամահմեդական և ապա կիսահայկական քաղաքի: Սակայն թուրքերը, փոքրաթիվ քրդերը զինվորականներ էին, քաղաքացիական պաշտոնյաներ կամ էլ երկրագործության հետ կապված մարդիկ: Կարինի արհեստագործությունն ու առևտուրը գրեթե ամբողջովին հայերի ձեռքումն էին, տնտեսական զարկերակների տոն տվողները հայերն էին, որոնք քաղաքի ազգաբնակչության ընդհանուր քանակով դարասկզբին, առավել ևս երկրորդ քառորդին, բացարձակ մեծամասնություն չէին կազմում:

Կարինի ազգաբնակչության մասին բազմաթիվ ու հակասական տվյալներ կան: Ղ. Ինճիճյանը վկայում է, թե 1800-1804 թթ. Կարինում ապրում էին *«90 հազար տուն տաճիկներ* և 10 հազար տուն հայեր»[6], այնքան, որքան գրանցվել էր ԺԶ դարի մարդահամարի ժամանակ: «Էրզրումում,- գրում է Ջ. Մորիերը,- *չորսից հինգ հազար հայ ընտանիք կա (*1809-1810 թթ.- Հ. Ղ.) և մոտավորապես հարյուր հույն...: Կա թերևս հազար պարսիկ, որոնք ապրում են քարվանսարայում և ղեկավարում կարավանով իրենց երկրի առևտուրը: Սև ծովի նավահանգիստն է Տրապիզոն, որտեղից տարվում է Կ.Պոլսի առևտուրը: Էրզրումի *թուրքական բնակչությունը հիսուն հազար ընտանիք* է: Այս տեղեկությունը ես տալիս եմ հիմնված մի լավատեղյակ հայի հաղորդագրության վրա, բայց այս երկրում մանրամասնությունները չափազանց կասկածելի են, և մեկ երրորդը պետք է զեղչել թուրքական ընտանիքների թվի հաշվառումից: Բայց այս զեղչը կատարելուց հետո, եթե յուրաքանչյուր ընտանիքը համարենք հինգ հոգուց բաղկացած, *գումարը կլինի երկու հարյուր հիսուն հազար, բացի հայերից* (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[1]: Վերոհիշյալ հեղինակների բերած տվյալները կասկածի տակ են առնում նույնիսկ ժամանակակիցները:

Աղբյուրների երկրորդ խումբը միաբերան վկայում է, որ մինչև գաղթը Կարինի բնակչությունը *130 հազար* է եղել: Գեներալ Գարդանը 1809 թ. գրում է. «Իլիջայից մինչև Էրզրում յոթ ժամ է. ունի 130.000 բնակիչ, որոնցից հինգ հարյուրը հայ կաթոլիկ են»[2]: Դիվանագիտական մարզի մի այլ աշխատակից հաղորդում է, թե 1827 թ. Կարինն ուներ *130 հազար* շունչ կամ 16.378 տուն, որից հայեր 3.950 ծուխ, մոտավորապես *20-25 հազար հայ լուսավորչականներ*, 645 ծուխ հայ կաթոլիկներ, հիսուն տուն հույն, մնացածները թուրքեր ու պարսիկներ[3]: Ուրեմն, մինչև հայերի զանգվածային գաղթը, Կարին քաղաքն ուներ 130 հազարից ոչ պակաս ազգաբնակչություն 30 հազար և ավելի հայեր, 100 հազար թուրքեր և այլ ազգեր: Կարինում «մինչև մտեալ ռուսաց ի քաղաքս,- գրում է Ներսես Սարգսյանը,- որը 1843 թվականին եղավ այստեղ և մանրակրկիտ ուսումնասիրեց,- յայս, տունք, ամենայն *հայազգեաց հաշուէին իբր չորս հազար* (ընդգծումները մերն են- Հ. Ղ.), այլ գաղթեալ նոցա առ հասարակ ի կողմանս Վրաստանի, և դարձ արարեալ ոմն փախստեամբ և ոմն հրամանաւ, արդ լինին տունք իբրու հազար մի»[4]:

Կարինի հայ ազգաբնակչության գերակշռող մեծամասնությունը 1830 թ. թողեց թուրքական տիրապետությունը և գաղթեց Արևելյան Հայաստան կամ Վրաստան: Հայաշատ, բարգավաճ քաղաքը կուչ եկավ, զրկվեց իր արհեստագործ, առևտրական տարրից, տնտեսության իմաստով երկու տասնամյակ շարունակ չկարողացավ ուշքի գալ:

Կարինի գաղթականության, քաղաքի հայազրկման մասին 1831 թ. փետրվարի 21-ին գրում են. «Ոհ աչացս տեսարանի զինչ ասացուք սրբազան տէր մեր տանց Կարնոյ հայազգի գաղթականաց որոց հարիւր կամ երկու հարիւր տուն հազիւ թէ ամբողջ են մնացեալք, միւսք

---

[1] *Հովհ. Հակոբյան*, Ուղեգրություններ, հ. Ջ, էջ 284:
[2] ՈԱՔԱ, Գլխավոր արխիվ 1-9, գործ 13, մասն 17, 1831, թերթ 13-27:
[3] *Лынч*, Армения, т. II, стр. 255.
[4] *Грин Л.*, Армянский кризис и владычество турок, Москва, 1896, стр. 327.
[5] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. X, стр. 589.
[6] *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն..., մասն Ա, էջ 67:

[1] «Ուղեգրություններ», հ. Ջ, էջ 285:
[2] Նույն տեղում, էջ 96:
[3] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, վավ. 624, թերթ 7, տես նաև *Лынч*, Армения, 1910, стр. 263.
[4] *Հ. Ներսիսի Սարգիսեան*, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, 1864, Վենետիկ, էջ 76:

գրեթէ ի ներքուստ կամ արտաքուստ քայքայեալք և անշքացեալք են. հինգ հազար ղուռուշ արժեցեալ տունն այժմ և ոք առնցու հինգ հարիւր ղուռուշ հազիւ տայցէ»[1]: Անհայտ չէ, որ Կարինի հայերի տնտեսությունը 1830-ականներին քայքայվեց, իսկ 40-50-ականներին նոր սկսեց ինչ-որ աշխուժության նշաններ ցույց տալ:

Սակայն բուժած վերքերը նոր էին սկսել սպիանալ, երբ վրա հասավ երկրաշարժը և մեծ աղետ հասցրեց քաղաքի ազգաբնակչության տնտեսական կյանքին: 1835 թվականին այնտեղ կար 15 հազար շունչ, այդ թվում 1200 հայկական ընտանիք[2], իսկ 1847 թվի տվյալներով Կարինն ուներ 65.400 բնակիչ, այդ թվում թուրքեր և պարսիկներ 57.100, հայ լուսավորչականներ 6.950, հայ կաթոլիկներ 600, հայ բողոքականներ 150, հույներ 200, բոշաներ 400[3]: Ապաքինվում էր քաղաքը, լցվում ազգաբնակչությամբ, սակայն մինչև 1850-ականները Կարինը չկարողացավ վերադառնալ նախկին փառքին, վերականգնել երբեմնի շուքը: Ընդհակառակը, 1859 թ. երկրաշարժը ավերածության ենթարկեց քաղաքը: Նրա 4500 տները, 9 մինարեթները կամ հիմնովին փլվեցին, կամ էլ ճեղքեր տվեցին, իսկ քաղաքաբնակները լքեցին իրենց բնակավայրը և հանգրվանեցին գյուղերում, ոմանք էլ հեռացան Ռուսաստան:

Արևմտյան Հայաստանի կենտրոնական շրջաններից էր Վասպուրականը, հայկական Զագրոսի ու Տավրոսի մեջտեղ ընկած, Վանա գեղատեսիլ լճի մերձակայքում փռված, «լուսավոր Արևմուտքի» ու արթնացող Արևելքի հետ շփման քիչ կետեր ունեցող Վանի հայությունը: Փաշայանիստ *Վան քաղաքը*, ըստ Ղ. Ինճիճյանի, դարասկզբին ուներ 15 հազար տուն, որից 13 հազարը թուրքեր և քրդեր, 2 հազարը հայեր[4]: Եթե միջին հաշվով յուրաքանչյուր տունը վերցնենք 5-ով, ապա քաղաքում պիտի լինեին 65 հազար մահմեդականներ, 10 հազար հայեր: Ակներև է, որ քրդական տարրը, անաշխատ, վայելող «վան կուլերը», բեկերը, խաները, թողած վրանները, եկել հանգրվանել էին Վանում, ուղղակի թե անուղղակի հայերին արտամղել քաղաքից և տեր դարձել նույնիսկ նրանց բնակարաններին: Սակայն Ինճիճյանի այս թվերի դեմ ևս վիճում են ժամանակակիցները: Ֆրանսիական ճանապարհորդ Պիեռ Մորիս Ժոբերը 1805-1806 թթ. եղել է Վանում և հետագայում իր հուշերի մեջ գրել է *«Վանը ունի տասնհինգից մինչև քսան հազար բնակիչ, մեծ մասամբ հայ:* Այս քաղաքը շրջապատված է պարտեզներով, որոնց մեջ շինված են շքեղ տաղավարներ, և ուր բնակվում են ամառը բարեկեցիկ քաղաքացիներ: Ոչինչ

[1] ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, *Լեոյի* անձնական արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 24, թերթ 1-2:

[2] *Лынч,* Армения, стр. 264.

[3] *Բարունակ Պէյի Ֆերուհիխան,* ճանապարհորդութիւն ի Բաբելոն..., էջ 176:

[4] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 140:

այնքան հաճելի չէ, որքան բազմաթիվ վտակներով ոռոգված և գեղեցիկ ծառերով հովանավորված այս մրգաստանների տեսքը»[1]:

Միջնադարից սկսած Արևելքին հայտնի էր Բաղեշ կամ Բիթլիս քաղաքը: Գեղատեսիլ ձորի գեղանիստներին փռված քաղաքն ընկած էր Տրապիզոնից Կարին և այնտեղից էլ Մոսուլ տանող առևտրական բանուկ ճանապարհի վրա: Նա այն միակ կետն էր. «...որի վրայով հարաբերություն է պահպանվում Վանի հյուսիսային մի քանի շրջանների ու Դիարբեքիրի, Մոսուլի և Միջագետքի միջև»[2]: Հայկական Տավրոսը և Քուրդիստանի լեռները պատնեշելով Թուրքիայի հյուսիսային և հարավային մասերը, Վանա լճի սահմանամերձ հարթությունն էր մնում այն միակ դուռը, որով առնչվում էին այդ երկու մասերը և որտեղ գտնվում էր Բաղեշը: Ահա թե որն էր լեռնախորքերում ընկած քաղաքի տնտեսական զարգացման, մասնավորապես, քարավանային առևտրի աշխուժացման պատճառներից մեկը: «Դիարբեքիրից հետո Վերին Տիգրիսի ամենամեծ քաղաքն է սիրուն Բիթլիսը (Բաղեշը),- գրում է մի եվրոպացի,- ծովից 1500 մետր բարձր, Վանա լճի հարավ արևմտյան անկյունից ոչ հեռու: Կարմիր և Գորել ջրահոսանքը, Նեմրութ-Տաղից իջնելով, կատարել է գահավեժ դարավանդներ, կտրատված խոկումներով, որոնց հատակում թավալում են աղմկաձայն հեղեղային ջրերը, որոնց մի մասը հանքային և ջերմուկային են և սրանցից է կազմվում Բիթլիսի գետը (Բիթլիս-սու): ... Իբրև գլխավոր կայան Տիգրիսի և Վերին Եփրատի հովիտների միջև Բիթլիսն ունի փոխանակության ահագին առևտուր»[3]:

Հեռավոր երկրներից եկող քարավանները հանգստանալու երկու կարևոր հենակետեր ունեին Արևմտյան Հայաստանում՝ Բաղեշը և Կարինը: Այդտեղ կային բազմաթիվ հայեր և քրդեր, ինչպես և փոքրաթիվ թուրքեր, որոնք ապրում էին միայն հյուրերին իջևանատներ վարձով տալով: Սակայն միջնադարում այդ քաղաքները ավելի ծաղկուն էին, քան XVIII դարի վերջին ու հաջորդ դարասկզբին:

Շերեֆների քրդական ավազակաբարո ու վայրագ տոհմի վարած հայահալած քաղաքականության հետևանքով քաղաքը կորցրել էր նախկին դերը և իբրև արհեստագործական ու առևտրական կենտրոն չէր փայլում, ինչպես XVIII, առավել ևս, XVII դարերում: Քրդական իշխանապետության վերացումը, ավազակախմբերի ոչնչացումը, ճանապարհների քիչ թե շատ մաքրումը խթան հանդիսացան Բիթլիսի տնտեսական վերելքին և հայկական տարրի ուժեղացմանը՝ XIX դարի երկրորդ կեսին միայն[4]:

[1] «Ուղեգրություններ», հ. Զ, էջ 220:

[2] *Ա-Դո,* Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 82-83:

[3] Մատենադարան, *Գալուստ Տեր-Մկրտչյանի* արխիվ, թղթ. 16, վավ. 7, թ. 12:

[4] *Macdonald Kinnier,* Journey through Asia Minor, Armenia and Kurdistan, London, 1818, p. 393.

Արդյունագործության և առևտրի կենտրոն էր Սվազի փաշայանիստ քաղաքը Սեբաստիան, որը խոշորագույնն էր Փոքր Հայքի քաղաքներից: «Սեբաստիոյ մէկ ծայրէն միւսը՝ Թոգաթէն մինչև Ամասիա, Ամասիայէն մինչև Շապին Գարահիսար, հայ գիւղացին, հայ արհեստաւորը, հայ վաճառականն ու հայ մտաւորականը եղած են խարիսխը առաջադիմութեան, նախակարապետը քաղաքակրթութեան: Իսկ թուրք զանգվածը եղած է պատերազմիկ, զինվորական, պետական պաշտոնյա և ոճրագործ, հանդեպ իր *ռայայիին,* իր շինարար ու վերածնող ձեռքերուն»[1]: Ղ. Ինճիճյանի տվյալներով, 1800-ականներին, քաղաքն ուներ 10 հազար տուն, որից 2 հազարը հայեր[2]: Նա գովաբանում է Սեբաստիայի արհեստագործներին, մանավանդ կտավագործներին, որոնք տարին 500 քսակի աստառացու կտոր էին առաքում Եվդոկիա, Ղրիմ, Կոստանդնուպոլիս, իսկ վաճառականները ներմուծում և վաճառում էին եվրոպական ապրանքները: Սեբաստիայի պատմության բազմահմուտ գիտակ Ա. Աղեքսանդրյանի դիտարկմամբ, քաղաքի բնակիչները 1830-ականներին ըստ ազգությունների՝ *22.000 թուրքեր* էին և *13.429 հայեր:* Մեջբերած մի այլ աղբյուրի համաձայն՝ հայերի թիվը 16.648-ից 17.000-ի էր ձգվում[3]:

Թուրքիայի պղծնագործության խոշորագույն կենտրոնը *Եվդոկիան էր՝ Թոքատը,* որը «...պարունակում է մոտ *քսան հազար տուն կամ հարյուր հազար բնակիչ,*- գրում է Սորիերը:- Հայ վաճառականները մեզ գանգատվեցին առևտրի չափազանց անկման համար, և մասնավորապես այն առևտրի, որ կապված է հանքերի հետ»[4]: Ղ. Ինճիճյանը ակնածանքով է խոսում քաղաքի հարուստ առևտրականների, նուրբ, արվեստի հասնող արհեստագործների արտադրանքի և «փարթամ բնակչության» մասին: Նրա կարծիքով նույն տարիներին Եվդոկիան ուներ *16 հազար տուն,* որից 2500-ը հայ[5]: Ուրեմն, այս երկու հեղինակների կարծիքները իրար մոտ են, և քաղաքի ազգաբնակչության թիվը, փաստորեն, տատանվում էր *80-ից 100 հազարի միջև,* որից մոտավորապես 20 հազարը հայ, մնացածները թուրքեր, հույներ ու այլ ազգեր: Սույն տվյալների իսկությունը վավերացնում է Անդրեաս Աղեքսանդրյանը: Նրա կարծիքով հնում՝ *Կոմնունա,* հետագայում Նիքսար կոչվող քաղաքի ավերման պատճառով, քաղաքացիները հանգրվանեցին պղնձագործական արհեստի նշանավոր հայրենիք, եկվորներին աշխատանք և «հաց տվող» Եվդոկիա քաղաքում,

[1] *Վ. Համբարձումեան,* Գիւղաշխարհ, 1927, Փարիզ, էջ 27:
[2] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, էջ 285:
[3] «Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ», էջ 359:
[4] «Ուղեգրություններ», հ. Զ, էջ 292:
[5] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 290:

որի բնակչությունը հասավ *«մինչև հարիւր հազարի»*: Սակայն եկվորները աստիճանաբար ցրվեցին Սամսոն, Կ. Պոլիս, Եգիպտոս, Զիլե, Նիքսար, Հերեկ, և դարակեսերին փոքրացավ այս թիվը:

Եվդոկիայի բնակչության քանակը ընդունում ենք 80 հազար[2], դրանից հայեր՝ 20 հազար, իսկ երկրորդ քառորդին *50 հազար*:

Ամասիան փռված էր *Իրիսի* հարթավայրի վրա: Գետը երկփեղկում էր քաղաքը, միաժամանակ նրան հմայք ու գեղատեսիլություն հաղորդում: Աչքի ընկնող շենքերը, արհեստանոցները, վաճառատեղիները տեղակայված էին գետի հարավային կողմում, իսկ հյուսիսային ափին բացառապես զորանոցներ էին և կառավարական հաստատություններ[3]: Ավերող քրդերի ու մրցակցող հույների գրեթե բացակայությունը քաղաքում հայերին հնարավորություն էր ընձեռում ծաղկեցնելու արհեստագործությունը և ընդլայնելու վաճառաշահ առևտուրը: Ընդհանուր ազգաբնակչությունն այստեղ 34 հազար էր, որից 16 հազարը՝ հայեր, 12 հազարը՝ սուննի թուրքեր, 6 հազարը՝ շիա թուրքեր[4]: *Սամսոն* քաղաքն ուներ 3000 հայեր, սակայն ավելի մարդաշատ ու հայաշատ էր Մարզվանը, որի ազգաբնակչությունը հասնում էր 20 հազարի, դրանցից մոտ 9.500-ը՝ հայ, 9 հազարը՝ թուրք, 1500-ը՝ հույն և այլազգիներ[5]:

Սեբաստիայի փաշայության Զիլե սանջակի կենտրոնում էր *Զիլե* կամ *Զելե* հայաբնակ քաղաքը, որն ընկած էր Եվդոկիայից 55 կմ հեռավորության վրա և Ամասիայից 12 ժամվա հետիոտն անցորդի ճանապարհ էր: Քաղաքը նախաքրիստոնեական անցյալ ուներ, հետագայում երբեմն անվանափոխության էր ենթարկվել, դարձել ասպատակող հզորների կողոպուտի ու ավերածության զոհ, իսկ 1397 թ. նվաճվել թուրքերի կողմից: Ղ. Ինճիճյանը գրում է. «...բնակիչք նորատաճիկք և յոյնք, ըստ մեծի մասին վաճառականք: են անդ և սակաւ ոմանք ազգէս հայոց եկամուտք»[6]: Տեքսիերը վկայում է, որ Զիլեն ունի 2000 տուն թուրք, 150 տուն հայ: Համիլտոնը 1835-36 թվականների համար գրում է. «Զիլե քաղաքը 2000 տուն ունի, որոնք բացի քանի մը հայերեն, ամենքն ալ թուրքեր են»: Ամինիոսը 1842-ին եղել է Զիլեում և այն ներկայացնում է իբրև բազմամարդ, վաճառաշահ քաղաք, 4000 տուն մահմեդականներով, 150 տուն հայերով: Գ. Սրվանձտյանցը վկայում է, թե 1878 թ. «Այս քաղաքի մէջ կը բնակին միմիայն հայք և թուրք,

[1] «Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ», էջ 346:
[2] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 290:
[3] *Ս. Սապահ-Գիւլեան,* Փոքր Հայքի յիշատակներ, մասն առաջին, Չիկագո, 1917, էջ 212:
[4] *Վ. Համբարձումեան,* Գիւղաշխարհ, էջ 28-33:
[5] «Փոքր Հայքի յիշատակներ», էջ 181:
[6] «Աշխարհագրութիւն», մասն Ա, էջ 294:

յոյնք եղեր են առաջ, իսկ այժմ քանի մը վաճառական ևեթ կը գտնուին երթևեկ»[1]:

Մալաթիան հնամենի անցյալ ուներ և Տիգրան Մեծի աշխարհակալությունից ի վեր ընդունել էր հայկական տարրը, աստիճանաբար վերածվել ոչ թե հայաբնակ, այլ հայկական քաղաքի, տալով իշխանների ու զորավարների մի ամբողջ բույլ, երբեմն ծնկի բերելով արաբներին՝ ամենից վաղ նվաճելով ինքնուրույնություն ու անկախություն: Սելջուկյան աշխարհավեր արշավանքներին զոհ գնաց քաղաքի շքեղաշեն տեսքը, իսկ 1401 թ. քաղաքակրթության վայրագ թշնամիների ձեռքով կրակի հրեղեն լեզուներին կերակուր դարձան կանգուն մնացած դղյակներն ու եկեղեցիները: Հին *Մելիտենեն*, Թուրքիայի տիրապետության տակ ընկնելու նախօրեին, արդեն մոխրաբլուրների էր վերածվել, իսկ նրա բարեշեն պարտեզներին, առատաբերք ագարակներին տեր էին դարձել եկվոր, ապստամբ քրդերը: Ուրեմն, այստեղ խոսքը հին Մելիտենեի մասին չէ, այլ նոր Մալաթիայի, որ բարձրանում էր նախկին քաղաքատեղից քիչ հեռու ընկած տարածության վրա:

Նոր Մալաթիայի. «...բնակչաց համար թէպէտ վերը յիշուած միջոցին,- գրում է Ա. Աղեքսանդրյանը, - դրուած է 30.000 անձ և երրորդ մասը քրիստոնեայ կամ հայ, համեմատութիւնը կրնայ ընդունելի ըլլալ, բայց ոչ թուոյն քանակը. յայտնի է տներու որքանութենէն, վասնզի 3000 կամ 3600 տան մէջ, որուն երրորդ մասը 1000 կամ 1200 տունը քրիստոնեայ էին՝ ինչպէս գրուած է, այն ատենուան համար, 15.000-20.000 է աւելի բնակիչ չէր կրնար ունենալ: Իսկ հիմակ կը համարիմ 30.000-էն աւելի, իբր 5-6.000 տուն, որոնց 1500-2000 տունը քրիստոնեայ են»[2]:

Հայաբնակ քաղաքների մեջ առևտրով ու արհեստագործությամբ, ինչպես նաև հայկական ստվար ազգաբնակչությամբ այս պատմաշրջանում աչքի ընկնող դեր էր կատարում Կեսարիան նախկին Կապադովկիայի կենտրոնատեղին: 1800 թվականին քաղաքն *ուներ 6 հազար տուն*[3] *թուրքեր, 2 հազար տուն հայեր, 1500 տուն հույներ, ընդհանուր թվով մոտ 50 հազար շունչ, որից 10 հազարը հայեր:* 1850-ականներին հայերի թիվը մեծացել էր: Մորդտմանը, Կապադովկիայով անցնելիս, 1852 թ. եղավ Կեսարիայում և հաղորդեց, թե քաղաքն ուներ 52.630 բնակիչ[4], դրանց թվում 15 հազար հայեր:

Թուրքիայի տնտեսական, ինչպես նաև արևմտահայ հասարակա-

[1] *Գ. Սրվանձտեանց,* Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ, մասն Ա, 1879, էջ 75:

[2] «Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ», էջ 398:

[3] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 312:

[4] *Արշակ Ալպոյաճեան,* Պատմութիւն Հայ Կեսարիոյ, էջ 693:

կան-քաղաքական կյանքում մեկ դար շարունակ լուսարձակել է Ակն քաղաքը, որը 200 տարի ամիրայական գերադաստաններ է տվել Կ. Պոլսին, Զմյուռնիային: Ակնեցի ամիրաները դարասկզբին զավթել էին կայսրության տնտեսության հիմնական զարկերակները: Գործակցելով թուրք փաշաների հետ, նրանք էին հավաքում ողջ Փոքր Ասիայի հարկերը, մշակում Կապան Մադենի արծաթի հանքերը:

Քաղաքի ամիրայական գերդաստաններին փոխարինելու եկան նորելուկ էֆենդիները, եվրոպական առևտրին ու օտար շուկաներին ծանոթ կոմպրադորական բուրժուազիայի հանրահայտ ներկայացուցիչները: Կրկին դեպի Ակն հորդեց էֆենդիական հարստությունը, որին քաղաքը նեղ թվալու պատճառով, այն տեղափոխեցին Արևմտյան Եվրոպա կամ Թուրքիայի մայրաքաղաք:

Ակնը հետագայում նշանավոր է նաև իր գրական սերունդներով: Այն հայ գրականության մարզում փայլատակումներ տվեց: Քաղաքը աճեցրեց ու սկզբնապես կրթեց *Արշակ Չոպանյանին, Արփիար Արփիարյանին, Գրիգոր Չոհրապին, Միսաք Մեծարենցին, Միամանթոյին, Սմբատ Դավթյանին, Հովսեփ Ճանիկյանին:* Բնության գեղեցկությունը ոչ միայն երիտասարդ սերնդին մղում էր դեպի գրական անդաստանը, այլև Ակնը դարձնում բանաստեղծների քաղաք: Տնտեսական «ապահով» կյանքը, բնակչության մեծ մասի ունևոր լինելը քաղաքացիներին հնարավորություն էր տալիս կրթության ուղարկել իրենց երեխաներին, ապահովել նրանց հետագա առաջընթացը: Ուրեմն, հռչակավոր այս քաղաքը դարակեսին ուներ *2200 տուն՝ 20 հազար ազգաբնակչությամբ:* Հետագա տասնամյակներին նվազեց նրա ազգաբնակչությունը, իջավ 10 հազարի, որից 5.507-ը հայեր էին[1]:

Տիգրանակերտը պատմական Հայաստանի այն քաղաքներից էր, որը կառուցվել ու ծաղկման էր հասել Տիգրան II-ի ժամանակաշրջանում (95-55 թթ.): Հնամենի այդ քաղաքը հետագայում բազում ավերածություններ, անթիվ արշավանքներ ու օտարերկրացի տերեր տեսավ, վերանվանվեց *Դիարբեքիր, Ամիդ, Միոֆարշին,* կռվախնձոր դարձավ հույն, արաբ, թուրք, քուրդ և այլ ազգերի պատկանող պատմագիրների միջև, մոռացվեց հայկական լինելու նրա իսկությունը, և ամեն մեկը ջանաց սեփականացնել վերջինիս ոչ միայն ներկան, այլև անցյալը: Սակայն ապացուցելու հարկ չկա, որ Տիգրանակերտը հայկական քաղաք էր, իսկ հայերի կողքին աստիճանաբար տեղ էին գրավում հերթականորեն տիրապետող ազգերը, ջանում իրենց կնիքը դնել, եթե ոչ նրա տնտեսության, ապա անվանման վրա:

Դարամուտին *Խարբերդն* ուներ 3000 տուն[2], Արղանա-Մադենը՝

[1] *Հ. Կ. Ճանիկեան,* Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 32:

[2] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 236-237:

1000 տուն, երկուսն իրար հետ 16 հազար բնակչություն, որից 10 հազարը հայեր, 6000-ը թուրքեր: 1840-ականներին այդ թիվը աճել էր և դարձել 6000 տուն միայն Խարբերդում, դրանից 4200-ը թուրքեր, 1440-ը հույներ, 360-ը ասորիներ, մոտավորապես 25 հազար շունչ հայեր: Արղանա-Մադենը այս տարիներին կուչ էր եկել և պղնձի տարեկան հանույթը իջել էր 2.000.000 հոխայի[1]: Քաղաքը, սակայն, հետագա հիսնամյակին գնալով վերելքի ճանապարհ է բռնում և դառնում գործարանային արդյունաբերության ակնառու կենտրոններից մեկն Արևմտյան Հայաստանում:

Արաբկիրը պատկանում էր ասիական Թուրքիայի ամենագեղեցիկ քաղաքների թվին: Ազգաբնակչության մեծ մասը քրիստոնյա էր: Ըստ որում, «թուրքերի և քրիստոնեական ազգաբնակչության միջև եղած հարաբերությունները ավելի բավարար էին, քան թե փոքրասիական մյուս քաղաքներում»[2]: Մահմեդականները ազատ խոսում էին հայերեն և գտնվում էին հայ ճարտարվեստ արհեստավորների, հարուստ վաճառականների ազդեցության տակ: Տեղական կառավարիչները նույնպես բարի աչքով էին նայում հայերի հարստությանը, քանի որ ապրում ու վայելում էին նրանց աշխատանքի հաշվին: Քաղաքի 15 հազար բնակչության 12 հազարը հայեր էին, 3 հազարը՝ թուրքեր:

Դարի առաջին քառորդին *Բայազետն* ուներ 3000 (ըստ Ինճիճյանի՝ 5000, որից հայերը՝ 700) տուն[3]: Սակայն 1828 թվականի տվյալներով՝ քաղաքի 6 թաղամասերում ապրում էին 1331 տուն հայեր, 300 տուն քրդեր, 400 տուն եզիդիներ[4]: Կարա-Հիսարը 2.200 տուն ուներ, կիսով չափ թուրքեր[5], *Բաբերդը*՝ 3000 տուն[6], Մուշը 15 հազար բնակիչ՝ 6000-ը հայ[7]: Լինչի հաղորդագրության համաձայն, դարի երկրորդ կեսին Մուշում եղել է 20 հազար բնակիչ[8]: Ս. Կարապետի վանքի վանահայրերից մեկը հաղորդում է նաև, որ քաղաքում կար 7 հազար տուն, դրանցից 1800-ը՝ հայ: Եթե ամենանվազը՝ 5-ով հաշվենք ամեն մի ծուխը, ապա կստացվի 35 հազար բնակիչ, որոնցից 9000-ը՝ հայեր: Քրդական տարրը ոչ միայն մինչև «Թանզիմաթից» հետո էլ արգելում էր քաղաքի հայաշատ դառնալուն, նրան թույլ չէր տալիս հասնելու գոնե միջնադարյան մակարդակին:

---

[1] «Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան», էջ 45-48:

[2] ՌԱՔԱ, Քաղ. արխիվ, գործ 1627, թերթ 85-86:

[3] «Ուղեգրություններ», հ. Զ, էջ 101, *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 114, տե՛ս նաև ՎՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 2, գործ 2462, 2466, 1829 թիվ:

[4] ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, *Լեոյի* անձնական արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 20, թերթ 1-2:

[5] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 93:

[6] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 790, թերթ 3:

[7] Նույն տեղում, գործ 615, թերթ 7:

[8] "Армения", стр. 221.

Խնուս քաղաքն ուներ 5 հազար բնակիչ[1]: Ճիշտ է, այս քաղաքաբնիկների մեջ հայերի կողքին հավասարաչափ տեղ էին գրավել թուրքերը և քրդերը, սակայն արհեստն ու առևտուրը շարունակում էին մնալ հայերի մենաշնորհը:

Դերսիմի նահանգը, հետո արդեն գավառի վերածված քրդախառն սանջակը, ուներ 4 քաղաք *Դերսիմ, Չարսանջակ, Մեծկերտ, Բալու*: Սրանք անունով էին քաղաքներ, սակայն զարգացման աստիճանով քիչ էին տարբերվում շրջակայքի գյուղերից: Ավելի ճիշտ կլիներ հիշյալ բնակավայրերն անվանել գյուղաքաղաքներ, որտեղ բոլորը միասին, ապրում էին 18 հազար հայեր[2], առավելապես արհեստավորներ ու առևտրականներ:

Բազմամարդ, հարուստ ու զարգացած քաղաքներ կային Կիլիկիայում, *Հալեպի* և *Ադանայի* վիլայեթներում: Այստեղի արհեստագործության ու արդյունաբերության արտադրանքը դուրս էր գալիս երկրից, թափանցում եվրոպական առևտրական հրապարակները, հաջողությամբ վաճառվում, հաճախ և մրցարշավում հաղթանակ տանում անգլիականի դեմ: Բավական է հիշել, որ Թուրքիայի գյուղատնտեսության ամենազարգացած ճյուղերը, արդյունագործական ձեռնարկություններն այստեղ էին գտնվում: Ադանան, Մերսինը, Մարաշը, Հաճընը, Սիսը, Զեյթունը հայաշատ քաղաքներ էին: Ողջ երկրամասի առևտրի ու արդյունաբերության կազմակերպողները հայերն էին:

1830-ական թվականներին *Ադանան* ուներ 12 հազար բնակիչ: Դարակեսից հետո այն աճեց 250 տոկոսով և *հասավ 30 հազարի*[3]: Հայերը կազմում էին քաղաքի ազգաբնակչության կեսից ավելին:

Կիլիկիայի ազգային ոգին *Զեյթունն* քաղաքն էր, որի բնակիչներն իրենց հերոսական պայքարով անջնջելի էջեր թողեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի բազմադարյան պատմության մեջ: Պատրիարքարանի 1878-80-ական թվականների վիճակագրության համաձայն քաղաքն ուներ 17.600 քրիստոնյա և 240 մահմեդական բնակչություն[4]:

Մինչև XIX դարասկիզբ *Հաճընն* քաղաքում բացարձակապես հայեր էին ապրում: Հետագայում Բ. Դուռն այնտեղ լցրեց չերքեզներ ու թուրքեր, սակայն նորաբնակները քաղաքի տնտեսական կյանքում էական դեր չկատարեցին: Ղ. Ալիշանը գրում է. «Ըստ վերջին վիճակագրության օսմանեաց Հաճին քաղաքի և շուրջ սահմանանցն իբրև 12.000 հայ

---

[1] Ուղևորութիւն ի Փոքր Ասիա, գրեցին *Ալպեր Տրվիլե* և *Գեորգ Փիսոն,* Վիեննա, 1892, էջ 41:

[2] Մանրամասն տե՛ս *Գ. Երևանեան,* Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրութ, 1956:

[3] *А. Д. Новичев,* Очерки экономики Турции, стр. 275, համեմատիր՝ Մատենադարան, *Գալուստ Տեր-Մկրտչյանի* արխիվ, թղթ. 16, վավ. 10:

[4] *Գր. Գալուստեան,* Մարաշ..., էջ 96-97:

բնակիչք էին. իսկ մահմետականք իբրև 200 ոգիք միայն...: Ի մերայոցս ոմն յամի 1840 զտունս հայոց Հաճնոյ հաշուէր 2000, այլ ոմն 2500 յամի 1854, Պարտիզպանեանն (1863) 3000, Դէսիէ Փռանկ որ առաջ քան զսոսա ի (22 յունիսի 1836) էանց ընդ Հաճին նոյնպէս 2 կամ 3000 տունս ասէ, և 34 տուն այլազգեաց, և մզկիթ մի սոցա ի ստորև շինին...»[1]: Գնալով հայերի թիվն ավելացել է Հաճընում, ձգվել մինչև 30 հազարի:

Կիլիկիայի մյուս խոշոր քաղաքը *Մարաշն* էր: «Արաքսի» «Կիլիկիան» 1890-ականների սկզբին Մարաշում հաշվում է 50 հազար բնակչություն, որից 18 հազարը՝ հայ: «Բիւրականի» հոդվածագիր Սմբատ Դավթյանը 1899 թվականին քաղաքի բնակչության թիվը բարձրացնում է 80 հազարի, որից հայեր՝ 20 հազար: Գր. Գուտալյանը 1912 թ. հրատարակած «Կիլիկեան աշխարհագրութիւն» դասագրքի մեջ Մարաշի բնակչությունը գրանցում է 70 հազար, այդ թվում հայեր՝ 40 հազար: Հովսեփ Տեր-Վարդանյանը «Մարաշի ջարդը» գրքույկում վիճակագրական հաշվումներ կատարելով, համադրելով Առաջին աշխարհամարտից առաջ և հետո քաղաքում եղած բնակչության թիվը, եզրակացնում է, որ այնտեղ ապրել են 75-80 հազար քաղաքացիներ: Այս թվի մեկ երրորդը տարբեր դավանանքի հայեր էին: Բրիտանական հանրագիտարանը 50 հազար էր հաշվում Մարաշի բնակչությունը, որոնց կեսը թուրքախոս հայերն էին[2]:

Դժվար չէ համանման մանրակրկիտ ու ավելի բազմազան տվյալներ բերել հայկական մյուս բոլոր քաղաքների բնակչության մասին: Հայրենի և օտար աղբյուրներն այս հարցում չափազանց հարուստ են, հեղինակներն՝ առատաձեռն: Սակայն ընթերցողին ձանձրացնելու մտավախությամբ, մի կողմ թողնենք մեր ձեռքի տակ եղած մյուս բոլոր թվերը և բավարարվենք ներքոհիշյալ աղյուսակով (տե՛ս էջ 269): Նախօրոք խոստովանենք, որ թվերը վերցրել ենք *մոտավոր* և *կլորացրել*: Հաշվի ենք առել նաև այն տվյալները, որոնց հրապարակումով աշխատությունը կծանրաբեռնվեր և կդառնար դժվարընթեռնելի:

Կազմելով ներքոհիշյալ աղյուսակը, գոնե մոտավոր ճշգրտությամբ հաշվումներ անելու համար, անհրաժեշտ է Արևմտյան Հայաստանը բաժանել հայաբնակ նահանգներից, տոկոսները հանել երկրամասի ընդհանուր բնակչության համեմատությամբ: Ուրեմն, աղյուսակն ընդգրկում է միայն Արևմտյան Հայաստանի՝ *Կարսի, Ախալցխայի, Էրզրումի, Վանի, Բայազետի, Դիարբեքիրի, Սեբաստիայի* փաշայությունների, նրանց մեջ մտնող իշխանապետությունների տարածքի վրա ընկած քաղաքների բնակչությունը:

[1] *Ղ. Ալիշան*, Սիսուան, 1885, Վենետիկ, էջ 165:
[2] *Գր. Գալուստեան*, Մարաշ, էջ 242-243:

Ադրիանապոլսի պայմանագրի նախօրեին Արևմտյան Հայաստանի 7 նահանգներն ունեին 4,5 միլիոն բնակչություն, դրանցից մոտավորապես 2,5 միլիոնը հայեր էին: Նշանակում է, քաղաքաբնակները դարի առաջին երեսնամյակին կազմում էին 41,8 տոկոս Արևմտյան Հայաստանում, այսինքն՝ 668,1 հազար շունչ: Միայն հայերը 273,3 հազար էին, ընդհանուր բնակչության 6,01 տոկոսը, քաղաքացիների 40,9 տոկոսը: Ինչքան էլ մոտավոր լինեն այս թվերը, համենայն դեպս, նրանք պակասավոր են և մոտենում են Ա. Դ. Նովիչևի այն կարծիքին, թե Թուրքիայի գյուղատնտեսության մեջ ներգրավված էր բնակչության «մոտավորապես 85 տոկոսը»[1], բնականաբար, մնացած 15 տոկոսը ապրում ու գործում էր քաղաքներում:

№ №	*Քաղաքները*	*Ընդհանուր բնակչությունը 1800-1830 թթ.*	*Հայերը հազարներով*	*Ընդհանուր բնակչությունը 1830-1850 թթ.*	*Հայերը հազարներով*
1	Կարին	135	31	50	10
2	Վան	55	10	40	20
3	Տիգրանակերտ	35	10,5	31	12
4	Սեբաստիա	40	15	30	13
5	Խարբերդ	16	9,8	25	15,4
6	Մեզիրե	3	2	2	1
7	Բաղեշ	12	6	20	13
8	Մուշ	15	6	20	10
9	Երզնկա	13,1	7	18	12
10	Արաբկիր	15	12	15	9
11	Բաբերդ	14	10	13	8
12	Խնուս	5	4	6	3
13	Կարս	15	10	14	6
14	Ախալցխա	20	8	-	-
15	Ախալքալաք	8	4	-	-
16	Դերսիմ	5	3	6	4
17	Բալու	4	2	6	3
18	Չարսանջակ	3	2	5	3
19	Սղերդ	17	10	15	6
20	Բայազետ	15	6	13	4
21	Նարիման	8	6	3	2
22	Արդահան	10	8	8	6
23	Ամասիա	30	14	34	17
24	Եվդոկիա	80	20	50	18
25	Մարզվան	18	8	20	9,5
26	Դիվրիկի	8	6	9	7
27	Սկն	20	10	10	5,5
28	Չմշկածագ	6	4	8	7
29	Թորթում	8	6	7	5
30	Կարա-Հիսար	6	4	7	3
31	Արղանա-Մադեն	8	6	3	1,5
32	Խլաթ	7	5	5	4
33	Քղի	14	8	13,3	7
		668,1	273,3	506,3	244,9

[1] *А. Д. Новичев*, Очерки экономики Турции, стр. 43.

1830-50-ական թվականներին, անցյալի համեմատությամբ, քաղաքային բնակչությունը, ճիշտ է, նվազեց 162 հազարով, սակայն չէ՞ որ նվազեց նաև ընդհանուր ազգաբնակչությունը: Էրզրումի փաշայությունից ու Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթեցին մոտ 90 հազար հայեր, Ախալքալաքն ու Ախալցխան միացվեցին Ռուսաստանին: Եթե քսան տարվա բնական աճը հաշվենք ըստ գաղթողների քանակի, որը նույնպես անհնարին էր, Արևմտյան Հայաստանի բնակչությունը հաշվենք չորս միլիոն, ապա 506,3 հազար քաղաքացիները կկազմեն նրա ոչ թե 10 տոկոսը, այլ 12,6 տոկոսը:

XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի քաղաքային ազգաբնակչությունը նվազեց: Բնակչության նվազումը, քաղաքների տնտեսական անկումն ունեին մի շարք էական պատճառներ: Ամենակարևորը արևմտահայ ազգաբնակչության 1828-1829 թթ. պատերազմին հաջորդող, զանգվածային գաղթն էր Էրզրումի փաշայությունից, Ախալքալաքի ու Ախալցխայի միացումը Ռուսաստանին: Բավական է վերհիշել, որ 130 հազարից ավելի բնակչություն ունեցող Կարինը 1830-ականների սկզբին վերածվեց խղճուկ գյուղաքաղաքի, հետագա երկու տասնամյակներին միայն նորից լցվեց շրջակա գյուղերից եկած հայ ու թուրք նորաբնակներով, սակայն այլևս նախկին մարդաքանակին չհասավ: Բնակչության մեծ կորուստներ ունեցավ Կարսը, իսկ Չըլդրի փաշայության բազմաթիվ մարդաշատ քաղաքներ դուրս եկան Թուրքիայի կազմից: Անժխտելի է, որ գաղթող հայ ազգաբնակչությունը, Ռուսաստանի հովանու ներքո, բռնում էր զարգացման նոր ճանապարհ, իր բախտը կապում ռուս ժողովրդի ճակատագրին, ճաշակում ցարական գաղութակալության անմարս, դառը դեղահաբը, սակայն և հաղորդակից դառնում ռուսական առաջավոր մշակույթին, ներգրավվում Եվրոպայի ժանդարմի դեմ բարձրացող ազատագրական, հեղափոխական շարժման մեջ:

Քաղաքային ազգաբնակչության նվազելու երկրորդ, ոչ քիչ էական պատճառը պատերազմների բերած ավերածություններն էին, խանափաշայական հոռի վարչակարգերը, քրդական դերեբեյների անընդմեջ զինաբախումները, միջցեղային կռիվները: Բեդեր-խան բեյի, Մահմուդ խանի ապստամբական կռիվները քայքայեցին Վասպուրականի, Դիարբեքիրի քաղաքները, ճանապարհները դարձրին ավազակների եկամտի աղբյուր, արհեստագործներին հավաքագրեցին իրենց ռազմական ճամբարներում, ստիպելով վառոդ, հարձակողական և պաշտպանական զենքեր արտադրել: Դիարբեքիրը, Բաղեշը, Վանը, Բայազետը 1840-ական թվականներին, մի ամբողջ տասնամյակ, չկարողացան ոչ միայն առաջընթացի քայլեր կատարել, այլև պահպանել նախկին մակարդակը: Պատերազմում էին կառավարությունն ու քրդական ապստամբ, կենտրոնախույս ցեղապետերը, հրդեհվում էին քաղաքների ամբողջ թաղամասեր, ունեզրկվում հարուստ արհեստավորները և առևտրականները. մասնավորապես քրիստոնյա անպաշտպան ռայան տրորվում էր հզորների ոտքերի տակ, ոչնչանում, ունեզրկվում կամ բռնում գաղթի ճանապարհը:

Արևմտյան Հայաստանի քաղաքային կյանքի անկման ամենագլխավոր պատճառը եվրոպական ապրանքների ներմուտն էր Թուրքիա, գործարանային էժանագին արտադրանքի հետ մրցակցելիս, ձեռքի աշխատանքի պտուղների դուրս մղումը առևտրական մրցահրապարակներից: «Անգլիական գործարանային ապրանքները,- գրում է Ֆ. Էնգելսը,- շնորհիվ իրենց ցածր գների, արագորեն դուրս են մղում ասիական հարեմների տնային ինդուստրիայի արտադրանքները»[1]: Անկում է ապրում, թե արդյունաբերությունը և թե ներքին առևտուրը:

Մի հանգամանք ևս: XIX դարի կեսերին ամերիկյան պլանտատորների արտահանած էժանագին բամբակը ողողեց եվրոպական շուկաները: Հատկապես ֆրանսիական թեթև արդյունաբերությունը սնվում էր ամերիկյան բամբակով, ներմուծելով տեքստիլ արդյունաբերությանն անհրաժեշտ հումքի 96 տոկոսը[2]: Սակայն սկսվեցին քաղաքացիական կռիվները ԱՄՆ-ում: Արյունահեղ մարտերի հետևանքով անկում ապրեց ամերիկյան բամբակագործությունը: Ֆրանսիան զրկվեց հումքի առատաբեր աղբյուրից: Լիոնի ու Փարիզի մանածագործարանները, հումքի բացակայության պատճառով, դարակեսին անգործության էին մատնված: Գործարանատերերի խրախուսանքով, հումքի նոր աղբյուրներ փնտրելիս, պետությունը կանգ առավ Կիլիկիայի վրա, որտեղից արդեն ստանում էր փոքրաքանակ բամբակ: Ֆրանսիացիներն այժմ Կիլիկիա էին ուղարկում բամբակի առողջ սերմեր, կազմակերպում բամբակամշակման նոր ձևեր, նույնիսկ բարձրացնում հումքի գինը, որպեսզի ընդլայնեին այդ կուլտուրայի ցանքատարածությունները և շտապ գործի դնեին իրենց գործարանները: Ամեն ինչ սկզբում կատարվում էր քաղաքներում ապրող հայերի, մարիոնետների ձեռքով: Կիլիկիայի բամբակամշակությունը կարճ ժամանակահատվածում վերելք ապրեց, քաղաքները լցվեցին նորաբնակներով: Ահա թե ինչու երկրամասի գյուղաբնակչության և քրդական խժդժություններից ճողոպրած, Արևմտյան Հայաստանի քաղաքային ազգաբնակչության, հատկապես արհեստավորների ու առևտրականների հաշվին ստվարացան Կիլիկիայի հայկական ծովամերձ քաղաքները՝ Ադանան, Մերսինը, նույնիսկ Հաճընը և Մարաշը[3]:

---

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. IX, стр. 383.

[2] Раздел Азиатской Турции по секретным документам Министерства иностранных дел, под редакцией Е. А. Адамова, М., 1924, стр. 21-22.

[3] Մանրամասն տե՛ս ՍՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 82, թերթ 1-30: Ընդարձակ մի զեկուցագիր է այս, որը կազմել է Կովկասի շտաբի գնդապետ Լյունդեկվիստը՝ Ադանայի ու Հալեպի վիլայեթների տնտեսական կյանքի, ազգաբնակչության քանակի, քաղաքական կացության վերաբերյալ:

XIX դարի առաջին քառորդի համեմատությամբ, երկրորդ քառորդին Կիլիկիայի հայկական ու հայաբնակ քաղաքներում ազգաբնակչության թիվը բարձրացել և *հասել է 90 հազարի*, իսկ դարի երկրորդ կեսին ավելի շատացել: Կոզանյանների տիրապետության վերացումը, քրդաաֆշարական ցեղապետերի ոչնչացումը, Ֆրանսիայի ազդեցության ուժեղացումը, գործարանային արտադրության ընդլայնումը խթանեցին Ադանայի, Մերսինի ծաղկմանը:

Արևմտահայ քաղաքային ազգաբնակչության մի ստվար բեկորը, ինչպես միջնադարում, առավել ևս այս ժամանակաշրջանում թողել էր բնաշխարհը, պատմական դաժան ճակատագրի բերումով բնակության տեղ ու գործավայր ընտրել այնտեղ, որտեղ ապրելու և աշխատելու քիչ թե շատ հնարավորություններ կային: Դրանք ևս բաժանվում էին Թուրքիայի հայաբնակ քաղաքների ու գաղթօջախների, որտեղ մեծ թվով քաղաքաբնակ հայեր էին ապրում:

Հայաբնակ քաղաքների մեջ *Կեսարիան* ուներ 15 հազար հայ ազգաբնակչություն[1], Տրապիզոնն ուներ (33.000 բնակիչ) 558 տուն հայ լուսավորչական, 140 տուն կաթոլիկ, 9-ը բողոքական, ընդհանուր թվով 3987 շունչ[2], Սամսունը՝ 3 հազար[3], Բրուսան՝ 1000, Բեյրութը՝ 5 հազար, Հալեպը՝ 3 հազար, Դամասկոսը՝ 5 հազար, Բաղդադը՝ 4 հազար, Երուսաղեմը՝ 1000, Ադաբազարը՝ 1300 տուն[4], 6500 շունչ, Կուտինան՝ 450 տուն[5], 2250 շունչ, Նիկոմեդիան (Իզմիտը)՝ 4500[6]: Ուրֆա քաղաքի «... բնակիչք որոնք արք կորովիք տունք իբր 12.000,- գրում է Ղ. Ինճիճյանը,- *յորոց իբր 2000 են տունք հայոց* (ընդգծումները մերն են-Հ. Ղ.), իսկ մնացեալք տաճկաց, գտանին անդ և ասորիք սակաւք բազմաթիւ արուեստաւորաց են ի սմա յազգէս հայոց. մանաւանդ քարակոփք, ճարտարապետք, և կտաւագործք առաւել քան 400 *թէգկահ:* Ունի Ուրֆա վաճառանոցս, հրապարակս, բաղանիս...»[7]: Եթե ամեն մի ծուխ հաշվենք հինգ շունչ, ապա Ուրֆայում դարասկզբին կլինի 10 հազար շունչ, Ալեքսանդրիայում՝ 90 տուն[8], 450 շունչ, Ադրիանապոլսում՝ 105 տնտեսություն՝ 525 շունչ[9]: *Ոչ լրիվ տվյալներով,*

[1] *Ա. Ալպոյաճեան*, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. 1, էջ 693:

[2] «Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան», էջ 224: Տե՛ս նաև ՍՍՀՄ ԿՊՈՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 63, թերթ 86: Բելոցերկովցկը (ռուսական հյուպատոս) կազմել է «Ակնարկ Տրապիզոնի վիլայեթի մասին» մանրակրկիտ զեկուցագիրը:

[3] «Փոքր Հայքի յիշատակներ», էջ 101:

[4] *Հ. Ներսիսի վ. Սարգիսեան,* Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, 1864, Վենետիկ, էջ 38:

[5] Նույն տեղում, էջ 43:

[6] *Մինաս Գասապեան,* Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ, էջ 24:

[7] «Աշխարհագրութիւն», հ. Ա, էջ 332:

[8] Մատենադարան, Զանազան հեղինակների արխիվ, թ. 68բ, վավ. 149:

[9] Նույն տեղում, թղթ. 68բ, վավ. 148:

XIX դարի առաջին կեսին Թուրքիայի հայաբնակ քաղաքներում հայ բնակչության թիվը հաշվվում էր 67.212 շունչ:

Խոսք չի կարող լինել, որ վերոհիշյալ թվերը պակասավոր են, ճշգրիտ վիճակագրության բացակայության պատճառով հիմնված են ուղեգրող անցորդների, երբեմն թերթերի պատահական թղթակիցների, ականատես հուշագրողների կամ ականջալուր վկայությունների վրա: Մենք չկարողացանք գտնել մի շարք այլ քաղաքների հայ ազգաբնակչության քանակին վերաբերող հավաստի տվյալներ, քաղաքներ, որտեղ դարի երկրորդ կեսին մեծաքանակ հայեր են ապրել: Ուրեմն, այս բոլորը մոտավոր է, պակասավոր: Համենայն դեպս, XIX դարի առաջին կեսին հայկական Կիլիկիայի և Օսմանյան կայսրության հայաբնակ քաղաքներում ապրում էին 157.212 շնչից ավելի հայեր:

Արևմտահայ քաղաքային ազգաբնակչության ծաղիկը՝ թուրք-եվրոպական առևտրի մեջ զորեղ միջնորդի դեր կատարող հայ վաճառականությունը, արդյունագործ, ճարտարվեստ, պետական պաշտոնյա, սեղանավոր ամիրայությունը, հմուտ, նրբագործ արհեստավորությունը, հայրենիքից ամեն ժամ գաղթող պանդուխտ-աստանդականը, օրվա հացի կարոտ մշակներն ու բեռնակիրները կենտրոնացված էին *Կոստանդնուպոլսում* և *Զմյուռնիայում*՝ Թուրքիայի խոշոր զույգ գաղթօջախներում: Այստեղ էին հաստատվել հայ մտավորականությունը, դպրոցները, պարբերական մամուլը, տպարանները, մշակութային ընկերությունները, այստեղ էին ծավալվում հասարակական-քաղաքական շարժումները, երբեմն նաև՝ դասակարգային պայքարը ու մշակվում դրանց գաղափարախոսությունը:

Կ. Պոլսի հայ գաղութի սկզբնավորումը վաղնջական անցյալ ունի, իսկ ստվարացումը կատարվեց այն ժամանակ, երբ մահիկի մակաբույծ հորդաների կողմից հափշտակված հայրենիքը ղզլբաշների ահարկու սրի հարվածներից եղերականորեն ամայանում էր, վերածվում ավերակույտերի: Հայրենազուրկ խլյակ դարձած արհեստավոր ու վաճառական հայը կամովին, թե բռնությամբ հանգրվանում էր սուլթանների մայրաքաղաքում, «ջանում» նրա պերճանքն ու շուքն ապահովել և օր առ օր ստվարացնում գաղթօջախի ազգաբնակչությունը: *«Հայոց* թիւն ի Կ. Պոլիս,- գրում է Հ. Գ. Մրմրյանը,- *ամէն ատեն հազիւ 150.000-ն անցած է ու այն՝ XIX դարին կէսերը* (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[1]: Սակայն Մրմրյանի բերած այդ թիվը պակասավոր է, քանի որ մի այլ աղբյուրում ասված է, թե 1840-ականներին Կ. Պոլսի հայերը 222 հազար էին[2], 1860-80-ականներին՝ 250-300 հազար[3]: Դա-

[1] *Հ. Գ. Մրմրեան,* Մասնական պատմութիւն հայ մեծատուններու, 1909, Կ. Պոլիս, էջ 49:

[2] *M. A. Ubicini,* Lettres sur la Turquie, p. 27.

[3] «Արևելեան մամուլ», 1878, էջ 283, «Արծագանք», 1882, N 36, էջ 557, «Մշակ», 1874, N 93, 1876, N 26, *Ռաֆֆի,* Երկեր, հ. 9, էջ 482:

ռակեսի համար *միջինը վերցնելով 200 հազար,* պետք է նաև ավելացնել, որ ամեն օր մայրաքաղաք էին լցվում ու դուրս գալիս հազարավոր պանդուխտներ, առանց որևէ հիմնարկի կամ գերատեսչության կողմից արձանագրվելու:

Երեքհազարամյա հնություն ունեցող Զմյուռնիան XVI-XVIII դարերում համարվում էր «արևելքի աստղը, հոնիական ջրերի պճնագեղ թագուհին»[1]: 1800 թ. քաղաքում կային 12 հազար հայեր, 1812 թ. 10 հազար, 1857 թ. 10 հազար, 1868-1898 թթ. 12 հազար[2]: Ակնհայտ է, որ XIX դարի առաջին կեսին քաղաքի հայ ազգաբնակչության թիվը տատանվել է 10-12 հազարի միջև: Սակայն, եթե բնակչության իմաստով 1830-50-ականներին Արևմտյան Հայաստանի քաղաքները նոսրանում էին, ապա գաղութահայ օջախները ստվարանում էին, ընդունում թե արհեստավորներին, թե վաճառականներին, և թե, մանավանդ, օրավարձու մշակներին, բաղնիքների նկուղներում, մրի և կեղտի մեջ հաշմվելու հարկադրյալ հայ շինականին, աշխատավոր, կորովի, կռնակով բեռներ տեղափոխողներ դարձած համալներին:

Այսպիսով, անցյալ դարի առաջին կեսին Արևմտյան Հայաստանում կային *245 հազար* հայ քաղաքաբնակներ, Կիլիկիայում ու հայաբնակ նահանգներում 157.212 շունչ, գաղութահայ օջախներում *210 հազար,* ընդհանուրը 612.212 հոգի: Եթե արևմտահայ ընդհանուր ազգաբնակչության թիվը հաշվենք *երեք միլիոն,* ապա նրա 20,4 տոկոսը կկազմեն հայ քաղաքաբնակները: Հետևաբար, սխալ չէ, որ համայն Թուրքիայի արհեստագործության ու առևտրի ընդհանուր հաշվեկշռում հայկական տարրը էական տեղ ուներ ոչ միայն քանակով, *այլ, որ շատ կարևոր է, որակով:* Քաղաքացի հայերը ամենուրեք ընդունակ, գործիմաց արհեստավորներ էին, լեզուներին հմուտ վաճառականներ: Սակայն հարստության ու պերճանքի կողքին միշտ ներկա էր թշվառությունը, ողբը, հարստահարությունը: Բոլոր պարագաներում դարի առաջին կեսին արհեստագործությունը և առևտուրը շարունակում էին հարատևել և նույնիսկ առաջընթաց քայլեր անել:

*
* *

Նախաթանզիմաթյան Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի ոչ բոլոր քաղաքներն էին ծաղկած վիճակում: Նրանց մի մասը, նախքան քրդական վայրենաբարո ու ավազակությամբ պարապող ցեղախմբերի ընդունումը, դերեբեյությունների ուժեղացումը, կենտրոնախույս տրամադրությունների սաստկացումը հայտնի էին թե առևտրով, թե սրան

[1] *Հ. Յակոբ վ. Քոսեան,* Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, Վիեննա, 1899:
[2] *Թեոդիկ,* Ամենուն տարեցոյցը, 1924, Փարիզ, էջ 154-155:

իբրև հենք ծառայող արհեստագործությամբ: Բայազետը, Մուշը, Խլաթը, Մանազկերտը, նույնիսկ Բիթլիսը վերածվել էին գյուղաքաղաքների, անընդմեջ զինաբախումների պատճառով կորցրել կենսունակ ու շնորհալի քաղաքացիներին: Հայկական տարրը կամ ոչնչացման էր դատապարտվել, կամ էլ, թողած իր բնօրրանը, հանգրվանել այնտեղ, ուր արտադրելու, վաճառելու, հետևաբար և ապրելու քիչ թե շատ հնարավորություններ կային: Որոշ իմաստով աշխուժություն էին ապրում թուրքահպատակ քաղաքներից Կարինը, Եվդոկիան, Սեբաստիան, Ադանան, Մարաշը, Ամասիան, Ակնը, Արաբկիրը: Սակայն իրենց պորտալարով բոլոր քաղաքներն էլ տակավին չէին կտրվել երկրագործությունից ու անասնապահությունից: Քաղաքացիների մեծ մասը պահում էին անասուններ, մշակում տնամերձ ընդարձակ այգիներ ու քաղաքամերձ ագարակներ, արհեստին ու առևտրին զուգընթաց պարապում էին գյուղատնտեսությամբ: Եվրոպացի անցորդները վկայում են, թե առավոտյան ու երեկոյան քաղաքների նեղ փողոցներով անցնում էին անասունների նախիրները, բարձրացնելով փոշու ծխածածկույթ, ապականում առանց այն էլ անմաքուր օդը: Այդուհանդերձ, քաղաքներում էին կենտրոնացված արհեստագործությամբ ու առևտրով պարապող հայերը, հույները, որոշ թվով և թուրքեր ու քրդեր:

Ձեռակերտ արհեստագործության մարզում ունեցած հաջողություններով, սեփական արտադրանքի վաճառահանմամբ կամ ցուցադրումով հայկական քաղաքները, Թուրքիայի հայ արհեստավորները հայտնի էին ողջ կայսրությունով մեկ, ասիական Արևելքին և նույնիսկ Եվրոպային: Պատմության ետնախորքից եկող, դարերի ավանդներ ունեցող, տարածված, անհրաժեշտ ու զնգացող արհեստագործության ճյուղն էլ մետաղագործությունն էր՝ իր տարատեսակներով, որը գնալով նրբացել էր, առաջընթաց կատարել, թե լայնությամբ և թե խորությամբ:

Մետաղագործության համեմատական զարգացման համար XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի առաջին երեսնամյակին կային նախադրյալներ, ավելի ճիշտ՝ նպաստող պայմաններ: Նախ, Թուրքիայի հիմնականում գյուղատնտեսական երկիր լինելը, գործարանային արդյունաբերության գրեթե բացակայությունը, եվրոպական ապրանքների տակավին թույլ տարածումը: Արհեստավորը սկզբնաշրջանում անմիջապես էր վաճառում արտադրանքը և մտահոգվում նորերի արտադրության խնդրով:

Մետաղագործության և ընդհանրապես Թուրքիայում արհեստագործության զարգացման համար առավել կարևոր նախադրյալը հումքի առկայությունն էր. հանքային հարստությունների առատությունը. պղնձի, երկաթի, ոսկու, արծաթի, ածխի, մի խոսքով՝ տարատեսակ հանքանյութի գոյությունը երկրի ընդերքում: Հանքանյութերով առավել հարուստ էին Արևմտյան Հայաստանը, Կիլիկիայի հայաբնակ նահանգները: Դժվար էր գտնել մետաղների անուններ, որոնց գոյությունն

հսպառ բացակայեր այդ երկրում: Բնությունը շռայլորեն բաշխել էր հայ ժողովրդին, սակայն օտար տիրակալներն այնպիսի պայմաններ էին ստեղծել, որ դժվար էր օգտվել եղած հարստությունից: Տարատեսակ հանքանյութ պարունակող բազմաթիվ հանքերից գործում էին քչերը, որոնք և կարողանում էին բավարարել արհեստագործների պահանջները: Գործում էին Տիգրանակերտի էյալեթի մեջ մտնող *Արղանա-Մադենի* պղնձահանքերը: Սրանք պարունակում էին նաև արծաթ և ոսկի: Եվրոպացի հանքախույզները վկայում են, թե Մադենը «...առատութեամբ տալիս է պղնձի... նիւթ, որն հանում են յոյն, հայ, թուրք գործաւորները, մասամբ հալում տեղում, ... իսկ ամենամեծ մասը ուղարկում են ասիական Թուրքիայի շահաստան քաղաքները»[1]:

Մադենի պղնձահանքերի հանույթը հասնում էր երկու միլիոն հոխա պղնձի, շուրջ 300 հազար տոննա՝ 240 հազար թուրքական ոսկու արժողությամբ[2]. «...հաշիւ մըն է այս,- գրում է խարբերդցին,-և անոր ճշտութեան մասին կարելի չէ բոլորովին ապահով զգալ: Բայց որոշ է, թէ Օսմ. պետութեան համար մեծ եկամուտ մը եղել է, ապահովելով քառապատիկ աւելի վաստակ»[3]:

1830-ական թվականներին Արղանա-Մադենը դարձել էր մի նշանավոր արդյունագործական կենտրոն: Ակնում նստած Արփիարյան ամիրայական գերդաստանը, մեկ տասնամյակ անց, պետությունից վարձույթով վերցրեց արծաթի հանքերը և իր հարստությունը հիմնականում գոյացրեց այստեղից ստացած մեծագումար եկամտի հաշվին[4]: Այս հանքերը ծաղկելով 1840-60-ականներին, հաջորդ տասնամյակներին, Գ. Սրվանձտյանցի վկայությամբ, գրեթե ավերակ էին դարձել ու դատապարտվել անուշադրության, մինչդեռ գործել էին սկսել Խարբերդի նահանգի մեջ մտնող այլ հանքօջախներ[5]:

«Մշակի» արևմտահայ թղթակիցը վկայում է, թե Խարբերդի «Հանքերն են առատ պղինձ (փոքր Մատինեն և Բալուայ հոշինա Մատինեն), ոսկի (Տէրսիմի մէջ), որ ծածկեալ կը մնայ, արծաթ (Կապան Մատինեն), աղ (Տէրսիմի մէջ), այս հանքերը կառավարութեան հսկողութեան և գործունէութեան ներքև են, պղինձը խիստ առատ է, այնպէս որ մէկ լիտր պղինձ 15 ղուրուշ, արծաթը մէջ, ծախքով առաջ կուգայ, եթէ այս հանքերը ընկերութեանց յանձնուի, տարեկան քանի մը միլիոն լիտր պղինձ պիտի արտադրեն...»[6]:

[1] Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Գալուստ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 16, վավ. 7, թերթ 11:

[2] *Բարունակ Պէյի Ֆէրուհխան,* էջ 48:

[3] *Վահէ Հայկ,* Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը, 1959, Նիւ-Եորք, էջ 659:

[4] «Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը», էջ 659:

[5] Տե՛ս *Յակոբ Ս. Խարաճեան,* Հանքերը Հայաստանի և Կիլիկիոյ, 1919, Նիւ-Եորք, էջ 12, 25, 42, 48-49:

[6] «Մշակ», 1879 թ. սեպտ. 29 (հոկտ. 11), N 166, Պողոս Նաթանյանի հոդվածը, որը տպագրվել է նաև «Արտոսր Հայաստանի» աշխատության մեջ:

Արծաթի, պղնձի, երկաթի, արճիճի հանքեր կային Գյումուշխանեում, որոնք շատ վաղուց էին շահագործվում և իրենց հանույթով բավարարում Կարինի ու Տրապիզոնի փաշայության արհեստավորներին:

Ինչպես Գյումուշխանեի, այնպես էլ Արղանայի հանքանյութը մշակվում էր պրիմիտիվ ու հնամենի մեթոդներով: Պղնձի հանույթը մեկ անգամ հալվում էր, վերածվում «սև պղնձի» գնդերի, տեղափոխվում ձուլման: Հիմնականում մշակումը կատարվում էր Անգլիայում: Հայ ինժեներները հետագայում միայն պարզեցին, որ պղնձի մեջ ոսկի կա: Այնուհետև անջատվող ոսկին փակում էր ճանապարհածախսը: Պարզ էր, որ դրանով ավելանում էր կապալառուների եկամուտը, սակայն ընդհանուր պղնձաքարը հնարավոր չէր դրսում մշակել: Հումքի մի մասը մշակում էին տեղում, դրա համար էլ ոսկու մեծ կորուստ էր տեղի ունենում:

1830-ական թվականներին միայն կառուցվեց Թոքատի պղնձամշակութային «գործարանը», որի մասին Ն. Սարգսյանը գրում է. «Երևելի է յոյժ *Դալխանէ,* այն է հալոց պղնձոյ, նորաշէն մեծ և ճարտարարուեստ, շինեալ առ սուլդան Մահմուտաւ ըստ ոճոյ Եւրոպացի գործարանաց. նմին իրի և հինն որ կայր յառաջնմէ, խափանեցաւ: Ամենայն հանք պղնձոյ մերձակայ սահմանացն աստ հալին և աստի սփռին այլ և այլ տեղիս. յայն սակս ճարտարք պղնձեղէն անօթոց բազմաթիւ են ի քաղաքիս»[1]:

Շապին-Կարահիսարի գավառում եղած կապարարծաթի հանքը դարի երկրորդ կեսին տարեկան 4,5 միլիոն գումարի հանքանյութ էր տալիս և շահագործման էր հանձնված անգլիական մի առևտրական ընկերության[2]: Քղի գավառում կային *հանքածուխ,* պղինձ, նավթ: «Սկսեալ Հագստուն գիւղէն և Քէոշմեռ լեռէն մինչև գրեթէ Հիւսէյնիկ (Երզնկայի մօտ), ամբողջ 15-20 մղոն երկարութեան վրայ գրեթէ հողի մակերես ելած են»[3]: Քեռշմեռ լեռը տալիս էր ադամանդներ, Սագաձորը՝ անտրացիտ, Բինգյոլի մեկ շառավիղը կազմող Քարտաք լեռը՝ պղինձ: Դերջանի և Քղիի սահմանահատվածը ընդհանուր շերտով նավթահանքեր ուներ[4]:

Վանի նահանգի հարավ-արևմտյան լեռնոտ մասերում մեծ պաշարներ պարունակող երկաթի և պղնձի հանքեր կային: «Երկաթի հանքերն ոմանք կը բանուին քանի մը գիւղերու մէջ ի Կարճկան, որոյ ներսի կողմերը կը գտնուի նաև բիւրեղ, ջրաղացի ազնիւ քարեր, ...այս բազմազան հանքերէն քանի մը հանքեր կը բանեցնեն Կարճկանի գիւղա-

[1] *Հ. Ներսիսի վ. Սարգիսեան,* Տեղագրութիւնք, էջ 60:

[2] *Վ. Համբարձումեան,* Գիւղաշխարհ, էջ 24-25:

[3] «Նոր Գեղի», Ազգագրական հանդէս, 1964, էջ 44:

[4] Նույն տեղում, 1964, էջ 45:

ցիք նահապետական միջոցներով, որք կը սպառեն անբաւ անտառներ: Փոսեր կը փորուին անտառաշատ տեղեր և փայտեր դիզելով կը վառեն, երկաթ հալեցնելու և զտելու համար: ...*Կարճկանցիք պողպատ ալ կը շինեն իրենց երկաթէն, և իրենց շինած պողպատը լաւ ջուր ունի քան եվրոպական պողպատը* (ընդգծումը մերն է- Հ. Ղ.)»[1]:

Կիլիկիայի լեռները տալիս էին երկաթ, արծաթ, ոսկի, կապար, արջասպ, ձուք, բորակ և մալախիտ: Մանավանդ հռչակավոր էին Կիլիկիայի արծաթախառն կապարի, Ալբիսթանում գտնվող Զեյթունի երկաթահանքերը[2]:

Այսպիսով, չնայած ֆեոդալական արտադրահարաբերություններին, տեխնիկայի հետամնացությանը, արհեստավորի կյանքի ու գույքի անապահովությանը, պետության շահագրգռվածության համարյա բացակայությանը, օտար կապիտալի քայքայիչ ազդեցությանը, տակավին հսկայական քանակությամբ հանքանյութ էր հանվում Արևմտյան Հայաստանում, Փոքր Ասիայում ու Կիլիկիայում, մշակվում, վերածվում մետաղի, դրվում արդյունագործության մեջ: Մետաղագործությունը զարգացած էր Եվդոկիա, Երզնկա, Խարբերդ, Վան, Կարին, Ադանա, Զեյթուն, Սեբաստիա, Արաբկիր և այլ քաղաքներում: Սակայն մետաղագործություն անունը կրող արհեստաճյուղի մեջ էլ կարևոր տեղ էր գրավում պղնձագործությունը:

Վերոհիշյալ քաղաքների մեջ պղնձամշակության զարգացման տեսակետից առաջինի պատիվը վերապահված էր Եվդոկիային: Հումքի աղբյուրներին մոտ լինելը, արհեստագործության արտադրանքի վաճառահանումից ստացված եկամուտները, բազմաթիվ մանուֆակտուրաների ու էսնաֆությունների մեջ ընդգրկված արհեստավորների միջև եղած մրցակցությունը և, վերջապես, արդեն եվրոպական ապրանքներին դիմակայելու անհրաժեշտությունը նպաստում էին, միաժամանակ քաղաքի արհեստավորներին ստիպում համահավաքել ուժերը արտադրելու քանակով շատ գնորդին բավարարելու, որակով լավ մրցակցին դիմանալու համար: Ղ. Ինճիճյանը գրում է. «Ի կողմանէ արուեստաւորաց մարթ է կոչել զԹոգաթ քաղաք պղնձագործաց կամ ղազանճոց. որոց գործ համբաւեալ է և ընտիր համարեալ քան զայլ ամենայն տեղեաց օսմանեան տէրութեան. յայն սակս պղնձի անօթք Թոգաթու, սեղանք, կրակարանք, կաթսայք և այլն սփռին յէրզիռում. ի Կոստանդինուպօլիս, Ամասիա և անտի ի Սամսուն և այլ նահանգս»[3]:

Եվդոկիան հայ պղնձագործների քաղաքն էր: Այս մարզում նա անգերազանցելի էր ողջ Թուրքիայի թեկուզ բոլոր քաղաքների հետ համեմատած: Արհեստն այստեղ առանց վերապահության վերածվել էր արվեստի: «Մարզուանի պղնձագործ արհեստաւորները մինչև 1830 թ. և այնուհետև կարողացան կենդանության նշույլներ ցույց տալ դարի երկրորդ կեսին միայն»:

Պղնձագործության ասպարեզում մեծ հմտություն էին ձեռք բերել *Երզնկայի* արհեստավորները[1]: XIX դարի կեսերին արդեն խոսվում է քաղաքի պղնձագործների հաջողությունների մասին, նույնիսկ Եվդոկիայի հետ համեմատության փորձեր արվում:

Երկաթագործներն ու դարբինները թվաշատ էին *Խարբերդում:* Վարպետները հայերն էին, բանվորների մեջ կային նաև թուրքեր: Նրանք պատրաստում էին կողպեքներ, երկրագործական գործիքներ, տնային իրեր: Սեդրակ Ավագյանը պատրաստում էր մկրատներ, դանակներ, ունելիներ, վաճառքի ուղարկում երկրից դուրս: Նրա արտադրանքի արտաքինն ավելի գեղեցիկ ձևավորում ուներ, քան գործարանային Եվրոպայից ներմուծվածները:

Քաղաքում պատրաստում էին նաև մանկական երկաթյա օրորոցներ, անիվավոր կառքեր: Զարգացած էին թիթեղագործությունն ու պղնձագործությունը: Պղնձի վարպետները կերտում էին գեղատեսիլ գավաթներ, պղնձյա փոքր ու հսկա կաթսաներ, կժեր:

Ընդհանուր առմամբ մետաղագործությունն աշխույժ էր *Ախալցխայում, Դերսիմում, Վանում, Բաղեշում,* սակայն սրանց մեջ ավելի տարածվածը և եկամտաբերը, հայերի մենաշնորհ դարձած արհեստը ոսկերչությունն էր, հայտնի իր նրբաճաշակ տարատեսակներով, շլացնող փայլով: Ոսկերչությունն էլ ավելի խորը արմատներ էր գցել Վանում, Կարինում, Ախալցխայում, Սեբաստիայում և այլուր:

Վանը մնում էր իբրև ոսկերչական արհեստի ու արվեստի հանրահռչակ հայրենիքը: Դարասկզբին *«Ամէն արհեստաւորք քաղաքին զոր ոսկերիչք* (ընդգծումը մերն է- Հ. Ղ.) խոյակք կամ ջուլիակք են, ազգէս հայոց...»[3]: Առաջնակարգը մնում էին ոսկերիչները: Սրանց համար գոցված դարպասներ չկային: Ոսկերչի ձեռակերտը մտնում էր սկսած գեղջկական համեստ խրճիթից, վերջացրած ամենազոր սուլթանի, շահի, թագավորի, լորդի ու պլանտատորի պալատը, արտաքին շուք տվող իրերի, զարդերի մեջ գրավում կենտրոնական տեղը: Վանում և ընդհանրապես «ոսկերչական արհեստը մյուս արհեստներու նման սահմանափակ չէ, որոնցմէ արտադրված ապրանքներու տեսակ-

[1] «Արծագանք», 1884, N 34, էջ 504:
[2] *Հ. Առաքելեան,* Զէյթուն, 1896, Թիֆլիս, էջ 27:
[3] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 290:

[1] *Հովհ. Հակոբյան,* Ուղեգրություններ, հ. Ա, 1932, Երևան, էջ 49:
[2] «Խարբերդը և անոր ոսկեղէն դաշտը», էջ 664-665:
[3] *Ղ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 140-141:

ները գրեթե 30-ը չեն անցնիր. ան կընդարձակվի այնքան որքան կգորին արհեստավորի միտքն ու կարողությունը»[1]:

Ոսկերչությունը Վանում կատարելության հասավ, զարգացման նոր թափ ստացավ XIX դարի կեսերին: Մանավանդ քրդական դերեբեյությունների վերացումից, քուրդ վայրենաբարո խոլամների ճանկերից արհեստավորին հանելուց, տեղական հարկերից քաղաքացիներին «ազատելուց» հետո «...Վանա ոսկերիչին ոսկեղենիկ դարագլուխ կարելի է համարել: Բերկրանքի, անհոգութեան և գործի առատութեան մէջ ինքզինքը կը կոտորէր ոսկերիչ ասնաֆը: Բազմաթիւ յաճախորդներուն լեցուն քսակը հապա՜...:

Գիշերը ցորեկին խառնած ոսկերիչը, գործերու հեղեղի մէջ, շուարած և շըլմորած՝ կը սպառնար, թէ ինչո՞ւ չունենար 20 ձեռք մէկի տեղ, քսան յաճախորդ բռնելու համար: Ահա աշակերտներու լէգէոն մը սկսաւ յորդան գալ դէպի ոսկերիչ ասնաֆը: Ոսկերիչը հարուստներն անգամ թողլով վաճառականութիւնը (հարուստներու որդոց այդ կտակը), իրենց զաւակներ ոսկերչութեան ղրկեցին հոգեզմայլումով մը դիտելով ոսկիներու այն տարափը, որ ասնաֆին ծոցը կը տեղար: Բայց այդ երկար չտևեց»[2]: Ներկայի քննադատությամբ, հայացքը դեպի անցյալը հառած, փոքր-ինչ չափազանցության գիրկն ընկած սնապարծ մտավորականի նկարագիր էր այս, որը, սակայն, վերապահումով ընդունելու դեպքում էլ չի կարելի անգոսնել ոսկերչական արհեստի զարգացած վիճակը անցյալ դարակեսին:

Տարատեսակ այս արհեստավորների գոյությամբ հանդերձ Վանի ոսկերիչների մեջ աշխատանքի բաժանումը չափազանց թույլ էր կամ համարյա բացակայում էր: Սկզբից մինչև վերջ ոսկերչական արտադրանքն անցնում էր մեկ մարդու ձեռքով, հետևաբար կանոնավոր ու կատարյալ գործիքների անհրաժեշտությունն առավել զգալի էր, որոնք չկային ասիական Տաճկաստանի ծայրահատվածային այդ անկյունում: «Արհեստավորը կստիպվի իր գործիքներուն նախնական դրության մեջ կախվել իր մտքեն և մատներեն, հաճախ բռնադատելով զանոնք ձեռագործն ավարտելու համար: Մինչ Պոլսո նման լուսավորված քաղաքներու մեջ հսկա մեքենաները իրենց արագ ու անվերջ շարժումներով կմաշվեն մեզ հիացման առարկա եղող ապրանքներ արտադրելով, հոս՝ նեղ խանութներու մեջ, տիրոջ հրաշակերտ եղող բնական մեքենան կսպառի, արտադրելով նույնքան հիանալի, հաճախ՝ առավել նուրբ ապրանքներ, չըսեմ գլուխգործոցներ, որոնց ամենափոքր մասերն անգամ արհեստավորի մատներու մեջը կկերտվին»[3]: Սակայն, եթե գլան պատրաստող մեքենան օգնեց ոսկերչության զարգացմանը

[1] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 227, գործ 346, թերթ 1:
[2] Նույն տեղում, թերթ 4-5:
[3] Նույն տեղում, թերթ 2-3:

մայրաքաղաքում, ապա նպաստեց նաև տեղի ձեռագործ արհեստի քայքայմանը: Այնպես որ Վանի ոսկերչական էսնաֆությունները տակավին զերծ էին թե՛ զարգացման մեքենայական հրաշքից և թե՛ դրան հետևող տնտեսական քայքայումից:

Ոսկյա առարկաների վրա փորագրելիս, սևադի օգտագործումով, վանեցիները, փաստորեն, իրենց ձեռքն էին պահում սևադման մենաշնորհը, սևադով պատրաստած զարդերով բավարարում էին ոչ միայն տեղացիների պահանջները, այլև մեծ քանակությամբ արտահանում Կ. Պոլիս ու Թուրքիայի մյուս խոշոր քաղաքները: Պոլսեցիները սևադման տեխնիկան սկզբում վերագրում էին Վիեննայի արհեստավորներին: Հետագայում Վանի արտադրանքը, երբ առատորեն արտահանվեց մայրաքաղաք, իր շուքով ու փայլով ստիպեց զեղչելու այդ կարծիքը: Սակայն սևադման մարզում Վանը մնալով իբրև ուսուցիչ, աշակերտներ հասունացրեց ուրիշների համար, սևադման տեխնիկան տարածեց ու հասցրեց Ռուսաստան: Այդ կատարվում էր կամ դրսից աշակերտներ ընդունելու, կամ էլ գաղթող, աշխարհասփյուռ հայ արհեստավորների միջոցով:

Կարինի, Ախալքալաքի, Ախալցխայի ոսկերիչները 1800-1830 թթ. միավորել էին ոսկերչական բազմաթիվ էսնաֆություններ, որոնց մեջ ընդգրկված բացառապես հայ արհեստավորները ջանում էին բավարարել տեղացիների պահանջները և նրանց թույլ չտալ ապավինել Վանի արհեստագործ վաճառականներին: Կարինի էսնաֆների կանոնադրության մեջ ընդարձակ տեղ է հատկացված ոսկերիչներին ու արծաթագործներին[1]:

Զինագործություն: Թուրքիայում ապրող քրիստոնյաներին արգելված էր զենք կրել: Հայը զրկված էր սառը և տաք զենքեր գործածելու իրավունքից, սակայն նրան «արտոնված» էր դրանք արտադրելը: Փաստորեն, «գյավուրը» զենք էր պատրաստում տիրապետող ազգի համար: Այսօր նա կռում էր սրեր, շինում հրացաններ, որոնք ամենայն հավանականությամբ վաղը ուղղվելու էին հենց իր դեմ: Չնայած դրան, ապրելու, արհեստով հաց աշխատելու անհրաժեշտությունը նրան հրամայաբար մղում էին այդ բնագավառը: Չմոռանանք ասել, որ անկախ իշխանություններում ապրող, հատկապես սասունցի և զեյթունցի քաջակորով լեռնականները զենքերն արտադրում էին իրենց համար:

Այսուհանդերձ, զինագործության օջախներ էին մնում ոչ միայն արծվաբույների տեսք առած Զեյթունն ու Սասունը, այլև արհեստաշատ Կարինն ու Վանը: Կարինի զինագործները դարերով զենք են մատա-

[1] Մաշտոցի անվան մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 258, վավ. 130, թերթ 1-5, տե՛ս նաև թղթ. 33, վավ. 263:

կարարել թուրքերին, մերձակա քրդերին: Ողջ կայսրության մեջ նշանավոր, ճանաչված զինագործներ էին Կարինի *«Եղի կարդաշ» - Յոթ եղբայրներ* կոչվող զինագործ հայ ընտանիքը: Ղրիմի պատերազմի նախօրյակին արգելվեց նրանց գործունեությունը: Յոթ եղբայրներից կենդանի մնացած երկուսը թողեցին մետաղամշակման հնոցը, վերցրին բահն ու բրիչը, անցան այգեգործության:

«Ասիական Թուրքիա» աշխատության հեղինակ Վ. Քինեն գրում է. «Էրզրումի վիլայեթի և հատկապես Էրզրում քաղաքի արդյունաբերությունը տաք և սառը զենքերի պատրաստությունն է: Տարբեր սիստեմներից պատրաստված հրացանները, ատրճանակները, մեծ պատրույգավոր հրացանները... յուրաքանչյուրն իր տեսակի մեջ, ամենահնացած ձևերից մինչև ամենանորերը, բոլոր տեսակներից աչքի ընկնող ու ամբողջովին կատարելագործված են, այսինքն ունեն այնպիսի հատկություններ, որ գնողն անպայման ցանկանում է դրանցից ունենալ: ...Էրզրումի զենքի ֆաբրիկաները զենքի տարբեր նմուշներ ուղարկել են Փարիզի 1867, Վիեննայի 1873, Ֆիլադելֆիայի 1876 թվականների համաշխարհային ցուցահանդեսներին: Այդ նմուշները միջազգային ժյուրիների կողմից բարձր գովասանքի են արժանացել ու պարգևատրվել: Նրանք հաստատել են երկրի զենք պատրաստողների արդարացի հռչակը: Վերջերս Էրզրումում և նրա շրջակայքում զենք պատրաստողները ձեռնարկել էին Հենրի Մարտինի և Վինչեստեր զենքերի արտադրությունը: Նրանց (Էրզրումցիների) արտադրությունը ոչնչով չէր զիջում *իսկականին*, հատկապես որակի հարցում, որտեղ գնահատվում է մասնավորապես զենքերի ամրությունն ու նրբությունը»[1]:

Գ. Սրվանձտյանցը Արաբկիրի մասին գրում է. «...ճարտարագործներ կան, որ դիւրութեամբ կը շինեն եվրոպական զէնքեր, մեքենաներ և նուրբ գործիքներ, որոնցմէ առաջինը կը համարուին Զաքար Ճիտէճեան և Պետրոս Տէմիրճեան»[2]:

Հազարների հասնող հրացաններ, շատ ավելի սառը զենքեր էին պատրաստում Վանի զինագործները: Նրանք նույնպես իրենց արհեստը կատարելագործում էին: Քանդակագործ Հովհաննես Հայրապետյանը պատրաստեց տասնութ գնդակ արձակող (տասնութ հարվածանի) մի հրացան և անունն էլ «Վան» դրեց[3]:

Այսպիսով, մետաղամշակությունն իր ճյուղերով զարգացած էր Արևմտյան Հայաստանում, հայաբնակ, բայց ոչ բոլոր քաղաքներում: Տեղի էր ունեցել արհեստի տեղայնացում, որն առայժմ պայմանավորված էր հումքի բազային մոտիկ լինելով: Մետաղամշակության հիմնա-

[1] *Vital Cuinet*, tome 1, p. 169-170.
[2] «Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ», մասն Ա, էջ 282:
[3] «Մասիս», 1882, N 3131:

կան կենտրոններն էին մնում *Կարինը, Եվդոկիան, Վանը, Երզնկան, Խարբերդը, Ախալցխան, Ախալքալաքը* (մինչև 1830 թ.):

Կաշեգործություն և կոշկակարություն: Կաշեգործական արհեստանոցներ էին գործում Խարբերդում: Այնտեղ մշակում էին ինչպես մանր, այնպես էլ խոշոր եղջերավոր անասունների մորթիներ: Մշակված կաշիները ներկում էին զանազան գույներով և ապա կարում կոշիկներ: Գույնզգույն ներկերն ստանում էին արտասահմանից, ներկում տեղերում[1], քաղաքի և շրջակայքի կոշկակար արհեստավորների համար հումք արտադրում: Կաշեգործության արհեստի տեսակետից կենտրոնական քաղաք էր Կարինը, որտեղի արհեստավորները գլխավորապես թուրքեր էին: Հայերը չնչին դեր ունեին կաշեգործության մեջ:

Եվդոկիայում գործում էր կաշվի մի գործարան, որի տարեկան արտադրանքի արժեքը կազմում էր 1000-1500 թուրքական ոսկի[2]: Գործում էին նաև 10 «դանարան» կամ «խաղախորդարան» (կաշեգործարան): Սրանց մեջ աշխատում էին 200-ի չափ գործավորներ, բոլորն էլ գրեթե թուրք: «Արաքսի» հոդվածագիր Լ. Մկրտչյանը, հիշատակելով քաղաքի մեկ գործարանը, ըստ երևույթին ի նկատի ուներ Գարապուլյանների կաշեգործարանը: Կային, սակայն, թուրքական բազմաթիվ «դանարաններ»:

Կաշեգործության, կոշկակարության, թանկարժեք մորթիներից մուշտակներ պատրաստելու արհեստանոցներ կային Ադանայում, Մարաշում, Բաղեշում, Կարինում և այլ քաղաքներում:

Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Փոքր Ասիայի հայաբնակ մյուս քաղաքներում, գյուղերում առկա էին արհեստի բազմաթիվ այլ տեսակներ: Կային *թիթեղագործներ, մսագործներ, հյուսներ, ջրաղացաշինարարներ, վարսավիրներ, ժամագործներ, հացագործներ, թաղիքագործներ, պայտառներ, որմնադիրներ, կավագործներ, համետագործներ*: Արհեստագործության թվարկված ճյուղերի մեջ ներգրավված մարդիկ, չնչին բացառություններով, արտադրում էին ֆեոդալական, հետամնաց արտադրամիջոցներով, բավարարում էին միայն տեղական կարիքները: Նրանք ստվարացնում էին արհեստավորության դասը, սակայն պատշաճ դեր չունեին երկրի տնտեսության մեջ: Աննշան էր վերջիններիս տեսակարար կշիռը Թուրքիայի ընդհանուր արտադրության, առավել ևս, առևտրի մեջ: Գրեթե նույնն էր վերոհիշյալ ճյուղերում աշխատողների զարգացման մակարդակը, համեմատած երկու հարյուր, գուցե և ավելի տարի առաջ եղած արհեստավորների մակարդակին:

[1] «Խարբերդը և անոր ոսկեղէն դաշտը», էջ 666:
[2] «Արաքս», 1887, գիրք Ա, էջ 93:

Այնուամենայնիվ, ինչպես տեսանք, XIX դարի առաջին կեսին տակավին կանգուն էին հայաբնակ քաղաքները, բարվոք վիճակ ունեին արհեստի մի շարք ճյուղեր: *Հիսուն հազարից ավելին էր հայ արհեստավորությունը:* Քաղաքները բարդ կացութաձևով էին ապրում: Բնակիչներից շատերն ունեին տնամերձ ագարակներ, շրջակա վայրերում հողամասեր, այգիներ, պահում էին անասուններ: Եթե այս տեսանկյունից նայենք, բացի Եվդոկիայից, Կարինից, Ադանայից ու Սեբաստիայից, մյուսները գյուղաքաղաքների տպավորություն էին թողնում:

Հարցն ունի նաև մի այլ կողմ: Հայկական քաղաքներում առաջացել էին նաև մանուֆակտուրաներ, հիմնադրվել էին կապիտալիստական տիպի հատուկենտ գործարաններ, էական թիվ էին կազմում երկրագործությունից իսպառ կտրված բանվորները: Դժվար է ասել, թե արդյունաբերողների ու բանվորների ո՞ր տոկոսն էին կազմում հայերը, բայց հայտնի է նրանց մեծամասնությունը արտադրության ընդհանուր պրոցեսում: Հատկանշական է նաև, որ այս նոր պրոցեսները առաջանում էին գործվածքեղենի արտադրության, մասամբ էլ՝ մետաղամշակության մարզում, որի մասին արդեն խոսք եղավ:

Բրդյա և բամբակյա գործվածքների արտադրությունը - յազմաճություն, բաստաճություն, կտավագործություն: Թուրքիայի հայաբնակ նահանգներում, Արևմտյան Հայաստանում վաղուց ի վեր արմատացած էր բամբակի և վուշի արտադրությունը: Բամբակացան դաշտեր էին ընկած Կիլիկիայի ծովամերձ շրջաններում, Սեբաստիայի, Կեսարիայի նահանգներում, Վասպուրականում: Ճիշտ է, բամբակագործությունը դարի երկրորդ քառորդին վայրէջք ապրեց, բայց այդ վերաբերում էր արտահանմանը: Պակասեց արտահանվող բամբակի քանակը, իսկ տեղական արհեստագործության հումքի բազան անխաթար շարունակում էր հարատևել մինչև Ղրիմի պատերազմը: Ամերիկյան քաղաքացիական պատերազմի տարիներին և նրանից հետո Թուրքիայի բամբակագործությունը, եվրոպական վեհապետների՝ սուլթանի պարտապանների ստիպմամբ, վերցվեց պետության հովանու ներքո և առաջընթացի որոշակի քայլեր կատարեց[1]: Մի խոսքով, բամբակահումքը բավարարում էր ֆեոդալական կայսրության արհեստագործներին:

Թուրքիան ուներ անասնապահության բազմաթիվ ճյուղեր: Ցանքատարածությունների կրճատման հետևանքով Արևմտյան Հայաստանի՝ Էրզրումի, Վանի, Կարսի, Բայազետի, Սասունի նահանգներում ու գավառներում ավելանում էին արոտավայրերը, հնարավորություն տալով ոչխարաբուծության զարգացմանը: Հատկապես քրդաբնակ շրջաններում նահապետական պարզ կենցաղով ապրող գյուղացիներն զբաղվում էին խաշնարածությամբ և արտադրում էին այնքան բուրդ, մազ, որը բավարարում էր ոչ միայն տեղական կարիքները, այլև արտահանվում էր Եվրոպա ու Ռուսաստան:

Բուրդը և բամբակը գեղեցիկ, նուրբ ու կոպիտ տարատեսակ գործվածքների վերածելու համար անհրաժեշտ էին նաև ներկեր: Գույների վառվռունությունը, չգունաթափվելը քիչ դեր չունեին ապրանքների վաճառահանման, գնորդներ գրավելու և բարձր գներով այն վաճառելու գործում: Հայաստանի բնությունն, իր ընձեռած առավելություններով, հայ արհեստավորին հնարավորություն էր տալիս հետամնաց Թուրքիայում, առանց եվրոպական քիմիական ներկերի, բնական ներկերի օգտագործումով մրցել գործարանային արտադրանքի հետ: Այդ ներկերի թագն ու պսակը *որդան կարմիրն* էր, որով հետաքրքրվում էին ոչ միայն Ռուսաստանի կառավարական շրջանները[1], այլ նաև Լիոնի մանածագործ ֆաբրիկանտները, Մանչեստրի տեքստիլագործները: *Որդան կարմիրը* դարակեսին այնքան հարգի էր, որ նրանով ներկում էին ընտիր կերպասեղենները, գունավառությամբ հիացնում ամենազոր արքաներին: Ղ. Ալիշանը գրում է. «Ամէնէն ընտիր և ամէնէն հին ճանչցուած *որդն կարմրոյ,* հռչակեալ իր շառափեայլ գունովն, որով թագաւորաց ծիրանիք և հրովարտակք կը ներկուէին...»[2]: Այդ ներկը օգտագործվում էր թագավորական հրովարտակների գունազարդման, գրչության արվեստի և այլ ասպարեզներում[3]:

Արևմտյան Հայաստանում կային նաև ներկաբույսեր, որոնցով շիճուկ էին պատրաստում, լցնում տակառների մեջ և ներկատներում օգտագործում հումույթ ներկելու կամ, ներկ պատրաստելով, հանում վաճառքի: Այնպես որ բրդի ու բամբակի ներկման համար կային անհրաժեշտ ներկանյութեր, ինչպես նաև փայտից ու երկաթից շինված հնամենի ու պարզունակ դազգահներ, որոնք քամում էին գործավորի ֆիզիկականը, վերածում գեղեցիկ, նրբաճաշակ կտորեղենի, հանվում շուկա: Այս առումով մինչև 1840-ականները ծաղկուն վիճակ ունեին Կեսարիան, Սեբաստիան, Եվդոկիան, Կարինը (մինչ 1820-ականների վերջը), մասամբ՝ Բաղեշը և այլ քաղաքներ:

Դարասկզբին Կարինն ուներ «բարգավաճ արդյունաբերություն», և խանութները լիքն էին սեփական արտադրանքի արդյունք հանդիսացող ապրանքներով[4]: Արդյունաբերական ապրանքների մեջ մեծ տեղ էին բռնում պղնձեղենը, երկաթագործական իրերը, սակայն քաղաքի

---

[1] См. Раздел Азиатской Турции... под редакцией Е. А. Адамова, М., 1924, стр. 22-23. Տե՛ս նաև ՍՍՀՄ ԿՈՊՊԱ, ֆ. 1300, ցուցակ 18, գործ 82, թերթ 13, 16, 17:

[1] *Լ. Մելիքսեթ-բեկ,* Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից, «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ, 1946, N 2-3, էջ 16-17:

[2] *Ղ. Ալիշան,* Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 52:

[3] Տե՛ս *Վ. Աբրահամյան,* Արհեստները Հայաստանում, էջ 162-163:

[4] «Ուղեգրություններ», հ. Զ, էջ 284:

տնտեսական հաշվեկշռում պակաս տեղ չունեին նաև բրդյա, բամբակյա, մետաքսյա գործվածքները:

Կարինն արտադրում էր մորթյա վերարկուներ: *Քուրքչիների* մի փոքր մասը թուրքեր էին, իսկ հիմնականում հայեր: Այս արհեստի մեջ հռչակ էին նվաճել *քուրքչի* Բոսենց Մահտեսի Սարգիսը, Հակոբը, ուստա Պողոսը, Մանկասարենց Մովսեսը, Պտղենց Ղազարոսը, Նահապետենց Գևորգը, Դիլպերի Աղաջանը[1]: Քաղաքի մուշտակագործները միավորվել էին էսնաֆությունների մեջ, ունեին 15 արհեստանոց և արտադրանքի մեծ մասը վաճառում էին պետությանը բանակի համար: Սակայն ոչ միայն մուշտակագործության, այլև հանդերձանքի մյուս բոլոր տեսակների պատրաստման նման զարգացումը բացատրվում է նաև նրանով, որ Կարինում էր նստած անատոլիական 4-րդ բանակը, ուստի նրա հագուստը և ուտեստը մատակարարում էին տեղացիները: Եթե ուտեստի մեծ մասը տեղացիներից ձրի էր վերցվում, ապա հագուստը գնվում էր արհեստագործ վաճառականներից, որը և նպաստում էր արհեստի վերոհիշյալ ճյուղերի աշխուժացմանը, եկամտաբեր դառնալուն:

Հիշյալ ճյուղերի մեջ էլ ամենաեկամտաբերը, նրբագեղության հասածն ու կատարելագործվածը մահուդագործությունն էր: Հայտնի է, որ կայսրության հեռավոր քաղաքներից Կարին էին գալիս արհեստավոր վարպետներ տեղի արդյունագործությանը ծանոթանալու, հայ վարպետների մոտ կատարելագործվելու[2]: Դրանում շահագրգռություն հանդես բերող թուրքական կառավարությունը 1837 թ. հունիսի 5-ին Սլիվենի (Բուլղարիա) մահուդագործ վարպետներին կարգադրեց Կարին գնալ կատարելագործվելու[3]: Նման խմբեր էին ընդունում պղնձագործներն ու երկաթագործները:

Բամբակագործության և մետաղագործության մարզերում մեծաթիվ *մանուֆակտուրաներ* էին առաջացել *Ուրֆայում, Դիարբեքիրում, Բրուսայում, Հալեպում* և այլ քաղաքներում: Հիշյալ քաղաքների արտադրանքը, մինչ եվրոպականի ներմուտը Թուրքիա, արտադրության կազմակերպման իր ձևով, ընդգրկած շրջանակներով, վաճառահանման շուկաներում խաղացած դերով հազիվ թե հնարավոր լիներ տեղակայել ֆեոդալական արտադրաեղանակի սահմաններում:

Մանուֆակտուրաների կարևոր, զարգացած կենտրոն էր դարձել *Զիլե* քաղաքը: Դարասկզբին այն հիմնականում թուրքական քաղաք էր, սակայն, ընդունելով մետաքսագործ ու տեքստիլագործ հայ արհեստավորների, աստիճանաբար դառնում է հայաշատ գաղութ, արհեստագործության մարզում նվաճում նոր բարձունքներ: Զիլեն արտադրում էր բրդյա ու բամբակյա, ինչպես նաև մետաքսյա *«կտոր»*, որն ուներ 10-17 արշին երկարություն, 7,5-12 արշին լայնություն և հիմնականում վաճառքի էր գնում Թեոդոսիա ամեն մի կտորը արժենալով 3-4 ռուբլի[1]: Զիլեյի մանուֆակտուրաները գնալով շատանում էին, կախման մեջ դրվում վաճառականներից:

Արևմտահայ արհեստագործության բնագավառում, միջնադարի համեմատությամբ, դարի առաջին կեսին առաջացել էին մի շարք նոր ու հատկանշական երևույթներ: Նախ հումքի բազայի մոտ լինելու, վաճառահանման շուկաների հետ կապված միջնորդ, հարստացող առևտրականների թելադրանքով, գնորդների պահանջարկով, պետության ուղղակի ու անուղղակի միջամտությամբ, արհեստատեսակների մեջ խմբավորում էր կատարվել ոչ միայն ըստ ճյուղերի, այլև ըստ քաղաքների: Այստեղ խոսքը մանր, փոշիացած, զուտ տեղական կարիքները բավարարող արհեստագործների մասին չէ, այլ այն արհեստատեսակների, մանուֆակտուրաների, որոնց հռչակը ճեղքում էր գավառական սահմանափակությունը, դուրս գալիս քաղաքների անձուկ շրջապարիսպներից և մտնում համաթուրքական, նույնիսկ համաեվրոպական առևտրական հրապարակները:

Նախորդ էջերից պարզվեց, որ արևմտահայ բոլոր քաղաքներն ունեին արհեստագործության բազմաթիվ ճյուղեր, սակայն դրանցից միայն մեկը կամ երկուսն էին հռչակված դրսում: Ակնհայտ դարձավ, որ պղնձագործության արհեստը տարածված էր երկու տասնյակ քաղաքներում, սակայն արտահանման մենաշնորհը մնում էր *Եվդոկիային, Կարինին, Երզնկային:* Ոսկերչության հայրենիքը *Վանն էր:* Տեքստիլագործության կատարելագործված արհեստների ճյուղերը համակենտրոնացել էին *Սեբաստիայում, Ամասիայում, Մալաթիայում, Ուրֆայում, Կյուրինում, Կարինում:* Բրդյա գործվածքների պատրաստումը վերապահվում էր *Մարաշին, Կարինին, Հաճընին:* Ուրեմն, արհեստագործության ճյուղերը դարակեսին համախմբվել էին ըստ քաղաքների, առաջացնելով մի պրոցես, որը գնալով ավելի էր խորանում, քանի որ եվրոպական ապրանքների ներմուտի հոսքի ուժեղացման պատճառով հարկադրական պահանջներ էին առաջանում կատարելագործումներ անել ձեռագործության ասպարեզում, դիմագրավել մեքենայի հրաշքին: Փոշիացած, պատահական արհեստավորներն անմիջապես դուրս էին շպրտվում հրապարակից, վերածվում օրավարձու մշակների, բռնում պանդխտության ցուպը կամ վերադառնում երկրագործության: Էսնաֆությունների և մանուֆակտուրաների մեջ խմբված արհեստավորները, իրար վրա կուչ գալով, երբեմն էլ

---

[1] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 33, վավ. 263, թերթ 15:

[2] *Ա. Ներսիսյան,* Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը, էջ 57-58:

[3] Տե՛ս *Косев А.,* Новая история Болгарии, Москва, 1952, стр. 87.

[1] Տե՛ս *А. Д. Новичев,* Очерки экономики Турции, стр. 90-91.

գործիքների, ներկերի, արտադրանքի ձևի փոփոխումով, շարունակում էին տնտեսական պայքարը, ճիգեր անում, եթե ոչ առաջընթացի, ապա առկա իրավիճակի հարատևման:

Նոր, ակնառու երևույթներից էր և այն, որ միևնույն ապրանքի վրա թափված աշխատանքը բաժանվում էր, տրոհվում տարբեր քաղաքների միջև[1]: Այսպես, օրինակ, պղինձը հանվում էր Արղանա-Մադենի և այլ հանքերից, հալվում Եվդոկիայի Ղալ-Խանե կոչված պղնձահալ հնոցներում, վերածվում պղնձյա կիսամշակ գնդերի, առաքվում Անգլիա, մշակվում, դարձվում պղնձյա ձողեր կամ թիթեղներ, վերադարձվում Թուրքիայի ամենատարբեր քաղաքներ: Պղնձագործները պատրաստում էին տարբեր տեսակի անոթներ, կաթսաներ, տեղում մաքրում և օգտագործում: Դրսի շուկաներում վաճառվող պղնձյա ամանեղենները երկրի ասիական գրեթե բոլոր քաղաքներից բերվում էին Եվդոկիա, մասամբ արտաքնապես ձևավորվում, անագապատվում, սպիտակ փայլ ստանում, նոր միայն արտահանվում: Այս պրոցեսը ավելի էր խորացել գործվածքեղենի արտադրության մարզում:

1830-ականների վերջերին, ըստ ռուսական «Մանուֆակտուրա և առևտուր» ամսագրի հաղորդագրության[2], Ամասիայում և Մալաթիայում արտադրվում էր մեծաքանակ *բեզ* կամ *բոգազ* կոչվող բաճկոնացու կտորեղենը: Արհեստագործների ձեռքով արտադրանքի մի մասը ներկվում ու վաճառվում էր տեղական շուկաներում: Սակայն դա փոքր քանակ էր կազմում: Վաճառականների պատվերով, առանց գունավորման, հիմնական արտադրանքը հանձնվում էր իրենց, սրանք էլ տանում էին Հալեպ և Եվդոկիա, ներկել տալիս հռչակավոր ներկատուն-բոյախանաներում, ապա տեղափոխում *Մոսուլ*, տալիս բասմաչիներին՝ դաջման, զարդանկարման, երբեմն էլ՝ ձևելու և բաճկոնների վերածելու, ապա նոր հանում երկրի ու դրսի առևտրահրապարակներ, վաճառում թանկ գներով, ստանում անհամեմատ բարձր շահույթ: Աստառը և բոբլան գործում էին Զիլեյում, ապա գնորդ-վաճառականների միջոցով ձևավորման էին տեղափոխում Ամասիա և Եվդոկիա: Ուրեմն, արտադրանքի վրա թափված աշխատանքի բաժանում էր եղել նաև ըստ քաղաքների, որը ազդարարում էր կապիտալիստական արտադրահարաբերությունների արշալույսը՝ արևմտահայ արհեստագործության անդաստանում:

Ժամանակաշրջանի ընդհանուր հետամնացության մեջ, որոշ քաղաքներում և արհեստագործության որոշ ճյուղերում տեղի էր ունեցել վաճառականական կապիտալի աստիճանական վերածումը արդյունագործականի, գործավոր-սեփականատեր արհեստավորի վերա-

[1] *А. Д. Новичев,* стр. 89.

[2] Журнал "Мануфактура и торговля", 1839, часть 2, стр. 325.



Մարաշ

Գեղարդի վանքը XII-XIII դդ.

փոխումը վարձու բանվորի: Նախորդ էջերում տեսանք, որ մի շարք քաղաքներում մանածահումքը տալիս էին վաճառականները, պահանջում պատրաստի արտադրանք, դիմացը վճարելով միայն աշխատավարձ օրավարձ, եթե արհեստանոցներն իրենց հսկողության տակ էին, գործավարձ, եթե արհեստավորները բանում էին տներում: Ճիշտ է նկատվում, թե հումք վերցնող ու աշխատավարձով աշխատող գործավորները հիմնականում նստած էին սեփական հարկի տակ դրված դազգահների առաջ, որոնց բանեցմանն օգնում էին նաև ընտանիքի մյուս չափահաս ու անչափահաս անդամները:

Վերոհիշյալ պրոցեսն ավելի էր խորացել Եվդոկիայում, այն էլ՝ գործվածքեղենի արտադրության բնագավառում: Անդրեաս Աղեքսանդրյանը Եվդոկիայի մասին գրում է, որ դարակեսի Թոքատն ուներ *բաստաչիության* 90-100 «գործարան», որտեղ աշխատում էին 800-1000 գործավորներ, պղծնագործական 50 խանութ, 300 հայ վարպետներով ու աշակերտներով[1]: Սակայն այստեղ արհեստանոցների մեծաքանակությունն ու ամեն մի հարկի տակ միջին թվով 6-10 գործավորների հավաքվելը չէր միայն կարևորը, հատկանշականը, այլ այն, որ արհեստավորը կախման մեջ էր ընկել գնորդ-վաճառականից և, փաստորեն, վերածվել «օրողչեքով» աշխատող վարձու բանվորի:

Ուրեմն, XIX դարի առաջին կեսին արևմտահայ, առավել ևս, Արևմտյան Հայաստանի քաղաքները հիմնականում մնում էին խարսխված ֆեոդալական տնտեսակարգի վրա, չնայած որ արդեն առաջացել էին զարգացած մանուֆակտուրային վերոհիշյալ ձեռնարկությունները, նույնիսկ ժամանակի առումով մի քանի խոշոր գործարաններ, որոնց հիմնադիրները, տնօրինողներն ու գործավորները հայերն էին՝ եվրոպացիների ու փոքրաթիվ թուրքերի մասնակցությամբ:

Թուրքական սուլթանները, առանձնապես դարի առաջին կեսին, *հայ ամիրաների ձեռքերով* կառուցել էին տալիս երկրի գրեթե բոլոր խոշոր գործարանները: Մայրաքաղաքում և արևմտահայ գավառներում տեղադրված այդ գործարանները պատկանում էին կամ պետությանը, կամ կառուցողներին: Արքունի դրամական տնօրեն Հակոբ Չելեպի Տյուզյանը, սուլթանին համոզելով, Անգլիայից գնեց շոգեմեքենաներ, Կ. Պոլսում հիմնեց դրամահատ գործարան և սկսեց կտրել ոսկյա ու արծաթյա դրամներ, «բարեձև և ըստ արժողութեան... դրամոցն անգղիացոց»[2]:

Մարմարայի ծովեզերքին կառուցվեց արքունի վառոդարանը, մի խոշոր գործարան, որը Մահմուդ II-ի կողմից 1826 թ. հանձնվեց Տատ-

---

[1] Տե՛ս «Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ», էջ 346:

[2] *Հ. Ղևոնդ Մարգ. Ալիշանեան,* Քաղաքական աշխարհագրութիւն, 1853, Վենետիկ, էջ 384:

յան Առաքելի տնօրինությանը և միացվեց վերջինիս տոհմի մյուս անդամների կողմից 1795 թ. հիմնված վառոդի գործարանին՝:

Աբդուլ Մեջիդը Հովհաննես Տատյանին լիազորեց Վելի էֆենդիի մարգագետնում կառուցել կայսերական բասմախանե-կերպասագործարանը և ֆեսի գործարանը, ինչպես նաև Զեյթուն Բուռնի զինագործարանը: Այս գործարանների ինժեներները հրավիրվում էին Անգլիայից, իսկ գործավոր-բանվորները Կ. Պոլսի հայ ու հույն արհեստավորներն էին: Կամավոր, հաճախ էլ բռնությամբ սրանք ներգրավվում էին արդյունաբերության մեջ, արտադրանքով զինում, հանդերձավորում բանակն ու նավատորմը: Մայրաքաղաքի *Գավաֆյանները* տեղում նավաշինության մասնավոր ու ընդարձակ գործարան ունեին, իսկ գործարանատերերը՝ միլիոնի հասնող հարստություն, նույնիսկ անձնական շոգենավ[2]:

Կեսարացի Սարգիս Գալֆան Կուզունճակի մեջ 1829 թ. հիմնում է յազմայի գործարանը, իսկ քիչ անց Գասարճյան եղբայրները բացում են *Կայսերի չիթար* գործարանը: Մկրտիչ Պոտուրյանի բերած տվյալներով Գասարճյան եղբայրները «... մեծ խանդավառութեամբ կը լծուեն գործի, և այնպիսի զգալի զարկ մը կու տան որ՝ քանի մը տարիներու մէջ 300-350 թեզկահ կը բանի 400-500 բանուորներով, թէ Պոլիս և թէ բոլոր գաւառները մասնաճիւղեր բանալով արտածումներ կընեն, ամէն կողմէն հռչակուած էր Գայսերի-Չիթարը, Գասարճեան եղբարց գործատունը՝ ուր մօտաւորապէս 3 հազարի մոտ հոգիներ կապահովէին իրենց ապրուստը»[3]:

Ողջ Թուրքիայով մեկ իր գործարաններով հայտնի էր Նիկոմեդիա հայաբնակ քաղաքը: Այստեղի գործարանները պատկանում էին սուլթանական կառավարությանը: Ամենահինը կայսերական մահուդագործարանն էր, կառուցված Մահմուդ II-ի օրոք՝ 1836 թ., Հովհաննես Բեյ Տատյանի հսկողությամբ, Նիկոմեդիայի հարավ-արևելյան լանջին, Ասլանբեկին կից հարթության վրա[4]: Հովհաննես Տատյանը նույն թվականին հիմնեց Հրեքեի կայսերական չուխայի գործարանը: «Չուխայի թագաւորական գործարանը,- գրում է «Հայաստանը»,- որ Իզնիմիտու և Պեղչեճիգու մէջտեղ շինուեցաւ, այն կողմերու հեռաւոր բնակիչներուն անգամ թե *մտաւոր կրթութեան և թե ապրուստի շատ մեծ օգուտ ըրաւ նն*...»[5]: Գործարանը ղեկավարում էր հայ ամիրան,

[1] Նույն տեղում, էջ 392, տե՛ս նաև ՍՍՀՄ ԿՊՈՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 9, գործ 155, թերթ 126:

[2] *Մեսրովբ վարդապետ Տէր-Մովսիսեանց,* Ուղևորութիւն Տ. Տ. Մկրտիչ վեհ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, 1894, էջմիածին, էջ 59:

[3] «Գաղութահայ տարեգիրք», Ա տարի, 1939, Պուքրէշ, էջ 153:

[4] *Մինաս Գասապեան*, Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, 1913, էջ 191:

[5] «Հայաստան», Կ. Պոլիս, 1847, Բ տարի, սեպտեմբեր, N 13:

անգլիացի ինժեների օգնությամբ: Բանվորները հայեր ու հույներ էին: Մեքենաները բերված էին Անգլիայից:

Գործարանների հիմնումից ու գործադրությունից հետո նրանց կատարելագործումը, նոր մեքենաներ հայթայթելը, արդյունքի ավելացման հոգսերը ևս ընկած էին ոչ թե թուրքերի, այլ Հովհաննես Տատյանի ուսերին: 30-ականների վերջերին նա մեկնեց Եվրոպա, եղավ Ֆրանսիայում, Անգլիայում, ծանոթացավ մեքենայական աշխարհի հրաշքներին և սկսեց ներմուծել կատարելագործված ու նոր մեքենաներ՝:

Այսպիսով, XIX դարի առաջին կեսին ֆեոդալական Թուրքիայի հետամնաց տնտեսակարգը ճեղքեր է տալիս: Արհեստագործության մարզում, եվրոպական էժանագին ապրանքների հոսքի պատճառով ու նրա հարվածների տակ, այն քայքայման ճանապարհ է բռնում, միաժամանակ և առաջանում են *մանուֆակտուրային* ձեռնարկություններ, նույնիսկ մեկ տասնյակի հասնող, ժամանակի առումով, կատարելագործված մեքենաներով զինված *գործարաններ:* Դժբախտաբար, այդ գործարանները պետական սեփականություն էին, և տակավին հնարավորություն չէր ստեղծվել արդյունաբերական բուրժուազիայի առաջացման, չնայած կային սահմանափակ թվով առևտրաարդյունագործական բուրժուաներ, որոնք ոչ միայն առանձին դաս չէին կազմում, այլև լծված էին սուլթանական կառքին, «գոհ իրենց վիճակից», դրամ շահելու տենչից կուրացած բնավ չէին մտահոգվում պետության նկատմամբ ընդդիմադիր դիրք բռնելու մասին: Գերազանցապես հայերից ու հույներից բաղկացած այս արդյունաբերող-դրամատերերը ծվարել էին սուլթանի նստավայրում կամ Արևմտյան Հայաստանից դուրս թուրքահայ այլ գաղթօջախներում, Փոքր Հայքի հայաբնակ քաղաքներում: Կտրված հայրենիքից ու ժողովրդից, անհաղորդակից նրա վշտերին ու տառապանքներին, սրանք գերադասում էին կապվել Եվրոպայի հետ, դրանով իսկ հարստություն դիզել, քան Հայաստանում խարսխվել, երկիրը զարգացման բուրժուական մակարդակին բարձրացնել, ժողովրդին լուսավորել ու ազգային-ազատագրական պայքարի հանել: Ուրեմն, երկրի տնտեսական հետամնացության, բուրժուազիայի, իբրև տակավին ընդդիմադիր դաս, չձևավորվելու հիմնական պատճառներից մեկն այն է, որ դարի առաջին կեսի արևմտահայոց կյանքում բացակայում են *համազգային բնույթի ազատագրական շարժումները*, նույնիսկ ապագա այդ շարժումների գաղափարաբանության կաղապարումը:

Թուրքիայի հայ գաղթօջախներում կար առևտրական գերազանցապես դրսաշխարհի հետ կապված կոմպրադորական բուրժուազիա, սակայն չկար բանվոր դասակարգ: Կային միայն հատուկենտ գործա-

[1] «Ընդարձակ օրացոյց ազգային հիւանդանոցի», 1900, Կ. Պոլիս, էջ 145:

ռաններում ու մանուֆակտուրաներում աշխատող *բանվորներ, օրավարձու մշակներ*, որն ավելի հատուկ էր ֆեոդալական կամ անցման շրջանի տնտեսակարգին, քան բուրժական հասարակարգին: Արհեստի ու արդյունաբերության մեջ ընդգրկված ձեռքերը հիմնավորապես չէին կտրվել երկրագործությունից: Ա. Դ. Նովիչևը սրանց բաժանում է երեք խմբի. ա) *վարձու աշխատանք շահագործող արհեստավորներ, բ) երկրագործության հետ կապված, սակայն վարձու աշխատանքը իբրև գոյություն պահպանելու լրացուցիչ միջոց ծառայեցնող սեզոնային գործավորներ, գ) վարձու բանվորներ*[1]:

Նախ, դժվար է պարզել սրանց ճշգրիտ քանակը, քանի որ բացակայում են վիճակագրական տվյալները: Կան միայն անցորդների, ուղեգրողների հպանցիկ, առանց խորանալու տրված հատուկենտ դիտողություններ: Ա. Դ. Նովիչևի բերած տվյալներով 1830-ականներին Անգորայի (Անկարայի) մահուդագործն օրական ստանում էր 1,5 դահեկան, Բրուսայի գործող արհեստավոր բանվորը կարող էր ստանալ մինչև 4 դահեկան[2], Եվդոկիայի պղնձագործները և նույնիսկ օրավարձով աշխատող պատանիները ստանում էին շաբաթական 12-15 դահեկան, չափահասներն ավելի շատ[3]:

Ուղեգրողները վարդագույն ակնոցով են նայել բանվորի աշխատավարձի քանակին: Նրանք չեն տեսել, որ Թուրքիայում ոչ միայն ցածր էր վարձու աշխատողի ստացածը, այլև չկային բանվորական օրենսդրություն, գործավորի իրավունքների որևէ պաշտպան, բնակարանային մինիմալ պայմաններ: Փաստերն արձանագրելիս, ըստ երևույթին, հեղինակները բանվորի ստացածը համադրում էին Արևելքի «թշվառ կացությամբ» ապրող գյուղաբնակչության ապրելակերպին և ոչ գործարանային Եվրոպային, դրա համար էլ նրանց աչքին մեծ բան է երևացել գործավորի ստացած դրամագլուխը:

Արձանագրելով այս երևույթների առաջացումը, անդրադառնալով մանուֆակտուրաների, գործարանների պատմությանը, *մեկ անգամ ևս պետք է նշել*, որ սրանք ուսումնասիրվող ժամանակահատվածի *տիրապետող* տնտեսաձևերը չէին, այլ զարգացման ճանապարհի բռնած կոկոններ, որոնք ապագայում *կամ բացվելու էին*, կամ *թառամելու*: Դարի առաջին կեսին մանուֆակտուրան ու գործարանը փոքրիկ աղբյուրներ էին «ավազակապատված» լայնարձակ Թուրքիայում: Հիմնականը մնում էր հետամնաց, ֆեոդալական արտադրաեղանակը, որը արհեստի ու առևտրի մարզերում գոյացրել էր *էսնաֆական-արհեստավորական* կազմակերպություններ, ստեղծել, մշակել

[1] Տե՛ս *А. Д. Новичев*, стр. 95.
[2] Նույն տեղում, էջ 96:
[3] Տե՛ս «Մասիս», 1898, N 46:

ու կաստայացրել յուրահատուկ օրենսդրություն, և այս ամենն ամբողջությամբ խոչընդոտ էին դարձել բուրժուական հարաբերությունների զարգացմանը, եվրոպական կապիտալի ներմուտին:

2. Առևտուրը

Չնայած բռնապետությանը բնորոշ խանա-փաշայական դաժան արգելափակոցներին և ավազակախմբերի սանձարձակ գործունեությանը, Թուրքիայի արտաքին ու ներքին առևտուրը դարի առաջին երեսնամյակին տակավին կայուն վիճակ ուներ: Կայսրությունը կամրջված էր Եվրոպայի, Ասիայի, նույնիսկ Ամերիկայի ցամաքամասերի շուկաների հետ, ներմուծում էր դեռևս ոչ այնքան մեծ քանակի գործարանային ապրանքներ: Ունենալով ծովային մայրուղիներ, նա արտահանում էր գյուղատնտեսական մթերքներ, հացահատիկ, մրգեր, ինչպես նաև արհեստագործական արտադրանք:

Թուրքիայի արտաքին առևտուրը կենտրոնացված էր կայսերահպատակ այլազգիների՝ քրիստոնյա վաճառականների ձեռքում: Հայերը, հույները, սլավոններն ու ֆրանկներն էին տոն տալիս առևտրական հարաբերություններին, մենաշնորհի դիրքով իրենց ձեռքում պահում կայսրության արտաքին տնտեսական հարաբերությունները: Սրի հզորությանն ապավինած թուրքերն ու վաչկատուն կյանքով ապրող քրդերը առևտրի մարզում որևէ հակում ու մասնակցություն չէին ցուցաբերում:

Թուրքահայ վաճառականները, դարամուտին իսկ, գլխավոր բաժին ունեին թուրք-եվրոպական առևտրի մեջ: Սրանք էին կատարում եվրոպական ապրանքների ներմուծումը, առևտրական ցանցով տարածվում Պարսկաստանի խորքերից սկսած մինչև Լիվոռնո, առևտրական կետեր ստեղծում Մարսելում, Հոլանդիայում, Վենետիկում, Անգլիայում, հասնում Հնդկաստան, Ֆիլիպինյան կղզիներ[1] և սահմանամերձ ու հեռավոր ռուսական քաղաքները, Ամերիկայից ներմուծում բամբակ:

Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Տրապիզոնում հիմնված հայ միջնորդ վաճառականները հնամենի անցյալ ունեին, սակայն դարասկզբին իրենց շարքերը համալրում էին Ակնից եկած սեղանավորությամբ ու առևտրով պարապողներով, Կեսարիայի բեզազներով, կարնեցի վաճառական-պարոններով, եվդոկացի ու սեբաստացի դրամատերերով[2]: Գործակցելով Հաբեշստանում գործող Կարապետ անունով առևտրականի հետ, կարնեցի մի վաճառական 1815-1825 թթ. իր կապերն ընդարձակեց Եթովպիայի հետ, վաճառաշահ առևտրով 250 հազար ոսկու

[1] *Գ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 47:
[2] Տե՛ս *Յ. Գ. Սրմրեան*, Թուրքահայոց հին վաճառականութիւնն և վաճառականք 1740-1890, 1908, Կ. Պոլիս, էջ 10-13:

դրամագլուխ դիզեց՝: Սեբաստացի Աթթար Հովսեփը, Գառաբաշյանները մեծափարթամ վաճառականներ էին: Հայրապետ Շամշյան Տարենտեցին Սեբաստիայում չուխայի վաճառատուն հիմնեց, իսկ Պոլսում՝ սեղանավորական մասնաճյուղեր: Ձևավորվում էր դրսի հետ գործակցող, լի դրամաքսակներ ունեցող առևտրականների դասը, որն իր գործողությունները ծավալում էր և Թուրքիայում, և դրսի շուկաներում, նույնիսկ բնակատեղի փնտրում եվրոպական քաղաքներում:

XVIII դարի մայրամուտից միջնորդ այդ վաճառականների մի ստվար խումբ մշտական բնակություն էր հաստատել Լիվոռնոյում, Մարսելում, Մանչեստրում, Հոլանդիայում, Վենետիկում, Ամերիկայում[2]: Նրանց մի մասը որդեգրվում էր այդ պետություններին, հաճախ ընդունում վերջիններիս կրոնական պաշտամունքը: Դրսի հետ կապված, ավելի օտարին, քան սեփական հայրենիքին ու ժողովրդին ծառայող ***կոմպրադորական բուրժուազիան էր այս***, որը դրամատիրության աշխարհն ընկած, ոսկի դիզելու անհագ ախորժակով ծառայում էր նրան, ով կնպաստեր իր գործարքներին, որից շահ կստանար: Հայ կոմպրադորները առևտրական հնարավորություններ, գործելու ընդարձակ ասպարեզ ունենալով, Արևմտյան Հայաստանի տնտեսական, առավել ևս, քաղաքական ճակատագրով հետաքրքրվում էին այնքանով, որքանով ապրանքներ կստանային կամ տեղական հանձնակատարների միջոցով ապրանքներ կվաճառեին այստեղ:

Մինչև 1830-ականները Թուրքիայի վաճառաշահ առևտուրը հիմնականում ցամաքային էր[3] և, երկաթուղիների բացակայության պատճառով, քարավանային առևտրի կերպարանք ուներ: Հետևաբար՝ նեղ էր նրա շառավիղը և սերտ կապեր չուներ գավառի հետ: Մեծահարուստ կոմպրադորներն Արևմտյան Հայաստանից ու հայաբնակ նահանգներից արտահանվող ապրանքները քարավաններով տեղափոխում էին Պարսկաստանի վրայով, կապվում Բաղդադի ու Բասրայի հետ[4]:

Առևտրի այդ շառավիղն այսպես է գծել Ֆ. Էնգելսը. «Կ. Պոլիսը և հատկապես ասիական Թուրքիայում գտնվող Տրապիզոնը հանդիսանում են ներքին Ասիայի, Տիգրիսի և Եփրատի հովիտների, Պարսկաստանի ու Թուրքեստանի քարավանային առևտրի գլխավոր շուկաները: Եվ այդ առևտուրն արագորեն աճում է ... իր դիրքի շնորհիվ Տրապիզոնն ավելի է համակերպված այդ առևտրին, քան որևէ այլ կետ: Նրա ետնախորքի վրա գտնվում է հայկական բարձրավանդակը, որն ավելի մատչելի է, քան սիրիական տափաստանները և բավականաչափ մոտ է գտնվում Բաղդադին, Շիրազին ու Թեհրանին: Վերջինս տարանցիկ շուկայի դեր է կատարում Խիվայից ու Բուխարայից եկած քարավանների համար: Մանչեստրի բիրժայում կարելի է ակնհայտորեն տեսնել, թե որքան ուժեղ է զարգանում այդ առևտուրը և Սև ծովի առևտուրն առհասարակ...»՝:

Այսպիսով, Թուրքիայի հայ գաղթօջախներում հզորանում էր Եվրոպային կապված կոմպրադոր-առևտրականների դասը, որն իր խնայած գումարները մուծում էր արտասահմանյան բանկերը, փաստորեն շրջանցում էր կայսրության մեջ տիրող անիշխանությունը: Նեղվելով երկրում, սրանք խուսանավում էին սուլթանական կարգերը փոխելու հեռանկարից և դիմադրական պայքարի փոխարեն հանգրվանում էին արտասահմանում: Մի վարքագիծ էր այս, որ նրանց զրկում էր ազգային նկարագրից և, ի վերջո, դարձնում եվրոպական կապիտալի կամակատարներ:

Ի հակադրություն սրանց, Արևմտյան Հայաստանում հետզհետե առաջ էին գալիս տեղական հումքով սնվող, հայրենի արտադրանքի վաճառքով պարապող գավառահայ վաճառականներ, մանր ու խոշոր առևտրականներ, որոնք դառնում էին գավառահայ արտադրողների ազգային շահախնդրությունները զսպանակողները:

Արևմտյան Հայաստանի առևտուրը կատարվում էր քաղաքներում, գերազանցապես փաշայանիստ մեծ շահաստաններում: Մինչև դարակեսը՝ դերեբեյական համակարգի վերացումը, առևտրի տեսակետից էլ երկիրը մասնատված ու խմբավորված էր ըստ տնտեսական շրջանների: Այդ խմբավորումը պետությունը չէր կատարել, այլ՝ անիշխանական կարգերը: Վաճառաշահ առևտուրը ծաղկել էր այնտեղ, որտեղ քիչ թե շատ հնարավորություններ կային, կորցրել իր նախկին երանգը քրդահպատակ շրջաններում՝ հարավային Հայաստանում:

Նկատվում է, որ հովտատերերի ստեղծած անիշխանության պատճառով քրդահպատակ հայկական շրջաններում առևտուրը ոչ միայն չէր աշխուժանում, այլև անկում էր ապրում: Երբեմնի վաճառաշատ Բաղեշը, Մուշը, Բայազետը, Վանը, Տիգրանակերտը այլևս չունեին հայ վաճառականների, ավելին՝ հայ ազգաբնակչության քանակն ու որակը: Բացի Տիգրանակերտից, մյուսները վերածվում էին գավառական ավելի հետամնաց վայրերի, սահմանափակում առևտրական մյուս հրապարակների հետ ունեցած կապերը, բավարարվում տեղական արտադրանքի վաճառքով կամ անցորդ քարավաններին հանգրվան տալով, նրանցից գնած ապրանքների իրացմամբ:

Բաղեշի վիճակը փոքր-ինչ այլ էր: Քաղաքը, փաստորեն, այն միակ կետն էր, որի վրայով Վանի հյուսիսային շրջանները կապվում էին

---

[1] Տե՛ս *Յ. Գ. Մրմրեան,* Թուրքահայոց հին վաճառականութիւնն և վաճառականք 1740-1890, 1908, Կ. Պոլիս, էջ 15:

[2] *Դ. Ինճիճեան,* Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 46:

[3] Տե՛ս «Թուրքահայոց հին վաճառականութիւնն և վաճառականք», էջ 16:

[4] ՌԱՔԱ, Գլխավոր արխիվ 1-9, գործ 13, մասն 15, թերթ 1-2:

[1] *К. Маркс и Ф. Энгельс,* Сочинения, т. IX, стр. 384.

Դիարբեքիրի, Մոսուլի և Միջագետքի հետ: Քաղաքի արդեն փոքրաքանակ հայ վաճառականները ընկերանում էին Հալեպից Թավրիզ գնացող, Բաղեշով անցնող վարձու զինվորներով պահպանվող քարավանների հետ, արտահանում *կարմիր շիլան*, գյուղատնտեսական արտադրանք[1]: 300-ի հասնող խանութները վաճառում էին անցորդ վաճառականներից գնած ապրանքները, սակայն չկարողանալով վճարել շերեֆների ծանր հարկերը, անընդհատ կողոպտվելով, հարստության հետ վտանգի տակ դնելով կյանքը, հայերն ստիպված էին լքել հայրենի բնօրրանը և սփռվել Թուրքիայով մեկ:

Գրեթե նույն վիճակում էր քրդապատկան Բայազետը: Քաղաքում կար 331 խանութ, իսկ Դիադինում՝ 22 և 2 քարվանսարա[2]: Առևտուրը խղճուկ տեսք էր ստացել, արհեստավորը տալիս էր 650 դուրուշ հարկ, խանութատերը՝ մինչև 1100 դուրուշ: Քուրդ խանի և ցեղապետերի վերցրած ապրանքների դիմաց առևտրականը ոչինչ չէր ստանում: Բայազետը, փաստորեն, միայն անունով էր քաղաք, իրականում այն մի մեծ գյուղ էր:

Եթե Մուշը, Սղերդը, Բալուն, Դերսիմը, Չարսանջակը, մանրավաճառությունից բացի, չունեին բարգավաճ առևտուր, անվանի վաճառականներ, ապա շնորհիվ այն բանի, որ Վանում ու Տիգրանակերտում մեծ դժվարություններով գոյատևում էին հայկական, համեմատաբար միածույլ ու թվաշատ համայնքներ, առևտուրն էլ, չնայած սեզոնային ձևով, բայց և այնպես լրիվ չէր քայքայվել: Վանն ուներ փայտաշեն «բեզեստաններ», 500-ի հասնող խանութներ: Հայտնի առևտրական էր Ավետիս Փիրղալեմյանը: Իր շուրջ համախմբելով մի խումբ հայ վաճառականների, նա գնում էր Թավրիզ, Թիֆլիս, Կ. Պոլիս, Ռուսաստան, արտահանում Վանի «շատխու շալը», ոսկյա ապարանջաններ, գյուղատնտեսական մթերքներ, ներմուծում գործվածքեղեն, մետաղ, տաք և սառը զենքեր:

Իբրև ընդհանրություն, քրդահպատակ հայկական գրեթե բոլոր քաղաքների առևտուրը սեզոնային բնույթ ուներ: Այն աշխույժ էր մարտ-ապրիլ ամիսներին, այսինքն՝ վաղ գարնանը, երբ հայկական օջախներում ձմեռող վայրենաբարո, վրանաբնակ քրդերը, ամառանոցներ բարձրանալուց առաջ, գնում էին, իրենց հետ վերցնում այն ամենը, ինչ անհրաժեշտ էր: Դրանից հետո հայ առևտրականները փակում էին խանութները, իրենք ևս զբաղվում սեփական այգիների և ագարակների մշակությամբ: Նույն աշխուժությամբ առևտուրը վերսկսվում էր աշնանը, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Ակնհայտ էր, որ քաղաքացի առևտրականը, նույնիսկ արհեստավորը, իր պորտալարը չէր կտրել

[1] Տե՛ս Մատենադարան, *Գալուստ Տեր-Մկրտչյանի* արխիվ, թ. 16, վավ. 7, թերթ 12:

[2] ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆոնդ 2, գործ 2462, թերթ 3, գործ 2446, թերթ 9, 1829:

երկրագործությունից, իսկ քաղաքներն էլ չէին դարձել զուտ առևտրաարդյունաբերական կենտրոններ: Քաղաքներից առավոտյան դուրս էին գալիս անասունների նախիրներ, ոչխարների հոտեր:

Արևմտյան Հայաստանի թուրքահպատակ և Թուրքիայի հայաբնակ նահանգներում, առևտրական հարաբերությունների զարգացման տեսակետից, դրությունը բոլորովին այլ էր: Կարինը, Սեբաստիան, Եվդոկիան, Տրապիզոնը, որոշ չափով Մարաշը, Ադանան դառնում են ներքին ու արտաքին առևտրի նշանակալի շուկաներ, ներմուծում, վաճառում ամենատարբեր ապրանքներ՝ Եվրոպայից, Ասիայի պարսկական շահաստաններից, Ռուսաստանից, արտահանում տեղական արդյունաբերական ապրանքներ, մասնակցում համաշխարհային շուկաներում կատարվող առևտրին: Վերոհիշյալ քաղաքների հայ վաճառականները Տրապիզոնի, Կ. Պոլսի, Զմյուռնիայի նավահանգիստների վրայով, մեծագումար մաքսեր տալով հանդերձ, ապրանքների անհամար հակեր էին բարձում կամ բեռնաթափում նավերից, դրսից բերածով սնում ասիական գավառը, ներսից արտահանելով՝ մասնակցում Մոսկվայի, Նովգորոդի, Աստրախանի, Մանչեստրի, Լիվոռնոյի, Վենետիկի, Ղրիմի, նույնիսկ հեռավոր Հնդկաստանի շուկաներում ծավալվող առևտրին[1]:

Իբրև առևտրի խոշորագույն կենտրոն, տարանցիկ առևտրական ուղիներ հանգուցող, եվրոպական ու ասիական ապրանքներ մթերող, անցորդ առևտրականներին հանգրվանելու հնարավորություն ընձեռող, վաղուց ի վեր հռչակված քաղաքը Կարինն էր, որը դարասկզբին գրեթե ողջ Հայաստանի տնտեսական կենտրոնի, համազգային շուկայի դեր էր ստանձնել: Ի տարբերություն Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքների, Կարինի առևտուրը սեզոնային չէր: Կլոր տարին 6 խոշոր, 20-ից ավելի մանր շուկաները[2], 50-ի հասնող իջևանատները, 1500 խանութները լիքն էին ապրանքներով: Ամեն ամիս ուղտերով անցնող, Թոքատից եկող ու Թավրիզ անցնող քարավաններ կային այնտեղ[3]:

Կարինի հայ վաճառականները Պարսկաստանից բերում էին խամ մետաքս, շալեր, գալփախցու մորթիներ, ալաջա, կտորեղեն, բամբակ, մուշտակներ: Թուրքիայի տարբեր նահանգներից ներմուծում էին անուշադրի սպիրտ, երկաթ, պղինձ, կտավեղեն, բամբակ, ատլաս, չուխա, սուրճ, շաքար, կաթնամթերք, Թորթումից ու Սպերից՝ չորացրած ու թարմ մրգեր, Նարիմանից՝ շողանու ցորեն, Բասենից և Օլթիից՝ վառելափայտ ու ածուխ, Վանից՝ տառեխ ձուկ, Կեսարիայից՝ գորգեր:

[1] *Յովհաննէս Տէր-Աբրահամեան*, Պատմութիւն Խրիմու, 1865, Թէոդոսիա, էջ 119:

[2] *Բարունակ Պէյի Ֆերուհխան*, էջ 188-192:

[3] ՌԱՔԱ, Գլխավոր արխիվ, ցուցակ 8, գործ 13, մասն 15, թերթ 2-3:

Ջեյմս Մորիերի վկայությամբ, 1808-1809 թթ. Կարինի «բազարներում խանութները լիքն էին ապրանքով, և թվում է, թե այստեղ բարգավաճ արդյունաբերություն ունի»[1]: Նրանից քիչ առաջ արձանագրվում էր, թե «վաճառականութիւն էրզիռումա ծաղկեալ է յոյժ...: Առաքէ ի Գաղդիա, Հոլանտա և Անգղիա *թիֆտիկ* այծի. առաքէ ի Մոսկով և անտի ի Պուխարա զմորթ ջրշան. ուստի կազմեն ի Պուխարա *զազարա* մուշտակաց իւրեանց, զմորթ ջրի ոչխարի, ուստի Մոսկովք կազմեն իւրեանց գլխարկս...: Մորթս գայլոց, կուզ կենդանւոյ և կատուի, ի Պարսս առաքէ անօթս պղինձ *պախտեղէնս*...»[2]:

Կարինի վաճառականները կրելով *իշխան, աղա-պարոն, պարոն-տեր, մահտեսի* պատվանուններ, տվել էին մինչև 100 հազար ոսկի հարստություն դիզած, շքեղ ապարանքներ, պալատներ ու ամառանոցներ ունեցող այնպիսի ներկայացուցիչներ, որոնց անձամբ ճանաչում էին սուլթանն ու շահը, ռուսական կայսրն ու անգլիական թագավորը: Ի տարբերություն վանեցի խնայող ու ժուժկալ վաճառականների, կարնեցի հայ հարուստ առևտրականները «վայելող էին», առատաձեռն նվերներ տալով պատրիարքին, կաթողիկոսին, առաջնորդին, մտահոգվում էին ազգի ճակատագրով:

1818 թ. հիշատակվում են Կարինի հարուստ Աստուրյան վաճառական գերդաստանը, մահտեսի Սուքիաս աղան, Մորլեյան պարոն Գրիգորը, Մարուքենց տղաները և շատ ուրիշներ[3]: Խանութատեր, թվաշատ մանր առևտրական-*բեզազները* համախմբված էին ըստ թաղամասերի և ըստ էսնաֆությունների: Հայտնի են *«Բերդի քյոշեի»* բեզազներ՝ թվով 25 հոգի, *Թոփխանե* ալիխանի բեզազները՝ 20 հոգի, *Տաշխանեի* պարոններն ու բեզազները՝ 20, *Բերդի արալըխի* բեզազները՝ 10, բերդից դուրս տեղակայված խանութատերեր՝ «օտաճիք» և բեզազները՝ 20 և շատ ուրիշները: Էսնաֆություններով համախմբված Կարինի արհեստավորների մեծ մասն իրենց արտադրանքն իրենք էլ վաճառում էին, իսկ բեզազները կամ սրանցից էին ապրանքներ առնում վաճառելու, կամ էլ՝ խոշոր վաճառականներից, քաղաքով անցնող քարավաններից, երբեմն էլ՝ ներմուծում, սակայն երկրի ներսից միայն: Շրջիկ, չարչի մանրավաճառների միջոցով սրանք ապրանքներ էին ուղարկում գավառներ, ամենածայրամասային գյուղերը և վաճառք կազմակերպում:

Արևմտյան Հայաստանի, առավել ևս, Կարինի խոշոր վաճառականները, թուրքական զինվորներ, երբեմն էլ քրդական ջոկատներ վարձելով, սրանց պաշտպանությամբ ապահովում էին իրենց քարավանների երթը ասիական ավազակաշատ լեռնանցքներով մինչև Տրապիզոն,

[1] *Հովհ. Հակոբյան*, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 284:
[2] *Ղ. Ինճիճյան*, Աշխարհագրություն, մասն Ա, էջ 63:
[3] Մատենադարան, Կաթ. դիվան, թ. 33, վավ. 263, թերթ 1-2:

նույնիսկ Զմյուռնիա, Պոլիս, Ադանա: Կարինի և այլ քաղաքների առևտրականները, չվստահելով թուրք ու քուրդ «պաշտպաններին», այս տարիներին արդեն կապվել էին ջորեպան, Զեյթունի զինված քաջամարտիկների հետ, նրանց վարձատրելով ջորիների ու պաշտպանության համար: Զեյթունցին դրանով ապրուստի միջոց էր ստանում, իսկ կարնեցի վաճառականն էլ ապահովաբար կատարում փոխադրումները, վաճառաշահ առևտուր անում ու ուռճացնում իր դրամաքսակը: Սակայն քաղաքի առևտուրն ու արդյունաբերությունը ծանր հարված ստացան 1829-30 թթ. զանգվածային գաղթի պատճառով, երբ քաղաքը գրեթե հայազրկվեց, երբ վաճառականությունն ու արհեստավորությունը, վախենալով վրեժխնդիր կառավարությունից, թողեց ու տեղափոխվեց ռուսական ափը:

Կարինից իր առևտրով ետ չէր մնում Եվդոկիան: Եթե Կարինն իր շուրջն էր համախմբել Բարձր Հայքի և Արևմտյան Հայաստանի առևտուրը, ապա «Թոքատ է իբր կեդրոն վաճառականութեան Փոքուն Ասիոյ. նաև դիրք սրա գրեթէ է ի կեդրոնի այլոց վաճառատեղեաց Փոքուն Ասիոյ, բայց պարտ է ասել ևս թէ ի Թոքատ գտան յառաջագոյն և գտանին ևս վաճառականք, զորոց նման սակաւ ունի տէրութիւն օսմանեան ընդ ամէն սահմանս իւր որ յԱսիա. անդ յաճախեն երթևեկութիւն կարաւանաց ամէն կողմանց»[1]: Այստեղ եղած չորս շուկաներում, 551 խանութներում վաճառվում էին տեղական արհեստի գովական արտադրությունը, ինչպես նաև Կեսարիայից բերած տորոն-*քոքբոյասին*, դեղին ներկը, անկարական ցփսին, Զմյուռնիայի չուխան, համեմը, շաքարը, թուղթը, Այդընի բամբակը, Կարինի պղինձը, երկաթը, Դիարբեքիրի կտավը, գխտորը, Մոսուլի կտավյա գործվածքները, գունավոր թաշկինակները: Ամեն տարվա նրանց արտահանությունը կազմում էր 500 հազար ոսկի և մոտավորապես այդքան էլ՝ ներմուծումը:

Սեբաստիայի առևտուրը շատ աշխույժ էր XVIII դարի վերջերին, տարեկան արտահանելով 500 քսակագումարի աստառացու կտորեղեն, ներմուծելով եվրոպական ու ասիական ապրանքներ, տալով մինչև 50 հազար ոսկի ունեցող հայ վաճառականներ: Սակայն դարասկզբներին այն կուչ էր եկել չապան օղլուների գործած վայրագությունների, երկրում ստեղծված անիշխանական վարչակարգի պատճառով: Քաղաքը նոր թափ առավ 1830-ականներին միայն: Հայերի ձեռքում էր Սամսոնի, Զիլեի, Մարզվանի, Արաբկիրի, Մալաթիայի առևտուրը:

Հայաշատ Կեսարիան առևտրի տեսակետից դարձել էր մի բարգավաճ քաղաք, տալով խոշոր առևտրականներ, հարուստ դրամատերեր, ամիրաներ ու սեղանավորներ: Կեսարիայի ճարպիկ, բանիմաց, լեզվագետ հայ առևտրականը քաղաքով չէր շրջագծում իր գործունեությու-

[1] *Ղ. Ինճիճեան*, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 291-292:

նը: Կեսարացին հասունացրեց ամիրայական գերդաստաններ, կտրեց Բոսֆորը, անցավ Լամանշը, հիմնվեց Լոնդոնում ու Մանչեստրում, Լիվոռնոյում ու Վենետիկում: Սեփական արտադրանքով նա մրցահրապարակ նետվեց եվրոպական շուկաներում, շատ դեպքերում հաղթանակ շահեց: Սակայն կեսարացի հայ վաճառականները գերազանցապես կոմպրադորներ էին, երկրին քիչ առնչված: Այս տեսակետից Կեսարիայի հետ ընդհանրության շատ գծեր ուներ Ակնը:

Ակնը թվաշատ ամիրայական գերադաստաններ տվեց Կ. Պոլսին, Զմյուռնիային: Դարասկզբին սրանք զավթել էին կայսրության տնտեսության հիմնական ճյուղերը, գործակցած թուրք փաշաներին, հավաքում էին Փոքր Ասիայի հարկերը, մշակում Կապան-Մադենի հանքերը, կազմակերպում պղնձի, ձեռագործ արհեստների վաճառքը, դիզում հարստություն, որոնց «Ոսկին ու արծաթ, մարգարիտն ու ադամանդ, պերճանքն ու զարդ, ծառայք և երիվարք համրանքով չեն եղած»[1], փոքր-ինչ չափազանցված, արձանագրում է Գ. Սրվանձտյանցը:

Այսպիսով, XIX դարի առաջին երեսնամյակին Արևմտյան Հայաստանի թուրքահպատակ շրջանները և Փոքր Ասիայի հայաբնակ քաղաքները առևտրի տեսակետից դեռևս չէին քայքայվել: Սակայն արձանագրելով այս, չի կարելի մոռանալ, որ առևտուրը զարգացած էր ֆեոդալական Թուրքիայի նախորդ շրջանի համեմատությամբ, իսկ վաճառականությունը դրվում էր բազմաթիվ սահմանափակումների մեջ: Կապիտալն ու կապիտալատերերը գտնվում էին անապահով իրավիճակում, զուրկ՝ անձի ու գույքի անձեռնմխելիության երաշխիքից: Երկրի համար ողբերգական էր կապիտալի օտարումը, այսինքն՝ հիմնական դրամագլուխը, տնտեսված, շահած գումարները պահվում էին դրսում, եվրոպական բանկերում: Վաճառականը վախենում էր ունեցվածքի հետ կորցնել նաև կյանքը: Այդ պատճառով փողը վերածվում էր ոսկու, թաղվում գետնի տակ, թաքստոցներում:

Սկզբից ևեթ, ինչպես նաև դրամի խիստ կարիքի պատճառով, այս պատմաշրջանում ծանրանում էին մաքսատուրքերը, մաքսատների թուրք աշխատողների բռնությունն ու կամայականությունը, պետության դրած և անընդհատ ավելացվող հարկերն ու տուրքերը, հաճախ էլ՝ բռնագանձումները, վաճառականի ողջ ունեցվածքի պետականացումը: Բնական է, որ հայ վաճառականությունը նման պայմաններում չէր կարող ավելի լայնացնել իր գործարքները, դրա համար, ի տարբերություն կոմպրադորական բուրժուազիայի, կապված մնալով բնաշխարհին, նեղվելով Թուրքիայի սահմանած զսպանակներից, քրդական անիշխանությունից, ընդդիմադիր դիրք էր գրավում և ջանում նախ կարգուկանոն հաստատել երկրում, զսպել տալ քուրդ բեկերին, նոր ապա ազատվել ազգային այն անպատվաբեր ու ստորացուցիչ ճնշումներից, որոնք և մոռացնել էին տալիս սոցիալական կեղեքումները:

[1] «Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ», մասն Բ, էջ 67:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 40-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գլուխ առաջին

Արևմտյան Հայաստանի սոցիալ-քաղաքական դրությունը 1840-1860-ական թվականներին

1. Բարեփոխությունների փորձերը, դերբեբեյությունների ոչնչացումը

XIX ԴԱՐԻ երկրորդ կեսին սուլթանական Թուրքիան շարունակում էր մնալ հետամնաց ագրարային երկիր, մեծ մասով բաժանված տնտեսապես իրար հետ չկամրջվող առանձին երկրամասերի: Կայսրության ասիական նահանգները, հատկապես հարավային Հայաստանի քրդահպատակ շրջանները սուլթանի իրավասությունից գրեթե դուրս էին: «Օտտոմանյան կայսրությունը,- գրում է Հելմութ Ֆոն Մոլթկեն,- ինչպես հայտնի է, ընդգրկում է լայնատարած երկրամասեր, որոնց վրա Բ. Դուռը ոչ մի ազդեցություն չունի, և անկասկած է, որ փադիշահն ավելի շուտ պետք է նվաճումներ կատարի իր սեփական պետության սահմաններում»[1]: Երկրի ներսում հզորացող կենտրոնախույս ուժերի ոչնչացումը, ֆեոդալական մանր ու մեծ կիսանկախ իշխանությունների վերացումը, պետության կենտրոնացումը հրամայական պահանջ էին դարձել: Նոր ու լուրջ բարեփոխումների կարիք էր զգացվում:

XIX դարի առաջին քառորդին եղած բարեփոխումները, կայսրության ներսում ծավալված անընդմեջ զինաբախումները կանխելու, կենտրոնախույս ուժերը ոչնչացնելու կամ զսպելու, բանակն ու ոստիկանությունը վերակառուցելու՝ սուլթանների անհամար փորձերն անցել էին ապարդյուն: Երկրորդ քառորդին շարունակվում էր նույն քաղաքակա-

[1] ***Helmuth von Moltke.*** Briefe über zustände und begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839. Berlin, 1876, S. 266.

նությունը գտնելով կենտրոնաձիգ պետության ստեղծման առավել կողմնակիցներ:

Պետության նոր հենարանները, կենտրոնաձիգ ուժերն այն խոշոր հողատերերն ու սեղանավորներն էին, որոնք իրենց կալվածքներն ու հարստությունը դիզել էին հարկերի կապալառման, առևտրա-վաշխառուական ճանապարհով: Այժմ նոր հողեր ու իրավունքներ նվաճելու նրանց ցանկությունը դեմ էր առել ֆեոդալ-բեկերի դիմադրությանը, ուստի և նրանք ճիգ էին թափում համոզելու սուլթանին ռազմական ուժով հպատակեցնել ապստամբ հովտատերերին, որպեսզի կարողանային կապալավարձով վերցնել վերջիններիս գերիշխանության տակ եղած մարզերի հարկերը:

Կայսրության մեջ կարգուկանոն հաստատելու համար ճիգ ու ջանք էին թափում առևտրականներն ու արդյունագործողները, որոնք հիմնականում անդրադարձնում էին քրիստոնյա ազգությունների իշխող տրամադրությունները: Առանց պետության կենտրոնացման անհնարին էր դարձել ընչասեր ֆեոդալներից ապահովել սեփական ունեցվածքն ու կյանքը, քարավանները փրկել ամեն որպես թալանվելու վտանգից, ճանապարհները մաքրել քուրդ ու թուրք ավազակներից, ազատվել ապօրինի հարկերից ու մաքսերից, տնտեսապես միավորել երկրի ասիական ու եվրոպական մարզերը:

Տեղական ֆեոդալների դեմ տրտնջում էր նաև սրանց կամայականություններից առավել չափով տուժող քրիստոնյա և մահմեդական գյուղաբնակչությունը: Պետության ու ֆեոդալների միջև մղվող պայքարի և 1830-50-ական թվականներին անցկացվող ռեֆորմների շրջանում գյուղացիական զանգվածները հենարան էին դառնում կենտրոնական կառավարությանը:

Ահա այս պայմաններում կայսրության կենտրոնացման փորձերն սկսեց Մահմուդ II-ը, խորհրդական ու գործակից ունենալով մահմեդականացած վրացի Մեհմեդ Ռեշիդ փաշային: Թուրքիայի եվրոպականացման կողմնակիցների պարագլխին, խիզախ, անզիջում մի մարդու, որի մասին ակնածանքով էր խոսում Խ. Աբովյանը[1]:

Բարեփոխությունների «սիրահար» պետության կենտրոնացման խնդրով լրջորեն մտահոգված *Մահմուդ II-ն արդեն հասկանում էր, որ իր ծրագրերը կարող էին իրագործվել միայն այն դեպքում, երբ սեփական հենարան դարձներ բուրժուական տարրերին: Քանի որ թուրքերի ու քրդերի մեջ տակավին բացակայում էին նման ուժերը, ուստի սուլթանն ավելի քան հենվում էր այլահավատ հպատակների՝ հայերի, հույների, սլավոնների, հրեաների վրա, խորամանկորեն օգտագործում էր նրանց մեջ եղած հակաֆեոդալական տրամադրությունները, թեկուզև պետության նկատմամբ մթերված մաղձն ուղղում թուրք աղաների ու քուրդ բեկերի դեմ*[1]: Քրիստոնյաներին սիրաշահելու նպատակով, Մահմուդ II-ը բարձրաբարբառ հայտարարում էր. «Դուք հույներ, դուք հայեր, դուք հրեաներ - աստծո ծառաներն եք և իմ հպատակները ինչպես մահմեդականները. հավատը ձեզ մոտ տարբեր է, բայց ձեզ բոլորին պաշտպանում է միևնույն օրենքն ու կայսերական իմ կամքը: Վճարեցեք այն հարկերը, որոնցով ես ձեզ հարկադրում եմ. այդ փողը նշանակված է ձեր հանգստության և ձեր օգուտների համար»[2]: Ակնհայտ են սուլթանի «դիվանագիտական խաղերը» քրիստոնյաներին իր կողմը գրավելու, նրանց օգնությամբ ֆեոդալ բեկերի հետ հաշիվ մաքրելու և դրանով իսկ պետությունը կենտրոնացնելու մտադրությունը:

Այսուհանդերձ, հարկավոր էր, նախ՝ վերակառուցել բանակը, բարձրացնել պետության ռազմական հզորությունը, ազատվել Սելիմ III-ի օրոք արդեն իրենց կենտրոնախույս տրամադրությունները ցուցադրող, պալատական գործերին խառնվող, մայրաքաղաքում ու ամենուր խժդժություններ սարքող ենիչերիների զորամիավորներից: Ֆ. Էնգելսի բնութագրությամբ «Ավատական տնտեսության դեմ պայքար մղել զորքի օգնությամբ, զորք, որ ինքն է ավատական, որտեղ զինվորներն իրենց անմիջական սյուզերենին առավել ամուր կապերով էին կապված, քան թագավորական բանակի գլխավոր հրամանատարներին՝ ակնհայտորեն նշանակում էր պտտվել կախարդական շրջագծում և ի վիճակի չլինել տեղաշարժ կատարելու»[3]:

Այս բանը գիտակցում էր նաև Մահմուդ II-ը: Դրա համար էլ նա կազմակերպում էր աշխարհազորային բանակախմբեր, փոխում մի շարք նահանգների փաշաներին, ավելացնում նորաստեղծ բանակի ու իր կողմնակիցներից նշանակած նրա ղեկավարների թիվը: Սուլթանը ամրապնդում էր սեփական դիրքերը՝ *ենիչերիների* հետ հաշիվ մաքրելու հեռամետ դիտավորությամբ:

1826 թվականի գարնանը հավաքվեց *անատոլիական* աշխարհազորը և տեղակայվեց Բոսֆորի արևելյան ափերին[4]: Մայիսի 29-ին, Կ. Պոլսի գրավման տարեդարձի օրը, սուլթանը հրավիրեց ավագանուն, այդ թվում և ենիչերիների ղեկավարներին և, ընդարձակ ճառից առաջացած խանդավառության մթնոլորտում, առաջարկեց կազմակերպել

[1] Տե՛ս *Խ. Աբովյան*, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958, էջ 248:

[1] Մանրամասն տե՛ս ***А. Д. Новичев***, Очерки экономики Турции, стр. 19-21, ***А. Ф. Миллер***, Краткая история Турции, стр. 55-57, ***Д. Розен***, История Турции..., стр. 7-10:

[2] *Helmuth von Moltke*, նշված աշխատությունը, էջ 13:

[3] *Ф. Энгельс*, О разложении феодализма и развитии буржуазии, журнал "Пролетарская революция", 1935, N 6, стр. 158.

[4] *Д. Г. Розен*, История Турции, стр. 9.

նոր բանակ *մուալլեմ-իսկենջին*, որը պիտի զինվեր Վինչեստր տիպի եվրոպական հրացաններով և ավելի արագաշարժ լիներ: Առաջարկն ընդունվեց նույնիսկ ենիչերիների կողմից, քանի որ վերջիններս տակավին չէին գիտակցում սուլթանի մտադրությունները: Այսպիսով, ի հակակշիռ ենիչերիների, կազմակերպվեց ռազմական նոր ուժ: Այժմ սուլթանը ձգտում էր բախում առաջացնել այս երկուսի միջև և գործողության մեջ դնել վաղամտածված ծրագրերը:

1826 թ. հունիսի 4-ին կազմակերպվեց *Նիզամի ջեդիդ* կոչվող «կրթված» զորքի շքերթը: Հասկանալով սուլթանի մտադրությունը, ենիչերիներն արդեն խիստ վրդովված էին սրանց ցույց տրված վերաբերմունքից: Չնայած դրան, Մահմուդ II-ը որոշեց հունիսի 18-ը նշել իբրև նոր բանակի փառատոն և շքերթն անցկացնել Կ. Պոլսի մոտակա Քաղցր ջրերի շրջանում[1]: Ենիչերիների զայրույթն հասավ վերջնակետին: Նրանք որոշեցին ապստամբել կառավարության դեմ, մի բան, որին վաղուց սպասում էր սուլթանը:

1826 թ. հունիսի 14-ի, լույս 15-ի գիշերը ենիչերիների հինգ գումարտակներ ապստամբության ազդանշան տվեցին և հավաքվեցին *Աթ-Մեյդանում* (Կ. Պոլսի կենտրոնական հրապարակներից մեկը): Մինչև առավոտ 20 հազարի հասնող ապստամբները բողոքում էին, որ արաբական հրահանգիչները, վարժեցնելով *մուալլեմ-իսկենջիներին*, հատկապես նրանց մեջ մտնող քրիստոնյաներին, վերջիններիս նոր զինատեսակներ են բաժանում և ուղղում իրենց դեմ: Նրանք պահանջում էին ցրել նոր բանակը, սրանց տրվող ռոճիկը հատկացնել ենիչերիներին, այլապես իրենք կսպանեն սուլթանից մինչև ամենահետին պալատականին, կավերեն եվրոպական դեսպանատները, կբռնագրավեն քրիստոնյաների ունեցվածքը, իսկ վերջիններիս ընտանիքների անդամներին կամ կպահեն իբրև հարճեր, կամ էլ, գերեվարելով, կառաջնորդեն ստրկավաճառանոցները:

Օգտվելով ապստամբների արարքներից առաջ եկած ժողովրդի ընդհանուր վրդովմունքից, նախքան այդ մայրաքաղաք կանչված բանակը տալով գեներալիսիմուսի կոչում ստացած Վայրագ Հյուսեինին, Մահմուդ II-ը հրահանգեց կոտորել ենիչերիների բազմահազարանոց բանակը: Հուլիսի 16-ին արյան մեջ ողողվեց Կոստանդնուպոլիսը[2]: Սկզբում անխնա ոչնչացվեցին բոլոր ապստամբ ենիչերիները, ապա նաև նրանք, որոնք չէին մասնակցել կռիվներին կամ ծպտվել էին[3]: Սրի քաշվեցին նաև մայրաքաղաքի հրշեջները թուլումբաջիները, մահմեդական անզբաղմունք այն խաժամուժը, որն անընդհատ օգնության ձեռք էր մեկնում հակապետական շարժումներին: Արևմտյան Հայաստանից սրանց փոխարեն «հրավիրվեցին» հայ գյուղացիներ և հանձնարարություն ստացան ստանձնել թուլումբաջիների պաշտոնը: Պոլսում կազմակերպված ջարդերից հետո ենիչերիները բնաջնջվեցին նաև գավառներում: Բացի Էրզրումի ու Հալեպի նահանգներից, ամենուրեք ջարդն անցավ առանց դիմադրության: Միայն այս երկու նահանգներում, ենիչերիների թվաշատության պատճառով, լուրջ դիմադրական կռիվներ եղան, որոնք տևեցին մի քանի շաբաթ:

Այսպիսով, 1826 թվականի ընթացքում ողջ Թուրքիայով մեկ ոչնչացվեց Մուհամմեդի երկրային փառքին արհամարհանքով նայող նախորդների ու իր կոկորդին չմարսվող ոսկրի պես դեմ առած, նույնիսկ պալատական գործերին տոն տվող ենիչերիների բազմահազարանոց բանակը: Եվրոպայից կանչված ռազմագետների միջոցով վերակառուցվեցին կայսրության ցամաքային ու ծովային ռազմուժերը:

Մահմուդ II-ը պարտադիր դարձրեց զինվորական վարձու ծառայությունը: Նախ, կայսրությունը բաժանվեց վեց երկրամասերի, որոնցից ամեն մեկի ռազմական հրամանատարին հանձնարարվեց կազմել մեկ կորպուս զորք[1]: Հրահանգ տրվեց մահմեդականներից նորակոչիկներ հավաքել, սակայն այն օրենքի ուժ ստացավ միայն 1843 թվականին, իսկ 1844 թվականին դրվեց գործողության մեջ ամբողջ կայսրությունով մեկ: Ինչպես բարձրաստիճան, այնպես էլ ցածր հրամկազմին բարձր ռոճիկներ նշանակվեցին: 21 տարին լրացած քաղաքացիներին, ծառայության կանչելիս, վարձ չէին տալիս: Միայն Կոստանդնուպոլսի ազգաբնակչությունը ազատվեց զինվորական ծառայությունից, իսկ քրիստոնյաները զինվորական հարկից[2]:

Ենիչերիների բնաջնջումը և բանակի վերակառուցումը Մահմուդ II-ին հնարավորություն ընձեռեցին ավելի ձեռարձակ ու վստահ կազմակերպել քրդական դերեբեյությունների նվաճումն ու կամակոր ֆեոդալների հպատակեցումը: Սուլթանն անմիջապես կսկսեր իր դիտավորությունների իրականացումը, եթե առաջ չգային նոր դժվարություններ:

Հունաստանի անկախանալուց հետո Թուրքիայի տիրապետության տակ էին մնացել հունաբնակ երկու կղզիներ Էգեյան ծովում Կանդիան (Կրետեն) և Սամոսը: Վաղուց ի վեր սկսված նրանց ապստամբական կռիվները 1831 թ. հուժկու բնույթ ստացան: Չկարողանալով սեփական ուժերով հպատակեցնել Եվրոպայի հովանուն ապավինած ապստամբ-

---

[1] *Д. Г. Розен*, История Турции, стр. 9.

[2] Մատենադարան, ձեռագիր 9424, թերթ 62 ա, 63, 65, 66:

[3] Տես *Ա. Պերպերեան*: Պատմութիւն Հայոց, էջ 180-181:

[1] ՍՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 9, գործ 155, թերթ 81: Այս ձեռագիրը մի ընդարձակ ուսումնասիրություն է, որի հեղինակը, ռուսական դիվանագիտական մարզի աշխատող լինելով, գրել ու իր պետությանն է ներկայացրել թուրքական բանակի վերակառուցման պատմությունը, մեծապես օգտագործելով սուլթանների ֆերմանները, նույնիսկ գաղտնի գրությունները:

[2] ՍՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 9, գործ 155, թերթ 89:

ներին, սուլթանը դիմեց եգիպտական Մուհամմեդ Ալի փաշային[1], խոստացավ վերանվաճելուց հետո կղզիները թողնել նրան:

Օգտագործելով Ալժիրում սկսված հակաթուրքական տրամադրությունները, առանց մեծ դժվարությունների, Ֆրանսիան նվաճեց այն: Ապստամբում էր Ալբանիան, անկախանալու փորձեր էին անում Սիրիան և Իրաքը, սակայն կայսրության համար վտանգավոր հակառակորդ էր դառնում վերակազմված ու լավ զինված, մարտունակ բանակ ունեցող եգիպտոսը Մուհամմեդ Ալիի ու նրա որդի Իբրահիմ փաշայի գլխավորությամբ[2]:

Իբրահիմ փաշան 1832 թ. օգոստոսի 11-ին *գրավեց Ադանան*, բացի Զեյթունից ու Կոզանյանների մի քանի բերդամրոցներից, *առանց դիմադրության հանձնվեց նաև Կիլիկիայի մեծ մասը:* Հալեպի Մեհմեդ փաշան ստիպված նահանջեց Մալաթիա, Իկոնիայի նահանգապետ Ալիշն անցավ Կիպրոս: Տարեվերջին Կիլիկիան ու Սիրիան եգիպտոսի փոխարքայի տիրապետության տակ էին:

Կայսրությունը խուզվում էր, դրվում կործանման վտանգի տակ: Կործանման առաջ կանգնելով, Մահմուդ II-ը հրավիրեց Մեհմեդ Ռեշիդ փաշային, 1832 թ. օգոստոսի 31-ին նրան նշանակեց մեծ վեզիր, տվեց զորքի գլխավոր հրամանատարությունը և հանձնարարեց կասեցնել եգիպտական բանակի առաջխաղացումը:

Դաշնակցելով Տրապիզոնի գործունյա կառավարիչ Օսման փաշա Գազանդար օղլուի հետ, Ռեշիդ փաշան Ռումելիայի ու Անատոլիայի թուրքերից, մասամբ նաև հայերից, զինվորագրություն կատարեց, զորքի թիվը հասցրեց 80 հազարի և պատրաստվեց կանգնեցնելու Իբրահիմի առաջխաղացումը, գոնե փրկելու մայրաքաղաքը: Տեսնելով այդ պատրաստությունները, Իբրահիմ փաշան ավելի գազազեց, 1832 թ. մայիսի 27-ին գրավեց Աքան, ապա՝ Դամասկոսը, Հալեպը, Հոմսը: Կայսրության բանակը, Անտիոքի ու Ալեքսանդրետի միջև ընկած Բեյլանի դաշտում, ճակատամարտ տվեց եգիպտացիներին, պարտություն կրեց, իսկ 1832 թ. դեկտեմբերի 21-ին Ռեշիդ փաշան գերի ընկավ[3]:

Քաղաքներ ու բնակատեղեր ավերող, ժողովրդի հետ չափազանց վայրագորեն վարվող, ավարառությունից, թալանից ու կողոպուտից արբեցած եգիպտական բանակը սրարշավ առաջ էր ընթանում՝ վերջին հարվածը տալու Պոլսին, կործանելու խարխուլ կայսրությունը և սահմանելու խանա-փաշայական մի նոր կառավարչաձև: Այդպես էլ կլիներ, եթե 1833 թ. հուլիսի 8-ին չկնքվեր *Ունքյար-Իսքելեսիի* պայմանագիրը, եթե ռուսական նավերը չմտնեին Միջերկրականի ջրերը, եթե ցամաքային զորքերը ափ չհանվեին Թուրքիայում: «Ռուսական հրաշքը», փաստորեն, կործանումից փրկեց օսմանյան կայսրությունը, Մուհամմեդ Ալիին ստիպեց ետ քաշվել Ռումելիայից:

[1] *Д. Г. Розен*, стр. 20.
[2] ՍՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ ՈԳԱ, գործ 1108, 1833, թերթ 1-3:
[3] *Д. Г. Розен*, История Турции, стр. 142, 168.

Եգիպտական գերությունից ազատվելուց հետո Ռեշիդ փաշան նշանակվեց Սեբաստիայի կառավարիչ: Պահպանողական թուրքերի կարծիքով, սուլթանը հրաժարվել էր նախկին ծրագրերից և, իր «սիրելիին» հեռացնելով մայրաքաղաքից, պատվավոր աքսոր էր ուղարկել: Սակայն Մահմուդը նպատակ ուներ Սեբաստիան դարձնել նոր արշավանքների մեկնող կառավարական զորքի բանակատեղի, Ռեշիդի գլխավորությամբ հպատակեցնել Փոքր Ասիայի ու Արևմտյան Հայաստանի քրդական ապստամբ դերեբեյներին, որոնք 1830-34 թթ. ավելի վայրագ էին դարձել իրենց արարքների մեջ, իսկ շատերն էլ օգնության ձեռք էին մեկնել ոխերիմ թշնամուն եգիպտական փոխարքային, խզել բոլոր տեսակի կապերը Բ. Դռնից:

Մ. Ռեշիդ փաշան նախ համալրեց բանակը, սուլթանի կարգադրությամբ գործակցեց Բաղդադի Ալի Ռիզա և Մոսուլի Մեհմեդ փաշաների հետ, կազմեց գործողության ծրագրեր և 1834 թ. գարնանը սկսեց իր արշավանքը[1]: Ռուս-թուրքական պատերազմի տարիներին խաթարված առևտուրը վերականգնելու, Սև ծովից Պարսկաստան գնացող առևտրական մայրուղին մաքրելու նպատակով, նա անցավ Տավրոսի լեռները, այնտեղից՝ Տրապիզոն, ապա՝ Էրզրում ու Բայազետ, ոչնչացրեց հայտնի ավազակախմբերին, նշանակեց պահակակետեր, դրանով իսկ Հայաստանի առևտրականների, արհեստավորների, ճնշված ռայայի համակրանքը շահեց, իսկ ապստամբ թուրք ու քուրդ էմիրների կողմից *«գյավուր փաշա»* մականունն ստացավ:

Քսան հազարանոց թուրքական բանակը, փաստորեն, վերանվաճեց քրդահպատակ շրջանների մեծ մասը[2]: Առաջին ու լուրջ դիմադրությունը եղավ Ռևանդուզում[3]: Չնայած քրդական աշիրեթների կատաղի դիմադրությանը, Ռեշիդի բանակը հաղթանակ տարավ, գերեվարեց բեկին և պատվով ուղարկեց Կ. Պոլիս: Ռևանդուզի «արքան» սուլթանի կողմից խոստումներով կաշառվեց, վերադարձավ Զեզիրե, իրեն կողմնակից ցեղախմբերը վերցրեց, միացավ կառավարական բանակին և սկսեց պայքարը հավատակիցների դեմ: Դասալքումը, սակայն, ոչ միայն չթուլացրեց քրդերին, այլև ավելի կատաղեցրեց, պատերազմը երկու կողմից էլ գազանամարտի վերածվեց, պատճառելով մեծաքանակ զոհեր, ավերածություն, գերեվարություն ու տարագրություն: «Այդ դասալքումը կռիվը չվերջացուց,- գրում է Մանգումեն,- քիուրտերը, իրենց մեկ պետին մատնուելեանը համար կատղած, մոլեգնած՝ պատե-

[1] Տե՛ս «Մանգումէ», 1912 թ. սեպտեմբերի 11/24, N 2629 (Մատենադարան, Ալպոյաճեանի արխիվ, թղթ. 4, վավ. 94):
[2] *А. Кардев*, Заметки о курдах, Тифлис, 1896, стр. 15-16.
[3] ՈԱՔԱ, ֆոնդ 40, ցուցակ 528 ա, գործ 33, թերթ 111-112, 1836:

ռազմ ուժգնորէն առաջ մղեցին. ամէն կողմէն քիւրտ թափուեցաւ, ու իրենց անհնաճ քաջութիւնը խռովեց, տակնուվրայ ըրաւ օսմանեան բանակը: Երկու ճամբարներն իրարու դէմ վայրագ ատելութեամբ կը կռուէին: Քիւրտերը իրենց ձեռքը ինկած թուրքերը ողջ-ողջ կերէին, բայց նախ մէյ մը անոնց աչքը փորելէ և եղունգները քաշել հանելէ յետոյ: Թուրքերն ալ, իրենց ճանկը ինկած քիւրտերը ցիցի կը զարնէին: Գազանամարտ կռիւը երեք ամիս տևեց, տասը հազար քիւրտ մեռան զէնքը ձեռքերնին կամ տանջանքի մէջ խոշտանգուած: Այրեցան, թալանի տրուեցան հարիւրաւոր գեղեր: Թուրքերէն ալ չորս հազար զօրք սպանուեցան»[1]: Արշավանքը շարունակվում էր Քուրդստանում և Արևմտյան Հայաստանում:

Ռեշիդ փաշան 1836 թ. Խարբերդի մոտակայքումն էր, որտեղ և տվեց հերթական խոշոր ճակատամարտը: Քուրդ ցեղապետ Չոթելզադե Հաճի խանը մեծ բազմությամբ երկու ամիս շարունակ կատաղի դիմադրում էր օսմանյան բանակին. «... տեղացի հայերը եռանդուն աջակցութիւն ցոյց տուին Ռաշիտ փաշին, մինչև որ նա երկար ժամանակ պատերազմելուց յետոյ, կարողացաւ միացեալ Եփրատն անցնելով Քարբերդ մտնել»[2]: Խարբերդի ու Չարսանջակի քուրդ բեկերը, ինչպես նաև խոշոր հողատեր, պետության հարկատվություններից վաղուց հրաժարված թուրք աղաները բազմությամբ կալանավորվեցին, տեղափոխվեցին Ասլան աղբյուր և այնտեղ կախվեցին, ցից հանվեցին կամ նրանց վրա նավթ լցրեցին ու այրեցին: «Հրով ու արիւնով» Արևմտյան Հայաստանի հարավային շրջաններն անցնող Ռեշիդ փաշան բարբարոսության դեմ կռվում էր բարբարոսաբար: Սակայն հայ ազգաբնակչությանն իր կողմը գրավելու մտադրությամբ, նա խորհում էր վերջիններիս ապագայի մասին:

Հավաքելով Խարբերդի հայ իշխաններին, Ռեշիդը սրանց առաջարկում է քրդերից զատվել, թողնել գավառը և տեղափոխվել Դիարբեքիր, որտեղի քրդերը կտարագրվեին Չարսանջակ ու Դերսիմ: Նա խոստանում էր զենք բաժանել դիարբեքիրաբնակ հայերին, *նույնիսկ հայ փաշա նշանակել*: Առաջարկը դրվում է հայ երևելիների երեքօրյա քննարկման, որոնք մերժում են պահանջը, խնդրում, որ իրենց թողնեն տեղում, իսկ քրդերին տեղափոխեն Դիարբեքիր[3]: Կատարվում է հայերի պահանջի մի մասը միայն: Խարբերդի ու Չարսանջակի հայերը մնում են տեղերում, իսկ ապստամբ ճանաչված քրդերը տարագրվում են:

Սուլթանին ձեռնտու էր քրդերի հպատակեցումը, բայց ոչ ոչնչացումը: Տարագրվածներին առատորեն հողեր, արոտավայրեր էր բաշխում՝

[1] «Սանգումէ», 1912, սեպտեմբերի 11/12, N 2629:
[2] *Անդրանիկ*, Տէրսիմ, ճանապարհորդութիւն և տեղադրութիւն, 1901, Թիֆլիս, էջ 53:
[3] Նույն տեղում, էջ 56-58:

փոխարենը պահանջելով զինված ջոկատների կազմակերպում, կայսերական բանակում ծառայություն: Այդ փոքր իշխանություններն էին, իսկ Բիթլիսը, Բայազետը, Վասպուրականը մնում էին անառիկ, խաներն ու դերեբեյները իրենց լրիվ իրավասության մեջ: Ռեշիդն սպասում էր նոր զորամիավորների, որպեսզի վերջնականապես իրողության վերածեր իր ծրագրերը, բայց 1836 թ. վերջերին հիվանդանալով, *ոմանց կարծիքով թունավորվելով*, մահացավ:

Ռեշիդին հաջորդեցին Չերքեզ Հաֆըզ ու թուրք Օսման փաշաները, որոնք և շարունակեցին նրա գործունեությունը Քուրդստանում: Հաֆըզ փաշան 15 հազար քուրդ ոչնչացրեց, 6 հազար ընտանիք գերեվարեց Դիարբեքիր, հողեր տվեց սրանց ու հիմնավորեց այստեղ, ավերած երկրների մեջ զորանոցներ կառուցեց, ապա զորքերի թիվը հասցնելով 24 հազարի անցավ Ալաջա-Դաղ:

Կառավարության ենթարկողական փորձերից խուսանավող, տարբեր տեղերում ցրված քրդական քոչվոր աշիրեթները թողել էին իրենց նախկին կայանները, բարձրացել անտիտավրոսյան Ալաջա-Դաղի գագաթամասը, ուր, հսկա ժայռերը անառիկ բերդեր դարձնելով, սքանչելապես ամուր դիրքեր բռնած, սպասում էին թուրքական բանակի գալստյանը: 1837 թ. օգոստոսի 7-ին թնդանոթները որոտացին Ալաջա-Դաղում[1]: 12 ժամ տևող ճակատամարտում Հաֆըզի բանակը, 300 զոհերի գնով, գրավեց լեռը: 1500 հոգու կորստից հետո քրդերը ենթարկվեցին հաղթողի սրի ողորմածությանը:

Չերքեզ փաշան շատ դաժան վարվեց քրդերի հետ[2]: Նա գերեվարեց 4000 քուրդ, նրանց իջեցնելով լեռնածերպերից, գցեց Ալաջա-Դաղի ստորոտը, Արկահանից քիչ հեռու, հրակեզ ավազուտների մեջ, գրեթե մերկացրեց, ապա բանակի առաջն արած, քշեց դեպի Մալաթիա ու շրջակա գյուղերը, ստիպեց նստակեցության անցնել: Եվրոպացի ուղևոր-ականատեսի վկայությամբ «Արցունքներն ու հեկեկանքները կիներուն, լացը ծծկեր տղոց, կտոր-կտոր կընեն սիրտդ: Այս չորս հազար քիւրտերը, ամենասոսկալի տառապանքներու մատնուած, երևակայել կուտան ինծի Տանդէի Դժոխքին դատապարտեալներուն տանջանքը»[3]:

Ծնկի բերելով քրիստոնյա ժողովուրդներին վիշտ ու տառապանք պատճառող քուրդ դերեբեյներին, մանր ու խոշոր բեկերին, թուրքական սուրը միաժամանակ դաժանորեն վարվեց քոչվորական կյանքով, սեփական վաստակով ապրող վրանաբնակ քուրդ աշխատավորության հետ, ոչնչացրեց, ունեզրկեց կամ բնավեր խլյակ դարձնելով նրան տարագրեց օտար աշխարհներ: Հարավային Հայաստանի ու Կիլի-

[1] *Д. Г. Розен*, часть 1, стр. 289.
[2] «Սանգումէ», 1912, N 2629:
[3] Նույն տեղում:

կիայի քրդաբնակ շրջանները տասը տարի անընդմեջ արյան ծովի էին վերածվել:

Թուրքական բանակը դաժանորեն ոչնչացնում էր քրդերին ունեցվածքի, սեռի, տարիքի, սոցիալական պատկանելության խտրություն չդնելով: Վայրենաբարո քուրդ խոլամներն էլ թալանում էին պետության նկատմամբ համակիր վերաբերմունք ունեցող հայերին, զինված խմբերով լեռներից իջնում էին գյուղերը, վերցնում հայ գյուղացու ապրուստի ամենավերջին միջոցը, հատկապես պարենն ու անասունները, քաշվում ամրացած վայրեր, շարունակում դիմադրական կռիվները: Հայաստանի քրդահպատակ, շերտընդմեջ քրդերով բնակեցված շրջանները երբևէ նման ավերածության ու տնտեսական քայքայման չէին ենթարկվել: Երկու սրի արանք ընկած հայ ժողովուրդը մաշվում էր թե՛ տնտեսապես, թե ֆիզիկապես: Ոչնչանում, բնաջնջվում կամ տարագրվում էր նաև քուրդ ու եզիդի աշխատավորությունը, անպաշտպան ռայան:

Կենտրոնածիգ քաղաքականության մարմաջով տարված սուլթանին փույթ չէին նման ավերածությունները: Մանավանդ, երբ անգլո-ֆրանս-ռուսական հակամարտությունների բովում խորամանկորեն Թուրքիա էին սողոսկում պրուսացիները, ուղարկելով ռազմական գործի մասնագետներ, զինվորներ, խորհրդականներ: Հելմութ ֆոն Մոլթկեն մայրաքաղաքից 1837 թ. մեկնում է Անատոլիա, ուր գործակցելով Հաֆըզ փաշայի հետ, վերակառուցում, լրացնել է տալիս բանակը: Նրանք երկուսը միասին հպատակեցնում են *Սինջար* գավառը և շարունակում արշավանքը: Նրանց զորաջոկատները անցան Բարձր Հայք, արյունահեղությամբ ծնկի բերեցին քրդական մանր ցեղախմբերին և 1838 թ. վերադարձան Մալաթիա, նպատակ ունենալով անցնել Կիլիկիա և ուղղություն վերցնել դեպի Եգիպտոս:

Նախքան այդ, անհրաժեշտ էր ամրապնդել թիկունքը, բարձրացնել բանակի մարտունակությունը, դադար տալով՝ վերացնել տարիներ շարունակ կռվող զինվորների հոգնատանջ վիճակը, կանխել ծայր առած հիվանդությունները: Նախ, ոչնչացնելով, բանտարկելով կամ ռոճիկներ ու թոշակներ նշանակելով թուրքահպատակ փաշայություններում եղած բեկերին, թիմարների ու զեամեթների տեր խոշոր հողատերերին, սկզբում Ռեշիդը, ապա Հաֆըզը սրանց զրկում էին քաղաքական ու վարչական իրավունքներից: Հին պաշտոնյաների տեղերը անմիջապես լրացնում էին մայրաքաղաքից առաքված նոր, հուսալի մարդիկ՝ փաշաներ, սանջակբեյեր, կայմակամներ: Հնարավորին չափով վերացվում էր հողատիրության ռազմա-ավատական բնույթը, բայց ոչ բոլոր մարզերում: «Մահմուդի գահակալությունից, ենիչերիների կոտորածից, Ադրիանապոլսի հաշտությունից հետո նրա (թուրքական բանակի -Հ.Ղ.) վերակազմավորման ու ռեֆորմների ենթարկելու առանձին փորձերը միավորվեցին,- գրում է Ֆ. Էնգելսը,- և սիստեմի վերածվեցին:

Ռեֆորմների ճանապարհին առաջին և ամենամեծ արգելքը՝ հեռավոր նահանգները կառավարող փաշաների անկախ դրությունը, նշանակալից չափով վերացվեց և ընդհանուր գծերով հավասարեցվեց այն փաշաների դրությանը, որոնք կարգադրում էին եվրոպական շրջաններում: Բայց նրանց տգիտությունը, հանդգնությունը և գռփելու հակումները մնացին այնպիսին, ինչպիսին էին ասիական սատրապների տիրապետության ծաղկման շրջանում, և եթե վերջին տարիների ընթացքում մենք հազվադեպ ենք հարկ ունեցել լսելու փաշաների ապստամբությունների մասին, ապա մենք հաճախ ենք լսել նահանգների ապստամբությունների մասին՝ իրենց ագահ կառավարիչների դեմ, որոնք, նախկինում լինելով տնային աննշան ստրուկներ և ամեն ինչի ընդունակ մարդիկ, օգտվում էին իրենց նոր դիրքից, որպեսզի հարստություն դիզեն հարստահարությունների, կաշառքի ու հասարակական միջոցների անխիղճ շռայլման ճանապարհով: Ինքնըստինքյան հասկանալի է, որ իրերի նման դրության մեջ բանակի կազմակերպումը մեծ մասամբ գոյություն ունի սոսկ թղթի վրա»[1]:

Նման պայմաններում տակավին նորակազմ, փոքրաքանակ, ավելի մեծ ակնկալությունների համար պահվող բանակը միայնակ զենքի ուժով ի վիճակի չէր հպատակեցնել քրդական ու ասորական ռազմունակ, խոշոր իշխանապետությունները Բիթլիսում, Վասպուրականում, Տարոնում. իսկ առանց այս խնդիրը լուծելու հնարավոր չէր արշավել Եգիպտոս: Սուլթանի թելադրանքով բանակատեր փաշաները դիմում են դիվանագիտական քայլերի, խորամանկորեն հրավիրում են Բիթլիսի, Հեքյարիի, Ջեզիրե Բոհտանի, Մոկսի և այլ երկրահատվածների քուրդ դերեբեյներին, ճանաչում նրանց իշխանությունը, անկախության ֆերմաններ բաժանում և փոխարենը, փաստորեն, ձևական հպատակություն պահանջում:

«Սուլթան Մահմուտը իլլեմաներէ կազմուած ժողով մը կը ղրկէ Հայաստան ու Քիւրդիստան, կը գծէ ամէն մէկ Տէրէ-պէյիի իշխանութեան սահմանը, ու կը ճանչնա այդ իշխանութիւնները իրաւասու՝ ամէն մէկը իր սահմանին մէջ: Տէրէ-պէյական իշխանութիւնները այսպիսով է, որ կունենան իրենց անկախութեան ֆերմանները»[2]: Բիթլիսը, Հեքյարին, Վանը, Բոհթանը, Բայազետը, Մոկսը, Շատախը շարունակում են պաշտպանել նախկինում ունեցած, այժմ միայն իրավականորեն ձևակերպված արտոնությունները, որով և անխաթար էին դառնում հողատիրության երբեմնի ձևերն ու հողատիրական հարաբերությունները:

Թիկունքի համեմատական կայունացումից հետո, դաշնակցելով Անատոլիայի դերեբեյների հետ, Հաֆըզ փաշան նրանցից հեծյալ գնդեր վերցրեց, Մալաթիայից անցավ Կիլիկիա, վերագրավեց դաշտային հատ-

---

[1] *Կ. Մարքս* և *Ֆ. Էնգելս,* Собрание сочинений, том X, стр. 656.

[2] *Հ. Շահպազեան,* Քիւրդո-Հայ պատմութիւն, էջ 64:

վածները և պատրաստվեց վճռական մարտ տալու եգիպտական փոխարքային: 1839 թ. հուլիսի 24-ին Հյուսիսային Սիրիայում, Մծբինի մոտ տեղի ունեցավ թուրք-եգիպտական բանակների ճակատամարտը: Սրտի խորքում պահած պետության նկատմամբ ունեցած ատելությունը, քրդական անկազմակերպ հեծյալ գնդերը հարմար պահ էին գտել լքելու բանակատեղը, ոմանք անցնելով Մուհամմեդ Ալիի կողմը, ոմանք էլ դասալքելով վերադառնալով Անատոլիա՝: Սուլթանական ցամաքային բանակը կատարելապես ջախջախվեց, նավատորմը կես ճանապարհին հանձնվեց եգիպտացիներին: Բանակի կորստյան լուրն առնելով, անկողնում պառկած Մահմուդ II սուլթանը կաթվածահար եղավ ու մահացավ: Գահ բարձրացավ 18-ամյա, անընդունակ, թուլակազմ, միշտ ազդեցությունների ենթակա Աբդուլ Մեջիդը (1839-1856): Մայրաքաղաքում ուժեղացավ պայքարը հին և նոր թուրքերի միջև: Հարավային Հայաստանում գլուխ բարձրացրին պետության թուլությունից օգտվող ջախջախված քրդական դերեբեյությունների բեկորները: Կայսրությունը նոր փրկարարի ու փրկության միջոցների խիստ կարիք էր զգում:

1839 թ. Լոնդոնից Կ. Պոլիս վերադարձավ Մուստաֆա Ռեշիդ փաշան, եվրոպական կրթության տեր մի մարդ, որին վիճակված էր բացելու *«Թանզիմաթի»* դարագլուխը և իրողության վերածելու Մահմուդի իղձերը[2]: Եվրոպայի օգնության կարիքն ունեցող, արտաքին գործերի մինիստրի պաշտոնում նշանակված Ռեշիդը և ռեշիդականները, օգտագործելով մայրաքաղաքում ծվարած, պալատում ազդեցություն ունեցող հայ ու հույն դրամատեր, խոշոր առևտրականներին, թուլակազմ սուլթանին ստիպեցին ստորագրել ռեֆորմների ծրագիրը, որն ընդհանուր անունով կոչվեց «Թանզիմաթ», իսկ հրապարակման տեղով պայմանավորված նաև *Գյուլհանեի հաթթը շերիֆ*[3]:

Այս հրովարտակով պետությունը խոստանում էր. 1) ապահովել իր բոլոր հպատակների պատիվը, ունեցվածքը և կյանքը, 2) հարկատվության սիստեմը կանոնավորելիս, հաշվի առնել հարկատուի կարողությունները, 3) բոլոր ազգերին թույլատրվում էր ծառայել բանակում և ընդհանրապես կանոնավորում էր զինվորական ծառայության ժամկետը, սահմանազատում զինվորացուի իրավունքներն ու պարտականությունները[4]: Կային նաև այլ շատ կարևոր հոդվածներ, որոնք, ինչպես և վերոհիշյալ խոստումները, մնացին թղթի վրա: Նրանց գործադրությունը գրեթե անհնար էր Թուրքիայի պայմաններում: Հաթթը-շերիֆը, փաստորեն, մնում էր հողազուրկ, ջերմոցային ծաղիկ: Բայց և այնպես, պետական այդ հրամանագիրն ունեցավ իր դրական հետևանքները:

Հաթթը-շերիֆի հրապարակումով ռեշիդականները նպատակ ունեին հպատակ այլազգիների բախտով հետաքրքրվող կամ նրանց մանրադրամի տեղ ծառայեցնող եվրոպական տերություններին հավատացնել, թե կայսրության կյանքում լուրջ փոփոխություններ են կատարվել, հետևաբար և կարիք չկա նրանց նոր միջամտությունների: Սակայն ամենաէականն այն է, որ թղթի վրա դրոշմած հոդվածներով պետության կենտրոնացմանը ձգտող թուրքերը խորամանկորեն շահում էին այլազգիների համակրանքը, նրանց մեջ հաստատուն հենարաններ ստեղծում իրենց հակառակորդների ապակենտրոնացման ձգտող թուրք խոշոր հողատերերի ու քուրդ ցեղապետերի դեմ մղվելիք պայքարում: Ռեշիդի ու նրա հոսանքի սուբյեկտիվ նպատակադրումը օբյեկտիվորեն համընկնում էր հայ ժողովրդի, մասնավորապես, քրդահպատակ շրջանների հայ, քուրդ ու եզիդի աշխատավոր գյուղացիության ձգտումներին և նրանց տրամադրում նշմարել հանձին թուրք պետականության «կարգի ներկայացուցչին անկարգության թագավորության մեջ», որը դիմադրում էր իրեն թալանող ու երկիրն ասպատակող քուրդ ու թուրք ֆեոդալներին: Հետևաբար, թուրք պահպանողականների և հարավային Հայաստանի քրդական ցեղապետերի դեմ պետության սկսած պայքարը, պատմական զարգացման առաջընթացի տեսակետից, արդարացվում էր, քանի որ այն խոստանում էր խաթարել ֆեոդալական հարաբերությունները տեղերում, առևտրի, արհեստագործության, նույնիսկ գյուղատնտեսության զարգացման համար այս կամ այն կերպ հնարավորություններ ստեղծել:

«Թանզիմաթի» ազդարարումից հետո անմիջապես չսկսվեց հարավային Հայաստանի հպատակեցումը, քանի որ այնտեղ տակավին հզոր էին քրդական մի շարք իշխանություններ: 1842 թվականին Հաթթը-շերիֆը «գործադրվում» էր Թուրքիայի ասիական նահանգներում: Ջեզիրե-Բոհտանի տիրակալ Բեդեր-խան բեկը նույնիսկ իր տիրապետած երկրամասի դռները փակեց կառավարության ներկայացուցիչների առջև: Նա հսկայական զորամասեր և քրդերի մեջ մեծ հեղինակություն ուներ, սակայն քուրդ խոշոր ֆեոդալի սխալներից էր և այն, որ թշնամաբար էր վարվում քրիստոնյա ժողովուրդների հետ, կարծելով, թե նրանք էին խլում իր իրավունքները: «Իշխանության գլուխ անցնելու հենց սկզբից,- գրում է Սախմուդովը,- Բադրը խանը կանգնեց խորապես սխալ, ռեակցիոն ուղու վրա: Նա սկսեց հալածել քրիստոնյա ժողովուրդներին, հատկապես ասորիներին»[1]: 1843 թ. Բեդեր-խանը[2]

---

[1] *Համբարձում Երամեան*, Յուշարձան, հ. Ա, էջ 22:

[2] *Հ. Ֆ. Միլլեր*, Краткая история Турции, стр. 68-69.

[3] *Լեո*, Հայոց պատմություն, նորագույն շրջան, 1927, Երևան, էջ 279-280:

[4] «Թանզիմաթի» մասին մանրամասն տես *Reşat Kajnar*, Mustafa Reşit paşa ve tanzimat, Ankara, 1954, էջ 119-125

[1] *Ս. Սախմուդով*, Քուրդ ժողովրդի պատմությունը, էջ 117:

[2] *Ս. Ա. Գորդլեվսկի*, том 3, стр. 114.

ապստամբեց և ձգտեց համախմբել մյուս իշխաններին. մի տարի առաջ ապստամբել էր խան Մահմուդը, առաջինի զինակիցը[1]:

Սուլթանական կառավարությունը տեսնում էր այս ամենը և ելքն այժմ փնտրում էր իր քաղաքականության հին զինանոցում: Նա ձգտում էր վարձկանների միջոցով քրդական բեկերին գրգռել ասորիների, հայերի ու եզիդիների դեմ, կազմակերպել քուրդ-ասորական ջարդեր: 1843 թվականին Բեդեր-խանը մի կողմից, Հուր Ալլահը մյուս կողմից, հարձակվեցին *Հեքյարիի իշխանության մեջ մտնող Թիար լեռնագավառի վրա, կոտորեցին ասորական տասը հազար խաղաղ բնակիչների և նրանց կանանց ու երեխաներին, գերեվարելով, քշեցին ստրկավաճառանոցները: Քիչ անց արյան մեջ ողողվեց Թխոմա գավառը: Բեդեր-խանը կոտորեց նաև Մոսուլի վիլայեթի եզիդիներին: Քուրդստանի «Արև» արքայի տատանվող հեղինակությունը մեկընդմիշտ խախտվեց Արևմտյան Հայաստանում: Քրիստոնյա ազգերն էլ ավելի ցասումով լցվեցին ջարդարար բեկի նկատմամբ: Նրա նկատմամբ թունոտ ատելությամբ էին լցված եզիդիները, ինչպես նաև նեստորական ասորիները, որոնց ողբը հասավ մինչև ռուսական մայրաքաղաքը, զայրույթ առաջացրեց եվրոպական դիվանագետների մոտ, իրոք ատելությամբ լցրեց վերջիններիս դեպի հետադեմ քուրդ բեկերը:* Հատկապես ցասումնալից էր այն, որ Հեքյարիի ասորիների հոգևոր պետ Մար Շիմոնը, իբրև ապացույց հավատակիցների կոտորվելուն, կտրում էր մահացածների ականջները, լցնում պարկերը, բարձում մի քանի ուղտեր, ուղարկում Նիկոլայ Առաջինին, նրա գութը շարժելու, պաշտպանություն հայցելու նպատակով[2]: Ասորական ջարդը, մասնավորապես, բողոքի անօրինակ ու սրտաճմլիկ այդ ձևը, եվրոպական դիվանագիտական շրջանների մի քանի ամսվա խոսակցության առարկան դարձան:

Նման իրադարձությունները շահավետ էին սուլթանական կառավարությանը, որն իրար դեմ հանելով հպատակներին, կարծում էր, թե հասել էր իր նպատակին և արդեն ժամանակը հարմար էր՝ սկսելու արշավանքը դեպի Արևմտյան Հայաստան, Փոքր Ասիայի քրդահպատակ շրջաններ:

Եվ այսպես, Աբդուլ Մեջիդը Սըրրի փաշային զորք է տալիս, 1845 թ. ուղարկում Արևմտյան Հայաստան, հանձնարարում «Թանզիմաթի» կիրառությունը, ամենից առաջ՝ քրդական բեկերի հպատակեցում: Սակայն պետական զորքերի դեմ զենք են բարձրացնում Վան-կուլի զորաջոկատները՝ Թեմուրզադե Մուստաֆա բեյի գլխավորությամբ[3]:

---

[1] Մատենադարան, ձեռագիր 9428, թերթ 273:

[2] *Համբարձում Երամեան*, Յուշարձան, հ. Ա, էջ 22:

[3] *Ա. Ալպոյաճեան*, Պատմական Հայաստանի սահմանները, էջ 451:

Ապստամբ Վան-կուլերին օգնության ձեռք են մեկնում քրդերի ղեկավար խան Մահմուդը, նրա վեց եղբայրները: Նրանք գալիս էին Մոկսից, Ռշտունյաց ու Կորդվաց լեռներից, Աղձնիքից, Հայոց ձորից[1]: Ապստամբների գլուխն է անցնում Ջեզիրեի ու Բոհտանի տեր Բեդեր-խան բեյը և ջանում միացնել զինաբախության պատրաստված քրդերի ուժերը: Սրանք ծրագրում են ստեղծել Բեդեր-խանի տիրապետության տակ դրված ֆեոդալական Քուրդստան: Ստեղծվելիք պետության գլխավոր դաշնակիցը պետք է լիներ խան Մահմուդը: Նրան պետք է ենթարկվեին Ոստանը, Գավաշը, Շատախը, Մոկսը, Հայոց ձորը, Նորդուզը: Վանը պիտի պատկաներ խան Մահմուդին: Խոշաբի անկախ հյուքյումեթությունը զավթեցին Բեդեր խանի զորաջոկատները և հանձնեցին խան Մահմուդի եղբայր խան Աբդալին, այն վասալական կախման մեջ դնելով «գերագույն իշխանությունից»: Բիթլիսի իշխանությունը մնում էր Շերեֆ բեկին, Ջուլամերկն ու Աղբակը պատկանելու էին Բեդեր-խանի զինակից Նուրալլահ բեկին:

Այս պլաններով զինված, ապստամբները որոշում են 1847 թ. նվաճել Վանի, Բաղեշի ու Դիարբեքիրի փաշայությունները, անջատվել Թուրքիայից և Պարսկաստանի հովանավորությամբ ստեղծել անկախ Քուրդստան: Հատկանշականն այն է, որ, հայ երևելիներին իրենց կողմը գրավելու միտումով, ապստամբները լուրեր էին տարածել, թե հայկական գավառներին թույլ կտան ստեղծել անկախ Հայաստան, իսկ եթե այդ չհաջողվեր, որն ամենահավանականն էր, Բեդեր-խանը նրանց պիտի հանձներ նորաստեղծ Քուրդստանի «տնտեսական բաժնի մատակարարությունը»[2]: Հայերի օգնությանը կարոտ էին և կառավարությունը, և՝ քրդական ցեղապետերը, դրա համար էլ զիջումներ էին անում, խոստումներ տալիս: Հարավային Հայաստանի հայ ֆեոդալները պաշտպանում էին ապստամբներին[3], ջանում երկարաձգել իրենց ֆեոդալական իրավունքները: Նրանցից ոմանք՝ Միր Մարտո Բաշկալեցին, Ստեփան Մանոզյանը՝ «Աստղը», Հովհաննես Չալկատրյանը, գնացին Բեդեր-խանի բանակատեղը, դարձան նրա խորհրդականները:

Տեղի վերնախավի ջանքերով Շատախի ու Մոկսի հայ ռազմիկները միացան ապստամբներին: 1847 թ. սրանց միացավ Դըրի հայ ու եզիդի բնակչության մեծ մասը: Դաշինք կնքած Քյոռ Մուստաֆա փաշա Թիմուր օղլիի հետ, Բեդեր-խանը Գավաշից գործակից դարձրեց Կուլի-խան բեյին: Մոկսի բեյ խան Աբդալը վաղուց էր դաշնակցել նրա հետ: Եվ այսպես, քրդերից ու հայերից բաղկացած Բեդեր-խանի բանակը

---

[1] Մատենադարան, ձեռագիր 9424, էջ 143-144:

[2] *Հ. Շահպազեան*, Քիւրդօ-Հայ պատմութիւն, էջ 86, տե՛ս նաև *Լևոն Ճերահեան*, Ժամանակակից ընդարձակ քննական պատմութիւն Հայոց, 1933, Մարսէյլ, էջ 152-153:

[3] Մատենադարան, ձեռագիր 9424, էջ 153:

նույն տարում արշավեց Վանի վրա և գրավեց քաղաքը, պաշտոնից հեռացրեց թուրք Մուստաֆա բեյին, նոր կառավարիչ նշանակեց քուրդ խան Մահմուդին[1]:

Ապստամբների հաջողությունները մեծ տագնապ էին առաջացրել սուլթանի նստավայրում, Բ. Դռան պաշտոնյաների շրջանում: Սակայն քիչ սարսափ չէր տարածվել Վասպուրականի գյուղացիության մեջ, որի ունեցվածքը, կյանքը, պատիվը դարձել էին քուրդ առաջնորդների խաղալիքը: Քրդահպատակ հայկական շրջանները արյունահեղ կռիվների ասպարեզ էին դարձել, կորցրել ազգաբնակչության մի մասը: Քայքայվում էին արհեստն ու առևտուրը, գյուղատնտեսությունն ու անասնապահությունը: Հայ գյուղացու վիճակը երբևէ այսքան ողբերգական չէր եղել: Ժամանակակիցներից մեկը այսպես է բնութագրում ժողովրդի վիճակը.

«Ո՜հ աստանօր սգով պատեալ ազգն Հայոց վարանիւր,
Չի կործանումն անշուշտ իւրեանց ի ձեռս սոցա տեսան իւր
Թէև ի ձեռս յոլով ազգաց գրաւեալ էին յառաջանում,
Վշտօք բազմօք վարժեալ էին ի գերութեան ի հնում.
Սակայն այժմիկ անտանելի էր ցաւ ազգին ապիկար
Վասն այնօրիկ զառնու ի վէպ մի (ը)ստ միոջէ ի համար:
Եթէ համայն չարիս սոցա առցի ի գիր և մատեան,
Ծովակն Վանայ չէ բաւական լինիլ գրչացն մելան»[2]:

Ապստամբները դաժանորեն էին վարվում իրենց կռիվներին անտարբերությամբ նայող ֆելլաների վրա, խլում նրանց ունեցվածքը, անտանելի պատիժներ տալիս: Բեդեր-խանն ու նրա գործակիցները ստեղծել էին բանտեր, ուր խոշտանգվում էին հայերը, ասորիները, եզիդիները, բոլոր նրանք, ովքեր կարող էին, բայց զենք չէին վերցնում կռվելու թուրքական բանակի դեմ: Անկասկած է, որ, ի տարբերություն ապստամբներին ծառայող մոլորված կամ հարստություն տենչացող փոքրաթիվ հայ վերնախավի, հարավային Հայաստանի գյուղացիության դրությունը ողբերգական էր:

Բեդեր-խանի չարագործությունների մասին օսմանյան թերթերը գրում էին. «Այս ապստամբը որ ժամանակէ մը ի վեր այն կողմերը իր ձեռաց տակը առնելով, կերպ-կերպ չարութիւններով հասարակութիւնը կը հարստահարէր և իրեն հզօր տէրութեան կողմանէ այսչափ խրատ ու յորդորանօք եղած ի քէն չընդունելով զանոնք, գոռոզութեամբ դէմ ալ դնելուն համար, մեծ պատժոյ արժանի եղած էր»[3]: Համանման բովանդակություն ունեցող վավերաթղթերով լի են Մատենադարանի գրապահոցները, որոնց հեղինակները միաբերան վկայում են քուրդ վայրագ բեկի կատարած հարստահարության հետևանքով ժողովրդական զանգվածների մեջ կուտակված ցասման ու բողոքի առկայությունը Արևմտյան Հայաստանում, հատկապես Վասպուրականի, Բայազետի շրջաններում, ինչպես նաև Մոսուլում:

[1] Նույն տեղում, ձեռագիր 9027, թերթ 91:
[2] Մատենադարան, ձեռագիր 9424, թերթ 67բ:
[3] ՀՀԱԱ պատմության ինստիտուտ, Լեոյի անձնական արխիվ, ֆ.1, ցուցակ 1, գ. 39, թ. 2: Թարգմանված է «Հայտարար Լրո-գիր» հայատառ թուրքերեն պարբերաթերթի 1847 թվականի մայիսի 12-ի N 31-ում տպագրված հոդվածից:

«Թանզիմաթն» ու օրենսդրական մյուս ակտերը ձեռնտու էին հայ գյուղացիությանը: Հողատիրության նախկին ձևերը արդեն փոխվել էին Էրզրումի, Սեբաստիայի, Տրապիզոնի փաշայություններում, գյուղացիությունը որոշ չափով հող էր ձեռք բերել: Քրդահպատակ շրջանների գյուղացիները տեղյակ էին դրան և ջանում էին ազատվել քուրդ ավատատերերի նոր բռնատիրությունից: Փույթ չէ, որ նույնիսկ «Թանզիմաթից» գրեթե մեկ տասնամյակ անց նրանք ոչ միայն հողեր, իրավունքներ չէին ստացել, այլև եղածն էլ աստիճանաբար կորցնում էին: Լցվել էր հայ գյուղացու, արհեստավորի, առևտրականի համբերության բաժակը: Ամենուրեք բողոքագրեր էին գրվում, օգնության աղաղակներ բարձրացվում:

Գավառահայերի գրավոր ու բանավոր աղաղակները մխրճվում էին պոլսահայերի սիրտը, նրանց ստիպում կտրուկ միջոցների դիմել: Կ. Պոլսի հայոց Մատթեոս պատրիարքը երիցս դիմում է Բ. Դռանը[1], անձամբ այցելում սուլթանին և խնդրում Վասպուրականի ու Տարոնի հայ ազգաբնակչությանն ազատել քրդական ցեղապետերի մագիլներից: Նա կառավարությանը նախազգուշացնում էր, որ եթե հայերին օգնություն ցույց չտրվի, նրանք ամբողջական համայնքներով կգաղթեն Ռուսաստան[2]:

Հայերի ցանկություններն ու պահանջները սերտաճում էին Աբդուլ Մեջիդի ու Մուստաֆա Ռեշիդ փաշայի պլաններին և դրվում գործողության մեջ: Սուլթանի հրամանով մի քանի հազարանոց բանակը, Օսման փաշայի ղեկավարությամբ, 1847 թ. ուղարկվում է Արևմտյան Հայաստան: Բ. Դուռը Մատթեոս պատրիարքին առաջարկում է հորդորել տեղի հայերին օգնության հասնել պետական բանակին, իսկ Օսման փաշային իրավունք է վերապահվում տեղացիներից զինվորագրություն կատարել[3]:

Հատուկ շրջաբերականներով Մատթեոս պատրիարքը դիմեց Տիգրանակերտի, Բաղեշի, Բալուի, Կարինի և Վանի հայ ազգաբնակչությանը. «զի ժողովուրդք իւրեանց ելցեն ի վրէժխնդրութիւն այնչափ տառապանցն զորս կրեցին մինչև ցարդ, յամենայնի օգնական լիցին և ծառայեսցեն արքունի բանակին...»[4]: Թուրքիայի երեքհարյուրամյա պատմության մեջ հայն առաջին անգամ էր ռազմական ծառայության

[1] Տես *Լեո*, Հայոց պատմություն, նորագույն շրջան, էջ 366:
[2] *Ա. Պէրպէրեան*, Պատմութիւն Հայոց, էջ 322:
[3] *Ա. Ալպոյաճեան*, Պատմական Հայաստանի սահմանները, էջ 551:
[4] *Ա. Պէրպէրեան*, Պատմութիւն Հայոց, էջ 322:

կանչվում, պետությունից զենք ստանում: Դարերով շղթայված ստրուկը կռվում էր մեծ թափով ու եռանդով, թեև նրա ձեռքին գտնվող զենքերը զուտ ստրկական էին[1]:

Օսման փաշան 1847 թ. աշնանը մտավ Մոկս: Կառավարական բանակը ռմբակոծեց Աբդալ բեկի անառիկ բերդերը, ջարդեց նրա զորաբանակը և գերեվարեց առաջնորդին: Առանց կռվի հանձնվեց Քյոռ Մուստաֆա փաշան: Երկրորդ ճակատամարտը եղավ Վան քաղաքում: Խան Մահմուդը պաշարեց Այգեստանը: Հայերը դիմադրում էին խիզախությամբ: Ապահովության համար կանանց ու երեխաներին նրանք տեղավորում էին կտուրներին, իսկ իրենք՝ հրազենով, մահակներով, դանակներով, նույնիսկ քարերով զինված, գնում էին մարտի: Հայ քաջարի աշխարհազորը բռնեց խան Մահմուդին և հանձնեց Օսման փաշային[2]:

Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Բոհտանի մեջ, Ջեզիրե գավառում, այնտեղ, որտեղ ապաստանել էր քրդական ցեղախմբերի «գերագույն տերը» Բեդեր-խան բեյը[3]: Կառավարական զորքի, քուրդ, եզիդի ու հայ աշխարհազորայինների անխնա հարվածների տակ Բեդեր-խանը տանուլ տվեց ճակատամարտը, նահանջեց մարտադաշտից և փակվեց Ջեզիրեի Օրագ կոչվող անառիկ բերդում: Բերդը պաշարվեց: Սակայն պաշարման մեջ հռչակավոր ցեղապետը կարողացավ դիմանալ միայն 17 օր և անձնատուր եղավ[4] Օսման փաշային՝ պայմանով, որ իր և բազմանդամ ընտանիքի անդամների կյանքի անվտանգությունն ապահովվի:

«Պետերհան պէյը,- հաղորդվում էր 1847 թ. մայիսի 12-ին,- որ Մոսուլ գաւառը ճեզրէ ըսուած տեղը կը կենար, արքունական բանակին դէմ չկրնալով դնել, ցիրուցան եղեր ու Օրագ բերդը փախեր էր և իւր ընկեր խան Մահմուտը՝ որ Վան կը կենար, այն ալ ցրուեր ու տիրացեր էր, ուստի անոնց քիչ ժամանակի մէջ ձեռք անցնելը ու այս գործոյն աւարտիլը կը յուսացուէր:

Այս օրերս արքունական բանակին ընդհանուր հրամանատար ... Օսման փաշային կողմանէ Բարձրագոյն Դուռը եկած գիրը կը ծանուցանէ, թէ Պետերհան պէյը իր ընկերներով ու ընտանիքովը Օրագ բերդին մէջ պատսպարեալ կեցած ատենը՝ յիշեալ փաշան՝ արքունի բանակով բերդին շրջակայ տեղը հասնելով՝ երկու անգամ մարդ խրկեր է ու մեծազօր տէրութեան կողմանէ ապահով ընելով զանիկա՝ առաջարկեր է որ հնազանդի:

---

[1] *Լեո,* Հայոց պատմություն, նորագույն շրջան, էջ 367:

[2] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր N 9424, էջ 148:

[3] Տե՛ս *Լևոն Ճէրահեան,* Ժամանակակից ընդարձակ քննական պատմութիւն հայոց, էջ 154:

[4] *Բարունակ Պէյի Ֆերուհխան,* Ճանապարհորդութիւն... էջ 62:

Հարավի վարչական վայրը

Շուշիի Ամենափրկիչ եկեղեցին
(1868-1877թթ.)

Բայց անիկա բերդին ամրութեանը ապաւինելով այս առաջարկութիւնը չընդունելէն ի զատ բերդին վրայէն ու քարերուն մէջտեղէն սկսեր է թնդանօթ ու հրացան պարպել: Այն ատենը արքունի բանակն ալ արիաբար դէմ դնելով բերդին շրջակայ տեղերը պաշարեր է:

Բանակին Ռեիստ գտնուող Մուստաֆա Սապրի փաշան ձախ կողմէն ու Ֆէրեք էօմեր փաշան ու Միրմիրան Մուստաֆա փաշան ալ աջ կողմէն, և Օսման փաշան ալ երկու կողմէն զօրքը կարգադրելով ու մէջտեղի կողմէն յառաջ գնալով սկսեր են թնդանօթ ու խումպարա և հրացան նետել բերդին վրայ. և այս կերպով երեք գիշեր շարունակ բերդը պաշարեր ու նետեր են զանիկա ամէն կողմէն:

Վերջերս Պետերհան պէյը աւելի նեղութեան մէջ մնալով բերդին վերի ծայրէն սկսեր է պաշարելով ազատութիւն խնդրել ու պատերազմին դադարիլը աղերսել: Ուստի Օսման փաշան ալ, մեծազօր տէրութեան կողմանէ գթութեան նշան ցուցընելով աղերսը ընդուներ է և իսկոյն Պույրուլթու գրելով թէ իրեն և թէ ընտանեացը ու ազգականացը ներողութիւն ու ազատութիւն տրուիլը իմացուցեր է:

Այս լսելով Պետերհան պէյը իր երկու տղան և սեփհական պաշտօնեաները հետը առեր ու բերդէն իջեր արքունի բանակը եկեր է, և խոստովանելով իր ըրած յանցանքը պատկառանօք և աղերսանօք... ներում հայցեր է»[1]:

1848 թվականի սկզբներին ընկճվեց նաև Խոշաբը: Վերջացավ Մահմուդիե վերանվանված քուրդ իշխանապետությունը: Նույն օրերին վերանվաճվեց Մուշը[2] և Տարոնի մեծ մասը: Բիթլիսի իշխանությունը համառորեն դիմադրում էր: Օսման փաշայի հոգնատանջ զորաբանակները հաղթության չհասան այստեղ: Օգնության եկավ Ռեշիդ փաշան, որը միայն 1849 թվականին կարողացավ գրավել Բաղեշը[3], գերեվարեց Շերեֆների տոհմի վերջին շառավիղներին, ուղարկեց Կ. Պոլիս և մեկընդմիշտ վերջ դրեց նրանց տիրապետությանը: Բաղեշին միացվեց և նրա ենթակայության տակ դրվեց հպատակված Սասունը: Գրավված մարզերում բանտարկված բեկերին փոխարինելու էին գալիս թուրք փաշաները, երբեմն նրանց խորհրդականներ էին նշանակվում նաև հայերը:

Սուլթանական կառավարության հաղթանակը կատարյալ էր, միաժամանակ զոհասակավ ու էժանագին: Քուրդ բոլոր բեկերը, պետական անվտանգության սարսափազդուներն այժմ սուլթանի բռի մեջ էին: Դերեբեյությունները, օջաքլիքները, հյուքյումեթությունները ու յուրթ-

[1] ՀԳԱԱ պատմության ինստիտուտ, Լեոյի անձնական արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 39, թերթ 1-2, 1847:

[2] *Ա. Ալպոյաճեան*, Պատմական Հայաստանի սահմանները, էջ 453:

[3] *Линч*, Армения, стр. 191-192, տե՛ս նաև «Պատմական Հայաստանի սահմանները», էջ 444-445:

լուկները վերացված էին, քուրդ ֆեոդալական բներն ընկճված: Դիարբեքիրի վիլայեթը վերանվանված էր Քուրդստան և հպատակված թուրք էսատ փաշային[1], այսինքն կենտրոնական պետությանը: Խոստումներով հայ և քուրդ ռայան պիտի ազատվեր քուրդ բեկերի հարկային ծանր բեռից ու ֆեոդալական քմայքներից, դրա համար էլ շնորհակալության լուրեր էին տեղում Մատթեոս պատրիարքի գլխին: Նրանք տակավին ապրում էին պատրանքներով, որոնցից զերծ չէր սոսկ մակերեսից նայող, ցնծության աղաղակներ արձակող քահանայապետը, ուստի և խանդավառորեն շնորհավորում էր հայ ժողովրդին. «Յայտնի է,... որ մեր սիրելի հայրենիքը Հայաստան աշխարհք որ ամենայն աշխարհաց և ազգաց առջև հայոց ազգիս պարծանք մըն էր իրեն անհամեմատ ու աննման ձիրքերովը, այսքան հարիւրաւոր տարիներէ ի վեր ապստամբ և աշխարհաւեր քրդաց անողորմ և անգութ բռնակալներուն ձեռքը ինկած մատնուած, աւերակ և անապատ էր դարձեր, և անմռունչ բարբառով կուլար կողբար իւր սիրելի զաւակունքը՝ ողորմելի ազգս հայոց, որ այն մարդակերպ գազաններուն պատռող ժանեացը որս ինկած էին տարաբախտութեամբ»[2]: «Խան Մահմուտը և Պէտերխան պէյը, որոնք ընդհանուր զօրապետին ձեռքը ինկած յուսահատ և ամօթահար, իրենց կենացը խնայել կը խնդրէին, և շնորհեց աս մեծապանծ և սքանչելի յաղթութիւնը նորին կայսերական վեհափառութեան բարձր անունին և հզօր հրամանին. որով և ազատուեցաւ Հայաստան աշխարհը աս դառն վիճակէն, աս անտանելի գերութենէն...»[3]:

Քրդաբնակ հայկական նահանգների հայ հոգևորականությանը պատրիարքը պատվիրում էր, որպեսզի իրենց մոտ եղած կամ քուրդ բեկերի թաքցրած հարստությունը հանձնեն կառավարությանը: Նույնանման հրամաններ են արձակվում տեղերում: «1847 յուլ. 7, ի Վան,- գրում է Փիրղալեմյանը,- յԱռաջնորդարան Մովսէս վարդապետ դէտ երկրին յետ կալանաւորութեան Խան Մահմուտի, Խան Աւտալայ, Մուստաֆայ պէյի և այլոց ձեռամբ միւշուր Օսման փաշայի. հրամանաւ նորին պատուէր հանէ յամենայն եկեղեցիս Վանայ. եթէ ոք ասէ թագուցեալ ունի յընչից ինչ նոցին, եկեալ յայտնեսցէ մեզ յառաջնորդարան, զի մի պատիժ պատուհասի կրեսցէ յետոյ ի կառավարութենէն»[4]:

Ակնհայտ է, որ հոգևոր պետերն ու հայ քաղաքական գործիչները մի պահ կարծում էին, թե քրդական դերեբեյությունների ոչնչացումով, «Թանզիմաթի» հրապարակումով ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքում էական փոփոխություններ տեղի կունենան: Օգտվելով կառավարության ժամանակավոր ու մասնակի թողտվությունից, նրանք հանդես

[1] «Արշալոյս Արարատեան», 1847 թ. 28-ը նոյեմբերի, N 299:
[2] *Ա. Պէրպէրեան,* Պատմութիւն Հայոց, էջ 323:
[3] Նույն տեղում, էջ 324-325:
[4] Մատենադարան, ձեռագիր 4515, թերթ 10:

էին գալիս բողոքագրերով, գրեթե առաջին անգամ համարձակախոս պատվիրակներ, «հանդուգն գրություններ» էին առաքում Բ. Դռանը, դրանով իսկ ջանում լուծել մի շարք կնճռոտ խնդիրներ:

Աշխուժանում է Վասպուրականի հայ ազգաբնակչությունը, որն այնքան կռիվներ մղեց քուրդ ցեղապետերի դեմ, օգնեց կառավարությանը: 1847 թ. հուլիսի 29-ին Մատթեոս պատրիարքը Վանի առաջնորդ է նշանակում Գաբրիել Շիրոյանին և «պատուիրէ նմա հոգ տանիլ պայծառութեան եկեղեցեաց և սուրբ վանօրէից շինութեան և բարեկարգութեան և դպրատանց յառաջդիմութեան»[1]: Եթե մինչ այդ հայկական որևէ վանքի կամ եկեղեցու թեկուզ քանդված պատերը վերանորոգելու, նոր գավիթ կառուցելու համար սուլթանի հրամանը, փաշայի ու քուրդ խանի թույլտվությունն էր հարկավոր[2], ապա դարակեսից սկսած պատրիարքին էր վերապահվում հոգևոր հիմնարկությունների, վանքաշինության ու եկեղեցաշինության գործերը կարգավորելու իրավունքը: Այժմ արդեն պատրիարքն ու առաջնորդներն էին մտահոգվում գավառների լուսավորության խնդրով, եկեղեցուն կից եղած ծխական դպրոցների կողքին արտոնում վարժարանների հիմնադրումը[3]:

Հայերը քաղաքական իրավունքների ետստացման փորձեր են անում: 1848 թ. հունվարի 21-ին Սսի Միքայել կաթողիկոսը պատրիարքից խնդրում է, որպեսզի նա Բ. Դռան միջնորդությամբ Ադանայից աքսորել տա «Հաճի Հասան անուն չարագործ այլազգւոյն և միւսն վասն հաւատուրաց հայոց վերստին դառնալոյ ի քրիստոնէութիւն»[4]: 1848 թ. մարտի 26-ին Ախիջան աղա Ղարասեֆերյանը, Մահտեսի աղա Փիրղալեմյանը, Գալուստ Չալկատրյանը[5] խնդրագրով աղերսում են իրենց ազատել աքսորից: Բավարարվում է նրանց պահանջը: 1848 թ. ապրիլի 21-ին Եվդոկիայի, Ամասիայի, Մարզվանի հոգևոր առաջնորդը դիմում է պատրիարքին և խնդրում Բ. Դռան միջոցով «Հրաման ազատութեան առնուլ զմիրին քաղաքին»[6]: 1849 թ. մարտի 27-ին Սեբաստիայի առաջնորդ Կարապետ վարդապետը պատրիարքին դիմում է, «որպէսզի միջնորդեսցէ Դռան չառնուլ զհարկն ի վանականացն»[7]: Այսպիսով սկսվում է հայերի խնդրագրերի շրջանը, մի պահ բարձրանում է հայոց պատ-

[1] Մատենադարան, ձեռագիր 4515, թերթ 11:
[2] Մանրամասն տես ՀԽՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 2214, վավերագիր 24, 44, 46, 47, 50: Այս գործերում ամփոփված են 1703-ից 1835-36 թթ. ընկած ժամանակամիջոցում տրված 100-ից ավելի գրություններ՝ հայկական վանքերի ու եկեղեցիների վերանորոգման վերաբերյալ և բովանդակում են հայերին ստորացնող, նվաստացնող տողեր:
[3] Մատենադարան, ձեռագիր 4515, թերթ 11-12:
[4] Նույն տեղում, թերթ 14:
[5] Նույն տեղում, թերթ 18:
[6] Նույն տեղում, թերթ 19:
[7] Նույն տեղում, թերթ 27:

ոիարքի հեղինակությունը և վիճաստեղանին են դրվում դարեր շարունակ հայ ժողովրդին տանջող ու մաշող խնդիրներ:

Հայերի համարձակությունն այնտեղ է հասնում, որ արդեն փորձեր են անում խառնվելու մահմեդական կառավարիչների նշանակման գործերին: «1849 յունուար 28 ի Վան,- գրում է Փիրղալեմյանը,- Գաբրիել վարդապետ դէտ տեղւոյն խնդրէ ի Պատրիարգէն, որպէսզի միջնորդեսցէ առ Բ. Դուռն՝ բարձրացուցանել յաստիճան միւշիրութեան զբարիբարոյ Մուհամէտ Ռեշիտ փաշայն Վանայ և ոչ երգնկացի Ֆէրիկ Իզզէթ փաշայն. որ կէօզլիւքլիւ Ռեշիտ փաշայն և Քիւրդիւստան վալիսի Հասեթ փաշայն զնա կամէին կացուցանել...»[1]:

Հայ ժողովրդի ժամանակավոր նման «հանդգնությունը» չէր կարող վրիպել պահպանողական թուրքերի ուշադրությունից, որոնք թե՛ մայրաքաղաքում և թե՛ գավառներում պատրաստվում էին հաշվեհարդար տեսնել «չափը անցկացրած» գյավուրների հետ[2]: «Թանզիմաթի» կիրառությունից գազազած Ադանայի թուրքերը դեռևս 1849 թ. օգոստոսին հոծ բազմությամբ հարձակվեցին քրիստոնյաների վրա, սպանեցին մի քանի հայերի, սպառնացին հայազրկել գավառը: «...Ապստամբ տաճիկները հաւաքուեր են *Ուլի* ճամի, իրարու հետ դաշինք ըրեր են որ *Թանզիմաթին* հնազանդողները կոտորենք, որպէսզի Ռամազանին ընդունելի ըլլայ»[3]: Եվրոպական հյուպատոսարանների աշխատողներին նրանք ստիպեցին թողնել իրենց շենքերը, ապաստանել Հայոց եկեղեցում: Չնայած դրան, թվաշատ վիրավորներ ու սպանվածներ եղան: Մի քանի օր շարունակ Ադանան և Տարսոնը անցել էին ապստամբների ձեռքը, մինչև որ վրա հասան պետական զորքերը, «կարգ հաստատեցին» և պատժեցին խռովարարներին:

Այդուհանդերձ, արյան ու կրակի միջով «Թանզիմաթը» 1847-49 թվականներին կիրառվում էր Թուրքիայի ասիական նահանգներում, Արևմտյան Հայաստանում: Այդ պահին արևմտահայության համակրանքը սուլթանական կառավարության կողմն էր, քանի որ նրանից մեծ ակնկալություններ ուներ, նույնիսկ օրորվում էր այն պատրանքներով, թե գործնականում կստանա բոլոր խոստումները, որոնք դրոշմված էին «Թանզիմաթի» ու հարակից օրենսգրքերի էջերում:

Հայ ժողովրդի, նրա հոգևոր առաջնորդի, քաղաքական գործիչների հույսերը վաղաժամ էին և ունայն: Խորամանկ թուրք պետական գործիչները զսպել էին քրդական ցեղապետերի քաղաքական հավակնությունները, սակայն բնավ չէին ցանկանա հրաժարվել նրանց ռազմական ծառայություններից, զրկվել կայսրության արևելյան սահմանապահներից: Այդ էր պատճառը, որ պետական գործիչները մի ձեռքով ազդարարում էին «Թանզիմաթը», բանտարկում քուրդ ցեղապետերին, մյուս ձեռքով սիրաշահում, առաջ քաշում քուրդ նոր առաջնորդներ: Բավական է հիշել, որ Բեդեր-խանը Կ. Պոլսում ապրում էր այնպիսի վայելուչ և շքեղ պայմաններում, որպիսիք երբեք չէին երազել նրա նախնիները: Այդպես էլ գուցե շարունակվեր, եթե եվրոպական դիվանագետների ճնշումը չլիներ կամ անընդհատ չհիշատակվեր նրա ջարդարարությունը, սուլթանի ականջին չզնգային 10 հազար ասորիներին ու 1200 եզիդիներին ոչնչացնելու փաստերը:

Բեդեր-խանն աքսորվեց Կրետե կղզի, Մահմուդ խանը՝ Սիլիստրե: Պաշտոնի կանչվեց Բեդեր-խանի եղբորորդի Եզդանշիրը: Շատ ցեղապետերի արտոնություններ շնորհվեցին, ասորական ջարդի ղեկավարներից մեկը՝ արյունախում Հուր-Ալլահ բեկը, նույնիսկ վարչական պաշտոն ստացավ: Ահա թե ինչպիսի հետևանքներ էր ունենում «Թանզիմաթը» քրդաբնակ հայկական նահանգներում: Այս ամենից հետո մայրաքաղաքի հայերի հրճվանքներից քիչ բան էր մնում, իսկ հայաբնակ գավառներում լեռնանում էին նորանոր անլուծելի խնդիրներ:

Այսուամենայնիվ, սխալ կլիներ կարծել, թե «Թանզիմաթը» բոլորովին ապարդյուն անցավ: Եթե այն գործի չվերածեց հավասարության գաղափարը, կյանքի, ունեցվածքի ապահովությունը, պատվի անբռնաբարելիությունը, գոնե հրապարակավ հուզեց այդ խնդիրները: Այս տեսանկյունից դիտելով նրա նշանակությունը, հպատակ այլազգիների համար աննշան չէր, որչափ որ ծնունդ էր տալիս նրանց ապաճանաչված իրավունքների գիտակցությանը[1] և հրահրում պայքարի՝ արյունով ու տանջանքներով՝ թղթեղեն խոստումները գործնական իրողության վերածելու համար:

---

[1] Նույն տեղում, թերթ 26:

[2] «Հայաստան», 1849, 10-ը սեպտեմբերի, N 11-168:

[3] ՀՊԱԱ պատմության ինստիտուտ, Լեոյի անձնական արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 42, թերթ 1:

[1] *Լեո,* Հայոց պատմություն, նորագույն շրջան, էջ 370-371:

2. Վարչաքաղաքական և հողային ռեֆորմները. հողատիրության ձևերի, հողատիրական հարաբերությունների փոփոխությունները

XIX դարի երկրորդ քառորդից սկսած, պարբերաբար փոխվում են Թուրքիայի նախկին վարչամիավորները, նրանց կառավարման ձևը, նույնիսկ բովանդակությունը: Սուլթանների վարած բարեփոխումների քաղաքականությունը տարածվում էր նաև այս բնագավառում:

Դարեր շարունակ քիչ փոփոխություն կրած կայսրության վարչաքարտեզն էական վերածնման ենթարկվեց 1834 թվականին: Մահմուդ II-ը նույն տարում փոխեց փաշայությունների անունը, վերանվանեց *վիլայեթ*, ապա դրանք բաժանեց սանջակների, որոնց բոլորի գլխավորներն էլ պիտի առաքվեին մայրաքաղաքից՝ ոչ իբրև ռազմական, այլ քաղաքական պաշտոնյաներ: 1836-38 թթ. եվրոպական ձևով կազմակերպվեց նաև Բ. Դուռը, ստեղծվեցին արտաքին, ներքին գործերի մինիստրություններ: Թուրքիան իր պատմության մեջ առաջին անգամ ֆինանսների մինիստր ունեցավ[1]:

Փոփոխությունների ենթարկվեց նաև Արևմտյան Հայաստանի վարչաքարտեզը: Այն բաժանվեց *Էրզրումի, Սվազի, Տրապիզոնի, Դիարբեքիրի,* նորաստեղծ *Խարբերդի* վիլայեթների: Նախկինում *Վանի* փաշայության մեջ մտնող Մոկսը, Դերսիմը, Հեքյարին կցվեցին Դիարբեքիրին: Վերացվեցին Կարսի, Չըլդըրի, Բայազետի փաշայությունները, գավառները տրվեցին մյուս երկու վիլայեթներին, մեծ մասը հանձնելով Խարբերդի նահանգապետին[2]: Քրդական իշխանապետությունների մեկընդմիշտ վերացումից հետո երկրի վարչամիավորների մեջ 1847-1849 թթ. վերախմբավորում կատարվեց: Վանը, Ջեզիրեն, Բոհտանը, Բերվարին, Հեքյարին միացվեցին և դրվեցին մեկ կուսակալ-վալիի իշխանության տակ[3]: 1848 թ. հուլիսին *Մարաշը* հանձնվեց *Ադանայում* նստող Օսման փաշայի իրավասությանը[4]:

1864-1867 թվականներին Թուրքիան վարչական նոր բաժանման էր ենթարկվում[5]: Այս անգամ խոշորացվում էին վարչամիավորները, «վերականգնվում» կայսրության կազմում մտնող այլազգի ժողովուրդների նախկինում ունեցած իշխանությունների «ամբողջական» սահմանները, յուրաքանչյուրը դրվում մեկ վիլայեթի մեջ: Բուլղարական թագավորության երբեմնի տերիտորիայի վրա 1864 թ. ստեղծվեց Դանուբի վիլայեթը, 1868 թ. կազմակերպվեց Բոսնիայի վիլայեթը: Արևմտյան

[1] *Ա. Ֆ. Միլլեր*, Краткая история Турции, стр. 64.
[2] Lettres sur la Turquie, p. 46-49.
[3] «Արշալոյս Արարատեան», 1847, 5-ը սեպտեմբերի, N 293:
[4] Նույն տեղում, 1848, 9-ը հուլիսի, N 315:
[5] "Современное состояние Оттоманской империи", СПб, 1877, стр. 11-12.

Հայաստանի մեծ մասը ամբողջացվեց և 1865 թվականին կազմավորվեց *Էրզրումի (Կարին)* նոր ու ընդարձակ վիլայեթը:

1864-1866 թթ. վարչական այս ակտերը, սակայն, զուտ փորձնական նպատակ էին հետապնդում և սուլթանի կողմից վավերացված չէին: Միայն 1867 թ. մշակվեց ու վավերական տեսքով հրապարակվեց «Վիլայեթների վարչության մասին օրենքը»[1], որով նոր ու լուրջ փոփոխության տակ դրվեցին կայսրության գրեթե բոլոր նահանգները: Էրզրումի վիլայեթի մեջ մտցվեց Չըլդըրը, Կարսը, Բայազետը, Երզնկան (հետագայում նաև Մուշը) և նույնանուն փաշայության նախկին տերիտորիան[2]: Սվազի վիլայեթին էր մնում Սեբաստիան, Ամասիան, Դիվրիկը, Խարբերդի (Մամուրեթ ուլ Ազիզ) վիլայեթին՝ Մալաթիան, Մաղենը:

Ամենալուրջ փոփոխության էր ենթարկվում Դիարբեքիրի վիլայեթը: Այստեղ համահավաքվում էին Դիարբեքիրը, Մուշը, Վանը, Հեքյարին, Ջեզիրեն, Բիթլիսը, այսինքն, այն մարզերը, որոնք դարեր շարունակ ապրել էին անկախ կամ կիսանկախ դրությամբ: Այժմ արդեն մեկընդմիշտ վերացվել էին հյուքյումեթները, դերեբեյությունները, օջաքլըքները, դրա համար էլ, առանց երկնչելու, կառավարությունը միավորում էր սրանց և տալիս Քուրդստան անունը: Եվ ահա այս անվան հրապարակումն էլ տեղիք տվեց հայերի զայրույթին ու բողոքին, քանի որ Վանը, Մուշը, Բիթլիսը մտցված էին Քուրդստանի կազմը: Նոր անախորժություններից խուսափելու երկյուղի տակ, Բ. Դուռը Վանի և Մուշի նախկին տերիտորիան անջատեց Դիարբեքիրից և միացրեց Էրզրումի վիլայեթին[3]: Ադանայի վիլայեթի մեջ մտան Ադանա, Իչել, Գոզան, Ջեբել (Բերեքետ) սանջակները, այսինքն, դաշտային Կիլիկիայի մեծ մասը և լեռնայինի մի հատվածը[4]: Հալեպի վիլայեթի մեջ մնացին Հալեպ, Ուրֆա, Մարաշ սանջակները, դրանց թվում Զեյթուն, Ալբիստան, Անտեբը, Բազարճըգ հայկական ու հայաբնակ գավառները[5]: Տրապիզոնը բաղկացած էր Տրապիզոն, Լազիստան, Ջանիկ, Գյումուշխանե սանջակներից[6]: Հայկական բնակչությամբ սրանց մեջ մեծամասնություն էին կազմում Շապին-Կարահիսարը և Գյումուշխանեն: Մոտավորապես 19800 հայ արական սեռի բնակչություն կար նաև

[1] ՈԱՔԱ, ֆ. Քաղարխիվ, գործ 9468, «Բացատրական գրություն», թերթ 1-37:
[2] ՀԽՍՀ ՊՊԿԱ, քաղվածքների ֆոնդ, գործ 39, թերթ 1-2, տես նաև ՎԽՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 11, գործ 3683, թերթ 3-4:
[3] *Я. Д. Малама,* Описание Эрзерумского вилайета, СПб, 1874, стр. 3-6.
[4] ՍՍՀՄ ԿՊՈՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 83, թերթ 8: Հիշյալ գործը մի ընդարձակ զեկուցագիր է Ադանայի ու Հալեպի պատմական անցյալի, տնտեսական կացության վերաբերյալ, որը կազմել է ռուսական կովկասյան բանակի շտաբի պետ, գնդապետ Լյունդեկվիստը 1886 թ.:
[5] Նույն տեղում, թերթ 85-87, տես նաև «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», էջ 30-31:
[6] ՍՍՀՄ ԿՊՈՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 63, թերթ 84-85:

Տրապիզոն քաղաքում, Եոմուրայում, Աղջեաբադում, Օրդույում, Չարշամբայում[1]:

Վարչական այս բաժանումը պատճառաբանվում էր նրանով, որ իբր Բ. Դուռը ջանում է խոշորացնել մարզերը, որպեսզի նվազեցնի պետական պաշտոնյաների թիվը, հետևաբար և կրճատի նրանց տրվող ու գանձարանից դուրս եկող դրամի քանակը: Մյուս կողմից ազդարարվում էր «Թանզիմաթի» կատարումը, Եվրոպային, մասնավորապես Ռուսաստանին, հավաստիացնում, թե վերականգնվում են քրիստոնյաների և ընդհանրապես հպատակ այլազգիների նախկին սահմանները, հետևաբար մեծ պետությունները կայսրության ներքին գործերին միջամտելու, իսկ հպատակները՝ հուզվելու, ազգային շարժումներ բարձրացնելու հարկ չունեն այլևս:

Սրանցից առաջինի մեջ ճշմարտության կորիզ կար, սակայն Արևմտյան Հայաստանի, ողջ Թուրքիայի վարչական անընդմեջ բաժանումները, նրանց հաճախակի ու անվերջ դառնալը հիմնականում բխում էին կառավարության վարած ազգային վրեժխնդիր քաղաքականությունից: Տիրապետողն այստեղ հպատակ ազգերի անընդհատ բեկորացումն էր, քրիստոնյաների տարանջատումը, ազգային շարժումների արհեստական արգելակումը, Մուհամմեդի երկրպագուների գերադասումը անհավատներից, առաջինների նկատմամբ՝ վստահություն, երկրորդների հանդեպ՝ թերահավատություն ու կասկածամտություն: Պատահական չպետք է համարել հայկական նահանգների մի մասի միակցումը Քուրդստանին և Տրապիզոնի հայերին դեպի թուրքացման ճանապարհը մղելը:

«Թանզիմաթի» ժամանակ Թուրքիան տակավին բացարձակ գրոհի չէր անցել: Նա նույնիսկ առերես սիրաշահում էր քրիստոնյաներին, իր պլանները քողարկված ձևով իրողության վերածում: Պատահական չէ նաև, որ հեռավոր ու ահավոր պլաններ ունեցող թուրք ղեկավարները հայերին քաղաքացիական իրավունքներ էին խոստանում, նույնիսկ թույլատրում մասնակցելու վիլայեթների ու սանջակների կառավարմանը, գյուղացու բողոքի ձայնը, երեսփոխանի բերանով, հնչեցնում իսլամ պաշտոնյաների թանձրաքաղանք ականջներին:

1867 և 1870 թթ. օրենքներով փոփոխություն կրեց վիլայեթների կառավարման, կառավարիչների նշանակման, ցածրաստիճան իշխանավորներ ընտրելու, հաստատելու ձևը, որոշ իմաստով, հարկավ, և բովանդակությունը: «Վիլայեթների վարչության մասին օրենքի»[2] համաձայն (տրված 1870 թ.) նահանգների նախկին փաշաները այժմ կոչվում էին վալի, որոնք նշանակվում էին Բ. Դռան և վավերացվում սուլթանի կողմից միայն[3]: Սահմանափակվում էին նահանգապետերի

[1] ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 63, թերթ 86:
[2] ՀԽՍՀ ՊՊԿԱ, Քաղվածքների ֆոնդ, գործ 39, թերթ 17:
[3] ՎԽՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 11, գործ 3683, թերթ 2:

երբեմնի իրավունքները, նրանց զրկում էին զինվորական հրամանատարի պաշտոնից, բանակը և կառավարչությունը զատում իրարից: Նույնիսկ սանջակների կառավարիչ մյութեսարիֆներին, կազայի կառավարիչ կայմակամին, վիճակների գլուխ նստած մյուդիրներին հաստատում էր ոչ թե վալին, այլ ներքին գործերի մինիստրը (հոդված 54)[1]: Միայն 1877 թ. լրացուցիչ կերպով տրված «Վիճակների վարչության մասին օրենքը» նահիեների մյուդիրներին դարձնում էր ընտրովի և արդյունքների վավերացման իրավունքը վերապահում վալիին[2]:

Ստեղծվում էին վիլայեթների և սանջակների վարչություններ: Նախկինում միանձնյա, քմահաճորեն կառավարող փաշային այժմ փոխարինելու էր գալիս *վարչական խորհուրդը* (մեջլիսի ումումի): Այն բաղկացած էր վալիից (նախագահ), մեքտեբջուց (գրասենյակի պետ), դեֆտերդարից (ֆինանսների տնօրեն), հույն և հայ համայնքների հոգևոր առաջնորդներից (եթե տվյալ հայկական նահանգում հույներ կային) և վիլայեթի ազգաբնակչության կողմից ընտրված երկուական քրիստոնյա և մահմեդական անդամներից[3]:

Մյութեսարիֆից բացի, նշանակվում էին նաև գլխավոր դատախազը, տասանորդի հավաքման «գործատերը» (աշար մյուդիրի), հարկեր հավաքողը (վերգի մեմուրի), սանջակ էմինը, հոգևոր դատավորը, քաղաքացիական դատավորը[4]: Նույնանման աստիճանավորներ էին նշանակվում կազայում, նահիեում: Ըստ որում, վիլայեթի չորս դատավորները և նրանց օգնականները՝ կեսը մահմեդական, կեսը քրիստոնյա, ընտրվում էին ամբողջ նահանգի չափահաս ազգաբնակչության կողմից, երկու տարին մեկ:

Ամբողջ վիլայեթի գերագույն օրգանն էր ճանաչվում ընդհանուր ժողովը, որը գումարվում էր տարին մեկ անգամ՝ 40 օրվա նստաշրջանով: Այն քննում էր վիլայեթի հարկերի, ճանապարհաշինարարության, ժողովրդական կրթության, առևտրի և արդյունագործության, հողագործության և անասնապահության, պետական ունեցվածքի պահպանման և այլ խնդիրներ[5]: Վալիի միջոցով բոլոր որոշումները ներկայացվում էին Բ. Դռան ուշադրությանը: Որոշումը կարող էր մերժվել, իսկ հաստատվելու դեպքում վերադարձվում էր տեղական իշխանության գործադիր մարմիններին: Ակնհայտ է ընդհանուր ժողովի՝ խոսքով՝ օրենսդիր, գործով՝ խորհրդակցական իրավունք ունենալը[6]:

Վալիի նախագահությամբ, կադիի, մուֆտիի, ուլեմաների մասնակ-

[1] ՌԱՔԱ, ֆ. Քաղարխիվ, գործ 3468, թերթ 17 և հետևյալը:
[2] Նույն տեղում, գործ 3468, թերթ 3-4:
[3] Մանրամասն տե՛ս ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 63, թերթ 107-108:
[4] Նույն տեղում, թերթ 108-109:
[5] ՌԱՔԱ, Քաղարխիվ, գործ 3468, թերթ 18-20:
[6] ՎԽՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 11, գործ 3683, փաստաթուղթ 54, թերթ 2-3:

ցությամբ գործում էին վարչական խորհուրդները: Խորհրդի անդամների կեսը ևս սանջակներից ընտրված քրիստոնյաներ էին: 1870 թ. օրենքը ընդլայնում էր այս խորհուրդների իրավունքները, իրավաբանական հարցերից բացի նրա ենթակայությանը հանձնում բազմաթիվ այլ կնճռոտ խնդիրներ, մասնավորապես գավառական հարստահարությունների հարցը:

Թուրքիայի պայմաններում այս հիմնարկությունները հազիվ թե կարողանային էական, խոշոր դեր խաղալ կամ քրիստոնյաների սոցիալ-քաղաքական դրությունը բարելավել: Համենայնդեպս, խանա-փաշայական նախկին հոռի վարչակարգերի համեմատությամբ սրանք նոր երևույթներ էին կայսրության կյանքում: Դարերով ստրկացված հայն այժմ այս կամ այն կերպ բողոքելու հնարավորություն էր ստանում, իր բողոքի ձայնը երեսփոխանների միջոցով հրապարակ հանում, կազմում «գավառական հարստահարությունների տեղեկագրեր» և առաքում սուլթանական կառավարությանը: Հայերի բողոքների, դիմումների, ցույցերի թիվը գնալով ավելանում էր:

1830-50-ական թվականներին լուրջ վերափոխումների էին ենթարկվում հողատիրության ձևերն ու հողատիրական հարաբերությունները Թուրքիայում: Սուլթանական զորաջոկատները, բռնությամբ և սիրաշահելով, 1826-1834 թվականներին ոչնչացրեցին ռազմաավատական հողատիրությունը Ռումելիայում, Արևմտյան Հայաստանի թուրքահպատակ մարզերում Էրզրումում, Սվազում, Կարսում, Տրապիզոնում: Սուլթանը գլխատեց, բանտարկեց կամ, թոշակ նշանակելով, պաշտոններից հանեց ու բռնագրավեց քուրդ էմիրների, թուրք-աղաների, նույնիսկ պալատում մեծ պաշտոններ զբաղեցնող զինվորականների հողային կալվածքները՝ թիմարները, զեամեթները, խասերը:

Արևմտյան Հայաստանի քրդահպատակ շրջանների հողատիրական քարտեզը փոխվեց 1840-ական թվականների վերջերին միայն, այսինքն՝ քրդական դերեբեյությունների վերանվաճումից, քուրդ խոշոր ֆեոդալների իրավազրկումից հետո: Կայսրության հողերի մեծ մասը դարձավ պետական սեփականություն և օգտագործման իրավունքով տրվեց նոր հողատերերին:

Փոփոխելով հողատիրության ձևերն ու հողատերերին, սուլթանները չէին լիկվիդացնում գյուղացիության շահագործման ֆեոդալական նախկին սիստեմը: Գյուղացիներն իրենց արտադրամիջոցներով շարունակում էին մշակել կալվածատիրական հողերն այնպես, ինչպես նախորդ շրջանում[1]: Հին բեկերին փոխարինելու եկան նորերը, սակայն՝ ոչ առաջվա անսահմանափակ իրավունքներով: Բավական է արձանագրել, որ հարավային Հայաստանի գյուղացիության մեծ մասը ազատվեց

[1] *А. Д. Новичев,* Очерки экономики Турции до Мировой войны, стр. 18-19.

դերեբեյներին «պարտական» ապօրինի հարկատվությունից, շատ տեղերում և իրավաբանորեն չձևակերպված, բայց իրապես գոյություն ունեցող արտատնտեսական հարկադրանքից:

Այսուհանդերձ, պետության ու կալվածատերերի եկամտի աղբյուրը մնաց ֆեոդալական ռենտան իր տարատեսակներով: Փոփոխվեցին հարկերի անունները, պարհակների ձևերը, իսկ շահագործումն ու ճնշումը շարունակեցին հարցականի նման կորացնել գյուղացու մեջքը: 1856 թ. հրապարակված «Թանզիմաթի» երկրորդ փաստաթուղթը ևս տնտեսական բնագավառում նոր հեղաբեկումներ առաջ չբերեց: Այն շոշափեց քաղաքական ու քաղաքացիական խնդիրները: Սուլթանի նոր հենարանը՝ հողատիրական դասը, պահանջում էր օրինականացնել իր արտոնությունները, վավերացնել ձեռք բերած իրավունքները հողի և գյուղացիության նկատմամբ:

Ընդառաջելով այս դասի պահանջներին, Աբդուլ Մեջիդը 1858 թ. ապրիլի 21-ին ձևակերպեց հողային օրենք *Դուստրը*, որի մասին նույնիսկ թուրք պատմաբանը հայտարարում է, թե այն սոսկ «... ձևական ագրարային ռեֆորմ էր, քանզի այդ օրենքը, չփոխելով գյուղական ազգաբնակչության դրությունը, պաշտպանեց ֆեոդալական հողատիրությունը: Նրա նշանակությունը կայանում էր այն բանում, որ օրինականացնում էր պատմական տարբեր պայմաններում առաջացած հողատիրության ձևերը»[1]: Դուստրն իրավաբանորեն սահմանում էր հողատիրության հինգ հիմնական ձևեր:

Այժմ Թուրքիայում կային. 1) պետական հողեր - միրիե, 2) մասնավոր - մյուլք, 3) հոգևոր - վակֆ, 4) մեթրուքե - համայնական, 5) մեվաթ - մեռյալ՝ անօգտագործելի հողատարածություններ: Արևմտյան Հայաստանում, սակայն, տիրապետող էին հողատիրության պետական և վակուֆային ձևերը: Կային նաև մյուլքեր, համայնական հողեր՝ արոտավայրեր, անօգտագործելի, հսկայական լեռնային, քարքարոտ մասեր[2]:

Կալվածագրերով, ագարակ առ ագարակ, Արևմտյան Հայաստանի պետական և վակուֆային կալվածքները ձևակերպվեցին թուրք, քուրդ և հայ հողատեր-կալվածատերերի վրա: Հողատերերի հիմնական դասը մնաց մահմեդական վերնախավը, որը գնման, բռնության, թե նախկին հողակտորների չհանձնման ճանապարհով պաշտպանեց իր հողատիրական իրավունքները: Դրան նպաստեց նաև այն, որ 1867 թ. սուլթանը նոր օրենք հրապարակեց, հողատերերին թույլատրելով հինգ տարվա ընթացքում պետությունից գնել օգտագործվող հողակտորները:

[1] *Ismail Husrev,* Türkiye röy irtisadiyati. Bir milli irtisat tetriri, Istanbul, 1934, s. 173.

[2] *П. П. Моисеев,* Аграрные отношения в современной Турции. 1960, Москва, стр. 19-21.

1867-1873 թթ. ընթացքում հողօգտագործողները վճարեցին պահանջվող գումարը, սակայն ոչ բոլորը կալվածագրեր (թափու) ստացան: 1873 թ. ստուգումների ժամանակ պարզվեց, որ գյուղացիության մեծ մասը կալվածագրեր չուներ: Բ. Դուռը սրանց ստիպեց կրկին վճարել պահանջվող գումարը: Նույնիսկ միջակ գյուղացիական տնտեսությունները քայքայվեցին ծանր հարկերի ու պարհակների բեռի տակ: Նրանց տերերը վերածվեցին մարաբաների: Թուրք աղաները և արդեն ողջ Հայաստանով մեկ տարածված քրդական աշիրեթապետերը զավթեցին քուրդ, թուրք և հատկապես հայ գյուղացիների հողակտորները, դարձրին իրենց սեփականությունը: Պետությունը արհեստականորեն ծնեց ագրարային կնճռոտ խնդիր և վեճեր առաջ բերեց հայերի, քրդերի, թուրքերի միջև: Մինչ այդ եղած կրոնական թշնամանքին գումարվեց տնտեսական հակադրությունը և, հուրախություն սուլթանների, սրանց տարավ ժողովուրդներին իրարից անջատելու, իրար նկատմամբ լարելու անդունդը:

Մահմեդական վերնախավին Արևմտյան Հայաստանի հողերի մեծ մասի պատկանելն են արձանագրում ժամանակակիցները, պարբերական մամուլում լույս տեսած հոդվածները, գյուղացիների բողոքները: Բայց ամենից վավերականը Բեռլինի վեհաժողովի նախօրյակին երկրում շրջող հանձնախմբի հաղորդագրություններն են: Ըստ 50-ից ավելի այդ վավերագրերի, Չմշկածագի առաջնորդության մեջ «Հողերը մեծաւ մասամբ թրքաց կը պատկանին, վեցէն մէկը հայոց թափու են»[1]: Բալուի և Չարսանջակի հողերը բռնագրավել էին 25 քուրդ ու թուրք աղաներ[2]: Միայն Մեծկերտի ու Աղջովայի հայ գյուղացիները թափուական իրավունքով հողեր ունեին: Խարբերդի «Հողերու 3/4 մասը թրքաց և 1/4 մասը հայոց ձեռքն է թափույով»[3]: Բաբերդի առաջնորդության հայ գյուղացիներն «ըստ չափու հող ունեին ընդհանրապէս և թափու են, իսկ բաղդատմամբ թուրք գիւղականաց, ոչինչ ունին գրեթէ»[4]:

Վասպուրականի գյուղացիությունը վերստացել էր նախկինում կորցրած հողերի մեծ մասը, սակայն ամբողջապես չէր ազատվել քրդական վերնախավի ճնշումներից: Սուլթանի ֆերմաններով Բեդերխանների տոհմը պահպանել էր իր կալվածքների գերակշռող մասը: Խոշոր կալվածատեր էր դարձել Եզդանշիրը: Ամենաողբերգականն այն էր, որ Մոսուլի շրջանի վրանաբնակ 24 աշիրեթները ամեն ամառ տակնուվրա էին անում Վասպուրականի հայ գյուղացու տնտեսությունը, գաղտնի թե հրապարակավ յուրացնում նրա ստացած արդյունքները[1]: Շատախում, Ջուլամերկում, Մոկսում քրդական աշիրեթները հողեր չունեին, սակայն արոտավայրերը, անտառներն անարգել օգտագործում էին, իսկ Գավան, Մարմեդ, Խնձորգեն, Օրմենաս, Պնդունի, Կսկինձ գյուղերը հիմնահատակ կործանել էին և հողատարածությունները, բարեբեր դաշտերը դարձրել արոտավայրեր: Ղրիմի պատերազմից հետո ընդհանրապես նորից գլուխ է բարձրացնում քրդական վերնախավը: Արևմտյան Հայաստան են գալիս, նոր հողեր ու իրավունքներ նվաճում աքսորավայրերից վերադարձած ցեղապետերը՝ գրեթե բոլոր նրանք, ովքեր կենդանի էին մնացել: Բ. Դուռը արձակում էր ձեռքեր, որոնց կապկպելու համար տասնամյակներ առաջ մեծաքանակ մարդկային զոհեր էր տվել:

Քրդական տարրը խարսխվել էր նաև Էրզրումի ու Սեբաստիայի նահանգներում, սակայն դեռևս մեծ հաջողության չէր հասել: Այս նահանգների, ինչպես նաև Կիլիկիայի որոշ գավառների հայ գյուղացիությունը տակավին հողասակավությունից չէր տառապում: Սուլթանները գիտեին այդ, դրա համար էլ Կիլիկիա էին գաղթեցնում ռազմատենչ չերքեզներին, Էրզրումի վիլայեթն ընդունում Պարսկաստանից չվող քրդերին և նեղում, խղճուկ վիճակի մեջ դնում հայ գյուղացիությանը:

Արևմտյան Հայաստանի խոշոր հողատերերից էին մահմեդական մզկիթները, քուրդ ու թուրք շեյխերը, ուլեմաները: Իսլամ հոգևորականությունը լիովին պաշտպանեց ոչ միայն իր վակուֆները, այլև՝ Մեքքայի և Մեդինայի ծախսերը հոգացող ***հարեմեյն*** կալվածքները: Միայն այն փոխվեց, որ թափուական իրավունքով ձևակերպվեցին այդ հողերը և Աբդուլ Ազիզի թագավորությունից ի վեր դրվեցին հարկի տակ:

Երկրի խոշոր կալվածատերերը հիմնականում պատկանում էին տիրապետող ազգին ու արտոնված կրոնին: «Թանզիմաթը» փոխում էր միայն կալվածատերերի անձնակազմը: Էլ չենք խոսում, որ հին կալվածատերերի գերակշռող մասը վերանայեց շահագործման ու հողատիրության ձևը, սակայն պահպանեց իր նախկին ագարակները, նրանց վրա աշխատող գյուղացիներին:

Արևմտյան Հայաստանում ստվարացավ հայ խոշոր հողատերերի թիվը: Նույնիսկ քրդաշատ Մշո դաշտում ընդարձակ կալվածքներ ձեռք բերեցին Հաճի Աղայանցը, Խարդոսը, Ըշքեֆթան Նորակն, Շեխպրիմը, Կոնճոյանների տունը[2]: Դրանցից մեկը, «Մշոյ աշխարհի թշուառութեան առաջին պատճառը»՝ Ամերիկյան Հովհաննես աղան, տիրեց հարյու-

---

[1] ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, 3-րդ բաժին, փաստաթուղթ 52, էջ 4:

[2] «Ատենագրութիւնք ազգային ժողովոյ», հ. Բ, էջ 21, տե՛ս նաև «Տեղեկագիր քաղաքական ժողովոյ կեդրոնական վարչութեան առ ազգային ընդհանուր ժողով», 1865, էջ 33-34:

[3] ***Նաթանեան Պօղոս,*** Արտոսր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղջուրի և Երզնկայու, Կ. Պոլիս, 1879, էջ 136:

[4] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, 3-րդ բաժին, փաստաթուղթ 38, թերթ 7:

[1] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, 3-րդ բաժին, փաստաթուղթ 57, էջ 54:

[2] ***Գեղամ Տ. Կարապետեան,*** Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, 1911, Կ. Պոլիս, էջ 6:

րավոր ագարակների և շարունակում էր նորերը գնել[1]: Մամիկոնյան Վարդան աղան իր գաղտնարաններում կուտակած դրամը բռերով էր հաշվում: Սղերդի վիճակի Խիզան գավառի կալվածատեր Վարդան քահանան 100 արտավար հող ուներ, ս. Խաչի ավերակ վանքի վանահայր Սահակ վարդապետը մյուլքատիրական իրավունքով պահպանում էր 40 ագարակ[2], խոշոր և մանր եղջերավոր անասունների նախիրներ: Հայ խոշոր հողատերեր կային Կարինի, Խարբերդի, Բաղեշի, Սեբաստիայի մարզերում: Սրանց մեծ մասը թուրքերի պես նստում էր կենտրոնական քաղաքներում, հողը մշակության հանձնում գյուղացիներին և բերքահավաքին միայն ներկայանում, գանձում իր բաժինը և շարունակում վայելքը: Շահագործման ասպարեզում սրանք քիչ բանով էին զիջում թուրք ու քուրդ ֆեոդալներին:

Այսպիսով, համեմատած նախաթանզիմաթյան պատմաշրջանին, այս տասնամյակներին ավելանում էր հայ աշխարհիկ հողատերերի թիվը: Սակայն կար ևս մի տարբերություն: Մինչև 1840-ական թվականները եղած հայ խոշոր հողատերերն ունեին մյուլքատիրական իրավունք, ապահարկ կացություն: Այժմյանները հողին տիրում էին թափուական իրավունքով և պարտավորվում հարկեր վճարել պետությանը: Այդուհանդերձ, երկրի տնտեսական ընդհանուր հաշվեկշռում հայ աշխարհիկ հողատերերը կաթիլ էին օվկիանոսի մեջ:

XIX դարի երկրորդ կեսին խոշոր կալվածատեր ու հողատերեր էին մնում արևմտահայ վանքերը, առանձին վանականները, եկեղեցիներից շատերը, այսինքն՝ հոգևոր վերնախավը: Մշո ս. Կարապետի վանքի տարեկան եկամուտը 400 հազար դահեկան էր[3]: Ժամեր էին հարկավոր «ձիով կտրելու անցնելու այն երկիրները և էն հատանելի անտառներ, վարելի հողեր և բուսաբեր մեծատարած լեռնադաշտերը»[4], որոնք վանքի սեփականությունն էին կամ նրա վրա թափու արած: Վանքն ուներ միայն 150 միաբան, ապա հարյուրավոր երկրագործ մշակներ, իրենց ընտանիքներով, որոնք իբրև մարաբաներ աշխատում էին վանքապատկան հողերի վրա:

Մուշի առաջնորդական վիճակին ենթակա ս. Հովհաննու վանքը տարին 200 հազար ղուրուշի եկամուտ էր ստանում[5]: Նրա ագարակների թիվն անցնում էր 400-ից, որոնք զատ-զատ 1858-72 թթ. թափու էին արված վանքի վանահայր Հակոբ Գրիգորյանի անունով[6]:

---

[1] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 219, վավ. 129-131, թերթ 7-9:

[2] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, 3-րդ բաժին, վավ. 55:

[3] Նույն տեղում, վավ. 49:

[4] Ուղևորութիւն ի Փոքր Ասիա, գրեցին Ալպէր Տըվըլէ և Գէորգ Փիսոն, Վիեննա, 1892, էջ 57:

[5] ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, բաժին 3, վավ. 49, թերթ 2:

[6] Հարյուրից ավելի կոչաները, նրանց հայերեն թարգմանությունները տե՛ս ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 2221, 2222, 2229 և այլն:

Վանքապատկան հողերը բոլորը մեկ թափուով չէին ձևակերպվում, այլ ագարակ առ ագարակ, որպեսզի պետությունն ամեն մի կոչանի համար առանձին հողագին ստանար: Եվ այս կալվածագրերն էլ պարզում են ս. Հովհաննու վանքի հողերի տեսակները: Նրանց մի մասը վակըֆ էին և գալիս էին նախորդ էտապից, իսկ մյուս մասն էլ միրի, պետական: Վանքը վերջին տեսակի հողերը ձեռք էր բերել 1858 թվականի ռեֆորմից հետո, գնման ճանապարհով:

Արևմտյան Հայաստանում և ողջ Թուրքիայում 1850-1870-ական թվականներին կանգուն վիճակում էին 200-ից ավելի հայկական վանքեր, որոնցից 9-ն իրենց հարստությամբ ու մեծությամբ համարվում էին առաջին, մնացածները՝ երկրորդ կարգի: Հազարների հասնող պորտաբույծ վանականներն ու միաբանները վայելում էին հայ գյուղացու տքնաջան աշխատանքի պտուղները: Մխրճվելով ապրանքադրամական հարաբերությունների մեջ, հոգևոր դասն արդեն ճեղքել էր բնափակ տնտեսության շրջանակները, իր ունեցածը շուկա էր հանում, վերածում ոսկու և ամբարում վանքի գաղտնարաններում: Վանքերի սուրբ հայրերը ձգտում էին ավելի շատ հավաքել, ավելի անխնա կողոպտել մահմեդականների սրից մազապուրծ հայ գյուղացուն, ավելի ծանրացնել նրա վճարելիք տուրքերի ու պարհակների բեռը:

Այնուամենայնիվ, չպիտի անգիտանալ, որ վանքերից շատերը կուլտուր-լուսավորական հսկայական գործունեություն էին ծավալում գավառում, հասունացնում երիտասարդ, կրթված նոր սերունդ, դիմակայում մահմեդական պետության վարած ուծացման քաղաքականությանը, ուղղակի, թե անուղղակիորեն ճանապարհ հարթում հայ ժողովրդի ազգային-քաղաքական զարթոնքի առջև: Վարագը դառնում էր մի օջախ, որը հասունացնելու էր 1870-80-ական թվականների հայ ազատագրական շարժման ջահակիրներ ու ղեկավարներ:

«Թանզիմաթի» ժամանակաշրջանի յուրահատուկ երևույթներից է և այն, որ քրիստոնեական վանքերն ու եկեղեցիները, նրանց կալվածքները դրվում են հարկի տակ: Վերանում է, թեկուզ անվանապես, կես հազարամյակ տևող վանական հողատիրության ապահարկ կացությունը:

Դեռևս սուլթան Մահմուդ II-ը հանձնաժողով է ստեղծում, որը պետք է ուսումնասիրեր իսլամ և քրիստոնյա հոգևորականության «վակըֆների» դրությունը և հսկողություն սահմաներ նրանց եկամուտների վրա, իսկ կալվածքների առք ու վաճառքը պետք է կատարվեր էվկաֆի վարչության միջոցով[1]: Մի քանի տարի գործադրությունից հետո, հայ ամիրաների ու պատրիարքի ջանքերով, սուլթանը վերանայում է իր հրամանագիրը:

1853 թ. մայիսի 25-ին տված հրովարտակով Աբդուլ Մեջիդը հրա-

---

[1] *Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց,* Պատմութիւն Երուսաղէմի, հ. 2, էջ 984-985:

հանգում էր, որ «... եկեղեցիներն ու վանքերը և անոնց սեպհական կալուածներ ու անշարժ ստացուածները զերծ մնան այսուհետև ամէն վնասներէ: Նմանապէս բոլոր կրօնական հաստատութեանց և եկեղեցականներու ապահարկութիւնը, և պատրիարքներուն և անոնց փոխանորդներուն արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները, որոնք հինէն ի վեր նշանակուած են *պէրաթներու* մէջ...»[1]: Ղրիմի պատերազմի նախօրյակն էր այս: Սուլթանը դրանով սիրաշահում էր այլահավատներին, ձգտում նրանց ետ պահել Ռուսաստանի ազդեցությունից: Աբդուլ Ազիզը արտագրավում էր (սեկուլյարիզացիայի էր ենթարկում) հայոց վանքերի ու եկեղեցիների կալվածքները, թողնում նրանց օգտագործման, սակայն դնում հարկի տակ:

Վանի Սալանապատ վանքը մեկ տարում վճարում էր 1179 ղուրուշ կալվածական հարկ և աղնամ[2], Վարագա վանքը 2811 ղուրուշ 10 փարա միայն տասանորդ էր տալիս, երկու տարվա կալվածահարկ՝ 1106 ղուրուշ 20 փարա, ոչխարի հարկ՝ աղնամ 1581,30 ղուրուշ[3]: Աղթամարի վանքը և ողջ միաբանությունը պարտավոր էր նվիրատվության միջոցով գանձած դրամից հարկ տալ, իսկ ոչխարների դիմաց, չնայած թալանվել էին քրդերի կողմից, երկու տարի շարունակ վճարում էր նախկին աղնամը[4]:

Հարստություն դիզած վանքերը միշտ չէ, որ անտրտունջ վայելում էին իրենց ունեցվածքը: Թուրք ու քուրդ ավազակախմբերը կարող էին ամեն րոպե ներկայանալ վանահայրերին, թալանել նրանց ունեցվածքը և հետին խեղճության դատապարտել վանականներին: Այստեղ ևս միայն ունենալը չէր, որ կարևոր էր, այլ ունեցվածքի պահպանությունը: Դրա համար էլ փողը վերածվում էր ոսկիների, թաղվում գաղտնարաններում, դուրս հանվում տնտեսության զարգացման անհրաժեշտ շրջաառությունից:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում և հայաբնակ նահանգներում XIX դարի 30-70-ական թվականներին գոյացավ, համալրվեց, փոփոխվեց և վերափոխվեց խոշոր հողատեր կալվածատերերի դասը, որը բազմազան էր, բաղկացած տարբեր կրոնի ու դավանանքի, տարբեր ազգությունների պատկանող մարդկանցից: Այն համահավաքում էր բոլորին՝ սուլթանից սկսած, եզերված հայ չորբաջիով: Խոշոր հողատերեր մնացին սուլթանները, Բ. Դռան պաշտոնյաները, թուրք աղաները, մահմեդական հոգևորականները, քուրդ ցեղապետերը, հոգևոր առաջնորդները՝ շեյխերը, հայկական վանքերը, հայ սարաֆները, չորբաջիները, աղաները:

---

[1] *Տիգրան Հ. Թ. Սաալանեանց,* Պատմութիւն Երուսաղէմի, հ. 2, էջ 1218:

[2] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 56, ցուցակ 6, գործ 332, թերթ 6:

[3] Նույն տեղում, թերթ 79:

[4] Նույն տեղում, ֆոնդ 56, ցուցակ 2, գործ 2215, թերթ 1:

Վիճակագրության բացակայությունը, տնտեսական մարզի անբավարար ուսումնասիրությունը հնարավորությունից զրկում են ճշգրտորեն պարզելու սրանց տեսակարար կշիռը: Պարզ է, սակայն, որ հողատեր-կալվածատերերը ընդհանուր ազգաբնակչության փոքր տոկոսն էին կազմում, թեպետև տիրում էին երկրի հողային հարստության գերակշռող մասին, իսկ միլիոնավոր գյուղացիությանը մնում էր հողերի փոքր մասը, որից նա բաժին էր հանում և պետությանը, և տիրող վերնախավին: Ֆեոդալական սանդուղքի ստորին աստիճանին նստած այս դասը շարունակում էր իր տկար ուսերին կրել սոցիալ-քաղաքական ճնշումների աներևակայելի ծանրություն սեփական վաստակով կերակրելով մահմեդական և քրիստոնյա վերնախավին, ուղղակիորեն հագեցնելով վաշխառուի ախորժակը, անուղղակիորեն վճարելով հպատակների շլինքին ծանրացած պետական պարտքերը:

Արևմտահայ ազգաբնակչության թվաշատ դասը մնում էր հողագործությամբ պարապող, սոցիալական ու իրավական տեսակետից շերտավորված, աշխատավոր գյուղացիությունը, որը «Թանզիմաթից» ու ագրարային ռեֆորմներից հետո *համեմատաբար* թոթափեց իր ուսերին ծանրացած արտատնտեսական հարկադրանքի մի մասը, որոշ չափով ազատվեց թուրք աղաներին ու քուրդ բեկերին տրվող հարկերից, պարիակներից, պարտավորվեց վճարել պետությանը: Անվիճելիորեն ստվարացավ ազատ գյուղացիության դեռ նախկինից հարատևող դասը, ի հաշիվ իսլամ վերնախավից, հատկապես քուրդ դերեբեյներից կիսաճորտական կախման մեջ դրված հարկապարհակատու երկրագործների: Թափուական իրավունքը դարձավ տիրապետող ինստիտուտ:

«Թանզիմաթից» հետո թուրքահպատակ նահանգների այն գյուղացիների մեծ մասը, որոնք աշխատում էին թիմարատեր ու զեամեթատեր, առավել ևս, խասատեր կալվածատերերի հողերի վրա, հողագին վճարեցին թափույով, հողը դարձրին իրենց «սեփականությունը»: Ոչնչացված, տարագրված քուրդ ու թուրք բեկերի ու աղաների հողերը ևս տրվեցին գյուղացիներին, պարտավորեցնելով հարկը վճարել Բ. Դռանը: Բայց ամեն ինչ խաղաղ չվերջացավ և ոչ էլ կատարվեց այնպես, ինչպես օրենքներն էին նախատեսում:

Քրիստոնյա ու իսլամ գյուղաբնակչության մեջ առավել ևս լեռնացավ մի անլուծելի ու կնճռոտ խնդիր՝ հողային հարցը, որը գնալով անջրպետում էր տիրապետող ու հպատակ ազգերին, առիթ տալիս հանձնաժողովների կազմմանը, սուլթանական տիրապետության նկատմամբ ատելություն ունեցող ժողովուրդների միասնականության խաթարմանը, նրան, ինչին ջանում էին և աստիճանաբար պիտի հասնեին մահմեդական պետության տիրակալները, նրանց շուրջ խմբված թուրք վերնախավերը:

Այսուամենայնիվ, Կարինի թուրքահպատակ գյուղերը լցված էին

ազատ գյուղացիներով, որոնց մեծ մասը, թափուագին վճարելով, ազարակներ ուներ: Արաբկիրում հողերը գյուղացիների սեփականությունն էին, «իսկ աւատականութիւնն իսպառ անհետ եղած է»[1]: Դերջանի գավառի Ալթուն Հյուսեյինի քահանան, դատ բացելով Խուզիջանի քուրդ բեկերի դեմ, բանտարկել է տալիս Շահ-Հյուսեյին բեկին, հայերի կալվածքները վերադարձնում նախկին տերերին[2]: Չարսանջակի և Խարբերդի հայ գյուղացիների մի մասը հողեր ստացան 1837 թ.[3], մյուս մասն էլ 1865 թվականին: Տարոնի աշխարհից 670 բողոքագիր ստացվեց, որոնց մեծ մասը Խրիմյանի պատրիարքության շրջանում լուծվեց: Հողը քրդական ցեղապետերից խլվեց և տրվեց Մշո դաշտի գյուղացիությանը: 1848-49 թթ. Էրզրումի կուսակալության Օվաջըկ գյուղաքաղաքի բնակիչները դիմեցին սուլթան Աբդուլ Մեջիդին, խնդրեցին իրենց նախկին հողերը ետ վերցնել թուրք աղաներից: Բավարարվեց սրանց խնդրանքը, գյուղացիները ազարակներ ստացան, պարտավորվելով դրա դիմաց 9600 ղուրուշի հարկագումար տալ[4]: Քրդերից խլված հողակտորների մի մասը տրվեց Բայազետի գավառի գյուղացիներին[5]:

Ակնհայտ է, որ «Թանզիմաթից» հետո Արևմտյան Հայաստանի գյուղացիության հիմնական ու գերակշռող մասը իրավականորեն ազատ էր, ամրացված չէր հողին և ցանկացած պարագայում կարող էր լքել հայրենիքն ու տունը, վերցնել աստանդականի ցուպն օտար երկնակամարների տակ հաց, աշխատանք, երբեմն էլ բախտ որոնելու: *Իրավականորեն գյուղացիության ազատ լինելու մասին է խոսում այդ տարիներին պանդխտության ուժեղացումը, տարեկան հիսուն հազարից ավելի հայ պանդուխտների մուտքը մայրաքաղաք, Զմյուռնիա, Տրապիզոն, Ռուսաստան, ԱՄՆ և այլուր ու ամենուր: Եթե այս գյուղացիները ճորտացված լինեին կամ հողին ամրացված, ապա չէին կարող ազատորեն երթևեկել, հոսել տեղից տեղ:*

Այսուհանդերձ, սուլթանի մահասփյուռ թաթի տակ հաշմվող, թեկուզ ազատ գյուղացիությունը տնտեսական բարվոք պայմաններում չէր ապրում: Նա տառապում էր սակավահողությունից, տալիս էր բազմատեսակ հարկեր, կատարում ծանր պարհակներ, ազգային անլուր ճնշումների ենթարկվում: Ավելի ողբերգական էր գյուղացիության մյուս դասերի, առավել ևս, հողազրկված ու կախյալ իրավիճակում դրված հայ, քուրդ ու թուրք աշխատավորության կացությունը:

Արևմտյան Հայաստանի նախկինում հողազուրկ բոլոր գյուղացիները չէ, որ հող ստացան կամ, դիմանալով տնտեսական տագնապների պատճառով առաջացած պետության նոր ու ծանր հարկային քաղաքականությանը, պաշտպանեցին իրենց հողատարածությունները: Դրամատեր, իշխանավոր ու զորավոր հարուստները հետևողականորեն շարունակեցին ունեզրկել, վաշխառության, բռնության ու կողոպուտի միջոցով սնանկացնել գյուղացուն, կախման մեջ գցել իրենցից ու աշխատեցնել կալվածատիրական հողերի վրա: 1860-ական թվականների վերջերին Արևմտյան Հայաստանի կալվածատիրական հողերի վրա աշխատող գյուղացիներն արդեն շոշափելի թիվ էին կազմում, որոնք բաժանվում էին մի քանի խմբերի: Նրանց մեծ մասը հողը վերցնում էր քաղաքներում նստած մահմեդական ու հայ հողատերերից վարձակալության սկզբունքով և պարտավորվում վճարել վարձագինը[1]: Գյուղացիների մի այլ խումբն էլ աստիճանաբար ունեզրկվում էր հարկային ծանր բեռի տակ, կորցնում վարձակալելու կարողությունը և համաձայնում հողօգտագործմանը կիսարարության սկզբունքով: Կիսարարների վիճակն ավելի վատթար էր, քան վարձակալողներինը: Սակայն կիսարարությունն աստիճանաբար ընդարձակվում է և վերածվում մի ընդարձակ դասի, որը կոչվում էր *մարաբայություն:* 1858 թ., հատկապես 1867-72 թթ. ռեֆորմներից հետո, բազմանդամանում էր մարաբայությունը, որը թվաշատ էր դառնում քրդախառն հայկական գավառներում:

Մարաբաներն երբեմնի ազատ գյուղացիներն էին: Սրանք աստիճանաբար կախման մեջ էին ընկնում քուրդ ու թուրք ֆեոդալներից, հայ հողատերերից, կալվածատեր վանքերից: Մարաբաները ևս բաժանվում էին մի քանի տեսակների: Կային մարաբաներ, որոնք ունեին հողակտորներ, սակայն զրկված էին գյուղատնտեսական գործիքներից, բանող անասուններից: Մարաբաների մյուս խումբն էլ ուներ հող, անասուններ, սերմացու, սակայն, բռնության ուժով կամ վաշխառության ճանապարհով, ֆեոդալ-կալվածատերերը նրանց հողերը թափու էին արել իրենց վրա և պարտադրում էին աշխատել իրենց համար: Մարաբաների մի այլ մասն էլ ուներ հող, արտադրամիջոցներ[2]: Հողը թափու էր արված նրա վրա, մինչդեռ իրավականորեն ազատ գյուղացիներն աշխատում էին կալվածատեր, ռազմատենչ, զորավոր ցեղապետերի համար, փոխարենը վայելում «բարերարի հովանավորությունը»: *Սիա սա չձևակերպված կախվածություն էր,* որն ավելի քան տարածված էր և գնալով նոր երանգներ էր ստանում հարավային Հայաստանի շերտընդմեջ քրդերով բնակեցված հայկական շրջաններում՝ Տարոնում, Վասպուրականում, դաշտային Սասունի մի շարք գյուղերում:

---

[1] «Մասիս», 1885, փետրվար, էջ 656:
[2] *Անդրանիկ,* Տրսիմ, էջ 7:
[3] Նույն տեղում, էջ 54-55:
[4] ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 2223, թերթ 1-2:
[5] Նույն տեղում, թերթ 20-22:

[1] Տե՛ս *А. Д. Новичев,* Очерки экономики Турции, стр. 57-62.
[2] *Ս. Համբարյան,* Ագրարային հարաբերությունները... էջ 71:

Խաֆիրության աղետաբեր ինստիտուտի մասին առաջինը խոսեց Գր. Վ. Աղվանյանցը, որը Կ. Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ 1870-72 թթ. շրջում էր Տարոնի ու Վասպուրականի գյուղերում, հրապարակում հայ գյուղացու ողբերգական կացության սրտաճմլիկ տեսարաններ, Խրիմյանի, Սրվանձտյանցի օգնությամբ փորձում «բուժել» հայրենակիցներին հասցրած քրդական սրի հին և նոր վերքերը: Նրա բազմաթիվ գրություններից պարզվում է՝, որ Մշո, Շատախի, Խույթի, Բռնաշենի, Սասունի դաշտային շրջանների քուրդ բեկերը՝ *խաֆիրները*, հայ ու քուրդ գյուղացիներին կիսաճորտական կացության մեջ էին դրել: Քուրդ խաֆիրախմբերից երկուսի զայրույթը շիջանելու միջոցն էլ դառնում էր հայ անպաշտպան ռայան, որի քրտնաթոր աշխատանքն ապահովում էր «հովանավորողի» վայելքները, իսկ գեղանի կանայք ու աղջիկներ ծառայում էին նրա տներում:

Խույթում և Բռնաշենում խաֆիրները ամբողջական համայնքներով հայ գյուղերը վաճառում էին իրար, իսկ գնողները գանձում էին քառապատիկ ավելի հարկեր, քան թուրքահպատակ շրջաններում[2]: Գրեթե ամբողջ Բռնաշենը պատկանում էր երեք քուրդ խաֆիրների: Սասունի Մահպապանք գյուղի խաֆիրներն էին Հայդար Մահմուդը, Իսկանան Քահվարը, Շավեշը և Մեհմեդը: Սրանք փոխադարձաբար թալանում էին «իրար գյուղերը», իսկ երբ Մ. Խրիմյանը դիմեց Բ. Դռանը, պահանջեց զսպել վերջիններիս, ոչ մի պատասխան չստացավ: Հայոց պատրիարքը հասկացավ, որ լեռնային արծիվների վրա դարեր շարունակ ատամներ կրճտացնող, բայց հպատակեցնելու անկարող իսլամ կառավարողները ոչ միայն համաձայն էին եղերական նման դեպքերի գոյության, այլև իրենք էին հրահրում քրդական վերնախավին, որպեսզի այս մեթոդով դատարկել տային Սասունը, Շատախը, Մոկսը, վերանար որևէ ապստամբության կրկնության վտանգն այս երկրահատվածում: «Մշոյ շրջակայ գաւառներուն մէջ, ինչպէս Սասուն, Բռնաշէն, Մոտկան՝ Խույթ և Շատախ անտանելի գերութիւն մը կայ որ խաֆիրութիւն կըսուի, քիւրտ խաֆիրներ տէրութեան հարկէն քառապատիկն կառնեն. *կառավարութիւն տեղեակ է անոր՝ բայց ով գիտէ ինչ խորամանկ մտածութեամբ թոյլտուութիւն կընէ, որով այս լեռնական հայեր գաղթականութեամբ ցիրուցան կը լինեն* (ընդգծումները մերն են -Հ.Ղ.)»[3]: Ուրեմն քուրդ խաֆիրների գործունեությունը հրահրվում էր և հովանավորվում կառավարության կողմից:

Իրավաբանորեն չձևակերպված, սակայն իրականորեն հարատևող կիսաճորտական այս վիճակն հետագայում ուժեղացավ և կառավարության թողտվության պայմաններում տարածվեց հայկական մյուս նահանգներում, այնտեղ, ուր քուրդ բեկեր, ցեղապետեր կային, այնտեղ, ուր վրաններից իջնող վայրենաբարո քոչվոր ֆեոդալները նստակյաց կյանքի էին անցնում, դրամի համտեսից հետո տենչում հարստության կուտակման, փարթամորեն վայելում, միշտ էլ ոչ սեփական վաստակով, այլ աշխատավորության, առավել ևս, խաֆիրապատկան հայ ռայայի հաշվին:

Այսպիսով, խաֆիրապատկան գյուղացիները միայն իրավականորեն էին ազատ, այսինքն՝ ցանկացած ժամանակ կարող էին հեռանալ բնակավայրերից, իսկ գործնականապես կիսաճորտեր էին: Նրանք վճարում էին բազմաթիվ հարկեր, կատարում պարհակներ, նույնիսկ առանց վճարի ու թույլտվության ոչ կարող էին ամուսնանալ և ոչ էլ թաղել իրենց հանգուցյալներին: Խաֆիրները շատ տեղերում սահմանել էին առաջին գիշերվա իրավունք՝: Մարաբայության և խաֆիրապատկան գյուղացիների կատեգորիային էին պատկանում ոչ միայն հայերը, այլև քուրդ ու թուրք գյուղացիները:

Գյուղացիության հիմնական մեծամասնությունը դեռևս հողակտորներ ուներ, մշակում էր դրանք և հարկեր վճարում պետությանը, քուրդ ու հայ վերնախավին: Հայկական Կիլիկիայի լեռնային մասերում գրեթե բացակայում էր ճորտությունն ու մարաբայությունը: Ուլնիան ամբողջովին լցված էր ազատ գյուղացիներով: Մի ձեռքին՝ բահն ու արորը, մյուս ձեռքին՝ հրացանը, նրանք շարունակում էին դիմագրավել բոլոր տեսակի հողազրկման փորձերին: Ազատ էր Կարինի գյուղերի, Սեբաստիայի, Ակնի ու Եվդոկիայի շրջակայքի գյուղացիների գերակշիռ մասը: Մի խոսքով, մինչև Բեռլինի կոնգրեսը, արևմտահայ գյուղացիության փոքր հատվածն էր մարաբա, աննշան տոկոսը՝ կախյալ, իսկ հիմնական մեծամասնությունը ազատներ էին, սակայն վճարում էին բազմաթիվ ու բազմապիսի հարկեր, կատարում պարհակներ:

---

[1] Տես Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 219, վավ. 121-325 (մի գործի մեջ):

[2] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 219, վավ. 136:

[3] Նույն տեղում:

---

[1] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 219, վավ. 136, 152, 157 և հետևյալը:

3. Գյուղատնտեսությունը, հարկերն ու տուրքերը

Թուրքիայում, նրա կազմում գտնվող Արևմտյան Հայաստանում գյուղատնտեսությունը գտնվում էր ֆեոդալական մակարդակի վրա: «Երկրագործութիւնը դեռ օրօրոցին մէջ է և երեք հազար տարի առաջուան դրութեամբ կը շարունակուի՝ առանց ամենափոքր յառաջադիմութեան»[1]: Եվրոպացիների վկայությամբ «Գյուղատնտեսությունը Թուրքիայում տակավին գտնվում է այն աստիճանի վրա, ինչ եղել է ավելի քան երկու հազար տարի սրանից առաջ...»[2]: Պարզունակ ու նախնադարյան մակարդակի վրա էին արտադրության գործիքները, հողամշակման եղանակները: Զավեշտական է, բայց փաստ, որ Արևմտյան Հայաստանի գյուղացիները առաջին անգամ եվրոպական գութան տեսան դարի երկրորդ կեսին, այն էլ՝ իբրև նմուշ բերված էր Խրիմյանի բացած «Ժառանգավորաց» դպրոցի սաներին ցուցադրելու նպատակով:

Բայց ողջ կայսրությունում այդպես չէր: Թուրքիայի մի շարք մարզերում գյուղատնտեսությունն առաջընթաց էր կատարել, նույնիսկ որոշ ճյուղեր ապրանքայինի էին վերածվել: Կիլիկիան մասնագիտացել էր բամբակամշակության ասպարեզում: Ադանայի բամբակը սնում էր ֆրանսիական տեքստիլ արդյունաբերությունը: Տրապիզոնը ցանում, արտահանում էր ծխախոտ, սեփական հումքով ողողում ասիական շուկաները[3]: Եվրոպական Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի մի քանի շրջանների տնտեսության մեջ դարակեսին աշխուժացում էր նկատվում: Այնտեղ թափանցել էին բուրժուական հարաբերություններ: Բայց դրանք «լույսի թույլ շողեր էին» խավարի համատարած թագավորության մեջ: Գյուղատնտեսությունը ընդհանուր առմամբ մնում էր հետամնաց՝ հետևյալ պատճառներով:

Գործիքների պրիմիտիվության պատճառով դժվար էր հողից այնքան արդյունք ստանալ, որ գյուղացին կարողանար մրցել դրսից թափանցող գյուղատնտեսական մշակված ապրանքների հետ: Ստացված եկամուտն էլ անհատներին հնարավորություն չէր ընձեռում կատարելագործելու արտադրամիջոցները, իսկ կառավարությունը բնավ չէր էլ մտահոգվում դրանով: Ուրեմն, առաջին ու հիմնական պատճառը տիրապետող տնտեսակարգն էր՝ թուրքական բռնապետությունը: Կ. Մարքսը ժամանակին նկատում էր, թե Ասիայում *«բերքը այնպես էր կախված լավ կամ հիմար կառավարությունից, ինչպես Եվրոպայում՝ լավ կամ հիմար եղանակից* (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[1]:

Արևմտյան Հայաստանի տնտեսության հետամնացության հիմնական պատճառներից էր օտար կապիտալի զորեղ ու քայքայիչ ազդեցությունը: XIX դարի 40-ական թվականներից արտասահմանյան կապիտալը ծանր բեռի նման կքում էր հողագործին, քայքայում նրա տնտեսությունը, շուկայական մրցության ասպարեզում պարտության դատապարտում տեղական հումքով սնվող ազգային փոքրաթիվ ձեռնարկությունները: Եվրոպացիները էժան գներով հացահատիկ էին գնում Թուրքիայից, վերածում ալյուրի, թանկ գներով վաճառում թուրքերին: Նույնիսկ դադարում էին գործել թուրքական ալրաղացները:

Ղրիմի պատերազմը ճակատագրական նշանակություն ունեցավ զառամյալ կայսրության տնտեսության համար: Եվրոպացիները մի ձեռքով առատ փոխառություններ էին տալիս սուլթանին, մյուս ձեռքով ազդեցության շրջանների բաժանում նրա կայսրությունը: Ֆրանսիան հաստատվեց Սիրիայում, փորձեց տնտեսապես նվաճել Կիլիկիան: Անգլիան «տիրացավ» Միջագետքին, իր շոշափուկները տարածեց Անատոլիայում և միջերկրածովյան կղզիներում: Անգլիան ու Ռուսաստանը մրցում էին Արևմտյան Հայաստանը ազդեցության գոտիների բաժանելու համար: 1860-ական թվականների վերջերից Թուրքիան արդեն վերածվել էր եվրոպական տերություններին սպասարկող կիսագաղութի, տնտեսության գլխավոր զարկերակները կենտրոնացել էին օտարների ձեռքում:

Այսպիսով, 1850-60-ական թվականներին Թուրքիան մխրճվել էր տնտեսական, ավելի ճիշտ՝ ֆինանսական փակուղու մեջ: Դրամի խիստ կարիք էր զգում կայսրությունը, իսկ դրա ստացման գլխավոր ու «եկամտաբեր» աղբյուրը մնում էին մահմեդական, առավել ևս, քրիստոնյա հպատակ ազգերից գանձվող բազմաթիվ ու բազմապիսի հարկերը: Որքան ավելի էր պետությունն ստրկանում Եվրոպային, նույնքան ավելի էր նա ստրկացնում, թալանում թե՝ ցեղակիցներին և թե՝, առավել ևս, այլազգիներին:

Թուրքիան հիվանդագին հարկերի դասական երկիր էր: Բավական է, որ նահանգից նահանգ, գավառից գավառ անցներ մեկը, իսկույն կհանդիպեր քուրդ բեկերի, թուրք աղաների, կառավարող վալիների հաստատած բազմանուն և բազմապիսի հարկերի՝ մեկը մյուսից ստրկացուցիչ, մեկը մյուսից ավերիչ: Արևմտյան Հայաստանի գավառները դարձել էին հարկային շահատակության մշտական կրկեսներ: «Թանզիմաթը» քիչ բանով էր փոխում իրավիճակը: Ըստ էության, շարունակվում էր գյուղացիության հարկային կողոպտման նախկին եղանակը:

Արևմտյան Հայաստանի հարկերը կարելի է բաժանել չորս հիմնա-

---

[1] «Մասիս», 1865, հունվարի 23, N 676:

[2] *Ю. А. Петросян,* "Новые османы" и борьба за конституцию 1876 г. в Турции, стр. 11.

[3] ՍՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 63, թերթ 107-108:

[1] *К. Маркс* и *Ф. Энгельс,* Сочинения, том IX, стр. 133.

կան խմբերի. ա) հայերը մահմեդականներին հավասար, հաճախ և ավելի հարկեր էին տալիս հողի, ունեցվածքի և ստացած եկամտի համար, բ) միայն քրիստոնյաները հարկեր էին վճարում զինվորական ծառայությունից «ազատվելու», քաղաքացիական իրավունքներ «ստանալու» դիմաց, գ) գավառահայության մի ստվար մասը տուրքեր էր տալիս տեղական իշխանավորներին, թուրք աղաներին ու քուրդ բեկերին, դ) հայ ժողովուրդը պարհակներ էր կատարում, տուրքեր տալիս հոգևոր դասին:

Ի տարբերություն նախաթանզիմաթյան շրջանի, *աշար-տասանորդը* գանձում էին հողից ստացված եկամտի համար, սակայն ոչ թե աղաներն ու բեյերը, այլ պետական հարկահավաքները մյուլթեզիմներն ու շահնաները, հարկերը կապալով վերցնող պաշտոնյաներն ու սարաֆի նշանակած մարդիկ: Հարկը ծանրանում էր, քանի որ մեծ վաշխառուն կամ սարաֆը նահանգի աշարը գնում էր պետությունից, իր հերթին վաճառում փոքրերին, սրանք էլ իրենց ստորադրյալներին էին հանձնարարում կատարել հարկահավաքումը: Որքան ավելանում էր վաշխառուների թիվը, այնքան շատանում էր հարկաչափը, քանի որ պետության սահմանած գումարը անխախտորեն պիտի մուծվեր գանձարկղ: Ուրեմն, գյուղացու գրպանից պիտի դուրս քաշվեին թե պետության հասանելիքը և թե դրա գանձման համար պահանջված բոլոր «ծախսերը»:

Էմլաքը՝ կալվածահարկը, գանձվում էր տների, կալվածքների, մարգագետինների համար: Այն բաժանվում էր երկու մասի՝ հողային հարկ կամ արազի և շինությունների հարկ կամ էմլաք: Իբրև կալվածահարկ գանձվում էր կալվածքի գնահատման 4 տոկոսը և ստացված եկամտի 4 տոկոսը:

Աղնամը կամ *ղամճուռը* գանձում էին ամեն մի ոչխարի կամ այծի համար երեք դահեկան: 1850-ական թվականներին աղնամ էին գանձում մանր եղջերավոր անասունների տերերից, ամեն մի ոչխարի համար՝ 1,5 դահեկան: 1868 թվին հարկը դարձավ 2 դահեկան, իսկ 1870-71 թվերին՝ 3 դահեկան: «Հայերն ու քրդերը վճարում են շատ ավելին, քան թուրքերը»[1]:

Սակայն աղնամի ծանրությունը գանձման ձևերի, հարկահավաքների անխղճության մեջ էր նաև: Եթե գարնանը անասունները հաշվառված էին և մի քանի օր հետո՝ թալանված քուրդ ավազակապետերի կողմից, միևնույն է, անասնատերը պարտավոր էր հարկերը վճարել ամբողջությամբ[2]: Չվճարելու դեպքում բռնագրավվում էր նրա շարժական ու անշարժ գույքը: Աղնամը ևս կապալավարձով էր տրվում: Միայն

[1] ՌԱՔԱ, ֆ. ՍՊԲ, Գլխավոր արխիվ, V-Ա2, գործ 1083, թերթ 20:
[2] ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 2225, թերթ 70, 72:

1872 թ. պետությունն ինքը կազմակերպելով աղնամի գանձումը, հավաքեց 2.010.000 դահեկան ավելի, քան նախորդ տարին, իսկ Էրզրումի վիլայեթի նույն տարվա աղնամը կազմեց 9.404.286 դահեկանի գումար[1]:

Մաարիֆ հրսասին կրթական հարկն էր և կազմում էր էմլաքի 5 տոկոսը[2]: Հարկը վերցվում էր մահմեդականից ու քրիստոնյայից խավար վայրերում դպրոցներ բացելու նպատակով, սակայն դրամը ծախսվում էր միայն իսլամական մեքթեբների վրա: Իհարկե, մոլլաները դեմ չէին լինի, եթե հայ երեխաները, իսլամն ընդունելով, սովորեին այնտեղ:

Բեյրեն հավաքվում էր զույգ եզների դիմաց մեկ բեռ ցորեն, մեկ բեռ գարի, իսկ *Շահնալըխը* կամ *Էոլչեկ Հակկը* վճարվում էր հարկահաններին աշարի 1/16 մասի չափով: *Ճանապարհների հարկը* պարտադիր էր 20-60 տարեկան տղամարդկանց համար, ամեն մեկից 20 ղուրուշ գումար կամ ֆիզիկական աշխատանք: Էրզրում-Դիարբեքիր ճանապարհաշինության վրա գյուղացիներին տարվա մեջ չորս օր աշխատեցնում էին առանց վճարի, ծանր պայմաններում: Աշխատանքի էին տանում բոլոր տարիքի, աշխատունակ արու ազգաբնակչությանը[3]:

«Օրենքով» մահմեդականներին հավասար հարկեր վճարելուց զատ, թուրքահպատակ այլազգիները տալիս էին մի շարք այլ հարկեր, որոնք իրենց ծանրությամբ պակաս չէին վերոհիշյալից, իսկ իրավական տեսակետից ցուցադրում էին հայերի «ռայա» լինելու հանգամանքը: Դրանցից առաջինը ամենածանր խարաջն էր, որը արդեն կոչվում էր *բեդելիե ասքերիե* (զինվորական հարկ):

1840 թ. մարտի 1-ին տրված հրամանագրով[4] գլխահարկի գանձումը կատարվում էր ոչ թե զատ-զատ անհատներից, այլ ընդհանուր գումարը դրվում էր ընդհանուր համայնքների վրա և պահանջվում համայնապետերից: Գլխահարկ անունը, սակայն, հարատևեց մինչև 1855 թ., այնուհետև փոխարինվեց զինվորական հարկի *բեդելիե ասքերիե*[5], ըստ էության, մնալով նույնը, սակայն ստանալով նոր հիմնավորում, այլազգի ժողովուրդներին կեղեքելու նոր երանգներ: Պատճառաբանությունը հետևյալն էր. «Զինվորական օրենքով օսմանյան կայսրության մեջ բնակվող ամեն մի համայնքի համար նախատեսվում էր արական սեռին պատկանող յուրաքանչյուր 180 մարդուց մեկ զինվոր: Քանի որ ոչ մուսուլման հպատակները զրկված էին բանակում ծառայելու իրավունքից, ապա նրանք պետք է վճարեին 5000 ղուրուշի

[1] ՌԱՔԱ, ֆ. ՍՊԲ, Գլխավոր արխիվ, V-Ա2, գործ 1083, թերթ 22:
[2] *Ա. Կրիմսկի,* Մահմեդական աշխարհն ու նրա ապագան, էջ 116-117:
[3] ԽՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 2, թերթ 87:
[4] *Աւետիս Պէրպէրեան,* Պատմութիւն հայոց, էջ 500:
[5] «Թուրքական աղբյուրները Հայաստանի... մասին», հ. Բ, էջ 294:

հասնող մի գումար: Ակնհայտ է, որ ասքերիեն նախատեսվում է ոչ մուսուլման բնակչության համար»[1]:

Թուրքիայի օրենսգրքերից մեկի 50-րդ հոդվածը նախատեսում էր, թե. «...ոչ մահմեդական իւրաքանչիւր արու պարտաւոր է վճարել 37 դրշ. 1 1/2 փարա զինուորական տուրք (պէտէլի ասքէրի). այս տուրքէն զերծ կացուցած են՝ 1. Կ. Պոլսոյ և արուարձաններուն բնակչութիւնը, 2. Հոգևորական պաշտօնեայք, 3. Աղքատներն ու գործելու անկարողները (ամէլմանտա), 4-15-էն վար և 75-էն վեր տարիք ունեցողները: Գաւառներէն իրենց բնակութիւնը Պոլիս հաստատող անձինք զերծ չեն, սակայն, այս տուրքէն, այլ պարտաւոր են ըստ առաջնոյն վճարել իրենց ծննդավայրերի մէջ. միայն Պոլիս ծնած զաւակնին զերծ կը նկատուի»[2]:

Աբդուլ Ազիզը հարկատու համայնքի անդամների թիվը իջեցրեց 135-ի, իսկ հարկը բարձրացրեց 6000 ղուրուշի: Ըստ որում, այժմ հարկը գանձում էին արական սեռի բոլոր քրիստոնյաներից, ներառյալ կույրերը, կաղերը, անաշխատունակները: Հարկի բաշխման ժամանակ խտրություն էր դրվում գավառների միջև: Ընդհանուր, անբարեհույս ճանաչված գավառներից, մասնավորապես Զեյթունից, ավելի էր պահանջվում: Մինչև 1862 թ. հերոսական ապստամբությունը, գավառը տալիս էր փոքրաքանակ բեդելիե, 1865 թվին այն կրկնապատկվեց[3], իսկ Բեռլինի կոնգրեսի նախօրյակին հասավ 500 հազար դահեկանի[4], պատճառ դառնալով լեռնականների նոր ընդհանրացման:

4. Քաղաքները, արհեստագործությունը

Չնայած բազմաթիվ տվյալներ են հրապարակվել XIX դարի երկրորդ կեսի արևմտահայերի քանակի մասին, սակայն դրանք չափազանց հակասական են, երբեմն իրարամերժ: Այդ իրարամերժության պատճառը սուլթանական Թուրքիան էր, մի երկիր, որն իր անտանելի ու ավերիչ վարչակարգերով, հպատակների կյանքի ու գույքի ապահովության բացակայությամբ, կայսրության մեջ վաղուց ի վեր ծայր առած ազգային-ազատագրական շարժումներով, գորդյան հանգույց էր դարձել ժամանակի դիվանագիտության համար: Այստեղ ամեն ինչ հիմնված էր իշխանավորների, առավել ևս, սուլթանի քմահաճույքի վրա: Չկար անկեղծություն, ճշմարտություն ու արդարություն: «Երկիրը, կասկածամտությունը սպառնալի ուրվականների նման կարծես միշտ կանգնած են Եելտրզի գլխին և շարունակ ստիպում են ամենապարզ, ամենահասարակ փաստերն աղաւաղել: Եւ հենց դրանից էլ առաջ են եկել այն հակասական թուերն ու տեղեկությունները, որ գոյություն ունեն թուրքահպատակ հայերի քանակի մասին»[1]:

Քիչ դեր չէր կատարում այլադավան հպատակների նկատմամբ կիրառվող ծանր հարկային քաղաքականությունը, մասնավորապես քրիստոնյաներից վերցվող զինվորական հարկը, մի հարկ, որը պայմանավորված էր արական սեռի ազգաբնակչության քանակով: Ահա թե ինչու այս էտապում քրիստոնյաներն իրենք էին փոքրացնում իրենց քանակը, որպեսզի կարողանային համեմատաբար թեթևանալ հարկային ծանր բեռից:

1878-1880 թթ. կատարվում է հակառակը: Փոխվում են դերերը: Եվրոպական վեհապետերից փրկության սպեղանի ստանալու պատրանքը արևմտահայերին ստիպում է, դրամական հսկայական միջոցների կորստի գնով, իրենց համեմատաբար ճշգրիտ թիվը ներկայացնել մեծ պետություններին: Թուրքիան դիմագրավում է, համառությամբ կեղծում, փոքրացնում իր իսկ հրապարակած վիճակագրական նախկին տվյալները: Բայց դա մի պահ էր, մի քանի տարի միայն:

Անցնում են դիվանագիտական թեժ պայքարի տարիները, սթափվում է Յելդզը, վերանայում երեկվա վիճակագրությունը: Սուլթանն ամենից շատ փողն էր սիրում: Պակասեցնել հպատակների թիվը, նշանակում էր զրկվել զինվորական հարկի գանձումից: Եվ ահա մի քանի ամսում նորից «ընդարձակվում է» Արևմտյան Հայաստանը, «կրկնապատկվում է հայ ազգաբնակչությունը, մեռածները կենդանանում են, չծնվածները ծնվում»: «Բայց եթէ նոյն որպէին տիբլոմադիական մի հարց ծագի հայերի քանակի մասին, մի որևէ ակնարկ լինի բարենորոգումների մտցնելու առիթով, Եելտրզը իսկոյն սև քօղի տակ կը ծածկէ վերոյիշեալ փաստերը և նորից հրապարակ կը հանէ նախորդ փոքրիկ, ողորմելի թուերը: Եւ այդ կատակերգությունը տևում է, կրկնվում է տարիներ, տասնյակ տարիներ շարունակ»[2]:

Նոր ապացույցների հարկ չկա, որ հայերի քանակի մասին հրապարակված թուրքական տվյալները միշտ էլ հավաստի չեն եղել: Որոշ պակասավորությամբ են հրապարակվել նաև Կ. Պոլսի պատրիարքարանի կատարած մարդահամարները, քանի որ այն հնարավորություն չի ունեցել թափանցելու հայկական ու հայաբնակ բոլոր վայրերը, գրանցելու մեռածներն ու նորածինները, մանավանդ որ կառավարությունից մտավախ հայ ազգաբնակչությունն էլ, բոլոր պարագաներում,

---

[1] *M. A. Ubicini*, Etat présent de l'Empire Ottoman, Paris, 1876, p. 128.
[2] «Ծաղիկ», 1903, 3-ը մայիսի, N 14, էջ 160:
[3] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 203, վավ 777, 1868, հունվար:
[4] ԽՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, գործ 302, թերթ 21, տե՛ս նաև «Մշակ», 1879, N12, N21:

[1] «Լոյս պատկերազարդ օրացոյց 1905 թուականի», 1904, Թիֆլիս, էջ 190:
[2] «Լոյս», 1904, Թիֆլիս, էջ 199:

ջանացել է թաքցնել իր ճշգրիտ քանակը: Այստեղ օգնության են հասնում եվրոպական դիվանագետների հրապարակած թվերը, որոնց լրացնում են հայ պարբերական մամուլի հաղորդագրությունները և հիմք տալիս հաշվելու *արևմտահայերի մոտավոր քանակը* XIX դարի երկրորդ կեսին:

Դարի առաջին կեսի արևմտահայերի «կանոնավոր» վիճակագրությունն առաջին անգամ կատարեց Մ. Ա. Ուբիչինին: Հենվելով թուրքական վիճակագրական սենյակի տվյալներին, ֆրանսիացի քաղաքագետ-պատմաբանը հայերի թիվը Թուրքիայում հաշվեց 2,5 միլիոն[1]: Այս տվյալները Դ. Ուրքվարդի տպագիր աշխատությունների միջոցով հասնելով Կ. Մարքսին, խմբագրվեցին, ճշտվեցին և դարձան 2,4 միլիոն լուսավորչական հայեր, կես միլիոն կաթոլիկներ[2]: Ուրեմն, մինչև Ղրիմի պատերազմը արևմտահայերի թիվը 2,5 միլիոնից ձգվել է և նույնիսկ հասել *երեք միլիոնի:*

Դարի երկրորդ կեսին սկսվեց պայքարը: Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Աբդին փաշան 1880 թ. հուլիսի 5-ին եվրոպական տերությունների Կ. Պոլսի դեսպանների վերջնագրին տված պատասխանում, անտեսելով վերոհիշյալ թվերը, հավաստիացնում է, որ հայերի քանակը չի անցնում 700 հազարից[3]: Թուրք դիվանագետը հավատացնում էր նաև, որ Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության միայն *17 տոկոսն են հայեր*, 4 տոկոսը այլադավան քրիստոնյաներ, իսկ 79-ը տոկոսը մահմեդականներ[4]:

Նման կեղծարարությունը ստիպեց եվրոպացիներին ու, առավել ևս, հայ մտավորականությանն ավելի հիմնավորապես զբաղվել արևմտահայերի վիճակագրությամբ: Բուրսալի անունով մեկը օսմանյան կայսրության մեջ ապրող հայերին հաշվեց 3.800.000[5], ամերիկյան միսիոներ Ֆր. Դեվիս Գրինը 2,5 միլիոն[6], էլիզե Ռեկլյուն 2.520.000 մարդ[7]: Լ. Կոնդանսոնը, համադրելով նախորդների հրապարակած մի շարք տվյալները, ասիական Թուրքիայում հաշվեց 2.050.586 և եվրոպական Տաճկաստանում 280.000 հայեր[8], իսկ ռուս պատմաբան Ֆիլիպովը 2.500.000 արևմտահայեր[9]: Ուրեմն եվրոպացի հեղինակների տվյալներով, Բեռլինի կոնգրեսի նախօրեին ու նրանից հետո, արևմտահայ

---

[1] *M. Ubicini,* Lettres sur la Turquie, p. 22-23, տե՛ս նաև «Եվրոպա», 1850, N 16:
[2] *Կ. Մարքս* և *Ֆ. Էնգելս,* Сочинения, том X, стр. 171.
[3] *Լեո,* Հայոց հարցի վավերագրեր, Թիֆլիս, 1915, էջ 172:
[4] "Положение армян в Турции...", М., 1896, стр. 94.
[5] См. *Е. К. Саркисян,* Аграрная политика османского правительства в Западной Армении, Ереван, 1957, стр. 11.
[6] "Армянский кризис и владычество турок", стр. 255.
[7] «Լագիստան, Հայաստան և Քուրդիստան», էջ 70:
[8] «Նոր կեանք», Լոնտոն, 1901, 15 մայիսի, էջ 150-151:
[9] *Н. В. Филиппов,* Военное обозрение Азиатской Турции, 1881, стр. 47.

ազգաբնակչության թիվը 2,5 միլիոնից ձգվել է *մինչև երեք միլիոնի:* Այդ կարծիքը հաստատում են նաև հայկական աղբյուրները:

Մկրտիչ բեյ Դադյանը 1878 թ. արևմտահայերի թիվը հաշվում է 3.400 հազար[1]: Ռաֆֆին և Գրիգոր Արծրունին վկայում են, թե Թուրքիայում *3 միլիոն հայեր են* ապրում[2]: Նույն կարծիքն էր հաստատում սուլթանի նստավայրում հրատարակվող «Մասիս» պարբերականը[3]: Ակնհայտ է, որ եվրոպացիների ու հայ հեղինակների կարծիքներն այս կետում համընկնում են: Թուրքիայում XIX դարի երկրորդ կեսին ապրում էին *մոտավորապես երեք միլիոն հայեր:* Հետևաբար, թուրք դիվանագետի հրապարակած տվյալները կեղծ են, որի դեմ իր ժամանակին պայքար սկսվեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի աշխատողների և Ն. Վարժապետյան պատրիարքի կողմից:

Բեռլինի կոնգրեսի օրերին հայոց պատրիարքը «... Բ. Դռան հավանութեամբ չորս վարդապետներ... Գարեգին ծ.վ. Սրվանձտեանց, Տ. Արիստակէս ծ.վ. տ. Սարգիսեանց, Տ. Պօղոս ծ. վ. Նաթանեան, Տ. Վահան վ. տ. Մինասեան ղրկեց ի Բալու, ի Մուշ, ի Վան և դէպի Կարին և այլ հարստահարեալ գաւառներն, ժողովրդոց վիճակն աչքէ անցունելով հորդորեն, որ պահ մի ևս համբերեն և ուրիշ երկիրներ չգաղթեն»[4]: Նրանք հավաքեցին հոգևոր առաջնորդարանների հաղորդած տվյալները, կազմեցին հայերի վիճակագրություն և հանձնեցին պատրիարքարանին[5]: Ներսես Վարժապետյանը հենվեց այդ թվերի վրա, 1878 թվականին Բեռլինի կոնգրեսին ներկայացրեց մի տեղեկագիր, որտեղ հայերը հաշված էին երեք միլիոն. այդ թվում 400.000-ը եվրոպական Թուրքիայում ու Կ. Պոլսում, 600.000-ը Փոքր Ասիայում և Կիլիկիայում, 670.000-ը Փոքր Հայքում, 1.330.000-ը Մեծ Հայքի տաճկական մասում Էրզրումի, Վանի, Դիարբեքիրի, Մուշի և Խարբերդի, Բաղեշի և այլ նահանգների ու գավառների մեջ[6]: Տոկոսային հարաբերությամբ կամ ազգային կազմով Մեծ Հայքի հիշյալ շրջաններում ապրող 2.062.000 ընդհանուր բնակչությունից 1.330.000 հայերն էին, 530.000 թուրքեր, 120.000 քրդեր, 82.000 զանազան ցեղեր[7]: Այստեղից ակնառու է հայերի թվական գերազանցությունը հայկական վեց նահանգներում համեմատած մահմեդականների հետ առանձին-առանձին:

---

[1] *Մկրտիչ-բեյ Դադյան,* Армяне Оттоманской империи, 1878, стр. 8.
[2] Տե՛ս «Մշակ», 1872, N 30, 1874, N 1, 1875, N 24, 35, 1876, N 24:
[3] «Մասիս», 1872, N 50, 1877, N 1927:
[4] «Լոյս», Կ. Պոլիս, 1878, 6 մայիսի, N 49, էջ 290:
[5] Այդ վիճակագրության մասին մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ԳԱ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին 3-րդ, փաստաթղթեր N 35, 36, 39, 42, 43, 45, 49, 51, 53, 54, 55, 58 և այլն:
[6] «Օրագիր կազմակերպական կանոնագրի օսմանեան Հայաստանի», Կ.Պոլիս, 1878, էջ 30:
[7] «Մշակ», 1878, N 10:

Համիդի կառավարությունը լսեց Ներսես պատրիարքի Եվրոպա առաքած վիճակագրության մասին և սաստիկ գազազեց: 1881 թվականին, ի պատասխան այդ «Տեղեկագրի», սուլթանական Բ. Դուռը Եվրոպա ուղարկեց նոր վիճակագրություն, որտեղ միտումնավոր ձևով փոքրացված էր հայաբնակ վայրերում ապրող հայերի քանակը, ցուցադրված մահմեդականների թվային «բացարձակ» գերազանցությունը[1]: Համիդին ժխտելու նպատակով, Ն. Վարժապետյանը կրկին Հայաստան առաքեց Գարեգին Սրվանձտյանցին, Վահան վարդապետ Տեր-Մինասյանին, Արիստակես Տկնանցին (Տեր-Սարգսենց), հանձնարարելով նոր մարդահամարի անցկացում հայկական վեց նահանգներում: Ըստ երկրորդ մարդահամարի 1880-ական թվականների սկզբին (1882) ***Վանի նահանգում ապրում էին 400 հազար, Բաղեշում՝ 250 հազար, Դիարբեքիրում՝ 150 հազար, Էրզրումում՝ 280 հազար, Խարբերդում՝ 270 հազար, Սեբաստիայում՝ 280 հազար***[2], ընդամենը 1.630.000 հայեր: Բերված այս նոր տվյալները ցույց են տալիս, որ հայերը նախկին վիճակագրության մեջ ոչ թե ավելի, այլ 300.000-ով պակաս են ներկայացված եղել:

Ինչպես տեսնում ենք, Ներսես Վարժապետյանը կարողացավ ժխտել հայակուլ Աբդին փաշային, համոզիչ ձևով ցուցադրեց իր և իր գլխավորած պատրիարքարանի մյուս աշխատակիցների իրավացիությունը: Սակայն, դժբախտաբար, դրանք զոհասեղանի առջև կանգնած մարդու թույլ ջղաձգումներն էին, «դատապարտյալի» վերջին ճիգերը, որոնք բնականոն ձևով պիտի վերջանային անհաջողությամբ:

Կասկածից վեր է, որ տոկոսային փոխհարաբերությամբ հայկական տարրը կազմում էր հայրենի բնաշխարհի ազգաբնակչության համեմատական մեծամասնությունը: Սակայն այս ժամանակամիջոցում որոշակիորեն տարանջատվել էին գաղութահայությունն ու գավառահայությունը սոցիալ-քաղաքական կյանքի էական տարբերություններով հարատևող ժողովրդի հատվածային երկու բեկորները:

Գաղութահայությունը բնակվում էր Կ. Պոլսում և Զմյուռնիայում, իսկ գավառահայություն էր նկատվում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայ բնակչությունը: Զբաղմունքի տեսակներով, բնակության վայրով այն իր հերթին ճեղքվում էր գյուղական ու քաղաքային ազգաբնակչության: Ընդհանուր արևմտահայության 10 տոկոսը բնակվում էր Թուրքիայի հայ գաղթօջախներում, մոտ 15 տոկոսը Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի քաղաքներում, 75 տոկոսը՝ գյուղերում:

Գյուղատնտեսությունից բացի, հայ ազգաբնակչությունը զբաղվում

[1] *Ա. Պիպէոճեան*, Օսմանեան պետութիւն, էջ 27 և հետո:

[2] Տես *Մ. Գ. Ներսիսյան*, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., էջ 35, տես նաև «Արարատ», էջմիածին, 1914, N 9, էջ 811, տես նաև Օսմանյան պետութիւն, գրեց *Ա. Պիպէոճեան*, էջ 27:

էր արհեստագործությամբ ու առևտրով: Արհեստով էր պարապում նաև արևմտահայ գյուղական ազգաբնակչության մի մասը: Սակայն արդյունագործության ու առևտրի հիմնական կենտրոններն էին հայկական քաղաքները:

XIX դարի երկրորդ կեսին Թուրքիայում հարատևում էին չորս տասնյակից ավելի հայկական ու հայաբնակ քաղաքներ, ներքին ու արտաքին հանգամանքներով պայմանավորված, անընդհատ տատանումներով, այդ քաղաքներում ապրում էին բուն քաղաքացիները, գյուղերից գաղթած արհեստավորները, առևտրականները, վերադառնալու դիտավորությամբ եկած պանդուխտ օրամշակները: Արդեն բազմություններով հայկական քաղաքներն էր լցվում քուրդ ու թուրք բնակչությունը՝ խոշոր հողատեր կալվածատերերը, մահմեդական առևտրականներն ու արհեստավորները:

Բնակչությամբ ստվարանում էին Խարբերդը, Բաղեշը, Եվդոկիան, Ադանան, Մարաշը, Վանը: Ադրիանապոլսի պայմանագրից հետո, գաղթի պատճառով, խղճուկ տեսք էր ընդունել Կարինը: Երկու տասնամյակ հետո միայն այդ քաղաքը կարողացավ հասնել նախկին մակարդակին: Այս անգամ Կարինի ազգաբնակչության մեծ մասը թուրքերն էին, բայց տնտեսության հիմնական զարկերակները դարձյալ կենտրոնացվել էին հայերի ձեռքում:

1850-70-ական թվականներին Խարբերդն ուներ 18 հազար բնակիչ, Դիարբեքիրը՝ 40-50 հազար, Սեբաստիան՝ 30 հազար, Երզնկան՝ 15 հազար, Ադանան՝ 40 հազար, Մարաշը՝ 40 հազար, Հաճընը՝ 25 հազար, Զեյթունը՝ 17 հազար, Վանը՝ 30-40 հազար, Կարինը՝ 45-50 հազար: Քաղաքային բնակչության մեծ մասը հայերն էին: Ընդհանուր թվով Արևմտյան Հայաստանում և հայաբնակ մարզերում ապրում էին 350 հազար հայ քաղաքաբնակներ: Սրան եթե գումարենք գաղթօջախներում ապրող 300 հազար հայերին, ապա պարզ կդառնա, որ «Թանզիմաթից» հետո սուլթանական պետության մեջ ապրում էր 650 հազար քաղաքային հայ բնակչություն:

Դարի առաջին կեսի համեմատությամբ, հաջորդ երկու տասնամյակներին արևմտահայ քաղաքաբնակչությունը, որակապես բարձրանալով, քանակական խոշոր աճ չունեցավ: Աճեց եվրոպական Թուրքիայի ծովամերձ քաղաքների՝ Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Հալեպի, Ադանայի քաղաքաբնակ հայերի թիվը: Կարինը կրկին վերածվեց առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոնի: Ընդհակառակը, առևտրական նոր մայրուղիներից հեռու ընկած, քրդաբնակ հայկական նահանգների երբեմնի հայաշատ քաղաքները վերածվեցին ընդարձակ գյուղերի, գաղթեց արհեստավորների ու առևտրականների մեծ մասը, քայքայվեցին արհեստն ու առևտուրը: Բայազետը, Բալուն, Մուշը, Դերսիմը կորցրեցին հայկական տարրի մեծ մասը և ստացան մահմեդական գյուղաքաղաքների կերպարանք: Այսուամենայնիվ, արևմտա-

հայ արհեստագործությունն ու առևտուրը շարունակում էին ոչ միայն հարատևել, այլև առաջընթացի քայլեր անել:

XIX դարի առաջին քառորդին եվրոպական Թուրքիայի արհեստագործությունը, նույնիսկ մանուֆակտուրային արդյունաբերությունը, շոշափելի առաջընթաց էր կատարել: Երկրորդ քառորդին եվրոպական գործարանային ապրանքների մուտքը՝ մի կողմից, կյանքի ու գույքի անապահովությունը, ֆեոդալական անիշխանությունը, փաշաների ու բեկերի կամայականությունները՝ մյուս կողմից, ոչ միայն գոցեցին առաջընթացի ճանապարհը, այլև քայքայման դուռը հասցրին եղածը:

«Իսկապես թուրքական, ինչպես և մյուս բոլոր արևելյան տիրապետություններն անհամատեղելի են կապիտալիստական կարգի հետ. ձեռք բերած հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ,- գրում էր Ֆ. Էնգելսը,- սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից, գոյություն չունի բուրժուական շահույթի առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և սեփականության ապահովությունը»[1]: Ֆ. Էնգելսը չէր մոռանում նաև եվրոպական կապիտալը: Կապիտալատեր օտարերկրացիների առևտրական գործարքները, տնտեսականին զուգահեռ, հետապնդում էին քաղաքական նպատակներ: Նրանք ջանում էին դանդաղեցնել Թուրքիայի տնտեսական զարգացման առաջընթացը, քայքայել երկրի արդյունաբերական ձեռնարկությունները, այն ի վերջո դարձնել իրենց մատակարարող առատաբեր հումքի աղբյուր:

Եվրոպացիները հասան իրենց նպատակին: Քայքայումն սկսվեց 1830-ական թվականներից: Երկու տասնամյակում երկիրը այն դրության մեջ ընկավ, որ ներմուծում էր Եվրոպայից «բոլոր պահանջվող ապրանքները (բացի գյուղատնտեսական մթերքներից), գործվածքները... բանվորական գործիքները, քիմիական նյութերը»[2]: Թուրքիայում բացակայում էին մեքենաշինական, չուգունի և պողպատի գործարանները, 250 մետաղահանքերից գործում էին միայն 30-ը, մնացածները մատնված էին անգործության:

Ուրեմն, XIX դարի առաջին երեսնամյակից սկսած, Թուրքիայի արդյունաբերությունը, հատկապես արհեստագործությունը, ընդհանուր առմամբ անկում էր ապրում: Սակայն երկրի արդյունաբերության ընդհանուր դեգրադացիայի պայմաններում Արևմտյան Հայաստանի և հայկական Կիլիկիայի արհեստավորները շարունակում են դիմագրավել և պահպանել ոչ միայն իրենց զարգացման նախկին մակարդակը, այլև առաջընթացի նոր քայլեր կատարել: Բազմաթիվ այլ հանգամանքների հետ միասին դա պայմանավորված էր նաև առևտրա-արհեստագործական միությունների *էսնաֆությունների* գոյությամբ, հայ արհեստավորների միավորված ու համախումբ գործունեությամբ:

---

[1] *Ф. Энгельс*, Внешняя политика русского царизма (*К. Маркс* и *Ф. Энгельс*, Соч., том XVI, часть II, изд. I, Москва, 1936, стр. 22).

[2] *Корлайл Мак-Коан*, Наш новый протекторат, стр. 153-154.



Մուշ քաղաքը

Մշո Ս.Կարապետ վանքը

*
* *

Արևմտյան Հայաստանում և հատկապես հայաբնակ քաղաքներում դարի երկրորդ կեսին զարգանում են նաև մանուֆակտուրաներ, որոնք թվաշատ են դառնում գորգագործության և ընդհանրապես տեքստիլ արդյունաբերության մարզերում: Գորգագործական մանուֆակտուրաների, հաճախ էլ կապիտալիստական տիպի գործարանների կենտրոնն էր մնում Կեսարիան: Արհեստի այս տեսակը վաղուց էր տարածվել ու արմատացել քաղաքում, սակայն այն իր «կատարելությանը» հասավ դարավերջի երկու տասնամյակներին: 1880 թվականին Նիկողոս Նալբանդյանը, օգտվելով գորգագործ բանվորների առկայությունից, Կեսարիայի Չուխտար փողոցում հիմնեց գորգագործական գործարան[1]: Հարյուրավոր բանվորներ աշխատեցնող գործարանը արտադրում էր միայն բրդյա գորգեր: «1884-ին,- գրում է Մ. Պոտուրյանը,- առաջին անգամ Կեսարիա մետաքսէ գորգագործութիւնը կընդհանրացնէ»[2]: Նույն տասնամյակներին, շարունակում է հոդվածագիրը,- «գորգագործութիւնը Կեսարիոյ հայութեան մենաշնորհը դարձաւ», գործարաններից բացի *«թէզկահ հորերու թիւը 7-8 հազարի հասած էր ու, գրեթէ հազարաւոր ընտանիքի ապրուստն ապահովուած կը նկատուէր...»*[3] (ընդգծումները մերն են- Հ. Ղ.):

Գորգագործությունը խորը արմատներ ձգեց քաղաքում, ինչպես նաև տարածվեց շրջակա գյուղերում: Ըստ որում, Կեսարիան սկսեց արտադրել մետաքսյա, իսկ գյուղերը, անհրաժեշտ հումքից ու գործիքներից զրկված լինելով, արտադրում էին բրդյա գորգեր: Այդ տասնամյակներին քաղաքում բանում էին 2000, իսկ գյուղերում՝ 1500 տորքեր[4]:

«Գաղութահայ տարեգրքից» բերված նախորդ փաստերից պարզ է, որ Կեսարիայում գորգագործությունը 1880-ական թվականներին ոչ թե դեռևս չէր սկսվել, *այլ վերելք էր ապրում:* Ճիշտ է, սկզբում գորգագործները տներում էին աշխատում, սակայն մենք տեսանք, որ 1880 և 1884 թվականներին հիմնվեցին նաև հայկական երկու ընդարձակ գործարաններ: Տնային գորգագործները մերթ ընդ մերթ պարտություն կրեցին, ունեզրկվեցին և առհարկի աշխատանքի տեղափոխվեցին գործարաններ[5]: Տեղի ունեցավ արհեստի կենտրոնացում, առավել ևս,

---

[1] *Հ. Մ. Պոտուրեան,* Գաղութահայ տարեգիրք, Ա տարի, Պուքրէշ, 1939, էջ 154:

[2] Նույն տեղում, էջ 155:

[3] Տե՛ս *Վ. Թեմուրճյան*, Գորգագործությունը Հայաստանում, 1955, Երևան, էջ 112:

[4] Նույն տեղում, էջ 114:

[5] «Գաղութահայ տարեգիրք», էջ 152-154:

արտադրանքի համակենտրոնացում հայ և եվրոպացի մի քանի առևտրաարդյունաբերողների ձեռքում: Անմիջական արտադրող գործագործ կանայք, աղջիկներն ու դեռահասները դարձան չնչին աշխատավարձով աշխատող, սոսկ օրավարձու բանվորներ: *«Խալը կոմիսյոնու»* հանձնաժողովի որոշմամբ, գործագործների աշխատավարձը յուրաքանչյուր գործի համար սահմանվեց վարպետին՝ օրական 9-ը փարա, 5-8 տարեկան հասակ ունեցող աշակերտներին՝ շաբաթական 1-ից մինչև 2 դուրուշ[1]:

Կեսարիայի նահանգում դարավերջին տարեկան արտադրվում էին 10 հազար բրդյա և մետաքսյա գործեր: Գործի ապրանքաշրջանառությունից «Կեսարիայի վաճառականությունը տարեկան գանձում էր 35-40 հազար ոսկի»[2]: Բնական է, որ այդքան եկամուտը չէր կարող հայ և օտար վաճառականներին չշահագրգռել ավելի ընդարձակելու գործագործությունը, կատարելագործելու գործիքները: Սակայն 1915 թվականի աղետը մեկընդմիշտ սրբեց ոչ միայն եղածը, այլ նաև նրա հետ կապված բազում չիրականացված հույսեր:

Գործագործության բնագավառում Կեսարիային չէր զիջում Սեբաստիան: «...Գործերի և տեղական բրդից պատրաստված գուլպաների արտադրությունը Սվազում հասել է կատարելության նշանակալից աստիճանի և քանակի,- գրում է Վ. Քինեն: -Միայն Սվազ քաղաքից տարեկան 500 հազար զույգ գուլպա էին արտահանում Խարբերդ, Դիարբեքիր, Մոսուլ և Հալեպ...: Սվազի կազայում կանանց կողմից ձմռանը պատրաստված «քիլիմ» կոչված գործերը շատ հարգի են, թեև քաղաքներում մատչելի գներով են վաճառվում: Երկու տարի է, ինչ քաղաքի քրիստոնյա բանվորները աշխատել են նմանեցնել Պարսկաստանի և Խորասանի գեղեցիկ գործերին և շատ լավ հաջողել են: Կոզիրիի շրջկենտրոն Զարայում նույնպես պատրաստում են բարձրորակ գործեր: Սվազի Մերքեզ սանջակից տարեկան միջին հաշվով արտահանվում է 185 հազար ֆրանկի գործ»[3]: Սեբաստիայի գավառից մեկ տարում արտահանվել են 184 հազարի, Թոքատից՝ 200 հազարի, Ամասիայից՝ 150 հազարի, Կարահիսարից՝ 160 հազարի արժեք ունեցող գործեր: Ընդամենը, ողջ վիլայեթից 684 հազար ֆրանկ գումար կազմող գործեր են արտահանվել կենտրոնական Թուրքիա և եվրոպական երկրներ[4]:

Սեբաստիայում և վիլայեթապատկան մյուս քաղաքներում 1880-

---

[1] *Վ. Թեմուրճյան*, Գործագործությունը Հայաստանում, էջ 112-113, *Շ. Հ. Եսաեան*, Գործագործութեան առաջադիմութիւնը Կեսարիոյ մէջ, «Բիւզանդիոն», 1902, N 1634:

[2] *Վ. Թեմուրճյան*, Գործագործությունը Հայաստանում, էջ 113:

[3] *Vital Cuinet*, La Turquie d' Asie, tome I, p. 650.

[4] Նույն տեղում, էջ 655:

ական թվականներին հիմնադրվել և աշխատում էին գործագործական բազմաթիվ փոքր գործարաններ *«Փավլիկա»* (ֆաբրիկա) անունով: Քաղաքում կային 70-ի հասնող «փավլիկաներ», որոնց մեջ աչքի էին ընկնում «Արմենակ Թորգոմյանի» գործագործությանը հատկացված յոթ ընդարձակ շենքերը, գործի «Անատոլի» գործարանը, էքիզյանի գործագործարանը, «Ալբերտ Ալյոտի» ընկերությունը և այլն[1]: Հայերի և եվրոպական վաճառականների տնօրինությամբ գործող Սեբաստիայի գործագործական արհեստանոցները գնալով ընդարձակվում էին, իրենց մեջ ընդգրկելով արդեն քայքայվող նախկին տնայնագործներին:

Ծովափնյա Թուրքիայում ծվարած եվրոպական կապիտալատերերը գործերի վաճառքից ստացած շահույթի համտեսից հետո որոշեցին հիմնադրել մի քանի ընկերություններ, իրենց ձեռքում ամբողջացնել հիշյալ ճյուղի ոչ միայն վաճառահանումը, այլև արտադրությունը: Զմյուռնիայում հիմնվեցին «Օրիենտալ կարպետ» և այլ ընկերություններ: «Օրիենտալը» Սեբաստիայի Դավրա գյուղում հիմնեց գործագործական ընդարձակ գործարան[2]: Սեբաստացի գործագործներն աստիճանաբար լցվեցին հիշյալ գործարանը: Շրջակայքի տնտեսապես քայքայվող գյուղացիները կանանց հետ միասին տեղափոխվում էին քաղաք, իրենք աշխատում էին իբրև օրավարձու մշակներ, իսկ կանայք՝ գործագործներ:

Գործագործությունն իր երերուն քայլերն էր կատարում Խարբերդի վիլայեթում, Խարբերդ քաղաքում: «Խարբերդի վիլայեթում և նրա կենտրոնում արտադրում էին *քիլիմ* կոչվող գործեր,- գրում է Վ. Քինեն,- *մուշաբաներ* (որոնք ծառայում էին երկար ճանապարհ գնացող քարավանների ապրանքները փաթաթելու նպատակին), դռների ու լուսամուտների վարագույրներ, աթոռների ու թիկնաթոռների ծածկոցներ»[3]: Հատկանշական է, սակայն, որ Խարբերդից արտահանվող ապրանքների ցանկում 1880-ականներին գործերի անվան չենք հանդիպում: Նշանակում է, գործագործությունը սահմանափակվում էր տեղական շրջանակներով, բավարարում միայն նահանգի կարիքները: Արտադրում էին գերազանցապես մազե կոշտ գործվածքներ[4]: Հումքը ստանում էին Դերսիմից:

1895 թվականի ջարդը Խարբերդ առաջնորդեց պատրվակի սպասող ամերիկյան միսիոներական նոր քարավաններ: «Բարերարական նպատակներով» քաղաքում հիմնադրվեցին որբանոցներ, բացվեցին

---

[1] *Վ. Թեմուրճյան*, Գործագործությունը Հայաստանում..., տե՛ս նաև «Արևելք», 1890, N 2607, «Գործագործութիւն ի Սեբաստիա» հոդվածը:

[2] Տե՛ս *Սապահ-Գիւլեան*, Փոքր-Հայք յիշատակներ, էջ 278-280:

[3] *Vital Cuinet*, La Turquie d' Asie, tome I, p. 344-345.

[4] *Վահէ Հայկ*, Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը, էջ 671:

ամերիկյան նոր դպրոցներ: «Եփրատ» քոլեջի կողքին հիմնվեցին արհեստագործական ուսումնարաններ: Ի՞նչ հարկ կա ապացուցելու, թե ամերիկացին առանց հատուցումի դրամներ չէր շռայլի: Մի կողմ թողնենք նրանց հետապնդած քաղաքական հեռավոր դիտավորությունները, ասենք, որ առաջին իսկ տարիներից միսիոներները սկսեցին շահագործել հայ որբերին: Իբր թե գործը սովորեցնելու նպատակով, արհեստագործական դպրոցներին կից հիմնվեցին գորգագործական գործարաններ: Որբերը գործեցին պլանտատորների աշխարհին զարմացնող նրբագույն մետաքսյա գորգեր:

Կատարվում էր կենտրոնացման մի այլ պրոցես: Ինչպես տեսանք, եվրոպացիների կողմից ստեղծվել էին գորգագործական ընկերություններ, որոնք խարիսխ էին գցել ծովամերձ քաղաքներում, մասնավորապես Զմյուռնիայում: Նրանք իրենց շոշափուկներն էին տարածում Անատոլիայի ու Ռումելիայի քաղաքներում, սկզբում պայմանագրերով, իսկ հետո ամբողջովին իրենց ենթարկում գորգագործական գործարանները, տերերին դարձնելով ընկերության անդամներ, ղեկավարում էին ոչ միայն գորգի վաճառքը, այլև համայն առևտուրը: Կատարվում էր Թուրքիայի գորգագործական ճյուղի արտադրության ու վաճառահանման համակենտրոնացում: Ահա այս էր, որ մենք բնորոշեցինք զարգացում նաև ըստ խորության:

Մի հանգամանք ևս: Եթե սկզբում հումքը մի տեղ էր մշակվում, գորգը մի այլ տեղ գործվում, ապա այժմ այդ բոլորը, մեծամասամբ, կատարվում էր նույն հարկի տակ: Եթե առաջ դազգահները հին էին, պրիմիտիվ, ապա այժմ կառուցվում, Եվրոպայից, Ամերիկայից բերվում էին նորերը, կատարելագործվածները: Կարճ ասած, գորգագործությունը պատռում է ֆեոդալական զսպաշապիկը և փորձում մուտք գործել նոր հասարակական տնտեսակարգ: Առավելապես վատթարանում են աշխատող ձեռքի՝ բանվորուհիների ապրելակերպի պայմանները: Սրբության քողի տակ դարերով ծածկված հայ և քուրդ դեռահաս աղջիկներ, օրիորդներ ու կանայք չնչին վարձով աշխատում են տեղացիների ու եվրոպացիների գորգագործական արհեստանոցներում: Գյուղերից եկած պանդխտածներն ապրում էին կեղտոտ հանրակացարաններում:

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին արևմտահայ քաղաքային ազգաբնակչության մի ստվար մասը ներգավված էր տեքստիլագործական ճյուղին պատկանող մանուֆակտուրային արհեստագործության մեջ: Արտադրության այս ճյուղը նոր էր միայն կանգնել կապիտալիզմի շեմքին: Եվդոկիան, Արաբկիրը, Ադանան, Խարբերդը, Զմյուռնիան դարձել էին տեքստիլագործ բանվորների կարևորագույն կենտրոններ: Հիմնվել էին մանուֆակտուրաներ, ներմուծվել էին եվրոպական մեքենաներ, կատարելագործվել էին տեղական դազգահները:

Ի տարբերություն գորգագործության, տեքստիլագործությունն ու-

ներ մի կարևոր առանձնահատկություն: Եվրոպացիները դեռևս նոր էին մուտք գործել հիշյալ բնագավառը: Այն մնացել էր հայերի, թուրքերի, ասորիների ձեռքը: Տեղացիներն էին տնօրինում և արտադրության, և վաճառահանման գործը: Արտադրողը հաճախ ինքն էլ վաճառում էր, իսկ արտադրության վայրից արտադրանքի մի մասը արտահանելու դեպքում գործի էր անցնում միջնորդը՝ սոսկ տեղական բարիքներով «սնվող» գավառահայ բուրժուազիայի վաճառականական թևը:

*
* *

XIX դարի վերջին քառորդին Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ քաղաքներում առաջանում են կապիտալիստական տիպի գործարաններ: Գործարանային արդյունաբերության զարգացման տեսակետից Արևմտյան Հայաստանի ամենազարգացած քաղաքը Խարբերդն էր: Վալիանիստ քաղաքը վաղուց էր սկսել նոր ձևով «հառաջանալ», սակայն իր վերելքին հասավ միայն 1880-ականների երկրորդ կեսին: «1885-1892 թուականներուն,- գրում է Մ. Ճիզմեճյանը,-Խարբերդի և գաւառի ժողովուրդը աննախընթաց շրջան մը կապրէր. հարուստ ու բարգաւաճ էր իր կեանքը...»[1]: Հայրենի երկրի գովքով տարված հեղինակը անգիտացել է մահմեդական ցեղերի երեսից ժողովրդի կրած վիշտն ու տառապանքը, պատշաճ չհամարելով բերել գյուղացիության տված բազմաթիվ ու բազմապիսի հարկերի գոնե համառոտ ցանկը, նրանց կրած լլկանքները, անագորույն հարստահարվելը: Մի բան միայն ճիշտ է, որ այդ տարիներին, համեմատած նախորդ շրջանին, Խարբերդը տնտեսական լուրջ վերելք ապրեց: Ծնվեցին Ամերիկայի ու Եվրոպայի հետ կապված բուրժուական տիպի մի շարք խոշոր ձեռնարկություններ:

Բարիկյան եղբայրները 1870-ական թվականների վերջերին Խարբերդի Սինամուտ թաղի ձորի մեջ հիմնեցին երկաթամշակման գործարան[2]: Նրանք օգտագործում էին ջրի ուժը, գործարանը աշխատեցնում թափանիվներով: 1880 թվականին Բարիկյան Մանուկը Տիգրան Թերզյանի (Դերձակյանի) հետ Ամերիկայից Խարբերդ տեղափոխեցին ճախարակ, ձևավորիչ մեքենա, երկաթ ծակող մեքենա, շոգեմեքենա, հովհար և բոլորովին եվրոպական տեսքի բերեցին իրենց գործարանը: «Բարիկեան եղբայրներու» գործարանն այլևս կարելի կատարելութեան կը

---

[1] *Մանուկ Գ. Ճիզմէճեան*, Խարբերդը և իր գաւակները, Ֆրէզնո-Քալիֆորնիա, 1955, էջ 173:

[2] «Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը», էջ 644:

հասնի, նոր հնոցներ կը շինուին, երկաթը, պղինձը, արոյրը և այլն կը սկսին հալիլ և ջուրի պէս վազել արտադրելով ցորենի, բամպակի և երկրագործութեան յատուկ բազմաթիւ գործիքներ:

Գործարանը և անոր արտադրութիւնը մեծ համբաւ կը ստանան: Գործիքներ կը սկսին ղրկուիլ ոչ միայն Խարբերդի երկրագործներուն, այլև Թուրքիոյ զանազան կողմեր... Այս նորահնար մեքենաները դաշտի աշխատաւորներու հնադարեան դանդաղ և անհաստատ գործիքներուն քով կը դառնան հրաշալի, առևտուրը կը ճոխացնեն և յաջողութիւնը կը դարձնեն անխուսափելի»[1]:

Այնտեղ ձուլում էին երկաթ, պղինձ, արույր և արտադրանքը վաճառում ոչ միայն Թուրքիայում, այլև Պարսկաստանում: Կասկածելով, թե գործարանում կարող են զենքեր արտադրել, հայերից մտավախ կառավարությունը երկու անգամ այն փակելու փորձեր արեց: Գործարանը 1895 թվականին հրաշքով փրկվեց, իսկ 1905 թվականին վերածվեց սոսկ արհեստանոցի:

1881 թվականին Գրիգոր Քյուրքճյանը Խարբերդում հիմնեց մետաքսի գործարան: Նրա որդի Խոսրովը 1883 թվականին մեկնում է Լիոն, մեկ տարի մնում այնտեղ, ուսումնասիրում մետաքսահյուսման արվեստը, իր հետ վերցնելով նոր մեքենաներ, վերադառնում և կատարելագործում գործարանը: Նա օգտագործում էր շոգու ուժը, երբեմն էլ հողմաղացի «հզորությունը»: Այն փակվեց 1915 թվականին[2]:

1870-ականների վերջերին Խարբերդում «Շերամի թելը քաշելու համար պատուական ճախարակներու գործարաններ շինած ունին և երկուքը *Միսաքեանց և Քիւրքճիպաշեանցներունն* է (ընդգծումները մերն են- Հ. Ղ.), որ Հալէպի ու Շամի ապրանաց նման մետաքսեղէնի տեսակներ կը գործեն, և քաղաքն ալ երկու գործարանէ զատ կայ, որ ընտիր մանիսա և չիթարի կը գործուին և հայերն եւրոպական նոր զէնքեր, ասեղնաւոր հրացան և ռեվոլվըր ու ասոնց փամփուշտներն և ուրիշ մեքենաներ կը շինեն»[3]: Խարբերդից քիչ հեռու գտնվող Մեզիերում «Հայք բաւական հարուստ են և բնիկ տեղացիք հողագործ, մետաքսեղէնի գործարանաց մէկը հոն է, ուր լաւ ընտիր կերպասներ կը գործուին, այսինքն հարէ, կիզի...»[4]:

Խարբերդի «Ֆապրիքատորեան եղբայրները» Մեզիրեում 1869 թ. հիմնեցին ժամանակի առումով մի հսկայական գործարան: Նրա արտադրանքը Լիոնի միջազգային ցուցահանդեսում (1884 թ.) մրցանակ շահեց: Խրախուսվելով դրանից, Ֆաբրիկատորյան եղբայրները 1889 թվականին ընդարձակեցին իրենց գործարանը, Եվրոպայից ու Ամերիկայից ներմուծեցին նորաձև կատարելագործված մեքենաներ: Գործարանում աշխատում էին 200-300 բանվորներ[1]:

Հայերը գործարաններ ունեին նաև Կեսարիայում: Այս պատմաշրջանում էլ գործում էին Սարգիս խալֆայի հիմնադրած գործարանը, ապա Գասարճյան եղբայրների տնօրինած Կայսերի-Չիթարը: Հիշյալ երկու գործարանները[2] իրենց ծաղկման հասան 80-ական թվականներին և հավիտենականության գիրկն անցան 1915 թվականին[3]: Քաղաքում գործում էին գորգագործական երկու մեծ գործարաններ, որոնց մասին խոսվեց վերևում:

Ուշաքում և Գյորդեզում 1880-ական թվականներին կազմակերպվում են գորգագործական խոշոր ֆաբրիկաներ: Կենտրոնացված ֆաբրիկաներից մի քանիսում աշխատում էին մինչև 300 դազգահներ 3000 բանվորներով[4]: Աշխատավոր ձեռքի մոտ 80 %-ը տեղացի կամ Արևմտյան Հայաստանից գաղթած հայ աշխատավորներն էին:

Բանվորական մեծ բազմություն էր ներգրավված երկրի ռազմական արդյունաբերության մեջ: Թոփխանեի գործարանում աշխատում էին 3500[5], Զեյթուն-Բուռնուի զինագործարանում 1800 բանվորներ[6]: Մեքենաները գնված էին Եվրոպայից: Հումքի մի մասը ստացվում էր տեղի երկաթահանքերից, մյուս մասն Անգլիայից:

Մի հանգամանք ևս: Արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխումը կատարվում էր անհավասարաչափ: Կոստանդնուպոլսում կենտրոնացված էր գործարանների 53,7 %-ը, Զմյուռնիայում 22,3 %-ը, իսկ մնացած 24 %-ը սփռված էր ողջ Թուրքիայով մեկ: Կատարվել էր արդյունաբերության կենտրոնացում թե՛ ըստ տնտեսական ճյուղերի և թե՛ ըստ տարածքի:

Բերելով վերոհիշյալ փաստերը, ընդհանրացնենք, որ արդյունաբերական ձեռնարկությունները փոքրիկ օազիսներ էին ֆեոդալական «հսկայական անապատների» մեջ: XIX դարի երկրորդ կեսին Թուրքիան, Արևմտյան Հայաստանը շարունակում էին մնալ այնպիսի երկրներ, որտեղ տիրապետում էր արտադրության ֆեոդալական եղանակը: Նշենք նաև, որ գյուղատնտեսության, առավել ևս, արդյունաբերության շատ ճյուղերում ֆեոդալական հարաբերությունները քայքայվում էին և ծնունդ տալիս կապիտալիստական կացութաձևին: Ձևավորվում էր ազգային բուրժուազիան:

Արդյունաբերությանը կաշկանդող ֆեոդալական կապանքները, ար-

---

[1] «Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը», էջ 645:
[2] Նույն տեղում, էջ 649-650:
[3] *Պօղոս Վ. Նաթանեան*, Արտոսր Հայաստանի..., էջ 136:
[4] Նույն տեղում, էջ 140:

[1] «Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը», էջ 641:
[2] *Հ. Մ. Պոտուրեան*, Գաղութահայ տարեգիրք, Ա տարի, էջ 150:
[3] «Գաղութահայ տարեգիրք», էջ 154:
[4] *Ю. Петросян*, "Новые османы"..., стр. 30.
[5] Մանրամասն տե՛ս ՍՍՀՄ ԿՊԴՊԱ, ֆոնդ 1300, ցուց. 9, գործ 155, թերթ 126:
[6] Նույն տեղում, թերթ 127:

տասահմանյան կապիտալի անարգել գործունեությունը, բնականաբար, առաջ էին բերում տեղական բուրժուազիայի դժգոհությունը: Թուրքիայում խմորվում էր սահմանադրական շարժումը, քննադատության «ցուցատախտակին փակցվում» սուլթանների գործունեությունը, պայքար ծավալվում ֆեոդալական զսպաշապիկը պատռելու ուղղությամբ: Ազատագրվելու փորձեր են անում, ազգային շարժում հորդորում նաև արևմտահայ արդյունաբերողները: Սակայն թույլ էր, սակավաթիվ արևմտահայ արդյունաբերական բուրժուազիան: Նա ի վիճակի չէր միայնակ իր ձեռքը վերցնել ալեկոծվող երկրի ազգային-ազատագրական շարժման ղեկը: Այստեղ նրան օգնության ձեռք էր մեկնում ազատագրվելու գործում ավելի քան շահագրգռված *մարդաշատ ու հարուստ գավառահայ առևտրական բուրժուազիան:* Եվ պատահական չէր, որ 1870-80-ական թվականներին հայ ազատագրական շարժման ղեկավարությունը թողնում է Թուրքիայի կենտրոնական քաղաքները և տեղափոխվում «բուն երկիր» Արևմտյան Հայաստան: Պոլիսն ու Զմյուռնիան իրենց նախկին դիրքը զիջում են Վանին, Կարինին, Եվդոկիային: Գաղութահայ դիմադրական շարժման հիմքի վրա բարձրանում է գավառահայ ազգային-ազատագրական շարժման, նրա գաղափարախոսների ամրակուռ շարքը: Ազդվողի դերում գտնվող գավառը վերածվում է ազդողի, Պոլսի ու Զմյուռնիայի հայ հասարակական կյանքին տոն տվողի:

5. Առևտուրը, առևտրական բուրժուազիան

Բուրժուական հարաբերությունների առաջացումն արդյունաբերության և գյուղատնտեսության մարզերում, արտադրանքի ապրանքայնացումը, բնականաբար, հնարավորություններ էր ստեղծում առևտրի զարգացմանը, Թուրքիայի հաստատուն մուտքին համաշխարհային առևտրական շուկաները: Սակայն հայտնի է, որ գոնե մինչև անցյալ դարակեսը, Յըլդըզին «ապավինած» երկրների առևտուրը թուրքերի ձեռքում չէր, այլ քրիստոնյա ազգերի, առավելապես *հայերի և հույների:*

1860-80-ական թվականներին թուրքերը ևս առաջ էին քաշում առևտրականներ, իսկ Արևմտյան Հայաստանի գրեթե ողջ առևտուրը նախկինի նման տնօրինում էին հայերը: Նրանց էր պատկանում ներքին շուկան, գավառի հումքի, ընդհանուր արտադրության առքուվաճառքի գործը: Նրանք էին մատակարարում ասիական Տաճկաստանի հայ, թուրք, քուրդ ազգաբնակչությանը: Կարինը, Բաղեշը, Վանը, Սեբաստիան, Ադանան, Եվդոկիան մնում էին առևտրի կանորագույն կենտրոններ, տեղական արտադրանքի, եվրոպական ու ասիական արդյունաբերական ապրանքների գնման, վաճառահանման, տարանցիկ առևտրով պարապող քարավանային առևտրի հանգրվանելու անփոխարինելի հանգույցներ: Ամենախոշորն այս տեսակետից Կարինն էր:

Կարինի առևտրի և առևտրականների մասին խոսելիս Վիթալ Քինեն նշում է, որ մահմեդականներից քչերն էին զբաղվում առևտրով: Նրանք գերադասում էին պետական պաշտոններ վարել[1]: Վիլայեթի առևտուրը գտնվում էր հայերի և հույների ձեռքում:

Քաղաքի 3000 խանութներից ու կրպակներից (ըստ Մ. Միրախորյանի 3500 կրպակներից, 2 ծածկած շուկայից) կեսը պատկանում էր հայերին, որոնցից 500-ը խոշոր վաճառականներին, մնացածը մանրավաճառներին: Սրանց թվին էին պատկանում Կ. Պոլսի, Տրապիզոնի հետ առևտրով կապված խոշոր վաճառականները[2]: Հ. Քոսյանը քաղաքում հաշվում էր 4.000 վաճառատուն և ավելացնում «Խաներու ամենակարևորներն ալ հայ վաճառականներու ձեռքն էր»[3]: Յուրաքանչյուր խանն ուներ իր ընդարձակ պահեստները լցված ընտիր ապրանքների հազարավոր հակերով[4]: Վիթալ Քինեն քաղաքում և շրջակայքում հաշվում էր 3300 խանութներ և կրպակներ, 778 հացահատիկի շտեմարաններ[5]:

Այսպիսով, 1860-70-ական թվականներին Կարինը շարունակում էր պահպանել իր նախկին դերը: Քաղաքի առևտրականների մեջ երևում են թուրքեր, սակայն տոն տվողներն են հայկական նշանավոր գերդաստանները. Պալարյաններ, Տեր-Ներսիսյաններ, Նըշըկյաններ, Յանըքյաններ, Խանճյան եղբայրներ, Աստուրյաններ: Ի դեպ, նշենք, որ հիշյալ առևտրական տների երիտասարդության մեծ մասը մասնակցեց Կարինի «Պաշտպան հայրենյաց» հեղափոխական կազմակերպության ընդհատակյա աշխատանքներին:

Առևտրի նշանավոր կենտրոն էր դառնում բազում փորձությունների ենթարկվող Վան քաղաքը: Վանեցիները բնատուր ընդունակություններով, դարերից եկող ավանդներով վաճառականներ էին[6]: Արհեստագործներից բացի, «Հայ տարրի մնացեալ տոկոսը կազմում է այսպես կոչուած առևտրականների, խանութպանների դասը»[7]: «Վանի առևտուրը համարեայ ամբողջապէս գտնվում է հայերի ձեռքում,- գրում է Ա-դոն,- հայ ճօթավաճառների և մանրավաճառների թիւը հաշվում են 2500, մրգավաճառներ 60...»[8]:

---

[1] *Vital Cuinet,* tome I, p. 175.
[2] «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները», էջ 163:
[3] Տե՛ս *Ղազար Չարըգ,* Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պէյրութ, 1957, էջ 107-108:
[4] Նույն տեղում, էջ 107:
[5] *Vital Cuinet,* tome I, p. 185.
[6] «Մասիս», 1882, 20 հունիսի, N 3222:
[7] «Մուրճ», 1903, սեպտեմբեր, N 9, էջ 25:
[8] «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները», էջ 18:

Վանի վիլայեթի առևտուրը տարեկան (1881 թ.) հասնում էր 150.000 թուրքական ոսկու: Քաղաքն առևտրական կապեր ուներ Պոլսի, Հալեպի, Այնթապի, Դիարբեքիրի, Մոսուլի, Սղերդի, Պարսկաստանի, *Մոսկվայի*, Սալմաստի և այլ երկրների ու քաղաքների հետ: Առևտրական կապերն արևելքի հետ հաստատված էին Բայազետի և Էջմիածնի միջոցով[1]: Ներմուծումն ավելի շատ էր, քան արտահանումը: Պոլսից մեկ անգամ ներմուծվել էին 60.000 լիրայի արժողությամբ ապրանքներ, Հալեպից 12.000 ոսկու, Այնթապից 2.000 ոսկու, Սղերդից 2.000 ոսկու: Բաղեշից 1.000 ոսկու (զուտ արհեստագործական ապրանքներ), Կարինից 5.000 ոսկու[2]: Պարսկաստանից ներմուծում էին գորգեր, բամբակ, չիթ, քաշմիրի շալեր, մանրավաճառի ապրանքներ: Մոկսից ներմուծում էին ռուպ[3]:

Վանի վաճառականները Պոլիս և այլուր արտահանում էին հացահատիկ, անասուններ, ոչխարի ընտիր տեսակի բուրդ, կաշի, ընկույզի փայտ, ոսկերիչների ու փորագրիչների ձեռագործ շինվածքներ, շատախի շալեր, Վանա լճի տառեխ ձուկ, աղաջրից ստացված բորակ. «...աւելացնենք նաև Վանայ փամպլիկ սպիտակ կատուներ, որոնք հռչակուած են»[4]:

Քաղաքում կային հարյուրի հասնող հայ հարուստ վաճառականներ: Դրանց մեջ աչքի էին ընկնում Գազանճյան Հարությունը, Շարան բեյը, Տեկանց տունը և ուրիշներ: Վանի վաճառականներից շատերը տարեկան մինչև 20.000 ոսկու եկամուտ ունեին: Կարճ ասած, Վանի առևտրական դասը հասել էր որոշակի տնտեսական հզորության, գավառի, նույնիսկ նահանգի հարստությունը, ոսկին աստիճանաբար կենտրոնանում էր նրա ձեռքում:

Բայց դա 1870-ականների առաջին կեսն էր: 1876 թվականի զարհուրելի հրդեհը սրբեց Վանի առևտրականների ունեցվածքը, մոխրակույտի վերածեց ընտիր ապրանքներով լեցուն փայտաշեն շուկան, դրա հետ մեկտեղ հայերի միլիոնավոր հարստությունը: Ռուս-թուրքական պատերազմը նոր հարված հասցրեց քաղաքի տնտեսական կյանքին, կասեցրեց նրա առաջընթացը, սակայն չկարողացավ դադարեցնել առևտուրը: Վանեցի վաճառականը շարունակեց իր գոյամարտը: Բռնակալի անողորմ թաթը նրան դրդեց միավորման, առևտրական ընկերությունների կազմակերպման:

Հրդեհին հաջորդող մի քանի ամիսներին Ճիտեջյան եղբայրները կազմակերպում են առևտրական ընկերություն: Նրանք գնում էին, վաճառում, ներմուծում ու արտահանում արդյունաբերական և գյուղատնտեսական բազմատեսակ ապրանքներ: 1880 թվականին Ճիտեջյանները տարեկան արդեն ներմուծում և արտահանում էին 30 հազար լիրայի արժողությամբ ապրանքներ: Նրանք զբաղվում էին նաև վաշխառությամբ, Վանա լճից հանվող տառեխ ձկան և բորակի մենավաճառությամբ[1]:

Խարբերդի վիլայեթում, հատկապես նրա կենտրոնում, մեծ թվով առևտրականներ կային: Նախապես նշենք, որ այստեղ ևս առևտուրը և արդյունագործությունը իրարից չէին զատված: Արտադրողները, մասնավորապես Ֆաբրիկատորյան եղբայրները, երկրի ներսում ու նրանից դուրս վաճառում էին իրենց արտադրանքը: Բայց կային և այնպիսի առևտրականներ, որոնք գնում և վաճառում էին ուրիշի արտադրանքը: Քաղաքը առևտրական կապերով կապված էր Հալեպի, Պոլսի, Դիարբեքիրի, Այնթապի, Սամսունի, Սեբաստիայի, Ադանայի, Արաբկիրի, Բալուի, Մալաթիայի[2], ինչպես նաև արտասահմանի հետ: Արտահանում էին 30 տեսակ գյուղատնտեսական ու արդյունաբերական ապրանքներ, ներմուծում արդյունագործության համար հումք և արդյունաբերական բազմաթիվ ապրանքներ: Քաղաքի հարյուրների հասնող խանութների մեծ մասը պատկանում էր հայերին: Գլխավոր վաճառականներն էին Գազանճյան Հարությունը, Տաղալյան տունը, Համբարձումյան տունը, Թևրիզյան տունը, Ենոքյան տունը և այլոք: Ընդհանրացնելով բազմաթիվ փաստեր, Ճիզմեճյանը եզրակացնում է. Խարբերդի մեջ «վաճառականութիւնը այնքան ծաղկեցաւ որ պարապ խանութ և կամ *խան*-երու որևէ մթերանոց պարապ չմնաց. ներածումն ու արտածումը հետզհետէ կը բազմապատկուէր»[3]:

Խարբերդի համար հատկանշականն այն էր, որ քաղաքի առևտրականները հաստատուն կապերի մեջ էին Ամերիկայի հետ: Յանկիների երկրից եկած միսիոներական քարավանները լաստեր գցեցին Խարբերդի և Ամերիկայի միջև: Խարբերդցիները դարձան ամերիկյան ապրանքների վաճառողներ: Նրանց արհեստագործության նմուշներն էլ կտրեցին օվկիանոսներ և վաճառվեցին Նյու Յորքում ու Վաշինգտոնում:

Եվդոկիայի առևտրի մասին պատկերացում կարող են տալ 1886-1887 թթ. քաղաքից արտահանվող և ներմուծվող ապրանքների տեսակները և քանակը: Այդ մեկ տարվա ընթացքում ներմուծվել է երկաթ, կապար, պղինձ, անագ, հին պղնձի կտորներ, արույր, բամբակեղեն, մետաքսեղեն, արևելյան կտավ, եվրոպական զանազան մանր առարկաներ 116.500 թուրքական ոսկու արժողությամբ: Արտահանել են

[1] «Մասիս», 1882, N 3222:
[2] Նույն տեղում:
[3] «Մուրճ», 1903, N 9, էջ 26:
[4] Նույն տեղում:

[1] «Մուրճ», 1904, N 8, օգոստոս, էջ 22:
[2] «Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը», էջ 638:
[3] *Մ. Ճիզմէճեան,* Խարբերդը և իր զաւակները, էջ 175:

աֆիոն, դեղին ներկ, յազմա, մրգեր, պղնձեղեն, ոչխարի բուրդ, կաշի, հացահատիկ 116.500 ոսկու արժողությամբ[1]:

Առևտրի խոշոր կենտրոններ էին մնում Դիարբեքիրը, Տրապիզոնը, Սեբաստիան, Երզնկան: Առևտրի համաճանաչ կենտրոններ էին դառնում Մարաշը, Հաճընը, հատկապես Ադանան: Սուեզի ջրանցքի բացումը առևտրական շուկաների, ճանապարհների նոր խմբավորում առաջ բերեց: Արևմտյան Հայաստանի քաղաքները զրկվեցին նախկին հաճախորդներից: Ռուսաստանի, Պարսկաստանի, Արևելքի երկրների հետ եղած մայրուղիները տեղափոխվեցին: Ադանան գրեթե հրաժարվեց ասիական առևտրից և ծովային ուղիներով ավելի սերտ կապվեց Եվրոպայի հետ: Քաղաքը դարձավ օտարերկրյա առևտրի խոշոր կենտրոն: Միայն 1870 թ. Մերսինի նավահանգստով Ադանայի վիլայեթն արտահանել է 3.416.305 ղուրուշի ապրանքներ[2]: Արտահանվել են բամբակ (1.101.900 ղուրուշի արժողությամբ), բուրդ (201.000), ելակ (15.540), կանաչ ներկ (14.200), բաստուրմա (10.400), սերմեր (20.167), մորթիներ (73.650), գորգեր, չամիչ, խմիչքներ և այլն: Արտահանվել է Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, ինչպես նաև վաճառվել է եվրոպական Թուրքիայում: Արտահանող վաճառականները հիմնականում Ադանայում, Մերսինում և Տարսոնում խարսխված հայերն էին, որոնք վերոհիշյալ երկրներից էլ բերում էին արդյունաբերական տարատեսակ ապրանքներ, բաժանում Փոքր Ասիայի քաղաքներին ու կազմակերպում վաճառքը[3]:

Առևտրի տեսակետից Արևմտյան Հայաստանը համախմբվեց Կարինի ու Տրապիզոնի շուրջը[4]: Ազգային կամ գավառահայ առևտրականներից շատերը դուրս մղվեցին առևտրի ընդհանուր հորձապտույտից և դարձան տեղական վաճառողներ: Այնուամենայնիվ, մեծ դժվարություններով շարունակում էր հարատևել, իր գոյությունը պահպանել հայ առևտրական դասը, նրա հետ բազմաթիվ թելերով կապված տեղական արդյունաբերողները: Կարճ ասած, 1860-1870-ական թվականներին Թուրքիայում, հայ կոմպրադորներին հակակշիռ, գոյություն ուներ թվաշատ *գավառահայ, նորելուկ ազգային առևտրա-արդյունագործական բուրժուազիան:* Նրանք ունեին մեծ գումարներ, հարստություն, ոսկի, փող, սակայն ազատ ու անարգել գործելու հնարավորությունից համարյա զրկված էին:

---

[1] «Պատմութիւն Եւդոկիոյ հայոց», էջ 1292-1293, տե՛ս նաև «Արաքս», 1887, գիրք Ա:

[2] ԽՍՀՄ ԿՊՊՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 82, թերթ 26-27:

[3] Տե՛ս նույն տեղում: Այս փաստաթուղթը մի ընդարձակ զեկուցագիր է, կազմված ռուսական հյուպատոսի կողմից և տալիս է Ադանայի վիլայեթի տնտեսության ընդհանուր պատկերը՝ հետաքրքիր փաստեր հաղորդելով քաղաքական իրադարձությունների մասին:

[4] ԽՍՀՄ ԿՊՊՊԱ, ֆոնդ 1300, ցուցակ 18, գործ 63, թերթ 106-107:

Թուրքիայում չկար կյանքի ու գույքի անվտանգության երաշխիք, երթևեկելու ազատ հնարավորություն, վաճառականի անձի և սեփականության ապահովություն: Երկար լեռնանցքներով անցնող քարավանային ճանապարհների վրա ամեն րոպե կարող էին ցցվել քուրդ և թուրք ավազակային խմբեր և թալանել առևտրականներին: Կառավարությունից դժգոհելու ազգային բուրժուազիայի պատճառներից մեկն էլ այս էր:

Առևտրական հարաբերությունների կաշկանդման գործում քիչ դեր չունեին հարկային ծանր բեռը, մաքսային բարձր սակագները, մահմեդական և քրիստոնյա առևտրականի միջև դրվող բացահայտ խտրականությունը, օտարերկրյա առևտրականների վայելած արտոնությունները: Եվրոպացի առևտրականները, նրանց հանձնակատար դարձած թուրքահայ գործակալները մրցության մեջ շարքից մեկընդմիշտ հանում էին գավառահայ երբեմնի խոշոր առևտրականներից շատերին և նրանց «չարչիի» մանրավաճառի դեր թողնում կամ իսպառ սնանկացնում: Բնականաբար, վերջիններս ընդդիմադիր դիրքում կմնային, և դժգոհությունը գնալով ավելի բացահայտ կդառնար տիրապետող օրենքների, սուլթանական կառավարության հանդեպ: Այս բոլորին զուգընթաց հայ առևտրականները դժգոհելու մի այլ, ավելի լուրջ պատճառ ունեին՝ *նրանց ունեցվածքի զանգվածային հրկիզումները 1870-80-ական թվականներին:*

XIX դարի վերջին քառորդին ուժեղացավ ճնշումը քրիստոնյա հպատակների նկատմամբ: Համիդի գահակալության առաջին շաբաթներից ի վեր կրկնապատկվեցին հայերի քաղաքական իրավունքների սահմանափակման ուղղությամբ հրապարակված ու չհրապարակված հրահանգները:

Եզլոզգի աչքում վտանգավոր նկատվեց հայ հարուստ դասը, հատկապես վաճառականները, որոնք «իրավունքներ» ունեին կապվել Ռուսաստանի՝ Թուրքիայի դարավոր թշնամու հետ, այնտեղից երկիր տեղափոխել «վտանգավոր» ծրագրեր: Հայ վաճառականության ունեցվածքի ոչնչացման, նրան հրապարակից հանելու պատճառներից մեկն այս էր, որը կատարվում էր սուլթանի գիտությամբ, պալատականների խրախուսանքով:

1876 թվականին սկսվել էին բալկանյան ժողովուրդների ապստամբական շարժումները: Ռուսաստանը պատերազմի էր դուրս գալու Թուրքիայի դեմ: Բ. Դուռը պատրաստվում էր դիմադրության: Նույնիսկ թուրքահպատակ քրիստոնյաներից զորք հավաքելու փորձեր էին կատարվում: Բանակին օգնելու պատրվակով սկսվեց հանգանակություն: Առաջիններից էին Վանի և Կարինի կուսակալները, որոնք կանչելով հայ վաճառականներին պահանջեցին «օգնության կարգով» նյութական միջոցներ, դրամ տալ կառավարությանը: Վանի թուրք կառավարիչ

Մեհմեդ բեյը դիմելով քաղաքի հայ առևտրականներին, խոժոռադեմ հայտարարեց. «Իսլամ զօրքերը ձեր հանգստութեան, ինչքի և կեանքի ապահովութեան համար բանակ պիտի երթան Քեաֆիր Մօսկօֆին դէմ կռուելու, հանգանակութիւնը քանի որ այդ զօրքերուն համար է, պէտք է սիրով մասնակցիք և ձեզմէ պահանջուած գումարն ամբողջ վճարէք, ինչպէս նաև կերպասներ և այլն, ապա թէ ոչ վերջէն պիտի գղջաք, չտուած կերպասնիդ, դրամնիդ և դուք պիտի այրիք. ուստի տուէք ձեզմէ պահանջուածները, որպէսզի վերջէն չգղջաք և այլև ուշ չըլլայ»[1]: Փաստորեն խլվեց հայ վաճառականների ունեցվածքի մեծ մասը, սակայն, ըստ երևույթին, կառավարությունը դժգոհ մնաց, 1876 թ. նոյեմբերի վերջերին բարեկամական այցով Մեհմեդ բեյը Կարին գնաց: Չորեքշաբթվա գիշերը ժամը 3-ին հրդեհ բռնկվեց Վանի շուկայում: Բոցերի հրեղեն լեզուն լափեց հայի հարստությունը: Կարինում ստացած հեռագրից տեղեկանալով հրդեհի մասին, առանց խղճի խայթի թուրք փաշան հարցրեց. «Գալճեան Գէորգ պէյի շուկան սկսա՞ւ այրիլ, եթէ չէ այրած, անպատճառ պէտք է այրել, ինչպէս նաև Շարան պէյի շուկան»[2]:

Կ. Փանոսյանը հետազոտեց ոչ միայն Վանի հրդեհի մանրամասնությունները, այլև տպագրեց մի քանի այնպիսի թղթակցություններ, որոնց մեջ բացահայտվում էին քրդերի շահատակությունները, վասպուրականցիների կրած զրկանքները, խիզախելով նկարագրեց հայկական վանքերի ավերված վիճակը, վանականների կրած զրկանքները: Եղլդզի պալատը անմիջապես խափանեց հայատառ թուրքերենով հրատարակվող թերթը, բանտարկեց Կարապետ Փանոսյանին իբրև «մտքեր գրգռող սուտ լուրեր հրատարակելով...»[3]:

«Փորձի» թղթակիցը հաղորդում է, թե «վեց ժամուան ընթացքում 600 խանութից աւելի այրուեցան...»[4], ամբողջ գիշերը զինվորները, խառնիճաղանջ ամբոխը կողոպտում էին խանութները և նոցա դժբախտ տերերին ծեծում: Մի քիչ անց նույն ամսագիրը գրում է. «Այս զարհուրելի հրդեհի և աւազակութիւնների պատճառած վնասը հաշվում են մոտ 500.000 անգլիական լիրա, ահագին կորուստ է մի քաղաքի համար, որ հազիւ 35-40.000 բնակիչ ունի»[5]:

Հրդեհից հետո երկու ամիս շարունակ փակված մնացին հայկական դպրոցները: Վախեցած հայերը տներից դուրս չէին գալիս: Շուկան

---

[1] *Յ. Կ. Ճանկիւլեան,* Յիշատակներ հայկական ճգնաժամէն, Կ. Պոլիս, 1913, մասն Ա, էջ 14:

[2] Նույն տեղում, էջ 16:

[3] *Սարուխան,* Հայկական խնդիրն և ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում, էջ 198:

[4] «Փորձ», 1878, N 2, էջ 312:

[5] Նույն տեղում, էջ 313:

ամբողջովին դատարկվել, մոխրակույտի էր վերածվել: Երբեմնի հարուստ առևտրականները, ընտանիքը և երեխաները թողնելով բախտի քմահաճույքին, պանդուխտի աստանդական ցուպ էին որոնում:

Գործին որոշ չափով օգնեցին Պոլսում եղած վանեցի պանդուխտները: Նրանք դիմեցին Մ. Խրիմյանին, նրա միջոցով պատրիարքին ստիպեցին բողոքելու թուրքական կառավարությանը, եվրոպական հյուպատոսներին[1]: Կ. Պոլսի ռուսական դեսպանը սուլթանին բողոքագիր ներկայացրեց, կազմվեց հրդեհի գործը քննող հանձնաժողով: Նրա մեջ մտան Մ. Աղաբեկյանը, Մ. Աղաթոնը, Մ. Խրիմյանը:

«Նոր օսմանների» առաջնորդ Միդհատ փաշան ստիպված խոստացավ օգնության ձեռք մեկնել տուժյալներին: Բ. Դուռը մի քանի հազար ղուրուշ փող տվեց հայերին: Մինչև այդ Կարինի վիլայեթի մեջ մտնող Վանը դարձավ անկախ վիլայեթ: Նոր վալի նշանակվեց Հասան փաշան, իսկ նրան իբրև տեղակալ՝ Մարկոս Աղաբեկյանը: Պաշտոնից հանվեցին մի շարք թուրքեր և նույնիսկ հայեր նշանակվեցին նրանց տեղը: Զարմանք առաջացնող այս փոփոխությունների պատճառը վերահաս ռուս-թուրքական պատերազմն էր, Հայկական հարցի հնարավոր բարձրացումը, քրիստոնյաներին սիրաշահելու, կառավարության հերթական շուրջանցի խարդախ քաղաքականությունը: Այդ չնչին զիջումները նույնպես երկար չտևեցին:

Հրդեհի գործը քննող հանձնաժողովը համերաշխ եզրակացության չհանգեց: Հանձնաժողովի անդամներից Մ. Աղաթոնը դեմ գնալով Աղաբեկյանին, Վանի առաջադեմ մտավորականությանը, «այնպիսի տեղեկագիր շինեց,- գրում է Մ. Փորթուգալյանը,- որով թիւրք հասարակութիւնն և զօրքերը կարդարացնէր...: Քննիչ յանձնաժողովի միայն թիւրք անդամները ստորագրեցին այդ տեղեկագիրն, իսկ հայ անդամները չստորագրեցին: Մարկոս Աղաբէկեանը որչափ կրնար դէմ կեցաւ այդ տեղեկագրին, յայտնելով թէ բոլորովին անիրաւ և կողմնակալութեամբ գրուած է: Բ. Դուռն ընդունեց Աղաթօնեանի այդ ստայօդ տեղեկագիրը: Աղաբէկեան պաշտօնէ ձգուեցաւ, Աղաթօնեան վարձատրուցեաւ նորա տեղը անցնելով»[2]:

Գավառահայերի քաղաքական փողհար Մ. Խրիմյանը բողոքի ձայն բարձրացրեց համայն մարդկության առաջ: Նա գրեց «Վանգոյժը», որպես «կուժ մի ջուր իւր այրած հայրենեաց վրայ» սրսկելու համար: Գրքույկը լույս տեսավ Կոստանդնուպոլսում 1876 թվականին: Եղլդզի պալատը կալանավորեց «Վանգոյժը»: Հեղինակը ստիպված իր գրքույկը վերահրատարակեց Թիֆլիսում: Արդյունքն այն եղավ, որ Օսմանյան սահմանադրության համաձայն, սենատի անդամ նշանակված,

---

[1] «Մշակ, 1876, N 50:

[2] *Սարուխան,* Հայկական խնդիրն..., էջ 197, տե՛ս նաև «Մշակ», 1877, հունիսի 27:

ռոճկառու Խրիմյանը հեռացվեց պաշտոնից և զրկվեց լավ ռոճիկից[1]: Ապարդյուն անցան հայերի բողոքները: Թուրք կառավարությունը հասավ նպատակին, ոչնչացրեց վանեցիների հարստության մեծ մասը և մարսեց այն:

Ռուս-թուրքական պատերազմից հետո սկսվեց «բարենորոգչական միջոցառումների» համար հայերի մղած պայքարի նոր շրջանը: Մահմեդական վերնախավի հիշողության մեջ դեռ թարմ էր հայերի օգնությունը ռուսական բանակին, նրա կատարած անկախության փորձերը: Եելդըզը հրապարակով խոստում էր տվել «լավ վարվել» հայերի հետ, սակայն գաղտնի հրահրում էր այրել, կողոպտել նրանց ունեցվածքը:

«Հրանտ» կեղծանվան տակ թաքնված Մկրտիչ Փորթուգալյանը 1882 թ. հոկտեմբերի 2/14-ին Վանից «Մշակ» թերթին հաղորդում է, որ սեպտեմբերի 29-ի լույս 30-ի գիշերը, նրա հաջորդ օրը, մինչև երեկո, այրվեցին Բաղեշի հայկական խանութները, քարվանսարաները, վաճառատները[2]: Լսելով հրդեհի մասին, ժողովուրդը փորձեց գիշերով օգնության հասնել ու մարել այն: Հայտնվեցին թուրքական կայազորի զինվորները: Սրերով նրանք վիրավորեցին 100 մարդու, սպանեցին շատերին և սկսեցին կողոպուտն ու ավերածությունը: Քիչ անց շուկա ներխուժեց մահմեդական ամբոխը և մի կողմից ծայր առավ խանութների թալանը, մյուս կողմից հայերին արգելվեց մարել հրդեհը: Կառավարությունը Թուրքիայի թերթերին հրամայեց այդ մասին լուրեր չտպագրել: Մի քանի եվրոպական թերթերի թղթակիցներին էլ հավատացրեց, թե հրդեհը Ուբեյդուլահի մարդկանց գործն է:

Բաղեշի հրդեհը լայն արձագանք գտավ հայ պարբերական մամուլում: «Մասիս», «Մշակ», «Արձագանք», «Մեղու Հայաստանի» և այլ թերթերի արևմտահայ ու արևելահայ թղթակիցները միաբերան վկայեցին, որ հրդեհին տեղյակ է եղել սուլթանական կառավարությունը: Ճիշտ է, այրվել էին նաև թուրքերի խանութները, սակայն նրանք գրեթե վնաս չէին կրել: Ժամանակին իմանալով հրդեհի մասին, մահմեդականները վրա էին հասել, փրկել իրենց ապրանքները, ավելին՝ առիթից օգտվելով՝ կողոպտել հայերի խանութները: Մեկ օրում հայերի հարստության մեծ մասը անցավ թուրքերի ձեռքը, աղքատացավ ու սնանկացավ Բաղեշի հայ վաճառականությունը: Քաղաքի հայերը պատգամավորություն ուղարկեցին Կարին, բողոքեցին Բաղեշի քաղաքապետի դեմ: Սակայն ապարդյուն անցավ նրանց գանգատը: Շրջելով հրդեհված շուկայում, Սեֆիլյան Մկրտիչը հայհոյեց թե՛ հայ ազգայնականներին և թե՛ թուրք պաշտոնյաներին, որոնք հրդեհի ժամանակ «անտարբերություն ցուցաբերեցին»: Նրան բանտարկեցին, քիչ հետո բաց

[1] *Սարուխան,* Հայկական խնդիրն..., էջ 198:
[2] «Մշակ», 1882, N 198:

թողեցին, խուսափելով հայկական զայրույթի պոռթկումներից[1]:

Այսպիսով, Համիդի կառավարությունը, Արևմտյան Հայաստանի թուրք կառավարիչները, մահմեդական նորաստեղծ բուրժուազիան ընդհանուր գրոհի էին անցել հայ ժողովրդի, առավել ևս գավառի առևտրաարդյունագործական դասի դեմ: Հալածանքներն արդեն հետապնդում էին ոչ միայն տնտեսական, այլ նաև հեռուն գնացող քաղաքական լուրջ նպատակներ: Եելդըզը կորցրել էր Բուլղարիան: «Հայկական հարցը» ներքին հարց լինելուց դուրս էր եկել միջազգային ասպարեզ: Թուրքիան վախենում էր Արևելքի իր հենարանի՝ Փոքր Ասիայի կորստից: Համիդը ծրագրել էր կայսրության արևելյան նահանգներում նոր հաղթանակների հասնել, սակայն նրա առաջ որպես պատնեշ կանգնում էր հայ ժողովուրդը, որի «տերը», գոնե դիվանագիտական փաստաթղթերով, արդեն Բ. Դուռը չէր, այլ ինքը «ժողովուրդը» և «մեծ պետությունները»: Սուլթան Համիդը ձգտում էր ամեն կերպ սրել հայ-քրդական, հայ-թուրքական հարաբերությունները, գաղտնի հրահանգավորումներով ոչնչացնել հայերի ունեցվածքը, մահմեդականներին նախապատրաստում էր ապագա ահավոր ծրագրերի իրականացմանը:

Կերպարանափոխվում, նոր ու «հայաջինջ» բովանդակություն էր ստանում ***հայ-թուրքական*** խնդիրը: Ունենալով սոցիալական բազմապիսի երանգներ, դարավերջին այն հիմնականում քաղաքական բովանդակություն էր ստանում: Սոցիալական կեղեքումից զատ, կայսրությունը ջանքեր չէր խնայում երկրից գաղթեցնելու, մահմեդականացնելու, պարբերաբար ջարդելով շարքից հանելու մի ժողովրդի, որին Սան Ստեֆանոյի դաշնագիրը իրավատեր էր հայտարարել իր հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի վրա: Եելդըզի խորհրդատու թուրք բուրժուազիայի գաղափարախոսները սուլթանին ցուցում են տալիս գրգռելու խաժամուժ ամբոխին, խաղալով նրա մտայնության, ազգային-կրոնական լարերի վրա, ավելի սրելու հայ-թուրքական հարաբերությունները: Վերջիններս օգտագործում էին հետամնաց մոլեռանդ քուրդ բեկերին, նախապատրաստում մաշեցնելու, բնաջնջելու հայությանը, նրան հասցնելով մի այնպիսի վիճակի, որ հրապարակից հսպառ հեռացվեր կայսրությանն «սպառնացող վտանգը» բարենորոգումների ծրագրի կենսագործումը: Այնքան էին սրվում կառավարության, թուրք վերնախավի ու քրիստոնյա ժողովուրդների հարաբերությունները, այնքան անտանելի էին դառնում քաղաքական սահմանափակումները, որ հայ առաջավոր մտավորականները կարծում էին, թե այլևս անհնար էր նման վիճակով շարունակել գոյությունը: Մեկընդմիշտ վերացվում էին Թուրքիայի քաղաքականության հետ համակերպվելու

[1] Տե՛ս «Մշակ», 1882, նոյեմբերի 21, N 216, համեմատիր «Արձագանք», 1882, N 41:

հնարավորությունները: Գնալով, բնականաբար, ուժեղանում էին հայ ազատագրական շարժումները:

Հարց է ծագում, թե ինչպիսի՞ դիրք բռնեց գավառահայ առևտրական բուրժուազիան այդ շարժման նկատմամբ: Հասկանալի է, որ ճնշված ազգի արդյունաբերական բուրժուազիան պետք է մասնակցի ամեն մի ազգային-ազատագրական շարժման: Հայ արդյունաբերողները, *արհեստավորությունը* անգիջում կերպով Թուրքիայի հնգդեպ կանգնած էին ընդդիմադիր դիրքում: Խնդիրն այս կողմից անվիճարկելի է: Բայց չէ՞ որ Արևմտյան Հայաստանում նրանք քիչ էին, թույլ, առևտրականների համեմատությամբ տնտեսապես սակավուժ, հետևաբար չէին կարող միայնակ ղեկավարել ազգային համընդհանուր շարժումը:

1870-80-ական թվականներին օգնության է հասնում *գավառահայ առևտրական բուրժուազիան:* Նրա ունեցվածքը մոխրակույտերի էր վերածվում, կյանքն ամեն րոպե վտանգի տակ դրվում, առևտրի հնարավորությունները սահմանափակվում: Ավերածությունների ու կաշկանդումների նման փորձերը, Թուրքիայի քաղաքական նոր կուրսի բացահայտումը այդ բուրժուազիային մղում էին դեպի ժողովուրդը, դեպի ընդհանուր գավառահայությունը, նրա տրամադրություններին ազգային-քաղաքական երանգ հաղորդում: Գավառահայ նորաստեղծ առաջադեմ մտավորականության կարծիքով մնում էր պայքարի մարտակոչ նետել, ժողովրդին տանել դեպի մարտադաշտ, նրա օգնությամբ ու նրա հետ միասին թոթափել արդեն անտանելի դարձած օտարի տիրապետությունը, դիմակայել սուլթանի քաղաքական այն կուրսին, որից արյան հոտ էր փչում, որը պատմական կարճ ժամանակամիջոցից հետո գերեզման էր առաջնորդելու արևմտահայության հոծ բազմությանը:

Հասկանալի է, որ արևմտահայ ազատագրական շարժման մեջ բուրժուազիայի, որպես այդ շարժման ղեկավարի ու գաղափարախոսի, խաղացած դերը շեշտելիս պետք է նկատի ունենալ *գավառահայ ազգային* բուրժուազիան, որն անմիջապես կրելով սուլթանական կառավարության հայահալած քաղաքականության ծանրությունը, զրկվելով առևտրի ու արդյունագործության հնարավորությունից, կորցնելով հարստությունը (հրդեհների ու թալանի միջոցներով), ձգտում էր ազգային պետականության ստեղծման: Դրանով իսկ նա կստանար ոչ միայն քաղաքական իշխանությունը, այլև կգրավեր տնտեսական բարձունքները:

6. Ազգային ճնշումները Թուրքիայում, հայերի իրավակրկման նոր քաղաքականությունը

«Թանզիմաթի» խոստումները չէին կարող գործողության մեջ դրվել ֆեոդալական բռնապետական տերության տիրապետության սահմաններում և վերացնել կրոնական ու ազգային խտրականությունը Թուրքիայում, հավասարության նշան դնել քրիստոնյա ու մահմեդական ժողովուրդների իրավական դրության մեջ: Կատարված բարեփոխությունները, հայերի կարճատև աշխուժացումը ժամանակավոր ու անցողիկ բնույթ ունեին, իսկ հիմնական խտրականությունը, կառավարության կողմից հրահրվող ազգամիջյան ատելությունը մնում էին վերջին սուլթանների, հատկապես արյունռուշտ Աբդուլ Համիդի վարած քաղաքականության հիմնանպատակը: Այդ բանն ավելի դիպուկ բնորոշեց Մ. Խրիմյանը:

1869 թվականին Կ. Պոլսի հայոց պատրիարք ընտրվեց Մ. Խրիմյանը: Մեծ եպարքոս Ալի փաշան ճիշտ նկատեց, թե «*այդ եկեղեցականը շատ տաք գլուխ հայու համբավ կվայելե*»: Գրիգոր Օտյանն այդ դիտողությունը լսելով, պատասխանեց. «Բանաստեղծ մըն է, ես անոր երաշխավոր եմ»: Եպարքոսը զիջեց, իր մոտ հրավիրեց Խրիմյանին, զրույց ունեցավ նրա հետ, ապա առաջարկեց բանավեճ գրել և ներկայացնել Բարձրագույն Դռանը: Պատրիարքը հրաժարվեց եպարքոսի առաջարկությունը կատարելուց, սակայն չհրաժարվեց արևմտահայության վիճակը թեթևացնելու համար պայքարելու մտադրությունից: 1870 թվականի նոյեմբերի 21-ին սուլթանի նստավայրում, Ազգային ժողովի խոսանցուկ պատերի մեջ, տարբեր հայացքներ ու համոզումներ համահավաքող երեսփոխանների ներկայությամբ, Խրիմյանը հայտարարեց. «Հայաստանի մէջ հարստահարութիւնը միշտ կայ և պիտի շարունակէ, քանի որ հոն երկու եղբայր, երկու ժողովուրդ կը բնակին, որոնց մէկին ձեռք Աւետարան և միւսին ձեռք Ղուրան կայ: Ղուրանի հաւատացեալը այնպէս կը կարծէ թէ նա որ հաւատք չընծայէր անոր, արժանի է հարստահարութեան, իսկ Աւետարանը կըսէ՝ ուրիշ իրաւունք մը չունիս, այլ միայն պիտի հարստահարիս մինչ ի գերեզման»[1]: Խրիմյանը պատճառաբանում էր, որ թուրքը և քուրդը սուր ունեն՝ կհարվածեն, հայն ավետարանով միայն կարող է իր մարմինը տանջել: Երբ վերացվեն կրոնական խտրականությունները, երբ հայը իրավունք ստանա զենք կրելու, պաշտոն ստանձնելու, մահմեդականին հավասար դասվելու, երբ «ուժ ստեղծվի», անկասկած կնվաճվի ու կճանաչվի նաև իրավունքը: «Պիտի խնդրեմ կառավարութենէն,- շարունակում է նա,- և աղաչեմ Բարձր. Եպարքոսէն որ Ղուրան և

[1] *Մ. Ալպոյաճեան,* Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, էջ 1111-1112:

Աւետարան աղօթարաններու մէջ մնան, օրինագիրքը հանրանայ ընկերական կենցաղավարութեան մէջ և հաւասարութիւն տիրէ: Հիմա իմացաք անշուշտ հարստահարութեան բուն պատճառը որ մինչև արմատիքը չխլուի, չէք կարող դոյզն ծառայութիւն մը ընել ձեր հայրենեաց»[1]: Կրոնական խտրականությունը, պաշտամունքի իրարամերժ հակադրությունը համարելով հայերի իրավազրկության, սոցիալական կեղեքման բուն պատճառը, Մ. Խրիմյանը գոտեպնդվեց պայքարի: Սակայն ապարդյուն անցան նրա ջանքերը, ի դերև ելան բանաստեղծական հույսերը:

Քրիստոնյաների ու մահմեդականների միջև դրված կրոնական խտրականությունը գնալով խորացավ և բացահայտորեն դարձավ վերջին սուլթանների վարած քաղաքականության հենքը: «Թանզիմաթը» չնչին փոփոխություններ մտցրեց այս բնագավառում, իսկ Աբդուլ Համիդը գահակալության առաջին իսկ տարում ջնջեց նախորդների արած «բարերարությունները» և աներևակայելի չափերի հասցրեց ազգային ճնշումները: Դիմենք փաստերին:

1856 թվականի փետրվարի 18-ին սուլթան Աբդուլ Մեջիդը համարյա վերակրկնեց 1839 թ. տված «Գյուլիհանեի հաթթը շերիֆը»: Ֆեսակիր ասիացին Եվրոպայից ներմուծում էր կայսրությանը «վտանգաբեր» մաքսանենգ ապրանքներ և «լիբերալ օրենքներ», սակայն խիզախությամբ, քանի որ գիտեր, թե դրանք երբեք էլ չեն գործադրվելու: 23 ընդարձակ հոդվածներից բաղկացած *«Հաթթը հումայունի»* նախաբանում կարդում ենք. «Այժմ իմ փափաքս է վերանորոգել և ալ աւելի ընդլայնել այն նոր կազմակերպութիւնները, որոնք հաստատուած են իմ կայսրութեանս արժանապատվութեանը, և քաղաքակիրթ ազգաց մէջ բռնած դիրքին համապատասխանող իրաց վիճակ մը յառաջ բերելու նպատակաւ... *երջանկութիւնը աւելցնել իմ բոլոր հպատակներուս, որոնք իմ աչքիս առջև հաւասար են և հաւասարապէս սիրելի, և որոնք իրարու հետ հայրենասիրական անկեղծ կապերով կապուած են, նաև իմ կայսրութեանս բարգաւաճումը օրէ օր աւելցնելու միջոցներ երաշխաւորել* (ընդգծումները մերն են -Հ. Ղ.)»[2]: Առաջին հոդվածով հպատակների կյանքի, գույքի ապահովություն էր խոստացվում, օրենքի ու դատարանների առջև քրիստոնյայի և մահմեդականի հավասարություն:

Ժամանակին նկատվեց, որ այս օրենքները մնացին թղթի վրա, դիտվեցին իբրև Թուրքիայի եվրոպականացման սոսկ արտաքին կեղև: Չմոռանանք, սակայն, մայրաքաղաքի հայերի դրության որոշ թեթևացումը, դրանով պայմանավորված հասարակական-քաղաքական շարժումների ուժեղացումը: «Թանզիմաթից», փաստորեն, օգուտ քաղեց գաղութահայ բուրժուազիան: Գավառը անտեղյակ մնաց դրան, գավառը գնալով ողբ հյուսեց իր վիճակի մասին: Այդուհանդերձ, թղթի վրա, թե գործողության մեջ, «Թանզիմաթն» «ապրեց» մինչև 1868 թվականը սուլթանական օրենսդրական նոր ակտերը, գրաքննչական կանոնները, «Սահմանադրության» արգելման փորձերը, հայ առաջավոր մտավորականության կրած գաղափարական անդրանիկ ջարդը:

1870-80-ական թվականներին հրապարակված փաստերը, եվրոպացի ու հայ հեղինակների անհամար վկայությունները կասկած չեն թողնում, որ «Թանզիմաթն» արդեն մեկընդմիշտ հանգել էր: Գազանությունների, ոճրագործությունների անթիվ դեպքերը մերթ ցատկում էին «Թանզիմաթի» վրայով, հիշեցնում սուլթանական մռայլ միջնադարը, մերթ էլ, ***անօրինակ*** դառնալով, գրեթե նմանը չէին գտնում ողջ մարդկության պատմության մեջ: «Հայկական հինգ նահանգներում հաստատված է կառավարման գազանային սիստեմ,-գրում է Էմիլ Դիլլոնը,- որի հետ համեմատած հարավային նահանգների ստրկական դաժանությունները հանդիսանում են միայն որպես աննշան չարաշահումներ»[1]:

«Թանզիմաթը» խոստանում էր հպատակների «իրավահավասարություն» դատարանում, սակայն իսլամի դոգմաներով քարացած դաժան իրականությունը հայ և քրիստոնյա մյուս ժողովուրդներին զրկում էր ***վկայության*** իրավունքից: Շարիաթի այս կետը հայերի համար ունենում էր աղետաբեր հետևանքներ: Մահմեդականը կարող էր սպանել, առևանգել, թալանել քրիստոնյային և ապահովապես մնալ անպատիժ[2]:

Վերոհիշյալ օրենքներն իրենց ուժը պահպանում էին «Թանզիմաթից» քառորդ դար հետո: Անկասկած է, որ Թուրքիայում ապրող քրիստոնյաներին Աբդուլ Մեջիդի խոստացած կյանքի ու գույքի ապահովությունը, մահմեդականների հետ հավասար իրավունքները և այլ հրամանագրերը մնացին թղթի վրա և ոչ մի բան չտվեցին գավառահայությանը:

«Թանզիմաթից» տասնամյակներ անց, կառավարությանն ուղղված մի այլ բողոքագրում, պատրիարքը գրում էր. «Թէ որ մահմէտականաց և ոչ մահմէտականաց մէջ խտրութիւն պահող, ատելութիւն արծարծող և մահմէտականաց ստորին կարգի ժողովրդեան ձեռքը զէնք տուող դրութիւն մը կայ, այն ալ ոչ մահմէտականաց վկայութեան չբռնուիլն է: Գիւղի մէջ, շուկայի մէջ, տան մէջ, ուր որ ըլլայ, ոչ մահմէտական մը կը ծեծուի, կը նախատուի... դատարանը պիտի երթան, ո՞վ պիտի վկայէ»[3]:

---

[1] *Ա. Ալպոյաճեան,* Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, էջ 1112:

[2] *Բրոֆ. Կ. Թումանեան,* Պատմութիւն Արևելեան խնդրոյ և առաջնորդ հայկական հարցի, Լոնտօն, 1905, էջ 614:

[1] ***Эмил Диллон,*** Положение дел в Турецкой Армении (Положение армян в Турции), стр. 329.

[2] Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 616:

[3] «Ատենագրութիւնք Ազգային ընդհանուր ժողովոյ», հ. Բ, էջ 473:

Քրդախառն հայկական գավառներում ամենօրյա սպանություններն սովորական երևույթ էին: Դատարանը կամ զափթիեները բոլորովին չէին հետաքրքրվում ոչ սպանողի և ոչ էլ սպանվողի ինքնությամբ, քանի որ հանցագործները բոլոր դեպքերում քուրդ ու թուրք աղաներն էին[1]:

Երկու քրիստոնյաների իրար դեմ դատ բացելը ձեռնտու էր «պետական» քննիչներին: Հարցաքննությունը կատարվում էր գիշերը: Ծեծի, սպառնալիքի և զանազան խոշտանգումների ազդեցությամբ արձանագրությունը կազմում և ապա ստիպմամբ ստորագրել էին տալիս «հանցագործին»: Առավոտյան կաշառքի միջնորդները «հարցաքննության պատճենները իրենց գրպանը և սակարկութիւն կը սկսէին, իւրաքանչիւրին նիւթականին համեմատ, ոչ թէ ազատ ձգելու, այլ հարցաքննութիւնը փոփոխելու և մեղմացնելու համար: Առաջին հարցաքննութիւնը կը պատռուի, երկրորդ մը գրի կառնուի, երբեմն երրորդ մը, չորրորդ մը, միջնորդչէքին համաձայն»[2]:

Ահա թե ինչու քրիստոնյաների համար Թուրքիայում, փաստորեն, դատարան գոյություն չուներ: Իրավացի է Գ. Երևանյանը, երբ գրում է. «...եթէ անիրաւուած կողմը հայ գիւղացին էր, ան մտքէն իսկ չէր կրնար անցնել դատարան դիմելով իր իրաւունքները պաշտպանել աղային կամ անոր խոլամներուն դէմ, որովհետև լաւ գիտէր, որ իր իրաւունքը չստանալէն զատ պիտի ենթարկուէր աւելի մեծ աղէտներու, ուստի կը լռէր ու դատարան չէր երթար»[3]:

Փոխհյուպատոս Դյուպոն 1867 թ. լորդ Դայնոսին գրում էր. «Հայտնի է, որ ռայան հազվագյուտ կամ երբեք չի շահել պրոցեսը (խոսքը դատական պրոցեսի մասին է - Հ. Ղ.) ընդդեմ մահմեդականին»[4]: Հայերի նկատմամբ կատարած իրենց արարքների մեջ քրդերը կատարյալ թողտվություն էին վայելում: «Ի՞նչ է պատահում դժբախտ հայերի հետ, - գրում է նշանավոր արևելագետ Ա. Կրիմսկին,- այդ ամենքին էլ հայտնի է. նույնպես հայտնի է բոլորին, որ գազանությունների մեղսագործները ոչ միայն չեն արժանանում պատժի, այլ, ընդհակառակը, կառավարությունից պարգևներ են ստանում: Մինչև անգամ Ասորիքում, այն երկրում, որը տաճկական ուրիշ գավառներից քրիստոնյաների համար ավելի ապահով է համարվում, մահմեդականը, սպանելով քրիստոնյային, անպատիժ է մնում. սկզբում մի որևէ հյուպատոսի պահանջով նա բանտ կնստի, իսկ երեք օրից հետո տաճիկ կառավարության շնորհիվ ազատ կհամարվի (մանավանդ եթե կաշառք էլ ստանան), և բոլորին ծանոթ մարդասպանը հպարտ կերպով անցուդարձ

[1] *Գ. Ս. Երևանեան,* Պատմութիւն Զարսանցագի հայոց, էջ 148-149:
[2] *Ա. Ալպոյաճեան,* Պատմութիւն հայ Կեսարիոյ հ. Բ, էջ 1366:
[3] «Պատմութիւն Զարսանցագի հայոց», էջ 148:
[4] "Положение армян в Турции", стр. 135.

կանի, օրինակ, այնպիսի բազմամարդ փողոցով, ինչպես Բեյրութի Բյուրժն է»[1]:

Հայերի քաղաքական իրավազրկությունն ավելի վատթար հետևանքներ էր ունենում: Մոլեռանդ մահմեդականները քրիստոնյա հպատակների հետ վարվում էին ցանկացած եղանակով, անարգում նրանց, վիրավորում, թալանում և անպատիժ հեռանում: Այդ մասին Վասպուրականի և ողջ արևմտահայության սոցիալ-քաղաքական դրությանը քաջատեղյակ Գ. Սրվանձտյանցը գրում էր. «Թուրքաց մոլեռանդութիւնը և անողորմութիւնն այնչափ է, որ կրնան հայ մը ձիէն վար առնել, շուկայի և փողոցներու մէջ անտեղի պատճառով մը, կամ, ի՞նչ պէտք է պատճառ, մի՞թէ հայ լինելը բաւական պատճառ չէ՞, կը քաշեն, կը գանակոծեն: Եթէ թուրք մը բան գնած է հայէ մը, իրաւունք չունի հայն ստակ պահանջելու, եթէ վճարէ թուրքն՝ շնորհ մ'է, եթէ ոչ՝ իւր իրաւունքն է»[2]:

Ազգային ճնշումներն ուժեղացան և սոսկալի կերպարանք ստացան Բեռլինի վեհաժողովից հետո: Ռուսական բանակի երկրից հեռանալու հաջորդ օրը սկսվեց հաշվեհարդար անպաշտպան արևմտահայության հետ: «Հայերը մտան նոր շրջան,- գրում է «Մշակը»,- ոչ սգի, լացի, բռնութեան ու ստրկութեան, այլ նահատակութեան, կորստեան ու բնաջնջութեան, վասնզի արդէն սրվում են բարբարոսների եաթաղանները Տաճկաստանում մնացող հայերի համար, որոնք տեսնելով իրենց մահը, մնացել են յուսակտուր, բազուկները երկինք տարածած»:

Բեռլինի վեհաժողովի շրջանում թուրքերն իրենց քիչ ավելի զուսպ էին պահում, նպատակ ունենալով «սիրաշահել» հպատակներին, խաբել Եվրոպային և, որքան հնարավոր է, տերիտորիալ ու նյութական քիչ կորուստներ ունենալ: Կառավարությունը նույնիսկ քրդերին ժամանակավորապես զսպելու փորձեր էր անում: Պատերազմից հետո, Բեռլինի կոնգրեսի օրերին, երբ համաշխարհային մամուլի քննարկման առարկա էր դարձել Արևելյան և նրա անբաժան մասը հանդիսացող Հայկական հարցը, երբ ռուսական բանակը, արևելահայ զինվորական խմբերը, հայ գեներալ Լազարևը նստած էին հայկական գավառներում Վանում, Կարինում, Խնուսում, երբ եվրոպական հյուպատոսարաններն ու փոխհյուպատոսարանները ստիպված էին Արևմտյան Հայաստանով մեկ, Թուրքիան չէր կարող նախկին ձևով վարվել հպատակների հետ: Ընդհակառակը, խորամանկ սուլթանը ուզելով ոչնչացնել ռուսասեր գյավուրին, արտաքնապես փորձում էր նրա «նոր բարեկամի» դերն ստանձնել:

[1] *Ա. Կրիմսկի,* Մահմեդական աշխարհն ու նրա ապագան, 1906, Վաղարշապատ, թարգմանեց Բաբգեն վարդապետը, էջ 105-106:
[2] *Գ. Սրվանձտեանց,* Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ, մասն Ա, էջ 162-163:

Դեռևս պատերազմի նախօրեին Համիդն ընդունեց Ներսես Վարժապետյանին, շքանշանով պարգևատրեց, խոստումներ արեց նրան: Կեղծապատիր արարողությունը կրկնվեց պատերազմի ժամանակ և Բեռլինի վեհաժողովից քիչ առաջ: Արյունարբու սուլթանն, ամբողջ մաղձը թաքցնելով, որպես հավասարը հավասարի հետ, հոտընկայս էր դիմավորում Վարժապետյանին, խոստանում ռեֆորմներ «հպատակների երկրում»: Բանն այնտեղ էր հասել, որ Ներսեսը հանդգնաբար սուլթանի ներկայությամբ մերժեց նրա առաջարկը և հայտարարեց, թե ինքը պետք է դիմի եվրոպական դիվանագետներին, մեծ պետություններին: Արևելցի պալատականի վարպետությամբ Համիդը թաքցրեց զայրույթը: Նա իր և պատրիարքի հանդիպումը, որպես «բարեկամական ցույց», ընդարձակ և ուռճացած ձևով թուրքական, եվրոպական, նույնիսկ Պոլսի հայկական որոշ թերթերի միջոցով ներկայացրեց համաշխարհային հասարակայնությանը: Դրանով սուլթանը ձգտում էր շեղել առաջադեմ մարդկության ուշադրությունը, հանգստացնել հայ ժողովրդին, ժամանակ շահել, ուժեր հավաքել՝ նոր հարձակումների համար:

Ռուսական բանակի՝ Արևմտյան Հայաստանում գտնվելու պահին, արևմտահայերը ակումբներ հիմնեցին, հրազեն էին գործածում, մահմեդականների հետ վիճում, թատերական ներկայացումներ կազմակերպում, զորախաղեր անում: «Գյավուրը աչք էր» բացել, «իրեն մարդ էր ճանաչեցնել տալիս»: Անկարող լինելով հայերի հետ նախկինի պես վարվել, թուրք պաշտոնեությունը, ատամները կրճտացնելով, մաղձը մթերելով, փաստերը հաղորդում էր կառավարությանը և սպասում նոր հրահանգների, հարմար առիթի՝ քիչ առաջ ունեցած անսահմանափակ իշխանության վերականգնման համար: Ժամանակը և դեպքերը կատարեցին նրա բաղձանքները:

Բեռլինի կոնգրեսը մասամբ ոչնչացրեց հայերի դեպի Եվրոպա ունեցած պատրանքները: Արևմտահայության արյան գնով Կիպրոսը կորզելուց հետո Անգլիան բացահայտեց թուրքապաշտպանի իր դիրքը: Իբրև նախնական հատուցում, դիվանագիտական փաստաթղթերում և անգլիական մամուլում Հայաստան անունը փոխարինվեց Քուրդիստանով: Դիզրաելին և Սոլսբերին, մոռանալով պառլամենտի նիստերում իրենց արտասանած ճառերը, ստանձնեցին Թուրքիայի ձայնափողի դերը: Պատշաճը հատուցելով, սուլթանը դարձավ Անգլիայի բարեկամը:

Տարաբախտաբար ցարական Ռուսաստանն էլ իր հաղթանակի պտուղները չկարողացավ վայելել: Բեռլինի կոնգրեսի ժողովասրահներում մղած դիվանագիտական սառը պատերազմում պարտություն կրելուց հետո, հաջորդ երկու տարիներին, Ռուսաստանը տակավին չէր հրաժարվել Արևմտյան Հայաստանին տիրանալու մտադրությունից, բայց պայմանով, որ այն միակցեր կայսրությանը:

Բուլղարիայի անկախությունը ցնցեց ռուսական արքունիքը: Հոդս

ցնդեցին նրա ծրագրերը: «Սլավոնների փրկության անվամբ թափված արյունը» ոչինչ չբերեց կայսրությանը: Ցարը և արքունիքը «հասկացան», որ եթե հայերն էլ ազատագրվեն Թուրքիայի լծից, կարող էին միավորվել և անկախ պետություն ստեղծել: Այդ դեպքում Ռուսաստանը ոչ միայն չէր ստանա Հայաստանի արևմտյան հատվածը, այլև սահմանագլխին կստեղծվեր մի անկախ պետություն, որտեղ և որոնց միջոցով կուժեղանար ծովակալ տերության Անգլիայի ցամաքային հզորությունն ու ազդեցությունը:

Այդ էր հիմնական պատճառը, որ 80-ական թվականների սկզբից ցարական Ռուսաստանը ևս փոխեց իր վարած նախկին քաղաքականությունը «Հայկական հարցի» նկատմամբ: Կովկասի կառավարիչը, արքունիքից հրահանգավորվելով, կանչեց Գր. Արծրունուն և հասկացրեց, որ այլևս պետք չէ «խառնվել Թուրքիայի գործերի մեջ» գրգռել արևմտահայությանը: Ցարիզմի արևելյան քաղաքականության մեջ սկսվեց «Հայկական հարցի» դրական լուծման համար աննպաստ ու հետադիմական շրջադարձի մի ժամանակաշրջան:

Այդ քաղաքականության նպատակը պարզ էր ու բացահայտ: Անգլիան, ինչպես նաև եվրոպական մյուս վեհապետությունները դեպի հայերն ունեցած իրենց նախկին «վերաբերմունքն» արմատապես փոխել էին: Հայտնի էր դառնում, որ քրիստոնյա մեծ պետությունները հետամուտ էին ոչ թե հավատակիցներին փրկելուն, այլ Թուրքիայում տնտեսական ու ռազմաստրատեգիական նոր հենակետեր գրավելուն. նրանք հայերին, փաստորեն, դիտում էին իբրև մանրադրամ իրենց հեռամետ ծրագրերի իրագործման ճանապարհին:

Թուրքիայում վաճառահանման շուկաներ նվաճելու նպատակով, նեղուցներն օգտագործելու համար, երկու հզոր ախոյանները սուլթանին փոխադարձ զիջումներ էին անում, մանավանդ, երբ հանդես էր գալիս նրանց նոր թշնամին՝ «մահմեդական աշխարհի» բարեկամ կայզերական Գերմանիան: Դիվանագիտական պայքարում շահում էր Թուրքիան, երբեմն թաղվում, երբեմն ջրի երես էր դուրս գալիս «Հայկական հարցը»:

Օգտվելով երեկվա իր «կաշկանդիչների», այսօրվա «բարեկամների» բացահայտ թողտվությունից, Համիդն սկսեց դիվանագիտական ճարպիկ մի խաղ՝ մերթ բանակցություններ վարելով հայկական բարեշորոգումներ մտցնելու շուրջը, մերթ հաշվեհարդար տեսնելով Եզեղոզի աչքում «անբարեհույս» ճանաչված անձնավորությունների հետ, հետամտելով ոչնչացնել ապստամբական տրամադրություններով համակված հայ գործիչներին, աքսորել «ռուսասիրության» փոքրիկ նշաններ ցույց տվողներին:

Համիդի (1876-1908) գահակալության տարում գործադրության մեջ դրվեց Միդհատ փաշայի ջանքերով և Գրիգոր Օտյանի մասնակցությամբ ստեղծված թուրքական «Սահմանադրությունը»: Սահմանադ-

ական պառլամենտը հրավիրվեց անդրանիկ նիստի: Երեսփոխաններից առաջինը խոսեց եվրոպական հովերով տարված Ահմեդ էֆենդին: Նրա խոսելու ժամանակ Համիդը սարսափ ու զայրույթ էր ապրում, որը գնալով կուտակվեց, և այլևս չկարողանալով համբերել, սուլթանը բռնկվեց ու կողքին նստած մեծ եպարքոսին ասաց. «Ես սխալվել եմ իմ հորս, Աբդուլ Մեջիդին նմանիլ ուզելով, որ ցանկանում էր բարեկարգել համոզելով և ազատական հաստատություններ մտցնելով: Ուստի, ես պիտի հետևեմ իմ պապի սուլթան Մահմուդի օրինակին: Ես էլ նրա նման տեսնում եմ, որ Աստուծո ինձ հանձնած ***ժողովուրդները միայն բիրտ ույժի միջոցով կարելի է քալեցնել*** (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[1]:

Պառլամենտի առաջին գումարման անդրանիկ նստաշրջանից հետո սուլթանը ամեն կերպ ջանում էր «խորհրդարանն ընդհատել»: Սակայն դժվար էր միանգամից խեղդել «սահմանադրական շարժումը», այն դեպքում, երբ Համիդի ու նրա գեներալների ռազմաքաղաքական ապաշնորհության պատճառով երկիրը արյան ծով էր դարձել: Ուստի, իրեն գահ բարձրացնող Միդհատ փաշային սուլթանը ***պալատ «հրավիրեց», առանց բացատրություն պահանջելու կամ նույնիսկ երեսը տեսնելու, նավ դնել տվեց և աքսորեց»***[2]:

Նախքան Սահմանադրության գլխատումը, գլխատվեց սահմանադրական շարժումը: Բայց դրանով չվերջացավ: 1877 թ. հունիսի 28-ին նորընտիր նախագահ Ահմեդ Վեֆիկին սուլթանը հրամայեց փակել նստաշրջանը, ցրել պալատները: Նույն տարվա աշնանը հրաման տրվեց նոր ընտրությունների: Դեկտեմբերի 13-ին սկսվեցին պալատների նիստերը: Նկատվեց բուրժուական օպոզիցիայի ուժեղացում ընդդեմ սուլթանի ու նրան հենարան դարձած ֆեոդալական ռեակցիայի: Համիդը որոշեց մեկընդմիշտ ազատվել սահմանադրության «փորձանքից», ապահովել միահեծան ռեժիմը: 1878 թվականի փետրվարի 18-ին 11 երեսփոխաններ կանչվեցին ոստիկանություն և բանտարկվեցին: Մնացածներին առաջարկվեց 24 ժամվա ընթացքում թողնել Դոլմա-Բահչեի ապարանքը: Վերջնականապես արգելվեց Սահմանադրությունը:

Ժողովրդի դժգոհությունից մայրաքաղաքն ալեկոծվում էր: Ընդդիմադիր ուժերը Ալի Սուավիի գլխավորությամբ փորձեցին բանտից ազատել Համիդի եղբորը Մուրադին և գահ բարձրացնել նրան: Սուլթանը կանխեց նրանց, ներոնական եղեռնագործությամբ սպանեց եղբորը, աքսորեց «դավադիրներին»: Այս հանգամանքները ծայրահեղ կասկածամիտ դարձրին մարդակուլ հրեշին:

Գահակալության առաջին ամիսներից նա ամեն տեղ երևակայական դավադիրներ էր նշմարում, ջանում «ապահովել» իր անվտանգությունը, շատացնել հսկիչների և հսկիչների հսկիչների, պալատի փականքների, դռների, երկաթյա դարպասների թիվը: Հազարավոր զոհերի, մասնավորապես Միդհատի արյունն աներևույթ ուրվականների նման հետևում էին նրան: Միշտ մռայլ և մտասույզ էր Եըլդըզի արքան:

Համիդի կասկածամտությունը բացահայտ էր դեռևս 1877 թվականին: 1877 թ. մի արևոտ օր որոշված էր սուլթանը «...ծովի վրայ պտոյտ պիտի անե, յանկարծ նա փոխում է միտքը. հրամայում է, թէ պատրաստութիւն տեսնեն իր որևէ ցամաքային քէօշքն այցելելու և վերջին վայրկեանին փոխում է իր որոշումն և նաւակ է նստում ծովով շրջագայելու: Իր պալատի բոլոր սրահներում,- գրում է Համիդի կենսագիրը,- բոլոր գաւիթներում պահակներ են դրուած: Խալիֆի բնակած մասի բոլոր դռների վրայ ծանր կողպէքներ են դրուած. անհիմն երկիւղը պաշարել է ամբողջապէս նրա միտքը»[1]:

Սկսվեց ռուս-թուրքական պատերազմը: Կառավարության «խնդրանքով» ևս մի քանի տասնյակ թնդանոթներ պատրաստվեցին Եվրոպայում և ուղարկվեցին Կոստանդնուպոլիս: Ռուսական զորքերը գրավում էին Թուրքիայի քաղաքներն ու բերդերը: Ստացված թնդանոթները փոխանակ ամբողջովին ռազմադաշտ ուղարկելու, Աբդուլ Համիդը մի մասը իր պալատի բարձունքի վրա շարել տվեց, բերանները մայրաքաղաքին ուղղված[2]: Վիկտոր Հյուգոյի դիպուկ բնութագրությամբ, գահակալության սկզբից երկյուղամոլ ոճրագործը 30 տարի շարունակ փակված մնաց իր պալատի խորքերում, ինչպես ***կայենն իր գերեզմանում:***

Բուլղարիայի ազատագրումից հետո կասկածամոլ բռնավորը ազգային շարժում, ապստամբություն էր փնտրում Արևմտյան Հայաստանի ամեն մի գավառում, ամեն մի անկյունում: Կասկածելի էին թվում հայ մտավորականները, խմբագիրները, հրապարակախոսները, գրողները, բանաստեղծները, Ռուսաստանից եկած ամեն մի ճանապարհորդ, եվրոպական մուճակով Տաճկաստան այցելող ամեն ուղևոր: Լևոն Սարգսյանի այցելության հետ կապված խուզարկությունները, գեղագետի վրձնով կերտված «Կայծերի» հերոսների, մասնավորապես,

[1] ***Սարուխան,*** Հայկական խնդիրն ու Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում, էջ 346, տես նաև «Le Temps», 23 փետրվարի 1878:

[2] ***Բրոֆ. Կ. Թումանեան,*** Պատմութիւն արևելեան խնդրոյ և առաջնորդ հայկական հարցի, էջ 511, տես նաև ***Ю. А. Петросян,*** "Новые османы" и борьба за конституцию 1876 г. в Турции, стр. 125: Միդհատը 20 ամիս աքսորավայրում մնաց (Եվրոպայում), 1878 սեպտեմբերի 11-ին Համիդի հրավերով վերադարձավ Սիրիա: Սկզբում վարեց Սիրիայի, ապա՝ Զմյուռնիայի նահանգապետի պաշտոնը: 1881 թ. հունիսի 24-ին աքսորվեց Արաբիայի Թայիֆ քաղաքը: 1883 թվականի ապրիլի 26-ին Համիդի գործակալները գիշերով մտան աքսորականի սենյակը և խեղդամահ արեցին նրան: Արյունարբու սուլթանը թուրքի ձեռքով խեղդել տվեց սահմանադրական Թուրքիայի առաջնորդին:

[1] ***Սարուխան,*** էջ 348, տես նաև «Le Temps», 1877, 19 փետրվարի:

[2] Նույն տեղում:

Ասլանի, Կարոյի ուղևորության հետ կապված հետապնդումների մանրամասնությունները, «Շահենն ի Սիպիր»-ի բազմաթիվ էջերը այս հարցի վավերական վկայագրերն են: Սուլթանը չէր պարփակվում մայրաքաղաքով, նրա ոստիկանները խուզարկում ու ստուգում էին ողջ կայսրությունը: Այս ամենը հանգեցնում էր զանգվածային բանտարկությունների, աքսորի, սպանությունների:

Ոչնչացնելով կամ հայրենի բնաշխարհից արտաքսելով հայ մտավորականներին, Համիդը թուրք վերնախավին, մահմեդական հոգևորականությանը լայն հնարավորություններ էր ընձեռում իրականացնելու երիտասարդ թուրքերի առաջադրած այն ծրագիրը, թե Թուրքիան կանգուն և «անվրդով» պահելու համար հրամայական պահանջ է դարձել կայսրության մեջ ապրող այլազգիներին ուծացման ենթարկելը: Տակավին 1869 թվականին Ֆուադ փաշան թուրքական նորաստեղծ բուրժուազիային և կառավարությանը պատգամում էր. «Ներքին գործերուն մէջ մեր բոլոր ջանքը միմիայն մէկ նպատակի մը ձգտելու է, որ է *զանազան ցեղերու ի մի ձուլում*...: Ասկէ յետոյ այդ մեծ կայսրութիւնը ոչ յոյներուն, ոչ ալ սլաւոններուն կրնայ վերաբերիլ, ոչ մի կրօնքի և ոչ ալ մէկ ցեղի... *Գարատաղ մը, սերպ իշխանապետութիւն մը, Հայաստանի թագաւորութիւն մը, իրենց և աշխարհի ամենափոքր օգուտ մը չընծայելէ զատ, առաւել կամ նուազ ցնորական երազներ են*... (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]:

Մահից քիչ առաջ կազմված Ֆուադի ընդարձակածավալ այս կտակը դարձավ թուրքական կառավարության վարած ազգային «նոր» քաղաքականության վիմաքարը, մանավանդ երբ Բ. Դուռը տեսավ, թե Բուլղարիան, Չեռնոգորիան, Սերբիան պայքարի ինչպիսի անօրինակ հերոսություն ցուցաբերեցին: Հայերի ուծացման քաղաքականությունը մտավ նոր փուլ, որի իրականացումը հանձնարարվեց իսլամ շեյխերին, քուրդ աղաներին, տեղական կառավարիչներին:

Գավառից պանդխտողներից վեցը, Ադրիանապոլիս տանող երկաթգծի վրա աշխատելիս, չեն կարողացել իրենց գոյությունը պահպանել, ուստի չորս կին, երկու 16-18 տարեկան երիտասարդներ մահմեդականություն են ընդունել[2]: «Խաղտիք և Բարձր Հայք *թրքացած*, մորթուած, գաղթած և աքսորուած կը հեծէ այսօր,- գրում է Սրվանձտյանցը Ն. Վարժապետյանին:- ...Քեղքիթ գաւառն այսօր ունի... 98 գերեզմանոց աւերակ, այդ ընդարձակ գաւառին մէջ միայն 15 տուն հայ մնացեր է...»[3]: Տիգրանակերտի մոտակայքում բնակություն էին հաստատել մի քանի հազար ընտանիքից բաղկացած սասունցիներ, որոնք «...անուանական տաճկութեան տակ բռնաբարուած հայեր...» էին և

[1] «Պատմութիւն հայ Կեսարիոյ», հ. Բ, էջ 1430:
[2] «Մշակ», 1876, N 2:
[3] ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, 3-րդ բաժին, փաստաթուղթ 42:

պարծանքով էին հիշում, թե իրենք սերած են Մամիկոնյան տոհմից[1]: Նրանք շարունակում են գաղտնի խոսել հայերեն, հարգել հայ վանականներին, հաճախել հայոց վանքեր, իսկ մահմեդականություն ընդունելն առերես էր, հարկադրված[2]:

Հայերի մահմեդականացումը ավելի ուժեղ էր արտահայտվում քրդաշատ Վասպուրականի նահանգում: 1872 թ. նոյեմբերին շատախցի քրդերը երկու հայ օրիորդների առևանգում են, տանում լեռները, տաճկացնում և ամուսնանում հետները: «Տեղական կառավարութիւնը առանց քննելու կրօնափոխութեան պատճառները և առանց օրինականութեան պարտաւորութիւնները լրացնելու, կընդունի զանոնք մահմէտականութեան»[3]: Թրքաց Հայաստանից եկողները պատմում են «Մշակին», որ «Խիզանի, Մոդկանի և Շատախի կողմերի հայերը կատարելապէս ստրկացած են քրդերի ձեռքում: Այդ վերջինների շէյխերը և պէյերը իրանց մէջ բաժանել են հայոց գիւղերի բոլոր հողերը և ստիպում են գիւղացիներին հնազանդել իրանց անմիջական իշխանութեանը: ...*Այդ գաւառներում բնակուող հայերը համարեայ բոլորովին քրդացել են թէ՛ լեզուով և թէ՛ սովորութիւններով* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[4]:

Վանի վիլայեթում հազարների հասնող քրդացած ու թուրքացած հայեր, 44 ավերակ վանքեր, 800-ից ավելի «...շէն և անշէն եկեղեցիք կան, որոնք քրդեր աւրեր, մզկիթ, գոմ, ախոռ շիներ են»[5]: Կոստանդնուպոլիս առաքված բողոքագրերից մեկում արձանագրված է. «Խլաթա մէջ հայ կին մը, սաստիկ ծեծելով թևն ու գլուխը ջարդեցին զոռով տաճիկցնելու համար»[6]:

Բերված և նման բնույթի անհամար այլ փաստերից ելնելով, սխալված չենք լինի, եթե ասենք, որ 1840-60-ական թվականների Թուրքիայի վարած քաղաքականությունը հայերի հարկման, հարստահարման, երբեմն էլ դավանափոխման վերաբերյալ, 1870-ական, մասնավորապես 80-ական թվականներին *մտնում է նոր փուլի մեջ:* Համիդը, նրան թև ու թիկունք դարձած «մոլի նացիոնալիստ» թուրք արիստոկրատիայի ներկայացուցիչները, ելնելով պանթուրքիստական բուրժուազիայի շահերից, ձգտում էին ասիական Տաճկաստանի հիմնիվեր համածուլման: Տարաբախտաբար այս նախերգանքն էր սաղմը այն ահավոր եղելությունների, որոնց իրականացմամբ սուլթանական լայնատարած կայսրությունը ներկվելու էր արևմտահայության արյամբ:

[1] ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, 3-րդ բաժին, փաստաթուղթ 50, էջ 1:
[2] Նույն տեղում:
[3] «Մասիս», 4 մայիսի, 1872, N 1233:
[4] «Արձագանք», 1882, N 3, էջ 38:
[5] ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, 3-րդ բաժին, փաստաթուղթ 57:
[6] «Դիւան Հայոց պատմութեան», գիրք ԺԳ, էջ 253-254:

Համիդական Թուրքիան հայերի բնաջնջման ծրագրեր մտահղացրեց Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո, այն ժամանակ, երբ տակավին չէին հիմնվել արևմտահայոց գաղտնի կազմակերպություններն ու հայդուկային խմբերը, երբ մի ամբողջ տասնամյակ հետո նոր պիտի կազմակերպվեին ազգային կուսակցությունները: Եղելության անտեղյակությունից բխող այս տեսությունը հիմնավորապես ժխտվում է հետևյալ փաստերով: Համիդի մեծ վեզիր Քյամիլ փաշան 1879 թվականին, «Հայկական հարցի» շոնդալից զարգացման պահին, հրապարակեց մի ծրագիր, որտեղ ասված էր. «...եթէ Եւրոպիոյ մասին մեր ծոցը օձ սնուցինք, պէտք չէ, որ նոյն յիմարութիւնն ընենք մեր ասիական Տաճկաստանի մէջ. խելօքութիւնը ջնջել վերցնելն է այն ամէն տարերքը, որ օր մը կրնան մեզ նոյն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխութեան առիթ և գործիք լինիլ:

Հիմա, այսօր, գոնէ Անգլիոյ շահերն կը պահանջեն, որ Փոքր Ասիոյ *(Մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պէտք է ջախջախենք)* մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարի միջամտութենէն ու միջամտութեան ամէն առիթներէն. ուստի այդ սուրբ նպատակին համար պէտք է, *և պետական իրաւունքը կը պահանջէ, որ որևիցէ կասկածելի տարրը անհետ ընենք, որպէսզի ապագան ապահովենք, ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, անհետ և անձետ ընելու ենք: Եւ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ, ամէն գործիք պատրաստ ունինք, քուրդ, չէրքեզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ. կրօնական պատերազմ մը կը հրատարակենք և դիւրին պատերազմ այնպիսի ազգի մը դէմ, որ ո՛չ զէնք ունի, ո՛չ զինուորութիւն և ո՛չ պաշտպան... Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնեայ Եւրոպա կրօնակից մը փնտրէ, և չի գտնէ տաճկական Ասիոյ մէջ, կը թողու զմեզ հանգիստ և այն ատեն կը զբաղինք ներքին գործերով և բարեկարգութեամբք...* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]:

Համիդն ավելի խորամանկ էր, քան նրա պալատականները: Սուլթանը, խուսափելով նոր միջամտություններից, առաջադրված հայաջինջ ծրագրերը սկսեց իրականացնել քրդական ցեղապետերի, շեյխերի, աղաների միջոցով: Նա արձակեց վտանգավոր, արյունոտ այնպիսի ձեռքեր, որոնք մի քանի տարի առաջ հազիվ էին կարողացել կապկպել: Պայմաններ ստեղծեցին գավառահայության բնաջնջման այն էլ քրդական վերնախավի, նրան հետևող քուրդ խաժամուժի միջոցով:

Առաջին հերթին բանտերից ազատվեցին Արևմտյան Հայաստանից

[1] «Փորձ», 1879, N 7-8, էջ 204-205:

արտաքսված քուրդ նշանավոր ցեղապետերը: 1882 թվականին շեյխ Ուբեյդուլահը Պոլսից դուրս եկավ և վաճառականի շորերով ու անցագրով մեկնեց Պարսկաստան: Սեպտեմբերի կեսերին շեյխը Բայազետում էր, որտեղից անցնելիս, Բերկրի գավառի մեջ նրան միացան 1500 քուրդ ձիավորներ[1]: «Մշակի» Վանի թղթակիցը վկայում է, թե Ուբեյդուլահը այնքան շուքով էր շրջում Արևմտյան Հայաստանում, այնքան ազատ էր զգում իրեն, որ հազիվ թե «փախած» լիներ Պոլսից[2]: Թուրքական կառավարությունը, զբաղված լինելով Եգիպտոսով, Ուբեյդուլահին ուղարկել էր սահմանագլուխ պարսիկների դեմ կռվելու[3]: Արյունարբու շեյխին այդ չխանգարեց անարգել կանանց ու աղջիկներին, սրախողխող անել անպաշտպան քրիստոնյաներին:

1882 թվականին Վանից գրում են. «...Հայաստանը այս րոպեիս երկու քրդական հրոսակների ասպատակության ասպարեզ է ներկայացնում: Ալի բեյը իր խմբով ծայրե ի ծայր կոտորում է Հայաստանի Արևելյան մասը, Պարսկահայք, Վասպուրական, Մոգք, իսկ Համզա աղան ասպատակում է Հայաստանի Արևմտյան կողմը, Տուրուբերան, Ծոփք և Աղձնիք: Այլևս չենք հիշում քյուրդերի մյուս մանր-մունր խմբեր, որոնք թափառում են Մեծ Հայաստանի զանազան կողմերը»[4]: Թղթակիցը վկայում է նաև, որ թուրքական խալիֆը դեռ 1881 թվականին, իր մոտ որպես «հյուր» պահված 64 քուրդ բեկերին ազատեց «կալանքից» և նորից ուղարկեց Ասիական Տաճկաստան (իմա Հայաստան - Հ. Ղ.), որոնք գազանաբար վարվեցին իրենց արտաքսելու գործում որոշ դեր խաղացած հայերի հետ[5]:

Միջազգային իրավունքի տեսաբան Ռոլեն Ժեքմենը, Մաքկոլը[6] բազմաթիվ փաստեր են բերում, որոնք միաբերան վկայում են, թե պատերազմից հետո թուրքական կառավարության թողտվությամբ ու գիտությամբ, Անգլիայի անտարբերության պայմաններում, թուրք ու քուրդ աղաները գազանային վայրագությամբ էին վարվում քրիստոնյա ազգերի հետ: «Քրիստոնյաների ներկա վիճակը վատթար է, քան վերջին տարիներին երբևիցե,- գրում է Ռոլեն Ժեքմենը:- Քրդերը, թվում է, թե ամենուրեք ուժ ունեն և բազմաթիվ տեղերում թալանը, կողոպուտը և կանանց հափշտակումները կատարվում են համարյա առանց պատժի: Քուրդ բեկերը, օգտվելով թուրքական իշխանությունների թույլտվությունից, երբեմն էլ նրանց աջակցությամբ, թալանում, կողոպտում

[1] «Մշակ», 1882, N 165:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, N 170, սեպտեմբերի 16:
[4] «Արձագանք», 1882, N 1, էջ 8, արտատպություն «Մշակից»:
[5] «Արձագանք», 1882, N 2, էջ 23:
[6] Մանրամասն տե՛ս ***Кан-Мелькольм-Масколь,*** Ответственность Англии перед Арменией, М., 1896.

են խաղաղ ազգաբնակչությանը: ...Նրանց ունեցվածքը, կանանց ու աղջիկների պատիվը մի շարք տեղերում հանձնվում է ֆեոդալ բեկերի կամքին»[1]:

Քաջատեղյակ լինելով նման եղելություններին, կառավարական պաշտոնյաները կարծես թե ուրախանում էին դրանցով և «մասնակիորեն» լուծված էին համարում իրենց վրեժը «ռուսասեր» գյավուրներից: Ասում ենք՝ մասնակիորեն, քանի որ նոր էր գալու «ապագա» ահավոր սպանդը, նոր էր իրականացվելու սուլթան Համիդի՝ «թուրքական Նիկոլայ II-ի» հայաջինջ ծրագրերը:

Ռուս-թուրքական այս պատերազմի օրերին, նրանից հետո չափազանց ողբերգական էր Ալաշկերտի և Բայազետի հայերի վիճակը: Այն, ինչը ողջ արևմտահայության համար իրականություն դարձավ տասնամյակներ հետո միայն, Բայազետում կենսագործվեց պատերազմի ժամանակ: Ջանգվածորեն բնաջնջվեց և տեղահանվեց հայկական տարրը, նրա տեղը լցվեցին մահմեդական քրդերը:

Ռուսները 1877 թ. գրավեցին Բայազետը: Թուրքական բանակները ռուսական հերթական գրոհների առաջը չկարողացան առնել: Կառավարությունը ստիպված դիմեց քուրդ ցեղապետերին, հայտնի շեյխերին, հատկապես Ջալալեդդինին[2], 20.000 հրացան բաժանեց նրա զինվորներին, գործելու անսահմանափակ իրավունքներ ընձեռեց, միայն թե վերջիններս կարողանային ետ խլել կորցրած գավառները:

Վայրենաբարո քուրդ ցեղապետերն ու ավարառության ելած խուլամները իրենց տարերքի մեջ էին: Կառավարությունը տեղաբնիկներին հրաման էր արձակել հոգալ թուրքական զորամասերի, այդ թվում և սուլթանին ծառայող քուրդ «կամավորների» ուտեստի, հագուստի, նույնիսկ զինվորներին ձմեռային տաք հագուստով ապահովելու մասին: Մահմեդական զորամասերը լայն իրավունքներով սփռվեցին Բայազետի ու Ալաշկերտի գավառներում: «Նրանց ճանապարհի երկու կողմերում գտնուող գիւղերի, մինչև իսկ Վան քաղաքի հայերը ենթարկուեցին «սրբազան պատերազմ» գնացող քրդերի բռնութիւններին - կողոպուտ, տանջանքներ, կոտորածներ»[3]:

Վանի վալի Ֆայըկ փաշան լրտեսների միջոցով տեղեկացավ, որ գեներալ Տեր-Ղուկասովը Բայազետում թողել է 1600 հոգուց բաղկացած մի փոքր զորագունդ և առաջ է շարժվել: Առիթը հարմար համարելով, հայդարանցի քուրդ ցեղապետ շեյխ Ջալալեդդինի հետ դաշնակցած, թուրք փաշան 15.000 թուրք և քուրդ հրոսակներով հարձակվեց Բայազետի վրա: Քուրդ բաշիբոզուկները սկսեցին իրենց ավարառությունը: Դեռ փաշայի բանակը չհասած, քրդերը հարձակվեցին շրջա-

[1] *М. Г. Ролен-Жекмен.* Армения, армяне и трактаты, М., 1897, стр. 52.
[2] «Մասիս», 1877, 27 հոկտեմբերի:
[3] Նույն տեղում:



Վանաիա

Աշտարակի Կարմրավոր եկեղեցին VII դ.

կայքի 24 հայաբնակ գյուղերի վրա, հիմնահատակ կործանեցին դրանք, բնակիչներին ոչնչացրին, ամբողջ ունեցվածքը թալանեցին[1]:

Գազանաբար սրախողխող արվեց ս. Բարթուղիմեոս վանքին ապավինած հայ գաղթականությունը, գերվեցին կանայք և աղջիկները: Համիդը, կեղծավորությամբ, հայապաշտպան է ձևանում, խոսքով համակրություն հայտնում «հայ ազգի նկատմամբ», Ներսես Վարժապետյանին կոչ անում համոզել հայերին զինվորագրության գնալ, իսկ երկրում ոչնչացնում նրանց: Հայերը բողոքեցին: Ներսեսը բողոքագիր մատուցեց մեծ Եպարքոսին, ինչպես նաև շեյխ-ուլ-իսլամին: Արդյունքն այն եղավ, որ Պոլսում, մեծ ու շքեղազարդ պալատում, սուլթանի կողմից ընդունվեց հայոց պատրիարքը, մեծ-մեծ խոստումներով կերակրվեց, իսկ Արևմտյան Հայաստանում ավերվեց, մոխրակույտ դարձավ հայաշատ Բայազետ քաղաքը: Թուրքերը և քրդերը 1877 թ. վերջերին թալանեցին բայազետցիներին: Պատերազմից առաջ եղած 5000 բայազետցիներից 1878 թվականին քաղաքում մնացել էին 1300 մարդ, որից 800 թուրք, 400 քուրդ, միայն 100-ը հայ[2]: Քաղաքի հայ ազգաբնակչությունը միակ հնարավոր ելքը համարեց բռնել գաղթականության ճանապարհը: Նրանք գաղթեցին Պարսկաստան՝ Մակուի խանություն:

Պատերազմի տարիներին մոխրացվեցին Արևմտյան Հայաստանի բազմաթիվ այն շրջանները, գյուղերը, որտեղ թուրք զինվորը ապաշնորհ մարտեր մղեց ռուսական բանակի դեմ, որտեղ հանգստացավ, ձմեռեց կամ վարժական պարապմունքներ անցկացրեց սուլթանական բանակը: Պատերազմից հետո հաշվեհարդար տեսան հայկական այն շրջանների հետ, որոնք այս կամ այն կերպ դուրս էին պրծել թուրքական ավերածության ոլորտից, մանավանդ, եթե առաջինները սրտաբաց էին ընդունել ռուսական բանակին, հույսեր էին տածել «քյաֆուր Մոսկովի» նկատմամբ: «Ամբողջ ճանապարհների շրջակայքում մինչև պատերազմի դաշտը հրոսակախմբերը ոչ մի գյուղ չէին թողել: Բոլորն էլ ավերվել էին քրդերի և կանոնավոր զորքերի կողմից: Բոլոր եկեղեցիները, վանքերը կողոպտված և ավերված էին: Կոտորվածների և սպանվածների թիվը անսահման էր»[3]:

Ռուս-թուրքական պատերազմի օրերին, հայ ժողովրդին Ռուսաստանից անջատելու միտումով, սուլթանը սիրաշահում էր Ներսես Վարժապետյանին, ցանկություն ունենալով նրա օգնությամբ ազդել իր հայ հպատակների վրա, նույնիսկ խախտում էր մահմեդական օրենքները, ձգտում «գյավուրներից զինվոր վերցնել»: Բեռլինի կոնգրեսի օրերին պատրիարքը հաճախակի այցելում էր Պոլսի եվրոպական պետությունները:

---

[1] *Սարուխան*, Հայկական խնդիրը և ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 200-201:

[2] ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 42, գործ 11, թ. 65-70:

[3] *Ա. Մեմեան*, Պատմութիւն արևելեան պատերազմի, հ. Ա, էջ 16:

ների դեսպանատները, կառավարական բարձրաստիճան պաշտոնյաների հետ խոսում հավասարի իրավունքով: Օգտվելով իր «նոր դիրքից» և «երես առնելով», Ներսես Վարժապետյանը սուլթան Համիդին ուղղած իր գրությունների տակ այլևս չէր գրում *«Ձեր գերին»* կամ *«պաղատանոք»* բառերը, մի բան, որ իր ողջ նախորդների բաժինն էր եղել: Այդ բառերը փոխարինված էին «ես»[1], «պահանջում եմ» արտահայտություններով: «Թուրքական «Հաքիքաթ» թերթը ծաղրանքով գրում էր, որ, ըստ երևույթին, հայերի պատրիարքը իրեն շփոթում է եվրոպական դեսպաններից մեկնումեկի հետ»:

Ռեակցիայի օրերին Համիդը, մոռանալով իր խոստումները, պատրիարքի գրություններն այլևս չէր ընդունում, պատճառաբանելով, որ նրանք ունեն *«անհարմար և անքաղաքավարի ոճ»*, քանի որ նախկինի նման չեն ստորագրվում «Ձեր գերին», «պաղատանոք» բառերով:

Այսպիսով, 1880-ականների սկզբին սուլթանական Թուրքիան արմատապես վերադիրքավորվեց հայ ժողովրդի արևմտահայ հատվածի հանդեպ: Փաստորեն, «ավարտվեց» «Թանզիմաթի» ժամանակահատվածը, ի դերև ելան ժողովրդի հույսերը, ոչնչացվեցին արևմտահայերին տրված մասնակի «իրավունքները», մոլեգնելու աստիճանի հասավ քաղաքական ռեակցիան: Միդհատյան «Սահմանադրության» արգելումից հետո գործադրության իրավունքից զրկվեցին հայկական սահմանադրական հիմնարկները, կախաղանները դարձան քաղաքական հանցագործների հետ հարաբերություն ունենալու գերադասելի միջոցը, բանտերը լցվեցին ռուսական կողմնորոշման կամ հեղափոխական պրոպագանդ մղելու մեջ մեղադրված «անմեղ մեղավորներով»: Բայց այս բոլորը դեռ նախերգանքն էին: «Քրիստոնյա Եվրոպայի» աչքերի առաջ, նրա լուռ համաձայնությամբ, արյունախում Աբդուլ Համիդը գրոհի անցավ, ծայր առան հայկական բեկորների զանգվածային ջարդերը:

[1] *Գ. Խ. Ստեփանյան,* Արփիար Արփիարյան, Երևան, 1955, էջ 76 և շարունակությունը:

Գլուխ երկրորդ

Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները XIX դարի 50-60-ական թվականներին

1. Զեյթունի պայքարը կիսանկախության պաշտպանության համար 1830 – 50 –ական թվականներին

XIX ԴԱՐԻ առաջին քառորդին սուլթանական Թուրքիան, ավելի խճճվելով կապիտուլյացիաների համակարգի մեջ, կորցնում էր իր ռազմաքաղաքական հզորությունը, դառնում մրցադաշտ ոչ միայն ախոյան պետությունների, այլև լիակատար անկախության փորձեր կատարող քուրդ ու թուրք ֆեոդալների համար: Օգտագործելով բանակի քանակի ու ռազմունակության կորուստը, Անատոլիայի ու Ռումելիայի մահմեդական ցեղապետերը, ստվարացնելով իրենց զինաջոկատները, ամրացնելով բերդերն ու ամրոցները, նախկին պարտավորություններից հրաժարվում են, շատերը գրեթե ամեն տեսակի կապերը խզում Բարձրագույն Դռան հետ[1]: Սուլթան Սելիմի և Մահմուդ II-ի տիրակալությունն իրենց ասիական երկրամասերի վրա (մինչև 1834 թ.) դառնում է անվանական: Երբեմնի հզոր պետությունը դառնում է արյունահեղ կռիվների ու միջցեղային զինաբախումների բեմահարթակ:

«Բարձր Դռան երբեք չի հաջողել այս լեռներում տոհմական ժառանգական իշխանությունը գետին տապալել,- գրում է Մոլթկեն,-ինչպես իրենց կայսրության շատ այլ վայրերում: Քրդական ավագանին մեծ իշխանություն ունի իր հպատակների վրա, նրանք գժտվում են միմյանց հետ, վիճարկում են Բարձր Դռան իշխանությունը, հրաժար-

[1] Այս գլուխը արտատպել ենք մեր նախորդ աշխատությունից. տե՛ս *Հայկ Ղազարյան*, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը..., էջ 471 և հետո...:

վում են հարկերից, չեն հանդուրժում ոչ մի զինակոչություն և իրենց վերջին ապաստանը գտնում են բարձր լեռների ամրոցներում»[1]:

Չկարողանալով առայժմ հաշվեհարդար տեսնել բանակատեր, անընկճելի իսլամ ցեղապետերի, խաների ու բեկերի հետ, սուլթաններն իրենց եկամուտներն ու հասույթները ստանում էին զենք կրելու իրավունքից զրկված քրիստոնյա անպաշտպան ազգերից, խստացնում ճնշումները, բարդում հարկերը, քամում գյուղացու ունեցվածքը, բարձրացնում մաքսերը, երկրի աշխատավորությանը, առավել ևս արհեստավորին, անուղղակիորեն զրկում արտադրելու հնարավորություններից: Ազգակազմավորման պրոցեսը թևակոխած, տնտեսական զարգացման մակարդակով մահմեդականներից անհամեմատ բարձր կանգնած և կապիտալիստական Եվրոպայի հետ առնչվող քրիստոնյա հպատակ ազգերը, այլևս չդիմանալով բռնության նման անտանելի ծանրությանը, ելնում են ժողովրդա-ազատագրական պայքարի: Թուրքիայում ծփում է ազատագրական շարժման ալիքը:

Արևելքի ամենավայրագ բռնապետների տիրապետության դեմ ապստամբության դրոշ են պարզում շղթայակիր, ազատազուրկ ազգերը՝ հույները, բուլղարները, սերբերը, ռումինացիները, սիրիացիները, արաբները և այլ ժողովուրդներ: 1804 թ. ծայր են առնում սերբերի ազգային շարժումները, 1821 թ. ոտքի են կանգնում հույն ժողովրդի հերոս զավակները, երկարատև կռիվներով, ազատատենչ մարդկության համակրանքի ու բարոյական աջակցության մթնոլորտում վերստանում իրենց անկախությունը: 1862 թ. ապստամբում է Չեռնոգորիան, 1866-1868 թթ. Կրետեն, 1875 թ. Բոսնիան և Հերցեգովինան, 1876 թ. Բուլղարիան:

Սուլթանների մահասփյուռ թաթից ազատվելու հաջող ու անհաջող փորձեր անող քրիստոնյա ազգերի ապստամբական շարժումները պատասխան էին տիրապետող ռեժիմի էլ ավելի խստացմանը, ուստի և, անառարկելիորեն, *դրանք առաջադիմական էին, համազգային ձև ու համադեմոկրատական բովանդակություն ունեին: Այդպիսին էին նաև հայ ժողովրդի մղած հակասուլթանական շարժումները, հերոսական ապստամբությունները XIX դարի երկրորդ կեսին, երբ ուժեղանում էր Թուրքիայի վարած հայահալած քաղաքականությունը, սոցիալ-քաղաքական ճնշումները, ասպարեզ բացելով մասնակի կամ զանգվածային ջարդերի առաջ:* Այդ մի շրջան էր, երբ ֆեոդալական արտադրահարաբերությունները ճեղքեր էին տալիս, և ձևավորվում էր առևտրաարդյունագործական բուրժուազիան, զարթոնք ապրում հայրենանվեր մտավորականությունը. կաղապարվում ազգային-ազատագրական պայքարի գաղափարաբանությունը:

[1] *Helmuth von Moltke*. Briefe über zustände und Begebenheiten in der Turkei aus den jahren 1835 bis 1839, Berlin, 1876, S. 267.

Սակայն պետք է տարբերել դարի երկրորդ քառորդի դիմադրական կռիվները դարամեջի զույգ տասնամյակների ապստամբական լայնահուն շարժումներից, որոշել նրանց ոչ միայն ձևը, այլև բովանդակությունը: Արևմտյան Հայաստանի բոլոր շարժումները մինչև դարակեսը մնում էին տեղական նշանակության և չէին արժանանում այն համակրանքին ու աջակցությանը, ինչին արժանացան 1860-ականներին, չէին ստանում բարոյական ու նյութական այն օգնությունը Հայաստանի զույգ հատվածներից ու հայ գաղթօջախներից, ինչպիսին ստացան քաջակորով զեյթունցիները 1862 թվականին և հետո:

Արևմտյան Հայաստանում, հատկապես Կիլիկիայի լեռնագավառներում 1830-50-ական թվականներին բռնկվեցին թուրքական կառավարության և քուրդ վերնախավի դեմ ուղղված մի շարք ապստամբություններ, զինված ելույթներ, ինքնապաշտպանական կռիվներ, որոնք հետապնդում էին վաղեմի նվաճած իրավունքների պաշտպանությունը կամ կորցրածի վերստացումը: Թվաշատ մարտերի կենտրոնը մնում էր լեռնային Կիլիկիայի Զեյթուն գավառը:

Մարաշի փաշայության մեջ մտնող ըմբոստ, քաջակորով ու ազատատենչ հայ լեռնականներով բնակեցված Զեյթունն այս պատմաշրջանում էլ շարունակում էր պաշտպանել իր կիսանկախ դրությունը, կառավարվել ժառանգաբար տիրող, ընտրովի չորս իշխանների կողմից, սուլթաններին տալով, հաճախ էլ չտալով, պարտավորված 15-30 հազար ղուրուշի հարկը[1]: Ամուր պաշտպանական գծեր ունեցող, հարմարավետ աշխարհագրական դիրքատեր Ուլնիան 17-20 հազար բնակչություն ուներ, մշակում էր Պիրիդի երկաթի, կապար-արծաթի հանքերը, արտադրում երկաթ, վառոդ, սեփական ձեռքերով պատրաստում զենք ու զինամթերք, այն օգտագործելով երկրահատվածի վրա արշավող թուրքական զորախմբերի ոչնչացման, իր իրավունքների պաշտպանության նպատակներին[2]:

Զեյթունի կիսանկախության վերացման սուլթանների անհամար փորձերը վաղուց էին ծայր առել, սակայն, զոհեր տալուց զատ, ոչ մի արդյունքի չէին հասցրել նրանց: Պետության կենտրոնացման, կենտրոնախույս ուժերի ոչնչացման քաղաքականության ուժեղացման հետ մեկտեղ, սուլթաններն այս ժամանակահատվածում ավելացնում են արշավող զորամիավորների թիվը, դիմում դիվանագիտական խարդավանքների, միջոցների մեջ խտրություն չդնելով, մյուս իշխանապետությունների նման ձգտում ոչնչացնել նաև Զեյթունի կիսանկախ դրությունը, ոչ միայն գավառի հարկերը չափազանց ծանրացնել, այլև փաստապես հպատակեցնել իրենց:

[1] Տե՛ս Երուսաղեմի մատենադարան, ձեռագիր 2738, թերթ 3, Մովսես քահանայի «Զեյթունի անցքերը» գրությունից, գրված 1862 թ. դեկտեմբերին:

[2] Տե՛ս Ուլնիա կամ Զեյթուն լեռնային աւան ի Կիլիկիա, գրեց *Յ. Յ. Ալլահվերտեան,* 1884, Կ. Պոլիս, էջ 66-67:

Եգիպտական արշավանքով, Հունաստանում, Սերբիայում ծավալված ազատագրական կռիվներով զբաղված Մահմուդ II-ը նախ օգտագործում էր կուսակալ փաշաներին, նրանց կռվեցնում զեյթունցիների հետ, թուլացնում երկուսին էլ, հիմնական հարվածը վերապահելով ապագային: 1829 թ. Կեսարիայի նահանգապետ Քեոսե փաշան Զեյթունի նվաճման հանձնարարություն է ստանում: Թուրքական բանակը Կոկիսոնի մոտ հանդիպում է փոքրաքանակ զեյթունցիների համառ դիմադրությանը, Աստվածատուր Յաղուպյանի գնդակով սպանվում է դրոշակակիր Զելլադը, զորքը խուճապահար նահանջում է, իսկ Զեյթունը մնում է կիսանկախ[1]:

Նոր արշավանքները կանխելու նպատակով, գավառի չորս իշխանները որոշում են պարտավորված հարկագումարը առաքել մայրաքաղաք, սուլթանի հաճությունն ստանալ, դրանով իսկ զերծ մնալ զոհեր տալուց: Մահտեսի Մանուկ Պերսյանը 1830 թ. 15.000 ղուրուշ հարկագումարը, առանց միջնորդ օղակների, տանում է մայրաքաղաք և հանձնում Այա-Սոֆիայի մյութեվելլուն: Թուրք հոգևորականը, արտաքնապես շնորհակալ եղողի կերպարանք առնելով, թունավորում է զեյթունցու միտքը, թե քաղաքում եղած 24 տուն մահմեդականներին պետք է որևէ պատրվակով արտաքսել, քանի որ «օձի ձագերու նման՝ երբ մեծնան ձեր սիրտեն կխայթեն»[2]: Նա կատարում էր Բ. Դռան հրահանգը, որպեսզի ինչ-որ միջոցներով պառակտում մտցներ լեռնականների մեջ, խաթարեր նրանց միասնականությունը, հեշտացներ ապագա արշավողների գործը:

Իսլամ կրոնավորի խորհրդից դրդված, իշխաններից երկուսը Սուրենյան ավագ իշխանին հանձնարարում են պատրվակ փնտրել և արտաքսել մահմեդական հողատեր գերդաստանները: Պայմանաժամանակ նշանակելով, Սուրենյանը 1831 թ. պահանջում է մահմեդականների հեռացումը: Յաղուպյանները հակառակվելով, սրանց վերցնում են իրենց պաշտպանության տակ, և ծայր է առնում, փաստորեն, առաջինի իրավունքի համար ծավալված եղբայրասպան կռիվը, որը տևում է 7 ամիս և խլում 400-ից ավելի զոհեր[3]: Ակնհայտ է դառնում, որ փառաբանված Զեյթունի ներսում եղել են ֆեոդալական երկպառակություններ:

Թաղապետական, միջֆեոդալական կռիվները ծանր հետևանքներ ունեցան Զեյթունի համար: Նախ, Յաղուպյանների դարանակալ ձեռքով ոչնչացավ Սուրենյան իշխանական գերդաստանի մի մասը, ապա Մարաշի Սուլեյման փաշան կարողացավ պահն օգտագործել և զորք հաստատել ս. Աստվածածնի վանքում 1831 թ., նպատակ ունենալով,

[1] *Գր. Գալուստեան*, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նիւ-Եորք 1934, էջ 127:

[2] Նույն տեղում, էջ 127:

[3] Նույն տեղում, էջ 129:

պատեհառիթ, երկրի երեսից ջնջելու զեյթունցիներին: Վատթարացան գավառաբնակների ապրելակերպի պայմանները: Օղակի մեջ առնված Զեյթունը կտրվեց դրսաշխարհից, պակասեցին երկաթի տարանցիկ առևտրից ստացված եկամուտները, սկսվեցին սովը և նույնիսկ հիվանդությունները[1]:

Զեյթունի այս կռիվներին, ժողովրդի կարծեցյալ հուսալիք դրությանն ուշադրությամբ հետևում էին կառավարական պաշտոնյաները, ներքուստ ուրախանում, նպատակակետին հասնելը վերահաս համարում: Թուրքական ստվարաթիվ բանակի գլուխն անցած, Սուլեյման փաշան, ետևից գցած շրջակա գյուղերի ավարածարավ մոլեռանդ ամբոխը, 1832 թ. շարժվեց դեպի Զեյթուն և բանակը դրեց Ջերմուկի դաշտում[2], նպատակ ունենալով նախ՝ բանակցություններ սկսել դժգոհ իշխանների հետ, իրարից բաժանել սրանց, ապա նոր շարժվել լեռնաքաղաքի վրա, այն հիմնովին կործանելու:

Օտար բանակի թվաշատությունից երբեք չերկնչող զեյթունցի քաջամարտիկներն անմիջապես մոռացան բոլոր տեսակի հակասությունները, իրար նկատմամբ ունեցած թշնամանքը, գիշերային հանկարծակի հարձակման միջոցով ջարդեցին Սուլեյման փաշայի զորամիավորների մի մասը, խուճապ առաջացրին բանակատեղում և վերացրին այս վտանգը ևս: Հերթական արշավողներին դիմագրավելիս, Զեյթունը հաղթանակով դուրս եկավ: Սակայն նրան օգնեցին նաև արտաքին հանգամանքները:

Եգիպտական Մուհամմեդ Ալի փաշան, ապստամբելով, գրավել էր Թուրքիայի հպատակ բազմաթիվ նահանգներ, տիրացել Կիլիկիայի դաշտային մասերին և շարժվում էր դեպի մայրաքաղաք: Ոչ սուլթանական կառավարությունը, ոչ էլ թուրք որևէ փաշա այլևս չէր կարող մտահոգվել Զեյթունի նվաճման խնդրով: Ընդհակառակը, վտանգավոր հակառակորդի առաջխաղացումն արգելելու համար Բ. Դուռը «փոքրերի» նկատմամբ մեղմանում էր: Սուլթանի համար հավասարաչափ ատելի քրդական իշխանապետերն անկախության ֆերմաններ էին ստանում, պետության կողմից հաստատվում իրենց իրավունքների մեջ, միայն թե բանակ տրամադրեին կառավարությանը, ճանաչեին նրա գերիշխանությունը: Այդպիսիներից էին նաև Զեյթունն ու Սասունը:

Օգտագործելով սուլթան Մահմուդի պետության խարխուլ վիճակը, զեյթունցիները որոշում են մարտերում փառաբանված հերոս Դելի-Քեշիշ Տեր Օհան քահանայի գլխավորությամբ պատվիրակություն առաքել մայրաքաղաք[3], որը խնդիր պիտի ունենար վերահաստատել

[1] Տե՛ս *Լևոն Ճերահեան*, Ժամանակակից ընդարձակ քննական պատմութիւն հայոց, Մարսէյլ, 1933, Ա հ., էջ 183-185:

[2] Մանրամասն տե՛ս *Վ. Մելիքսեթյան*, Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960, էջ 20-21:

[3] *Հարութիւն Ս. Նաշալեան*, Զեյթունի քաջամարտիկ Տէր Օհանի քաջագործութեանց դրուագներէն, Պէյրութ, 1958, էջ 48-52:

տալու Մուրադ IV-ի շնորհած հրովարտակը և, հարկաչափը կայունացնելով, գավառն ազատեր փաշաների ապօրինություններից: Տեր Օհանը 1833 թ. հասնում է Կ. Պոլիս, ներկայանում Մահմուդ II-ին[1], համարձակախոսությամբ զարմանք պատճառելով մահմեդական տիրակալին, վերահաստատել է տալիս Զեյթունի ֆերմանը վակուֆի իրավունքը, հարկաչափը պաշտպանելով տասնհինգ հազար դահեկան: Հուշապատումների ու ավանդազրույցների հեղինակներն այս արարողության պատիվը իրավամբ տալով խիզախ ու հայրենանվեր քահանային, մոռանում են սակայն, որ Մահմուդ II-ն էլ պակաս շահագրգռված չէր զեյթունցիներին սիրաշահելու, Մուհամմեդ Ալիից կտրելու և իր կողմը գրավելու մեջ, մանավանդ որ արդեն եգիպտացիների ձեռքն էր անցել Կիլիկիայի մեծ մասը:

Իր առաքելության մեջ հաջողված Տեր Օհանը վերադառնում է Զեյթուն, անցնում ռազմունակ լեռնականների գլուխ և փորձում է հպատակեցնել գավառի շրջակա թուրք, թուրքմեն և քուրդ թափառաշրջիկ ցեղախմբերին, որոնք, Մարաշի կառավարիչների երբեմնի դիրքից խրախուսված, հարձակվում էին հայկական գյուղերի վրա, փչացնում հայերի այգիները, քշում տանում անասունները, սպանում ուղևորներին: Հայ լեռնականները հաղթում են մահմեդական ցեղապետերին, ստիպում վճարել որոշ վնասները և, ի նշան հավատարմության, բոլորին անցկացնում Տեր Օհանի սրի տակով: ***Սա եզակի դեպքերից մեկն էր արևմտահայերի կեսհազարամյա պատմության մեջ, երբ տիրապետող ազգի և իշխող կրոնի ներկայացուցիչներն իրենց գլուխը խոնարհում էին այլահավատների՝ «գյավուրների» սրի առաջ:***

1836-40-ական թվականներին Կիլիկիային տիրացած Իբրահիմ փաշան, ցանկություն ունենալով նվաճել Զեյթունը, սակայն վախենալով նրա փառաբանված զավակների սխրագործություններից, ստիպված հանդուրժում էր գավառի անկախությունը, բարեկամության հաստատման փորձեր անում: 1840 թ. Կիլիկիա է հասնում մեծ սադրազամ Հաֆըզ փաշան: Սուլթանի հրամանով նա պիտի հպատակեցներ Ալաջատաղի քուրդ ցեղապետերին, ապա նոր արշավեր եգիպտոս[2]: Խորամանկ թուրք փաշան, գիտակցելով խնդրի դժվարությունը, դիմում է զեյթունցիներին, բարեկամություն, օգնություն խնդրում: Սրանով Հաֆըզը նախ նպատակ ուներ զեյթունցիների միջոցով հպատակեցնել Ալաջատաղը, փառքը վերագրել իրեն, ապա և, թշնամության սեպ խրելով լեռնաբնակ երկու գավառների պատերազմասեր համայնքների միջև, հաղթական վերադարձին ոչնչացնել երկուսին էլ:

[1] *Հարութիւն Ս. Նաշալեան*, Զեյթունի քաջամարտիկ Տէր Օհանի քաջագործութեանց դրուագներէն, Պէյրութ, 1958, էջ 49-50:

[2] Տե՛ս «Մանզումէ», 47-րդ տարի, N 2629, 1912, սեպտեմբերի 11/24:

Զեյթունցիները և Կիլիկիայի դաշտային մասերի շատ հայկական գյուղեր անընդհատ տուժում էին ալաջատաղցի թափառաշրջիկ, վայրենաբարո թուրքմեն ցեղերի ասպատակություններից: Առաջարկը նրանց սրտովն էր, ուստի և Տեր Օհանը, 500 զեյթունցիների վերցնելով, միանում է կառավարական բանակին, արշավում բերդի վրա, գրավում այն, ճակատամարտում կորցնելով միակ որդուն Սարգսին: Հաֆըզ Ալին, անձամբ ականատես լինելով հայերի սխրագործությանը, խոստովանում է, թե ***«Ավելի լավ է, որ տերությունը Զեյթունեն 1000 մարդ ունենա, քան թե թուրքերեն 20.000 զինվոր»***[1]: Թուրք փաշան պարգևներ է տալիս Ալաջատաղի կռիվներին մասնակից զեյթունցի հերոսներին, խոստումներով հեռանում գավառից:

Հերթական միջադեպն առաջացավ 1841 թվականին: Հաֆըզի հեռանալուց մեկ տարի չէր անցել, երբ ***Խասեքի*** անունով մի թուրք զինվորական 500 հեծյալներով մտավ Զեյթուն, իբրև հյուր, ապա երեք օր պայմանաժամանակ դնելով, պահանջեց հարկագումարը: Նախ նրա զինվորներին բաժանելով տների վրա, իշխանները, փաստորեն, կալանավորեցին Խասեքին զորաջոկատի հետ և բանագնացների միջոցով հասկացրին, թե հարկահավաքը հանկարծ փողոց դուրս չգա «վասնզի, ըսին, մեր երիտասարդները, այստեղ թուրք տեսած չըլլալուն համար՝ ծանր պիտի թվի իրենց քո ներկայությունդ և առաջին անգամ հանդիպողը պիտի սպանե քեզ»[2]: Զորապետի կատաղությունը հասել էր գագաթնակետին, սակայն ոչինչ անել չէր կարող: Նա ստիպված էր խնդրելու, որ եթե զորքի հետ միասին իրեն բաց թողնեն, ապա, առանց հարկ ստանալու, կհեռանա գավառից: Իշխանները պատասխանեցին, թե իրենք կառաջնորդեն բանակը մինչև Մարաշի կամուրջը, իբրև վարձ յուրաքանչյուրից ստանալով մեկական ոսկի, այլապես կկողոպտեն բոլորին, մերկամարմին կարտաքսեն գավառից: Կողոպտելու եկած Խասեքը հարկադրված ընդունեց բոլոր պահանջները, կողոպտված ու ամոթահար վերադարձավ Մարաշ:

Գավառին կից ապրող թեճերլանցի թուրքմենական ցեղերը 1842 թ. շրջապատված էին Յուսուֆ փաշայի զորաբանակի կողմից: Սրանց դրությունն անհուսալի էր, փրկության ելք չկար, թուրքերը որոշել էին բոլորին սրի քաշել: Այդպես էլ կլիներ, եթե օգնության չհասնեին զեյթունցիները: Լեռնագավառի հայերի ու թեճերլանցիների մեջ վեճերը, զինաբախումներն անընդմեջ էին, սակայն այժմ, տեսնելով հարևանների վիճակը, ընդառաջելով նրանց աղերսանքին, զեյթունցիները վեհանձնաբար օգնության հասան: Յաղուպյան Աստվածատուր իշխանը բանակը նետեց մարտադաշտ, դիպուկ նշանառությամբ սպանեց Յուսուֆի դրոշակակրին, խուճապ առաջացրեց նրա զորքի մեջ: Թուրքա-

[1] «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», էջ 131:

[2] «Զեյթունի պատմագիրքը», էջ 189-190:

կան բանակը նահանջեց Կոկիսոն, հայերը հաղթանակ տարան և թեճերլանցիները շնորհակալությամբ, առատ նվերներ տալով, խոստացան մշտնջենական բարեկամ մնալ հարևաններին[1]:

Թուրքմեն ցեղերին զեյթունցիների օգնության եղելությունը պատրվակ բռնելով, առանց այդ էլ լեռնագավառի վրա կատաղած Կիլիկիայի թուրքերը կառավարությանը համոզում էին վճռական միջոցներ որոնել Զեյթունի հպատակեցման համար: Ալբիստանի Հաճի աղան 1844 թ. մեկնեց Պոլիս, ներկայացավ Աբդուլ Մեջիդին և առաջարկեց հետևյալ ծրագիրը, նախ Ալբիստանի դռները փակել զեյթունցիների առաջ, չտալ նրանց այն հացահատիկը, որը գնում էին այդտեղից, քաղցով նեղել քաջամարտիկներին, ապա խափանել շահավաճառի գլխավոր աղբյուրի երկաթահանքի մշակումը: Այդ բոլորից հետո, ետևից գցած խուժանը, Հաճի աղան շարժվեց դեպի Զեյթուն[2]: Լեռնականները ջարդեցին թուրքական բանակը, բացեցին բոլոր ճանապարհները, շարունակեցին երկաթահանքի շահագործումն ու առևտուրը:

Հաճի աղայի ծրագրի կենսագործման համար 1847 թ. Զեյթունի վրա է արշավում Թոփալ Սաթո անունով զորապետը և մունետիկների միջոցով հայտարարում է, թե «տասներկու տարեկան աղջիկ կուզե հայերէն»: Նրան պատասխանում են. «Ձեր այդ պիղծ խորհուրդներուն համար Աստուծով կատարելապես պիտի խայտառակվիք ու ձեր դիակը այս լեռներուն վրա թռչնոց կեր պիտի ըլլա»[3]: Պատասխանից վիրավորված թուրք փաշան բանակը մոտեցնում է բերդաքաղաքին, մի բան, որին սպասում էին զեյթունցիները:

1000 զինվորներով զեյթունցիները կտրում են փախուստի ճանապարհը, թրերով ու կացիններով զինված 2000 հոգի տեղավորվում են ճանապարհի երկու կողմի դարաններում, 120 զինվոր ուղարկում են Սաթոյի բանակին ընդառաջ, իսկ 500 զինվոր էլ վերջիններիս օգնության: Կեսգիշերին, եկեղեցական զանգերի հնչյունների միալար ազդանշանով սկսվում է հարձակումը: Զարդն ահավոր էր, զոհերն առատ: Թշնամին ամենուր գթություն էր աղերսում: Սպանվում է նաև Թոփալ Սաթոն, իսկ զեյթունցիք, սակավաթիվ զոհերով, առատ ավարի ու ռազմամթերքի տեր են դառնում:

Կոտորածի լուրը հասնում է մայրաքաղաք: Սուլթանն ու պալատականները, մեկ անգամ ևս համոզվելով, որ Զեյթունն անընկճելի է, որոշ ժամանակ դադարեցնում են արշավանքները, իսկ 1850 թ. որոշում սիրաշահել նրանց և այդ միջոցով հպատակեցնել: 1851 թ. Զեյթունի չորս իշխանները իշխանապետ Մահտեսի Հովհաննես Շովրոյանը, Մարտիրոս Սուրենյանը, Աստվածատուր Յաղուպյանը և Աստվածատուր Յենիտունյանը հրավիրվեցին Կ. Պոլիս բանակցությունների[1]:

Տեղեկանալով գավառի դրությանը, հաղորդակից դառնալով իշխանների տրամադրություններին, սուլթանի հանձնարարությամբ, փոխադարձ զիջումներով, կնքվեց պայմանագիր թուրքական կառավարության ու Զեյթունի միջև: Աբդուլ Մեջիդն ստիպված էր շքանշաններով պարգևատրել այն հայ լեռնահամայնապետերին, ովքեր բազում անգամ ջարդել էին կառավարական ջոկատները, խայտառակ պարտության մատնել անվանի շատ զորավարների: Այս մասին 1851 թ. մայիսի 20-ին զեյթունցիները կաթողիկոսին գրում են. «...Այժմ. ներկայիս կոչեցին ի Պոլիս արքայական հրամանաւ զիշխանսն մեր յատեան զակոնական կանոնաւ, հարցաբանեալ և տեղեկացեալ զել ամենայն իրացն. եդին ի վերայ մեր դաշինք կապակցութեամբ արքայական դրոշմամբ և ֆերմանօք, վերստին դարձուցին առ ի Զէյթուն քաղաքս մեր պատուով արքայապսակ նշանօք...»[2]:

Պայմանադրության մյուս կետն այն էր, որ զեյթունցիները պարտավորվում էին հպատակվել Բ. Դռանը, կանոնավորապես, ամեն տարի, ոչ թե Այա-Սոֆիայի մզկիթին, այլ արդեն Աբդուլ Մեջիդին 60 քիսա *վերկի* անունով հարկ վճարել[3]: 1852 թ. զեյթունցիները աղերսագրեր են ուղարկում Կ. Պոլսի պատրիարքին, Հայոց կաթողիկոսին, որտեղ հիշատակվում է. «...բայց արքայ թագաւորի վերկին վաթսուն քիսէ ըստակ է կտրուածը և կանոնադրերէն և հաստատութեամբ և անշարժութեամբ և անհնար և առանց խախտութեամբ և ի նոցանէ արքային եկեալ սպասաւորքն Ուլնեյու այսինքն Զէյթունէն նյուքյուսին համարն չափ խնդրելով կամին զոռով չափէն դուրս աւելի վերկի առնեն, իսկ սակս ամենայն ժողովուրդ խեղճ և անկարող են աւելի տալոյ ոչ կարեն. խեղճութիւն մեր դուք հոգացեք...»[4]: Ակնհայտ է, որ վրեժխնդիր կառավարությունը խորամանկությամբ էր գործել այս անգամ:

Հայտնի է, որ 1849 թ. վերջերին, 1850 թ. սկզբներին ավարտվեց Անատոլիայի և հարավային Հայաստանի քրդաբնակ իշխանապետությունների վերանվաճումը: Քուրդ ցեղապետերի ոչնչացումից, տարագրությունից ու պաշտոնազրկությունից հետո չեղյալ հայտարարվեցին նախորդ սուլթանների տված անկախության բոլոր տեսակի ֆերմանները: Վերացվեցին իշխանապետություններին, դերեբեյություններին, օջաքլըքներին և յուրդլուկներին շնորհած Մահմուդ II-ի արտոնագրերը, քուրդ ֆեոդալների ստացած առանձնաշնորհումները: Բաղեշի, Վանի, Բայազետի, Մուշի, Չուխուրի, Բոհտանի, Մոկսի երկրա-

---

[1] «Զէյթունի պատմագիրքը», էջ 190:
[2] «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն», էջ 132:
[3] «Զէյթունի պատմագիրքը», էջ 191:

[1] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 158, վավ. 39, 1851, մայիսի 20:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 163, վավ. 31:

տեր քուրդ ֆեոդալները զենքի ուժով հպատակվեցին կենտրոնական կառավարությանը, դրվեցին հարկի տակ ու զրկվեցին նախկին դրությունից: Դարակեսին պետությունը դեռևս չէր կարողացել հպատակեցնել Կոզանյան ձորապետերին Կիլիկիայում, հայ իշխաններին Զեյթունում ու Սասունում: Սակայն 1851 թվականի պայմանագրությամբ, բանակցությունների միջոցով, Աբդուլ Մեջիդը չեղյալ էր հայտարարել Մուրադ IV-ի տված և Մահմուդ II-ի վերահաստատած Զեյթունի կիսանկախության ֆերմանը, գավառը հանելով հոգևոր հիմնարկների իրավասությունից, դրել Բ. Դռան հպատակության տակ: Ավելորդ արյունահեղությունից խուսափելով, զեյթունցիներն սկզբում համաձայնում են դրան, սակայն շատ շուտով հասկանում են կատարած սխալը և դիմում են նոր միջոցների:

Իշխանները տեսնում են, որ սկզբում վճարած 15.000 ղուրուշի փոխարեն կառավարությունն այժմ պահանջում է քառապատիկը, միաժամանակ հարկը վերցվում է ոչ թե համայնապետերից, այլ պետական հարկահանները ուղղակիորեն հարաբերությունների մեջ են մտնում Զեյթունի ազգաբնակչության հետ, մի բան, որը վիրավորում էր լեռնականների ինքնասիրությունը, դեմ գնում երեքդարյա սովորություններին: Ստիպված նրանք միջոցներ են որոնում՝ գոնե անցյալին վերադառնալու: Զեյթունի խորհրդարանի որոշմամբ, 1859 թ. Կ. Պոլիս են առաքվում Հովհաննես վարդապետ Գառնեցին, տեր Մովսես քահանա Զեյթունցին, որոնք Աբդուլ Մեջիդից խնդրում են հրովարտակի վերահաստատությունը: Բ. Դուռը կոպտությամբ մերժեց սրանց առաջարկը, իսկ Մարաշի կուսակալին[1] հանձնարարեց բարձրացնել Զեյթունի հարկերը, գանձել նույնիսկ անցյալ տարիներից մնացած պարտքերը:

Ղրիմի պատերազմից դուրս եկած սուլթանական կառավարությունը, երկիրը, ճիշտ է, վերածվելով պարտքատեր եվրոպացիների կիսագաղութի, բայց և այնպես, անցյալի համեմատությամբ այժմ ավելի ամուր էր զգում իրեն և ձգտում էր ամեն գնով ոչնչացնել տակավին հարատևող, փոքրաթիվ կիսանկախ համայնքների իրավունքները, եթե դիմադրեին ողջ ազգաբնակչությանը: Սուլթանին այս տարիներին էլ ամենից շատ մտահոգում էր Զեյթունի հպատակեցումը: Այդ ուղղությամբ արված քայլերը ավելի վճռական կերպարանք էին առնում, թուրք պալատականների բազում խորհրդարաններում ծնվում էին նորանոր ծրագրեր, լեռնագավառի գլխին կիտվում նոր ու սև ամպեր:

Փարիզի դաշնագրի թանաքը չչորացած, օսմանյան կայսրությունը հաճույքով ընդունում էր Հյուսիսային Կովկասից գաղթած մահմեդական, ռազմատենչ չերքեզներին, բնակեցնում Մարաշի կուսակալության լեռնագավառներում՝ տալիս հողային կալվածքներ ու արտոնություններ, սիրաշահելով հավատակիցներին օգտագործում զեյթունցիների դեմ: Կառավարության հրահանգով չերքեզները 1858 թվականին, ընդհանուր բազմությամբ, խուժեցին Զեյթունի սահմանները, ավերածություն ու մահ սփռեցին հայկական գյուղերում[1]: Բերդաքաղաքից դուրս եկող հայ քաջամարտիկները չերքեզների մարտն ընդունեցին Քոշ Դաղ լեռան ստորոտում: Ճակատամարտն ահեղ էր, երկուստեք զոհառատ: Սակայն, չկարողանալով դիմանալ զեյթունցիների կազմակերպած գրոհին, խուճապահար չերքեզները փախուստի դիմեցին: Գավառը մեկ անգամ ևս պաշտպանեց իր իրավունքները:

Բ. Դռան պաշտոնյաների համբերությունը հատնում էր: Մարաշի կուսակալին սուլթանը հանձնարարում էր խստացնել ճնշումները Կիլիկիայի հայ բնակչության նկատմամբ, կանոնավոր ու անկանոն զորաջոկատների, հատկապես չերքեզների միջոցով ասպատակել Ալբիստանի, Հաճընի և Մարաշի հայ գյուղերը, Զեյթունն օղակի մեջ առնելով՝ կտրել դրսաշխարհից, միջադեպ առաջացնել, որպեսզի կազմակերպվեր նոր արշավանք, վերջնականապես բնաջնջվեր պետությանն այդքան հոգսեր պատճառող արծվաբույնը: Դրվում էր Զեյթունը հիմնահատակ անելու խնդիրը[2]:

1860 թ. Մարաշում նստած օսմանյան մի բանակ, Խուրշիդ փաշայի գլխավորությամբ, նախապատրաստական աշխատանք էր ծավալում, հարմար առիթի սպասում Զեյթունի վրա արշավելու: Խորամանկ պաշտոնյան նախ ջլատեց Կիլիկիայի լեռնականների ուժերը: Ֆոնուզն անջատվեց Զեյթուն գավառից, դրվեց Ենիջե Կալե գավառի գայմագամի տիրակալության տակ, թուրքական զորք մտցվեց այնտեղ և ծանր հարկատվություն սահմանվեց: Պահակախմբերի հսկողություն կարգվեց Ֆոնուզ-Զեյթուն տանող ճանապարհի վրա, ապա վերցնելով 12 հազարանոց կանոնավոր զորք, չերքեզներ, մահմեդական ամբոխ, ներխուժելով լեռնագավառը, Խուրշիդ փաշան բանակատեղ ընտրեց քաղաքից 20 կմ հեռավորությամբ ընկած Զահան գետի հովիտը:

Հունիսի 8-ին թուրքական բանագնացները հայ իշխաններին հաղորդեցին, որ փաշան պահանջում է անցած 12 տարիների հարկը, գավառի հպատակությունը, այլապես կսկսի գրոհը[3]: Իշխանները մարաշցի Թոփլամ-օղլու Ալիի միջոցով գրավոր պատասխանեցին, թե պայմանագրությամբ սահմանված հարկից ավելին իրենք վճարել չեն կարող: Զայրացած փաշան զորքը շարժում է դեպի Զերմուկի դաշտը և, փաստորեն, սկսում գրոհը: «Այս միջոցին զեյթունցիք Պոլիս գտնվող

[1] *Լևոն Ճերահեան*, ժամանակակից ընդարձակ քննական պատմութիւն հայոց, հ. Ա, Մարսէյլ, 1933, էջ 189:

[1] Տե՛ս *Վ. Մելիքսեթյան*, Զեյթունի հերոսամարտերը, 1960, Երևան, էջ 21-22:

[2] Մանրամասն տե՛ս *Վ. Մելիքսեթյան*, Զեյթուն 1862 թվականի ապստամբությունը, Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. Բ, Երևան, 1950:

[3] *Զեյթունցի (Ս. Սեմերճյան)*, Զեյթունի անցեալէն և ներկայէն, մասն Ա, 1900, Վիեննա, էջ 101-104:

իրենց եկեղեցականներեն քաջալերիչ նամակ ստանալով կիարձակին բանակի վրա, որ խուճապահար կփախչի և շատերը կամուրջեն անցնել չկարենալով գետը կնետվին *կյավուրներին* գերի չիյնալու համար»[1]: Մեկ օր առաջ հոխորտացող Խուրշիդ փաշան՝ այժմ գլխիկոր, իշխաններից թույլտվություն էր խնդրում Մարաշ վերադառնալու՝ Ախր-Տաղի ճանապարհով: Մեծաքանակ ավար՝ պարեն, ռազմամթերք ձեռք գցած զեյթունցիները խոհեմությամբ հարգում են պարտված թշնամու խնդրանքը, և թուրքական խուճապահար, ջարդված բանակի բեկորները հեռանում են լեռնագավառից:

Կ. Պոլսի ազգային ժողովի ատենագրություններից պարզվում է նաև, որ հայերը թուրքական զորքերի նոր հարձակմանը դիմագրավել են 1861 թվականի փետրվար-մարտ ամիսներին: 1861 թվականի մարտի 21-ի նիստում Ազգային ժողովն արձանագրում էր, թե. «Մարաշեն գիրեր առնվեցան, որովք կիմացվի թե Զեյթունի հայք զինյուք դիմադրություն ըրեր են զիրենք հարստահարողներուն: Ժողովս գրեր խրկել տվավ տեղվույն կառավարության, որ հայոց պաշտպանություն ընե և թե ազգայնոց որ հնազանդություն ընեն»[2]:

Այսպիսով, ավարտվեց Զեյթունի պայքարի առաջին շրջանը, վերացան դեպի սուլթաններն ունեցած լեռնականների պատրանքները, օրակարգի հարց դարձավ լեռնագավառի հպատակեցման խնդիրը, սակայն այլևս ոչ տեղական նշանակությամբ: Զեյթունի խնդիրն այժմ դուրս էր գալիս *Կիլիկիայի ու Արևմտյան Հայաստանի* սահմաններից, հուզում աշխարհասփյուռ հայկական համայնքներին: Ուլնիան դառնալու էր հայ ժողովրդի ազատաբաղձության խորհրդանշանն ու ներշնչման աղբյուրը:

2. Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը

Դարակեսին ուժեղանում էին սուլթանական բռնապետության դեմ բարձրացած ազգային-ազատագրական շարժումները: Ֆրանսիական հեղափոխության ու իտալական ազգային շարժումների գաղափարաբանության ներմուտը Թուրքիա, Հունաստանի ազատագրումը, սլավոնական ազգերի հեղափոխական նկրտումները, մայրաքաղաքում ու Զմյուռնիայում ծավալված սահմանադրական պայքարը և, վերջապես, եվրոպական պետությունների՝ կայսրության ներքին գործերին միջամտելու հաճախահաս փորձերը Բ. Դռանն ստիպում էին կտրուկ միջոցների դիմել, կանխել «տարածվող վարակը», գոնե հայերին հեռու պահել անբարեհույս ազգերից: Արդեն հանրահայտ էր դառնում, որ որչափ ուժեղանում էին եվրոպական Թուրքիայի հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, այնքան ավելի էին խստացվում սոցիալ-քաղաքական ճնշումները, հետապնդումներն ու հալածանքներն Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում ապրող հայկական զանգվածների, առավել ևս, ըմբոստ, կիսանկախ համայնքների Սասունի ու Զեյթունի նկատմամբ: Թուրք պալատականներն այժմ արդեն նկատում էին, որ Տավրոսի հերոսամարտերը, առանձնապես նվաճած իրավունքների պաշտպանության համար հայերի ցուցաբերած անօրինակ սխրանքները ոգևորում էին ազգային զարթոնք ապրող հայ մտավորականությանը, նրան մղում գործողությունների՝ վաղեմի կորցրած պետականության վերականգնմանը, ժողովրդի ազատագրմանը:

Խուրշիդ փաշայի պարտությունից հետո Թուրքիան մշակեց նոր ծրագրեր, Կիլիկիայում կենտրոնացրեց ստվարաթիվ բանակ և ջանաց ամեն կերպ հպատակեցնել Զեյթունը, որպեսզի ազատվեր հետագա բարդություններից: «Ալի փաշա զրուցած էր 1861-են առաջ Տոքթոր Պարթ՝ հռչակավոր գերմանացի ճանապարհորդին, թե՝ «Կիլիկիո լեռներուն մեջ կան քանի մը ապստամբ ժողովուրդք, հուսամ թե քիչ ատենեն զանոնք անհետ կընենք»[1]: Կամ «Նոկայիններուն գլխավոր պեյերուն գրպաններուն մեջ շատ մը նամակներ ու վկայականներ գտնված էին. Մարաշու երևելի տաճիկներեն ու նույն երկրին օսմանյան իշխանութենեն գրված, որոնցմով կը խոստանային Զեյթուն իրենց իբրև ընծա մը տալու, եթե կարենային իսպառ ջարդել զեյթունցիները»[2]:

1862 թ. Մարաշի կուսակալ նշանակվեց նորավարտ զինվորական Ազիզ փաշան: Նրան տրվեց մեծաքանակ կանոնավոր բանակ, հրետանի, լայն լիազորություններ՝ լեռնային Կիլիկիան ասպատակող ցեղերին, հատկապես չերքեզներին զինվորագրելու, արշավանքի նախապատրաստությունը տեսնելու, նոր ապա Զեյթունի վրա արշավելու: Շեյխերի, դերվիշների ու մոլլաների թափորը շարժվում էր Կիլիկիայի քաղաքներով ու գյուղերով, բորբոքում հետամնաց մահմեդական բնակչության կրոնական ֆանատիզմը, ոտքի հանում ավարածարավ իսլամ խուժանին: Լուրեր էին տարածվել, թե Զեյթունի բնակչությանը սրակոտոր անելուց հետո նրա ունեցվածքը բաժանվելու է արշավանքի մասնակիցներին: Այդ պատճառով ամեն օր Ազիզ փաշայի բանակատեղն էին գալիս թուրքերի, չերքեզների, քրդերի զինված ջոկատներ: Գնալով ահռելի ծավալ էր ստանում Մարաշի կուսակալի բանակը: Կարծես թե ամեն ինչ պատրաստ էր, հարկավոր էր արշավանքի առիթ փնտրել, որը և չուշացավ:

[1] «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», էջ 135:

[2] «Ատենագրութիւնք Ազգային ընդհանուր ժողովոյ», հ. Ա, էջ 49, տե՛ս նաև «Տեղեկագիր քաղաքական ժողովոյ կեդրոնական վարչութեան առ Ազգային ընդհանուր ժողով», 1861, Կ. Պոլիս, էջ 24:

[1] «Փորձ», 1879, N 11, էջ 21-22:

[2] Երուսաղեմի մատենադարան, ձեռագիր 2738, թերթ 11-12:

Զեյթունամերձ Քեթմեն գյուղի երկու թուրք ընտանիքների միջև առևանգման պատճառով կռիվ առաջացավ: Առևանգող Իպիշը սպանեց հակառակորդ Ալիին: Սպանվողի հարազատները գալիս են վերցնելու ազգականի դիակը, սակայն Իպիշը չի թողնում: Սրանք, Պեշեն մուսուլմանական գյուղից օգնություն խնդրելով ու մերժվելով, ստիպված դիմեցին արեգինցի Կարապետ Քեհեային, որի մոտ էր գտնվում Ենիտունյան Աստվածատուր իշխանի եղբայր Փանոսը: Իրար հետ խորհրդակցելուց հետո, Կարապետ Քեհեան, հետն առնելով 10 մարդ, գնում է սպանության վայրը, միջնորդում Իպիշի առաջ՝ երկու կողմին խաղաղեցնելու, դիակը տիրոջը հանձնելու մտադրությամբ[1]: Իպիշը չի ենթարկվում, սպանում է Հակոբ անունով զեյթունցուն և փախչում: Կարապետ Քեհեան, վերցնելով 70 կտրիճներ, գիշերը գնում է Քեթմեն գյուղ, պահանջում Իպիշին: Կռիվ է առաջանում: Սպանվում են 14 թուրքեր: Հաջորդ օրը քեթմենցիները Ալի անունով մի արհեստավորի են տալիս 14 սպանվածների արյունաթաթախ շապիկները, որը տանում հանձնում է Ազիզ փաշային և օգնություն խնդրում:

Այնուհետև Մարաշի փաշան բանագնաց է ուղարկում Զեյթուն, իշխաններից պահանջում իրեն հանձնել դեպքին «մեղսակից» 70 հայ երիտասարդներին: «Ու ատենս Զեյթունի գլխավորներն իմանալով, որ Քեթմենի դեպքին վրայոք Ալին զեյթունցոց դեմ գանգատ ըրած էր Ազիզ փաշային, ուրիշ երևելիներու և տեր Մովսես քահանայի հետ ժողովք մը ըրած էին Փրկչի վանքին մեջ ու նամակ մը խավրեցին Ազիզ փաշային, ուրիշ նամակ մը Տյուլ Քատըր օղլու Սուլեյման պեյին, մեկ երրորդ մըն ալ Պայազիտ օղլու Ահմետ փաշային և չորրորդ մըն ալ Միրալյաններուն, որոնց մեջ իրենք էլ կգանգատեին Ճամզ օղլուին անիրավ գործողությանց դեմ... նմանապես գրեցին նաև Մարաշու ուղղափառ հայոց Գեր-Արքեպիսկոպոսին, գաղղիացոց հյուպատոսի տեղապահին և մեճլիսի զմիաբանեալ ու հայ անդամներուն, որպեսզի միջնորդեն Ազիզ փաշային իրենց դատին արդարությունը պաշտպանելու համար»[2]: Անդրդվելի փաշան պահանջում էր զեյթունցի երիտասարդներին: Մերժում ստանալով, ոմանց ասելով՝ 40 հազարանոց կանոնավոր ու անկանոն զորքը 1862 թ. հուլիսի 27-ին շարժվում է Զեյթունի վրա: Սկսվում է լեռնագավառի հերոսական դիմագրավումը, կերտվում է հայոց պատմության փառավոր էջերից մեկը:

Շրջակա հայկական գյուղերի բնակիչները, թողնելով բնակավայրերը, անշարժ գույքը, ապաստանում են քաղաքում: Մեկ մարդու նման ոտքի է կանգնում Զեյթունը: Ամրացվում են դիրքերը, դարաններ ու ծուղակներ են պատրաստվում: Զենք են վերցնում չափահասներն՝ անխտիր, նույնիսկ ալեհեր ծերունիները, պատանիները: Աստվածածնի վանքում հավաքված ժողովուրդը եկեղեցական թափորից հետո համբուրվում էր հարազատների հետ, գիտակցելով ահեղ դատաստանի օրվա գալուստը, նպատակադրվում էր մահվան կամ հաղթության: Դեռահաս աղջիկների, գեղանի տիկնանց պահանջով սրանց տեղավորում էին Յաղուպյան թաղամասի այն հատվածում, որն ընկած էր կամրջից ուղղադիր, լեռն ի վեր բարձրության վրա: Իգական սեռն այստեղից քարեր պիտի տեղար թշնամու գլխին, իսկ պարտության դեպքում կնետվեր Շուղուր գետը, որպեսզի չառևանգվեր ու չընկներ մահմեդականների ձեռքը[1]:

1862 թ. հուլիսի 28-ի առավոտյան Ազիզ փաշայի բանակը, խաժամուժ, ավարածարավ ամբոխը, առջևից գցած 150 շեյխերի և մոլլաների, աղոթքներ որոճալով, զորքին կատաղության աստիճանի գրգռելով, մտնում է Զեյթուն գավառի տարածքը: Ավերվում ու մոխրակույտերի են վերածվում ճանապարհի վրա ընկած 10-ից ավելի գյուղերը: Առաջին ընդհարումը հայերի հետ տեղի է ունենում Չաքըր Դերեյում, ուր, հակառակ խորհրդարանի որոշմանը, ամրացել էր 500 զինվորի գլուխն անցած Շովրոյան իշխանը: Մեկ ամբողջ օր տևող անհավասար մարտերում, 72 զինվորի կորուստի գնով, Շովրոյանը կանգնեցնում է թշնամու առաջխաղացումը, սակայն, դիմագրավումն անհուսալի համարելով, հարկադրված, գիշերը նահանջում է քաղաք:

Արեգին գյուղը կործանելուց հետո հաղթությունից ոգեշնչված փաշայի զորաբանակները ներխուժում են ս. Փրկչի վանքը, սրախողխող անում Մամբրե ծերունազարդ վարդապետին, դիակը դնում սատկացրած շան կողքին, շարժվում դեպի Ջերմուկի դաշտը: Մյուս կողմից թուրք ու չերքեզ աշիրեթները թալանում, ապա մոխրակույտի են վերածում Ավագկալը, գալիս միանում հիմնական բանակախմբերին: Երկու բանակները դեմ-հանդիման կանգնած էին իրարից կես ժամվա ճանապարհի հեռավորության վրա: Սպասվում էր ահեղ ճակատամարտ: «Հիշյալ ամսուն 29-ին,-պատմում է տեր Մովսեսը,- զեյթունցիք մեկ քահանա մը և 13 ալ պատկառելի ծերունի հայազգիք խավրեցին Ազիզի փաշային աղաչելու համար, որ իրենց վրայ գթա, խոստանալով որ ամեն դրած բեյությունները սիրով կընդունեն: Դեսպանները նոկայիններեն, շատ գիսակ նեղություններ ու տառապանք կրելեն վերջը Ազիզ փաշան զիրենք ետ խավրեց, հայտնելով իրենց, որ հրաման ուներ Զեյթունը զարնելու, նույն ամսույն 30-ին տաճիկ զորքերը ևս առավել շատացան որուն մեկ մասը գնաց Աստվածածնա վանքին ետևը եղած տեղերուն տիրապետելու ուր որ պզտիկ կռիվ մը տեղի ունեցավ»[2]:

---

[1] «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», էջ 136:
[2] Երուսաղեմի մատենադարան, ձեռագիր 2738, թերթ 10-11:

[1] Տե՛ս «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», էջ 137:
[2] Երուսաղեմի մատենադարան, ձեռագիր 2738, թերթ 12-13:

Պատվիրակությունն ուղարկելուց հետո 1862 թ. հուլիսի 29-ին Զեյթունի իշխաններն ու հոգևորականները վերջին խորհուրդն արեցին ս. Աստվածածնի վանքում: Նրանք իրենց 5000 կանոնավոր ռազմիկներին բաժանեցին խմբերի, նշանակեցին հրամանատարներ, պատվիրեցին գործել խստագույն կարգապահությամբ, անխուճապ, մեռնել, բայց չփախչել, առավել ևս, չհանձնվել մահմեդականի սրի ողորմությանը:

Չնայած իր ահռելի բանակին, հաշվի առնելով նախորդների ստացած դասերը, խորամանկ փաշան դիմում է նոր խարդավանքի: Ժամանակ շահելու, խաբելով զեյթունցիներին հանգստացնելու, նոր ապա հանկարծակի հարձակման անցնելու մտադրությամբ, բանակապետը բանագնացներ է ուղարկում հայերի մոտ, առաջարկելով հաշտություն: Թուրքերը պահանջում էին անցած տարիների հարկը՝ 500 հազար դահեկան գումարով, ապա և Քեթեմենի դեպքերի ղեկավարներին՝ Կարապետ Քեհեային, Չափար Վարդանյանին[1]: Զեյթունցիները, հասկանալով փաշայի խորամանկությունը, ապագա անցքերի պատասխանատվությունից խուսափելու խոհեմ մտադրությամբ, համաձայնեցին վճարել 125 հազար դահեկան, ինչքան որ ունեին, սակայն հրաժարվեցին «մեղադրյալներին հանձնելուց»[2]: Փաշայի երկրորդ պահանջին՝ թե երկու այլ հայերի թող հանձնեն, զեյթունցիները պատասխանում են, որ հարկը կտան, ինչ վերաբերում է մարդկանց, ապա «հավ մը իսկ չեն հանձներ»:

Բանակցությունների դադարի պահին Զեյթունի մոտակա գյուղերից Ահմետ անունով մի թուրք շնչակտուր հասնում է իշխանների մոտ և հայտնում, թե մարաշցի Պայազիտօղլու Ահմետ փաշան 5000 զինվորներով շարժվում է Ավագ Կետիկի կիրճը և հաջորդ օրը պիտի միանա ընդհանուր զորաբանակին: Իշխանները որոշում են 500 հոգանոց մի ջոկատ ուղարկել Մարաշի թուրքերի դեմ և խափանել նրանց մտադրությունը: Զեյթունցիները վրա են հասնում այն ժամանակ, երբ Պայազիտօղլուի զինվորները զբաղված էին ճաշելով: Նրանք հանկարծակի հարձակվում են կիրճում նստած թուրքերի վրա, կոտորում են շատերին, 15 հոգի գերեվարելով, հաղթականորեն վերադառնում են Զեյթուն:

Զարդված ու խուճապահար Ահմեդի բանակի բեկորները, միանալով Ազիզ փաշայի զորքին, սարսափ են տարածում բոլորի վրա, իսկ զեյթունցիները, անդրանիկ սխրանքից ոգևորված, տեղաբաշխում են պատերազմիկներին և պատրաստվում մարտի: Իշխան Յաղուպյանը կռվելու էր Ավագ Կալեի ճակատում՝ 12 բեյի դեմ, Սուրենյանը և Շովրոյանը ամրանում էին Զեյթունի նախադռան, ճեմարանի կիսավեր շենքի մեջ, իսկ Ենիտունյան իշխանը՝ վանքի և քաղաքի մեջտեղ ընկած ձորում

[1] «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, N 3, էջ 213-214:
[2] Նույն տեղում, տե՛ս նաև Երուսաղեմի մատենադարան, ձեռագիր 2738, թ. 5:

1500 մարտիկներով դարան պիտի մտներ: 500 զինվորներ պիտի գնային թուրքական բանակին ընդառաջ, կռվելով նահանջեին և զորքը քաշեին դարանակալների մեջտեղով[1]: Վճռական պահին դարանակալներին պիտի զգուշացնեին եկեղեցիների զանգերի հնչյունները, և ծայր առներ կոտորածը:

Օգոստոսի 2-ին (14), առավոտյան, Զեյթունի լեռներն ու ձորերը լցվում են հրացանազարկերի ու թնդանոթների որոտով: Քաղաքի ընկուզափայտից պատրաստված ու պղնձից ձուլած կոչնակներն աղիողորմ հնչյուններ էին արձակում, կարծես վերջին դատաստանի օրն էր հասել լեռնականների համար: Ազիզ փաշան ռմբակոծում էր կենտրոնական թաղամասերը, Օսման բեյի 12.000-անոց բանակի թուրքմենական ջոկատը Անիծորից շարժվում էր ճեմարանի մարտկոցի դեմ, ուստի Յաղուպյանը ստիպված էր միանալ մյուս զորախմբին և այս հատվածում կենտրոնացնել 3000 զինվորներ՝ երկու իշխանների գլխավորությամբ: Նրանք զինվորներին հրամայում են չկրակել, մինչև թշնամին այնքան մոտենա, որ «վառոդն ալ գնդակին հետ փորերնին մտնե»[2]:

Ս. Աստվածածնա վանքը պաշտպանում էր ծերունազարդ վարդապետ մահտեսի Գրիգոր Մարտիրոսյանը, ունենալով 7 չափահաս զինվորներ և փոքրաթիվ պատանիներ: Դերվիշներ ու շեյխեր առաջը գցած թուրք բանակախումբը, մոտենալով վանքին, միանգամից գնդակախորով են դառնում չորս դրոշակակիրները: Վանքի դռները կացնով ջարդելու թուրքերի փորձերն անհաջող են անցնում, դռանը կուտակելով թուրքական զինվորների դիակներ: Ալլահից օգնություն խնդրող, գյավուրների ծնունդն անիծող մոլլաները փոխում են այս բանակախմբի երթի ուղղությունը:

Ավարածարավ չերքեզները մյուս թևից առաջ են անցնում, հասնում քաղաքի եզերքը, այնտեղ, որտեղ սպասում էին 500 հայ զինվորները: Արյունահեղ մարտը տևում է երկու ժամ: Փախուստի կեղծ ցույցով զեյթունցի առաջապահ գունդը չերքեզներին քաշում է այն կողմը, ուր դարանամուտ սպասում էին Ենիտունյանի գլխավորած 1500 քաջերը: Հասնում է կանխորոշված պահը: Հնչում են նորից եկեղեցու զանգերը, թաքստոցներից դուրս են թափվում լեռնականները, սկսվում է զեյթունցիների գրոհը:

Անսպասելի հարվածներից շփոթված չերքեզները, իսկ քիչ անց նաև ձախ թևում կռվող թուրքմենական աշիրեթները կոնակ են դարձնում, դիակույտեր թողնելով ետևից, խուճապահար փախչում են: Զեյթունցիներն ուրախության աղաղակներով շարունակում են հետապնդումը, հալածելով անկազմակերպ, խառնիխուռն բազմությանը, հրացանազարկերով ամենուր մահ սփռում: Փոքրամարմին Ազիզ փաշան

[1] «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն», էջ 137-138:
[2] Նույն տեղում, էջ 138:

զայրութից դողում էր և, չկարողանալով ձի հեծնել, քիչ էր մնում գերի ընկներ: Նրան փրկեց բանակում վճարովի ծառայություն կատարող մի զինվոր, որը կռնակն առնելով փաշային, մի կերպ ազատեց գերությունից:

Հաղթանակը կատարյալ էր: Փախուստի դիմող թուրքական բանակը ռազմադաշտում թողնում է երկու թնդանոթ, 2000-ից ավելի դիակներ, հսկայական թվով զենքեր, զինամթերք, պարեն: Փոքրաքանակ զոհերի գնով փառավոր հաղթանակ տարած զեյթունցիները տվեցին 77 սպանված: Վիրավորվել էր Տավրոսի քաջ տեր Հակոբ Դելի Քեշիշյանը: 1862 թվականի Զեյթունի հերոսամարտը, փաստորեն, պսակվեց հայ լեռնականների անվիճելի հաղթանակով: Մարտերում անօրինակ սխրանքներ գործեցին շատերը:

Հայրենանվեր երիտասարդ Մարկոս Թաշճյանը որոշում է մոտենալ թուրքական բանակատեղիին, սպանել Ազիզ փաշային, խուճապ առաջացնել թշնամու զորքի մեջ: Ընկերները փորձում են ետ պահել նրան, ասելով «Անմիտ, ո՞ւր կերթաս, մեռնելո՞ւ կերթաս»: Նա պատասխանում է. «Այո, գիտեմ պիտի մեռնիմ, բայց ուրիշներ պիտի ապրեցնեմ»[1]: Թաշճյանը հերոսի հանդգնությամբ, ռազմական հնարամտությամբ մոտենում է թուրքական բանակին, անվրեպ նշանառությամբ սպանում է հայերին մեծ վնաս պատճառող թնդանոթաձգին: Վերադարձին հերոսաբար զոհվում է նաև Մարկոս Թաշճյանը՝ հայրենակիցներին ազատելով թնդանոթի կրակից: Հետագայում զեյթունցիները երախտագիտությամբ հիշում էին. «Ա՜խ Թաշճյան քաջ Մարկոս աղան, գյուղին համար հոգին տվավ. թնդանոթաձիգը սպաննեց, գյուղին հոգին ալ ազատեց»[2]:

Չաքըր Դերեյի մարտահատվածում հերոսաբար խիզախում էր նորապսակ Մելիքսեթ Քասմյանը: Մարտերում քաջը ծանր վերքեր էր ստացել: Հակառակորդի սրի հարվածից բացվել էր փորը: Նա երկու ձեռքով հավաքել էր դուրս թափված աղիները, սողալով մոտեցել էր Փրկչի լեռանը: Այդ պահին վրա են հասնում փաշայի զինվորները: Թուրք հրոսակները, Քասմյանի մեռած թե կենդանի լինելն ստուգելու նպատակով, կտրում են նաև նրա ականջները: Հերոսը տանում է բոլոր տեսակի տանջանքները: Մայրը որդուն գտնում է տակավին կենդանի: Այս դեպքը պատմում են Մկրտիչ Պեշիկթաշլյանին: Մեկ օր հետո ծնվում է մեծ քնարերգուի «Դու զո՞վ խնդրես մայր իմ անուշ» բանաստեղծությունը: Մարտերում անօրինակ սխրանքներ գործեցին նաև Գալուստ վարդապետը, Զոպու Աբարդյանը, Թորոսենց Հակոբը, Գոգուրենց Փանոսը, որոնք բոլորն էլ հերոսաբար ընկան ճակատամարտում:

[1] «Հայ ժողովրդի պատմություն», խմբագրությամբ Մ. Ներսիսյանի և Վ. Պարսամյանի, Երևան, 1957, էջ 124:

[2] «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», էջ 140:

Ազիզ փաշայի կատարյալ պարտությունից հետո սուլթանական կառավարությունը նոր ու վճռական հակահարված էր նախապատրաստում: Սակայն փոխվում են ծրագրերը, պաշտոնից ազատվում է Ազիզ փաշան, Մարաշի նոր կառավարիչ է նշանակվում խորամանկ Աշիրը, նրան հանձնարարվում է փոխադարձ զիջումների գնով հաշտվել Զեյթունի հետ: Ճիշտ է, վերացվում են Զեյթունի որոշ արտոնությունները, մտցվում է զինվորական հարկ, առաջին անգամ թուրք զորախումբ է մտնում քաղաք, բայց քանդելու վարժված թուրք բռնապետությունը ջանում էր ավելի դաժան վարվել լեռնականների հետ, ինչը չկարողացավ իրականացնել մի քանի պատճառներով:

Զեյթունի ապստամբությունը լայն արձագանք էր գտել, համակրանքի արժանացել Հայաստանի զույգ հատվածներում, հայ գաղթավայրերում, բոցավառել հայկական ամենահեռավոր օջախներում մոխիրների տակ հանգչող հայրենասիրական կրակը, ամենուրեք ազատության հույս ներշնչել, անկախությունից զուրկ, ազատածարավ հայերին, պանդխտության պատրաստվողին ստիպել գեղջուկի ցուպը սրով և հրացանով փոխարինելու: Գահի վրա երերացող, «հիվանդ մարդ» որակված պետության տիրակալը չէր կարող հաշվի չնստել մի ամբողջ ժողովրդի ընդհանուր տրամադրության հետ: Նրան ձեռնտու չէր առայժմ ստեղծելու մի նոր Հունաստան կամ Չեռնոգորիա[1]:

Գործին, իհարկե, միջամտեց նաև Մերձավոր Արևելքում եսակենտրոն նվաճողական քաղաքականության ձգտումներ ունեցող Նապոլեոն III-ը, որին դիմումներ էին գրել, խոստումներ տվել, խոստումներ առել Կ. Պոլսի հայ երևելիները, դրանց թվում վեղարավոր ու անվեղար հայրենանվեր մտավորականները, հայոց պատրիարքը:

1862 թ. նոյեմբերի 16-ին Կ. Պոլիս հասավ ուլնեցի Գրիգոր վարդապետ Աբարդյանը: Զեյթունի իշխանները նրան հանձնարարում էին մայրաքաղաքի հայերին պատմել դեպքերի հետագա ընթացքի, Մարաշում նոր զորամիավորումների կուտակման, գավառն օղակի մեջ առնելու մասին: Թուրքերի ձեռքը չընկնելու վախի տակ, նրանք Աբարդյանին էին տալիս իշխանական կնիքներով վավերացված ճերմակ թղթեր, մայրաքաղաքի հայերին խնդրելով լրացնել ու առաքել բոլոր նրանց, ովքեր կկարողանային օգնել, փրկել վերահաս արշավանքի կամ օղակումով սովամահության դատապարտելու վտանգը:

Երեմիա Տկանց-տեր Սարգսենցի գլխավորությամբ Կ. Պոլսում հավաքվում են մի խումբ հայ մտավորականներ, նույնիսկ ամիրաներ ու հայոց պատրիարքը, որոշում դիմել Նապոլեոն III-ին, թեկուզ զիջումների գնով, կանխել Զեյթունին սպառնացող վերահաս աղետը: Կազմվում է երկու գրություն: Մեկն իբրև հանձնարարական ուղղվում է Փա-

[1] *Մ. Ներսիսյան*, նշված աշխատությունը, էջ 116:

ռիզում գտնվող Կարապետ Շահնազարյանին, որպեսզի նա օգնի Գրիգոր Աբարդյանին[1]: Ֆրանսերենով գրված, սեպտեմբերի 23-ի (1862 թ.) թվակիր մյուս գրություն-աղերսագիրն ուղղված էր Նապոլեոն III-ին[2], որտեղ նկարագրվում էր Ուլնիայի իրավիճակը, սուլթանի նոր մտադրությունները, ապա հայերին օգնելու խնդրանքները:

Պատրիարքի միջնորդությամբ, վաճառականի անցագիր հանելով, հանգանակության միջոցներով գոյացած դրամը տալով, պոլսահայ երևելիները Գ. Աբարդյանին ուղարկում են Փարիզ: Նա հասնում է Կ. Շահնազարյանին, զեկուցում դեպքերի ընթացքը և երկուսով անցնում են գործողությունների: Աստանդական հայերի համար դժվար էր թափանցել կայսրի պալատը: Երկար սպասումներից հետո նրանք ստիպված հսկում են այն ճանապարհը, որով անցնելու էր Նապոլեոն III-ը: Դեկտեմբերի 5-ին, սպիտակ ձիեր լծված կառքով, կայսրը դուրս էր եկել շրջագայության: Պատեհ առիթը չկորցնելով, Կ. Շահնազարյանն իրեն նետում է դանդաղ շարժվող կառքի առաջ: Նապոլեոնը, նկատելով այս տեսարանը, բարձրացնել է տալիս հայ բանագնացին, նրա ձեռքից ընդունում աղերսագրի տեքստը: Դեկտեմբերի 6-ին, կայսրի հրամանով, Շահնազարյանին և Աբարդյանին ընդունում է Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը[3], զրուցում նրանց հետ և հայտնում իր կառավարության համաձայնությունը հայերին օգնելու վերաբերյալ, սակայն վերջնական պատասխանը վերապահում է հետագային:

1862 թ. դեկտեմբերի 11-ին Կ. Շահնազարյանն ստանում է իր գրության պատասխանը, որտեղ ասված էր, թե հանձնարարություն է արված Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Տրուեն դը Լուիսին, ինչպես նաև Հալեպի հյուպատոսին, որոնք պետք է հայերին պաշտպանեին և թույլ չտային արշավանքի կրկնությունը: Դեկտեմբերի 31-ին Տրուեն դը Լուիսը անձամբ ներկայանում է մեծ սադրազամ Ալի փաշային, հայտնում Նապոլեոնի կամքը և պահանջում Կիլիկիայում տիրող խժդժությունների վերացում[4]: Սիրիայի դեպքերից դաս առած թուրք բարձրաստիճան պալատականն առերես համաձայնություն է տալիս, իսկ գաղտնաբար Մարաշի կուսակալին հրահանգում Զեյթունի օղակումը շարունակել և սովամահությամբ վերջ տալ ըմբոստ լեռնականներին:

Ալի փաշայի դիտավորությունները չվրիպեցին պոլսահայերի ուշադրությունից: Զեյթունով խանդավառվող Մ. Պեշիկթաշլյանը, Մ. Մամուրյանը, Երեմիա Տեկանցը և ուրիշները նոր բողոքագրեր են առաքում ֆրանսիական դեսպանին, Կարապետ Շահնազարյանին հանձնարարում վերստին դիմել Փարիզի բարձրաստիճան պաշտոնյաներին: Փաստորեն, դրվում էր պարտքերի տակ սուլթանին բեռնավորած ֆրանսիական կառավարության հեղինակության հարցը, ուժեղանում էին անգլո-ֆրանսիական հակամարտությունները Մերձավոր Արևելքում և այդ հակասությունների բովում բարձրանում էր Զեյթունի խնդիրը: Ահա թե ինչու «...կայսրն կրկին և կրկին հեռագիրս արձակե առ սուլթան. և առ Ալի փաշայն, վաղվաղակի բառնալ զպաշարումն. և երաշխավորել կենաց ուլնեցոց. ապա թե ոչ մտից նավատորմիդ իմ ի Միջերկրական ծով և զպաշարեցից զԴարդանել և Կ. Պոլիս. զարհուրյալ Ալի փաշայն ի սաստիկ սպառնալյաց քրիստոնյա կայսերն հակամայս հրաման արձակեց առ Ազիզ փաշայն բառնալ զպաշարումն. ուստի դարձավ կորագլուխ Ազիզ փաշան ի Մարաշ և ուլնեցիք առին շունչ. և գտան պաշար ուտելյաց զի թե երկարեր պաշարումն սովամահ կորնչելոց էին»[1]:

Սուլթանական կառավարությունն առհարկի համաձայնում է նաև հանձնաժողովի կազմմանը և լեռնային Կիլիկիայում տիրող իրավիճակի քննարկմանը: Սկզբում Մարաշ է գնում Պոլսի ֆրանսիական դեսպանության քարտուղարը, միջնորդում Ազիզ փաշայի առաջ և մահապատժից ազատում է վաղուց բանտում շղթայված մի խումբ զեյթունցիների, որոնցից երկուսն արդեն տանջամահ էին արվել: Կալանավորված իշխանները բերվում են մայրաքաղաք, քիչ անց ազատ արձակվում: 1863 թ. դեկտեմբերի 6-ին Մարաշ ուղևորվեց Զեյթունի գործը քննող հանձնախումբը. Մեծ եպարքոսի օգնական Շեյին բեյը, հայերի ներկայացուցիչ Սարգիս Աղաբեկյանը. կաթոլիկների պատգամավոր Դավուտ էֆենդին, ֆրանսիական դեսպանատան աշխատակից Ժյուլ Ռոբերը: Հանձնաժողովը քսան օրում ուսումնասիրեց ապստամբության հետ կապված մանրամասնությունները. Թուրքիային վերադարձրեց ռազմավարի մի մասը, հատկապես երկու թնդանոթները. զեյթունցիներին պարտադրեց կանոնավոր հարկ տալ և թույլատրել ս. Աստվածածնա բարձունքի վրա զորանոց կառուցել այնտեղ կայսերական մշտական հսկող զորախումբ պահելու մտադրությամբ. սակայն այս անգամ հաջողության չհասավ:

Այսպիսով, Զեյթունի խնդիրը լուծվում էր փոխադարձ զիջումների գնով: Եթե թուրքական կառավարությունը հրաժարվում էր նոր արշավանքից. խնայում էր լեռնականների կյանքը. ապա ուլնեցիներն էլ. փաստորեն, զրկվում էին դարավոր անկախ դրությունից, դառնում սուլ-

[1] *Երեմիա Տեկանցի* «Տոհմային հիշատակարան», որի Զեյթունի անցքերին վերաբերող մի հատվածը հրատարակել է Հ. Մ. Պողոսյանը: Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1964, N 3, էջ 56-78:

[2] ՀՍՍՀ Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի արխիվ, վավ. 142:

[3] ՀՍՍՀ ԳԱԹ, Ազատյանի արխիվ, վավ. N 6:

[4] Նույն տեղում:

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների» 1964 N 3 էջ 68-69:

թանահպատակ սովորական մի գավառ և պարտավորվում տալ այնպիսի հարկեր, ինչպիսին վճարում էին մյուսները:

Անկասկած, ֆրանսիական կառավարության միջնորդությունը դրական դեր խաղաց Զեյթունի խնդիրը խաղաղ կարգավորելու գործում: Սակայն, չբացահայտելով դրա դրդապատճառները, օտար և հայրենի նախասովետական պատմագրությունը գունազարդում է Նապոլեոն III-ի ավանդն այս խնդրում, եսակենտրոն, նվաճողական քաղաքականություն վարող կայսրին ներկայացնում իբրև հայափրկության միսիա կատարող:

Ֆրանսիական կառավարությունը վաղուց էր հետաքրքրվում Կիլիկիայով: Նապոլեոն III-ի առաքած միսիոներները տակավին 50-ականների սկզբներին վխտում էին Տավրոսում և մորեխի նման «հնձում» քրիստոնյա ազգաբնակչությանը, նրանց քաշում դեպի կաթոլիցիզմի «փարախը»: Նշանավոր գիտնական Վիկտոր Լանգլուան, անկախ հայասիրական գործունեությունից, խնդիր ուներ իր կառավարության քաղաքական զավթումների համար հող նախապատրաստելու: Նա շրջում էր ողջ Կիլիկիայով մեկ, ուսումնասիրում ժողովրդի վարքն ու բարքը, պատմական անցյալը, փոխհարաբերությունները քրիստոնյաների ու մահմեդականների միջև, համակրանքով արտահայտվում հայ լեռնականների մասին, նույնիսկ «Տավրոսի հայերին արևելքի ֆրանսիացիներին, լիակատար անկախություն ցանկանում»:

Խնդիրն այստեղ դրվում էր այնպես, որ ոտքի կանգնեին հայ լեռնականները, առիթ տային Ֆրանսիայի միջամտությանը և Սիրիայի նման մտնեին Նապոլեոն III-ի հովանավորության տակ: Փարիզի քաղաքագետներն այս նպատակին էին ծառայեցնում նաև Լևոն Լուսինյանին, որը հանրագրեր էր կազմում, ամեն տեղ ներկայանում իբրև կիլիկյան թագավորազուններից սերված, Հայաստանի բախտով հետաքրքրվող մի անձնավորություն: Իրականում նա լծվել էր ֆրանսիական դիվանագիտության կառքին և ջանում էր հայերին կտրել Ռուսաստանի ազդեցությունից, նրանց մղել դեպի Նապոլեոն III-ի արևելյան քաղաքականությունը: Գործակցած կաթոլիկների համայնապետ Անտոն Հասունյանին, «հայ իշխանը» նույնպես ջանքեր չխնայեց Զեյթունի ու Մարաշի հայերին համոզելու, որպեսզի սրանք թեքվեին դեպի ֆրանսիական կողմնորոշումը: Կաթոլիցիզմի ջերմ պաշտպան, Վատիկանի կղերապետության հայ գործակալներն, օգտագործելով առիթը, Մարաշի և Զեյթունի լեռնականներին մոլորեցրին ընդունել հռոմեադավանությունը և ժողովրդի ազատասիրական բաղձանքները, փաստորեն, ծառայեցրին իրենց նպատակներին: Այդպես էլ կշարունակվեր, եթե ժողովրդանվեր հայ մտավորականությունը գաղափարական պայքար չսկսեր սրանց դեմ, եթե չվերահամոզեին Կիլիկիայի քաջամարտիկներին թողնելու կաթոլիկությունը և վերադառնալու հայադավան եկեղեցու գիրկը:

Ֆրանսիայի արևելյան քաղաքականությունը, հայասիրական «փրկարար միսիան» ունեին տնտեսական հիմքեր: Նապոլեոն III-ը դեպի Կիլիկիա էր մղվում բամբակի համար: XIX դարի առաջին կեսին Ամերիկայի էժանագին բամբակը ողողեց եվրոպական շուկաները: Ֆրանսիան սնվում էր ամերիկյան բամբակով, ներմուծելով հումքի գերակշռող տոկոսը: Ղրիմի պատերազմին հաջորդեցին քաղաքացիական կռիվներն Ամերիկայում: Բամբակամշակման գործը անկում ապրեց այնտեղ: Փարիզի ու Լիոնի հազարավոր մանածագործները, բամբակ չլինելու պատճառով, պարապ էին[1]: Ֆրանսիական տնտեսագետները ելքը գտնում էին Կիլիկիան տնտեսապես նվաճելու և այնտեղ վաղուց ի վեր սկսված բամբակամշակության գործին զարկ տալու մեջ: Առիթը ներկայացավ: Հանձին մարիոնետների, ֆրանսիական կայսրն իր հենարանն ուներ այնտեղ: Բախտի դաժան դիպվածը հայերին ևս նետում էր նրա գիրկը: Ահա թե ինչու 1862 թվականին զեյթունցիներին «օգնելուց» հետո ֆրանսիական առևտրական նավերը Կիլիկիա էին տեղափոխում բամբակի առողջ ու արդյունավետ սերմեր, բամբակազտիչ գործիքներ, մասնագետներ: Բարձրացվեց հումքի գինը: Հայերի մեծ մասը ներգրավվեց բամբակամշակման գործի մեջ: Սկսվում էր Կիլիկիայի տնտեսական նվաճումը Ֆրանսիայի կողմից:

Բացահայտելով Ֆրանսիայի այս պատմաշրջանում վարած արևելյան քաղաքականության ներքին դրդապատճառները, չի կարելի հայերի նկատմամբ բռնած դիրքի խնդրում հավասարության նշան դնել սրա և հին ոճի գաղութատեր Անգլիայի միջև: Երկյուղ կրելով Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի դիրքերի ամրացումից, Անգլիան սուլթանական բռնատիրության պաշտպանի դեր էր ստանձնում, թշնամաբար տրամադրվում հայ ազգային-ազատագրական շարժումների, Զեյթունի ապստամբության հանդեպ, փոխարենը ստանալով «համեղ պատառներ»:

Կ. Պոլսի անգլիական «Լևանդ հերալդ» թերթը, դեսպանի անմիջական մասնակցությամբ, գրական հալածանքի մի անազնիվ արշավանք սկսեց Կիլիկիայի ապստամբ հայերի դեմ: Ապստամբության նախօրյակին անգլիական թերթը չափազանցրեց Քեթեմեն և Արեգին գյուղերի միջև ծագած վեճը, անիրավացիորեն դեպքերի պատասխանատվությունը գցեց հայերի վրա և, փաստորեն, թուրքերին գրգռեց ավելի վայրագորեն գործելու[2]: Հերոսամարտերի նկարագրության մեջ «Լևանդ հերալդը» հանդես էր գալիս բացահայտ թուրքասերի դերում, ապստամբների հաղթանակից հետո Աբդուլ Ազիզին գրգռում էր նոր գործողությունների, Զեյթունի բնաջնջմանը, առիթը բաց չէր թողնում ար-

[1] "Раздел Азиатской Турции по секретным документам министерства иностранных дел", под редакцией *А. Адамова*, Москва, 1924, стр. 21.

[2] «Ծաղիկ», 1862, N 42, էջ 351-352.

դարացնելու վարած հայաջինջ քաղաքականությունը: Նրանից ետ չէին մնում մյուս պարբերաթերթերը, որոնք անզգուշաբար հայտնում էին իրենց պետության դիրքորոշումը արյան ու սրի միջոցով վերջ տալու Սերբիայի ու Հունաստանի անկախությանը, Թուրքիային օգնելու «խաղաղեցնել» Կիլիկիան ու Հայաստանը, Ռուսաստանին ու Ֆրանսիային զրկել կայսրության մեջ ունեցած հենակներից:

«Ծաղիկ», «Մեղու», «Սեր», «Մասիս», «Փարիզ» թերթերը մերկացրին անգլիական կառավարության հայակուլ քաղաքականությունը, հակահարված տվեցին նրա կառքին լծված պարբերականների գրգռիչ ելույթներին: Սակայն այդ բանը չվրիպեց նաև օտարների աչքերից:

Անգլիայի կառավարության, երկրում ու Թուրքիայում հրատարակվող պարբերականների, Կ. Պոլսի բրիտանական դեսպան Հենրի Պոլիվերի բռնած թշնամական դիրքն այնքան բացահայտ էր հայ ժողովրդի ազատագրական շարժումների հանդեպ, որ այն զգում էին արդեն օտարերկրացիները: Ֆրանսիական «Դեբա» թերթը, դրականապես արտահայտվելով Զեյթունի ապստամբության մասին, ավելացնում էր, թե սուլթանական կառավարությունը Կ. Պոլսի անգլիական դեսպանատան դրդումով է ուժեղացնում հալածանքները հայ ժողովրդի նկատմամբ: Ֆրանսիացի ականավոր գրող և հրապարակախոս Ժիրարդենը Աբդուլ-Ազիզի հայահալած քաղաքական նոր կուրսի սկսման պատասխանատվությունը դնում էր անգլիացիների վրա, որոնց հովանավորությամբ սուլթանը ձեռարձակ խեղդում էր քրիստոնյա ազգերի հատկապես հայերի ազատաբաղձ ձգտումները, ապստամբական շարժումները:

Այսպիսով, եվրոպական մեծ պետությունները հայ ազատագրական շարժմանն օգնում էին այն դեպքում, եթե շահ ունեին, երբ պետականությունից զրկված, ազգային վերազարթոնք ապրող ժողովրդին կարողանում էին ծառայեցնել իրենց նվաճողական դիտավորություններին: Ընդհանուր առմամբ, նրանցից և ոչ մեկը իրականում կողմնակից չէր հայերի ազգային ինքնորոշմանը, առավել ևս, Ռուսաստանի հովանու տակ անցնելուն: Այդ բանն արդեն հասկանում էին նորաստեղծ հայ դեմոկրատական մտավորականները, որոնք, դատապարտելով օտարի փեշերից կախվելու ազգայինների վաղեմի ու առօրյա փորձերը, հույսը դնում էին ժողովրդական զանգվածների լայնահուն ազատագրական շարժման վրա և գործողության տակավին թույլ, բայց և այնպես կոնկրետ փորձեր անում:

Այսպիսով, անկախ ելքից, հաղթանակով պսակված Զեյթունի փառքը բոլոր պարագաներում առաջին հերթին պատկանում էր զեյթունցիներին, ապա նաև ողջ հայ ժողովրդին, նրա առաջադեմ զավակներին և ոչ որևէ օտար պետության կամ «հայասեր անհատի»:

3. Զեյթունի ապստամբության արձագանքները

Զեյթունի իրադարձությունները լայն արձագանք գտան հայ իրականության մեջ: Ազիզ փաշայի 1862 թ. արշավանքի մասին ամենից առաջ իմացվեց Կոստանդնուպոլսում[1], այնտեղ, որտեղ արդեն ապրում էին 250 հազարից ավելի հայեր, որտեղ կային հայ ամիրաներ, կայսերական բարձրաստիճան պաշտոնյաներ, հայոց պատրիարքարան, պարբերական մամուլ, թատրոն, հայկական տպարաններ և, վերջապես, հիմնականը Արևմտյան Հայաստանը լքած պանդուխտներ, արհեստավորներ ազատագրական պայքարի ամենակենսունակ, վստահելի և արմատական շահեր հետապնդող մասը:

Օգոստոսի 1-ին, երբ թուրքական բանակը կրակ էր թափում հերոսական ճիգերով դիմագրավող Զեյթունի վրա, Պոլսի հայ ամիրաները, պատրիարքն անտաբերությամբ բազմել էին իրենց ամառանոցներում և չգիտենալու էին տալիս կատարվող անցքերը: Ապստամբության հաղթանակից հետո միայն, նրանք միջնորդի դեր էին կատարում Բ. Դռան և զեյթունցիների միջև[2], հորդորում հպատակություն «վեհաշուք ու հայախնամ սուլթանին» և դատապարտում լեռնականների ըմբոստացման փորձերը: Ազգային ժողովի անգործունյա երեսփոխանները, մասնավորապես լուսավորական հովերով տարված Սերվիչենը, Գր. Օտյանը, Պալյան եղբայրները, կարճ ասած երեկվա «սահմանադրականները», այսօր երկնչելով ժողովրդական հուժկու շարժումներից, գերադասեցին դաշինք կղերա-ամիրայականների հետ և հանդես եկան խաղաղասիրական քարոզներով, պատճառաբանելով, թե հայն այլևս արյուն չունի թափելու, ուստի նա պետք է կուլտուրապես զարգանա, լուսավորվի և այդ ճանապարհով գտնի իր փրկությունը[3]:

1862 թ. օգոստոսի 1-ին Ազիզ փաշայի Զեյթունի վրա հարձակվելու օրը Կ. Պոլսի հայ արհեստավորները, պանդուխտ օրամշակները մայրաքաղաքում ցույց կազմակերպեցին, շարժվեցին դեպի հայոց պատրիարքարան, շրջապատեցին այն և սկսեցին քարեր տեղալ պատրիարքի ու Ազգային ժողովի երեսփոխանների վրա[4]: Ավելի քան երկու հազար հոգուց բաղկացած ցուցարարները պահանջում էին գործադ-

---

[1] Այս մասին մանրամասն տե՛ս *Հայկ Ղազարյան*, Զեյթունի 1862 թ. ապստամբության արձագանքները XIX դարի 60-ականների հայ իրականության մեջ, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1962, N 10, էջ 13-26:

[2] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 4177, Ա և Բ մասերը գրված են Երեմիա Տկանցի կողմից:

[3] *Ն. Ռուսինեան*, Ազգային հանգանակութիւն, 1865, Կ. Պոլիս, տե՛ս նաև «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», մասն Ա, Կ. Պոլիս, 1871:

[4] «Ծաղիկ», 1862, N 40, 41, 42, «Մեղու», 1862, N 168, 169, «Ընդարձակ օրացույց», Կ. Պոլիս, 1909, էջ 397-400:

ության մեջ դնել արևմտահայերին խոստացած Ազգային սահմանադրությունը, վերջ տալ հայերի հալածանքներին Արևմտյան Հայաստանում և դադարեցնել արյունահեղությունը Կիլիկիայում: Առավոտից մինչև երեկո տևող ցույցը ճնշվեց Սելիմ փաշայի գլխավորած զինվորականների բռնության ուժի տակ, իսկ ցուցարարներից ոմանք բանտարկվեցին և ծեծվեցին: Օգոստոսի 1-ի ցույցը առիթ է տալիս *ենթադրելու*, որ Զեյթունի ապստամբության մասին նախօրոք գիտեին պոլսահայ դեմոկրատները, որոնք գործարար կապերի մեջ էին նրանց հետ:

Մեկ շաբաթ չանցած, Պոլսում սկսեց պտտվել Ազիզ փաշայի բազմահազարանոց բանակի պարտության լուրը: Կատաղած էր կայսերական պաշտոնեությունը, ցնծության ու ոգևորության մեջ էր հայ առաջադեմ մտավորականությունը: Մարկոս Աղաբեկյանի քույր Սրբուհի Աղաբեկյանը, հետագայում Ալեքսանդր Երիցյանի կին Սրբուհի Երիցյանը, իր հուշերում պատմում է, որ Զեյթունը հայ ժողովրդի ոգևորության ու ազգային հպարտության խորհրդանիշն էր այդ օրերին: «Այն տարի Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի Հայոց վերա. ամենայն ոք Կիլիկիան ուներ ի բերան, ամենայն ոք մասնակից էր դրամական հանգանակությանց... նույնիսկ հռոմեադավան հայ երիտասարդները մոռացել էին դեպի իրանց լուսավորչական եղբայրներն ունեցած ատելությունը և ամենայն սիրով թե նյութապես և թե բարոյապես օգնում էին այդ ձեռնարկություններին»[1]:

Ապստամբությունից հետո, բացի կղերա-ամիրայական վերնախավի մի խումբ ներկայացուցիչներից ու հետադիմական ուղղությունը պաշտպանող պարբերականների խմբագիրներից, մայրաքաղաքի ընդհանուր հայ զանգվածները, Ազգային ժողովի երեսփոխանները, նույնիսկ պատրիարքի տեղապահ Ստեփան Նիկոմեդացի եպիսկոպոսը լարված հետաքրքրությամբ տեղեկություններ էին սպասում Զեյթունից: Մինչև հոկտեմբերի կեսերը, պարբերաթերթերում տպագրված հոդվածների, պաշտոնական հայտարարությունների մեջ արված հաղորդումներից զատ, սրանք ավելին չգիտեին Կիլիկիայի անցքերի մասին, չնայած սուրհանդակների միջոցով բազմաթիվ նամակներ էին ուղարկել Մարաշ, Հաճըն, Ադանա, յուրայիններից մանրամասնություններ խնդրել: Ազիզ փաշան այնպես էր օղակել Կիլիկիան, որ ոչ մի լրաբեր չէր կարող դուրս գալ այնտեղից: Նույնիսկ անանցանելի լեռնակիրճերի վրա պահակակետեր էին հաստատված, իսկ Զեյթունն առնված էր երկաթյա աքցանի մեջ:

Եվ վերջապես, մեծ դժվարություններ հաղթահարելով, 1862 թ. հոկտեմբերին, մի չորեքշաբթի օր Կ. Պոլիս հասան Զեյթունի անդրանիկ

[1] «Փորձ», 1877, N 4, էջ 193:

պատգամավորները *տեր Հակոբ քահանան և Մնացական Սեմերճյանը*՝ Զեյթունցին: Նրանք իջևանեցին Տեր-Սարգսենց Երեմիայի մոտ, հաջորդ օրը գումարված խառը ժողովում պատմեցին ընդհանուր եղելությունը և հանձնեցին իշխանների խնդրագրերը՝ իրենց օգնության հասնելու մասին: Պոլսահայերն անմիջապես հանգանակություն կատարեցին, հավաքված դրամով զգեստափոխեցին պատգամախոսներին, կազմեցին մի աղերսագիր և սրանց ձեռքով մատուցեցին Ալի փաշային:

Երկու զեյթունցին մայրաքաղաքի մտավորականության, գավառահայ պանդուխտների, եկեղեցականների ամենացանկալի հյուրերն էին ամենուրեք: Գաղթօջախի հայերն այրվող հետաքրքրությամբ լսում էին նրանց-պատմածները, ամեն ոք ձգտում էր տեսնել քաջակորով լեռնականներին: Ոգևորությունը գնալով մեծացավ, և որոշվեց հանձնաժողով կազմել, հանգանակություն կատարել և նյութական օգնություն հասցնել «կարոտյալներին»[1]:

Նոյեմբերին կազմված գավառահայ «Թշվառներին նպաստահավաք» ընկերության նախագահը պատրիարքական փոխանորդ Երեմիա վարդապետ Տեր-Սարգսենցն էր, անդամները՝ Կարապետ Շահնազարյանը, Մկրտիչ Խրիմյանը (որը Մուշի Գլակի վանքումն էր և Պոլիս հասավ 1863 թ. օգոստոսի 30-ին), Նովրուզյան Հովակիմը, Մյուհենտիսյան Մարտիրոսը, Յուսուֆյան Տիգրանը, Մամուրյան Մատթեոսը, Յուրուճյան Մանվելը, Գափամաճյան Տիգրանը և այլոք. թվով 13 հոգի: Ընկերության այս «ներքին գործնական կազմից» բացի ընտրվում էին արտաքին անդամներ՝ բաղկացած յոթ հոգուց: Ատենապետը Մարտիրոս Մյուհենտիսյանն էր, ատենադպիրը՝ Տիգրան Յուսուֆյանը, գանձապետը՝ Հովակիմ Նովրուզյանը[2]:

Զեյթունին օգնության նպատակով հանգանակություն կազմակերպող ընկերությունն իր մասնաճյուղը հաստատեց Թիֆլիսում, որի մեջ ընդգրկվեցին տասը հոգի, այդ թվում՝ Մարկոս Աղաբեկյանը, Պետրոս Սիմոնյանը, Համբարձում Էնֆիաճյանը, Համբարձում Հախումյանը և ուրիշներ: Մատթեոս Մամուրյանին հանձնարարվեց կազմել գրություններ, կապ հաստատել Թիֆլիսի մասնաճյուղի հետ և «պահել» հանգանակած գումարի հաշվեկշիռը: Հանգանակվեց 20.000 օսմանյան ոսկի, որը, հանձնվելով հետագայում մայրաքաղաք եկած Գրիգոր Աբարդյանին, տեր Մովսես քահանային, Աստվածատուր Ենիտունյան և Ղազար Շովրոյան իշխաններին, մաս-մաս ուղարկվեց Զեյթուն: Հանգանակությանը մասնակցեցին ազգակազմավորման բուռն պրոցես ապ-

[1] «Փորձ», 1877, N 4, էջ 193-194:

[2] Տե՛ս Մատենադարան, ձեռագիր 4177, թերթ 10-12, տե՛ս նաև «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, մարտ, էջ 225-226:

ռող, ամենատարբեր դասերի ու խավերի ներկայացուցիչներ, հեռավոր ու մոտավոր քաղաքների հայեր: *Ամենաուշագրավն այն է, որ փոքրաքանակ հայեր ունեցող Ինդոնեզիայի հայ գաղթօջախը* մասնակցում էր Զեյթունի օգնության գործին և դրամ հասցնում հանգանակություն կազմակերպողներին:

Զեյթունի հերոսամարտերի լուրը հասնում է հեռավոր Ինդոնեզիա, հատկապես խորը ազդեցություն թողնում հայ գաղթականների վրա: Այդ առիթով Բատավիայում հավաքվում է 568 ռուփի, որը փոխանակագրով հասցվում է Փարիզ, տրվում «Փարիզ» թերթի խմբագրությանը, խնդրելով շուտափույթ հանձնել զեյթունցիներին: Թերթի աշխատակիցները նախօրոք հավաքած դրամին ավելացնում են Բատավիայից առաքված 3266 ֆրանկ 44 սանտիմը և ուղարկում Զեյթուն: Բատավիայի նվիրատուների ցանկում մեծ տեղ էին գրավում նաև կանայք[1]:

Զեյթունի հերոսամարտերը լուրջ ազդեցություն ունեցան նաև Պետերբուրգի և Մոսկվայի հայ ուսանողության վրա: 1863 թվականին ռուսական այդ երկու մեծ քաղաքների հայկական գաղթօջախներում կազմակերպվեցին ուսանողական խմբակներ, որոնք համախմբվեցին «Ժողով» անունով կազմակերպության շուրջը: «Ժողովը»[2] քաղաքական աշխատանք էր տանում ուսանողության շրջանում: Խմբի մեջ մտնող 42 հայ ուսանողների ջանքերով քննության էին առնվում նաև «հետաքրքիր նյութեր», Թուրքիայից եկած նամակներ, հայ ազատագրական շարժումներին, Զեյթունին ու Վանին վերաբերող հոդվածներ և այլն:

Զեյթունի հերոսամարտը արտացոլվեց հայ պարբերական մամուլի էջերում, առիթ տվեց թեր ու դեմ կարծիքների բախմանը, հասարակական-քաղաքական հոսանքների դեպի ժողովրդի ազատագրումն ունեցած դիրքի առավել բացահայտմանը: Համենայնդեպս, ամենից մարտական դիրք բռնեցին և ապստամբների բացահայտ պաշտպանությամբ հանդես եկան դեմոկրատական թերթերը, որոնք կենտրոնացված էին գաղութահայ օջախներում:

Ապստամբության մասին Պոլսի հայկական բոլոր պարբերականներից հայատառ թուրքերեն «Մյունատի» դեմոկրատական շաբաթաթերթը տպագրեց առաջին հոդվածը, որը կարդացվեց լարված հետաքրքրությամբ և առիթ տվեց առաջադեմ մտավորականների ու ժողովրդական զանգվածների արդարացի վրդովմունքին: Հաջորդ օրը «...հիշյալ լրագրի խմբագիր պ. Կարապետ Փանոսյանը,- գրում է «Փորձի» թղթակիցը, - առանց որևիցե բացատրության բանտարկվեցավ այնպիսի խիստ կերպով, որ երկար ժամանակ ոչ ոք չգիտեր, թե նա սպանվեցավ, թե կենդանի է»[1]: Երեմիա Տեկանցը վկայում է, թե Փանոսյանը, նստած սուլթանի քթի տակ, «փարավոնական բարբարոս»[2] էր անվանել նրա զորավար Ազիզ փաշային, պահանջելով պատժել վերջինիս արյունարբու գինվորներին, այլապես հայերը կդիմեն եվրոպական տերություններին և օգնություն կխնդրեն նրանցից: Փանոսյանը բերդարգելության տակ դրվեց, սաստիկ ծեծվեց և սեպտեմբերի 11-ին միայն ազատվեց, իսկ «Մյունատին» դատապարտվեց հավիտենական լռության:

«Մեղու» պարբերաթերթն ավելի հանգամանորեն անդրադարձավ Զեյթունի ապստամբությանը: Թերթի խմբագիր Հարություն Սվաճյանը մասնակցեց պոլսահայերի օգոստոսի 1-ի ցույցին, հրապարակեց մարտաշունչ հոդվածներ, որտեղ նա մերկացրեց ռուսական «Սովրեմեննոյե սլովո» և անգլիական «Լևանդ հերալդ» թերթերի թղթակիցներին, որոնք պաշտպանում էին մեծ տերությունների նվաճողական քաղաքականությունը: Սվաճյանն ուղղակի զենքի էր կոչում արևմտահայությանը, խրախուսում այդ ձևով օգնել զեյթունցի եղբայրներին: Ապստամբության օրերին նա տպագրեց Ս. Շահազիզի հետևյալ տողերը.

«Ոչ ոք չէ կարող հոգուս նպատակ
Ճնշել, խորտակել բռնության զենքով.
Ո՛չ սուր, ո՛չ արյուն, ո՛չ բանտ, ո՛չ կայծակ,
Ո՛չ նույնիսկ գեհեն մշտավառ բոցով»[3]:

Զեյթունի ապստամբության օրերին Սվաճյանը, հրապարակախոսությանը զուգընթաց, գաղտնի աշխատանք էր ծավալում պոլսահայության մեջ: Սուլթանասեր հայ երևելիների սադրանքով օգոստոսի 10-ից-20-ը «Մեղուն» ևս փակվեց, Սվաճյանը ենթարկվեց հարցաքննության և սպառնալիքի: Նույն տարվա վերջերին մի քանի ամսով Սվաճյան-Մեչուխեչան անհայտացավ հրապարակից: Թուրքահպատակ հայկական գավառներ շրջելիս, հավանաբար, նա Կիլիկիայում ևս եղավ և ջանաց կապերն ամրապնդել Զեյթունի հետ՝ իր և Նալբանդյանի ծրագրի կենսագործման նպատակով:

---

[1] Տե՛ս «Փարիզ», 1863, N 84: Այս խնդիրը շոշափված է *Ա. Անասյանի* «XIX դարի հայ ազատագրական շարժումները և Ինդոնեզիայի հայ գաղութը» հոդվածում. ՀՍՍՌ ԳԱ, «Տեղեկագիր», 1963, N 7, էջ 80-81:

[2] Տե՛ս «Հորիզոն», 1913, N 280-283, *Ղ. Ադայան,* Երկեր, հ. 3, էջ 72, 145: Մանրամասն տե՛ս *Աշոտ Հովհաննիսյան,* Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2, էջ 195 և հետո:

[1] «Փորձ», 1876-1877, N 1, էջ 172:

[2] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 4177, թերթ 10:

[3] «Մեղու», 1862, N 170, էջ 179:

Զեյթունի դյուցազնամարտը պաշտպանություն գտավ Զմյուռնիայի հայ առաջադեմ թերթերի, մասնավորապես դեմոկրատական «Ծաղիկ» տասնօրյա հանդեսի էջերում, որն այդ օրերին խմբագրում էին Արմենակ Հայկունին և Վ. Հյուգոյի «Թշվառների» տաղանդավոր թարգմանիչ Գրիգոր Չիլինկիրյանը:

Տակավին 1861 թվականի օգոստոս ամսին «Ծաղիկը» տպագրում էր հոդվածներ Զեյթունի մասին և Ա. Հայկունու բանաստեղծությունները նվիրված զեյթունցիներին[1]: 1862 թ. օգոստոսի 1-ին, 10-ին և 20-ին հրապարակված համարների ընդարձակ առաջնորդողները, դրանցից զատ մի քանի այլ հոդվածներ նվիրված են Զեյթունի ապստամբությանը և Պոլսի օգոստոսի 1-ի ցույցին: Հոդվածներում բացահայտորեն ապստամբության մարտակոչ էր նետվում Թուրքիայի ու Ռուսաստանի կրնկի տակ հեծող համայն հայ ժողովրդին: Օգոստոսի 1-ին «Ծաղիկը» գրում էր. «Հայեր, արդեն ժամանակը անցած է, և մեզ կամ դեպի ճշմարիտ բարեկարգություն դիմելեն և կամ կորուսելեն ի զատ ուրիշ հույս մնացած չէ, մեր բանն արդեն լմննալու մոտ է: ...Արիանանք ուրեմն և փառավոր կյանք մը ձեռք անցնելու փափաքեն ավելի մահվան ձեռքեն ազատելուն համար հարկ եղած միջոցները ձեռք առնումք, առանց աջ կամ ահյակ ծրելու ճակատնիս բարձրացնեմք, անվեհեր լինիմք և մեր վատ թշնամիներուս ցուցընենք մեյ մը ինքզինքնիս, և հայտնեմք նոցա թե Հայությունը մեռած չէ, ցուցնենք նոցա թե որքան դյուրակործանելի և խարխուլ են իրենց ամբարշտական պարիսպները, և վերջապես հայտնեմք թե հաղթությունը միմիայն ճշմարիտ ազգասիրաց վերջին մրցանակն է»[2]:

Հատկանշականն այն է, որ «Ծաղիկը» արմատական դիրքերից հարձակումներ էր գործում ոչ միայն թուրքական կառավարության, նրա կուսակալների, այլ նաև «վասակադեմ» այն հայերի վրա, որոնք պառակտում էին ազգը և դավաճանում ազատագրական համընդհանուր շարժմանը: Նա «ասպարեզը զինու զորությանն» էր թողնում և անմիջականորեն «զինական հեղափոխություն» էր պատգամում յուրայիններին: Օգոստոսի վերջին 7 ամիս լռեց նաև «Ծաղիկը», 24 օր բանտային կալանքի տակ դրվեց և խոշտանգումների ենթարկվեց Գր. Չիլինկիրյանը: Հ. Սվաճյանը, Ա. Հայկունին, Գր. Չիլինկիրյանը և այլոք սկսեցին ընդհատակյա աշխատանք ծավալել:

Ապստամբության մասին հաղորդագրություններ տպագրեցին պատրիարքարանի բերան դարձած «Մասիս», «Արշալույս Արարատյան» և Կ. Պոլսի ու Զմյուռնիայի լիբերալ և պահպանողական թերթերը, որոնք բավարարվում էին կամ օտար թղթակիցների հոդվածների թարգմանա-

---

[1] «Ծաղիկ», 1861, N 4:

[2] «Ծաղիկ», 1862, օգոստոս, N 40, էջ 333:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

ՄԱՍՇՏԱԲ 1:3 350 000

ԹԻՖԼԻՍ — Քարթլի Կախեթիի թագավորության մայրաքաղաքը մինչև Ռուսաստանին միացվելը

ԿԱՐՍ — Խանությունների և փաշայությունների կենտրոններ

Օրդուբադ — Օկրուգի կենտրոն

ԵՐԵՎԱՆ — Խոշոր քաղաքներ

Ալաշկերտ — Քաղաքներ և ավաններ

Խոր — Այլ բնակավայրեր

Ռուսական կայսրության սահմանները 1801 թ.

Ռուսական կայսրության սահմանները Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումից հետո (12.X1813թ.)

Ռուսական կայսրության սահմանները ըստ Թուրքմենչայի (10.II 1828թ.) և Ադրիանոպոլսի (2.IX 1829թ.) հաշտության պայմանագրերի

Ռուսաստանին միացված տարածքներ

1801թ. — 1803—1813 թթ. — 1828թ. — 1829թ.

Պարսկա-օսմանյան սահմանը XIXդ. առաջին կեսին

Վրացական վասալական թագավորությունների և իշխանությունների սահմանները մինչև Ռուսաստանին միացվելը

Պարսկական խանությունների և օսմանյան փաշայությունների սահմանները XIX դ. սկզբին

Օրդուբադի օկրուգի սահմանը

Զորքերի շարժման ուղղությունները ռազմական արշավանքների ժամանակ

ռուսական / պարսկական — 1826 թ.

ռուսական / պարսկական — 1827 թ.

ռուսական / թուրքական — 1828 թ.

ռուսական / թուրքական — 1829 թ.

Պարսկական զորքերի նահանջը

5.VII 1827 — Ճակատամարտերի վայրը և թվականը

23.VI 1828 — Ռուսական զորքերի կողմից խոշոր բնակավայրերի և բերդերի գրավման ժամանակը

Քաղաքների և բերդերի պաշարումը

Գյուլիստան 12.X 1813 — Արևելյան Հայաստանը և Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ պայմանագրերի կնքման վայրերը

Ծանոթագր. Իրավական ակտերը տես տեքստում

Քարտեզում թվերով նշված են.
1—Գուրիական իշխ. (մինչև 1804թ.)
2—Իմերեթի թագ. (մինչև 1804 թ.)
3—Դիարբեքիրի փաշայություն

Ստեղծվել է տարեմուտին 01.12.1988թ.

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX դ. վերջին–XX դ. առաջին քառորդում

ՄԱՍՇՏԱԲ 1:4 400 000



Ստորագրել է տպագրության 01.12.1988թ.

Ակադեմիկոս Ս.Տ.ԵՐԵՄՅԱՆ

կան հրատարակությամբ, կամ զգուշավոր մի քանի խորհուրդներ տալով: Մինչդեռ «Երևակի» խմբագիր Հովհաննես Չամուռճյանը կառավարության ուշադրությունն էր հրավիրում դեմոկրատական թերթերի տպագրած հոդվածների վրա, պատճառ դառնում նրանց գոցմանը:

Ապստամբությունն արձագանք գտավ կովկասահայության մեջ, Մոսկվայի և Պետերբուրգի հայ գաղութներում, Թեոդոսիայում և Փարիզում: Թիֆլիսում հրատարակվող «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը դրվատում էր զեյթունցիների քաջագործությունները, դատապարտում Ազիզ փաշային և ընդհանրապես սուլթանական կառավարությանը: «Կիլիկիայի անցքերու պատճառով հրավեր Ռուսաստանի հայերուն» կոչ-հոդվածում խմբագրությունը հայերին հիշեցնում էր կիլիկեցիների անցյալի փառքը, նրանց ըմբոստ ու քաջակորով բնավորությունը, ռուսահայերին պարտավորեցնում գոնե դրամական միջոցներով օգնել վշտացյալ ու վիրավոր եղբայրներին: «Ռուսաստանի հայերն էլ,- գրում է «Կռունկը»,- իրանք որ քրիստոնյա տերության հովանավորություն, հանգստություն և բարօրություն են վայելում, չեն մոռանում խորը Տաճկաստանումը կրակի ու սրի տակ հալ ու մաշ եղող իրենց եղբարցը»[1]:

Նույն տարվա հոկտեմբեր ամսվա համարում *«Կռունկը»*, Ստեփանոս Պալասանյանի թարգմանությամբ, տպագրում է Վիկտոր Լանգլուայի «Ճանապարհորդություն ի Կիլիկիա և ի լերինս Տավրոսի» աշխատությունը, նպատակ ունենալով արևելահայության մեջ համազգային պայքարի ու միասնական պետության ստեղծման սեր արթնացնել: Նոյեմբերին ամսագիրը տպագրում է նաև նոր լուրեր Զեյթունի մասին, որոնք քաղված էին «Արշալույս Արարատյան», ֆրանսիական «Օպինիոն Նասիոնալ» և «Նորդ» լրագրերից:

Զեյթունի իրադարձություններին ավելի մանրամասնորեն անդրադարձավ Կալկաթայում եղիազար Տեր-Հարությունյանի խմբագրությամբ լույս տեսնող վիմատիպ «Եղբայրասերը» հնդկահայ վերջին պարբերականներից մեկը: Անգլիական գործարանային ապրանքների ներմուտից տուժող հնդկահայ վաճառականության Նոր Զուղայից գաղթած այս ներկայացուցիչը, արտահայտելով իր դասակարգի շահերը, ձգտում էր համախմբել ներհակ սոցիալական խավերին, ճանապարհ հարթել ազգային շարքերի «եղբայրասիրական» միաձուլման, հայրենի կորսված պետականության վերականգնման համար:

«Եղբայրասեր» տասնօրյա հանդեսը, 1862 թ. օգոստոս ամսից սկսած, արտատպում էր Զեյթունի «անցքերին» վերաբերող մանրամասն տեղեկություններ, բացատրում այդ շարժումների համազգային,

---

[1] «Կռունկ Հայոց աշխարհին», 1862, էջ 780:

քաղաքական բնավորություն ստանալը և ճշտորեն բացահայտում, թե ինչպես Վանի զինված ելույթը, այնպես էլ Ուլնիայի ապստամբությունը բռնկվել էին սուլթանների վարած ազգահալած քաղաքականության, ազգային ճնշումների և սոցիալական հարստահարությունների ավելի ուժեղացման պատճառով[1]:

«Եղբայրասերը» Զեյթունը դիտում էր իբրև խորհրդանիշ ազատագրական պայքարի ելած հայ հայրենասերների: Նրա խմբագիրն այդ օրերին տպագրում էր այլաբանական առակներ, ազատաբաղձ խոհերով համակված մարտակոչ բանաստեղծություններ, անդրադառնում Մ. Նալբանդյանի կյանքի ու բանտարկության պարագաներին: Հզոր աշխարհակալների ձիերի սմբակների տակ մաշվող, դանդաղորեն քայքայվող ու մահացող փոքր ազգերի նկատմամբ Անգլիայի, Թուրքիայի ու Պարսկաստանի քաղաքականությունն էր դատապարտում պարբերականը: Նրա հայացքը, համենայնդեպս, հառած էր դեպի Ռուսաստանը:

Զեյթունին համակիր էջեր էին նվիրում նաև «Հյուսիս», «Կովկաս», «Մասյաց աղավնի», «Փարիզ», «Մեղու Հայաստանի» և արևելահայ ու աշխարհասփյուռ գաղթօջախների այլ թերթերը:

1864 թ. *«Մասյաց աղավնի»* պարբերականը հրատարակեց Գևորգ Քանանյանցի «Զեյթունի հայք և զանոնք Կովկաս փոխադրելու առաջարկությունը» հոդվածը[2]: Քանանյանցը խորապես չգիտակցելով իր տեսության հետևանքները, առաջարկում էր զեյթունցիներին գաղթեցնել Ռուսաստան, իսկ կառավարությանը համոզում էր երկրից գաղթած չերքեզներին փոխարինել Զեյթունի հայերով: Նրա առաջարկը ոչ միայն պաշտպաններ չգտավ, այլև հակառակ ազդեցությունն ունեցավ:

Զեյթունի հերոսամարտը ոգևորության անսպառ աղբյուր հանդիսացավ հայ մտավորականության համար, այն նյութ տվեց հրապարակախոսին, սյուժե արձակագրին, *երգվեց հայրենանվեր բանաստեղծների գրչով, աշխարհով մեկ սփռված երգիչների շուրթերով:*

Ուլնիայի դեպքերն ամենից խոր տպավորություն գործեցին քնարերգու բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանի վրա: Քաջատեղյակ ապստամբության ընթացքին, բանաստեղծը 1862-1863 թթ. հերոսամարտի առաջ բերած ընդհանուր ոգևորության մթնոլորտում գրեց «Հայ քաջորդի», «Մահ քաջորդույն», «Թաղումն քաջորդույն», «Հայ քաջուհին» Զեյթունի երգերի հիանալի շարքը, ինչպես նաև «Եղբայր ենք մեք» բանաստեղծությունը: Իրար հետ ներքնապես կապված, քառամաս այս դյուցազներգական պոեմի հերոսը պատմական դեմք Մելիքսեթ Քասմյանն էր, որը կյանքից առավել ազատությունն էր սիրում և, իբրև ապացույց, մատաղ կյանքը զոհում է սիրած հայրենիքի ու նրա ազատության պայքարին:

Հիշյալ շարքում կերտված է նաև ազգային-ազատագրական պայքարին մասնակից զեյթունցի կնոջ կերպարը և միաժամանակ արտահայտված Պեշիկթաշլյանի հավատամքը հայ ժողովրդի քաղաքական վերածնության, հայկական ինքնավարության հասնելու մասին:

Զեյթունը երգեց որպես բանաստեղծ մինչև օրս անհայտ, բայց հայտնի մտավորական ու հասարակական գործիչ պոլսեցի ավագ քահանա Հովհաննես Մկրյանը: 1863 թ. մարտի 27-ին արդեն պատրաստ էր պեշիկթաշլյանական մոտիվներով գրված Հովհաննես Մկրյանի «Դեպի՜ Զեյթուն» ընդարձակ բանաստեղծությունը: Այն մինչև վերջերս անհայտ էր հայ գրական աշխարհին: Բանաստեղծը չափածո ձևով, բարձրարվեստ տողերով պատմում է Տավրոսի չքնաղ բնության, զեյթունցիների անցյալի սխրանքների, երկրի անսպառ հանքային հարստությունների, բարեբեր հողերի հողագործի վիճակի մասին: Նրա ոգևորության աղբյուրը միայն Զեյթունը չէր, այլ հանուր Կիլիկիան»[1]:

Զեյթունի դեպքերը մեծ ազդեցություն ունեցան Ռ. Պատկանյանի վրա: Սկսելով լեգենդար Քյոռ-Օղլուց, բանաստեղծը եկավ դեպի հայոց պատմության ամենահերոսական դեմքերից մեկի Վարդան Մամիկոնյանի կերպարի բնութագրմանը, անուղղակիորեն այդ օրերի հայ ազատամարտիկների փառքի գովասանքին: 1862 թ. Թիֆլիսի «Կռունկ»-ում լույս տեսավ նրա «Աղասու մոր երգը» բանաստեղծությունը, որը նվիրված էր Աբովյանի անմահ հիշատակին: Բանաստեղծության տեքստում Զեյթուն անունը չի գործածված, սակայն քննախույզ աչքը կարող է նկատել, որ այն նվիրված է Կիլիկիայի դյուցազուններին և մարտակոչ է նետված նրանց օգնության պարտական արևելահայ ու արևմտահայ աշխատավորներին: Ի դեմս հայ պատանու, Պատկանյանը դեգերումներից հետո գտել էր իր հերոսին, որը, սակայն, քնած էր, պետք է զարթներ, կապեր զենք ու զրահ, նոր միայն շտապեր մարտի դաշտ Զեյթուն:

Հայերի ազգային-ազատագրական շարժմանն արձագանքել է Սմբատ Շահազիզը: Ջերմ տողեր նվիրելով Իտալիայի ազատարարներին, ոգեշնչվելով Գարիբալդիի զենքի հաղթանակով, նա միաժամանակ մեծարել է հայ ժողովրդի ըմբոստացման և ընդվզման փայլուն արտահայտությունը Զեյթունի հերոսական ապստամբությունը: Ազգային-ազատագրական պայքար շեփորող բանաստեղծի տեսադաշ-

---

[1] «Եղբայրասէր», N 23, էջ 185 և հետո:

[2] Տես «Մասյաց աղաւնի», 1864, ԺԱ և ԺԲ, էջ 186-191:

[1] Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի արխիվ, բաժին Ա, վավ. 104, թերթ 7-8:

տից չեն վրիպել այն ստոր դավերը, որ զեյթունցիների շուրջը նյութում էին կաթոլիկ քարոզիչները, դրա համար էլ 1863 թ. «Եզվիտներ և Զեյթուն» հանրահայտ բանաստեղծության մեջ նա գրել է.

Զեյթո՛ւն, սրբազան մնացորդ անցյալի,
Տավրոս լեռների հայ ազգ բնակիչ,
Արթո՛ւն կաց,- գիտե՞ս, վրադ է գալի
Եզվիդ ամբոխը, գայլեր գիշատիչ:
Նոքա յուրյանց հետ շատ ոսկի ունին,
Նոքա կշռում են դորանով կրոն...
Սկանք չդնես գետնաքարշ լեզվին:
Թքի՛ր լրտեսին,- զինվորվի՛ր Զեյթուն:

Շահազիզի այս տողերը քաղաքական տագնապի ահազանգ էին[1], որոնց հեղինակը նպատակ ուներ կաթոլիկ քարոզիչներին զրկել Կիլիկիայում դավանափոխություն կատարելու առատ հասկաքաղից, դրանով իսկ վերացնել ազգային-եկեղեցական միասնականության վրա կախված վտանգը, վնասազերծել ազգապառակտիչ այդ հաշիշը:

Ինչ խոսք, ո՞վ կարող էր Զեյթունի փառքն ավելի գովերգել, քան ինքը պայքարող ու նահատակվող, խիզախ ու անվեհեր, դարերի ազատամարտիկ, քաջ ու տաղանդավոր զեյթունցին: Զեյթունի պոեզիան ամբողջովին ներծծված է ազատասիրական մտորումներով, մեռնող քաջի գովասանքով, թույլի ու վախկոտի պարսավանքով, բոլորին դեպի մարտ կոչելով: «Քայլերգ Զեյթունի», «Երգ զեյթունցվոց», «Զեյթունն անկախ», «Զեյթունցիներ», «Զեյթունցիք», «Զեյթունցիներուն» և այլ բանաստեղծությունները[2], որոնք անխտիր բոլորն էլ երգի են վերածված, գովերգում են գավառի քաջամարտիկների սխրանքները, ոգևորում Տավրոսի բնակիչներին, փորձում ցույց տալ լույսի ու ազատության շավիղը: «Զեյթունցիներ» քայլերգը սիմֆոնիկ նվագախմբի համար գործիքավորել է ռուս ականավոր կոմպոզիտոր Իպպոլիտով-Իվանովը.

Արևն ելավ, զեյթունցիներ,
Դեհ, ձի հեծնենք, առնենք զենքեր,
Ինչո՞ւ, ինչո՞ւ գլուխ ծռենք
Բռնավորին մեր վիզ պարզած:

[1] «Հայ նոր գրականության պատմություն», հ. 2, Երևան, 1962, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 305:
[2] «Զեյթունի պատմագիրք», էջ 798-820:

Կեցցե՛ Զեյթուն, ապրի՛ Զեյթուն,
Թող չտեսնե ստրկություն,
Քանի ունի մեզ պես որդիք
Ապրի՛ Զեյթուն, կեցցե՛ Զեյթուն:

Այսպիսով, Զեյթունի ապստամբության լուրը թափանցեց հայաբնակ գրեթե բոլոր անկյունները, ոգևորեց ազատության ծարավ հայ ժողովրդի աստանդական բեկորներին, համազգային նշանակություն և հետագա լուրջ ազդեցություն ունեցավ ազգային կազմավորման, ընդհանուր ազատագրական շարժումների առաջացման գործում:

4. Կապեր Զեյթունի հետ. Հայ մտավորականության ընդհատակյա գործունեության խնդիրը

Զեյթունի ապստամբությունը, Արևմտյան Հայաստանում նրան հաջորդող 1850-60-ական թվականների ժողովրդական ելույթները, թուրքական կառավարության, քուրդ աղաների դեմ բարձրացված ընդվզումները օտարի կողմից պարտադրվել են ու բռնկվել առհարկի: Այսուամենայնիվ, ազգակազմավորման շրջանում, երբ սկիզբ էր առնում արևելահայ ու արևմտահայ հատվածների գործնական մերձեցումը, երբ ասպարեզ էին իջնում ազատագրական պայքարի ոգեկոչված, ժողովրդի շահերն արտահայտող առաջադեմ մտավորականներ, վերջիններս չէին կարող բավարարվել միայն գրչի մարտերով, անմասն մնալով ժողովրդական, անմիջական պայքարից: Սակայն հեշտ չէր նրանց գործը, մանավանդ որ արևմտահայ մտավորականները հիմնականում կենտրոնանում էին սուլթանի նստավայրում:

Թուրքական դամոկլյան սուրը, հայ վերնախավերի սուլթանասեր հակումները ազատաբաղձ մտավորականներին ստիպում էին գործել *գաղտնի:* Ծնունդ էին առնում ընդհատակյա խմբակներ, ազատագրական պայքարին նվիրված գործիչներ, մտավորական շրջաններ ընդգրկող կազմակերպություններ, որոնց գոյառնումն ու գործունեությունը դեռ պարզված չէ լիովին: Այդուհանդերձ, դրանց զգալի մասի մտահոգության առարկան անվիճելիորեն Թուրքիայի լծի թոթափումն էր, արևմտահայ ժողովրդի ազատագրումը: Մտավորականության ուշադրությունն առավել բևեռված էր ըմբոստ լեռնականների Տավրոսի քաջերի վրա, մի հանգամանք, որ գործնական կերպարանք էր ստացել անցյալ դարակեսից:

Տակավին Ղրիմի պատերազմի օրերին, 1853 թ. Կոստանդնուպոլսից Զեյթուն առաքվեց Մելիքյան Հովակիմը: Զեյթունի անդրանիկ գա-

ղափարական քարոզիչը սկզբում ուսուցչի պարտականություն էր կատարում, սակայն նա ուներ նաև այլ խնդիրներ: Մելիքյանն «ինքնապաշտպանական» խմբակներ էր կազմակերպում, զենք մթերում, առավելապես ազատասիրական գաղափարներ սերմանում, ձգտում ժողովրդին ոտքի հանել սուլթանական լծի դեմ[1]: Հ. Մելիքյանը նպատակադրվել էր չսահմանափակվել Զեյթունով, նաև կամրջել արևելահայերի ու արևմտահայերի ազատասիրական բաղձանքները, Կովկասից դրամական օգնություն ստանալով, զարկ տալ զենքի արտադրությանը: Թուրք պատմաբանների վկայությամբ, այնքան էր բարձրացել Մելիքյանի հեղինակությունը, որ Զեյթունի չորս իշխանները նրան կարգում են իրենց ընդհանուր *ղեկավար՝ վալի*[2]:

Մելիքյանը կառուցել տվեց մի ընդարձակ դպրոց, ռազմական նշանակություն ունեցող ամրություններ և, իր գործն ավելի ընդարձակելու մտադրությամբ, ճանապարհվեց Ռուսաստան հանգանակություն կատարելու: Կարինում նրան բանտարկեցին և հրապարակայնորեն կախեցին[3]:

Մելիքյանին հաջորդեցին շատերը, սակայն դրանց մեջ առավել ուշադրության արժանի է եղիա Տնտեսյանը: 1862 թ. հուլիսի 24-ին Կ. Պոլսից Ադանայի և Սսի վրայով նա մեկնեց Հաճըն: Տնտեսյանը (1834-1881 թթ.) հայտնի երաժշտագետ էր, ուսուցիչ, *«Անձնվեր ընկերության»* անդամ և Տավրոս մեկնելիս հանձնարարություն ուներ ազատասիրական պրոպագանդ մղել ժողովրդի մեջ, լուսավորել նրանց, ոտքի հանել պայքարի: Զեյթունն այդ օրերին օղակված էր Ազիզ փաշայի զորքերով: Թուրք հրոսակները պատրաստվում էին հոշոտել հայ հերոս լեռնականներին, իսկ Տնտեսյանն առանց երկնչելու մեկնում էր այնտեղ: Հուլիսի 24-ին Ադանայից, սեպտեմբերին Հաճընից Տնտեսյանի գրած նամակներից ակնհայտ է, որ նա *պատասխանատու խնդիր լուծելու* պարտականություն ուներ, ինչպես նաև «գաղտնապահ բարեկամներ»[4]: Տնտեսյանը գիտակցել էր խնդրի դժվարությունը, սակայն, «հայրենասիրությունը խոհեմությանն հաղթելով», նրան մղել էր գործողության: Հայրենասեր ուսուցիչը Կիլիկիայում, հատկապես Հաճընում ու Զեյթունում մնաց մինչև 1863 թվականի հուլիսի 18-ը[5]: Տնտեսյանը զեյթունցիներին տվեց հայրենասիրական մտորումներ, «Անձնվեր

[1] *Զեյթունցի,* Զեյթունի անցեալն և ներկայն, մասն Ա, էջ 90-91:
[2] *Esat Uras,* Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, 1950, Ankara, s. 494.
[3] «Պատմա-բանասիրական հանդես», 1962, N 4, էջ 65:
[4] *Վ. Զարդարեան,* Յիշատակարան, հայ երևելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, գրութիւնները..., հ. Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 343 և հետո:
[5] *Յ. Պ. Պօղոսեան,* Հաճընի ընդհանուր պատմութիւն և շրջակա Գոգան տաղի հայ գիւղերը, 1942, Լոս Անջելես, էջ 421-424:

ընկերության» հանգանակած դրամը և մեկ տարի հետո վերադարձավ մայրաքաղաք:

Ե. Տնտեսյանի հետ մերձավոր հարաբերությունների մեջ էր երիտասարդ վարդապետ Գրիգոր Աբարդյանը, որը Կ. Պոլիսը կապում էր Տավրոսի, Տավրոսը Փարիզի հետ: Անշուշտ, հայրենանվեր այս սուրհանդակն էր հիշատակվում Ս. Թագվորյանի Մ. Նալբանդյանին առաքած հանրահայտ նամակում[1]:

Զեյթունի ապստամբության ղեկավարների, Տավրոսից Պոլիս ժամանած պատվիրակների հետ գործարար կապեր էին պաշտպանում «Բարեգործական ընկերության» անդամների մի մասը, մասնավորապես, նրա ձախ թևը: «Բարեգործականի» ատենադպիր Մկրտիչ Պեշիկթաշլյանը 1862 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մի քանի անգամ ընդունում է Զեյթունից եկած սուրհանդակներին, մանրամասն տեղեկանում գավառի դրությունից, իր մոտ հավաքում «գաղափարամերձ անձնավորություններին» և նյութական օգնություն ու բարոյական աջակցություն ցույց տալիս ապստամբներին:

Ապստամբությունից հետո Մ. Պեշիկթաշլյանը և Երեմիա Տեկանցը Զեյթունից նամակ են ստանում: Նամակները Պոլիս էր բերել տեր Հակոբը, իսկ քիչ անց մայրաքաղաք էր եկել Մնացական Սեմերճյանը Զեյթունցին: Պեշիկթաշլյանը և Երեմիա Տեկանցը մեկ ամիս պահում են ապստամբների առաքած սուրհանդակներին, նոյեմբերի վերջերին Բերայի սուրբ Երրորդության եկեղեցի հրավիրում պոլսահայ մտավորականներից շատերին, պարզում զեյթունցիներին տրվելիք պատասխանները: Նամակները պատրաստում է Մկրտիչ Պեշիկթաշլյանը, խոստանալով օգնություն հասցնել նրանց: Այս նիստին մասնակցում էր նաև Զեյթունով խանդավառվող, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի նորընտիր դիվանապետ Մատթեոս Մամուրյանը[2]:

1862 թ. նոյեմբերի 16-ին կրկին Պոլիս հասնող Գրիգոր վարդապետ Աբարդյանը Մ. Պեշիկթաշլյանի բնակարանում նրա «համակիրներին» տեղեկացնում է Զեյթունում տիրող իրադրության, իշխանների մտադրության մասին: Աբարդյանը հաղորդում է, թե ուլնեցիներն արդեն ստացել են *«առաքված գրությունները»,* ունեն բավականաչափ զենք ու կարողություն դիմակայելու սուլթանի նոր արշավանքին: Սակայն նա կասկած է հայտնում, որ հազիվ թե այս անգամ կարողանան հասնել այնպիսի հաղթանակի, ինչին հասան օգոստոսյան օրերին: Հավաքույթի գործուն մասնակիցներն էին Երեմիա Տեկանցը, ավագ

[1] *Աշոտ Յովհաննիսյան,* Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 498, տես նաև «Փարիզ», 1862, N 64
[2] Մատենադարան, ձեռագիր 4177, թերթ 14-20

քահանա Հովհաննես Մկրյանը, Պողոս Օտյանը և Մկրտիչ Պեշիկթաշլյանը[1]:

1862 թ. դեկտեմբերի 12-ին Պոլիս են ժամանում զեյթունցիների նոր պատվիրակներ տեր Մովսեսը, Աստվածատուրը և Ղազարը, նրանց սպասավոր Կարապետը: Այս նոր պատվիրակությունն ավելի հարուստ տեղեկություններ հաղորդեց պոլսահայ առաջադեմ մտավորականությանը, 50 օր շարունակ մնաց Երեմիա Տեկանցի բնակարանում, ընդունվեց և հյուրասիրվեց «Բարեգործական ընկերության» գործադիր ու ղեկավար կազմի կողմից, Զեյթուն տեղափոխեց *«Գավառական տառապելոց նպաստի անվամբ»* կոչված ընկերության հանգանակած դրամի մի մասը: Նախքան Զեյթուն մեկնելը պատվիրակությունն ընդունվեց հայոց պատրիարքի տեղապահ Ստեփանոս Մաղաքյան եպիսկոպոսի կողմից, նրա ընկերությամբ այցելեց արտաքին գործերի մինիստր Ալի փաշային, թուրքագետ Մովսես քահանայի բերանով հաղորդեց Զեյթունում տիրող դրության մասին[2] և կառավարությանը հանձնեց Մ. Պեշիկթաշլյանի, Մ. Մամուրյանի, Ե. Տեկանցի խմբագրությամբ իշխանների կազմած դիմումի տեքստը:

Այսպիսով, Զեյթունցու (Մնացական Սեմերճյանի), տեր Մովսես քահանայի, տեր Հակոբի, Տավրոսից եկած այլ հայ պատվիրակների միջոցով զեյթունցիների հետ գործարար կապերի մեջ էին Մ. Մամուրյանը, Մ. Պեշիկթաշլյանը, ավագ քահանա Հովհաննես Մկրյանը, Երեմիա Տեկանցը, երիտասարդ վարդապետ Մ. Խրիմյանը և նրա սան ու ապագա զինակից Գ. Սրվանձտյանցը: Մտավորականների ու եկեղեցականների, հայրենասերների մի ամբողջ բույլ էր այդ, որը հավաքում էր տարբեր հայեցակետեր մի ընդհանուր նպատակի ժողովրդի ազատագրմանը ծառայող ճանապարհի վրա դնում համախոհներին և նրանց մղում գործողության: *Այնուամենայնիվ, այս գործիչները ապստամբների հետ կապեր հաստատեցին կամ արձագանքեցին շարժմանը նրա բռնկումից հետո միայն:*

Հայ ազատագրական շարժման պատմության համար հետաքրքիր վավերաթուղթ է Պաղտասար Նորատունկյանի նամակը: Պ. Նորատունկյանը 1862 թ. Փարիզում էր: Նա մասնակցում էր Վ. Լանգլուայի նախագահությամբ, Ֆրանսիայի մայրաքաղաքում կազմված Մարաշի կոտորածների պատճառով տուժած ընտանիքներին օգնություն ցույց տվող հանձնաժողովին, որին անդամակցում էին նաև Կ. Շահնազարյանը, Ա. Մուրադյանը և ուրիշներ[3]: Նորատունկյանը 1863 թ. անցավ

[1] Մատենադարան, ձեռագիր 4177, թերթ 26 բ:

[2] Նույն տեղում, էջ 28ա: Տե՛ս նաև «Մասիս», 1862, 22 դեկտեմբերի, «Ազգային» խորագրով հոդվածը:

[3] «Նալբանդյանը և նրա ժամանակը», գիրք առաջին, էջ 559:

Եգիպտոս, քիչ հետո եղավ Հռոմում, որտեղից և հոկտեմբերի 21-ին Պոլիս առաքեց իր կազմած ծրագիր-նամակը Հայաստանի ազատագրման վերաբերյալ:

Նամակում ասվում է, թե ինքը տեսակցություն է ունեցել լեհ իշխան Չարտորիժսկու հետ, որն առաջարկել է հայերից զորախումբ կազմել, կռվել ցարական կառավարության դեմ «ի նպաստ լեհական հեղափոխության»: Նորատունկյանը, չնայած տեսակցության էր գնացել ֆրանսիացի հայտնի ծովակալին, նրանից տեղեկացել դավադիրների ծրագրի մանրամասներին, սակայն, գաղափարամերձ Մ. Պեշիկթաշլյանի նման, վստահություն չէր ցուցաբերում ֆրանսիական ծրագրին, այն է Կ. Պոլսից մարդիկ ուղարկել Բարձր Հայք, այնտեղից կազմակերպել հայ և քուրդ «քաջամարտիկներ», արշավել Վրաստան, Ռուսաստան, թուլացնել ցարական կառավարությանը և հնարավորություն ընձեռել Լեհաստանի ազատագրմանը:

Պ. Նորատունկյանը իրավացիորեն մերժում է լեհ-ֆրանսիական դավադրական ծրագրերը, բացասաբար արտահայտվում բռնապետի մասին, սակայն դրվատում ֆրանսիական հեղափոխության գաղափարներն ու պայքարի ձևերը: Նա առաջարկում էր ապստամբական ոգի ներարկել հայերին, ազգի փրկությունը որոնել նրա սեփական ուժերի մեջ: Նորատունկյանը տրտնջում էր Նապոլեոնին օգնության դիմողներից, ասելով, որ *«Զեյթունի գործքը խայտառակ կերպով վերջացավ»*, միաժամանակ պահանջում *«եռյակների»* սիստեմով ընդհատակյա *կոմիտեներ* ստեղծել, հիմք դնել Հայաստանի ազատագրումը նախաձեռնող եռանձնյա կամ հինգ հոգուց բաղկացած մասնաժողովին[1]: «Կարելի է հարցնել, թե ո՞վ կարող է այդպիսի ծանր բեռի մը տակ մտնելով հաջողիլ զանոնք գործադրելու:

Այն ժամանակ պիտի պատասխանեմ. *Մենք* և միմիայն մենք, հետևյալ հոդվածներն անմիջապես հավատով ընդունելով: Ա. մասնաժողով մը երեք կամ հինգ անդամներե բաղկացյալ: Բ. պաշտոնն. ազգիս արտաքին գործերը վարել: Գ. նպատակն. *Հայաստանի շղթաներն խորտակել»*[2]:

Նամակը հասցեագրված էր ազգի աչքում մեծ համարում ունեցող եկեղեցականին, հավանաբար Մ. Խրիմյանին, այնտեղ մեծ ակնածանքով խոսվում էր Մ. Պեշիկթաշլյանի մասին: Նամակը գտնվել է Գ. Սրվանձտյանցի թղթերի մեջ: Սրանից զատ, հայտնի այլ տվյալներ չեն

[1] «Նալբանդյանը և նրա ժամանակը», գիրք առաջին, էջ 561, 562, տե՛ս նաև *Մ. Գ. Ներսիսյան,* Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ, էջ 141-142, նամակի տեքստը տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», գիրք ԺԳ, էջ 57-58:

[2] «Դիւան հայոց պատմութեան», գիրք ԺԳ, էջ 57:

հրապարակվել վերոհիշյալ ծրագրի մասին, մինչև վերջերս էլ հայտնի չէին նրա արձագանքները, մանավանդ որ քիչ անց երիտասարդ հասակում Հռոմում վախճանվեց Պաղտասար Նորատունկյանը: Այսքանն էլ բավարար է եզրակացնել, թե Զեյթունով խանդավառված վերոհիշյալ անձնավորություններն այժմ երկնում էին Արևմտյան Հայաստանի ազատագրման ծրագրեր: Սակայն նրանք նախընտրում էին պայքարի դավադրական ձևեր, հեռու էին լայնահուն ազատագրական շարժումներ առաջացնելու մտադրությունից, հետևաբար և հաջողության հասնել չէին կարող:

Այդ ծրագրերը «գործարար հողի» վրա դրվեցին 1870 թվականին միայն: Ֆրանս-պրուսական պատերազմի օրերին ֆրանսիական կառավարությունը, լեհերին իր նպատակին ծառայեցնելու, բանակում նրանց զինվորագրելու մտադրությամբ, կրկին հրապարակ հանեց լեհական հարցը: Նապոլեոն III-ը լեհ վտարանդիներին հավաստիացնում էր, որ Ավստրիայի ու Պրուսիայի դեմ պատերազմի հաղթական ավարտից հետո Ֆրանսիան կօգնի լեհական վտարանդիներին, կվերականգնի նրանց անկախությունը:

Ոգևորված այս առաջարկով, Պոլսում և ընդհանրապես Թուրքիայում ապրող լեհ վտարանդիները ջանացին կապեր հաստատել սուլթանական ու ցարական կառավարություններից դժգոհ Կովկասի ժողովուրդների ներկայացուցիչների հետ, ծրագրեցին վերահաս ապստամբությանը մասնակից դարձնել նրանց, իսկ հաղթանակից հետո օգնել ինչպես մյուսներին, այնպես էլ հայ ժողովրդին: 1871 թ. հունվարի 5-ին Կոստանդնուպոլսից գեներալ Իգնատևը Ռուսաստանի գաղտնի խորհրդական Վեստմանին տեղեկացնում էր, որ լեհերն արդեն ակտիվ պրոպագանդ են մղում Թուրքիայում ապրող հայերի, վրացիների, նույնիսկ մահմեդականների մեջ, ունեն իրենց կողմնակիցները, նրանց միջոցով կապեր են հաստատել *Թիֆլիսում, Երևանում, Ղարաբաղում* և այլուր խարսխված կազմակերպությունների հետ[1]: Կոմիտեի ներկայացուցիչները, այդ թվում և շատ հայեր, գաղտնի հանգանակության միջոցով դրամ են հավաքում, զինապահեստներ ստեղծում, զենք տեղափոխում ու մթերում, մի խոսքով, «նախապատրաստվում ապստամբությանը»[2]: 1871 թ. հունվարի 16-ին Կովկասի կառավարիչը զեկուցում էր կայսրին, թե Իգնատևի հաղորդագրությունը, ճիշտ է, «ոչ ամբողջապես, բայց և այնպես հաստատվում է»[3]:

Ցարական կառավարությունը գործի է անցնում: Ներքին գործերի մինիստրության աշխատակիցներն ամենուրեք որոնումներ են կատարում, ամեն մի մանրուքի մասին տեղեկացնելով կայսրին: 1871 թ. փետրվարի 15-ին Կ. Ի. Օռլովին ուղղված մի այլ գրություն հաստատում է, որ լեհական կոմիտեի գործակալները սփռված են Թիֆլիսում, Երևանում, Շուշիում, Նուխիում, զենքեր են տեղափոխում, պահեստներ հիմնում, մարդկանց զինվորագրում[1]:

Սարսափահար եղած ցարական կառավարական շրջանները, արտաքնապես սառնասիրտ ձևանալով, իրականում հակահարվածի նախապատրաստություններ էին տեսնում: Գաղտնի գրություններ են ուղղված Երևանի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Բաքվի, Ստավրոպոլի, Թերեքի, Կուբանի, Դաղստանի կառավարիչներին[2]: Զորքը կազմ ու պատրաստ էին պահում, ցարական պահնորդական բաժնի գործակալները վխտում էին ամենուրեք: Սակայն, ինչպես հայտնի է, նման «ապստամբություն» (իմա դավադրություն) տեղի չունեցավ: Ըստ երևույթին, դրան խանգարեց Ֆրանսիայի պարտությունը, իր հետ գերեզման տանելով լեհ վտարանդիների ու նրանց դավադրական փորձերի վրա հույս դնող մյուս ժողովուրդների, Եվրոպայի միջամտության հետ հուսակապ խավերի սին բաղձանքները:

Լեհերի հետ կապված հայ գործիչների ծավալուն գործունեության մասին սրանից զատ այլ տեղեկություններ չկան: Պարզ է, սակայն, որ 1870 թվականին կատարված այս իրադարձությունները 1862 թ. Նորատունկյանի ծրագրի շարունակությունն էին, դրված գործարար հողի վրա, ստացած գործնական կերպարանք: *Այնուամենայնիվ, ովքեր էլ լինեին լեհերի հետ կապվողները, նրանք ժողովրդից կտրված էին և պայքարի դավադրական, եվրոպացիների «օգնությամբ» անկախություն ստանալու անիրականանալի ու խաբուսիկ եղանակը գերադասում էին ժողովրդական ազատագրական համընդհանուր շարժումներից: Սխալ ու վնասակար էին Հայաստանը թեկուզ ցարական Ռուսաստանից անջատելու նրանց ձգտումները:*

Հայաստանի ազատագրումը տենչացող, այդ նպատակով Կիլիկիան իբրև ռազմաքաղաքական հենակետ ծառայեցնող հայ մտավորականներից առավելապես Զեյթունով են հետաքրքրվել Մ. Նալբանդյանը, Հ. Սվաճյանը, Հ. Քյաթիպյանը, Կ. Փանոսյանը, Ս. Թագվորյանը, որոնք արտահայտում էին աշխատավորության շահերը և ձգտում հայ ժողովրդի ազատագրական պայքարը շաղկապել համասլավոնական, ինչպես նաև իտալական հեղափոխական շարժումների հետ:

1850-ական թվականների վերջերի, առավելապես 1860-ականների

---

[1] ՎՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 5, ցուցակ 1, գործ 2093, թերթ 1-2:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, թերթ 5:

[1] ՎՍՍՀ ՊՊԿԱ, ֆոնդ 5, ցուցակ 1, գործ 2093, թերթ 9-10:
[2] Նույն տեղում:

սկզբի հայ ազատագրական շարժումներն անվիճելիորեն կրել են հեղափոխական դեմոկրատիայի դափնեկիր Մ. Նալբանդյանի գաղափարական խոր ազդեցությունը: Դրանից բացի, Մ. Նալբանդյանը լուրջ աշխատանք ծավալեց արևելահայ ու արևմտահայ գաղթօջախներում, ձգտեց օտար տիրակալների լծի դեմ ոտքի հանել Հայաստանի երկու հատվածների աշխատավորությանը, ազգային-ազատագրական շարժմանը սոցիալ-դասակարգային բովանդակություն հաղորդել:

1862 թվականին ցարական ոստիկանները խուզարկեցին Մ. Նալբանդյանի տունը Նոր Նախիջևանում: Խուզարկության ժամանակ հայտնաբերվեցին մի շարք փաստաթղթեր, որոնք լույս սփռեցին նրա արտասահմանյան գործունեության վրա: Հայտնի է, որ Նալբանդյանը 1860 թ. նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 21-ը առաջին անգամ և 1861 թ. նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 27-ը երկրորդ անգամ եղել էր Կոստանդնուպոլսում: Նա եղել էր նաև Փարիզում, Լոնդոնում, Իտալիայում, Հնդկաստանում: Սակայն ի՞նչ էր արել եվրոպական այդ քաղաքներում, մասնավորապես, Կոստանդնուպոլսում, այնքան էլ պարզ չէր:

Ցարական ոստիկանության հայտնաբերած մի նամակից, գրված 1862 թ. մայիսի 14-ին Ս. Թագվորյանի կողմից, և ծածկագիր բառարանից պարզվեց, որ Նալբանդյանը գործարար կապերի մեջ է եղել Գերցենի, Օգարևի, Բակունինի, Մաձձինիի, մի խոսքով, ռուսական և իտալական հեղափոխական-ազատագրական շարժման ղեկավարների հետ[1]: Նա ծրագրեր է մշակել Հայաստանի ազատագրման մասին, դրանք համաձայնեցրել արտասահմանյան վտարանդի բարեկամների հետ, ստացել նրանց հավանությունը, խոստումներ առել նրանցից և խոստումներ տվել նրանց: Նալբանդյանը գաղափարական, գուցեև անձնական կապեր է ստեղծել պոլսահայ դեմոկրատներից ոմանց, ռուս վտարանդիների և սրանց եվրոպական բարեկամների միջև: Ծածկագիրը կասկած չի թողնում, որ Մ. Նալբանդյանը, Հ. Սվաճյանը, Ս. Թագվորյանը և Հ. Քյաթիպյանը խոստացել էին զորք կենտրոնացնել մի որևէ տեղ, հավանաբար Կիլիկիայում կամ Պոնտոսի ծովեզրին, գաղտնի խմբակ հիմնել, լրագիր հրատարակել, սվինավոր հրացաններ, թնդանոթներ, ռումբեր, վառոդ արտադրել ու մթերել, դրամ հավաքել, *ապստամբություն* բարձրացնել: Ծածկագիրը վկայում է, որ պոլսահայ բարեկամները կապվելու էին կամ արդեն կապված էին Գերցենի, Գարիբալդիի, Մաձձինիի, Բակունինի և այլոց հետ: Նրանց ուշադրությունը սկզբից ևեթ կենտրոնացված է եղել Կիլիկիայի, Զեյթունի վրա:

[1] *Ս. Թագվորյանի* այդ նամակը, ինչպես նաև ծածկագիր բառարանը հայտնաբերել, վերծանել, ճշտել ու հրատարակել է Աշոտ Հովհաննիսյանը, տե՛ս *Մ. Նալբանդյանի* «Անտիպ երկեր», խմբագրումը և կոմենտարները *Աշոտ Հովհաննիսյանի,* 1935, Երևան-Մոսկվա, էջ 444 և հետո:

Այսպիսով, անկասկած է, որ Մ. Նալբանդյանին գաղափարամերձ մտավորականները Կ. Պոլսում ծավալել են նաև ընդհատակյա գործունեություն, խոստացել *գաղտնի կոմիտե* հիմնել, կատարել ուսուցչի տված խոստումները Եվրոպայի ու Ռուսաստանի ազատարարներին: Սակայն 1862 թ. մայիսին, խոստացված կոմիտեն չէր հիմնվել: Մայիսի 14-ին Ս. Թագվորյանը գրում էր. «Հիմա խորհրդածե», չունենալով այս քաղքիս մեջ սեղանավոր մը (ըստ ծածկագրի գաղտնի կոմիտե), ունիմք ըսելը թո՛ղ որ զիս քրիթիկ կացության մեջ կը դնե, այլև մեր ընկերները չեն ներեր, որ այսպիսի բան մը հաղորդիմ այն մարդուն, որ բոլոր ընկերության վարկումին կրնա վնասել... (խոսքը Մաձձինիի մասին է-Հ. Ղ.)»[1]:

Ս. Թագվորյանը չէր առաքում անհայտ բովանդակություն ունեցող նամակներ, քանի որ դեռևս Պոլսում, բուն Հայաստանում ընկերություններ չէին հիմնել, զենք և զորք չէին կենտրոնացրել առափնյա վայրերում, մի խոսքով, վտարանդի բարեկամներին արված խոստումները չէին կատարել: Սակայն Զեյթունի հերոսական ապստամբությունից *ամիսներ առաջ* Մ. Նալբանդյանը, նրա պոլսահայ բարեկամները մտահոգվել էին տավրոսահայության բախտով, դրամ հավաքել ու հանձնել նրանց, հնարավորություն ընձեռել զենք գնելու համար: «Տավրոսեն վարդապետ մը եկավ հոս, քանի օր է, որ կաշխատիմ որ առուտուր մը ընեմ այս մարդու հետ, հազիվ կրցան քսան, երեսուն հոգիով ժողով մը կազմել և այն ալ մեծ դժվարությամբ. քիչ մը ստակ ես, քիչ մ՛ալ բարեկամին մեկը տվինք անոր, որ հարկավոր եղած դասագրքերը առնե և ճամբու ծախք ընե: Մնացածին համար խոսք տվինք, որ պիտի աշխատինք իրենց համար»:

Բերված ծածկագիր տողերը բառարանով բացելիս, պարզվում է, որ Թագվորյանը բանակցություններ է վարել Զեյթունում ազատագրական շարժումներ կազմակերպելու վերաբերյալ, այդ նպատակով էլ դրամ է հանձնել վարդապետին զենք և զինամթերք գնելու ու այնտեղ փոխադրելու համար: Ակնհայտ է, որ ինչպես Մ. Նալբանդյանը, այնպես էլ Պոլսում եղած *«քսան-երեսուն»* մտավորականները տակավին 1862 թ. գարնանը տեղյակ են եղել Զեյթունի իրադարձություններին և ձգտել են կապեր ստեղծել Տավրոսի ու մայրաքաղաքի հայկական բեկորների միջև: Հատկանշական է, որ Նալբանդյանն ուսումնասիրում էր Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում վառոդ պատրաստելու տեխնիկան[2], մի բան, որ, ըստ երևույթին, իրեն անհրաժեշտ պիտի լիներ առաջիկայում:

Այսքանից բացի այլ տեղեկություններ չեն հայտնաբերվել «գաղտ-

[1] *Աշոտ Հովհաննիսյան,* Մ. Նալբանդյանի «Անտիպ երկեր», էջ 445:
[2] *Մ. Ներսիսյան,* նշված աշխատությունը, էջ 137-138:

նի կոմիտեի» «հիմնադրման» կամ Նալբանդյանի պոլսահայ բարեկամների 1862-65 թթ. ընդհատակյա գործունեության մասին: Քանդելու վարժված թուրք բռնապետության արյունոտ թաթը գուցե հավիտենության գիրկն առաքեց շատ արժեքավոր փաստաթղթեր, գուցե և ավելին արեցին պոլսահայ համախոհները: Բայց չեղած տեղը, կորցրած հիմնականը, հենվելով կղերա-ամիրայականների հրապարակած վայրիվերո, մեղադրականի բնույթ ունեցող հոդվածների վրա, մեր օրերում եղան մարդիկ, որոնք հյուսեցին իրենց վարկածները, ***կոմիտե փնտրեցին ամեն տեղ*** և թյուրիմացության մեջ գցեցին ընթերցողներին: Նրանց գաղափարահիմքը «Երևակի» խմբագիր Հովհաննես Տերոյենցի թարգմանած «Խորհուրդ գաղտնի ընկերությանց» գրքի ծանոթագրություններն են, ինչպես նաև Ս. Թագվորյանի նամակի այն տողերը, թե «աշխատեցա Հոտֆելո եղբարց» մասոնական օթյակ հիմնադրել, ***որի «...ծայրը հեռի*** է»: Սրանց մեջ գուցե ճշմարտության հատիկ լինի, սակայն կոնկրետ եզրահանգումների կռվան չի տալիս հետազոտողին:

Արևմտահայ պահպանողականների պարագլուխ Հ. Չամուռճյանի հաղորդագրությունները լի են զրպարտչական մեղադրանքներով և հավաստիությունից շատ հեռու են: Ինչ վերաբերում է ***«Հոտֆելո եղբարց»*** մասնաճյուղին, ապա այն գաղտնի կազմակերպություն չէր, այլ՝ հրապարակային, կապված Անգլիայի, բայց ոչ թե Գերցենի կամ Օգարևի, այլ՝ Վիկտորյա թագուհու հետ:

Մասոնական կազմակերպություններ ստեղծվեցին Զմյուռնիայում: «Տիգրան» ժողովարանը հիմնվեց «Օտտո-ֆելոզից», ***«Հայկ կամ Օրիոնից»*** հետո, նրանից անկախ և անմիջապես ենթարկվում էր Մանչեստրի բաժանմունքին[1]: 1864 թ. Պոլսի Գում-Գափու թաղամասում հիմնվեց «Արամ» ժողովարանը[2]: Անգլիական մասոնության ենթարկվող բոլոր այս կազմակերպություններն էլ հեռու են նալբանդյանական կոմիտեներ լինելուց: Սակայն եղել են մտավորականների խմբեր, որոնք կազմակերպություն են ստեղծել 1866 թ., ունեցել են դեմոկրատական կազմ և գործել են գաղտնի: Գուցե և գաղտնի ընկերություններ են եղել դրանից առաջ, սակայն վավերական փաստեր չունենք:

XX դարի սկզբներին Պոլսի նպարավաճառի խանութում, պատահաբար, Ռուբեն Բերբերյանի ձեռքն է ընկնում սևագիր թղթերի մի կապոց, որոնք բովանդակում էին մայրաքաղաքում հիմնված «Սեր» ընկերության գործունեությունը, բացահայտում նրա մասնակիցների կազմը, հետապնդած նպատակները, կապը դրսի երկրների հետ:

[1] «Արշալոյս Արարատեան», 1866, N 795:
[2] «Մասիս», 1864, N 654:

Ըստ Բերբերյանի հրապարակած վավերագրերի, «Սեր» օթյակը գաղտնի ֆրանմասոնական կազմակերպություն էր: Այն հիմնվել է 1866 թ. մայիսի 7-ին, Պոլսի Գուլե-Գաբու թաղի, Եազըճի փողոցի N 21 տանը, սկզբում ունեցել է 7 անդամ, որոնք հիմնադիր ժողովը բացել են երեկոյան ժամը 7-ին: Ընկերության անդրանիկ ժողովին մասնակցել են Թուրքիայի անգլիական ու ֆրանսիական դեսպանները: Խոսակցությունն սկզբում գնացել է օտար լեզուներով, սակայն դեսպանների բացակայությունից հետո փոխվել է հայերենի, և ընկերությունը ***«հայացել է»:***

Հայ առաջավոր գործիչներից շատերը վաղուց ֆրանմասոններ էին և համակրում էին եվրոպական հեղափոխական շարժումների գաղափարախոսությանը, ձգտում էին գնալ ֆրանսիական լուսավորիչների շավիղով: Նրանք գիտեին, որ Գյոթեն եղել է մասոն և ասել է. ***«Մասոնների նպատակն է սեփական կատարելագործման միջոցով կատարելագործել մարդկությանը»***, իսկ Ֆրանկլինը պատգամում էր. ***«Մասոնի պարտականությունն է՝ կռվել բռնության դեմ»:*** Արևմտահայ առաջադեմ մտավորականներն էլ էին կռվում բռնության դեմ, ձգտում ազատության, դրա համար էլ շատերը մասոն էին դառնում: Նպատակի միասնությունը ստեղծում էր նաև գործողության միասնություն:

Իտալիա եղած ժամանակ Ստ. Ոսկանյանը դարձավ իտալական «Liberta» օթյակի անդամ: Ս. Ազնավուրը Լոնդոնի «Ճորտ» օթյակի անդամ էր, Ս. Հեքիմյանը «Oriental»-ի, Հ. Սվաճյանը, Ս. Թագվորյանը «Grand Orient»-ի, Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը, Մ. Նուպարյանը Զմյուռնիայում հիմնադրված «Տիգրան» անգլո-հայկական օթյակի: Մի խոսքով, մասոնությունը նոր երևույթ չէր հայ իրականության համար: Այն ուներ անցյալի պատմություն և նույնիսկ իրար հետ բանավիճում էին ուղղությունները, բախվում թևերը:

«Սեր» օթյակի հիմնադրման ժամանակ տարաձայնություններ եղան: Վեճի առարկա էր անգլիակա՞ն, թե՞ ֆրանսիական մասոնների ուղիով գնալու հարցը: Հաղթում է «պգտի Սերոբը» Սերովբե Թագվորյանը, որի մասին Սվաճյանն ասում էր. «Հասակը կարճ է, բայց միտքը երկար»: Հիմնադիր ժողովում Թագվորյանը հայտարարեց, որ ***«Անկլիա միշտ Թուրքիո պաշտպան եղած է ու այդ*** կացությունը երբեք Թուրքիո մեջ ապրող այլազգիներու օգուտ մը եղած չէ»: Նա գերադասեց Ֆրանսիան, պատճառաբանելով ֆրանսիական ժողովրդի հեղափոխական հարուստ ավանդների ընդօրինակման անհրաժեշտությունը, Վոլտերի, Մոնտեսքյոյի, Դիդրոյի մասոն լինելը: Երկարատև վիճաբանությունից հետո որոշվեց գնալ կոմպրոմիսի «Սեր» օթյակը կապել ֆրանսիական «Մեծ արևելքի» հետ, իսկ ավանդական մասո-

նության տեսակետից ընդունել նաև Անգլիայի ազգային «Մեծ օթյակի» կանոնադրության որոշ հոդվածները:

«Սեր» օթյակն ուներ անհայտ քանակությամբ, սակայն բազմաթիվ անդամներ: Ընտրվել էր գործադիր և ղեկավար մարմին հանձինս Մ. Մամուրյանի, Հ. Սվաճյանի, Ս. Թագվորյանի, Ս. Հեքիմյանի, Ռոմանոս Սետեֆյանի, Մ. Երեմյանի, Էքչեշյանի: Իբրև հյուրեր կանչվում էին Գր. Չիլինկիրյանը, Հ. Նորատունկյանը, որոնց մասնակցությունը պատեհառիթ բնույթ էր կրում Պոլսից հաճախակի բացակայելու պատճառով: 1867 թվականին ընդունեցին նաև 3 նոր անդամներ՝ բողոքական Ղազարոս Դավուտը, հայ ազգային միությունների վարչության անդամ Սիմեոն Մաքսուտ բեյը և Մկրտիչ Պեշիկթաշլյանը:

Չափազանց խորհրդավոր ու վեհաշուք էր ընկերության անդամների ընդունելությունը: Միշտ էլ նիստը բացում էին երեկոյան ժամերին. փակում ժողովարանի դռները, հանգցնում լույսերը, ստուգում անդամների ներկայությունը և ապա սկսում արարողությունը: 1867 թ. մարտի 21-ին «եղբայր» ընդունեցին Մկրտիչ Պեշիկթաշլյանին: Կարդացին նրա կենսագրությունը, կապեցին աչքերը, մերկացրին աջ բազուկը՝ ի նշան հավատարմության, ձախ կուրծքը մերկացրին՝ ի նշան անկեղծության և ապացույց սեռի (կանանց չէին ընդունում), մերկացրին ձախ սրունքը՝ ի նշան խոնարհամտության: Այդ օրը երգվեց «Եղբայր ենք մեք» նշանավոր բանաստեղծությունը և այնուհետև այն դարձավ ընկերության հիմնը:

«Սեր» ընկերության նշանաբաններն էին *գիտություն, ազատություն, աշխատություն, եղբայրություն,* իսկ քիչ հետո ընդունեցին ֆրանսիական հեղափոխության լոզունգները՝ *ազատություն, հավասարություն, եղբայրություն:* Նրանք ամեն անգամ զգացնել էին տալիս, որ դեմ են կրոնական ու դավանաբանական վեճերին և արտասանում էին.

Մեկտեղ հոգնենք, մեկտեղ ցանենք,
Մեկտեղ թափենք մեր քրտինքներ,
Զհունձ բարյաց երկինս հանենք,
Որ կյանք առնուն հայոց դաշտեր:

«Սեր» ընկերության ժողովներում լսվում էին տարբեր բովանդակությամբ զեկուցումներ: Կարդացվել է «Կրթության ծարավը մեր գավառների մեջ», «Վարժապետին վիճակը», «Մասոնական խորհրդանիշներ և մեր կյանքը», «Եգիպտական բուրգերի մեջ գործադրված գործիքների խորհրդանիշները»: Ամենահետաքրքրականը «Ազգասեր դեմքեր» խորագրով զեկուցումների շարքն էր: Այն կարդում էր ընկերության

հռետոր Մ. Մամուրյանը: 1866 թ. հունիսի 5-ին Մամուրյանը «Սեր» ընկերության դռնփակ նիստում կարդաց «Միքայել Նալբանդյանց» ծավալուն զեկուցումը, որը կրճատվեց, փոխվեց, նոր միայն «Մ.Մ.» ստորագրությամբ տպագրվեց «Ծաղիկ» հանդեսի հուլիսի 15-ի համարում (այստեղ բերված է ճառի ողջ տեքստը, որը տարբերվում է հոդվածից): Ընկերության անդամները միակամ երդվեցին հավատարիմ մնալ Նալբանդյանի գաղափարներին և մինչև կյանքի վերջը պայքարել դրանց կենսագործման համար[1]:

Ուրեմն, 1860-ական թվականներին Թուրքիայի մայրաքաղաքում հարյուրավոր լեգալ ընկերությունների կողքին հիմնվել էր նաև գաղտնի ընկերություն, որի նպատակը եղել է Արևմտյան Հայաստանի ոչ միայն լուսավորությունը, տնտեսական զարգացումը, այլև քաղաքական ազատագրումը: Սակայն հասարակական-քաղաքական թեկուզ դեմոկրատ գործիչները տակավին չէին շաղկապված իրար: Մտավորականությունը կտրված էր գավառից, հարկավորին չափ, ականատեսի աչքերով չգիտեր ժողովրդի դրությունը: Նրանք դեռևս բավականանում էին գրավոր բողոքագրերի բովանդակած աղոտ փաստերով կամ ականատեսի պատմածներով: Արևմտահայ գավառը (բացի Վասպուրականից) բառիս իսկական իմաստով խարխափում էր խավարի ու տգիտության մեջ, դեռևս օգնություն չստանալով ոչ գաղթաշխարհից և ոչ էլ արևելահայությունից:

5. Ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում

Հայ հասարակական-քաղաքական ու ազատագրական շարժումները սկիզբ էին առնում ոչ միայն Կիլիկիայում, գաղութահայ օջախներում, այլև Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում: Շեղբը ոսկորին էր հասել, և ճչում էր Վանի, Մուշի, Կարինի, Դերսիմի հայ ռայան, բողոքագրերով, ցույցերով ու զինված ելույթներով դիմագրավում սուլթանական կառավարության, քուրդ ցեղապետերի «սահմանած» հարկային ճնշումներին, կրոնական անարգանքներին, ֆիզիկական գոյության ոչնչացման ահավոր փորձերին: Բոլորովին չնախապատրաստված, անկազմակերպ, տարերային ձևով ոտքի էին կանգնում Արևմտյան Հայաստանի հայ աշխատավորության բեկորները՝ զենքը ձեռքին պաշտպանելու իրենց պատիվն ու «իրավունքը» կամ

[1] *Ռուբեն Բերբերյան,* «Հայ մասոնները և «Սեր» օթյակը Պոլսո մեջ», «Հայրենիք», 1937, N N 3, 4, 5, 6, 7:

հայրենի գավառներից արտաքսելու քուրդ ցեղապետերին: Այս տեսակետից ուշագրավ փորձեր արեց Վանի հայ ազգաբնակչությունը:

Վասպուրականն Արևմտյան Հայաստանի սիրտն էր, նրա հայաշատ և համեմատաբար լուսավորված գավառը, քանի որ 1850-ական թվականներից այն, ինչպես գաղութահայ մտավորականությունից, այնպես էլ Պոլիս ու այլուր կրթության առաքած իր սաներից լույսի շող ստացավ: Մ. Խրիմյանը, հայրենիք վերադառնալով, իր հետ գավառ բերեց պարբերաթերթեր հրապարակելու, դպրոց բացելու մտահղացում: Նա Վարագ փոխադրեց տպագրական մեքենա և սկսեց լույս ու կրթություն տալ օգնության կարոտ իր համերկրացիներին: Գուտենբերգի գյուտը մտավ Հայաստան, նրա զավակներին պատմելով աշխարհում կատարված հին ու նոր անցքերի, հարևան ժողովուրդների պայքարի ու հաղթանակների, հայերի փրկության ուղիների մասին: Մ. Խրիմյանի ու Գ. Սրվանձտյանցի հրատարակած «Արծվի Վասպուրականի», «Արծվիկ Տարոնո» պարբերաթերթերը հայրենի հողում լույս տեսնող անդրանիկ հանդեսներն էին, որոնք մի կողմից գավառը մխրճում էին Պոլսի սրտի մեջ, մյուս կողմից ծնունդ տալիս հասարակական մի նոր ու թարմ հոսանքի *գավառահայ մտավորականությանը:* Անշուշտ հայ այս մտավորականներն էին, որ ժողովրդին կրթում էին, քուրդ ցեղապետերի ու թուրք տիրակալների լծի դեմ մարտնչող ազատամարտիկներ նախապատրաստում:

Թուրքիան անհուսալի ու հեղհեղուկ քաղաքականություն էր վարում հպատակ այլազգիների նկատմամբ: Այսօր նրանց օգտագործում էր վաղը հալածելու ու կեղեքելու դիտավորությամբ: Պատահական չէր, որ 1847 թվականին Վասպուրականի հայ հերոս ժողովուրդը, թուրքական քաղաքականության «հավատարիմ պաշտպանը» թուրքերի կողմից 1862 թ. դրվում էր նոր ու ահավոր վտանգի տակ, դրա համար էլ ոտքի էին կանգնում, պոռթկում վանեցիները, հուսահատական փորձեր անում իրենց պաշտպանելու համար:

Ծայր էր առնում Վանի 1862 թ. զինված ելույթը, որի բռնկման ճիշտ ամիսը որոշակիորեն չի հիշատակվում մեզ հայտնի աղբյուրներում: Նույն թվականի փետրվարի 28-ին, «Փարիզ» պարբերականի Մարսելից ստացած հեռագրից հայտնի է դառնում, սակայն, որ «Հայաստանի Վան քաղաքի մեջ տաճիկ զինվորները քրիստոնեից խաչը թշնամացնելուն համար կռիվ եղավ ու միջնաբերդն առնվեցավ: Երկու կողմեն մեռելոց և վիրավորելոց թիվը հազարի կհասնի»[1]:

Այս տողերից և սրան հաջորդող բացատրությունից հետո խմբագրությունն անգլիական թերթերից քաղում է հետևյալ տեղեկությունը.

[1] «Փարիզ», 1862, N 62, 28 փետրվարի:

«Մանր անցք մը տեղի ունեցավ Վանի մեջ ի Հայաստան: Թուրքիոն զորքերեն ոմանք խաչը նախատելով կռիվ մը տեղի ունեցավ իրենց և հայ ժողովրդյան մեջ: Վերջինները հաջողեցան բերդին տիրելու, որով զիրենք վախեցնել կուզեին: Կըսվի թե այս հաղթությունը 1000 հոգիի կորուստով եղավ»[1]:

Թերթի խմբագիր Ա. Մուրադյանը չի թաքցնում ասելու նաև, որ «կըսվի թե Պոլսո ժուռնալն[2] այս լուրը բոլորովին սուտ հաներ է»[3]: Վանեցիների ելույթը գնալով ավելի է իր վրա գրավում ոչ միայն հայ, այլ նաև եվրոպացի հրապարակախոսների ուշադրությունը: Մարտի 28-ին Նյու Յորքի «Իվնինգ փոստ» լրագրից «Փարիզը» թարգմանաբար բերում է հետևյալ տողերը. «Երեկ Ափրիկե անուն շոգենավուն բերած լուրը, թե Վանի հայեր ոտքի ելած են տաճկաց դեմ, լի է քաղաքական նշանակությամբ»: Ապա շարունակության մեջ մանրամասն նկարագրվում էր Վանի աշխարհագրական դիրքը, բնական հարստությունները, անցյալի հերոսական պայքարի առանձին դրվագները, ժողովրդի մարտնչող բնավորությունը: «Փարիզի» խմբագիրը չի զլանում ստացված ընդարձակ հոդվածին ավելացնել նաև այն, որ ամերիկյան այդ ժուռնալի երևելի խմբագրի Վոլեմ Գըլեն Բռայնդի, «Ամերիկացի հռչակավոր պոետի, հասարակության մեջ մեծ համարում ունեցողի» «քաղաքական դրության հետ համախոհ չեմ»[4]:

Վանի ելույթի լուրն անմիջապես տարածվեց հայկական մի շարք գաղթօջախներում: Գաղութահայերն իրենց համակրությունը հայտնեցին ապստամբ վանեցիներին: 1862 թ. ապրիլի 5-ին հնդկահայ պարբերականներից «Եղբայրասերը» հաստատում էր նախորդ հոդվածագիրների հաղորդած տեղեկությունները Վանի անցքերի մասին և բանակռիվ մղում նրանց դեմ, որոնք «սուտ էին համարել հրապարակված լուրերը»[5]: «Համբավաբեր Ռուսիո» լրագիրը նույն թվականի հունիսի 10-ին խոսում էր Վանի ելույթի մասին, ընդհանրացնում մինչ այդ եղած բոլոր տվյալները: Պարբերականը հաղորդում է, որ «15-րդ համարում ծանուցած էինք համառոտիվ այն լուրը, որ հրատարակված էր եվրոպական լրագրաց մեջ. ի մասին վրդովության կամ լավ է ևս ասել փոքրիկ պատերազմի, որ պատահած էր Վան քաղաքում, քրիստոնեից և տաճկաց մեջ, ևս և հավելցուցած էինք թե Կ. Պոլսո գաղիերեն լրագիրն սուտ է համարում այդ համբավը»[6]:

[1] «Փարիզ», 1862, N 62, 28 փետրվարի:
[2] Իմա՝ «Journal de Constantinople» պարբերականը:
[3] «Փարիզ», 1862, N 62, 28-ը փետրվարի:
[4] Նույն տեղում, N 64, 28-ը մարտի:
[5] «Եղբայրասեր», 1862, N 4, ապրիլի 5, էջ 30:
[6] «Համբաւաբեր Ռուսիո», 1862, N 21:

Կ. Պոլսի ֆրանսիական լրագրի այն տեղեկությունը, թե սուտ է, Վանում ոչ մի ելույթ չի եղել, առիթ տվեց ավելի մանրամասն զբաղվել և գրել ընդարձակ հոդվածներ: Բաղեշի հոգևոր առաջնորդ Երեմիա վարդապետը, նույն պահին Վան գնալու մտադրությամբ, հետագայում իր ձեռագրում թողել է հետևյալ տողերը. «Կարնեցի և բաղեշցի բարեկամք մեր աղաղակեցին և հորդորեցին բնավ չհանդիպել ի Վան, որ զԲաբելոն ծփայր ի սաստիկ խռովութենե...»[1]: Այս ժլատ տեղեկատուն, դժբախտաբար, այլևս չի շարունակում իր ասելիքը Վանի դեպքերի մասին:

Թեոդոսիայի «Ռադուգա» (Ծիածան) լրագիրը ապրիլի 15-ին տպագրում է Կ. Պոլսից ստացված մի թղթակցություն, որտեղ հանգամանորեն խոսվում էր Վանի զինված ելույթի, դրա սկսվելու դրդապատճառների և ընթացքի մասին:

«Ռադուգայի» արևմտահայ թղթակիցը պատմում է, որ մինչև «Թանզիմաթը» թուրքահպատակ քրիստոնյաները հուղարկավորության ժամանակ զրկված էին հանգուցյալի առջևից խաչ և խաչվառ տանելու իրավունքից: Սակայն Վանի հայերը «Թանզիմաթից» հետո հուղարկավորությունը կատարում էին ավանդական ձևով, բոլորովին չերկնչելով մահմեդականների սպառնալիքներից: Աբդուլ Մեջիդի մահից հետո, տեղի թուրքերը ներկայացուցիչներ ուղարկեցին Վան փաշայի մոտ, պահանջելով «զսպել հայերին», վերջ տալ հուղարկավորության այդ ձևին, այլապես իրենք կկոտորեն նրանց: Լուրն իսկույն տարածվեց քաղաքով մեկ: Հայերը մի վարդապետի միջոցով տեղեկացրին փաշային, որ եթե նա թուրքերին թույլ տա հարձակվելու, օգնության պիտի կանչեն իրենց «... բարեկամ քրիստոնյա քրդերին»[2]:

Փաշան խոստանում է կանխել այդ եղեռնը, միաժամանակ սպառնում, որ եթե մահմեդականները հարձակման փորձեր կատարեն, ինքը զենք կբաժանի քրիստոնյաներին: Կարճ ժամանակից հետո այդ փաշան մահանում է, նույն ժամանակ մահանում է և հայ հարուստներից մեկը: Երբ հուղարկավորության թափորն անցնում էր Վանի փողոցներով, տաճիկների զինված ամբոխը հանկարծակի հարձակվում է մասնակիցների վրա, խաչը հափշտակելով, գետին զարկում և սկսում ոտնակոխ անել:

Հայերը փութացին պաշտպանել խաչը և իրենց քահանաներին: *Ծայր առավ զինված ընդհարումը:* Վանի և շրջակայքի հայերը զինվեցին և պաշտպանեցին հուղարկավորության մասնակիցներին: Նրանց մեջ կային նաև քրիստոնյա քրդեր, որոնք եկել էին շրջակա

[1] Մատենադարան, ձեռագիր 4177, թերթ 49 ա:
[2] «Радуга», 1862, 15 ապրիլի:

գյուղերից: «Բուն բերդի մեջ սկսվեց սոսկալի կռիվ և կոտորած: Բերդը մնաց հայերի ձեռքը, որովհետև նրանք թվով շատ էին տաճիկներից: Ասում են թե երկու կողմերից շատ մարդիկ են սպանվել և վիրավորվել, բայց նրանց թվի մասին լսված տեղեկությունները շատ իրարամերժ են»[1]:

«Ռադուգայի» Կ. Պոլսի թղթակցի հոդվածը տառացի թարգմանությամբ տպագրվեց «Համբավաբեր Ռուսիո» պարբերականում[2], նույն հոդվածը արտատպեցին եվրոպական մի շարք թերթեր, այդ թվում նաև «Փարիզ» պարբերականը[3]:

Վերոհիշյալ փաստերը մեկընդմիշտ ժխտում են այն կարծիքը, թե իբր Վանում ելույթ չի եղել: Այդուհանդերձ, Կ. Պոլսի թղթակցի «Ռադուգայի» միջոցով հայտնած տեղեկություններն իրենց մեջ պարունակում են նաև չափազանցություններ: Նախ, Վանի շրջակայքի ազգաբնակչությունը Վանի հետ միասին, ըստ Գ. Սրվանձտյանցի և այլ հեղինակների հաղորդած տվյալների, կազմում էր մոտ 60 հազար մարդ: Դժվար թե նրանք կարողանային շուտափույթ ձևով 20 հազար կռվողներ հավաքել, օգնության հասնել Վանին, և կռիվը մնար տեղական նշանակության: Հանրահայտ է, որ քրիստոնյա քրդեր կային Արևմտյան Հայաստանում, բայց արդյո՞ք նրանք այդքան մեծ թիվ էին կազմում, որ Վանի վարդապետը վերջիններիս անունից սպառնալիք կարդար թուրքական փաշաներին: Բոլոր դեպքերում այս հոդվածից և սրանից զատ եղած փաստերից պարզ է, որ Վանում 1862 թ. փետրվար ամսին զինված ելույթ է բռնկվել, որն իր չափով փոքր է եղել և, ունենալով տեղական նշանակություն, լայն ժողովրդականություն չի վայելել: *Ելույթը բոլորովին անկախ է եղել Զեյթունից, չստանալով համազգային այն նշանակությունը, ինչին արժանացավ տավրոսահայությունը:*

1860-ական թվականներին Արևմտյան Հայաստանում, մասնավորապես նրա քրդախառն հայկական գավառներում Մուշում, Քղիում և Չարսանջակում, տեր ու տնօրեն դարձած քուրդ ցեղապետերի դեմ զինված ելույթներ եղան: 1863 թ. Մուշի քուրդ բեկերի կատարած անարդարությունների դեմ սկսվեց հայ ազգաբնակչության բողոքը, որը հետագայում վերածվեց զինված ելույթի: Մուշի ելույթի մասին տաճկացած եվրոպացի զինվորականներից Ֆ. Միլինգեն իր հուշերում պատմում է. «Մշո գավառի բազմամարդ հայ ազգաբնակչությունը 1863 թ. բացահայտ ապստամբություն բարձրացրեց իր հարստահա-

[1] «Радуга», 1862, 15 ապրիլի
[2] Տես «Համբավաբեր Ռուսիո», 1862, N 21
[3] Տես «Փարիզ», 1862, N 26

ռիչների դեմ»[1]: 1863 թ. ելույթից հետո մշեցիները պատվիրակություն ուղարկեցին Պոլիս Բ. Դռանը բողոքելու: Ֆուատ փաշան անհետևանք թողեց նրանց բողոքը, դրա համար էլ պատվիրակները հայտարարեցին, որ եթե իրենց բողոքներն անհետևանք մնան, ապա իրենք կհեռանան Ռուսաստան: «Մեծ վեզիրը զայրացած հայտարարեց կարող են գնալ ուր որ ուզեն և որ ռուսական սահմանները միանգամայն բաց են նրանց համար»[2]: Հայտարարությունից հետո 300 հայ ընտանիքներ որոշեցին գաղթել Ռուսաստան:

Մուշի 1863 թ. ժողովրդական ելույթի մասին հայտնի են միայն կցկտուր տեղեկություններ: 1865 թ. Կ. Պոլսի Ազգային ժողովը արձանագրում էր. «Երբ քաղաքական ժողովը վարչության ղեկը ձեռքն առավ, նկատեց, որ նախորդի անօրինականությամբ Մուշի *ծանր խնդիրը* գրեթե լուծված էր»[3]: Մուշի «ծանր խնդիրը» 1863 թ. ելույթն էր, որն ուղղված էր *ոչ թե թուրքերի, այլ քուրդ աշիրաթապետերի դեմ:* Տարիներ անց Մ. Իզմիրլյանը գրում էր. «Բարեխնամ կառավարութիւնդ անգամ մը Մշո սահմանակից քրդաց գլխավորները ձերբակալելով նույն երկրեն հեռացուց, և ասով ժողովրդեան աշխատութեանը մեծ դյուրութիւն ընծայեց, սակայն այդ աքսորյալ գլխավորներեն ոմանք սկսան վերադառնալ նույն երկիրը, որով ավելի ևս կենդանացավ և գրգռեցավ ասոնց բարբարոսությունը»[4]:

1862 թ. սկսած, Արևմտյան Հայաստանի հարավային մասում՝ Կարինի վիլայեթի Քղի գավառում, ևս տեղի ունեցան ժողովրդի բողոքներ՝ ուղղված քուրդ ցեղապետերի դեմ:

Ղրիմի պատերազմից հետո, Քղիի և Երզնկայի գավառներում նորից տեր ու տնօրեն էին դարձել քուրդ ցեղապետերը: Ղուզիջանի քուրդ կայմակամը և Քղիի աշիրեթների գլխավորը ինքնիշխան կերպով կառավարում էին Քղիի և Երզնկայի գավառները, հաշվետու և հարկատու չլինելով ոչ կենտրոնական կառավարությանը և ոչ էլ Կարինի վիլայեթի թուրք կառավարիչներին:

Քղիի քուրդ բեկերը բռնագրավել էին հայերի հողակտորները, հափշտակել անասունները, շատ դեպքերում տունն ու բանջարանոցը: Հարստահարված քրիստոնյաները դրամ են հավաքում և Կ. Պոլսի դատարանում դատ սկսում հարստահարիչ քուրդ բեկերի դեմ: Այդ բեկերը 1862 թ. Կ. Պոլսում աքսորի դատապարտվեցին: Սակայն երկու տարի հետո նրանք վերադարձան իրենց տեղերը և շարունակեցին ասպատակությունները[1]: Սուլթանական կառավարությունը, գազազած Զեյթունի և Վասպուրականի ապստամբություններից, այժմ արդեն հովանավորում էր քուրդ հարստահարիչներին, նույնիսկ նրանց գրգռում հայերի դեմ: Բ. Դուռը քրդական վերնախավին է հանձնում Կարին-Դիարբեքիր ճանապարհաշինարարության համար հայերից և մյուս ազգություններից բանվորներ հավաքագրելու գործը: Օգտվելով ստացած հովանավորությունից, քուրդ բեկերը խտրություն էին դնում ճանապարհաշինարարության համար հավաքագրվող բանվորների մեջ, հայերին աշխատանքի էին ուղարկում ավելի հեռու վայրեր, նույնիսկ չվճարելով կոպեկներ կազմող նրանց աշխատավարձը:

Աշխատանքային ծանր պայմանների պատճառով, 1868 թ. Քղի գավառի հայերը հրաժարվեցին աշխատող ձեռք տալ Կարին-Դիարբեքիր ճանապարհաշինարարության համար[2], կազմեցին բողոքագրեր, ուղարկեցին Պոլսի հայոց պատրիարքարանին և ազգային ժողովին:

Քաղաքական ժողովի ընբոստ երեսփոխանների պահանջով երկու դիմում ուղարկվեց Բ. Դռանը, որտեղ պատմվում էր հայերի կրած ճնշումների ու հարստահարությունների մասին, միաժամանակ խնդրվում օգնել «անպաշտպան քրիստոնյաներին», նրանց ազատել քուրդ բեկերի հալածանքներից:

Դիմումները մնացին անպատասխան: Հայերը ստիպված եղան նոր դիմումներ ուղարկել սուլթանի պալատականներին, հատկապես մեծ վեզիրին: Տեսնելով, որ անընդմեջ բողոքագրեր են ստացվում, գազազած մեծ վեզիրը հայկական պատրիարքարանին է ուղարկում պատասխան գրություններ, որոնք լի էին սպառնալիքներով առաջնորդարանի, հոգևորականության ու ժողովրդի հասցեին, բովանդակում էին բազում մեղադրանքներ:

Հայոց պատրիարքարանի և Քղիի հոգևոր առաջնորդի վրա կառավարության բարդած մեղադրանքներից երևում է[3], որ Մելքիսեդեկ վարդապետն է քղեցիներին կազմակերպել պարհակակատարներ չտալ քուրդ բեկերին, ապա հայերից հավաքել է մի մեծ խումբ, մեկնել Կարին, բողոքել վիլայեթի կառավարչին: Անգոհացուցիչ պատասխան ստանալով, նա մեկնել է Պոլիս, նույնիսկ օրական 25 ղուրուշ վճարելով մարդիկ է վարձել և հանձնարարել մշտապես հետևել դեպքերի ընթացքին, գավառից ստացած բոլոր բողոքագրերը հասցնել արքունի պաշտոնյաներին:

---

[1] *Մ. Ներսիսյան,* նշված աշխատությունը, էջ 124:

[2] Նույն տեղում:

[3] «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», հ. 1, 1871, Պոլիս («Տեղեկագիր քաղաքական ժողովոյ» կեդրոնական վարչութեան), էջ 37:

[4] Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թ.14, վավ. 616:

[1] «Ատենագրութիւնք... («Տեղեկագիր քաղաքական ժողովոյ կեդրոնական վարչութեան»)», հ. Բ, էջ 26:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 17: Այս փաստաթղթերը տպագրված են հայատառ թուրքերենով, որոնք թարգմանել է Ա. Սաֆրաստյանը իմ խնդրանքով և ինձ համար:

Նոր ու թվաշատ բողոքագրերից զայրացած Բարձրագույն Դուռը կարգադրում է բռնությամբ վերցնել բանվորներ, իսկ ըմբոստներին պատժել: Տեղի են ունենում զինված ընդհարումներ: Պոլիս են կանչում քուրդ էմիրներին, իսկ վերջիններս, վախեցած 1862 թ. կրած պատժից, չեն ներկայանում: Հայերը պահանջում են կրկին աքսորել նրանց: Կառավարությունը չտանելով քրիստոնյաների նման հանդգնությունները, Քղիի 1868 թ. «միջադեպի» մեղքը ամբողջությամբ բարդում է Ազգային ժողովի երեսփոխանների և հայ վարդապետների վրա:

Սուլթանի ներկայացրած մեղադրանքներից սարսափած Ազգային ժողովի տատանողական դիրք բռնած երեսփոխանները մեղանչական գրություններ են ուղղում կառավարությանը: Փոխադարձաբար իրար ուղղված բազմաթիվ գրություններից, որոնք հայատառ թուրքերենով տպագրված են Ազգային ժողովի արձանագրությունների մեջ[1], դժվար չէ եզրակացնել, որ Քղիում, Կարին-Դիարբեքիր տանող ճանապարհի վրա աշխատող բանվորներ չտալու պատճառով, հայերի և քրդերի միջև ընդհարումներ են եղել, որոնց հաջորդող վիճաբանությունը շարունակվել է մինչև 1872 թ.: Կառավարությունը մերթ ընդ մերթ փոխել է իր դիրքը[2]: Նա մեկ հովանավորել է հայերին, մերթ քուրդ ցեղապետերին, մտադրություն ունենալով իրար հետ կռվեցնելու, թուլացնելու իր երկու թշնամիներին: Պայքարը վերջացել է 1872 թ. քուրդ էմիրների հաղթանակով:

1860-ական թվականներին քուրդ ցեղապետերի դեմ ուղղված բազմաթիվ ու երկարատև բողոքներ են եղել նաև Դիարբեքիրի վիլայեթի Չարսանջակ գավառում: Չարսանջակը Դերսիմի հետ միասին Դիարբեքիրի վիլայեթության մեջ մտավ 1865 թ. վարչական բաժանումների ժամանակ և շարունակեց մնալ նրա կազմում մինչև Բեռլինի կոնգրեսը[3]:

«Տերսիմցիները հայերուն հանդեպ ունեին անվերապահ համակրանք և մեծ վստահություն,- գրում է Երևանյանը: - Իրենց բոլոր առևտուրը հայերու հետ կկատարեին, կհավատային անոնց խոսքին ու անկեղծության: Հայը կնկատեին իրենց ազգակիցը, հարևանը և անխարդախ բարեկամը. կօգնեին անոր և իրենց սեմեն ներս կընդունեին զայն որպես տան անդամ»[4]: Գնալով հայ և քուրդ աշխատավորության միջև սկսված բարեկամությունը խորանում էր, մտերմանում, և իրար նկատմամբ անդավաճան էին դառնում աշխատավորական զանգվածները: Այդուհանդերձ, ասպատակող ու վայրագ էր Դերսիմի ու Չարսանջակի քուրդ վերնախավը, անխնա շահագործող, անհոգի վերաբերվող քրիստոնյա և մահմեդական ռայայի նկատմամբ: Նրանք խլել էին հայերի և նույնիսկ քուրդ ռայայի հողերը և երբեմնի սեփականատերերին դարձրել իրենց մարաբաները:

1860-ական թվականների սկզբներից Չարսանջակի հայերը տքնաջան փորձեր են կատարել նման ծանր դրությունից դուրս գալու համար: Նրանք սկզբում Պոլսի հայոց պատրիարքարանին և թուրք պալատականներին բազմաթիվ բողոքագրեր են ուղարկել, դատ բացել քրդական էմիրների դեմ, կարծելով, թե «սուլթանական արդարադատությամբ» հնարավոր կլինի պատժել քուրդ բեկերին:

Մեծ վեզիրի սպառնալիքներով լի պատասխանները սառը ջուր լցրեցին գավառի հայերի բարեհոգության վրա: Նրանք այժմ սեփական փորձով համոզվեցին, որ ազատագրման միակ և «ծայրահեղ» միջոցը զինված պայքարն է: Այն հնարավորություն կընձեռեր վերադարձնելու ոչ միայն կորցրած քաղաքական իրավունքները, այլ նաև սեփական ունեցվածքը, հողը, անասուններն ու բնակարանները:

1860-ական թվականներին Չարսանջակում տեղի է ունեցել ժողովրդական ելույթ ուղղված քուրդ դերեբեյների դեմ: Այդ ելույթի հիմնական հարցը, ժողովրդի հիմնական պահանջը եղել է հողը այն տարածքը, որը հայերի կողմից ժառանգաբար օգտագործվել է իբրև հայրենական սեփականություն:

Չարսանջակի դեպքերի մասին հարուստ տվյալներ են պահպանված Կ. Պոլսի Ազգային ժողովի արձանագրությունների մեջ: Այդ փաստաթղթերից պարզվում է, որ շարժումը սկսվել է ոչ թե 1865 թ., այլ դրանից բավական առաջ, նույնիսկ 1860 թ.: 1872 թ. օգոստոսի 5-ին Կ. Պոլսի պատրիարքարանը սուլթանական Բ. Դռանն ուղղած բողոքագրում Չարսանջակի խնդրի կապակցությամբ գրում էր. «Չարսանջակի գավառում բնակվող հայ ազգային մարդկանց պապենական սեփականություն եղող տունը և պարտեզն ու արտերը մուսուլման հպատակներից գյուղական աղաների կողմից գրավված լինելու և հայ ազգի մարդկանց իբրև վարձակալ համարելով նրանցից հարկեր և այլն պահանջելով նեղություն և ճնշում է գործադրվել, գործը հանձնվել է դատարան, վեճը գնալով ուժեղացել է հայերի և բեկերի միջև: *Այն 10-12 տարուց ի վեր շարունակվում է* հայ ժողովրդի մարդկանց և նրանց ճնշող քայքայողների միջև»[1]: Վեճը ավելի սուր կերպարանք է ստացել 1865 թ.:

Ֆ. Միլինգեն վկայում է, որ 1865 թ. Չարսանջակի հայ ազգաբնակ-

---

[1] «Ատենագրութիւնք...», հ. Բ, էջ 16-23:
[2] Նույն տեղում, էջ 21:
[3] *Գ. Երևանեան,* Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրութ, 1945, էջ 47-49:
[4] Նույն տեղում, էջ 137:

[1] «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», հ. Բ, էջ 21:

չությունը ենթարկվեց նոր հարստահարության: Քուրդ էմիրների կատարած ասպատակությունների լուրն առնելով, ոտքի կանգնեց ողջ Քուրդիստանի հայ հասարակությունը «ապստամբվեց» և որոշեց 24 հոգուց բաղկացած պատվիրակության միջոցով բողոքագրեր մատուցել սուլթանին և նրա պալատականներին: 1865 թ. մարտի 31-ին Աբդուլ-Ազիզին հանձնվեց բողոքագիր, որն իր հերթին ուղարկեց «փոխանորդին» Ֆուատ փաշային: Հայատյաց Ֆուատը, փոխանակ ունկնդրելու հպատակների բողոքի ձայնին, նրանցից 15-ին բանտարկեց և մեկ շաբաթ հետո միայն արձակեց, պայմանով, որ վերջիններս անմիջապես վերադառնային իրենց երկրները[1]: Հուսահատված չարսանջակցիները ներկայացան Կ. Պոլսի Ազգային ժողովին, նրանց տված տեղեկությունների համաձայն կազմվեց ընդարձակ բողոքագիր և առաքվեց Ասիայի կայսերական բանակի հրամանատար Դերվիշ փաշային:

Հիշյալ բողոքագրում պատմվում էր, որ չարսանջակցիները, 1860 թվից սկսած, վեճի ու պայքարի մեջ էին գավառում նստած քրդական 7 ցեղապետերի հետ: Վերջիններս խլել էին հայերի արտերը, ամառանոցները, պարտեզները, այգիները, նույնիսկ խանութները և սեփականացրել: Հայերը, բազում փաստարկներ բերելով, ապացուցում են իրենց սեփականատիրական իրավունքը, իսկ քուրդ բեկերը, հենվելով սրի ուժի վրա, արհամարհում են հակառակորդներին, շարունակում ասպատակությունները: Չարսանջակցիները պահանջում են Կ. Պոլիս կանչել 7 ցեղապետերին և դատ բացել նրանց դեմ, մանավանդ որ իրենց իրավացիությունն է հաստատում Դերվիշ փաշան[2]: Սակայն այս բողոքագրերը ևս, պատրիարքի միջոցով հասցնելով արտաքին գործերի մինիստրին, Բ. Ատյանի նախագահին, սովորականի նման մնացին անպատասխան:

Չարսանջակցիները ստիպված դիմեցին էջմիածնի կաթողիկոսին: 1867 թ. հունվարի 20-ին նրանք կաթողիկոսին են ուղղում մի աղերսագիր, որը լի է իրենց անելանելի դրությունը նկարագրող սրտաճմլիկ փաստերով[3]: Կաթողիկոսը պատասխան գրությունով Պոլսի պատրիարքին, քաղաքական ժողովի երեսփոխաններին հանձնարարում է հետամուտ լինել Չարսանջակի խնդրին և դատը հասցնել մինչև վերջ: Շարունակվում են բողոքները: Առանձնացվում է մի հանձնաժողով, որի անդամները, քաղաքական ժողովի երեսփոխաններ լինելով, ստացած բողոքագրերը թարգմանում են թուրքերեն և առաքում Բ. Դուռ: 1870 թ. այդ հանձնաժողովը հաղորդում էր. *«Չարսանջակցիք դարձյալ ներկայացան և հուսահատական վիճակնին հայտնելով կուզեին, որ գաղթեն, որովհետև իրենց գործն այսպես կախ մնալուն համար երկրագործություն ընելու ալ թույլ չեն տար երեր* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]:

Թուրքական կառավարությունը 1870 թ. վերջերին միայն քուրդ աղաներին կանչում է Պոլիս և դատարանով վճռում «Չարսանջակի խնդիրը»: Սակայն ցեղապետերից 7-ը ոչ միայն չենթարկվեցին այդ որոշմանը, այլև շարունակեցին ասպատակել ողջ գավառը սպառնալով ապստամբվել կուսակալի և կենտրոնական կառավարության դեմ: Փաստորեն, Բարձրագույն Դռան հրամանագիրը ևս չգործադրվեց[2]:

Բողոքները շարունակվեցին: «Ազգային կեդրոնական վարչության հարմարավետության» 1872-74 թթ. նիստերում նորից քննարկվում էին Չարսանջակի աշխատավորության ներկայացրած դիմումները: Այդ բողոքագրերը քննվեցին 1872 թ. մայիսի 5-ի, հուլիսի 27-ի, օգոստոսի 5-ի, սեպտեմբերի 23-ի և 1873 թ. մայիսի 3-ի նիստերում: 1872 թ. օգոստոսի 3-ի նիստում Ազգային քաղաքական ժողովի երեսփոխանները, Չարսանջակի հարցի կապակցությամբ, մեծ վիճաբանություններ ունեցան: Նրանք կազմեցին մի ընդարձակ ու ընդհանրացնող բողոքագիր, որտեղ համառոտակի շարադրեցին հայերի և քուրդ դերեբեյների միջև եղած երկարատև վեճերի պատճառները, կառավարության միջամտության արդյունքները: Բողոքագիրը Գր. Օտյանի միջոցով հանձնվեց սուլթանին:

Ինչպես այս, այնպես էլ 1863-1874 թթ. «Չարսանջակի հարցի» կապակցությամբ տեղացիների և Ազգային քաղաքական ժողովի կողմից կառավարությանն ուղղված մեզ հայտնի 14 բողոքագրերից և ոչ մեկը արդյունք չտվեց գավառահայությանը: Քուրդ աղաները սեփականացրին քրիստոնյաների հողակտորները, շատերի տներն ու ունեցվածքը: Հայերը շարունակեցին ապրել ավելի վատթար կացության մեջ, մանավանդ, որ 1870-ական թվականներին կառավարությունը ևս փոխեց իր նախկին դիրքը քրդերի նկատմամբ: Վախենալով հայերի ռուսասիրությունից, Բ. Դուռը ամեն կերպ հովանավորեց մահմեդական քրդերին, կազմակերպեց քրիստոնյաների թալանը, բռնի կրոնափոխությունը, ընդհանուր հայերի ոչնչացումը:

Այսպիսով, 1850-60-ական թվականներին Արևմտյան Հայաստանում և հայկական Կիլիկիայում ծագած զինված ապս-

---

[1] *Մ. Ներսիսյան,* նշված աշխատությունը, էջ 124-125:

[2] «Տեղեկագիր քաղաքական ժողովոյ կեդրոնական վարչութեան առ Ազգային ընդհանուր ժողով», 1865, Պոլիս, էջ 34:

[3] «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», մասն Բ, էջ 13:

[1] «Տեղեկագիր քաղաքական ժողովոյ կեդրոնական վարչութեան առ Ազգային ընդհանուր ժողով», Կ. Պոլիս, 1871, էջ 14:

[2] «Ատենագրութիւնք...», մասն Բ, էջ 24: Այս փաստաթղթերից մեկը, դեռևս 1911 թ. հայերենի է վերածել և հրատարակել *Գեղամ Տ. Կարապետյանը*: Տես նրա «Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ», Կ. Պոլիս, 1911, էջ 74-79:

տամբությունները, մի շարք ժողովրդական ելույթներն ուղղված էին սուլթանական բռնապետության, թուրք հրոսակների և վաչկատուն ռազմատենչ քուրդ ավատատերերի դեմ: Այդ բոլոր ելույթներն էլ ժողովրդական զանգվածների մեջ դարերով կուտակված ցասման բուռն արտահայտություններն էին, որոնք բռնկվում էին տարերայնորեն և աստիճանաբար իրենց վրա հրավիրում արևմտահայ և ողջ հայ առաջադեմ մտավորականության ուշադրությունը:

Արևմտյան Հայաստանում բռնկված բոլոր ելույթներն էլ մեկուսացված մնացին, գավառները գործեցին անջատ-անջատ և, ի վերջո, պարտվեցին: Պարտությամբ հանդերձ, նրանք հայ ժողովրդի մեջ արթնացրին պայքարի ոգի, ներշնչեցին հաղթանակի ու ազատության հույս և նպաստեցին ազգային կոնսոլիդացիայի պրոցեսի արագացմանը, իսկ նորաստեղծ դեմոկրատական մտավորականությանն ստիպեցին՝ համազգային շարժումներ առաջացնելու միջոցով, սուլթանական տիրապետությունից ազատվելու հնարներ մտածել:

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գլուխ առաջին

Արևմտահայությունը Սան Ստեֆանոյի պայմանագրից - Բեռլինի կոնգրեսը. անգլո-թուրքական խարդավանքները

1877 թ. ԱՊՐԻԼԻ 12-ին Ալեքսանդր II կայսրը Քիշնևում ստորագրեց մանիֆեստը, և սկսվեց ռուս-թուրքական վաղուց նախապատրաստված պատերազմը[1]: Պատերազմը ծավալվում էր երկու ռազմաճակատներով *Բալկանյան* և *Կովկասյան:* Հայ ժողովուրդը և արևելահայ, և արևմտահայ հատվածներից ռուսական բանակին ցույց տվեց նյութական օգնություն, բարոյական աջակցություն: Ամենակարևորը զինական ջոկատներով հերոսաբար մարտնչեց ազատագրելու դարերով ստրկացված իր հայրենիքը: Կովկասյան ռազմաճակատում թուրքերի դեմ կռվող ռուսական բանակը գլխավորում էին *հայազգի գեներալները*, որոնք իրենց հերոսությամբ փառավոր էջեր գրեցին պատերազմների պատմության ոսկյա մատյանում: Ամբողջ Արևմտյան Հայաստանն ազատագրվեց սուլթանական բռնապետությունից: Սակայն դիվանագիտական խնդիրները լուծվում էին ոչ թե *Կովկասում*, այլ *Բալկաններում:* Այնտեղ ևս ռուսական բանակը հաղթել էր և ազատագրել եղբայրական սլավոնական ժողովուրդներին:

Եվ այսպես. 1877-1878 թթ. ռուս-թուրքական հաղթական պատե-

---

[1] Ռուս-թուրքական *1877-78 թթ. պատերազմի, Սան Ստեֆանոյի պայմանագրի, Բեռլինի կոնգրեսի, Հայկական հարցի* մասին թե հայրենի և թե օտար պատմաբանների գրչով ստեղծվել է ծավալուն գրականություն: Ձեռագիր վիճակում, բայց հրատարակության պատրաստ է նաև մեր մենագրությունը «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը XIX դարի վերջին քառորդին» վերտառությամբ: Ուստի այստեղ մենք մի քանի էջի սահմաններում կանդրադառնանք այդ հարցերին, մինչև հաջորդաբար հրատարակենք մեր մյուս աշխատությունը:

ռազմն ավարտվեց հունվարի 19-ին: Պլևնայի ու Շիպկայի խիզախ հրամանատարությունը մի կողմից, Կարսի, Բայազետի հերոսները մյուս կողմից, ցարեղբայր Նիկոլայ Նիկոլաևիչի գլխավորությամբ ստորագրեցին Ադրիանապոլսի զինադադարը, և սկսվեց ամենադժվարինը *դիվանագիտական մարտերը* պատերազմի վերջնական արդյունքներին տիրանալու համար:

Այդ պահին ռուսական բանակի գլխավոր շտաբը կանգնած էր Թուրքիայի մայրաքաղաքից, այսինքն *երկրորդ Հռոմից* ընդամենը 12 կմ հեռավորության վրա: Նրանք խարիսխ էին գցել *Սան Ստեֆանո* ավանում գտնվող Տատյան Առաքել բեյի ամառանոցում և վայելում էին նրա սրտաբաց հյուրասիրությունը:

Զորակայանից սովորական աչքերով տեսանելի էին Կ. Պոլսի յոթ բլուրները, բարձրադիր շենքերը, հատկապես ժամանակին հայ ճարտարապետների ոսկյա մատներով կառուցված Այա Սոֆիայի տաճարի գմբեթակորույս աշտարակները: Կարծես կրկնվում էր 1453 թ. մայիսի վերջին շաբաթը, երբ *Մահմուդ Ֆաթիհը*, շրջապատելով այդ նույն մայրաքաղաքը, պատրաստվում էր ներխուժման ու ավարառության: Սակայն այն ժամանակ *Եվրոպան* կուրացավ, չտեսավ այդ նվաճման վտանգավորությունը ողջ մարդկության համար: Քաղաքակիրթ մարդկությունը չբռնեց բարբարոս ասպատակիչի ավերող ու արյունաթաթախ ձեռքը: Թուրքն իր արածն արեց և մինչև օրս էլ շարունակում է անել:

Հավիտենական քաղաքի վիճակն այս դեպքում էլ ծանր էր, մթնոլորտը չափազանց շիկացած: Խուճապի տրամադրություն էր առաջացրել ոչ միայն առափնյա շրջաններում կանգնած ռուսական բանակը, այլև աստիճանաբար տարածվող ու սաստկացող սովը: Պարենի խիստ պակասի պատճառով սովահարների թիվը գնալով տասնյակ հազարների էր հասնում: Մարդկանցից շատերն արդեն ապրում էին ընտանի կենդանիների (շուն, կատու) մսով: Մեռածների դիակները թաղողներ չունեին: Փողոցներում մնացած հանգուցյալների նեխվող դիակների գարշահոտությունը բռնել էր փողոցները և սպասվում էին վարակիչ հիվանդություններ, հատկապես խոլերայի համաճարակ:

Մայրաքաղաքի ոչ միայն ծայրամասերում, այլև կենտրոնական թաղամասերում նկատվեց *մարդավաճառություն:* Ե՛վ թուրքերը, և՛ հատկապես քրդերն իրենց երեխաներին վաճառում էին շատ չնչին գներով. 10-12 *տարեկան աղջիկներին* վաճառում էին 5-10 ֆունտ հացով կամ 200 ղուրուշ դրամով: Կենաց և մահու պայքարը հասնում էր իր վերջնակետին, և անտանելի այդ վիճակից ելքի ճանապարհը չէր երևում:

Ամենալուրջ խառնաշփոթն ու խուճապը յոթ բլուրներից մեկի՝ ամենաբարձրի վրա թառած *Եըլդըզ Քյոշքումն* էր՝ Համիդ II մարդասպանի գահանիստ պալատում: Թուրքական սուլթանը, բորենու պես, ոչ միայն արնախում էր, այլև դժվար պահերին՝ չափազանց կասկածա-

Վանի Այգեստան թաղամասը

Խոր-Վիրապի վանքը XVII դ.

միտ, վախկոտ, քանզի գահին տիրացել էր սեփական հարազատների դիակների վրայով: Այժմ տեսնելով քաղաքում տիրող դրությունը՝ հատկապես ռուսական բանակի հաղթական զորաշարժերը մայրաքաղաքի մատույցներում, հավաքել էր իրերը, հարեմն իր ամբողջ կազմով և պատրաստվում էր վախկոտ գազանի պես ճողոպրել *Անկարա:* Եվ նա չէր սխալվում:

Ցարեղբայրը հատկապես առավոտյան, անամպ երկնքի պահին անզեն աչքերով նայում էր *Կ. Պոլսին,* անթաքույց հիացմունքով արտահայտվում նրա մասին, մտադրությունները բարձրաձայն կիսում իր քաջ գեներալների հետ: Նա ուզում էր մտնել Ստամբուլ, այն քաղաքը, որն այնքան մտահոգություններ ու զոհեր էր պատճառել քրիստոնյա աշխարհին և ոչ միայն քրիստոնյա:

Հնարավոր էր այդ ցանկալի մուտքը մայրաքաղաք, մանավանդ որ դրա համար կային անհրաժեշտ բոլոր նախապայմանները: Նախ, սուլթանական բանակը գլխովին ջախջախված էր և՝ Բալկաններում, և՝ Անդրկովկասում: Թուրքիայում սկսվել էին հակասուլթանական շարժումներ, ժողովրդի համբերության բաժակը լցված էր արդեն: Ըստ որում, ապաշնորհ ու դաժան գահակալից խիստ դժգոհ էին ոչ միայն այլահավատ ժողովուրդները, այլև մահմեդական ազգերը, նույնիսկ *թուրքերը:*

Արտաքին հանգամանքները չէին խոսում Համիդ II-ի օգտին: Եվրոպական տերությունները մինչ այդ դիտորդի կարգավիճակով էին հետևում դեպքերի զարգացման ընթացքին Բալկաններում, թեկուզև՝ Անդրկովկասում: Նրանք սպասում էին, թե ինչպես պետք է ավարտվեն իրադարձությունները և ինչպիսի պատառներ կկարողանան պոկել «հիվանդ մարդու» մարմնից: Սուլթանն այդ ամենը հասկանում էր և պատրաստ էր ստորագրել ցանկացած պայմանագիր, գնալ բոլոր տեսակի զիջումների, միայն թե ռուսական բանակը չմտներ իր մայրաքաղաք և օր առաջ հեռանար Բոսֆորի ափերից:

Ռուսական հրամանատարությունը ձգձգում էր հաշտության պայմանագրի ստորագրումը մի քանի պատճառներով: Նախ, դեռևս պարզ չէր, թե ի՞նչ են ակնկալում բալկանյան սլավոնական ազգերն այդ պայմանագրից: Ռուսաստանը ծով արյուն էր թափել Բալկաններում, այժմ ի՞նչ կարող էր ստանալ դրա դիմաց: Կայսր Ալեքսանդրն ու գլխավոր հրամանատար Նիկոլայը Ռոմանովների դինաստիայից էին, միապետներ էին և ջանում էին, որքան հնարավոր էր, գրավված երկրներից տարածքներ միակցել Ռուսաստանին: Նրանք չէին հաշտվի այն մտքի հետ, որ իրենց զորքերի թափած արյան դիմաց գոնե չկարողանային ցարիզմի դիրքերն ամրապնդել Բալկաններում, ինչո՞ւ չէ, նաև՝ Անդրկովկասում:

Հաշտության պայմանագրի ստորագրումը ռուսներն ուշացնում էին, որպեսզի որքան հնարավոր էր նսեմացնեին, ստորացնեին գոռոզ ու

ամբարտավան Աբդուլ Համիդին: Դրանից հետո միայն նրանք կթելադրեին իրենց պայմանները: Գլխավոր հրամանատարն ի սկզբանե մտքում պահել էր, որ պայմանագրի ստորագրման օրը լինի փետրվարի 19-ը (մարտի 3-ը), այսինքն, Ռուսաստանում ճորտատիրության վերացման, ինչպես նաև Ալեքսանդր II-ի ծննդյան օրը՝ նրան մատուցելով իբրև նվեր:

Դժբախտաբար, շատ շուտով դեպքերի զարգացումը բոլորովին այլ ընթացք ստացավ՝ ի վնաս Ռուսաստանի: Պատերազմի առաջին իսկ օրվանից դեպքերի զարգացման ընթացքին հետևող բրիտանական ծովագայլը խաթարեց հաղթանակած պետության անդորրը և թույլ չտվեց, որ նա երկար ժամանակով վայելի իր հաղթանակի մեղրամիսը: Դեռևս պատերազմի սկզբում Բրիտանիայի վարչապետ, ազգությամբ հրեա լորդ *Բիկոնսֆիլդը* (Դիզրայելին), արտգործնախարար Սոլսբերիի բերանով, Լոնդոնի ռուսական դեսպան Պ. Ա. Շուվալովին հասկացրիի բերանով, Լոնդոնի ռուսական դեսպան Պ. Ա. Շուվալովին հասկացնում է, որ եթե ռուսները խախտեն Փարիզի (1856) պայմանագրի և Լոնդոնի (1871) կոնվենցիայի հիմնական կետերը, ապա անգլիական բանակը կհամալրվի 300 հազար հնդիկներով ու կանադացիներով, և *պատերազմը շարունակություն* կունենա[1]: Ադրիանապոլսի զինադադարից մինչև Սան Ստեֆանոյի պայմանագիրն ընկած ժամանակահատվածում Դիզրայելին նույն Պ. Ա. Շուվալովին, այս անգամ արդեն ուղղակի նախազգուշացնում էր, թե եթե ռուսական բանակը փորձի գրավել Կ. Պոլիսը, ապա անգլիական զորքերը պատրաստ են մտնել Միջերկրականի ջրերը և առափնել կամ Բոսֆորի, կամ էլ Դարդանելի մոտակայքում[2]:

Տեսնելով, որ ռուսները այնքան էլ լուրջ չեն ընդունում իր առաջարկները, վարչապետը գաղտնի կարգադրությամբ 1878 թ. փետրվարի 5-ին երեք ռազմանավից բաղկացած մի էսկադրան դուրս բերեց անգլիական ափերից, որը՝ փետրվարի 15-ին խարիսխ ձգեց *իշխանաց կղզիներին* դեմ առ դեմ: Ականատես լինելով Մեծ Բրիտանիայի գործնական քայլերին, Ռոմանովների արքունիքը սկսեց երկնչել նոր

[1] Մանրամասն տե՛ս Կ. Պոլսի ռուսական դեսպան *Ն. Իգնատևի* զեկուցագիրը կանցլեր *Ա. Մ. Գորչակովին:* Տե՛ս ՌԿԱՔԱ, Կոստանդնուպոլսի դեսպանություն, ֆոնդ 180, ցուցակ 517/2, գործ 3162, թերթ 12-15:

[2] Անգլո-ռուսական հակամարտությունների մասին 1994 թ. Բեյրութում լույս է տեսել *Ագապի Նասիպյանի* «Բրիտանիան և Հայկական հարցը 1915-1923 թթ. մենագրությունը»: Կիպրոսի Մելքոնյան վարժարանի տնօրենը, վեհափառ *Վազգեն Առաջինի* հովանավորությամբ, տպագրելով գրքի հայերեն թարգմանությունը՝ նրա առաջին գլխում անդրադառնում է նաև հայ-անգլիական հնամենի հարաբերություններին: Գիրքը խիստ արժեքավոր է ոչ միայն հեղինակի պատմագիտական մեծ կարողությունների պատճառով, այլև այն առումով, որ գիտական շրջանառության մեջ է դնում տարիների տևողությամբ բրիտանական արխիվներից հայտնաբերած թարմ նյութեր, այնպիսիք, որոնք հազիվ թե մատչելի լինեին Հայաստանի պատմաբաններիս:

պատերազմի վտանգից, մանավանդ որ գաղտնի ծառայությունների միջոցով արդեն հայտնի էր դարձել, որ Անգլիայի ծրագրած ռազմական գործողությունները, առավել ևս դիվանագիտական խարդավանքները, բացահայտորեն պաշտպանելու էին Իտալիան և Ավստրո-Հունգարիան:

Երկու տասնամյակ էր անցել Ղրիմի պատերազմի ավարտից: Դեռևս չէր չորացել Փարիզի հաշտության պայմանագրի թանաքը, երբ նորից կարող էր հանուր Եվրոպան դուրս գալ հզոր, միաժամանակ միայնակ մնացած Ռուսաստանի դեմ: Հետևաբար Պետերբուրգի կաբինետը աճապարում էր օր առաջ վերջացնել պատերազմը և ստորագրել հաշտության պայմանագիրը[1]:

Ռուսաստանը զբաղված էր բարեփոխությունների ընդարձակ ծրագրի իրականացմամբ, որի մեջ հատուկ տեղ ուներ ռազմական ռեֆորմը: Այդ նկատի ունենալով, ռազմական մինիստր, պրոֆեսոր Դմիտրի Միլյուտինը գրություն գրության հետևից էր ուղարկում Սան Ստեֆանո, դիվանագետներ Իգնատևին, Նելիդովին *հանձնարարում*, Նիկոլայ Նիկոլաևիչից *խնդրում* շտապեցնել հաշտության պայմանագրի ստորագրումը, որպեսզի արևմտյան տերությունները, հանկարծակիի գալով, այլևս չկարողանային շարունակել պատերազմը: Զինվորական մինիստրն ուղղակիորեն հասկացնում էր ռուսական բանակի հրամանատարությանը և դիվանագիտական կորպուսի աշխատողներին, թե կայսրությունն այլևս ֆինանսական միջոցներ չունի պատերազմը շարունակելու: Հետևաբար հաշտության հապաղումը «Ռուսաստանի պարտությունն է նախանշում»[2]:

Ռուս-թուրքական զինաբախումներն ավարտված էին, սակայն անգլո-ռուսական դիվանագիտական մրցամարտերը նոր էին ծայր առել և գնալով պիտի խորանային ու զարգացման նոր թափ ստանային: Երեկ բոլորովին անհայտ, *այսօր ողջ Եվրոպայի մեծերի բերանի խոսակցության առարկա դարձած Սան Ստեֆանո ավանում* վճռվում էր ոչ միայն Թուրքիայի, այլև բալկանյան ազգերի և հայ ժողովրդի ճակատագրի հարցը: Այստեղ խմորվում էին խնդիրներ, որոնք պիտի շոշափեին արևմտյան տերությունների ռազմաքաղաքական շահերը: Բոլոր կաբինետներն անհանգստացած էին Ռուսաստանի տարած հաղթանակի պատճառով: Դրանցից յուրաքանչյուրն ուզում էր իր բաժինն ստանալ «պատերազմական այդ ռազմավարից»:

Մի կողմ թողնելով մյուս խնդիրները, նշենք, որ ինչպես արևմտահայության, այնպես էլ ողջ հայ ժողովրդի համար պահը բախտորոշ էր, բաղձալի, քանզի մեր ժողովուրդը դարեր էր սպասել՝ ռուսական զենքի օգնությամբ թոթափելու սուլթանական կեսհազարամյա արյունոտ լու-

[1] Տե՛ս *Պ. Ա. Շուվալով,* О Берлинском конгрессе 1878 г. ("Красный архив", 1933, N 4 (59), стр. 87-88):

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 90:

ծը, և այժմ կարծես պահը եկել էր, եթե չխանգարեին մեծ տերությունները, հատկապես ավանդական թուրքոֆիլ *Բրիտանական ծովագայլը*[1]:

Հաշտության բանակցությունները տեղի էին ունենում գաղտնի: Երկուստեք պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ մինչև վերջնական փաստաթղթի ստորագրումը ոչ մի հայտարարություն չարվի, ոչ մեկին լուրեր չհաղորդվի: Հետևաբար հայկական էլիտան տեղեկություն չուներ բանակցությունների արդյունքների մասին, նույնիսկ չգիտեր՝ Հայաստանը մտե՞լ է փաստաթղթի մեջ, թե՞ ոչ: Հետաքրքրությունը առավել խորանում էր: Թուրքիայի առափնյա քաղաքներում խարսխված հոգևոր ու աշխարհիկ հայ գործիչները, Ազգային ժողովի երեսփոխանները, գրողներն ու հրապարակախոսները, հայաշխարհում ու գաղթաշխարհում բնակություն հաստատած հայրենանվեր հայերն ամեն միջոցի դիմում էին, միայն թե թոթափեին սուլթանական լուծը: Ազատության շեփորը Կ. Պոլսի Հայոց պատրիարք *Ներսես Վարժապետյանի* ձեռքում էր: Նրան օգնում էր, գուցեև գործելու ուղղություն

[1] Հայ-անգլիական հնամենի շփումների մասին *Ագապի Նասիպյանը* հետաքրքիր փաստեր է դնում գիտական շրջանառության մեջ, որոնք հավաստում են, թե հայ-անգլիական շփումներ եղել են դեռևս միջին դարերում, այսինքն, խաչակրաց արշավանքների ժամանակ: «Այսպես,- գրում է Նասիպյանը,- Կիլիկիո ապագա թագավոր Լևոն Ա եղեր էր գլխավոր փեսեղբայրը Ռիչարդ Առյուծասիրտի հարսանիքին Կիպրոսի մեջ 1191-ին (տես հիշյալ աշխատության էջ 4)»: «Հայերի վերջին թագավոր Լևոն Ե-ն,- շարունակում է Նասիպյանը,- Ֆրանսիա և Անգլիա գնաց 1386-ին միջնորդելու Ռիչարդ Բ-ին և Ֆրանսիայի թագավորին միջև, որոնք պատերազմի մեջ էին այն ատեն (տես նույն աշխատությունը, էջ 5)»: Նույն գրքի առաջաբանում ականավոր քաղաքական գործիչ, բանասեր և թարգմանիչ *Վահե Վահյանը* հրապարակում է նյութեր, որոնք բնութագրում են միջնադարյան Անգլիայի դիրքորոշումը հայ ժողովրդի նկատմամբ: Ըստ Վահյանի, 1783 թ. անգլիական վարչապետ *Վիլյամ Պիտը* խորհրդարանում արտասանած իր մի ճառում հայտարարում է, թե «ցարական բանակը կպատրաստվի իջնել Անդրկովկաս... իր իշխանության տակն առնելու... այդ տարածությունները, որոնց վրա կտիրեն այժմ պարսիկներն ու թուրքերը: *Հայերը վաղուց ջերմ զգացումներ կտածեն հանդեպ Հյուսիսային հսկայի,* որին *Քեռի* մակդիր են տված, *իբրև արտահայտություն սիրո, հիացումի և վստահութեան և անկէ կսպասին իրենց փրկությունը* թուրք ու պարսիկ *բռնակալութենէ* (նույն տեղում, էջ ԺԶ-ԺԷ)»: Ճառը նա եզրափակում է այսպիսի դաժան խոսքերով. *«Բրիտանիան պիտի միշտ հետևէ քաղաքականութեան մը, որով կարենար Ռուսիան հեռու պահել Անդրկովկասից: Իսկ եթե օր մը «Քեռին» հաջողեր ոտք դնել այդ հողին վրա, պետք է, որ Բրիտանիան արդեն կատարած ըլլար այն գործը, որուն հետևանքով չկրնար հոն հանդիպել ան մեկ հատիկ քեռորդիի անգամ, որ կարենար դիմավորել զինք* (նույն տեղում)»: Բրիտանիայի վարչապետը դեռևս XVIII դարավերջին դաշնակից թուրքերին կոչ է անում *բնաջնջել* ողջ հայ ժողովրդին: Նրա հավատարիմ *դաշնակիցները* իրենց ստացած հանձնարարությունը կատարեցին մեկ հարյուրամյակ հետո, երբ բնաջնջեցին ողջ արևմտահայությանը:

էր տալիս Վասպուրականի արծիվը՝ ժողովրդի կողմից անմնացորդ սիրված, Հայրիկ պատվանուն ստացած *Խրիմյան Մկրտիչը:* Հոգևորականի վեղար հագած այս զույգ քաղաքական գործիչներին օգնության ձեռք էին մեկնում բոլոր անվանի հայերը՝ անկախ ունեցվածքից, դավանանքից (կաթոլիկներն ու բողոքականները ներառյալ), դասային ու դասակարգային պատկանելությունից:

Ոգևորությունն ընդհանուր էր, համազգային, մանավանդ ռուսական բանակի առկայության պայմաններում արևմտահայ գործիչները մի պահ մոռացել էին իրենց երեկվա ստորացած վիճակը և այսօր թուրքերի հետ խոսում էին կամ նրանց գրություններ ուղղում հավասարը հավասարի սկզբունքներով:

Հայ ժողովրդի նվաճած այդ նոր պայմաններում, Ազգային ժողովի հարկադրանքի տակ (Վարժապետյանն ինքնավարություն տալուն չէր հավատում) Ներսես Վարժապետյանը, սուլթանական արքունիքի գիտությամբ, 1878 թ. փետրվարի 25-ին մեկնում է Սան Ստեֆանո ավան, տեսակցում ռուսական բանակի գլխավոր հրամանատարի, ինչպես նաև Կ. Պոլսի ռուսական դեսպան գեներալ Իգնատևի հետ: Ճարպիկ մի խաղ էր դա, որն իբրև դաս սովորեցրել էր Թուրքիայում Անգլիայի արտակարգ և լիազոր դեսպան *Լեյարդը,* որպեսզի նախ սառեցներ հայ-ռուսական հարաբերությունները, ապա տապալել տար այն պլանները, որոնք կառուցել էր ռուսական դիվանագիտությունը[1]:

Բոլորին ակնհայտ էր, որ Արևմտյան Հայաստանին *ինքնավարություն* չէին տա ոչ միայն Թուրքիան ու Անգլիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան, այլև բուն իսկ Ռուսաստանը: Եվ դրա առհավատչյան եղավ հանկարծ՝ մարտի 3-ին հրապարակված, 29 կետից բաղկացած *«Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը»*: Փաստաթուղթը ստորագրել էին ռուսների կողմից՝ Ն. Իգնատևը և Նելիդովը, թուրքերի կողմից՝ *Սավֆետ* փաշան և *Սաադուլլահ բեյը*[2]:

Պայմանագրի մեջ առանձին հոդված էր մտել՝ 16-րդը, ըստ որի «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված *Հայաստանի* Թուրքիային վերադարձնելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից

[1] Մանրամասն տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 109-111:

[2] Տես «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 98:

հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»[1]: Արևմտահայերին էր վերաբերում նաև 25-րդ հոդվածը. «Ռուսական զորքերի դուրս բերումը Ասիական Թուրքիայից կկատարվի վեց ամսվա ընթացքում հաշված վերջնական հաշտություն կնքելու օրվանից»[2]:

Նախնական պայմանագրով Թուրքիայից Ռուսաստանին էին անցնում *Բաթումը, Կաղզվանը, Օլթին, Կարսը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը* շուրջ 35,350 քառ. կմ: XIX հարյուրամյակում ռուսական բանակը (1828-1878 թթ.) երրորդ անգամ էր ազատագրում Կարսը, սակայն առաջին անգամ էր այն մտնում տերության կազմը:

Եվ այսպես, միջազգային դիվանագիտության մեջ անվանապես մուտք գործեց Հայկական հարցը, որը հետագայում այնքան հոգսեր պատճառեց անպաշտպան արևմտահայությանը՝ հատկապես դրան հաջորդող *վերջին հիսուն տարիների ընթացքում:*

Սան Ստեֆանոյի որոշումներից դժգոհ էին բոլոր կողմերը: Թուրքիան դժգոհ էր, քանզի կորցնելով եվրոպական մարզերն ու աֆրիկյան տիրույթները, միտք ուներ ամրանալ Փոքր Ասիայում, հենվելով մահմեդաբնակ ազգերի վրա, ծնունդ տալով թուրանական նոր տերության: Կորցրած մարզերն ի դերև էին հանում մեծ խալիֆի ու նրա արքունիքի հույսերը: Այդ էր պատճառը, թերևս, որ Համիդն իր արտգործնախարար, մահմեդականացած հույն Կարաթեոդոր փաշայի բերանով եվրոպական մեծերից օգնություն էր աղերսում՝ նույնիսկ փաստաթղթի ստորագրումից հետո[3]:

Անգլիան գոհ չէր, որովհետև Ռուսաստանի ամրանալը Անդրկովկասում ուղղակի սպառնալիքներ էր ստեղծում ոչ միայն Փոքր Ասիայի նվաճմանը, այլև բրիտանական թագուհու թագի մարգարիտ հանդիսացող Հնդկաստանի զավթմանը: Լոնդոնի կաբինետը նոր հիստերիայով դիմեց Ավստրո-Հունգարիային՝ նրան խոստանալով Բոսնիան և Հերցեգովինան, Ֆրանսիային «տալով» Ալժիրն ու Թունիսը, երկաթյա կանցլեր Օտտո Բիսմարկին առաջարկելով տնտեսական գոտիների բաժանել Թուրքիան և մեծ բաժին հատկացնել Եվրոպայի քարտեզի վրա մի քանի տարի առաջ միավորված տեսքով հայտնված կայզերական Գերմանիային:

Անգլիան Եվրոպան միավորեց Ռուսաստանի դեմ, և *պահանջ առաջացավ* Սան Ստեֆանոյի դաշնագիրը վերանայել Բեռլինում այն տերությունների մասնակցությամբ, որոնք ստորագրել էին Փարիզի

[1] Տես «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 92:

[2] Նույն տեղում, էջ 96:

[3] Մանրամասն տես ՈԿԱՔԱ, ֆոնդ 180, ցուցակ 570/2, գործ 1721, «Հայերը Թուրքիայում» վերնագրված ընդարձակ փաստաթղթի 17-21-րդ էջերը:

(1856) խաղաղության պայմանագրի տակ: Որոշումն ընդունվեց, հանդիպման վայրը նշանակվեց Բեռլինը[1]:

Ռուսաստանը ևս դժգոհ էր: Ռուսական զորքերը ծով արյուն էին թափել Շիպկայի ու Պլևնայի պատերի տակ, Բայազետի մատույցներում, Կարսի բերդ-ամրոցի գրավման պահին: Նրանք հաղթանակ էին տարել օսմանյան կայսրության դեմ մղած հերոսական պատերազմում, սակայն այժմ իրենց դեմ հանդիման կանգնած էր Բրիտանական ծովագայլը՝ համաեվրոպական պատերազմի սպառնալիքով: Պետերբուրգի կաբինետի ոչ միայն ռազմական ռեսուրսները, այլև տնտեսական միջոցները գնալով պակասում էին: Նա միայնակ, այն էլ ողջ Եվրոպայի դեմ, այլևս կռվել չէր կարող, ուստի հարկադրված էր գնալ զիջումների, որպեսզի ավարտեր նոր սկսված *զինվորական ռեֆորմը*[2]:

Հայ ժողովուրդը սկզբում, իր ընտրանու արտահայտությամբ, ցնծության մեջ էր: Կեսհազարամյա պատմության ընթացքում Թուրքիան դիվանագիտական փաստաթղթերում առաջին անգամ ճանաչում և արձանագրում էր *«Հայաստան»* բառը, խոստանում, նույնիսկ պարտավորվում բարեփոխություններ մտցնել այդ երկրում: Ավելին. երկրի մի ստվար հատվածը ազատվում էր Օտտոմանյան բռնապետությունից և միացվում Արևելյան Հայաստանին, այսինքն՝ մտնում քրիստոնյա տերության կազմի մեջ:

Այդ բոլոր որոշումները կարճ ժամանակ անց հիմնովին վերաձևվեցին, վերախմբագրվեցին և ձևով, և բովանդակությամբ, այն էլ *Անգլիայի խարդավանքներով,* սկզբում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի լուռ թողտվությամբ, հետագայում անթաքույց հովանավորությամբ:

Մեկ դար առաջ ձևակերպված, բայց տակավին իր լուծումը չստացած Արևելյան հարցի վճռման միակ միջոցն այդ պահին Ռուսաստանի հաղթական սուրն էր, թուրքահպատակ քրիստոնյա ազգերի անվերապահ ռուսական կողմնորոշումը Բալկաններում և Փոքր Ասիայում: Ցարիզմի նվաճողական նկրտումները սերտաճում էին տեղական ոչ թուրք, հպատակ ժողովուրդների՝ ազատագրական պայքարով անկախություն ձեռք բերելու բաղձանքներին: Ակնհայտ էր, որ Արևելքի, հատկապես արևմտահայերի նկատմամբ իրոք մեսիայի դեր ստանձնած Ռուսաստանը օսմանյան Թուրքիայի բռնապետության տակ խեղանդամվող քրիստոնյա ազգերին վերաբերող գորդյան հանգույցը լուծում էր կե-

[1] *Հայկ Ղազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.:

[2] Մանրամասն տես "История СССР", первая серия тома I-VI, том V, Москва, 1968, стр. 260-265:

սարյան եղանակով, միանգամից, եթե նրան չխանգարեին կամ թույլ տային եվրոպական մեծերը[1]:

Արևմտյան Եվրոպայի փոքր ու մեծ տերությունների մի ստվար մասը, հատկապես ավանդական, հնամենի գաղութատեր Բրիտանական կայսրությունը, տիրապետելով դիվանագիտական ամենաանազնիվ հնարքներին, քայլ առ քայլ ընդարմացնում էին ռուսական զենքի հաղթանակի պտուղները: Հայաստանը «պատրաստվում էր ողջակիզվել», բայց ոչ միայն կայզերական Գերմանիայի, այլ նաև մառախլապատ Թեմզայի ափերին թառած անգլիական դիվանագիտության զոհասեղանին: Դժբախտաբար, այդ բոլորը կատարվում էր գաղտնածածուկ, դիվանագիտական նուրբ, բայց խարդախ մեթոդներով:

Եվ այսպես, նախապատրաստական լուրջ աշխատանք էին տանում նախ Թուրքիան, ապա Ռուսաստանը, ինչու չէ, նաև գրեթե ողջ հայ ժողովրդի ընտրանին: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ կազմվեց Բեռլին և Պետերբուրգ դիվանագիտական մուրիկության գնացող *պատվիրակությունը՝* Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ. անդամներն էին *Ստեփան Փափազյանը, Մինաս Չերազը* (քարտուղար և թարգմանիչ): Պետերբուրգ ուղարկվեց *Խորեն Նարպեյը:* Ն. Վարժապետյանի հանձնարարությամբ, Գր. Օտյանը կազմեց «Ծրագիր կազմակերպական կանոնագրի օսմանյան Հայաստանի» խորագրով մի փաստաթուղթ, որը նախատեսում էր *ինքնավարության* բոլոր այն հիմնադրույթները, որոնք ժամանակին տրվել էին *Լիբանանին*[2]:

Հայերին ինքնավարություն տալու ճարպիկ խաղը ձևավորվել էր Լոնդոնի կաբինետում, հանձնարարվել Կ. Պոլսի անգլիական դեսպան *Սուստեն Հենրի Լեյարդին՝* ոչ միայն բացատրել ու համոզել Համիդ II-ին թակարդի հետագա ընթացքը, այլև Ն. Վարժապետյանի այդ ուղղությամբ կատարվելիք քայլերին ազատություն տալ: Բայց ոչ բոլոր հայերն էին ռոմանտիկ կամ միամիտ: Լսելով այդ մասին, արմատական թևին պատկանող, հայատառ թուրքերեն «Մյունատի» (Մունետիկ), հետո «Թերճիման էֆքյար» պարբերականի խմբագիր *Կարապետ Փանոսյանը* Ազգային ժողովի բեմ է բարձրանում և գայրացած ասում. «Ի՞նչ եք անում, ո՞ւր եք տանում ազգը, սևագլուխ և ինքնակոչ դիվանագետներ... ո՞վ կտա մեզ ինքնավարություն, ո՞րի վրա եք դնում ձեր հույսը: Ան շահամոլ և նենգ Եվրոպիո վրա, որն ուզում է պահպանել Թուրքիայի գոյությունն իր շահադիտական նպատակների համար»[3]:

[1] Տե՛ս *ՈԿԱԲԱ,* քաղարխիվ, ֆոնդ 151, ցուցակ 482, գործ 3068, թերթ 1-31: Ամբողջ գործը մի ընդարձակ *զեկուցագիր* է, որի մի գլուխը նվիրված է պանիսլամիզմի գաղափարախոսությանը, մյուսը՝ եվրոպական տերությունների խաղացած բացասական դերին հայկական հարցի հանդեպ:

[2] Մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 113:

[3] «Մուրճ», 1907, N 2, էջ 61-62:

Լոնդոնն ու Ստամբուլը, ձեռք ձեռքի տված, բոլոր հնարները գործադրում էին խաբելու հայ ժողովրդին, նրան ուղղելու ինքնավարություն ստանալու ճանապարհին, իրականում խաթարելու հայ-ռուսական ջերմ հարաբերությունները, Բեռլինում վերանայել տալու տարածքային կետերը, ամենակարևորը՝ փոխելու 16-րդ հոդվածի ձևն ու բովանդակությունը: Զավեշտական էր, միաժամանակ իրողություն, որ հայերի ինքնավարության ծրագրին ծանոթ էր սուլթան Համիդը: *Նրա գիտությամբ և թույլտվությամբ էր Բեռլին մեկնում հայկական պատվիրակությունը*[1]: Այդ մասին առատ փաստեր են պահպանվել ժամանակի հայ գործիչների աշխատությունների էջերում և ոչ միայն հայ գործիչների...

Ինչպես Սարուխանը, այնպես էլ Սուշեղ եպիսկոպոսն ու արևմտահայ շատ այլ լրագրողներ, քաղաքական գործիչներ, Ազգային ժողովի երեսփոխաններից ոմանք այն կարծիքն են հայտնել, թե Արևմտյան Եվրոպայով դեպի Բեռլին աճապարող հայ պատգամավորության այցելությունները ոչ թե հայ դիվանագիտության հաղթանակն էին, Ն. Վարժապետյանի ու Մ. Խրիմյանի կազմակերպչական գաղտնի գործունեության արգասիքը, այլ *Աբդուլ Համիդի խորամանկ խաղը* նախ՝ ա) խաթարելու հայ-թուրք, հայ-քուրդ ժողովուրդների առանց այդ էլ խաթարված հարաբերությունները, անդունդի վիհ փորելու նրանց միջև, բ) հայերին Արևմուտք ուղևորության թույլտվությամբ և Եվրոպայի մայրաքաղաքներում բանակցությունների դրդմամբ, փաստորեն, Ռուսաստանին երկմտության մեջ դնելու և սառեցնելու վերաբերմունքը իր զենքի ուժով ազատագրվող արևմտահայության նկատմամբ:

«Պեռլինի վեհաժողովի հայ պատգամավորություններու առաքումը,- գրում է *Սուշեղ եպիսկոպոսը,-* հայ դիվանագիտության աչքառու հաջողությունը չէր, այլ մեկ դժոխային խաղը սուլթան Համիդի: 1878 թ. մարտին Ներսես պատրիարք Բ. Դռան կմատուցանե Հայաստանի մեջ ինքնօրեն վարչության մը կազմության ծրագիրը, կազմված ժամանակին ազգային վարիչներու խորհրդակցությամբ: Այդ ծրագիրն արդյունք էր այն օրերուն Ճեյմս Պրայսի տան մեջ գումարված ժողովին որոշումներուն (մարտ 7/19): Սուլթան Համիդ կթելադրե Ներսես պատրիարք, սույն առաջարկը ներկայացնել վեհաժողովին, հայ պատգամավորներու միջոցով: Այս դավաճան թելադրության պատճառները երկու կրնային ըլլալ: Սուլթան Համիդ իր նախարարներու հետ առանձին չէր կրնար այդ ծրագիրն իրականացնել, առանց հիմնովին ինքզինքը *ապավարկելու էր իսլամ մտածողության առջև:* Պետք էր, ուրեմն. զայն ղրկել Թուրքիո բախտը վճռելու կոչված վեհաժողովին: Այդ

[1] Մանրամասն տե՛ս *ՈԿԱԲԱ,* ֆոնդ 343, «Հայկական գործեր», ցուցակ 461, գործ 214, թերթ 7-14: Ծավալուն մի վավերագիր է Համիդ II-ի 1878 թ. մարտհունիսին ծավալած գործունեության մասին:

առաքումի պահուն սուլթան շատ լավ գիտեր, թե ռուսական դիվանագիտությունն առավել քան երբեք պիտի մերժեր այդ ծրագիրը, որ գլխովին կհակառակեր իր քաղաքական շահերուն: Այս պարագային ծրագրին մերժումը քրիստոնյա տերություններե պիտի գար, որ Հայերը ծրագրի մերժումեն վիրավորված, պիտի խզվեին այլևս պաշտպան կարծված քրիստոնեա տերություններու հետ: Ուրեմն, հայերը պարզապես իրենց դեմ լարված թակարդի մեջ ինկան պատգամավորության առաքումովը և այսպիսով ազգային ամեն նվիրական շահերը վտանգեցին»[1]:

Նման համարձակ եզրակացության համար Մուշեղ եպիսկոպոսին հիմք են ծառայել ժամանակի քաղաքական գործիչների թողած ուղղակի, երբեմն էլ եզովպոսյան լեզվով ձևակերպված որոշ արտահայտությունները: Վկայություններ են մնացել, թե հայկական պատվիրակության Բեռլին մեկնելու թույլտվությունը մտահղացվել է Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյարդի դիվանագիտական խոհանոցում, որպեսզի սառեցվեն հայ-ռուսական հարաբերությունները և հեշտացվի Սան Ստեֆանոյի պայմանագրում ձևավորված 16-րդ հոդվածի վերաշրջումը, Ռուսաստանի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքի կրճատումը:

Լեյարդի դիվանագիտական խաղերի հակառուսական իմաստն հասկանալով, «Մշակի» Կ. Պոլսի թղթակիցը ծրագրային ընդարձակ հոդվածով այսպես էր դիմում հանուր հայությանը. «Մենք պաշտպանություն կհուսանք Ռուսաստանեն, որովհետև նա մեզ սահմանակից մի տերություն է, գիտե մեր խղճալի դրությունը, ավելի մոտեն կըրնա դիտել զմեզ և *հարկավոր եղած ժամանակ կարող է շուտով և նյութական միջոցներով ալ օգնել մեզ*, իսկ Անգլիան ոչ մեզի մոտիկ է, ոչ ալ քրիստոնյաներուն պաշտպան և փաստաբան կանգնած է երբեք թուրքին դեմ, այնպես՝ ինչպես Ռուսիան: Նաև Անգլիայի մեջ գրեթե հայ չկա, բայց Ռուսիայի մեջ միլիոնեն ավելի եղբայրակիցներ ունինք, որք մեզ դրացի և ազգակից են, կարող են օգնել ու պաշտպանել հարկավոր եղած ժամանակ, մինչդեռ անգլիական քաղաքականության հետևելով, որի խաբեությունն ու խարդավանքներն անվստահություն ներշնչած են մեզ, մենք կիրավիրենք մեր վրա հակակրությունը մի այնպիսի տերության, որու հզոր բազկին ներքև կգտնվին բազմաթիվ հայեր, հետևապես մեր անխոհեմ և անքաղաքագետ շարժումներով գուցե վնաս հասցնենք մեր այդ սիրելի եղբայրակիցներուն»[2]:

Ադրիանապոլսի զինադադարից մինչև Սան Ստեֆանոյի բանակցությունների սկզբնավորման օրերին կազմված մի ամբողջ հոսանքի բաղձանքներն արտահայտող այդ հոդվածի հեղինակն ու նրա համախոհները, Սարուխանի բնութագրությամբ *ռուսասերները*, շարունակության մեջ հայ դիվանագետներին ու ժողովրդին զգուշացնում էին. «Ամեն հեռատես հայեր կխորհին, թե Լեյարդի թելադրություններուն անսալով երբ խաբվինք և Ռուսիայի դեմ բողոքելու ելնենք, Անգլիայի ինտրիգան կառավարությունը հետո զմեզ անպաշտպան կթողու, միմիայն սեփական շահերու վրա մտածելով և համաձայնելով Ռուսիայի հետ, և մենք իզուր տեղ Թուրքիայի ատելությունը հրավիրած կլինեինք մեր խեղճ ազգի վրա...»[1]:

«Մետեորա» հանդեսի խմբագիր Մեսրոպ Նուպարյանը «Արևելյան խնդիրը-Հայկական խնդիրը» իր հոդվածաշարում, ամփոփելով դրանց շուրջ 1878-1880 թթ. ծավալված դիվանագիտական պայքարին վերաբերող բազմաբնույթ վավերանյութերը, ականատեսի խորաթափանցությամբ նախ արդարացնում է հայկական պատվիրակության Եվրոպայի «թափառումները», ապա նրբությամբ հասկացնում, թե նրա առաքելությունը *թույլատրված էր սուլթանական կառավարության կողմից:* «Հայ ազգի՝ եվրոպական տերության դիմելով,- գրում է Մ. Նուպարյանը,- ձախող քաղաքականության մը հետևած ըլլալու խնդրույն մեջ՝ մենք չէ թե միայն համամիտ չենք՝ այլ ընդհակառակն կմտածենք ամեն իրավունքով թե Հայ Ազգը քաղաքական մեծ վրեպ մը գործած պիտի ըլլար, *եթե յուր երկարաժամանակեա տառապանքներուն դարման չըլլալը մոռանալով՝ անգութ և մեկուսացած մնար, երբ եվրոպական համազգային Արիապագոսի մը մեջ Թուրքիո բաղդը և ապագա վիճակը պիտի որոշվեր ու վճռվեր, որու մեջ հարկավ Հայն ալ՝ իբր էապես Արևելյան ժողովուրդ՝ իր մասն ու բաժինն ունի: Անտարակույս այս վշտահար ազգն իրավունք ուներ եվրոպական վեհաժողովին մեջ իր տկար ձայնը լսելի ընել, իրավունք մը զոր նույնիսկ վեհափառ Սուլթանի կառավարությունը ի սկզբանե ճանչնալե զատ՝ այս մասին քանի մը դյուրություններ ևս բարեհաճեցավ շնորհել իրեն* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[2]:

Հայկական պատվիրակության Բեռլին գնալու թույլտվություն ունենալու խնդիրը հանգամանորեն քննել է նաև Վանի Երամյան վարժարանի հիմնադիր՝ «աչամբ կույր, մտքով պայծառ» Համբարձում Երամյանը: 1879-1885 թվականներին, գրեթե ամեն շաբաթ նա հանդիպումներ է ունեցել պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանի հետ, ունկնդրել է եվրոպայում շրջագայության վերաբերյալ Հայրիկի արած ման-

---

[1] *Մուշեղ եպիսկոպոս,* Մանչեստրի հայ գաղութը, Պոստոն, 1911, էջ 78-79:
[2] «Մշակ», 1878, N 15, տե՛ս նաև *Սարուխան,* Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 354-355:

[1] «Մշակ», 178, N 15:
[2] «Մետեորա», Զմյուռնիա, 1881, հ. Բ, էջ 56:

ռամասն պատմություններին, օգտվելով նրա վստահությունից, պարզել է մի շարք կարևոր հանգամանքներ, որոնք շատերի համար այդպես էլ իր ժամանակին անհայտ մնացին: Այդ թեմայով Երամյանը զրույցներ է ունեցել նաև Կոնստանդին Կամսարականի, Մինաս Չերազի, Մատթեոս Իզմիրլյանի հետ և, համադրելով ականջալուր բոլոր վկայությունները, գրել է. «Համիդն ինքը դիվային խորամանկությամբ քաջալերեց, ըստ ոմանց, ուղղակի թելադրեց հայ պատվիրակության մը առաքումն ի Պերլին, իբր թե հայերն իրենք ևս կփափաքին եղեր Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի վերաքննությամբ Ռուսիայի փոխարեն և ի հեճուկս անոր՝ մյուս տերությանց համախումբ պաշտպանությունն ապահովել»[1]:

Կ. Պոլսում լույս տեսնող «Մասիս» պարբերականը, արտահայտելով թուրք-եվրոպական, հատկապես թուրք-անգլիական առևտրատնտեսական հարաբերությունը կամրջող հայ կոմպրադորական բուրժուազիայի շահախնդրությունները, 1878 թվականին հրատարակած իր բազմաթիվ համարներում քննության նյութ էր դարձրել Բեռլին առաքվող հայկական պատվիրակության թույլտվության խնդիրը: Հետևելով հայկական թերթերի, ինչպես նաև Կ. Պոլսում անգլերենով և ֆրանսերենով հրատարակվող պարբերականների հաղորդագրություններին, Կ. Ուրուճյանը փաստեր է բերում Վարժապետյան-Համիդ փոխհարաբերությունների վերաբերյալ 1878 թվականին և փորձում բացահայտել նման խախուտ կամուրջ կառուցողի՝ Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյարդի «ճիզվիթական դերը»[2]: Այդ օրերին և ընդհանրապես Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի բերան դարձած «Մասիս» պարբերականը Եվրոպա ուղևորված հայ պատվիրակության գործերը վերլուծելիս ավելացնում էր. «Օսմանյան տերությունն հազար աչքով նայեց մեր ազգային պահանջներին և խափան չեղավ ս. Պատրիարքին աշխատությանց» կամ, վկայակոչելով օտար թերթերին, եզրակացրեց, թե հայոց պատվիրակները Բեռլին են գնացել Բ.Դռան թույլտվությամբ[3]:

Դեպքերին ականատես, հետագայում պատրիարք, պատրիարքարանի դիվանատան վավերագրերն իր ձեռքումն ունենալով, Մ. Օրմանյանն առանց երկմտելու ընդհանրացնում է, թե Հայկական դատի պաշտպանության ամիսներին «Ներսեսի նախաձեռնությունը կատարելապես օրինավորության գետնին վրա էր, օսմանյան քաղաքականության դեմ

[1] *Համբարձում Երամյան,* Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 324, տե՛ս նաև *Ռ. Փ. Հովհաննիսյան,* Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց կազմակերպությունը», Երևան, 1965, էջ 140-141:

[2] Տե՛ս «Մասիս», 1878, N 2098, 2147, 2155: Այս հարցը քննել և անառարկելի եզրակացության է հանգել *Ջ. Ս. Կիրակոսյանը,* տե՛ս նրա «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը», Երևան, 1978, էջ 211-213:

[3] «Մասիս», 178, N 2145:

բնավ կետ մը չուներ, *մանավանդ, թե օսմանյան տերություն ալ հովանավորված էր*»[1]: Անշուշտ, այդ հովանավորությունն ստանալիս կամ պատգամավորության Եվրոպա դիվանագիտական մուրիկության ուղարկելու թույլտվության արարողության պահին Բ. Դուռը, գուցեև Համիդ II սուլթանը պատրիարք Ն. Վարժապետյանին պարտադրել էին կատարվածի մասին լռել և որևէ ձևով չհայտնել ոչ Ազգային ժողովին և ոչ էլ ակնդետ լուրերի սպասող մամուլի օրգաններին: Նման եզրահանգման օգտին է խոսում այն փաստը, երբ 1878 թ. հուլիսի 21-ին կայացած Ազգային ժողովի Ե նիստում հայ երեսփոխաններից շատերը, դեպքերի զարգացման ընթացքից հուսախաբված ու զայրացած, Ն. Վարժապետյանից պահանջում էին բացահայտել հայկական հարցի հետ կապված բոլոր մանրամասնությունները: Պատրիարքն, իրեն հատուկ սառնասրտությամբ, պատասխանից հրաժարվեց և խոսքն ավարտեց այսպես. ***«Պատմության կպատասխանեմ, իսկ Ձեր դատապարտությունը կրելու պատրաստ եմ»***[2]: Մեկ այլ առիթով պատասխանելով երեսփոխաններ Պ. Պառնասյանին, Օ. Խոճասարյանին, Հայոց պատրիարքը Ազգային ժողովում խստությամբ հայտարարեց. «Շեյխ-ուլ-իսլամի հետ ալ տեսնվեցա, գուցե պատրիարքաց մեջ առաջինն եմ Շեյխ-ուլ-իսլամի հետ տեսնվող և խոսող. ես անդր քան զակնկալություն Ձեր, կատարած եմ իմ պարտավորությունս. ***բայց ամեն բան չեմ կրնար հայտնիլ, համարձակ խոսիլ ձեզ: Բան մ՚ալ ըսեմ ձեզ,*** պաշարյալ վիճակի մեջ կգտնվինք, որ կպարտադրե զմեզ զգուշություն ընել մեր ամեն մեկ խոսքերուն մեջ, այս փափուկ ժամանակիս մեջ վտանգավոր և հույժ այսպիսի խնդիրներ հուզել: ***ժողովին համար ես եմ պատասխանատու, զգուշացեք՝ որ չըլլա թե ժողովին գոյությունը վտանգելու պատճառ ըլլա*** (ընդգծումները մերն են. - Հ. Ղ.)»[3]:

Համիդյան սարսափի տակ ստեղծված գաղտնապահության պահանջը, գուցե անհրաժեշտությունը, պատճառ դարձավ, որ հայկական պատվիրակության Եվրոպա ուղևորման արտոնվելու կամ չարտոնվելու հարցը նման վեճի առիթ ծառայեր և դառնար իրարամերժ զույգ տեսակետներ սնուցանելու նյութ: Սակայն ամեն ինչը չէ, որ գաղտնիք մնաց: Հետագայում պարզվեցին այդ մանրամասնությունները և, փաստորեն, հաղթանակեց Ն. Վարժապետյանին և հայկական պատվիրակությանը թույլտվություն տալու տեսակետը: Այդ տեսակետն են հաստատում անուղղակի այլ փաստեր:

1878 թ. հունիսին, զգալով անգլիական կառավարության հայկական հարցի նկատմամբ բռնած դիրքի խարդախ ընթացքը, Ն. Վարժա-

[1] *Մ. Օրմանյան,* Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 422:

[2] «Ատենագրությունք Ազգային ժողովոյ», 1878, 21-ը հուլիսի, Ե նիստ:

[3] Նույն տեղում, 1878, 12 օգոստոսի, Թ նիստ, էջ 197:

պետյանը որոշում է անձամբ մեկնել Բեռլին, բոլոր միջոցները գործադրել և օգնել հայերին ինքնավարություն նվաճել: «Արևելյան մամուլ» հանդեսը հունիս ամսվա համարում գրում էր. «Բայց ուրիշ ի՞նչ կարելի է ընել: Ահա ազգին երկու անվանի եպիսկոպոսներ Պերլին են, ահա հայ դիվանագետներու գլուխները կգործեն, ահա բոլոր լրագրերը կգրեն և հասարակաց կարծիքը մեզի նպաստավոր է, ահա նույնիսկ *ս. Պատրիարքը Պերլին գնալու պատրաստ էր,* եթե խնդրած արտոնությունը ստանար, ահա Բ. Դուռն անգամ իր պատգամավորության պաշտոնապես հեռագրեց, որ Հայոց խնդրույն համար միջնորդեն, ահա վերջապես Այաստեֆանոյի 16-րդ հոդվածն, որ առիթ պիտի տա Հայոց գործն նկատողության առնելու: Արդար և բարեգուշակ են այս նշանները, բայց ինքնօրենության հաստատության անհրաժեշտ գրավական չեն»[1]: Այս մի քանի տողի մեջ խիտ ձևով ներկայացված է բազմաթիվ դեպքերի զարգացման ընթացքը, որոնց մասին ավելի մանրամասն խոսում է Սարուխանը, հավանաբար ձեռքի տակ ունենալով մինչև օրս մեզ անհայտ վավերագրեր:

Սարուխանը գրում է, որ «Անսալով շատերի կողմից արված խորհրդին Ներսեսը որոշել էր անձամբ գնալ Բեռլին և անձամբ պաշտպանել այնտեղ հայկական ինքնօրինության նախագիծը: Ուստի իր փոխանորդի, Մկրեան տեր Հովի. քահանայի ձեռքով թույլտվություն խնդրեց կառավարությունից նախ իր վատառողջությունը կազդուրելու և ապա հայկական նահանգները պաշտպանելու համար Եվրոպա ուղևորվել»[2]: Մեծ Սադրազամը, համբերությամբ լսելով Հովհաննես Մկրյանին, մերժեց նրա խնդրանքը և, դժգոհությունը թաքցրած, պատճառաբանեց, թե *Մ. Խրիմյանն արդեն Լոնդոնում է շուրջ երկու ամիս, այժմ էլ թող մեկնի Բեռլին և զբաղվի այդ հարցերով*[3]:

Փոխվել էին դերերը, առերես փոխվել էր վերաբերմունքը: Իր ողջ կյանքում ոչ մի անգամ Բ. Դռան երես չտեսած և տեսնելու համար հույս էլ չունեցած քրիստոնյա սովորական քահանան, դիվանագիտական մրցապայքարից, հատկապես ռուսական հովանավորությունից ոգևորված, հանդգնում էր թուրքական մեծ վեզիրի հետ իր զրույցը շարունակել և պահանջել ծածկագրի իրավունք տալ Հայոց պատրիարքարանին, որպեսզի Ն. Վարժապետյանը կարողանա Կ. Պոլսից ղեկավարել պատվիրակության գործունեությունը: «Սադրազամը գերադասեց ծածկագրի իրավունք տալ, քան թե թողնել, որ հայոց պատրիարքն անձամբ կոնգրեսին ներկայանա...: Ըստ այսմ, ուրիշ բան չէր մնում անել, եթե ոչ օգտվել միայն վերջին արտոնությունից և ծածկագիր հեռագրի բանալին Ստեփան Փափազյանի հետ ուղարկել Բեռլին»[1]: Արփիար Արփիարյանը 1898 թ. Լոնդոնում հրատարակած «Նոր կյանք» հանդեսում գրում էր, թե «կառավարությունն իր բարյացկամության մեջ այնքան առաջ գնաց, որ հրամայեց արտաքին գործոց պաշտոնատան ծածկագիր հեռագիրներու տնօրենին, որ հայ մըն էր, հայոց պատրիարքարանին համար ծածկագրություն մը պատրաստել»[2]: Սարուխանը լրացնում է, թե «Իսկ բուն ծածկագիրը հատկապես պատրիարքարանի համար կազմել էր Խաչիկ Օտեանը, Գրիգոր Օտեանի եղբայրը և Բ. Դռան ծածկագիրության դիվանի պետն, որ թուրք կառավարության հանձնարարությամբ, նույնպես մեկնեց Պերլին, օսմանյան լիազորների կարգադրության տակ գտնվելու համար»[3]: *Ակնհայտ էր, որ Օսմանյան կառավարությունը ոչ միայն թույլատրել էր Եվրոպա ուղևորվող հայկական պատվիրակության երբը Հռոմ, Փարիզ, Լոնդոն, Բեռլին ուղեգծով, այլև գաղտնագրված հեռագրի իրավունք էր վերապահել Կ. Պոլիս-Բեռլին գծով:*

Թուրքիայի կեսհազարամյա պատմությանը, նրա բարբարոսական վարքագծին, քրիստոնյա ազգերի նկատմամբ ունեցած անասնական ատելությանը ծանոթ ոչ մի հետազոտող չէր կարող հավատալ այդ ամենին, եթե չհասկանար այն խարդախ սարդոստայնի բուն էությունը, որն հյուսել էին անգլո-թուրքական դիվանագետներն ու պետական գործիչները հայ ժողովրդի դեմ՝ առերես «բարերարի» կերպարանք առնելով, ընդհատակից նյութելով հայկական ինքնավարության ծրագրի ոչնչացումը, հայ-ռուսական հարաբերությունների սառեցումը:

Անկասկած է, որ Անգլիայի ու Թուրքիայի բարձրաստիճան պետական այրերի խրախուսանքը կար, որպես խայծ Արևմտյան Հայաստանի ինքնավարության ծրագրի մշակման[4] և զույգ տարբերակներով մի կողմից Վիեննային, Հռոմին, Փարիզին, հատկապես Լոնդոնին ներկայացնելու, մյուս կողմից Պետերբուրգում բանակցություններ վարելու համար: Սակայն հետադարձ հայացքով, առանց խորանալու խնդրի բուն էության մեջ, պարսավանքի ենթարկել հայկական պատվիրակությանը, ողջ Ազգային ժողովին, անհարիր է պատմական իրողությանը, անարդարացի ու հախուռն հայրենանվեր այդ գործիչներին տված գնահատումների մեջ:

Դարերի մղձավանջի միջնորմներով դեգերող, մերթ գետնվելով, մերթ

---

[1] «Արևելյան մամուլ», 1878, հունիս, N 6, էջ 50:

[2] *Սարուխան,* Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 449:

[3] «Մասիս», 1878, 1/13 հուլիսի, N 2132:

[1] *Սարուխան,* նույն տեղում, էջ 450:

[2] «Նոր կյանք», Լոնդոն, 1898, N 19:

[3] *Սարուխան,* նշված աշխատությունը, էջ 450:

[4] Վերոհիշյալ տեսակետը պաշտպանել է նաև *Ռ. Փ. Հովհաննիսյանը,* տե՛ս նրա նշված աշխատությունը, էջ 125-127:

ըմբոստ խոյանքով ընդվզելով, համբերության բաժակը լցված, արևմտահայությունը գուրգուրանքով էր փայփայել Ռուսաստանի՝ իր հայրենի երկիրը մտնելու, նրա օգնությամբ ազատագրվելու հույսերը: Այժմ իրողության էին վերածվել ժողովրդի այդ վաղեմի բաղձանքները, այժմ հույսեր էին արթնացել Հայաստանի ինքնավարության ստեղծման համար, այժմ ստրկացած, ռայա, զիմմի, գյավուր անվանված հային, թեկուզև իրենց քաղաքականության մեջ խարդավանքներով զոհելու հեռամետ դիտավորությամբ, երկուստեք խոստումներ էին շռայլում: Առաջին անգամ միջազգային դիվանագիտական վավերագրերում հիշատակում էին նրա անունը, գուցե արտաքնապես, բայց և այնպես, ընդունում նրա ցասկոտ բողոքը, ունկնդրում նրա ներկայացուցիչներին:

Տվյալ պահին լռելը, ազատագրության դարավոր մտապահումները ծրագրերի չվերածելն ու Եվրոպային, հատկապես Ռուսաստանին չներկայացնելը, այսօրվա ակնոցով դիտարկելիս, գուցե կգնահատվեր իբրև ազգային դավաճանություն կամ, լավագույն դեպքում, անթույլատրելի անտարբերություն: ***Ուրեմն, խորհուրդ տային թե չտային, դիվանագիտական խարդավանքներ պատրաստեին թե*** չպատրաստեին՝ Համիդն ու Լեյարդը, Իգնատևն ու Շուվալովը, միևնույնն է, հայ գործիչները կդիմեին, կխնդրեին, կբողոքեին խեղդվող մարդու պես՝ ամեն ինչից փրկություն ստանալու սկզբունքով, կօգտագործեին բոլոր հնարավոր ու անհնարին միջոցները: Եվ օգտագործեցին հայկական պատվիրակները, նրանց ուղղություն տվող, զորավիգ կանգնող հայկական համայնքները Հայաստանի երկու հատվածներում, բոլոր աշխարհամասերի հայկական գաղութներում: Գուցե գործելաձևի մեջ խմբագրումներ լինեին, այս դեպքում էլ՝ նպատակը արդարացնում է միջոցները, և դժվար է ասել, թե որի առաջադրած ուղեգիծն այսօր ճիշտ կհամարվեր:

Կարծես վերոհիշյալ քննադատներին է պատասխանում անվանի հայագետ Ն. Յա. Մառը, 1906 թ. գրելով. «Հայկական հարցը, հարկավ, ավելի հանրահայտ էր, հայկական կյանքի նորից գործի գցած մակույկը, մեծ տերությունների միջազգային քաղաքականության կամակոր ալիքների ազդեցության ներքո, մերթ վեր էր խոյանում համաշխարհային հետաքրքրության գլխապտույտ մակարդակը, մերթ շպրտվում համընդհանուր անտարբերության անդունդը, և այնժամ մակույկավարները, հանձինս հայ եկեղեցու, որ երկար ժամանակ հայ ժողովրդի միակ ներկայացուցիչն էր, և հանձինս մտավորականության, համառորեն և բարձրաձայն դիմում էին մարդկությանը՝ արդարության խնդրանքով: ***Բայց մեղքը ոչ թե մակույկավարների, այլ անվերանալի պատմական փաստի, ստեղծագործական հզորությունից դեռևս չզրկված հայ ժողովրդի զարթոնքի և նրա ազգային ինքնագիտակցության աճման ու ընդլայնման մեջ էր*** (ընդգծումները մերն են-Հ. Ղ.)»[1]: Ինչպես ասում են սրանից դիպուկ, համոզիչ պատասխան չեն գտնի նրանք, ովքեր փորձում են Թուրքիայի ու Անգլիայի փոխարեն կամ նրանց հետ մեկտեղ որոշ անորոշ մեղադրանքներ շպրտել հայ գործիչների հասցեին, հետադարձ մարգարեությամբ քննության առնել, հանիրավի ստվերի տակ դնել նրանց հայրենանվեր գործողությունները:

Հայկական պատվիրակության Բեռլին մեկնելու և ինքնավարության պահանջի ձևակերպման խնդիրը քննարկել են նաև Մինաս Նուրիխանն ու Վենետիկի Մխիթարյանները, ջանացել ցույց տալ այդ տարակարծությունները, որոնք գոյություն ունեին հայ հասարակական գործիչների մեջ դեսպանաժողովի նախօրյակին, հատկապես դեպի Եվրոպա ու Անգլիա բռնելիք ընթացքի մեջ: Մ. Նուրիխանը, հենվելով 1907 թ. «Մուրճ» հանդեսում տպագրված մի ընդարձակ հոդվածաշարի ընձեռած փաստերի և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դիվանից ստացած վավերագրերի վրա, գրում է. «Հայրենասեր Ներսես իր մի քանի ազդեցիկ համախոհներով թև է առնում և հետևելով դիվանագիտության այն սկզբունքին, թե ***ամեն միջոց ներելի է նպատակին հասնելու համար,***- ծրագրում է Տաճկահայաստանի ինքնավարության հատակագիծը՝ Բեռլինի վեհաժողովին ներկայացնելու համար: Իսկ եթե մի կողմից պիտի վշտանան և խռովին տաճիկները, մյուս կողմից զայրանան ու կատաղին ռուսները, դրա մասին հոգ չի անում Ներսես Վարժապետյանը, հույսը դնելով եվրոպական ***արիսպակեսի*** աջակցության վրա...»: Պատմական այս նշանավոր րոպեին է, որ հնչում է Կարապետ Փանոսյանի ձայնը «Մանզումե էֆքյարի» և Ազգային ժողովի մեջ, ինչպես վիրավորված առյուծի մը մռնչյուն. «Ի՞նչ եք անում, ո՞ւր եք տանում ազգը, սևագլուխ և ինքնակոչ դիվանագետներ»[2]:

Եվրոպա ուղևորված հայկական պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանի՝ Լոնդոնում ծավալած գործունեությունը, դրանից առաջ և դրանից հետո նրա գրվածքներում, նամակներում Մեծ Բրիտանիայի հասցեին արված դրական որոշ արտահայտությունները հիմք են ծառայել անվանի մտավորականի հակառակորդներին Հայրիկի կողմնորոշումը բնորոշել իբրև անգլասերի: Անարդարացի են այդ գնահատականի հեղինակները: Անգլիայի մասին նրա հայտնած կարծիքները ժամանակի, դեպքերի, կոնկրետ իրադարձությունների հարկադրության ծնունդ էին և ոչ հիմնավոր ուղեգիծ, կողմնորոշում: Այդ առումով Մ. Խրիմյանին դիպուկ է բնորոշել Ալ. Շիրվանզադեն, գրելով. «***Խրիմյա-***

---

[1] ***Н. Марр,*** История Грузии (Культурно-исторический набросок), СПб, 1906, стр. 47, տե՛ս նաև ***Գ. Ա. Գալոյան,*** Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, էջ 411:

[2] ***Մինաս Նուրիխան,*** ժամանակակից պատմություն, 1868-1878, մասն Գ, Վենետիկ, 1907, էջ 612-613, տե՛ս նաև «Մուրճ», 1907, փետրվար, էջ 60:

նի համար չկար ոչ իշխան, ոչ ծառա, ոչ հարուստ, ոչ աղքատ, ամենքը միևնույն արժեքն ունեին նրա աչքում: Այդ տեսակետից նա կատարյալ բանաստեղծ էր: Միայն մի բանի առաջ էր խոնարհվում նրա անկախ և հարուստ հոգին - ժողովրդի»[1]:

Մ. Խրիմյանի ժամանակակից, կրտսեր գործընկեր, երկար ու դաժան տարիների Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մ. Օրմանյանն իր «Խոհք և խոսք» աշխատության մեջ, որը հեղինակի ցանկությամբ ետմահու հրատարակություն էր, նրան բնութագրում է իբրև «սիրտ և զգացում», «խոհական զգուշավորություն, վարչական նրբություն, գործունեության ճարտարություն իրեն սեպհական չէին: Իր նշանաբանն ալ էր *ինձ խորհելի չի*»: Բոլոր պաշտոններ վարեց, եղավ ուսուցիչ, վարդապետ, հոգևոր առաջնորդ, վանահայր, պատրիարք, կաթողիկոս և «կըրնանք համարձակ ըսել թե ոչ մեկուն մեջ նշանակալից հաջողություն չունեցավ, սակայն երբեք ընդհանուր համակրությունը և պաշտելիության հասնող հարգանքը չկորսնցուց: Այս էր Խրիմյանի բնավորության գաղտնիքը, յուր ժողովրդական վերաբերմունքը, յուր անկեղծ և անսեթևեթ խոսակցությունը, չնայելով որ կատարյալ աշուղ մըն էր, և յուր բոլոր աշխատասիրությունները այս ճյուղին կվերաբերեին, և ութսունն անցնելեն ետքն ալ տակավին բանաստեղծական քերթվածներն էին յուր ժամանակի զբաղումները»[2]:

Հայկական պատվիրակության արևմտաեվրոպական թևը, իրեն միավորելով ծածկագիրը Բեռլին տանող Ստ. Փափազյանին, Պարսկաստանի մայրաքաղաքից թագուհուն նստավայր աճապարող, հայոց «ստեղծվելիք գահի» նկատմամբ հավակնությունների անլուրջ երազանքներով օրորվող Մելքում խանին, Լոնդոնի հայկական թեմի առաջնորդ կարգված Հովհաննես Մկրյան քահանային, ընդհանուր ղեկավարություն ստանալով Ն. Վարժապետյանից սկսեց ակտիվացնել իր գործողությունները Անգլիայում:

Անգլիայի նկատմամբ հակումներն ուժեղանում էին նաև, քանի որ Մ. Իզմիրլյանը էջմիածնից բողոքում էր հայոց կաթողիկոսի անտարբերության դեմ, Խորեն Նարպեյը տեղյակ էր պահում ռուսաց մայրաքաղաքի պետական գործիչների սառն ընդունելության մասին: Կարծես աշխուժանում էին անգլիական կողմնորոշման հայ գործիչները, հատկապես Գր. Օտյանն ու նրա կողմնակիցները, որոնք աներևույթ ուղղություն էին տալիս դիվանագիտական այդ օրերի պայքարին, չտեսնելով կամ չկարողանալով տեսնել, թե Մեծ Բրիտանիան ինչպիսի երկդիմի խաղ էր խաղում հայ ժողովրդի գլխին:

Ն. Վարժապետյանը, ակնդետ հետևելով թագուհու մայրաքաղաքում հայկական հարցի շուրջ ծավալված մրցապայքարին, հետևողականորեն նամակներ էր ուղարկում Լոնդոնում ապրող այն պետական գործիչներին, որոնք կարող էին օգնել Մ. Խրիմյանին և նպաստել հայկական ինքնավարությանը վերաբերող ծրագրի իրողության վերածմանը: Նա մի ընդարձակ ծրագրանման նամակ է ուղարկում լորդերի պալատի լիբերալ երեսփոխան Ֆորսթերին, որտեղ գրում է, թե *«Մեր քաղաքականությունն է Ռուսիո երախտագետ ըլլալով հուսալ յԱնգղիա և Անգղիո շնորհիվ ապահովել մեր բարոյական ու նյութական բարեկեցությունը:* Այս բարեկեցությունն ուրիշ կերպով ձեռք չենք կրնար բերել, *այլ միայն ազգային ինքնօրինությամբ Հայաստանին մեջ*»[1]:

Ակնհայտ է, որ մինչև կոնգրեսի բացումը, Վարժապետյան-Օտյան խմբավորումը, դեմ չգնալով 16-րդ հոդվածին ու Ռուսաստանին, ձգտում էր, սակայն, Անգլիայի օգնությամբ ինքնավարություն ստանալ: Հատկանշական է նաև, որ Մ. Խրիմյանի ձեռքով այդ նամակը ստանալուց և նրա բովանդակությանը ծանոթանալուց հետո Ֆորսթերը պատասխանում է. «Մի վշտացրեք Ռուսաստանը, որ ձեր դրացին է, մի դառնաք այստեղ գործիք ոչ պահպանողական կուսակցության և ոչ ալ մեր ազատականներու ձեռքը: Շատ դժվար է Անգլիայի համար հսկել Հայաստանի վրա, որ այնչափ հեռի է մեզմե: Սև ծովի հարավային եզերքը բավականաչափ հայ ժողովուրդ չկա, իսկ Անգլիան միայն ծովեզրյա բնակիչներուն կարող կլիներ պաշտպանություն ցույց տալ: Ուստի կհարցնեմ ձեզ, ձեր ազգն կարո՞ղ էր ինքն իր գլխուն իր ինքնավարությունը պաշտպանել, եթե Հայաստանին այդ տրվեր: Հայերը բավականաչափ ուժ ունի՞ն իրենք իրենց մեջ, որովհետև Անգլիայի օգնության վրա հույս չի կարելի դնել»[2]:

1878 թ. մայիսի 10/22-ին Անգլիայի արտաքին գործերի մինիստրի պաշտոնում նոր միայն նշանակված լորդ Սոլսբերին ընդունեց Հայկական պատվիրակությանը, ծանոթացավ նրա ներկայացրած փաստաթղթերին, թարգմանչի միջոցով զրույց ունեցավ պատկառելի արտաքինի տեր Մ. Խրիմյանի հետ և վաղորոք մտածված իր պատասխանը ձևակերպեց այսպես. «Հայերն իրավունք ունեն լավ վարչություն պահանջելու, բայց ոչ մի պետություն չի կարող այժմից որոշ ասել, թե ինչ ձևի վարչություն պիտի շնորհվի նրանց, որովհետև դրա *բանաձևը դեռ չի գտնված* և միայն կոնգրեսը կարող է այդ վճռել: Համենայն դեպս դուք

---

[1] «Ամենայն Հայոց Հայրիկ», հրատարակություն Համավասպուրականի հայրենակցական միության, Պոսթըն, 1957, էջ 84:

[2] *Մաղաքիա արքեպիս. Օրմանեան*, Խոհք և խօսք իր կեանքին վերջին շրջանին մեջ (ետմահու հրատարակություն), Երուսաղեմ, 1929, էջ 435:

[1] *Մուշեղ եպիսկոպոս*, Մանչեստրի հայ գաղութը, էջ 382:

[2] *Համբարձում Երամյան*, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, էջ 112:

կարող եք վստահ լինել, թե հայերը պիտի ունենան այնպիսի մի վարչություն, որ նրանց պիտի երաշխավորե բարեկեցություն, ազատություն և խաղաղություն»[1]:

Արտաքինից թվում էր, թե Անգլիայի նոր մինիստրը ակամայից ոգևորված է հայերի ինքնավարության խնդրով, սակայն դա առերես խոստում էր, նրանց աչքում էժան հեղինակություն ձեռք բերելու միջոց: Նա իր բուն մտածածը, իսկությունը գաղտնորեն հայտնեց Լեյարդին, գրելով, թե ընդունեցի հայկական պատվիրակությունը, տեղեկացա թե Մ. Խրիմյանը թշնամաբար չի տրամադրված Բ. Դռան նկատմամբ, բողոքը «անօրեն քրդերի չարագործությունների» դեմ է. «Ես էլ վեհ. թագուհու կառավարության առ հայազգն զգացած անկեղծ համակրությունը հայտնելով ապահովացրի նրան, թե մեր բոլոր ջանքը գործ կդնենք հայերի վիճակը բարվոքելու, բայց ***հարկ չհամարեցի կոնգրեսի կողմից գործադրելի մասնավոր միջոցների նկատմամբ խոստումներ տալ***»[2]:

1878 թվականի ապրիլ-մայիս ամիսներին անգլիական դիվանագիտությունը վարչապետ Բեկոնսֆիլդը, Սոլսբերին, Լեյարդը և լորդերի պալատի գրեթե բոլոր անդամները, տարբեր չափերով և արտահայտության ամենատարբեր ձևերով հայկական պատվիրակության հետ սիրախաղեր անելով, ձգտում էին նրան օգտագործել նախ Ռուսաստանի դեմ, ազդել Պետերբուրգի կաբինետի վրա և կարողանալ նրան հարկադրել ստորագրելու պայմանագիր՝ ուղղված Հայաստանի ինքնավարության և հայ ժողովրդի դարավոր ձգտումների դեմ: Բրիտանական առյուծը հմտորեն հայկական անուրջները բախում էր ցարական պատնեշներին և, ջանալով փշրել նրա հավատամքը, ձգտում էր սառնություն մտցնել հայ ժողովրդի մեջ, ճեղքել դարերով ռուսական կողմնորոշում փայփայող նրա մտավորականության շարքերը: Դժբախտաբար, տատանվող որոշ հայ գործիչներ ենթարկվեցին այդ ազդեցությանը, երբ ծանոթացան անգլո-ռուսական պայմանագրի տեքստին:

1878 թ. մայիսին, երբ Մ. Խրիմյանը արևելյան դավրեշի կերպարանքով ծեծում էր մերթ պահպանողական Բիկոնսֆիլդի, մերթ նրա հակառակորդ լիբերալ Գլադստոնի դռները, մեկ այցելության էր գնում Քենթրբերի արքեպիսկոպոսին, մեկ թուրքական դեսպանատուն էր մտնում քաղաքավարական այցով, նույն Լոնդոնում, նույն մայիս ամսվա 18/30-ին գաղտնաբար կնքվում էր ***Անգլո-ռուսական համաձայնագիրը***, որի տակ իրենց ստորագրությունն էին դնում հայկական պատվիրակությանն առերես ինքնավարության խոստումներ շռայլող

[1] *Մուշեղ եպիսկոպոս,* Մանչեստրի հայ գաղութը, էջ 83-84, *Սարուխան,* Հայկական խնդիրն ու Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 384-385:

[2] «Անգլիական կապույտ գիրք», 1878, տե՛ս նաև *Սարուխան,* Հայկական խնդիրն ու Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 385:

պետական քարտուղար Սոլսբերին և Լոնդոնի ռուսական դեսպան Շուվալովը[1]:

Կատարվում էին տարածքային լուրջ կրճատումներ: Համաձայնագրի 10-րդ կետում ասված էր. «Ինչ վերաբերում է Ալաշկերտի հովտին և Բայազետ քաղաքին, ապա, քանի որ այդ հովիտը հանդիսանում է դեպի Պարսկաստան տանող տրանզիտային մեծ ճանապարհ և թուրքերի աչքում ունի հսկայական նշանակություն, Նորին մեծություն կայսրը համաձայն է այն վերադարձնել նրանց, բայց փոխարենը, հոգուտ Պարսկաստանի, պահանջել է և որպես զիջում ստացել Կոտուրի ոչ մեծ տերիտորիան, որի երկու միջնորդ կառավարությունների հանձնաժողովները արդարացի են համարել վերադարձնել շահին»[2]:

Անգլո-ռուսական համաձայնագիրը վերանայում էր Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի մի շարք հոդվածներ, որոնք վերաբերում էին Բուլղարիայի մասնատմանը, նրա պետական ու քաղաքական կարգերին, Բեսարաբիայի վերամիավորմանը Ռուսաստանին: Վերջում ասվում էր նաև, որ «Համաձայնելով չառարկել ռուսական կայսրի Բաթում նավահանգիստը ձեռք բերելու և ***իր նվաճումները Հայաստանում պահպանելու ցանկությանը*** (ընդգծումները մերն են-Հ. Ղ.), Նորին մեծություն կառավարությունն իրենից չի թաքցնում, որ Ռուսաստանի սահմանների ընդլայնման հետևանքով հավանաբար կարող է ծագել Ասիայում թուրքական բնակչության անդորրությանն սպառնացող լուրջ վտանգ: Սակայն Նորին մեծություն կառավարությունն այն կարծիքին է, որ օսմանյան կայսրությունն այդ վտանգից պահպանելու պարտականությունը, որն այսուհետև կընկնի հատկապես Անգլիայի վրա, հետագայում կարող է իրագործվել առանց այն բանի, որպեսզի Եվրոպան չենթարկվի նոր պատերազմի աղետներին»[3]:

Անկասկած էր, որ բրիտանական կայսրությունը, դեռևս Սան Ստեֆանոյի պայմանագիրը չստորագրված, Թուրքիայի մայրաքաղաքի առափնյա ջրերը մտցնելով իր ռազմական նավատորմը, Ռուսաստանին սպառնում էր նոր պատերազմով, եթե իրականանար Կ. Պոլսի գրավումն ու դեպի Անկարա փախուստի պատրաստված սուլթան Համիդի գերեվարումը: Անգլիան դրանով ոչ միայն փրկեց Թուրքիային, այլև նպաստեց Սան Ստեֆանոյի պայմանագրի ստորագրման արարողության արագացմանը: Ստորագրումից հետո հանգիստ շունչ քաշելով՝ նա սկսեց մեծ աղմուկ բարձրացնել Եվրոպայում, պայմանագիրը

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. *Ջ. Կիրակոսյանի* խմբագրությամբ, էջ 100:

[2] Նույն տեղում, էջ 101:

[3] Նույն տեղում, էջ 102, տե՛ս նաև "Сборник договоров России с другими государствами", 1856-1917, М. 1952, стр. 176-180:

որակեց իբրև *նախնական* և, Փարիզի կոնֆերանսին (1856 թ.) մասնակից մյուս մեծ տերությունների դեպի Ռուսաստանն ունեցած հակակրանքն օգտագործելով, կրկին պատերազմի սպառնալիքով, հասավ նոր կոնգրես հրավիրելու որոշմանը:

Հայն ու Հայաստանը հաղթական մարտեր էին մղում ռուսական զինվորների հետ կովկասյան ռազմաբեմում, խանդավառվում քրիստոնյա հզոր տերության օգնությամբ թուրքական դարավոր լուծը թոթափելու հույսերով:

Սուլթանների ավանդական պաշտպան, հայ և թուրքահպատակ քրիստոնյա ազգերի ազատագրական շարժման հետևողական հակառակորդ բրիտանական առյուծը, հեռվից հետևելով դեպքերի զարգացման ընթացքին, ճակատագրական պահին վրա էր պրծնում և, հովանավորյալի մարմնից նոր պատառներ պոկելու գնով, ընդարմացնում էր Ռուսաստանի հաղթանակի պտուղները, իհարկե, իր շահերին զոհելով Արևմտյան Հայաստանի ազատագրման համար թափված ծով արյունն ու բազում ջանքերը: Այդ պարագան առավելապես դրսևորվեց 1878 թ. մայիս-հուլիս ամիսներին:

1878 թ. մայիսին, Բեռլին ուղևորվելու ճանապարհին, Լոնդոնում դիվանագիտական մուրիկությամբ պարապող հայկական պատվիրակությանն օրորելով ոսկե հեքիաթի սին խոստումներով, Անգլիան, առերես նույնիսկ շքեղ ընդունելության արժանացնելով, փորձելով նրան հակադրել Ռուսաստանի ծրագրերին, սառնություն մտցնելով բարեկամների միջև, գաղտնաբար ստորագրում էր անգլո-ռուսական մի համաձայնագիր, որի սուր ծայրն ուղղված էր հայկական ինքնավարության դեմ: Սակայն դա խնդրի միայն մի կողմն էր, դիվանագիտության պատմության նեգատիվ էջերից մեկը, մյուս էջը, ավելի վատթարագույնը, պատրաստվում էր Կ. Պոլսում:

Բրիտանիայի թագուհին, վարչապետ Բիկոնսֆիլդը, պետական քարտուղար Սոլսբերին Կ. Պոլսի անգլիական դեսպան Աուստեն Հենրի Լեյարդի միջոցով ամբողջ մայիս ամսվա ընթացքում բանակցում էին Աբդուլ Համիդի հետ և, օգտագործելով ստեղծված դժվարությունները, սուլթանին ահաբեկում էին, հարկադրում ստորագրելու նոր, սեպարատ պայմանագիր, խոստանալով նրան Ռուսաստանից պաշտպանել Բեռլինի կոնգրեսում: Բանակցություններն արդյունավետ չէին մինչև մայիսի 18/30-ը, երբ ստորագրվեց Լոնդոնի անգլո-ռուսական գաղտնի համաձայնագիրը: Վավերագրի մեկ պատճեն աճապարանքով ուղարկվեց Լեյարդին՝ սուլթանին ծանոթացնելու, դրանով իսկ արագացնելու անգլո-թուրքական գաղտնի պայմանագրի ստորագրումը, որը ձգձգվում էր:

Աբդուլ Համիդը, Սավֆետ փաշայի հետ ծանոթանալով անգլո-ռուսական համաձայնագրի վավերացրած տարբերակին, խորհրդակցելով անգլիական կողմնորոշում ունեցող թուրք պետական գործիչների,

հատկապես թուրքական սահմանադրության հայր հռչակված Միդհատ փաշայի հետ, հանդիսավորությամբ Եըլդըզ Քեոշք հրավիրեց Հենրի Լեյարդին, և սկսվեցին բանակցությունները խորին գաղտնապահության պայմանավորվածությամբ: Կ. Պոլսի անգլիական դեսպանը Համիդ II-ին հիշեցնում էր, որ եթե անգլիական ռազմական էսկադրան հունվարի վերջերին չխարսխվեր Բոսֆորի ջրերում, մեկ օր հետո ռուսական բանակը կհայտնվեր «հավիտենական մայրաքաղաքում» և տեր կդառնար Այա Սոֆիային ու գմբեթի փոխարեն արդեն մահիկ ու կիսալուսին կրող հունական մյուս ուղղափառ եկեղեցիներին: Իր հաղթանակի արարողությունները կկատարեր հոգևոր այն հաստատություններում, որտեղից ժամանակին քրիստոնեական վարդապետություն էր ժառանգել: Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ թագավորության թագուհու, Հնդկաստանի կայսրուհու անունից, վարչապետ Բիկոնսֆիլդը խոստանում էր Թուրքիայի ամբողջականությունը պաշտպանել Բեռլինի կոնգրեսում, ի դերև հանել Ռուսաստանի նոր առաջխաղացման վտանգը, փոխարենը սուլթանից պահանջելով տնտեսական ու տարածքային զիջումներ Անգլիային: Բ. Դռան «հավատարիմ ու հետևողական պաշտպանին»:

Խոսակցությունը ծանր տպավորություն էր գործում սուլթանի ու նրա մոլեռանդ դիվանագետների վրա: Օսմանյան կայսրությունը, բազմաթիվ դառը դեղահաբեր կուլ տալով, կորցրել էր իր երբեմնի հզորությունը, այժմ էլ նրան դիվանագիտական քաղցրավենիքով կերակրելով, փորձում էին գայթակղեցնել, խլել *Կիպրոս կղզին,* որն այնքան անհրաժեշտ էր համարվում Թուրքիայի համար: Ծանրութեթև անելով, Համիդ II-ը տեսնում էր, որ այլ, առավել հարմարավետ տարբերակ բացառվում էր ճակատագրական այդ փակուղուց դուրս գալու համար, ուստի *հարկադրված էր* 1878 թվականի հունիսի 4-ին Սաֆվետ փաշայի գրչով վավերացնել «անգլո-թուրքական պաշտպանողական դաշնակցությունը», այն հիմնականում ուղղելով Ռուսաստանի, նրան հավատարիմ Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ:

Կ. Պոլսում ստորագրված, կարճ, ընդամենը երկու կետից բաղկացած պայմանագրի առաջին հոդվածում նախատեսվում էր. «Եթե Ռուսաստանն իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկն ու մեկը, այսուհետև փորձ անի տիրելու Ասիայում նորին կայսերական մեծություն սուլթանի ունեցած այն երկրներից որևէ մի մասին, որը խաղաղության վերջնական դաշնագրով պիտի որոշվի, այն ժամանակ *Անգլիան պարտավորվում է միանալ նորին կայսերական մեծություն սուլթանի հետ, զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար:*

Ի փոխհատուցում, նորին կայսերական մեծություն սուլթանը Անգլիային խոստանում էր անհրաժեշտ բարենորոգումներ մտցնել, որոնք հետո պիտի մանրամասնաբար որոշվեին երկու պետությունների միջև

և որոնք նպատակ ունեն Բ. Դռան քրիստոնյա և այլ հպատակների բարվոք կառավարումը և պաշտպանությունը խնդրի առարկա եղած երկրներում, և որպեսզի Անգլիան իր պարտականությունը կատարելու համար հարկավոր եղած միջոցներն ապահովի, նորին կայսերական մեծություն սուլթանը հավանություն է տալիս նույնպես, ***որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից*** (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[1]:

Կ. Պոլսի պայմանագրի մտահղացման օրվանից սկսած, նրա շտապ վավերացման, ավելին՝ գործադրման իրավունքն ստանալու հոգսերով էր մտահոգված բրիտանական ծովառյուծը, այդ նպատակով նույնիսկ երկրորդ կետ մտցնել տրվեց, ստորագրումից հետո մեկ ամսվա ընթացքում այն հաստատել տալով սուլթանի կողմից: Անգլիան խաբել էր Թուրքիային, Անգլիան արդեն համաձայնել էր Ռուսաստանի հետ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ և այժմ աճապարում էր, որպեսզի իր հերթական խարդավանքը չբացահայտվի մինչև Բեռլինի կոնգրեսը, մինչև Կիպրոսի զավթումը: Ընդհակառակը, Կ. Պոլսի կորստից վախեցած Բ. Դուռը, հարկադրաբար ստորագրելով այդ վավերաթուղթը, դանդաղեցնում էր նրա վերջնական վավերացման գործը, դժվարությամբ համակերպվում Կիպրոսի կորստյան մտքին և մյուս տերությունների՝ թեկուզև Ռուսաստանի հետ շփման նոր կետեր որոնելով, դեռևս օրորվում էր փրկության նոր ուղիներ գտնելու հույսով:

Իզուր էին Թուրքիայի դիվանագիտական դեգերումները: Հզոր դաշնակիցն, իր շահերից դրդված, դաժան ու անզիջում էր ոչ միայն սուլթանի հակառակորդ տերությունների, այլև՝ բուն իսկ օսմանյան կայսրության նկատմամբ: Մեծ Բրիտանիան համառ ու հետևողական էր իր պահանջների մեջ, վարպետացել էր խարդավանքների մարզում և միշտ խաբելով, չէր սիրում խաբվել, այն էլ այսպիսի օգտաշահ գործարքում: Անգլիան խաբեց Թուրքիային, կորզեց առանձնաշնորհումներ և տարածք Հայաստանի ու հայ ժողովրդի, նրա հավատարիմ Ռուսաստանի հաշվին: ***Ուրեմն մինչև այդ պայմանագրի ստորագրումը Լոնդոնում հայ ժողովրդի նկատմամբ արված «ֆիլանտրոպիստական» սիրախաղերը միայն ձև էին, համաշխարհային հասարակայնությանը մոլորեցնելու միջոց և ուրիշ ոչինչ:***

Պայմանագրի կնքման նախօրեին, Անգլիայի պետական քարտուղար Սոլսբերին հայտարարում էր. «Թուրքերի միակ փրկությունը դաշինքն է որևէ մեծ տերության հետ, և միակ առկա տերությունը Անգլիան է: ...***Հանուն քրիստոնյաների փրկության, հումանիզմի որևէ նկատառումներով իմ ձեռքը զուսպ չի դառնա ռուսների հետագա առաջխաղացումը կանխելու համար:*** Ասիական Թուրքիայի բնակչության մեծամասնությունը մահմեդախոսներ են, որոնց համար թուրքական կառավարությունը հարազատ բան է և այնքան լավ, որքան այլ մահմեդականներ կբացառեին մեր սեփական կառավարման ձևը»[1]: Ուրեմն Անգլիայի մտահոգությունը ոչ թե թուրքահպատակ քրիստոնյաների ճակատագիրն էր, այլ իր մերկապարանոց շահասիրությունը:

1878 թ. հունիսի 1-ին (12) բացվեց Բեռլինի կոնգրեսը, որտեղ հավաքված մեծ տերությունների դիվանագետները, բարձրաստիճան այլ այրերը խնդիր ունեին ***վերաքննել*** Սան Ստեֆանոյի պայմանագրի հիմնական հոդվածները, վերածնել երեք աշխարհամասերի քարտեզը, օսմանյան սուլթանությունից խլել այնքան, ինչքան նպատակահարմար համարվեր: Կոնգրեսի բացումը կատարեց նախագահի պաշտոնն ստանձնած, ***«ազնիվ մակլեր»*** (դիպուկ ասվեց, որ մակլերներն ազնիվ լինել չեն կարող) ***Օտտո Բիսմարկը*** թուրքամետ, խարդախ ու հայատյաց մի անձնավորություն[2]:

Հայկական պատվիրակությանն արգելվեց ոչ միայն նիստերին մասնակցել, այլև կոնգրեսի շենքը մտնել: Եվ ահա 1878 թ. հունիսի 22-ին, դեսպանաժողովի 15-րդ նիստում, քննության առարկա դարձավ ***16-րդ հոդվածը:*** Սոլսբերի-Շուվալով-Ալեքսանդր Կարաթեոդոր բանավեճը վերջացավ անարդյունք, և հարցի վճռումը հետաձգվեց հաջորդ նիստերին: Կոնգրեսի 15-րդ նիստում ***«վճռվեց»*** տարածքների խնդիրը: Ռուսաստանից ետ խլվեց Բայազետն իր շրջակայքով և ***վերահանձնվեց Թուրքիային***[3]: Անգլիական դիվանագիտությունը ևս մի հաղթանակ տարավ, քանի որ դրանով ապահովվում էր Սև ծովի վրայով Տրապիզոն-Կարին-Թավրիզ տանող նրա առևտրական ճանապարհը, որը բրիտանական տերության համար առավել անփոխարինելի էր տվյալ տասնամյակներին, քանի որ դեռևս չէր նվաճվել Եգիպտոսը, և Սուեզի ջրանցքի մշտական օգտագործումը լրիվ ապահովված չէր[4]:

Նույն նիստում, Սոլսբերիի ոչ միայն խմբագրությամբ, այլև ***արմատական վերածնմամբ,*** քննարկման ու հաստատման դրվեց 16-րդ հոդվածը: Նրա վերջնական տեքստն այսպես ձևակերպվեց. «Բարձրագույն Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման ***հայաբնակ մարզերում*** իրագործել տեղական կարիքներից ելնող բարելավումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտան-

---

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 104-105, տե՛ս նաև ***Լեո***, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 103-105:

[1] ***Ջ. Կիրակոսյան***, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.), էջ 178-179:

[2] Բեռլինի կոնգրեսի մասին ստեղծվել է ծավալուն գրականություն: Խուսափելով հանրահայտ ճշմարտությունները ***կրկնելուց, շատ համառոտ*** անդրադառնանք միայն Հայաստանին վերաբերող խնդիրներին:

[3] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 119-121:

[4] Նույն տեղում, էջ 120:

գությունը չերքեզներից և քրդերից: Այդ նպատակով ձեռնարկած միջոցառումների մասին Բ. Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»[1]: 61-րդ հոդվածում լուրջ փոփոխություններ էին կատարվել: Նախկինում գրված *Հայաստան բառը* փոխարինվել էր *հայաբնակ շրջաններով*, այսինքն, հայ մտավորականության այն ոգևորությունը, թե Եվրոպան ու Թուրքիան վերջապես *ճանաչել են* մեր երկրի գոյության փաստը, այժմ փաստաթղթից դուրս էր շպրտվել: Ռուսական զորքերը գոնե *վեց ամսով* պիտի մնային Արևմտյան Հայաստանում, մինչև բարենորոգումները կատարվեին: Այժմ այդ կետը ևս հանվել էր, և բարեփոխություններին հսկելու պարտականությունը դրվում էր *եվրոպական տերությունների* վրա: Անորոշ ու ամորֆ մի բանաձև էր, որը կյանք էր առել թուրք-անգլիական դիվանագիտական խոհանոցում ընդդեմ Ռուսաստանի:

Բեռլինի կոնգրեսում կատարյալ պարտություն կրեց ռուսական դիվանագիտությունը: Գերմանիայից Պետերբուրգ վերադարձած 82-ամյա կանցլեր Ա. Մ. Գորչակովը, որը նիստերի մեծ մասի ժամանակ քնած էր, թագավոր-կայսերն ուղղած զեկուցագրում հաղորդում էր. *«Բեռլինի կոնգրեսը իմ ծառայության կաբինետի ամենասև էջն է կազմում», «նմանապես և իմը»*[2], լուսանցքում մակագրում էր Ալեքսանդր II-ը: Բոլոր բնագավառներում հաղթանակեց Մեծ Բրիտանիան:

Մատթեոս Մամուրյանը կոնգրեսից առաջ էլ գիտեր, որ Անգլիան հայերի համար ոչինչ անել չի ուզում և ինչ էլ որ թմբկահարում է, ելնում է միայն իր սեփական շահերից:

Պատերազմի նախօրյակին Մամուրյանը ճիշտ էր հասկացել Անգլիայի դիտավորությունները Արևելյան հարցի համար մղվող պայքարում: Պատերազմի սկզբում Մամուրյանը գրում էր. «Իսկ Անկլիո քաղաքականությունն ի՞նչ է, պատերազմին սկիզբեն անոր հետևած գիծը կփնտրեմ ու չեմ գտներ, թերևս շատ նուրբ կամ երկդիմի է... Զարմանք, դեռ չգիտե՞ս, որ մերը չեզոքության քաղաքականությունն է... Ալաշկերտի, Պայազիտի, Վանա գյուղերից ավերակները ձեր գործերն են»[3]:

«Արսեն (հայը) և Ֆիրմեն (անգլիացին)» վերնագրված դիալոգի բնույթ կրող հոդվածում Մամուրյանը դիմակազերծ է անում «քրիստոնյա Անգլիային», բացահայտում նրա ծրագրերը, ցույց տալիս վերջինիս թաքուն նպատակները, որոնցից մղված, «պաշտպան» էր կանգնում հայ ժողովրդին:

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 128:

[2] *К. Скальковский,* Внешняя политика России и положение иностранных держав, СПб, 1879, стр. 230.

[3] «Արևելյան մամուլ», 1877, էջ 306-307:

«Իբրև քրիստոնյա կհարցնեմ և ես քրիստոնեիդ... գո՞հ ես... պատերազմին բռնած ընթացքեն, *գո՞հ է Անկլիա մեզի հասած աղետներեն, գո՞հ է Եվրոպա մարդկութեան դեմ գործված ոճիրներեն*... Մինչև ե՞րբ լուռ պիտի կենա Անկլիա... Որչափ ատեն որ անկլիական շահեր անվնաս մնան, պատասխանում է անկլիացին,- Ուրեմն քաղաքակրթութեան, ազատության ու մարդկության շահերը ձերիններուն հակառակ են»: Անգլիացին ասում է. «Հնդկաստան, Շուեշ (Սուեզի ջրանցք - Հ. Ղ.), Տարտանել, Կ. Պոլիս, ահա մեր շահերու առանցքը»: «Բայց... ազգություններ պիտի ջնջվին»:- Մեզի փույթ չէ, քանի որ մեր շահերուն դիպչող չկա»[1]:

Մամուրյանը եզրակացնում էր. «*Անկլիա Ասիո քրիստոնեա ժողովուրդները, և մասնավորապես հայերը պաշտպանելու շահ չունի*»[2]:

Բեռլինի կոնգրեսի որոշումների առիթով Մամուրյանը բողոքում է, թե Թուրքիան հապաղում է բարենորոգումներ մտցնել և «Այս հապաղումը Ֆրանսիայի և Անկլիո պարգևն է մեզի, որոնք կարծես թե հատկապես ի վերուստ սահմանված են Արևելքը խաղացնել, և արդարև այդ արևմտյան բարեկամության միջնորդությունն Աղեքսանդրիո ռմբակոծությամբ կսկսի և Եգիպտոսի գրավմամբ կվերջանա»[3]:

Շուրջ վաթսուն տարի պիտի անցներ այս տողերը գրվելուց հետո, որպեսզի իր հեղինակավոր ներկայացուցիչներից մեկի Լլոյդ Ջորջի բերանով Անգլիան ինքն ի լուր աշխարհի խոստովաներ, թե հայերի նկատմամբ Բեռլինի կոնգրեսի ընդունած որոշումը ամբողջովին իր սպառնալից ճնշման արդյունքն էր: *«Այդ որոշումը,*- գրում էր անգլիական նախկին վարչապետը,- *մեծարվում էր մեր կողմից որպես Անգլիայի մեծագույն հաղթանակը, նրա թելադրած պատվավոր խաղաղությունը: Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897, 1909 թվականների սոսկալի ջարդերին և 1915 թվականի ամենասարսափելի կոտորածին* (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[4]:

Մ. Մամուրյանի ինչպես «Սև լեռին մարդը» վեպից, այնպես էլ նրանից առաջ ու նրանից հետո տպագրված հրապարակախոսական հոդվածներից ակնհայտ է, որ հեղինակը բացասաբար է տրամադրված ժամանակի Եվրոպայի և Ամերիկայի, այսպես կոչված, առաջավոր պետությունների վարած ներքին ու արտաքին քաղաքականության հանդեպ: Բոլոր դեպքերում նրա համակրանքը ժողովուրդների կողմն է, այն

[1] «Արևելյան մամուլ», 1877, էջ 257-258:

[2] Նույն տեղում, էջ 104:

[3] «Արևելյան մամուլ», 1883, էջ 105:

[4] *Ллойд Джордж,* Правда о мирных договорах, М., 1957, том 2, стр. 390.

ժողովուրդների, որոնք հարստահարվում են, ճնշվում աշխարհի ամեն կարգի կառավարողների կողմից. լիներ դա հանրապետական Ֆրանսիան, թե սահմանադրական Անգլիան, «ռամկավարական» Ամերիկան, թե «համայնավարական» Շվեյցարիան:

Այսպիսով, Սան Ստեֆանոյից Բեռլին տանող ճանապարհին բրիտանական տերությունը Ռուսաստանին քայլ առ քայլ չեզոքացնում էր Լոնդոնի հայադավ պայմանագրով, իսկ նույն համաձայնագրի կետը բառացիորեն կրկնելով, Կ. Պոլսի խայտառակ դաշնագրում ի դերև էին ելնում արևմտահայության խանդավառ հույսերը: Այդ փաստաթղթի ստորագրման արարողությունն այսպես բնութագրեց Մ. Սերոբյանը, գրելով. ***«Անգլիան իրապես կսպաներ հայկական բարենորոգումների հարցը և լորդ Պիկոնսֆիլդ Պերլին կերթար անծամբ անոր թաղումը կատարելու»***[1] (ընդգծումները մերն են - Հ. Ղ.):

1894-1896 թթ. հայկական ջարդերի ժամանակ Անգլիան կրկին սկսեց խաղալ հայ ժողովրդի նյարդերի հետ և ակամայից առերես ցույց տալ, թե պաշտպանում է ջարդվող արևմտահայությանը: Իրականում նա նորից խարդախ քայլեր էր անում, ձգտում ամրանալ և Կիպրոսում, և հատկապես Եգիպտոսում, առաջնորդվելով վարչապետ Պալմերստոնի թևավոր այն արտահայտությամբ, թե. ***«Անգլիան չունի մշտական բարեկամներ ու դաշնակիցներ, այլ ունի միայն մշտական շահ, որը պետք է բոլոր միջոցներով պաշտպանել»***[2]:

Մեծ Բրիտանիան հասավ իր նպատակին: Նա չեզոքացրեց Ռուսաստանի ազդեցությունն օսմանյան Թուրքիայում, սրեց ռուս-գերմանական հարաբերությունները, ամրապնդվեց ոչ միայն Եգիպտոսում, այլև իր ազդեցությունը տարածեց Արևմտյան Հայաստանի վրա: Այդ ամենը մարսելուց հետո, երբ հայկական պատվիրակությունը դիմեց Կոստանդնուպոլսում ֆիլանտրոպիստական, հայանպաստ ճառ արտասանած լորդ Դեֆֆերինին, ստացավ այսպիսի պատասխան. ***«Անգլիան կարող է միայն նավատորմիղով օգնել, իսկ նրա նավատորմիղը Նոյի Տապանը չէ, որ կարողանա կանգ առնել Արարատի վրա»***[3] (ընդգծումները մերն են - Հ. Ղ.):

Փաստորեն, Հայոց պատմության մեջ մեծ տերությունների, հատկապես Անգլիայի, մեղքով ձևավորվեց մի ժամանակահատված, որը իրավամբ ստացավ ***«զուլումի»*** տասնամյակ անվանումը:

---

[1] ***Մ. Սերոբյան,*** Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Գահիրե, 1948, էջ 263:

[2] ***А. С. Ерусалимский,*** Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX в., М-Л., 1948, стр. 283.

[3] ***Е. К. Саркисян,*** Политика Османского правительства в Западной Армении, Ереван, 1969, стр. 158, տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 283-284:

Գլուխ երկրորդ

1879-1881 թթ. սովն Արևմտյան Հայաստանում և նրա հետևանքները

ԲԵՌԼԻՆԻ կոնգրեսից հետո հայկական մշակութային և հատկապես քաղաքական մտքի զարթոնքը, նրա առավել համազգային կերպարանք ստանալը պայմանավորված էին զույգ հանգամանքներով: Նախ, հայ ժողովրդի ազատագրական բաղձանքներն ի դերև ելան Բիկոնսֆիլդի խունացած դիմաստվերի առջև, հաղթական պատերազմին հաջորդեցին «արյունածարավ Եվրոպիո» անդրկուլիսային բանակցությունները, որոնց հետևեց ռուսական դիվանագիտության ծերակույտի նախագահ վարչապետ Գորչակովի, Բեռլինից վերադառնալուց հետո, ակամայից արած այն խոստովանությունը, թե ինքը Բեռլինում գրեց իր երեսնամյա դիվանագիտության պատմության «ամենասև էջը»: Պարտվում էր ռուսական ոչ թե զենքը, այլ դիվանագիտությունը, պարտվում էր նաև Բեռլինում իր ոդիսականն ավարտած հայկական պատվիրակությունը: Թե երեկ թագավորություն կամ հանրապետություն հաստատելու կողմնակից, Հայաստանի պրեզիդենտի թեկնածությանն հավակնող Մելքոն խանը, Գր. Արծրունին, Նուբար փաշան, Լոռիս-Մելիքովը և նրանց կողքին խմբված հայ երևելիները, թե թուրքական սրի ողորմածությանն ապավինած արևմտահայությունն այսօր, ռոմանտիկայից ձերբազատված, ընկան դաժան ու պարտադրվող իրապաշտության գիրկը: Սեփական ուժերին կռթնած լուսավորվելու, տնտեսական զարգացումից հետո միայն ազատագրության, ապստամբական դրոշ պարզելու իղձը դարձավ նախ արևմտահայության, ապա նաև արևելահայության և գաղթաշխարհի հայկական զանգվածների համար առաջադրված փրկության հիմնական սպեղանին:

70-ական թվականներից Արևմտյան Հայաստանն ստացավ «երկիր», «ավետյաց երկիր», «հայրենիք» նոր մկրտումները և հզոր մագնիսի նման սկսեց դեպի իրեն ձգել հազարավոր երիտասարդ մարդկանց Ռուսաստանից, Պարսկաստանից, Արևելյան Հայաստանից, բոլոր այն

վայրերից, որտեղ քիչ թե շատ հայկական համայնքներ կային, որտեղ հայրենանվեր երիտասարդություն էր գոյացել և վառվում էր «սահմանից այն կողմ գտնվող» եղբայրներին լուսավառ ջահեր հասցնելու, կրթելու, բուժելու, գրչով ու զենքով օգնելու գաղափարով: Գաղափարական, հայրենասիրական շարժումը հայ ժողովրդի բոլոր հատվածներում աննախադեպ վերելք ու թափ էր ստացել: Համազգային ոգևորությունը, հանձինս հայ ականավոր գործիչների, գրողների ու հրապարակախոսների, նոր ճանապարհ էր հարթում: Արևմտյան Հայաստանին օգնելու միջոցներ ու մեթոդներ էին որոնվում, առիթ էր փնտրվում, որը չուշացավ և դարձավ շարժմանը խթանող երկրորդ կարևոր ազդակը:

Ռուս-թուրքական պատերազմի կովկասյան ռազմաճակատի համար հիմնական բեմահարթակ ծառայեց Արևմտյան Հայաստանը, նրա Բարձր Հայքի, Վասպուրականի, Տարոն-Տուրուբերանի նահանգները, թուրքական վարչական բաժանման անուններով՝ Կարսի, Վանի, Կարինի վիլայեթները: Ռուսական բանակի հայազգի գեներալների գլխավորությամբ Կովկաս շարժվող զորամիավորումներին իբրև ազատարար ընդունող արևմտահայությունը նրան տալիս էր և՛ նյութական, և՛ ռազմական օգնություն, ինչպես նաև բարոյական աջակցություն: Բեռլինի վեհաժողովից հետո, արևմտյան դիվանագիտության խարդավանքների, թուրքապաշտական քաղաքականության պատճառով, ռուս զինվորը թողնում էր գրավված մարզերն ու հեռանում Հայաստանի գավառներից:

Պատերազմի օրերին հայերը դարերով մթերած իրենց ատելությունը բացահայտ ցույց էին տվել և մոռացել էին «գյավուր», «ռայա», «զիմմի» անունները, թուրքերի հետ խոսում էին հավասարը հավասարի սկզբունքով, քուրդ բեկերից հաշիվ էին պահանջում նրանց կատարած չարագործությունների համար: Բայց դա մի պահ էր, մի ակնթարթ: Մոլեռանդ թրքությունն այդ բոլորը տեսնում էր, զգում և սպասում էր ռուսական բանակի վերադարձին, որն այնքան էլ չուշացավ: Թուրքական վրեժխնդիր ոգուց երկնչելով, չնայած հարուցվող արգելքներին, հայկական գերդաստանները հարկադրված էին լքել հայրենի բնօրրանները և, ընկած ռուսական բանակների ետևից, գաղթում էին Արևելյան Հայաստան: Վանի և Կարինի վիլայեթները հայաթափ էին լինում, զրկվում աշխատունակ ձեռքերից: Քայքայվում էր տնտեսությունը, ինչը ժողովրդի ապրելակերպի վրա բացասական ազդեցություն էր ունենում: Պատերազմի շուրջ մեկ տարվա ընթացքում ավերվեցին գյուղատնտեսությունը, արհեստն ու առևտուրը:

Արսեն Թոխմախյանը 1879 թվականին, հետազոտելով Վանի հոգևոր առաջնորդարանի արձանագրությունները, շրջելով գյուղ առ գյուղ և խոսելով նահանգի ուսուցիչների, քահանաների հետ, ծանոթանալով Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի դիվանում (դժբախտաբար այդ բոլոր նյութերը կամ ոչնչացվել են կամ էլ Հայաստանում չկան) պահված վավերագրերին, «Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին» իր դասախոսությունների մեջ հրապարակում է տվյալներ Վասպուրականի հայ բնակչության ռուս-թուրքական պատերազմում կրած վնասների քանակի վերաբերյալ: Ըստ այդ տվյալների, Վանի նահանգի հայերից 1877-1878 թթ. կողոպտված է շուրջ մեկ միլիոն ռուբլու արժողության ուտելիք, կահ-կարասիներ, հագուստ, ոսկեղեն, անասուններ: Թալանվել է 19 վանք, սպանվել 15.000 հայ գյուղացի, առևանգվել 38 կին, հրդեհվել 105 խանութ, արհեստանոց, առանձնատուն[1]: Նա ավելացնում է, թե «Պատերազմի տարին գյուղացիք բարբարոսություններից ազատվելու համար, իրենց ընտանեկան թանկարժեք ապրանքները թաղեցին հողում և բարձրացան սարեր: Այդ իրեղենների մեծ մասը քրդերը հանեցին տարան, մնացած մասը փտավ հողի մեջ»[2]: Թոխմախյանը, մանրակրկիտ հաշվումներ անելով, Վասպուրականի նահանգի հայերի կրած ընդհանուր գումարը պատերազմի տարում արձանագրում է 2,161,899 օսմանյան լիրա, դրանից դուրս թողնելով թղթադրամի ու պղնձյա դրամի արժեզրկումը: «Կողոպտված 19 վանքերի վնասը, 105 հրդեհների վնասը, Վանա հրդեհի (1876 թ. - Հ.Ղ.) վնասը, 200.000 օսմանյան ոսկու, մոտ մեկ միլիոն ռուբլու կարողություն այրվեց: Ընդամենը վնասը կարելի է մոտավորապես 700.000 ռ. հասցնել, որ Վասպուրականի նահանգի համար մեծ գումար է»[3]:

Ռուս-թուրքական պատերազմից հետո հայ գյուղացին հատկապես Վասպուրականում նստած էր մոխիրների վրա, ունեզրկված, թալանված, որին հետևեց և որի հետևանքով ժողովրդին սկսեց սպառնալ սովամահությունը: ***1879 թ. աշնանը Արևմտյան Հայաստանում արդեն սով էր սկսվում:***

1878 թ. ամբողջ ամռանը գրեթե ոչ մի կաթիլ անձրև չեկավ Վանի և Կարինի վիլայեթներում: 1879 թ. ձմռանը ձյուն էլ չտեղաց: Գարնանը բռնկվեց սարսափելի երաշտ: Աղբյուրները չորացան, երբեմնի ջրառատ գետերը ցամաքեցին, հողը պապակեց, սերմերը մնացին հողի երեսին և այդ տարում գյուղացիները բերք չստացան[4]: Տնտեսված ոչինչ չէր մնացել, նորը չէին ստացել, ուստի տարածվեց մի ահավոր սով, որը հնձում էր Արևմտյան Հայաստանի, հատկապես Վասպուրականի հայ, թուրք և քուրդ բնակչությանը: Հայ մտավորականությունը, Կ. Պոլսի հայկական պատրիարքարանը որոշեցին օգնության ձեռք մեկնել սովյալներին: Ամենուրեք կազմակերպվում էին սովյալներին

---

[1] Տես *Արսեն Թոխմախյան,* Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 62-65:

[2] Նույն տեղում, էջ 64:

[3] Նույն տեղում, էջ 65:

[4] Տես «Հովիվ», 1910, N 9, էջ 136-137:

օգնության հասնող մարմիններ, որոնք միավորվեցին «*Սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովի*» մեջ և սկսեցին իրենց ժողովրդանվեր գործը: 1879 թ. արձանագրվում էր, թե «վերջին պատերազմին ահեղ հետևանքները չէին ջնջված տակավին ամենուն սրտեն, երբ նոր թշվառության ձայն մը կլսվեր այն գավառներեն, որք ի մոտո զգացած էին ռազմական տխուր արկածներ: Անցյալ 1879 տարվա վերջին օրերուն մեջ կողկողագին ձայներ կհասնեին ի մայրաքաղաքս թե հայ կպակասի Կարնո և Վանա նահանգաց հեռավոր երկիրներու մեջ, և միանգամայն աղիողորմ աղաչանց գիրեր կտեղային Ազգային պատրիարքարան օգնություն և նպաստ խնդրելու: Սովո երկյուղալից անվան առաջին հնչյուններ որ հառաջ քան ուրիշ տեղ մեր պատրիարքարան կհասներ, որովհետև այս հեռավոր գավառներու հայ ժողովուրդն առաջինն էր նեղության խստությունն կրելու»[1]:

«Սովը Հայաստանում» բառերը դարձան հայ պարբերական մամուլի գրեթե բոլոր օրգանների 1879-1881 թթ. ուշադրությունը գրավող տառերով շարված առաջնորդող հոդվածների վերնագրերը: Հայաստանի սովյալներին օգնության ձեռք էին մեկնում, առանց կրոնի ու դավանանքի տարբերության, բոլոր կարող, ունակ, երբեմն էլ նույնիսկ քիչ վաստակ ունեցող հայերն ամենուր: Հայրենանվեր այդ կրակը հրդեհի էին վերածում այն հայ կանայք, որոնք իրենց հմայքով ու գեղեցկությամբ զարդարում էին ոչ միայն հայկական, այլև օտարազգիների ընտանիքները: Համազգային այդ աղետի նկատմամբ անտարբերություն ցուցաբերողները հասարակական պարսավանքի էին ենթարկվում, անարգանքի սյունին գամվում:

«*Սովը*» խորագրով հոդվածում 1880 թ. ապրիլին «Արևելյան մամուլը» այսպես էր դիմում հանուր հայ ժողովրդին. «Սովը գրեթե բոլոր Հայաստանին կսպառնա և իր ճիրաններին ներքև հազարավոր մարդկային էակներ, հայրենակիցներ պիտի պատռե, եթե անոնք, որ հայրենասիրություն, գթություն, մարդասիրություն ունեն, անմիջապես օգնության չհասնին: Այս օրհասական տագնապի ժամանակ ցույց պիտի տա հայը, թե իրոք սովալլուկ Հայաստանը կսիրե իբրև բարոյական մարդ, իբրև հայ՝ հոգվով ու սրտով, ոչ թե լոկ խոսքով: Այս ծանր աղետի ժամանակ պիտի երևան գան անոնք, որ ազգային ընդհանուր շահուց, ապագայի բարձր գաղափարը կսնուցանեն, և անոնք, որ սուտ ազգասիրություն կծախեն, անոնք, որ սկզբունքի մը կծառայեն, և անոնք, որ միայն սնապարծություն և ինքնասիրություն ունին»[2]:

Հոմերոսի վիճարկվող հայրենիքում նստած, բազմաթիվ թելերով Հայաստանի ու Վասպուրականի հայ գործիչների հետ կապված Մ.

---

[1] «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», Կ. Պոլիս, 1885 թ., էջ 3:

[2] «Արևելյան մամուլ», 1880, ապրիլ, N 4, էջ 337:

Զեյթուն

Անի Մայր տաճարը (989-1001թթ.)

Մամուրյանը գրում էր. «Այս սին սնունդն անգամ չեն կարող գտնել այն հայ աշխարհն, որու ապագա վերաշինությունն ներկա սերունդին գլխավոր հոգասիրությունն դարձած կերևի, և որու պահպանությունը սակայն մինչև ցարդ պարտավոր ենք այն Հայաստանցի հայրենակցին, որ այսօր մեզմե հաց կխնդրե փոխարեն տալով մեզի Հայրենիքը...»[1]:

«Արևելյան մամուլը» ամփոփում էր հայ պարբերական մամուլի էջերում Արևմտյան Հայաստանում տարածված սովին վերաբերող տպագրված գրեթե բոլոր հոդվածները և ազգային դեմոկրատական հայացքներով 1880 թ. ապրիլին դիմում ողջ հայ ժողովրդին ազգափրկչական ծրագրային հետևյալ կոչով. «Եթե մեր թշնամին քյուրտն է, ավազակը, մարդասպանն է, երբ հայու մը կյանքը դաշույնի տակ կնվաղի, աղջիկ մը կառևանգվի, վաճառական մը կկողոպտվի երկիր ու երկինք կդղրդենք, բողոք բողոքի վրա կհանենք կառավարության և դիվանագիտության առջև առարկելով թե՝ իրավասության ուրիշ միջոց մը չունինք, հրազեն, ույժ չունինք, այլ միայն գրիչ ու ձայն, և՝ անոնց պարտավորությունն հիշեցնելով՝ հատուցում կպահանջենք, ապահովություն կխնդրենք պատվո, կենաց և ստացվածքի:

Այժմ թե չէ մասնավորի, այլ ազգային կյանքն է մահվան ճանկին մեջ, այժմ՝ թշնամին մարդ չէ, այլ բնական հրեշ մը, սովն է մահատիպ, լերկ ու անողոքելի դեմքով, և այս թշնամույն դեմ հայը, անկարոտ, ունևոր հայն, որո՞ւ պիտի բողոքե, որմե՞ դարման խնդրե, իրավունք պիտի պահանջե, եթե ոչ ինքն իրմե, իր սրտեն, իր գլխեն, իր քսակեն: Անշուշտ՝ ստիպողական, անմիջական դարմանն է նախ դրամն և ապա կանոնավոր արդար բաշխում և մատակարարություն»[2]: Նա զարգացնում էր ճշմարտացի այն թեզը, թե հայ ժողովուրդը Եվրոպայից ինքնուրույնություն պահանջեց և այսօր էլ դեռ օրորվում է այդ սին հույսերով: Սակայն հայը, եթե ինքն իրեն չի օգնում, իր դատարկ դրամաքսակը գցում է սովալլուկ հայրենակիցների առջև, ապա ի՞նչ իրավունքով օտարներին պիտի ապացուցի, թե ինքն արժանի է այդ պահանջին:

Մամուրյանը ծավալուն իր հոդվածը եզրափակում էր հետևյալ տողերով. «Անտարակույս այս ծանր մահավճիռը պիտի արձակե մեզի դեմ Եվրոպա, եթե մեր ձեռքը կապած օգնության կսպասենք, եթե միայն հսկումներ ընելով գոհ լինինք, եթե օտարներե ստակ մուրանք: *Աչք բացեք հայեր, Հայաստանի գոյության և չգոյության խնդիր է այս, հետևապես և հայության, միտ դրեք՝ որ այսօր հայ մշակներով, հայության նշաններով ծաղկած գյուղեր ու ավաններ, ազգության կայաններ, եթե վաղը սովին որս գնացող դիակներով լցվին, այդ գյուղերն ու ավանները կրնան օտար-*

[1] «Արևելյան մամուլ», 1880, փետրվար, N 2, էջ 476:
[2] Նույն տեղում, 1880, ապրիլ, N 4, էջ 337:

ներու բնակարան դառնալ ինչպես որ տեղ-տեղ սկսած են լինել, և այն ատեն Հայաստանում հայն իբրև օտար, կրնա գաղթական, վաղամեռիկ կյանք մը ունենալ, իր հարց շիրիմներուն մեջ (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[1]:

Նույնանման բովանդակությամբ հարյուրավոր հոդվածներ տպագրեցին հայկական բոլոր պարբերականները: Հայաստանի սովյալներին օգնության ձեռք մեկնելու խնդիրը գաղափարապես նախապատրաստվեց, և ամենատարբեր հոսանքների պատկանող հայ գործիչները, հրապարակախոսները համախմբվեցին Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանի շուրջը և սկսեցին դիմել գործնական քայլերի ժողովրդին նյութական օգնություն հասցնելու կոնկրետ գործողությունների:

Շարժումն համազգային էր: Ազգային դժբախտությունը մի պահ մոռացնել էր տվել դասակարգային ներհակությունները: 1880 թ. հունվարի 6-ին Կ. Պոլսի Գատը-Քեոյ թաղամասում, մեծահարուստ Կյուլպենկյանի բնակարանում հավաքվել էին Սերովբե Կյուլպենկյանը, Աբիկ Ունճյանը, Պողոս Շանշյանը, Աբել Կյուլպենկյանը, Գրիգոր Նիկոմեդոսյանը, ծրագրում էին ստեղծել մի հանձնաժողով, որը պետք է օգներ Արևմտյան Հայաստանի սովյալներին: Հունվարի 12-ին սրանց միացան Ազգային ժողովի երեսփոխաններ Սահակ Ղազարոսյանը, Գաբրիել Նորատունկյանը, Գառնիկ Հովակիմյանը: Հունվարի 18-ին, այս խմբի պահանջներին ընդառաջելով, Ն. Վարժապետյանը, պատրիարքական կոնդակով արտոնեց նրանց գործունեությունը, և ստեղծվեց «Մասնաժողով» կոչված մարմինը[2]:

«Մասնաժողովն» իր աշխատանքները կանոնավոր կերպով կազմակերպելու համար պետք է մասնաճյուղեր հաստատեր գավառներում, դրա համար էլ այն վերակոչվեց «*Կեդրոնական մասնաժողով վասն սովելոց*», իսկ գավառներ կամ այլուր տարածվող թղթակցությունների տակ ստորագրվում էր «*Պայազիտի, Ալաշկերտի, Վանա սովելոց խնամող հանձնաժողով*»[3]:

1880 թ. հունվարի 13-ին հանձնաժողովի նախագահ ընտրվեց Ն. Վարժապետյանը, մարտի 11-ին սովի առավել տարածվելու պատճառով այդ մարմինն ստացավ իր վերջնական անվանումը «*Հայաստանի սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողով*»: Կազմվեց 8 հոգուց բաղկացած գործադիր մարմինը և սկսվեց եռանդուն գործունեությունը[4]:

---

[1] «Արևելյան մամուլ», 1880, ապրիլ, N 4, էջ 337-338:

[2] Տե՛ս «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», Կ. Պոլիս, 1885, էջ 3-4:

[3] Նույն տեղում, էջ 4:

[4] *Մ. Օրմանյան,* Ազգապատում, մասն Գ, Երուսաղեմ, 1927, էջ 4375-4376, տե՛ս նաև «Մասիս», 1880, N 2527:

Հանձնաժողովը 1880 թ. ունեցել է 108 նիստ, մոտավորապես 900 ժամ տևողությամբ, 1881 թ. 71 նիստ, 1883 թ. 8 նիստ, 1884 թ. 4 նիստ: Նիստերը տեղի էին ունենում գիշերները, «առևտրական գործերը չխաթարելու» պատճառով: Կենտրոնականից բացի կազմակերպվում էին նաև «*օժանդակ* մասնախմբեր»[1]: Հանձնաժողովի անդամները նախ հետազոտեցին սովի տարածման աշխարհագրությունը, ապա արձանագրեցին, թե սովից մահացած հայեր են եղել, որոշ տվյալներով 52, որոշ տվյալներով 72, նույնիսկ 108 հոգի: Սակայն կան հետագա հակամետ կարծիքներ, թե այդ թվերը դիտմամբ չափազանցվել են, որպեսզի հեշտացնեն հանգանակության գործը և ազդեն համաշխարհային հասարակական խղճի վրա[2]:

«Բագրևանդա և Բասենո շրջանակները Կարնո սովելոց մասնաժողովոյն հոգատարությանն հանձնվեցան ի սկզբանե և Կարնո բովանդակ նահանգին կամ կուսակալության մեջ այդ երկու կողմերը ունեցավ հանձնաժողովս և անոնցմով կազմվեցավ *Կարնո Մատակարարությունը*»[3]: Կազմվեց նաև Սղերդի, 1880 թ. ապրիլի վերջին Տիգրանակերտի Մատակարարությունը, մայիսին Բաղեշի Մատակարարությունը: Հունիսին արդեն գործում էին ութ մատակարարություններ, որոնցից օժանդակություն էին սպասում Հայաստանի սովահարված ութ գավառներ[4]:

Սովը Վասպուրականում ավելի տարածվեց և, մյուս վիլայեթների համեմատությամբ, առավել շատ վնասներ հասցրեց, քանի որ 1877-1880 թվականներին այս վիլայեթում կատարվեցին անսպասելի դեպքեր: 1876 թ. նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը, Վանի կառավարիչ Հասան փաշայի գիտությամբ ու խրախուսանքով, իհարկե Բ. Դռան կողմից հրահանգավորված, հայտնի, բայց «չհայտնաբերված» թուրք ոճրագործների ձեռքով այրվեց քաղաքի հարուստ շուկան: Հրդեհի բոցեղեն լեզուների մեջ մոխրակույտի վերածվեցին շուրջ 2000 կրպակ և խանութ, որոնց 80 %-ը պատկանում էր հայ վաճառականներին ու արհեստավորներին: 1877 թ. փետրվարի 1-ին էջմիածնի հոգևոր կենտրոնին Վանից գրում էին, թե. « Ի Վան զորք օսմանյան այրեցին զ 2000 հայ վաճառականաց կրպակս և կողոպտեցին զապրանս»[5]: Վանի հրդեհն ու կողոպուտը դեռևս 1876 թ. նախապատրաս-

---

[1] Տե՛ս «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», էջ 8:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 12-13:

[3] Նույն տեղում, էջ 15:

[4] Նույն տեղում, էջ 17:

[5] Մանրամասն տե՛ս *Հայկ Ղազարյան*, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 332-335: Տե՛ս նաև *Սարուխան,* Հայկական խնդիրը և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), էջ 195-197, «Փորձ», 1878, N 2, էջ 312-314, «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», Կ. Պոլիս, 1876, դեկտեմբերի 10-ի նիստ, ԺԶ, էջ 310-311:

տում էին հայ ազգաբնակչության սովահարությունը 1879-1882 թվականներին: Սակայն միայն հրդեհը չէր պատճառը[1]:

Ռուս-թուրքական պատերազմի պատճառով ծանր հարվածներ հասցվեց Վասպուրականի գյուղատնտեսությանը: Պատերազմից առաջ Արևմտյան Հայաստանում բնակվող քրդերը ռուսական կողմնորոշում ունեին, սակայն 1877 թ. թուրք և անգլիացի գործակալների աշխատանքի, առավել ևս, մեծագումար կաշառքների պատճառով, փոխեցին իրենց դիրքորոշումը և սկսեցին պատերազմը ռուսական բանակի դեմ: Շեյխ Ուբեյդուլահը, նրա որդի շեյխ Աբդուլ Գատիրը և շեյխ Ջալալեդդինը 50 հազար խոլամների գլուխն անցած շարժվեցին դեպի Բայազետ[2]:

Սուլթան Համիդը Բեռլինից հետո, արևելյան խորամանկությամբ, դրամի ու միջոցների առջև կանգ չառնելով, հետևողական քաղաքականություն էր վարում, սրելով հայ-քրդական հարաբերությունները, նրանց միջև ստեղծելով այնպիսի մի անջրպետ, որը տանելու էր 90-ական թվականների հայկական կոտորածներն ու հայ ժողովրդի հետագա մեծ գողգոթան՝ արևմտահայության ցեղասպանությանը: Դրա հիմնական առիթն այն էր, որ, ինչպես Սան Ստեֆանոյում ձևակերպված 16-րդ, այնպես էլ Բեռլինում վերածևված 61-րդ հոդվածները, նախատեսում էին հայ ժողովրդին պաշտպանել ոչ թե Թուրքիայի, թուրքերի, այլ *քրդերի* և *չերքեզների* հարձակումներից, հոգ տանել «հայերի ապահովության» մասին: Ճիշտ է, առաջին տարբերակում այդ հոդվածը կյանքի էր կոչվելու ռուսական բանակի Արևմտյան Հայաստանում առկայության պայմաններում, երկրորդում հսկողությունը դրվում էր եվրոպական բոլոր տերությունների վրա, այսինքն ժողովուրդը թողնվում էր բախտի քմահաճույքին: Սակայն երկու դեպքում էլ Թուրքիան դառնում էր երրորդ կողմ և կարողանում էր չարաբաստիկ այդ հոդվածով սրել, լարել հայ-քրդական հարաբերությունները, թշնամացնել նրանց և կարողանալ կրակից շագանակներ հանել:

Հայաստանում տարածված սովի ժամանակ սուլթան Համիդը դիվական նոր ծրագիր մշակեց: Նա Մեքքայից Եըլդըզ Քեոշք հրավիրեց Շեյխ Ուբեյդուլահին, հանձնարարականներ տվեց ապագա գործունեության համար: 1880 թ. սկզբին Ուբեյդուլահը Վանի վիլայեթի ասորիներով ու հայերով բնակեցված Հեքյարի գավառում էր (որը քրդերն անվանում էին Շամդինան) և ռազմական ծրագիր էր մշակում Վասպուրականի հայության ոչնչացման մասին[3]: Ուբեյդուլահի ծրագիրը մշակվել էր սուլթանի պալատում և այժմ հաղորդվում էր ասորիների առաջնորդ Մար Շիմոնին, փորձելով նրան ևս մասնակից դարձնել այդ ոճրագործությանը:

[1] ՀԽՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 57, գործ 362, թերթ 13:

[2] Տե՛ս *Կ. Սասունի,* Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական հարաբերությունները (ԺԵ դարեն մինչև մեր օրերը), էջ 137-138:

[3] ՀԽՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ 57, գործ 302, թերթ 140-142:

Հայ-ասորական հարաբերություններն ինչպես XVIII-XIX դարերում, առավել ևս այդ ճակատագրական պահին, բարեկամական էին, քանզի երկու բախտակից ժողովուրդներն էլ պետականությունից զուրկ էին, քանզի երկու համայնքներն էլ «կառավարվում» էին հոգևոր առաջնորդների կողմից:

Զգալով, որ Ուբեյդուլահի գործողություններից արյան հոտ է փչում, և այդ արյունահեղության մեջ գոհվելու են ոչ միայն Վասպուրականի հայերը, այլև փոքրաքանակ ասորական համայնքները, Մար Շիմոնը գաղտնաբար հայ երևելիներին, Վանում նստած հայազգի ռուսական հյուպատոս Կոնստանդին Կամսարականին և անգլիական հյուպատոս Էմիլիո Գլեյթընին է հաղորդում շեյխի մտադրությունների մասին:

Զույգ հյուպատոսները տարբեր նպատակներով, տարբեր դիրքերից և տարբեր ուղղություններով սկսում են իրենց գործողությունները՝ ջանալով կանխել վերահաս արյունահեղությունը Վասպուրականում[1]: Նուխեցի Կ. Կամսարականը, «Փորձ», ապա «Արձագանք» պարբերականի խմբագիր Աբգար Հովհաննիսյանի քրոջ ամուսինը, Վասպուրականի և ընդհանրապես արևմտահայության կյանքում փրկարար դեր էր կատարում: Նա ևս ոգևորված էր անցած պատերազմի հաղթական ավարտով, հիասթափված Բեռլինի կոնգրեսի որոշումներից և տվյալ պահին, անդրադարձնելով հայ ժողովրդի ու Ռուսաստանի իրար համընկնող ցանկությունները, արևմտահայությանը նախապատրաստում էր ապագա ազատամարտերին, ձգտում Բալկանների օրինակով Հայաստանի արևմտյան հատվածին բերել թուրքական լուծը թոթափելու և արևելահայությանը միավորվելու ծրագրի կենսագործում:

Կ. Կամսարականը կապված էր ոչ միայն Կարինի ու Վանի հայ ազատամարտիկների, այլև Թիֆլիսի ու Մոսկվայի ականավոր գործիչների հետ և, փաստորեն, իր ընդհատակյա ու հրապարակային գործողություններով կամրջում էր արևմտահայ ազատագրական ոգորումներն արևելահայերի ցանկություններին, կազմակերպում էր Թիֆլիսի, Երևանի, նույնիսկ Նոր Նախիջևանի, հեռավոր Մոսկվայի հայ երիտասարդության մասնակցությունը «Երկրում» ստեղծված ու ստեղծվելիք գաղտնի խմբակներին: 1880 թ. Ուբեյդուլահի որոճացած ծրագիրը սահմռկեցուցիչ տպավորություն թողեց նրա վրա և, Վանի ազատամարտիկների, մասնավորապես Մ. Խրիմյանի ու Մ. Փորթուգալյանի հետ խորհրդակցելուց հետո, նա սկսեց իր գործողությունները: Կ. Կամսարականը, նախ, լսածն ստուգելու նպատակով, իր մոտ հրավիրեց

[1] ՀԽՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ 57, գործ 302, էջ 141:

«քյոդուկջի» *Սիմեոն Չիլինգարյանին*[1], որը Ուբեյդուլահի վստահությունից ու բարեկամությունից էր օգտվում, նրան հանձնարարեց ճշգրիտ տեղեկություններ հաղորդել և ապա, եթե հնարավոր է, փոխել Շեյխի *հայակործան հարվածի ուղղությունը:*

Գործին խառնվեց նաև Վանի անգլիական հյուպատոս *Քեփքըն* Էմիլիո Գլեյթը, որն ուներ թուրքոֆիլական հայացքներ, սակայն մի կողմից չէր ուզում բոլորովին կորցնել իր հեղինակությունը Վասպուրականի հայության աչքում, մյուս կողմից էլ ձգտում էր Ուբեյդուլահի հարվածներն ուղղել Ռուսաստանի դեմ: Նա էլ իր մոտ կանչեց հայ առևտրական Ս. Բաղդասարյանին, գնաց Ջուլամերկի Քոչանիս գյուղը, հանդիպում ունեցավ ասորիների հոգևոր առաջնորդի հետ և այդ հանդիպման մանրամասնությունների մասին տեղեկացրեց Բրիտանական կառավարությանը, Լոնդոնի կաբինետին: Անգլիական հյուպատոսն այնուհետև մեկնում է Շամդինան, տեսակցում է Ուբեյդուլահի հետ և, չհավատալով նրա խաբուսիկ պատասխաններին, վերադառնում է Վան[2]:

Ն. Կամսարականը, գործադրելով դիվանագիտական բոլոր տեսակի հնարքները, օգտագործելով Ուբեյդուլահի բանակում *«սարդարի»* պաշտոն ստանձնած *Սարգիս Չիլինգարյանին*, կարողացավ փոխել հարվածի ուղղությունը: Նրանք ապստամբեցրին Ուբեյդուլահի հավատակից և բարեկամ քրդերին Պարսկաստանում, և վերջիններս դիմեցին շեյխի օգնությանը: 50.000-անոց քրդական բանակն ու անկանոն խուժանը շարժվեցին Ատրպատական: Ռուսական կանոնավոր հզոր բանակը կանգնած էր սահմանագլխին, պատրաստ ընդունելու շեյխի հարվածները և ջարդելու նրան: Աղմուկը միջազգային կերպարանք ստացավ: Գործին միջամտեցին Բեռլինի որոշումներն ստորագրած մեծ տերությունները: Համիդը, դժգոհ լինելով, որ Ուբեյդուլահը, փոխանակ հայերին ու ասորիներին կոտորելու, արշավել է Պարսկաստան և միաժամանակ վախենալով, որ կրկին իր ներքին գործերին կմիջամտեն մեծ տերությունները, թուրքական բանակը շարժեց Շեյխի դեմ, կրկնակի աքցանի մեջ վերցրեց նրա զորքը և ջարդեց: Ուբեյդուլահը Ջուլամերկում հանձնվեց թուրքական հրամանատարության ողորմածությանը, կրկին աքսորվեց Մեքքա:

Հայաստանը, հատկապես Վասպուրականը, փրկվեց քրդական կոտորածներից, սակայն տնտեսապես քայքայվեց, սովն իր ճիրանների մեջ առավ հազարավոր հայ, ասորի, հատկապես քուրդ բնակչությունը: Սովահարների թախանձագին խնդրագրերն սկսեցին ողողել աշխարհի բոլոր անկյունները, տպագրվել բազմալեզու պարբերականներում, թափանցել Եվրոպայի ու Ասիայի արքունիքները: Բեռլինի կոնգրեսից հետո համաշխարհային հասարակայնության համար մտահոգող հարց դարձավ Հայաստանում տարածվող սովը, որի պատճառները շատերը որոնում էին Ուբեյդուլահի ասպատակությունների մեջ և կոչ էին անում օգնության ձեռք մեկնել սովահարներին:

Հայ հասարակական գործիչները, ոգևորված Կ. Կամսարականի ռուսական արքունիքի անունից արած հայտարարություններից, հմտորեն օգտվում էին հարմար առիթից և հանգանակության շրջանակները լայնացնում՝ դիմելով ոչ միայն աշխարհի ֆիլանտրոպիստական ընկերություններին, այլև թագավորներին, թագուհիներին, պրեզիդենտներին: Հայկական համայնք ունեցող բոլոր երկրներում ու քաղաքներում հաստատված գործիչների ու եկեղեցականների ձեռքով հսկայական գումարներ էին հավաքվում ու տրամադրվում Հայաստանի սովյալներին:

Կ. Պոլսում 1880 թ. հունվարի 12-ին հաստատված «Սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովը» հեռամետ ծրագրերով և հնարամտորեն օգտագործելով հարմար պահը, սկսեց կազմակերպել հանգանակությունը: 1880 թվականի հունվար ամսին մայրաքաղաքի միայն մի քանի թաղերից հավաքվեց 1201,29 օսմանյան ոսկի[1]: 1880 թ. հունվարի վերջերին պատրիարք Ն. Վարժապետյանի կոնդակով քաջալերվեց հանգանակությունը և փետրվարին հանձնաժողովն իր տրամադրության տակ ուներ 39.000 օսմանյան ոսկի: Հավաքված դրամը խնամքով ու հսկողությամբ բաշխվում էր սովյալներին, միաժամանակ ծախսվում նորաբաց դպրոցների ու մշակութային ընկերությունների վրա[2]: «Սովելոց հանձնաժողովը... վարժարաններուն ալ օգնեց,- գրում է դեպքերին ականատես և մասնակից Մ. Օրմանյանը,- նորանոր մշակություններ պատրաստեց, զանազան արհեստներ քաջալերեց, և երկրագործական աշխատությունը յուրացուց կենդանիներ և գործիքներ փոխտվության ձևի ներքև հանձնելով, զի չէր ուզեր, որ անաշխատանպաստը վտանգավոր դատարկապորտության և մուրացիկ ստորության ծառայեր»[3]:

1880 թ. հոկտեմբերի 10-ին Կ. Պոլսի Ազգային ժողովը լսեց Գ. Սրվանձտյանցի հետ Հայաստանի գավառների շրջագայությունից վերադարձած Վահան վարդապետի ընդարձակ ատենախոսությունը: Այդ ճառը մի տեսակ ծրագրային բնույթ ուներ, որտեղ ասվում էր. «Մարդ,

---

[1] ՀԱՍԱՀ ՊԿՊԱ, ֆոնդ 57, գործ 302, էջ 141-142:

[2] Այս դեպքերի մասին *Մ. Պաղտասարյանն* «Ականատես» ստորագրությամբ մանրամասն հոդվածաշար է տպագրել «Սուրճ» պարբերականի 1906 թ. 3, 4, 5, 6, 7 համարներում «Թուրք-քրդական արշավանքի քսան և հինգամյակը» (Նյութեր հայոց նորագույն պատմությունից) վերնագրով:

[1] Տե՛ս «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», էջ 22:

[2] Տե՛ս *Մ. Օրմանյան*, Ազգապատում, հ. Գ, էջ 4374:

[3] Նույն տեղում, էջ 4375:

դրամ և օրենք պետք են մեր փրկության համար. երեքեն էլ թեև բավականաչափ զուրկ ենք, սակայն կարող ենք քիչ ու շատ ունենալ: Գործածելուն մեջ չարաչար կվարվիմք, մինչև իսկ այդ մարդերուն ապագայն ալ բարվոքած չեմք մինչ զի շատեր որք հատկապես ի Կ. Պոլիս կկոչվին, ոչ Պատրիարքարան կիյուրընկալե, ոչ եկեղեցո թաղխորհրդարանները, այլ կմնան փողոցներու և պանդոկներու մեջ, առանց ապահովության ապրուստի և պատվո անկարելի է, որ մարդ հասնի, այն երջանիկ ժամանակներին, երբ մարդիկ հանուն արքայության երկնից կգործեին միայն: Նույնպես դրամ եթե ունիմք, գործածելուն մեջ չարաչար կվարվիմք շեղելով յուր նպատակեն, առ այս վկայություններ բերելու հարկ չկա, եթե դրամ չունիմք, երբ օրինավոր եղանակավ ազգին դիմեր և պետք եղած վստահությունը տալե հետո չեմք հավաքած. վկա է Սովելոց խնամող Կեդրոնական Հանձնաժողովը, որ 25.000 լիրա (սկզբում -Հ.Ղ.) կրցավ հավաքել... Օրենք ունիմք, և երբ չունիմք կրնանք գնել, բայց եղեալ օրինաց ճշդիվ գործադրության համար անձահույս եղած ենք...»[1]: Ազգային ժողովի երեսփոխանները խանդավառությամբ ընդունեցին այդ ճառը և շարունակվեց հանգանակությունը: Հանգանակություն սկսվեց Զմյուռնիայում, Ադրիանապոլսում, Տրապիզոնում, Կեսարիայում, Սեբաստիայում: Դրամի հավաքման գործը յուրաքանչյուր հայի հայրենասիրական սրբազան պարտքը դիտվեց, երբ սկսեցին սովյալներին օգնության ձեռք մեկնել օտար գահակալները, Եվրոպայի «արքայական մեծությունները»:

Ռուսական կայսր Ալեքսանդր Երկրորդը, Լոռիս Մելիքովից մանրամասն տեղեկություններ ստանալով Հայաստանում տարածված սովի, Շեյխ Ուբեյդուլահի Վասպուրականում և Բագրևանդում կատարած ասպատակությունների մասին, Ն. Վարժապետյանին ուղարկեց 10 հազար ֆրանկի արժողությամբ մի գումար, իսկ Կ. Կամսարականի անունով Վան ուղարկեց 400 օսմանյան լիրա[2]:

Ցարի նվիրատվությունը մեծ ոգևորություն առաջ բերեց Հայաստանի արևելյան հատվածում, ինչպես նաև Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում, Պետերբուրգում ապրող հայկական և ոչ միայն հայկական շրջաններում, մանավանդ որ պետականորեն թույլատրվեց ու խրախուսվեց հանգանակությունը Ռուսաստանում: «Երբ մի կողմեն պ. Մկրտիչ Սանասարեանց և պ. Կարապետ Հ. Եզեանց ի մայրաքաղաքն Պետերբուրգ հանգանակություն կձեռնարկեին,- կարդում ենք տեղեկագրում,- մյուս կողմեն երեք խմբագիրներն ալ, պ. Գրիգոր Արծրունի՝

[1] «Ատենագրութիւնք Ազգային ընդհանուր ժողովոյ», նիստ Ժ, Կ.Պոլիս, 1880, էջ 220:

[2] Տե՛ս «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», Կ. Պոլիս, 1885, էջ 67:

«Մշակ», պ. Պետրոս Սիմեոնեանց՝ «Մեղու» և պ. Աբգար Հովհաննիսեանց՝ «Փորձ» (այժմ «Արծագանք») լրագրոց, Կովկասու մեջ հանգանակություններ կբանային և արդյունքեն մաս մը ուղղակի սովեալ գավառներու հղել կսկսեին»[1]:

«Ռուսահայերի մեջ «Մշակ» լրագիրը հանգանակություն բացավ,- գրում է Համբարձում Առաքելյանը,- և կրակոտ հորդորների շնորհիվ մեծաքանակ գումար հավաքեց հօգուտ սովյալների (ընդամենը 36.000 ռուբլի). սկզբից «Մշակի» խմբագիր պ. Արծրունին այդ հանգանակությունից գումարներ էր փոխադրում Վան՝ Խրիմյան Հայրիկի ձեռքը հասցնելու համար: Իսկ երբ Կ. Պոլսում Ներսես պատրիարքի նախաձեռնությամբ կազմվեց Սովելոց հանձնաժողով, բոլոր կողմերից նվիրաբերություններն սկսեցին հավաքվել այդտեղ»[2]: Հ. Երամյանը վկայում է, թե Մկրտիչ Սանասարյանը և Գրիգոր Արծրունին 25.000 ռուբլի ուղարկեցին Կ. Կամսարականին, որպեսզի նա հանձնի Վանի սովյալներին:

Սովը տևեց մինչև 1881 թվականի հունձքը, իսկ հանգանակության գումարը հասավ մինչև 40.000 ոսկու: 20.000-ը ծախսվեց Վանում ապրող հայերի, քրդերի, նույնիսկ թուրքերի վրա, իսկ մյուս մասն ուղարկվեց Կ. Պոլսի Ազգային հիվանդանոցին[3]:

Հունաստանի կառավարությունը Հայաստանի սովյալներին ուղարկեց 7500 հունական տրիխմի գումար, Լևոն XIII պապը՝ 5000 իտալական լիրա, Ավստրո-Հունգարիայի կայսր Ֆրանց Իոսիֆ Ա-ն՝ 1000 ավստրիական ֆորին[4]:

Հանգանակություն կազմակերպվեց Ռումինիայում, Հունգարիայում, Վիեննայում, Վենետիկում, Իսպանիայում, Գերմանիայում, Աթենքում, Լոնդոնում, Մանչեստրում: Ամենուրեք կազմակերպվում էին վիճակահանության դրամարկղեր, բաժանվում էին տոմսեր, որոնցից գոյացած գումարն ուղարկում էին «Սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովին»:

Հայաստանի սովյալներին օգնության ձեռք մեկնելու հիմնական ծանրությունը վերապահված էր արևելահայությանը: Մկրտիչ Սանասարյանը՝ Կարինի հանրահայտ Սանասարյան վարժարանի մեկենասը, միայն 1880 թ. 1500 ռուբլի ուղարկեց սովյալներին, 1880 թ. փետրվարի 8-ին Թիֆլիսի «Մեղուն» 500 ռ. հանգանակած գումար տվեց Կ. Կամսարականին, Ալեքսանդր Մելիք Ազարյանցը՝ 200 ռուբլի, իշխան

[1] «Տեղեկագիր...», էջ 27:

[2] Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, *Հ. Առաքելյանի* ֆոնդ, վավ. 182:

[3] *Համբարձում Երամյան*, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, էջ 123:

[4] Նույն տեղում, էջ 67:

Ամատունին 400 ռուբլի[1], Պետերբուրգի «ազգայինները» 1880 թ. փետրվարի 27-ին Կամսարականին հանձնեցին 300 ռուբլի, ապա, երեկույթներ կազմակերպելով, հաջորդ ամսում հավաքելով և դրան միացնելով Բեսարաբիայից ստացված գումարը, 7140 ռուբլի ուղարկեցին սովյալներին: Տարեվերջին ռուսաց մայրաքաղաքը Խրիմյանին ու Կամսարականին հանձնեց 2100 ռուբլի, իսկ Ռուսաստանի «Գաղթականաց հանձնաժողովը» և «Ռուսաստանի հայ տիկնայք» 2330 ռուբլի գումարն իրենց ներկայացուցիչների ձեռքով հանձնեցին Վանի հոգևոր առաջնորդությանը[2]: Այդ մասին 1881 թ. դեկտեմբերի 31-ին շնորհակալությամբ «Մասիսի» խմբագրությանն էին դիմում Վանի հանձնաժողովի նախագահ Մ. Խրիմյանը, ատենապետ Գ. Բալաճյանը, ատենադպիր Սեդրակ Տեր-Սարգսենցը Տեկանցը[3]:

Հայաստանի սովյալներին օգնության ամուր ձեռք մեկնեց Զմյուռնիայի հայ գաղթօջախը: 1880 թ. հունվարին նրանք նախ հավաքեցին «800 մեճիտիե» գումար և ապա ստեղծեցին հանձնաժողով, որը պետք է շարունակեր այդ գործը: Հանձնաժողովի կազմում էին Մակար Բարխուդարյանը, Կարապետ Սպարթալյանը, Գևորգ Ակասյանը, Մարտիրոս Բաբազյանը: Կանանց կողմից հանձնաժողովի անդամներ ընտրվեցին Իսկուհի Աղազարյանը, Մարգարիտ Աղաջանյանը և նշանավոր հրապարակախոս Գր. Չիլինկիրյանի կին, Մ. Մամուրյանի կնոջ քույր՝ Վարդուհի Չիլինկիրյանը[4]: Քաղաքի «Աղքատասիրաց» ընկերությունը 1880 թ. փետրվարի 19-ին մի պարահանդես կազմակերպեց, որի համար վաճառված տոմսերից ստացված 150 ոսկու գումարից 50 օսմանյան ոսկին տրամադրվեց սովյալներին[5]:

1880 թ. փետրվարի 25-ին Զմյուռնիայի մասոնական «Տիգրան» ժողովարանը հատուկ նիստ հրավիրեց՝ դրամական հանգանակության նպատակով: Նիստում Հայաստանին օգնության կոչեր պարունակող բովանդակությամբ ելույթներ ունեցան Գր. Չիլինկիրյանը, Մ. Մամուրյանը, Հ. Ահարոնյանը, Ս. Կյուլպենկյանը և ուրիշներ[6]: 1880 թ. մարտին Շահնուր-Մամուրյանն ընդարձակ թղթակցություն տպագրեց «Արևելյան մամուլ» ամսագրում, քննադատական խիստ խոսքեր ուղղեց քաղաքի հայությանը՝ հանգանակության գործում դանդաղելու պատճառով և հայտնեց, որ մինչ այդ հավաքել են ընդամենը 1000 ոսկի: Այդ դանդաղումը չվրիպեց «Մասիս» և «Մամուլ» պարբերականների խմբագիրների աչքից: Սրանք ապրիլ ամսին քննադատական հոդվածներ հրապարակեցին Զմյուռնիայի հայկական համայնքի, հատկապես, «հայ երևելիների» հասցեին:

Մ. Մամուրյանն այս դեպքում հանդես եկավ «Սովը» խորագրված ծավալուն, ողջ հայ ժողովրդին ուղղված կոչ հոդվածով: Հայրենանվեր, դեմոկրատ հրապարակախոսն ու քաղաքական գործիչը, արդեն հանուր հայության աչքում մեծ համարում նվաճած «Արևելյան մամուլի» խմբագիրը հանգամանորեն բացատրում էր սովի առաջացման պատճառներն ու, այն չկանխելու դեպքում, հայ ժողովրդին հասցնելիք վնասները, դրանց ողբերգական հետևանքները[1]: Նա բացատրում էր, որ «եթե օտար մարդասերներ աջակցին մեզ, եթե մեր թշվառության սփոփումին նպաստեն, երախտագետ սրտով կընդունինք այդ նպաստները, *միշտ մեր նյութական ուժերու վրա դնելով մեր հույսն, Հայաստանի ազատումի հույսը* (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[2]: Արդարամիտ մտավորականն ապրիլ ամսին պաշտպանում էր Զմյուռնիայի հայ հասարակայնությանը, դիմակայում Կ. Պոլսի պարբերականների քննադատությանը և հայտնում այն հսկայական գումարի մասին, որ հավաքել էին իր հայրենակիցները, հանգանակությանը մասնակից դարձնելով բոլոր դասերի երկսեռ ներկայացուցիչներին:

Ըստ այդ հրապարակման, 1880 թ. ապրիլին Զմյուռնիայի բոլոր ազգություններին պատկանող տղամարդիկ հանգանակել էին 14407 մեջիդիե գումար, կանայք՝ 11080 մեջիդիե: Հանձնաժողովի նախագահ էր ընտրվել թեմի հոգևոր առաջնորդ Մելքիսեդեկ Մուրադյանը, նրա տեղակալ՝ Բելգիայի հյուպատոս Ֆրետերիգինը[3]: Գավառներից հանգանակել էին 371 մեջիդիե: Մանչեստրի հայ գաղութից 1880 թ. մարտին ստացել էին 896,2 ոսկի, Մարսելի հայ գաղութից ստացել էին 821,09,75 օսմանյան լիրա, Փարիզի հայերից 29.000 ֆրանկ: Ընդհանուր գումարից 20.000 ֆրանկն ապրիլ ամսին ուղարկել էին սովյալներին և շարունակում էին հանգանակությունը[4]: Հետաքրքրականն այն էր, որ նույն համարներում, «Ժողովրդային վարկ» վերնագրված հոդվածում ամսագիրն առաջարկում էր ծրագիր, այն է. ժողովրդին չնչին տոկոսներով վարկ տրամադրել, որպեսզի նա, նախ, ազատվի վաշխառուի սարդոստայնից՝ կարողանա հող գնել, մշակել, «արդյունավորել երկիրը» և, տնտեսապես կայունացնելուց հետո միայն, այն վերադարձնել վարկատուին:

Մարսելի հայկական փոքրաթիվ գաղութն ուներ ծաղկուն վաճառականություն, առևտրական կապերով կապված էր Արևմտյան Եվրոպայի

---

[1] Տե՛ս «Մասիս», 1882, 20-ը փետրվարի, N 3118, «Սով ի Հայաստան: Հաշիվ նվիրատվութեանց Ռուսիո հայոց» հոդվածը:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] «Մասիս», 1882, N 3118:
[4] «Արևելյան մամուլ», 1880, փետրվար, N 2, էջ 477:
[5] Նույն տեղում:
[6] Տե՛ս նույն տեղում:

[1] «Արևելյան մամուլ», 1880, ապրիլ, N 4, էջ 377-380:
[2] Նույն տեղում, էջ 579:
[3] Նույն տեղում, էջ 578:
[4] Նույն տեղում, 1880, մարտ-ապրիլ, էջ 579:

բոլոր խոշոր քաղաքների շուկաների, մասնավորապես, Ռուսաստանի երկու մայրաքաղաքների առևտրական տների հետ: Այն ստվարանում էր Վասպուրականից գաղթած հայ առևտրականների հաշվին և 1879-1881 թթ. 25.000 ֆրանկ գումար հանգանակեց և ուղարկեց Կ. Պոլսի «Սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովին»[1]: Մանչեստրում թեմի առաջնորդ էր ուղարկված Կ.Պոլսի հայկական պատրիարքարանի դիվանագետ, Զեյթունի 1862 թ. ապստամբությամբ ոգևորված Հովհաննես ավագ քահանա Մկրյանը: Նա 20.000 անգլիական ոսկու հանգանակություն կատարեց և ուղարկեց Կ. Պոլիս:

Ակնհայտ էր, որ հանուր հայությունը ոտքի էր կանգնել և դրամական օգնություն, պարենամթերք, հագուստ ու դեղորայք էր ուղարկում Հայաստանի սովյալներին:

Ինչպես ասվեց, եվրոպական տերությունների ղեկավարները ևս մասնակցություն բերեցին այդ գործին, կարծես թե ամաչեցին, եթե ամաչելու կարողություն ունենային, ամաչեցին Բեռլինի կոնգրեսում «Հայկական հարցի» նկատմամբ ցուցաբերած իրենց քար անտարբերության համար: Համաշխարհային հասարակայնության կարծիքի ճնշման ազդեցությամբ՝ «Անկլիո մեջ բարձրաստիճան անձինք՝ ըստ խնդրո սըր Լեյըրտի՝ մասնախումբ մը կազմած են նպաստ հանգանակության մտոք»[2]: Խրիմյանի հնոցում բռնկված կայծ՝ Վասպուրականի սովյալների մտերմագույն բարեկամ Ա. Թոխմախյանը, ոչ թե Անգլիային գովաբանելու, այլ հայ վերնախավին քննադատելու, նրան դեպի երկիրն առաջնորդելու, օտար երկնակամարների տակ դեգերող հայ գիտնականների գյուտարարությունը Հայաստանում կիրառելու փորձ էր անում: Հայ ուսուցիչն իր ջանքերը Վասպուրականում ու Տարոնում գործադրելու հայրենասիրական, ազնիվ մտադրությամբ գրում էր. «Անցյալ տարվա (1880 թ.- Հ.Ղ.) սովին անգլիացիք իրանց դեսպանների և միսիոներների ձեռքով կրկնապատիկ մեծ օգնություն հասցրին հայերին, քան աշխարհում գտնված բոլոր հայերը, որոնց մեջ կային և այնպիսիք, որոնք իրենց տված կոպեկի համար պահանջում էին, որ ինչպես բարերար փառաբանվեին: Շատերը կըսեն, որ անգլիացիք նպատակի համար էին անում, որ ազդեցություն ունենան այդ աշխարհի վրա. բայց հարկավոր չէ՞ր այդ ազդեցությունն ազգն ինքն ունենար իր անդամների վրա»[3]:

Ճիշտ է նկատվում, որ արևմտահայ ազատագրական պայքարի փառապսակ գլուխներից չէր Ա. Թոխմախյանը, նրա անունը երբեք հավասարը հավասարի հետ չէր դրվում Մ. Խրիմյանի, Ռ. Պատկանյանի, Գր. Արծրունու և Մ. Փորթուգալյանի կողքին: «Նա ոչ մեղրաշուրթն հրավիրակ էր, ոչ շանթառաք ռազմերգու, ոչ գիտուն թեորետիկ, ոչ բողոքող վիպասան ու ոչ էլ ազդեցիկ ղեկավար»[1]: Թոխմախյանը, սակայն, գործիչ էր, գյուղացիության շահերի պաշտպան, նրա ողբերգական կացության թարգմանը, հայ վերնախավերի ահարկու քննադատը, Բեռլինից հուսախաբված Հայոց դատը Հայաստանի մեջ որոնող այն եզակի ազգային-դեմոկրատներից մեկը, որը ծրագրեր էր հրապարակում հայ-քրդական, հայ-ասորական դաշինքի մասին, իր դասախոսությունների ժամանակ հայտարարում. «Հայերը յուրյանց հույսը պիտի դնեն գլխավորապես յուրյանց վերա և հետևաբար քրդերի և ասորիների վերա, դա մի բնական դաշնակցություն է, որովհետև Հայոց խնդիրը... միևնույն քրդերի և ասորիների խնդիրն է, որքան որ հայերը քրդերի ու ասորիների զարգացման համար աշխատեն, այնքան էլ յուրյանց գործին կօգնեն»[2]:

Սովը հնձում էր ոչ միայն հայերին, այլև ասորի, քուրդ և հատկապես թուրք զանգվածին: Սովյալներին, ինչպես տեսանք, օգնության ձեռք էր մեկնում հանուր մարդկությունը, և համաշխարհային հասարակայնության ուշադրությունն այդ պահին սևեռված էր Հայաստանի վրա: Արյունարբու Համիդը տեսնելով այդ ամենը, զգալով, որ հակառակվելու դեպքում խնդիրը ավելի բարդ կերպարանք կստանա, գուցեև տհաճությամբ, բայց և այնպես, ինքը ևս դրամական օգնություն ցույց տվեց սովյալներին, միաժամանակ պետական հրամանագրով թույլատրեց հանգանակության կազմակերպումը[3]: Սուլթանի կողմից սա տուրք էր դիվանագիտությանն ու միջոց՝ իր ներքին գործերն արտաքին նոր միջամտությունից պաշտպանելու: Թուրքական կառավարությունը Հայաստանի սովյալներին, սակայն, «օգնության ձեռք մեկնեց» բավական ուշացումով, նույնիսկ այն պահին, երբ գուցե դրա կարիքն այնքան էլ չէր զգացվում:

Սովը հնձում էր Հայաստանը, մարդիկ մեռնում էին ամբողջ գյուղերով, մեռածներն անթաղ էին մնում ողջերի ուժասպառության պատճառով, Ռուսաստանն ու Եվրոպան օգնության էին հասնում, մինչդեռ մինչև 1880 թ. մայիս ամիսը Համիդ II-ը, թերևս, ներքին ինքնաբավականությամբ, դեռևս դիտորդի դեր էր ստանձնել: Այդ օրերին «Մշակի» Վանի թղթակիցը գրում էր. «Սովն իր ահռելի երևույթներով կշարունակե դեռ: Ամեն կողմեն, Անգլիայեն, Թիֆլիսեն, Ռուսաստանեն և այլն նվեր-

---

[1] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1883, հունվար, N 1, էջ 46:

[2] Նույն տեղում, 1880, փետրվար, N 2, էջ 477:

[3] *Արսեն Թոխմախյան*, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 4-5:

[1] *Թադ. Ավդալբեգյան*, Արսեն Թոխմախյան, Երևան, 1926, էջ 9:

[2] *Արսեն Թոխմախյան*, Մասիս լեռների հարավային ստորոտները, հրապարակախոսություն՝ կատարված ապրիլի 21-ին, Արծրունու թատրոնում, Թիֆլիս, 1882, էջ 56-57:

[3] Տե՛ս «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», Կ. Պոլիս, 1885:

ներ կդրկվեն. *միայն մեր բարեխնամ կառավարությունն է, որ տալ չգիտե, առնել գիտե* (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[1]: Անկասկած է, որ Թուրքիայի «օգնությունը» Հայաստանի սովյալներին կազմակերպվեց և պաշտոնապես թույլատրվեց 1880 թ. մայիսից հետո միայն:

«Սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովը» 1880-1885 թվականներին հանգանակել էր և, դրամարկղում մուտք անելով, գրանցել շուրջ 3 միլիոն 844 հազար օսմանյան լիրա կազմող, ժամանակի առումով մի ահռելի գումար[2]: Թուրքական ահարկու սրի հարվածների տակ մաքառելով գոյատևող արևմտահայը երբեք այդքան գումարի մասին նույնիսկ չէր երազել: Այժմ այդ դրամը հանգանակվել էր, որից 1885 թ. ծախսվել էր 310,599,5 օսմանյան լիրա և դեռևս դրամապահոցում էր մնացել 738,441 օսմանյան լիրա, որը հետագայում բաշխվեց Կ. Պոլսում և Արևմտյան Հայաստանում գործող հայկական դպրոցների վրա:

Հանձնաժողովն իր գործունեությունը ծավալելու համար Արևմտյան Հայաստանը բաժանել էր մասերի, ստեղծել տեղական «Մատակարարություններ», ընտրել ղեկավար մարմիններ, որոնք իրացնում էին կենտրոնից ստացված գումարները, բաժանում ժողովրդին և կատարվածի մասին ամենամսյա հաշվետվություններ ներկայացնում կենտրոնին: Հայաստանում ստեղծվել էին Կարինի, Վանի, Սղերդի, Տիգրանակերտի, Բաղեշի, Պելեճիգի, Նիկոմեդիայի (Իզմիտի) մատակարարություններ: Ստեղծվել էին նաև «Մանր մատակարարություններ սովելոց», «Կրթական նպաստք», «Կեդրոնական մատակարարություն» կոչվող հանձնաժողովներ:

Կարինի մատակարարությունն ստեղծվեց 1880 թ. հունվարի 17-ին, ընդգրկեց Կարինը, Բայազետը, Ալաշկերտը, Բալուն, իր գոյության ընթացքում ծախսեց 778,239 օսմանյան լիրա: Հանձնաժողովի անդամներն էին Համազասպ Պալարյանը (ատենապետ), Հակոբ Հովասափյանը (ատենադպիր), Կարապետ Տեր-Ազարյանը (գանձապետ), Դանիել Խարաճյանը (անդամ) և կաթոլիկների կողմից Պետրոս Ղոնտախճյանը[3]:

Քանի որ Հայաստանում սովն սկսվել էր Բայազետից, առաջին զոհերը եղել էին այստեղ, ուստի և առաջին օգնությունն էլ կազմակերպվեց բայազետցիներին: Տեղացի չորս «երևելիների» հանձնվեց նպաստը: Սրանք այն բաշխեցին Բայազետի և Դիադինի գավառների 9 գյուղերում ապրող 1116 կարիքավորներին: Առաջին հանձնաժողովից բողոքներ եղան: Կենտրոնական մասնաժողովը նոր հանձնաժողով ընտրեց, դրա մեջ մտցնելով Գալուստ Տեր-Մկրտչյանին, Սեդրակ Սեդրակյանին, և նպաստն այժմ բաշխվեց 7 հայաբնակ գյուղերի 636 «կարոտյալներին»[1]:

Բարդ էր իրավիճակն Ալաշկերտում և նրա շրջակա գյուղերում: Սան Ստեֆանոյի պայմանագրով Ալաշկերտի հովիտն անցել էր Ռուսաստանին: Բեռլինի կոնգրեսում, անգլո-թուրքական գաղտնի պայմանագրի համաձայն, Ալաշկերտը վերադարձվեց Թուրքիային: Հուսախաբված բնակչության մեծ մասը, թողնելով բերրի հողերն ու գեղեցիկ այգիները, ընկած ռուսական բանակի ետևից, ունեցվածքի մի մասը միայն իրենց սայլերին բարձած, հեռացավ հայրենի բնօրրանից: Հողը մնաց անմշակ, ապրելը դժվարացավ թուրքական վրեժի ահից նոսրացող բնակչությամբ երկրի համար, և սովն էլ իր հունձն սկսեց այս գավառում:

Կարինի մասնաժողովը, հրահանգավորվելով Կ. Պոլսի կենտրոնից, որոշեց իր ներկայացուցիչն ուղարկել Ալաշկերտ, նախ վիճակը հիմնավորապես պարզելու, ապա օգնություն կազմակերպելու, արդարամիտ ձևով նպաստներ բաժանելու հանձնարարությամբ: Այդ անձնավորությունն սկզբում կարնեցի Մնացական աղան էր, ապա Աղաջան Երկանյանը, Սիսակ Գոյումճյանը: Սակայն, առանց աշխատավարձի, հայրենանվեր ու բեղմնավոր գործունեություն ծավալեց Ալաշկերտի հովտում «Միացյալ» ընկերության տեսուչ, հեղափոխական տրամադրություններով համակված Մկրտիչ Սարըյանը[2]:

«Սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովի» տվյալներով, Վասպուրականը 1880-1885 թվականներին նպաստ է ստացել ամենից շատ, այսինքն 1,260,258 օսմանյան լիրա[3], որը պայմանավորված էր, նախ վիլայեթում սովի ու տարափոխիկ հիվանդությունների, հատկապես տիֆի առկայությամբ, մյուս կողմից այստեղ գործող հայ մտավորականների ձեռներեցությամբ, Գր. Արծրունու, Կ. Կամսարականի ակտիվ աջակցությամբ վանեցիներին:

1879 թ. մայիս-հունիս ամիսներին Կ. Պոլիս լուրեր հասան Վասպուրականում սկսվող սովի մասին: Վանի վիլայեթից հազարներով պանդխտող հայ մշակները մայրաքաղաք էին բերում հայրենակիցների աղերսագրերը, հանձնում իրենց հույս ու ապավեն դարձած Մ. Խրիմյանին և նրա միջոցով Ազգային ժողովին, Ն. Վարժապետյանին: Բեռլինից հուսախաբված, «փուչ ու փեզեվենկ Եվրոպիո» դիվանագիտական խարդավանքներից զայրացած հայկական պատվիրակությունն ու նրա ղե-

[1] «Մշակ», 1830, N 102, տե՛ս նաև *Ջոն Կիրակոսյան*, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, էջ 37:
[2] Նույն տեղում, էջ 118:
[3] Նույն տեղում, էջ 64:

[1] «Մշակ», 1830, N 102, տե՛ս նաև *Ջոն Կիրակոսյան*, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, էջ 65:
[2] Նույն տեղում, էջ 66:
[3] «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», 1885, Կ. Պոլիս, ցուցակ Ա., էջ 118:

կավարները կոչ էին անում հույսը դնել սեփական ուժերի վրա, կրթել ժողովրդին, զինել, տնտեսապես բարեկարգել երկիրը, ապա կրկին բարձրացնել հայկական հարցը, երկրում ունենալով «սերբի ու ղարադաղցու նման» զինական խմբեր, կազմակերպված բանակ: Այժմ այդ վերջին հույսն էլ ի դերև էր ելնում, քանզի երկիրն ավերվում էր, ապագա ազատամարտի ջահակիրները սովի էին մատնվում:

Դեպի երկիր, դեպի Հայաստան կոչերն առաջինը հնչեցին Մ. Խրիմյանի շուրթերից և նրա հոգևոր քարոզներում, Կ. Պոլսի եկեղեցիների բեմերից Ազգային ժողովի ատենախոսությունների մեջ, և ինքն էլ դարձավ այդ շարժման առաջին ներկայացուցիչը: 1879 թ. հոկտեմբերին Մ. Խրիմյանն, իր իսկ համաձայնությամբ, «Սահմանադրապես» ընտրվում է Վանի հոգևոր թեմի առաջնորդ և ***«իբրև փրկության հրեշտակ»*** նոյեմբերի 21-ին վերադառնում ծննդավայր[1]: Վերադարձի նախօրյակին Խրիմյանը Կ. Պոլսում կազմում է ***«Վասպուրականի սովելոց հանձնաժողով»***, այն հաստատել տալիս Ազգային ժողովում, մեծահարուստ Սերովբե Կյուլպենկյանից ստանում է որոշ դրամագլուխ և նրա առևտրական տան պաշտոնյա Քերովբե Գոյումճյանին ընդունում իբրև այդ դրամը բաժանող ու Վասպուրականում տիրող վիճակի մասին մայրաքաղաքին գրավոր տեղեկություններ հասցնում:

1879 թ. նոյեմբերի 25-ին, Մ. Խրիմյանի Վան ժամանելուց չորս օր հետո, արդեն տեղում կազմվում է «Վասպուրականի սովելոց հանձնաժողովի» առաջին հիմնադիր ատյանը: Մ. Խրիմյանն ընտրվում է հանձնաժողովի նախագահ, Գևորգ Բեյ Գալաճյանը՝ ատենապետ, Սեդրակ Տեր-Սարգսենց-Տեկանցը՝ ատենադպիր, Մկրտիչ Մարությանը՝ գանձապահ: Հանձնաժողովի անդամներ են ընտրվում Երեմիա Տեկանցը, Գարեգին Սրվանձտյանցը, Հարություն Թերզիբաշյանը, Մկրտիչ Փորթուգալյանը, Այազ Այազյանը, Ղևոնդ Թերլեմեզյանը, Կարապետ Խաչանյանը: Որոշ ժամանակ անց, այս կազմին ավելացան Հակոբ Պանիրյանը, Հովհաննես Խանջյանը, Սարգիս Միրզախանյանը, Սիմեոն Կյունեշյանը: Վասպուրականում «Հայաստանի սովելոց խնամատար կենտրոնական հանձնաժողովի» ներկայացուցիչ հաստատվեց Քերովբե Գոյումճյանը[2]: Ակնհայտ էր, որ Վասպուրականում հանձնաժողովն ստեղծվել էր և սկսել ծավալել իր գործունեությունը նախքան Կ. Պոլսի կենտրոնական մարմնի ստեղծումը: Հետևաբար, մեկ անգամ ևս պետք է ընդգծել, որ Հայաստանի սովյալներին օգնության ձեռք կարկառելու գաղափարի ու սկզբնավորման առաջնությունը, հետևաբար և պատիվը, իրավացիորեն պատկանում է վասպուրականցի պանդուխտներին, նրանց առաջնորդ Մ. Խրիմյանին, ինչպես նաև Կ. Կամսարականին, Մ. Փորթուգալյանին, Գր. Արծրունուն:

[1] ***Հայկ Սեմեմյան,*** Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929, էջ 519-520:

[2] ***Երվանդ Տեր-Մկրտչյան,*** Գանձեր Վասպուրականի, հ. I, Պոսթոն, 1966, էջ 186:

Կ. Պոլսում ապրող վասպուրականցի հազարավոր պանդուխտները կենտրոնական հանձնաժողովի ստեղծումից հետո էլ չէին դադարեցնում իրենց ահազանգերը հայրենակիցներին նյութական օգնության ձեռք մեկնելու համար: 1880 թ. հուլիսի 10-ին Ներսես Վարժապետյանին հասցեագրված մի ընդարձակ հանրագիր է ներկայացվում Ազգային ժողովին: Հուլիսի 11-ի նիստում այն ընթերցվելուց հետո հանձնարարություն է արվում ոչ միայն դրամական օգնության չափն ավելացնել Վանի մասնախմբին, այլև պարենամթերք, հագուստ և գրենական պիտույքներ ուղարկել այնտեղ:

1880 թ. հուլիսի 10-ի հանրագրում արձանագրված է. «Հայաստանի Հայոց և մասնավորապես Վասպուրականի բազմաթիվ ժողովրդյան վրա սոսկալի արհավիրքները այնչափ արագ իրարու կհաջորդեն, որով կենաց և մահվան վերջին ճգնաժամերուն մեջ կգտնվին այսօր. և ***նոր,*** և ***հիմնական,*** և ***անմիջապես*** դարմանք պետք ունեն. եթե ոչ՝ շուտով Հայաստանը Հայոց գերեզման կդառնա: Հայաստանցին այլևս պետք չունի հարցնելու թե ի՞նչ են իր ցավերը և թե ի՞նչ շարժառիթներ յառաջ կուգան. միայն թե զինքն հուսով խոստացեալ երաշխավորության հետ կապկապված արդեանց կսպասե: ...Վասպուրականը նախ կրակով տոչորեցին և քիչ մը վերջ՝ պատերազմ հրատարակեցավ, և վայրենի Քրդաց հրոսակները... խաղաղ բնակչաց վրա արշավելով զամեն քանդեցին կողոպտեցին և սպանեցին, այնպես որ երկրագործ ժողովուրդը ընդ երկար սար ու ձորերու մեջ թաքչելու ապավեն փնտռեց և կամ ցիրուցան եղավ օտար հողերու մեջ: ...Վասպուրական ընդհանրապես սովի կրակովն կվառվի. բայց ամենեն ծանր աղետներ կրող գավառներն եղան Աղբակ, Նորտուզ, Շատախ, Խոշապ և այլն»[1]:

Մ. Խրիմյանն ու Մ. Փորթուգալյանը, Կ. Պոլսից նյութական օգնություն և հանձնարարություններ ստանալուց զատ, դիմում են արևելահայերին: Այդ օրերին արևելահայ առաջավոր գործիչները, հատկապես Ռաֆֆին՝ իր վեպերով, Գամառ-Քաթիպան՝ իր մարտաշունչ բանաստեղծություններով, Գր. Արծրունին՝ «Մշակի» հայրենաշունչ առաջնորդողներով, նոր գաղափարներ ու տրամադրություններ էին արթնացնում, ձգտելով հոգեկան հեղաշրջում ստեղծել, ինքնաճանաչման հասցնել դարերով գլխիկոր, ստրկացած վիճակում ապրող հայ գեղջուկին, նրա ձեռքերն ազատել վաղնջական կապանքներից և նախապատրաստել քաղաքական, ապա դրան հետևող «սոցիալական հեղաշրջմանը»[2]: Արևելահայերի բաղձանքները տվյալ պահին համընկ-

[1] «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», Կ. Պոլիս, 1880, հուլիսի 11-ի նիստի արձանագրություն, էջ 8-10:

[2] Տե՛ս «Վեմ», 1936, N 4, էջ 6, ***Գառնիկ Գյուզալյան,*** Մ. Փորթուգալյան (մի էջ հեղափոխական մտքի պատմությունից), էջ 7:

նում էին արևմտահայերի թախանձանքներին: Միավորվելով ստեղծվում է համազգային ազգափրկչական, դրան զուգակցված հզոր մշակութային մի շարժում, որն, առանց աղմուկի, ազգային-ազատագրական պայքարի սերմեր է ցանում «Ավետյաց երկրում», սպասելով առաջիկա առատ հնձի:

Սովից առաջ էլ Վասպուրականի և Թիֆլիսի հայկական մտավորականության կապող օղակը Արսեն Թոխմախյանն ու Մ. Փորթուգալյանն էին, իհարկե, Մ. Խրիմյանի հետ գործակցած: Փորթուգալյանը «սիրած է Վանը և փափաքած է հոն ապրիլ, գործել և հոն մեռնիլ, եթե հալածանքները չի գային խորտակելու իր ծրագիրը»[1]:

1876 թ. Փորթուգալյանը գնում է Թիֆլիս, տեսակցում քաղաքի հայ մտավորականների, հատկապես Գր. Արծրունու և Ռաֆֆու հետ, խորհրդակցում Հայաստանում դպրոցներ բացելու մասին: «Կ'ըսվի թե Արծրունի խորհուրդ կուտա բացվելիք դպրոցը Վանի մեջ ըլլա: Փորթուգալեան Պոլիս դառնալով ծրագիրը կներկայացնե ընկերության («Արարատյան» - Հ.Ղ.) և կորոշվի կրթական առաջին տաճարը կանգնել Վանի մեջ»[2]: 1879 թ. վերջերին, Խրիմյանի հանձնարարությամբ, Փորթուգալյանը կրկին դիմում է Գր. Արծրունուն խնդրելով կազմակերպել օգնություն Վասպուրականի սովահարներին:

Մ. Խրիմյանը, Ա. Արփիարյանը և Մ. Փորթուգալյանն արևելահայությանն ուղղված մի ազդեցիկ նամակ են ուղղում «Մշակի» խմբագրությանը: Այն տպագրում են հայկական գրեթե բոլոր պարբերականները, որը ծանր տպավորություն է գործում բոլորի վրա և նպաստում է հանգանակության պրոցեսի արագացմանը: Այնտեղ ասված էր. «Երբ առաջնորդարանի (խոսքը Վանի մասին է.- Հ.Ղ.) տանիքները արդեն լեցված կըլլային սովելոց բազմությամբ. հաց, դրամ, դեղ, դարման կաղաղակեին. այլ ամենեն աղեկտուր վիճակը Աղբակու, Նորտուզի, Շատախի, Մոկաց, Խոշապա, Կեավառի և Կարկառի գաղթականներն ունեին: Ամենին գույնը կապար և մարմիններին գրեթե կմախք դարձած, ուժաթափ և համր, հազիվ զիրենք ժողովո սենյակ կձգեին:

Պառավ մամիկ մը կներկայանար մեզ իր չորս թոռներու հետ թաղիքի ցնցոտիներ շալակած և կտոր մը դառն արմատ կամ մանանա ըսված քարծիլ առած իբրև չորս հինգ ավուր օրապահիկ: Մեկ տարու տղա մը յոր ոսկոր դարձած հազիվ կշնչեր հոր ցամաքած կրծքին վրա, մեկի մայր մեռած էր ճամբան և մեկը ծիծկաթ կուզեր հորմեն, հայրը հաց կխնդրեր Մասնաժողովեն...: Վաթսուն տարեկան ասորի պառավ մայր մը յուր քսանևհինգ տարուն միակ զավակը շալակած կբերեր, և մինչև որ օգնության հասանք հոգևարք երիտասարդն յուր մոր շալակին վրա հոգին ավանդեց:

[1] «Վերածնունդ Վան-Վասպուրականի» (1850-1950), մշակութային ոսկեդար, գրեց *Լևոն Գազանճեան,* Պոսթըն, 1950, էջ 174:

[2] Նույն տեղում, էջ 174:

Աղբակցի մանկամարդ կին մը յուր երիկ և ամբողջ զավակներ կորուսանելեն վերջը ինքն ալ կմեռներ. ամենեն փոքրիկը, որ հազիվ յոթն ամսական էր կախված էր մոր ցամաքած ծիծերեն և մեռած էր: Աղբակու մեջ բազմաթիվ ծնողք փոքրիկ երեխաներ թողնելով գիշերանց խույս տվին, այն հույսով որ անմեղ երեխաներուն վրա գութ կունենան մնացողները:

Պժնկերտ գյուղեն Ալե անուն քյուրդ կին մը յուր դրացի կնոջ հետ համաձայնելով յուր դեռ հոգևարք չափահաս զավակը ի միասին կհոշոտեն և կուտեն: Ուրիշ մը գետ կնետեր յուր տղան, ուրիշ մը փողոցներու մեջ ոսկոր կը փնտրե ուտելու»[1]: Այս նամակին հաջորդեցին այլ թղթակցություններ: 1880 թ. փետրվարի 8-ի, 19-րդ համարում «Մշակը» «Ո՞ւմը դիմենք» խորագրով հոդվածով կոչ արեց օգնել Արևմտյան Հայաստանի, հատկապես Վասպուրականի սովյալներին[2]: Դրամը, հագուստը, դեղորայքն սկսեցին տեղալ «Մշակի» խմբագրատան գլխին[3]: Կազմակերպվեց նաև առաքումը Վասպուրական:

Վասպուրականի սովահար ազգաբնակչությունը, սովամահությունից փրկվելու համար, թափվել էր քաղաք, շատերն ապրում էին վանքերի գավիթներում, շատերը բաց երկնքի տակ: Դրամն արդեն առատ էր, սակայն պարենամթերք գտնելը, պատրաստելը և տեղափոխելը դժվար էր: Մ. Խրիմյանը հանձնարարեց տներում հաց թխել և պատրաստի վիճակում բաժանել գաղթականներին[4]: Հանձնաժողովը բարեխղճորեն, օր ու գիշեր մեկ արած, կռվում էր սովի ու հիվանդությունների դեմ, մեկ հայ փրկելը մեծ հայրենասիրություն էր համարվում: Հանձնաժողովի աշխատանքից գոհ էր Կ. Կամսարականը և հաճությամբ այդ մասին 1880 թ. մայիսի 24-ին գրում էր Թիֆլիս Գր. Նիկողոսյանին[5]: «Վանը սովի կենտրոնն էր,- գրում է Հ. Առաքելյանը: - Շրջակա գավառներից ահագին բազմությամբ մարդիկ էին թափվում Վան, հաց էին պահանջում: Տեղական Մասնաժողովը մեծ գործ պիտի կատարեր, քան մյուս գեղերի մասնաժողովներ: Փող կար, բայց սովատանջը հաց չէր գտնում. այդ պատճառով մասնաժողովը մեծ դժվարություններ հաղթելով գնեց ալյուր և թխած հաց էր բաժանում: Պաշտոնական տեղեկությունները ցույց են տալիս, որ առաջին անգամ 14.441 մարդ օգնություն են ստացել մասնաժողովից, և այդ թիվը գնալով շատացել է: Բայց և այնպես, 2000-ից ավելի մարդ սովամահ եղան: Սովյալների

[1] ԳԱԹ *Հ. Առաքելյանի* ֆոնդ, վավ. 182, էջ 36-37, տե՛ս նաև *Երվանդ Տեր-Մկրտչյան,* Գանձեր Վասպուրականի, հ.1-ին, էջ 187, տե՛ս նաև «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», 1885, էջ 14, 16:

[2] Տե՛ս «Հովիվ» 1910, N 9, էջ 136-137, տե՛ս նաև «Մշակ», 1880, N 19:

[3] Նույն տեղում:

[4] «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», էջ 70:

[5] «Հովիվ», 1910, N 9, էջ 137:

մերկությունը ծածկելու համար բաժանվեցան հասարակ կտորներից կարած զգեստներ: Բազմաթիվ անտեր որբերի համար ապաստարան հիմնվեց Վանի մոտ գտնվող Սալանապատի վանքում»[1]:

«Վանա մասնաժողովոյն աշխատանքը ուրիշ մասնաժողովներեն տարբեր և առավել ծանր կերպարան մ'առավ, երբ ամեն կողմն արմտիք պակասելով,- գրում է Հ. Աճեմյանը,- բոլոր շրջակա գյուղերից մերձավոր գավառաց նոթի և նոթյալ ժողովուրդը խուռն բազմությամբ քաղաք դիմեցին և չքավորաց և կարոտելոց հետ խառնվելով մասնաժողովոյն շուրջը բոլորեցան սրտաճմլիկ աղաղակներով»[2]: «Տեղեկագրի» խմբագրական կազմն առանձնակի հարգանքով է ներկայացնում Սեդրակ Տեր-Սարգսենցի աշխատանքը, որը, չնայած երկու անգամ հրաժարական տվեց ատենադպրի պաշտոնից, 1880 թ. հուլիսին գնաց Կ. Պոլիս, «Կենտրոնականին» զեկուցեց դեպքերի ընթացքի մասին, սակայն վերադարձին շարունակեց աշխատել նույն եռանդով: Նա 1881 թ. վերջին, հավաքելով ողջ նյութը պատրաստեց Վասպուրականի մասնաժողովին վերաբերող փաստաթղթերը և կազմեց ընդարձակ հաշվետվություն: Այդ հաշվետվությունը հետագայում մտավ ընդհանուր տեղեկագրի մեջ:

Մ. Փորթուգալյանը 1879-1880 թվականներին ժրաջան աշխատում էր սովյալների հանձնաժողովում, միաժամանակ «Միացյալի» գլխավոր աշխատակցությունը վարում, Տկանցի բացակայությունների պահերին փոխարինում նրան՝ իբրև ատենադպիր[3]: Արձանագրվում է Գ. Գլճյանի (ատենապետ), Մ. Մարությանի ազնիվ գործունեությունը, իսկ «Հայրիկի հայրագութ հովանավորությունը, որ յուր սրտին և լեզվին զորությամբ զամենեսին ի գործ և հոգնության կմղեր և յուր անձնական ջանյուքն ալ ամենեցուն բարի օրինակ կհանդիսանայր»[4]:

Վանը 1880 թ. դարձել էր սովահար գաղթականների, հաց և օթևան աղերսող հայ, նաև քուրդ ու թուրք գեղջուկների հավաքավայր: Ձրի սնունդ ու նույնիսկ հագուստ ստանալու հույսը փաշայանիստ քաղաքն էին բերում հեռավոր գյուղերից, լեռնածերպերին թառած «օբաներից» «կարոտյալներին»: Սրանք ապրում էին սանիտարական անմաքուր պայմաններում, սովից հյուծվել էին, այդ իսկ պատճառով էլ սովին անմիջապես հաջորդեցին և նրան զուգընթաց տարածվեցին ամենատարբեր հիվանդությունները, հատկապես բծավոր տիֆը: Հանձնաժողովը, նրա նախագահ Մ. Խրիմյանը սարսափի մեջ էին: Նրանց թափած ջանքերն ապարդյուն էին անցնում, հիվանդությունների, մասնավորապես տիֆի դեմ այդ պայմաններում միայնակ պայքարելը դժվար

[1] ԳԱԹ, *Հ. Առաքելյանի* ֆոնդ, վավերագիր 182:
[2] *Հայկ Աճեմյան,* նույն տեղում, էջ 534, տե՛ս նաև «Տեղեկագիր», էջ 70-71:
[3] «Տեղեկագիր», էջ 70-71:
[4] Նույն տեղում:

էր, անհնար, առանց բժշկական անձնակազմի և դեղորայքի: Ծայր առավ բժշկական օգնություն աղերսող հեռագրերի տարափը դեպի Թիֆլիս ու Կ. Պոլիս: Այս դեպքում էր, որ ոտքի կանգնեց հայրենասեր, հայասեր հայ կինը:

1880 թ. հունիսին Թիֆլիսից Վան տեղափոխվեց բժիշկ *Հովսեփ Շիշմանյանը*՝ արդեն իբրև գրող ու լրագրող ճանաչված Ծերենցը: Սա իր հետ բերեց Անդրկովկասի, հատկապես Երևանի, Բաքվի, Թիֆլիսի հայ կանանց հանգանակության միջոցներով գնված դեղամիջոցները, և սկսվեց բառի իսկական իմաստով մաքառումը տիֆի դեմ[1]: Սակայն նա միայնակ չէր կարող կռվել չարաբաստիկ այդ ախտի դեմ, ուստի երկու ամիս գործելուց հետո գնաց Կ. Պոլիս: Մայրաքաղաքում եղած Սեդրակ Տեր-Սարգսենցի ջանքերով կենտրոնական հանձնաժողովը զինվորական բժիշկ Միհրան Վարդազարյանին, ամսական 2000 դուրուշի աշխատավարձ նշանակելով, վեց ամիս ժամանակով գործուղեց Վան[2]: 1882 թ. սկզբներին, ժնևի համալսարանի բժշկագիտական ֆակուլտետն ավարտելուց հետո, նախ Կարին, ապա Վան է գալիս թիֆլիսեցի *Բագրատ Նավասարդյանը,* հայ ազատագրական շարժման ապագա այն անվանի ղեկավարներից մեկը, որի կերպարը գեղարվեստական մեծ վարպետությամբ կերտել է Րաֆֆին «Կայծեր» վեպում, նրան դարձրել իր Ասլանը և ուսման ուղարկել ոչ թե Շվեյցարիա, այլ Ամերիկա: Նավասարդյանի՝ Վասպուրական մուտք գործելու պահին, սովն արդեն վերացել էր, և հիվանդությունները պակասել էին: Այնուամենայնիվ, Բ. Նավասարդյանն իր լուման ունեցավ Վասպուրականում և Բարձր Հայքում ժողովրդի առողջական վիճակը բարելավելու գործում[3]:

Վասպուրականի հանձնաժողովը, առանձնապես նրա նախագահ Մ. Խրիմյանը, խորապես մտահոգված էին նաև վիլայեթում ապրող աշխատավոր, սակավազոր քրդերի, ասորիների և թուրքերի ճակատագրով: Այս հայացքը միայն սովի պարագայով չէր պայմանավորված: Դեռևս պատրիարքության տարիներին Վասպուրականի արծիվը մտմտում էր հակասուլթանական, ճնշված ժողովուրդների համատեղ պայքարի մի ծրագիր, որը բյուրեղացված ձևով հրապարակ բերվեց Բեռլինի կոնգրեսից հետո և, կարծես թե, հավանության արժանացավ ոչ միայն արևմտահայ ու արևելահայ առաջավոր քաղաքական գործիչների, հրապարակախոսների կողմից, այլև դարձավ գրողների, հատկապես Րաֆֆու վիպագրության, մասնավորապես «Կայծեր» վեպի քննարկման նյութ: Ստեղծվեց մի ձևակերպված կոնցեպցիա, այն է.

[1] Տե՛ս ԳԱԹ, *Հ. Առաքելյանի* ֆոնդ, վավ. 182:
[2] Տե՛ս «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», Կ. Պոլիս, 1885, էջ 73:
[3] «Հայրենիք», 1939, N 5, էջ 143:

Հայաստանում ապրող բարբարոս, անկիրթ ցեղերի, հատկապես քրդերի շրջանում քաղաքակրթության սերմեր ցանել, կրթել նրանց, հումանիստական գաղափարներ ներարկել նրանց մեջ և, վերջիններիս հետ դաշինք կռելով, թույլ չտալ, որ սուլթանական կառավարությունը կարողանա սոցիալական նույն վիճակում ապրող տարազգի աշխատավորությանը տարաբաժանել, լարել, թշնամացնել մեկը մյուսի դեմ: Հայ-քրդական, հայ-ասորական և հայ-թուրքական հակասուլթանական դաշինքի կոփման գաղափարի կենսագործումը հանգիստ չէր տալիս Խրիմյանին սովի տարիներին: Եվ նա սկսում է գործել այդ ուղղությամբ, պահը հարմար գտնելով գործել զգուշավորությամբ և առայժմ նրանց օգնելու գնով համակրանք շահելով:

Այդ ծրագրի իրականացման մի դրվագ է ներկայացնում Հայկ Աճեմյանը, որն իր ձեռքի տակ եղած, առայժմ մեզ անհասանելի նյութերից քաղելով փաստեր, գրում է, թե սովի տարիներին «Խրիմյանը ինչպես միշտ, այժմ ալ ամեն ազգի թշվառներու և սովահարներու հանդեպ ցույց տվավ յուր *մարդարարական* վսեմագույն զգացումները և անխտիր օգնության հասավ հայ, ասորի, եզդի, քյուրդ և տաճիկ սովյալներուն:

Վանի կուսակալ Շքոտրալի Հասան փաշան օր մը տաճիկ հարուստներուն նախատելով ըսած էր,- Դուք չեք ամչնար, որ կթողուք թուրք և քյուրդ սովյալները հայերեն հաց ու դրամ մուրան: Մի՞թե ձեր մեջ եղբայրասիրության զգացմունքը մեռեր է:

Ներկաներեն հասակավոր և հարուստ թուրք մը կպատասխանե.

- Փաշա էֆենդի, ներեցեք համարձակությանս, որ ըսեմ թե, եթե Դուք Խրիմյանի մարդասիրությունն ունենայիք և մենք հայերու եղբայրասիրությունը, այն ատեն թուրք ու քյուրդ սովյալները փոխանակ հայոց թաղերը լեցվելուն, հոս կուգային:

Օր մը խումբ մը քուրդեր կներկայանան Հայրիկին և կհայտնեն, որ կուզեն *հայ քրիստոնյա* դառնալ, որպեսզի սովեն փրկվին: Այս առաջարկը խորապես կհուզե Հայրիկի սիրտը, նա պահ մը կլռե և ապա կպատասխանե.

- Ես կկարգադրեմ, որ այսուհետև քյուրդերն ալ հաց և դրամ ստանան մեր «Սովելոց հանձնաժողովեն», այս մասին ապահով եղեք: Կմերժեմ կտրուկ կերպով քրիստոնյա դառնալու ձեր առաջարկը, վասնզի գիտեմ, որ սովն է խոսողը և ոչ թե սիրտը»[1]:

Արսեն Թոխմախյանը 1881 թ. Թիֆլիսում կարդացած իր դասախոսության մեջ դեպի այլազգիներն ունեցած Մ. Խրիմյանի վերաբերմունքի մասին հայտնում է, թե. «Վանա մասնաժողովի նախագահը Խրիմյան Հայրիկը, ոչ միայն հայերի, այլ բոլոր քրդերի, ասորիների, եզդիների և տաճիկների Հայրիկն է միանգամայն, որի մեծ անունը վայրենի ցեղերի մեջ պատկառանք և համակրություն է ազդում և հայ ազգը նրանց աչքում ահագին հեղինակություն է ստացել»[1]:

Մ. Խրիմյանի կենսագիրներից «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը գրում է. «Պատմում են, որ մի քյուրդ գալիս է սովի ժամանակ Հայրիկի մոտ և հայտնում է, որ ինքը ուզում է քրիստոնյա դառնալ: Հայրիկը հասկանում է, որ քաղցածությունն է հարկադրում քյուրդին այդպիսի ցանկություն արտահայտել, ուստի պատասխանում է նրան. «Այժմ սով է, շատ խառնված ենք, սովից հետո կգաս, կտեսնենք քո խնդիրը: Քյուրդը մնում է շվարած, և Հայրիկը հրամայելով որ նրան հաց տան, հասկացրեց քյուրդին և մյուսներին, որ աղետի ժամանակ մարդասիրությունը վաճառքի հանել չի կարելի»[2]:

Քրդական և ասորական «համայնքներին» օգնություն ցույց տալու, նրանց մեջ լուսավորություն տարածելու, մասնակիցներին կրթության տալու մասին վանեցի Համբարձում Երամյանը և Երվանդ Տեր-Մկրտչյանը վկայում են, թե. *«Սովելոց տեղական հանձնախմբի* նախագահ Խրիմյանը հայերուն հետ մեկտեղ կնպաստավորե ամենեն անտեսված և սովի մատնված քյուրդերն ու ասորիները ու հավասարապես առանց խտրության անոնց ալ ձրի կբաշխե սերմանելի ցորեն, հաց, դրամ, հագուստ և այլն, ազատելով հազարավորներ սովի ճանկերեն:

Խրիմյանը միևնույն ժամանակ պահանջ կդնե, որ Բարձրագույն Դուռն ալ քյուրդերու կրթության հոգ տանի: Իր խորհրդով Վանի մեջ քյուրդ և եզդի մանուկներ Մ. Փորթուգալյանի դպրոցը կընդունվին, հայ աշակերտներու համահավասար իրավունքներ վայելելով»[3]:

Դեպքերի ականատես Համբարձում Երամյանը վկայում է, թե «Կառավարությունը հազիվ թե ձևի համար մի քանի ամիս ապուր (թրքական չորպա) բաշխեց կառավարական պաշտոնատան շուրջ խառնվող թուրք, քյուրդ և գնչու ամբոխին, իսկ թուրք հարուստները գրեթե անտարբեր հանդիսատես կմնային հանդեպ ծայրահեղ թշվառության: Հայերը, *սակայն, ձեռք կարկառող կամ դռները բախող թուրք սովահար մուրացկաններն անգամ ձեռնունայն չէին ճամբեր և եկեղեցիներու թաղ. խորհուրդները հայերու կկարգեին, իրենց դիմող թուրք ընտանիքներուն ալ հավասարապես օրական ռոճիկ սահմանած էին* (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[4]:

1880 թ. նոյեմբերին Խորեն Խրիմյանի տեսչությամբ Վարագայում բացված երկրագործական վարժարանի առիթով գրված մի փաստաթղ-

---

[1] *Հայկ Աճեմյան,* Հայոց Հայրիկ, էջ 531:

[1] *Արսեն Թոխմախյան,* Հայրենիքի պահանջներ և հայ գյուղացին, հրապարակախոսություն, էջ 82:

[2] ԳԱԹ, *Հ. Առաքելյանի* ֆոնդ, վավ. 182, էջ 36:

[3] *Երվանդ Տեր-Մկրտչյան,* Գանձեր Վասպուրականի, հ. I, էջ 186:

[4] *Համբարձում Երամյան,* Հուշարձան Վան-Վասպուրականի, էջ 123:

թում ասվում է. «Հանձնաժողովս սիրահորդոր ընդունեցավ այդ առաջարկը և հանձն առավ խնդրված գումարը վճարել մինչև չորս տարի և յուր կողմե դրած պայմաններուն մեջ գործույն կանոնավորությունը միայն կպահանջեր, իսկ 20 աշակերտաց թիվը 24-ի հասնել կառաջարկեր, *չորս հատ ալ այլադավաններե և այլազգիներե առնելով* (ընդգծումները մերն են - Հ.Ղ.): Խրիմյան ընդունած էր նաև ռուսական փոխհյուպատոս պ. Կոնստանդին Կամսարականի օժանդակությունը, որ 100 ոսկի յուր անձնականեն նվիրելով ավելի օգնություններ ևս հանձն առած էր, և երկոցուց հորդորանոք 250 ոսկի ալ Վանա գլխավոր ազգայիններե հավաքյալ էր»[1]: Խրիմյանի, Կամսարականի ընդունած այդ չորս սաները քուրդ և եզդի էին, որոնք կրթություն ստանալու էին հայոց լեզվով:

Արսեն Թոխմախյանը «Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին» իր հրապարակախոսական գրքույկի էջերում անդրադառնում է հայ-քուրդ, հայ-ասորի փոխհարաբերությունների խնդրին, հայ մտավորականությանը կոչ է անում հետևել Մ. Խրիմյանի օրինակին, մերձեցման եզրեր ստեղծել թեկուզ և զարգացման «ստորին աստիճանի» վրա գտնվող մահմեդական ժողովուրդների հետ, հոգ տանել նրանց կրթելու, լուսավորելու մասին, վերջիններին նախապատրաստել ու մասնակից դարձնել ապագա ազատամարտերին: Նա արձանագրում է, թե 1880 թ. բացվեց Վարագա վանքի երկրագործական վարժարանը, որտեղ տեղացիների հետ մեկտեղ դասավանդում էին Գերմանիայում կրթված երեք ուսուցիչներ և «այդ ուսումնարանի ամենագովելի կողմն այն էր, որ նա իր դռները բաց է արել բոլոր դավանությանց և կրոնների համար. իր կանոնադրությամբ նա պարտավորված է այլադավան աշակերտներ ձրիապես ընդունել, *որոնց թվում մի քուրդ պատանի արդեն ընդունված էր:* Այդ միակ միջոցն է վայրենի ցեղերը քաղաքակրթելու և ինչո՞ւ Միացյալ ընկերության ուսումնարանների դռները միայն հայերի համար են բաց»[2]:

Թոխմախյանի այս կոնցեպցիան արդեն արմատավորվում էր գրեթե բոլոր հայ առաջավոր մտավորականների հրապարակախոսական ու գեղարվեստական գործերում, կողմնակիցների պատկառելի թիվ գտնում «Միացյալ ընկերությունք Հայոցի» ղեկավար մարմնի մեջ, և սրանցից հատկապես Փորթուգալյանը հետևեց երկրագործական վարժարանի օրինակին, ընդարձակեց իր վարժարանի ընդունելության ազգացանկը, հայ մանուկների հետ կրթության տալու հայտարարություն արեց մահմեդական այլազգիներին:

1881 թ. դեկտեմբերի 23-ին Մարկոս Նաթանյանը, Վանից Շվեյցարիա-Բազել, անվանի բանահավաքին Գարեգին Սրվանձտյանցին գրած իր ծավալուն նամակում տեղեկացնում էր, թե 1881 թ. դեկտեմբերի 21-ին քաղաքի կենտրոնական վարժարանը սկսեց դասերը, «իսկ Տփխիսի մեջ Փորթուգալյանը Մշակին հրատարակել տված է թե յուր Վարժարանին մեջ պիտի ուսուցանե նաև անգլերեն, ռուսերեն, քուրդերեն և մանկավարժություն և աշակերտ պետք է ընդունի ոչ միայն *հայ, այլև ասորի, թուրք, քյուրդ, եզիդի, չերքեզ, աֆշար մանչեր, թաթար, թուրքմեն և այլն բոլոր ազգերեն, զի միջազգային-քաղաքական հանգամանք պիտի ունենա եղեր իմ վարժարանն ըսեր է...* (ընդգծումները մերն են-Հ.Ղ.)»[1]: Ակնհայտ է, որ հայ և հարևան ժողովուրդների փոխհարաբերությունների կարգավորման, հետամնաց ազգերին կրթությամբ արևմտահայերին մերձեցնելու պրոբլեմը լրջորեն մտահոգում էր Վասպուրականի եռյակին Խրիմյանին, Փորթուգալյանին, Կամսարականին: Նրանք այժմ, ունենալով դրամական միջոցներ, գործելու ժամանակավոր հնարավորություններ, հաջող ու անհաջող փորձեր էին կատարում: Դժբախտաբար, այդ անդրանիկ ծիլերը հետագայում Համիդի ու նրա դրածոների ձեռքով ոչնչացվեցին, և երկու ազգերի համար այնքան անհրաժեշտ համամարդկային գաղափարները իրողության չվերածվեցին: Դրան խանգարում էր նաև թուրքական Բ. Դուռը:

Թուրքական «Օսմանլի», Կ. Պոլսում ֆրանսերենով լույս տեսնող «Ստամբուլ» և այլ պարբերականները, կատարելով սուլթանի և նրա պալատականների կամքը, միջոցների առջև կանգ չառնելու գնով, ջանալով խաթարել կայսրության մեջ ապրող մահմեդական և քրիստոնյա ազգերի փոխհարաբերությունները, նպաստելով մեկ ազգ, մեկ պետություն ստեղծելու Թուրքիայի համաձուլման քաղաքականությանը, հայ մտավորականությանը սպառնալիքներ էին կարդում քրդերի մեջ քրիստոնեություն տարածելու, նրանց զավակներին հայկական դպրոցներ ընդունելու համար: «Մշակի» շուրջ համախմբված արևելահայ ու հատկապես արևմտահայ մտավորականները դիմագրավում էին այդ հարձակումներին, հրապարակախոսական հոդվածներով և գործնական քայլերով շարունակում էին իրողության վերածել հայ-քուրդ մերձեցման ծրագիրը: 1880 թ. Կարինի վիլայեթի Քղի գավառում «Ազգանվեր հայուհյաց» ընկերությունը օրիորդաց դպրոց բացեց, որտեղ կրթություն ստանալու համար դիմեցին քրդուհի 100 մանուկներ[2]:

Այդ առիթով «Օսմանլի» թերթը հայտարարեց, թե «Բուլղարները թեև

---

[1] «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», էջ 105:
[2] *Արսեն Թոխմախյան,* Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, էջ 81:

[1] Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, *Սրվանձտյանցի* ֆոնդ, երկրորդ բաժին, վավերագիր 775, թերթ 7:
[2] Տե՛ս «Մշակ», 1880, N 211:

ապստամբում են թուրքերի դեմ և սպանում թուրքերին, բայց հայերը նրանցից վտանգավոր են, որովհետև կուլտուրական ճանապարհով են կլանում քրդերին»[1]:

Գր. Արծրունին պատասխանեց այդ հարձակումներին «Մշակում» տպած հոդվածներում, Ռաֆֆին «Կայծեր» ծրագրային վեպում, Ա. Թոխմախյանն ու Մ. Փորթուգալյանը հրապարակային դասախոսություններում, Մ. Խրիմյանն ու Մ. Սարըյանցը պրակտիկ գործերով:

Արևմտահայ մտավորականները ծրագրեցին գավառում *որբանոց հիմնել*, սովի հետևանքով ծնողներին կորցրած երեխաներին ապաստան տալ, նրանց ոչ միայն ապահովել պարենով ու հագուստով, այլ նաև կրթել ու դաստիարակել «նոր գաղափարներով»: Որբանոցի և ընդհանրապես կրթական օջախներ հիմնելու նպատակով Վանում, Մ. Խրիմյանի առաջարկով, 1880 թ. կազմվեց նոր *Խնամատար* ընկերություն, որը ջանքեր թափեց որբանոց բացելու համար, սակայն հաջողություն չունեցավ: Փորձ արվեց Վանում հիմնել «Բրդի ու բամբակի» գործարան, որտեղ պիտի աշխատեին ծնողազուրկ, արդեն աշխատունակ դարձած որբերը: *Խնամատարը* կազմեց զեկուցագիր, այն Կ. Պոլսի Կենտրոնական հանձնաժողովին ներկայացրեց և գործարանը հիմնելու համար պահանջեց 300 օսմանյան լիրա: Կենտրոնական հանձնաժողովը բժիշկ Միհրան Վարդազարյանին հանձնարարեց տեղում հանգամանքները մանրազնին հետազոտել և ներկայացնել. «սակայն Ս. Տ. Սարգսեան էֆենտիի հրաժարականը և հղված ծրագրին անբավականությունը հարկեցուցին խնդիրը վերստին Վանա մասնաժողովն դարձնել, այլ սա հետզհետե իր պաշտոնե ձեռնթափ լինելով պահանջված պատասխանները և տեղեկությունները երկարեց և գործն ալ հետևաբար ի մոռացությունս ինկավ»[2]:

Խրիմյանի նախագահությամբ գործող Վասպուրականի մատակարարությունն ուսումնասիրում էր վիլայեթի տնտեսական կարողությունները, արևմտահայ մտավորականության ուշադրությունը սևեռում էր գորդյան հանգույցի ժողովրդի տնտեսական վիճակի վրա և, հիմնավորապես սովի կրկնման վտանգը կանխելու նպատակով, առաջարկում էր «նոր դեղամիջոցներ»: Նրա օրինակին հետևեցին մյուս մասնաժողովները, որոնք «Պոլսի կենտրոնի հետ եկան այն եզրակացության, թե ժողովրդի ձեռքը ապահովության զենք տալու համար պետք է տնտեսական բարվոքումներ մտցնել: Իսկ այդ նպատակով արտասահմանից կարտոֆիլի սերմ բերել տվին, նրա մշակումը ներքին Հայաստանում տարածեցին, փորձեր եղան նաև աֆիոնի, եգիպտացորենի,

[1] «Մշակ», 1880, N 166, տես նաև *Զոն Կիրակոսյան*, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), էջ 43:

[2] Տես «Տեղեկագիր սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովոյ», Կ. Պոլիս, 1885, էջ 99-100:

ճակնդեղի մշակման, բայց այդ փորձերը հաջողություն չունեցան»[1]:

Հայաստանի, մասնավորապես Վասպուրականի, տնտեսական զարգացման վերաբերյալ խելացի շատ առաջարկների հեղինակը Խրիմյանն էր, գավառում ծնված, ժողովրդի կյանքին ու կենցաղին լավատեղյակ մի անձնավորություն, որի ծրագրերն այս օրերին կարող էին իրականացվել, քանի որ հանգանակությամբ դրամի ու այլ միջոցների հեղեղ էր թափվում Արևմտյան Հայաստան, իսկ Թուրքիան էլ, երկնչելով Ռուսաստանից, մասամբ նաև եվրոպական տերությունների դեսպաններից, մաղձը մթերում էր, բայց առայժմ լռությամբ էր նայում այդ բոլորին:

Հայերն օգտվում էին ժամանակավորապես ստեղծված պայմաններից: Դրանցից ամենից առավել օգտվեց Մ. Խրիմյանը: Նա վաղուց էր մտածել այն մասին, թե ժողովրդի վիճակը բարվոքելու համար անհրաժեշտ էր ստեղծել կանոնավոր գյուղատնտեսություն, զարկ տալ արդեն սմքելու դատապարտված տնտեսական ուժերին, քաղաքում կատարելագործել արհեստներն իրենց բազմաճյուղությամբ, հաստատուն դրամագլուխ հավաքելով, ժողովրդին, հատկապես գյուղատնտեսությանը վարկ տրամադրելով, նրան ազատելով հայ, հրեա, թուրք վաշխառուների անխիղճ ճիրաններից, արտասահմանից գյուղատնտեսական մեքենաներ գնելով դրանք ներդնել երկրագործության մեջ, Կյուրոսի ու Շամիրամի ժամանակներից գործող արորն ու բահը փոխարինել մեքենաներով[2]: Սակայն ակնհայտ էր նաև, որ այդքան մտահղացումները, բաղձանքները, ազգափրկչական ծրագրերը միանգամից իրողության վերածելը, այն էլ բռնապետական, զգրելի օրենքներով կառավարվող մի երկրում, պետականազուրկ մի ժողովրդի կողմից, նրա մտավորականության հակադիր, երբեմն իրարամերժ կարծիքների պայմաններում, իհարկե անհնարին էր: Ծրագրերի մեծ մասը ծնվեց ու մահացավ, հրապարակվեց ու մոռացության տրվեց, սակայն մաքառումների, զոհողությունների գնով որոշ նախաձեռնություններ իրողության վերածվեցին: Դրանցից էր Վանի *երկրագործական վարժարանի* հիմնումը, ակնառու մի սկզբնավորություն, որը կոչվելու էր ապագայում հիմնավոր փոփոխության ենթարկել երկրի տնտեսությունը:

Վանի մատակարարությունը 1880 թ. սովելոց Կենտրոնական հանձնաժողովին առաջարկեց Վասպուրականի երկու վանքերում (Վարագա ս. Նշան և Հեքյարիի ս. Բարդուղիմեոս) բացել երկրագործական վարժարաններ: Մ. Խրիմյանը հիմնավորում է, թե. «Վարագա ս. Նշանի նշանավոր վանուց մեջ երկրագործական վարժարան մը հաստատե-

[1] ԳԱԹ, *Հ. Առաքելյանի* ֆոնդ, վավ. 182, թերթ 40:

[2] Նույն տեղում, էջ 41-42:

լու, որ կրկնակի օգուտ պիտի առաջ բերեր, թե նույն վանուց ընդարձակ և բարեբեր, ճշմարիտ և օրինակելի ագարակի վերածելով և թե հողագործական արհեստը զարգացնելով և ամեն գավառներու մեջ նույնը զարգացնելու կարող աշակերտներ հասցնելով»[1]: Վարագը հայտնի էր հանուր հայության իր նշանավոր ժառանգավորաց վարժարանով, որն իրավամբ ասիական փոքրիկ Վենետիկ անունն էր ստացել, դարձել հայկական գետնի վրա առաջին պարբերականի տպարանատեղը, կրթել, աճեցրել և Հայաստանին հասցրել ազատաբաղձ արծիվներ բանահավաքներ, գրողներ, բանաստեղծներ, եկեղեցական գործիչներ, լրագրողներ, ուսուցիչներ, երաժիշտներ: Խրիմյանն այժմ փոխում էր վարժարանի ձևն ու բովանդակությունը, դրա համար Կ. Պոլսի կենտրոնական հանձնաժողովից պահանջելով 180 օսմանյան լիրա, 200 ոսկի ռուբլի էլ պիտի ստանար կովկասահայերից: Ըստ տնտեսական հաշվեկշռի, 380 ոսկի լիրայից 200-ը պիտի ծախսվեր աշակերտներին սնունդ և հագուստ տալու վրա, 120 ոսկին պիտի վճարվեր երկրագործության ուսուցչին, 60-ը մյուս ուսուցիչներին: Կ. Պոլսի կենտրոնն առանց առարկության ընդունեց առաջարկը, չորս տարվա պայմանաժամանակով դրամ տրամադրեց առաջարկելով աշակերտների թիվը 20-ից հասցնել 24-ի, ընդ որում, մյուս 4 աշակերտներին ընդունել «այլադավաններից ու այլազգիներից»: Որոշումը ոգևորություն առաջ բերեց վանեցիների մոտ, մանավանդ, երբ իր անձնական միջոցներից 100 ոսկի նվիրեց Կ. Կամսարականը, նրան հետևելով, 250 ոսկի էլ հավաքեցին «Վանի գլխավոր ազգայինները»[2]:

Վանի երկրագործական վարժարանը մեծ խանդավառությամբ բացվեց 1880 թ. նոյեմբերի 1-ին: Վարժարանի ընդհանուր տեսուչ կարգվեց Գերմանիայում համալսարանական կրթություն ստացած Խորեն Խրիմյանը, գյուղատնտեսության գծով Կովկասից տեսուչ հրավիրվեց Նշան Մադաթյանը՝ օգնականներ ունենալով Դավիթ Շաքարյանին, Մարտիրոս Տեր-Մկրտչյանին, Սահակ Այվազյանին, Կարապետ Փիլիպոսյանին[3]: Վարժարանի գործունեությունը մեծ ուրախություն էր առաջ բերել ամենուր: Կ. Պոլսից Վարագ էին ուղարկում հագուստ, ուտեստ և՛ աշակերտներին, և՛ նույնիսկ ուսուցիչներին: Մանչեստրի հայ գաղութը գնեց և Տրապիզոնի վրայով Վարագ ուղարկեց հնձող մեքենա: Վարագը մինչ այդ տեսել էր Գուտենբերգի հայտնագործած հրաշքը՝ տպագրական մեքենան, այժմ ընդունում էր և՛ ի տես, և՛ ի գործածություն գյուղատնտեսական այլ մեքենաներ, որոնք պիտի հեղաբեկեին ոչ միայն նահանգի տնտեսական կյանքը, այլև ժողովրդի աշխարհայացքը՝ ամենահիմնականը, որին ձգտում էին և որին հասան Վասպուրա-

[1] «Տեղեկագիր...», Կ. Պոլիս, 1885, էջ 104:
[2] Նույն տեղում, էջ 105:
[3] Տես «Գանձեր Վասպուրականի», էջ 187:

կանի առաջավոր գործիչները: Վարժարանին կից վանք-դպրոցում գործում էր, ընդարձակվում տպարանը՝ թուղթ և տպագրական այլ պիտույքներ ստանալով կենտրոնական հանձնաժողովից:

Վարագա ժառանգավորաց դպրոցը, հատկապես նրա հենքի վրա ստեղծված երկրագործական վարժարանը, գյուղական դպրոցներ էին իրենց հավաքագրած ու կրթած աշակերտներով, դասավանդող ուսուցիչներով, ծրագրված առարկաներով: Այնտեղ հիմնականում ուսուցանում էին հայրենագիտություն, բնական գիտություններ, հայ մատենագիտություն, հայկական հնագիտություն: Երկրագործականն ուներ գործնական պարապմունքների մեծաքանակ ժամեր, որոնք անց էին կացվում դաշտում, աշակերտությանը հնձել և կալսել էին ուսուցանում՝ Արևմտյան Եվրոպայի հայ գաղթօջախներից նվեր ստացած հնձող, քամահար մեքենաների վրա: Աշակերտներին տանում էին ամառային էքսկուրսիաների, ճանապարհորդության պահին նրանց ծանոթացնում էին Վասպուրականի հնամենի անցյալի խոսուն վկաներ մնացած կանգուն և կիսավեր հայկական բերդերին ու վանքերին, ազգագրությանը, պատմում երկրի ընդերքում պահված հանքային հարստությունների մասին, ցույց տալիս հանքաքարերի տեսակները, հանքավայրերը: Ակնհայտ էր, որ երկրագործականով աշակերտներին միայն գիտելիքներ տալը չէր նրանց նպատակը, այլ «առանց մեծախոսությունների» ***մանուկ հոգիների մեջ ներարկել սեր դեպի հողը, երկիրը, երկրագործությունը, հետևապես՝ պետականազուրկ Հայրենիքը»***[1]:

Վանի երկրագործական վարժարանը, ցավոք, երկար կյանք չունեցավ: Դրամական և այլ միջոցները սուղ էին, նվիրատվությունները միշտ չէ, որ կանոնավոր էին տեղ հասցվում, հարկադրաբար ուսուցիչների աշխատավարձն աստիճանաբար պակասեցվում էր, առաջանում էին դժգոհություններ, տպագրական և հնձող մեքենաների խավարամիտ հակառակորդները գաղտնի ու բացահայտ դավեր էին լարում ազգանվեր այդ հիմնարկության ու նրա ղեկավարների դեմ: Վանի փաշան, Եելդզ Քյոշքից հրահանգավորված, նախկինում ունեցած իր շիլ հայացքը կտրուկ փոխում էր բացահայտ հարձակումների: Նյութական ու բարոյական նման անբարենպաստ պայմաններում դիմագրավելը դարձավ անհնարին, և 1883 թ. հոկտեմբերին Երկրագործական վարժարանը գոցվեց, որն իր գոյության երեք տարիների ընթացքում Վարագը դարձրել էր աշխատանքի, դաստիարակության և մտավոր կենսունակության կենտրոն՝ Արևմտյան Հայաստանին տալով, թեկուզ թերավարտ, բայց և այնպես, ժամանակի եվրոպական երկրագործության

[1] Տե՛ս «Հայրենիք», 1924, N 10, «Հեղափոխությունը և հոսանքներ Վասպուրականում» հոդվածը:

հիմունքներին տեղյակ, հայրենի բնությունն անմնացորդ սիրող, Հայրենիքի կարոտով տենչացող սաներ[1]: Հայաստանի բնությանը խորը ծանոթությունը, օրգանական կապն ու անմիջական շփումները ժողովրդի հետ գիտակցական այնպիսի հզոր սաղմեր էին ձգել նրանց հոգում, որոնք այդ պահին, առավել ևս հետագայում, աճելու էին, խորանալու և անվարան հենարան էին դառնալու ազգային-ազատագրական պայքարին[2]:

Հայաստանում սովը չքացավ 1882 թ. աշնանը միայն, որի համար Վանի պառավներն այս անեծքը մրմնջացին. «Սով... երթալդ ելնի գալդ չեղնի... կրունկդ էս կողմ»[3]:

Այսպիսով, 1880 թ. Կ. Պոլսում հիմնադրված «Սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովն» իր մասնաճյուղերն հաստատելով Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր վիլայեթներում, նյութական հսկայական օգնություն ցույց տվեց սովի ու թշվառության ճիրաններում գալարվող գավառահայությանը, մասամբ նաև քուրդ, ասորի ու թուրք աշխատավորությանը: Հանձնաժողովը դրամ, սննդամթերք, հագուստ, դեղորայք, նույնիսկ գրենական պիտույքներ էր հանգանակել Կ. Պոլսի, բուն Հայաստանի ունևոր հայերից, Թիֆլիսի, Բաքվի, Զմյուռնիայի հայ հարուստներից, օգնության կարոտ ազգային ու օտարազգի ազգաբնակչությունից, Ռուսաստանի զույգ մայրաքաղաքներից՝ ռուսաց կայսրից, Զմեռային պալատի ռուս պաշտոնյաներից, ցարական բանակի հայազգի գեներալներից, Արևմտյան Եվրոպայի ու Ասիայի սև ու սպիտակամորթ, քրիստոնյա ու մահմեդական հավատապաշտ գահակալներից: Հանգանակության այդ առատ հունձքը, ուղղակի թե անուղղակի զգացնել տվեց, որ «Հայկական հարցը միջազգային դիվանագիտության քաշքշուկի առարկա դառնալով», Բեռլինի կոնգրեսում անգլիական «զոհասեղանի վրա ողջակիզվելուց» հետո, միջազգային առաջավոր հասարակայնության վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ դրական էր, և կարծես թե, յուրաքանչյուրն իր նման, յուրաքանչյուրը յուրովի, իրեն մեղսակից էր զգում՝ թե անպաշտպան, քրիստոնյա, հնամենի ու հարուստ կուլտուրա ունեցող մի ժողովրդի թողել էր բախտի քմահաճույքին, կամովին նրան կրկին հանձնել թուրքական բարբարոսական տերության վրեժխնդիր քաղաքականությանը: Առաջավոր մարդկությունն արդեն 60-ական թվականներին արյան հոտ էր առնում Թուրքիայից, Արևմտյան Հայաստանից և օգնության այդ ձևով ու մեթոդներով կարծես իր մեղքերի քավության միջոցներ էր որոնում: Ուրեմն Արևմտյան Հայաստանի սովյալներին՝ հեղեղի նման, առանց

[1] «Գանձեր Վասպուրականի», էջ 187:
[2] «Հայրենիք», 1924, N 10:
[3] *Հայկ Սմեմյան,* Հայոց Հայրիկ, էջ 534:

հետին մտքի, թափվող նյութական, ֆիլանտրոպիստական օգնությունը, առերևույթ, տնտեսականից զատ, իր ընդերքում ուներ քաղաքական խորը բովանդակություն:

Հայաստանի սովյալներին օգնություն կազմակերպող հանձնաժողովին աշխարհով մեկ սփռված հայկական մեծ ու փոքր բեկորների ցույց տված շնորհակալ վերաբերմունքը մեկ անգամ ևս ապացուցեց, որ ազգակազմավորման պրոցեսը հայ ժողովրդի մոտ արդեն ապրում էր իր բուռն զարգացման շրջանը, և 1870-ական, հատկապես 80-ական թվականներին արևմտահայության դաժան ճակատագիրը հուզում էր հանուր հայությանը: Այն սկզբում նյութական ու բարոյական օգնության ձեռք էր մեկնում, իսկ քիչ հետո ապագա ազատամարտերի արծիվներ դարձող երիտասարդները, խանդավառվելով Ռաֆֆու վեպերով, Պատկանյանի բանաստեղծություններով, Խրիմյանի կոչերով ու Գր. Արծրունու հրապարակախոսությամբ, պիտի անցնեին սահմանը, գային *երկիր՝* Արևմտյան Հայաստան և ծնունդ տային *հայդուկային շարժմանը:* Լեռնածերպերին թառած զինավառ հայդուկի, մահմեդական վերնախավի անպատվաբեր արարքներից հայ օրիորդի ու կնոջ պատիվը պաշտպանող «հայկական կամավոր զինվորագրյալների» կազմակերպման սկզբնաձայրը մի հաստ թելով աղերսված էր «Սովելոց հանձնաժողովների գործունեությանը»:

Ա. Թոխմախյանը, շրջելով ողջ Հայաստանը, Պարսկաստանը, Անդրկովկասը, անթել հեռագրի պես երկիրը կապելով հայ գաղթօջախների հետ, հետազոտելով գյուղացիության սոցիալ-քաղաքական կացությունը, ոգևորված «Սովելոց հանձնաժողովի» գործունեությամբ, հետևյալ կերպ է ներկայացնում դեպքերի զարգացման ընթացքը. «Շատ ժամանակ չէ, որ մեր գյուղացիները ազգային մտքերով ոգևորվել են, սիրտ առել և սկսել են պաշտպանել իրենց կյանքը և կայքը: Սովից առաջ այդ զգացմունքը չէր նշմարվում, այդ միջոցին նրանք իրենց ընկճած գլուխը խոնարհած անտարբեր նայում էին հափշտակություններին և զրկանքներին, ինչպես մի ամենօրյա պատահարի վրա: Այժմ գյուղացին հասկացավ, որ իր գոյությունը նշանակություն ունի, նա այնքան հողին հավասարված չէ, նա բարձր է իր հարևան ազգերից, նա մի հզոր պաշտպան ունի, որ իրան կփրկե վտանգից, ինչպես որ փրկեց սովից. նորա աչքի առաջ մեռան իր դրացի քրդերը, տաճիկները, որոնք թագավորություն ունեին: Այդ իրական դեպքով նա համոզվեց, որ իր ազգը թագավորական ազգիցն էլ հզոր է և դրանով ակնածելի դարձավ դրացիների աչքում:

Եվ այս փոքրիկ գործով, սովածներին տրված օգնության համար եմ ասում, ազգը մեծ և անբավ արդյունք ունեցավ, մեռելական թմրութենից ետ կանչեց իր որդոց, հուսո հոգի տվեց նրանց. որչափ ուրեմն անսահման արդյունք կառաջանար, եթե գյուղացու երևակայածի համեմատ, մի կազմակերպյալ մարմին լիներ, և այդ մարմինը տա-

ին մի քանի անգամ իր անդամների համար մտածելու նստեր:

Ես խնդրում եմ առանձին ուշադրություն դարձնել, ուսումնասիրել ամեն կողմից ազգայնության արմատ հանդիսացող գյուղացու կյանքը, *ճանաչել նորան, ճանաչել նորա բնական աշխարհը, որին Հայրենիք են ասում* (ընդգծումները մերն են- Հ. Ղ.): Եվ ամոթ է այն ազգին համար, որ ձգտում է քաղաքակրթության աստիճանների վրա բարձրանալ, չգիտնալ, թե ինչ է ինքը և ինչ է իրան պետք»[1]:

Սովի առիթով հանգանակվեց պատկառելի չափերի հասնող մի գումար: Այն բաշխվեց նաև Արևմտյան Հայաստանի «կարոտյալ եղբայրներին», սակայն հայ մտավորականները, միայն սովյալներին օգնելով, չբավարարվեցին: Հավաքված փողի մի ստվար մասը ծախսվեց բազմաթիվ դպրոցներ, որբանոցներ, արհեստանոցներ բացելու, հիվանդանոցներ հիմնելու վրա: Վանը և Կարինը մտավոր ու քաղաքական անանախադեպ վերելք ապրեցին, դարձան Հայաստանի, ժամանակի առումով, մտավոր աշխույժ կենտրոններ: Վարագա դպրոցի, Կեդրոնական վարժարանի ու Կարինի Սանասարյանի, Եվդոկիայի կրթարանների շուրջը խմբվեցին ռուսական ու արևմտաեվրոպական համալսարանական կրթություն ստացած հայ երիտասարդ մտավորականներ, կրթության ու լույսի հետ մեկտեղ ժողովրդին ազատագրվելու հույսեր ներշնչեցին: Գավառը Արևմտյան Հայաստանը, ձայն հնչեցրեց Վանի ու Կարինի լեռներից, գավառը խնդիրներ դրեց գաղութահայ մտավորականության առջև, գավառը դարձավ հանուր հայության ակտիվ հետաքրքրության առարկան: Դեպի Երկիր ձգվող հայ մտավորականները տեղերում, հայաստանցիների հետ հիմք դրեցին ընդհատակյա ազատագրական խմբակների ու կազմակերպությունների:

Սուլթանական կառավարությունն իր գործակալների միջոցով, արգոսի աչքերով հետևելով դեպքերի զարգացման ընթացքին, սկզբից ևեթ կասկածելով սովյալների օգնության շարժմանն ու նրա կազմակերպիչներին, 1879-1880 թվականներին դեռևս անզոր էր կանխել, արգելել այդ հոսքը, քանի որ նոր էր չորացել Բեռլինի կոնգրեսում ընդունված որոշումների թանաքը, իրար հետ մրցակցող Անգլիան ու Ռուսաստանը շռայլ խոստումներ էին տալիս արևմտահայությանը, և սուլթանը, թունավոր մաղձը մթերած, ոչ միայն անտարբեր լռությամբ էր ակնդրում դեպքերի զարգացման ընթացքին, այլև նույնիսկ ինքն էր թույլատրում հանգանակությունը: Շարժումը հնարավորություններ էր ընձեռում գավառ մեկնող մտավորականության և ժողովրդի միջև կապեր ստեղծելու, շոշափելու գավառահայության տրամադրությունները, նրան սովից փրկելուց, կրթության հարցում ձեռք մեկնելուց հետո նաև զինելու և հանելու թուրքական զավթիչների դեմ:

[1] *Արսեն Թոխմախյան,* Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, էջ 10-11:

Կյանքը



Աղթամար կղզին, Վանա լիճն իր շրջակայքով

Բեռլինի վեհաժողովի դասերը, սուլթանական Բ. Դռան դանդաղկոտությունն Արևմտյան Հայաստանում բարեփոխություններ անցկացնելու ուղղությամբ, Մ. Խրիմյանի ու յուրայինների կոչերը սկսում են գավառահայությանը, նրա լուսավոր հատվածին մտահոգել դեպքերի հետագա զարգացման ընթացքով: Դրությունից ելք էր որոնվում, որին իբրև դեղատոմս էին առաջադրվում կազմակերպված քաղաքական զինված գոտեմարտերը: Այսօրվա գրիչը վաղն ատրճանակ էր ծնում, գիրքն ու դասախոսությունները հրացանավորների հոծ զանգվածներ:

Պատերազմին հաջորդող դիվանագիտական մրցապայքարից հուսախաբված հայ ժողովրդի առաջավոր զավակները մի պահ հուսահատության պահեր ապրեցին, սակայն դա մի պահ էր միայն: Հայաստանում բռնկված սովը համահավաքեց ազգությունը. «Հանկարծ փլատակների հրկիզյալ մոխրի միջից փյունիկի պես վերանորոգվեց հայը, թոթափելով իր դարավոր ստորացնող թմրությունը, վեր կացավ և պաշտպանվելու, զենքի պետք զգաց: Նրա պանդուխտ ազգակիցները, տեսնելով նրանց անհավասար կռվի ճգնաժամը, ամեն կողմից օգնության հասան: Հիմարվեց, ապշեց թշնամին, տեսնելով այս ոսկյա հոսանքը, որ ամեն կողմից Հայաստանի մեջ կթափվեր: Սիրտ առավ մինչև այն ժամանակ իրան աներեր համարած ժողովուրդը և սկսեց պաշտպանվել հափշտակողների դեմ. ... թշնամին, որ առաջ ուրախ արհամարհում էր, սկսեց պատկառիլ և սարսափել»[1]:

1880 թ. սկզբներից Հայաստանի գրեթե բոլոր գավառներում կազմակերպվեցին մասնաժողովներ, մատակարարություններ, խմբեր, քննիչներ, որոնք պաշտոնական թույլտվության փաստաթղթերով իրավունք ստացան շրջել իրենց հատկացված վայրերը, նույնիսկ այլ գավառներ, ստուգել ժողովրդի վիճակը, կազմակերպել օգնություն: Բ. Դուռը կասկածում էր հայերի նման շարժունակության, իրար հետ կապվելու պրոցեսի վրա, սակայն անկարող էր մեղադրանքի գործող ապացույցներ փնտրել և հարկադրված այդ պահին միայն դիտորդի դեր ստանձնեց:

Անկասկած է, որ «Սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովը» անուղղակիորեն հնարավորություն ստեղծեց Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը տարածելու, ընդհատակյա խմբակներ հիմնելու համար: Պատահական չէր, որ Վանի, Կարինի, Ալաշկերտի, Եվդոկիայի գաղտնի խմբակների բոլոր ղեկավարներն ու կազմակերպիչները «Սովելոց հանձնաժողովի» ոչ միայն շարքային, այլև ղեկավար անդամներն էին. Մ. Խրիմյան, Մ. Փորթուգալյան, Ա. Թոխմախյան, Մ. Սարոյան, Ս. Տեր-Սարգսենց, Հ. Աստուրյան, Կ. Նշկյան, Խ. Կերեքցյան և այլոք: Ահա այն աստեղաբույլը, որը սովյալներին օգնող հանձնաժողովի գլխավորնե-

[1] *Արսեն Թոխմախյան,* Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, էջ 66:

րից էր, միաժամանակ Վանի «Սև խաչ», Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունների հիմնադիրը: «Սովելոց հանձնաժողովի» միջոցով սրանք գաղտնաբար կապվում էին իրար հետ թե երկրի ներսում և թե դրսում: Կապն առավել ամրացավ Թիֆլիսի ու Կ. Պոլսի, Երևանի ու Վանի, Մոսկվայի ու Կարինի միջև: Առանց հանձնաժողովի անդամների անվան տակ գործելու, հազիվ թե թուրքական ու քրդական հրոսակախմբերի թալանի ու կողոպուտի պայմաններում հնարավոր լիներ շրջել այդքան վայրեր և նման գործարար կապեր հաստատել արևելահայերի և արևմտահայերի, բուն արևմտահայերի միջև: Հանձնաժողովի աշխատանքի ամենագնահատելի կողմերից մեկն այս էր, որը ոսկե տառերով փորագրվեց հայ ժողովրդի նոր պատմության լուսավոր էջերում:

Գլուխ երրորդ

Հայ ազատագրական ոգորումները XIX դարի 80-ական թվականներին

1. Շարժման նախադրյալներն ու դրդապատճառները

ՈՒԼԹԱՆԱԿԱՆ բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած անհավասար ու հերոսական գոյամարտերի պատմության ընդհանուր շղթայի կարևորագույն, միաժամանակ ինքնատիպ օղակներից են նախորդ դարի 80-ականները, որոնք, չնայած իրենց դարակազմիկ վաղեմությանը, ցայսօր պատշաճ ուշադրության չեն արժանացել, ինչպես Մայր Հայրենիքի, այնպես էլ Հայկական Սփյուռքի մեծաթիվ պատմաբանների կողմից: Մինչդեռ այդ տասնամյակում էր, որ նոր ու գերադրական աստիճանի բարձրացավ հայ ազատագրական, համազգային շարժման գաղափարաբանությունը, սերտացան կապերը Հայաստանի զույգ հատվածների միջև, իրար մերձենալով, գիրկընդխառն պայքարի մարտադաշտ իջան հայաշխարհն ու գաղթաշխարհը, ամենուրեք սկսեցին թևածել Հայոց ազատ, անկախ, միասնական պետականության վերընձյուղման կոչերը, որոնք, քայլ առ քայլ բյուրեղանալով, ապագա գործողությունների ծրագրերի կերպարանք ստացան:

Այսօր օրինական հարց կարող է առաջանալ, դեպքերին անծանոթ ընթերցողն իրավունք ունի տարակուսելու, թե եթե տվյալ շրջափուլն այդքան կարևոր էր մեր ժողովրդի պատմության համար, հարուստ հերոսապատումներով ու դրամատիկ պահերով, ապա ինչպե՞ս է եղել, որ այն գրեթե դուրս է մնացել պատմաբանների տեսադաշտից, չեն ստեղծվել ոչ միայն խնդրին նվիրված կապիտալ աշխատություններ, այլև գոնե ծավալուն ու ծանրակշիռ հոդվածներ: Պատասխանը պարզ է, միանշանակ: Դրան խոչընդոտել են և ներքին, և արտաքին բազ-

մաթիվ ուժեր, հատկապես՝ իրական պատկերը ծռմռող թուրք ռեակցիոն պատմաբանները, իրար հետ գործակցած *Անկարան ու Բաքուն:* Սրանք, եթե սկզբում իրենց կեղծարարությունը իրողության էին վերածում գաղտնածածուկ եղանակով, ապա 1988 թ. ծավալված ղարաբաղյան հայրենանվեր, արդարամիտ, պահանջատիրական ու համաժողովրդական շարժումից ի վեր, ջրի երես դուրս եկան և միասնաբար սկսեցին գաղափարական առճակատումը:

Դժբախտաբար, հայ ազատամարտի պատմության օբյեկտիվ շարադրանքին մեծ վնաս են հասցրել նաև անցյալի և առօրյա հայ *պահպանողականները,* հատկապես *ծախլիկությամբ տառապող կուսակցական այն պատմաբանները,* որոնք իրենց հույսերը միայն ռուսական հեղափոխության հաղթանակի հետ կապելով, ազգայինը զոհել են սոցիալ-դասակարգայինին, իրողությունը՝ գռեհիկ սոցիոլոգիային: Ժամանակին ծավալված ներկուսակցական անպտուղ գաղափարամարտերը հետագայում խանգարել են ճշմարտության բացահայտմանը, մանավանդ երբ իշխանությունը մեկ կուսակցության ձեռքն անցնելուց հետո, վերջիններս ձգտել են որքան հնարավոր է նսեմացնել մյուս կուսակցությունների դերը, նրանց ճակատին խարանելով այնպիսի պիտակներ, որոնք այնուհետև խոչընդոտ պիտի դառնային աջն ու ահյակը պարզելուն: Փորձենք, նախ, ուրվագծել այդ պրոցեսը, քանզի նման հնարավորությունը միայն մեր օրերում է ընձեռվել:

Անցյալ դարի 80-ական թվականները հայոց բազմադարյան ու արյունաներկ պատմության քառուղիները մտան իբրև *նախակուսակցական* պայքարի տասնամյակ, որի հորձանուտներում, իբրև այդ շարժման օրգանական շարունակությունը, բնականոն ձևով, հերթականությամբ ծնունդ առնելով, շռինդով հրապարակ իջան *ազգային քաղաքական երեք կուսակցությունները:* Սրանք իրար լրացնելով, շատ դեպքերում իրար հակադրվելով, տարբեր դիրքերից, ամենատարբեր ձևերով ու մեթոդներով գլխավորեցին հայ ժողովրդի ազատագրական, հեղափոխական պայքարն՝ ուղղված օսմանյան բռնատիրության, երբեմն էլ՝ ցարական ինքնակալության դեմ:

Քրիստոնյա հպատակ ժողովուրդների ուծացումով այլևս չբավարարվելով, պանիսլամիստներն ու պանթյուրքիստները դարավերջին ձեռնամուխ եղան ջարդերի բացահայտ քաղաքականությանը, որը և հայկական ազգային-քաղաքական կուսակցություններին հարկադրեց ոչ թե հմայվել համաշխարհային հեղափոխության խաբուսիկ պրոցեսով, այլ մտահոգվել սեփական ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելու, սրատող զենքին զենքով դիմագրավելու խնդիրներով:

Տվյալ շրջափուլում հայ ազատամարտերը նախապատրաստվում էին, գաղափարապես սնվում հիմնականում բուն Արևմտյան Հայաստանում, տաճկահայ գաղթօջախներում: *Հետևաբար, խորապես սխալվում են այն հեղինակները, վերջիններիս կրկնող ու*

պատմությունը ծուռ հայելու մեջ ներկայացնող ժամանակակից թուրք կեղծարարները, որոնց կարծիքով սուլթանական բռնապետության դեմ սկսված հայկական շարժումները կազմակերպեցին կովկասահայերը:

Բնավ չանտեսելով արևելահայության ցույց տված օգնությունը, միաժամանակ արդարամտությունը, ճշմարտախոսությունը, անհերքելի փաստերի առկայությունը պարտադրում են ասելու, որ 80-ականների *հայ ազատամարտը կազմակերպվեց երկրում,* գլխադաս ունեցավ արևմտահայ մտավորականությանը, կրոնական ու քաղաքական գործիչներին: Շարժման ողջ ծանրությունն իրենց ուսերի վրա տարան Վասպուրականի արծիվները, Սասնո ու Տարոնի առյուծները, Բարձր Հայքի հայրենանվեր վրիժառուները: Բավական է նկատել, որ հայդուկային շարժմանը մասնակցած հոծ բազմության մեջ արևելահայերը փոքր տոկոս էին կազմում:

Անկարայում ծվարած թուրք պատմաբանները զգալով, որ իրենց նախորդներն, ի վերջո, մի օր կկանգնեն պատմության դատաստանի առջև, բազմաթիվ աշխատանքներում զարգացնում են այն սարքովի կոնցեպցիան, թե Թուրքիայում հայերն ի սկզբանե ապահով կյանք ունեին, ապրում էին մահմեդականներից բարվոք պայմաններում: Նրանց կարծիքով արևմտահայությանը Թուրքիայի և թուրքերի հետ թշնամացրին կովկասահայերը, մասնավորապես, «կոմիտեջիները» (նկատի ունեն քաղաքական կուսակցություններին): Նրանք նենգափոխում են պատճառներն ու հետևանքները, ամաչում են (եթե ամաչել կարողանան) ասել, որ ինքնապաշտպանական կռիվներն սկսվեցին ժողովրդի համբերության բաժակը բերնեբերան լցվելուց, ծրագրվող ու կենսագործվող ջարդերից հետո միայն: Նրանք մոռանում են, ավելի ճիշտ, մոռացության են տալիս, որ արևմտահայերի նկատմամբ Համիդ մարդասպանի ոճրագործության, Հայաստանի քաղաքական համակարգի ձևակերպման տասնամյակներին հայ հայդուկներն ու քաղաքական կուսակցությունների վարիչները կամ դեռ ծնված չէին, կամ էլ տակավին թոթովախոս մանուկներ էին:

Անկարան ու Բաքուն, ձեռք ձեռքի տված, նենգափոխում են մեր ժողովրդի պատմության ամենապայծառ էջերը, խիղճը աճուրդի հանած նրանց «պատմաբանները», առատորեն ֆինանսավորվելով գերագույն իշխանությունների կողմից, հրապարակ են նետում բազմաթիվ աշխատություններ, որոնք հրատարակվում են նաև եվրոպական լեզուներով և եղելության անտեղյակ օտարազգի ընթերցողներին, համաշխարհային հասարակայնությանը ապակողմնորոշում, համոզում, որ եղած գողգոթաների մեղավորները *ոչ թե թուրքերն էին, այլ՝ հայերը:*

Նրանք որոշակի հաջողության են հասնում, քանզի հայ պատմաբանների ստվար ու տաղանդավոր բանակը բավարարվում է միայն

հայոց լեզվով հրատարակած մեծ ու փոքր գործերով և, հապաղելով, բանակռիվ է մղում թուրքերի դեմ մեր լեզվով, որը, բնականաբար, անհասկանալի է և եվրոպացի, և ռուս ընթերցողին: Ավելին. ***մենք դեռևս մեր մեջ վերջնականապես չենք վճռել հարցերը, միասնական կոնցեպցիա չենք մշակել, որից հեշտությամբ օգտվում են գաղափարական մեր հակառակորդները:***

Հայաստանն այսօր բռնել է ***անկախության գործընթացը զարգացնելու մայրուղին:*** Այդ ճանապարհը, բնականաբար, լայն պողոտա չէ և ոչ էլ ժողովրդին շքերթի առաջնորդող ծաղկածածկ մի բուրաստան: Մ. Նալբանդյանի բնութագրությամբ մեր ժողովրդի անցած և այսօրվա ճանապարհը ևս փշեծածկ է, քարքարոտ, լի խոչընդոտներով, որոնք զգացնել են տալիս ոչ միայն հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը լուծելիս, այլ նաև գաղափարական ճակատում: Ուստի այժմ առավել, քան երբևէ, տնտեսության ու քաղաքական համակարգում դեռևս վտանգավոր տիրակալ մնացած քաոսային վիճակը վերացնելուն զուգընթաց, լուրջ ուշադրություն պիտի դարձնել գաղափարական մարզում, առավել ևս, պատմագիտության բնագավառում թագավորող արատներն ու խոցերը արմատախիլ անելու վրա: Պրոցեսն սկսված է, բայց բավարար չէ:

1988 թ. փետրվարին միանգամից պայթած, տարիներով նախապատրաստված ղարաբաղյան մաքուր ու անաղարտ շարժումը, հայ ժողովրդի ***այն օրերին միասնական,*** համակամ ըմբոստացումը, Ազատության սրբացված հրապարակում մեր միտինգները, մտավորականության ու ժողովրդի կարծիքների սերտաճումը հետագա գործողությունների ծրագրեր ունենալու հրամայական պահանջ առաջադրեցին: Մի քանի ամիս անց միայն պարզվեց, որ մենք ավելի շատ առաջնորդվել ենք էմոցիաներով անտեսելով գաղափարական մեր հակառակորդների «կարողությունները»: Չնայած պատմաբանների հսկա բանակի առկայության, ժամանակին չենք ստեղծել ծանրակշիռ աշխատություններ Արցախի մասին: Չկային մեր իրավացիությունը, պահանջատիրությունը հիմնավորող համապատասխան աշխատություններ հրատարակված գոնե ռուսաց լեզվով: Շտապ կազմվեց մի գրքույկ և, թեկուզ փոքր տպաքանակով հրատարակվելով, դարձավ լայն ընթերցողի սեփականություն: Մամուլում լույս տեսան հայոց լեզվով գրված բազմաթիվ ու արժեքավոր հոդվածներ, որոնք այդպես էլ անհաս մնացին նույնիսկ խորհրդային ընթերցողին:

Զարմանալին այն է, որ դեմոկրատական ուժերի իշխանության գալուց, Հռչակագրի ընդունումից հետո նմանատիպ հոդվածներն էլ չքացան նույնիսկ թերթերի և ամսագրերի էջերից: Դժվարանում եմ ասել ո՞ւմ մեղքով, բայց և այնպես, կարծես խռովկանք է նկատվում հանրապետության կառավարության և ստեղծագործ մտավորականության

միջև, մի տեսակ խզում, որը կարող է ծանր հետևանքներ ունենալ մեր ժողովրդի համար:

Հայ մտավորականությունը պարտավոր է ոչ մի որպես չիջնել գաղափարական պայքարի բեմահարթակից, գրչով ու խոսքով մեր մշակույթը պաշտպանել պատմության կեղծարարների հարձակումներից, սատար կանգնել նորաստեղծ կառավարության կիրառած քաղաքական համակարգին, ի հարկին նաև նրան ցույց տալ թերացումները, սխալները, օգնել դրանց շուտափույթ սրբագրմանը:

Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության դեմոկրատական խորհրդարանը, նրա կազմած նախարարների խորհուրդը, վարչապետն իր տեղակալներով, ազգին կոչելով ***միասնության,*** պիտի անսան ժողովրդանվեր մտավորականության ձայնին, միշտ գիտակցելով, որ ***ոչ մի երկրում հեղափոխությունը հաջողության հասնել չի կարող, եթե նրա կողքին կանգնած չեն գրողներն ու հրապարակախոսները, պատմաբաններն ու փիլիսոփաները, լեզվաբաններն ու տնտեսագետները:*** Տվյալ մասնագիտություններին տիրապետող պատգամավորների թիվը դեռևս բավարար չէ այսօր մեր առջև ծառացած բարդ հարցերը լուծելու համար: Մենք իշխանության հասանք համազգային պայքարի գնով, մենք պարտավոր ենք այդ իշխանությունը պաշտպանել ազգովին, համակամ, միասնաբար: Առճակատումը վտանգներով լի է, մանավանդ իր հետևանքներով:

Հետևաբար, չնայած ուշացած է, բայց ուշ չէ, որպեսզի պատմաբաններին ***պետական մակարդակով*** հանձնարարություն տրվի գրելու հայ ազգային-ազատագրական շարժման պատմությունը, որպեսզի վերանայվեն ու մերժվեն ամբողջատիրության տասնամյակներին հրապարակ նետված թեժաթույն և օրապակաս բազում կոնցեպցիաները, սրբագրվեն ազգային-քաղաքական կուսակցությունների գենեզիսին, անցած ճանապարհին, դասակարգային պատկանելությանը տրված նախկին գնահատականները, չվարանելով, իհարկե, քննադատության կատարած սխալներն ու բացթողումները նշանախեց դարձնելուց: Ժամանակի հրատապ պահանջն է նախ հայոց լեզվով ստեղծել լայնակտավ մենագրություններ, այդ հարցերի պատմությունը դարձնել լուրջ քննարկումների նյութ, մշակել միասնական այնպիսի կոնցեպցիա, որը կարողանա լրջախոհ ու փաստարկված պատասխան տալ գաղափարական մեր հակառակորդներին, օգնել երիտասարդության հայրենասիրական ճշմարիտ դաստիարակությանը:

Կոլեկտիվ նման աշխատությունները, մեզանում քննություն բռնելուց հետո միայն, մեծ տպաքանակով պետք է հրատարակել ռուսաց, եթե հնարավոր է նաև արևմտյան լեզուներով, դրանով իսկ ռուս և համաշխարհային ընթերցողին, պետական ու հասարակական գործիչներին դուրս բերել ***ապակողմնորոշված վիճակից:*** Այդ գործում մեզ օգնության ձեռք պետք է մեկնեն հայկական Սփյուռքի այն մտավորա-

կանները, ովքեր, տիրապետելով լեզուներին, ոչ միայն իրենց աշխատությունները, այլև Հայաստանում ստեղծված լավագույն գործերի ընտրանին թարգմանելով ու հրատարակելով եվրոպական լեզուներով, լուրջ նպաստ բերած կլինեն հայոց պատմության կեղծարարների դեմ մղված պայքարում:

Կրկնում ենք՝ հրատապ այդ խնդիրների լուծման գործի կազմակերպումը պետք է իր ձեռքը վերցնի Հայաստանի նորաստեղծ Հանրապետության ղեկավարությունը, պատմաբաններին հանձնարարություններ տալուց, ֆինանսավորելուց զատ, հսկողություն սահմանի դրանց կատարման վրա, գիտակցելով, որ տնտեսական բնագավառում ստեղծված քաոսից դուրս գալն ավելի դյուրին է, քան գաղափարական ճակատում տիրապետող տարընթացությունների վերացումը:

Մի կարևոր հանգամանք ևս: Այսօր Հայաստանում հրատարակվում են մի քանի տասնյակի հասնող օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսագրեր, հոդվածների ժողովածուներ: Լրջախոհ բազում հետազոտողների կողքին հրապարակ են նետվել նաև միայն երեկ գրիչը բռնել սովորած այնպիսի հոդվածագիրներ, ովքեր, անփորձ ընթերցողներին իրենց կողմը գրավելու միտումով, ***հրատարակում են մեր գաղափարական անաղարտությանը վնաս բերող փոխադրություններ, չմտածելով, որ դրանք կարող են օգտագործվել օտարների կողմից:*** Զգաստության կոչելով նման թերթերի խմբագիրներին, միաժամանակ դիմում ենք մեր կառավարությանը մտահոգվել նման երևույթների կանխմամբ, մանավանդ որ այսօր, առավել քան երբևէ, մեզնից ուժերի միավորում է պահանջվում: Մահմեդական թե քրիստոնյա մեր հակառակորդները միասնաբար են պայքարի դուրս եկել Հայոց Հանրապետության ու նրա մտավորականության դեմ, իսկ հայ հետազոտողներս ջոկջոկված ենք գործում, գրչով իրար ենք թրատում, նորաթուխ հոդվածագիրներն էլ ամենաանխիղճ ձևով մրոտում, ոչնչացնում են անցյալի արժեքներն ***անխտիր:*** Մենք պետք է զգույշ լինենք, մտածենք, որ ***գրչով գրվածը կացնով վերացնել անհնարին է:*** Հետևաբար, առաջնորդվելով հարյուր չափիր, մեկ կտրիր ժողովրդական իմաստուն ասացվածքով, այնպես գրենք, որ վաղը դա չուղղվի մեր դեմ: Ժամանակն է, որ, թեկուզ ուշացած, բայց և այնպես, հայ մտավորականության բազմաճյուղ ընտրանին վեր կանգնի անձնական, սուբյեկտիվ շահախնդրություններից ու կրքերից և ***բարձրանա պետական մտածելակերպի:***

Մեր ժողովուրդը դարեր առաջ կորցրել էր իր պետականությունը, որի պատճառով էլ մտավորականության մեծ մասը անցյալում հեռացել էր համապետական մտածելակերպից: Այժմ մենք վերստեղծել ենք մեր ազգային պետականությունը, հետևաբար և մտավորականներս էլ պիտի ունենանք պետական մտածելակերպ, թղթին հանձնած յուրաքանչյուր տողով սատար կանգնենք ընդհանուրի շահի պաշտպանությանը,

առանց երկնչելու անձնականը զոհենք հասարակականին, մասնավորը համազգայինին:

Առաջնորդվելով ասուլիսներում բանավոր հաճախակի հնչած վերոհիշյալ սկզբունքներով, մենք կփորձենք համառոտակի անդրադառնալ հայոց պատմության մի դրվագին, որն ունի ոչ միայն գիտական կարևորություն, այլև քաղաքական այժմեականություն: Դրանք տասնիններորդ դարի 80-ականների ազատագրական շարժումներն են, որոնք կազմեցին այդ տասնամյակի ողջ հայկական ըմբոստացումների ողնաշարային հիմնամասը:

Վերոհիշյալ շրջափուլում գոյապահպանության համար հայ ժողովրդի մղած պայքարի ուժեղացումը մեծապես պայմանավորված էր թուրքական բռնատիրության վարած քաղաքականության առավել սաստկացմամբ, որից արդեն բացահայտորեն արյան հոտ էր փչում:

Զգալով իր գլխին կախված դամոկլյան սրի հերթական հարվածների ծանրությունը և դրանից խուսափելու անհնարինությունը, հայ ժողովուրդը ***հարկադրաբար*** դիմագրավելու հաջող ու անհաջող փորձեր էր անում, հիմնում ընդհատակյա հեղափոխական խմբակներ ու կազմակերպություններ, բալկանյան սլավոնների օրինակով, ծնունդ տալիս ***հայդուկային*** շարժմանը, բոլորովին չանտեսելով դրսաշխարհից ստացվելիք օգնության ակնկալիքները, կայսերահպատակ մյուս ազգերի հետ գործակցելը, ի վերջո հանգում էր այն հաստատ եզրակացությանը, թե ժողովուրդը ազատության կարող է հասնել հիմնականում սեփական ուժերի վրա կռթնած, հեղափոխական ընդվզումների միջոցով:

Դարձակետային, միաժամանակ ժողովրդի բախտորոշմանը կոչված նման իրադարձություններին, սակայն, նախորդել էին ռուս-թուրքական պատերազմը (1877-1878) եզերող Սան Ստեֆանոյի պայմանագիրն ու Բեռլինի կոնգրեսում չարչրկվելով ձևակերպված Հայկական հարցը: Միջազգային դիվանագիտության բավիղներում կյանքի կոչվելով գայթակղության քարի վերածված 61-րդ հոդվածն էր այդ, որը, եթե մի կողմից արևմտահայության աչքում ապավարկում էր մեծ տերությունների ղեկավարներին, ապա մյուս կողմից հայրենանվեր ու լայնահայացք մեր մտավորականությանը քաղաքականապես առավել հասունացնում էր, նրան նպատակամղում գործողությունների յուրատիպ ծրագրերի մշակման ու կիրառման:

Հետևաբար, Բեռլինի վեհաժողովում արևմտահայությանը վերաբերող որոշումները, իրապաշտ դիվանագիտության դիտարկմամբ փոքրարժեք փաստաթղթեր լինելով հանդերձ, միաժամանակ որոշակի կնիք դրեցին հայ քաղաքական մտքի վրա: Դարերով պետականազուրկ եղած հայ ժողովրդի դժնդակ կյանքում առաջին անգամ էր Արևմտյան Հայաստանում տիրող անտանելի իրավիճակը արժանանում քրիստոսապաշտ ու քաղաքակիրթ մարդկության ուշադրությանը, դիվանագի-

տական վիճասեղանի նյութի վերածվելով, սահմռկեցուցիչ փաստերի բարոյական ճնշման տակ, մեծ տերությունների ղեկավարներին հարկադրում, «մարդասիրությունից դրդված», ի լուր աշխարհի հանդիսավոր խոստումներ անել բարենորոգելու սուլթանի մականի տակ ճզմվող, հավատակից ու անպաշտպան ժողովրդի սոցիալ-քաղաքական կացությունը:

Բեռլինի վեհաժողովից արևմտահայությունը շոշափելի արդյունք չստացավ, սակայն, ինչ էլ որ ստացավ, ստացավ չմասնակցելով մեծ վայրիվերումների: Պատերազմի գոռ մարտերի ամիսներին, բացի Կովկասյան ռազմաճակատի բեմահարթակում Ռուսաստանին կամավորական ջոկատներ տալուց, հայ ժողովուրդը չհետևեց բալկանյան սլավոնների օրինակին: Նա վաղուց սպասված հարմար պահը չօգտագործեց, *ժամանակին* չընբոստացավ օսմանյան կայսրության դեմ, *հեղափոխական արյուն չթափեց:* Ժողովուրդն ու նրա առաջնորդները գերադասեցին պայքարի դիվանագիտական մեթոդները, և *այդ պայքարն էլ դիվանագիտական վերջավորություն ունեցավ նրանց համար:*

Ազգային դատի պաշտպանության առաքելությամբ, դիվանագիտական մուրիկության հանձնարարականով եվրոպական մեծ ու փոքր քաղաքներում դեգերող, այդ տերությունների ղեկավարների դռները հոգևորականի գավազանով դոփող ու խնդրագրեր բաժանող հայոց պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանը խորը հիասթափությամբ վերադարձավ Արևմուտքից: Եվրոպական մեծերի, շահը խղճից վեր դասող դրամապաշտ հարուստների հետ ունեցած շփումները գեղջկական միամտություն ու ազնվություն ունեցող մեծ վասպուրականցուն բերեցին այն համոզման, թե պայքարի միայն դիվանագիտական հնարները բավարար չեն անկախություն ձեռք բերելու համար: Նա միաժամանակ հասկացավ, որ վեհապետությունների խաչաձևվող շահախնդրությունները նեցուկ են դառնում օսմանյան կայսրության գոյատևմանը, հետևաբար թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատությունը հնարավոր է ձեռք բերել հիմնականում ընբոստացման ու արյան գնով:

Հայոց պատվիրակությունը, պարտված ու հուսախաբ, բռնեց Եվրոպայից տունդարձի ճանապարհը, քանզի «անզեն, անեղջյուր, անասպար էր» ներկայացել փոքր ազգերի ճակատագրով զբաղվող արևմտյան մեծերին: «Թուղթը, աղերսագրերը, բողոքարկումները *շատ փխրուն զենք* դուրս եկան իրավունքի պաշտպանության համար»: Հայ ժողովրդի նման եղանակով ներկայանալը միջազգային դիվանագիտության առաջ, այսինքն, հանպատրաստի ու աղերսողի վիճակում, նրան հարկադրեցին վերադարձին բանաձևել, թե *զենքն է զորավորը.* «Աշխարհը սորվեցավ այդ դասը, որի համար և ստացավ իր մրցանակը, սակայն դուն դեռ անուս մանուկ մնացիր»:

Խրիմյանի սովորած ու սովորեցրած դասը բալկանյան ազգերի գործադրած միջոցն էր, այսինքն, զինված ապստամբության դիմելը: Սակայն դրան պիտի նախորդեին ժողովրդի մտավոր զարթոնքը, գաղափարական նախապատրաստությունը, ամենակարևորը երկրի *տնտեսական զարգացումը:* Բեռլինից առաջ ու Բեռլինից հետո Հայոց Հայրիկը քայլ առ քայլ մշակում էր իր գաղափարաբանությունը հայկական հեղափոխության սկզբունքների ու եղանակների մասին, նույնիսկ քրիստոնեական վարդապետությամբ հիմնավորում, թե հեղափոխությունը Աստծո պատգամն է. նրա մատը խառն է ազգերի ազատագրության անկապտելի գործի մեջ: «Այդ նշանակում է հեղափոխությունը արդար է և իրավացի, հեղափոխությունը Աստծո առաքյալն է, որ կոչված է արդար կարգ վերահաստատել այս մեղավոր աշխարհում»:

Հայ ժողովրդին հեղափոխության կոչող մեծ վասպուրականցին, ռահվիրա դառնալով այդ ասպարեզում, պայքարի դիվանագիտական մայրուղուց արևմտահայությանն աստիճանաբար թեքում էր դեպի ազգային ճակատը, բնավ չանտեսելով դրսաշխարհից ակնկալվող օգնությունը, հույսը հիմնականում կապում էր սեփական ուժերի, ինքնագործունեության հետ:

Խրիմյանն արդեն միայնակ չէր: Հայոց ազատագրության հեղափոխական ուղին էր մատնանշում, ծրագրեր մշակում և գեղարվեստական խոսքի մեծ վարպետությամբ իր միլիոնավոր ընթերցողներին հրամցնում Ռաֆֆին: Հայրենանվեր գրողի ակնարկներն ու բանաստեղծությունները, վիպակներն ու վեպերը ներծծված էին քաղաքական միտումներով, որոնց մեջ հստակ ձևակերպում էին ստանում հայ ազատագրական պայքարի մեթոդները, ժողովրդի հետապնդած քաղաքական նպատակները, այդ նպատակին հասնելու ձևերը, տեղը և ժամանակը: Ռաֆֆին դարձավ ժողովրդին հեղափոխության ներշնչողներից մեծագույնը: Խրիմյանի հետ միասին «կառուցեց հեղափոխական հայություն», հունդեց սերմեր, որոնք ծլարձակելով առաջինը փարթամացան Վասպուրական աշխարհում: Իրենց փայլատակող գրչի ու հանճարեղ խոսքի զորությամբ, գրական ծածկալեզու կապերով արագորեն հեղաբեկեցին հայ հասարակական միտքը և ստեղծեցին գաղափարամերձ երիտասարդության մի ամբողջ փաղանգ, որոնց անունները, ամբողջատիրական վարչակարգերի սաստերի պատճառով, մինչև օրս էլ ըստ արժանվույն չեն ներկայացվել հայ ընթերցողին:

Արևմտյան Հայաստանում, հատկապես Վասպուրականում, ազատաբաղձ սերունդ պատրաստելու գործում մեծ են *Մ. Փորթուգալյանի* ծառայությունները: Նրա անունը սկզբում սերտորեն կապված է եղել Վանի դպրոցական-կրթական գործերի հետ: 1877 թ. Եվդոկիայից տեղափոխվելով Վասպուրական Փորթուգալյանը հետազոտեց նահանգում տիրող իրավիճակը, ծանոթացավ երիտասարդության մտավոր

կարողություններին, գրագիտական մակարդակին և երկու տարի անց այնտեղ հիմնեց իր հռչակավոր «Վարժապետանոցը»:

Փորթուգալյանի հաստատությունը, ժամանակի իմաստով, օրինակելի դպրոց էր դրված բավարար հիմքերի վրա: Այնտեղ սովորելու էին հրավիրված հիմնականում ունևորների երեխաները, որոնց գիտելիքներ էին տրվում գրականությունից, ազգային ու համաշխարհային պատմությունից, մասնավորապես ֆրանսերեն լեզվից: Տնօրենի պատրաստած սերունդը քաղաքականապես հասունացավ և տոգորվեց հայրենասիրական ոգով: Սրանք ֆրանսիական հեղափոխության գաղափարների մունետիկներն էին, «Դանտոնի ու Միրապոյի ծոռները», Փարիզի բարիկադների վրա կռվող հերոս կոմունարների գործի շարունակողները հայ իրականության մեջ:

Հիշյալ սաների ու նրանց գաղափարական առաջնորդի մասին Ա. Արփիարյանը հիացմունքով գրում էր. ***Փորթուգալյանը «ազատության շունչ մը փչեց ամբողջ Վանի վրա: Առանց հեղափոխության բառ արտասանելու*** հեղափոխական ***սերունդ պատրաստեց***» Վասպուրականում: Փորթուգալյանն իր բեղուն գրչով ու մարտատենչ խառնվածքով քննադատության նշանախեց էր դարձրել ոչ միայն օսմանյան պետության մեծամեծերին, այլև հայոց պատրիարքարանին: Սակայն բնավորությամբ նա մեղմ էր, բարի ու մարդկային: Ա. Արփիարյանը, 1876 թ. առաջին անգամ հանդիպելով նրան, հետագայում գրում է. «Գամված տեղս մնացի. կրակոտ, հաղթանդամ, գոռացող ոչ ոք կար: Նիհար, կարճահասակ, խարտյաշ, գառնուկի նման մեկը դեմս էր իբր Փորթուգալյան: Թուրք կառավարությունը, Ներսես պատրիարքը ահաբեկողը ա՞ս էր»: «Վարժապետանոցից» առաջ և նրան զուգընթաց գավառահայ «որբ և անտերունչ» երեխաներից արծիվներ էր պատրաստում Մ. Խրիմյանը Վարագա վանքում հիմնադրած «Ժառանգավորաց» վարժարանում: Հայրիկի դպրոցը շինական հաստատություն էր և իր բաղկացուցիչ տարրերով, և աշակերտներով ու ուսուցիչներով, մանավանդ դասավանդվող առարկաներով: Այնտեղ թևածում էր Խրիմյանի շունչը, մանուկ սերնդի հոգում անթեղվում Հայրենիքի ու հողի նկատմամբ պաշտամունք:

«Ժառանգավորացի» պատերի մեջ կրթություն ստացած սաները, խորապես ծանոթանալով երկրի տնտեսական դրությանը, օրգանապես կապվելով մայր ժողովրդի հետ, աստիճանաբար աճեցին, հասունացան և վստահելի հենարան դարձան հայկական հեղափոխության համար ոչ միայն Վասպուրականում, այլև հանուր հայաշխարհում: Դրանցից առանձնանում էր Արսեն Թոխմախյանը:

Թոխմախյանը «Ժառանգավորացի» անդրանիկ սաներից էր, բնիկ վանեցի, որի մասին ժամանակակիցները գրում են, թե նա քաջ ծանոթ էր Տաճկաստանի աշխարհագրությանն ու հայոց պատմությանը, տեղյակ էր ժողովրդի կրած զրկանքների, թուրք ու քուրդ վերնախավի

կողմից հայերին պատճառած ամենօրյա ողբերգությունների մասին: Նա կազմվածքով հաղթանդամ էր, ձայնով ազդու, խոսքի մեջ անկեղծ, և դեմքին միշտ փայլփլում էր վառվռուն ժպիտը: Բայց նա որքան հեզ ու համբերող էր սովորական առօրյայում, այնքան էլ հաստատակամ և անընկճելի էր պաշտպանած գաղափարների մեջ:

Խրիմյանի խորհրդով Թոխմախյանը թողնում է ուսուցչության սիրելի զբաղմունքը և որոշում արևմտահայերի «լացն ու կոծը» հասցնել ռուսահայ եղբայրներին: 1876 թ. սկսած, նա ծպտյալ ձևով բազմաթիվ անգամ անցնում է սահմանը, շրջում Անդրկովկասի հայաբնակ քաղաքներն ու գյուղերը, այնտեղ տարածելով Արևմտյան Հայաստանում հեծող հայ ժողովրդի կրած տառապանքների նորագույն լուրերը, լսողների սրտերը վառում հայրենասիրական կրակով: Կարճ ժամանակ անց նորից վերադառնում է ծննդավայր, ավելի թարմ տեղեկություններ հաղորդում սահմանից այն կողմ ապրող եղբայրների օգնության գալու պատրաստակամության և ծրագրած միջոցների մասին:

Թոխմախյանը, սակայն, գաղափարակիցների հաստատմամբ, եվրոպացի չէր, որն իր հայրենիքում պիտի պատգամեր արևմտյան գաղափարներ, ռուսաստանցի չէր, որ «երկրում» ցաներ սոցիալիզմի սերմեր: Նա գալիս էր Հայաստանից, հայկական գեղջկական խրճիթներից և հայոց գյուղացիական սրտերը մոտեցնում էր Թիֆլիսում, Բաքվում և Երևանում նստած հայ ունևորների, մտավորականության հայրենաբաղձ ցանկություններին:

Նա հայկական կենդանի լրագիր էր, շատերին անհասանելի լուրեր ամբարող ու բաժանող օրաթերթ, որն իր աներկչանք ու համոզեցուցիչ քարոզներով ունկնդիրներին ցույց էր տալիս կյանքի հեղաբեկման իսկական ու ամենակարճ ճանապարհը, այն է՝ գնալ դեպի ժողովուրդը, մտնել գեղջկական արևակարոտ խրճիթները, բախել նրանց քարացած սրտերի դռները, պատկերավոր լեզվով ամեն մի հայի հանձնարարություն տալ ապագայի գոռ մարտերում նրա անելիքների մասին, կոչերին արձագանքող երիտասարդությանը զինվորագրել հայ ազատամարտերին և նրանց առաջնորդել «դեպի թովիչ ազատության համար մղվելիք պատերազմի գույնզգույն ծաղիկների արյունաներկ, բայց միաժամանակ գեղատեսիլ դաշտավայրը»:

Թոխմախյանն ուներ առինքնող հատկություններ և իր հզոր անհատականությամբ կարողանում էր ազդել ոչ միայն փոքրերի, այլև ամենից շատ հայոց մեծերի վրա: Նա Ռաֆֆուն հորդորեց գրելու «Խենթ» և «Կայծեր» ծրագրային վեպերը, մեծ գրողին հաղորդած տեղեկությունները, գեղարվեստական վարպետությամբ շնչավորված, վերադարձան ժողովրդին: Բ. Նավասարդյանի վավերական վկայությամբ, ***«Կայծերի» գլխավոր հերոս՝ Կարոյի կերպարում մարմնավորված էր Թոխմախյանը:*** Գր. Արծրունու նման զորեղ բնավորությունը ընկրկում էր Թոխմախյանի անկեղծության առաջ, լսում նրան, գործակցում նրա հետ:

Այսպիսով, Ա. Թոխմախյանը ամեն տեղ էր, որտեղ խմորվում էին հեղափոխական գաղափարներ, որտեղ մտադրություն կար զբաղվելու Հայաստանի ազատագրության խնդիրներով: Գաղափարական քարոզիչն ունեցավ նաև հակառակորդներ, որոնց սևահոգի գործունեության զոհ գնաց 1891 թ.:

Վանում և ողջ Վասպուրականում ծավալվող հայ ազատագրական շարժման ոգորումների պրոցեսում մեծ է եղել *Կոնստանդին Կամսարականի* (1843-1922) դերը: Մ. Խրիմյանի և Մ. Փորթուգալյանի հետ միասին *կազմելով մի եռամեծություն,* նա գործուն մասնակցություն բերեց երկրամասում խմորվող ազատաբաղձ գաղափարների ձևակերպմանը, նպաստեց Ռուսաստանից Արևմտյան Հայաստան կատարվող զենքի գաղտնի փոխադրմանը, ընդհատակյա հեղափոխական կազմակերպությունների հիմնադրմանը:

Կ. Կամսարականը ծնունդով նուխեցի էր, ավարտել էր Մոսկվայի զինվորական ակադեմիան, որից հետո, ծառայության անցնելով ռուսական բանակում, մասնակցել էր ռուս-թուրքական (1877-1878) պատերազմին: Կարինի գրավման ժամանակ նա աչքի ընկավ անձնական խիզախությամբ, որի համար կառավարությունից ոչ միայն շքանշան ստացավ, այլև նշանակվեց ազատագրված քաղաքի պարետ, ապա՝ փոխիսպատոս: Բեռլինի կոնգրեսի որոշումների համաձայն, ռուսական բանակի հետ Կամսարականը ևս թողեց Արևմտյան Հայաստանի տարածքը և փոխադրվեց Թիֆլիս:

1879 թ. մայիսին Կ. Կամսարականը նշանակվեց Վանի ռուսական փոխիսպատոս և կրկին վերադարձավ երկիր՝ սեփական ժողովրդին օգնության ձեռք մեկնելու մեծ ակնկալիքներով: Կարճ ժամանակահատվածում ժողովրդի աչքում այնքան բարձրացավ նրա հեղինակությունը, որ վանեցիները, նրա ներկայությունից օգտվելով, թուրքերի ու քրդերի հետ խոսում էին հավասարը հավասարի սկզբունքներով: Մ. Փորթուգալյանը 1880 թ. «Մշակում» գրում էր, թե *«Վանի մեջ հայ մը չկա որ չօրհնե Կամսարականի անունը, նա ոչ թե կսիրվի, այլ կպաշտվի ժողովրդեն»:*

Ռուսական փոխիսպատոսը, խախտելով իրեն տրված իրավունքների շրջանակները, խառնվում էր նահանգապետ-փաշայի ներքին գործերին, հայ-թուրք վեճերի ժամանակ պաշտպանում ազգակիցների ոտնահարված իրավունքները, դրամական նպաստներ բաժանում կարոտյալներին, դպրոցներին, մշակութային ընկերություններին ու հեղափոխական կազմակերպություններին:

Կ. Կամսարականը, ճիշտ է, ցարական պաշտոնյա էր, սակայն համաձայն չէր այն տեսակետին, թե Արևմտյան Հայաստանի փրկությունը Ռուսաստանին միակցվելու մեջ է: Նա գտնում էր, որ Արևմտյան Հայաստանը կարճ ժամանակահատվածում տնտեսական ու մշակութային վերածնունդ ապրելուց հետո միայն ապստամբության դրոշ պիտի

պարգի և վերականգնի հայկական անկախ պետությունը: Կամսարականի ներկայությունը քաղաքում ոգևորում էր դարերով ստրկական վիճակում ապրող հայությանը, նրանց նպատակամղում պայքարի, հաղթանակի հույսեր ներշնչում:

Կ. Կամսարականը սատար կանգնեց «Սև խաչ» հեղափոխական կազմակերպությանը, Ռուսաստանից տեղափոխած զենքով զինեց «Չինակիր» խմբի մեջ մտնող երիտասարդությանը, նույնիսկ մասնակցեց զորավարժություններին, կազմեց զինվորական հրահանգներ և հանձնեց «ուխտի զինվորներին»: Սակայն նրա գործողությունները աննկատ չմնացին թուրք իշխանավորների և բրիտանական փոխիսպատոսարանի աշխատակիցների աչքից:

Հայկական հարցի նկատմամբ ցարիզմի վերադիրքավորման օրերին, առիթն օգտագործելով, թուրքերն ու անգլիացիները մատնագրերի տարափ տեղացին Կ. Կամսարականի գլխին: Պետերբուրգի կաբինետը ևս գոհ չէր իր պաշտոնյայի հայասիրական գործողություններից: 1885 թ. Կամսարականը ետ կանչվեց Վանից, Վասպուրականում թողնելով համակիրների մի ամբողջ պլեադա, արցունքակալած աչքերով իրեն ճանապարհ դնող ժողովրդի հսկա բազմություն: Այդուամենայնիվ, այդ խոշոր գործիչն իր դերը կատարել էր հայոց հինավուրց մայրաքաղաքում, Մ. Խրիմյանին գործակցած ձևավորել էր մի սերունդ, որին այլևս ստրուկ պահելն անհնարին էր թվում:

Արևմտյան Հայաստանում, առավելապես Վասպուրականում խմորվող ազգային-ազատագրական շարժմանը խթանում էին, գաղափարապես սնում, գործնականապես ղեկավարում մի խումբ երիտասարդ այլ գրողներ ու հրապարակախոսներ, որոնց գրչի արգասիքն իրավամբ *գավառահայ գրականություն* բնութագրությունն ստացավ: Սրանք Վարագա «Ժառանգավորաց» դպրոցի քանքարավոր սաներն էին, Մ. Խրիմյանի աճեցրած «արծվիկները», 70-80-ական թվականներին արդեն լայնատարած թևեր առած արծիվները:

Դարակեսին սկսվեց երթը դեպի գավառ, դեպի ժողովուրդ: Հաջորդ երկու տասնամյակներին, հայկական լեռնաշխարհի գեղատեսիլ այդ անկյունում, լուսավոր Արևմուտքից և արթնացման նշաններ ցուցադրող Արևելքից կտրված, հեքիաթային Վանա լճի ավազանում ձևավորված հոսանքը մի նոր ու թարմ շունչ փչեց Վասպուրականի վրա, որի երկնած գրական գոհարները խորությամբ ամփոփում էին, արտացոլում ժողովրդի ձգտումները. Հայաստանը մխրճում գաղութահայության սրտի մեջ. Կ. Պոլսի ու Թիֆլիսի հայությանը հարկադրում առավել մոտիկից մտահոգվել ողբացյալ Հայրենիքի ճակատագրով:

Տակավին Բեռլինի կոնգրեսից առաջ հնչեցին Մ. Խրիմյանի «Հայ գույժի» և «Վան գույժի» արտասվածոր ողբը, բանաստեղծական քնքշությամբ առլեցուն, հայրենիքի կարոտով տոչորող Գ. Սրվանձտյանցի սրտի խոսքը, հեղափոխական պաթոսով գրված Ա. Թոխմախ-

յանի մարտական կոչերը, Ղ. Փիրղալեմյանի, Տկանց եղբայրների, Գ. Շերենցի և այլոց բանաստեղծությունները, հոդվածները, հայրենագիտական աշխատությունները:

Գավառահայ գրականության հիմնադիրների փայլուն համաստեղության մեջ իր ուրույն աթոռն ունի *Սեդրակ Տեր-Սարգսենցը*: Տկանց վեց եղբայրներից կրտսերը: Կրթվելով Վանի ու Կ. Պոլսի դպրոցներում, գաղափարապես հասունանալով Խրիմյանի զորեղ ազդեցության տակ, Տեր-Սարգսենցը երիտասարդական տարիներից սկսած ոչ միայն մխրճվեց հասարակական պայքարի հորձանուտներում, այլև բնությունից օժտված իր քանքարաշատ գրիչը փորձեց նախ՝ քաղաքական-հայրենասիրական պոեզիայի, ապա՝ գեղարվեստական լայնակտավ արձակի ու հրապարակախոսության բնագավառներում: Նա իր կյանքի ամենածաղկուն շրջանն անմնացորդ նվիրաբերեց արևմտահայության կրթության ու դաստիարակության սրբազան գործին, կապվեց Մայր երկրի հետ, բաժանեց հայրենակիցների տառապանքները, զորավիգ կանգնեց հազարավոր սովյալների, նրանց փրկեց մահվան ճիրաններից, հակադրվեց հայ ու թուրք պահպանողականների ռուտինային, այդ պատճառով էլ ենթարկվեց զրկանքների, հալածվեց, սակայն մինչև վերջ անդրդվելի մնաց իր համոզումների մեջ:

Սեդրակ Տեր-Սարգսենցն անցյալ դարի 70-80-ականների արևմտահայ դեմոկրատական հոսանքի ականավոր ներկայացուցիչներից էր, ազատագրական պայքարի գաղափարաբանը, որին մտահոգում էին ժողովրդի ոչ միայն քաղաքական, այլ նաև սոցիալական ազատության խնդիրները: Նրա մտրակող գրչի տակ ծաղկվում էին և՝ սուլթանական վարչակարգերը, և՝ ռոմանովյան բռնապետությունը:

Տեր-Սարգսենցը գրականության մեջ մուտք գործեց իբրև բանաստեղծ, չափածո խոսքի միջոցով կղերականությանը դատափետող, ժողովրդին ընդվզման մարտակոչող նախ՝ քաղաքացի, նոր ապա՝ պոետ: Զարմանալին այն է, որ իր ծագումով, շրջապատով, ստացած կրթությամբ նա կապված էր հոգևորականության, այն էլ բարձրաստիճան կղերականության հետ և, ահա, միանգամից կտրելով կապերը դրանցից, Տկանցը սկսեց իր հարձակումները հենց այդ դասի, այսինքն՝ պորտաբույծ հոգևորականության վրա:

Տկանցի գրական տաղանդը, առավել ևս, քաղաքական ճշմարտացի կողմնորոշումը նկատելով, Ա. Մամուրյանն իր խմբագրած «Արևելյան մամուլ» հանդեսի դռները լայն բացեց նրա առջև, տպագրելով վասպուրականցու հատկապես այն բանաստեղծությունները, որոնք նվիրված էին *Խ. Աբովյանին, Մ. Նալբանդյանին, ցարիզմի վարած ազգային-գաղութային քաղաքականության քննադատությանը:* 1874-1875 թթ. իրար հետևից լույս տեսան Տեր-Սարգսենցի շուրջ երկու տասնյակի հասնող մարտաշունչ բանաստեղծությունները, որոնք միանգամից համազգային ճանաչում բերեցին հեղինակին:

1876 թ. Կ. Պոլսում հրատարակվեց նրա բանաստեղծությունների անդրանիկ ու միակ ժողովածուն «Վառարան իմ կայծեր» վերտառությամբ:

Մինչև օրս էլ ոչ միայն ընթերցող լայն հասարակության, այլև գրականագետների տեսադաշտից դուրս մնացած այդ ժողովածուն ամփոփում էր հեղինակի 32 բանաստեղծությունները, որոնց մեջ առանձնակի ուշադրության են արժանի «Նալբանդյանցի ուխտը», «Մեր վիճակը», «Խնդրենք թե ցավինք», «Անմեղ զոհեր», «Ներկա դարուս պարոնները», «Կարիպի սիրո կարոտն», «Ո՞ւր ազատություն», «Աննիբալը Ալպյան լերինս» և այլ գործեր: Ժողովածուի շոշափած հարցերը, բովանդակած գաղափարները, ինչպես հուշում են վերնագրերը՝ կրկին հայ ժողովրդին հուզող սոցիալական ու քաղաքական ազատագրության խնդիրներն էին: Նրանց հեղինակը հայրենակարոտ, աստանդական մի զինվոր էր, սուլթանական ու ցարական վարչակարգերի անհաշտ հակառակորդ, հայ կղերականության, ունևոր ամիրաների անգործունյա գործելակերպի խստապահանջ քննադատ:

Տեր-Սարգսենցի բանաստեղծությունների վերոհիշյալ ժողովածուն ոչ միայն գրական համբավ բերեց երիտասարդ բանաստեղծին, այլև նրան հավատ ներշնչեց, վստահություն՝ սեփական ուժերի հանդեպ, որ, եթե ինքը կամենա, կարող է առավել հիմնավոր ծառայել իր ժողովրդին, գրչով ու խոսքով պայքարել նրա արտաքին ու ներքին կեղեքիչների դեմ: Առանձնապես ոգևորիչ էին Մ. Խրիմյանի ու Գ. Սրվանձտյանցի քաջալերիչ խրախուսականները հեղինակին՝ նոր, ավելի մեծ կտավի գործերով հանդես գալու ուղղությամբ:

1876 թ. Կ. Պոլսի Արամյան տպարանում լույս տեսավ Ս. Տեր-Սարգսենցի «Շահենն ի Սիպիր կամ գաղթական հայը» վեպը, որն արդեն համազգային ճանաչման արժանացրեց հեղինակին, դառնալով հայ ընթերցողի սեփականությունը, հազարավոր երիտասարդների մղեց ըմբոստացման ու զինավառ պայքարի: Այդ վեպում լուրջ քննարկման էին ենթարկվում և՝ արևմտահայության, և՝ արևելահայության սոցիալ-քաղաքական գոյավիճակը, գեղագետի նուրբ վրձնով բացահայտվում այն արատներն ու խոցերը, որոնք ոչ միայն հարատևում էին, այլև գնալով խորանում էին զույգ բռնապետություններում, պատճառ դառնում հայ ժողովրդի բռնագաղթերին, արտագնացությանը, ուծացմանը, ֆիզիկական ու բարոյական ոչնչացմանը: Տկանցը, քաղաքական զսպանակներին զուգընթաց, լուրջ ուշադրության առարկա էր դարձնում սոցիալական խնդիրները, ագրարային հարցը, մինչ այդ էլ անլուծելի մնացած «գորդյան այդ հանգույցը»:

«Շահեն ի Սիպիր» վեպը Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» քաղաքական տրակտատի, ծրագրային աշխատության օրգանական շարունակությունն էր, մինչ այդ բանաձևած կոնցեպցիաների զարգացումը հաջորդ տասնամյակում ծնունդ առած նոր պայմաններում:

Հար և նման էին ոչ միայն երկու գրքերում զարգացրած գաղափարները, այլև նրանց բաժին ընկած հետագա ճակատագիրը: Լույս աշխարհ գալուց քիչ անց վեպն իր վրա հրավիրեց օսմանյան գրաքննիչների սևեռուն ուշադրությունը: Տեկանցը հարկադրված էր գիրքը մայրաքաղաքից Հայաստան առաքել չափազանց գաղտնի, նույնիսկ տեղավորել այն արկղներում, որոնք զենք էին պարունակում: Թուրքական ոստիկաններն ամենուրեք փնտրում էին վեպը, արգելում նրա տարածումը, բարձրագոչ հայտարարելով, թե այդ գործն ավելի վտանգավոր է, քան «մաքսանենգների միջոցով» փոխադրված վեցհարվածանի հրացանները:

«Շահեն ի Սիպիրը» թարգմանաբար ներկայացվեց մեծ վեզիր Քյամիլ փաշային: Բ. Դուռը հատուկ որոշում կայացրեց վեպի հավաքման և հրապարակային այրման վերաբերյալ: Նույն բախտին արժանացան այն օրինակները, որոնք տեղափոխվել և տարածվել էին Անդրկովկասում: Կովկասի փոխարքան ևս կարգադրեց գրավաճառանոցներից հավաքել և այրել Տեկանցի այդ աշխատությունը, պատճառաբանելով, թե հեղինակը հակառուսական տրամադրություններ է սերմանում «հավատարիմ հայ ժողովրդի խոնարհ խավերի միջավայրում»:

Սուլթանիզմի և ցարիզմի խստությունները ոչ միայն չէին վհատեցնում հայրենասեր գրողին, այլև ավելի էին գոտեպնդում նրան պայքարի հրապարակ նետվելու Հայաստանի ազատագրության նշանաբանով: Բեռլինի կոնգրեսի նախօրյակին, Խրիմյանի գլխավորած պատվիրակությունից առաջ, Տեր-Սարգսենցը և Ղ. Փիրղալեմյանն անցան Եվրոպա, ուսուցչի գործունեության համար հող նախապատրաստելու հանձնարարականով շրջեցին արևմտյան երկրների մայրաքաղաքներում և, իրենց Ոդիսականն ավարտելով, հասան Լոնդոն, ապա՝ Մանչեստր:

Պատմաբանների ուշադրությունից վրիպած, մինչև օրս էլ անհայտ մնացած այդ ուղևորության մասին Ս. Տեր-Սարգսենցը պատմում է, թե ինքն այդ ամիսներին տեսել է էմսի հրաշալի լիճը, հիացել նրա եղեմական հովիտներով. «Գեղեցիկ Փարիզն յուր ***փարիսեցիներով,*** աշխարհանդեսն յուր հրաշարվեստներով, մեծ Լոնդոնն իր ***երկաթ, պողպատ*** անգղիացիներով»: Նստած Լոնդոնում Խրիմյանի սանը ոչ միայն հետևում էր Բեռլինի կոնգրեսի աշխատանքներին, այլև հայկական ու անգլիական թերթերում հոդվածներ էր տպագրում, տքնում սառնարյուն անգլիացիների երակներում ներարկել հայանպաստ տրամադրություններ: Սակայն նա ևս հասկացավ, որ մեծ տերություններից փրկություն սպասելը մանկամտություն է, տեսավ ու հասկացավ, թե Անգլիան Կիպրոսի դաշնագրով հայ ժողովրդի շահերը վաճառեց Թուրքիային, բարբարոս ցեղերին գերադասեց քրիստոնյա քաղաքակրթված ազգից, Հայաստանը անվանափոխեց Քյուրդիստանի, միայն թե ծովային մի փոքրիկ կղզի կորզեր օսմանյան կայսրությունից: Այդ ամենը, սակայն, վիատության գիրկը չնետեց գրող-հրապարակախոսին: Նա որոշեց այնուհետև ծառայել հայ ժողովրդի կրթության, լուսավորության, տնտեսական զարգացման գործընթացին, նախապատրաստվել ավելի գոռ գոտեմարտերի:

Տեկանցի գործունեության ամենաբեղուն ու հետաքրքրական շրջանը 1879-1884 թվականներն էին, երբ Հայրիկի առնականացած սանը վերջապես նրա հետ Վասպուրականում էր, անմիջական կապերով աղերսված Հայրենի աշխարհի, հարազատ ժողովրդի հետ և իր ուժերն ու կարողությունները ի սպաս էր դնում գավառահայ սովյալների փրկության, մանուկներին կրթություն տալու գործին: Նա մասնակցում էր հեղափոխական շարժումներին, զինվորագրվում «Սև խաչ» կազմակերպությանը, կապեր հաստատում Կարինի «Պաշտպան Հայրենյացի» հետ:

Այսպիսով, անցյալ դարի 80-ական թվականներին Վասպուրականում ձևավորվում էր գաղափարապես հասունացած, հոգևորական և աշխարհիկ գործիչներից բաղկացած մի սերունդ, որն իր ուսերի վրա էր կրելու հայ ազատագրական շարժման կազմակերպման ու ղեկավարման դժվարին, միաժամանակ հայրենանվեր գործը: Ստեղծվում էին գաղտնի հեղափոխական խմբակներ, որոնք նախորդել էին մշակութային բազմաթիվ ընկերությունների գործունեությանը թե Թուրքիայի առափնյա քաղաքներում և թե հատկապես Արևմտյան Հայաստանում[1]:

*

* *

Յուրաքանչյուր ժողովրդի պատմությունը նրա հիշողությունն է, որը խորությամբ հետազոտվում է, փոխանցվում սերունդներին, ոչ միայն անցյալն իմանալու, այլ, նրանից դասեր քաղելով, ներկան ճիշտ կառուցելու, չկրկնելու նախորդների թույլ տված բախտորոշ սխալներն ու բացթողումները: Արմատական այս հիմնահարցը վերաբերում է հատկապես այն ժողովուրդներին, որոնք, դարերի ազգային-ազատագրական ոգորումների ավանդույթ ունենալով հանդերձ, դեռևս չեն հասել լիակատար անկախ պետականության վերականգնմանը կամ բեկորացված իրենց հայրենիքի վերամիավորմանը:

Նման ազգություններից է հայ ժողովուրդը, որը, պատմության ետնախորքում կորցնելով պետականությունը, բաժան-բաժան լինելով աշխարհակալ տերությունների միջև, սփռվելով աշխարհի բոլոր ցամաքամասերում, այսօր պայքարի մարտահրապարակ է իջել, գոտեպնդելով

[1] Սույն հատվածը տպագրել ենք «Հայաստան» օրաթերթի 1991 թ. ապրիլի 4-ի համարում:

հայրենիքի միավորման մայրուղու վրա կանգնած իր զավակներին, *այդուհանդերձ, որոնումների մեջ է:*

Պատմությունը զարմանալիորեն կրկնվում է: Հայկական պետականություն վերստեղծելու, հարևան ժողովուրդների հետ հարաբերությունները կարգավորելու, քաղաքական կողմնորոշումն առավել հստակեցնելու և այլ խնդիրները բուռն վեճերի, մտաբախումների տեղիք են տվել վաղնջական հեռուներից, առավել ևս XX հարյուրամյակի վերջին երեսնամյակին, երբ երկունքի ցավերի մեջ գալարվող Մայր Հայաստանը հերթական անգամ ճիգեր էր գործադրում թոթափելու օսմանյան բռնապետության անտանելի լուծը:

Այդ տասնամյակներին ևս հայ մտավորականության գլխամասը, հասարակական-քաղաքական ու եկեղեցական հայրենանվեր գործիչները դեգերումներ էին կատարում, ծանր ապրումներ ունենում, մտահոգվում, թե ինչպիսի՞ գործոնների օգնությամբ կարելի է ազատազուրկ ժողովրդին հասցնել բաղձալի հաղթանակի, ծովի ալիքների վրա բարձրացված հայոց նավին ինչպիսի առագաստներով զինել, որպեսզի անխաթար առափնի որևէ հուսակայան:

Միասնական չէր հայոց ընտրանին: Հասարակական-քաղաքական հոսանքների քառափեղկված, տարբեր կողմնորոշումներ որդեգրած հայ մտավորականության յուրաքանչյուր խմբավորում յուրովի լուծումներ էր առաջադրում այդ խնդիրների վճռմանը, ուրույն ծրագրեր ուներ պայքարի մեթոդների ու հեռանկարների վերաբերյալ: Չնչին բացառությամբ միայն, բոլորի նպատակը մեկն էր, այն է՝ արևմտահայությանը փրկել վերահաս կործանումից, ժողովրդին ազատել սուլթանական սրի անխնա հարվածներից, միավորել Հայաստանի զույգ հատվածները:

Վերջին տասնամյակում ևս կրկնվում է այդ պրոցեսը, իհարկե՝ նոր ձևով ու նոր բովանդակությամբ: Ի նկատի ունենալով այդ պարագան, անշուշտ, հետաքրքրական է շուրջ մեկ հարյուրամյակ առաջ ծավալված իրադարձություններին հետադարձ հայացքով անդրադառնալը, ցայսօր վեճի ու մտաբախումների առարկա դարձած հայոց պատմության մի քանի դրվագներ վեր հանելը՝ ոչ միայն զուտ գիտական հետաքրքրություններից դրդված, *այլև այդ տասնամյակում կատարված սխալներից զերծ մնալու նպատակամղումով,* անշուշտ, օգտվելով դրական փորձից:

Ռուս-թուրքական հաղթական պատերազմը (1877-1878), Հայկական հարցի դիվանագիտական ձևակերպումը Սան Ստեֆանոյի պայմանագրում և վերածնումը Բեռլինի կոնգրեսում դարձակետ հանդիսացան հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի դարակազմիկ պատմության մեջ: Թուրքիայում և Ռուսաստանում, ինչպես նաև այլ երկրներում խարսխված, աշխարհասփյուռ հայ մտավորականության հայրենանվեր հատվածը, Արևմտյան թե Արևելյան Հայաստանում հարատևող ժողովրդական զանգվածները տարբեր ձևով ընկալեցին դիվանագիտական սուր մրցավեճերից հետո միայն ծնված, միաժամանակ թլպատված 61-րդ հոդվածը:

Տարակարծություններով հանդերձ, գրեթե բոլոր ուղղություններին պատկանող հայ քաղաքական մտքի ազգանվեր ներկայացուցիչները վերանայեցին շարժման նախկին նպատակները, գործունեության հին ձևերն ու մեթոդները, առավել ևս կանխորոշեցին ժողովրդի դերը ապագայում սպասվելիք ահեղ գոտեմարտում: 80-ական թվականները հանուր հայ ազատագրական շարժման պատմության մեջ մտան իբրև *վերագնահատումի տարիներ:*

Տվյալ ժամանակահատվածում, ծանր հիասթափումներից ու տևական որոնումներից հետո, արդեն մշակվում է պայքարի ուրույն գաղափարաբանություն, նոր որակ է ձեռք բերում հայ հեղափոխական-քաղաքական միտքը: «Երկիր» վերամկրտված Արևմտյան Հայաստանը զորեղ մագնիսի նման դեպի իրեն է ձգում աշխարհի բոլոր ծագերում տարածված հայ երիտասարդությանը, *առաջին անգամ գիրկընդխառն են հրապարակ իջնում շարժումն ու գաղափարախոսությունը: Իբրև այդ ամենի զարգացման բարձրակետ ձևավորվում են հայոց ազգային-քաղաքական երեք կուսակցությունները, որոնք, տարընթացություններով հանդերձ, շարունակվում են մինչև օրս:*

Հայ ազատագրական շարժումն ուներ արտաքին և ներքին մի շարք դրդապատճառներ: Նախ, Բեռլինի վեհաժողովից հետո առավել պարզորոշ է դառնում Արևմուտքի տերությունների բռնած խարդախ ու եսակենտրոն դիրքը Հայկական հարցի նկատմամբ: Եթե մեծ տերությունների ձեռքին 61-րդ հոդվածը խրտվիլակ էր օսմանյան պետությանը վախեցնելու, նրա ներքին գործերին միջամտելու կամ հարմար առիթ արգելափակելու թուրքահպատակ ասիական նահանգները Ռուսական կայսրությանը միացնելուն, ապա ռոմանտիկ հույսերով օրորվող հայ ժողովրդի համար այն հույսի և իրավունքի աղբյուր էր, նորանոր գործողություններ ծավալելու մի նոր ազդակ: Սթափ հայացք ունեցող հայ մտավորականները, անցյալի փորձով իմաստնացած, հիասթափվեցին այրունածարավ Եվրոպայի դիվանագիտական խարդավանքներից, որոշեցին կռթնել սեփական ուժերին և Հայաստանն ազատագրել հայ ժողովրդի ինքնագործունեության միջոցով:

80-ական թվականների հենց սկզբներից որոշակիորեն վերափոխվեց և Թուրքիայի, և Ռուսաստանի դիրքորոշումը հայ ժողովրդի զույգ հատվածների նկատմամբ: Առավել վատթարացավ արևմտահայության սոցիալ-քաղաքական կացությունը, որը պատճառ դարձավ շարժման ուժեղացման: *Հետևաբար, հայության ըմբոստացման առիթը տվեց օսմանյան կայսրությունը, որը, ժողովրդի ազգային ճնշումներից, մասնակի ուժացումից զատ, անցավ զանգվա-*

ծային ոչնչացման քաղաքականության կիրառմանը: Բնականոն ձևով ազդեցությունը պիտի ծներ հակազդեցություն, բռնությունը բողոքի ճիչ, մորթոտումը գոյապահպանություն, այն լիներ գրիչ թե սուր, հրապարակախոսություն թե քաղաքական պայքար:

Բեռլինի կոնգրեսից քիչ անց, արևմտահայության կրած հալածանքներն արդեն ընդունում են տևական ու կազմակերպված ձև ու հայասպան բովանդակություն, որն ամենից առաջ պայմանավորված էր պանթյուրքիզմի ու պանիսլամիզմի մարդատյաց գաղափարաբանության որդեգրմամբ, օսմանյան պետության ղեկավարների, նրանց հետ սերտաճած մոլի թուրք բուրժուազիայի նոր կողմնորոշման գործադրմամբ:

Հայերի կրած սոցիալ-քաղաքական ու ազգային ճնշումները Թուրքիայում, հատկապես Արևմտյան Հայաստանում նոր երևույթ չէին: Բ. Դուռը, հեռամետ դիտավորություններով, հայերով ու քրդերով շերտընդմեջ բնակեցված հայկական գավառներում քրդական վերնախավին օժտել էր անսահմանափակ իրավունքներով, նրանցից ստեղծել էր արտոնյալ դաս և հնարավոր բոլոր միջոցները գործադրում էր անմիաբանության սերմեր ցանելու երկու ժողովուրդների միջև, որպեսզի բացառվեր նրանց միասնական պայքարն ընդդեմ օսմանյան բռնապետության:

Մինչև անցյալ դարի երրորդ քառորդը հայկական շարժումները, բողոքները, ընդվզումները գերազանցապես ուղղված էին քրդական վերնախավի դեմ, ունեին հիմնականում *տնտեսական բովանդակություն,* ակնկալում էին կորցրած հողահանդակների հետ ստանալը, դրանով իսկ դառնում էին հայ հեղափոխական շարժման *անդրանիկ շրջափուլը:*

Դարի վերջին երեսնամյակին, հատկապես մեծ մարդասպան Համիդի գերագահության տարիներին, արևմտահայության նկատմամբ տերության որդեգրած հալածանքների, ազգային ճնշումների նոր համակարգը, մասնակի ուժգնություններից զանգվածային ջարդերին անցնելը, տնտեսականին զուգընթաց *քաղաքական* բնավորություն ստանալը, բնականաբար, համախմբում են հայ ժողովրդին, և արևմտահայության հեղափոխական ոգորման հաջորդ շրջափուլը գերազանցապես *քաղաքական* պայքար էր, գոյատևման համար հարկադրական ճիչեր:

Արդ, որոնք էին դրա հիմնապատճառները: Մինչև 70-ականների կեսերը սուլթանական Թուրքիայի քաղաքականության առանցքը կազմում էին արևելյան միջերկրածովյան ավազանը, հատկապես Բալկանյան թերակղզում ապրող սլավոնական ազգերը: Բյուզանդիայի հնամենի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, վերանավանված Ստամբուլը, կամրջում էր կայսրության արևելյան ու արևմտյան վիլայեթները և, մի տեսակ հավասարակշռություն ստեղծելով, պահպանում էր «հիվանդ մարդ» մկրտված օսմանյան տերության քարշարկվող գոյատևումը: Մեծ տերությունները, փաստորեն, նպաստում էին «ստատուս քվոյին»:

70-ականների կեսերից փոխվեց իրավիճակը: Այդ թվականներից ռազմական, տնտեսական, քաղաքական ու դիվանագիտական ծանր հարվածների տակ Թուրքիան ընկրկեց իր արևմտյան տիրույթներում: Ռուսաստանի օգնությամբ, ազգային-ազատագրական պայքարի արյունաներկ դրոշ պարզած Բալկանյան ազգերը թոթափեցին օսմանյան Թուրքիայի կեսհազարամյա անտանելի լուծը և փորձեցին անկախ պետություններ ստեղծել իրենց հնամենի ու պատմական հայրենիքում:

Կոստանդնուպոլիսը, փաստորեն, դրվեց կորստյան վտանգի տակ: Որոնումների ճանապարհին թուրքերը որոշեցին, թե մայրաքաղաքի և ընդհանրապես կայսրության պաշտպանության բանալիները այդուհետև ավելի գտնվելու են փոքրասիական, հատկապես հայկական նահանգների պաշտպանների ձեռքերում: Այդ պարագան, Անգլիայի հովանավորությամբ, բեկում առաջ բերեց թուրքական հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ, բեկում, որը ողբերգական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար, ում դիակույտերի վրայով իր գոյությունը պաշտպանեց մահմեդական այդ երկիրը, բայց ոչ միայնակ:

Բեռլինի վեհաժողովից հետո, Թուրքիան, փաստորեն, հիմնականում վերածվեց ասիական տերության: Կոնգրեսից հետո կայսրությունը հերթականությամբ կորցնում էր նաև իր աֆրիկյան նահանգները: Ակնատես լինելով նման իրավիճակին, Ռուսաստանի տիրապետության տակ ապրող թուրք-թաթարական ժողովուրդների մեջ նոր երազներ սնուցվեցին: Նրանք այժմ բացահայտորեն դիմում էին «մեծ խալիֆին», առաջարկում Եվրոպայից հայացքը թեքել դեպի Փոքր Ասիա և, գլխավորելով թուրանական շարժումը, այնտեղ ստեղծել մահմեդական մի նոր ու հզոր պետություն, որի շոշափուկները պիտի տարածվեին մինչև Միջին Ասիա ու Աֆղանստան, դրանց վրայով նաև Պակիստան ու Հնդկաստան:

Թուրքիան իրոք իր գոյության հիմքերը սկսեց որոնել Առաջավոր Ասիայում և պատմական առաքելություն հատկացրեց թուրք-թաթարական ժողովուրդներին ազգային գիտակցության բերելը և, հենվելով դրանց վրա, քաղաքական պայքար մղել կորցրած փառքն ու հզորությունը վերագտնելու:

Սակայն միայն այդ չէր: «Նոր օսմանները» տեսնում էին, որ *պանսլավոնիզմը* հիմնականում հաղթանակեց Բալկանյան թերակղզում: Թուրքական երբեմնի ահարկու սուրը ջախջախվեց Պլևնայի ու Շիպկայի տակ, ռուսական բանակի նստավայրից արդեն երևում էին Այա Սոֆիայի խաչակորույս աշտարակները, որոնց վրա ծածանվում էին մահիկն ու կիսալուսինը: Ռուսական բանակի հաղթանակները թուրքե-

ին *փոխվրեժի* էին կոչում, նպատակամղում *պանթյուրքիզմի* հաղթանակին Փոքր Ասիայում, հատկապես Արևմտյան Հայաստանում և հայաբնակ վայրերում:

Ռուս-թուրքական հերթական հակամարտությունների բովում, Կովկասի թուրքալեզու ժողովուրդներին Համիդի շուրջն համախմբելու, Ասիայում թուրանական ընդարձակ պետություն ստեղծելու ճանապարհին օսմանյան կայսրության, պանթյուրքիստների առաջ, իբրև զորեղ խոչընդոտ, հասակով մեկ կանգնում էր Հայաստանը, հայ ժողովուրդը, որին Բեռլինի կոնգրեսը ճանաչեց իբրև իրավատեր իր պատմական հայրենիքի, որի ազգային գիտակցությունը մշակվում էր հրապարակախոսության, գրականության, առավել ևս, մարտաշունչ պոեզիայի էջերում:

Բեռլինի կոնգրեսից հետո հայ-թուրքական հարաբերությունների սրման պատճառ էր դառնում նաև ռուսական վտանգը, որը հավերժորեն կախված էր Թուրքիայի գլխին հայկական բարենորոգումների պատրվակով: Ելնելով դրանից, թուրքական պետական գործիչները հետևողականորեն կենսագործում էին մի զարհուրելի ծրագիր, *որի նպատակն էր բնաջնջել արևմտահայությանը, եթե ոչ ամբողջովին, գոնե մաշել նրան թվական տեսակետից և հասցնել մի այնպիսի վիճակի, որ այլևս խոսք չլիներ բարենորոգումների մասին:*

1880 թ. սկսած Թուրքիան անցավ հարձակման: Նույն թվի օգոստոսի 30-ի հրամանագրով հայկական թերթերին և պաշտոնական գրությունների հեղինակներին արգելվեց Հայաստան անվան օգտագործումը, այն պատճառաբանությամբ, թե օսմանյան կայսրության տարածքում վարչական նման միավորում գոյություն չի ունեցել և չի էլ ունենալու: 1881 թ. մարտի 7-ի սուլթանի հրամանագրով գրավաճառանոցներից հավաքեցին և հրապարակավ այրեցին Վարդան Մամիկոնյանի և «Մայր Հայաստան» նկարները, բանտ նետվեց գրավաճառ Գաֆավյանը, այն պատրվակով, թե վաճառել է Լևոն VI-ի նկարը, դրանով իսկ անուղղակիորեն Հայոց թագավորության ստեղծման կոչեր արել:

Թուրք գրաքննիչները Հ տառով սկսվող բոլոր բառերը թարգմանել էին տալիս, կասկածելով, թե արդյոք Հայաստան չի՞ գրված: Երզնկայում գոցվեց լուցկու ֆաբրիկան, քանի որ նրա արտադրած լուցկու տուփերի վրա գրված էր «Լուցկիք Հայաստանի»: Քիմիայի դասագրքերից հանեցին ջրի ֆորմուլան, պատճառաբանելով, թե այն *նշանակում է Համիդ երկրորդը հավասար է զրոյի:*

Հայոց պատրիարք Ն. Վարժապետյանը, նկատելով այդ բոլորը, առիթը չէր փախցնում հաճախահաս հրաժարվելու պատրիարքական աթոռից, իր «խռովկանքներով» փորձում կնճռոտ որոշ հարցեր լուծել: Սակայն նա միաժամանակ Բ. Դռանն էր ներկայացնում նաև *բողոքագրեր,* որոնց միջոցով սուլթանին հիշեցնում էր, որ իր հովված հոտի նկատմամբ սկսված քաղաքական հալածանքների նոր ալիքը դուրս է գալիս մասնավոր շրջանակներից և բարձրանում պետական մակարդակի: Վարժապետյանը լավ էր հասկանում, որ այլևս պատահական թուրք գործիչները չէին քաղաքական նման սադրանքների հեղինակները, այլ համակամ Բ. Դուռը, սուլթանի լուռ կամ խոսուն համաձայնությամբ:

Բ. Դուռը գաղտնի հրահանգով թուրք շովինիստներին հանձնարարեց հրդեհել, մոխրացնել հայերի ունեցվածքը: 1887 թ. հուլիսի 26-ին հրդեհվեց Զեյթունի 1000 տուն: Օգոստոսի 27-ին Կ. Պոլսի հայաբնակ Սկյուտար թաղամասում այրվեց հայերի 1200 տուն: Հրդեհի վնասը կազմեց 300 հազար ոսկի: Նույն թվի հունիսի 3-ին հայաբնակ Պոթուշան քաղաքում հրդեհվեց 1000 տնտեսություն: Մարդկային զոհերի թիվը հասավ 1200-ի:

1888 թ. ապրիլին այրվեց Մարաշը: Կրակին զոհ գնաց 580 կրպակ, 14 սրճարան, 30-ի հասնող տներ: 1888 թ. սեպտեմբերի 27-ին հրդեհվեց Արմաշի վանքին կից ապրող հայերի 134 տուն, վանքի մեծ մասը, վարժարանը: Մի քանի օր անց այրվեց Բաղեշը: 1891 թ. ապրիլին թուրքերն այրեցին Պեշիկթաշի հայոց տները, հատկապես հայկական հարուստ գրադարանը: 1892 թ. փետրվարին հրդեհվեց Կ. Պոլսի Եենի Գափու թաղամասի միայն հայերին պատկանող 286 տնտեսություն:

Այսպիսով, ետբեռլինյան մի քանի տարում սուլթանական կառավարությունն այրեց հայկական շուրջ տասը քաղաքներում ապրող ժողովրդի ունեցվածքի մեծ մասը, ընչազուրկ դարձրեց հայ վաճառականներին, արհեստավորներին, ընչին ունեցվածք ունեցող երկրագործներին, օրավարձու մշակներին: Տուժեց հատկապես հայ առևտրական կապիտալը, քանզի օսմանյան նորաթուխ բուրժուազիան արդեն դժկամությամբ էր ընդունում, որ Թուրքիայի քաղաքներում առևտրի, արդյունագործության, նույնիսկ գիտության և տեխնիկայի գրեթե բոլոր մասնաճյուղերը շարունակում էին գլխավորել քրիստոնյա այլազգիները, այդ թվում և հայերը: Անվիճելի է, որ ինչպես հայերին, այնպես էլ կայսերահպատակ մյուս քրիստոնյաներին թուրք պետական խունտան մինչև այդ հանդուրժել էր լոկ այն պատճառով, որ նախ փոխարինողներ չունեին, և ապա դրանք նպաստում էին երկրի առևտրի ու արդյունաբերության առաջընթացին: Սակայն, երբ ձևավորվեց թուրք բուրժուազիան և չկարողացավ ազատ մրցակցության մեջ հաղթել քրիստոնյա վաճառականներին, չխորշեց դիմելու նրանց աքսորման, մասնակի ոչնչացման, ապա զանգվածային ջարդերի մեթոդներին:

Սուլթանական կառավարության հայերի նկատմամբ վարած ազգասպան քաղաքականության «նոր համակարգը» սկսեց մոլեգնել 80-ական թվականների հենց սկզբից: Պատերազմից հետո Բ. Դռան մշակած ծրագրերով կայսրության եվրոպական նահանգներից և Կովկա-

սից գաղթեցնում էին մահմեդականներին, հատկապես քրդերին, մոհաջիրներին, չերքեզներին և, մեծ արտոնություններ, ընդարձակ հողատարածություններ տալով, նրանց բնակեցնում էին Արևմտյան Հայաստանի տարածքում:

Համիդը նպատակ ուներ նախ փոխել երկրի ազգաբնակչության տոկոսային փոխհարաբերությունները, ավելացնել մահմեդականների թվաքանակը քրիստոնյաներից, որպեսզի առաջիկա կեղծ մարդահամարների միջոցով ժխտեր Մ. Խրիմյանի կողմից մեծ տերություններին ներկայացված թվահամարը, դրանով իսկ խուսափեր բարենորոգումների այն ծրագրի կենսագործումից, որն իրեն պարտադրել էր Բեռլինի կոնգրեսը, և որի իրականացմանը մերթ ընդ մերթ հետևում էին արևմուտքի կառավարողները, այդ թվում Ռուսաստանը:

Զգալով, որ հայ մտավորականությունն արդեն սերտաճել է իր ժողովրդին, փորձեր է անում դիմագրավելու արևմտահայության նկատմամբ նյութվող սահմռկեցուցիչ ու դիվային ծրագրերի կենսագործմանը, Համիդն անցավ գրողների, հրապարակախոսների, քաղաքական ու կրոնական գործիչների զանգվածային բանտարկության, աքսորման, տարագրության դատապարտելի քաղաքականության կիրառմանը: Դիարբեքիրը դարձավ հայ և բուլղար քաղաքական կալանավորների նստավայր: Հին բերդում, կալանավորների համար այլևս տեղ չլինելու պատճառով, կառուցվեցին նորերը, խստացվեց բանտային ռեժիմը, սահմանվեցին բանտարկյալների մարմնական այնպիսի պատիժներ, որոնք նախադեպը չէին ունեցել մարդկության պատմության մեջ:

1880 թ. Աբդին փաշան, ճաշի հրավիրելով Ն. Վարժապետյանին, կերակրի հետ թույն տվեց նրան, սակայն թույնի փոքր չափի պատճառով հայոց պատրիարքը հրաշքով փրկվեց մահից: Երեք անգամ մահափորձ կազմակերպվեց Մ. Խրիմյանի դեմ: 1881 թ. հոկտեմբերի 21-ին, սուլթանի կնոջ ծննդաբերությունը հաջող ավարտելուց հետո, երախտամոռ Համիդը հրամայեց խեղդամահ անել Մ. Նալբանդյանի մեծ բարեկամ, բժիշկ, ազատամարտիկ Հ. Քյաթիպյանին, ցինիկաբար հայտարարելով, թե նա, ում աչքերը տեսել են սուլթանուհու մերկությունը, այլևս ապրելու իրավունք չունի: Դավադրաբար սպանվեցին Զեյթունի ապստամբության ղեկավար Պապիկ իշխանը (1886), բժիշկ Տիգրան Փեշտիմալճյանը և շատ-շատերը:

1880 թ. հունվարի 4-ին թուրքական բանտ նետվեցին «Թերճիման էֆքյար» հայատառ թուրքերեն թերթի խմբագիր Ճևելեկյանը և արտոնատեր Սարգսյանը: Նրանց մեղադրում էին հեղափոխական խմբակ գլխավորելու մեջ: 1882 թ. բանտարկվեցին Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության 56 անդամները, և *Թուրքիայում առաջին անգամ կազմակերպվեց քաղաքական դատավարություն:* 1885 թ. մարտի 29-ին Վանում բանտարկվեց Մկրտիչ Սեֆիլյանը: Մարտի 30-ին Խրիմյանը, մի քանի օր անց Մ. Փորթուգալյանը աքսորվեցին Վասպուրականից իբրև անբարեհույս անձնավորություններ:

1886 թ. դեկտեմբերի 15-ին Ալաշկերտի մեջ իբրև հեղափոխական կալանավորվեց Հայոց միացյալ ընկերության տեսուչ Մկրտիչ Սարգյանը: Նույն օրը Մուշի մեջ ձերբակալվեց Միացյալի փոխտեսուչ Մարկոս Նաթանյանը: Նրանցից առաջինը աքսորվեց Տրիպոլիս, երկրորդը Երուսաղեմ: 1887 թ. դեկտեմբերի 13-ին Կ. Պոլսում գիշերով բանտարկվում են վանեցի Գարեգին Իսագուլյանը, Մկրտիչ Թերլեմեզյանը, Գրիգորիս Աղվանյանը, որոնք բռնեցին աքսորի ճանապարհ:

1887 թ. նոյեմբերին, Պարսկաստանի վրայով Արևմտյան Հայաստան անցնելիս, Հեքյարում կալանավորվեց Վասպուրականի արծիվներից Արսեն Թոխմախյանը: Բ. Դռան ծածկալեզու հրահանգով նրան «տեղավորեցին» Դիարբեքիրի բանտային մի նեղ խցիկում, մարմնական անտանելի տանջանքների ենթարկելուց հետո հսկայամարմին Թոխմախյանին մեխերով, խաչի ձևով ամրացրին բանտի պատին: Բուլղարացի և քուրդ կալանավորները, սարսափած պատժի այդ ձևից, գաղտնաբար նրան պոկեցին բանտախցի պատից և կազմակերպեցին փախուստը դեպի Ռուսաստան:

Այսպիսով, սուլթանական կառավարությունը ծրագրել էր հայ ժողովրդին զրկել նրա ծաղիկն հանդիսացող մտավորականությունից, «նախօրոք ջարդել այն կզակները», որոնք *Հայաստան* կարտասանեին, ապա հաջորդ տասնամյակին անցնել զանգվածային ջարդերի: Նա, փաստորեն, կարողացավ իրականացնել իր ծրագրի և առաջին, և երկրորդ մասերը, դրանց համար գործիք դարձնելով և թուրքերին, և, հատկապես, որոշ քուրդ ցեղապետերի:

Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող հայ և քուրդ ժողովուրդների մերձավոր ու բարեկամական կապերը խիստ անհանգստացնում էին թուրք պաշտոնատար անձանց, հատկապես Համիդին: Կառավարությունը, զգալով այդ միասնության վտանգը, բրիտանական ծովացուլի օրինակով ու նրա խարդախ խորհուրդներով, ջանքեր չխնայեց սիրաշահելու քուրդ ցեղապետերին, նրանց ձեռքերի շողացող սուրը ուղղելով հայ ազատագրական շարժման դեմ: Այդ հարցը առավել սրվեց Բեռլինի կոնգրեսից հետո, քանզի, սուլթանի սադրանքով, «եվրոպական մեծերը» արևմտահայությանը պաշտպանելու էին ոչ թե Թուրքիայի ու թուրքերի, այլ *քրդերի* և *չերքեզների* ասպատակություններից:

Ռուս-թուրքական պատերազմի ամիսներին Համիդը քրդական ցեղապետերին բաժանել էր 20 հազար հրացան, մեծաքանակ փամփուշտ, վառոդ, ձիեր, հանդերձանք: Պատերազմի ավարտից հետո, այդ զենքը մնաց նրանց ձեռքերում և գաղտնածածուկ հրահանգավորվեց, թե քրդերին ևս անհրաժեշտ է Հայաստանը «մաքրել» հայերից, որ այլևս խոսք չլինի բարենորոգումների մասին:

Աշխատավոր հայ և քուրդ ժողովուրդների հարաբերությունները,

իբրև սուլթանահպատակ իրավազուրկ ազգեր, բնականաբար, բարեկամական էին: Տերության աչքից չվրիպող այդ հանգամանքից ելնելով, գործողության էին նպատակամղում ցեղապետերին, որոնց նույնիսկ խոստանում էին Քյուրդիստանի ստեղծումը: 1879 թ. Մ. Խրիմյանը տագնապով ահազանգում էր, թե սուլթանը պատրաստվում է անդամալուծել Հայկական հարցը, այսինքն, դեպի Աղբակ է շարժում Բեդերխանի զավակներ Հուսեյին և Օսման բեյերին, նրանց հանձնարարելով հայաթափել երկիրը:

Արևմտահայության համար վտանգներով առլեցուն այդ ծրագրերը կանխարգելելու նպատակով, քրդերի մեջ բացատրական աշխատանքի լծվեցին Ռաֆֆին, Մ. Խրիմյանը, Գր. Արծրունին, Ա. Թոխմախյանը, Գ. Սրվանձտյանցը, Գր. Նիկողոսյանը, Ս. Չիլինկիրյանը, Մ. Մամուրյանը և ուրիշներ: Նրանք մասամբ հասան իրենց նպատակին:

1880 թ. հուլիսին Շամդինանում գումարված քրդական շեյխերի համաժողովում առաջարկ արվեց քրիստոնյաներին բնաջնջել: Խոսք վերցնելով, ամենահեղինակավոր շեյխ Ուբեյդուլահը հասկացրեց, թե Բ. Դուռը քրդերիս օգնում է միայն նրա համար, որպեսզի մեր ձեռքերով ոչնչացնի հայերին: Հետևաբար, եթե տերությունը քրդերի միջոցով հասնի իր նպատակին, այսինքն, Արևմտյան Հայաստանում այլևս հայեր չմնան, ***այն ժամանակ քրդերն օսմանյան կառավարության աչքում կկորցնեն իրենց կշիռն ու հեղինակությունը:***

Ուբեյդուլահի բացատրությունները համոզիչ էին և շեյխերին ետ կանգնեցրին հայասպան գործողություններից: Համիդն զգալով, որ այդ բնագավառում ևս տանուլ տվեց, խորամանկ սիրաշահումով Կ. Պոլիս հրավիրեց Ուբեյդուլահին, սկզբում մեծ պատիվներ տվեց նրան, ապա 1883 թ. ձերբակալելով, սպանել տվեց աքսորի ճանապարհին:

Արևմտահայությունը, փաստորեն, փրկվեց մեծ ոճրից, բայց փրկվեց ժամանակավորապես: Սուլթան խալիֆը 1890 թ. ստեղծեց քրդական «գվարդիան», նրանց զինելով, «Համիդիե» անուն տվեց, դրեց անատոլիական չորրորդ բանակը գլխավորող Զեքքի փաշայի հրամանատարության տակ, հանձնարարելով քանդել Սասնո հայոց արծվաբույնը, ոչնչացնել դարերով իրենց անկախությունը պաշտպանած հայկական լեռնահամայնքները: Բայց դա կատարվեց հաջորդ տասնամյակին միայն:

Այսպիսով, 80-ականներին Աբդուլ Համիդը նախապատրաստվում էր հայկական ջարդերին, Հայաստանի հայազրկմանը, թուրանական մեծ պետության ստեղծմանը, որի գործողությունների ակտիվացմանը նպաստ էին բերում ***խոսքով*** հայերին պաշտպանող, ***գործով*** սուլթանից համեղ պատառներ ակնկալող մեծ տերությունները, այդ թվում և Ռուսաստանը[1]:

[1] Սույն հատվածը տպագրել ենք «Հայաստան» օրաթերթի 1991 թ. մարտի 2-ի N 43-ում:

*
* *

Հայկական հարցի, հայ ազատագրական ոգորումների և ընդհանրապես արևմտահայության հանդեպ սուլթանական տերության ձեռնարկած գործունեության «նոր համակարգը» պայմանավորված էր նաև ***մեծ տերությունների, այդ թվում և Ռուսաստանի վերադիրքավորումով հայ ժողովրդի նկատմամբ***, հանգամանք, որը հասկանալի պատճառներով վերջին յոթ տասնամյակներին դուրս է մնացել խորհրդահայ հետազոտողների ուշադրությունից:

Բարդ և կնճռոտ այդ խնդրի պատմության մեջ ներփակված բազում հարցերը, ինչպես ժամանակին, առավել ևս վերջին տարիներին, առթել են մտաբախումների, սուր բանավեճերի, որը, ցավոք, վարում են ոչ թե փաստերին լավատեղյակ պրոֆեսիոնալ պատմաբանները, այլ հիմնականում սիրողական մակարդակից չբարձրացող հրապարակախոսները:

Գյուտ արած չենք լինի, եթե արձանագրենք, որ պատմությունը գիտություն է և ոչ թե հրապարակախոսություն: Այն խարսխված է ճշմարտացի փաստերի, անկողմնակալ հաղորդագրությունների, թեր ու դեմ կարծիքների համադրության ու հակադրության մեթոդներով պարզված եզրահանգումների հիման վրա: Հետևաբար, փաստերի անգիտությամբ, ցանկալին իրողության տեղ հրամցնելով, պատմության ***վերածումը այսօր էլ մեկ այլ ուղղությամբ*** առնվազն հակագիտական է և վտանգավոր:

Ասելով պատմության վերածում, նկատի ունենք հետևյալը. ամբողջատիրության տիրապետության տասնամյակներին Ռուսաստանի վարած քաղաքականության քննադատությունը ոչ միայն արգելված էր, այլև քննադատողները կարժանանային հավուր պատշաճի պատժի ու պատասխանատվության: Այդ պատճառով մեր ժողովրդի պատմությունը շարադրվում էր միակողմանիորեն:

Այսօր էլ զարմանալիորեն կատարվում է հակառակը: Բացախոսության և հրապարակայնության քղամիդի տակ վարագուրված մի շարք հոդվածագիրներ, առաջնորդվելով էմոցիաներով և չփաստարկված տրամաբանությամբ, ամեն ինչի մեղքը բարդում են միայն Ռուսաստանի վրա, նույնիսկ Թուրքիայի առաջ ռեվերանսներ անում:

Անցյալում պարսավանքի էին արժանանում Ռուսաստանին քննադատողները, այսօր հարգանք չեն վայելում այն հետազոտողները, որոնք բացահայտում են հայոց պատմության մութ ծալքերը և ցույց տալիս օսմանյան կայսրության ու երիտթուրքերի վարած ցեղասպանության քաղաքականությունը: Կարծում ենք, որ վերջինս առավել վտանգներով լեցուն քաղաքական կոնյունկտուրա է, և քանի ուշ չէ, դրա դեմը պետք է առնել: Այլապես կձևավորվի ***թուրքոֆիլական*** մի

հոսանք, որը մեր ժողովրդին տարուբերելով, մի նժարից մյուսը շպրտելով, նրա ապագային մեծ վնասներ կարող է հասցնել:

Եվ այսպես, մերժելով գիտության մեջ ներթափանցող կոնյունկտուրային անհարկի սիրախաղերը, փորձենք ցույց տալ Ռուսաստանի մեղսակցությունը արևմտահայության հանդեպ Թուրքիայի վարած քաղաքականության բացահայտ խստացման գործընթացին, Հայկական հարցի նկատմամբ այդ շրջափուլում ցարիզմի *վերադիրքավորմանը:*

Պատմական իրողությունն այն է, որ Բեռլինի վեհաժողովից ուղիղ երեք տարի անց, առաջնորդվելով իր պետական շահերով, Ռուսաստանը ոչ միայն մոռացության տվեց արևմտահայության ճակատագիրը, այլև կտրուկ շրջադարձ կատարելով, սկսեց դիվանագիտական գործարքներ կնքել Աբդուլ Համիդի հետ, միաժամանակ ուժեղացնելով ազգային-գաղութային քաղաքականությունն Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ վայրերում: Դրա պատճառները բազմաթիվ էին, բազմազան, որոնցից արձանագրենք մի քանիսը միայն:

Նախ բալկանյան հարցի լուծման հետ աղերսվում էր Ռուսաստանի ակնկալիքների ի դերև ելնելը: Ռուս-թուրքական պատերազմի ամիսներին Ալեքսանդր Երկրորդը, ռուս զինվորների արյամբ հեղեղելով Բուլղարիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի, Բոսնիայի ու Հերցեգովինայի բերդ-ամրոցները, իրոք ազատարարի դեր կատարելով սլավոնական երկրների ճակատագրում, օրորվում էր այն հույսերով, թե թուրքական կեսհազարամյա շղթաները խորտակելով, այդ ժողովուրդները կամ կանցնեն իր տիրապետության տակ կամ էլ, ինքնավարություն ստանալով, երախտագիտությամբ կշարունակեն փայփայել ռուսական կողմնորոշումը: *Կատարվեց ճիշտ հակառակը*, որը ոչ միայն հիասթափություն առաջ բերեց ռուսական արքունիքում, այլև նրան հարկադրեց վերակառուցելու արտաքին քաղաքականության հետագա ընթացքը:

Բեռլինի կոնգրեսում երկատված Բուլղարիան որոշ ժամանակ անց միավորվեց և ձևավորեց մի նոր ու միասնական տերություն: Բուլղարական գահին բազմած գերմանական ծագում ունեցող Ալեքսանդր Բատենբերգսկին անմիջապես կապերը խզեց Ռուսաստանից, ոչ միայն ինքնուրույն քաղաքականություն վարեց, այլև թեքվեց դեպի «արյունակից Գերմանիայի» երկաթյա կանցլերը: Ալեքսանդր Երրորդի հուշագրերը ապարդյուն վերջավորություն ունեցան: Ցարը, հարկադրված, Բատենբերգսկուն հեռացնել տվեց բուլղարական գահից: Նրան հաջորդող Կլեմենտի և Ցանկովի կաբինետները վերադիրքավորվեցին դեպի Ռուսաստանը, սակայն չափազանց կարճ կյանք ունեցան: Հաջորդ իշխան Ֆերդինանդ Կոբորգսկին վերջնականապես Բուլղարիան հանեց ռուսական ազդեցությունից, որի պատճառով ցարական արքունիքը թշնամացավ Բուլղարիայի հետ, նույնիսկ խզեց դիվանագիտական հարաբերությունները մինչև 1896 թ.:

Ռուսաստանն աստիճանաբար իր ազդեցությունը կորցրեց Ռումինիայում, Սերբիայում, Բոսնիայում, Հերցեգովինայում: Ռուսական պետական գործիչները զայրույթից գալարվում էին, ափսոսում, որ իրենց բանակն ազատագրեց այդ երկրները, ազատագրումից հետո ցարիզմը կորցրեց իր հեղինակությունն այդ ժողովուրդների աչքում: *Նրանք դեռևս չէին ըմբռնում, որ Բալկաններում արդեն ձևավորվել էր ազատաբաղձ ու հզոր մի մտավորականություն, որը դատապարտում էր կայսերապետական համակարգը, մերժում մեկ այլ բռնապետության լուծը և ձգտում ինքնուրույն, անկախ դեմոկրատական համակարգին:*

Բալկանյան ժողովուրդների գործընթացը լուրջ մտահոգություն առաջ բերեց Ռոմանովների արքունիքում ընդհանրապես: Այժմ թագավորն ու նրան շրջապատող հետադիմական ուժերը զգուշանում էին, բացահայտորեն երկնչում, մտածելով, թե ազատագրվելուց հետո արևմտահայերն արդյոք չե՞ն հետևի բալկանյան սլավոնների օրինակին: Նրանց կարծիքով, այդ դեպքում ռուսական երկգլխանի արծիվը ոչ միայն իր թևերը չէր տարածի Արևմտյան Հայաստանի վրա, այլև կկորցներ կես դար առաջ կայսրությանը միակցած Արևելյան Հայաստանը: Պետերբուրգի կաբինետը ցարին հասկացնում էր, կյանքի ութերորդ տասնամյակը բոլորած Գորչակովը զույգ զեկուցագրերով բացատրում, թե անկախ Հայաստան ստեղծվելու դեպքում այնտեղ կուժեղանա Մեծ Բրիտանիայի ազդեցությունը:

Բացահայտվում էր ցարիզմի դեմքը, պարզ դառնում, որ ռուսական զորքերը, գրավելով Արևմտյան Հայաստանը, ոչ թե առաջնորդվում էին մեր ժողովրդի ազատագրության առաքելությամբ, այլ իրողության պիտի վերածեին Ռուսաստանի նվաճողական դիտավորություններն ընդհանրապես: Ահա թե ինչու ժողովուրդների բանտ համարված ցարիզմը այնուհետև շուրջ երեք տասնամյակ մոռացավ արևմտահայությանը, գերադասեց մտերմություն հաստատել «արյունակցակ սուլթանի» հետ, և դրա հաշվին ռուսական նավերը ազատ երթևեկեցին Բոսֆորով ու Դարդանելով:

Ռուս-թուրքական հարաբերությունների վերականգնմանը, նրանց մերձեցմանը նպաստեց նաև աֆղանական կոնֆլիկտը: Ռուս-անգլիական հակամարտությունները Աֆղանստանի և Մերձավոր Արևելքի շուրջը 1885 թ. վերածվեցին բացահայտ թշնամանքի: Միջին Ասիայի սահմանագլխին «պատերազմը մազից էր կախված»: Նկատի ունենալով, որ պատերազմը շուտով կսկսվի Անգլիայի դեմ, ցարական արքունիքը մտածում էր, թե սուլթանն այդ պահին նեղուցների դռները կբացի բրիտանական նավատորմի առջև, որը կռմբակոծեր Սև ծովի կովկասյան ափերը: Ռուսաստանը ձգտում էր հասնել նրան, որ ճակատագրական տվյալ պահին նեղուցները «լինեին կամ թուրքական», կամ ոչ ոքի: Նա դեմ չէր նեղուցների վերահսկողությունը ստանձնելուն և այդքանով ինքը *«կմոռանար Արևմտյան Հայաստանը»*, չէր խրախու-

սի հայ ժողովրդի ազատագրական պայքարը սուլթանական բռնապետության դեմ: Այդ հարցում Ռոմանովյան դինաստիայի նախավերջին կայսրն ու թուրքական վերջին սուլթան խալիֆը միանգամից հասկացան իրար, գործեցին միասնական, որի պատճառով հերթական անգամ տուժեց հայ ժողովուրդը:

Հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի վերադիրքավորման պատճառները Պետերբուրգի կաբինետը հանիրավի որոնում էր հայ մտավորականության «անխոհեմ գործողությունների մեջ» թե՛ Սան Ստեֆանոյից մինչև Բեռլին ընկած ժամանակահատվածում և թե՛ դրանից հետո:

Որո՞նք են փաստերը: 1878 թ. փետրվարի 25-ին ոմանց կարծիքով գաղտնի, իրականում՝ սուլթանի գիտությամբ, ռուսական բանակի նստավայրի վերածված Սան Ստեֆանո ժամանեց ***մեծ հայրենասեր Ներսես Վարժապետյանը***, որը գլխավոր հրամանատար, ցարեղբայր Ն. Նիկոլաևիչին հանձնեց Հայաստանի ***«Ինքնօրինության ծրագիրը»*** քննարկված և հաստատված Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովում: Ինքնավարությունը Թուրքիայի տիրապետության տակ մի խայծ էր սուլթանի կողմից տրվող, որով ռազմական հզորությունը կորցրած Համիդը ջանում էր չեզոքացնել հայ երևելիներին, Արևմտյան Հայաստանին թույլ չտալ Ռուսաստանին միանալ:

Ինքնավարությանը սկզբում դեմ չէին ցարեղբայրը, Կ. Պոլսի ռուսական դեսպան կոմս Իգնատևը, Լոնդոնի ռուսական դեսպան Նելիդովը: Ինքնավարության խնդրանքով Ալեքսանդր Երկրորդին դիմել էին Կովկասյան ռազմաճակատում փայլուն հաղթանակներ տարած հայազգի գեներալները, հատկապես Հ. Լազարյանն ու Մ. Տ. Լոռիս-Մելիքովը, Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Նուբար Փաշան, Իրանի «փոխարքա» Մելքոն խանը:

Հեռագրային ծածկալեզու փոխհաղորդագրությունները, Սան Ստեֆանո-Պետեբուրգ կատարվող գրավոր բանակցությունները, տակավին ավարտին չհասած, անսպասելիորեն անգլիական էսկադրան մտավ Մարմարայի ջրերը, խարիսխ գցեց Իշխանաց կղզիների մոտ և անհամաձայնության դեպքում Ռուսաստանին սպառնաց պատերազմով:

Անգլիայի զորավիգ կանգնելը գոտեպնդեց Թուրքիային, և Տատյան հայկական ամիրայական գերդաստանի ամառանոցում բանակցություններ վարող Սաֆվետ փաշային ու Սաադուլահ բեյին սուլթանը հրահանգեց՝ այլևս չհամաձայնել արևմտահայությանը ինքնավարություն տալուն: Վիճակը բարդացավ, բանակցությունները ձգձգվեցին: Հաշվի առնելով Ղրիմի պատերազմի դառը փորձը, ռազմական մինիստր Դմիտրի Միլյուտինը ցարին խնդրում էր, ցարեղբորը հորդորում՝ արագ ավարտել պայմանագրի ստորագրումը, բոլոր ջանքերը գործադրել՝ խուսափելու համաեվրոպական նոր պատերազմից, որին կայսրությունը բոլորովին պատրաստ չէր:

Միլիտրիանե (Մարդին)

Հաղարծնի վանքը XI-XIII դդ.

Ծանր ու թեթև անելով, Ռուսաստանի ղեկավարությունը հրաժարվեց նախապես Իգնատևի նախագծում մտցված Հայաստանին ինքնավարություն տալու ծրագրից, գերադասեց բավարարվել Կարսի վիլայեթը և Ալաշկերտի հովիտը կայսրությանը միակցելով, իսկ հայ ժողովրդի աչքում հեղինակությունը չկորցնելու մտավախությամբ, պատեհառիթ նրան Թուրքիայի դեմ օգտագործելու նպատակով, ձևակերպեց 16-րդ հոդվածը, որը «Բարենորոգումների ու բարվոքումների» անհրաժեշտության խոստում էր միայն: Այստեղ դրական տեղաշարժն այն էր, որ Հայկական հարցը առաջին անգամ իր վրա հրավիրեց եվրոպական տերությունների ուշադրությունը, իսկ օսմանյան տիրակալները, հինգ հարյուրամյակների ընթացքում, հարկադրված եղան ընդունել Արևմտյան Հայաստանի և հայ ժողովրդի գոյությունը Ասիական Տաճկաստանում:

Սան Ստեֆանոյի պայմանագրից դժգոհ մնաց հայ ժողովուրդը, հատկապես նրա առաջավոր մտավորականությունը, քանզի հասկացան, որ ոչ գաղութակալ ու շահամոլ Եվրոպան, ոչ սուլթանական Թուրքիան և ոչ էլ ցարական Ռուսաստանը Հայաստանին անկախություն, նույնիսկ ինքնավարություն պարգևելու ցանկություն երբևէ չեն ունեցել: Արդեն պարզ դարձավ, որ մեծ տերությունների կողմից երբեմն առաջադրված Հայաստանի ինքնավարության պահանջը ավելի դիվանագիտական խաղ էր, քան թե ներքին ցանկություն:

Հայ քաղաքական գործիչները, արտահայտելով ժողովրդի բաղձանքները, ***դիվանագիտության համար ոչ հասուն մեթոդներով ու մակարդակով***, վերջին ճիգերը գործադրելով, փորձեցին դիմել Բեռլին աճապարող արևմտյան աշխարհի ու Ռուսաստանի ղեկավարներին խնդրագրերով, այսինքն՝ «թղթե շերեփով», լացով ու արտասուքով ***աղերսելու*** հայկական ինքնավարություն: Հայկական պատվիրակության հիմնական մասը, ժողովրդանվեր, ***դեմոկրատ*** Մ. Խրիմյանի գլխավորությամբ, շրջեց Եվրոպայի մայրաքաղաքներում, տեսակցություններ ունեցավ պետական ու հասարակական խոշոր գործիչների հետ, աղերսագիր բաժանելով, հասավ Բեռլին:

Ռուսական արքունիքն ակնդետ հետևում էր Խրիմյանի, Չերազի ու Փափազյանի ծավալած գործունեությանը և ***մի տեսակ ներքին խռովք էր ապրում,*** մտածելով, թե իր զորքերն ազատագրում են Արևմտյան Հայաստանը, իսկ հայերը խնդրագրեր են ներկայացնում իր հակառակորդներին՝ հատկապես բրիտանական կայսրությանը: Եվ այսպես, Եվրոպայում դեգերող հայոց պատվիրակության առաքելությունը՝ Արևմուտքից ինքնավարության նրանց թախանձանքը, դարձավ Ռուսաստանի վերաբերմունքի փոփոխման պատճառներից մեկը, տարակարծության տեղիք տվեց:

Արդյոք ճի՞շտ էին Լեոն, Բ. Բորյանը և մերօրյա այն պատմաբանները, որոնք քննադատում էին Խրիմյանի խմբի գործունեությունը,

արդյոք իրավացի՞ էին ցարանիստ քաղաքի ռուս, նույնիսկ հայ որոշ գործիչները, որոնց կարծիքով հայերը Արևմուտքին չպիտի դիմեին: Մեր կարծիքով՝ ոչ և հազար անգամ՝ ոչ:

Հետադարձ հայացքով քննադատելը հեշտ է, խրատատու մարգարեի դիմակ առնելը դյուրին, մանավանդ որ, լեհական ասացվածքով՝ քննադատները հիմնականում միայն խորհուրդներ կարող են տալ և ուրիշ ոչինչ: Դիպուկ էր նկատում Ն. Վարժապետյանը, պատասխանելով քաղաքական հակառակորդներին. «Երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պետք է ընես ինչ որ կրնաս»:

Բուն Հայաստանում շուրջ ութ դար առաջ ազգային պետականությունը կորցրած ժողովուրդը ջղաձիգ սպասելիքներով իր շնորհաշատ զավակներին դիվանագիտական պայքարի մարտահրապարակ էր նետում, նրանցից պահանջելով բոլոր միջոցներն օգտագործել, միայն թե հասնել անկախության: Նրանց կարծիքով, հարմարավետ պահը փախցնել՝ նշանակում էր ազգային դավաճանի անուն վաստակել: Այդ էր պատճառը, որ հայկական պատվիրակությունը Բեռլինում լիակատար անհաջողություն կրելով, անուշադրության մատնվելով քրիստոնյա բոլոր մեծերի կողմից, որոշեց նույնիսկ դիմել ազգությամբ հույն, բայց թուրքացած Կարաթեոդոր փաշային՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարին, նրանից խնդրելով միջնորդություն՝ Հայաստանի ինքնավարության համար:

Այս քայլն այսօր զարմանք կարող է առաջացնել, թե մի՞թե այդքան միամիտ էին հայոց մեծերը: Այո՛, այսօր կարող է անհասկանալի երևալ, իսկ այն ժամանակվա համար՝ հասկանալի, քանզի ձգտում կար փորձել բոլոր միջոցները, միայն թե հասնեին բաղձալի նպատակին:

Բեռլինի կոնգրեսում, միացյալ Եվրոպայի դեմ մղվող անհավասար պայքարում ռուսական դիվանագիտությունը կատարյալ պարտություն կրեց: Ծերունազարդ Գորչակովը վերադարձին թագավորին ուղղած ամփոփագիրն ավարտեց հետևյալ նախադասությամբ. «*Բեռլինի կոնգրեսն իմ դիվանագիտական գործունեության* ամենասև էջն է»: Կարդալով զեկուցագիրը, Ալեքսանդր Երկրորդը լուսանցքում ավելացրեց. «Իմը ևս»:

Պարտության պատճառները որոնելիս, ռուս պետական գործիչները զգուշությամբ ցարին համոզում էին, թե դրանում քիչ մեղսակցություն չունեն Եվրոպային դիմած հայ պատվիրակները, հայկական շարժման պարագլուխները, այդ թվում՝ Մ. Տ. Լոռիս-Մելիքովը, որն իբրև թե հայկական թագավորության վերականգնման և թագավոր դառնալու ակնկալություններ էր ունեցել:

Նրանք դեռ չափավոր էին արտահայտվում Լոռիս-Մելիքովի հասցեին, քանի որ վերջինս ցարական փառաբանված գեներալներից էր, Կարսի անառիկ ամրոցը գրավող հերոսը, ցարի սիրելին: Հայազգի գեներալը, դաշնակցած ռազմական նախարար Դ. Միլյուտինի, ֆինանսների նախարար Մ. Աբազայի և այլոց հետ, սնուցում էր բարեփոխությունների կողմնակիցների լիբերալ մի հոսանքին, պայքար ծավալում հետադիմականների դեմ: Ցարը հավատում էր սրանց և հենվում սրանց վրա:

Քիչ անց տեղի ունեցան դեպքեր, որոնք ոչ Ռուսաստանի և ոչ էլ հայ ժողովրդի օգտին չէին ծառայում: 1881 թ. մարտի 1-ին նարոդովոլցիները սպանեցին Ալեքսանդր Երկրորդին: Մարտի 5-ին Ձմեռային պալատում կայացած անդրանիկ հավաքում Ալեքսանդր Երրորդը հայտարարեց, թե իր հայրը ստորագրել է Լոռիս-Մելիքովի կազմած ու ներկայացրած բարեփոխումների մի ծրագիր, որը կարելի է *նույնիսկ սահմանադրություն անվանել:*

Նորընծա ցարի հայտարարությունը ռումբի նման պայթեց հավաքի մասնակիցների մեծամասնության գլխին: Թագավորի դաստիարակ, սինոդի ավագ դատախազ, արխիռեակցիոներ Կ. Պոբեդոնոսցևի զայրույթին չափ չկար: Նա անմիջապես գտավ ելքը, հետածգել տվեց նիստը և անցավ գործողությունների: Ուղիղ մեկ ամիս անց, «հրաժարման ձևակերպումով», պաշտոնաթող արեցին Լոռիս-Մելիքովին և նրա գլխավորած հոսանքի բոլոր մարդկանց: Վերջացան լիբերալ տատանումների տարիները, և Ռուսաստանի պատմության մեջ վերականգնվեցին նիկոլևյան ռեակցիայի թխպոտ ժամանակները:

Հարձակումներն ուժեղացան Լոռիս-Մելիքովի դեմ: Այժմ ոչ թե զգուշությամբ, այլ բացահայտորեն մեղադրում էին հայազգի պետական այդ գործչին, նրա երեսին շպրտում հայոց թագավոր դառնալու ձգտում ունենալու փաստը, անվստահությամբ ու կասկածամտությամբ վերաբերվում նրա նկատմամբ: Սակայն ռեակցիոն պահպանողականները հալածանքի մի անազնիվ արշավանք էին ծավալում ոչ միայն զույգ մայրաքաղաքներում հաստատված հայազգի գրեթե բոլոր գործիչների, այլև ողջ հայ ժողովրդի դեմ: Պատմաբանների ուշադրությունից ցայսօր վրիպած այս եղելությունը պակաս դեր չի խաղացել հայկական հարցի նկատմամբ ցարիզմի նոր կեցվածք ընդունելու, հայերին «ըմբոստ», «երախտամոռ» ազգ համարելու մեջ:

Ալեքսանդր Երրորդի գահակալության երկրորդ տարվանից սկսած Արևմտյան Հայաստանի, հատկապես հայկական հարցի նկատմամբ Պետերբուրգի բացասական վերաբերմունքն ակներև էր: 1883 թ. Ռաֆֆին հաղորդում էր, թե «կառավարության տրամադրությունը հայկական հարցի վերաբերմամբ այժմ, ինչպես երևում է, փոխվել է»: Գր. Արծրունին գանգատվում էր, որ նախկինում գրաքննիչն ինքն էր հորդորում մերկացնող նյութեր հրապարակել Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի մասին, իսկ այժմ հաճույքով դրանք մկրատում է «Մշակի» շարվածքից:

Ներքին գործերի նախարարությունը մայրաքաղաքից ծածկալեզու հրահանգներով Կովկասի կառավարչապետին, գրաքննչական կոմի-

տեին հանձնարարում է ուժեղացնել հսկողությունը հայկական մամուլի, գրականության վրա: Արդեն «Մշակին» դիտողություն էին անում թուրքական պետական գործիչների չարաշահումների մասին հոդվածներ հրապարակելու համար: Քիչ անց խուզարկեցին «Մշակի» խմբագրատունը, հավաքեցին և այրեցին Թուրքիային վերաբերող նյութերը, իսկ Ռաֆֆուն և Արծրունուն դրեցին հսկողության տակ:

Երևանում գործում էր «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը: Նրա գլխավոր նպատակն էր արևմտահայության ազատագրումը սուլթանական տիրապետությունից: Ռեակցիայի սկզբնավորման օրերին արդեն ոչ միայն արգելվեց կազմակերպության գործունեությունը, այլև բանտարկվեցին նրա անդամները և քաղաքական դատավարություն կազմակերպվեց: Դատավարության ժամանակ հայտարարվեց, որ այսուհետև խստագույն պատժի կենթարկվեն այն անձնավորությունները, ովքեր կհանդգնեն պաշտպանել արևմտահայության իրավունքները:

Կովկասի կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովը հետախուզության ծառայությունից պահանջում էր առանձնակի ուշադրությամբ հետևել «ազգային սեպարատիստական շարժումներին», ուժեղացնել հսկողությունը «հայերի մեջ սկսված քաղաքական ըմբոստացումների նկատմամբ»: Ցարին ուղղած նրա զեկուցագրերը բովանդակում են անհանգստություն Էջմիածնի հայոց կաթողիկոսի թեկնածության վերաբերյալ:

1884 թ. Էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց համայն հայության աչքում մեծ համարում ունեցող Ներսես Վարժապետյանը, որն իր անձնավորությամբ խորհրդանշում էր հավաքական Հայաստանի գաղափարը: Վարժապետյանը պայքարել և շարունակում էր պայքարը արևմտահայության ինքնավարության նշանաբանով, հովանավորել էր «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության այն անդամներին, որոնք գտնվում էին թուրքական բանտերում:

Հաստատել Վարժապետյանին Հայոց կաթողիկոս, նշանակում էր ոչ միայն հարվածել նրա հակառակորդ Աբդուլ Համիդին, այլև վրդովեցնել ցարական սահարյուրակային գործիչներին: Այդ ամենը հաշվի առնելով, Ալեքսանդր Երրորդը ոչ միայն չհաստատեց Վարժապետյանի ընտրությունը, այլև կարգադրեց 1884 թ. հոկտեմբերին վախճանված Ներսեսի մահախոսականը տպագրած «Արձագանք» հանդեսի համարները բռնագրավել և այրել:

Ցարական արքունիքում հասունանում էր հայադավ մի այլ մտադրություն: Նրանք որոշել էին հայոց կաթողիկոսական գահը, վեհափառի նստավայրը Էջմիածնից փոխադրել Պետերբուրգ և լուսավորչական եկեղեցին աստիճանաբար ձուլել ուղղափառի հետ: Ոտքի կանգնեց բարձրաստիճան հոգևորականությունը, աստիճանաբար իր շարքերը համալրելով ողջ հայությունից. ցարի գլխին տեղացող իրենց հեռագրերով նրանք սպառնացին, թե նման որոշման կիրառման դեպքում Մայր աթոռը կտեղափոխեն կամ Թուրքիա, կամ էլ Պարսկաստան: Թագավորը և նրա խորհրդական, մոլի ռեակցիոներ ու շովինիստ Պոբեդոնոսցևը հարկադրված էին տեղի տալ և հրաժարվել իրենց մտադրությունից:

1885 թ. ցարական կառավարությունը փակեց կովկասահայ 200 դպրոցներ, որի պատճառով 20 հազար հայ աշակերտներ փողոց նետվեցին: Պետական դպրոցներում սովորող հայ աշակերտներին պարտադրում էին դասերի սկզբում և վերջում աղոթել ռուսաց լեզվով: Երևանի նահանգում ծնված հայ երեխաներին գրանցելիս, ծնողներին պարտադրում էին ազգանվան վերջավորության *յան*-ը փոխարինել *ով*-ով:

Այսպիսով, անցյալ դարի 80-ական թվականներին, հատկապես երկրորդ կեսին, Ալեքսանդր Երրորդն ու Պոբեդոնոսցևը հայ ժողովրդի նկատմամբ վարում էին բացահայտ հալածական քաղաքականություն, որից անշուշտ օգտվում էր սուլթան Համիդը:

Անդրադառնանք երկու կարևոր հարցի ևս: Ինչպես տեսանք, հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի վերադիրքավորմանը վերաբերող բոլոր կարևոր ու երկրորդական փաստերն առանց սքողելու հանձնելով ընթերցողի ուշադրությանը, մենք բնավ էլ չենք ուզում միավորվել Ռուսաստանի մերկապարանոց դատապաշտպանների խմբավորմանը: Սակայն չենք կարող անգիտանալ նաև, որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հավասարության նշան դնողներն իրենց գիտական խղճի հետ պիտի սակարկության մեջ մտնեն և ուրանան այն հանգամանքը, որ հայ ժողովրդի գերակշիռ մեծամասնությունը ինչպես այն օրերին, այնպես էլ այժմ շարունակում է փայփայել ռուսական կողմնորոշումը: ***Թուրքիան ոչնչացրեց հայության մեծամասնությանը, ցարիզմը սպանեց հայ ժողովրդի առողջ բանականությունը:*** Բայց և այնպես, ռուս ժողովուրդը, նրա առաջավոր զավակները շատ դեպքերում զորավիգ կանգնեցին մեզ և նպաստ բերեցին հայության ֆիզիկական գոյապահպանությանը: Ուրանալ ամեն բնույթի լավն ու դրականը, նշանակում է մահմեդական օվկիանոսի մեջ իբրև անպաշտպան կղզյակ ընկած Հայաստան աշխարհի այսօրվա ոչ կայուն վիճակը մեկ անգամ ևս վտանգել, խաղալ երերուն քայլերով դեպի առաջընթացն առաջնորդվող մեր ժողովրդի ճակատագրի հետ, որի համար ո՛չ մեր օրերում և ո՛չ էլ ապագայում սերունդները չեն ների մեզ:

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ համիդյան վարչակարգի ցեղասպանության քաղաքականությունը հարկադրեց հայ ժողովրդին բարձրանալու ազգային-ազատագրական, հեղափոխական զոհառատ պայքարի, բալկանյան սլավոնների օրինակով ծնունդ տալու ***հայդուկային շարժման, ինքնապաշտպանական գոյամարտերի*** հոտընկայս մեռնելը գերադասելով սողալով ապրելուց:

Անցյալ դարի 80-ականների սկզբից ձևավորվեցին ընդհատակյա հեղափոխական խմբակներ ու կազմակերպություններ, որոնց ցանցը տարածվեց Վասպուրականում, Բարձր Հայքում, Հայկական Կիլիկիայում, Թիֆլիսում, Երևանում, Մոսկվայում և այլուր: Շարժումը գնալով համահայկական բնավորություն ստացավ, որի սուր սլաքներն ուղղվեցին ոչ միայն սուլթանական բռնապետության, այլև ռուսական ցարիզմի դեմ[1]:

2. Վանի «Մև խաչ» կազմակերպությունը

Ռուս-թուրքական (1877-1878) պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, սակայն արևմտյան տերությունների, հատկապես Անգլիայի խարդախ քաղաքականության հետևանքով ռուսական բանակը հարկադրված էր թողնել Արևմտյան Հայաստանի տարածքը: 1878 թ. դեկտեմբերին այլևս չէին երևում հեռացող զորքի գումակները, չէին լսվում հրանոթները քարշակող սայլերի ճռնչոցները, թուրքերի ձեռքերով Հայաստանի քաղաքադռներից պոկվել ու դեն էին շպրտվել ցարական գերբն ու զինանշանը:

Արևմտահայությունը, մի ձեռքին իբրև խաբկանք բռնած 61-րդ հոդվածը, մյուս ձեռքն առած գութանի մաճը, կրծքին կախած Քրիստոսի խաչը, որոշեց հիմնավորապես կանգնել հայրենի գետնի վրա, *կանգնած մեռնելը գերադասելով սողալով ապրելուց:* Նման մտահոգությամբ հայությունը, մի աչքում արտասուք, մյուսում ծիծաղ, ուզում էր, ջանում էր, պայքարում էր թևակոխելու նոր կյանքի արշալույսը: Այդ նույն ամիսներին վրեժի ցասումով լցված, ռուսական բանակի առկայության պահին իրենց ազատ պահած հայերի վրա զայրացած թուրք աղաներն ու քուրդ բեկերը, չերքեզներն ու լազերը, զինված ու զրահավորված, ակնդետ հետևում էին դեպքերի զարգացման ընթացքին, ականջալուր սպասում էին Ստամբուլից ստացվելիք մի փոքր հրամանի, որպեսզի թափեին կուտակված մաղձը, վայրենի կատաղությամբ պատառոտեին Բեռլինի կոնգրեսի անբովանդակ որոշումները, ջարդեին գութանի մաճն ու տրորեին Հայոց Առաքելական եկեղեցու սրբացրած խաչը:

Ռուս-թուրքական պատերազմն առավել ծանր ու քայքայիչ ազդեցություն ունեցավ Արևմտյան Հայաստանի տնտեսության վրա: Իրար դեմ խոյացող հակառակորդ երկու տերությունների զինվորների ձիերի սմբակների տակ տրորվելով, ոչնչացան հայոց ցանքատարածությունները, ամայի դաշտերի վերածվեցին բարեբեր ագարակները, կտրատվեցին պտղատու ծառերն ու այգիները: Թուրքերի կողմից այրվելով մոխրացավ Վանի հարուստ շուկան, անկում ապրեցին առևտուրն ու արհեստագործությունը: Միշտ արարող, շնորհաշատ վանեցին կորցրեց տասնամյակներով հավաքած, խնայած ու խնամած դրամագլուխը: Շատերն հարկադրաբար, ժամանակավորապես լքեցին հայրենի բնօրանը և բռնեցին գաղթի կործանարար ճանապարհը:

Պատերազմի ավարտից հետո, Բեռլինի կոնգրեսի խաբկանքից ոգևորված վերադարձողների արցունքակալած աչքերի առջև սեփական հողը, տներն ու անասնագոմերը, խանութներն ու արհեստանոցները ներկայացան մոխրակալած վիճակում: Քաղաքակրթության հարյուրամյակում վերակրկնվեցին Լենկ Թեմուրի, Չինգիզ խանի ժամանակները՝ ավելի դաժան, ավելի անտանելի:

1879 թվականին սոսկալի երաշտ էր և, բախտի դաժան քմահաճույքով, կարծես բնությունն էլ երես էր դարձրել մեր ժողովրդից: Մեկ ամբողջ տարի Բագրևանդի և Վասպուրականի դաշտերը, անձրևի կաթիլ չտեսնելով, նույնիսկ չթփակալեցին, հետևաբար և հունձ տեղի չունեցավ: Սկսվեց սովը, որին հաջորդեցին տիֆը և համաճարակային այլ հիվանդություններ: Քաղցից, հիվանդություններից սովամահության վտանգի առաջ կանգնեցին արևմտահայ գյուղացիությունը, եզիդիները, քուրդ աշխատավորական զանգվածները: Առավել անփրկելի էին համարվում ծնողակորույս հազարավոր այն մանուկները, որոնք պատերազմի պատճառով որբացել էին: Սուլթան Համիդն այս բոլորը տեսնում էր և դիվային ներքին բավականություն էր ստանում, երբ կոտորվում էին «քյաֆուր Մոսկովին» զորավիգ կանգնած, «անկախություն նվաճելու հովերով» օրորվող գյավուրները՝ հատկապես հայերը:

Մարդակեր հրեշը, սակայն, միայն բնության աղետներով չէր բավարարվում: Նա թուրք աղաներին և քուրդ բեկերին ֆինանսավորում էր, գինում, գաղտնածածուկ հանձնարարում հաշվեհարդար տեսնել անպաշտպան այն ժողովրդի հետ, որը համարձակվել էր բողոքագրերով դիմել քրիստոսապաշտ աշխարհին, պահանջելով պատժել իրեն այդքան վիշտ ու զրկանք պատճառող մահմեդական վերնախավերին: Ոգևորված սուլթան-խալիֆի քաջալերանքներից, Բեդերխանի զավակների և Չալալեդդինի գլխավորած հրոսակները նոր թափով ձեռնամուխ եղան հատկապես Վասպուրականի հայության կողոպտմանը, անարգմանը, զանգվածային ոչնչացմանը: Երկիրը վերածվեց արցունքի հովտի, ժողովուրդը կորցրեց ֆիզիկապես հարատևելու բոլոր երանգի հույսերը:

Դեպքերին ականատես, թուրքական բանտադժոխքներում տասնամյակներով երիտասարդական կյանքը մաշած, բայց հրաշքով ողջ մնացած ազատության զինվոր Յ. Կ. Ճանկուլյանը *«Հիշատակներ հայկական ճգնաժամեն»* աշխատության էջերում այդ տարիների մասին ընթերցողի ուշադրությանն է հանձնում ընդհանրացնող մի այնպիսի շարադրանք, որը այսօր էլ կարող է ցնցել յուրաքանչյուր մար-

[1] Սույն հատվածը տպագրել ենք «Հայաստան» օրաթերթի 1991 թ. մարտի 8-ի N 43-ում:

դու, առավել ևս, հայ մարդուն: Նա գրում է, թե Վանի երիտասարդությունը «լսած և տեսած էր այն ահռելի սրբապղծությունները, որ տեղի ունեցած էին իր դարավոր վանքերուն և եկեղեցիներուն վրա, ինչպես և իր մայրերուն, քույրերուն բռնաբարությունը և հափշտակությունը: Ասոնցմե քանիներ թուրքական ու քրդական հարեմներուն մեջ պահելով իրենց անարգ կիրքերուն հագեցման կծառայեին բռնությամբ: Քանի որ իրենց մայրերուն արգանդեն դուրս հանված մանկիկներուն գլուխներն այդ գազաններու տեգերուն գլուխն անցուցած էին, քանի որ իր արենակիցներուն շեն տուներն ու օջախներն ավերակ դարձուցած էին և իրենց լեռներուն ու ձորերուն մեջ աստանդական թափառիկներ դարձած էին, քանի որ այդ շեն օջախներուն բնակիչներն չոր պատառ հացի մը կարոտ կքաշեին, քանի որ իրենց հայրերուն հույսն ու ապավեն եղած կրպակներն, ստացվածքներն ու ապրանքներն այրած ու մոխիր դարձած էին, և քանի որ վերջապես, տեղի ունեցածները բացարձակապես զրկանք, անիրավություն և անարդարություն էին: Վերջապես կըսեմ Վանա երիտասարդությունն եթե այդ ամեն եղածներուն համակերպեր և «ճակատագրական է» ըսելով լուռ ու անտարբեր մնար, իր ճակտին վրա դրոշմել կտար կենդանի մեռյալի դատակնիքը, և իր նախնիքներուն և պապերուն նախատանց ու ապագա սերունդին պարսավանց ու անեծքին նշավակ պիտի ըլլար»:

Վերոհիշյալ տողերը բավական են մերկացնելու պատմության այն կեղծարարներին, որոնց կարծիքով արևմտահայերն Հայաստանում լավ էին ապրում, սակայն կովկասահայերի դրդմամբ անջատողականության ուղին բռնեցին և անշնորհակալ ազգ դուրս եկան: Կեղծարարները պիտի ծանոթանան փաստերին, այսինքն, վերևում բերված և համանման բազում այլ քաղվածքներին, որպեսզի այլևս չդատապարտեն, չքննադատեն հարկադրաբար ինքնապաշտպանության նախապատրաստություն տեսնող ժողովրդին, նրան պայքարի մարտադաշտ հրավիրող խանդավառ ու հայրենանվեր երիտասարդներին, հատկապես վասպուրականցիներին:

Պատերազմից հետո ազատագրական ոգորումներն ուժեղացան փաշայանիստ Վան քաղաքում, մանավանդ որ այստեղ էին հիմնվել անգլիական ու ռուսական փոխհյուպատոսությունները, խնդիր ունենալով իրողության վերածելու Բեռլինի կոնգրեսով նախատեսված բարենորոգումներն այդ վիլայեթում: Ազատատենչ երիտասարդությանը զորավիգ էր կանգնում ծնունդով նուխեցի, հայազգի *Կոնստանդին Կամսարականը,* որն իբրև ռուսական փոխհյուպատոս պաշտոնավարում էր Վանում, սերտ կապեր հաստատելով տեղի հայ ազատամարտիկների հետ, նրանց ոչ միայն խորհուրդներ էր տալիս, այլև դրամական միջոցներ տրամադրում զենք գնելու, զորավարժություններ կատարելու, հարմար պահին դիմագրավելու նպատակով:

Պայքարի հրապարակ են նետվում նոր մարդիկ, որոնք գաղափարական շրջադարձ էին կատարել ինչպես պատերազմի, այնպես էլ ազգային-ազատագրական շարժումների ազդեցության տակ: Այդ երիտասարդներն իրենց ծրագրերը տարածում էին թե դպրոցական շենքերի անձուկ պատերի ներսում և թե լայն հասարակայնության մեջ: Նրանք սերմանում էին նոր ուսմունքներ, բերում նոր տրամադրություններ, ձգտելով որքան հնարավոր էր ժողովրդին արագ և հիմնավորապես հասցնել հոգեկան հեղաշրջմանը, վերջինիս հանգեցնել ինքնաճանաչման գաղափարին, դարերով ստրկացած, գլուխը ծռելուն սովորած հայ մարդու միտքն ու զգացումն ազատել նման կապանքներից, նախապայմաններ ստեղծել քաղաքական հեղաբեկումների համար:

Կարճ ժամանակահատվածում կերպարանափոխվում է Վանի հայկական դպրոցը: Արմատապես վերակառուցվում են դասավանդվող առարկաները: Մտցվում են ֆիզիկական դաստիարակություն, աշխարհաբար լեզու, հայոց պատմություն ու աշխարհագրություն, որոնք դառնում են *հայություն* պատվաստելու զորեղ միջոցներ: Ուսուցիչներն աշակերտներին տանում էին քաղաքից դուրս և փայտե հրացաններով նրանց զինավարժություններ էին սովորեցնում, վերադարձին անցկացնում քաղաքի կենտրոնական փողոցներով, որպեսզի մեծահասակները տեսնեն, հպարտանան իրենց զավակների *ազգանվեր գործողություններով:*

Արմատական փոխակերպման են ենթարկվում դասավանդման ավանդական մեթոդները: Ուսուցման վանական սխոլաստիկ եղանակին փոխարինելու էին գալիս կենդանի խոսքը, մարդկանց ձեռք բերած փորձի, կյանքից վերցված պատմության դրվագների ներկայացումը հետաքրքիր ու գունագեղ: Կատարվում էր խաղաղ, անաղմուկ և կուլտուրական մի հեղաբեկում, որը կենտրոնացնում էր ժողովրդի հոգևոր կարողությունները, նրան դուրս բերում լոթարինգյան, ընդարմացյալ կենսավիճակից: Հայ դպրոցը գերազանցապես կրոնի ուսուցման իր հնամենի եղանակներից աստիճանաբար անցնում էր *ազգային դաստիարակության շրջափուլը,* որի ընթացքում ոչ միայն վանական վարդապետին փոխարինելու էին գալիս աշխարհիկ ուսուցիչներ, այլև վերակառուցվում էին նաև հոգևորականի վեղար հագած կրոնական դաստիարակները:

Իբրև ընդհանրացում արձանագրենք, որ ետբեռլինյան հնգամյակում ողջ արևմտահայ բնաշխարհում, առավել ևս Վասպուրականում, ձևավորվեցին հայ ժողովրդին գործողության նպատակամղելու երկու ճանապարհ, այն է *խաղաղ-կուլտուրական* և *հեղափոխական-քաղաքական:* Լուրջ քայլեր կատարվեցին երկրի տնտեսական զարգացման ուղղությամբ:

Սակայն դժվարանց ու վտանգներով առլեցուն այդ գործելաձևերի գաղափարաբանները հրապարակ էին իջել պայքարելու գիրկընդխառն, իրար սերտաճած: Նրանք հասկացել էին և ժողովրդին էլ հասկացնում էին, թե հայության փրկության գրավականը գտնվում է նրա կարո-

ղությունների միավորման, հավաքականության, սեփական ուժերով պայքարի քառուղիներում: Հայ ժողովուրդն այնուհետև պիտի գնար նոր զոհողությունների, պայքարեր իր նման ու իր համար, հասներ մտավոր վերածննդի, նյութական կարողությունների, տնտեսական առաջընթացի, զենք ու զինամթերք ձեռք բերեր, ազգային բանակ ձևավորեր, այնուհետև միայն ապավիներ դիվանագիտական միջոցների: Առանց այդ ամենի քրիստոնյա ոչ մի տերություն հայության պաշտպան կանգնել չէր ցանկանա: Դրա առհավատչյան «փուչ ու փեզեվենկ» Եվրոպայի դիրքորոշումն էր Բեռլինի կոնգրեսում, որի երկաթյա վարագույրների հետևում «հարիսա ստացան միայն այն ազգերը», որոնք «երկաթյա շերեփ» էին բռնել զոհամատույց իրենց ձեռքերում:

Այսպիսով, միաժամանակ գործելու երկու եղանակների մշակումը պատճառաբանված էր: Դրանք հայ ժողովրդի *ինքնաճանաչման*, որից հետո միայն *ինքնորոշման* երկու տարբեր մայրուղիներն էին՝ ուղղված միևնույն նպատակին, այսինքն, նախ՝ տնտեսական ու մշակութային վերակառուցմանը, ապա միայն՝ քաղաքական *լիակատար անկախությանը:*

Օրվա կարգախոս ունենալով վերոհիշյալ սկզբունքները, Վասպուրականի առաջադեմ մտավորականները, եկեղեցական ու քաղաքական գործիչները, բարոյական աջակցություն և նյութական օգնություն ստանալով հանուր հայաշխարհից, արտահայտելով ժողովրդի կամքը, որոշեցին հիմնել հեղափոխական գաղտնի կազմակերպություններ, որոնցից առաջինը *«Սև խաչն»* էր:

«Սև խաչը» կազմակերպչորեն ձևավորվեց 1878 թ. Բեռլինի կոնգրեսից մի քանի ամիս անց, այն էլ՝ Մ. Խրիմյանի *երկաթյա շերեփի* քարոզչության ազդեցությամբ, պատգամախոսի համաձայնությամբ ու հովանավորությամբ: Կազմակերպության գաղափարական առաջնորդներն էին Մ. Խրիմյանը, Մ. Փորթուգալյանը, Ա. Թոխմախյանը, Ս. Տեր-Սարգսենցը (Տևկանց) և ուրիշներ, որոնց անունները, վարպետորեն գաղտնի պահվելու պատճառով, հայտնի չդարձան ոչ՝ Վանի փաշային և ոչ՝ էլ կենտրոնական կառավարությանը:

Կազմակերպության հիմնադիր անդամներն էին *Մկրտիչ Փորթուգալյանը, Հարություն Ճանկուլյանը, Մարկոս Նաթանյանը, Մկրտիչ Սեֆիլյանը, Տաճատ Պեյլերյանը:* 1880 թ. սրանց շարքերն համալրեցին *Խաչատուր Սոլախյանը, Ա. Շիրակյանը, Գարեգին Իսագուլյանը, Գրիգորիս Աղվանյանը, Գևորգ Թաշչանյանը, Սողոմոնյանը, Գևորգ Օտյանը* և ուրիշներ: «Սև խաչի» գործունեությանը սատար էին կանգնում «Միացյալ ընկերության» տեսուչ *Մկրտիչ Սարբյանը,* Կարինի *«Պաշտպան Հայրենյաց»* ազատագրական կազմակերպության առաջնորդ *Խաչատուր Կերեքցյանը,* ռուսական փոխհյուպատոս *Կոնստանդին Կամսարականը:*

«Սև խաչը» ծյուղավորված կազմակերպություն էր, որի մասնաճյուղերից հայտնի են երեքը: Վանում գործող և *«Զինակիր»* անուն ստացած մասնաճյուղը խնդիր ուներ կազմակերպության գրանցված անդամներին և ընդհանրապես համակիր երիտասարդությանը զենք գործածել սովորեցնել: Շաբաթ և կիրակի, ինչպես նաև տոն օրերին նրանք խմբովին բարձրանում էին Վարագա լեռան փեշերը և մարտական զենքով զինավարժություններ էին կատարում, նշանախեցի վրա ճշգրիտ կրակելուն վարժվում: Այս փաստարկը հիմք է տալիս եզրակացնելու, թե «Սև խաչը» հեղափոխական կազմակերպություն էր, ուներ զենք ու զինամթերք, ծրագրեր՝ այդ զենքը ինքնապաշտպանության նպատակներին ծառայեցնելու:

«Քաղաքական ակումբ» անմեղ թիկնոց առած մասնաճյուղը համահավաքում էր կազմակերպության գաղափարական առաջնորդներին, ինչպես նաև ճարտասանական տաղանդով օժտված այն բանախոսներին, որոնք երիտասարդության համար կարդացած իրենց դասախոսություններով հայրենասիրական ու ազատագրական պայքարի գաղափարներ էին արմատավորում ունկնդիրների մատաղ հոգում: Այդ մասնաճյուղը գլխավորում էր կրակոտ ճարտասան Տաճատ Պեյլերյանը: Նա Հայկազյան վարժարանի շենքում պարբերաբար դասախոսություններ էր կարդում, միաժամանակ բանախոսությունների հրավիրում Մ. Փորթուգալյանին, Սողոմոնյանին և ուրիշների: «Քաղաքական ակումբը» փաստորեն դառնում էր ընդհանուր կազմակերպության գործունեությանն ու նպատակներին վերաբերող սկզբունքների մշակման հիմնական օղակը, գաղափարական գլխամասը:

Սկզբնական շրջանում «Սև խաչի» մեջ մտնող *«Հայրենասերների միությունը»* հիմնադրեց «Միացյալ ընկերության» փոխտեսուչ Մարկոս Նաթանյանը: *Երրորդ այս մասնաճյուղը* գործում էր հրապարակայնորեն, զբաղվում էր երիտասարդության կրթության և դաստիարակության խնդիրներով, ուղղություն էր տալիս դպրոցներին, ճշգրտում այնտեղ դասավանդվող առարկաների ցանկը, կազմում նոր դասագրքեր և ծրագրեր: Այս հանձնախումբը խաղաղ, անաղմուկ ձևով էր դաստիարակում նոր սերնդին, նրանից *հեղափոխության* զինվորներ պատրաստում, առանց այդ բառն արտասանելու: Հատկանշական էր եռամասն այդ կազմակերպության ընդհանուր անվանակոչությունը: Արգոսի աչքերով հայերի գործողություններին հետևող թուրքական գաղտնի ոստիկանության անմարդկային պատիժներից խուսափումը նշանեցի հեղափոխականներին հարկադրում էր կազմակերպության համար *«Սև խաչ»* անունն ընտրել, որը նշանակում էր՝ *«կազմակերպության դավաճան և անգաղտնապահ ընկերոջ անվան վրա սև խաչ քաշելով, իսկույն նեթ մահվան դատապարտել»:*

Կազմակերպության ծրագրերի և գործողությունների մասին անհրաժեշտ նյութեր չեն պահպանվել, քանզի, խիստ կարգապահության և գաղտնապահության պատճառով, այն եղավ միակ հեղափոխական մարմինը ողջ հայ ազատամարտերի պատմության քառուղիներում,

որը հուսալքվողներ, թուլամորթներ ու դավաճաններ համարյա չունեցավ իր շարքերում: Հետևաբար կամ ընդարմացված մնացին նրա գործունեությանը վերաբերող վավերագրերը, կամ էլ հետագայում զոհ գնացին Վանում կիրառված թուրքական ջարդարարություններին: Վերապրողների թողած հուշագրությունները ևս կցկտուր են, ժլատ ու իրարամերժ: Ահա այս պարագան է հիմնապատճառը, որ մինչև օրս էլ «Սև խաչի» մասին պատմաբանների կողմից բավարար շարադրանք չի ներակայացվել ընթերցողի ուշադրությանը: Ըստ արժանվույն չի գնահատվել հերոսական այդ դրվագի մասնակիցների սխրագործությունը:

Այդուհանդերձ, պահպանված փաստական փոքրաքանակ նյութերից պարզվում է, որ կազմակերպության հիմնադիր ժողովն իր գործունեության մասին որոշում էր կայացրել, թե. ***«Սև խաչի» նպատակն էր ժողովուրդին մեջ ինքնապաշտպանության ոգին տարածել, իր իրավանց տեր ընել և իբր մարդ ապրիլ»:*** «Զինակիր» մասնաճյուղը պարտավորություն էր վերցնում զենք հայթայթել, երիտասարդությանը զինել և պատրաստվել ինքնապաշտպանությանը: Բայց ի՞նչպես, ի՞նչ միջոցներով և որպիսի՞ մեթոդներով:

Դրանք դժվարամարս խնդիրներ էին, սակայն՝ ոչ անլուծելի: Նախ, վանեցիներն իրենց գաղտնարաններում էին պահել դեռևս 1847 թ. Բ. Դռնից ստացած այն զենքերը, որով կռվեցին քրդական դերեբեյությունների (ձորապետությունների) դեմ, օգնեցին կենտրոնական կառավարությանը վերահպատակեցնելու Բեդեր-խան բեյին, Մահմուդ և Ավդալ խաներին: Թուրքական տերությունն այդ պահին քրիստոնյա հպատակ ազգերին օգտագործում էր կենտրոնախույս ուժերի դեմ, առատ խոստումներով գավառահայությանն իր կողմը գրավում, պետությունը կենտրոնացնում:

Հայ ժողովուրդը դարերով համտես էր արել այդ սին ու պատիր խոստումների դառը դեղահաբերը: Նա չէր խաբվում: Վասպուրականն ու Տարոնը, Բագրևանդն ու Բարձր Հայքն էլ իրենց հաշիվներն ունեին վայրենաբարո քուրդ բեկերի հետ: Այդ էր պատճառը, որ Կ. Պոլսի Մատթեոս պատրիարքի զույգ կոչերին անմիջապես սատար կանգնեցին հազարավոր հայեր, զինվեցին ու վրեժի դարավոր ցասումով պատժեցին իրենց ընտանիքների պատիվն արատավորող այդ աշիրեթներին: Պայքարն հաղթականորեն ավարտվեց 1849 թ., իսկ ստացած զենքի մեծ մասը շարունակեց մնալ հայերի ձեռքում:

Դարի երկրորդ կեսին ծավալված ռուս-թուրքական երկու պատերազմների Կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողությունները փոթորկվում էին Արևմտյան Հայաստանի տարածքի վրա: Ռուսական բանակի դրոշի ներքո *երկիր* առաջնորդվող հայ կամավորները, հայազգի գեներալները, հուսախաբված հեռանալով ազատագրած հայոց նահանգներից, վերադարձին զենք ու զինամթերք էին թողնում տեղացիներին, հորդորում ինքնապաշտպանության: Վասպուրականն այդ

տարիներին ևս զենք ձեռք բերեց և մտածում էր ի հարկին գործածել:

Եղած զենքը, բնականաբար, բավարար չէր ինքնապաշտպանական լայնահուն գործողությունների համար: Նկատի ունենալով այդ պարագան, Վանի արհեստավորները, Մ. Խրիմյանի և Մ. Փորթուգալյանի գաղտնի հանձնարարությամբ, սկսում են զբաղվել *սեփական զենքի* արտադրության գործով: Վանեցի զինագործ Փանոսն իր նկուղահարկում տեղակայած արհեստանոցում *«Բերդան»* կամ *«Սուրմալի»* մակնիշի հրացաններ էր պատրաստում, ապա վերանորոգում հները: Հմտանալով այդ արհեստի մեջ, իր շուրջն համախմբելով շնորհալի աշակերտների, նա որոշեց և արտադրեց նաև ամերիկյան *«Մարտին»* տիպի հրացաններ, որի մասին իմանալով՝ Վանի փաշան վարպետին ֆիզիկապես ոչնչացնելու «սպառնալիք կարդաց»:

«Սև խաչ» կազմակերպությունը գնալով ընդլայնվում էր, անդամագրվողների ցանկը մեծանում, պայթունավտանգ պահը մոտենում: Նոր անդամներին զինելու նպատակով «Զինակիր» մասնաճյուղը որոշեց դիմել զենքի առք ու վաճառքով զբաղվող «հայ մաքսանենգներին» և նրանց պարտադրեց թուրքական զորանոցներից «գնված», այսինքն, գողացած զենքը *վաճառել միայն հայերին:* Դրա համար մեծաքանակ դրամի կարիք էր զգացվում, որը դժվար էր գտնել, մանավանդ, երբ վանեցի վաճառականներն իրենց քսակների բերանը ամուր թելերով պինդ կապել էին:

Այդուհանդերձ, ելքը գտնվեց: Աղթամարում աթոռակալած Խաչատուր կաթողիկոսը կապված էր թուրքամետ վարդապետ Պողոս Մելիքյանի հետ և քաղաքում կատարված անցուդարձերի մասին նրանից տեղեկություններ ստանալով՝ անմիջապես հաղորդում էր կուսակալին, փոխարենը գրպանելով առատ նվերներ, դրանցից բաժին հանելով նաև սևահոգի գործակալին:

Անարժանիորեն հայ հոգևորականի վեղար հագած այդ անձնավորությունների դիզած հարստությունը, բնականաբար, գոյացել էր սեփական ազգի սրբազան մասունքները թուրքերին «ծախելու» գնով: Կազմակերպության նախազգուշացումները, նրանց մատնության ճանապարհից ետ պահելու ուղղությամբ, մնացին ապարդյուն: «Սև խաչը» որոշեց պատժել որկրամոլ ու դավաճան այդ հոգևորականներին:

1885 թ. հունիսի կեսերին կազմակերպության մի խումբ անդամներ, Մկրտիչ Սեֆիլյանի գլխավորությամբ, հետները վերցնելով գինի, մտնում են Աղթամար կղզին, կիրակնօրյա պատարագի արարողության ավարտից հետո վանքի միաբաններից Պողոս Խիզանցուն և Խորեն Կեցանցուն հրավիրում են խնջույքի: Միաբաններին հարբեցնելով, նրանք կարողանում են «ձեռք գցել» վանքի գաղտնարանի բանալիները, մտնում են գանձարանը, առգրավում են *չորս հազար ոսկին* և գիշերով հեռանում կղզուց:

Մի կողմ թողնելով «ոսկու գործի» դատավարության պատմության մանրամասները, այստեղ *արձանագրենք, որ «Սև խաչն» արդեն*

ուներ բավարար քանակությամբ դրամական միջոցներ և կարող էր զենք գնել ու այդ զենքով զինել ոչ միայն քաղաքի, այլև ողջ նահանգի հեղափոխականացող երիտասարդությանը: Սակայն տեղի ունեցավ հիշարժան մի դիպված ևս:

1885 թ. ամռանը կազմակերպության հետախուզական խումբը տեղեկություն ստացավ, թե մանրավաճառությամբ զբաղվող Պ. Գ. Թ. (անունները անհայտ մնացին) եղբայրները թուրքական զորանոցներից զենքեր են գնում, ապա վաճառում պարսիկներին և քրդերին: Հրավիրվեց գաղտնի ժողով, որը որոշեց զգուշացնել ազգությամբ հայ այդ մարդկանց, նրանցից պահանջելով թուրքերից գնած զենքը վաճառել միայն «Սև խաչին», թեկուզև հիսուն տոկոսով ավելադիր գնով: Նրանց բացատրվում էր, թե *պարսիկներին* և *քրդերին* այդ օրերին վաճառվող զենքը վաղը կօգտագործվի հայ ժողովրդի դեմ:

Անձնական շահից կուրացած այդ մարդիկ սկզբում դժկամությամբ ընդունեցին արված առաջարկը, իսկ քիչ անց ծածկաբար շարունակեցին զենքն առավել բարձր գներով վաճառել քրդերին: Կազմակերպությունը հարկադրված էր դիմել ծայրահեղ միջոցների: Կենտրոնի հանձնարարությամբ այրվում են Պ. Գ. Թ.-ի ցանկապատերը, իբրև նախազգուշական միջոց տների պատերին փակցնելով հետևյալ գրությունը. *«Պարսիկներուն և քյուրտերուն կառավարական զենքեր ծախողի մը վախճանն ու պատիժը այս ըլլալ որոշեց «Սև խաչը»:* Խոսք եղավ նրանց ֆիզիկապես ոչնչացնելու մասին, բայց հետո վերանայվեց այդ ծայրահեղ միջոցը, նախ նրանց հայ լինելու պատճառով, ապա նաև կառավարության ուշադրությունը իրենց վրա չհրավիրելու զգուշավորությամբ:

Այսպիսով, «Սև խաչ» կազմակերպությունը ստեղծեց զինված ջոկատներ, կուտակեց բավականաչափ զենք ու զինամթերք, որը գաղտնարաններում պահվելով, օգտագործվեց 1896 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանության օրերին միայն:

Կազմակերպության ունեցած ակամա հաջողությունների ոգևորող մթնոլորտում ղեկավար կենտրոնը որոշում կայացրեց կապեր հաստատել Արևմտյան Հայաստանում, Թուրքիայի ու Ռուսաստանի հայ գաղթօջախներում, առավել ևս, Թիֆլիսում ու Մոսկվայում հայկական հեղափոխական մյուս մարմինների հետ, շարժումը դուրս բերելով Վասպուրական աշխարհից նրան *համազգային* բովանդակություն հաղորդել: Առաջին կապերն հաստատվեցին Կարինի հեղափոխական երիտասարդության հետ:

1881 թ. մայիսին արհեստագործ Խաչատուր Կերեքցյանը, Հակոբ Իշխալաչյանը, Նշկյան եղբայրները և այլոք Կարինում հիմնեցին ընդհատակյա հեղափոխական, ավելի մարդաշատ ու առավել լուրջ ծրագրեր ունեցող մի նոր կազմակերպություն, որին մկրտեցին *«Պաշտպան Հայրենյաց»* անունով: Նույն թվի սեպտեմբերին Խ. Կերեքցյանը ժամանեց Վան, տեսակցություն ունեցավ Մ. Փորթուգալյանի, այդ օրերին

ծննդավայրում գտնվող Ա. Թոխմախյանի, ապա «Սև խաչի» «Զինակիր» մասնաճյուղի ղեկավարության հետ:

Արխիվային նորահայտ վավերագրերը հիմք են տալիս եզրակացնելու, թե զույգ կազմակերպությունների ղեկավարությունների միջև տեղի են ունեցել տևական ասուլիսներ, ծավալվել են բանավեճեր, հատկապես ապագա գործողությունների, տակտիկայի, ապստամբության ժամկետի, քաղաքական կողմնորոշման և այլ հարցերի վերաբերյալ: Ավելի վաղ կազմակերպվելու, ապա առավել հզոր մտավորականություն ունենալու պատճառաբանությամբ «Սև խաչի» ղեկավարությունը պահանջում էր, որ շարժման կենտրոն դառնա Վասպուրականը, իսկ «Պաշտպան Հայրենյացը» վերածվի նրա մասնաճյուղերից մեկին: Խ. Կերեքցյանը խստագույնս առարկեց այդ առաջարկությանը, նույնիսկ, վիրավորվածի կեցվածք ընդունելով, սպառնաց դեռևս նոր ձևավորված կապերը խզել և հեռանալ Վանից: Սակայն Ա. Թոխմախյանի միջամտությամբ կոնֆլիկտը հարթվեց և, փոխադարձ զիջումներով, երկուստեք ընդունելի մի նոր համաձայնություն կայացվեց:

Ըստ այդ համաձայնագրի, «Սև խաչն» ու «Պաշտպան Հայրենյացը» մնում էին *ինքնուրույն* հեղափոխական կազմակերպություններ, որոնցից և ոչ մեկը մյուսին չէր ենթարկվելու: Որոշվեց նաև միասնաբար դրամ հանգանակել, որոշակի գումար հավաքելուց հետո, Պարսկաստանի կազմում ընդգրկված, սակայն ինքնուրույնություն նվաճած Մակուի խանի հետ բանակցություններ վարելով, փողով գնել խանության մի մասը: Գնված տարածքում հայ ազատամարտիկները մտադիր էին զինագործարաններ հիմնել, հայկական բանակ ստեղծել և նախապատրաստվել թուրքական լծի թոթափմանը, որը պիտի տեղի ունենար *երկու տասնամյակից* ոչ պակաս ժամանակահատված հետո:

«Սև խաչի» վերոհիշյալ առաջարկը և ընդհանրապես կայացած համաձայնության գրեթե բոլոր կետերը քննարկվեցին «Պաշտպան Հայրենյացի» ղեկավար կենտրոնում, այն է նրա *Գերագույն խորհրդում*, Խ. Կերեքցյանի Կարին վերադառնալու առաջին շաբաթվա ուրբաթ օրը (կոնկրետ ամսաթիվը առայժմ պարզված չէ): Բարձր Հայքի հեղափոխական մունետիկները քննադատական հայացքով վերաբերվելով վասպուրականցի գաղափարակիցների առաջարկներին, միաժամանակ գոտեպնդվեցին այն հայտնությամբ, թե իրենք միայնակ չեն և *Հայոց Համազգային շարժումն* արդեն հասունացման բուռն կոնսոլիդացիայի շրջափուլ է թևակոխում:

Գերագույն խորհուրդը նոր ոգևորությամբ ընդարձակելով «Պաշտպան Հայրենյացի» գործունեության շրջանակները, ստվարացնելով անդամագրվողների թիվը, Խ. Կերեքցյանին կրկին ուղարկում է Վան, նախ «Սև խաչի» հետ կապերն ավելի ամրապնդելու, ապա, խորհրդակցելով Ամենայն Հայոց Հայրիկ մկրտված Մ. Խրիմյանի հետ, նրանից գործելու «օրհնություն ու թույլտվություն ստանալու»:

1882 թ. գարնանը Խ. Կերեքցյանը մեկնեց Վան, տեսակցություն ունեցավ Մ. Խրիմյանի հետ, նրան տեղյակ պահեց իրենց մտադրության, ծրագրերի, վերջնական նպատակի մասին: Հայրիկը խրախուսեց նրանց գործողությունները, միաժամանակ խորհուրդ տվեց գործել *ծայրահեղ զգուշավորությամբ*, հավաքել ու ոչնչացնել ընկերության անդամներին արդեն բաժանված ու համարակալված անդամատոմսերը, կապերն ամրացնելով «Սև խաչի» հետ, չբավարարվել դրանով, մեկնել Անդրկովկաս, իրենց գործերին տեղյակ պահել և Ռաֆֆուն, և Գր. Արծրունուն:

Խրիմյանի գրավոր հանձնարարականները վերցնելով, Խ. Կերեքցյանը, առանց Կարին վերադառնալու, Վանից անմիջապես մեկնեց Թիֆլիս, ապա նաև կյանքում առաջին ու վերջին անգամ եղավ Երևանում: Թիֆլիսում կարնեցի հեղափոխականը հանդիպումներ ունեցավ Գր. Արծրունու, Ռաֆֆու, Գ. Սունդուկյանի, հայազգի գեներալ Տեր-Աստուրովի (Ասատուրովի) և այլ անձնավորությունների հետ, որոնք ապագա դատավարության ժամանակ «հայ նիհիլիստներ» անունն ստացան: Նրա հաղորդումները լսվում էին բուռն հետաքրքրությամբ, կովկասահայ և առաջավոր մտավորականությանը նպատակամղում բոլոր միջոցներով զորավիգ կանգնելու արևմտահայ եղբայրներին:

Առանձնակի ուշադրության առարկա դարձավ *Մակուի խանության գումն*, այնտեղ հայոց զինական ուժեր կենտրոնացնելու մտահղացումը: Որոշվեց անմիջապես սկսել այդ գործը, այսինքն, կազմել պատվիրակություն և ուղարկել Պարսկաստան, իսկ խանի հետ դաշինք կռելուց հետո դիմել ողջ հայ ժողովրդին դրամական հանգանակության կոչով: Նախատեսվեց նաև պատվիրակության հավանական կազմը, այն է. Բագրատ Նավասարդյանը՝ Թիֆլիսի կենտրոնից, Արսեն Թոխմախյանը՝ «Սև խաչ» կազմակերպությունից և ընդհանրապես Վասպուրականից, Կարապետ Նշկյանը՝ «Պաշտպան Հայրենյացից»: Իբրև տեղանքին լավածանոթ և լեզուն իմացող երրորդ անդամն էլ խորհրդահայ անվանի տնտեսագետ, բանասեր, թարգմանիչ, 1937 թ. *ստալինյան վարչակարգին* զոհ դարձած Թադեոս Ավդալբեկյանի հայր՝ *Հայրո Ավդալբեկյանն էր:*

Թ. Ավդալբեկյանի և Բ. Նավասարդյանի անձնական արխիվում և այլուր պահված, մինչև օրս պատմաբանների ուշադրությունից վրիպած, ընթերցողին անծանոթ մնացած մի շարք վավերագրերը վերջնականապես հաստատում են, որ Մակու են գնացել Հ. Ավդալբեկյանը (Հայրոն), Բ. Նավասարդյանը և Ա. Թոխմախյանը: Նրանք խանի ամառանոցում են եղել 1882 թ. օգոստոս ամսին, շուրջ մեկ շաբաթ բանակցություններ են վարել, սակայն շոշափելի արդյունքի չեն հասել: Պատվիրակությունը, տեղացի հայերի օգնությամբ միայն, կարողացել է խուսափել ոչնչացումից, համարյա ճողոպրելով Մակուից հասել է Վան, բանակցությունների բովանդակության մասին զեկուցել Մ. Խրիմյանին, ապա այնտեղից անցնելով Կարին տեղյակ է պահել «Պաշտպան Հայրենյացի» ղեկավարությանը, ինչպես նաև Կարնո հոգևոր առաջնորդ *Մաղաքիա Օրմանյանին:* Դրանով իսկ գոցվեց հայոց պատմության հետաքրքրական այդ էջը, աղբյուրները լռեցին «Սև խաչի» և «Պաշտպան Հայրենյացի» հետագա աղերսների մասին, գուցե նաև այն պատճառով, որ մի քանի ամիս հետո պատահական մատնության զոհ գնաց Բարձր Հայքի կազմակերպությունը. թուրքական բանտախցեր գցվեցին 56 հեղափոխականներ:

«Պաշտպան Հայրենյացի» ջախջախումով «Սև խաչը» կրկին մեծ հարված ստացավ, սակայն, առավել զգուշանալով, շարունակեց կապեր որոնել Արևմտյան Հայաստանում հիմնված այլ կազմակերպությունների հետ: Այդ կազմակերպություններից զորեղը *Թոփրագկալեի* հեղափոխական նորաստեղծ կենտրոնն էր:

1880 թ. Կ. Պոլսից Թոփրագկալե եկավ «Միացյալ ընկերության» տեսուչ *Մկրտիչ Սարրյանը:* Նա ժամանակի կրթված երիտասարդներից էր, տիրապետում էր անգլերենին, ֆրանսերենին, թուրքերենին, ծանոթ էր արևմտյան առաջավոր գաղափարաբանությանը, ջերմ հայրենասեր էր և մտահղացումներ ուներ լույս ու ջերմություն հաղորդել խավարի ու թմբիրի բավիղներում խարխափող իր հայրենակիցներին: Սարրյանի ջանքերով առաջին իսկ տարում Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գյուղերում հիմնվեցին նախակրթարաններ, դպրանոցներ, վարժարաններ, որտեղ սովորեցին հազարավոր մանուկներ ու երիտասարդներ՝ ոչ միայն հայեր, այլև քրդեր ու եզիդիներ:

Մ. Սարրյանը *մեծ լուսավորիչ էր*, որի կենսագրությունն ու թափած տիտանական ջանքերը, հեղափոխական անզուգական պայքարը զարմանալիորեն մոռացության է տրված հայոց պատմաբանների կողմից: Մինչդեռ ստեղծվելիք հայ ազատագրական շարժման արյունաթաթախ պատմության բազմահատոր աշխատության մեջ ամբողջական բաժիններ պիտի նվիրվեն առասպելական խիզախության հասած այդ մարգարեի գործունեությանը՝ ամեն մի էջը մյուսից դրվատելի, հատկապես մեր օրերի համար ուսանելի:

Մ. Սարրյանը Արևմտյան Հայաստանի խոշոր գյուղերում ու քաղաքներում հիմնեց հայկական 24 կանոնավոր դպրոցներ, նրանց ոչ միայն ապահովեց Կ. Պոլսից, Զմյուռնիայից, Թիֆլիսից, Գերմանիայից հրավիրած ուսուցիչներով, այլև ֆինանսավորեց հայաշխարհից հանգանակած գումարներով: Նրա տեղակալը, ավելի ստույգ փոխտեսուչն էր «Սև խաչ» կազմակերպության գաղափարական մասնաճյուղի ղեկավար, բնիկ վանեցի, Խրիմյանի աշակերտ *Մարկոս Նաթանյանը:* Հայոց լուսավորության այդ զույգ սյուները, զորավիգ ունենալով արևմտահայ և արևելահայ հայրենանվեր մտավորականությանը, իրավունք ստացած լինելով ծախսելու հանգանակած հսկայական գումարը, չորս տարում, այսինքն 1880-1884 թթ., հասունացրին մի նոր

սերունդ, որը շնչում էր ազատասիրական գաղափարներով, պատրաստ էր կյանքը զոհելու Հայրենիքի փրկության սրբազան պատերազմում:

Գաղափարական նվիրյալներ հասունացնելուց հետո միայն Մ. Սարգսյանը որոշեց Թոփրագկալեում հիմնել *հեղափոխական մի մարմին:* Օգտվելով ժողովրդի բոլոր դասերի աչքում ունեցած իր մեծ հեղինակությունից, Մ. Սարգսյանը 1884 թ. գարնանը խորհրդակցության է հրավիրում Թոփրագկալեի ռես (գյուղապետ) *Թումոյին* (այս գործիչը հետո գաղթել է Արևելյան Հայաստան, ունեցել երեք տղաներ, որոնք երեքն էլ գինվորագրվել են *կոմունիստական կուսակցությանը: Կխնդրեինք նրանց կամ նրանց ժառանգներին կապերը: Կխնդրեինք նրանց կամ նրանց ժառանգներին կապեր հաստատել մեզ հետ, գուցե նյութեր ունեն, որոնք կտրամադրեն մեզ՝ պատմությունն ավելի հարստացնելու համար),* Բարսեղ Զաքարյանին, Քեշիշ օղլիին, Գրիգոր Նժդեհյանին և տասը այլ անձանց:

Խորհրդակցության մասնակիցները միակամ որոշում են հիմնել ընդհատակյա հեղափոխական կազմակերպություն, որի կենտրոնը հաստատելով Թոփրագկալեում, մասնաճյուղեր ունենալ շրջակա գյուղերում: Մշակվում է ծրագիր: Հանձնարարվում է գործել գերագույն զգուշավորությամբ, հրաժարվել ցուցամոլությունից, աշխատել բացառապես կենտրոնի ցուցումներով, հայրենասիրական գաղափարներ հաղորդելուն զուգընթաց, ժողովրդին նախապատրաստել ինքնապաշտպանական գոյամարտերին:

Սկզբում Թավրիզում, 1935 թ. միայն Թեհրանում հաստատված ՀՅԴ անվանի գործիչ Արամայիս Ազնավուրյանի հուշերից (տպագրված է «Հայրենիք» ամսագրում) պարզվում է, որ հեղափոխական այդ մարմինը կարճ ժամանակահատվածում իր մասնաճյուղերն է հաստատում շրջանի գրեթե բոլոր գյուղերում: Միաժամանակ որոշվում է, որպեսզի կենտրոնի և ճյուղային կազմակերպությունների գործունեությունը քողարկվի, աննկատ մնա կառավարության աչքից, հեղափոխականների ակտիվ ներկայացուցիչներին պաշտոնների նշանակել տալ թուրքերի մոտ: Դրանով իսկ գործող անձինք մի կողմից հեղինակություն ու դիրք ձեռք բերեցին, մյուս կողմից, վստահության արժանանալով, զերծ մնացին կասկածանքներից:

1884-1885 թթ. Թոփրագկալեի կենտրոնը զորեղացավ, նրա մասնաճյուղերի թիվը հասավ 16-ի: Տեղական խմբերը, *կոմիտե* անուն ստանալով, իրենց շարքերն համալրեցին «Պաշտպան Հայրենյանցի» այն անդամներով, որոնք փախել էին Կարինից և հաստատվել հատկապես Ղարաքիլիսեում: Խնդիր դրվեց կապեր հաստատել նաև «ռուսահայերի», ապա՝ նաև Արևմտյան Հայաստանում գործող հեղափոխական մյուս կազմակերպությունների հետ:

Այդ կապը հաստատելու հանձնարարական է ստանում ապագա հայդուկային շարժման կազմակերպիչներից մեկը՝ *Հունոն՝ Հայրություն Տեր-Մարտիրոսյանը* (Պ. Պռոշյանի վիպակի հերոս): Նա անցնում է *Կաղզվան,* տեսակցում տեղի կազմակերպության ղեկավարների հետ, նրանց հաղորդում Թոփրագկալեի կոմիտեների գոյության մասին, որտեղից ուղևորվում է Թիֆլիս:

Հունոն Թիֆլիսում հանդիպումներ է ունենում Գր. Արծրունու և Ռաֆֆու հետ: Վիրահայոց այդ խոշոր կենտրոնում նա տեղեկանում է, որ Վանում գործում է «Սև խաչ» անուն ստացած մի խոշոր կազմակերպություն: Վերադարձին, Թոփրագկալեի և Կաղզվանի կոմիտեների հանձնարարությամբ, հերթականությամբ Վան են մեկնում Արամայիս Ազնավուրյանը, Գրիգոր Սիրունյանը, Գիսակ Կարենյանը, բժիշկ Կաճկաճյանը: Վարագա վանքի նկուղահարկերում նրանք տեսակցում են Մ. Խրիմյանի, Մ. Փորթուգալյանի, «Սև խաչի» ղեկավար այլ անդամների հետ, փոխադարձաբար հաղորդում ունեցած ծրագրերի և գործելաեղանակի մասին: Պարզվում է նաև, որ «Սև խաչի» գոյության մասին Մ. Սարգսյանը գիտեր հիմնադրման առաջին իսկ ամիսներից: Նրան տեղյակ էր պահել Մարկոս Նաթանյանը, սակայն երկուսով լռում էին, մինչև ստեղծվեին նոր կազմակերպություններ:

Վասպուրականի հեղափոխականները ջանքեր էին գործադրում կապվել հատկապես բուն *Արևելյան Հայաստանում* գործող այն կազմակերպությունների հետ, որոնց նպատակն էր օգնության ձեռք կարկառել արևմտահայությանը: Նրանք տեղյակ էին, որ Հայկական հարցը, Բերլինից սկսած, վերածվել էր համայն հայության խնդրի, ըստ որում, Հայաստանի ազատագրության գաղափարն արագորեն ժողովրդականացել էր և վեպի, բանաստեղծության, հատկապես լրագրի էջերով անցնելով, թափանցել էր արհեստավորական անշուք գործատները, նույնիսկ գեղջկական մութ խրճիթները: Հարկավոր էին հայության երկու հատվածներին միավորող ձեռքեր, շարժման առաջնորդիչ ուժեր:

Վանի հայրենասերների ուշադրության կենտրոնում էր Երևանը: Քաղաքն այդ տասնամյակում բնակչությամբ մարդաշատ էր դարձել, տնտեսական զարգացում ապրելով, ընդարձակել էր իր կապերը ողջ երկրի հետ: Էջմիածինը վերածվել էր ողջ հայության սրտի: Արևմտյան Հայաստանից Սուրբ Աթոռ հասնող լուրերն արագորեն դուրս էին գալիս Վեհարանի պարիսպներից և առաջինը հասնելով Երևան կամ ուրախացնում, կամ տրտմեցնում էին նահանգի կենտրոնի հայ բնակչությանը:

Երևանում հրատարակվում էր «Պսակ» լրագիրը, գործում էին մի շարք դպրոցներ, տպարաններ: Աստիճանաբար հասունանում էր եվրոպական կրթություն ստացած նոր մտավորականությունը: Դորպատի համալսարանի շրջանավարտ, մասնագիտությամբ բժիշկ Լևոն Տիգրանյանը հրատարակում էր «Բժշկարան» վերտառությամբ ամսագիր, որի էջերում անդրադառնում էր նաև վասպուրականցիների կյանքին: Մոսկվայի Լազարյան ճեմարանի նախկին սան էմին Տեր-Գրիգորյանը հիմնել էր սեփական տպարան և տպագրում էր հայագիտական, հայ-

ռենագիտական ու հայրենասիրական բնույթի գործեր: Հետագայում Կարսի նահանգապետ դարձած Ստեփան Ղորղանյանը թղթակցում էր «Մշակին», բացահայտում գյուղացիության ապրելակերպի մութ ծալքերը:

Երևանում աստիճանաբար պայմաններն հասունանում էին հեղափոխական կազմակերպության ստեղծման համար: 1880 թվականի կեսերին քաղաքում հիմնադրվեց *«Ազգասեր»* խմբակը, որի հիմնադիրներն էին Լևոն Տիգրանյանը, Ռուբեն Ջալալյանը, Վասիլ Եղիազարյանը, Տրդատ Վարդանյանը, Թովմաս Մհերյանը և այլոք:

«Ազգասերի» նպատակն էր դրամ հանգանակել, կապեր հաստատել Արևմտյան Հայաստանում գործող կազմակերպությունների հետ, զենք գնել և առաքել երկիր, պրոպագանդիստների միջոցով արթնացնել ժողովրդին, հետազոտել ժողովրդի վիճակը և արդյունքների մասին տեղյակ պահել Երևանի երիտասարդությանը: 1881 թ. ապրիլ ամսին խմբակը, ամսական 50 ռուբլի ճանապարհածախս տալով, դարալագյազցի Տեր-Գրիգորին (Խոսրով բիձա) ուղարկում է Տաճկաստան՝ դրությունն ուսումնասիրելու նպատակով: Նրան հաջորդող գանձակեցի Կարապետ Փիլիպոսյանը (Ստեփանյանը), շարունակելով Խոսրով բիձայի սկսած գործը, *կապեր է հաստատում «Սև խաչ» կազմակերպության հետ, տեսակցում Մ. Խրիմյանին և Կ. Կամսարականին, խոստանում Երևանում դրամ հանգանակել և ուղարկել Վան, ինչպես նաև սահմանով զենք անցկացնելով՝ հասցնել «Զինակիր» մասնաճյուղին:* Դժբախտաբար, խմբակը մատնության զոհ գնաց, անդամները բանտարկվեցին և աքսորվեցին, որոնց ճակատագիրը Խրիմյանին առավել համոզեց, թե կրակի հետ պետք չէ խաղալ, այլ, որքան հնարավոր է, պետք է գործել ընդհատակում:

Այսպիսով, «Սև խաչն» հետագայում ևս մնաց հայ հեղափոխականների հիմնած անդրանիկ կազմակերպությունը, առավել մշակված ծրագրերով, գործողությունների ուրույն տակտիկայով, որոնք անընդհատ կատարելագործվում էին Մ. Խրիմյան և Մ. Փորթուգալյան հզոր անհատականությունների ազդեցությամբ: Հատկապես մեծ էր Վասպուրականի Արծվի դերը ոչ միայն նորանոր կապեր հաստատելու, այլև, «Սև խաչին» իր լայնարձակ թևերի պաշտպանության տակն առնելով, նրան բազմաթիվ վտանգներից փրկելու գործում: *Նման եզրահանգումն հաստատող փաստերը շատ են, սակայն այստեղ անդրադառնանք միայն մեկ դրվագի*, որը մասնակիորեն արծարծվել է պատմաբանների կողմից, սակայն պատշաճ բացատրություն չի ստացել:

«Սև խաչը» որոշեց 1882 թ. մայիսի 24-ին, այսինքն՝ արևմտահայերի Ազգային Սահմանադրության 22-րդ տարեդարձի օրը, մեծ տոնախմբություն կազմակերպել Վարագա վանքում: Նրանք այդ հանդեսին նախապատրաստվում էին շուրջ երկու ամիս: Հանձնարարվեց 80-ի չափ զինվորական հագուստներ պատրաստել, որոնցից կեսը պիտի

հագնեին հեծյալները, կեսը հետիոտները: Յուրաքանչյուր տասն ունեին ենթասպա, քսանը՝ սպա, ամբողջ քառասունը ընդհանուր հրամանատար: Զինված երիտասարդները, թափորի աջ ու ձախ կողմերից, ժողովրդին պիտի առաջնորդեին դեպի Վարագա ս. Նշան վանքը:

Ծրագրված քաղաքական ցույցը տոնախմբության «անմեղ արարողության անվան տակ» տեղի ունեցավ: Այն կազմակերպող «Սև խաչին» միացան «Արծրունյան», «Խորենյան», «Միացյալ» և մշակութային 14 այլ ընկերություններ: Վասպուրականցիների բազմամարդ թափորը մայիսի 24-ին քաղաքից դուրս գալով՝ շարժվեց դեպի Վարագա պարտեզները, որտեղ սեղաններ էին պատրաստել, հրավիրվել էին նաև հարուստ վաճառականները: Հարյուրի չափ այս մարդիկ նվիրատվություն պիտի անեին, և հավաքված գումարը պիտի տրամադրվեր «Սև խաչին» զենք, զինամթերք, զինվորական հագուստներ գնելու:

Մ. Խրիմյանի «դիվանագիտական տկարության» պատճառով տոնախմբության սեղանն օրհնեց Երեմիա Տեր-Սարգսենցը (Տկանց): Սահմանադրության հիմնադիրների հոգեհանգստյան արարողության վերջում, հայտագրի համաձայն, արտասանվեցին հայրենասիրական հոգեցունց ճառեր, տեղի ունեցավ զորահանդես, որին հաջորդեցին զինավարժություններ: Մթնոլորտը շիկացած էր, և թուրքերի հետ զինված ընդհարումը մազից էր կախված: Հաղթեց, սակայն, ոչ թե կիրքը, այլ բանականությունը:

Երեկոյան ժամը տասին «Սև խաչի» զինական երիտասարդները Վարագից իջան քաղաք, երեք հազարանոց ցուցարարների մարտական երթը Վանի փողոցներով շարժվեց դեպի Հոգևոր առաջնորդի բնակարանը, ձայնարկելով՝ «Կեցցե Խրիմյանը»: Վարանած թուրքերը, լուսամուտներից տեսնելով զինվորական հագուստներով երթևեկող զինված երիտասարդությանը, կարծելով թե ռուսական նոր բանակ է մտել քաղաք, շտապեցին կուսակալին հայտնել կատարված իրադարձության մասին: Հրամայվեց խուզարկություն կատարել «Սև խաչի» անդամներից շատերի բնակարաններում: Զենք, զինվորական հագուստ հայտնաբերելով կազմակերպության գլխավորներից *Կարապետ Կյուլումյանի* բնակարանում, նրան բանտարկեցին: Զգալով գործի լրջությունը, Մ. Խրիմյանը հարկադրված էր անսալ կուսակալի հրավերին և գնալ նրա հետ տեսակցության:

Պատերազմից հետո Վանի կուսակալ էր նշանակվել *Շքոտրալի Հասան* փաշան: Նա կայսրության դեմ ապստամբության դրոշ պարզած ալբանական մի հայտնի ու ռազմատենչ ցեղից էր: Այդ զինվորականը Բ. Դռան աչքում դիտվում էր իբրև անբարեհույս անձնավորություն: Համիդը, փաստորեն, սրան պատվավոր աքսոր էր ուղարկել հեռավոր Վասպուրական, որպեսզի վերջինիս կտրեր եվրոպական Թուրքիայից (Ռումելիայից) և զրկեր հակապետական շարժումներին մասնակցելու հնարավորությունից: Խրիմյանը տեղյակ էր այդ ամենին և չէր սխալվում իր այն զգացումի մեջ, թե ազգությամբ ոչ թուրք կուսա-

կալի ներքին, գաղտնի համակրանքը բոլոր այն մարդկանց կողմն էր, որոնք կխարխլեին օսմանյան բռնակալության հիմքերը: Հայրիկը գիտեր նաև, որ թուրքական բարձրաստիճան պաշտոնյայի հետ, համենայնդեպս, պիտի վարվեր գերագույն զգուշավորությամբ:

Օգտվելով Հասան փաշայի իր նկատմամբ ցուցաբերած հարգանքից, Խրիմյանը խոսակցության սկզբում որոշեց լռել: Կուսակալը կես լուրջ, կես կատակ նրան հարցրեց. *«Իրա՞վ է, որ Կամսարական էֆենտին ծերիներեն զորք կառնե եղեր»*: Խորաթափանց ակնարկի դիմաց Հայրիկին մնում էր դիվանագիտական ժպիտով պատասխանել և սպասել հաջորդ հարցերին: Փաշան շարունակեց. «Դուք ալ թույլ տված եք, որ Ձեր վանքը *թալիմհանե* ընեն»: Ակնարկին ակնարկով պատասխանելով Խրիմյանն ասաց. *«Ես դիտմամբ թույլ տվի, որ վանք երթան թալիմ ընեն, որպեսզի Դուք իմանաք թե Կամսարական էֆենտին հայերեն զորք կառնե...»*:

Խորամանկ ալբանացին, զարմանալով ուշիմ պատասխանի վրա, հասկանալով նրա թաքուն իմաստը, շարունակեց. *«Ես Ձեզ կհասկնամ, բայց ես մենակ չեմ, հոս ունինք զինվորական հրամանատար մը, ուրիշ պաշտոնեաներ, որոնց, ինչպես նաև թուրք երևելիներուն ես կդժվարանամ խոսք հասկցնելը»*:

Գոտեպնդվելով փաշայի զրույցի բարեկամական երանգներից, Խրիմյանը շարունակում է. «Օր մը առեք ատոնք ամենքը վանք բերեք, Կամսարականն ալ կկանչենք, միասին կճաշենք և քիչ մըն ալ կխնդանք այդ տղայություններու վրա»:

Երկուստեք զիջումներով կայացվեց բանավոր փոխհամաձայնություն: Խրիմյանը պարտավորվեց այլևս թույլ չտալ նման ցույցերի կազմակերպումը, իսկ Հասան փաշան էլ խոստացավ դադարեցնել խուզարկություններն ու բանտարկությունները Վանում: Ծրագրվեց հաջորդ հանդիպումն ունենալ Վարագա վանքում:

Դեպքերից երկու շաբաթ անց վանքի ընդարձակ դահլիճում ճաշկերույթի հրավիրվեցին Հասան փաշան, զինվորական հրամանատարը, հայ և թուրք մի խումբ «երևելի անձեր», Կ. Կամսարականը, անգլիական ու պարսկական փոխհյուպատոսները: Արարողության վերջում մնում են Խրիմյանը, Հասան փաշան, նահանգում տեղակայված թուրքական զորքերի գլխավոր հրամանատարը և մի քանի ազդեցիկ թուրքեր: Գինովցած կուսակալը սրանց ներկայությամբ դիմում է Խրիմյանին, թե. *«Իրա՞վ է, որ դիմած ես ռուս կառավարությանը, որպեսզի բանակ մը ղրկե Վան գրավելու համար»*: Փաշան նման հարցադրումով կատարում էր քաղաքի թուրքերի ցանկությունը, քանզի նման լուրեր էին պտտվում ամենուր և երկընտրանքի տեղիք տալիս մահմեդականների շրջանում:

Ծանր կացության մեջ ընկնելով, Խրիմյանը, համենայնդեպս, գտնում է լակոնիկ պատասխանը, որը շոյում է թուրքերի ինքնասիրությունը:

Նա փոքր-ինչ մտածելուց հետո ասում է. *«Եթե վստահ լինեի, թե ռուս կառավարությունը պիտի անսա իմ խոսքին... կխնդրեի, որ չշարժեր նա իր բանակը»*: Փաշան, բավարարվածի տեսք ընդունելով, հայացքով թուրքերին հասկացնում է, թե լուրերը ստահոդ են: Խրիմյանը գոհանում է, քանի որ կարողանում է ցրել «Սև խաչ» կազմակերպության գլխին կուտակվող մութ ամպերը:

«Սև խաչի» ղեկավարության, հետևաբար և նրա հետևորդների շարքերում աստիճանաբար ձևավորվում էին երկու ուղղություններ՝ իրենց ուրույն ծրագրերով, գործողությունների տարբերակված ստրատեգիայով, հետապնդած նպատակներով, նույնիսկ խառնվածքով: Առաջին հոսանքը գլխավորում էր Մ. Խրիմյանը, կողմնակիցներ ունենալով Կ. Կամսարականին, Ա. Թոխմախյանին, Մ. Նաթանյանին, Ս. Տեր-Սարգսենցին, Մ. Սարըյանին: Սրանց էին հարում Գ. Սրվանձտյանցը, Գ. Աղվանյանցը, Ե. Տևկանցը և այլոք, որոնք վարդապետական վեղար հագած լինելով, ավելի զգուշավորությամբ էին պայքարում Վասպուրականի և ողջ արևմտահայության փրկության նշանաբանով:

Խրիմյանական այդ ուղղությունը որոշել էր նախ՝ լուսավորել ժողովրդին, Գուտենբերգի հրաշալի գյուտն առաջին անգամ ճռնչացնելով Հայաստանի գետնի վրա, «Արծվի Վասպուրականի» և «Արծվիկ Տարոնոյ» պարբերականների լայնարձակ թևերով սթափեցնող ու «սրբազան ջուր» սփռել Հայկական լեռնաշխարհի վրա, հայ գեղջուկին հանելով նիրհած վիճակից՝ նրանից զինվորացուներ պատրաստել: Նախքան ***ինքնապաշտպանության*** դրոշ պարզելը, նրանք ձգտում էին Արևմտյան Հայաստանի տնտեսական զարգացումը դնել պատշաճ մակարդակի վրա, վերակառուցել հնամենի քաղաքները, հիմնել արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, անցկացնել երկաթգծեր, կապեր ստեղծել քաղաքների և գյուղերի, Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների, դրանց վրայով՝ Թուրքիայի և Ռուսաստանի միջև:

Առաջնորդվելով Ն. Վարժապետյանի կազմած ծրագրով, խրիմյանականները լուրջ ուշադրություն էին դարձնում առևտրի զարգացմանը, ձգտում Վասպուրականի արտադրանքը հանել թուրքական ու համաշխարհային շուկա, դրանով իսկ ոչ միայն մեծ դրամագլուխ ձեռք բերել, այլև աշխարհաշրջիկ հայ վաճառականների, հատկապես գործին տեղյակ, հմտացած վանեցի առևտրականների միջոցով Հայաստանը ճանաչեցնել տալ օտարներին, տնտեսական կապերն օգտագործել և ապագայում արևմտյան տերությունների հետ քաղաքական հարաբերություններ հաստատել:

Երկրի բնությանն ու ժողովրդի բնավորությանը լավատեղյակ վերոհիշյալ գործիչները հետազոտում էին Հայոց բնաշխարհը, հայտնագործում օգտակար հանածոներ պարունակող հանքերը, որոնում ոսկի և արծաթ՝ հարստություն կուտակելու, երկաթ և պղինձ՝ զինագործարաններ հիմնելու նպատակով:

Խրիմյանն ու իր սաները լուրջ ուշադրություն էին նվիրում երկրագործության առաջընթացին: Նրանք Արևմուտքից Վասպուրական փոխադրեցին նորատիպ գութան, երկրում արմատավորեցին նոր կուլտուրաներ, Վանի Այգեստան թաղամասը զարդարեցին թթենու ծառերով, տնկեցին խաղողի այնպիսի տեսակներ, որոնց տված խաղողն ու ալկոհոլային տեսակավոր խմիչքները, չամիչն ու քիշմիշը բարձր գնողունակություն ունեին միջազգային առևտրահրապարակներում:

«Սև խաչի» այս թևը, առաջնորդվելով սառը բանականությամբ, մերժելով անհարկի կրքերն ու անտեղի զգացմունքները, ջանքեր էր թափում *առերես կանոնավոր հարաբերություն պահպանել նահանգի թուրք ղեկավարության հետ,* չգրգռել նրան, առիթ չտալ ջարդարարության, միաժամանակ ընդհատակից իրողության վերածել իր հեռամետ դիտավորությունները: Նրանք դեմ էին ցուցամոլությանը, ահաբեկչությանը, շտապողականությանը: Կյանքի դառը փորձից իմաստնացած Մ. Խրիմյանը կատարած յուրաքանչյուր քայլի համար իրեն պատասխանատու էր զգում Մայր ժողովրդի առջև, իսկ թուրք կառավարիչներն էլ *առայժմ,* երկնչելով նրա հեղինակությունից, չէին ուզում առաջնորդին նեղացնելով գրգռել արևմտահայությանը, գուցեև ողջ հայ ժողովրդին:

Կազմակերպության մյուս թևը գլխավորում էր Մ. Փորթուգալյանը, գաղափարակիցներ ունենալով Տ. Գնունուն, Տ. Պեյլերյանին, Սողոմոնյանին և «Վարժապետանոցն» ավարտած այն երիտասարդներին, որոնք ընդգրկվել էին հեղափոխական պայքարի հորձանուտների մեջ: Այս հոսանքը քաղաքի Այգեստան զուտ հայկական թաղամասում ձևավորեց զենքի գործադրմանը տիրապետած երիտասարդներից բաղկացած մի ջոկատ, նրան հանձնարարելով զբաղվել ահաբեկչությամբ, պատժել թուլամորթներին և դավաճաններին, հայ կանանց պատիվն արատավորող թուրքերին ու քրդերին: Սրանք կազմակերպեցին Աղթամարի վանքի ոսկու առգրավումը, չարագործ Պողոս Մելիքյան վարդապետին քաղաքից Լիմ անապատ «պատվավոր աքսոր» քշելը, զենքի հայթայթումն ու բաժանումը «Սև խաչի» անդամներին:

Փորթուգալյանը, հաճախ դեմ գնալով Խրիմյանի զգուշավորական պահանջներին, անզգույշ քայլեր էր կատարում: Փանոս Թերլեմեզյանն, անդրադառնալով այդ դեպքերի նկարագրությանը, հետագայում իր հուշերում գրում է. «Փորթուգալյանն էլ ջահելություն կըներ: Քննությունների ժամանակ, կուսակալի ներկայությամբ, աշակերտները Գամառ-Քաթիպայի թուրքատյաց ոտանավորները կարտասանեին»:

Այդ կապակցությամբ կարևորություն ստացավ մի դիպված ևս: Ծրագրվեց 1882 թ. դեկտեմբերյան վերջին շաբաթվա կիրակի օրը Հայկազյան վարժարանի ընդարձակ դահլիճում «Քաղաքական ակումբի» անդամների և քաղաքի հայ երիտասարդության համար կազմակերպել հերթական դասախոսություն: Բանախոսությունն անցկացնելու

էր Մ. Փորթուգալյանը, ընթացքում պիտի ներկայացվեր Թուրքիայի վարած ազգային-գաղութային քաղաքականության նոր համակարգը, բացահայտվեին դրա ձևավորման պատճառները, ցույց տրվեին վերջինիս ողբերգական հետևանքները հայ ժողովրդի համար: Նա զեկուցելու էր «Սև խաչի» կազմակերպած դիմադրական գործընթացի նախապատրաստության, փաստորեն, ինքնապաշտպանական պայքարն սկսելու մասին: Դասախոսության վերնագիրն էր *«Ժամանակն հասեր է, հայեր, ի՞նչ ընենք»,* որի ընդգրկած խնդիրները ներկայացնելու ժամանակ պիտի ասվեր *«Թուրքիո մեջ շուներն անգամ հայերեն ավելի արժեք ունին»:*

Դասախոսության հայտարարությունն ու վերտառությունը նախապես փակցված էր քաղաքի դպրոցների, հասարակական հիմնարկությունների և հատկապես շուկայի մի քանի դարպասների վրա: Քաղաքում շրջագայության դուրս եկած Վանի դատախազ Բայիֆ բեյի ուշադրությունն այդ հայտարարության վրա հրավիրեց գրագրի պաշտոնն ստանձնած Նշան Քանքարճյանը: Հայազգի մատնիչը թուրքերեն թարգմանեց դասախոսության վերնագիրը, որն անհանգստություն առաջ բերեց նահանգի ղեկավարության շրջաններում:

Բանախոսությունից մեկ ժամ առաջ թուրք ոստիկանությունը շրջապատեց Հայկազյան վարժարանի շենքը, արգելեց դասախոսությունը, որին հետևեց դատախազի հրամանը «Քաղաքական ակումբի» գործունեությունը մեկընդմիշտ դադարեցնելու վերաբերյալ: Տերության աչքում վաղուց «անբարեհույս ու կասկածելի մարդ» նկատված Մ. Փորթուգալյանին կալանքի վերցրին մեղադրելով *«ժողովրդին գրգռելու»,* հակապետական գործունեություն ծավալելու մեջ, սպառնացին նրան վերջնականապես վտարել նահանգից: Մ. Խրիմյանը, չնայած դեմ էր «ցուցամոլական նման արարողությանը», այնուամենայնիվ, Գ. Սրվանձտյանցին և Մ. Նաթանյանին հանձնարարեց գնալ կուսակալի մոտ և խնդրել երաշխավորությամբ ազատ արձակել Փորթուգալյանին: Թուրք ղեկավարությունը, ոչ թե միջնորդների խնդրանքին ընդառաջելով, այլ, իրոք, ժողովրդին գրգռելուց երկնչած և դրանով իսկ քաղաքում նստած եվրոպական հյուպատոսների ուշադրությունը դրա վրա չհրավիրելու զգուշավորությամբ, ազատ արձակեց Փորթուգալյանին:

Խնդիրը փակվելուց հետո «Սև խաչի» Գերագույն խորհուրդը, արտահայտելով կազմակերպության անդամների մեծամասնության կամքը, որոշեց Նշան Քանքարճյանին տեռորի ենթարկել. նույնիսկ վիճակահանություն արվեց և մատնանշվեց, թե ով պիտի սպանի դավաճան հային: Քանքարճյանը, չոքեչոք աղերսելով, ներկայացավ Փորթուգալյանին, զղջաց իր արածի համար, թախանձագին ներում խնդրեց, որը և ստացավ մեծահոգի Փորթուգալյանից:

1883 թվից սկսած, Համիդ երկրորդն ու նրա դրածոները անցնում են հակահարձակման: Թուրքական կախաղանասյուները ճոճվում են

հայ, բուլղարացի, ասորի հեղափոխականների ծանրության տակ, բերդերը լցվում են քաղաքական կալանավորներով, «կասկածելի անձնավորությունները» տեղահանվում, հայրենազրկվում և բնավեր խլյակ են դառնում: «Սև խաչ» կազմակերպությունը զրկվում է գործելու նախկին հնարավորություններից, մանավանդ որ, փաստորեն, գլխատվում է: Խրիմյանն ու Փորթուգալյանն աքսորվում են Վանից, Նաթանյանն ու Սարգյանը կալանքի են վերցվում, Ժառանգավորացն ու Կեդրոնականը փակվում են:

1885 թվականը հիշարժան տարեթիվ դարձավ Վասպուրականի և ողջ արևմտահայության պատմության անդաստանում: Համիդյան դաժանությունների ալիքը վանեցի հեղափոխական երիտասարդությանը հարկադրեց դադարեցված «Սև խաչի» փոխարեն հիմնել ընդհատակյա հեղափոխական մի նոր մարմին, որին մկրտեցին *«Հայոց հայրենասերների միություն»* անունով: Մ. Փորթուգալյանի սան Մկրտիչ Թերլեմեզյանի (Ավետիսյանի) գլխավորած այդ խմբավորումը Վանում հիմնադրեց հայ քաղաքական առաջին կուսակցությունը, Մարսելում հիմնադրած «Արմենիա» լրագրի անունով նրան տալով *Արմենական* կազմակերպություն անվանում:

Այսպիսով, ետբեռլինյան յոթնամյակում խմորված հայ ազատագրական ոգորումները տվեցին իրենց շոշափելի արդյունքները: Վերազարթնող, զարգացող միտքը, միանալով հզորացող ժողովրդական շարժմանը, բարձրացավ մի նոր աստիճանի, այն է՝ հեղափոխական խմբերին ու կազմակերպություններին, իբրև նրանց օրգանական շարունակություն, հետևեցին և շռնդալով հրապարակ իջան քաղաքական կուսակցությունները:

80-ականների երկրորդ կեսերին, մի ձեռքում հրացանը, մյուսում՝ ուսապարկը (որի մեջ տեղավորված էր պատանքացու սպիտակ քաթանը), հայոց լեռնածերպեր *բարձրացան հայ առաջին ֆիդայիները:* Նրանք բռնակալական գերագահության մականի տակ ճնշված, մարդկային բոլոր տեսակի արժանապատվությունները ոտնահարված ժողովրդի ցասման, բողոքի արտահայտիչներն էին Լեռնահայաստանի գրեթե բոլոր հատվածներում: Գնալով ստվարացավ սրանց թիվը, և մոտակա հորիզոններում ցոլարձակեցին թուրքերին սարսափեցնող *Աղբյուր Սերոբի, Հրայր Դժոխքի, Արաբոյի, Գևորգ Չաուշի,* ապագա մեծ զորավար *Անդրանիկի* հավերժացող անունները[1]:

[1] Սույն հատվածը տպագրել ենք «Հայաստան» օրաթերթի 1991 թ. N 83-84-ում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոստանդնուպոլիս...[1]

(Κωνσταντινούπολις), Կ. Պոլիս, Բյուզանդիոն (Βυζάντιον, Βυζαντίς), իբրև թագավորանիստ քաղաք կոչվել է նաև Βασιλεύουσα πόλις - թագավորական քաղաք (որից՝ ռուս. Царьград) *Ստամբուլ* (թուրք. İstanbul), Հռոմեական կայսրության (330-ից), *Բյուզանդիայի* (395-1453) և *Օսմանյան կայսրության* (1453-1923) մայրաքաղաքը: Հիմնել է *Կոստանդին Մեծը* 324-ին *Բյուզանդիոնի* տեղում՝ Նոր Հռոմ անունով: Մայրաքաղաքի պաշտոնական հռչակումը տեղի է ունեցել 330-ի մայիսի 11-ին և շուտով, ի պատիվ հիմնադրի, կոչվել Կոստանդնուպոլիս: Սկզբնապես տեղադրված էր Ոսկեղջյուրի ծոցի, Բոսֆորի ու Մարմարա ծովի միջև ընկած թերակղզու վրա, հետագայում ընդգրկել է Ոսկեղջյուրի հյուսիսային ափին գտնվող արվարձանը՝ Պերան (Բերա, հունարեն՝ այն կողմ), նրանից արևելք՝ Գալատայի (Ղալաթիա) հետ, Բոսֆորի ասիական ափի Խրիսուպոլիս (Սկյուտար), Քաղկեդոն (Քադըքյոյ, Գատըգյուղ) բնակավայրերը և Մարմարա ծովի Իշխանաց կղզիները: Թեոդոսիոս II-ի (408-450), Անաստասիոսի (491-518), Հերակլիոսի (610-641), Լևոն V Հայկազնի (813-820) ժամանակ կառուցվել են նոր պարիսպներ: Կոստանդնուպոլսի հիմնումը և Հռոմեական կայսրության մայրաքաղաք դարձնելը պայմանավորված էր արևելյան հարուստ պրովինցիաների մոտիկությամբ (որոնց քիչ էր դիպել ստրկատիրական հասարակարգի ճգնաժամը), առևտրական և ստրատեգիական բարենպաստ դիրքով և այլն: Կոստանդնուպոլիս են տեղափոխվել կառավարական հիմնարկությունները, ստեղծվել է նոր Սենատ: Կոստանդնուպոլսի վարչական և տնտեսական ղեկավարն էր *եպարքոսը*: Կոստանդնուպոլսի *բնակչության* սոցիալական կազմը բազմազան էր. խոշոր ստրկատերեր (սկզբնական շրջանում), աշխարհիկ և եկեղեցական խոշոր հողատերեր, առևտրականներ, արհեստավորներ, վարձու աշխատողներ, քաղաքային պլեբս, ստրուկներ: V դարում Կոստանդնուպոլիսն ունեցել է (ըստ ուսումնասիրողների) 100-

[1] Տե՛ս «Հայկական Սովետական Հանրագիտարան», Երևան, 1979, էջ 616-619, հոդվ. «Կոստանդնուպոլիս», հեղ.՝ *Հ. Բարթիկյան, Հ. Ղազարյան:*

700 հազար բնակչություն, որը միավորված էր 4 «դեմոսի» քաղաքային խմբավորումների մեջ:

Կոստանդնուպոլիսը, որտեղ հատվում էին ցամաքային և ծովային առևտրական ուղիները, արհեստագործության և առևտրի խոշոր կենտրոն էր: Քաղաքում կային կայսերական, պետական, ավագանու, տնային և այլ կարգի արհեստանոցներ: Զարգացած էր պերճանքի առարկաների արտադրությունը, խեցեգործությունը, ոսկերչությունը, մետաղամշակությունը, զինագործությունը, նավաշինությունը և այլն: Կոստանդնուպոլսի առևտրականներն ունեին արտոնություններ և կապված էին տարբեր երկրների հետ: Կոստանդնուպոլսի նավահանգիստներն (Թեոդոսիոսի, Հուլիանոսի, Սոֆիանոն, Նեորիոն, Նիկե) էին ժամանում նավեր կայսրության տարբեր մասերից: Կոստանդնուպոլսի արհեստավորները և առևտրականները միավորված էին համքարությունների (կորպորացիաների) մեջ: Կային բարեգործական հաստատություններ (հիվանդանոցներ, որբանոցներ, գողենոցներ, հյուրանոցներ, պանդոկներ, ծերանոցներ, աղքատանոցներ), որոնք ղեկավարել է Մեծ Օրփանոտրոփոսը (բառացի որբախնամ):

Կոստանդնուպոլիսը Բյուզանդիայի եկեղեցական կարևոր կենտրոն էր, այստեղ գումարվել են եկեղեցական ժողովներ (381-ին, 453-ին, 680-ին և այլն): Քաղաքում ցայսօր գտնվում է Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարքի (կրում է «Սրբազնագույն, մեծագույն տեր, իշխան և վեհապետ, արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսի, Նոր Հռոմի և Տիեզերական պատրիարք» տիտղոսը) նստավայրը:

Կայսրերի և աստիճանավորների կամայականությունները Կոստանդնուպոլսում բազմիցս առաջ են բերել ժողովրդական հուզումներ: Դրանցից ամենախոշորը 532-ին *«Նիկա»* ապստամբությունն էր:

XI-XII դդ. Բյուզանդիայի մյուս քաղաքների աճը, կառավարության կողմից Կոստանդնուպոլսի առևտրականների գործունեության հսկողությունը, իտալացի առևտրականների մուտքը Կոստանդնուպոլիս և նրանց տրված արտոնությունները զգալի հարված հասցրին քաղաքի տնտեսությանը:

Կոստանդնուպոլիսը բազմիցս ենթարկվել է կայսրության հարևան երկրների և ցեղերի հարձակմանը: 617-ին, 625-626-ի ձմռանը Կոստանդնուպոլիս են արշավել պարսկական զորքերը, 626-ի ամռանն ապարդյուն պաշարել են ավարները, 674-678-ին և 717-ին արաբները, 821-ին Թովմա Սլավոնը, 907-ին ռուսական զորքերը իշխան Օլեգի գլխավորությամբ: 1204-ի ապրիլին Կոստանդնուպոլիսը գրավել են խաչակիրները, որոնք կողոպտել ու ոչնչացրել են մշակութային արժեքները, թալանել քաղաքը և դարձրել *Լատինական կայսրության* մայրաքաղաքը: 1261-ին հույները վերագրավել են Կոստանդնուպոլիսը: Պատերազմները, առևտրի անկումը, համաճարակները նվազեցրին բնակչության թիվը: XV դ. սկզբին Կոստանդնուպոլիսն ուներ մոտ 50 հազար բնակչություն: Թուրքական նվաճումների հետևանքով Բյուզանդական կայսրության տարածքը սահմանափակվել էր Կոստանդնուպոլսով ու նրա շրջակայքով և հաճախ էր ենթարկվում թուրքական զորքերի հարձակմանը: 1394-ին սուլթան Բայազիդ I-ը պաշարել է Կոստանդնուպոլիսը: Սև ծովի հետ Կոստանդնուպոլսի կապը կտրելու նպատակով նա Բոսֆորի ասիական ափին կառուցել է տվել Անադոլու հիսարը (Անատոլիայի բերդ): Յոթ տարի տևած պաշարումն ընդհատվել է Լենկթեմուրի արշավանքով: 1422-ին Կոստանդնուպոլիսը պաշարել է սուլթան Մուրադ II-ը: Սուլթան Մուհամմեդ II-ը (1451-1481) 1452-ին Բոսֆորի եվրոպական ափին Անադոլու հիսարի դիմաց, կառուցել է տվել Ռումելի հիսարը (Ռումելիայի բերդ) և հսկողություն սահմանել Սև ծովից Կոստանդնուպոլիս գնացող նավերի վրա: 1453-ի ապրիլի սկզբին թուրքական հսկայական բանակը (ըստ սկզբնաղբյուրների՝ 250-400 հազար, իսկ ըստ ժամանակակից թուրք պատմաբանների՝ 150 հազար) շարժվել է Կոստանդնուպոլիս և ապրիլի 7-ին սկսել պաշարումը: Չնայած Կոստանդնուպոլսի սակավաթիվ պաշտպանների դիմադրությանը, որ ղեկավարել է կայսր *Կոնստանդին XI Պալեոլոգոսը*, թուրքերը, 52 օրվա պաշարումից հետո, մայիսի 29-ին գրավել են քաղաքը: Երեք օր շարունակ նվաճողները անօրինակ բարբարոսությամբ թալանել ու ավերել են քաղաքը, կոտորել բնակչությանը: Մոտ 60 հազար մարդ վաճառվել է ստրկության: Թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի մշակութային արժեքների ոչնչացումը խոշոր հարված էր հունական և համաշխարհային մշակույթին: Կոստանդնուպոլսի անկումը ցնցող տպավորություն է թողել ականատեսների, այդ թվում՝ Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու վրա:

Թուրքերը Կոստանդնուպոլիսը վերանվանեցին 1453-ից շատ առաջ արաբական և հայկական աղբյուրներում հանդիպող Ստամբուլ (ենթադրվում է, որ հուն. «իս տին պոլին»-ի («ի քաղաք») աղավաղված ձևն է) անունով: Մուհամմեդ II-ը նստավայրը Ադրիանուպոլսից տեղափոխել է Կոստանդնուպոլիս և սկսել վերականգնել այն: Վերածնվող Կոստանդնուպոլսի առաջին բնակիչներն էին Բուրսայի հայերը, Պելոպոնեսից և Եգեյան ծովի կղզիներից գաղթած հույները և Ակսարայի թուրքերը: Կարճ ժամանակի ընթացքում Կոստանդնուպոլիսը դարձել է Օսմանյան կայսրության քաղաքական, տնտեսական, իսկ XVI դ. նաև *խալիֆայի* նստավայրն ու մահմեդական աշխարհի կենտրոնը: Կոստանդնուպոլսում է նաև հայոց պատրիարքի, բուլղարական եքսարքոսի (Լովեչի մետրոպոլիտը), կաթոլիկ արքեպիսկոպոսի, հրեաների մեծ ռաբբիի նստավայրը:

XV դ. վերջին Կոստանդնուպոլիսն ուներ ավելի քան 200 հազար, XVI դ. կեսին՝ 400-500 հազար, XVII դ. վերջին՝ 700-800 հազար բնակ-

չություն: Թեև XV-XVI դդ. աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքով միջազգային առևտրական ճանապարհները փոփոխվել են, Կոստանդնուպոլիսը չի կորցրել իր առևտրական և արհեստագործական նշանակությունը: Կոստանդնուպոլսի նավահանգստից Եվրոպա էր արտահանվում Օսմանյան կայսրության տարբեր մասերի, Փոքր Ասիայի և Արևմտյան Հայաստանի արտադրանքը: XVI-XVII դդ. մեծ չափերով տարածվել է ստրկավաճառությունը: XVIII դ. Կոստանդնուպոլսում եղել է 23 հազար արհեստանոց (80 հազար աշխատող), մոտ 32 հազար խանութ, կրպակ և առևտրական պահեստ: 1840-ին կառուցվել է շոգեալրաղաց, այնուհետև երևան են եկել մետաղամշակման, փայտասղոցման, մետաքսագործական ոչ մեծ ձեռնարկություններ: XIX դ. վերջին Կոստանդնուպոլսում եղել է 34200 առևտրական կրպակ և խանութ, 175 բաղնիք, 320 պալատ և առանձնատուն, 280 կառավարական շենք, 198 զորանոց և պահակատուն, 146 մահմեդական հոգևոր ուսումնարան, 65 գրադարան, 673 մզկիթ, 560 թուրքական ուսումնական տարբեր հաստատություն, 169 եկեղեցի, այդ թվում 60 ուղղափառ, 60 հայկական, կաթոլիկների 10 եկեղեցի ու 6 մենաստան և հրեական աղոթատուն, դերվիշների 230 մենաստան, 16 հիվանդանոց: Քաղաքի զարգացմանը նպաստել է սևծովյան նեղուցների ստրատեգիական և առևտրական դիրքը: Օսմանյան կայսրության քայքայման ժամանակաշրջանում (XVII դ. վերջ -1918) Կոստանդնուպոլսի և նեղուցների համար պայքարում են եվրոպական տերությունները:

XIX դ. ուժեղացել են քաղաքական և հասարակական հակասությունները: 1826-ին Կոստանդնուպոլսում ոչնչացվեցին ֆեոդալական հետադիմության կարևոր հենարան հանդիսացող *ենիչերիները: Թանզիմաթի* ժամանակաշրջանում եվրոպականացվեցին կառավարական գերատեսչությունները: XIX դ. Կոստանդնուպոլսում ձևավորվել է թուրք մտավորականությունը: 1865-ի հունիսին Կոստանդնուպոլսի թաղամաս Ենիքյոյում (Նոր գյուղ) հիմնվել է *«Նոր օսմաններ»* ընկերությունը: 1876-ի դեկտեմբերի 23-ին Կոստանդնուպոլսում հռչակվել է թուրքական առաջին սահմանադրությունը, 1889-ին ստեղծվել է «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը: Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո, ի կատարումն Մուդրոսի զինադադարի, 1918-ի նոյեմբերի 14-ին Կոստանդնուպոլիս մտան անգլիական, ֆրանսիական և իտալական զորքերը: 1920-ի մարտի 15-ի լույս 16-ի գիշերը անգլիական զորքերը, ի պատասխան Կոստանդնուպոլսում քեմալականների գործողությունների, գրավեցին կառավարական շենքերը, փոստը, զորանոցները, զինապահեստները, քաղաքում մտցվեց ռազմական դրություն: Սակայն Լոզանի կոնֆերանսից հետո դաշնակից զորքերը հեռացան Կոստանդնուպոլսից: 1923-ին Թուրքիայի մայրաքաղաք դարձավ Անկարան:



Հայոց Պատրիարքարանի շենքը Կոստանդնուպոլսում

Հայերը Կոստանդնուպոլսում

Կոստանդնուպոլսի առաջին հայերը զինվորականներ էին, վաճառականներ, ճարտարապետներ, ուսումնառության եկած երիտասարդներ: 572-ին Կոստանդնուպոլսում ստեղծվել է հայոց առանձին կրոնական համայնք: IX-XI դդ., երբ Բյուզանդիայի գահին տիրել է ծագումով հայ Մակեդոնական կամ Հայկական դինաստիան, հայերի թիվը բավական ստվարացել է: 1453-ին թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավման ժամանակ քաղաքի պաշտպանությանը, հույների կողքին, մասնակցել են և հայերը: Գրավելով քաղաքը՝ սուլթան Մուհամմեդ II-ը, ի հակակշիռ հույների, Կոստանդնուպոլիս բռնագաղթեցրեց հայ ու հրեա շինարար վարպետների, որոնց շնորհքով գեղեցկություն ու փայլ հաղորդեց իր նոր մայրաքաղաքին: ***1461-ին Կոստանդնուպոլսում հաստատվեց Հայոց պատրիարքություն, որին սուլթանը տվեց որոշ եկեղեցական-համայնական իրավունքներ:*** 1478-ին արդեն Կոստանդնուպոլսում բնակվում էր 1000 տուն հայ: Հետագա դարերում պոլսահայերի թիվը բազմապատկվել է նախ՝ բռնագաղթերի, ապա կամավոր եկած և աշխատանք որոնող պանդուխտների հաշվին: XVII դ. հայերը թվաքանակով Կոստանդնուպոլսի ոչ թուրք բնակչության մեջ երկրորդն էին (հույներից հետո): Հայերը գալիս էին Արևմտյան Հայաստանի գավառներից, հատկապես՝ Սեբաստիայից, Ակնից, ինչպես նաև Կիլիկիայից, Կովկասից, Պարսկաստանից, Կեսարիայից, Թոքատից և այլն[1]:

XIX դ. սկզբին Կոստանդնուպոլսում կար 150 հազար, 1840-ական թթ.՝ 222 հազար, 1880-ական թթ.՝ շուրջ 250 հազար հայ: 1880-ականներին սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք արգելվեց հայերի մուտքը Կոստանդնուպոլիս, իսկ 1896-ի օգոստոսին կազմակերպվեց պոլսահայերի ահավոր կոտորածը (շուրջ 10 հազար հոգի): Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Կոստանդնուպոլսում ապրում էր 150 հազար հայ, որոնց մի մասը (հիմնականում մտավորականներ) 1915-ի *Մեծ եղեռնի* զոհ դարձան:

Կոստանդնուպոլսի համայնքը միատարր չէր: Ամենաբազմամարդ խավը արհեստավորներից, պանդուխտ մշակներից և սևագործ բանվորներից կազմված աշխատավորական խավն էր: Արհեստավորները համախմբված էին էսնաֆությունների մեջ (XIX դ. կեսին՝ 65-ը): Մեծ համբավ ունեին հայ ոսկերիչները, մետաքսագործները, երկաթագործները, դերձակները և ժամագործները: Պանդուխտ մշակներն ու սևագործ բանվորները աղքատացած, քայքայված գյուղացիներ

[1] Այս առաջին հատվածի որոշ փաստեր և մտքեր կրկնվում են: Մենք չկրճատեցինք, որպեսզի հոդվածի ամբողջական տեսքը չխաթարենք:

ու արհեստավորներ էին: Բավական թիվ էին կազմում և ունևորները խոջաներ ու չելեբիներ (միջնադարում), ամիրաներ, սարաֆներ կամ սեղանավորներ (XVIII դ. վերջ - XIX դ. I-ին կես), այնուհետև էֆենդիներ, առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչներ, որոնք իրենց կապիտալի ու գործարարության շնորհիվ ազդեցիկ դիրքի էին հասել, կապերի մեջ էին արքունիքի հետ և ակտիվ դեր էին խաղում Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կյանքում: Թուրքական թույլ բուրժուազիայի առկայության պայմաններում ավելի էր մեծանում հայ մեծատունների դերը: Նրանց էին վստահված արքունի պետական կարևոր պաշտոնները (որ վարել են ժառանգաբար) ոսկերչապետությունը և դրամահատությունը *(Տյուզյաններ)*, վառոդապետությունը *(Տատյաններ)*, ճարտարապետությունը *(Պալյաններ)*, բժշկապետությունը: Եղել են նաև օսմանյան կառավարության նախարարներ (թղթատարական-հեռագրական, հանրագուտ շինությանց, երկրագործության, արտաքին գործերի և այլն), հետագայում նաև օսմանյան խորհրդարանի երեսփոխաններ և այլն: Ունևորների թվում էին և միջնորդ վաճառականները, որոնք կամրջում էին թուրք-եվրոպական առևտուրը: Կոստանդնուպոլսի հայ համայնքում փոքր թիվ չէին կազմում մտավորականները (մանկավարժներ, գրողներ, բժիշկներ, փաստաբաններ, ճարտարապետներ, արվեստագետներ և այլն), որոնք ակտիվորեն մասնակցում էին ոչ միայն պոլսահայերի, այլև ամբողջ արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքին: XVIII դ. սկսած Կոստանդնուպոլիսը դարձել էր ամբողջ արևմտահայ աշխարհի մի խճանկար, որտեղ ամեն մի գավառ և նույնիսկ շատ գյուղեր իրենց մասնիկն ունեին:

Պետության կողմից Կոստանդնուպոլսի հայ համայնքի ղեկավար էր ճանաչված Պոլսի հայոց պատրիարքը: 1844-ին ստեղծվել է պոլսահայերի ներքին գործերը կարգավորող մարմին *Ազգային ժողովը*, 1847-ին *Ազգային հոգևոր և գերագույն ժողովները*, որոնք *Ազգային՝ սահմանադրության* (1863) ընդունմամբ վերակազմվել են տարբեր մարմինների: Պաշտոնական ղեկավար հիմնարկների կողքին համայնքի հասարակական կյանքը կազմակերպել են ազգային մշակութային միությունները, բարեգործական ընկերությունները, որոնցից նշանավոր են եղել «Համազգայաց ընկերությունը» (1846), «Ուսումնական ընկերությունը» (1853), «Բարեգործական ընկերությունը» (1860), Ասիական (1877), Արարատյան, Կիլիկյան, Դպրոցասիրաց-Արևելյան (1879, 1880-ից *Միացյալ ընկերություն հայոց)*, Ազգանվեր հայուհյաց (1879), Դպրոցասեր տիկնանց (1879) ընկերությունները, Իզմիրյանց մրցանակի հանձնախումբը, Սանասարյանի խնամակալությունը, ինչպես նաև Արիներիի, թատերասերների, երաժշտասերների, գրասերների, կրթասերների, մարմնամարզական միությունները, Հայ արվեստից տունը և այլն:

Այս ընկերությունների ջանքերով ու միջոցներով դպրոցներ են հիմնվել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայաշատ վայրերում, գրադարան-ընթերցարաններ, հարուստ մատենադարաններ Կոստանդնուպոլսում և այլն: XIX դ. վերջից մինչև XX դ. սկիզբը Կոստանդնուպոլսում գործել են հայ ազգային կուսակցությունները:

Կոստանդնուպոլսի առաջին կանոնավոր դպրոցը (ուր պատրաստվում էին ուսյալ եկեղեցականներ) հիմնել է Հովհաննես Կոլոտ պատրիարքը XVIII դ. սկզբին (նախ Սկյուտարում, ապա Գում-Գափուում): 1859-ին Կոստանդնուպոլսում կար 42 վարժարան, 1871-ին 48, 1893-ին 39, 1901-ին 40: Կոստանդնուպոլսի ազգային կրթական բազմաթիվ հաստատություններից աչքի են ընկել Թոփ Գափուի Պեզճյան վարժարանը (հիմնվել է 1832-ին), Սկյուտարի ճեմարանը (1838), Խասգյուղի Ներսեսյան վարժարանը, Սամաթիայի Ագապյանը, Թոփ Գափուի Լևոն-Վարդուհյանը, Գատըգյուղի և Բերայի Մխիթարյան հայրերի դպրոցները, Անարատ հղության քույրերի կաթոլիկական, ինչպես նաև ավետարանականների դպրոցները, Գատըգյուղի Արամյանը, Պեշիկթաշի Մաքրուհյանը, Բերայի Աղջկանց արվեստանոցը, Էսայանը, Նոր դպրոցը, ինչպես նաև Հռիփսիմյանց, Գայանյանց, Մեզպուրյան, Մեշտուտճյան, Շահնազարյան, Կարապետյան, Բագրատունի, Պեզազյան, Նիկողոսյան, Տատյան, Սեմերճյան, Սրենց, Պոյաճյան, Ինճեյան, Պերպերյան, Դպրոցասեր տիկնանց վարժարանները և Ղալաթիայի Կեդրոնական վարժարանը:

Կոստանդնուպոլիսը եղել է հայ տպագրության խոշոր կենտրոններից. առաջին հայկական տպարանը հիմնվել է 1565-ին, XIX դ. առաջին կեսին գործում էր 25, իսկ երկրորդին՝ շուրջ 30 տպարան: Դրանցում տպագրվել են հայերեն գրքեր, պարբերականներ և այլն: Առաջին թերթը «Լրոն գիր մեծի տերության Օսմանյան», լույս է տեսել 1832-ին (տպագրիչն էր Պողոս Արապյանը): Ցայսօր Կոստանդնուպոլսում լույս է տեսել 324 անուն պարբերական: Կոստանդնուպոլսում ձևավորվել ու զարգացել են արևմտահայ մանկավարժությունն (Հ. Հինդլյան, Ռ. Պերպերյան, Հ. Ասատուր) ու հրապարակախոսությունը (Ա. Գարագաշյան, Ն. Ռուսինյան, Ն. Զորայան, Ա. Հայկունի, Գ. Օտյան, Հ. Սվաճյան, Ե. Տեմիրճիպաշյան, Թեոդիկ և ուրիշներ), որոնք բարձրացրել են քաղաքական, ազգային-ազատագրական ու ժողովրդական պայքարի խնդիրներ:

Կոստանդնուպոլսում է *ձևավորվել արևմտահայ գրական լեզուն*, որով ստեղծվել է հարուստ գրականություն (Հ. Պարոնյան, Մ. Պեշիկթաշլյան, Ծերենց, Գ. Զոհրապ, Տ. Չրաքյան, Սիամանթո, Դ. Վարուժան, Թլկատինցի, Ե. Օտյան, Տ. Կամսարական, Զ. Եսայան, Սիպիլ, Մ. Մեծարենց, Պ. Դուրյան, Լ. Շանթ, Ռ. Զարդարյան, Ռ. Սևակ, Երուխան, Մ. Զարիֆյան, Ա. Արփիարյան, Վ. Թեքեյան և շատ ուրիշներ):

Կոստանդնուպոլսի առաջին պրոֆեսիոնալ դրամատիկական թատրոնը Հովհ. Գասպարյանի *«Արամյան թատրոնն»* էր: 1861-ին հիմնվեց *«Արևելյան թատրոնը»*, որտեղ ձևավորվեց արևմտահայ դերասանական դպրոցը (Ա. Փափազյան, Ս. Էքշյան, Պ. Մաղաքյան, Մ. Մնակյան, Դ. Թրյանց և ուրիշներ): 1868-82-ին գործել է *Հ. Վարդովյանի* «Թատրոն օսմանիեն» հայ դերասաններով (Ե. Գարագաշյան, Թ. Ֆասուլաճյան և ուրիշներ):1870-ական թթ. կազմավորվել է *Ս. Պենլյանի* օպերետային թատերախումբը: 1882-ից մինչև 1914-ը գործել է *Մ. Մնակյանի* «Օսմանյան մելոդրամատիկ թատերախումբը»: 1908-1914-ին հայ թատերական կյանքը Կոստանդնուպոլսում աշխուժացել է *Վ. Փափազյանի* ելույթներով, ապա Աբելյան-Արմենյան և Զարիֆյան-Սևումյան թատերախմբերի այցելություններով: Կոստանդնուպոլսում հայ թատերական լիարյուն կյանքն ավարտվեց «Պոլսահայ դրամատիկի» գործունեությամբ (1919-1923):

Պոլսահայ ճարտարապետները, նկարիչները, երաժիշտներն իրենց ստեղծագործություններով հարստացրել ու զարգացրել են հայ (նաև թուրքական) արվեստը: XVI դ. Կոստանդնուպոլսում հայտնի էր ճարտարապետ *Սինանը* (հեղինակը նշանավոր Սուլեյմանիե մզկիթի և բազմաթիվ պալատների ու ապարանքների, հասարակական կառույցների և այլն): Շուրջ 300 տարի իրենց արվեստով Թուրքիայի մայրաքաղաքը զարդարել են Պալյանները (Դոլմաբաղչեի, Սարայ Բուրնիե, Զրաղանի պալատները, Թոփհանեի, Օրթաքյոյի, Մեջիդիե, Վալիդե մզկիթները, Եըլդըզի, Չիֆլիկ քյոշկերը, Ս. Փրկիչի ազգային հիվանդանոցը, Սկյուտարի ճեմարանը, Պեշիկթաշի հայկական եկեղեցին և այլն): Հայ նկարիչներից, որոնց բազմաթիվ աշխատանքներ (գեղանկարչական, քանդակագործական, կիրառական արվեստի, մանրանկարչական) պահպանվել են Կոստանդնուպոլսի Նկարչության և քանդակագործության, Զինվորական, Թոփ Գափուի թանգարաններում, Հայոց պատրիարքարանի արխիվներում և մասնավոր հավաքածուներում, հայտնի են Պ. Պեյզատը (Բիհզատ), Ռաֆայել Բարսեղը, Խոջա Պողոսը, Սեպուհ Մանասը, Սիմոն Հակոբյանը, Թելեմաք Էքսերճյանը, Սոփոն Բեզիրճյանը, Շահին Սարգսյանը, քանդակագործներ Երվանդ Ոսկանը, Հակոբ Փափազյանը, փորագրիչներ Անդրանիկ Ֆենդյանը, Մկրտիչ Բենդերյանը, Վահրամ Մյուհենտիսյանը (թուրքական տպագրական տառերի ստեղծող), Վիգեն, Հովսեփ, Գևորգ Աբդուլլահները (լուսանկարչության սկզբնավորողները Թուրքիայում) և շատ ուրիշներ:

Հայ երաժշտությունը Կոստանդնուպոլսում զարգացել է բոլոր բնագավառներով ստեղծագործական, կատարողական արվեստ, երաժշտագիտություն: Համբարձում Լիմոնճյանը (Պապա Համբարձում) ստեղծեց նոր հայկական նոտագրությունը, Տիգրան Չուխաճյանը առաջին հայկական օպերան (նաև թուրքական օպերետի հիմնադիրն է): Երաժիշտ կատարողներով հայտնի են Սինանյան ընտանիքը (ջութակահարներ, դաշնակահարներ, դիրիժորներ), ծնծղաներ պատրաստող Զիլճյան ընտանիքը: Կոստանդնուպոլսում են գործել հանճարեղ Կոմիտասը և շատ ուրիշներ[1]:

Այժմ (1979) Կոստանդնուպոլսում (Ստամբուլ) հաշվվում է 60-70 հազար հայ, որոնք հիմնականում զբաղվում են արհեստներով և առևտրով, կան մտավորականներ (ուսուցիչներ, բժիշկներ, իրավաբաններ, արվեստագետներ և այլն): Երբ 1930-1940-ական թթ. սահմանափակվեցին Հայոց պատրիարքության իրավասությունները, պոլսահայերի ազգային իրավունքները, դպրոցներում հաստատվեցին ազգային ուսուցումը ջլատող օրենքներ, այնուամենայնիվ, պոլսահայերը, ըստ հնարավորին, կարողացան պահպանել ազգային և մշակութային որոշ հիմնարկություններ: Հայ համայնքի ղեկավար մարմին մնում է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը. համայնքի կառավարող մարմինն է Գաղութի ժողովը, որը հենվում է թաղային խորհուրդների վրա: Հայ կուսակցություններ և քաղաքական կազմակերպություններ չկան: Գործում են 57 հայկական եկեղեցի (լուսավորչական, նաև կաթոլիկ և ավետարանչական), 33 հայկական դպրոց, որոնցից 4-ը տասնմեկամյա լիցեյ (Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանք, Կեդրոնական, Սահակյան, Էսայան), ինչպես նաև մշակութային կազմակերպություններ «Կեսարիոյ կրթասիրաց միությունը», «Թրքահայ ուսուցչաց միությունը», Էսայան, Կեդրոնական, Արամյան սանուց միությունները, «Նարեկյան երաժշտական սրահը», «Կոմիտաս» երգչախումբը, թուրքահայերի պարի անսամբլը և այլն: Լույս են տեսնում գրական-գեղարվեստական, թատերական, եկեղեցական բնույթի «Ժամանակ», «Մարմարա» օրաթերթերը, «Քուլիս» երկշաբաթաթերթը, «Սբ. Փրկիչ» ամսագիրը:

Եդիկուլե թաղամասում է գտնվում Ս. Փրկիչ հիվանդանոցը (հիմնվել է 1834-ին, Հարություն Պեզճյան ամիրայի ծախքով), որը գործում է ցայսօր, պոլսահայերի նյութական միջոցներով: Ստամբուլահայ աչքի ընկնող մտավորականներից են գրողներ Հակոբ Մնձուրին, Եդվարդ Սիմքեշյանը, Ադրիանե Տատրյանը, Վահրամ Պարոնյանը, բանաստեղծներ Զահրատը, Խրախունին, բառարանագիր Բարսեղ Թուղլաճյանը, բժիշկ, պրոֆեսոր Վահե Ալեքսանյանը, նկարիչներ Քրիստին Սալերին, Լիլի Գոչունյանը, լուսանկարիչ Արա Գյու-

[1] Տե՛ս նաև «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն» հոդվածի Լուսավորություն, Մամուլ, Գրականություն, Ճարտարապետություն, Կերպարվեստ, Երաժշտություն բաժինները:

լերը, երգիչներ Ալիս Մանուկյանը, Գևորգ Բոյաճյանը, Նուբար Բայբերդյանը, խմբավար Ժիրայր Ասլանյանը, երաժիշտներ Ասլանյան եղբայրները, Հերման Միսքչյանը և ուրիշներ:

Գրականություն. Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, Ստամպոլոյ պատմութիւն, հ. 1-3, Վիեննա, 1913-1939: *Ծոցիկյան Ս.,* Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947: *Սիրունի Հ.,* Պոլիս և իր դերը, հ. 1-2, Բեյրութ,1965-1970: *Ղազարյան Հ.,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967: «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Ե., 1974: ***Кондаков Н. П.,*** Византийские церкви и памятники Константинополя, Одесса, 1877; *Նույնի,* Древности Константинополя, Научно-популярный очерк, М., 1915; ***Джелал Эссад,*** Константинополь, от Византии до Стамбула, М., 1919; ***Петросян Ю. А., Юсупов А. Р.,*** Город на двух континентах, М., 1977; Janin R., Constantinople Byzantine, 2 éd., P. 1964; ***Guilland R.,*** Etudes de topographie de Constantinople Byzantine, v.1-2, B.,1969.

Պատմության անմոռաց էջեր

Խրիմյանը և իր ժամանակը

ԻՍՈՐՀՐԴԱՀԱՅ պատմագիտության առաջնահերթ խնդիրներից էր անցյալ դարի վերջալույսի և մեր դարի առաջին զույգ տասնամյակների հայ ազգային-ազատագրական շարժումների, հասարակական-քաղաքական մտքի պատմության բազմաթիվ պրոբլեմների համակողմանի ուսումնասիրությունը: Այդ պրոբլեմները, սակայն, ոչ թե պատահմամբ են դուրս մնացել մերօրյա պատմաբանների ուշադրությունից, այլ տասնամյակներ շարունակ արգելված է եղել դրանց մասին գրելն ու խոսելը: Ստալինյան բռնապետության կառքին լծված, նրա ձայնափողի վերածված գռեհիկ սոցիոլոգները քաղաքական անհարկի պիտակավորման խրտվիլակով շարունակ ահաբեկել են այն գիտնականներին, որոնք հանդգնել էին ընդհանուր հոսանքին դեմ գնալ, հայ մարքսիստներից զատ, գրել նաև մեր ժողովրդի ազատամարտերը գլխավորած, նրանց գաղափարապես սնած մյուս դեմքերի մասին:

Շուրջ յոթ տասնամյակ շարունակ հեղափոխական են մկրտվել միայն այն գործիչները, որոնք իրենց պայքարի սուր սլաքներն ուղղել էին Ռոմանովյան միապետության դեմ: Սուլթանական բռնապետության կողմից պարտադրված, օսմանյան կայսրության և երիտթուրքերի վարած հայակուլ քաղաքականությանը դիմագրավող, համաժողովրդական, զոհառատ ու անհավասար պայքարը գնահատվել է իբրև սեպարատիստական շարժում, որի կազմակերպիչները, իբրև թե, միայն ազգային-քաղաքական կուսակցություններն էին: Արևմտահայության ֆիզիկական գոյության պաշտպանության համար մղվող հայրենանվեր այդ շարժումը դիտվել է իբրև թե ժողովրդի ուշադրությունը սոցիալ-դասակարգային, հեղափոխական ընդվզումների համընդհանուր նպատակամղումներից խոտորող մի ուղի: Հետևանքն այն եղավ, որ թուրքական կախաղանասյուների վրա ճոճված անձնուրաց հայ գործիչների անունները ետմահու արտաքսվեցին հայոց պատմության էջերից, նրանց արդարացի պայքարն ըստ արժանվույն չգնահատվեց հետագա սերունդների կողմից:

Ավելի վատ վարվեցին հայ եկեղեցու և հոգևոր այն գործիչների նկատմամբ, որոնք խոշոր դեր կատարեցին ժողովրդի քաղաքական կյանքում: Հայտնի է, որ հայկական պետականության անկումից ի վեր, հայ եկեղեցին, փաստորեն, ստանձնեց ժողովրդի և նրան տիրապետող կառավարությունների միջնորդի դերը, դիվանագիտական հարաբերություններ հաստատեց օտար երկրների հետ, սատարեց ազգային-ազատագրական շարժումներին: Հայոց կաթողիկոսներից շատերը, գրագետ ու լուսամիտ եպիսկոպոսները, իրենց գրավոր ու բանավոր խոսքով թեժ պահեցին ժողովրդի սրտում անթեղված ազգային պետականության վերականգնման ակնկալությունները:

Վերոհիշյալ և այլ հանգամանքներով պայմանավորված, արհեստականորեն աղքատացավ մեր ժողովրդի նոր պատմության շարադրանքը: Կարևոր իրադարձությունները ներկայացվեցին համառոտագրված, հայ ազատամարտերը զարմանալիորեն մնացին առանց ղեկավարների և գաղափարաբանների: Հայոց պատմության ամենահարուստ, արյունաներկ դրվագները վերածվեցին անդեմ, գրեթե անանուն մի հյուսվածքի, որի արմատական վերակառուցումն այսօր, առավել քան երբևէ, հրամայական պահանջ է դառնում:

Ժամանակն է մաքրաջրել հայ ազգային-ազատագրական շարժման պատմությանը նվիրված խորհրդային մեծ ու փոքր այն պատմաբանների աշխատությունները, որոնց էջերից արտաքսված են մնացել անուններ՝ արժանի մեծարանքի, դեմքեր, որոնց գաղափարաբանությունը այսօր էլ այժմեական է և ուսանելի: Այդ մեծություններից առանձնացվում է *Մկրտիչ Խրիմյանը* (1820-1907):

Սուլթանական բռնապետության, ինչպես նաև հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի վարած ազգային-գաղութային քաղաքականության դեմ աներեր ու հետևողական պայքար ծավալեց Մ. Խրիմյանը, որին ժամանակին հանուր հայությունը վերամկրտեց *Հայրիկ* պատվանունով, նրան երգեր ու բանաստեղծություններ ձոնեց, սրբերի դասին դասեց: Սփյուռքահայությունը շարունակեց շնորհակալ այդ գործը՝ նրան նվիրելով հարյուրավոր գրքեր: Խորհրդահայ պատմագրությունը, կաթողիկոսական վեղարը հաշվի առնելով, նրա վաստակն ու գործունեությունը մոռացության տվեց, և առաջացավ մի բաց, որն այսօր միայն կարելի է լցնել:

Խրիմյանը XIX դարի երկրորդ կեսի հայոց պատմության խոշորագույն այն դեմքերից է, որն իր հզոր անհատականությամբ, գրչի փայլատակումով, հեղափոխական գործունեությամբ խորը ակոս գծեց հայ հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Ժողովրդի ծոցից ելած, անմնացորդ իր կյանքը ժողովրդի լուսավորության, կրթության, ազատագրության գործին նվիրած Հայրիկը դարձավ աստվածաբան՝ մարգարեների մակարդակով, բանաստեղծ՝ բանաստեղծների մեջ: Նա եղավ փիլիսոփա, դիվանագետ, պատրիարք,

կաթողիկոս, հեղափոխական: Հայրիկն իր ընդգրկած բոլոր մարզերում երբեք առաջնության դափնին ժամանակակիցներից և ոչ մեկին չզիջեց, անշուշտ, չմնալով միայն հայկական, զուտ ազգային շրջանակներում:

Խրիմյանի իմաստասիրական ուսմունքը խորապես ներծծված է համամարդկային գաղափարներով: Նրան հավասարաչափ հետաքրքրել է ճնշված, պետականազուրկ մյուս բոլոր ազգերի, սոցիալապես աղքատ աշխատավորական բոլոր դասակարգերի ճակատագիրը՝ անկախ ազգային պատկանելությունից, կրոնական դավանանքից: Հետազոտողներն իրավամբ Խրիմյանին համեմատում են Գյոթեի, Ռաբինդրանատ Տագորի հետ: Ճիշտ է նկատվել, որ եթե հայ ժողովուրդը մեծ լիներ, և նրա որդու գրածները հրատարակվեին եվրոպական լեզուներով, ապա Հայրիկի փառքի պատվանդանը կկանգնեցնեին Լև Տոլստոյի և Գանդիի կողքին, քանզի բնատուր այդ հանճարը իր ուսմունքով կանխում էր ռուս ու հնդիկ շատ փիլիսոփաների, քարոզում գաղափարներ, որոնք հայերեն հրատարակվելու պատճառով միայն անհայտ մնացին քաղաքակիրթ մարդկությանը:

Խրիմյանի ժամանակակիցներից էր Ռաֆֆին, որը երկար տարիներ գործակցելով նրա հետ, «Կայծեր» վեպում գրում է բնութագրական հետևյալ տողերը. «*Հայրիկի* բարեկամները ժողովրդի հալածված, հարստահարված և ամեն իրավունքներից զրկված դասակարգն է: Հայրիկի բարեկամները աղքատ շինականներն են, քաղաքի արհեստավորներն են և անտուն, անտեղ, անհող, անջուր սարակներն են ու բանվորներն են, և մի քանի երիտասարդներ, որոնք ազնիվ սիրտ ու բարի ցանկություններ ունեն, բայց իրանց ցանկությունները կատարելու համար ոչինչ միջոցներ չունեն: ...Նայելով այս կրոնավորի վրա, ի նկատի ունենալով նրա անցյալը և ներկան, իսկույն երևում էր՝ մինչև շինականի աղքատ խրճիթը խոնարհված մարդու ռամկասիրությունը, ռամկի բոլոր առաքինություններով և մարդասիրական բարձր գաղափարներով ոգևորված մի եկեղեցականի անձնազոհություն, որն իր աշխատության հոգևոր մխիթարությունը որոնում է նույնիսկ ռամկի հանգստության և բարօրության մեջ: ***Նա ժողովրդի մարդն էր և ժողովրդի համար ծնված***»: Հայրիկը թերևս այն միակ մարդն էր հայ իրականության մեջ, որն արժանացավ սակավախոս, գնահատումների մեջ ժլատ, բայց արդարադատ գրողի նման գնահատականին:

Մեծ գրողին լրացնում է Ալ. Շիրվանզադեն: Նա գրում է. «Խրիմյանի համար չկա ո՛չ իշխան, ո՛չ ծառա, ո՛չ հարուստ, ո՛չ էլ աղքատ, ամենքը միևնույն արժեքն ունեն նրա աչքում: Միայն մի բանի առաջ էր խոնարհվում նրա անկախ ու հպարտ հոգին-*ժողովրդի*»: Ավ. Իսահակյանը գրում է. «Հայ ժողովուրդը Հայրիկին չի մոռանա: Քանի հնանա, այնքան ավելի պիտի պայծառանա նրա հիշատակը: Նա դարերի միջից պիտի նայե հայ ժողովրդին և պիտի խոսի նրա հետ հարազատ

լեզվով՝ նրա նվիրական իղձերից և անամպ նպատակներից: Ժողովուրդը նրան չի մոռանա երբեք, որովհետև նրա սրտից էր եկել և դեպի նրա սիրտն էր գնում»:

Տակավին երիտասարդ, Բուքրեջի ազգային վարժարանի ուսուցիչ Վազգեն Բալջյանը, Խրիմյանին նվիրված իր աշխատության էջերում, Հայրիկի մասին գրում է. «Խրիմյանը մարդկության պեսպիսուն ծաղիկների ճոխ փունջ մըն է, ուր ամեն մեկ ծաղիկ իր գույնը և իր բույրը կը պահե, ուր ծաղիկներ իրար չեն ծածկեր, իրար չեն կոխեր, այլ իրար գրկած, իրենց գույներն ու բույրերը իրար խառնած, իրենց ներդաշնակ համանվագը դեպի միևնույն արևը կբարձրացնեն: Ծաղիկներ որոնց ամեն մեկը իրենց հողեն առած ուժերը, իրենց մարմնույն մեջ համադրելով, կայլափոխեն, կիդեալականացնեն զանոնք ու այս երկիրը կդարձնեն մարդկայնության արժեքներուն բուրաստանի մը՝ տիեզերքի մեջ այս՝ անսահման ու անվախճան»:

1956 թ. մեկ անգամ, արտահայտվելով Մ. Խրիմյանի մասին, արդեն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը գրում է. «Վասպուրականի Արծվի ոգին այսօր ալ կենդանի է ու կը սավառնի էջմիածնի հազարամյա քարերուն վրա, հավատք և հույս ներշնչելով բոլորին ու մեր գիտակցության առջև լուսավոր նոր հորիզոններ բանալով՝ դեպի ապագան»:

Մկրտիչ Խրիմյանը ծնվել է Վանում, արհեստագործ-վաճառականի ընտանիքում 1820 թ. ապրիլի 4(16)-ին: Խաչատուր հորեղբոր օգնությամբ գրաճանաչ դառնալով, ապա յուրացնելով կտավագործության արհեստը, «Կրմցոց Մկոն» կրթությունը շարունակում է Լիմ և Կտուց անապատների վարժարաններում: Փայլուն ընդունակությունները, բնածին օժտվածությունը, աշխատասիրությունը, հեզ և բարի բնավորությունը հնարավորություն ընձեռեցին պատանուն, Վասպուրականի անձուկ միջավայրում, խորապես տիրապետել գրաբարին, ուսումնասիրել Աստվածաշունչն ու հայոց պատմիչների աշխատասիրությունները, ծանոթանալ Մխիթարյանների հրատարակություններին:

Դպրոցն ավարտելով, Խրիմյանը ստանձնում է գրաբար լեզվի և հայոց պատմության ուսուցչի պարտականությունները: Ուսումնատենչ երիտասարդի ձգտումն էր՝ անցնել եվրոպական որևէ երկիր և կրթությունը շարունակել համալսարաններից մեկում: Որդու և մոր միջև սկսվում է խուլ և անհավասար պայքար, որը վերջանում է վերջինիս հաղթանակով: Մոր թախանձանքով, Մկրտիչը հարկադրված էր ամուսնանալ, մնալ Վանում, որտեղ և ծնվում է դուստրը Թագուհին:

Խրիմյանը, սակայն, երկար չմնաց Վանում: Բարձրագույն Դուռը, 1845 թ. սկսած, որոշել էր վերահպատակեցնել քրդական դերեբեյներին, իրեն ենթարկել փաստապես Վասպուրականին տեր դարձած Մահմուդ խանին: Տերության հրամանով, քրդական ցեղապետերի դեմ պայքար ծավալելու նպատակով, հայերից ևս զինվորագրություն կատարեցին: Խրիմյանը ծանուցագիր ստացավ թուրքական բանակ մեկնելու, որը նրա սրտով չէր, քանի որ գտնում էր, թե հայ-քրդական հակամարտություններից կարող է շահել միայն երկուսի ընդհանուր թշնամին՝ սուլթանական կառավարությունը:

Որդուն թուրքական բանակի զինվոր տեսնելուց երկնչում էին նաև նրա ծնողները: Այդ պատրվակով, ստանալով ծնողների համաձայնությունը, Խրիմյանը 1847 թ. թողնում է հայրենի բնաշխարհը և Պարսկաստանի վրայով անցնում էջմիածին, ներկայանում կաթողիկոսին նրանից թախանձելով ուսումը շարունակելու թույլտվություն: Հայոց Հայրապետը, զարմանալիորեն, խստագույնս մերժում է Խրիմյանի խնդրանքը: Նա ի՞նչ իմանար, որ ուսումը շարունակելու հնարավորությունից զրկում էր մի մարդու, որն հետագայում բազմելու էր իր իսկ այդ նույն գահի վրա:

Կրթություն ստանալու հույսերն ի դերև ելան: Երիտասարդը եղավ Երևանում, շրջեց Անիի ավերակներում, ապա անցավ Թիֆլիս և ծանոթացավ վիրահայոց կյանքին: Ամենուր նա պատմում էր Վասպուրականի հայոց ապրելակերպի, թուրք ու քուրդ բեկերի կատարած չարագործությունների մասին:

Շուրջ ութ ամիս Անդրկովկասում դեգերելուց հետո, 1848 թ. ամռանը նա Բաթումից, Տրապիզոնի վրայով, մեկնեց Կ. Պոլիս, որտեղ հաց և աշխատանք որոնելու հույսերով հավաքվել էին Արևմտյան Հայաստանից, հատկապես Վասպուրականից գաղթած հազարավոր պանդուխտներ: Նրանք գրկաբաց ընդունեցին իրենց բանիմաց հայրենակցին, ապրելու տեղ հատկացրեցին խաներում, այսինքն՝ մութ ու խոնավ այն հարկերի տակ, որտեղ լուռ ու խոնարհ հանգչում էր հայ երիտասարդությունը, քայքայվում ֆիզիկապես ու բարոյապես, մեռնում անհայտության մեջ, չունենալով նույնիսկ սեփական գերեզմանաքումբ:

Խրիմյանը Թուրքիայի մայրաքաղաքում զբաղվում էր արհեստագործությամբ, ազատ ժամերին բանաստեղծական շնչով, սակայն խրթին գրաբարով, գրում Արարատյան աշխարհից ստացած իր տպավորությունները:

Պատրիարքարանի հանձնարարությամբ 1851 թ. նա մեկնեց Երուսաղեմ, այնտեղ մնաց շուրջ տասն ամիս, վերադարձին զեկուցեց ս. Հակոբանց վանքում տիրող իրադարձությունների մասին: 1852 թ. նա արդեն հայկական Կիլիկիայում էր, շրջում էր այն լեռնագավառներով, որոնք դարեր շարունակ մարտնչել էին սուլթանական բռնապետության դեմ և ապրել կիսանկախ վիճակով: Արծվաբնի անուն ստացած հերոս Չեյթունի, միշտ ըմբոստ ու խրոխտ Հաճընի, Ադանայի ու Մարաշի հայ երիտասարդության հայրենասիրական, ըմբոստ ոգին հեղաբեկում էր Խրիմյանի հայացքները և նրան բերում այն համոզման, թե իր ժողովուրդը երբեք չի ընկճվի, քանի ունի այդպիսի զավակներ:

Եվրոպական լեզուներ չիմանալու, համալսարանական հիմնավոր

կրթություն չստանալու պատճառով, Խրիմյանը շարունակում էր հոգևոր սնունդ ստանալ Մխիթարյան հրատարակություններից: Ալիշանն ու «Բազմավեպը» նրա աչքին անհասանելի գագաթներ էին, հեռակա մենտորներ: Հոգևոր այդ սնունդն ազդում էր գավառահայ երիտասարդի աշխարհայացքի վրա, նրան մղում դեպի աստվածաբանական ուսմունքն ու Առաքելական եկեղեցին: Այդ ամենը նրան գուցեև դարձնեին մի սովորական հոգևոր քարոզիչ, եթե չլիներ իսկական դաստիարակը՝ ժողովուրդը: *Հայաստանի զույգ հատվածներ ու Կիլիկիա կատարած ուղևորությունները Մ. Խրիմյանին դարձրին գիտակից ու հայրենակարոտ հայ, իսկ ժողովրդի վիճակին հաղորդակցությունը՝ մարտնչող հայրենասեր:*

Խրիմյանը, սակայն, սկզբնական շրջանում գտնվում էր Մխիթարյանների գաղափարական ազդեցության տակ, պաշտպանում էր չափավոր հայեցակետ: Գրական երախայրիքը «Ուղերձ առ Հ. Արսեն Բագրատունի» չափաբերական քերթվածն էր, գրված 1849 թ., հրապարակված «Բազմավեպում»: 1850 թ. լույս տեսավ «Հրավիրակ Արարատյանը», իսկ 1851 թ. «Հրավիրակ երկրին Ավետյացը»: Առաջինում բանաստեղծը Հայաստանի գովքն է անում, ձգտում երկրից հեռացած պանդուխտների մեջ վերստին արթնացնել հայրենիքի սերը, նրանց ստիպելով տունդարձի ճանապարհ բռնելու: Երկրորդ գործում Խրիմյանը հմուտ աստվածաբան է, քրիստոնեական վարդապետության նոր տեսաբան, հայերի մեջ ավետարանական սիրո քարոզիչ: Երկու պոեմներն էլ ջերմոցային ծաղիկ էին, գրված խրթին գրաբարով, լեզուն՝ ժողովրդին անհասկանալի, այդ իսկ պատճառով էլ դրանք հեղինակին փառք բերեցին միայն Կ. Պոլսի երևելի հայոց պալատներում և ըմբռնում չստացան պանդուխտների շրջանում:

Յոթնամյա դեգերումներից հետո Խրիմյանը 1853 թ. վերադառնում է Վան, տեղեկանում հորեղբոր, մոր, ինչպես նաև կնոջ՝ Մարիամի և միակ դստեր՝ Թագուհու մահվան մասին: Նրբազգաց բանաստեղծի հոգեկան խռովքին չափ չկար: Նա երբեմն իրեն էր մեղադրում այդ կորուստների մեջ, մտածում ինքնասպանությամբ վերջ տալ իր կյանքին: Բարեբախտաբար, անձնական դրաման, ողբերգական մտածողությունը երկար չտևեցին: Խրիմյանը սթափվեց, վերագտավ իրեն ու որոշեց բոլորանվեր ծառայել մայր ժողովրդին, այսինքն՝ այն, ինչ չկարողացավ վերադարձնել հարազատներին, այդ բոլորը տալ սիրասուն ազգին:

Խրիմյանը 1854 թ. փետրվարի 25-ին Աղթամարի վանքում ձեռնադրվեց վարդապետ և անցնելով Վարագ, որոշեց վերակենդանացնել «ասիական փոքրիկ այդ Վենետիկը», այնտեղից արձակել ժողովրդին լուսավորելու կայծեր: Դժբախտաբար, միաբանությունը սառնությամբ դիմավորեց նորընծա վարդապետին, անտարբերությամբ վերաբերվեց նրա ծրագրերին: Հիասթափված ու վիրավոր սրտով Խրիմյանը, պանդխտության ցուպն առած, կրկին վերադարձավ Կ. Պոլիս: Նա ստանձնեց Սկյուտարի հայոց եկեղեցու քարոզչի պարտականությունները, իր շուրջ համախմբեց վանեցի պանդուխտներին, դարձավ հատկապես երիտասարդության սիրելին: Գնալով Խրիմյանի հեղինակությունը բարձրանում էր, քանզի վարդապետական նրա քարոզներն արդեն ներծծված էին հայրենիքի ազատագրության գաղափարներով, այդ իսկ պատճառով էլ քարոզչին լսելու էին գալիս նույնիսկ ամիրաները:

1854 թ. Գում-Գափու մայր եկեղեցում կարդացած քարոզի ժամանակ Խրիմյանը հայտարարեց, թե «յուր ազգն ու հայրենիքը չսիրող անձը մարդկային կյանքի մեջ ապրելու իրավունք չունի»: Նա հանկարծ նկատեց, որ այնտեղ նստած են նաև հայ ամիրաները: Դիմելով Հովի. Տատյանին, ասաց. «Ո՞վ արքունի վառոդապետ, քո ամբարած վառոդեդ քիչ մըն ալ Հայաստանցի հայերուն տուր, որ գործածենք մեր թշնամիներուն դեմ»: Հետո դառնալով Կ. Պալյանին, ձայնեց. «Ո՞վ արքունի ճարտարապետ, բավ է սուլթանաց համար պալատներ շինես, եկուր քեզ Հայաստան տանիմ, հոն մեր նախնյաց ավերակներ շատ կան, եկուր նորոգե մեր փլած ու կիսավեր ամրոցները, բերդերն ու պալատները»: Վառոդապետն ու ճարտարապետը սարսափահար թողնում են եկեղեցին, իսկ ժողովուրդը, հատկապես պանդուխտները, փարվում են քարոզչի գավազանին և, ձեռքերի վրա բարձրացնելով, նրան դուրս են բերում Գում-Գափուից:

Արդեն ակնհայտ էր, որ մինչև Խրիմյանի քարոզները, պոլսահայ ստվար գաղութը մոռացության էր տվել հայաշխարհը, որը տվայտում էր անլուր տանջանքների մեջ: Վանեցի վարդապետը կարճ ժամանակամիջոցում դառնում է հայության խիղճը մայրաքաղաքում, նրա իղձերի սգավոր ու ցավատանջ թարգմանը և Սկյուտարի եկեղեցու բեմից, առանց երկնչանքի, հայտարարում. «Ելե՛ք, ելե՛ք Հայկազավակունք, առեք սուր և հրացան, վառոդ ու գնդակ, երթանք աշխարհն Հայաստան, զի տառապյալ հայ ժողովուրդը ձեզի կսպասե ակնդետ»:

1855 թ. Մ. Խրիմյանը Կ. Պոլսում հիմնում է «Արծվի Վասպուրականի» ամսագիրը: Այն հայ մամուլի պատմության մեջ դառնալու էր այն անդրանիկ ճիչը, որը գավառը մխրճելու էր գաղթաշխարհի սրտի մեջ, իր էջերում հասունացնելով գավառահայ մտավորականության շարքերն ստվարացնող երիտասարդ գործիչների և հրապարակախոսների:

Կ. Պոլիսը հեռու էր Հայաստանից, «Արծիվը» կտրված էր ծագուկներից, ուստի, հետն առնելով թերթի հրատարակության արտոնությունը, հնամաշ տպարանը, Խրիմյանը վերադարձավ Վան, ուր ստանձնեց Վարագա վանքի վանահոր պաշտոնը: Այստեղ 1857 թ. մարտի 1-ին նա բացեց «Վարագա ժառանգավորաց վարժարանը»:

1858 թ. հունվարից Վարագում սկսեց հրատարակվել «Արծվի Վասպուրականին», որի օրգանական շարունակությունը դարձավ 1863 թ. Մուշում լույս տեսնող «Արծվիկ Տարոնն» հանդեսը՝ արդեն Գ. Սրվանձտ-

յանցի խմբագրությամբ: Աստիճանաբար հզորացան Խրիմյանի սաները: «Արծվիկները» թևեր առան, դարձան ուսուցչի օգնականները, նախակրթարաններ հիմնեցին Վասպուրականում և Տարոնում, կաղապարեցին հայրենասիրական գաղափարներ, ժողովրդի խոնարհ խավերին տվեցին ոչ միայն լույս և կրթություն, այլև նրանց նպատակամղեցին պայքարի ու հաղթանակի: *Չևավորվեց Խրիմյանական հոսանք,* որի շարքերում էին Գ. Սրվանձտյանցը, Ա. Թոխմախյանը, Նաթանյան և Տևկանց եղբայրները, Գ. Շերենցը, Գ. Աղվանյանցը և այլոք: Այստեղ եկավ նաև երիտասարդ Ռաֆֆին և փաստորեն Վանում փայլատակեց բանաստեղծական նրա տաղանդը:

Խրիմյանի սաները, մերձավորներն ու գաղափարակիցները հիմնականում արտահայտում էին գավառահայության շահախնդրությունները, մի կողմից պայքարում պահպանողական ռուտինայի դեմ, մյուս կողմից՝ Ա. Արփիարյանի բնութագրությամբ, առանց հեղափոխություն բառն արտասանելու, հեղափոխական գաղափարներ տարածում Արևմտյան Հայաստանում:

Խրիմյանի համազգային ճանաչումը, նրա հոսանքի բազմանդամ դառնալը, գազազեցնում էին Վասպուրականի և Տարոնի թուրքամետ հայ աղաներին, որոնք բացահայտ պայքարում պարտվելով, բռնում են ճիզվիտական զազրելի արարքի՝ մատնության ճանապարհը: Կառավարությանը նրանք հայտնում են, թե վարդապետն ու իր կուսակիցները հակապետական գործողություններ են ծավալում:

Մեղադրանքը ծանր էր: Խրիմյանը հարկադրված էր 1866 թ. մեկնել Կ. Պոլիս, իր երեկվա բարեկամների օգնությամբ, անձամբ ժխտել ստացված մատնագրերի բովանդակած փաստերը, ապա դատ բացելով Վասպուրականում և այլուր չարագործություններ կատարող թուրք ու քուրդ աղաների դեմ, տերության միջամտությամբ, նրանց աքսորել տալ Ռումելիա: Վարդապետի նոր հաղթանակը առավել ժողովրդական դարձրեց նրան, որին հաջորդեցին 1868 թ. նրա նշանակումը «եպիսկոպոս Գլակա վանքի», նույն թվին՝ եպիսկոպոս օծվելը էջմիածնի Մայր աթոռում:

1869 թ. սեպտեմբերի 4-ին Կ. Պոլսի հայոց ընդհանուր ժողովը, հակառակ սուլթանի և Բ. Դռան կամքի, Խրիմյանին ընտրում է արևմտահայոց պատրիարք: Այդ օրերին նա դեգերում էր Կարինի և նրա գավառների դիվանատներում, ուր ջանում էր ընթացքի մեջ դնել Մշո ս. Կարապետ վանքի, Տարոնի հողազրկված գյուղացիների բողոքագրերը: Դիմագրավելով քուրդ ցեղապետերի պաշտպան, կաշառակեր թուրք դատավորներին ու հացկատակ որոշ եկեղեցականների հալածանքներին, Խրիմյանը ջանում էր դարմանել տեղական երկու սարսափելի վերքեր՝ նախ կրճատել տալ գավառական հարստահարությունները, հետ վերադարձնել պանդուխտներին, ապա և, կարգուկանոն հաստատելով, զսպել հոգևորական չարագործներին, փրկել եկեղեցու

պատիվը, վերջ դնել նրա անարժան սպասավորներից ոմանց կատարած չարաշահումներին:

Բ. Դուռը մեծ դժվարությամբ, այն էլ Գր. Օտյանի երաշխավորությամբ միայն, Խրիմյանին հաստատեց Հայոց պատրիարքի պաշտոնում: Երեք ամսվա հապաղումից հետո Հայրիկը հասավ Կ. Պոլիս: Պատրիարքության աթոռին բազմելով, Խրիմյանն իր հետ մայրաքաղաք էր տանում Հայաստանի սիրտը, ժողովրդի բողոքը, միաժամանակ և բարեկարգությունների հույսը: Իր ուխտի անդրանիկ ճառը նա սկսեց այսպես. «Իմ վրա մի նայիք որպես Պոլսո պատրիարքի: Ես պատկերն եմ Հայաստանի ցավերուն, ես ստանձնեցի այս ծանր լուծը, նախօրոք խոստանալով ժողովրդին, որ պատրիարքությանս մեջ ազգիս թշվառությունը ազգօրեն պիտի ներկայացնեմ տերության և դարման խնդրեմ...»:

Նորընծա պատրիարքը ընդմիշտ հավատարիմ մնաց իր խոստմանը: Նրա հանձնարարությամբ վեր հանվեցին տարիներով պատրիարքարանի արխիվադարաններում ընդարմացված բողոքագրերը, մշակվեցին, ընդհանրացվեցին և «Գավառական հարստահարությունների տեղեկագիր» վերտառությամբ ներկայացվեցին թուրքական կառավարությանը: Սուլթանական տիրապետության հարյուրամյակներում արևմտահայությունն առաջին անգամ էր ազգովին բողոքում իր վիճակի մասին, որից վախեցած Բ. Դուռը հանձնախումբ նշանակեց փաստերը ստուգելու, խոստանալով միջոցներ ձեռք առնել:

Պատրիարքը մայրաքաղաքում իրեն շրջապատեց հայ պանդուխտներով, որոնցից շատերը Հայրիկից ստանում էին նյութական ու բարոյական օգնություն, հարյուրներով գիշերում էին պատրիարքարանի գավիթներում: Նա ոտքով շրջագայում էր խաներում, մտնում գավառացի պանդուխտների խղճուկ նկուղները, նստում նրանց կեղտոտ անկողինների վրա, զրուցում նրանց հետ, վերջիններիս խնդրանքով, երբեմն նամակներ գրում. դրանցով իսկ Կ. Պոլիսը մոռանալով, Հայաստանը հիշում: Պատրիարքի այդ գործողությունները, հատկապես պատրիարքարանի մեջ պանդուխտներին գիշերելու տեղ հատկացնելը, հարուստ էֆենդիների կողմից քննադատության նշանախեց են դարձնում Հայրիկին, որոնց պատասխանելով, նա գրում է. «Պատրիարքարանը ազգային տունն է, ամեն հայ իրավունք ունի անոր վրա: Դուք, էֆենդիներդ և հարուստներդ, որ կվայելեք պատրիարքարանի դահլիճները, դուք ինչո՞ւ չեք հանդուրժեր, որ անտուն և թշվառ պանդուխտները մեկ-երկու գիշեր այս միջանցքներու մեջ հանգստանան: Ա՞յս է Ձեր եղբայրասիրությունը, ա՞յս է Ձեր ազգասիրությունը, որոնց մասին մեծ-մեծ կբարբառեք ժողովներու մեջ»:

Խրիմյանի հույսը ժողովուրդն էր, նրա անբաժան մասը կազմող պոլսահայ հազարավոր պանդուխտները, որոնցից շատերին Հայաստան տունդարձելիս, նրանց փող էր տալիս, պատվիրելով վերադար-

ձին հետները զենք ու զինամթերք տանել, այդ զենքով պաշտպանել ոչ միայն իրենց ընտանիքի պատիվը, այլև դիմագրավել թուրք աղաների և քուրդ բեկերի գործած վայրագություններին:

Խաղաղ չընթացավ Խրիմյանի պատրիարքության շրջանը: Ժողովրդի կողմից պաշտպանություն ստանալը գրգռեց ոչ միայն Բ. Դռան, այլև պոլսահայ երևելիներին: Նրա դեմ սկսվեց բացահայտ պայքար, որի դրոշակակիրները պատրիարքին հանիրավի անվանեցին «հակասահմանադրական», այն պատրվակով, որ Խրիմյանը հայտարարել էր, թե «Սահմանադրությունը բովանդակ ազգի օրենքն է, և ոչ թե միայն պոլսահայությանը»:

Պայքարը գնալով առավել սուր բնույթ ստացավ: Հայրիկը 1873 թ. օգոստոսին Ազգային ժողովին ներկայացավ հրաժարականի իր ճառով, որի մասին ասված է. «Ճառ մը չէր ան, այլ ճիչ մը, ցավագին աղաղակ ալեկոծված սրտի մը, որ ունեցած է իր համոզումներու համար տանջված հոգիին բոլոր անձկությունները»: Ազգային ժողովը մերժեց Խրիմյանի հրաժարականը, սակայն սուլթանական կառավարությունը, որը դժգոհ էր «անհանգիստ պատրիարքի» գործողություններից, արդեն շտապել էր հարգել նրա դիմումը և ընդունել նրա հրաժարումը: Կատարված փաստի առաջ կանգնելով, Կ. Պոլսի Ազգային ժողովը, հարկադրված, Խրիմյանին ազատեց պատրիարքի պարտականություններից:

Թողնելով պատրիարքությունը, Խրիմյանը չթողեց իր ժողովրդին: Նա շարունակեց գործունեությունը Կ. Պոլսում, զբաղվելով մերթ քարոզչությամբ, մերթ հրապարակախոսությամբ: Հայրիկի հարստությունը նրա պայծառ մտքերն էին, պայքարի զենքը՝ փայլատակող գրիչը: Ահա այս տարիներին էր, որ իրար հետևից լույս տեսան նրա մի շարք աշխատությունները:

1876 թ. թուրք նորաթուխ բուրժուազիայի պարագլուխ Միդհատ փաշայի ջանքերով, Գր. Օտյանի մասնակցությամբ, կազմվեց և հրատարակվեց օսմանյան Սահմանադրությունը, թղթի վրա խոստանալով հպատակ այլազգիների հավասարությունը՝ օրենքի առջև: Սահմանադրական այդ խաբկանքի մեղրամսի օրերին ոգևորված էին հույները, սլավոնները, այդ թվում և արևմտահայերը: Ոգևորվեց նաև Խրիմյանը, գրելով և հրատարակելով «Ժամանակը և խորհուրդը յուր» աշխատությունը, որը սոցիալական բողոք էր ընդդեմ անարդարության, ժամանակի տիրապետող հասարակական-պետական համակարգերի դեմ՝ ընդհանրապես, սուլթանական բռնապետության դեմ՝ մասնավորապես: Ռոմանտիկ վասպուրականցին զարմանալիորեն հույսեր էր կապում Սահմանադրության հետ, որոնք շուտով ի դերև ելան:

1876 թ. դեկտեմբերին, արյունախում սուլթան Համիդի սադրանքով, հրդեհվեց Վանի հարուստ շուկան: Մեկ գիշերվա մեջ սնանկացան հայ վաճառականներն ու արհեստավորները, մոխրակույտի վերածվեց կամ

թալանվեց տասնամյակներով կուտակած նրանց ունեցվածքը: Ողբում էր ողջ Վասպուրականը, ողբում էր նաև նրա վշտերի թարգման Մ. Խրիմյանը, որը էքսպրոմտով, բանաստեղծական շնչով, գրեց և մեկ ամիս անց հրատարակեց «Վանգույժ» աշխատությունը:

Վանի հրդեհը մոխրացրեց Խրիմյանի ակնկալիքներն արյունածարավ Եվրոպայից, նորելուկ թուրք բուրժուազիայից և «Վանգույժում» կտրուկ շրջադարձ կատարեց դեպի ժողովուրդը, նրա զինված ինքնապաշտպանությունը: Նա լալահառաչ գրում է. «Ողորմի՜մ քեզ, ժողովուրդ հայոց, ողորմի՜մ. արդյոք լավագույն չէ՞ր քեզ միանգամ մեռնեիր և կնքվեր քո հանգստյան գերեզմանը և դու երթայիր դադարեիր առ հարս քո, քան թե այսպես ի գետին թալկանալով արյունացամաք մեռնեիր: Ո՜հ, մինչև ե՞րբ անսամ քեզ, ***որ ինքնազոհ մեռնիլ սորվիս, աշխարհը սորվեցավ այս դասը, յուր մրցանակն առավ, դու դեռ անուս մանուկ մնացիր***»:

Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմի նախօրյակին սուլթանական կառավարությունը քուրդ ցեղապետերին, հատկապես Ջալալեդդինին գրգռեց, խոստումներով կաշառեց, հրահանգելով ջարդել անպաշտպան արևմտահայությանը: Բագրևանդը, Բայազետը, Վասպուրականը ներկվեցին հայոց արյամբ: Վասպուրականի Արծիվը, ճիշտ է, Բոսֆորի ափերից էր հետևում դեպքերի ընթացքին, սակայն Տարոնի բարձունքներին ահազանգում էր պատրաստ լինելու ավելի մեծ փորձությունների:

Քուրդ բեկերի ջարդի առիթով, 1877 թ. լույս տեսավ Խրիմյանի «Հայգույժը»: Այստեղ հեղինակը ոչ միայն գուժկան էր, ողբերգակ, այլև արդարամիտ ու աներկնչանք դատախազ, որը դատապարտում էր սուլթան Համիդին, Բ. Դռանը, նրանց ձեռքին գործիք դարձած քուրդ ցեղապետերի ոճրագործ ընթացքը՝ անպաշտպան հայության նկատմամբ: Հայրիկն արդեն «անզեն և անմռունչ իր ժողովրդին» ինքնապաշտպանության բացահայտ կոչեր էր հղում: Հոգևորականի վեղարը գլխին, պաշտոնական սքեմը հագին, խաչը կրծքին կախած, Խրիմյանը իր վիթխարի հասակով մեկ վեր էր խոյանում թուրք բռնապետության դեմ հանդիման և, իբրև անդրանիկ հեղափոխական, զենքի ու ինքնապաշտպանության կոչեր էր հնչեցնում: Խոսքի և գրչի, խաչի ու մաճի քարոզների կողքին Վասպուրականի Արծիվը ընդգծված ձևով տեղ էր հատկացնում զենքին, որի փրկարար զորության մասին հեղինակի հույսերն արդեն մեծ էին:

Վանի հրդեհը, արևմտահայության զանգվածային ջարդերը, փաստորեն, այրեցին սուլթանական կառավարության և երեկվա հայոց պատրիարքի միջև մինչ այդ առերևույթ գցված լաստերը և բացահայտորեն դեմ հանդիման կանգնեցրին հայ ազատագրական շարժման առաջնորդ-գաղափարախոսին և սուլթան միապետին: «Վանգույժի» պատճառով, իբրև անբարեհույսի, Խրիմյանին հրաժարեցրին օսման-

յան ծերակույտի անդամությունից, նույնիսկ կտրելով նրա ամսաթոշակը:

Բալկանյան ժողովուրդների ազատագրական ոգորումները, ռուս-թուրքական պատերազմը ուժերի նոր հարաբերակցություն առաջ բերեցին Տաճկաստանում: Հայրիկը դիմում է ժողովրդին հետևյալ բառերով. «Ժամանակն է հրապարակ իջնել և հեղափոխության ալյաց մեջ նետվել»:

Պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, որից հայ ժողովուրդն ակնկալում էր հայոց ինքնուրույն պետականության վերականգնում: Մեծ տերությունները, այդ թվում՝ ցարական Ռուսաստանը, դեմ էին հայ ժողովրդի ինքնորոշմանը: Սան Ստեֆանոյի պայմանագիրը դրա առհավատչյան էր, որից դժգոհ մնացին և եվրոպական մեծերը, և սուլթանական Թուրքիան, առավելևս՝ հայ գործիչները, այդ թվում՝ Խրիմյանը:

Սան Ստեֆանոյում ձևակերպված 16-րդ հոդվածը դառնում էր հայկական հարցի պատմության դիվանագիտական անկյունաքարը, որի վրա հետագայում հիմնվում էր հայկական հեղափոխության և ազատագրության հուշարձանը: Այդ հոդվածը և ընդհանրապես պայմանագիրը վերաքննվելու էին Բեռլինի կոնգրեսում 1878 թ. հուլիս ամսին: Կոնգրեսին նախապատրաստվում էին բոլոր մեծ ու փոքր ազգերը, այդ թվում՝ նաև հայ ժողովուրդը:

Բեռլին մեկնեց հայոց պատվիրակությունը՝ Մ. Խրիմյանի գլխավորությամբ: 1878 թ. մարտին դուրս գալով Կ. Պոլսից, նա եղավ Հռոմում, Փարիզում, Մանչեստրում, Լոնդոնում, Բեռլինում, այդ երկրների պետական բարձրաստիճան գործիչներից խնդրեց պաշտպանել հայերի ինքնավարության ծրագիրը: Նրանք խոստացան օգնել հայերին, սակայն խաբեցին և պաշտպանեցին Թուրքիայի շահերը: Բեռլինի կոնգրեսում պարտվեց ռուսական դիվանագիտությունը, մերժվեց ոչ միայն հայկական ինքնավարության ծրագիրը, այլև 16-րդ հոդվածը ձևով ու բովանդակությամբ դիմաշրջվեց 61-րդի:

Հուսախաբված արյունածարավ Եվրոպայից, հասկանալով, որ սոսկ բողոքագրերով որևէ ժողովուրդ ազատություն նվաճել չի կարող, վերադարձին Խրիմյանը հնչեցրեց հարիսայի կաթսայի հանրահայտ կոչը, բացահայտորեն հայտարարելով, ***թե խնդիրը կարող են վճռել զեյթունցի և սասունցի այն քաջերը, որոնց ձեռքին երկաթե շերեփ, այսինքն՝ զենք կա:*** Հայոց պատվիրակը հետևողականորեն զարգացրեց ժողովրդի կրթության, երկրի տնտեսական զարգացման կոնցեպցիա, որպեսզի դրան հաջորդեին հեղափոխական ընդհատակյա կազմակերպությունների ստեղծումն ու ապստամբության նախապատրաստումը:

Պատերազմը քայքայել էր Հայաստանի տնտեսությունը, հետին աղքատության դուռն էր հասցրել անպաշտպան արևմտահայությանը:

Դրան զուգակցվեցին սովը և տիֆ հիվանդությունը, որոնք տարածվեցին հատկապես Վասպուրականում, հնձելով ժողովրդին: Դրությունն օրհասական էր, ուստի ոտքի կանգնեց ողջ հայությունը, օգնության ձեռք մեկնեց Հայաստանի սովյալներին: 1880 թ. հունվարի 5-ին Կ. Պոլսում ձևավորվեց «Հայաստանի սովելոց խնամատար կեդրոնական հանձնաժողովը», մասնաճյուղեր հաստատելով Արևմտյան Հայաստանում: Այդ ամիսներին Վասպուրականի առաջնորդ էր ընտրվել Հայրիկը, որը ծննդավայրից 17 տարի բացակայելուց հետո, վերադարձավ Վան և ձեռնամուխ եղավ սովահարների օգնության կազմակերպմանը:

Կ. Պոլսից, Պարսկաստանից, Անդրկովկասից և աշխարհասփյուռ գրեթե բոլոր հայ գաղթավայրերից նյութական օգնություն է կազմակերպվում սովահար Վասպուրականին: Ստացված միջոցներով Հայրիկը մահվան ճիրաններից փրկում է երկրի ոչ միայն հայ, այլև քուրդ և նույնիսկ թուրք հազարավոր սովյալների: Մնացած դրամով Վարագի մեջ նա հիմնում է երկրագործական վարժարան, զարկ տալիս երկրագործությանը, բացում Սանդխտյան վարժարանը, որտեղ և ուսման է հրավիրում հայ աղջիկներին:

Այս անգամ Խրիմյանը հայրենիքում շրջապատված էր իր նախկին սաներով, որոնք նրա խորհրդով ու ծրագրերով հիմնում են հեղափոխական ընդհատակյա կազմակերպությունները: Հայրիկի ներշնչանքով, կազմած ծրագրերով Վանում հիմնվում են «Սև խաչ», իսկ Կարինում՝ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունները: Սրանք կապեր հաստատելով կովկասահայության հետ, դիմադրական զինված ջոկատներ ստեղծելով, զենք ու զինամթերք ամբարելով, ժողովրդին նախապատրաստում էին հեղափոխական, համազգային պայքարի: Չնայած կրած անհաջողություններին, Խրիմյանը գործնականում և հատկապես գաղափարաբանությամբ հիմքեր էր ստեղծում հայդուկային շարժման համար:

Բ. Դուռը ևս քնած չէր: Նրա գործակալները արգոսի աչքերով հետևում էին դեպքերի զարգացման ընթացքին և հարմար պահի սպասում: Հասան հայերի համար առավել աննպաստ ժամանակները: Եվրոպան թուրքերին գործելու թողտվություն տվեց: Ցարական Ռուսաստանը, 1882-1883 թթ. սկսած, վերադիրքավորվեց հայկական հարցի նկատմամբ: Օգտվելով այդ իրադարձություններից, Համիդ Երկրորդը հրամայում է բանտարկել կամ աքսորել բոլոր այն հայ մտավորականներին, որոնք կասկածվում են հեղափոխական կազմակերպություններ ստեղծելու կամ ժողովրդին ըմբոստություն քարոզելու մեջ:

Առաջին և ծանր հարվածը նորից ստացավ Վասպուրականը: 1885 թ. մարտի 11-ին բանտարկվեց համարձակության մեջ մրցակից չունեցող Մ. Սեֆիլյանը, ապրիլի 6-ին աքսորի ճանապարհ բռնեց Վանում ուսուցչության հրավիրված զմյուռնիացի Ա. Ասլանյանը, հունիսի 3-ին գոցվեց Կեդրոնական վարժարանը, հունիսի 11-ին բանտարկվեց Հայ-

րիկի սիրելի սան Կ. Նաթանյանը: Հունիսի 13-20-ին բանտարկվեցին նաև մի շարք ուսուցիչներ և աշակերտներ, որոնց տներում հայտնաբերվել էին Մ. Նալբանդյանի «Երկրագործություն» աշխատության ձեռագիր ընդօրինակությունները:

Հերթը հասավ մեծերին: Մարտի 16-ին Վանից Կ. Պոլիս աքսորվեց Մ. Փորթուգալյանը, որտեղ կարճ ժամանակ մնալով, կախաղանի սյունի վրա ճոճվելուց խուսափելով, տեղափոխվեց Մարսել, այնտեղ հիմնեց «Արմենիա» պարբերականը և հիմք դրեց *Արմենական կուսակցությանը:* Մարտի 17-ին, զգալով իր գլխին ևս կախված դամոկլյան սրի ծանրությունը, Խրիմյանը փաստորեն արտասանեց հրաժեշտի իր ճառը, ասելով, որ ինքը կշարունակի պայքարը, քանզի «Կրծքիս լանջոսկրի վրա գրված է՝ ժողովուրդ»: Վանից հետ կանչվեց Հայրիկի ու հայ ժողովրդի մեծ բարեկամ, ռուսական փոխհյուպատոս, հայազգի Կ. Կամսարականը: Մարտի 19-ին դեպի Կ. Պոլիս աքսորի ճանապարհ պարտադրվեց նաև Մ. Խրիմյանին: Օսմանյան կայսրության մեջ փաստորեն սկսվեց *զուլումի շրջան:* Բանտերը լցվեցին քաղաքական կալանավորներով, կախաղանների սյուները շարունակեցին ճոճվել անբարեհույս անձնավորությունների ծանրության տակ:

Մայրաքաղաքում, ճիշտ է, խիստ հսկողության տակ էր ապրում Խրիմյանը, սակայն, այդուհանդերձ, նա չէր դադարում պայքարելուց: Նրա և Մ. Իզմիրլյանի պահանջով, Խ. Աշըղյան պատրիարքը եկեղեցական ժողով է հրավիրում և Համիդին ներկայացնում Հայաստանին վերաբերող բարենորոգումների ծրագիրը:

1886 թ. Կարա-Կեոմրուկ թաղի եկեղեցում կատարած քարոզի ժամանակ, որի բնաբանն էր՝ «Պարտք և իրավունք», Խրիմյանը դիմեց ժողովրդին հետևյալ բառերով. «Ժողովուրդ հայոց, մեր արդարացի պահանջը պիտի ըլլա ինքնապաշտպանության արդար իրավունքը և օրենքի հավասարությունը, առանց որոց խաղաղություն չպիտի թագավորե այս երկրին մեջ, ուր մեկը կհարստահարե անարգել և մյուսը կհարստահարվի շարունակ: Եվ այս պարագային, երբ իրավունք կբացակայե, հառաջ կուգա պարտազանցությո՛ւն... ըմբոստությո՛ւն... հեղափոխություն...»:

1890 թ. կովկասահայությունը մեծ խանդավառությամբ տոնում է Հայրիկի ծննդյան յոթանասունամյակը: Ամերիկահայությունը հիացումի և նվիրումի ողջույններ է հղում Ամենայն հայոց Արծվին: Այս օրերին լռեց միայն արևմտահայությունը, սակայն նա խոսքից գործի էր անցել: Նույն տարում Կարինում ծայր առավ ապստամբություն, քիչ անց Գումգապուում բռնկվեց բողոքի ցույցը, Թիֆլիսում հիմնադրվեց *Դաշնակցություն կուսակցությունը,* Կուկունյանը արշավանք կազմակերպեց դեպի Երկիր:

Հեղափոխական այդ բոլոր շարժումների սավառնող ոգին, գաղափարական առաջնորդը, գործնական խորհրդատուն սուլթանական կառավարությունը համարում էր Խրիմյանին: Իրոք, Հայրիկը դարձել էր համազգային այն մեծությունը, որի հետ խորհրդակցում էին հայ ազատամարտի բոլոր գործիչները, նրանից հավանություն և օրհնություն ստանալուց հետո միայն դիմում գործողությունների:

Համիդը գազազած էր Խրիմյանի գործողություններից: Նա ի վերջո որոշեց «անհանգիստ այդ հոգևորականին» աքսորել Երուսաղեմ: Ս. Հակոբանց վանքում Հայրիկը կտրվում է հայաշխարհից, զրկվում հայկական շարժումը ղեկավարելու հնարավորություններից: Այնտեղ ուխտավորներն էին այն միակ լրատուները, որոնցից լսելով Հայաստանում կատարված ողբերգական իրադարձությունների մասին, մխում էր նրա հայրենակարոտ սիրտը:

Հնչակյանները որոշեցին կազմակերպել Հայրիկի փախուստը աքսորավայրից: Նրանք Երուսաղեմ ուղարկեցին Ռուբեն Խանազատին, որը աքսորականին նման առաջարկ արեց: Հայրիկը մեղմությամբ մերժեց, պատճառաբանելով դրա վնասակար հետևանքները ժողովրդի համար: Խանազատն ասում է, թե վտանգից չպետք է վախենալ, քանզի ռումբ գործածելն է վտանգավոր, քանի որ գործածողն էլ է մեռնում: «*Այդ բոլորը աղեկ կըսես,* - պատասխանում է Հայրիկը,-*ամմա հայ ազգը շատ պզտիկ է, կըվախնամ, որ մինչև ազատության գալը տակը բան չմնա»:*

1892 թ. ապրիլին էջմիածնում հավաքված Ազգային Վեհաժողովի 72 անդամները միաձայն Ամենայն Հայոց կաթողիկոս են ընտրում 72-ամյա Խրիմյան Հայրիկին: Ընտրության արդյունքներից դժգոհ մնացին և՛ սուլթանը, և՛ ցարը: Համիդը Խրիմյանին համարում էր իր անձնական թշնամին և այժմ այդ աքսորականը պիտի բազմեր կաթողիկոսական գահի վրա, ավելի հուժկու պիտի շեփորեր ազատագրական պայքարի ղողանջները Ռուսաստանից: Ալեքսանդր Երրորդը ենթադրում էր, որ Հայրիկը գալով Անդրկովկաս, դրանով իսկ նոր թափ պիտի հաղորդեր հայկական հեղափոխական պայքարին, օրինակ ծառայելով իր մականի տակ դրված մյուս ազգերին:

Ընտրությունից 14 ամիս հետո միայն Խրիմյանը ստացավ ցարի մանիֆեստը իր հաստատման մասին: Գազազած սուլթանը մերժեց Խրիմյանին Կ. Պոլսի վրայով Ռուսաստան մեկնելու անցագիր տալը: Նորընծա կաթողիկոսը հարկադրված էր բռնել Եգիպտոս-Վիեննա-Օդեսա-Բաթում-Էջմիածին ճանապարհը, որը տևեց շուրջ մեկուկես ամիս: Հայրիկը որոշել էր անցնել Վենետիկով, գեթ մեկ անգամ տեսնել Հայր Ալիշանին: Այդ ևս չհաջողվեց:

Խրիմյանին ծանր ժամանակներ էին բաժին ընկել կաթողիկոսանալու: Արևելահայությունը, հատկապես Ռուսաստանի հայ գաղթօջախները, ցնծությամբ ընդունեցին վեհափառ Հայրապետին, այն ժամանակ, երբ Արևմտյան Հայաստանը գալարվում էր արյան և կրակի բոցերի մեջ: 1894 թ. Սասունի ապստամբությունն առիթ ծառայեց եր-

կաթյա պատրիարք Մատթեոս Իզմիրլյանին կրկին դիմելու մեծ տերություններին ծնունդ տալով «Բարենորոգումների ծրագրին»: Կ. Պոլսի Ազգային ժողովը միաժամանակ դիմեց կաթողիկոսին խնդրելով նրան միջնորդելու Նիկոլայ Երկրորդի առաջ, որպեսզի նա ևս բարձրացնի հայկական հարցը:

Խրիմյանը որոշեց անձամբ ներկայանալ ցարին և նրան հանգամանորեն բացատրել, թե ի՞նչ է կատարվում Արևմտյան Հայաստանում: Ռուսաց արքունիքը հաճությամբ չընդունեց Հայոց ըմբոստ Կաթողիկոսի խնդրանքը: Շուրջ վեցամսյա դեգերումներից հետո միայն, 1895 թ. մայիսի 25-ին Հայրիկը հասնում է Պետերբուրգ, իր նկատառումները ներկայացնում հայկական հարցի վերաբերյալ: Խոսքով խոստումներ են տրվում հայերին օգնելու, սակայն գործով ընդառաջելով թուրքամետ Լոբանով Ռոստովսկու սադրանքներին, մահուդի տակ են դրվում կաթողիկոսի առաջարկները:

Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու խնդիրը նորից դարձակետ է ապրում: Դրանից ոգևորված սուլթանը արյան խրախճանք է սարքում Վանում և Տարոնում, Սասունում և Զեյթունում: Թուրքական վրիժառու գնդակից մազապուրծ հայ գաղթականների մեծ մասը լցվեց Անդրկովկաս, որն իր հետ բերել էր սարսափազդու տպավորություններ: Խրիմյանը գորովագութ հոր նման ընդունեց գաղթականությանը, նրանց ապահովեց պարենով, բնակարանով, աշխատանքով:

1897 թ. Կովկասի վրա կուտակվեցին սև ամպեր, երբ երկրամասի կառավարչապետ նշանակվեց հայատյաց Գոլիցինը: Այդ նշանակումով ցարիզմն ու սուլթանիզմը փաստորեն եղբայրացան, նրանցից մեկը ոչնչացնում էր մարմինը, մյուսը՝ խեղում հայության միտքը, առաքելական եկեղեցին: Խրիմյանին մնում էր էջմիածնապատկան թեմերի միջոցով բացել դպրոցներ, զարկ տալ ժողովրդի կրթության և լուսավորության գործին, նրանց նախապատրաստել կենաց ու մահու վերահաս պայքարին:

1903 թ. հուլիսին, Գոլիցինի զեկուցագրի հիման վրա, ցարը հրաման է արձակում, բռնագրավել հայ եկեղեցու կալվածքները: Հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի վարած ազգային-գաղութային քաղաքականության հերթական ու քստմնելի այս ակտը ալեկոծում է բոլոր դասերին, քաղաքական բոլոր հոսանքներին պատկանող անձնավորություններին: ***Դաշնակցություն և Հնչակյան կուսակցությունները*** ստեղծում են կալվածքների պաշտպանության գաղտնի կոմիտե, որը դիմում է համայն հայությանը, հատկապես եկեղեցականներին, հրահանգելով դիմագրավել և երբեք չհանձնել վանքապատկան կալվածքները:

Կազմվում են պաշտպանական զինված խմբեր, որոնք գործում էին Մ. Խրիմյանի հրահանգավորումով և զենքը ձեռքին դիմակայում էին ցարական ոստիկանությանը, երդվելով մեռնել, բայց երբեք չտալ էջ-

միաժնապատկան կալվածքները: 1903 թ. օգոստոսի 21-ին կաթողիկոսը կոնդակ ուղարկեց հայ եկեղեցու բոլոր թեմերին, հրահանգելով ոչ մի դեպքում ունեցվածքը չհանձնել ցարական կառավարությանը: Նա միաժամանակ դիմում է ցարին, խնդրելով չգործադրել այդ օրենքը: Նիկոլայ Երկրորդը ներքին գործերի մինիստր Վ. Պլևեի բերանով Խրիմյանին որակում է իբրև «աստծո անհնազանդ ծառա», օրենքին չենթարկվելու դեպքում սպառնալով քննել հայ եկեղեցու ողջ կազմակերպությունը պետության շահերին անհամապատասխան լինելու խնդիրը:

Ամենայն Հայոց կաթողիկոսին մնում էր դիմելու հին ու փորձված մեթոդին, այսինքն՝ թղթե շերեփը փոխարինելու «շեշխանա հրացանով», ողջ հայ ժողովրդին ոտքի հանելու ինքնապաշտպանական հերթական գոյամարտի: Պայքարն անհավասար էր: Ցարական ոստիկանությունը, զորքի օգնությամբ, բռնագրավեց կալվածքների մեծ մասը, սակայն հայ ահաբեկիչներն էլ տեռորի ենթարկեցին Գոլիցինին, հետագայում նաև՝ Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեին: Կովկասի նոր կառավարչապետ կոմս Վորոնցով-Դաշկովը, հայ ահաբեկիչների վրեժխնդրությունից խուսափելու, բնակչությանը խաղաղեցնելու նպատակով, հարկադրված էր «բարեկամանալ» Խրիմյանի հետ և վերացնել 1903 թ. հուլիսի 12-ի օրենքը: Ճիշտ է, մեծ զոհերի գնով, բայց և այնպես, այս անգամ էլ «Վասպուրականի Արծիվը» հաղթեց «Սպիտակ արջին»:

Կարճատև դադարից հետո ցարիզմը ծնունդ տվեց հայ-թաթարական զինված ընդհարումներին, որոնք պատմության մեջ մտան Կովկասյան Վանդեա անունով: Մահմեդական ցեղի մարդակուլ երախը, ցարական կառավարությունից գաղտնի աջակցություն և զենք ստանալով, սպառնում էր կուլ տալ Անդրկովկասի հայությանը: Ոտքի ելավ ողջ հայ ժողովուրդը, նրան կազմակերպված դիմադրական մարտերի առաջնորդեցին կարող ռազմավարները, քաջարի մարտիկները, աշխարհականներ և հոգևորականներ, որոնց մեջ և Մ. Խրիմյանը: Հայոց կաթողիկոսը, Հովհ. Թումանյանի և այլոց հետ միասին, սկզբում փորձեցին մարել այդ հրդեհը, խաղաղեցնել երկու կողմերին, բայց երբ զգացին, որ քարոզները օգտավետ չեղան, հայերին կոչ արեցին դիմել զենքի: Կովկասահայությունը զինված պայքարում հաղթանակ տարավ, դրանով իսկ ոչ միայն փրկվեց բնաջնջումից, այլև ցարին հարկադրեց 1906 թվականի օգոստոսին տրված նոր հրամանագրով չեղյալ հայտարարել հունիսի 12-ի օրենքը, հայերին վերադարձնել եկեղեցական կալվածքները, նոր դպրոցներ բացել, ունենալ պարբերականներ:

Հայրիկի ոգևորությանը չափ չկար: Կյանքի իններորդ տասնամյակի եզրագծին հասնող, ծերունազարդ կաթողիկոսը մեկ անգամ ևս ընկավ ռոմանտիկայի գիրկը, հույս հայտնելով ապրել այնքան, որպեսզի ***բախտ ունենա իր ձեռքով օծելու միասնական, ազատ ու***

անկախ Հայաստանի դրոշը: Նման պատրանքներով Խրիմյանը 1906 թ. էջմիածնում հրավիրում է ռուսահայերի Սահմանադիր ժողով, որը նոր ձևով պիտի տնօրիներ ազգային, եկեղեցական, կրթամշակութային, կալվածական և հանրային խնդիրները: Երկու շաբաթ տևող ժողովը, Խրիմյանի նախագահությամբ, ասուլիսի առարկա էր դարձրել նաև քաղաքական հարցերը: Օգոստոսի 29-ին կաթողիկոսն ստացավ փոխարքայի հրամանը՝ ժողովի փակման վերաբերյալ: Հարվածը ծանր էր, սակայն չէր կարող ընկճել Արծվին, քանի որ նա սովորել էր և հաղթանակների, և պարտությունների:

Խրիմյանը չմոռացավ նաև արևմտահայությանը: 1907 թ. նա *Լահեի* խաղաղության համաժողովին է ուղարկում մի պատվիրակություն, որի նախագահ էր նշանակված *Ավ. Ահարոնյանը:* Պատվիրակությունը փաստեր պիտի մատակարարեր եվրոպական դիվանագետներին և պահանջեր հերթական անգամ բարձրացնել Հայկական հարցը, նրան վերջապես լուծում տար: Վեհափառը համոզված էր, որ զուր հույս էր եվրոպայից ակնկալություն ունենալը, բայց և այնպես փորձերը շարունակում էր:

1907 թ. օգոստոսին նա ևս մի նամակ է ուղարկում Անգլիայի թագավորին, խնդրելով ընդառաջել «մարտիրոս ժողովրդի մը ծերունի Հայրապետին», օգնել արևմտահայությանը, կանխել զուլումի քաղաքականության շարունակումը Արևմտյան Հայաստանում: Զարմանալիորեն Մեծ Բրիտանիայի թագավորն այս անգամ խոստումնալից պատասխան է տալիս Հայոց Կաթողիկոսին: Դժբախտաբար, նամակի պատասխանը Մայր Աթոռ է հասնում հոկտեմբերի 20-ին, ճիշտ այն օրը, երբ 87 տարեկան հասակում վախճանվել էր Ամենայն Հայոց Հայրիկը, մեծ վիշտ պատճառելով հանուր հայ ժողովրդին:

Վախճանվեց հայոց պատմության ամենաանմոռաց դեմքերից մեկը, ազատության քաջարի ջահակիրը, թողնելով անմահ անուն և անմոռաց հիշատակ հայ տարեգրության մեջ[1]:

[1] Այս հոդվածը տպագրել ենք «Հայաստան» օրաթերթի 1991 թ. ապրիլի 4-5-ի N 78-79-ում:

Հայոցքն անցյալին, հանուն ապագայի

Մարդ, որը չէր սխալվում

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆ

Ա ՆՑՅԱԼ դարի երկրորդ կեսին, օսմանյան կայսրության հայաշատ գաղթաշխարհում, մասնավորապես առափնյա Կոստանդնուպոլիս և Զմյուռնիա քաղաքներում, հզորանում էր գրողների, հրապարակախոսների մի աստեղաբույլ, որը ձևակերպելով ինքնատիպ և ուրույն իր գաղափարաբանությունը, քննության ու մերժման էր դատապարտում մինչ այդ գոյատևող հնամաշ տնտեսակարգերը, ջանում նվաճել սահմանադրություն՝ անսահմանադրական տերությունից, ազատություն՝ բանտում, անկախություն՝ արևելյան բռնապետների թևատարած գաղջ երկնքի տակ: Ազատատենչ, խանդավառ, միաժամանակ ռոմանտիկ այդ սերունդը տվեց անուններ՝ արժանի մեծարանքի, հասունացրեց լույսի ճրագներ վառող մտածողներ և քաղաքական գործիչներ, խթանեց քաղաքակրթության ներմուտն այդ երկիր, հրապարակեց նոր գաղափարներ, դրանցով իսկ հավերժացավ հայ ժողովրդի զույգ հատվածների պատմության էջերում:

Հ. Սվաճյան, Մ. Խրիմյան, Գր. Չիլինկիրյան, Ն. Ռուսինյան, Ս. Ոսկանյան, Մ. Պեշիկթաշլյան, Հ. Շիշմանյան (Ծերենց), ահա գրողների ու հրապարակախոսների այն անդրանիկ փաղանգը, որը հայ իրականության մեջ գործելու պարարտ հող նախապատրաստեց հաջորդ տասնամյակներին, հատկապես 70-80-ականներին բարձրացող Հ. Պարոնյանի, Մ. Փորթուգալյանի, Գ. Սրվանձտյանցի, Ա. Արփիարյանի և այլոց համար, նրանց փոխանցեց ոչ միայն իր փորձն ու հմտությունը, այլև արծարծած մտքերն ու սերմանած գաղափարները: Ժամանակագրական առումով միայն իրարից անջատված, սակայն գաղափարապես իրար շարունակող ու զարգացնող այս երկու սերունդներին համաքայլ գործում էր ընդգրկումներով, մտքի թռիչքով ժամանակակիցներից շատերից վեր խոյացող, ոմանց իբրև ավագ գինակից, ոմանց իբրև ուսուցիչ ու խորհրդատու *Մատթեոս Մամուրյանը* (1830-1901), խորը ակոս գծելով անցյալ դարի ամբողջ երկրորդ կեսի արևմտահայ գրա-

կանության, առավել ևս հրապարակախոսության մարտադաշտում:

Կարծում ենք, որ այսօր այլևս հայ ընթերցողը զարմանքով չի տարակուսի, թե ինչպե՞ս է եղել, որ փայլատակող այդ մեծություններից շատերի կենսագրությունները, առավել ևս նրանց գրական-հրապարակախոսական ժառանգությունը, տակավին իրեն հայտնի չեն: Դրա պատճառները բազմաթիվ են ու բազմազան:

Նախ, ստալինյան բռնապետության տասնամյակներին որոշակի խստությամբ էր դիտարկվում արևմտահայ մտավորականության գործունեությունը, արհամարհանքով էր նայվում նրանց աշխատություններին, յուրաքանչյուրի ճակատին հանիրավի խարանելով մի պիտակ, արգելվում էր նրանց մասին գրելն ու խոսելը: Արհեստականորեն մեր ժողովրդի վզին փաթաթած «միասնական, բուրժուա-նացիոնալիստական հոսանքի» փաստը, այդ փաստն արձանագրող դեղնակտուց պետական գործիչները, պաշտոնամոլ ու հացկատակ մի շարք գրչակների իրենց ձայնափողը դարձնելով, գաղափարական ավերածության ենթարկելով հայ ժողովրդի արյունով ներկված նոր ու նորագույն պատմության լուսապայծառ էջերը, պաշտոնազրկելու, նույնիսկ Սիբիրի ճանապարհ բռնելու խրտվիլակով էին սպառնում այն հետազոտողներին, որոնք կհանդգնեին Ստալինից, Բերիայից ու վերջիններիս զինակիցներից զատ խոսել ու գրել արևմտահայ գրողների ու քաղաքական գործիչների մասին:

Հայոց պատմության էջերը, բռնության մամլակների տակ, մարդաթափվում էին: Երևույթների մասին գրվում էր կցկտուր, առանց հիշատակելու գործող անձերին, մոռացության էին տրվում այն դեմքերը, որոնք ճոճվել էին թուրքական կախաղանասյուների վրա կամ էլ կյանքի գնով ձևավորել էին հայ ազատագրական պայքարի գաղափարաբանությունը, հանդգնություն էին ունեցել նույնիսկ երազելու *ազատ, անկախ, միասնական հայոց պետություն ստեղծելու մասին:* Դրան հակառակ, պատվերով գրվում էր բանվորական շարժման մասին, ընդհուպ մինչև բաղնիքների քիսաչիների «գործադուլների» մանրամասները: Տուժում էր ազգայինը, դրանով իսկ համազգայինն ու համամարդկայինը:

Մեր ժողովրդի պատմությունը շարադրվում էր միակողմանի, նրա էջերից դուրս թողնելով շատ մտավորականների, որոնց թվում և Մ. Մամուրյանի անձն ու գործը:

Իհարկե, այդպես շարունակելն այլևս կարծես անհնարին էր: Սակայն փաստերին քաջատեղյակ, համազգային շահերը կյանքից վեր դասող, հատվածային սահմանափակությունը մերժող պատմաբան-բանասերներից շատերը, խիզախողները, օգտվելով Ստալինի մահից ու Բերիայի մերկացումից հետո որոշ թողտվությունից, փորձեցին երերուն քայլերով գրել և չափավոր խոսել արևմտահայոց ծավալած ազգային-ազատագրական պայքարի ոգորումների մասին: Դանդաղորեն

կոտրվում էր լռության սառույցը: Մեծ դժվարությամբ, բայց և այնպես խորհրդահայ ընթերցողի ուշադրությանն էին հանձնվում մեծ կամ փոքր ծավալի աշխատություններ, որոնք շարադրված էին տարիներ առաջ, սակայն, հրատարակվելու արտոնություն չստանալով, ընդարմացվել էին գիտնականների գրադարակներում: Այդուհանդերձ, արևմտահայ գործիչներին տված գնահատականները մնում էին չափավորված:

Խորհրդահայ պատմագրության մեջ Մ. Մամուրյանի մասին առաջին փոքրածավալ հոդվածները *լույս տեսան 1959 թ. միայն:* 1961 թ. լույս տեսավ տողերիս հեղինակի գրքույկը, նվիրված Մամուրյանի կյանքի և գործունեության համառոտ բնութագրությանը, իսկ 1965 թ., պայքարի գնով, վերջապես հրապարակվեց այդ մեծ մտածողի երկերի առաջին ժողովածուն: Հայ ընթերցողը, հայրենանվեր պատմաբաններն ու գրականագետները, հատկապես Սփյուռքի մտավորականությունը գոհունակությամբ ընդունեցին կատարված փաստը: Ստալինակերպ մտածող, մինչև կյանքի ավարտն էլ պահպանողական դիրքերը չզիջող շատ մտավորականներ, հատկապես անցյալում դիրք ունեցող, բարձր պաշտոններ զբաղեցնող որոշ հետազոտողներ սկսեցին կրկին հալածել ոչ միայն Մամուրյանի ժառանգությունը, այլև այդ ժառանգությունը անկողմնակալ գնահատողներին:

Բանակռիվը նորից սկսեց թեժանալ: Տիտղոսավորների սաստերից երկնչելով, «Հայաստան» հրատարակչության տնօրենը և աշխատակիցները, վերադասի կարգադրությամբ, հրատարակության պրոցեսից հանեցին «Սև լեռին մարդը» վեպն այն պատճառաբանությամբ, թե վեպում քննադատության նշանախեց է դարձված Ռուսաստանը: Դրան հաջորդող երեքուկես տասնամյակներում այլևս Մամուրյանի մյուս երկերը չհրատարակվեցին: Չնայած դրան, ակադեմիական հայ նոր գրականության պատմության մեջ առաջին անգամ, առանձին գլխով, տեղ հատկացվեց նրան, սակավ տողերով շարադրվեցին նրա հայացքները Հայոց պատմության դասագրքերում, ակադեմիական բազմահատորյակի հինգերորդ հատորում:

Երևույթը դրական էր, գնահատելի, միաժամանակ անբավարար: Ա. Արփիարյանը ժամանակին արձանագրում էր, թե «մեր մատենագրության և օրագրության պատմությունը ընդարձակ ուսումնասիրությանց գլուխները կվերապահեն Մամուրյանին»: Արփիարյանի պատգամը մինչև այժմ էլ իրականացված չէ: *Շուրջ 30 հատոր կազմող* նրա գրական ու հրապարակախոսական հսկա ժառանգությունը այսօր մնում է անծանոթ հայաշխարհում և գաղթաշխարհում խարսխված հայ ընթերցողին: Կրակի բոցերին զոհ գնացին նրա ձեռագրերը 1922 թ. քեմալականների դեպի Զմյուռնիա կատարած արշավանքի, դրան զուգընթաց հայկական ջարդերի ժամանակ:

Չենք տարակուսում, որ մեր օրերում իր պատշաճ գնահատումը կստանա նաև Մատթեոս Մամուրյանը. նրան արժանի հոբելյանական

երեկո կկազմակերպվի, կհրատարակվի նրա երկերի գոնե ընտրանին և մեկընդմիշտ վերջ կտրվի թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ խտրականությանը: Մենք այսօր, ինչպես և հազարամյակներ առաջ, մեկ ժողովուրդ ենք, ունենք մեկ, այն է՝ համազգային մշակույթ: Հետևաբար Մամուրյանը ողջ հայ ժողովրդի արժանավոր զավակն է, և նրա ստեղծագործական ժառանգությունը թանկ ու նվիրական է յուրաքանչյուր հայ մարդու համար:

Մ. Մամուրյանը գրական հսկաներից էր, իրավամբ բնութագրված իբրև էնցիկլոպեդիստ: Եթե նա ստեղծագործեր եվրոպական որևէ լեզվով, ապա նրա աթոռը, առանց վերապահության, կդրվեր Վոլտերի ու Դիդրոյի, Ռուսոյի և Մոնտեսքյոյի աթոռների կողքին:

Մ. Մամուրյանին զբաղեցրել են հայ ժողովրդի դժնդակ կյանքի գրեթե բոլոր բնագավառները, գրականությանը, պատմությանը, բանասիրությանը վերաբերող ամենատարբեր հարցերը: Շուրջ կես հարյուրամյակ տևող իր մեղվաջան ու արդյունքաշատ աշխատանքով նա ստեղծեց հարուստ ու բարձրարժեք ժառանգություն, փորձեց յուրովի լուծում տալ բարդ, վիճահարույց խնդիրներին և իրավամբ ապացուցեց, որ ինքը լայն ընդգրկումների տեր, բնությունից օժտված, զարգացած մտավորական է:

Նա գրող էր, ամենից առաջ՝ հրապարակախոս՝ բառի եվրոպական իմաստով, թատերագետ, խստապահանջ և հմուտ թարգմանիչ, բանագետ, պատմաբան, մանկավարժ, համազգային ընդգրկումով հասարակական-քաղաքական գործիչ, ազգային-ազատագրական անզիջում պայքարի խորաթափանց գաղափարաբան:

1830 թ. նոյեմբերի 17-ին Հոմերոսի վիճարկվող հայրենիք համարվող հայաշատ Զմյուռնիա քաղաքում, Նոր Ջուղայից այստեղ գաղթած Հովհաննեսի գերդաստանում ծնվեց նրա ավագ որդին, որին Մատթեոս անուն տվեցին: Մանկան յոթ տարին չբոլորած, նյութական զրկանքներից և խոլերայի համաճարակից փրկվելու հույսով, ընտանիքը տեղափոխվեց Ալեքսանդրիա: Տեղաբնակության փոփոխության պատճառով, մինչև ինը տարեկան, Մատթեոսը զրկվում է դպրոց հաճախելու հնարավորությունից, սակայն, շփվելով տեղացիների հետ, սովորում է արաբերեն: 1839 թ. ընդունվելով Ալեքսանդրիայի հունական վարժարանը, սովորում է նաև հունարեն:

Զավակներին հայեցի կրթություն տալու հոգսը մտատանջում էր միշտ աստանդական ցուպը ձեռքը պահած աշխարհաշրջիկ հորը: Ուստի, խնայած կոպեկներով, նա իր ընտանիքը վերադարձնում է Զմյուռնիա, որդուն կրթության տալով տեղի Մեսրոպյան վարժարանում:

Դպրոցը բարձր համարում ուներ: Դեռևս 1850 թ. Գաբրիել Պատկանյանը Մեսրոպյանի մասին գրում էր. «Միայն Իզմիրի մեջ է հայի ազգային վարժարանը, ուստի հառաջացել են և տակավին հառաջանում են, և այսուհետև ևս պիտի հառաջանան ուսումնասեր հայք, լեզվագետ հայք, իմաստասեր հայք, աստվածաբան հայք, բանաստեղծ հայք, ճարտարախոս հայք, հայկաբան հայք, ազգասեր հայք և ընդհանրապես երկու աչք լուսավորյալ հայք»: Մատթեոսը գերազանցեց բոլոր այն նախորդներին, որոնք ավարտել էին այդ վարժարանը:

1845 թ. Զմյուռնիայում բռնկված հրդեհին, հազարների հետ միասին, զոհ գնաց նաև Հովհաննեսի ունեցվածքը: Անօթևան մնացած երեխաների խմբի մեջ էր Մատթեոսը, որոնք հոնիական ջրերն առափնող նավահանգստում անցուդարձող նավերից կոպեկներ էին մուրում: Նա գիշերում էր ծովափին, բաց երկնքի տակ, որտեղ և պատահաբար ընկավ այն նավը, որը գաղթաշխարհից հավաքած հայ աշակերտներ էր տանում Պադուա՝ Մուրադյան վարժարանում կրթություն տալու:

Մխիթարյանների հիմնած Մուրադյան վարժարանում Մամուրյանը տիրապետեց հայագիտության հիմնական սկզբունքներին, կատարելագործվեց գրաբարի իմացության մեջ, սովորեց ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն լեզուները, լրջորեն ծանոթացավ ժամանակի գիտության հիմունքներին, գաղտնաբար կարդաց եվրոպական առաջավոր մտածողների գործերը, տարվեց Վոլտերի, Դիդրոյի, Ռուսսոյի գաղափարներով:

1850 թ. Մամուրյանն ավարտեց Մուրադյան վարժարանը: Ֆրանսիական ականավոր բանաստեղծ ու պատմագետ Լամարթինը հիացած էր Մատթեոսի ավարտական քննություններով, հատկապես եվրոպական լեզուների նրա իմացությամբ, ուստի ոչ միայն դափնե պսակով զարդարեց սանի ճակատը, այլև տվեց երկրորդ աստիճանի մրցանակ: Արևմտյան առաջավոր գաղափարներով զինված, ֆրանսիական հեղափոխության վառոդի հոտն առած շրջանավարտը, գործելու մեծ վճռականությամբ, վերադարձավ Զմյուռնիա: Հայրենի քաղաք ոտք դնելու առաջին օրից նա սկսեց պայքարը սուլթանական բռնատիրության, կղերաֆեոդալական ռուտինայի, եվրոպական գաղութատիրության դեմ: Երիտասարդ գործիչն այստեղ հաջողություն չունեցավ: Նրա դեմ սկսվեց հալածանք, ծայր առան հետապնդումներ, որոնցից ձանձրացած, 1853 թ. նա տեղափոխվեց Կ. Պոլիս և զբաղվեց ուսուցչությամբ:

1856 թ. հայ ամիրաներից Ճիզրաիլյանը հրավիրում է Մամուրյանին, նշանակում իր եվրոպական առևտրական գործերի կարգավորող, ապա քարտուղար-թարգմանչի պաշտոն տալով, միասին ուղևորվում են նախ՝ Մալթա, ապա՝ Լոնդոն:

Բրիտանական մայրաքաղաքում «տիրոջ» գործերը կարգավորելուց հետո, միշտ սովորելու տենչով վառվող Մատթեոսը թույլտվություն է ստանում իբրև ազատ ունկնդիր մասնակցելու Քեմբրիջի համբավաշատ համալսարանի դասախոսություններին: 1856-1857 թթ. նա Լոնդոնում էր, այդ ընթացքում ոչ միայն կատարելագործվեց անգլերենի իմացության մեջ, այլև հիմնավորապես հետազոտեց անգլիական դա-

սական քաղաքատնտեսությունը, բնագրով կարդաց հայ և հույն ժողովրդի մեծ բարեկամ Բայրոնի ստեղծագործությունները, իր բառերով ասած «կռվամարտեց Ադամ Սմիթի, Ռոբերտ Օուենի, Դավիթ Ռիկարդոյի հետ»: Իբրև Ճիզրաիլյանի թարգմանիչ, նրան բախտ է վիճակվում մասնակցելու բրիտանական համայնքների պալատի նիստերին, ականատես լինելու բուրժուական պառլամենտական համակարգին, հասկանալու այդ հասարակարգի ծոցում վաղուց ի վեր բույն դրած հակամարտությունների առաջացման հիմնապատճառները:

Թողնելով մառախլապատ ու գեղատեսիլ Թեմզայի ափերին վարձված առանձնատունը, որոշ դրամ վաստակած լինելով, Մամուրյանը որոշեց շրջել եվրոպական մայրաքաղաքներում, ուսումնասիրել քաղաքակիրթ աշխարհը, «լավը վատից ջոկելու, հայ ժողովրդի անորոշ ապագան կանխորոշելու մտադրությամբ»:

1858 թ. նա այցելեց Փարիզ, ապա անցավ Վիեննա, Հռոմ, երկու ամիս եղավ Վենետիկի ս. Ղազար կղզում, գործարար կապեր հաստատեց Մխիթարյան հայագետների հետ:

Մամուրյանն այրվող հետաքրքրությամբ ուզում էր ծանոթանալ Ռուսաստանում տիրող հասարակական համակարգին, տեսնել այն երկիրը, որի հետ այնքան հույսեր էին կապել հայ պետական գործիչները: 1859 թ. նա ժամանեց Պետերբուրգ, իբրև ազատ ունկնդիր երեք ամիս մասնակցեց ցարանիստ քաղաքի համալսարանի դասախոսություններին, փորձեր արեց սովորելու ռուսաց լեզուն, շփումներ ունեցավ տեղի, ապա Կազանի համալսարանի հայագետների հետ:

1860 թ. Մամուրյանը վերադառնում է Կ. Պոլիս, վերադառնում է գիտական մեծ պաշարով, վերադառնում է Թեմզան, Սենան և Նևան իրար հետ համեմատած և ստանձնում հայոց պատրիարքարանի դիվանապետի պարտականությունները: Օսմանյան մայրաքաղաքում նա պաշտպանում է պանդուխտների շահերը, գործնական մասնակցություն ունենում սահմանադրական պայքարին, դառնում «Բարեգործական» ընկերության հիմնարար անդամներից, նրա հանձնարարությամբ մեծագումար դրամ հանգանակում և ուղարկում ապստամբ Զեյթունի անընկճելի արծիվներին:

Այստեղ նա ծանոթանում և մտերմանում է Կ. Պոլսի և հանուր հայ իրականության մեջ հրատարակվող պարբերականների խմբագիրների հետ, որոնց թերթերի էջերում հրատարակում է հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներ, ճանապարհորդական տպավորությունները: «Մասիս», «Մեղու», «Կիլիկիա», «Կռունկ հայոց աշխարհի» և այլ հանդեսների էջերում զետեղված Մամուրյանի բազմաթիվ հոդվածներն ատաղձ դարձան հետագայում ամբողջացված և առանձին գրքերով հրատարակված էպիստոլյար-հրապարակախոսական բնույթի նրա աշխատությունների համար:

1865 թ. Մամուրյանը վերադառնում է հայրենի Զմյուռնիա, որտեղ

ստանձնում է Մեսրոպյան վարժարանի տեսչի պարտականությունները, անմիջապես վերակառուցում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները, մտցնում բնական գիտությունների դասավանդումը, ավելացնում ուսուցվող լեզուների քանակը, դպրոցից «հանում է» խստագույն պատիժները, հատկապես ծեծը: Իր շուրջ համախմբելով նշանավոր բնափիլիսոփա Գ. Կոստանդյանին, «Ծաղիկ» տասնօրյա հանդեսի խմբագիր Գր. Չիլինկիրյանին, նշանավոր մանկավարժ Գ. Բաբազյանին, բանաստեղծ ու թատերագետ Ա. Հայկունուն, Մամուրյանը գաղթօջախում հիմնում է «Հայ ընթերցատուն», որի անդամները ձրիաբար դասեր էին տալիս կարիքավոր մեծահասակ անգրագետ հայերին, կիրակի օրերին հրապարակային դասախոսություններ կարդում հասարակական-քաղաքական թեմաներով:

Արդեն համազգային ճանաչում ստացած մտավորականի բաղձանքներից գերագույնն էր՝ ունենալ սեփական պարբերաթերթ և ապա՝ տպարան: 1871 թ. նա հիմնեց «Արևելյան մամուլ» հանդեսը, իսկ 1883 թ.՝ ***Մամուրյան*** տպարանը:

«Արևելյան մամուլը», հիմնադրի խմբագրությամբ, լույս տեսավ 1871-1900 թթ., այնուհետև շարունակվեց որդու՝ Հ. Մամուրյանի տնօրինությամբ: Հանդեսը եվրոպական տիպի պարբերական էր, շոշափում էր գրական, քաղաքական, բարոյախոսական, թատերագիտական բնույթի հարցեր, զետեղում Արևմուտքի բազմալեզու գրականությունից կատարված թարգմանություններ: 1901 թ. լույս տեսած մահախոսականում «Մասիսի» թղթակիցը գրում էր. «Արևելյան մամլո» մեջ էր, որ երևան եկավ Մամուրյանի տաղանդը, բազմակողմանի նյութերու, զանազան ճյուղերու վրա գրելու և ամենուն մեջ էլ հաջողելու կարողությունը: Վեպը՝ ազգային տեսության մը պես մատչելի եղավ իր գրչին, մինչև միևնույն ատեն՝ փիլիսոփայական և ընկերային հարցերու վրա կգրեր նույնքան ձեռնահասորեն, Շահնուրի սրամիտ թղթակցություններովն էլ միշտ վառ պահելով ընթերցողներուն ուշադրությունը: Մամուրյանը ընդդիմախոսներ և հակառակորդներ ունեցավ իր դեմ, առանց սակայն բնավ տեղի տալու, ու մինչև վերջ անխախտ մնալով իր համոզումներուն մեջ»:

«Արևելյան մամուլն» անդրադառնում էր Եվրոպայում և Արևելքում ծավալված ազգային-ազատագրական շարժումների պատմությանը, թարգմանաբար հրատարակում Գարիբալդիի, Մաձինիի, Վաշինգտոնի կենսագրությունները, հայ ժողովրդի ուշադրությունը մտասևեռում սրանց գործելակերպի վրա: Մամուրյանը, հեռամետ դիտավորություններով, այդ խնդիրներն արծարծում էր, ելնելով իր տառապյալ ժողովրդի շահախնդրություններից, մտահոգվելով նրա կրթության, լուսավորության, ազատագրության, հայոց անկախ պետականության վերստեղծման դժվարին խնդիրներով: Հանդեսը խմբագրի ապրած դարի երկրորդ

կեսի Հայոց պատմության հանրագիտարանն էր, որը, ցավոք, մինչև օրս էլ պատշաճ ուշադրության չի արժանացել:

Ժողովրդի ազատագրության նախաշեմը համարելով նրա լուսավորությունն ու ապա տնտեսական առաջընթացը, Մամուրյանը տասնամյակների մանկավարժական աշխատանքով ջանում էր այդ սկզբունքները արմատավորել հայ մատաղ սերնդի հոգում, նրան գաղափարապես նախապատրաստել ապագա անհավասար գոյամարտերին, որոնց ծանրությունն ու անխուսափելիությունը նա զգում էր դեռևս Բեռլինի վեհաժողովի անարդար որոշումների օրերին: Նման մտահոգությամբ մեծ մանկավարժը կազմում էր դասագրքեր, ուսումնական բազմաթիվ ձեռնարկներ, որոնք դասավանդվում էին արևմտահայ գրեթե բոլոր դպրոցներում: 1875 թ. հրատարակվեց Մամուրյանի կազմած «Համառոտ ընդհանուր պատմություն դպրոցաց համար» դասագրքի առաջին, իսկ 1877 և 1878 թվերին՝ հաջորդ երկու մասերը: Այդ դասագրքից առանձնացնելով, ապա մշակելով, համալրելով Հայոց պատմությանը վերաբերող հատվածները, 1887 թ. հրատարակեց մեր ժողովրդի պատմությանը վերաբերող մի նոր աշխատություն, որը կարելի է համարել արևմտահայ դպրոցի համար կազմված, այդ առարկայի անդրանիկ, ամբողջական ձեռնարկը:

1876 թ. լույս տեսան նրա կազմած «Մանր վեպեր ու դասեր՝ քաղված տղայոց համար» պատկերազարդ ընթերցարանը, 1878-ին՝ «Բանալի հայերեն շարադրության», 1879-ին՝ «Գիտելիք թե պարտիք տղայոց համար»: Նրա հեղինակությանն են պատկանում նաև «Նոր ընթերցարան տղայոց համար» (1878), «Առաջին ընթերցարան պատկերազարդ» (1889), «Իրավաբանություն կամ տղոց աչքն ու ականջը կրթելու եղանակը» (1884), «Տարերք առողջաբանության աղջկանց դպրոցներու համար» (1885), «Առտնին տնտեսություն» (1890) և բազմաթիվ այլ դասագրքեր:

Այսօր վերակառուցման պրոցես է գնում Հայաստանի նորաստեղծ Հանրապետության ոչ միայն սոցիալ-քաղաքական կյանքի ամենատարբեր մարզերում, այլև դպրոցական ու բուհական համակարգում: Հայեցի դիմագիծ է տրվում մեր միջնակարգ ու բարձրագույն դպրոցին, վերջապես հանվում են այն առարկաները, որոնց դասավանդումով տասնամյակներ շարունակ թալմուդի նման պարտադրվել է հայ աշակերտին և ուսանողին մտավոր անդամալույծի վերածել: Այսօր նոր դպրոցի համար նոր դասագրքերի քաղց է զգացվում, ուստի Մամուրյանի կազմած դասագրքերը պետք է զբաղեցնեն մեր մանկավարժների ուշադրությունը, ատաղձ դառնալով նոր ձեռնարկների ստեղծման: Հայոց մեծ լուսավորչի թափած տիտանական ջանքերը հարյուրամյա հեռավորությունից վերջապես իրենց վրա պիտի հրավիրեն նոր սերնդի ուշադրությունը:

Իր ստեղծագործական բեղմնավոր կյանքի ամենաարգասաբեր



Վենետիկի Ս.Ղազար կղզին

ժամանակը Մամուրյանը նվիրեց թարգմանական գրականության ստեղծմանը: Նա տիրապետում էր թուրքերենին, հունարենին, արաբերենին, անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին, իտալերենին, կարդում և հասկանում էր ռուսերենով գրված ստեղծագործությունները: Ուստի, սկսելով թարգմանության աշխատատար պրոցեսը, Մամուրյանը նպատակ ուներ հայ ընթերցողին ծանոթացնել համաշխարհային գրականության կոթողներին, նրա մեջ կարդալու ճաշակ զարգացնել, ամենակարևորը՝ նպաստ բերել աշխարհաբար լեզվի մշակմանն ու արմատավորմանը:

Նա ֆրանսիական գրականությունից թարգմանեց և արժեքավոր ու արժեքավորող առաջաբաններով հրատարակեց Վոլտերի «Զատիկը», «Ճերմակն ու սևը», «Ժանոն և Քոլեն», Ա. Դյումայի «Ամուրին», «Քսան տարի ետք», «Երեք հրացանակիրք», «Պրժալոն Դերկոմսը», Ժյուլ Վեռնի «Աշխարհի շրջանն ութսուն օրվա մեջ», «Խորհրդավոր կղզին», Բոմարշեի «Սևիլյան սափրիչը», Աբբայի «Անիծյալը», Շանֆլեորի «Մանկտիք», Ժուլիան Գլասկոյի «Հիշատակք Սիպերիականի մը» և շատ այլ հեղինակների ստեղծագործություններ: Անգլիական գրողներից թարգմանել է Վ. Սկոտի «Այվենգոն», Ի. Մերվիլի «Ամուրիի մը երազները կամ սրտի գիրք մը», Մարի Կորելիի «Իմ զարմանալի կինս», Ֆ. Հյումի «Բեքերտվիլի առեղծվածը»:

Գերմանական գրականությունից թարգմանել է Գյոթեի «Վերթերը», Լեսինգի «Նաթան իմաստունը»: Մամուրյանի թարգմանած արաբական «Հազար ու մի գիշերը» հրատարակվեց վեց փոքրածավալ հատորներով, որոնք հետագայում ունեցան ևս երեք հրատարակություններ: Թարգմանիչն ազատ թարգմանությամբ հայացրեց Լև Տոլստոյի գործերից առանձին հատվածներ և դրանք հանձնեց հայ ընթերցողի ուշադրությանը:

Մամուրյանի ստեղծագործության գլուխգործոցներն են հանդիսանում երեք աշխատությունները, որոնց էջերում էլ նա զարգացրել է իր տեսակետները Հայկական հարցի, հայ ազատագրական շարժման, ապագա հայկական անկախ պետության պետական կառուցվածքի, աշխարհաբար համազգային լեզվի ձևակերպման, հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման և այլ խնդիրների մասին: Դրանցից առաջինը «Հայկական նամականին» էր, որը հրատարակվեց Զմյուռնիայում 1872 թ.: 1880 թ. նույն Զմյուռնիայում լույս տեսավ նրա «Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» աշխատությունը, որը հայ փիլիսոփայական և տնտեսագիտական գրականության փայլուն նմուշներից էր:

Մ. Մամուրյանի գրական ժառանգության, առավել ևս «Արևելյան մամուլում» հրատարակած բոլոր գործերից առանձնանում է «Սև լեռին մարդը» պատմավեպը, որը 1871 թ. սկսած, հատվածաբար տպագրվեց նույն պարբերականի էջերում և որը, դժբախտաբար, մնաց

անավարտ: Վեպի համար նյութ է ծառայել Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին և դրան հաջորդող ցարիզմի վարած ազգային-գաղութային քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ: Վեպի առաջին մասում հեղինակը վառ գույներով է նկարագրում հայության քաղաքական կողմնորոշումը դեպի Ռուսաստան, նրա խանդավառ ու ռոմանտիկ այն հույսերը, թե պարսկական լուծը թոթափելուց հետո Այրարատյան աշխարհում կծածանվի *հայոց անկախության դրոշը:*

Նիկոլայ Առաջինը և Պասկևիչը դրժեցին Ներսես Աշտարակեցուն իրենց տված խոստումը : Գրավված Արևելյան Հայաստանը ընդգրկվեց ռուսական կայսրության կազմում, դարձավ նրա կովկասյան գաղութներից մեկը: Այդ պարագան նկատի ունենալով, Մամուրյանն իր վեպի երկրորդ մասն ուղղում է Ռուսաստանի դեմ, գեղարվեստական վարպետությամբ ցույց տալիս ժողովրդի հուսախաբությունը, նրա ապստամբությունը Հյուսիսային արծվի մագիլներից ազատվելու համար, պայքար, որը վերջանում է հայերի պարտությամբ: Գրական ուշագրավ երկ լինելուց առավել «Սև լեռին մարդը» XIX դարի վերջին երեսնամյակի հայ դեմոկրատական մտքի պատմության նշանավոր մի հուշարձան է:

Մամուրյանն իր ստեղծագործական բեղմնավոր կյանքը եզերեց ինքնակենսագրական հարուստ նյութերի գրառմամբ, որոնք «Իմ հուշագրերը» վերտառությամբ հրապարակվեցին անցյալ դարի վերջալույսին, ինչպես նաև մեծ մտածողի կյանքի մայրամուտից քիչ առաջ: 1901 թ. հունվարի 2(15)-ին, կյանքի ութերորդ տասնամյակի նախաշեմին, վախճանվեց հայ մեծ լուսավորիչ և դեմոկրատ Մատթեոս Մամուրյանը: Կես դար հարատևող գրական ու հրապարակախոսական ծառայությունների համար նա «Իբրև վարձք ուրիշ բան չպիտի խնդրեր, եթե ոչ որ խնդրեց ընկերային և քաղաքական փոթորիկներին անցնող մեծ բանաստեղծ մը *Հայաստանի մեջ շիրիմ մը»:*

Դաժան ճակատագրի բերումով Հայոց երկնակամարի տակ մեծ երախտավորը գերեզմանաթումբ չունեցավ: Հայաստանի սրբազան հողում նրան հուշարձան չկառուցվեց, բայց ոչ հայ ժողովրդի մեղքով: Նույնիսկ եղավ հակառակն ու անսպասելին: 1922 թ. սեպտեմբերին Խորհրդային Ռուսաստանի «մեծ բարեկամ» Մուստաֆա Քեմալը, ավարտին հասցնելով երիտթուրք բորենիների հայասպանության ծրագրերի կենսագործումը, հրամայեց վերջին ու անդառնալի հարվածը հասցնել նախորդների գնդակներից ու սրից մազապուրծ այն հայերին, որոնք խմբվել էին Զմյուռնիայի ծովածոցում, հույսի վերջին նշույլը ունենալով. թե եվրոպական նավերով կհեռանան Թուրքիայից և կապաստանեն որևէ այլ երկիր:

Դաժանությանը չափ ու սահման չկար: Քեմալականները կրակում էին թիկունքից, դեպի անգլիական նավերը ձգվող գաղթականների վրա վերևից եռացող ջուր էր թափվում, հայոց արյամբ կարմրում էին հունական ջրերը, հայոց դիակներով ծածկվում էին ծովածոցն ու նավամատույցը: Մեկ օրվա ընթացքում հիմնովին հայազրկվեց Զմյուռնիան, մնացին անթաղ մեռելներ և հայոց գերեզմանատներ: Քեմալի գիտությամբ ու կարգադրությամբ հայոց դիակներն այրեցին երկնչելով տիֆի համաճարակից, Քեմալի հրամանով հայոց գերեզմանատները քանդեցին, ավերեցին: Քանդվեց նաև Մամուրյանի գերեզմանը, թուրք խուժանի քարերի տակ ջարդվեց նաև նրա շքեղ մահարձանը: Հայաստանում գերեզման ունենալու երազանք ունեցողը հողում, գերեզմանափոսում գոնե հանգիստ ննջելու իրավունքից զրկվեց:

*
* *

Բեղմնավոր գրիչ ունեցող Մ. Մամուրյանի աշխարհայացքը, սակայն, բարդ էր, երբեմն էլ հակասական, որն, անշուշտ, պայմանավորված էր նախ հեղինակի մտածելակերպով, ապա նրա ապրած էվոլյուցիայով ու գաղափարական դեգերումներով: Քիչ էական չէր և այն, որ թուրքական բռնապետության շղթաներով կապկպված քրիստոնյա ազգերի, առավել ևս իր ժողովրդի ճակատագրով ակտիվորեն հետաքրքրվող հրապարակախոսը, ունենալով սեփական հանդես, արձագանքում էր կյանքի առաջադրած գրեթե բոլոր կենսական խնդիրներին, գաղափարական մարտահրավեր նետում քաղաքական տարատեսակ հակառակորդներին: Հետևաբար, նրա աշխարհայացքային տարընթացությունների արմատները պիտի որոնել նաև արևմտահայ իրականության բավիղներում, օսմանյան կայսրության, ցարական Ռուսաստանի, խաբկանքներով լի Արևմուտքի հարափոփոխ քաղաքականության նկատմամբ Մամուրյանի առհարկի կատարած զիգզագների մեջ: Այդուհանդերձ, Մամուրյանի ծովածավալ ժառանգությունը հետազոտողին բերում է այն եզրահանգմանը, թե հրապարակախոսն ունեցել է հստակ ուղեգիծ հայ ժողովրդի ազատագրության, հայկական անկախ ու միասնական պետության վերականգնման, քաղաքական կողմնորոշումների խնդիրներում:

Հրապարակախոսն ապրելով թուրքական դաժան իրականության պայմաններում, ամեն որպես զգալով իր գլխին կախված դամոկլյան սրի անխնա հարվածների անխուսափելիությունը, այնուամենայնիվ, զարմանալի խիզախությամբ քննադատության սուր խոսքեր էր ասում օսմանյան վարչակարգերի, մեծ մարդասպան Համիդ սուլթանի հասցեին: Նա քաղաքացիական քաջությամբ ի լուր աշխարհի հայտարարում էր, թե «Թուրքիայում գահերու վրա չէ ազատությունը, այլ գերեզմանի մեջ»: Բողոքելով ստեղծագործելու ազատության բացակայությունից, նա շարունակում էր. «...որևէ ճշմարտություն գրելու ազատություն

չկա: Ո՞վ կարգելի այդ ազատությունը, անոնք, որոց վրա խոսելու ազատություն չունիմ, վասնզի Թուրքաստան կգտնվիմ» կամ «Ճշմարտություն մի փնտրեր Թուրքիա, վասնզի անճշտությունն ու անկարգությունն է կանոնը»:

Մամուրյանը, մասնակի դիտողություններից անցնելով ընդհանրացումների, խստագույնս քննադատում էր սուլթանական կարգերը, բացահայտում սուլթանների, նահանգապետ փաշաների և քուրդ բեկերի կատարած վայրագությունները Արևմտյան Հայաստանում, Ռուսաստանի վարած ազգային-գաղութային քաղաքականությունն Արևելյան Հայաստանում: Ցարական Ռուսաստանին պատկերացնելով արծվի, Թուրքիային սևամորուք գայլի, Պարսկաստանին վագրի, ներքին հարստահարիչներին, թուրքամետ, պաշտոնամոլ հայ վերնախավին ճիճուների տեսքով, նա գտնում էր, որ սուլթան Համիդը հայ ժողովրդի արյունն ըմպում է և չի կշտանում, պարսկական վագրը թուլանալով, աղվեսի կերպարանք առած, բռնությամբ այլևս չկարողանալով հաշվեհարդար տեսնել հպատակ հայերի հետ, հարկադրված է դիվանագիտական խաղեր խաղալ: Ռուսաստանը հայասիրական հայտարարություններ է անում այն պահին, երբ շահեր ունի ասիական Թուրքիայում, երբ իր բանակները հայերի օգնությամբ ծանր հարվածներ են իջեցնում Թուրքիայի գլխին:

Ռուսաստանի նկատմամբ հայ պահպանողականների դիրքորոշումը քննարկելիս, Թուրքիա՞, թե՞ Ռուսաստան հարաբերակցության խնդրին անդրադառնալիս, Մամուրյանը զարգացնում էր մի կոնցեպցիա, որը զարմանալիորեն այսօր էլ մտաբախումների տեղիք է տալիս: Օսմանյան գահին բազմած երեք սուլթանների տիրապետության դառը դեղահաբերը ճաշակած հրապարակախոսը, ականատեսը դառնալով հատկապես 90-ականների հայկական գողգոթային 300 հազար անմեղ ու անպաշտպան հայերի մորթոտմանը, հոգեկան ծանր տվայտանքների փակուղիներում, հարկադրված էր պատասխանել հայ կոչված պալատական այն գրչակներին, որոնց կարծիքով, եթե հայ ժողովուրդը *հավատարիմ* ծառայեր թուրքերին, ապա նման արյունահեղություն չէր լինի:

Նա բանաձևում էր, թե հայ ժողովրդի ողբերգության հիմնապատճառները որոնել նրա փայփայած ռուսական կամ արևմտաեվրոպական կողմնորոշման մեջ, նշանակում էր ջուր լցնել Համիդ Երկրորդի ջրաղացին, արդարացնել նրա հայակուլ քաղաքականությունը, արժանանալ Սասնո ու Վասպուրականի, Դիարբեքիրի և Սեբաստիայի լեռներում մորթոտված, թաղված կամ անթաղ մեռելների հավիտենական անեծքին: Նա բազմաբնույթ փաստերով ապացուցում էր, որ ինչպիսի կողմնորոշում էլ ունենային արևմտահայերը, միևնույն է, ***թուրք շովինիստները, սրանց հետ գործակցած «Համիդիե» քրդական զորաջոկատները կկոտորեին նրանց:***

Մամուրյանը ժամանակակցի և պատմաբանի խորաթափանցությամբ բացատրում էր, որ անցյալ դարի վերջին քառորդին, հատկապես Բեռլինի վեհաժողովից հետո օսմանյան կայսրության քաղաքներում ձևավորվում էր նորաթուխ թուրք բուրժուազիան, որն զբաղվում էր և՛ առևտրով, և՛ արդյունագործությամբ:

Սկսվում է տնտեսական մրցակցությունը տիրապետող ազգին և իշխող կրոնին պատկանող թուրք նորելուկ, դեռևս երերուն քայլեր անող բուրժուազիայի և դարերի ավանդույթ ունեցող, լեզուներին տիրապետող հայ, հույն, սլավոն առևտրականների միջև, այն վաճառականների, որոնք ոչ միայն կամրջում էին թուրք-եվրոպական առևտուրը, այլև մինչ այդ անմրցակից տնօրինում էին ասիական Թուրքիայի ներքին շուկաները: Տնտեսական մրցավեճի ժամանակ չկարողանալով դիմագրավել քրիստոնյա մրցակիցներին, թուրք բուրժուազիան սերտաճում է համիդյան վարչակարգերին, որդեգրում պանիսլամիզմի և պանթյուրքիզմի քաղաքականությունը, սուլթանին զորավիգ կանգնելով, վերջինիս գրգռում հայերի դեմ, դրդում մինչ այդ եղած ուծացման ու մասնակի ջարդերի իրողությունից անցնել ժողովրդի զանգվածային ոչնչացմանը:

Անցյալ դարի 80-ական, առավել ևս՝ 90-ական թվականներին Թուրքիայում ամենուրեք հնչում էին մեկ ազգ, մեկ կրոն, մեկ պետություն վերակառուցելու թուրք պալատականների, պաշտոնաթերթերի խմբագիրների բարբաջանքները: Արևմտյան Հայաստանում շերտընդմեջ բնակվող թուրքերի, հատկապես մոլլաների գլխներին սպիտակ չալմաներ էին երևում, որոնք մահմեդականներին «սրբազան պատերազմի» առաջնորդելու բացահայտ նախանշաններ էին:

Համիդ Երկրորդի, նրան շրջապատող Բ. Դռան պաշտոնյաների ձգտումները համընկնում էին թուրք բուրժուազիայի շահերին: Օսմանյան կայսրությունը մեկ հարյուրամյակում կորցրել էր եվրոպական Թուրքիայի մեծ մասը, Ղրիմն ու Բեսարաբիան անցել էին Ռուսաստանին, Բալկանյան թերակղզու մեծ մասը անկախություն էր նվաճել: Կորցնելով եվրոպական Թուրքիան, միջերկրածովյան առափնյա արաբական երկրները, սուլթանական կառավարությունը, միջոցների մեջ խտրություն չդնելով, ջանում էր գոնե իր կազմում պահել ասիական Թուրքիան, հատկապես Արևմտյան Հայաստանը, որի միացումը Արևելյան Հայաստանին կամ ինքնավարության նվաճումը օրակարգի հարց էր: Զգալով այդ ամենը, օգտվելով Արևմուտքի տերությունների թողտվությունից, տվյալ պահին՝ հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի վերադիրքավորումից . սուլթանը որոշեց արևմտահայության խնդիրը վճռել թուրքավարի, այսինքն՝ զանգվածային կոտորածների եղանակով: Հետևաբար, արևմտահայությունն ինչպիսի ուղի էլ ընտրեր, ինչքան էլ փարվեր սուլթանի գայիսոնին, միևնույն է, կարժանանար այն ճակատագրին, կստանար այն հարվածները, որոնք ստացավ այդ տասնամյակներին:

Մամուրյանն ու ժողովրդանվեր նրա գաղափարակիցները, թուրքահպատակ քրիստոնյա այլազգիները, որոնց ճակատին դարեր ի վեր խարանել էին ռայա, գիմմի, ստրուկ մակդիրները, տեսնելով, որ սեփական ուժերով անհնար է ազատագրվել օսմանյան տիրապետությունից, հարկադրված էին հերթական անգամ դիմել դիվանագիտական մուրիկության՝ բռնել դրսաշխարհից օգնություն հայցելու ճանապարհը: Տիրող իրավիճակը, սուլթանի վարած քաղաքականությունն էր արևմտահայերին հարկադրում դիմումներ գրել քրիստոնյա տերություններին: *Հետևապես այդ հանգամանքը ոչ թե մեր ժողովրդի մեղքն էր, այլ դժբախտությունը, որը պարտադրում էր իշխող վարչակարգը:*

Եվրոպական մեծ տերությունները, յուրաքանչյուրը յուրովի, ելնելով իրենց քաղաքական ակնկալություններից, շարունակում էին հույսերով, այո՝ միայն հույսերով կերակրել թուրքահպատակ քրիստոնյա ազգերին: *Միակ իրական օգնությունը ցույց էր տալիս Ռուսաստանը,* որի նվաճողական դիտավորությունները տվյալ պահին համապատասխանում էին այդ ազգերի ձգտումներին և, փաստորեն, երկուսի շահերը համընկնելով, Թուրքիայի համեմատությամբ Հյուսիսային հարևանը առաջադիմական դեր էր կատարում: Հետևաբար իրենց գիտական խղճի հետ սակարկության մեջ են մտնում այն բանախոսները, որոնք հետադարձ հայացքով, թուրքական թե ռուսական կողմնորոշումների միջև համեմատական նշանաձողեր անցկացնելով, գերապատվությունը հանիրավի տալիս են առաջինին:

Եթե այդ վարկածն ընդունենք իբրև իրողություն, ապա մենք այսօր սև բիծ կդնենք մեր ժողովրդի ու նրա ծոցից ելած բոլոր այն խոշոր մտածողների, հոգևորական թե աշխարհիկ գործիչների զարգացրած գաղափարաբանության վրա, որոնք երեք դար շարունակաբար պաշտպանել են ռուսական կողմնորոշումը, *այլ ելք չունենալով,* ռուսական զենքի հաղթանակի մեջ են որոնել իրենց փրկությունը:

Ճշմարտությունն այն է, որ պատմության քառուղիներում անկախությունը կորցրած հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքարի ոգորումների ժամանակ, զգալով, որ առանց դրսաշխարհի օգնության, միայնակ հաղթանակել չի կարող, այդ իսկ պատճառով դիմելով Ռուսաստանին, օրորվում էր ռոմանտիկ հույսերով, կարծում, թե հաղթանակի արդյունքը կլինի *ինքնուրույն պետականության վերականգնումը:* Դրա առհավատչյան այն էր, որ պայքարի յուրաքանչյուր շրջափուլի նախօրյակին հայոց մեծերի մեջ մտաբախումներ էին ծավալվում ստեղծվելիք պետության ձևի ու կառուցվածքի շուրջ:

Զուր հույսեր... Եվրոպական ոչ մի տերություն, այդ թվում և ցարական Ռուսաստանը, առանց շահախնդրության բնավ էլ նպատակ չի ունեցել իր զինվորների թափած արյամբ ներկել Հայկական բարձրավանդակը, ապա այն թողնել հայերին և հեռանալ: Եթե բրիտանական

ծովագայլը կամ ռուսական արծիվը, առաջնորդվելով մարդասիրական սկզբունքներով, ճնշված ազգերին ազատություն պարգևող լինեին, ապա նախապես թող ազատեին իրենց ժողովուրդներին կամ արդեն գաղութացված մյուս ազգերին, նոր միայն մտահոգվեին հայերի ճակատագրով: Սեփական ժողովրդին ճնշող տերությունը երբեք սատար չէր կանգնի մեկ այլ ժողովրդի՝ նրան անկախություն պարգևելու ցանկությամբ:

Ցարական Ռուսաստանը թուրքահպատակ, քրիստոնյա ազգերի պաշտպանության քողի տակ վարում էր զավթողական քաղաքականություն: Այդ ժողովուրդների վիճակն այլևս անտանելի էր դարձել օսմանյան լծի տակ: Նրանք ձգտում էին քրիստոնյա Ռուսաստանի օգնությամբ թոթափել այդ լուծը:

Ժողովուրդը գնահատում էր այդ դերը, ռուս-թուրքական բոլոր պատերազմների ժամանակ ողջ հայաշխարհը ռուսական բանակին ցույց էր տալիս զինական և նյութական օգնություն, բարոյական աջակցություն: Անշուշտ դրանով էր պայմանավորված, որ կովկասյան բեմահարթակում ռուսական բանակը ոչ միայն երբեք պարտություն չկրեց, այլև միշտ փայլուն հաղթանակներ տարավ: Նույնիսկ ցարիզմի համար խայտառակ պարտությամբ ավարտված Ղրիմի պատերազմի (1853-1856) ժամանակ հայ ժողովրդի անվերապահ օգնությամբ ողջ Արևմտյան Հայաստանը ազատագրվեց թուրքական լծից: Արդյունքը տխուր եղավ հայերի համար:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բոլորովին չանտեսելով Ռուսաստանի վարած արտաքին ու ներքին քաղաքականության բացասական երանգները հայ ժողովրդի նկատմամբ, միաժամանակ չպետք է մոռանալ, որ հայոց կղզին, առանց քրիստոնյա որևէ հզոր տերության հովանավորության, միայնակ դիմագրավել այլևս չէր կարող: Ժողովուրդը գիտակցում էր այդ հանգամանքները, ժողովուրդը տեսնում էր այդ ամենը և շարունակում էր իշխել ռուսական կողմնորոշումը: *Անհատները սխալվել կարող են, մի ամբողջ ժողովուրդ սխալվել չի կարող:* Հետևաբար, այսօրվա ակնոցով, շիլ հայացքով նայել անցյալի վրա, աղավաղելով փաստերը՝ դատապարտել ռուսական կողմնորոշման հայ պաշտպաններին, մեր կարծիքով, մեղմ ասած, լրջախոհություն չէ:

Թեկուզև այսօրվա ակնոցով, այսօրվա պարագաներում... Մենք այսօր, Վրաստանից բացի, ո՞ր հարևանի վրա կարող ենք հույս դնել, ի վերջո, անկախություն նվաճելուց հետո ո՞ւմ հետ կարող ենք հավասարազոր բարեկամություն անել՝ «եղբայրական Ադրբեջանի՞», որը հայոց արյամբ ներկեց Սումգայիթն ու Խոջալուն, պատմական Գանձակն ու հերոսական Արցախը, որը բնավեր խլյակ դարձրեց կես միլիոն հայությանը, շնագայլի նման կուլ տվեց Նախիջևանն ու հայոց ոստաններից՝ գեղատեսիլ Շուշին, որը, ատամները սրած մոլլաների բարբա-

ջանքով, հերթական անգամ «սրբազան պատերազմ» է հայտարարել ողջ հայ ժողովրդին: Զարմանալիորեն տեսակետ է զարգացվում, թե Ռուսաստանից անջատվելու դեպքում հայ ժողովուրդը կարող է «բարեկամություն հաստատել» Թուրքիայի հետ: Անհնարին, կասկածելի այդ «բարեկամության» մասին թերևս հնարավոր կլինի երևակայել, եթե մենք հրապարակավ հրաժարվենք մեր պատմական հայրենիքից Արևմտյան Հայաստանից, Մեծ եղեռնի մեղքերը վերցնենք մեր և Ռուսաստանի վրա, գնանք ներողություն խնդրենք թուրքերից, ասելով, որ ոչ թե ձեր հայրերն են ոչնչացրել մեր ժողովրդի մի ամբողջ հատվածին, այլ մենք ենք ջարդել նրանց: Տեսնո՞ւմ եք, Թուրքիայի հետ սերտաճելը ինչպիսի վտանգներով է լի:

Մեզ բարեկամներ են մնում վրաց և ռուս ժողովուրդները, նրանց առաջավոր մտավորականությունը, այո՛, ժողովուրդները և ոչ պետական ու քաղաքական այն գործիչները, որոնք հայատյաց քաղաքականություն են վարել, այսօր էլ վարում են: Դրանք դեռ ժողովուրդ չեն, նրա կամքը չեն արտահայտում: Պետական այդ գործիչները կգան ու կգնան, իրենց սև գործերով, ի վերջո, կնետվեն պատմության աղբակույտը (ինչպես արդեն նետվել են շատերը), հայ, ռուս ու վրացի ժողովուրդների բարեկամությունը կմնա:

Մ. Մամուրյանը լինելով լայն ընդգրկումներ ունեցող մտածող ու քաղաքական գործիչ, խորապես հետազոտելով Արևմուտքում և Արևելքում հարատևող հասարակական ու պետական համակարգերը, որոշակիորեն պաշտպանում էր ժողովրդական զանգվածների շահերն ընդհանրապես: Նա իր գաղափարաբանությամբ միանում էր համաշխարհային այն մեծություններին, որոնք պայքարել էին ճնշված մարդկության ազատագրության նշանաբանով, ջանացել էին վերականգնել անկախությունը կորցրած մեծ կամ փոքր ժողովուրդների ինքնուրույնությունը: Հրապարակախոսը Եվրոպայի և Ամերիկայի ժողովուրդների լուսավորական, ապագա ազատագրական շարժման ջերմ կողմնակիցներից էր և այդ տեսանկյունից էլ դրվատում էր Վոլտերի, Ռուսսոյի, Մոնտեսքիոյի, Դանտոնի, Մարատի, Ռոբեսպիերի, Ֆրանկլինի, Վաշինգտոնի, Գարիբալդիի, Մաձինիի, Բայրոնի, Բոցարիսի և առաջավոր մտքի ու գործի համաշխարհային մյուս հսկաների ձևակերպած ծրագրերն ու մղած պայքարը գաղութակալ տերությունների մեծազոր զորաբանակների դեմ:

Հրապարակախոսի զարգացրած նման կոնցեպցիան, սակայն, ինքնանպատակ չէր և ոչ էլ ընդամենը աշխարհն ազատ տեսնելու համամարդկային գաղափարաբանություն: Նա այդ պայքարի կանխանշած դժվարանց ճանապարհին որոնումներ էր կատարում, դեղամիջոցներ առաջարկում Հայաստանի ազատագրության վերաբերյալ: Նրա տեսակետները որոշակի էին, ուղղագիծ, այն է՝ հայ ժողովրդի ազատագրության հիմնամիջոցը նրա լուսավորությունն էր, տնտեսական զարգացումը, ապա դրանց հաջորդած ազգային-ազատագրական սրբազան պայքարը:

Դեռևս 60-ականներին Մամուրյանը գրում էր. «Օտարին ոտքը կամ գիրկն ընկած *երկու ճամփա կա մեր առջև. կամ սողալ ճզմվելու չափ,* կամ կանգնել պատվով հարգվելու չափ: Արդարև պայքարը մեծ պիտի լինի և պիտի հաղթե հայրենասիրությունը...»: Նրա կարծիքով Հայաստանի ազատագրմամբ պիտի մտահոգվեին առաջին հերթին հայոց մայրերը, որոնք օրորոցային երգերով, երգախառն պիտի կրկնեին. «Թշնամուդ հաղթե ու *թող վահանդ լինի հաղթական գահդ կամ դագաղդ»:* Հայ ժողովուրդը «ոչ միայն կրթությամբ, այլ ապստամբությամբ պիտի վերածնի ու իր շղթաները քակելու պիտի հաջողի»:

Բեռլինի վեհաժողովը վերջացավ ռուսական դիվանագիտության կատարյալ պարտությամբ: Եվրոպական մայրաքաղաքներում աղերսագրեր բաժանած հայկական պատվիրակությունը, ունայնաձեռն վերադառնալով Բոսֆորի ափերը, հնչեցրեց երկաթե շերեփի կոչը: Միանալով այդ տեսակետին, Մամուրյանը գրեց. «Ինչ որ իրավագիտությունն, ինչ որ միջազգային արդար օրենքն, ինչ որ մարդասիրությունն, ինչ որ գիտությունն ու լուսավորությունն չեն կարող վճռել... ազգերի ճակատագրի նկատմամբ, *զենքը պիտի վճռե, և երբ զենքն արդար դատի և իրավունքի համար կշողա ազգերու ձեռքին,* այդ զենքն առաջադիմություն և քաղաքակրթություն սատարող, հզոր և օրհնյալ գործիք մը կդառնա»:

Նա տեսավ հայակուլ սուլթանի թափած արյունը հայոց աշխարհում, ականատես աղավ 90-ականների հայկական ջարդերին, լեռնահամայնքների հերոսական ինքնապաշտպանությանը և երիցս անգամ համոզվեց, որ մեր ժողովուրդն *առանց ազգային, ինքնապաշտպանական բանակի* թուրքական յաթաղանից ազատվել չի կարող: Ծերունազարդ մտավորականը ողջունեց հայդուկային շարժման ծնունդը և դա դիտեց իբրև այն հենքը, որին կռթնած, հայ քաղաքական կուսակցությունները ձեռք-ձեռքի տված, պիտի մարդաշատ ու կազմակերպված դարձնեին անջատ-անջատ գործող նման խմբերը, դրանք դնելով միասնական դրոշի տակ, նպատակամղելով համազգային պայքարի:

Մամուրյանը իրապաշտ, խորաթափանց գործիչ էր, ուստի նա չէր կարող հաշվի չառնել պատմական պայմանները և չմտածել, թե միայն ազգային ուժերը կբավականացնեի՞ն արդյոք թուրքական ահարկու գազանը նետահարելու, Հայաստանի անկախությունը նվաճելու համար: Այդ պարագան նրան հարկադրում էր որոնել երրորդ ուժը, նրանից օգնություն ստանալու՝ երկիրն ու ժողովրդին տիրապետող տերությունների երկաթե աքցանից ազատելու դժվարին գործում:

Հայաստանի ճակատագրով մտահոգվող քաղաքական գործիչը,

սուլթանական լուծը թոթափելու երկարատև պրոցեսում, երբեմն-երբեմն ռոմանտիկ հույսեր էր կապում Արևմուտքի քրիստոնյա տերություններից ստացվելիք օգնության հետ: Բեռլինյան անդրկուլիսյան բանակցությունների ամիսներին նա կարծում էր, թե Անգլիան կկատարի հրապարակային իր խոստումները և կստիպի սուլթանին արևմտահայությանը ինքնավարություն տալ:

Կոնգրեսի որոշումներից հիասթափվեց, ազգային ողբերգություն ապրեց հայ ժողովուրդը, նրա գլխամասն հանդիսացող առաջավոր մտավորականությունը, այդ թվում և Մ. Մամուրյանը: Բեռլինի կոնգրեսում ձևով ու բովանդակությամբ դիմաշրջված 61-րդ հոդվածը խոստանում էր, այո՛, միայն խոստանում էր Արևմտյան Հայաստանի չորս վիլայեթներում դիմագրավելով հարատևող քրիստոնյա ազգաբնակչության կյանքում բարեփոխություններ կատարել, նրանց պաշտպանել ոչ թե Թուրքիայի և թուրքերի, այլ քրդերի ու չերքեզների ասպատակություններից:

Դաժանության մեջ Համիդին, խարդախության մեջ՝ բրիտանական դիվանագիտությանը հավասարը չունեցող հովանավորյալն ու հովանավորողը նման որոշմամբ նուրբ խաղով պաղեցնում էին առանց այդ էլ սառած հայ-քրդական հարաբերությունները, երկու ժողովուրդների միջև հավերժական հակամարտություններ սերմանում, որպեսզի բացառեին նրանց միասնական պայքարը:

Անտարակույս, Արևելյան հարցը և նրա բաղկացուցիչ մասը դարձած Հայկական հարցը լուծելու հիմնական միջոցը տվյալ պահին ռուսական սուրն էր, թուրքահպատակ քրիստոնյա ազգերի ռուսական կողմնորոշումը, ցարիզմի՝ Բալկաններում և Փոքր Ասիայում կատարելիք նվաճողական նկրտումների և տեղի հպատակ ժողովուրդների ազատագրական բաղձանքների սերտաճումը: Սակայն, եթե Արևելքի նկատմամբ նվաճողական հակումներով լի Ռուսաստանը թուրքահպատակ քրիստոնյա ազգերին հուզող գորդյան հանգույցը լուծում էր կեսարյան եղանակով, ապա ավանդական գաղութատեր բրիտանական ծովացուլը հետևողականորեն ընդարմացնում էր ռուսական զենքի հաղթանակները և, առանց որևէ զինվոր կորցնելու, համեղ պատառներ էր կորզում Թուրքիայից:

Դրա առհավատչյան եղավ Բեռլինի կոնգրեսը: Հայաստանը ողջակիզվեց եվրոպական մեծերի զոհասեղանի վրա. հայ ժողովուրդն իր նվաղուն հայացքով կախման մեջ ընկավ մեծ տերություններից և դարեր առաջ սկսված դիվանագիտական մուրիկությունը շարունակեց հետագա կես հարյուրամյակում:

Բրիտանական դիվանագիտությունը հայկական հարցում այնպիսի անկեղծ, ուղղագիծ և հասկանալի դիրքորոշում չուներ, ինչպես Ռուսաստանը: Անգլիան կարողանում էր խաբեությամբ, դիվանագիտական հմուտ մանևրերով արևմտահայ մտավորականներից ոմանց, «հարմար ձևերով», թեքել դեպի անգլիական կողմնորոշումը և, հենվելով պայքարի նրանց կոչերի վրա, Թուրքիային հարկադրել մնալու իր հավերժական սատելիտը: Մամուրյանը չէր խաբվում, քանզի տիրապետելով լեզուներին, կարդում էր համաշխարհային մամուլի հաղորդագրությունները, հետևում դեպքերի զարգացման ընթացքին և անում միանգամայն ճիշտ եզրահանգումներ:

Դեռևս ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Մամուրյանը ճիշտ էր հասկացել Անգլիայի երկդիմի խաղերը հայկական հարցում: Նա որոշակիորեն հայտարարում էր, թե *«Անկլիա Ասիո քրիստոնյա ժողովուրդները և մասնավորապես հայերը պաշտպանելու շահ չունի»* կամ «Անկլիո քաղաքականությունն ի՞նչ է, պատերազմի սկզբին անոր հետևած գիծը կփնտրեմ ու չեմ գտներ, թերևս շատ նուրբ կամ երկդիմի է:

- Զարմանք, դեռ չգիտես, որ չեզոքության քաղաքականություն է: Սխալ է, Ալաշկերտի, Պայազետի, Վանա գյուղորեից ավերակները ձեր գործերն են»:

Մ. Մամուրյանի քննադատությունը Մեծ Բրիտանիայի և նրան պաշտպանող հայ անգլոֆիլների նկատմամբ առավել բյուրեղացվեց 1895 թ. մայիսյան ռեֆորմների օրերին: Սակայն նրա տեսակետները հարկադրված էր հիմնավորապես վավերացնել Անգլիայի երբեմնի վարչապետ Լլոյդ Ջորջը, որը հետադարձ հայացքով խոստովանեց, թե «Հայաստանը ողջակիզվեց Անգլիայի կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա...»: Այդ ողբերգության մեջ պակաս մեղսակցություն չունեցող անգլիացի դիվանագետն ու պետական գործիչը, սակայն, քիչ-քիչ խտացնում էր գույները, եղելությունը ներկայացնում միակողմանիորեն: Թափված հայոց ծով արյան մեղսակից էին հիմնականում Թուրքիան և կայզերական Գերմանիան, այդ թվում՝ նաև բրիտանական տերությունը:

Այսպիսով, երրորդ ուժի հարցը քննարկելիս, Մամուրյանը ձգտում էր հնարավոր բոլոր միջոցներով քրիստոնյա մեծ տերություններից, քրիստոնյա ժողովուրդներից օգնություն հայցել թուրքական յաթաղանի հարվածները հետ մղելու, Հայաստանի անկախությունը նվաճելու գործում: Նա միաժամանակ հասկանում էր, հրապարակայնորեն հայտնում իր տեսակետները, թե օտարների օգնության հետ մեծ հույսեր կապել չի կարելի, որ Հայաստանի ազատագրության ծանրությունը հիմնականում ընկած է հայ ժողովրդի ուսերին:

Այսօր, առավել քան երբևէ, հանճարեղ է թվում Մամուրյանի մեկ դար առաջ արած այն կանխագուշակումը, թե «Հուսալ, որ օտար ազգ մը Հիսուսի ըրած հրաշքը պիտի գործե... ցնորք է... *Սպասել, որ արտաքին փրկիչներ գան և հայ ժողովրդյան սև պատանքը քակեն՝ հիմարություն է: Հեք և ստրուկ ժողովրդյան առաջին և միակ ազատարարն ինքն է, իր ներքին ուժն է, իր լույսն,*

միությունն ու հաստատ կամքն է»: Ժամանակի հարատևող բոլոր համակարգերը մերժելով, Մամուրյանը հույսը կապում էր ժողովրդական զանգվածների հեղափոխական ինքնագործունեության հետ ընդհանրապես, հայ ժողովրդի ծավալած համազգային պայքարի հետ մասնավորապես: Նրա կարծիքով, *«Ժողովուրդ ըսածդ այն գետերուն կնմանի, որուն ջրերն մերթ կդաշտանան և հանդարտ երես մը կառնեն, մերթ աներևույթ կլինին և գետնափոր անձավներե անտես անցնելով՝ հանկարծ կպայթին, հեղեղատի պես լեռներեն կգահավիժեն որոտընդոստ և քար ու ժայռ թավալգլոր կբերեն»:*

Այսպիսով, Մամուրյանը եղել է և կմնա հայ հասարակական առաջավոր մտքի այն հսկաներից, որի գաղափարաբանությունը ուսանելի կդառնա այսօրվա և հետագա բազում սերունդներին:

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ

Հավերժական կյանք ու գործ

Այս օրերին երախտագետ հայ ժողովուրդը, հերոս Արցախի ուծացման վտանգին դիմագրավող ներքին և արտաքին Սփյուռքի մասնակցությամբ, մեծ շուքով նշում է իր Զորավար որդու՝ Անդրանիկ Թորոսի Օզանյանի ծննդյան 125-ամյակը: Այդ հոբելյանն ինքնին նշանակալից է ոչ միայն նրանով, որ Զորավար Անդրանիկն իր գիտակցական ողջ կյանքը անմնացորդ նվիրաբերեց հայ ժողովրդի ազատության սրբազան գործին, այլ նաև ու հատկապես նրանով, որ համայն հայությունն առաջին անգամ է ազգովին նշում այդ տարելիցը:

Տասնամյակներ շարունակ ժողովուրդների բարեկամության մեծ ջատագովի, ազատության ասպետի ճակատին հանիրավի խարանվել են սուտ ու պատիր, ստոր պիտակներ: Քեմալական Անկարայի, բաղիրովյան Բաքվի ձայնափողը դարձած կենտրոնական իշխանության սադրանքների, երկդիմի քաղաքականության հետևանքով Անդրանիկի անունը ջնջված էր Հայոց պատմության դասագրքերից: Նրա մասին գրված մենագրությունների մի մասը դեռ այսօր էլ հրատարակության հնարավորությունից զուրկ է: Զորավարին վերաբերող արխիվադարանների դռները գոց էին ոչ միայն Բաքվում ու Մոսկվայում, այլև բուն Հայաստանում:

Դաժա՜ն ժամանակներ: Սակայն այդ խավարի մեջ էլ երբեմն-երբեմն առկայծում էին լույսի թույլ շողերը: Կային խիզախներ, որոնք կյանքի գնով, գաղտնի, երբեմն հրապարակավ հնչեցնում էին ճշմարտության ձայնը: Ժողովուրդը չէր մոռանում իր պանծալի Զորավարին, տարածում էր նրա դիմանկարները, երգում նրան ձոնված բոցաշունչ երգերը, արարում նորերը, այսուայնտեղ, առանց պետական արտոնագրի, կանգնեցնում նրա արձանները:

Զորավար Անդրանիկի կյանքը հիրավի մի ամբողջական հերոսապատում է, որն ամփոփում է հայ ժողովրդի երեք տասնամյակի զոհառատ մաքառումները: Անդրանիկն իր ժողովրդի և ճնշված մյուս

ազգերի համար արեց այն, ինչը Գարիբալդին Իտալիայում և Ֆրանսիայում, Մարկ Բոցարիսը Հելլադայում, Խրիստո Բոտևն ու Լյուբեն Կարավելովը բալկանյան երկրներում: Տարբերությունը, սակայն, այն էր, որ սրանց պայքարն, ի վերջո, պսակվեց հաղթանակով, Անդրանիկինը պարտությամբ: Նրանց փառքը ճանաչվեց հետագա պետական բոլոր համակարգերի կողմից: Նրանց անուններով դպրոցներ ու հրապարակներ, փողոցներ ու բնակավայրեր կոչվեցին: Անդրանիկը մահացավ հեռավոր ափերում, զրկվելով անգամ հայրենի հողում թաղվելու իրավունքից...

Անդրանիկ Օզանյանը ծնվել է 1865 թ. փետրվարի 25-ին Սեբաստիայի Կողոնիս (Շապին-Գարահիսար) գյուղաքաղաքում: Մեկուկես տարին դեռ չբոլորած մահանում է մայրը: Որբուկի խնամքն իրենց վրա են վերցնում հայրը և ամուսնացած քույրը Մարիամը: 1875 թ. նա ընդունվում է հայրենի քաղաքի Մուշեղյան վարժարանը, 17 տարեկանում ավարտում այն: Նույն տարում հայրը նրան ամուսնացնում է քաղաքի ամենաչքնաղ օրիորդներից մեկի հետ: Սակայն մեկ տարին չբոլորած մահանում է դեռատի կինը, փոքր-ինչ անց նաև նորածին երեխան: Միշտ հպարտ ու խրոխտ երիտասարդի հոգեկան խռովքը սահման չուներ: Ընտանեկան ծանր ողբերգությունը նրան մղում է միայնության, նա կտրվում է ընկերների ու հարազատների միջավայրից՝ լուռ սգալով իր անդառնալի կորուստները:

Բարեբախտաբար, Անդրանիկի հոգեկան դրաման երկար չի տևում: Ընկերների օգնությամբ աստիճանաբար սպիանում են հոգեկան ծանր վերքերը. նա սկսում է խմբեր կազմել, նրանց զորավարժությունների տանել քաղաքից դուրս: Հայ երիտասարդության հավաքույթների նյութը ժողովրդի փրկության գործն էր: Անդրանիկի եզրակացությունն այն էր, որ ժողովրդի փրկության միակ ուղին զինված ապստամբությունն էր, որին պիտի նախորդեին ինքնապաշպանական գոյամարտերը:

Այս հաստատուն դիրքորոշումով Անդրանիկը 1884 թ. թողնում է ծննդավայրը, գնում Կ. Պոլիս, ուր այդ տարիներին ապաստան էին գտել իրենց հայրենի բնօրրանը հարկադրաբար լքած հայ պանդուխտները: Երիտասարդ հյուսնը շուտով դառնում է նրանց և ընդհանրապես պոլսահայ երիտասարդության սիրելին: Անդրանիկը աշխատանքի է տեղավորվում Մաչկա Խշլասի զինագործարանում, նպատակ ունենալով ուսումնասիրել զենք արտադրելու տեխնիկան և հարմար պահին նման գործարան հիմնել Հայաստանի որևէ քաղաքում: Սակայն նա երկար չի մնում Թուրքիայի մայրաքաղաքում:

1886 թ. անցնելով Ռումինիա, նա հինգ տարի ապրում է հակասուլթանական տրամադրություններով համակված այդ երկրում, միաժամանակ շրջագայում է հայկական մի շարք գաղթօջախներում, Կովկասում, հաղորդակից դառնում Երևանի, Թիֆլիսի, Հյուսիսային Կովկասի հայ համայնքների ազատասիրական ոգորումներին, Արևմտյան Հայաստանի ազատագրման նրանց ծրագրերին: Սակայն կարոտը նրան ձգում էր դեպի հայրենիք, հարազատների, ընկերների գիրկը, կնոջ ու զավակի շիրիմները:

1892-1893 թթ. Անդրանիկը երկու անգամ այցելում է Արևմտյան Հայաստանի լեռնագավառները, լինում է հերոս Սասունում և ըմբոստ Տարոնում: Իրավիճակը որոշակիորեն փոխվում էր. սուլթան Համիդը բաշիբոզուկներից կազմավորել էր իր «Համիդիե» արնախում զորաջոկատները, որոնք սպասում էին անպաշտպան արևմտահայության հետ հաշվեհարդար տեսնելու հրամանի: Բեռլինի կոնգրեսում ձևավորված Հայկական հարցը, բարենորոգումների ծրագրերը սուր ոսկորի պես դեմ էին առել սուլթանի կոկորդին: Նա որոշել էր այդ հարցը վճռել թուրքավարի, ջարդի եղանակով, ինչի համար արդեն կային նպաստավոր պայմաններ:

Մեծ տերությունների պարտավորությունները խոսքից այն կողմ չէին անցնում: Ցարիզմը ևս վերադիրքավորվել էր հայոց ճակատագրի նկատմամբ: Նիկոլայ Երկրորդի պալատականների շրջանում հաճախ էր հնչում Լոբանով-Ռոստովսկու այն հայտարարությունը, թե «Մենք Հայաստանն ուզում ենք առանց հայերի»: Այդ ամենը զգում, տեսնում էր հայ ժողովուրդը և, բնականաբար, նախապատրաստվում էր օրհասական պայքարի:

Նախապատրաստությունն սկսվել էր դեռևս Բեռլինի կոնգրեսից հետո, երբ հայկական պատվիրակությունը գլխավորող Հայոց Հայրիկը, դիվանագիտական մրցամարտերից հիասթափված, սուլթանի նստավայրում առանց երկնչելու հնչեցրեց երկաթյա շերեփի կոչը, դիմեց Սասնո և Զեյթունի քաջերին, բացատրելով, թե միայն բողոքներով, այսինքն՝ թղթե շերեփով, ոչ մի հարց չի լուծվի: Նույն եզրակացությանը հանգեցին Ռաֆֆին ու Պատկանյանը, Արծրունին ու Արփիարյանը, Ծերենցն ու Թոխմախյանը: Սկսվեց երիտասարդությանը գաղափարապես, ապա զենքով զինելու սրբազան գործը: Հիմնվեցին ընդհատակյա հեղափոխական կազմակերպություններ, որոնց օրգանական ծնունդ դարձան հայ քաղաքական կուսակցությունները: Պայքարն ստանում էր համազգային բնույթ: Երկիրը մագնիսի նման ձգում էր կովկասահայ երիտասարդությանը, հատկապես ուսանողներին:

Անշուշտ, ազատագրական պայքարի ողջ ծանրությունն ընկած էր արևմտահայության, մասնավորապես՝ լեռնագավառների երիտասարդության ուսերին: Սասունում, Մուշում, Վասպուրականում, Սե-

բաստիայում, Կիլիկիայում կազմակերպվեցին ինքնապաշտպանական խմբեր: Ծայր առավ *հայդուկային շարժումը,* որն ուղեկցեց հայ ժողովրդին մինչև մեր դարի առաջին երկու տասնամյակը: Զինավառ հայդուկը, հրաժարվելով անձնական ու ընտանեկան կյանքից, վերցնելով հրացանը, փամփշտակալը, ճամփորդական պարկը, բարձրացավ հայոց լեռներ, որոնց ամեն մի ծերպից արյուն էր կաթում:

Հայդուկային շարժման, հերոսական ու անհավասար պայքարի կենտրոնը դարձավ Սասունը, քանզի թուրքերը որոշել էին հիմնահատակ կործանել դարեր շարունակ սուլթանական լուծը չհանդուրժող այդ լեռնագավառը: Այնտեղ կազմակերպվեց Արաբոյի և Աղբյուր Սերոբի հայդուկային խումբը, որի կազմում էին Գևորգ Չաուշը, Գուրգենը, Վարդանը, Փարսադանը, Հրայր Դժոխքը: Պայքարում աչքի ընկան Միհրան Տամատյանը, Մուրադը, Շենիկի տանուտեր Գրգոն, որոնց անունները ոսկե տառերով դրոշմվեցին հայոց պատմության էջերում:

Ազատագրական պայքարի այդ նոր ալիքը Անդրանիկին ձգում էր դեպի Սասուն: Սասնո 1894 թ. ապստամբության ավարտից հետո նա գալիս է Ռուսաստան, լինում Սևաստոպոլում, Յալթայում, ապա մի քանի օրով՝ Անդրկովկասում, նպատակ հետապնդելով նախ՝ զենք տեղափոխել Երկիր, ապա՝ կազմակերպել կամավորական նոր ջոկատներ: 1895 թ. հուլիսին Անդրանիկը 26 հոգուց բաղկացած մի ջոկատով վերադառնում է Թուրքիա և մեծ դժվարություններով հասնում Խնուս: 1895 թ. նա կազմավորում է երկու այլ խումբ, որոնք նետվում են պայքարի հորձանուտ՝ ղեկավարություն ու աջակցություն ստանալով Աղբյուր Սերոբից:

Աղբյուր Սերոբը և Անդրանիկը դառնում են ոչ միայն զենքի, այլև գաղափարի մարտական ընկերներ: Սերոբը բարձր էր գնահատում Անդրանիկի բանիմացությունն ու մարտավարական տակտիկան և հաճախ էր ասում. «Այս տղան մեծ անուն պիտի ունենա»: 1899 թ. Սասնո Գեղաշեն գյուղի բնակիչ Ավոյի ձեռքով թունավորվում է Սերոբ փաշան, որից հետո թուրքերը հարձակվում են նրա վրա և սպանում: Աղբյուր Սերոբի սպանությունից հետո հայդուկային շարժման գլուխն անցավ Անդրանիկը, որը ոչ միայն փոխարինեց մարտական ընկերոջը, այլև վրեժխնդիր եղավ նրան թունավորողներից և սպանողներից: Նրա նոր սխրանքների առհավատչյան դարձավ Մշո Առաքելոց վանքի պաշտպանությունը: Այդտեղ էին պատսպարված ջարդերից մազապուրծ 80 որբերը, որոնց թուրքերը սպառնում էին ոչնչացնել: 1901 թ. նոյեմբերի 1-ին իր 37 հայդուկներով Անդրանիկը ամրանում է վանքում: Նրա հետ էին Չաուշը, Մուրադ Սեբաստացին,

Առաքելը, Սմբատ Բորոյանը, Հակոբ Կոստոյանը, Մակար Սպաղանցին և ուրիշներ:

Թուրքական բազմահազարանոց բանակի հարձակումները, Բարձր Դռան սպառնալիքները չեն կոտրում վանքում պաշարվածների անսասան կամքը: Դիակույտեր էին գոյանում վանքի պատերի տակ: Թշնամին չէր կարողանում քայլ առաջ կատարել: Ի վերջո, թուրքերը հարկադրված բանակցությունների են գնում Անդրանիկի մոտ: Հայդուկների դուրս գալը երկաթյա օղակից հրաշք էր թվում: Առաքելոց վանքի կռիվը նոր ոգևորություն է առաջացնում ջարդերից արնաքամ եղած ողջ արևմտահայության մեջ: Անդրանիկի անունը թնդում է ամենուր:

1903 թ. Սասնո Սիարոնք գյուղում տեղի ունեցած ժողովում ստեղծվում է Ազգային միություն, որին հանձնարարվում է կազմակերպել երկրի պաշտպանությունը, հայդուկային և կամավորական նոր ջոկատներ: Միությունն իր մասնաճյուղերն է ստեղծում Արևմտյան Հայաստանի նահանգներում: Կովկասից Սասուն է հասնում Թորգոմի (Թուման Թումանյանի) խումբը: Հարվածող զորամասերի ղեկավարությունը տրվում է փորձառու հայդուկ Հրայր Դժոխքին: Ստեղծվում է ինքնապաշտպանական զինվորական խորհուրդ՝ Անդրանիկ Օզանյանի գլխավորությամբ:

1904 թ. փետրվարի 5-ին թուրքական 10 հազարանոց բանակը Քեռսե փաշայի հրամանատարությամբ հարձակվում է Սասունի Հունան գյուղի վրա: Թուրքերը այրում են 120 տուն, երեխաներին և կանանց ողջ-ողջ թաղում ձյան մեջ կամ նետում ջրհորները: Տղամարդիկ բարձրանում են լեռները: Փետրվար-մարտ ամիսներին թուրքերը ոտքի են հանում քրդական ցեղապետերին, գրավում դաշտային Սասունը: Անդրանիկի և Սմբատի գլխավորած խմբերը լեռնագավառը պաշտպանում են մինչև մայիսի 14-ը: Պայքարն անհավասար էր, պարտությունը՝ անխուսափելի...

Պարտվում է Սասունը, ոչնչացվում է ժողովրդի մեծ մասը, դատարկվում են երբեմնի շեն ու բարգավաճ գյուղերը: Պարտությունից հետո հայդուկները բաժանվում են երկու խմբի: Մի խումբը, Սպաղանցի Մակարի ղեկավարությամբ, ամրանում է Սասնո բարձրադիր լեռներում և շարունակում է պայքարը, իսկ մյուսը՝ Անդրանիկի և Գևորգ Չաուշի գլխավորությամբ, անցնում է Վասպուրական, ամրանում Աղթամարում, պայքարի նոր ալիք բարձրացնելով Արևմտյան Հայաստանի դաշտային հատվածում: Շուտով թուրքական զորքը շրջապատում է Աղթամարը, հույս ունենալով, որ վերջապես կբռնի Անդրանիկին և կոչնչացնի նրան: Սակայն Անդրանիկը այս անգամ ևս հնարամտությամբ կարողանում է դուրս գալ պաշարումից և

փոքրաթիվ հայդուկներով անցնել Պարսկաստան, ապա Անդրկովկաս: Հերոսական այդ դրվագով փաստորեն եզերվում է Անդրանիկի կյանքի ու գործունեության առաջին հայդուկային պայքարի շրջանը, որը, իհարկե, հիմք դարձավ նրա հետագա լայնահուն գործունեության համար:

1904 թ. հոկտեմբերին հասնելով Թիֆլիս, Անդրանիկը հանդիպումներ է ունենում տեղի հայ մտավորականության և հասարակական գործիչների հետ: Որոշվում է ժամանակավորապես դադարեցնել պայքարը, նախ զինել ժողովրդին, ապա նոր հարմար պահի վերսկսել այն: Անդրանիկը մեկնում է Բուլղարիա, նպատակ հետապնդելով հայ ազատագրական պայքարը զուգորդել բուլղարականին, միասնական ճակատ ստեղծել ընդհանուր թշնամու՝ օսմանյան կայսրության դեմ: Նա շրջագայում է Արևմտյան Եվրոպայում՝ Ֆրանսիայում, Անգլիայում, Շվեյցարիայում, ապա անցնում է Իրան, Եգիպտոս: Ամենուրեք հանգանականություններ է կատարում, հավաքած դրամով զենք ու զինամթերք գնում և առաքում Արևմտյան Հայաստան:

Այդ տարիներին էր, որ պայքարի տակտիկական խնդիրներում հակասություններ են ծագում Անդրանիկի և Հայ հեղափոխական դաշնակցության միջև: 1907 թ. նա իրեն դուրս է համարում այդ կուսակցությունից: Հակասությունները գնալով խորանում են: Արևմտահայ դաշնակցականներից ոմանք համագործակցում էին երիտթուրքերի կառավարության հետ և, թուրքական մեջլիսում երեսփոխանական տեղեր ստանալով, Անդրանիկին առաջարկում են վերադառնալ Կ. Պոլիս, դառնալ մեջլիսի երեսփոխան: Անդրանիկը վճռականորեն դեմ է արտահայտվում նման համագործակցությանը, արևմտահայ դաշնակցականներին մեղադրում է անհեռատեսության մեջ: Նախազգալով իր ժողովրդի գլխին կախված առաջիկա ահավոր վտանգը, Անդրանիկը դաշնակցականներին պատասխանում է, թե ինքը Ադանայի 30 հազար հայերին կոտորած թուրք գործիչների հետ ձեռքով բարևել չի կարող և հայտարարում է. «Մի օր երիտթուրքերը ձեր գլուխը կուտեն ձեր ազգի հետ միասին»:

1912 թ. բռնկվում է Բալկանյան առաջին պատերազմը՝ ընդդեմ թուրք բռնադատիչների: Բուլղարական դրոշի տակ կռվելու են գնում *Գարեգին Նժդեհը և Անդրանիկը:* Նրանք կազմում են համբավավոր Հայկական վաշտը, որն անօրինակ հերոսությամբ մարտնչում է հայ ժողովրդին այդքան վիշտ պատճառած թուրքական ասկյարների դեմ: Անդրանիկը, իրար հետևից ճակատամարտեր շահելով, մարտերից մեկում գերեվարում է թուրք Յավեր փաշային: Այդ առիթով բուլղարական բանակի հրամանատարը դիմում է Անդրանիկին հետևյալ խոսքերով. «Դուք՝ հայերդ, բոլորդ էլ հերոսներ եք, բոլորդ էլ առյուծի նման կռվեցիք»: 1913 թ. հունվարին Հայկական վաշտը հաղթական կռիվներով մտնում է Մարմարայի եվրոպական ափին փռված Ռոդոսթո քաղաքը: Բուլղար ժողովուրդը ծաղկեփնջերով է դիմավորում իր ազատարարներին՝ Գարեգին Նժդեհի և Անդրանիկի գլխավորած հայ կամավորներին: Անդրանիկը ստանում է բուլղարական սպայի կոչում և բազմաթիվ շքանշաններ:

1914 թ. պայթած Առաջին աշխարհամարտից մեծ ակնկալություններ ունենալով, Անդրանիկը տեղափոխվում է Թիֆլիս և նշանակվում կովկասյան բանակի հրամանատարության տակ գործող հայկական կամավորական առաջին ջոկատի հրամանատար, շահում Աշնակի, Սարայի, Մոլլա Հասանի, Բարդուղիմեոսի վանքի, Բաշկալեհի, Հայոց ձորի, Աղթամարի, Կարճկանի, Արճեշի, Բերկրի Կալեհի ճակատամարտերը: Սակայն զորավարի ռազմական արվեստի փառապսակը դարձավ Դիլմանի նշանավոր ճակատամարտը, որն իրավամբ գնահատվեց իբրև կովկասյան ռազմաճակատի ամենակարևոր իրադարձություններից մեկը: Ռուսական բանակի հրամանատարությունը, հավուր պատշաճի գնահատելով հայ կամավորների ցուցաբերած խիզախությունն ու մեծ ծառայությունները, հատկապես Անդրանիկի անձնուրաց պայքարը, նրան պարգևատրում է մարտական մի շարք շքանշաններով: 1918 թ. հունվարին, Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար գեներալ-մայոր Լևանդևսկու միջնորդությամբ, Անդրանիկը նշանակվում է ձևավորվող հայկական նոր գնդի հրամանատար: Շուտով նրան շնորհվում է ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում:

1918 թ. փետրվարի սկզբներին գեներալ-մայոր Անդրանիկն ավարտում է իր գնդի կազմավորման աշխատանքը և պատրաստվում է մեկնել ռազմաճակատ: Փետրվարի 9-ին Թիֆլիսի կայարանում վիրահայ համայնքը, Զորավարի մեծ բարեկամ Հովհ. Թումանյանի գլխավորությամբ, ռազմաճակատ է ուղեկցում շուրջ 1000 հոգուց բաղկացած իր քաջորդիներին: Մթնոլորտը շիկացած էր, պահը՝ հուզիչ, ոգևորող: Ճառերից, բարեմաղթություններից հետո խոսում է մեծ Զորավարը: Նա զինվորների շարքից դուրս է կանչում 14 տարեկան մի տղայի և, կանգնեցնելով զինվորների ուսերի վրա, ասում է. «Երբ այս ցեղը կընա այսպիսի մանուկներ ղրկել դեպի ճակատ, վստահ եղեք, որ մեր ազատությունը մոտ է»: Ապա շարունակում է. «Թուրքերը կսպառնան գալ և մեր ձեռքեն խլել մեր հողը. դիմադրե՛նք և չթողնե՛նք, որ թուրքը մտնե մեր արյունով ոռոգված դաշտերը: Կեցցե՜ հայ բանակը, որ կկռվի իր սրբազան ազատության համար: Կեցցե՜ մեր նահատակությունը: Մենք մենակ ենք, բայց՝ հա-

վատքով ու հույսով լեցուն: Տա Աստված, որ մենք հավատքի մեջ մենակ չմնանք»:

Ճանապարհին կամավորական նոր ջոկատներով համալրվող Անդրանիկի զորամասը փետրվարի 15-ին հասնում է Ալեքսանդրապոլ և Կարս-Սարիղամիշ ուղղությամբ շարժվում է դեպի Բարձր Հայք, հանձնարարություն ունենալով պաշտպանել Էրզրում բերդաքաղաքը: Փետրվարի 18-ին հայոց հինավուրց այդ քաղաքում Անդրանիկի առջև բացվում են ողբերգական տեսարաններ: Քաղաքի պաշտպանական բնագծերն ավերված էին, բնակչությունը՝ հուսահատ ու թևաթափ, տեղի երևելիները զբաղվում էին ներկուսակցական գզվռտոցով:

Անդրանիկը գերմարդկային ճիգեր է գործադրում կարգուկանոնը վերականգնելու և քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու համար: Սակայն դրությունը մնում էր ծանր, քանզի ուժերն անհավասար էին: Հայերի զոհառատ մարտերը վերջանում են անհաջողությամբ: Ընկնում է Կարինը, և դրանով իսկ կարծես ավարտվում են պատերազմական գործողությունները Արևմտյան Հայաստանում:

Հայ զինվորներից մեկի սվինից պատահաբար վերք ստացած, հոգով վիրավոր, կյանքում առաջին անգամ հուսահատություն ապրող Զորավարը հրաժարվում է երկրապահ զորամասի հրամանատարությունից և մշեցի ու սասունցի իր քաջերի ուղեկցությամբ վերադառնում է Թիֆլիս: Օգտվելով նոր ու իրենց համար ստեղծված հարմար իրավիճակից, թուրքերն արշավում են դեպի Արևելյան Հայաստան՝ մտադիր հիմնովին բնաջնջել մեր ժողովրդի այս հատվածը ևս:

Հայոց Ապահովության խորհուրդը երկընտրանք չուներ: 1918 թ. խնդրանքով դիմում է Անդրանիկին, առաջարկելով կազմել մի նոր զորամաս, ստանձնել նրա հրամանատարությունը և կասեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի Շիրակ ու Արարատյան դաշտ: Զորավարը, մոռացության տալով ստացած բազում վիրավորանքները, ստանձնում է այդ պարտականությունը և Ալեքսանդրապոլում սկսում է կազմակերպել նոր զորամաս, որն ստանում է Հայկական առանձին հարվածող զորամաս անունը:

Զորավարը հույս ուներ իր դրոշի տակ մտած 1500 քաջերով մեկ անգամ ևս դաս տալ թուրք ոճրագործներին: Սակայն դրությունը կտրուկ փոխվում է: Ապրիլի 13-ից Կարսի անառիկ բերդ-ամրոցը դավաճանաբար հանձնվում է թուրքական սրի ողորմածությանը: Հայկական կորպուսի զորամասերը խուճապահար նահանջում են դեպի Ալեքսանդրապոլ: Նահանջը կատարյալ բարոյալքում է առաջացնում Գյումրու ազգաբնակչության, ինչպես և Հայկական առանձին հարվածող զորամասի զինվորների շարքերում:

Ապրիլի 1-ին Արփաչայի ափերին անսպասելիորեն լսվում են թուրքական թնդանոթների համազարկերը: Սկսվում է մի ահավոր ու կատաղի ճակատամարտ: Անդրանիկի զորամասը մարտնչում է թուրքական 10 հազարանոց բանակի դեմ ու հերոսաբար հետ է շպրտում թշնամուն: Մարտի թեժ պահին լուր է ստացվում, թե Ալեքսանդրապոլը հանձնվել է թուրքերին: Անդրանիկի զորամասը փաստորեն մնում է մահվան կաթսայում, բայց շարունակում է խիզախորեն դիմադրել առաջ շարժվող թուրքերին:

Դիմագրավումն այլևս անհնարին էր և անհույս: Թուրքերը երեկոյան գրավում են քաղաքը: Սարսափահար հայ բնակչությունը բռնում է գաղթի մահաբեր ուղին: Անդրանիկն ստիպված էր զորամասի բեկորներով պաշտպանել գաղթականությանը և նրանց տեղափոխել Լոռի: Մայիսի 18-ին նա 20 հազար հայ գաղթականներին հասցնում է Ջալալօղլի և ստանձնում է Թիֆլիս տանող երկաթգծի՝ Վրաստանի հետ կապի միակ ուղղու պաշտպանությունը:

1918 թ. հունիսի 4-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկադրված էր Բաթումում ստորագրել հայ ժողովրդի համար բոլորովին անձեռնտու մի պայմանագիր: Կառավարությունը պարտավորվում է ցրել հայկական կամավորական ջոկատները, այդ թվում և Անդրանիկի զորամասը: Անդրանիկը չի ենթարկվում այդ հրամանին և, դուրս գալով Դիլիջանից՝ Ելենովկայի, Նոր Բայազետի, Դարալագյազի ճանապարհով հունիսի 17-ին մտնում է Նախիջևան: Ճանապարհին հայկական գյուղերի բնակիչները սիրով, ադրբեջանցիները՝ վախից դրդված, աղ ու հացով էին դիմավորում Զորավարին: Սակայն որոշ տեղերում դարանակալած թուրքերը սպանում են նրա սիրելի զինվորներից մի քանիսին: Ի պատասխան դրա, Անդրանիկը պատժում է նրանց, միաժամանակ խստագույնս պատվիրելով, որ խաղաղությամբ ընդունող ադրբեջանցիների վրա ոչ մեկը երբեք սուր չբարձրացնի: Ահա այդ դեպքերն են անընդհատ մատի փաթաթան դարձնում ալիևները, բունիաթովները, թուրք կեղծարար «պատմաբանները», հայտարարելով, թե Անդրանիկը Նախիջևանում իբր խաղաղ ադրբեջանցիների է կոտորել: Զորավարը անգեն մարդկանց վրա երբեք սուր չի բարձրացրել, ինչ ազգի էլ որ պատկանել են նրանք...

Նախիջևանում Անդրանիկին հաղորդում են, թե Վասպուրականից տեղահանվում է հայ փախստականների մի հոծ խումբ, որի կյանքը վտանգի տակ է: Զորավարը, առանց հապաղելու, որոշում է շարժվել դեպի Խոյ, որպեսզի այնտեղից կարողանա օգնության ձեռք մեկնել գաղթականներին և ապահովել նրանց անվտանգ տեղահանությունը դեպի Անդրկովկաս: Սակայն թուրքերը քնած չէին: Նրանք գերակշիռ

ուժեր են նետում Անդրանիկի զորամասի դեմ և փակում Արևմտյան Հայաստան մտնելու բոլոր մայրուղիները:

Անդրանիկը ստիպված էր նորից վերադառնալ Նախիջևան: Պատմական Հայաստանի անբաժան մասը կազմող, հազարամյակների հնություն ունեցող հայկական այդ քաղաքի բնակչության գերակշռող մասը հայեր էին, որոնց ձեռքում էին կենտրոնացված տնտեսության հիմնական գարկերակները: Հենվելով քաղաքի և գավառի հայ ազգաբնակչության վրա, Անդրանիկը Նախիջևանում բարձրացնում է խորհրդային դրոշ և երկրամասը հայտարարում Խորհրդային Ռուսաստանի անբաժան մաս: Հայտնի է Ստ. Շահումյանին Անդրանիկի տված հեռագիրը, որով նա իր զորամասը դնում էր Ռուսաստանի կենտրոնական կառավարության տրամադրության տակ:

Գոտեպնդված Ստ. Շահումյանի պատասխանից, Անդրանիկը որոշում է մտնել Լեռնային Ղարաբաղ, այնտեղից գնալ և միանալ Բաքվի Կոմունայի զորքերին և շարունակել պայքարը թուրք բորենիների ու նրանց հոգեզավակ մուսաֆաթականների դեմ: Կանխատեսելով հայոց երկու մեծությունների գլխավորած զորամասերի միացման հնարավորությունները, դեռևս 1918 թ. հունիսին ռազմական մինիստր Էնվեր փաշան թուրքական բանակին հրամայել էր. «Փակեք բոլոր ճանապարհները Անդրանիկի առջև, որ նա իր զորամասով չկարողանա օգնության հասնել Ստ. Շահումյանին: Եթե այդ երկու ուժերը միանան, այլևս անհնարին կլինի Բաքվի գրավումը»:

Թուրք մուսաֆաթականների, վրաց մենշևիկների դավաճանությամբ, նրանց թիկունքում վարագուրված օտարերկրացի տերերի հարվածներից ընկավ Բաքվի Կոմունան: Ողբերգական ճակատագիր վիճակվեց Ստ. Շահումյանին և նրա զինակիցներին: Չափազանց ծանրացավ նաև Անդրանիկի ու նրա զորամասի վիճակը: Զորավարը մտադրություն ուներ ամրանալ Արցախում, սակայն անգլիական ռազմական միսիայի կտրուկ պահանջով նա հարկադրված թողնում է Լեռնային Ղարաբաղը և վերադառնում Զանգեզուր, Գարեգին Նժդեհի հետ ամրապնդում պաշտպանության բնագծերը: Անդրանիկն այդտեղ մնում է շուրջ 10 ամիս: Նա հուսախաբված էր, հիասթափված ոչ միայն օտարներից, այլև մերձավորներից, յուրայիններից: Այլևս չուներ ռոմանտիկական այն հույսը, թե քրիստոնյա տերությունների օգնությամբ կարելի է փրկել պատմության բեմահարթակից վերանալու վտանգի առջև կանգնած հայ ժողովրդին: Կյանքի դառն փորձով իմաստնացած Անդրանիկը հանգում է այն եզրակացության, թե Հայաստանը ողջակիզվեց ոչ միայն Թուրքիայի, այլև նրա դաշնակից կայզերական Գերմանիայի, դիվանագիտական սիրախաղերի վարպետ բրիտանական ծովագայլի զոհասեղանին: Անդրանիկն այդ օրերին կտրուկ դիմադարձվում է եվրոպական կողմնորոշումից և վերջին հույսը կապում ժողովրդի ինքնապաշտպանական պայքարի հետ...

Գնալով խորանում էին Զորավարի և Հայաստանի Հանրապետության ղեկավարության միջև գոյացած հակասությունները: Շուտով գրեթե անջրպետվում են նրանց հարաբերությունները: 1919 թ. մարտ-ապրիլ ամիսներին Անդրանիկը կանգնած էր համլետյան լինել-չլինելու երկընտրանքի առջև:

Տատանումները, հոգեկան տվայտանքները երկար չեն տևում: Վերջապես կայացվում է որոշումը: 1919 թ. ապրիլին, Զանգեզուրը թողնելով Նժդեհի պաշտպանությանը, Անդրանիկն իր զորամասով գալիս է Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը, ցրում է զորամասը, ունեցվածքը հանձնում Հայոց Հայրապետին և մեկընդմիշտ հեռանում հայրենիքից...

Հայաստանի խորհրդայնացման լուրը Անդրանիկն առնում է օտար ափերում: Զորավարը մեծ խանդավառությամբ է ընդունում պատմական բախտորոշ այդ իրադարձությունը: Նա իսկույն լծվում է գործի, կազմակերպում է դրամական հանգանակություն, ձեռք բերում մեծ քանակությամբ դեղանյութեր, հագուստ, նույնիսկ ուտեստ և ուղարկում է Խորհրդային Հայաստանի բնակչությանը: Ազգանպաստ իր այդ ծրագրի իրականացման նպատակով երկրե-երկիր դեգերող, արդեն տարիքն առած Զորավարը, ի վերջո, 1922 թ. հաստատվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Ֆրեզնո քաղաքում, որտեղից Հայաստանին նվեր է ուղարկում իր ոսկեդաստակ սուրը, ասելով՝ «Ես իմ սուրը պահ եմ տալիս այն իշխանությանը, որն ապահովեց իմ փոքր ժողովրդի հանգիստը»:

1927 թ. օգոստոսի 31-ին Ֆրեզնոյի իր առանձնատանը, գրեթե միայնության մեջ, ընդամենը 62 տարեկան հասակում դադարում է բաբախել Հայոց Զորավարի մեծ ու հայրենակարոտ սիրտը: Անդրանիկը թաղվում է քաղաքի հայկական Արարատյան գերեզմանատանը իրեն ոչ արժանի շուքով: Սակայն 1928 թ. զինակիցները Անդրանիկի աճյունը տեղափոխում են Փարիզ, արդեն մեծ շուքով ամփոփում Պեր Լաշեզ գերեզմանատանը:

Ամենևին չնսեմացնելով հայ ազատամարտին մասնակցած մյուս հերոսների գործն ու անունը, արդարությունը, սակայն, պահանջում է ընդգծել, որ բոլորի մեջ առանձնանում է Զորավար Անդրանիկն իր քաջությամբ, հայրենասիրությամբ, դիրքորոշման անսխալականությամբ, թողած դասերով, պատվիրանների արդիական հնչե-

ղությամբ: Ժողովուրդը նրան ընտրեց Առաջին, իսկ ժողովուրդը երբեք չի սխալվում, և նրա կարծիքն է արտահայտել հայոց գուսանը Անդրանիկին համարելով «Հայրենիքի տեր ու պաշտպան»[1]:

[1] Սույն հոդվածը տպագրել ենք «Գրական թերթի» 1990 թ. մարտի 2-ի համարում: Այն նվիրված էր Զորավար Անդրանիկի ծննդյան 125-ամյակին:

Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարանի դարադարձը[1]

ԱՅՍՕՐ երախտագետ հայ ժողովուրդը, սեփական հարկի տակ հյուրընկալելով կեդրոնականցիներին, սփյուռքահայ պատվիրակներին, մեծ շուքով ու հանդիսավորությամբ նշում է իր մշակույթի անկրկնելի օջախներից մեկի՝ Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարանի դարադարձը, վարժարան, որը հարյուրամյա բեղուն գործունեությամբ անջնջելի էջեր գրեց բազմադարյան հայ դպրության ոսկետառ մատյաններում, կրթեց ու դաստիարակեց բազում սերունդներ՝ արժանի մեծարանքի: Կեդրոնականն աստիճանաբար հզորացավ, նրա շրջանավարտ սաները դուրս եկան Կոստանդնուպոլսի անձուկ շրջապարիսպներից և, հանիրավի մեր ժողովրդին բաժին ընկած պատմական դաժան ճակատագրի բերումով, սփռվեցին հողագնդով մեկ՝ յուրաքանչյուրը յուրովի սատարելով ոչ միայն համազգային, այլև համամարդկային ու համաշխարհային քաղաքակրթության առաջընթացին: Միջնակարգ, ապա բարձրագույն, ժամանակի իմաստով, բարձրորակ այդ դպրատան սաների շռնդալից ձայնը ամենայն վճռականությամբ հնչեց եվրոպական տերությունների խոշոր ոստաններում, կտրեց անցավ ամերիկյան ցամաքամասը, հայապահպանության, ազգապաշտպանության զորավոր բջիջներ ձևավորեց Միացյալ Նահանգներում ու Կանադայում, ջանաց հայեցի բնույթ հաղորդել ուծացման վտանգի տակ դրված սփյուռքահայ մշակույթին:

Սակայն Կեդրոնականի ու կեդրոնականցիների հայրենիքը իրավամբ Հայաստանն է, մայր ժողովուրդը, որն իր 65-ամյա վերածնությամբ, որպես փյունիկ, վեր է խոյացել մոխիրների միջից, դարձել տունդարձի ճանապարհ բռնած հայկական բեկորների վերջնական հանգրվանավայրը, գնահատելով և վերագնահատելով մնայուն այն

[1] Հոբելյանական զեկուցում՝ կարդացված Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի ընդլայնված նիստում՝ 1986 թ. սեպտեմբերի 5-ին:

արժեքները, որոնք ստեղծվել են Հայաշխարհից դուրս, սակայն հայորդիների հմուտ ձեռքերով, երբեմն էլ հանճարի փայլատակումներով: Եվ պատահական չէ, որ այդ, ինչպես նաև դրսաշխարհում հարատևած բոլոր հայկական հաստատությունների, անվանի հայ գրողների, գիտնականների, արվեստագետների հոբելյանական հանդեսները կազմակերպվում են Հայաստանի մայրաքաղաքում Երևանում, որը կարճ պատմաշրջանում դարձել է համայն հայության մայրաքաղաքը, ժամանակակից գիտության ու գրականության զորեղ օջախներից մեկը, սիրասուն մայրը, որն արդարամտորեն մեծարանքի խոսքեր է բաշխում իր աստանդական զավակներին, որտեղ էլ որ խարսխված լինեն նրանք:

Այսօրվա հոբելյարը Կեդրոնական վարժարանը, հարյուր տարում կերտել է հարուստ և ուսանելի պատմություն, նրա սաները բեղուն ու անկրկնելի գործունեությամբ փայլել են բազմաթիվ բնագավառներում, սակայն ցավոք ու զարմանալիորեն դեռևս չեն գրել իրենց սնուցանող հաստատության պատմությունը, չեն ձևակերպել մենագրական կամ կոլեկտիվ այն աշխատությունները, որոնք պիտի անձեռակերտ հուշարձանը դառնային նման եզակի դպրոցներից մեկի: Կեդրոնականի պատմության փաստական ատաղձ կազմող բազում ու արժեքավոր վավերաթղթերը տակավին ընդարմացված են աշխարհի ամենատարբեր գրապահոցներում: Փոշեծածկ տեղեկագրերը դուրս են մնացել բանասերների, մանկավարժների, հատկապես հմուտ պատմաբանների սևեռուն ուշադրությունից: Կեդրոնականն իր արածն արել է և շարունակում է անել, սակայն կեդրոնականցիները, առավել ևս հայոց պատմաբանները, պարտք են այդ հաստատությանը գրելու խնդրին արժանի հետազոտություններ, պատշաճը հատուցելու այդ սերնդի խանդավառ ու ռոմանտիկ հոգիներին, այսօրվա ու ապագա հայորդիներին հաղորդելու այն գործերի մասին, որոնք իրավամբ դիցաբանական պիտի երևան:

Հետևաբար, նման հաստատության հարյուրամյա չգրված պատմությունը ներկայացնել զեկուցումով, սահմանված ժամանակի շրջանակներում, հասկանալի է, որ հնարավոր չէ, ավելին, անհնարին է խոսել բոլոր եղելությունների մասին, ներկայացնել բոլոր կեդրոնականցիներին ըստ արժանվույն գնահատելով ամենը: Ուստի, փորձենք հոբելյարին արժանի մակարդակով ներկայացնել այդ բազմաճյուղ պրոբլեմի մի քանի հարցերը միայն:

Արդ, Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանը նախ հայ ժողովրդի մտավոր ու քաղաքական զարգացման օրինաչափ ընթացքի արգասիքն էր հիմնադրված անցյալ դարի 80-ականների երկրորդ կեսին, սակայն ամփոփել էր ու սեփականացրել այն հարուստ ավանդույթները, որոնք ստեղծել էր հայ ժողովուրդը վերջին հարյուրամյակին, հատկապես անցյալ դարի երրորդ քառորդում:

Դարեր առաջ պետականազրկված Հայաստանը շուրջ կես հազարամյակ առաջ երկփեղկվեց Արևելքի աշխարհակալ զույգ բռնապետությունների շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի միջև: Չորս երկարածիգ, անտանելի հարյուրամյակներում հայ ժողովուրդն իր անընդհատ տկարացող ուսերի վրա տարավ օտար նվաճողների անհերևակայելի հարվածները, ենթարկվեց սոցիալ-քաղաքական նախադեպը չունեցող հարստահարությունների ու ճնշումների, կարծես կորցնելով սեփական ուժերով ազատագրվելու, ինքնուրույնությունը վերստանալու վաղեմի փայփայած հույսերը, բռնեց դիվանագիտական մուրիկության գաղտնուղիները: Աշխարհիկ թե կրոնական, վեղարավոր թե անվեղար հայ բանագնացները դոփեցին քրիստոնյա մեծ թե փոքր տերությունների արքունի դարպասները, ի վերջո, հուսախաբվելով եվրոպական արևմուտքից, խարիսխ գցեցին հյուսիսում բարձրացող հզոր տերության Ռուսաստանի զույգ մայրաքաղաքներում, անվերապահորեն որդեգրելով ռուսական կողմնորոշումը, նրա զենքի զորությամբ ազատագրեցին Հայաստանի արևելյան հատվածը:

Արևմտահայությանը բոլորովին այլ ճակատագիր բաժին ընկավ: Արևմտյան Հայաստանը շարունակեց հոշոտվել սուլթանական տերության դաժան բռնապետության երկաթյա մագիլների մեջ, սակայն, բնավ չհուսահատվելով, մաքառեց, պայքարեց, պայքարեց զենքով ու գրչով, ձգտեց վերածնության, ազգային ինքնորոշման, Արևելյան Հայաստանին միավորման կամ հզոր Ռուսաստանի հովանու ներքո սեփական պետականության վերականգնմանը:

Արևմտահայության մտավոր զարթոնքի, ազգային գաղափարաբանության ձևավորման, ազատագրական ոգորումների ծայրաթելերը գնում էին դեպի Վենետիկ ու Վիեննա, Փարիզ ու Պադուա: Մխիթարյանների հունդած սերմերը արագորեն ծլարձակում էին հայկական ամենախոշոր գաղթօջախներում Կ. Պոլսում ու Զմյուռնիայում, որտեղ բնակվում էին շուրջ 300 հազար հայեր, գործում էին հայկական տպարաններ, հրատարակվում բազմաթիվ պարբերականներ, ծավալվում էր սահմանադրական, ապա լուսավորական ու ազատագրական շարժումը: Ծովահայաց ու առափնյա այդ գաղթաշխարհում արագորեն շիկանում էր մթնոլորտը, հեղափոխականանում էր միջավայրը:

Ծավալվեց զարթոնքի շարժումը, որի անդրանիկ սերունդը կարճ ժամանակամիջոցում ըմբռնեց, որ ինչպես թուրքահպատակ ազատազուրկ մյուս ազգերին, առավել ևս արևմտահայությանը, անհրաժեշտ են լուսավորություն, մտավոր ու քաղաքական հասունացում, դպրոց ու թերթ, նախակրթարան ու վարժարան, լիցեյ ու համալսարան, ազգային ազատատենչ գրականություն ու արվեստ: Այդ ծրագրերը հետևողականորեն իրողության էին վերածվում սուլթանի նստավայրում, որտեղ շարունակաբար գաղթում ու պանդխտում էին Հայաստանի

գավառներից հազարավոր հայեր գյուղացիներ, արհեստավորներ, վաճառականներ, հոգևորականներ, նույնիսկ կանայք ու անչափահասներ: Թուրքիայի մայրաքաղաքն այդ տասնամյակներին վերածվում էր ողջ Արևմտյան Հայաստանի խճանկարի, որի ամեն մի քաղաքամասում իրենց մասն ու բաժինն ունեին վանեցիներն ու ադանացիները, սասունցիներն ու կարնեցիները:

Բոսֆորի ափաբնակները, անընդհատ համալիր ստանալով Հայաստանից, իրար էին միահյուսում հինն ու նորը, ուրույն որակ էին ձևավորում, որի լուսավոր ներկայացուցիչները հիմնում էին մշակութային ու բազմաթիվ ընկերություններ, ջանում նախ կրթել գաղթականներին, նրանց նախապատրաստել առաջիկա առաքելությունների: Անցյալ դարի առաջին կեսին Պոլիսը և ազդում էր, և ազդվում, և սովորեցնում էր, և սովորում: Վիճակը փոխվեց, սակայն, հաջորդ տասնամյակներին:

50-60-ականների կրթական-լուսավորական շարժումը, Բեռլինի վեհաժողովից առաջ, առավել ևս նրանից հետո, նոր ձև ու նոր բովանդակություն ստացավ: Միջազգային դիվանագիտության խարդավանքներից դաս առած պոլսահայ մտավորականությունը որոշեց հետևել բալկանյան ազգերի հերոսացման օրինակին, թղթե շերեփը փոխարինել զինական լայնահուն ազատագրական հերոսամարտերով: Մեծ վասպուրականցու Հայրիկի Գում-Գափու մայր եկեղեցու գավթում հնչեցրած երկաթյա շերեփի զնգոցի ձայնը դուրս եկավ մայրաքաղաքի շրջապարիսպներից և կայծակի արագությամբ տարածվեց բոլոր այն անկյուններում, որտեղ քիչ թե շատ հայկական համայնքներ կային:

Հայկական հարցն ընդարմացվեց Բիկոնսֆիլդի խունացած դիմաստվերի առջև, ռուսական դիվանագիտությունը պարտություն կրեց, Հայաստանը ողջակիզվեց Անգլիայի զոհասեղանի վրա թուրքական ձեռքերով: 80-ականների արևմտահայությանը մնում էր կոթնել սեփական ուժերին, ժողովրդի զինական պայքարին առավել կազմակերպված բնույթ տալ: Նորից սկսվեց լուսավորական շարժումից:

Զարթոնքի լուսավոր շարժումը, որը մինչ այդ ծավալվում էր առավել քան տարերայնորեն, այժմ դրվեց համազգային շրջանակների մեջ, դիտվեց իբրև ժողովրդին կրթելու, ապագա պայքարի առաջամարտիկներ պատրաստելու առաջնային ու զորեղ միջոց: Այդ շարժման ընթացքում «երազներ կծնեին սրտերու մեջ, հին ու նոր չկար, ամենքը մասնակից էին: Խանդի ու եռանդի, գործունեության, միության ու անձնվիրության շրջան մը կսկսվեր: Վերածնության ամենեն ավելի երազուն ու եռանդուն դերակատարներ կհանդիսանային Կոստանդնուպոլսի երիտասարդները, որոնք և ծնունդ կտային Հայոց միացյալ ընկերությանը»:

1880 թ. հունիսի 1-ին Կոստանդնուպոլսում հիմնադրված ու գավառներում իրենց գործունեությունը ծավալած մշակութային երեք ընկերությունները, Ն. Վարժապետյանի օրհնությամբ ու համաձայնությամբ, միավորվում են, ծնունդ տալիս «Միացյալ ընկերությունք հայոց» վերտառությամբ մի մարմնի, որն սկզբից ևեթ ունենալով հսկայական դրամագլուխ, կարողացավ գավառներում կրթական հիմնարար օջախներ, լսարաններ, ընթերցասրահներ, գրադարաններ բացել: Միացյալը կրթում էր գավառահայությանը: Երիտասարդությունն, ուսումնասիրելով ազգային պատմությունը, հայոց լեզուն, գրականությունը, խանդավառվում էր անցյալի հերոսների օրինակով և նախապատրաստվում ապագա գոտեմարտերի: Միացյալը, նույն ամիսներին Կոստանդնուպոլսում հիմնադրված «Սովելոց կեդրոնական հանձնաժողովը» Հայաստանի գավառները կապում էին իրար, երկիրը կապում մայրաքաղաքի, Թիֆլիսն ու արևելահայությանը արևմտահայության հետ:

Թղթակցություններ, նամակներ, նվիրատվության կարգով ուղարկված գրքեր, կենդանի սուրհանդակներ, ահա այն միջոցները, որոնք արևելահայությանը կամրջում էին արևմտահայությանը, գաղութահայությանը՝ բուն երկրի հետ: Միացյալն արտաքուստ պարզ կրթական ընկերություն էր, սակայն, ըստ էության, առանց հեղափոխական բառն արտասանելու, Ա. Արփիարյանի դիպուկ բնութագրությամբ, պատրաստեց հեղափոխական սերունդ, սփռեց գաղափարներ, որոնք աստիճանաբար հասունացնելով երիտասարդությանը, սպառնում էին համիդական բռնապետությանը: Միացյալի ուսուցիչները, տեսուչներն ու սաները զինվորագրվեցին գաղտնի, հեղափոխական ընդհատակյա խմբակներին, գործեցին Հայաստանում, զինեցին ժողովրդին, զինեցին և զենքով, և ազատագրական գաղափարներով:

Մտավոր սննդին, բարոյական քաջալերանքին գալիս էր միանալու փայլող երկաթը, տարածուն էր դառնում վառոդի հոտը, կազմակերպվում էր ազգային բանակը, որը խնդիր պիտի ունենար պաշտպանելու հայոց դատը, առևանգման ենթակա հայ կնոջ պատիվը, դիմագրավելու սուլթանի ջարդարարական այն ծրագրերին, որոնք ստորաբար նյութվում էին, հյուսվում Եըլդըզ Քյոշքում: Գնալով ամրանում էր կապը մտավորականության և ժողովրդական զանգվածների միջև, գնալով շարժումը համազգային էր դառնում, փոքրացնում հակասությունները հայ հասարակության տարբեր շերտերի միջև, քանզի համիդեական սուրն ու հրացանազարկը տարբերություն չէին դնում հարուստի ու աղքատի, եկեղեցականի ու աշխարհականի, ծերերի ու երիտասարդների միջև, ջնջում էին բոլորին, բոլորին նայում էին կասկածանքով: Բռնությունը ծնում էր ազատագրական պայքար, ոչնչացման վտանգն ստեղծում էր ինքնապաշտպանության զորեղ գոյամարտեր: Հետևաբար, սխալվում են այն թուրք ռեակցիոն պատմաբանները, արևմուտքի կեղծարարները, որոնց կարծիքով ազատագրական շարժումներն էին պատճառը սուլթանի ջարդարարական, ցեղասպանության քաղաքականության: Ո՛չ, դրանք պատճառ չէին, այլ՝ հետևանք: Հայ ընտրանին,

ժողովուրդը, զգալով նյութվող դավադրությունը, ջանում էին ձեռարձակ չոչնչանալ, այլ դիմագրավել, պաշտպանվել, հույսեր ունենալով փրկվելու ապագա սպանդից, որի ծրագրերն անամոթաբար հրապարակվում էին դեռևս 1869 թվականից սկսած մեծ վեզիրների, հատկապես հայատյաց և մարդատյաց Քյամիլ փաշայի բերանով:

Հետևաբար դիմադրական, համազգային շարժումը 80-ականներին առավել կազմակերպված բնույթ էր ստանում, Կոստանդնուպոլսի հայ ընտրանուն մտահոգելով Արևմտյան Հայաստանի ճակատագրով, որը հիմնում էր մշակութային նոր միություններ, գավառներին ուսուցիչներ, գաղափարական քարոզիչներ հասցնող բարձրորակ դպրոցներ, որոնց փառապսակը կազմեց Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարանը այսօրվա հարյուրամյա հոբելյարը:

Կեդրոնական վարժարանը հիմնադրվեց 1886 թ. սեպտեմբերի 1-ին, կարճ ժամանակահատվածում դարձավ հայ մշակույթի ու ազատագրական մտքի այն զորեղ վառարանը, որտեղից բարձրացող ամենափոքր *կայծերն իսկ* արծվի լայնաթև թռչիքով տարածվում էին լուսակարոտ Հայաստանի մոտավոր ու հեռավոր անկյուններում, ժողովրդին նախապատրաստում հերոսացման, անուղղակիորեն ծնունդ տալով լեռնածերպերում թառած զինավառ հայդուկներին, դպրոցական համեստ լսարաններում նստած պատանիների մատաղ հոգիներում սերմանելով գաղափարներ, որոնք հետագայում վերածվելու էին ռոմանտիկ թե իրապաշտ, բայց և այնպես առավել լայնախոհ ծրագրերի, նրան առաջնորդելով ազգային ինքնապաշտպանության, հատկապես համամարդկային գաղափաներով տոգորված գրական ու արվեստագիտական գլուխգործոցների ստեղծման: Զարմանալին ու հրաշալին այն չէր, որ ստեղծագործելու մեջ ամենակարող հայ ժողովրդի տաղանդավոր զավակներն արարում էին նման գործեր, զարմանալին ու անհավատալին այն էր, որ բռնապետական այդ երկրի մայրաքաղաքում, կասկածամիտ, դաժան, արյունարբու սուլթանի արգոսի նման հետևող մշտարթուն աչքերի առջև էր ստեղծվում այդ ամենը, ստեղծվում էր անաղմուկ, հանգիստ, դպրոցական արտաքին տպավորությամբ:

Կեդրոնական վարժարանի հիմնադրումը, սակայն, ուներ իր հարուստ նախապատմությունը, որը ցայսօր, թեկուզև կեդրոնականցիների կողմից վավերականորեն չի պարզվել, նույնիսկ ասուլիսների համար նյութ է ծառայել, առիթ տալով տաք բանավեճերի, տևական մտաբախումների:

Արդ, անդրադառնանք վարժարանի հիմնադրման պատմության որոշ մանրամասներին, փորձենք փաստարկել մեր եզրահանգումները:

Կեդրոնականի ստեղծման մտահղացման ծայրաթելերը մեզ տանում են դեպի «փոթորկի ու գրոհի» 60-ամյակի նախադուռը, երբ Պոլսում հրատարակվող «Ժամանակ» հանդեսի խմբագիր, ապագայում

Բեռլին մեկնող հայկական պատվիրակության անդամ, իր սաստող ելույթներով պատրիարքներին ու Ազգային ժողովի պահպանողական երեսփոխաններին սարսափ ազդող Ստեփան-Պերճ Փափազյանը Ղալաթիայում հիմնադրեց *Ամենափրկչյան վարժարանը:* 1861 թվականն էր այդ: Թուրք-եվրոպական հարաբերությունները կամրջող պոլսահայ գաղութն ապրում էր սահմանադրական մեղրամիս, օրորվելով երբևէ ինքնորոշվելու կամ ազգային պետականության վերականգնման ռոմանտիկ հույսերով: Վարժարանի տեսուչն ու հայոց լեզվի բանիմաց ուսուցիչը աշակերտների թիվը հասցրեց 78-ի, ընտրությունը կատարեց գավառներից եկած պանդուխտներից ու նրանց զավակներից, այնուհետև հիմնավոր բացատրականով դիմեց Պողոս պատրիարքին խնդրելով նրան նյութապես ու բարոյապես զորավիգ կանգնել նորաբաց այդ դպրոցին, որպեսզի ինքը կարողանա Արևմտյան Հայաստանի համար ուսուցիչներ պատրաստել:

Ամենափրկչյան վարժարանը, որոշ ընդհատումներով, շարունակեց իր բեղմնավոր գործունեությունը մինչև 1874 թվականը, այսինքն, մինչև Ներսես Վարժապետյանի Հայոց պատրիարք ընտրվելը: Նույն տարում վարժարանի նախկին շենքը վնասվում է, դասավանդումը ժամանակավորապես դադարեցվում: 1876 թվականին ավարտվում է վարժարանի նոր շենքի կառուցումը, որի պատերի մեջ իր աշխատանքները շարունակում է Ամենափրկչյանը, սակայն Պատրիարքի նյութական օգնությամբ, բարոյական քաջալերանքներով:

Ն. Վարժապետյանը և Ստ. Փափազյանը 1876 թվականից ծրագրեցին Պոլսում հայկական առավել բարձրորակ հաստատություն ստեղծել, սակայն ժամանակն ու հանգամանքները հետաձգեցին այդ մտահղացման իրականացումը: Հասունացող բալկանյան ճգնաժամը, վերահաս ռուս-թուրքական պատերազմը, ապա Սան Ստեֆանոն ու Բեռլինը, հայկական հարցից զատ, ամեն ինչ մոռացության էին տվել: Գրեթե ապարդյուն ավարտվեց այդ ամենը հայ ժողովրդի համար, Պատրիարքն էլ սրբագրեց իր նախկին տեսակետները և կրկին անդրադարձավ նոր, բարձրորակ մասնագետներ պատրաստող, գավառներին ուսուցիչներ հասցնող հաստատության հիմնադրման նախկին մտահղացման իրողության վերածելուն:

1882 թ. դեկտեմբերի 16-ին Հայոց պատրիարքարանի հնացած ու անշուք դահլիճը լեցուն էր մայրաքաղաքի հայ երևելիներով, գրողներով, խմբագիրներով, մշակութային գործիչներով, Ազգային ժողովի երեսփոխաններով: Օրվա կարգախոսը Ն. Վարժապետյանն էր, որն առողջությունը կորցրած, սուլթանի խարդավանքներին դիմակայելուց ծանձրացած, վաղահաս մահն աչքն առած հայրենասիրական, ազգափրկչական ճառ արտասանեց, ապա, դիմելով հավաքույթի մասնակիցներին, նրանց կոչ արեց հանգանակություն կազմակերպել, հավաքված դրամով վերականգնել պատրիարքի նստավայրը և ապա

հիմնել մի նոր վարժարան, որը բարձրագույն դպրոցի մակարդակ ունենա: Կրկին հայոց հարցով հետաքրքրվող եվրոպական մեծերի սին խոստումները նոր ոգևորություններ էին առաջ բերել հայկական շրջաններում, և այդ ոգևորիչ մթնոլորտում առաջին իսկ օրը հանգանակվեց 145 ոսկի. ժամանակի իմաստով մի պատկառելի գումար, որը գնալով մեծանում էր և դրվում պատրիարքի տնօրինության տակ: Դժբախտաբար, Վարժապետյանը քիչ անց գամվեց մահվան անկողնուն և կյանքի վերջին օրերին պատգամեց հավաքված դրամով հիմնադրել վարժարանը, իսկ պատրիարքարանի շենքի վերանորոգման գործը թողնել ապագային:

1885 թ. ձևավորվեց մի ընկերություն, որը խնդիր ուներ իրողության վերածել արդեն կտակի ձև ընդունած պատրիարքի հանձնարարականները: Ընկերությունը կոչվեց *Վարժապետյան:* Նրա հիմնադիր անդամներն էին Ա. Ունճյանը, Ա. Ջունդը, Մ. Եսայանը, Հ. Նորատունկյանը, Ա. Կյուլպենկյանը Տ. Կյումուշկերյանը: Փոքր-ինչ նախապատրաստական աշխատանքից հետո որոշվում է Ղալաթիայում հիմնադրել վարժարան և նրան տալ *Վարժապետյան* անվանում: Կազմվում է տնտեսական մասնախումբ՝ Ա. Ունճյանի, Ա. Հաճյանի, Ս. Կյուլպենկյանի, Տ. Բարաղամյանի մասնակցությամբ: Ուսումնական խորհուրդը, որի ամենագործունյա և ճանաչում ստացած անդամն էր Մինաս Չերազը, համահավաքում էր Մ. Եսայանին, Հ. Նորատունկյանին, Կ. Սվաճյանին, Յ. Եուսուֆյանին:

1885 թ. դեկտեմբերի 25-ին խնամակալությունը հավաքվում է իր անդրանիկ նիստին, որոշում է արագացնել նախապատրաստական աշխատանքների ավարտի պրոցեսը: Մայիսի 6-ին, Ազգային ժողովի որոշմամբ ու օգնությամբ, սկսվում է ապագա վարժարանի նախակրթարանի և ժողովարանի շենքի շինությունը: Այն ավարտվում է 1886 թ. օգոստոսին: Սեպտեմբերի 1-ին, մեծ հանդիսավորության պայմաններում, վարժարանն իր դռները բացում է ուսուցիչների և գավառներից եկած, հիմնականում ընկեցիկ, 64 աշակերտների առջև և ստանում *Կեդրոնական վարժարան* անվանումը:

Կեդրոնական վարժարանի վարիչներն անմիջապես հրապարակեցին իրենց նպատակները, գրավոր ներկայացրին հիմնարկության մանիֆեստացիոն փաստաթուղթը և կարծես մինչև վերջ էլ հավատարիմ մնացին նրա պարունակած սկզբունքներին: Նրանք ազդարարում էին, թե նորաբաց այդ դպրատունը հիմնելով, նպատակ ունեն ստեղծել մի *կենտրոն*, որը կարողանա ժողովրդին տալ ոչ միայն կրթություն, այլև նրան ծանոթացնի ժամանակի գիտության հիմնարար ուղղություններին, նրա մեջ մշակի գեղարվեստի նկատմամբ ճաշակ, արմատավորի գրականության և տոհմային մշակույթի տարրերը: «Ազգային Կեդրոնական վարժարանը պիտի լինի այնպիսի հաստատություն մը, որ ոչ միայն համապատասխանե մայրաքաղաքիս մեջ հաստատյալ բազ-

Կոստանդնուպոլիսը նեղուցների կողմից

Տեսարան Ստամբուլից

մաթիվ վարժարանաց, այլ նաև իրեն եզական դիրքովն, ուղղությամբն և հայ ուսանողին համար բացառիկ առավելություններով՝ տա այն արդյունքները, զորս անկարելի է հուսալ օտար կրթարանաց մեջ»:

Հայոց լեզվի և գրականության ուսուցումը կազմում էր նրա հիմքը, ազգին ուսուցիչներ և գրական մշակներ հասցնելը դառնում էր նրա նշանաբանը, գավառներից կրթության ընդունելն ու ավարտելուց հետո իրենց սաներին գավառներ առաքելը՝ խնամակալության հիմնական ձգտումը: Ժամանակի խստապահանջ մամուլը Կեդրոնականի բացումը դիտարկեց իբրև «Ազգային առաջնակարգ պետքի մը գոհացում տալու սահմանված կրթական հարկ մը»: Իր գոյության մեկ հարյուրամյակի անցած փշոտ ճանապարհը ապացույցն է այդ նպատակների իրողության վերածվելու:

Կեդրոնականի խնամակալությունը, հատկապես ուսումնական խորհուրդը հրապարակեց վարժարանի գործողության միասնական ծրագրերը, որոնք հաստատվեցին Ազգային քաղաքական ժողովի կողմից և ժամանակի ընթացքում գնալով կատարելագործվեցին: Ըստ այդ ծրագրերի, վարժարանն ուներ երկու աստիճան: Առաջին աստիճանի ունկնդիրների ուսման տևողությունը երեք տարի էր, որի ընթացքում սովորում էին *հայերեն*-գրաբար, աշխարհաբար, *օսմաներեն*-արաբերենի ու պարսկերենի քերականություն, օսմաներեն շարադրություն, թարգմանություն ֆրանսերենից թուրքերեն և հակառակը: Ֆրանսերեն քերականություն, թարգմանություն հայերենից ֆրանսերենի և հակադարձ, մատենագիտության տարրեր, միջին աստիճանի խմբագրական աշխատանք: Պատմություն առարկան ընդգրկում էր հին և նոր ազգերի ընդհանուր պատմությունը, հայ ժողովրդի և օսմանյան կայսրության պատմությունը: Դասավանդվում էր Թուրքիայի քաղաքական աշխարհագրությունը, նաև՝ առողջապահություն, սղագրություն, գծագրություն, վաճառականական գիտելիքներ, իրավագիտություն, բնագիտություն: Առանձնակի ուշադրություն էր դարձվում ճշգրիտ գիտությունների, հատկապես թվաբանություն, տարրական երկրաչափություն, եռանկյունաչափություն առարկաների հետազոտման վրա:

Առաջին շրջանի բավականին բարդ ծրագրերով կազմակերպված ուսուցման ընթացքը համապատասխանում էր կայսերական վարժարանների վերջին երեք տարիների դասավանդման մակարդակին, հետևաբար տնօրինությունը հավաքագրում էր արդեն որոշ մակարդակ ունեցող և ընդունակ սաների, որպեսզի կարողանար իրողության վերածել նման բարդ ծրագրերը:

Երկրորդ՝ հաջորդ շրջանի ուսման տևողությունը երկու տարի էր և ուներ ավելի ծավալուն ծրագրեր: Այս տարիներին լսարանականներին դասավանդում էին կրոնագիտություն, հայերենի քննական քերականություն, մատենագիտություն, ստուգաբանություն, բաղդատական բանասիրություն: Օսմաներենն արդեն սովորած լինելով, ուսում-

նասիրում էին թուրքերենի դպրություն և խմբագրություն: Պատմություն առարկան այժմ ընդգրկում էր դպրությունն ու խմբագրությունը, ինչպես նաև համաշխարհային պատմության փիլիսոփայությունը: Բարդացված ծրագրերով դասավանդվում էին ազգագրությունը, գրահաշիվը, երկրաչափությունը, գործնական տեղագրությունը, եռանկյունաչափությունը, մեքենագիտությունը, աստղագիտությունը: Մտցվում էր բնապատմություն, հատկապես բուսաբանություն, երկրաբանություն և հանքաբանություն, բնագիտություն, հոգեբանություն, տրամաբանություն, բարոյագիտություն, փիլիսոփայության պատմություն, օսմանյան և ազգային օրենսդրություն, վարչական իրավագիտություն, քաղաքատնտեսություն, մանկավարժություն: Կեդրոնական վարժարանի մեջ բարձրագույն գիտությունների առարկաներից մի քանիսը դասավանդվում էին եվրոպական լեզուներից որևէ մեկով:

Վարժարանի առաջին աստիճանի շրջանավարտը ստանում էր ***դպրության պսակավորի*** դիպլոմ, երկրորդ աստիճանի շրջանավարտը ***գիտության պսակավորի:*** Երկու աստիճանավարտը ստանում էր և դպրության, և ***գիտության պսակավորի*** փաստաթուղթ: Կեդրոնականցիները, ավարտական թեզը պաշտպանելով, իրավունք էին ստանում առանց քննությունների ընդունվելու ֆրանսիական և շվեյցարական ցանկացած համալսարան, ոմանք նույնիսկ տվյալ հաստատությունների բարձր կուրսերը:

Կեդրոնականի նման մակարդակը ապահովվեց երկարատև մտաբախումներից հետո միայն: Նրա ծրագրերը երկնեց Ն. Վարժապետյանը, «սակայն ինքը նմանեցավ այն բախտազուրկ մայրերուն, որոնք թեև գիտեն թե զավակ մը պիտի բերեն աշխարհ, բայց նախքան անոր աշխարհ գալը տեսնելը կը մեկնին աշխարհեն: Վարժապետյանը,- գրում էր Կ. Պոլսի պատրիարքը,- արտահայտիչը եղավ այն մեծ երազին, որ ամբողջ ազգի մը իտեալը և ակնկալությունը կը կազմեր, և որ մարմին առավ նախ իր մտքին ու երևակայության մեջ և ապա իրականացավ իր մահեն հետո ուրիշների ձեռքով»:

Հիրավի բարձր դասելով Ն. Վարժապետյանի կատարած դերը, Կեդրոնականի մասին հրատարակված հոդվածների հեղինակները զարմանալիորեն մոռացության են տվել նրանից ոչ պակաս մտահոգություններ ունեցող, ժողովրդի կողմից Հայոց Հայրիկ պատվանունը ստացած Մ. Խրիմյանին: Վարժապետյանը խտացնում էր պոլսահայության բաղձանքները. միշտ չափավոր, զգույշ, դիվանագետ, ի հարկին սուլթանասեր, բայց լայնախոհ ու իրապաշտ: Խրիմյանը դա Գավառն էր, Վասպուրականն ու Տարոնը իրենց ամբողջ ողբերգություններով. սակայն միաժամանակ խանդավառվող, ռոմանտիկ, որի հենարանը պանդուխտներն էին, մայրաքաղաքի օրամշակ բանվորները, մի խոսքով ժողովուրդը: Վարժարաններ ու մշակութային ընկերություններ հիմնելու մեծ փորձ ունեցող վասպուրականցի արծիվը գավառահայությանը ուսուցիչներ հասցնելու իր մտահոգություններն իրողության էր վերածում Վարժապետյանի ու նրա հաջորդների միջոցով, բոլորանվեր օգնում Կեդրոնականի գործերին: Հետևաբար նրա անունը ևս պետք է դրոշմվի Կեդրոնականի պատմության էջերում, ոչ պակաս հիմնավոր, քան մյուսներինը:

Այժմ փորձենք բացահայտել այն հիմնավոր կռվանները, որոնք ապահովեցին Կեդրոնականի համազգային ճանաչումը, նպաստեցին նրա երկարակեցությանը, նման աներեր ու բարձր մակարդակին: Ամենից առաջ ուսուցչական և տեսչական բարձր կադրերն էին, հայ մտավորականության ամենազորեղ էլիտայի ընդգրկումը այդ աշխատանքների մեջ, բոլորը կամավորության սկզբունքներով, բոլորը խանդավառված և նույնիսկ ստացած վարձատրությանն ուշադրություն չդարձնելով:

Կեդրոնականի առաջին տեսուչը Մինաս Չերազն էր Բեռլին մեկնող հայկական պատվիրակության անդամ, լեզվագետ, աշխարհաշրջիկ մի անձնավորություն, որի հզոր անհատականությունն աստիճանաբար լեռնանում էր դիվանագիտական մրցամարտերում, լայն ճանաչում ստանում ոչ միայն ողջ հայ ժողովրդի, այլև եվրոպական դեսպանների աչքում: Նա պրպտող միտք էր, անհանգիստ բնավորություն, և Կեդրոնականի ծրագրերը չէին բավարարում անդրանիկ տեսչին: 1888 թ. Չերազն այցելեց Անդրկովկաս, եղավ Արևելյան Հայաստանում, հետազոտեց Թիֆլիսի, Երևանի և Էջմիածնի բոլոր վարժարանների, այդ թվում Ներսիսյան դպրոցի ուսումնական ծրագրերը, խորհրդակցեց Գր. Արծրունու և Ռաֆֆու, Աբգար Հովհաննիսյանի և Բագրատ Նավասարդյանի հետ: Վերադարձին հայտարարեց, որ Կեդրոնականը կարող է օրինակ ծառայել Կովկասի բոլոր հայկական դպրոցներին: Կեդրոնականի համար միայն օրինակ կարող էր ծառայել Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: 1890 թ. թողնելով սուլթանի նստավայրը, թուրքական դամոկլյան սրի հարվածներից ճողոպրող Չերազը հաստատվեց նախ Փարիզում, ժամանակին վտարանդված հայերի հանգրվանավայրում, ապա անցավ Լոնդոն, բոլորովին չմոռանալով Կեդրոնականը, տարածությամբ հեռու, սակայն զգացմունքներով մոտիկ շարունակեց զորավիգ կանգնել այդ հաստատությանն ու նրա ավարտական սաներին:

Չերազի արժանավոր հաջորդը դարձավ Հարություն Մոստիչյանը, բազմակողմանի զարգացում ունեցող մի մտավորական, որն օժտված էր նաև մանկավարժական հմտությամբ, հեզահամբույր, բարյացկամ բնավորությամբ: Նա աշակերտության սիրելին էր. որի տնօրինությամբ Կեդրոնականը ճյուղավորվում է գիտության և դպրության բաժինների:

1896 թվականին Կեդրոնականը ծանր հարվածներ կրեց: Հայոց արյան մեջ թաթախված ձեռքերի պատճառով Համիդ Երկրորդը Կարմիր սուլթան մականունը վաստակեց, 300 հազար հայեր մորթվեցին

թե Հայաստանում և թե մայրաքաղաքում: Պատրիարք Օրմանյանը, այնուհետև վարժարանի ընդհանուր հսկիչ Գառնիկ Բարունագյանը վարում էին խոհեմ, զգույշ քաղաքականություն, դժվարընթաց, բայց և այնպես, մինչև նետահարված ոճրագործի գահընկեցությունը, պահպանում էին Կեդրոնական վարժարանը, իհարկե ոչ նախկին շռինդով:

1909-1913 թվականներին Կեդրոնականի տեսուչն էր Մարտիրոս Նալբանդյանը, որն օգտվելով երիտթուրքերի խաբուսիկ խոստումներից, ժամանակավոր թողտվության քաղաքականությունից, Կեդրոնականը թեքում է դեպի բնական գիտությունները, հիմնավորում դասավանդման նոր մեթոդներ, աշխատում օր ու գիշեր և իր մահկանացուն կնքում երիտասարդ հասակում: Լեզվագետ ու պատմության պրոֆեսոր Աստվածատուր Խաչատրյանին ծանր օրերի աշխատաբաժին էր վիճակվել: 1913-1915 թվականների նրա տեսչությունը համընկնում էր Մեծ եղեռնին, հայ ժողովրդի մեծ գողգոթային, ուստի նա ընդգծված հետք չթողեց և չէր էլ կարող թողնել վարժարանի այդ տարիների պատմության էջերում:

Երկու տարի ընդմիջում տվեց Կեդրոնականը, մինչև որ չորանային եղեռնին զոհվածներից հետո վերապրողների աչքերի հորդառատ արցունքները, մինչև որ կորցրած հարազատները կամ վերագտնեին իրար, կամ տեղեկանային մյուսների ոչնչացման պարագաների մասին: Գոյատևման ցանկությամբ առլեցուն զարմանալի սերունդ էր հարատևում Պոլսում: Այդքան զոհերից հետո, վաղվա օրվա մասին ապրելու հույս չունեցող, Զոհրապ ու Սիամանթո, Վարուժան ու Սևակ կորցրած հայ մտավորականները, գավառներում շարունակվող արյունահեղությունը աչքերի առջև, շարունակում էին վերընձյուղել Կեդրոնականը՝ նրա դռները բացելով հատկապես զոհվածների երեխաների առջև: Գուցե նաև դա էր այդ վարժարանի փառապսակը, երբ թուրքական սպանող սրին նրանք հակադրում էին հայոց մեսրոպատառ այբուբենը, ի լուր աշխարհի ավետում, թե հեշտ չէ ամբողջովին, հիմնովին սպանել մի հնամենի, քաղաքակիրթ, տաղանդավոր ժողովրդի, սպանել նոմադական կացությամբ ապրող բարբարոս ցեղի վայրենի ձեռքերով, քրիստոնյա Եվրոպայի անխիղճ թույլտվությամբ:

Հետեղեռնյան տասը տարիներին Կեդրոնականը վարեց Գեղամ Գաֆավյանը, 1917 թ. վերաբացելով այն, զորավոր դրոշմ դրեց նրա սաների վրա, որի մասին ասված է, թե «փոթորկալի պահերուն եղած է քաջ պահապանը Կեդրոնականի ոգիին և ազգավանդ գոյության», վարժարանը վարած է մեծ ձեռնահասությամբ և գրավիչ հեղինակությամբ: 1927-1933 թթ. Կեդրոնականի տնօրենն էր Պետրոս Ադրունին՝ հմուտ մաթեմատիկոս, մաթեմատիկայի մի շարք դասագրքերի, հինգհատորյա մի ծավալուն աշխատության հեղինակը: Նա ունեցել է անկախ նկարագիր, նախանձախնդիր հանրային շահերի, օժտված քաղաքացիական արիությամբ, չվիճարկվող հեղինակության տեր:

«Պետրոս Ադրունի իր շրջանի կրթական մեծագույն դեմքերեն մեկն էր, այդ ժամանակի *ֆեթիշը* և ամենեն շատ փնտրված ուսուցիչը: Ամեն դպրոց ուզած է, որ բաժին ունենա անոր գոյություններեն և համբավեն, որով Ադրունի, պետական վարժարաններէ զատ դասավանդած է Կեդրոնականի, Մխիթարյանի, Պեզազյանի, Եսայանի, Շիշլիի Թերաքը, Ենի Գոլեժը, հրեական Պենե Պերիթ լիցեյներուն մեջ»: Այնուհետև Կեդրոնականի տեսուչներ կամ տնօրեններ են եղել Գրիգոր Սարաֆյանը, Հ. Հարությունյանը, Հ. Տեր-Անդրեասյանը, Հ. Կյուրյունը, Պերճ Չալտըքման և այլոք: Տեսչական այդ ընտրյալ կազմը, անշուշտ, իր անջնջելի հետքը թողեց Կեդրոնականի հավերժ չխամրող հեղինակության վրա և ապահովեց վարժարանի ոչ միայն համազգային ճանաչումը, այլև անբասիր անուն վաստակեց օտար համալսարաններում, ուսումը շարունակելու նպատակով այնտեղ առաքելով իր «բանիբուն ու բանիմաց» սաներին: Կեդրոնականցին փնտրվում էր ոչ միայն Պոլսում ու Հայաստանում, այլև՝ շվեյցարական ու ֆրանսիական այն համալսարաններում, որտեղ հիմնավոր ուսանող էին կամ ազատ ունկնդիր հայ երիտասարդները:

Կեդրոնական վարժարանն իր վաստակով ու մակարդակով միակը չէր հայ դպրոցի, հատկապես նախահեղափոխական շրջափուլի բարձրորակ ու բարձրագույն դպրոցի անցած ճանապարհի քառուղիներում: Մոսկվան տվեց Լազարյան ճեմարանը, Մխիթարյանները Վենետիկի ակադեմիան, Թիֆլիսը՝ Ներսիսյան անզուգական դպրոցը, Մայր աթոռը՝ Գևորգյան ճեմարանը, Փարիզն ու Պադուան՝ Մուրադյանն ու Հայկազյանը, Զմյուռնիան՝ հանրաճանաչ Մեսրոպյանը: Կոստանդնուպոլսի այսօրվա հոբելյարը, սակայն, առանձնանում էր այդ բոլորից իր ուսուցչական այն ընտրանիով, որը զարմանալիորեն համահավաքում էր հայ մտավորականության ամենափայլուն աստղաբույլը, միևնույն հարկի տակ դասախոսության հրավիրում այնպիսի մեծությունների, որոնց անուններն իսկ այսօր պատկառանք են առաջ բերում այդ հաստատության նկատմամբ: Տարբեր տարիների այստեղ դասախոսել է գիտնականների, գրողների, հրապարակախոսների մի փաղանգ, որոնց ունկնդիրներին, այսօրվա հարյուրամյա հեռավորությամբ իսկ, նախանձով կարելի է դիտարկել, քանզի տեսել են նման մեծությունների, շփվել նրանց հետ, ունկնդրել նրանց և սովորել նրանցից:

Կեդրոնականում են դասախոսել Մադաթիա Գարագաշյանը, Հովսեփ Շիշմանյանը, Ռեթեոս Պերպերյանը, Մելքոն Կյուրճյանը, Հակոբ Պարոնյանը, Հրանտ Ասատուրը, Ստեփան Կուրտիկյանը, Տիգրան Չրաքյանը, Գարեգին Սրվանձտյանցը, Լևոն Շանթը, Վահան Թեքեյանը, Մաղաքիա Օրմանյանը, Զապել Ասատուրը, Մատթեոս Իզմիրլյանը, Արսեն Ղազիկյանը, Կոստան Զարյանը, Եղիա Տեմիրճիպաշյանը և շատ ու շատ ուրիշները: Այստեղ երաժշտության դա-

սեր է վարել հանճարեղ Կոմիտասը, որի ձևավորած «Գուսան» երգչախմբի անդամները Կեդրոնականի աշակերտներն էին: Դիպուկ է նկատված «և ի՜նչ երանություն այդ աշակերտներուն, որոնք կվայելեին սերն ու խանդաղատանքը ազնիվ այն դաստիարակներուն, որոնք ուսուցիչ ըլլալով հանդերձ, հաճախ բարեկամներ ու երեց եղբայրներ եղած են իրենց»:

Ասում են մեծություններին չեն չափում, այլ մեծություններով չափվում են միայն: Հետևաբար գրական ու գիտական այդ մեծություններն իրենց հանճարի երկունքից պիտի ծնեին ոչ պակաս հսկաներ, քան իրենք էին: Դա և բնական էր, և բանական:

Կեդրոնականի վարչությունը, գիշերօթիկի նախապայմաններով, ամեն տարի գավառներից համահավաքում էր, ընտրում ամենաընդունակ, հայրենանվեր, բանիմաց սաներին: «Մեծ մասով գավառեն եկած պատանիներ և երիտասարդներ էին անոնք, բնատոհմիկ բարքերով, համեստ, աշխատասեր, տոկուն ու հարատևող: Դասարանին մեջ կարգապահ, ուսուցիչների հանդեպ հարգալիր, դասերու մասին բծախնդիր ու պահանջկոտ. ուշ մնացած մարդոց հատուկ մտահոգությամբ, անոնք ըմբռնած էին, որ այդ տունեն ներս մտնողը պետք է բան մը ըլլա, հանրային ծառայության համար պատրաստված մարդ մը ըլլա»:

«Ամեն տղա իր չափով իտեալ մը, տեսլական մը ուներ իր գանկին մեջ. և իր աչքը անոր ուղղած կը փարեր իր աշխատանքին: Անոնք կուգային հարստահարություններու և տագնապներու շրջաններեն, անոնց սիրտն ու միտքը բացված էին արդեն հանրային ցավերու մեջ: Վիշտն ու հասարակաց պահանջքներու զգայությունը անոնց մեջ ստեղծած էին հոգեկան և գաղափարական ավելի բարձր ու ազնիվ տրամադրություններ»:

Կեդրոնականը հայ ժողովրդին, հատկապես Արևմտյան Հայաստանին, երբեմն էլ գաղթաշխարհին տվել է հազարավոր ուսուցիչներ, ուղղակի ու անուղղակի համաձուլումից փրկել է բազում հայկական գերդաստաններ, հայաշխարհում մշակել հայեցի դիմագիծ, սատարել է ժողովրդի դիմադրական գոյամարտերին՝ ընդդեմ տնտեսական քայքայմանն ու սոցիալական հարստահարությանը, դիմագրավել թուրք ու քուրդ ավազակների վայրենաբարո գործողություններին: Տաք ու սառը զենքեր կրելու իրավունքից զրկված հայ զանգվածներին գրիչ ու մատյան է հրամցրել կեդրոնականցի շրջանավարտը, մեսրոպյան հանճարի փայլատակումները վարպետորեն կիրառելով, ազգապահպանական անհավասար մարտեր է մղել հայ ուսուցիչը, դրանով իսկ լիովին կատարելով այն պարտականությունները, որոնք իր վրա դրել էր իրեն ծնած ու սնած մայր ժողովուրդը:

Կեդրոնականը ազգին տվել է գիտնականների ու գրագետ հայերի մի տաղանդավոր փաղանգ: Նրա հարյուրավոր շրջանավարտներ դարձել են հայ մշակույթի մշակների ընտրանին՝ ազգային գործիչներ, ազատարվեստ մտավորականներ, պիտանի քաղաքացիներ, որոնք հետևողականորեն նպաստել են հայ ժողովրդի իմացական ու կրթական մակարդակի առավել բարձրացմանը, վերջինիս արժեքավորմանը:

Հսկաներից են միայն հսկաներ ծնվում: Կեդրոնականի տաղանդաշատ ուսուցիչները միայն կարող էին հայոց երկնակամարին տալ գրական ու գիտական այն մեծություններին, որոնք այսօր և հավիտյան պիտի խարսխվեն հայագիտության էջերում, հավերժանան հայ ժողովրդի այն հիշողության մեջ, որը գիտական լեզվով կոչվում է պատմություն: Եթե Կեդրոնականը ազգին ոչինչ տված չլիներ, ապա միայն իր հանճարեղ սաներով լրիվ կատարած պիտի լիներ այն պարտականությունները, որոնք իր վրա դրել էր ժողովուրդը, որից մեծ սպասելիքներ ուներ պետականազրկված արևմտահայությունը:

Կեդրոնականի անվանի սաներն էին Արշակ Չոպանյանը, Հրաչյա Աճառյանը, Արշակ Ալպոյաճյանը, Հակոբ Սիրունին, Միսաք Մեծարենցը, Վահան Թեքեյանը, Երուխանը, Օննիկ Չիֆթեսարաֆյանը, Հայկ Պերպերյանը, Երվանդ Մանվելյանը, Ավետիս Ալեքսանյանը, Հակոբ Մնձուրին, Արմեն Արմենյանը, Ռուբեն Շիշմանյանը և շատ ուրիշներ:

Կեդրոնականցին այսօր էլ հպարտանում է իր ավարտած այն հաստատությունով, որը զարմանալի կենսունակությամբ, տեսանելի ու անտեսանելի բազում խոչընդոտներ հաղթահարելով, շարունակում է հարատևել Ստամբուլում, շարունակում ուսուցիչներ հասցնել արդեն փոքրացած, կուչ եկած, երբեմնի հայաշատ այդ գաղթօջախին, շարունակում արթուն պահապան կանգնել հային ու Հայաստանին Թուրքիայում, որի մասին 70 տարի առաջ ցինիկաբար հայտարարվեց, թե այսուհետև հայերի դիմապատկերները թանգարաններում պիտի որոնել: Վերածնված, ազգային հզոր պետականությունը վերստացած հայ ժողովուրդը արժանին պիտի հատուցանի այսօրվա Կեդրոնականին, օգնության ձեռք պետք է մեկնի նրան և ապահովի նրա գոյության շարունակումը, բարոյապես, թերևս նյութապես, զորավիգ պիտի կանգնի նրա գործողություններին:

Կեդրոնական վարժարանի շրջանավարտները ճակատագրի դաժան բերումով սփռված են աշխարհի ամենատարբեր ծեգերում, շարունակում են իրենց ազգապահպան առաքելությունն օտար երկնակամարի տակ, զարկ են տալիս հայ մշակույթին ու դպրությանը, օտարներին ծանոթացնում են Հայաստանի վիթխարի նվաճումներին, որդիական իրավունքով հպարտանում են, որ իրենք ունեն մայր Հայրենիք, հայկական պետականություն: Կեդրոնականցիների սփյուռքահայ հիմնավոր ու մարդաշատ կենտրոններ են Կանադան,

Միացյալ Նահանգները, Սիրիան, Լիբանանը, հատկապես ժամանակի Եվրոպայի հեղափոխությունների օրրան Փարիզը:

Ֆրանսիայի կեդրոնականցիներն այսօր կարծես թե վարժարանի դրության տերն են: Նրանք ծրագրեցին և կանոնավորապես հրատարակում են «Կեդրոնական վարժարան» վերտառությամբ պարբերականը, պարտավորվեցին և շուքով ու հանդիսավորությամբ նշեցին իրենց սնուցանող հաստատության հոբելյանը: Եվ այսօր էլ, կտրելով հազարավոր կիլոմետրեր, հանուն վարժարանի, հատկապես հայրենիքի սիրո, եկել են Հայաստան, նստած են այս դահլիճում և մասնակցում են մեր և իրենց հանդիսություններին: Այս է երախտագիտության տուրքը, կատարվածի արդարացի գնահատականը:

Կեդրոնականցիներից շատերը, սակայն, ժամանակին հայրենադարձվեցին, Սովետական Հայաստանում մասնակից դարձան վերածնված ժողովրդի ստեղծագործական ոգորումներին, իրենց փորձն ու գիտելիքները հաղորդեցին երիտասարդ սերնդին, միշտ վառ պահելով վարժարանական հուշապատումները:

Կարպիս Կարագյան, Տիրան Քրմոյան, Գամել Անտոնյան, Վարդան Պետրոսյան, Էդվարդ Չոփուրյան, ահա հայրենիքում ընդմիշտ հաստատված կեդրոնականցիների անունները, որոնք մեծ հուզմունքով հետևում են վարժարանի ու վարժարանցիների գործունեությանը, պրոպագանդում նրանց անցյալի ու առօրյա պատմության նշխարքները:

Ամփոփենք. այսօր լրացավ հայկական բարձրագույն դպրոցներից մեկի՝ Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարանի հարյուրամյակը, որի հիմնադիրները երբեք չէին պատկերացնի, թե մի օր Հայաստանը կունենա բազմաթիվ ու բազմաճյուղ բարձրագույն կրթարաններ, մայր բուհ՝ Երևանի պետական համալսարան, որի պրոֆեսորներից մեկն էլ իրենց կատարած գործերը կգնահատի ըստ արժանվույն, իր սիրասուն սաներին կպատգամի վառ պահել Կեդրոնականցիների հիշատակը:

ГАЙК КАЗАРЯН

ЗАПАДНЫЕ АРМЯНЕ НАКАНУНЕ ГЕНОЦИДА

РЕЗЮМЕ

Армянский народ является одним из древнейших народов мира. Его историческая жизнь протекала в том регионе, который в географии известен под названием ***Армянского нагорья.***

Армянское нагорье располагается между Малоазиатским и Иранским плоскогорьями, в северо-западной части Передней Азии. В силу того, что Армянское нагорье выше окружающих территорий, оно получило название "горный остров". ***В Армянское нагорье*** входят многочисленные горные хребты и горные вершины, самая красивая и самая высокая из которых – Арарат, или Масис, со своими двумя высокими вершинами. Согласно библейской легенде, после Всемирного потопа здесь высадился прародитель Ной вместе со своей "многочисленной семьей". Гора ***Арарат*** является символом долговечности и независимости армянского народа, и поэтому она в качестве истинного украшения изображена в центре государственного герба Армении.

Армянское нагорье является водораспределителем Передней Азии. Отсюда берут начало реки Евфрат (с армянским притоком Арацани), Тигрис, Чорох, Кура, Аракс и другие. По Ширакской долине течет река Ахурян, по ущелью Вайоц-дзор – река Арпа, а по землям Сюника – река Воротан. Историческая Армения по праву называлась страной вод, или Наири. В Армянском нагорье находятся три известных озера – ***Севан, Ван и Урмия.*** Есть также второстепенные пресноводные озера.

Историческая Армения на западе граничила с Каппадокией, на северо-западе – с Понтом, на севере – с Грузией, на северо-

востоке – с Агванком, на юге – с Междуречьем, а на юго-западе – с Ассирией (Сирией). Армянское нагорье, или Армению, составляли две географические части – Великая Армения и Малая Армения, водораздельной линией которых является Западный Евфрат. ***Только Великая Армения имела территорию в 300 тысяч кв. км., которая в свою очередь была разделена на пятнадцать областей. Крупнейшими из них были Айрарат, Арцах, Сюник, Васпуракан, Цопк, Алдзник, Высокая Армения и другие.***

Относительно образования племенных союзов, напоминающих устойчивые государственные объединения, в отечественных и иностранных источниках есть упоминания, что они существовали во II тыс. до н. э., а возможно и раньше. В то время среди племенных союзов, обитающих на территории Армянского нагорья, центральную роль играло объединение ***Хайаса-Аззи,*** которое и легло в основу этнического формирования армянского народа, дав название на армянском языке этому народу (хай) и стране (Хайк или Хайастан).

В формировании армянского народа большую роль сыграло также племенное объединение ***Арме-Шуприя.*** Это объединение еще во времена Араратского царства (Урарту) стало центром объединения армянских племен на юге страны. Их именем был назван весь этот народ и страна (армяне и Армения) иноземными народами.

Итак, в VI-V вв. до н. э. на территории Армянского нагорья сформировался армянский народ, основой для которого послужили племенные объединения Арме-Шуприя и Хайаса-Аззи. Несомненно также, что армянский народ является аборигенным. Вместе с тем, армяне, как и всякий другой народ, в процессе своей активной консолидации, приняли также небольшое количество пришлых элементов, которые не имели существенной роли и значительного веса в этой общности.

О факте аборигенного происхождения армянского народа и его антропологической внешности говорили еще греческие авторы V века до н. э. Геродот и Ксенофон. С ними согласны иностранные авторы Ф. Лушан, Э. Шантр, Вирхов, Пантюхов и многие другие. По их мнению, на территории Армянского нагорья обитали арменоидные племена, принадлежавшие к евразийской расе. И наконец, эту проблему исследовали академики Б. Б. Пиотровский, Гр. Капанцян, Г. Б. Джаукян, С. Т. Еремян, Г. Х. Саргсян и многие другие ученые, решив ее в пользу аборигенного происхождения армянского народа. Этот факт сегодня кроме турков уже никем не оспаривается. Да и турецкие историки

предпринимают неудачные попытки оспорить это только тогда, когда международное сообщество время от времени поднимает вопрос о признании Армянского геноцида.

В VI-III вв. до н. э. в сформированной на территории Армянского нагорья Армении население говорило на едином языке – армянском. На этой же территории сформировалось собственно армянское государство, которое получило название царство Ервандидов.

Ведя борьбу против слабых и сильных соседних государств, армянский народ в 189 г. до н. э. создал объединенное армянское государство, которое вошло в историю под названием царство Арташесидов и просуществовало до начала новой эры. Историческая Армения в течение двухсот лет царствования Арташесидов достигла непревзойденного до сих пор военно-политического уровня, беспрецедентного экономического и культурного расцвета. Арташес I (189-160 гг. до н. э.) начал, а Тигран II (95-55 гг. до н. э.) завершил процесс объединения армянских земель в одном едином государстве. Армения стала самым могущественным государством в Передней Азии, более того, на всем Востоке, а ее царю Тиграну II был присвоен титул царя царей.

Тигран II создал простирающуюся от моря до моря Армению. Границы государства доходили до берегов Черного, Каспийского и Средиземного морей. Оно имело территорию, равную около 500 тыс. кв. км, и, из-за обширности своей территории, три столицы (Арташат, Тигранакерт и Антиохия). ***Численность населения этого могущественного государства достигала около десяти миллионов человек.*** В период правления Тиграна II-го город Арташат имел 300 тыс., город Тигранакерт – 200 тыс., город Антиохия – 500 тыс. жителей. Крупными городами оставались Ервандакерт, Зарехаван, Нахичеван, Аршамашат и другие.

После Тиграна II-го Армянское государство потеряло былую мощь, и династия Арташесидов пала. В 66 г. в Армении утвердилось царство Аршакидов (66-428 гг.). Армения и во времена Аршакидов экономически и политически бурно развивалась. В период их правления Армения, первой в мире, приняла христианство в качестве государственной религии (301 г.), что и сегодня почитается всем человечеством. В этом году празднуется 1700-летие этого события. В V веке Месроп Маштоц создал армянскую письменность, развивалась армянская переводная и самостоятельная литература, и по праву пятый век вошел в историю под названием "золотой век".

Давние соперники Римская империя и Сасанидская Персия, после постоянных нашествий на Армению в четвертом веке, в 387 г. в конце концов разделили между собой когда-то могущест-

венную страну и несколько позже ликвидировали царство Аршакидов. Доставшуюся Риму часть Армении стали условно называть ***Западной Арменией,*** которая была снова разделена в 591 году. В результате этого разделения, однако, не распалось этническое, экономическое и духовно-культурное единство Армении.

В середине VII века в основном восстановилось территориальное единство Армении – в составе Арабского халифата. В конце IX века Армения объединилась, и установилось могущественное царство Багратидов. После падения Багратидов иноземные завоеватели (Византия, турки-сельджуки, монголы) поочередно устанавливали свою власть на всей территории Армении.

Положение изменилось в начале XVI века, когда Армения стала театром продолжительных военных действий, которые вели между собой Османская Турция и Персия. В 1555 г., согласно подписанному в Амасии мирному договору, эти два государства разделили Армению между собой, проведя границу, которая и сегодня существует между Ираном и Турцией.

Административно-политическое устройство Западной Армении, или "Турецкой Армении", окончательно сформировалось согласно договору, подписанному в 1639 г., по которому Армения снова делилась между Турцией и Персией. Разделяющая страну граница в этот раз проходила по реке Ахурян, затем перейдя реку Аракс поворачивала на восток, по горному Армянскому хребту доходила до горы Арарат, затем повернув на юг, продолжалась до иранской границы. Эта граница не претерпела никаких значительных изменений и сохранилась до начала XIX века.

В результате большая часть исторической Армении подпала под господство Османской Турции и подверглась такому угнетению и притеснению, какое невозможно найти в истории какой-либо другой страны. Турция завоевала 280 тыс. кв. км территории Армении. В XVIII веке 98% населения Западной Армении все еще составляли армяне. Однако османские султаны, "превосходя" друг друга, очищали Армению от армян и постепенно поселяли туда курдов, турков и другие варварские, мусульманские племена. Турки разрабатывали планы частичного геноцида армян еще в конце XVIII века.

*
* *

Таким образом, подпавшая под гнет двух восточных деспотий – шахского Ирана и султанской Турции и давно уже лишившаяся своей государственности, Армения в начале XIX века была

расчленена и являлась ареной кровопролитных войн. Подвергавшаяся многочисленным нашествиям и находящаяся под угрозой новых вторжений страна к тому времени уже лишилась и все еще продолжала лишаться значительной части своего населения. Безлюдными становились восточные и западные части Армении, и за их счет усиливались армянские колонии, сформировавшиеся в Западной Европе, России, Индии, Персии и других странах и регионах.

В первой четверти XIX века активизировались армянские освободительные движения. В поисках путей развития своего освободительного движения, Армения снова взывала к России о помощи, хлебом-солью встречала наступающие на Восток русские войска, мечтала о восстановлении давно утерянной государственности, хотя-бы и под эгидой царизма. Здесь устремления царской России объективно совпадали с ожиданиями армянского народа.

Русско-персидская и русско-турецкая войны заканчиваются победой России. Заключением 10 (22) февраля 1828 года в небольшом персидском селе Туркменчай мирного договора между Россией и Персией был положен конец военным действиям, которые длились, с некоторыми перерывами, больше десяти лет. Река Аракс в основном стала государственной границей между этими странами. Туркменчайский договор зафиксировал факт присоединения Восточной Армении к России, что было достигнуто ценой крови сынов русского, армянского и других народов, населявших тогдашнее русское государство. Этим актом часть армянского народа навсегда избавилась от угрозы физического истребления и, перейдя под покровительство России, находившейся на более высоком общественном уровне, получила возможность встать на путь развития своей социально-экономической и культурной жизни. Впервые за многие века в своей истории, находившиеся на чужбине армяне получили возможность возвратиться на землю предков и положить начало новому процессу своей национальной консолидации.

Присоединившись к России, население Восточной Армении избавилось от угрозы ассимиляции и физического истребления. Восточная Армения за короткий срок приняла около 140 тысяч армян, изменила свой демографический облик и стала той обителью, куда стекались армяне, насильственно депортированные с родины или вынужденно покинувшие ее в разные времена.

За два десятилетия после присоединения к России экономическая жизнь Восточной Армении претерпела значительные изменения.

На смену средневековым амкарствам пришли капиталистические мануфактуры, было организовано заводское производство, серьезные сдвиги произошли в сельском хозяйстве. Почти удвоились посевные площади, были внедрены новые сельскохозяйственные культуры. Увеличилось население городов Эривани, Нахичевана и Гюмри (Александрополя), оживилась внутренняя и внешняя торговля, установились тесные торгово-экономические связи с Закавказьем, Россией и другими соседними странами. Экономическому и торговому развитию Восточной Армении весьма содействовало дорожное строительство. Начиная с 40-х годов, край покрылся широкой сетью дорог, а в постреформенные годы появились первые железнодорожные пути.

Россия играла в Закавказье безусловно прогрессивную роль, но очень скоро, наряду с социальным угнетением, царское правительство, верное своей классовой природе, стало проводить здесь национально-колониальную политику.

*
* *

Совершенно иной оказалась судьба Западной Армении. Западные армяне продолжали находиться под деспотическим гнетом султанской Турции, и в конечном счете их постигла трагическая участь.

В конце XVIII и начале XIX века Османская Турция, утратившая свое былое военное могущество, пребывала в состоянии экономического и военно-политического застоя. Усилился социальный и национальный гнет населения Турции, в особенности нетурецких подданных страны. Военно-феодальный деспотизм все больше изживал себя, ослабевало его военное могущество, усиливались центробежные силы. Турецкие и курдские феодалы добились некоторой независимости.

В начале XIX века турецкие дворцовые, государственные деятели предприняли попытки преобразовать страну, перестроить армию и полицию. И хотя султан Селим и его великий визирь Мустафа Байрактар осуществили ряд реформ, однако они оказались не в состоянии положить конец бесконечным межплеменным распрям, предотвратить частые столкновения между курдскими племенными вождями и правительственными войсками.

Попытки, предпринятые в этом направлении, "завершились" в период царствования Махмуда II, Абдул Меджида и Абдул Азиза. В 1830—1860-х гг. принимались меры к централизации

государственной власти. Был обнародован Танзимат, который, однако, содержал лживые обещания в отношении нетурецких подданных страны.

Воспользовавшись Танзиматом, армянская буржуазия развернула конституционное движение. Однако, если либеральное крыло армянской буржуазной интеллигенции пыталось получить автономию бескровным путем, то радикальная часть ее и политические деятели демократического направления строили планы ликвидации турецкого господства, создания буржуазной республики.

В 50-е годы и в еще большей степени в 60-е годы XIX века усилилось армянское освободительное движение, которое приняло широкий размах, приобрело общенациональную форму и общедемократическое содержание. В 1862 г. в Зейтуне вспыхнуло героическое восстание, вооруженные выступления произошли в Муше, Ване, Чарсанджаке.

Возникшие в Западной Армении и Армянской Киликии в 1850—70-х гг. движения сопротивления и самооборонительные выступления были направлены против султанской тирании, турецких банд и воинственных курдских племенных вождей. Все эти выступления были проявлением гнева, накопившегося в народе в течение веков. Они возникали стихийно и постепенно начали привлекать к себе внимание западноармянской и всей передовой армянской интеллигенции.

Все выступления, возникшие в течение этих десятилетий, оставались изолированными. Уезды выступали разрозненно и в конце концов потерпели поражение. Несмотря на поражение, это движение разбудило в армянском народе, много веков назад потерявшем свою государственность, дух борьбы и надежду на победу и свободу, способствовало ускорению процесса национальной консолидации, и нацелило недавно созданную интеллигенцию на поиски путей освобождения из железных клыков султанской тирании посредством зарождения общенационального движения.

В 1880-е годы положение западных армян стало особенно тяжелым в результате новой и беспрецедентной системы политического гнета.

В самом начале 80-х гг. определенно изменилось отношение как Турции, так и России к двум частям армянского народа. Особенно ухудшилось социально-политическое положение западных армян, что стало причиной активизации освободительного движения. *Следовательно, Османская империя сама дала повод для восстания армян. Она, помимо угнетения народа и его частичной ассимиляции,*

перешла к применению политики его массового уничтожения. Естественным образом действие должно было породить противодействие, насилие – вопль протеста, резня – борьбу за жизнь, будь то посредством пера или меча, публицистики или политической борьбы.

Немного спустя после Берлинского конгресса угнетения армян уже становятся продолжительными и организованными по форме и направленными на уничтожение армян по содержанию. Это было в первую очередь обусловлено человеконенавистнической идеологией пантюркизма и панисламизма, осуществлением новой ориентации руководителей османского государства и сросшейся с ними фанатичной турецкой буржуазии.

Социально-политическое и национальное угнетение армян в Турции, особенно в Западной Армении, не были новым явлением. Высокая Порта (турецкое правительство), с далеко идущим умыслом, в тех армянских уездах, где послойно проживали армяне и курды, наделила безграничными правами курдскую верхушку, создав из них привилегированный класс, и использовала все возможные способы для того, чтобы посеять раздор между двумя народами с целью исключить возможность их объединенной борьбы против османской деспотии.

Вплоть до третьей четверти девятнадцатого века армянские движения, протесты и восстания были направлены преимущественно против курдской верхушки и имели в основном *экономическое содержание.* Их целью было получить обратно утерянные земельные угодья. Тем самым они составили *первый этап* армянского освободительного движения.

В последней четверти века, особенно в годы правления человекоубийцы Гамида, вследствие применяемой к западным армянам со стороны государства новой системы преследований и национального гнета, перехода от частичной ассимиляции к массовым убийствам, армянский народ естественным образом объединился, и следующий этап освободительной борьбы западных армян имел преимущественно политическое содержание, являя собой вынужденный призыв к выживанию.

Итак, каковы были причины этого? До половины 70-х гг. стержнем политики султанской Турции являлось восточное Средиземноморье, в особенности славянские народы, жившие на Балканском полуострове. Древняя столица Византии – город Константинополь, переименованный в Стамбул, являлся мостом между восточными и западными вилайетами империи и, создавая как бы равновесие, способствовал сохранению османского государства, которое к тому времени называли "больным человеком". Великие державы, фактически, способствовали сохранению "статус кво".

С середины 70-х положение изменилось. Начиная с этих годов, под тяжелым военным, экономическим, политическим и дипломатическим натиском, Турция отступила в своих западных владениях. С помощью России балканские народы, развернувшие окровавленный флаг национально-освободительной борьбы, сбросили невыносимое пятивековое иго османской Турции и попытались создать независимые государства на своей древней исторической родине.

Турция оказалась перед угрозой потери Константинополя. В поисках выхода из этого положения турки решили, что ключ к защите столицы и всего государства должен перейти в руки защитников малоазиатских, особенно армянских губерний. Это обстоятельство, с покровительства Англии, привело к перелому в истории турецкой общественно-политической мысли. Этот перелом имел трагические последствия для армянского народа, на чьих бесчисленных трупах это мусульманское государство сохранило свое существование, но не в одиночку.

После Берлинского конгресса (1878 г.) Турция, фактически, превратилась в основном в азиатское государство. Империя друг за другом потеряла также и свои африканские колонии. В тюрко-татарских народах, живущих под владычеством России и ставших свидетелями такого процесса, пробудились новые мечты. Теперь они открыто обращались к "великому халифу", предлагали повернуть свой взор с Европы на Малую Азию и, возглавив туранское движение, создать там новое и могущественное мусульманское государство, щупальцы которого должны были распространяться до Средней Азии и Афганистана, а оттуда также до Пакистана и Индии.

И действительно, Турция начала искать основы для своего существования в Передней Азии. В качестве исторической миссии она решила пробудить национальное самосознание в турко-татарских народах и, опираясь на них, вести политическую борьбу с целью восстановления своей утерянной славы и могущества.

Но дело было не только в этом. "Новые османцы" видели, что *панславянство* в основном победило на Балканском полуострове. Некогда грозная турецкая сабля была посрамлена под Плевной и Шипкой, с позиций русской армии уже были видны башни собора Святой Софии, на которых был водружен полумесяц. Победы русской армии призывали турков к *отмщению*, нацеливали

на победу *пантюркизма* в Малой Азии, в частности Западной Армении и населенных армянами губерниях.

В горниле очередных русско-турецких столкновений, на пути соединения туркоязычных народов Кавказа вокруг Гамида и создания обширного туранского государства в Азии, в качестве главного препятствия во весь рост стояла Армения, армянский народ, который был признан Берлинским конгрессом правомочным хозяином своей исторической родины, и национальное сознание которого ярко отражалось в публицистике, литературе, и более всего, свободолюбивой поэзии.

После Берлинского конгресса причиной обострения армяно-турецких отношений стала также угроза со стороны России, которая вечно висела над головой Турции под предлогом армянских реформ. Исходя из этого, государственные деятели Турции последовательно осуществляли один зловещий план, *целью которого было истребить западноармянское население, если не полностью, то хотя бы сократить его в количественном отношении и свести положение к тому, чтобы больше не было места для разговоров о реформах.*

Начиная с 1880 г. Турция перешла в наступление. 30 августа этого года был издан указ, согласно которому армянским газетам и авторам официальных отношений было запрещено использовать название "Армения", с той мотивировкой, что на территории османской империи нет и не будет подобной административной единицы. 7 марта 1881 г. указом султана из книжных магазинов были собраны и публично сожжены портреты Вардана Мамиконяна и репродукции картины "Мать Армения". Был заключен в тюрьму продавец книг Гафавян под тем предлогом, что он продавал портрет Левона VI, тем самым косвенно призывая к созданию армянского королевства.

Турецкие цензоры заставляли переводить с армянского на турецкий все слова, начинающиеся с той буквы, с которой начинается слово "Армения" в армянском языке, сомневаясь, не слово ли "Армения" написано. В Ерзынке закрыли спичечную фабрику, потому что на производящихся там спичечных коробках было написано "Спички Армении". Из учебников по химии была изъята формула воды (H_2O) с тем аргументом, что она якобы означает "Гамид Второй равняется нулю".

Патриарх Армении Н. Варжапетян, являясь свидетелем всего этого, не раз отказывался от патриаршьего престола, своими "возмущениями" пытаясь решить запутанные вопросы. Но в то же время он предъявлял Высокой Порте *письменные протесты*,

с помощью которых напоминал султану, что новые политические гонения, начатые в отношении вверенной ему паствы, выходят за частные рамки и достигают государственного уровня. Варжапетян хорошо понимал, что уже не случайные турецкие деятели были авторами подобных подстрекательств, а турецкое правительство, с молчаливого или устного согласия султана.

Высокая Порта секретным указом дала задание турецким шовинистам предавать огню имущество армян. 26 июля 1887 г. было предано огню 1000 домов в Зейтуне. 27 августа в населенном армянами квартале Скютар в Константинополе было сожжено 1200 домов армян. Убытки от пожара составили 300 тысяч золотых. 3 июня того же года в населенном армянами городе Потушан было предано огню 1000 хозяйств. Количество человеческих жертв достигло 1200.

В апреле 1888 г. предали огню город Мараш. Жертвой огня стали 580 ларьков, 14 кафе, около 30 домов. 27 сентября 1888 г. было сожжено 134 дома армян, живущих рядом с монастырем Армаша, а также большая часть монастыря и гимназия. Несколько дней спустя предали огню Багеш. В апреле 1891 г. в Пешикташе турки сожгли армянские дома и богатую армянскую библиотеку. В феврале 1892 г. в квартале Еени Гапу Константинополя было сожжено 286 хозяйств, принадлежавших только армянам.

Таким образом в течение нескольких постберлинских лет султанское правительство предало огню большую часть имущества армян в около десяти городах, лишило средств существования армянских купцов, мастеровых, бедных земледельцев и поденных рабочих. Особенно пострадал торговый капитал у армян, так как новоиспеченная турецкая буржуазия уже с неприязнью относилась к тому, что в городах Турции почти все отрасли торговли, индустрии, даже науки и техники продолжали возглавлять представители христианских народов, в том числе армяне. Было неоспоримо, что как армян, так и других христиан – подданных империи до сих пор турецкая государственная хунта терпела только по той причине, что, во-первых, их некем было заменить, и, кроме того, они способствовали прогрессу страны в торговле и индустрии. Однако, как только сформировалась турецкая буржуазия, то она, не сумев победить торговцев-христиан в свободной конкуренции, не погнушалась прибегнуть к таким методам, как их изгнание, частичное уничтожение, а затем и массовое истребление.

"Новая система" проводимой султанским правительством политики по уничтожению армянского народа начала свирепствовать

с самого начала 80-х годов. После войны, согласно плану, разработанному Высокой Портой, из европейских уездов империи и с Кавказа начали переселять мусульман, особенно курдов и черкесов, и, предоставляя им большие привилегии и обширные земельные участки, поселяли их на территории Западной Армении.

Гамид имел целью во-первых изменить процентное соотношение населения страны, увеличив количество мусульман по сравнению с христианами для того, чтобы посредством предстоящих ложных переписей населения опровергнуть цифры, которые М. Хримян представил великим государствам, и, тем самым, уклониться от осуществления той программы реформ, которую ему обязал Берлинский конгресс, и за исполнением которой время от времени следили западные государства, в том числе и Россия.

Почувствовав, что армянская интеллигенция срослась со своим народом и пытается противодействовать осуществлению замышляемых в отношении западных армян ужасающих, дьявольских планов, Гамид приступил к применению неблаговидной политики массовых арестов, ссылок и изгнаний писателей, публицистов, политических и религиозных деятелей. Диарбекир превратился в место заключения армянских и болгарских политических узников. В старой крепости, из-за нехватки места для заключенных, построили новые казематы, был ужесточен тюремный режим и внедрены такие телесные наказания для заключенных, которые не имели прецедентов в истории человечества.

В 1880 г. Абдин Паша, пригласив на обед Н. Варжапетяна, попытался отравить его, однако благодаря маленькому количеству яда армянский патриарх чудом избежал смерти. Три покушения было организовано против М. Хримяна. 21 октября 1881 г., после того, как удачно завершились роды жены султана, неблагодарный султан приказал задушить большого друга М. Налбандяна, врача, борца за свободу О. Кятипяна, цинично заявив, что тот, чьи глаза видели наготу его жены, не имеет права дальше жить. Заговорщически были убиты предводитель восстания в Зейтуне князь Папик (1886), врач Тигран Пештималчян и многие-многие другие.

4 января 1880 г. были брошены в турецкие застенки Чевелекян, редактор печатающейся армянскими буквами турецкой газеты, и Саргсян, владелец патента. Их обвиняли в возглавлении революционного кружка. В 1882 г. были заключены в тюрьму 56 членов организации "Защитник отечества" в Карине, и *в первый раз в Турции был организован политический судебный процесс.* 29

марта 1885 г. в Ване был арестован Мкртыч Сефилян. 30 марта Хримян, а через несколько дней М. Португалян были выселены из Васпуракана как неблагонадежные личности.

15 декабря 1886 г. в Алашкерте в качестве революционера был арестован инспектор "Армянского объединенного общества" Мкртыч Сарьян. В тот же день в Муше был арестован его заместитель Маркос Натанян. Первого из них сослали в Триполи, а второго – в Иерусалим. Ночью 13 декабря 1887 г. в Константинополе были арестованы жители Вана Гарегин Исагулян, Мкртыч Терлемезян и Григорис Агванян, которые затем были сосланы.

Таким образом, турецкое правительство планировало лишить армянский народ своей интеллигенции, "заранее сломать те челюсти", которые произнесли бы слово "Армения", а в следующем десятилетии перейти к массовой резне. Ему, фактически, удалось осуществить как первую, так и вторую часть своего плана, использовав с этой целью и турок и, в особенности, некоторых курдских племенных вождей.

Близкие и дружественные отношения, существовавшие между жившими на территории Западной Армении армянским и курдским народами, сильно беспокоили турецких должностных лиц и особенно Гамида. Правительство, понимая опасность такого единства, следуя хитрым британским дипломатическим советам, не пожалело сил для того, чтобы задобрить курдских вождей и направить их сабли против армянского освободительного движения. Этот вопрос особенно обострился после Берлинского конгресса, поскольку, по наущению султана, "великие государства Европы" должны были защищать западных армян не от Турции и турков, а от набегов *курдов* и *черкесов*.

Во время русско-турецкой войны (1877-1878 гг.) Гамид раздал курдским вождям 20 тысяч винтовок, большое количество патронов, пороха, лошадей и обмундирования. После окончания войны, это оружие осталось в их руках, и был дан тайный указ, согласно которому курдам предписывалось "очистить" Армению от армян, чтобы больше не было речи о реформах.

Отношения между армянским и курдским народами, как бесправных турецко-подданных народов, были, естественно, дружественными. Исходя из этого не ускользнувшего от внимания государства обстоятельства, турки толкали к действию племенных вождей, которым даже обещали создать Курдистан. В 1879 г. М. Хримян, охваченный тревогой, предупреждал, что султан собирается двинуть в сторону Агбака сыновей Бедерхана - Гусейн Бея и Осман Бея, дав им задание очистить страну от армян.

С целью предотвращения этих опасных для западных армян планов, за разъяснительную работу среди курдов взялись Раффи, М. Хримян, Г. Арцруни, А. Тохмахян, Г. Срвандзтянц, Г. Никогосян, С. Чилинкирян, М. Мамурян и другие. Они частично достигли своей цели.

В июле 1880 г. на собрании курдских шейхов, созванном в Шамдинане, было сделано предложение уничтожить христиан. Взяв слово, самый авторитетный шейх Убейдулах объяснил, что Высокая Порта помогает курдам только для того, чтобы их руками уничтожить армян. Следовательно, если государство с помощью курдов достигнет своей цели, то есть в Западной Армении больше не останется армян, то *тогда курды в глазах османского государства потеряют свой вес и авторитет.*

Объяснения Убейдулаха были убедительны и удержали шейхов от действий против армян. Гамид, поняв, что и в этой области он тоже проиграл, хитро ублажая, пригласил Убейдулаха в Константинополь, сначала воздал ему большие почести, а затем в 1883 г. арестовал и дал приказ убить его на пути в ссылку.

Западные армяне фактически спаслись от большого преступления, но спаслись только временно. Султан в 1890 г. создал курдскую "гвардию", вооружил ее, назвал ее "Гамидие", отдал под командование руководящего четвертой анатолийской армией Зекки Паши, дав задание разрушить армянское орлиное гнездо в Сасуне, уничтожить армянские горные общины, веками защищавшие свою независимость.

Таким образом, в 80-е гг. Абдул Гамид готовился к резне армян, очищению Армении от армян, созданию великого туранского государства, активизации деятельности которого способствовали *на словах* защищающие армян, а *на деле* ожидающие "вкусные ломти" от султана великие государства, в том числе и Россия. Однако, эти планы были реализованы султаном только в следующем десятилетии и продолжены младотурками в начале XX века.

*
* *

Осуществление на практике политики геноцида не угомонило младотурок – носителей человеконенавистнической идеологии пантюркизма. Они встали на путь фальсификации истории. Сформировалась турецкая "школа" фальсификаторов истории.

В 1931 г. было организовано "Общество турецкой истории". Оно сгруппировало вокруг себя большую часть турецких и иностранных реакционных историков-туркофилов, которые,

опираясь на поддержку правительства, стали переиначивать историю Турции, и в еще большей степени – тысячелетнюю историю древних народов, которые подпали в свое время под владычество Турции.

Борьба была направлена в основном против армянского народа, против армянских и иностранных историков, с научных позиций освещавших историю армянского вопроса. Знаменосцем этой борьбы стал турецкий историк Эсат Урас, который в своем объемистом труде "Армяне и армянский вопрос в истории" заявил: "С древнейших времен в этой области, являющейся колыбелью цивилизации (т. е. в Западной Армении – Г. К.) создавались под разными наименованиями государства, развивалась культура. Каждая нация проявляла желание приписать себе эту землю – Анатолию, взрастившую во все времена выдающихся личностей и завоевателей... Армяне также претендуют на то, чтобы считаться аборигенами большей части Анатолии, обладать правом на политическую историю и культуру страны..."

Из этого следует, что Западная Армения, окрещенная "историком" в Анатолию, не была колыбелью армян, что армяне являлись здесь пришлым элементом, и в этой стране "...не было ни одного вилайета, ни одного санджака, даже ни одного нахие (уезда), где бы армяне составляли большинство". "Концепцию" Эсата Ураса "подтверждает" другой турецкий профессор – Таиб Гекбилгин. В его книге "Начало национальной борьбы" говорится: "...На протяжении всей истории в восточных вилайетах, являющихся родиной турок, армяне издавна составляли ничтожное меньшинство". Совершенно ясно, что современные реакционные турецкие историки, во-первых, пытаются опровергнуть достоверный факт аборигенного происхождения армян и, во-вторых, считают, что пришлых армян было в Турции не три миллиона, а лишь ничтожное меньшинство. Этим они стремятся решить две задачи: во-первых, уменьшить количество армян, ставших жертвой геноцида в 1915 г.б и, во-вторых, "научно" отвергнуть законное требование подлинных хозяев Западной Армении в отношении их исторической родины.

Турецкие историки Чарк, Хикмет Баюр, Шемседдин-Гюналтай, Кепрюлу-Фуад, Садри Максуди-Арсал и другие вместе с Эсатом Урасом касаются также характеристики социально-экономических условий существования "пришлых армян Анатолии". Они заявляют, что с незапамятных времен армяне – подданые Османской империи – (Османская империя не имеет незапамятного прошлого, т. к. тюркские племена появились в этом регионе лишь в XI веке –

Г. К.) были свободны от социально-политического угнетения, более того, жили лучше, чем мусульманские народы. Отвергая осуществлявшуюся в отношении армян политику национального гнета, насильственной ассимиляции, одним словом, причины быть недовольными правительством, они игнорируют также факт наличия национально-освободительного движения западных армян в XIX веке. Что касается восстаний в Зейтуне в 1862, 1879, 1884 гг., в Муше в 1863 г., то они якобы были организованы комитетами партий Дашнакцутюн и Гнчак. Турецкие историки искажают историческую действительность, перевирают факты, в частности тот факт, что армянское освободительное движение 1860-80-х гг. вспыхнуло стихийно в ответ на варварскую политику Турции в отношении армян, как взрыв веками накопившегося в народных массах возмущения. Что касается комитетов партий Дашнакцутюн и Гнчак, то лживость доводов турецких горе-историков можно вскрыть одним лишь фактом: во время восстаний армянского населения Зейтуна, Муша и др. в 60-80-х гг. прошлого века эти армянские политические партии еще не существовали, а их будущие лидеры были тогда еще младенцами.

Реакционные турецкие историки боролись и против советской историографии опять таки оружием фальсификации. В этом деле ревностные усилия прилагал Крзи-Оглу Фахреддин. На страницах своей четырехтомной "Истории Карса" автор пишет: "Этот мой труд является ответом на ту политическую пропаганду, которую вела большевистская Россия в 1945 году. Целью этой пропаганды было отторжение от нас Карса и Ардагана. Книга направлена против тех армянских и грузинских ученых, которые обосновывают какие-то их "исторические права" на этот край".

Крзи-Оглу Фахреддин выражает возмущение по поводу изданий на армянском и европейских языках ученых-мхитаристов, многочисленных трудов, изданных Петербургской академией, в которых оправдывается восточная политика России. Он обрушивается на ученых, которые "осмелились считать турок пришлыми" и "признают" Армению в качестве колыбели армян. Турецкий историк пишет, что "вследствие нехватки кадров в области истории, эти книги в свое время внушали нам страх и вынуждали отступать". По его мнению это уже пройденный этап, ныне действует "громадная армия" турецких историков, которая поставила перед собой задачу исправить "ошибки идеологических противников".

В нашу задачу не входит обстоятельная критика абсурдных концепций турецкой историографии, однако мы полагаем, что



Արտաշատ

Վենետիկի Մխիթարյան միաբանության շենքը

приведенные выше факты позволяют составить представление о методах и целях этих лже-историков. В то же время эти факты убеждают в том, что сегодня, более чем когда-либо, стало настоятельной необходимостью вести последовательную борьбу против идеологических противников, разоблачать их фальсификации.

*
* *

Многочисленные спорные и сложные проблемы истории Западной Армении и западных армян являлись предметом наших исследований *в течение около полувека*. Друг за другом публикуя многочисленные и разноплановые работы, глубоко изучив отечественные и особенно иностранные источники, мы всегда переживали душевное возмущение. Сначала нас преисполнило удивление, а затем постепенно – гнев и обида, из-за желания понять, как это вышло, что цивилизованное человечество *на протяжении восьми десятилетий* в качестве наблюдателя взирало на первый в истории человечества факт *геноцида*, точнее беспрецедентный и жестокий факт *арменоцида*.

Не удивительно ли, что вплоть до последнего времени крупные западные государства не осуждали направленную на уничтожение армян политику мусульманской Турции, не требовали от нее отчета за гнусное истребление многочисленной части целого христианского народа? Безразличие крупных государств имело трагические последствия также через четверть века после *Армянского геноцида*.

Если бы политика геноцида, осуществленная Турцией была вовремя осуждена, то во время Второй мировой войны Адольф Гитлер – не менее жестокий и кровожадный, чем турки, курдские беки и черкесы – ***не повторил бы то же самое в отношении евреев и не заявил бы цинично, мол: кто сегодня помнит о геноциде армян?***

Между этими двумя геноцидами, при наличии многих схожих черт, есть также некоторые различия. Гитлер, наравне с Гамидом и Мустафа Кемалом принявший образ шакала, теми же, возможно более жестокими методами уничтожил *шесть миллионов евреев*, но не смог захватить их родину, не успел сфальсифицировать священную историю невинных жертв фашистской резни. Современные немцы, конечно только после поражения фашистской Германии, признались в направленной на уничтожение евреев политике своих предков, публично осудили ее, в присутствии всего человечества извинились перед родственниками жертв и

попытались материально возместить, да и сегодня еще возмещают цену пролитой крови (хотя человеческая кровь бесценна).

На пороге XXI века ситуация вроде бы меняется...

Наперекор вчерашней, а тем более сегодняшней Турции, ценой героической борьбы и огромных жертв, *Армения сегодня стала свободным, независимым и демократическим государством.* Руководство страны, мощная интеллигенция и весь народ (на Родине и в Диаспоре) уже выступают в качестве оплота защитников *"Армянского вопроса"*, твердо и непоколебимо стоят за их спиной, требуют от Турции признать то, что продолжают отрицать ее государственные мужи. Более того, европейский Запад, заокеанские государства, правда с большим трудом, но тем не менее друг за другом признают факт геноцида армян и склоняют Турцию также признать его.

Итак, каковы справедливые, возможно, умеренные требования к сегодняшней "демократической" Турецкой республике?

1. Всему человечеству известно, что в 1894-1896 гг. кровожадный Абдул Гамид зверским образом уничтожил *триста тысяч западных армян.* Султанская Турция на глазах у послов и дипломатов великих государств, без каких-либо преград, попыталась опустошить Западную Армению, послойно поселила там курдов и другие воинственные мусульманские племена, чтобы в дальнейшем легко уничтожить целый, причем беззащитный народ. Резня продолжилась в 1900-1908 годах.

В 1909 г. младотурки по тайному указу уничтожили в Адане *тридцать тысяч беззащитных* армян. Армянские церкви превратились в могилы для несчастных жертв. Еще *двадцать тысяч* армян были забиты до смерти камнями или зарублены мечами в пригородных уездах.

Первая мировая война стала пиком геноцида армян. В 1915-1918 гг. в Западной Армении и в других населенных армянами губерниях было уничтожено *полтора миллиона армян.* Кемалисты, преданным образом продолжая политику младотурков, очистили от армянского населения всю Киликию. В сентябре 1922 г. они в Измирском заливе утопили или расстреляли из пулеметов *четыреста тысяч человек.*

Таким образом, по приблизительным подсчетам, в 1894-1922 гг. Турция уничтожила около двух миллионов армянского населения. Имел место первый геноцид такого масштаба в истории человечества.

Жертвами турецкого ятагана пали известные армянские мыслители, писатели и публицисты, ученые и государственные

деятели: Г. Зограб, Д. Варужан, Сиаманто, Р. Севак, О. Тлкатинци, Ерухан, Р. Зардарян, А. Арутюнян, Т. Чюкурян, Т. Келекян. Лишился разума гениальный Комитас.

Меня могут обвинить в национальном тщеславии, но я готов это перетерпеть и должен вслух высказать известную мне правду. Господа турки, со дня вашего формирования (с огузского племени до наших дней) подарили ли вы человечеству какую-либо величину, равную хотя бы одной из вышеупомянутых жертв? Нет, не подарили. Это не я говорю, а все прогрессивное человечество.

Следовательно, законное право армянского народа – потребовать *от руководства Турции, на уровне президента и премьер-министра, чтобы они виновато склонив голову, попросили прощения у тех, кто пережил геноцид, у руководства Республики Армения, у армянских духовных предводителей, у нашей интеллигенции, у всего армянского народа.* Эта очень необходимая церемония не унизит турецких государственных деятелей, а продемонстрирует их великодушие, предотвратит осуществление геноцида в отношении курдского и других народов в будущем.

2. Предоставив моральное удовлетворение детям и родным тех, кто пережил геноцид, Турция обязана вернуть армянскому народу ее древнюю и историческую Родину – *Западную Армению* и *Армянскую Киликию*, которые сегодня не имеют армянского населения, переименованы и, по мнению владельцев, отуречились и окурдились.

Вот краткий список армянских областей: *Эрзерумская* (Карин), *Ванская, Харбердская, Диарбекирская* (Тигранакерт), *Сивасская* (Себастия), *Битлисская (Багеш), Трапезундская, Аданайская, Марашская,* вместе с примыкающими к ним районами. Территория только Западной Армении и населенных армянами губерний составляет *280 тысяч квадратных километров.* Территория Армянской Киликии равняется *45 тысячам квадратных километров.* Следовательно, Турция обязана вернуть армянскому народу около *трехсот двадцати пяти тысяч квадратных километров территории,* чтобы туда вернулись развеянные по всему миру, чудом спасшиеся от геноцида обломки армянского народа и возродили свои родные очаги, позаботились о костях убитых, но не похороненных жертв.

3. В 1915-1922 гг. армянский народ потерпел не только моральный ущерб, но и материальные убытки. В конце XX века Музей-институт армянского геноцида обсудил этот вопрос на страницах книжки, опубликованной ее директором (Л. А. Барсегян) и озаглавленной "Убытки армянского народа в результате геноцида", имея под рукой созданные в свое время официальные документы.

Он пишет: "Примерная сумма материальных убытков, понесенных армянским народом, была подсчитана Армянской национальной делегацией (председатель –*Погос Нубар*) и делегацией Республики Армения (председатель – *А. Агаронян*) и, после совместного подписания, представлена в 1919 г. в форме меморандума Конгрессу мира, созванному в Париже... *Таким образом, согласно приблизительным подсчетам, в результате Первой мировой войны и Геноцида сумма материальных убытков, понесенных армянским народом на территории Западной Армении и Первой Армянской Республики в течение 1914-1919 гг. составляет 19 миллиардов 130 миллионов 932 тысячи франков (согласно ценам, действующим во Франции в 1919 г.)".* Если добавить к этому, а это нужно обязательно сделать, проценты, к тому же по международным ставкам, то сумма возрастет в несколько раз и составит 50 млрд. долларов США.

Турция понимает, что после признания геноцида, под моральным, а возможно даже физическим давлением мировой общественности, она будет вынуждена в течение определенного времени выплатить эти суммы так же, как Германия сейчас делает выплаты евреям. Именно это обстоятельство дает Турции повод бояться признания геноцида. Однако однозначно, что сегодня или завтра факт геноцида будет признан, и армянский народ получит от наследников своих палачей цену своей крови, стоимость утерянной собственности и, в особенности, священную Родину. Мы в этом совершенно не сомневаемся.

HAYK GHAZARYAN

THE WESTERN ARMENIANS ON THE EVE OF THE GENOCIDE

SUMMARY

The Armenian nation is one of the oldest in the world. Its historical life has been passing in the geographic region known by the name of *the Armenian Highland*.

The Armenian Highland is located between the Asia Minor Plateau and the Iranian Plateau, in the northwestern part of Asia Anterior. Due to the fact that the Armenian Highland is more elevated than the surrounding lands, it is often referred to as 'an island in mountains'. It includes numerous mountain ranges and alps, the most picturesque and the highest of which is Mount Ararat, or Masis, with its two peaks. As the biblical legend has it, it was here that Noah landed after the Flood, together with his 'large family'. Mount Ararat is the symbol of longevity and independence of the Armenian nation, and that is the reason it is represented, as a genuine adornment, in the center of the coat-of-arms of Armenia.

The Armenian Highland is the water-distributor of Asia Anterior. It is here that the Euphrates (with its Armenian tributary Aratsani), the Tigris, the Chorokh, the Kura, the Araks and other rivers of the area rise. The Akhourian River flows across Valley Shirak, the Arpa River runs along the gorge of Vayots-dzor, and the Vorotan River is situated in the region of Syounik. Ancient Armenia was called Nairy, or land of water, by right. There are three big lakes in the Armenian Highland – *Van, Sevan and Urmia*. There are also many minor freshwater lakes here.

To the west historical Armenia was bounded by Cappadocia, to the northwest by Pontus, to the north by Georgia, to the northeast by Caucasian

Albania, to the south by Mesopotamia, and to the southwest by Assyria (Syria). The Armenian Highland, which comprised the territory of Armenia, consisted of two geographical parts – Armenia Major and Armenia Minor, divided by the Western Euphrates. Only Armenia Major covered almost *300 thousand square kilometers*. It was further divided into fifteen regions, the biggest being Ayrarat, Artsakh, Syounik, Vaspourakan, Tsopk, Aldznik, High Armenia, etc.

Regarding the formation of state-like tribal unions, it is stated in local and foreign sources that such existed here in the 2nd millennium BC, or possibly even earlier. Among tribal unions inhabiting the Armenian Highland in those times, the central role belonged to the tribe Hayasa-Azzi, which served as a foundation for the ethnical consolidation of the Armenian nation, giving it and the country their name in the Armenian language (the Armenians call themselves 'Hai' [hai], and their country 'Hayk' or 'Hayastan').

Another tribal union that played an important role in the consolidation of the Armenian nation was called Arme-Shoupria. It was in the period of the Armenian kingdom (Urartu) that this tribe became the center for the integration of Armenian tribes inhabiting the south of the country, and it is by their name that the whole nation and the country are called by other nations ('Armenians' and 'Armenia').

Hence, in the 6th-5th centuries BC, the Armenian nation finally consolidated on the territory of the Armenian Highland on the basis of two main tribal unions – Arme-Shoupria and Hayasa-Azzi. It is also beyond doubt that the Armenians are an aboriginal people here. Of course, the Armenians, as any other nation, accepted a small amount of foreign elements during the process of their intensive consolidation, but the latter did not have an important role and considerable weight in this communion.

It was as far back as the 5th century when the Greek authors Herodotus and Xenophon discussed the fact of the indigenousness of the Armenians, as well as their anthropological features. The foreign writers Louchan, Chantre, Virkhov, Pantyoukhov and many others concur with them. In their opinion, the Armenian Highland was inhabited by armenoid tribes belonging to the Eurasian race. Finally, this problem was examined by academicians B. B. Piotrovsky, G. Ghapantsyan, G. Jahoukyan, S. Yeremyan, G. Sarksyan, as well as other scientists, and was resolved in favor of the indigenousness of the Armenians. Today this fact is not questioned by anyone except the Turks. In fact, the Turkish scientists make lame attempts to challenge it

only when the world community, from time to time, raises the issue of admitting the Armenian genocide.

In the 6th-3rd centuries BC, the population of Armenia spoke one language – Armenian. A purely Armenian state called the Yervandakan Kingdom was established on this same territory.

As a result of their struggle against the neighboring countries, both weak and strong, in 189 BC the Armenians established a united Armenian state, which is known in history as the Kingdom of the Artashesians. It existed till the beginning of our era. During the two hundred years of the reign of the Artashesians, historical Armenia achieved very high levels of economic, military and political development, unsurpassed till now. Artashes I (189-160 BC) initiated, and Tigran II (95-55 BC) completed the process of uniting Armenian lands into one state. Armenia became the most powerful country in Asia Anterior, more than that, in all of the Orient, and its king Tigran II was granted the title of 'the King of Kings.

During the reign of Tigran II the Great, the territory of Armenia stretched from 'sea to sea'. The borders of the country reached the coasts of the Black Sea, the Caspian Sea and the Mediterranean Sea. Armenia covered almost *500 thousand sq km*, and because of its vast territory, the country had three capitals – Artashat, Tigranakert and Antioch. This powerful state had about *ten million population*. During the reign of Tigran II the town of Artashat had 300 thousand residents, the town of Tigranakert had 200 thousand residents, and the town of Antioch had 500 thousand residents. Yervandakert, Zarehavan, Nakhchavan, and Arshamashat still remained big towns.

After the death of Tigran II Armenia lost its might, and the Artashesian Dynasty declined. In 66 the Kingdom of the Arshakounies was established in Armenia (66-428 AD). During their reign Armenia again developed intensively, both economically and politically. *In this period Armenia adopted Christianity as a state religion (301 AD). It was the first state to do so, and to this day this fact is highly esteemed by humanity. This year, in 2001, the 1700th anniversary of the event is being celebrated. In the 5th century Mesrop Mashtots created the Armenian alphabet, numerous books were translated from Greek, Latin and other foreign languages, Armenian literature developed, and it is not by chance that the 5th century is referred to as the 'Golden Age'.*

In the 4th century the two age-old rivals – the Roman Empire and Sasanian Persia – as a result of continuous incursions upon Armenia,

eventually divided the once powerful country between them (in 387 AD), and several years later abolished the Kingdom of the Arshakounies. The part of Armenia that fell under the domination of Rome was now conventionally called *Western Armenia*. This part was once again divided in 591. However, despite the fact that the country had been divided several times, the ethnic, economic and cultural unity of Armenia was maintained.

In the middle of the 7th century, the main territories of Armenia were united again, under the domination of the Caliphate. In the end of the 9th century Armenia gained its independence back, and the powerful Kingdom of the Bagratounies was established here. After the fall of the Bagratounies in 1045, foreign conquerors (Byzantium, the Turkic-Seljuk tribes, the Mongols), one after the other, established their power over Armenia.

The situation changed in the beginning of the 16th century, when Armenia became battleground for the long wars that Turkey and Persia waged with each other. In 1555, according to the peace treaty signed in Amasya, these two countries divided Armenia between them. The borderline they drew between the two sections of Armenia still exists between Iran and Turkey.

The administrative and political structure of Western Armenia, or 'Turkish Armenia', was finally established in accordance with the treaty of 1639. Armenia was re-divided between Turkey and Persia. The borderline dividing the country this time ran along the Akhourian River, then crossed the Araks River, turned east and ran along the Armenian Range till Mount Ararat, then turned south and reached the Iranian border. This borderline did not change much till the beginning of the 19th century.

As a result, the largest part of the territory of historical Armenia fell under the domination of Ottoman Turkey and was subjected to such oppression and atrocity that is difficult to find in the history of any other country. Turkey seized 280 thousand sq km of Armenian territory. In the 18th century 98% of Western Armenia's population were still Armenians. However, the Turkish sultans 'surpassed' one another in the attempt to clear Armenia of the Armenians, and gradually populated it with Turks, Kurds, and other savage Muslim tribes. In the end of the 18th century, the Turks were already developing plans of a partial massacre of the Armenians.

*
* *

Thus, by the beginning of the 19th century, Armenia had lost its independence as a state, had been divided, fallen under the domination of two despotic empires – Persia and Turkey – and become a seat of bloody wars. The country, which had been invaded numberless times, was now under the threat of new invasions; it had already lost and was still losing a considerable portion of its population. The eastern and western sections of the country were becoming depopulated, while, at the expense of their population, the Armenian communities established in Western Europe, Russia, India, Persia, and elsewhere, were increasing in number.

In the first quarter of the 19th century, the Armenian liberation movement started stirring up. In the search for ways to develop the liberation movement, the Armenians again appealed to Russia for help, welcomed the Russian troops that were advancing eastward, and dreamt of restoring their long lost state, even if under the aegis of Russian czarism. In this, the aims of czarist Russia objectively coincided with the expectations of the Armenian nation.

Russia won the wars with Persia and Turkey. The peace treaty concluded between Russia and Persia in the small Persian village of Turcomenchai on February 10 (22), 1828 put an end to the military operations that had lasted, off and on, for more than ten years. The border between the two countries ran mainly along the Araks River. The Treaty of Turcomenchai recorded the fact that Eastern Armenia was joining Russia. This had been achieved at the expense of blood shed by Russians, Armenians and representatives of other nations inhabiting Russia at the time. Due to this deed, one portion of the Armenian nation was forever being saved from the threat of assimilation and physical extermination, and, by getting under the protection of Russia, which was on a higher level of social development, was now getting a chance to develop its social, economic and cultural life. For the first time in many centuries, Armenians living in foreign countries could now return to the land of their forefathers and restart the process of national consolidation. In a short period of time, about 140 thousand Armenians came to settle in Eastern Armenia, and the demographic pattern here changed. This land became the dwelling-place for those who had been forcibly deported from their motherland or had been compelled to leave it in different periods of history.

Within two decades after joining Russia, the economic and commercial

life of Eastern Armenia changed considerably. Medieval artels (workmen's co-operative associations) were replaced by capitalist manufactories, factory production was organized, and significant improvements in agriculture took place. Areas under crop almost doubled, and new crops were introduced. The population of Yerevan, Nakhichevan and Alexandropol (now Gyoumri) increased, internal and external trade became more intensive, close economic relations were established with Transcaucasia, Russia and other neighboring countries. The economic and commercial progress of Eastern Armenia was greatly promoted by road building. Beginning from the 1840s, the country was covered with an expansive net of roads, and later, in the post-reform years (after 1861), the first railroads were built.

Russia's role in Transcaucasia was undoubtedly progressive, but very soon, together with social oppression, the czarist government, true to its nature as a social class, started implementing here a policy of nationalism and colonialism.

*
* *

The lot of Western Armenia turned out completely different. The Western Armenians remained under the despotic oppression of Sultan's Turkey, and eventually they suffered tragic fate.

In the end of the 18th and the beginning of the 19th centuries, Turkey, having lost its former military power, now found itself in a state of economic, military and political stagnancy. Social and national oppression of the population of Turkey, especially of its non-Turkish subjects, increased. The military feudalistic despotism had had its days, Turkey was losing its military power, and centrifugal forces were gathering momentum. The Turkish and Kurdish feudal lords achieved a certain degree of independence.

In the beginning of the 19th century Turkish court figures and statesmen initiated some efforts to improve the situation in the country, restructure the army and the police. But even though Sultan Selim and his grand vizier Moustafa Bairaktar implemented a number of reforms, they were not able to put an end to the continuous inter-tribe factions and to prevent the frequent collisions between Kurdish chieftains and government troops.

The attempts undertaken in this direction came to an end during the reign of Mahmud II, Abdul Mejid and Abdul Aziz. In the 1830s-1860s measures were undertaken to centralize state power. The Tanzimat was issued, which,

however, contained false promises with regard to the non-Turkish subjects of the country.

Inspired by the Tanzimat, the Armenian bourgeoisie initiated a constitutional movement. However, while the liberal wing of the Armenian bourgeois intellectuals tried to achieve independence using bloodless methods, its radical wing and the political figures of the democratic direction were making plans to abolish the Turkish rule and to establish a bourgeois republic.

In the 1850s, and especially in the 1860s, the Armenian liberation movement gathered momentum. It spread nationwide and acquired common democratic characteristics. In 1862 a heroic uprising broke out in Zeytoun. Armed revolts took place in Moush, Van, Charsanjak and elsewhere.

The resistance and self-defense movements that emerged in Western Armenia and Armenian Cilicia in the 1850s-1870s were directed against sultan's tyranny, Turkish gangs and bellicose Kurdish chieftains. These uprisings were manifestations of wrath that had accumulated in the people during centuries. They emerged spontaneously, and gradually began to attract the attention of the progressive Armenian intellectuals in both Western and Eastern Armenia.

The rebellions that took place during these decades were isolated from each other. The districts were rising separately and were eventually defeated. In spite of being defeated, this movement awakened in the Armenian nation, that had long lost its independence, the spirit of struggle and the hope to win and to become free, it promoted the process of national consolidation and focused the intellectuals on searching for ways to free the nation from the iron fangs of sultan's tyranny through a nation-wide liberation movement.

In the 1880s the condition of the Western Armenians became especially hard as a result of a new and unprecedented system of political oppression.

In the very beginning of the 1880s, the attitude of both Russia and Turkey to the two sections of the Armenian nation definitely altered. The political and social condition of particularly the Western Armenians became much worse. This brought about an intensification of the liberation movement. *Consequently, it was the Ottoman Empire that gave cause for the uprising of the Armenians. The Empire, apart from oppressing the nation and trying to partly assimilate it, now proceeded to a policy aimed at its extermination.* Naturally, the action had to effect counteraction, violence had to bring about a howl of protest, and massacres had to cause people to struggle for their life, by using

either a pen or a sword, journalistic publications or political struggle.

Some time after the Congress of Berlin, the oppression of the Armenians became prolonged and organized in form, and was now directed to the extermination of the Armenians. This was first of all conditioned by the misanthropic ideology of Pan-Turkism and Pan-Islamism, as well as the new orientation of the leaders of the Ottoman Empire and the fanatic Turkish bourgeoisie.

The social, political and national oppression of the Armenians in Turkey, especially in Western Armenia, was not an entirely new phenomenon. The Sublime Porte (the Turkish government), having far-reaching intent, gave, in those Armenian regions where Armenians and Kurds lived next to each other, unlimited rights to the Kurdish leading clique, making them a privileged class, and used any possible means to sow the seeds of dissension between the two peoples with the view of eliminating the possibility of their united struggle against the Ottoman Empire.

Right up till the third quarter of the 19th century, the Armenian movements, protests and uprisings were directed mainly against the Kurdish leading clique and were basically of *economic* nature. Their purpose was to get back the acres that they had lost to the Kurds. Hence, they represented the *first phase* of the Armenian liberation movement.

In the last quarter of the 19th century, particularly during the reign of the infamous murderer Hamid, as a result of the new system of persecution and national oppression applied by the Turkish government with regard to the Armenians, as well as of the shift from partial assimilation to massacres, the Armenians naturally united, and the next phase of the Western Armenians' liberation movement was of mainly *political nature*, representing a forced appeal for survival.

Now, what was the reason for this? Until mid 1870s the sultan's policy was focused on the eastern coasts of the Mediterranean, particularly the Slavonic nations of the Balkan Peninsula. By that time Turkey had acquired the name of "the sick man of Europe". The ancient capital of Byzantium, the city of Constantinople, renamed into Istanbul, served as a bridge between the eastern and the western regions of the country, and, by creating sort of a balance, helped the Ottoman Empire endure. The great powers, actually, favored the continuance of the 'status quo'.

Beginning from mid 1870s the situation changed. Due to the heavy military, economic, political and diplomatic pressure on it, Turkey retreated in its western possessions. The Balkan nations, that had unfurled the

bloodstained banner of struggle for national liberation, overthrew, with the assistance of Russia, the hateful five-hundred-year Turkish yoke and set about establishing independent states on the territory of their ancient historical homeland.

Turkey practically found itself facing the threat of losing Constantinople. Looking for a way out of this situation, Turkey decided that the key to the defense of the capital and the whole state should pass into the hands of the defenders of the Turkish regions in Asia Minor, particularly in Western Armenia. This policy, carried out under the patronage of Great Britain, brought about a sudden change in the history of social and political thought. This sudden change had tragic consequences for the Armenian nation, on whose numberless corpses this Muslim country maintained its existence – but not alone.

After the Congress of Berlin (1878), Turkey became a mainly Asiatic state. The empire lost, one after another, its African colonies as well. On witnessing the above-mentioned processes, the Turkic and Tatar peoples living in the domain of Russia awakened to new dreams. Now they openly addressed the 'great caliph', requesting him to turn his eyes form Europe to Asia Minor, and, by leading the Turanian movement, establish a new mighty state there, with its tentacles reaching to Middle Asia and Afghanistan, and from there to Pakistan and India as well.

Indeed, Turkey set about seeking new foundations for its existence in the Near East. Seeing this as its historical mission, Turkey decided to awaken national consciousness in the Turkic and Tatar nations, and, by leaning on them, to lead the political struggle with the view of rehabilitating its former glory and might.

But that was not the only point. The new nationalists of the Ottoman Empire saw that *Pan-Slavonic* ideals had won a victory at the Balkan Peninsula. The once redoubtable Turkish sable was smashed in the battles of Plevna and Shipka, and from their front lines the Russian troops could already see the towers of the Church of Hagia Sophia in Constantinople, on which the crescent had been erected. Russia's victories called for *vengeance* on behalf of the Turks, and aimed them at ensuring the victory of *Pan-Turkism* in Asia Minor, particularly in Western Armenia and the regions inhabited with Armenians.

In the crucible of successive conflicts between Russia and Turkey, the main obstacle on the way to uniting all the Turkic language speaking nations of the Caucasus around Sultan Hamid and establishing a vast Turanian state

in Asia was comprised by Armenia and the Armenian nation, which was declared to be the legally qualified owner of its historical homeland, and whose national consciousness was being reflected in publicists' writings, in literature, and, most of all, in freedom-loving poetry.

One other reason for the aggravation of relations between the Armenians and the Turks after the Congress of Berlin was the threat coming from Russia. Russia was constantly threatening Turkey on the plea of making it carry out reforms with regard to the Western Armenians. For this reason, the Turkish statesmen consistently implemented an ominous plan *with the view of, if not completely exterminating the Western Armenians, then at least drastically reducing them in number, so that no basis was left for any discussions of reforms.*

Beginning from 1880, Turkey proceeded to the offensive. On August 30 of that year, an edict was issued according to which Armenian newspapers and authors of official documents were forbidden the use of the word 'Armenia' under pretence that there was no, and would never be, an administrative unit with such a name on the territory of the Ottoman Empire. On March 7, 1881, by the decree of the sultan, portraits of the national hero Vardan Mamikonian and reproductions of the painting "Mother Armenia" were collected from bookstores and publicly burnt. The bookseller Gafavian was put into prison on the pretext that he had been selling the portrait of the king Levon VI, thus indirectly calling for the restoration of the Armenian kingdom.

The Turkish censors had all the words beginning with the letter 'H' translated from Armenian into Turkish, suspecting that it might be the word 'Hayastan' ('Armenia') printed. A match producing factory was closed in the town of Yerzinka because the match-boxes had 'Matches from Armenia' written on them. The formula of water (H_2O) was withdrawn from chemistry textbooks, the argument being that it means *"Hamid II equals zero"*.

The Patriarch of Armenia, N. Varzhapetian, on witnessing all this, often abdicated his patriarchal throne, trying to resolve complicated issues by these 'revolts' of his. But in the meanwhile, he submitted *written protests* to the Sublime Porte, through which he reminded the sultan that the new political oppressions initiated with regard to the congregation entrusted to him were getting beyond private limits and becoming a high level political issue. Varzhapetian was aware that such instigations were not initiated by common Turkish figures, but by the

Turkish government, on silent or verbalized consent of the sultan.

The Sublime Porte issued a confidential decree, giving Turkish jingoes instructions to set fire to the property of Armenians. On the 26th of July in 1887, 1000 houses were burnt down in the town of Zeytoun. On the 27th of August, 1,200 houses of Armenians were burnt down in the Skyoutar, the Armenian district in Constantinople. Losses due to the fire amounted to 3,000 gold coins. On June the 3rd, 1000 households were burnt in the town of Potoushan, inhabited by Armenians. There were 1,200 casualties.

In April 1888, the town of Marash was set ablaze. 580 stalls, 14 cafes, and about 30 houses were burnt down. On September 27, 1888, 134 houses owned by Armenians living around the monastery of Armash were burnt down, as well as most of the monastery itself and the high school. A few days later the town of Baghesh was set ablaze. In April 1891 houses of Armenians and the rich Armenian library in the town of Peshiktash were set ablaze by the Turks. In February 1892, 286 households owned only by Armenians were burnt down in the district Yeni Gapou in Constantinople.

In this manner, during several years following the Congress of Berlin, the Turkish government burnt down most of the property belonging to Armenians in about ten towns, depriving Armenian merchants, craftsmen, poor farmers and day-laborers of means of existence. The trade capital of the Armenians particularly suffered because the newly fledged Turkish bourgeoisie was starting to have hostile feelings toward the fact that, in towns of Turkey, almost all branches of trade, industry, and even science and technology were still led by representatives of Christian nations, including Armenians. It was beyond doubt that the Turkish ruling junta had been tolerating Armenians, as well as other Christian subjects of the country, only because, firstly, there was nobody to replace them with, and besides, they had been fostering the progress of the country in trade and industry. However, as soon as the Turkish bourgeoisie came into being and failed to succeed in free competition with the Christian merchants, the Turks did not scorn using such methods as deportation, partial massacre, and later, extermination of their 'competitors'.

The 'new system' of the Turkish policy directed to the annihilation of the Armenian nation started to be actively implemented from the early 1880s. After the war, in accordance with the plan worked out by the Turkish government, they started removing Muslims, particularly Kurds and

Circassians, from the European districts of the Empire and from the Caucasus, settled them in Western Armenia, and provided them with numerous benefits and extensive acres.

Sultan Hamid's purpose was to, first of all, change the percentage of the nations populating the country by increasing the quantity of the Muslims in comparison with that of the Christians in order to deny, through a false population census, the figures that M. Khrimian had presented to the great powers, and, thus, dodge the implementation of the reforms program which was imposed on Turkey by the Congress of Berlin, and the realization of which was being monitored from time to time by European countries, including Russia.

Realizing that the Armenian intellectuals had become very close to their people and were making attempts to prevent the implementation of the horrible, demonic plans against the Western Armenians, Hamid proceeded to putting to practice the impudent policy of mass arrests, deportation and banishment of writers, publicists and religious dignitaries. The fortress of Diarbekir was turned into a place of detention for Armenian and Bulgarian political prisoners. Since there was no more room left in the old fortress, some new buildings were erected, prison routine was made stricter, and such physical punishments for prisoners were introduced that had not had precedents in the history of mankind.

In 1880 Abdin Pasha invited N. Varzhapetian to dinner and tried to poison him; however, because the quantity of the poison was little, the Patriarch of Armenia escaped death by a miracle. Three attempts were made upon M. Khrimian's life. On October 21, 1881, after the sultan's wife successfully delivered a child, the ungrateful sultan ordered that her doctor and the fighter for independence O. Kiatipian be smothered, stating cynically that someone whose eyes had seen his wife nude did not have the right to continue living. Prince Papik, the leader of the uprising in Zeytoun, was treacherously killed (1886), and so was the physician Tigran Peshtimalchian, as well as many others.

On January 4, 1880, Tzhevelekian, the editor of a Turkish newspaper that was printed using Armenian letters, and Sargsian, a patentee, were put into a Turkish prison. They were charged with leading a revolutionary group. In 1882, 56 members of the organization 'Champion of Homeland' in the town of Karin were arrested, and *for the first time in Turkey a political legal procedure was carried out*. On March 29, 1885, Mkertich Sefilian was arrested in the town of Van. On March

30 M. Khrimian, and a few days later M. Portougalian were deported from Vaspourakan as unreliable persons.

On December 15, 1886, the inspector of the 'United Armenian Society' Mkertich Sarian was arrested in the town of Alashkert, on the allegation of being a revolutionary figure. On the same day Markos Natanian, the vice-inspector of the Society, was arrested in the town of Moush. The former was exiled to Tripoli, and the latter to Jerusalem. On December 13, 1887, Gareguin Isagoulyan, Mkertich Terlemezian and Grigoris Aghvanian, residents of Van, were arrested in Constantinople and later exiled.

In this way the Turkish government was planning to deprive the Armenian nation of its intellectuals, 'in advance break the jaws' which would pronounce the word 'Armenia', and then, in the next decade, proceed to the Genocide of the nation. It actually succeeded in accomplishing both the first and the second parts of the plan, using as an instrument Turks and, in particular, some of the Kurdish chieftains.

The close and friendly relations that existed between the Armenians and the Kurds living in Western Armenia greatly worried the Turkish officials, and especially Sultan Hamid. Realizing how dangerous such unity can be for them, the government, following the sly advice of British diplomats, put up all possible effort to coax the Kurdish chieftains into directing their sables against the Armenian independence movement. This issue became particularly acute after the Congress of Berlin because, as instigated by the sultan, the great powers were to protect the Western Armenians from *the Kurds and the Circassians*, rather than from the Turks and Turkey.

During the Russo-Turkish War (1877-1787), Hamid had distributed 20 thousand guns to Kurdish chieftains, as well as large quantities of bullets, horses and kit. After the war all these weapons remained with them, and a secret order was issued that the Kurds should clear Armenia of the Armenians so that there would be no issue of reforms any more.

As Turkish subjects deprived of civil rights, the Armenians and the Kurds naturally had friendly relations with each other. This circumstance did not escape the attention of the government, and that is why the Turks incited the Kurdish chieftains to action, promising them even to establish Kurdistan. In 1879, M. Khrimian, deeply agitated, warned people that the sultan was moving Bederkhan's sons Hussein Bey and Osman Bey in the direction of Aghbak on the mission of clearing the country of the Armenians.

With the view of preventing these dangerous plans, Raffi, M. Khrimian, G. Artsrouni, A. Tokhmakhian, G. Srvandztiants, G. Nickoghosian, S.

Chilinkirian, M. Mamourian and other writers and publicists set about elucidatory work among the Kurds. They partly succeeded in this.

In July 1880, at the meeting of Kurdish sheikhs summoned in Shamdinan, a proposal to annihilate Christians was made. The most respected sheikh, Oubeydoulah, reasoned that the Turkish government was helping the Kurds only because it wanted to use them to annihilate the Armenians. Thus, if the government achieved its goals with the help of the Kurds, and there were no Armenians left in Western Armenia, then *the Kurds would lose their weight and authority in the opinion of the Ottoman state*.

Oubeydoulah's arguments were convincing, and they kept the sheikhs from actions against the Armenians. Realizing that he has lost here too, Hamid cunningly coaxed Oubeydoulah into coming to visit him in Constantinople, and, after granting him great honors, arrested him in 1883 and had him killed on the way to exile.

The Western Armenian nation was practically saved from falling a victim to a dreadful crime, but only for a limited period of time. In 1890 the sultan put together Kurdish 'Guards', named them 'Hamidie', armed them, put them under the command of Zekki Pasha, the chief officer of the 4th Anatolian Army, and ordered them to destroy the Armenian 'eagle's nest' in Sasoun, and annihilate those Armenian communities in the mountains that had been defending their independence for many centuries.

Thus, starting from the 1880s, Abdul Hamid was preparing to massacre the Armenians, clear Armenia of the Armenians, and establish a great Turanian state. His activities were actually promoted by the great powers, including Russia, which were *by word of mouth* defending the Armenians, but *in actual fact* expecting to get 'tasty pieces' from the sultan. However, Sultan Hamid realized these plans only in the next decade, and later the Young Turks 'took over' from him in the beginning of the 20th century.

*

* *

The implementation of the policy of the genocide in practice did not satisfy the Young Turks – the carriers of the misanthropic ideology of Pan-Turkism. They later undertook the attempt to falsify history. The Turkish 'school' of history forgers was set up.

In 1931 the 'Society for Turkish History' was founded. It grouped round itself a large number of Turkish and foreign reactionary historians-Turkophiles, who, with the support of their government, started to modify the history of

Turkey, and, even to a greater extent, the history of the nations that were thousands of years old, but had at some point fallen under the rule of Turkey.

The struggle was directed mainly against the Armenians, against the Armenian and foreign historians who had scientifically studied the history of the Armenian question. The Turkish historian Esat Ouras became the flag-bearer of this struggle. In his voluminous book "The Armenians and the Armenian Question in History", he states: "From ancient times, in this area, which is the cradle of civilization (i.e. in Western Armenia – H. G.), states were established under different names, and culture developed. Each nation wished to ascribe this land – Anatolia, which has at all times nurtured outstanding persons and conquerors – to itself... The Armenians too lay claim to be considered natives of the biggest part of Anatolia, and to have the entitlement to the political history and the culture of the country..."

The conclusion is that Western Armenia, referred to as Anatolia by the 'historian', is not the cradle of the Armenian nation, that the Armenians are an alien element here, and that in this country "...there has never been any region, any administrative area where the Armenians constituted majority". Esat Ouras's theory is 'confirmed' by another Turkish professor – Taib Gyokbilguin. In his book "The Beginning of the National Struggle", he states: "...In the course of history the Armenians have from time immemorial constituted a trifle minority in the eastern districts, which are the birthplace of the Turks". It is absolutely clear that the contemporary Turkish reactionary historians, firstly, are trying to refute the established fact that the Armenians are native in this area, and secondly, think that alien Armenians in Turkey were not 3 million in number, but constituted only a trifle minority. Hence they are trying to solve two problems: firstly, decrease the number of the Armenians that became victims of the Genocide in 1915, and secondly, 'scientifically' deny the right claims of the true owners of Western Armenia for their historical homeland.

The Turkish historians Chark, Hikmet, Bayour, Shemseddin-Gyounaltai, Kioproulou-Fouad, Sadri Maksoudi-Arsal, and others, together with Esat Ouras, have also touched upon the characteristics of social and economical conditions of the life of the 'alien Armenians of Anatolia'. They have stated that since time immemorial the Armenians, subjects of the Ottoman Empire (the Ottoman Empire does not date back to time immemorial as Turkic tribes appeared here only in the 11th century – H. G.), have been free from social and political oppression, and more than that, have lived better than the Muslim nations. Denying the occurrence, with regard to the Armenians, of

national oppression, forced assimilation, and in short, any reason to be displeased with the government, they also disregard the national liberation movements of the Western Armenians that took place in the 19th century. As regards the rebellions of 1862, 1879, 1884 in Zeytoun, those of 1863 in Moush, etc., they were allegedly organized by the Committees of the Dashnaktsoutyoun and Hunchak parties. The Turkish historians are twisting historical reality, muddling facts, and in particular, the fact that the Armenian liberation movement of the 1860s-1880s broke out spontaneously in response to the barbarous policy of Turkey with relation to the Armenians, as an outburst of resentment that had accumulated in people during centuries of oppression. As concerns the Committees of the Dashnaktsoutyoun and Hunchak parties, the mendacity of the Turkish quasi-scientists' arguments can be laid bare by a single fact: during the rebellion of the Armenians in Zeytoun, Moush and other places in the 1860s-1880s, these Armenian political parties did not exist yet, and their future leaders were still babies at the time.

The reactionary Turkish historians fought against Soviet historiography as well, using faking as their weapon again. In this area, zealous efforts were put up by Kerzi Oghlou-Fahreddin. In his four-volume book entitled "The History of Kars", the author writes: "This work of mine is an answer to the political propaganda that Bolshevist Russia carried on in 1945. The objective of this propaganda was to tear Kars and Ardahan away from us. The book is directed against those Armenian and Georgian scientists who are trying to give proof to some 'historical rights' that they claim for this area".

Kerzi Oghlou-Fahreddin expresses indignation concerning the publications of the scientists-Mkhitarists in the Armenian and European languages, as well as the numerous works published by the Petersburg Academy of Sciences, in which the eastern policy of Russia is justified. He assails the scientists who 'have dared to consider the Turks to be aliens' and 'recognize' Armenia to be the cradle of the Armenians. The Turkish historian writes: "As a result of lack of specialists in history, those books once used to scare us and forced us to retreat". In his opinion, this stage is already in the past. At the moment a 'huge army' of Turkish historians is working with the view of 'correcting the mistakes of their ideological rivals'.

It is not my task here to criticize the absurd concepts of Turkish historiography in detail, but I believe that the above-mentioned facts give an idea about the methods and objectives of these fake historians. At the

same time, these facts prove that today, more than ever, it is absolutely necessary to struggle consistently against the ideological rivals and to unmask their falsifications.

*

* *

Various disputable and complex issues of the history of Western Armenia and the Western Armenians have been the object of my research *for about half a century* now. In the process of publishing numerous and diverse works and deeply studying local and, especially, foreign sources, I have had a continuous feeling of resentment. At first I was filled with surprise, and then gradually surprise was replaced by rage and bitterness. I badly wanted to understand how it happened that civilized humanity, *for over eighty years*, as mere observer looked upon the fact of the first *genocide* of such dimension in the history of mankind, or, to be more precise, the fact of the unprecedented and brutal *armenocide*.

Is it not surprising that right up till very recent times the great powers did not condemn the policy of extinguishing the Armenians carried out by Muslim Turkey, and did not require it to give an account of the atrocious extermination of a huge part of one Christian nation? This lack of concern on behalf of the great powers had tragic consequences once again a quarter of a century after the *Armenian genocide*.

If the policy of the genocide pursued by Turkey had been condemned at the proper time, then during World War II Adolf Hitler – no less cruel and bloodthirsty than the Turkish government and the Kurdish chieftains – would not repeat the same with regard to *the Jews*, and would not state cynically: "Who remembers today about the Genocide of the Armenians?"

Between these two genocides, which have numerous similarities, there are also some differences. Hitler, like Abdul Hamid and Moustafa Cemal, took on the role of a jackal, and, by using the same, or maybe crueler methods, exterminated *six million Jews*; however, he was not able to occupy their homeland, did not have time to falsify the sacred history of the innocent victims of the fascist massacre. The contemporary Germans, though only after the defeat of fascist Germany, admitted the fact that their ancestors had carried out a policy of exterminating the Jews, publicly condemned it, apologized to the victims' relatives in the presence of all humankind, and tried to compensate financially, and are still compensating, for the price of the blood shed (although, human blood is priceless).

On the threshold of the 21st century the situation seems to be changing...

In defiance of Turkey's plans, at the cost of heroic struggle and enormous sacrifice, *Armenia has become a free, independent and democratic state*. The official authorities of the country, the intellectuals and the whole nation (living both in their Homeland and in the Diaspora) have now stepped forward to act as bastion for the defenders of the *"Armenian Tribunal"*, are standing firmly and steadfastly to support them, claiming from Turkey to admit something that is still being denied by Turkish statesmen. Further still, Western European and overseas countries, though with great difficulty, nevertheless are one after the other acknowledging the fact of the Armenian genocide and pushing Turkey to acknowledge it too.

Hence, what are the just, maybe even modest claims from modern 'democratic' Republic of Turkey?

1. All humanity knows that in 1894-1896 bloodthirsty Abdul Hamid atrociously murdered *three hundred thousand Western Armenians*. Sultan's Turkey, before the very eyes of ambassadors and diplomats of the great powers, without any impediments, attempted to depopulate Western Armenia, then brought Kurds and other bellicose Muslim tribes to settle next to the remaining Armenians, so that in the future it would be easy to exterminate the whole nation, defenseless on top of all. The massacre continued during 1900-1908.

In 1909 the Young Turks, in accordance with a secret edict, murdered *thirty thousand defenseless Armenians* in Adana. Armenian churches became graves for the ill-starred victims. Additional *twenty thousand* Armenians were stoned or slashed to death in suburban districts.

The process of the Genocide of the Armenian reached its maximum during World War I. In 1915-1918 *one and a half million Armenians* were extinguished in Western Armenia and other provinces inhabited by Armenians. The Cemalists faithfully continued the policy of the Young Turks and cleared the territory of Cilicia of Armenians. In September 1922 in the Gulf of Izmir they drowned or shot with machine-guns *four hundred thousand people*.

Thus, by the most conservative estimate, during 1894-1922 Turkey annihilated around *2 million Armenians*. This was the first Genocide of such dimension in the history of humankind.

Among the victims of the Turkish yataghan there were famous Armenian intellectuals, writers, journalists, scientists, and statesmen: G. Zohrab, D. Varouzhan, Siamanto, R. Sevak, H. Telkatintsi, Yeroukhan, R. Zardarian,

A. Haroutyounian, T. Chyoukourian, T. Kelekian. The musical genius, Komitas, lost sanity on witnessing the tragedy of his nation.

People may accuse me of national vanity, but I have to say out loud what I know is true. Messrs Turks, since the day of your origin as a race (from the Oghouz tribes till today) have you given to humankind any celebrity equal to if only one of the above-mentioned victims? No, you have not. It is not me who says this, but all of the progressive humanity.

Consequently, it is the legal right of the Armenian nation to *demand from the official authorities of Turkey, on the level of President and Prime Minister, to hang their heads and apologize to all those who have experienced the Armenian Genocide, the leaders of the Republic of Armenia, the Armenian religious dignitaries, the intellectuals, and all Armenians*. This basic ceremony will not humiliate the Turkish statesmen, but will demonstrate magnanimity, and will prevent any Genocide in the future, with regard to the Kurds or other nations.

2. After giving moral satisfaction to the children and relatives of the people who have experienced the Genocide, Turkey has the obligation to give back to the Armenian nation its ancient historical Motherland – *Western Armenia and Armenian Cilicia*, which are currently deprived of the Armenian population, have been renamed, and, in the opinion of the owners, have become *Turkified and Kurdified*.

Here is a short list of Armenian provinces: the vilayets of *Erzeroum* (Karin), *Van, Kharberd, Diarbekir* (Tigranakert), *Bitlis* (Baghesh), *Svaz* (Sebastya), *Trapezoun, Adana, Marash*, together with the adjacent regions. The territory of only Western Armenia and the provinces inhabited with Armenians covers *280 thousand square kilometers*. The territory of Armenian Cilicia covers *45 thousand square kilometers*. Consequently, Turkey has to return to the Armenian nation a territory covering around *325 thousand square kilometers*, so that the remnants of the Armenian nation who have survived the Genocide by a miracle and have been scattered all over the world, can go back there, revive their homes, and take care of the bones of the victims that were murdered but never buried.

3. During 1915-1922, the Armenian nation did not suffer only moral damage, but also material losses. In 1999 the Yerevan Museum and Research Institute for the Armenian Genocide published a booklet written, on the basis of source official documents, by its director L. A. Barseghian and entitled "The Losses Suffered by the Armenians as a Result of the Genocide" In this book it is stated: "The amount of the losses suffered by

the Armenian nation was estimated by the Armenian National Delegation (headed by *Poghos Noubar*) and the delegation of the Republic of Armenia (headed by *A. Aharonian*), and, upon joint signing, presented as a Memorandum to the Peace Congress summoned in Paris in 1919... *Thus, according to approximate calculations, the sum of the financial losses caused to the Armenian nation on the territory of Western Armenian and the first Republic of Armenia during 1914-1919 as a consequence of World War I and the Genocide amounts to 19 billion 130 million 932 thousand franks (at prices established in France in 1919)* ". If interest is added to this, and this should be done, the sum will amount to approximately 50 billion US dollars.

Turkey realizes that after the Genocide is acknowledged, as a result of moral pressure, and, maybe, even use of force by the world community, it will have to pay off these sums during a certain period of time, in the same way as Germany is now paying out money to the Jews. It is this particular circumstance that scares Turkey to such a degree that it refuses to admit the Genocide. But there is no doubt that the Genocide will be acknowledged, either today or tomorrow, and the Armenian nation will be paid the price of its blood, the cost of the lost property and, in particular, its sacred Motherland from the descendants of its executioners. We have absolutely no doubt about that.

Translated into English by
Varsenik Hovhannisyan

ՑՈՒՑԱԿ

Գրքում զետեղված նկարների և քարտեզների

Ա) ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ

1. Հայկ Ղազարյան
2. Միրզաջան Ղազարյան (հայրը)
3. Դուշինկա և Ռազմիկ Ղազարյաններ (մայրը և քույրը)
4. Հայկ Ղազարյանի ընտանիքը

Բ) ՔԱՐՏԵԶՆԵՐ

1. Մեծ Հայքը ըստ «Աշխարհացույցի» (հեղինակ՝ Երեմյան Ս. Տ.)
2. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (հեղինակներ՝ Դիլոյան Վ. Ա., Դուլյան Ս. Ն., Վալեսյան Լ. Հ., Ղազարյան Հ. Մ.)
3. Արևմտյան Հայաստանը XIX դարի վերջին XX դարի սկզբին (հեղինակ՝ Երեմյան Ս. Տ.)

Գ) ՔԱՂԱՔՆԵՐ

1. Վան քաղաքի ընդհանուր տեսքը (ժամանակակից նկար)
2. Վանի Այգեստան թաղամասը
3. Աղթամար կղզին, Վանա լիճն իր շրջակայքով
4. Կարին (Էրզրում)
5. Անի քաղաքատեղի ավերակները
6. Մուշ քաղաքը
7. Կարսի ընդհանուր տեսքը
8. Ադանա
9. Մարաշ
10. Զեյթուն
11. Ամասիա
12. Այնթապ
13. Տիգրանակերտ
14. Միլիտինե (Մարդին)
15. Ստամբուլի ընդհանուր տեսքը
16. Կոստանդնուպոլիսը նեղուցների կողմից
17. Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանը
18. Վենետիկի ս. Ղազար կղզին
19. Վենետիկի Մխիթարյան միաբանության շենքը

Դ) ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

1. Գառնիի հեթանոսական տաճարը
2. Էջմիածնի Մայր Աթոռը
3. Խոր Վիրապը
4. Երևանի Գրիգոր Լուսավորչի եկեղեցին
5. Զվարթնոցը
6. Գեղարդը
7. Աղթամարը
8. Մշո սուրբ Կարապետը
9. Անիի մայր տաճարը
10. Հաղարծինը
11. Աշտարակի Կարմրվոր եկեղեցին
12. Տաթևի վանքը
13. Գանձասարը
14. Շուշիի Ամենափրկիչ եկեղեցին

Բովանդակություն

Ակադեմիայի կողմից 7
Երկու խոսք.....23

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ԴՐՎԱԳՆԵՐ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
մ.թ.ա. VII դարից մինչև
XVII դարի առաջին կեսը.....29
Առաջաբանի փոխարեն.....31

Գլուխ առաջին
Հայաստանը IV-XIII դարերում.....41
1. Սելջուկ թուրքերն Առաջավոր Ասիայում.....56
2. Ազատագրական պատերազմները XI - XII դարերում
Զաքարյանների իշխանապետությունը.....63
3. Մոնղոլական արշավանքները
և Հայաստանի նվաճումը.....69

Գլուխ երկրորդ
Օսմանյան Թուրքիայի նվաճողական
քաղաքականությունն Անդրկովկասում.
Հայաստանի բաժանումները զույգ
բռնապետությունների միջև.....81

Գլուխ երրորդ
Սոցիալ-քաղաքական վիճակն
Արևմտյան Հայաստանում XV-XVIII դարերում 119

Գլուխ չորրորդ
Կիլիկյան Հայաստանը XI-XIX դարի առաջին կեսին.....149

Գլուխ հինգերորդ
Թուրքիայի հայ գաղթօջախները XV-XVIII դարերում
Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի հայ
գաղթօջախները մինչև «Թանզիմաթը».....179

Գլուխ վեցերորդ
Ազգային ճնշումները Թուրքիայում.
Հայ ժողովրդի քաղաքական իրավազրկությունը
XV-XVIII դարերում.....197

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1750-1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
(Մինչև «Թանզիմաթը»).....211

Գլուխ առաջին
Ագրարային հարաբերությունները
մինչև «Թանզիմաթը»
1. Իրավիճակը Թուրքիայում,
վարչամիավորներն Արևմտյան Հայաստանում
և հայկական Կիլիկիայում.....213
2. Վարչակարգերը.....220
3. Հայկական կիսանկախ իշխանությունները.....228
4. Հողատիրության ձևերն ու հողատիրական
հարաբերությունները 239
5. Հարկային հարստահարություններն ու
սոցիալական ճնշումները.....246

Գլուխ երկրորդ
Քաղաքները, արհեստագործությունը, առևտուրը
1. Քաղաքները, արհեստագործությունը 253
2. Առևտուրը.....293

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ
XIX ԴԱՐԻ 40-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.....301

Գլուխ առաջին
Արևմտյան Հայաստանի սոցիալ-քաղաքական
դրությունը 1840-1860-ական թվականներին
1. Բարեփոխությունների փորձերը,
դերեբեյությունների ոչնչացումը 303
2. Վարչաքաղաքական և հողային ռեֆորմները.
հողատիրության ձևերի, հողատիրական
հարաբերությունների փոփոխությունները.....326
3. Գյուղատնտեսությունը, հարկերն ու տուրքերը.....342
4. Քաղաքները, արհեստագործությունը.....346
5. Առևտուրը, առևտրական բուրժուազիան.....360
6. Ազգային ճնշումները Թուրքիայում,
հայերի իրավազրկման նոր քաղաքականությունը 371

Գլուխ երկրորդ
Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները
XIX դարի 50-60-ական թվականներին
1. Զեյթունի պայքարը կիսանկախության
պաշտպանության համար
1830-50-ական թվականներին.....387
2. Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը.....398
3. Զեյթունի ապստամբության արձագանքները.....411
4. Կապեր Զեյթունի հետ. Հայ մտավորականության
ընդհատակյա գործունեության խնդիրը.....421
5. Ազատագրական շարժումներն
Արևմտյան Հայաստանում.....433

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ
XIX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.....445

Գլուխ առաջին
Արևմտահայությունը Սան Ստեֆանոյի
պայմանագրից - Բեռլինի կոնգրեսը.
անգլո-թուրքական խարդավանքները 447
Գլուխ երկրորդ
1879-1881 թթ. սովն Արևմտյան Հայաստանում
և նրա հետևանքները 477

Գլուխ երրորդ
Հայ ազատագրական ոգորումները XIX դարի
80-ական թվականներին
1. Շարժման նախադրյալներն ու
դրդապատճառները.....515
2. Վանի «Սև խաչ» կազմակերպությունը.....550

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ.....571
Կոստանդնուպոլիս.....573
Հայերը Կոստանդնուպոլսում.....577
Պատմության անմոռաց էջեր
Խրիմյանը և իր ժամանակը.....583

Հայացքն անցյալին, հանուն ապագայի
Մարդ, որը չէր սխալվում
Մատթեոս Մամուրյան.....601
ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ
Հավերժական կյանք ու գործ.....621
Կոստանդնուպոլսի Կեդրոնական
վարժարանի դարադարձը.....633

Резюме.....649

Summary.....669

ՑՈՒՑԱԿ
գրքում զետեղված նկարների և քարտեզների.....689

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

(Մենագրություն)

ГАЙК КАЗАРЯН

ЗАПАДНЫЕ АРМЯНЕ НАКАНУНЕ ГЕНОЦИДА

(Монография)

Հանձնված է արտադրության 6.08.2001թ.:
Չափսը՝ 60x90 $^1/_{16}$: Ծավալը՝ 43.5 տպ. մամուլ: Ներդիրներով:
Պատվեր՝ 337: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ պայմանագրային:
Տպագրված է «Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչության տպարանում:

ՄԵԾ ՀԱՅՔԸ ԸՍՏ „ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ"-Ի

ՄԱՍՇՏԱԲ 1:3 000 000

ՍԱՀՄԱՆՆԵՐ
Դիտությունների
Մեծ Հայքի 363–387 թթ. (ըստ „Աշխարհացույց"-ի)
Կախյալ պետությունների
Մեծ Հայքի նահանգների և հռոմեական կայսրության պրովինցիաների
Գավառների
Մինչև 363 թ. Մեծ Հայքի կազմում գտնվող երկրամասեր
„Տուն ծերական իշխանության թագավորին Հայոց" երկրամասերը 187–387 թթ. հռոմեական կայսրության և Սասանյան պետության սահմաններում
Գուգարաց դրքշխության կազմի մեջ մտնող տարածքը մինչև 363 թ.
ՊՈՆՏԱԿԱՆ
ԹՐԱԿԻԱ
ՍԱՐՄԱՏԻԱ
ՄԱՍՍԱԳԵՏԱՆ
ՍԱՍԱՆՅԱՆ (մինչև 226 թ. ՊԱՐԹԵՎԱԿԱՆ)
ԱԴԻԱԲԵՆԵ
ԲՈՍՖՈՐՈՍ
ԿԱՍՊԻԱ ԾՈՎ
ԿՈՂՄ
ԱՐԱՍ գետ
ՎԱՆ (ՏՈՍՊ)
ՍԵՎԱՆ ԼԻՃ
ՄԱՐԱՍ ԱՄՍՈՐ
ԱՐԱՐԱՏ (Մեծն 363 թ.)
ԱՐԴԱՇԱՏ
ԵՐՎԱՆԴԱՇԱՏ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ԴՎԻՆ
ՍՅՈՒՆԻՔ
ԱՐՑԱԽ
ՏԱՐՈՆ
ՏՈՒՆ ԱՆԱՀՏԻ
ՏՈՒՆ ՎԱՀԱԳՆԻ
ՏՈՒՆ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ
ՏՈՒՆ ԱՐՇԱՄԱՅԻ
ՏՈՒՆ ԱՐՏԱՇԻՍՅԱՆ
ՏՈՒՆ ԱՐՏԱՇԱՏԻ
ՏՈՒՆ ԱՐՏԱՇԵՍԻ
ՏՈՒՆ ԱՐՏԱՇԱՎԱՆԻ
ՏՈՒՆ ԱՐՏԱՇԱՅ